


ՄԱՆՈՒԿ
ԱԲԵՂՅԱՆ

Ը







АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

МАНУК АБЕГЯН

ТРУДЫ

8

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՊԱՐԱՆ ԳՐԱԶՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

A $\frac{III}{5694}$

Ը



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կազմը՝

Ազատյան է. Բ., Հակոբյան Պ. Հ., Հոսթոյուսյան Ս. Բ., **Նանեյան Ս. Տ.,**

Մելիք-Ջեանջույան Ա. Ա., Խաթանյան Վ. Ա., Պիվազյան Է. Ա., **Սարգսյան Խ. Ս.,**

Հասցի է կազմեցին, ծանոթագրեցին և խմբագրեցին Պ. Հակոբյանը և Ս. Հոսթոյուսյանը

Բնագրերը տպագրության պատրաստեցին՝ Հ. Աբեղյան, Պ. Հակոբյան,
Ս. Հոսթոյուսյան, Ս. Պետտեյան

Աբեղյան Մանուկ

Ա 13 Երկեր, հատ. Ը/Պատ. խմբ. Պ. Հակոբյան և Ս. Հոսթոյուսյան
— Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985—670 էջ, 1 թ. նկ.:

Հատարե ընդգրկում է Մ. Աբեղյանի «պատմությունները» նվիրված հայ ժողովրդական վեպին (Եմազիթ և Մհեր, «Աղբյուրն վեպ»), հնագույն առասպելներին (Ելայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ), հայոց լեզվի պատմության և տեղական առասպելների հարցերին (Երբ բարձր երկրաբանները, Եմազիթական լեզվի ընդունաբերողը, Եմի քանի բերականական խնդիրների մասին, Եմազիթական լեզուն) և այլն:

Հասցեագրվում է Հայ քանադիստության, հին գրականության, լեզվի պատմության և տեղական հարցերի գրողներին:

4804000000

Ա 703(02) — 85



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Մանուկ Աբեղյանի երկերի վերջին՝ եզրափակիչ Ը հատորն ամփոփում է հեղինակի գիտական գործունեության սկզբնական շրջանում և հետագայում գրած բանագիտական և լեզվաբանական մի շարք ուսումնասիրությունները։

Հատորում զետեղված են Մ. Աբեղյանի «Դավիթ և Մհեր» պոեմի առաջաբանը (1889), «Ազգային վեպ» (1889—1890), «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» (1899), «Ժողովրդական լեզվի ընդարձակությունը» (1890), «Գրաբարի երկբարբառներն» (1890), «Մեր ուղղագրության մասին» (1913), «Ջեկուցում հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին» (1921), «Ուղղագրության ռեֆորմը» (1925), «Քերականական մի քանի խնդիրների մասին» (1936), «Հայ ժողովրդական վեպի համահավաք բնագրի մասին» աշխատությունները։

Բացառությամբ «Քերականական մի քանի խնդիրների մասին» բանավիճախի աշխատության, որ տպագրվում է առաջին անգամ, մնացած աշխատությունների հեղինակային ինքնագրերը լին պահպանվել։

«Դավիթ և Մհեր», «Ազգային վեպ», «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ», «Ժողովրդական լեզվի ընդարձակությունը», «Գրաբարի երկբարբառներն», «Քերականական մի քանի խնդիրների մասին» աշխատությունները հրատարակության են պատրաստել Ս. Հարությունյանը և Հ. Աբեղյանը, խմբագրել և ծանոթագրել է Ս. Հարությունյանը։ «Մեր ուղղագրության մասին», «Ջեկուցում հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին», «Ուղղագրության ռեֆորմը» աշխատությունները հրատարակության են պատրաստել Պ. Հակոբյանը և Ս. Կոստանյանը, խմբագրել և ծանոթագրել է Պ. Հակոբյանը։ Վերջինս նաև, ըստ սղագրական հաշվետվությունների, վերականգնել ու ծանոթագրել է Մ. Աբեղյանի գիտությունները հայ ժողովրդական վեպի համահավաք բնագրի մասին, որոնք նույնպես լույս են տեսնում առաջին անգամ։

Սույն հատորով, սակայն, չի ավարտվում մեծ հայագետի թողած գիտական ժառանգության վերահրատարակությունը, Հայ պարբերականների էջերում ցրված՝ մնում են նրա զրական ու լեզվաբանական, պատմական ու բրնագրագիտական քննարկի բազմամթիվ ուրիշ աշխատություններ, հայագիտական հրատարակությունների ու բանաստեղծական ժողովածուների մասին մատենախոսություններ, զեղարվեստական երկեր ու թարգմանություններ։ Ներկա Զ-հատեթյակից դուրս են մնում նաև Աբեղյանի բառարանագիտական աշխատությունները (սիրու-հայերեն ռազմական բառարանն և այլն), որոնք

մեծածախս և պատկերներն հայ տերմինաշինության մշակմանն ու զարգացմանը, հարստացրել ժամանակակից հայերենի բառապաշարը՝

Մ. Արեղյանը հիմնադիրն է հայ բանահյուսական քննադատության: Նրա նրկարամյա աքնադան աշխատանքի շնորհիվ՝ ժամանակին հրապարակ են հանվել «Մասնա ծոր» հրոսաւմնկի շուրջ հինգ տասնյակ պատումներ (Կ. Մելիք-Յհանջանի աշխատակցությամբ), հայ միջնադարյան գուսանական հայրենների և անտունիների, ինչպես նաև ուշ շրջանի ժողովրդական երգերի (խաղիկներ) գիտաքննական քննադրել, տարբերակների մանրանկրկիտ համադրումով, պատմա-աղբյուրագիտական ներածություններով ու ծանոթագրություններով: Պատմական ու քննադատական բացառիկ արժեք ունի Մ. Արեղյանի տասնամյա աշխատանքի արդյունք հանդիսացող Մ. Խորենացու Հայոց պատմության քննական-բացառական քննադրել (Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ):

Այս աշխատությունները ևս դուրս են մնացել ներկա ութ հատորակից: Ըստ ամենայնի օրինակելի և մեծարժեք այս աշխատությունների վերահրատարակությունն ունի, անշուշտ, գիտական նարնորություն և պետք է դառնա սովետահայ բանասիրության առաջիկա անելիքներից:

Նախական ծրագրով սույն հատորում պետք է ընդգրկվեն նաև Մ. Արեղյանի նամակները, բայց հատորի առանց այդ էլ սովոր ծավալը հարկադրեց դրանց հրապարակումը թողնել ապագային, հայագետի գիտական ժառանգություն գալիք հրատարակություններում:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Մեր բանասեր հասարակությանն արդեն հայտնի է, թե մեր ժողովրդական բանահյուսության մեջ ինչ մեծ տեղ է բռնում Հ. Սրվանձտյանի «Գրոց-Բրոցի» մեջ հրատարակված «Մասունցի Դավիթ» կամ «ՄՀերի Դուռ» կոչված ժողովրդական պատմական-գյուցագրական վեպը։ Այդ վեպը Հ. Սրվանձտյանի հրատարակությամբ գրեթե մի ամբողջություն է կազմում, ունենալով յուր մեջ երկու եղբայր Աբամելիքի և Սանասարի, Աբամելիքի որդի Դավթի և սրա որդի ՄՀերի պատմությունը, թեպետև այդ ամբողջությամբ հանդերձ թերատ է, մասնավանդ ՄՀերի մասում։

Մեզ դեպ եղավ ս. էլմիածնում գրի առնել այդ վեպի մի ուրիշ վարիանտ, որ լրացնելով առաջին հրատարակության թերի կողմերը, փոխել է տալիս վեպի ծավալի մասին մինչև այժմ եղած հայացքը։ Ինչպես երևում է, այս նշանավոր վեպը մեծ ընդարձակություն ունի և չէ ամփոփվում երեք ծնունդի՝ Աբամելիքի, Դավթի և ՄՀերի պատմությամբ, այլ Ասանու տերերի ցեղի պատմությունն է դա, Աբամելիքից և Սանասարից սկսած մինչև անժառանգ և անմահ ՄՀերը, որով վերջանում է վեպը։ Դավթի թշվառ Աբամելիքի որդին է հանդիսանում, այլ նրա սերունդ պայազատներից մեկը և, պատմողի ասելով, 35-րդ դարը, որովհետև Աբամելիքից մինչև ՄՀեր քառասուն զարմ են և ունին իրենց քառասուն ճյուղ անունին պատմությունը, որ քառասուն գիշեր կնստեն և կպատմեն։ Այդ քառասուն ճյուղից (եթե քառասուն թիվը չափազանց չէ) մենք այժմ ունինք վեպի սկիզբը՝ Աբամելիքի և Սանասարի պատմությունը։ Հ. Սրվանձտյանի վարիանտում (թե Աբամելիքն և Սանասարը վեպի սկիզբն են, այդ երևում է և մեր վարիանտից, որի մեջ ողորմիսում ներանց անուններն ամենից առաջ են ասված), Դավթի (Թլոր մականվանված) և ՄՀեր. բացի այդ՝ մի հատված Թուրան Դավթից և երկու հերոսի միայն անունները՝ Բաղգասար և Մելքիսեթ քահանա, որոնք բոլորովին նոր են։ Սասուն և Մարա քաղաքի տերերի միջև, ինչպես երևում է, տեղի է ունենում մի ժառանգական կռիվ։ Աբամելիքը (Հ. Սրվանձտյանի)՝ վարիանտով, Թուրան Դավթի, Թլոր Դավթի կոչում են Մարա տերերի, Մարա մելքների հետ և Մարա մելք (Մարամելիք) կոչումը ոչ թե հատուկ անուն է դուրս գալիս, այլ Մարա քաղաքի իշխողների հասարակ կոչումը։

Վեպի այս նոր վարիանտը ոչ միայն լրացնում է Հ. Սրվանձտյանի հրատարակությունը, այլ մասնավանդ թե ինքն ևս մի գեղարվեստական ամբողջություն է կազմում, որ ունի յուր առանձին արժանավորությունները։ Մանրամասն քննությունը և այս վարիանտի համեմատությունը Հ. Սրվանձտյանի վարիանտի հետ ուրիշ ժամանակի և տեղի թողնելով, այստեղ այսքանը միայն կասենք, որ մեր վարիանտն ևս Դավթի կյանքից ունի շատ միպական մանրամասնություններ, որոնք իրենց վրա կրում են հնագույն գյուցագրներ-

այդ հինգ վանկն քնդհանրապէս իրենից առաջ կամ հետո ունենում է մի կարճ տող, որի հետ միասնալոյ դարձյալ տալիս է մի երկար տող: Սակայն ոտանա- վորի համար այստեղ նշանակուիլուն ունի ոչ թե վանկերի թիւը, այլ՝ ձայ- ների ելեէջը և ոտքերի (стопа, pes) թիւը, որ լինում է 3—6 ոտք: Ամեն մի ոտք քաղկացած է երկու կամ երեք վանկից և շնչաւ սովորաբար վերջին վանկի վրա ունի, որով և ամբողջ ոտանավորը հորինված է ձայնական (շնչ- տական, тонический размер) չափով և կազմված է մեծավերջ (ямб) և վերջատանջ (анapest) ոտքերի խառնուրդից՝ երկար և կարճ տողերով:

Ավելի պարզելու համար բերենք օրինակներ թե՛ երգերից և թե՛ մյուս տողերից:

Վոյ վնի՛ր իճը՝ յարթո՛ւն ի կացե՛ք. — 8 վանկ. 3 ոտք.

Վոյ յարթո՛ւն իճը՝ ելն՛ք ի կայնեցե՛ք. — 9 » 3 »

Վոյ կայնի՛ր իճը՝ ձի՛ր ճակն՛ր ի կայեցե՛ք. — 10 » 4 »

Վոյ ձի՛ր ճակն՛ր ի կայի՛ր իճը՝ ձի՛ ձիա՛նք թամբեցե՛ք. — 13 » 6 »

Վոյ ձի՛ր ձիա՛նք թամբի՛ր իճը՝ ելն՛ք ի խեծեցե՛ք. — 12 » 5 »

Չապե՛ք յԴալիթ դեո՛ղ ի կապ, դեո՛ղ ի զնա՛ց. — 10 » 4 »

Օրհնյա՛լ ի արեբար՛ ի նստվա՛ծ, — 7 վանկ. 3 ոտք.

Քեո հրամա՛նքն ի էր շա՛տ. — 5 » 2 »

Ես ի՛նչ լըխ անե՛մ: — 5 » 2 »

Էնո՛նք ի էլնեն ի բամբա՛կ. — 6 » 3 »

Ես ի՛նչ ի էլնե՛մ ի կրա՛կ, — 6 » 3 »

Չեմ կարա՛ ի զանո՛ք ի բե ի ցըցի՛. — 9 » 4 »

Էնո՛նք էլնե՛ն ի զարնա՛ն ի մատղա՛շ ի զառնե՛ր — 10 » 5 »

Ես ի՛նչ ի էլնեմ ի զարնան ի քաղցա՛ծ ի գեղե՛ր, — 10 » 5 »

Չեմ կարա՛ ի զանոք ի կտրե՛ ի ցըցի՛, — 9 » 4 »

Ուրիշ օրինակ ոչ երգերից.

Մարա՛ լմեղի՛ք զտղա՛ն լառե՛ց ի տարա՛վ, — 11 վանկ. 5 ոտք.

Տարա՛վ ի զի դա՛ տը տեղ լմըն ի դաշտի՛ն. — 10 » 4 »

Էնոնք ի փեհլը ի վընքտեր ի զնաքի՛ն քեորդ խաղալու: — 12 » 5 »

Մարա՛ լմեղի՛ք հընչ զյուր գեորդ ի եզար, — 9 » 4 »

Դալիթ ի էլա՛վ, կայնա՛վ, — 6 » 3 »

Ձեռ ետու՛, դէնոր գեորդ ի ունեց: — 8 » 3 »

Մարա՛ լմեղի՛ք շատ ի ըղկա՛վ, ասաց. — 10 » 4 »

Վերջին խոր էսա՛ տեղի ի խեռ ձի ի կոճի՛վ անի՛: — 13 » 6 »

Ըրիկ ի էրա՛վ, էկա՛վ տան. — 7 » 3 »

Մազգե՛ն ի կախեց, էլ լը ի խոսաց: — 8 » 4 »

Զէ՛ տյու ի է յախուց իմ բարն ի առար. — 10 » 4 »

Թըխ ես ի է յախու ջիղ բարն ի տամ: — 9 » 4 »

Որ տյու ի յախուց իմ բարն ի առնեք, — 9 » 4 »

Տելենք կնու ի ընկներ իմ սիրտ ձի սպանեք: — 10 » 4 »

Շատ անգամ պատահում է տողի մեջ մի երկար վանկ, որ համասար է լինում երկու վանկից կադմված մի ոտքի. օրինակ.

էն պող /վըտե/ աւլ /կտրտվիր /ի,

էն պող /վըտե /կո՛ւ լէ լաշվիր /ի:

Տողի վերջում իզական (անշեշտ) ոտքեր, մի վանկից բաղկացած, քիչ են պատահում, ինչպես և տողը շատ քիչ անգամ է սկսվում շեշտավոր վանկով, իննից պակաս վանկ ունեցող տողերը սովորաբար հատած (цезура) չունին, իսկ երկար տողերը՝ մտքին նայելով՝ որևէ բառի վրա հատած ունին ընդհանրապես. ինչպես.

Վուվ ձի ձիանք թամբիր եք՝ / եւք, խեօնքեք,

Վերջին տիր էսա տ'նին, / խես ձի կոիվ անի,

Ուրախութեն/խնձոր մ'էզար Դավթին:

Մարա մելիք ըմեն օր / կ'երթա գեորդ խաղալու:

Տողերի վերջում հանգերի նմանաձայնությունը, եթե կան տեղ-տեղ, պատահական էր նույնիսկ երգերը անհանգ են:

Լավ ուղադրություն դարձնողը կտեսնի, որ արդի ժողովրդական վեպի այս ձայնական տաղաչափությունը, որ բոլորովին նոր է մեր քանահյուսու-թյան մեջ, շատ մոտ է մեր հին հեթանոսական վեպերի շափին (սերկնէր երկինս և մյուս հատվածները իոր<ենացու> պատմ<ության> մեջ), Վերջին-ներս անշեշտ սույնպիսի տաղաչափությամբ են հորինված եղել, հիմք ունենալով թերևս շեշտի և բուքի (անշեշտ վանկ) փոխանակ երկար ու սուղ ձայնավորները: Այս նմանությունը ցույց տալու համար բավականանանք միայն մի կտորով:

Հեծա՛վ /արի՛/ արքայն/ Արտաշէ՛ս/ ի սեա՛լ /ւրն գե՛/ղեցի՛կ. — 15	վանկ. 7	ոտք.
Եւ ձգեա՛լ /զոսկէ՛ող/ շիկափո՛կ /պարա՛նն. — 11	» 4	»
Եւ անցեա՛լ /որպէ՛ս /զարծո՛ւի /օրա՛թն /ընդ գե՛տն, — 11	» 5	»
Եւ հանեա՛լ /զոսկէ՛ող/ շիկափո՛կ /պարա՛նն, — 11	» 4	»
Ընկէ՛ց ի մէջք /օրի՛/ Ռոզին /Ալանա՛ց. — 11	» 5	»
Եւ շա՛տ/ ցավեցո՛յց /ըզմէ՛ջք /փափո՛կ /օրի՛/ Ռոզի՛ն, — 13	» 6	»
Արա՛գ /հասուցեա՛լ/ ի բանա՛ /կրն իւ՛ր: — 10	» 4	»

Իսկ ինչ որ վերաբերում է գաղափարական արտասանությանը, պետք է ասել, որ մոկաց բարբառը, որ մի տեսակ քաղցրահնչյունություն ունի, միայն մեր արդի տառերով ճշտությամբ գրի առնելը մեծ դժվարություն է ներկայացնում, որովհետև ձայնավորներն երբեմն խիստ փափկանում են, երբեմն շատ բուք ու խուլ կերպով արտասանվում, այնպես որ մարդ լավ կերպով չէ ըմբռնում, թե ինչ հնչյուն է դուրս գալիս: Միևնույն ձայնավորը, միևնույն անգամ մի բառի մեջ, երբեմն կարճ է արտաբերվում, երբեմն՝ երկար. օրինակ հենց սաստցա, շարեցա բառերի մեջ, որ շատ են պատահում, առաջին ա-նրը սուղ են և բուք:

Հնչյունների ճշտությունը, ինչքան մեր այբուբենով կարելի էր արտահայտել, պահեցինք. թողնեցինք մի քանի ձայնավորներով մի հնչյուն արտահայտելը, որ սովորական է մեր գաղափարական բարբառներով գրողներին (ինչպե՛ս ես, էս—փափուկ ա. բի—եւ ուսաց և այլն), ի նկատի ունենալով, որ դրություն այդ եղանակը պիտի դժվարացներ ընթերցողներին՝ լեզուն հաս-

կանալ. մանավանդ որ, ճիշտ ասած, այդ ծանրով իսկական հնչյունը դարձյալ անորոշ է մեռւմ, և մենք իսկ՝ լսւմ տեղյակ չլինելով մոկաց լեզվին, կարող էինք սխալների մէջ ընկնել:

Կարելի է ասել, թե մեր վարկանտի լեզուն բոլորովին մաքուր մոկաց բարբառով լինի, ի նկատի առնելով, որ պատմողը հրկար տարիներով պանդոխտել է շատ տեղեր, վնայի մէջ շատ են պատահում խոնարհումների կրկնակի ձևեր. օրինակ՝ ատամ—առեց, տվալ—տվեց, արալ—էրալ—արեց—էրեց, հքից—քեց և այլն, որոնք, հարկաւ, դանադան բարբառների ազդեցութեան տակ լինելուց են ծագել: Բայց և այնպես, պետք է ասել, որ մի անգամ գրի առնելուց հետո, հրքոր նորից պատմել տվինք, և ա գրեթե բառացի պատմեց մի անգամ արդեն պատմածը, որ գրել էինք, քացի մասնավոր բաների փոփոխութիւններին:

Մեր խոսքի վերջում ավելորդ լի չինիլ ասել, որ՝ ընայելով վերջին ժամանակներս քաղաքում և գաղութական քանադուստրիան արդյունքները հաճաքելու կարողութիւնը, բայց և այնպես մեր հասարակութեան հասկացող մասը մի առանձին ուշք չէ դարձնում այդ բանի վրա, և սույն վնայի նման ո՛վ գիտե քանի վնայեր կուրում են, և շատ շուտով ժամանակ կգա, որ արդեն ուշ կլինի այսպիսի վնայեր գրի առնելու հնարավորութիւնը: Մոկացու ասելով իրենց Մոկաց երկրում անգամ քիչ մարդիկ, այն էլ միայն ծերերից, դիտեն այս մեծ վնայից հաստատներ, իսկ քառասուն հարիւր ամբողջ մի հոգի լավ իմացող, այդ խո շատ հազվագիտ է: Մեր Մոկացիի յուր կյանքի մէջ միայն մի մարդու է հանդիպել, որ քառասուն հարիւր ևս իմացել է և պատմել է իրենց գլուղում, հրքոր ինքը գեո հրիտասարդ է՝ եղել, իսկ այդ մարդն ևս զնացել է Կ. Պոլիս և այլ լէ դարձել:

«ԱՍՏՈՂԵՍԻ ԴԱՎԻԹ» ԿԱՄ «ՄԷԼԵՐԻ ԴՈՐՈ» (Կ. ՊՈՍՍ, 1874) և՛ «ԴԱՎԻԹ» և՛ ՄԷԼԵՐ»
(ԵՃԻՇԻ, 1880) ժողովրդական ՊԱՏՈՒՄԵՆԻՐՆ ԻՐՐԵՎ ԿԵՆ-ՊԱՏՄԱԿԱՆ, և՛
ԿԵՆ-ԴՅՈՒՑԱԶՆԱԿԱՆ ԶԻՆՎԱԿ

Ա

Հայոց ժողովրդական բանահյուսութիւնն ընդհանրապէս աղքատ է համարվում բանաստեղծական արդիւնքներով, մանավանդ վեպերով. և մինչև վերջին ժամանակներս ժողովրդական բանահյուսութիւնն անծանոթութիւն պատճառով կարծում էին իսկ, թէ մեր ժողովուրդը իրեն բանաստեղծական շնորհք չէ ունեցել: Մովսէս Խորենացին իրանից առաջ եղած և յուր ժամանակի հայերի համար ասում է. «Որպէս այժմ՝ և առ հինոն Հայաստանեայց լիալ անսիրելութիւն իմաստութեան և եղարեւեց քաջատաղ» (Ա դիրք, Գ գլ.): Բանահյուսական արդիւնքների սույն անսիրելիութիւնը կրկնած են և շատերը, երբ որ խոսք է եղել մեր հին և նոր ժողովրդական բանաստեղծութիւնն աղքատութիւնն մասին: Բայց այս կարծիքը—թէ հայերը բանաստեղծութիւնն սեր և շնորհք չեն ունեցել—ընդունելով հանգործ՝ խորհրդածունքը զարմանում էին միանգամայն՝ թէ ինչպէս կարելի է, որ մի արեւելյան հին ժողովուրդ, որ ապրում է Հայաստանի նման բնութեամբ հարուստ մի աշխարհում, լուսննար յուր որոշ աստիճանի երեսկայութիւնն ուժը և շարատգրեր ստեղծագործական արդիւնքներ: Չարմանքն արգարացի է. բայց եթէ պըտ-ռելու լինինք զարմանքի պատճառները, կտեսնենք, որ բնութիւնը հենց սկզբից այնքան էլ չի զլացել բանաստեղծութիւնն ձրի տալու հայ ժողովրդին, որ այնպէս մեծ անտարբերութիւն չէ ունեցել դեպի բանահյուսական ստեղծագործութիւնը, ինչպէս և Խորենացին բարկացած ասում է, երբ որ յուր պատմութիւնն համար չէ գտնում նախնի թագաւորների թողած գրավոր, պատրաստի հիշատակարաններ:

Ամենից առաջ պետք է նկատել, որ մեր հին ժողովրդական բանահյուսութիւնը գրի չառնվելով, մեղ չէ հասել. իսկ ժամանակակից բանահյուսութիւնն նկատմամբ՝ մենք չգիտենք թէ մեր ժողովրդի մեղ այժմ որքան երգեր և վեպեր կան. մենք ծանոթ չենք մեր ժողովրդական բանահյուսութիւնն աղքատութիւնն կամ հարստութիւնն աստիճանին: Թեպետև որքան հայտնի է, մեր կովկասի ժողովրդի մեղ շատ էլ չկան հայերեն լեզվով երգեր և վեպեր, բացի հեքիաթներից, բայց և այնպէս կարծում ենք, որ՝ եթէ մեր ժողովրդի, ավելի տաճկահայերի, բանահյուսական արդիւնքները բոլորը հավաքվելու լինին, դեռևս շատ պահներ կգտնվեն, որոնց մասին տեղեկութիւն չունենք, և որոնք կարող են մի պատվաւոր հարստութիւն տալ մեր ժողովրդական բանաստեղծութիւնը:

Հեթանոսութիւնն ժամանակ, չնայելով Խորենացու զանգատին, նուրիսկ

նորեն անցուց և ուրիշ մատենագիրներին արդեն հայտնի է, որ հայերս ունեցել ենք դիցաբանական, դուցազնական և պատմական մեծ վեպեր, որոնք ժողովրդի բերանում կենդանի են եղել մինչև Ե դարը, երբ որ, թեպետև քրիստոնյա վարդապետները հակառակն էին քաղցում, ժողովուրդը դեռևս սիրով երգում և լսում էր հեթանոսական ժամանակի վիպասանությունը և հավատում էր նորան։ Այդ վեպերը մինչև ժ և ժԱ դարերը բուրգովին չեն մոռացվել, այլ շարունակվել են պատմվել, եթե ոչ ամբողջությամբ, գոնե հաս ու կտորներով։ Բայց հինց այդ ժամանակներից սկսած, շնորհիվ պատմական հանգամանքների, հայ ժողովրդական բանաստեղծությունը հետզհետե ընկնում է, հին վեպերն ու երգերը մոռացվում են և նրանց տեղ նորերը չեն ստեղծվում, և եթե ստեղծվում են էլ ոչ առաջինների լավ և նրանց գեղեցկությամբ, մինչև որ ժողովրդական բանաստեղծությունը, այսպես աղքատանալով, արդի դրությամբ հասնում է մեզ։

Սուրա պատճառները պիտի որոնապես պատմական լորս հանգամանքների մեջ կարելի է տեսնել. ա) ազգային կյանքի նեղ վիճակը, ք) օտար լեզուների տիրապետությունը հայոց (լեզվի վերա, գ) քրիստոնեության ազդեցությունը և զ) գաղթականությունը։

Ամենահին ժամանակներից սկսած, երբ որ մեր ազգը նոր էր մտնում յուր բանահյուսության զարգացման պատմական շրջանի մեջ, երբ որ նոր ստեղծված պատմական վեպերի հետ հին դուցազնական վեպերը ժողովրդի բերանում դեռևս կենդանի էին մնում, հայտնի է, որ մեր ժողովուրդը շարունակ ենթակա է եղել այնպիսի դժբախտ հանգամանքների, որոնք թույլ չեն տվել, որ նա մի փոքր թթիվ շունչ առնե և ազատ բույներն ունենա իրական աշխարհից մի փոքր վեր՝ դադափարական աշխարհը բարձրանալու ժողովուրդն այնքան նեղ, ճնշված և ազգային վիճակի մեջ է եղել, որ առօրյա կյանքի հոգսերից այն չէր բաց արել և հոգևոր սփոփանքի վրա մտածելու միջոց չէր ունեցել։ Մյուս կողմից՝ դուցազնական և պատմական վեպերի համար հարկավոր է իրական կյանքից վերցրած սխրագործական նյութ, հարկավոր են ժողովրդական հերոսներ, իսկ մեր պատմական կյանքը, մասնավոր միջին և նոր դարերում, արդյոք տվել է հերոսներ, որոնք արժանի լինեին ժողովրդի ընդհանուր սքանչացմանը, և ժողովուրդը յուր հափշտակության լողներում հիանալով պատմեր և երգեր նրանց արարքների մասին։ Մեր պատմության մեջ միայն հեծեծանք, ավերածնունդ, մատնություն, պարտություն և գերություն ենք տեսնում. հազիվ անգամ մանր քաջագործություններ, մեծ մասամբ տրիստուր ու ցավալի դրություն, որ կարելի է միայն յուր միջոցներով սղալ և ոչ պանծալի դուցազններգության նյութ շինել։ Եվ մենք իրոք տեսնում ենք, որ միջին դարերի և նոր ժամանակների ժողովրդական բանաստեղծությունը հարուստ է ավերի մանր ողբական երգերով։

Օտար թափարական և թուրքական տարրի ճնշումն և ազդեցությունն այնքան է եղել մեր ժողովրդի վրա, որ նույնիսկ հայերեն լեզուն, քիչ է մնացել, որ առնվի ժողովրդի բերնից, և եթե չէր առնվել, լեզվի բանաստեղծական, գեղեցիկ կողմն անհնվել է, և մնացել է այն, որ առօրյա նյութական է վերաբերում։ Ժողովուրդը, լուսննալով յուր սննդական սխրագործությունները երգելու համար նյութ, յուր շնչին խնդությունները ևս, սերը, սկսել է երգել օտարին նմանելով, որովհետև ինքը յուր նեղված կյանքի մեջ ետ է մնացել և եթե երբեք ալըր բաց է արել մեկ մեկ և ուղել է հայտնել յուր սրտի զգացմունքը, տեսել է, որ յուր հետ ապրող օտարն արդեն վաղուց հայտնել է

նույնը և ավելի գեղեցիկ կերպով, ինքը ևս այն ժամանակ ակամա ենթարկվել է օտարի ազդեցությանը, ակամա սկսել է նմանվել օտարի արտահայտության եղանակին: Այս ենթարկությունն ու նմանողությունն այն աստիճանին է հասել, որ արտահայտության լեզուն անգամ մեր ժողովուրդն օտարից է վերցրել, որովհետև օտարի լեզուն յուր մայրենի լեզվի լավ ծանոթ է եղել իրան. և այս նորա համար, որ յուր լեզուն բանաստեղծության համար շատ ետ է մնացել, այնինչ օտարինը դարդացած է եղել և ունեցել է բավարարիչ պատրաստի ձևեր: Ո՛վ կարող է ասել, որ մեզանում եղած այն բազմաթիվ երգերն ու վեպերը, որոնք ընդհանուր են հային և թուրքին, մեծ մասամբ հայ մարդու մտքից չեն ստեղծվել, միայն օտար եղանակով և լեզվով Մի՞թե մեր աշխի առաջ նույնը չէ կատարվում, որ հայը թուրքերեն է յուր զգացմունքները երգում, որ ամբողջ հայ դուրը հավաքվում է ակամա դենու հայ աշուղի թուրքերեն լեզվով պատմած վեպին: Ինչ պատահել է հարցնել մի հայ աշուղի թե ինչու՞ ես՝ հայ մարդ է՝ և յուր երգերը հայերեն չէ ասում:—Որովհետև, պատասխանեց նա,—հայերեն լավ չի գուրա գալիս, իսկ թուրքերեն թե լավ է լինում և թե հեշտ եմ հասում:—Ահա ժողովրդական բանաստեղծության աղբատության ակնհայտի պատճառը, այն՝ որ ժողովրդական լեզուն ետ է մնացել յուր զարգացման մեջ:

Հայոց լեզուն տիրապետող է եղել միայն ընտանիքի մեջ, բայց ընտանիքի մեջ էլ կնոջ բերնով չեն արտասանվում բանաստեղծական մեծ երգեր և վեպեր. կինը այլ մարդուն հավասար չէ եղել բանաստեղծական և առհասարակ մտավոր արդյունքների մեջ. դուրս համար և մենք ունինք կանանց հորինած միայն փոքր և թեթև երգեր, ջանդուլումներ և այլն, որոնք հայերեն լեզվով են:

Բայց թե՛ նոր բանահյուսական ստեղծագործություններ չէ արել մեր ժողովուրդը, դոնե հին վեպերը պիտի պահեր բերնն իրան ավանդելով: Դուրս համար պետք է ասել, որ հին վեպերի (հեթանոսության ժամանակի) ժամանակը և մեր ժամանակը երկար միջոցով է բաժանված, որքան և ժողովրդի հիշողությունը զորեղ լինելու, նրանք դարերի ընթացքում դարձյալ մոռացության պիտի տրվին, շնորհովնով ժամանակակից տարբերով, մանավանդ որ մեր պատմությունից հայտնի է՝ թե՛ կրոնավթրական դասը ինչպես թշնամաբար է վերաբերվել հեթանոսական ժամանակից եկած ժողովրդական բանահյուսության արդյունքների նկատմամբ: Կրոնավթրներն ամենայն ջանքով աշխատել են մոռացության տալ ժողովրդին հեթանոսական հիշատակները, դժբախտաբար առանց դրի առնելու. և այդ մեծ մասամբ հաջողել է նրանց, մանավանդ, որ մեր ժողովուրդը Ե դարից սկսած հաստատ կապերով ամրացած է եղել եկեղեցու հետ: Սակայն եկեղեցու այդ ազդեցությունը բոլորովին ոչնչացնող դեր չէր կարող կատարել. նորա ազդեցության տակ հին վեպերը մասամբ կարող էին քրիստոնեական ձև ստանալ և դարձյալ կենդանի մնալ, թե՛ լլիններ մի ուրիշ հանգամանք — գաղթականությունը:

Որպեսզի մի հին պատմական երգ կամ վեպ կենդանի մնա, հարկավոր է, որ նույն իսկ ժողովուրդը մնա յուր տեղում, յուր հողի վերա: Վեպի անցքը, իրողությունը, սերտ կերպով կապված է յուր աշխարհագրական տեղի հետ: Մեր ժողովուրդը մի փոքր գավառում անգամ, չենք կտրող ասել, որ ամեն մի դարում է՝ տեղափոխվել տեղից տեղ, թե՛ Հայաստանի մեջ մի գավառից մյուսը և թե՛ հայրենիքից դուրս դեպի օտար երկրներ և դարձյալ նորից դեպի յուր հայրենիքը: Մենք չենք կարող մի գավառ, քաղաք կամ դուրս անգամ

ցուցց ապա, որի բնակիչները վկայեին իրենց ներքնաքաղաք տարվա հետևյալն ժամանա: Մենք շատ ունենք քաղաքներ և գյուղեր, որոնց անունները հին են, բայց բնակիչները միշտ փոխվել են, հենքը գնացել են, և նորերը եկել: Քանի՜-քանի՜ գյուղեր կան, որոնք իրանց կողքի մի ամբողջ լգիտեն, թե ի՞նչ է, թեպես և այնտեղի բնակիչները բավականի հետևյալն են վկայում. բայց նրանք ինչպե՞ս և հին լինեն, նրանց նախնիքները նույն գյուղում եկել թե՛ նախնիք են, հրե սր ամբողջն արդեն ամբողջ է եղել, ապա թե ոչ, անկարելի էր, որ ժողովրդի մեջ կենդանի շմար ամբողջի հիշատակը: Ինչո՞ւ ժողովրդի մեջ, յուր կրած հեղափոխություններից հետո անգամ, դեռ կենդանի են հեթանոսական հավատալիքները, իսկ ամբողջի հիշողությունը պիտի մեռնե: Միայն նորա համար, որ հեթանոսական հիշատակը տեղի հետ կապված չէ, ժողովուրդն ուր գնում է, յուր հետ տանում է, իսկ ամբողջն այնպիսի հիշողություն է պահանջում, որ կապված է աշխարհագրական տեղի հետ:

Այսպես և դուք ազնական, պատմական վեպը կապված է յուր տեղի հետ. տեղից բաժանվեցա՞վ թե չէ, լի անցնել երկար ժամանակ, որ վեպը կամաց կամաց մոռացություն կտրին և կամ կդառնա այն բազմաթիվ դուք ազնական *հեթանոսական* մեղք, որոնք չլրում են մեր ժողովրդի մեջ, և որոնք սկզբնական ձևով անշուշտ մի մի դուք ազնականություններ են եղած:

Եթե մեր երկրում կա մի գավառ, որ սակավ զաղթականություն է ունեցել, դո՛ւն պատմության մեջ լի հիշվում, այդ Տորոսյան լեռների ճյուղերն են, իրանց անմատչելի դիրքով,—Սասուն, Շառախ, Մոկաց երկիր: Եթե Հայաստանում կա մի տեղ, ուր ամբողջական այնքան մուսուլման չէ դրո՞ծել, և ուր ազգային անկախության կտրին ոգին կենդանի է մնացել քիչ ու շատ,—մեր պատմության մեջ հիշվում են Սասունը և Տորոսի լեռները՝ Վանա լճի հարավային կողմերում. ուր հային դրացի է միայն քուրդը, որ չէր կարող հայի վերա այն բարոյական ազդեցությունն ունենալ, ինչ որ թուրքը: Եվ ահա մենք զարմանքով տեսնում ենք, որ ազգային ժողովրդական բանաստեղծության կենտրոնն են հանդիսանում խոյն կողմերը, որոնց հայ բնակիչների մեջ պատում են թե՛ նոր հորինված և թե՛ հնուց ավանդված շատ երգեր և վեպեր: Սասունցիք ունեցել են իրանց վեպերի համար նույն, որովհետև նրանք հեթանոսական կոթիվներ են տվել թաթարների և թուրքերի դեմ. սասունցիք և մոկացիք պահել են իրանց բանաստեղծական լեզուն, որովհետև թուրքի ազդեցությունը շատ չեն ենթարկվել. նրանք պահել են իրանց հին վեպերը, որովհետև իրանց հայրենիքում են մնացել և, շնորհիվ իրանց երկրի ամուր դրություն, առանձնացած կյանք են վարել և պահպանել են ազգային առանձնությունները:

Ք

Հնությունից եկած մի դուք ազնական ընդարձակ վեպի մնացորդ է և Հայաստանի այդ ժամանակ ընկալվող ժողովրդի բերանում եղած Աբամեդիքի, Դավթի և Մհերի վեպը: Այդ վեպի սկիզբը շատ հին պետք է եղած լինի, մինչև անգամ քրիստոնեությունից շատ առաջ. և պետք է նա բավականի ընդարձակություն ունեցած լինի, քանի որ նորա արդի դրություն իսկ ամբողջ մեծ ընդարձակություն է ցուցց տալիս, այն է, ինչպես ասում են, այդ վեպը բաղկացած է քառասուն ճյուղից և պատմում է Աբամեդիքի ու Սանասարից սկսած որդեց որդի պայազատող իշխան դուք ազնականների պատմությունը մինչև անժամանակ Մհերը, որով վերջանում է դուք ազնականությունը: Ահա ու

որ վնայի բուր ճշուդները, որոնց թիվը ժողովուրդն յուր սիրած քառասունին է հասցնում, իրանց վարիանտներով լին հավաքված. մենք ունինք միայն վնայի սկիզբը՝ Արամելիք և Սանասար. (հ. Սրվանձախի վարիանտում), այնուհետև Մեկիքսեթ քահանայի և Բաղդասարի անունները միայն, որ մեր վարիանտի պատճառ Մուկացու տառով, առանձին ճշուդներ են, Թուրան Դավթիք մի փոքրիկ հատված և Թուր Դավթի և Մհերի պատմությունը, ընդամենը վեց ճշուդ, որոնցից երկուսի միայն անունները, իսկ վնայի սկիզբը և վերջը քավակների ընդարձակ, Թեպետ և այդպես աղքատիկ հավաքածու է, բայց այդ աղքատություն մեք ևս հրեում է վնայի հնությունն և ընդարձակությունը, Վնայի նյութը հետևյալն է.

Բաղդասար հոր խալիֆան արշավանքներ է անում Հայաստանի վերա-
նա մի արշավանքի ժամանակ զերի տարած մի հայ աղջկա հետ ամուսնա-
նում է և նորանից ունենում է երկու որդի՝ Արամելիք և Սանասար, խալիֆան ուզում է յուր որդիներին զոհ մատուցանել յուր մեծ կուռքին, նրանք իրանց մորից իմանում են այդ և փախչում են Հայաստան, դիմում են Արդուտի և Կարսի ամիրաներին, որ իրանց ընդունեն, բայց նրանք Բաղդասար խալիֆա-
յից վախենալով լին ընդունում. վերջը դիմում են Կապուտկոզի թագավորին, որը նրանց ընդունում է յուր ժառաջության մեջ, Առամանակ անցնելուց հետո, թագավորը երկու եղբայրներին տալիս է քառասուն տուն ժողովուրդ և թույլ է տալիս, որ նրանք գնան կանգնեն իրանց բերքը, որի հիմքը դրել էին իրանց փախստից հետո, դեռ ամիրաներին շքիմած և այնտեղ բնակեն:

Բերքը կանգնում են. թագավորն յուր աղջկան տալիս է Արամելիքին և քնդի Թորոսի հետ դալիս է երկու եղբայրներին բերքը, որի անունը դնում է Սանուն—Սասուն: Երկու եղբայրները հնուհետե տիրում են Սասունի շըր-
չակտ երկիրներին, Արամելիքը սպանում է Մարա թագավորին և ամուսնա-
նում է նորա կնոջ վերա, որից, դեռ Մարա թագավորին չսպանած, ապօրինա-
բար ունեցած է լինում Մարամելիք որդին, Մարամելիքը մեծանում, նստում է Մարում, իսկ Արամելիքը՝ Սասունում: Սանասարը, քանի դեռ Արամելիքը Մարում էր նստում, վերադառնում է Բաղդաս, և սպանում է կուստան մեջ յուր հորը, երբ որ սա յուր մեծ կուռքին երկրպագություն էր տալիս, և ինքը նստում է Բաղդասում, Արամելիքը Կապուտկոզի թագավորի աղջկանից ունե-
նում է մի քանի որդի (Յուան Վեգի (Վերդո), Ձենով Հովան, Ժնեղափոքրիկ, Խարզուսան), որոնց մեջ ամենից փոքրն ու զորեղը Դավթին է:

Ազգային վնայի առաջին ճշուդի բովանդակությունն այս է. այնուհետև գալիս է մյուս ճշուդը՝ Դավթը, որից երկու վարիանտ ունինք. մենք կրեքենք երկու վարիանտից միացրած համառոտ բովանդակությունը:

Դավթը երկրորդ վարիանտում Արամելիքի որդին է, այլ նորա սե-
րունդից է. Ձենով Հովանը և Յուան Վերդոն նորա հորեղբայրներն են, իսկ Մարա քաղաքի իշխող Մարամելիքը Սասունին թշնամի մի տիրապետ է: Դավթի հայրը մեռնում է. մայրը գնում է Մարամելիքին, Մարա քաղաքի իշխողին: Ձենով Հովանը Դավթին տանում է յուր մոտ: Դավթը, դեռ երեխա, գուրդ խաղալու ժամանակ Մարամելիքի ձգած գուրդը բռնում է և նորան ամոթով թողնում: Մարամելիքը Դավթի վրա կասկածում է, և մայրը նորան ետ է ուղարկում Սասուն, Ձենով Հովանի մոտ:

1 2. Սրվանձախի վարիանտով՝ Մարամելիքը Արամելիքի հանձնարարությամբ, Արա-
մելիքի մահից հետո, Դավթին և նորա եղբայրներին, իրեն մեծ եղբայր, տանում է յուր մոտ

5694

Անհով Լոմանը Դավթին զատնարած է կարգում. նա գալլ, աղվես, նա-
պաստակ հավաքում, խառնում է դառնորին, բերում է քաղաք: Ընտո նա
հորթարած է դառնում (հ. Սրվանձտ. վարդանտ) և ընկնորթյուն է անում
ռամկի հորթարածի հետ: Մեկ օր նա գնում է ռամկի ցամառն ժամի հարի-
սայի կաթսան ամբողջ վերցնում, բերում է յուր հըքայր հորթարածի համար,
որ լէր կերել հարիսայից. նորա բացակայության ժամանակ քառասուն հա-
րի կերի գալիս, հորթերը հափշտակում, տանում են. Դավթը հորթերի
հետքով գնում է դեերի այրը. բոլորին կոպակով կոտորում է. մյուս օրը քնոթ
Քորոսի հետ նրանց կողոպտուտ վերցրած բոլոր կարողութունն այրից հանում
է: Դավթին նախորդը են դարձնում. նա մեծ մեծ գազաններին է հավաքում,
բերում քաղաք. քաղաքացիները վախենում են և նրանց խնդրեցով Անհով
Լոմանը Դավթին նախորդությունից հանում է, տանը հյուրընկալ է կարգում:
Դավթը լէ կատարում Անհով Լոմանի կնոջ՝ Սադի կամքը և սորա զրպարու-
թյամբ Անհով Լոմանը նորան տնից դուրս է անում: Նա ապրում է մի պա-
ռավի մոտ, որ յուր հոր սիրականն է հղած, և որսորդությամբ է ապրապում:

Այդ ժամանակ Մարամեիքն ուղարկում է Կոզրազնին (Խոլբաշի), որ
ազատ Մասունից հարկ առնեն Դավթը, պառավի խորհրդով, Կոզրազնի
մարդկանց կոտորում է և Կոզրազնին խայտառակաբար ճանապարհ է դնում
դեպի Մարամեիքը: Մարամեիքը զորածողով է լինում, և գալիս է Սասնու
վերա: Դավթը Անհով Լոմանից զոռով ստանում է յուր հոր «Մարութա-
րանձրիկ Անտվարածին, խաչ-պատարաղին, ինչ վար աչ քնին, Քուսկիկ-
Ջալալին, թուր կեծակին, գլխու գնդոնին, կապեն խաբուկին, քամարն ի մեջ-
քին», և մենակ դուրս է գալիս Մարամեիքի դեմ կռվի: Ժանապարհին լողա-
նում է յուր հոր կաթնաղբյուրում և կատարյալ գլուցազնի փխվում, ապա
յուր ուժը ճանապարհին տնկված երկաթն սյան վերա փորձելուց հետո, սարի
վերալից Մարամեիքի բանակին երգով իմաց անելով, հարձակում է զործում
և կոտորածն սկսում: Զորքի միջից մի ալևոր խորհուրդ է տալիս Մարամեիքի
հետ մենամարտել և իրանց լկտորել, որովհետև Մարամեիքն իրանց զոռով է
կոխվ բերել: Դավթը գնում է Մարամեիքի կանալ վրանը: Մարամեիքին զո-
ռով քնից հանում են. նա Դավթին հյուրասիրում է (հ. Սր. վար.), բայց վերջը
ձգում է առաջուց պատրաստած թակարդի մեջ:

Անհով Լոմանը երազի մեջ իմանում է Դավթի նեղ դրությունը և Սև ձին
նստելով մի անկթարթում նլնում է սարի գլուխը, որոնդից բարձր ձայնով
Դավթին հասկացնում է խաչ-պատարաղին գերբնական զորությունը: Դա-
վթը հորից դուրս է գալիս և Մարամեիքի հետ մենամարտելով, նորան
սպանում է և տիրելով Մարա քաղաքին, նստում է այնտեղ:

Անհով Լոմանը Դավթի համար նշան է դնում Զաշկիկ Սուլթանին. բայց
այդ ժամանակ Կաղզվանու տիրոջ աղբիկ Խանդուք Խաթունը, որ ավելի գեղե-
ցիկ էր, երկու գուռան է ուղարկում, որ յուր գովքն անեն Դավթի մոտ և Դա-
վթը գա իրան ուղի: Գուռանները գալիս են Սասուն և Խանդուք Խաթունին
զովում: Գուռաններին ծնծում են և Սասունից դուրս քշում: Նրանք հուսադ-
նորից իմանում են, որ Դավթը Մարում է, գնում են Մարա քաղաքը: Դավթը,
լսելով Խանդուք Խաթունի գովքը, գալիս է Սասուն և յուր հորեղբորը հայտ-
նում է, որ Խանդուք Խաթունին պիտի ուղեն: Նա ճանապարհ է ընկնում դեպի

գառնու. բայց քնի Քորոսը, իբրև ավելի մեծ իրավունքի տեր, գնում է. նրանց բերում է Սա-
սուն: Այնտեղ ևս Մարամեիքը կոտորածում և վախենում է Դավթից, որ յուր գլուցազնությունը
քաղց է տալիս Մարամեիքի թրի տակով լանցնելով և յուր ուժով:

կաղզվան, ճանապարհին երկու անգամ լծվում է գութանին և գոմեշներին փոխանակ ինքը քաշում է գութանը: Երբ որ Դավիթը հասնում է Կաղզվան և հանգութ հաթունը պատուհանին նշան է տալիս Դավթին, մյուս հարսնախոս փառլամենները նախանձում են Դավթի վերա և խնդույթի ժամանակ ուզում են նորան սպանել: Բայց յի հաղողվում Դավիթը նրանց սպանում է, նա գտնվում է հանգութ հաթունի հետ և ուզում է յուր քաղությունը ցույց տալ հանգութ հաթունին: Քշնամիները, Հալաբա թագավորի առաջնորդությամբ, պաշարում են Կաղզվանը: Դավիթը հաղթում է նրանց: Քշնամիները խաբեությամբ Սասունից բերել են տալիս Յոան Վերդոյի որդի Պարոն-Աստղին, որ Դավթի հետ կալի: Դավթին ակամա սպանում է Պարոն-Աստղին:

Հանգութ հաթունն և Դավիթն ամուսնանում են և ճանապարհ են ընկնում գեպի Սասուն: Չմշկիկ Սուլթանը զայիս է Դավթի առաջ և ուզում է յուր անպատվության վրեժը կռվով առնել Դավթից: Դավթը նորանից ութ հոր միջոց է ուզում, որ յուր կնոջը տանի Սասուն և նոր զա կռիվ անի, և երգվում է խալ-պատարազինի վրա: Բայց նա Սասունում ութ տարի շարունակ մոռանում է յուր տված երդումը:

Մնվում է Դավթի որդի Մհերը, որի մի ձեռքը խփված է. միայն հայրը կարողանում է բանալ որդու խփված ձեռքը, որի մեջ մի կաթ արյուն է լինում: Մհերը դուրսագնաբար արագ մեծանում է և երեսայության ժամանակ իսկ պատիժ է դառնում սասունցիների գլխին: Նա հորը չէ ականջ դնում. և երբ հայրը նորան մի ապուստ է խփում յուր շինած կամարով սասունցիներին նեղելու համար, նա, ութ տարեկան հասակում հոր հետ կռիվ է մտնում, Հայրը նորան անիծում է, որ զավակ և մահ լուսենան և տեսնելով, որ խալ-պատարազինն յուր թևի վերա սեպցի է. հիշում է Չմշկիկ Սուլթանին տված երգումը և զնում է նորա մոտ: Չմշկիկ Սուլթանը նորան սպանում է, ետեից ծածուկ խփելով կրակացքած գութանի խոփով, երբ որ նա ավազանում լողանալուց հետո դուրս եկել, շորերն էր հագնում: Հանգութ հաթունը թույն է խմում և մեռնում:

Մհերին Ձենով Հովանը դուրս է անում Սասունից. նա յուր հորն ու մոր գերեզմանների վերա լաց է լինում և նրանց ուրվականների խորհրդով ճանապարհ է ընկնում գեպի Հալաբա քաղաքը: Ժանապարհին պատահում է Գուհար խաթունի մոտը, որը խոստանում է յուր աղջիկը տալ Մհերին: Մհերն և Գուհար խաթունը կոտորում են Հալաբա թագավորի բանակը, որ եկել էր Գուհար խաթունին թագավորին կնության տանելու: Գուհար խաթունի մահից հետո Մհերը շարունակում է փառլամենություն անել: Բայց վերջն ինքն ևս ձանձրանում է յուր կյանքից, որովհետև յուր շափազանց ուժից ոտները խրվում էին գետնի մեջ և որոտորոներն ու ուրիշ փառլամենները նորան նեղում էին: Նա հալաբա քաղաքի տակ երկար տարիներ աղոթք է անում Աստուծուն և Աստված նորան մարմնավոր կերպով ձգում է Վանա ավազ, ուր գտնվում է միևնույն աստված վրեժն առնելու համար, ավերում է նրաք:

¹ 2. Սրվանձտյանի վարիանտով՝ խաթուններն են Դավթի առաջ դուրս գալիս, երբ Դավթը հանգութ հաթունի հետ Սասուն էր գալիս: Դավթը խաթուններին հրդուժում է, բայց սխալվելով, փոխանակ սանրի վերա երգվելու, ս. Նշանի վերա է երգվում: Խաթունները նեղ են լինում Դավթին. և երբ Դավթը, նրանց ձեռքից փախած, լողանում էր Հոխարա ջրում, Արամիկից քեղից (ապրիկարար օճիված) մի աղջիկ թագ կացած օճիցից նետով խփում, սպանում է նրան: Մհերն յուր հոր մահվան վրեժն առնելու համար, ավերում է նրաք:

Մ. Խորենացիին յուր Պատմության Ա գրքի Բ զվտում հիշատակում է. «Իրաքանյիս տանց ասանձնականութեանց... զտանին տմբաւ զդուցաց մատանց, մասաւանդ որ ի սեփական իշխանութեան պայազատութիւնս: Խորենացու այս խոսքերից երևում է, որ Ե դարում գրեթե մեր ըստր նախարարական տներն ունեցել են իրանց առանձին պատմության գրավոր մատյաններ, որոնց մեջ գրված են եղել իշխանական տների մասին զրույցներ, նրանց իրար հետ ունեցած կոնֆլիկտներն ու դաշինքները, և ինչ որ վերաբերում է նախարարական տների պայազատութեան (հաշորդութեան): Մեր նախարարական տներին շատերի ծագումն այնքան հին է եղել, երբ որ Հայաստանում գրի գործածութիւնն ամենեկին չէ եղել. եթե Ե դարում գրված են եղել նրանց մասին զրույցներ, այդ զրույցների հին մասն անշուշտ պիտի վերցված լինէին Ժողովրդի և իրանց՝ ազնվական տների մեջ եղած քերականցի ավանդութիւններից: Թե իշխանական տների մասին քերականցի վնասներ եղել են մեղանում, այդ արդեն հայտնի է, բայց այդ վնասներից Խորենացին յուր Պատմության մեջ հատկապէս է բերում միայն այն վնասներից, որոնք վերաբերում են թագավորի հարստութեանը կամ Արարատյան մեծ իշխանական տանը, իսկ մասնավոր նախարարական տների համար ու ըստականանում է հիշելով միայն համառոտ խոսքերով նրանց ծագումը, առանց հայտնելու, սակայն, թե ո՞րտեղից է վերցնում, թեպետեւ տեղ-տեղ նա ակամա կարծես, ստիպում է ցույց տալ, որ նախարարութիւնների ծագումը և նրանց պատմութիւնն ևս վերցնում է բանավոր ավանդութիւններից:

Այդպիսի մի ավանդութեան կտոր նա բերում է Արծրունյաց մասին. «Թողում զառաւարկեացն քաջազանս, որ ի Հաղամակներտն պատմին. մանկան Նիրհելոյ անձրեւ և արեւ հակառակեալ, և հովանի թռնոյ պատտաւոյն թալկացելոյ» (ք գր., է գլ.): Նույն Արծրունյաց և Աղձնիսց բոլորիւմիւս ծագման մասին Խորենացին, իբրեւ թե Մարասից քաղելով, ասում է. «Զոր (զՍենքերիմ արքայ Ասորիստանեայց) սպանեալ որդւոց նորա Աղրամելայ և Սանասարայ, եկին փախստական առ մեզ. յորոց զմինն յարեմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդի մեր քաջ նախնին, այսինքն զՍանասար. և ի սմանէ սերեալ լցին զՍիմն կոչեցեալ լեւոն: Իսկ պերճքն և գլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ, բոլորիւմիւսն կողմանցն (Աղձնեաց բոլորիւմիւսն) արժանացան առնուլ: Իսկ Արզամիզանն (Արամել) յարեմտից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ, ասէ պատմագիրն (Մարասար) լինել զԱրծրունիս և զԳնունիս» (Խոր. ա գր., ի գլ.): Մի ուրիշ տեղում ասում է. «ԶՄարաշան ի տանէ Ասանասարայ հաստատէ բոլորն մեծ և կուսակալ յարեմտից հարաւոյ, յեզեր սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ,՝ զառաւ պարգեւելով զԱրձն, որ շուրջ զնովաւ, և զլեւոն Տաւրոս, ուր և Սիմ, և զԿղեւոնն ամենայն» (ք գր., բ գլ.):

Աղրամելի և Սանասարի Հայաստան գալու մասին հիշատակված է և Աստվածաշնչի մեջ. «Մինչդեռ երկիրպագանէր (Սենքերիմ արքայ) ի տան Ննարաքայ աստուծոյ իւրում, Աղրամելէք և Սարասար որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն Արարատայ» (Զոր. թագ. ԺԹ գլ. 37): Ս. գրքի և Խորենացու պատմութիւնը գրեթե նույնանում են անուաներով. Սարասար միևնույն Սանասարն է, իսկ Աղրամելէքը—Աղրամել, որ Խորենացի

ցին մի քիչ ներքնում Արդամոզան է անվանում, որ կամ Աղբամալի աղա-
վադումն է, կամ ուրիշ կոչումը՝

Այսպես Խորենացուց մենք ունենք Աղձնյաց բղջխության և Արծրունյաց
ծագման պատմությունը. Աղձնյաց բղջխները Սանասարի, իսկ Արծրունիք
Արդամալի օերունդներն են և բնակվել են Սիմ սարում և նորա հարավային
արևելյան կողմերում:

Աղձնյաց բղջխների աշխարհը մեր պատմության մեջ հայտնի է Աղձ-
նիքը, որի հյուսիսային կողմը կտրված է Տորոսյան լեռներով, որոնց մեջ է
գտնվում Սասունը, Սիմի հարավային կողմում. իսկ Արծրունյաց երկիրն
ամենի արևելք է ընկնում, Վասպուրական աշխարհում: Բայց, ինչպես երևում
է, Արծրունիք էլ սկզբում ամբիջի արևմուտք, Աղձնյաց սահմաններում էին
բնակվում. ինչպես գրում է Խորենացին՝ «յարեւից հարաւոյ նորին կող-
մանն», այսինքն՝ Սիմ լեռան: Թո՛ւմ Արծրունին գրում է. «Վասն բնակու-
թեան նախնեացն նոցա (Արծրունաց) Աղբամալայ և Սանասարայ Արզն
(յԱրզն) կուեցին Արծրունիք» (4. Գ. տպ. եր. 46): Այս ցուցմունքներից երև-
վում է, որ ինչպես Աղձնյաց բղջխների, նույնպես և Արծրունյաց բնագա-
վառն եղել է Արզն, Արձն գավառը, որ Աղձնիքում է, Սասնու հարավային
կողմերում:

Այսպես պատմությունից տեսնում ենք, որ Աղբամալիքի և Սանասարի
օերունդները տիրել են Տորոսյան լեռների Հյուղերում, Աղձնյաց, Մակաց,
Վասպուրականի և Տուրուբերանի սահմաններում և հին ժամանակներից կազ-
մել են Հայաստանի հզոր նախարարություններից հրկուսը, արևմուտքում
Աղձնյաց բղջխությունը, իսկ արևելքում՝ Արծրունիք: Այս նախարարություն-
ները մեր պատմության մեջ ժեռ գեր են խաղացել, սկզբում Աղձնյացը,
հետո Արծրունյացը, և քանի որ մեր նախարարություններից շատերի մասին
կային զրույցներ, ապասիլ էր, որ այդ ցեղակից նախարարությունների մա-
սին նս լինեին ժողովրդի մեջ զրույցներ: Արծրունյաց մասին եղած մի զը-
րույցի բովանդակությունը, որ վերը բերեցինք, հիշում է Խորենացին. բայց
Աղձնյաց մասին հին զրույցների հիշատակություն չկա. միայն ԺԱ դարի
պատմիչ Արիստակես Լաստիվերտցու մեջ գտնում ենք մի կտոր. «Իշին զօրքն
ի լեռնէն Սիմն կուեցեալ, զոր մարդկան սովորութիւն Սանասունէ ասեւ ըստ
տեւտեւն նախնայն իւրեանց» (Լաստ., ԴԱ գլ.): որից երևում է, որ ԺԱ դարում
Սասնու կամ Սիմ լեռան ժողովուրդը դեռևս ունեցել է կենդանի զրույցներ
յուր նախնիքների մասին, և մինչև անգամ հիշելիս են եղել, որ Սանասունը,
այսօրվան Սասուն անունը դուրս է գալիս իրանց նախնուց, հավանականորեն
Սանասարից, որ, ըստ Խորենացու, Աղձնյաց բղջխների նախահայրն է:

Այդ ավանդություններն անշուշտ հնությունից, Սասունացոց նախնու ժա-
մանակից, եկած հասած պետք է լինեին մինչև Լաստիվերտցու ժամանակ-
ները. և որովհետև Տորոսյան լեռներում բնակող հայ ժողովուրդը, ինչպես
վերևում նկատել ենք, պակաս տեղափոխություններ են կրել և ամբիջի են պա-
հել իրանց նախնական առանձնությունները, ուստի և մենք պիտի սպասենք,
որ մինչև մեր օրերն իսկ պահված լինեին այնտեղ զեթ սոսկ ավանդություն-
ներ իրանց նախնիքների մասին, որ են Աղձնյաց բղջխները և նրանց ցեղա-
կից ու սկզբում մոտիկ ապրող Արծրունիները: Եվ մենք այժմ գտնում ենք,
ոչ լո՛կ ավանդություններ, այլ ամբողջ ժողովրդական վեպ, որ, ընայելով
դարերի ընթացքում կրած փոփոխություններին, ակնհայտի երևում է, որ

նոր՝ վնաս չէ և վերաբերում է վերահիշյալ երկու իշխանական տներին ծագմանը և նրանց սերնդին:

Դ

Այս ենթադրութիւնը՝ թե այժմյան Արամելիթի և Սանասարի, Գալթի և Մհերի վնասը Արծրունյաց և ալեքի Աղծնյաց թղթիւնների ծագման և սերնդի մասին է՝, ալեքի բացահայտ է վնասի առաջին հշտդից՝ Արամելիթի և Սանասարի պատմութեան մեջ: Վնասի Սանասարը միևնույն հորինացու Սանասարն է կամ Աստվածաշնչի Սարասարը, իսկ Արամելիթը Աստվածաշնչի Ադրամելիթը, կամ հորինացու Ադրամելը (Արգամզան): Հերոսների անունների նույնութիւնից զատ, վնասի ամբողջ ընթացքն յուր աշխարհագրական տեղերի հետ միասին նույնանում է Աստվածաշնչի և հորինացու պատմութեան և տեղերին:

Բաղդադու խալիֆան ներկայանում է փոխանակ Ասորեստանի (Նինվեի, որից հարավ ընկնում է Բաղդադը) Սենեքերիմ թագավորին, որ կռապաշտ է, ինչպես և վնասի մեջ Բաղդադու խալիֆան: Ժողովուրդը Նինվեի թագավորին անվանում է Բաղդադու խալիֆա, որովհետև Նինվեն և իր թագավորութիւնը, խորին հնութիւն ունենալով, ժողովրդի հիշողութիւնից դուրս են եկել և նրանց փոխանակել է ալեքի նոր ժամանակների Բաղդադու ժամանակաշրջանի խալիֆայութիւնը. բայց միանգամայն ժողովուրդը վնասի մեջ չէ մոռացել, որ այդ կողմերում նստող (Նինվեի) թագավորը կռապաշտ է եղել, այնինչ Բաղդադու խալիֆաները կռապաշտ չեն եղել, Այսպես տեղի և անունը ժամանակի ընթացքում փոփոխութիւն են կրել—թեպետ և տեղը Նինվեից շատ էլ չէ հեռացել—բայց կռապաշտական կյանքը նույն հինն է մնացել, թեպետ և ոչ հայերի համար, որովհետև ժողովուրդը չէ համատու, թե երբեքից հայքրիստոնյաները կարող էին կռապաշտ լինել: Վնասի մեջ հիշում է և Բաղդադու խալիֆաների արշավանքները դնակի Հայաստան, իսկ պատմութիւնից հայտնի է, որ Ասորեստանի թագավորները շատ անգամ արշավել են Հայաստանի վերև և մինչև անգամ նրանցից մեկի, Թակլատ-Պալասարի արծանը զոտնվել է արեւմտյան Տիգրիսի վերին հովիտներում, Տորոսյան լեռների մեջ: Հայոց հարաբերութիւնը ասորեստանցոց հետ թե՛ հորինանցուց և թե՛ սեպագրութիւններից հայտնի է:

Վնասի մեջ Սանասարը և Արամելիթը իրանց հոր ձեռքից փախստական գալիս են Հայաստան. նրանք դիմում են Արզրումի, Կարսի ամիրաներին, որոնք լին ընդունում նրանց, վախճնալով Բաղդադու խալիֆայից. նրանք գալիս են վերջապահ Կապուտկոդի թագավորի մոտ, որ նրանց ընդունում է: Հետաքրքիր է այստեղ այն կետը, որ վնասի մեջ Հայաստանում այդ հին ժամանակներում դուրս է գալիս մի թագավոր՝ Կապուտկոդի թագավորը, և մյուս քաղաքներում՝ Կարսում և Արզրումում նստող հասարակ ամիրաներ, որոնք միևնույն հին նախարար իշխաններն են, միայն ժողովրդի հիշողութեան մեջ միջին դարերի պատմական կյանքի անդհնդութեան տակ ամիրայի փոխված: Սույն իշխանական գրութիւնը եղել է Հայաստանում և այդ հին սեպագրական ժամանակներում.—մի մեծ իշխան և երկրորդական թագաւթիվ իշխաններ, որոնք ալեքի թույլ են եղել և ենթարկված մեծ իշխանին: Ասորեստանցոց հետ ունեցած հարաբերութեան մեջ զլխավոր առաջնորդը եղել է մեծ իշխանը, ինչպես և վնասի մեջ նախարար ամիրաները լին համարձակվում տեղի ապաս-

¹ Տե՛ս պ. Ս. Մանդիլյանի «Աղագրի գրութագրական աշխարհի» հավելածը:

տանի տալ Ասորենտանի թագավորի փախստական որդիներին, իսկ թագավորը տալիս է Ափսոս որ վնասի մեջ չէ հիշված Կապուտկոդի թագավորի անունը, որ տեսնեմք թե մնացած կլինե՞ր արդյոք մեծ իշխան Սկայորդու անունը, որին է տալիս Խորենացին Սենեքերիմի որդիներին ընդունելու Սկայորդի անունն իսկ մի վիպական կոչում չէ՞, որ անված է առաջին վնասերից, Խորենացու պատմության մեջ Սկայորդին թագավոր չէ անվանվում, բայց նա հայրն է Պարոյրի, որ առաջին պատկավոր թագավորն է Հայկազանց թագավորների մեջ, որով և վնասի մեջ եղած թագավորի կոչումը շատ չէ հեռանում պատմության մեջ հիշատակված հայոց թագավորության ժամանակից։ Միայն մի տարրեր կես կա պատմության և վնասի մեջ, այն է, որ վնասի մեջ Կապուտկոդի թագավոր է հիշվում, իսկ պատմության մեջ մեր առաջին մեծ իշխանները և թագավորները Արարատում էին նստում, թնայեա և նրանց ենթարկվում էր և Հայաստանի հարավային մասը։ Կապուտկոդ կամ Կապուտոն կամ Հնեաքաղաք լեռներն ընկնում են Վանա լճի հարավային կողմը, լճի մեջ խորը մտնող հրվանդանի վերա՝ Ժ և ԺԱ դարերում Կապուտկոդին մոտիկ, դեպի արևելք՝ Ռշտունյաց Ուտանում և Աղթամարում նստում էին Արթուրունյաց կամ Վասպուրականի թագավորները, որոնց ձեռքին էին այդ կողմերը։ Կարելի է կարծել, որ վնասի և պատմության այս աշխարհագրական տարբերությունը ևս ժամանակի ընթացքում կրած փոփոխությունն է, որով ժողովուրդը թագավորին նստեցնում է այնտեղ, որ իրան ավելի մոտ է և ուր ավելի մոտիկ ժամանակներում նստել են հայ թագավորները։

Կապուտկոդի թագավորը Սանասարին և Արամեւիթին տալիս է քառասուն տուն ռամիկ ժողովուրդ, որոնց բնակեցնում են իրանց նոր շինած բերդում, որ թագավորն իբրեւ կալված նրանց էր բաշխել. բերդի անունը դնում են Սանսուն, Սասուն, որ Սիմ լեռան հարավային կողմում է՝ Նրկու եղբայրներն իրանց իշխանությունը հետզհետե ընդարձակում են Սասունից դուրս դեպի հյուսիս. «Սն-սարի բոլոր ու լուր Սծմակա-քիթ՝ Մշու վերևով պատան քաշած եղած են լուրի Սնդանսբլու գոտինը վի Ճապաղջրու դուրան ու զըզ բիթուս լն զավթեց (Արամեւիթ) ... օրմ՝ լն զարկեց գնաց լուրի Մըսըր, ու Մըսըր լն զավթեց։ Սն սարը միենուլն Սիմ լեռն է. սորա հյուսիսային ճյուղերից մեկն է Սծմակա-քիթ սարը, որ Մշու արևելյան կողմում է, մոտ երեք ժամ հեռու Մշուց՝ և որի վերա Դավիթը գութանին լծվելով քաշեց մինչև Մանիկ գյուղը, որ Մշու հարավային արևելյան կողմում է, Սիմ լեռից հյուսիս։ Ծապաղջուրը ընկնում է Արածանու աշ ափին՝ Բալուից արևելք, Բինգյու լեռներին հարավային-արևմտյան կողմը։ Սնդան-սարի գոտին, վնասի նկարագրության

1. Պ. Գարգալյանն իր՝ Խորենացու խիստ ցնեղատուության մեջ ամեն կերպ ջանալով ապացուցանել, թե Խորենացին լուր պատմությունը (հին մասը) մեծ մասամբ իրանից է հեղադրում, իբրեւ փառաբերում է և այն, որ իբրեւ թե Խորենացին Սանասարին Սիմ լեռան կողմում է բնակեցնել տալիս միայն Սիմ և Սանասար անուններին նմանությունից հանելով. Խորենացին «Տայ նա (Սկայորդու) քնակեցուցանել զՍոնսար, Սիմ և Սանսար անունից մայրի նմանութան նայելով» Սիմ լեռան, այսինքն Աղթնաց կոչվել... Խորենացին Սիմ անունն է Սանասարայ կը Թուփ հանել (Պառ. ժն. պատմություն հայոց)։ Թե Խորենացին այս պատմությունն իրական չէ հնարել և ունեցել է աղբյուր, եթե ոչ գրաբար, գեթ ժողովրդական, բանավոր, զրան վկա է մինչև այժմ կենդանի մնացած վնասը, որով Սանսարը Սիմ լեռան հարավային կողմը, Սոնսուն է բնակվում։ Սիմ և Սանսար անունների մեջ, ինչպես Պ. Գարգալյանը նմանություն չէ գտնում, Խորենացին ևս չէր գտնել, բայց կա նմանություն Սանս-սար և Սանսո-ունց (Սասուն) անունների մեջ։

2. Տեղագրությունք ի Փոքր ի Միջինասիա՝ հ. Սարգսյանի, թ. 237։

Համաձայն, պիտի ընկնի ժապաղաչքի մեջ, ս. Կարապետի վանքից արևմուտք և պետք է Բինգյուլից դեպի Հարավային-արևմուտք ձգվող ճյուղերից մեկը լինի, իսկ Մարը կամ Մուրը, Մարա քաղաքը, որ վեպի մեջ շատ է հիշվում և որ կազմում է Մասունի թշնամի մի տերություն, սխալ իմացություն տեղիք կարող է տալ յուր Համանվանությունը Եգիպտոսի Մարը կոչման հետ: Մինչև անգամ պ. Ս. Մանդինյանը յուր դասագրքի մեջ (Ազգ. դուցազն. աշխարհ) Մարը դարձրել է Մուսուլ (Մուսուլ), որ հին Նինվեի տեղերումն է, Տիգրիս գետի վերա: Բայց Մուսուլը, որ Հայաստանից դուրս է, լի կարող Մարա քաղաքը լինել: Հենց վեպի նկարագրության ընթացքից երևում է, որ Մարը պիտի ընկնի Տորոսյան լեռների Հյուսիսային կողմը, ժապաղաչքից արևմուտք, որովհետև վեպը որոշում է Արամելիքի իշխանության Հյուսիսային սահմանները արևելքից արևմուտք, որ են՝ Մեմեկա-քիթ, Մշու Հյուսիսային կողմի պատ քաջած լեռներ, Անդան-սարի գոտի, ժապաղաչք և վերջապես՝ ամենից արևմուտք՝ Մար կամ Մարա քաղաք, որպիսի կոչմամբ միշտ հիշվում է մեր վարիանտում: Փափստոս Բյուզանդի մեջ կա մի այսպիսի կտոր. «Եւ (Հայր Մարգարեան) յափն գետոյն Հոսանացն Եփրատու, հսկիտան թանձրախուռն անտառին, ի գետախառնուռն նրկուց (հիւսիսային և արևելեան ճփրատ)»... որ ի տեղույն ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Անատուրուկ արքայի, որում անուն տեղույն Մծուր կոչի» (Թլւգ., շորը. զպ., ժղ զլ.): Այժմ ևս նույն տեղում Արածանու աջ ափում, Հյուսիսային ճփրատի խառնարանի մոտիկ ընկնում են Մեծուր լեռները, Փ. Բյուզանդի հիշած սույն Մծուր քաղաքը, յուր քաղաքով, պիտի լինի և Մարը կամ Մարա քաղաքը (Մծրա քաղաք): Թուրքական արտասանության արդեցություն տակ ծ ստառ հնչողության մեջ փոխվում է զ-ի կամ ա-ի, մանավանդ թե լավ սասած, քրդերի մեջ բը-նակող Հայերը ը լուսին, այլ միշտ զ կամ ա փոխանակ ծ-ի՝

Սանասարի և Արամելիքի կալվածների իրրե պարզև ստանալը թագավորից և այդ կալվածների ընդարձակումը հիշատակվում է այսպես և ժողովրդական վեպի մեջ, պատմական հիշատակությունից այն տարբերությամբ միայն, որ պատմության մեջ Աղմեթում և զեպի արևելք է հիշվում, իսկ վեպի մեջ Տուրքերբանում և զեպի Հյուսիս: Այս տարբերությունը առաջացած պիտի լինի նորանից, որ միջին դարերում Սասունցիք հարաբերություն ունեին ավելի Հյուսիսային կողմերի տիրապետների հետ և, է դարից սկսած, մինչև անգամ Մասունն արդեն միացած էր Համարվում Տարոնի հետ՝ և զանվում էր Մամիկոնյանց ձեռքին մինչև ԺԲ դարը, երբ որ Աղմեթյաց բզնչությունն այլևս չկար, իսկ Արծրունիք վասպուրականում էին: Կարելի է ասել և այն, որ Հ. Սրվանձտյանի վարիանտի պատմողը, Մշու կողմերից լինելով, հիշատակում է Մշու մոտիկ աշխարհագրական անուններ, ճիշտ մեր Մոկացու պատմածի մեջ ևս Արամելիքի և Սանասարի պատմությունը լինել, թերևս այնտեղ դեպի հարավ և արևելք, այսինքն զեպի Մոկաց կողմերը ընդարձակվելը պատմվել, որ ավելի հին ժամանակին կը վերաբերել և պատմության հիշատակության համեմատ կլինել:

Աստվածաշնչի մեջ Սարասարն և Աղրամելեքն առաջ իրանց հորն սպանում են և հետո փախչում Հայաստան. իսկ վեպի մեջ հորը սպանողը միայն Սանասարն է, որին սուր պապու (հոր) կոչեն լըն թողի որ ըզի (Սա-

¹ Այժմ՝ ևս Արածանում, աջ ափում հյուս. ճփրատի խառնարանից քիչ արևելք կա Մեզրե Կալվածի ավանը:

² Հավան Մամիկոնեան, վանեան. եր. 18 և Մատ. Ունեյիցի, մ.ս. Բ, հատվ. ճգ:

սուն) սթրեր ու ելամ խըստ էրեց ու պապուն ու մամուն ու գնաց Բաղդադը։ Այնանդ Սանասարն յուր հորը, որը որ սա երկրպագութիւն էր տալիս յուր մեծ կոթին, սպանում է. առ հեղմ ըն յեքոր կնամ պապ, տղեն... կուրզ մի իջավ ու զպապ խալիֆին յոթն զազ գնտին վար իշուցաւ։ Սանասարն յուր հորն սպանելուց հետո Բաղդադում նստում է յուր հոր աթոռը, իսկ Արամելիքը մնում է Սասունում, ժամանակի այս տարրերութիւնը, ինչպես և Սանասարի կրկին Բաղդադ վերադառնալը, հարկավ կարող էին հազարավոր տարիներ ընթացցում, բերեներան ավանդվելով, հեղաշրջվի։

Թն ինչու՞ Սենեքերիմի որդիքը Հայաստան և ոչ ուրիշ երկիր են փախել, պատմութեան մեջ չէ հիշված, թերևս նորա համար, որ Հայաստանն սպաւիթնելու համար ավելի ապահով տեղ է եղել իբրև ասորեստանացոց հետ պատերազմող և նրանց շփառակող երկիր։ Վեպի մեջ կա և մի ուրիշ հանգամանք. որ հայրասպան եղբայրներին Հայաստանում է ապավինել տալիս. այդ այն է, որ Բաղդադու խալիֆայի կինը հայ է եղել, ուստի և Արամելիքն ու Սանասարը ավելի Հայաստանում իրանց մայրական ազգականների մոտ կարող էին հուսալ ապաստան գտնել, քան ուրիշ երկրներում, որոնք բոլորը Բաղդադու խալիֆաների մեծելներին էին փախում, ուր մնաց կենդանիներից, Քնպետն վեպի մեջ Հայաստանի ամիրաները ևս վախենում են և նապուտկողի թագավորն ընգտնում է նրանց, լիմանալով թե նրանք Բաղդադու խալիֆայի որդիներն են, քայց այդ վեպի ազգավազումն է միայն, որովհետև վեպի հոսի մասից երևում է, որ երկու եղբայրները թագավորի ազգականն են. «մենք քո ավյատն ենք»—ասում են նրանք Կապուտկողի թագավորին։ Բացի այդ կա մի անձնավորութիւն, որ Արամելիքի և Սանասարի քեռին է. քեռի Թորոսը, որ թագավորին մոտիկ մարդ է դուրս գալիս, նորա հետ դնում է Սասուն, Արամելիքի մահից հետո նա է կառավարում Սասունը, Արամելիքի երեխաները նորանն են և նա է հող տանում նրանց մասին։ Դատաստանը նրանց քեռի Թորոսին է հասցնում քան թե Արամելիքին, որ նրանց խորթ եղբայրն էր¹. մի խոսքով նա ներկայանում է իբրև Արամելիքի տան խնամակալը և թագավորին մոտիկ ազատ, ազնվական մարդ, իշխան, որով և երկու եղբայրների մայրը, որ Թորոսի քույրը պիտի լինէր, թագավորին մոտիկ ազնվական ցեղից է եղել, նորա համար և երկու եղբայրները հայոց թագավորի մոտ են ապաստան գտել։

Եթե վեպի բոլոր փոփոխութիւնները դուրս ձգենք, կստանանք հետևյալ քովանդակութիւնը, որ նույնանում է Աղձնյաց բզեշխների և Արծրունյաց ծագման մասին եղած պատմական ցուցումներին հետ.

Ասորեստանի Սենեքերիմ թագավորն (Նինվե, Բաղդադու խալիֆա) արշավանքներ է անում դեպի Հայաստան։ Մի արշավանքի ժամանակ հայոց թագավորի ազգականներից, կամ ազատ տներից գերի տարած մի աղքատ հետ ամուսնանում է. նորանից ունենում է երկու որդի՝ Սանասար և Արամելիք։ Մրանք իրանց հօրը կուտան մեջ, երբոր նա երկրպագութիւն էր տալիս յուր մեծ կոթին, սպանում են և փախչելով Հայաստան, ապաստանում են հայոց թագավորի մոտ, որ յուր աղքատը տալիս է Արամելիքին և կալված ու ծուղովորդ բաշխելով. իրանց քեռի Թորոսի հետ նրանց բնակեցնում է Սիմ լեռան հարավային կողմերում, ուր հիմք են դնում Սասունին։ Արամելիքի և Սանասարի սերունդներն այնտեղ աճելով, տիրում են Սիմ լեռան շրջակայքին

¹ Ը. Արվանդտյանի վարկածով Քնպետն Մարամելիքը Արամելիքի որդին է, քայց գարձալ դուրս է գալիս իբրև առար, Քնպի անձ։

և կազմում հայոց հղոր նախարարութիւններէ մեկը, որ՝ ինչպէս մեր շատ նախարարութիւնները՝ ծագմամբ ոտար է:

Ե

Մենք շունչինք Արամեյիքի և Սասնաւորի անմիջական հաջորդների ճշու-
ղերը, որ իմանալինք վեպի պատմութիւն շարունակութիւնը և համեմատելինք
Աղձնայաց ըզնշխներին և Արծրունչաց պատմութիւններին հետ՝:

Արամեյիքի շառավիղներին վերջինների՝ Դավթի և Մհերի վեպի մեջ չէ
երևում ազգային պատմութիւն մեջ հիշատակված Աղձնայաց կամ Արծրունչաց
արարքների հետ նմանութիւն.—գուցե լինի էլ, բայց մեզ հայտնի չէ—միայն
թե ուրիշ պատմական կետեր երևում են, և այդ վերաբերում է ավելի մեր նոր
ժամանակին, միջնադարյան պատմութիւնը, երբ որ Աղձնայաց ըզնշխներն
այլևս չկային, իսկ Արծրունիք Վասպուրականում թագավորութիւն հասել և
ընկնել էին:

Հայտնի է, որ միջին և ավելի նոր դարերում հայոց աշխարհը բաժան-
ված է եղել թագաւթիվ մեծ և փոքր իշխանների մեջ. մեր երկիրը մի իշխա-
նական միութիւն չէ կազմել և Բագրատունչաց կարճատե թագավորութիւն
ժամանակ իսկ, երբ որ միայն մի քանի իշխանութիւններ, ավելի զորացած
լինելով, թագավոր անվամբ անկախ դրութիւն էին ձեռք բերել, շունենալով
իրանց վերա հին պարսկական կամ հունական և արաբական գերիշխանու-
թիւնը և ոչ ենթարկվելով Հայաստանի հայկական թագավորութիւններին
մեկին կամ մյուսին: Բագրատունչաց անկումից հետո, երբ որ թուրքերն և
թաթարները սկսում են արշավել Հայաստան, ԺԱ—ԺԶ դարը, երբ որ երկիրը
բաժանվեցավ օսմանցոց և պարսից մեջ, Հայաստանի քաղաքական բաժանա-
կան դրութիւնն ավելի ևս խառնվում է. երկրում տիրում է գրեթե կատար-
յալ անիշխանութիւն. շատանում են թագաւթիվ մանր իշխաններ, որոնք
մասամբ հայոց հին նախարարական տների հաջորդութիւններն էին, մա-
սամբ հկամուտ, ոտար, Այդ մանր իշխանները տիրելով մի դավառի, քաղաքի
կամ գլուղի, կազմում էին փոքրիկ ինքնազուլս բռնապետութիւններ, որոնք
մեծ մասամբ անկախ գիրը ունենալով, քիչ անգամ ենթարկվում էին հունաց
կայսրներին կամ պարսից նոր կազմված թագավորութիւնը: Այդ մանր իշ-
խանները շարունակ կռիւներ էին մղում իրար դեմ և Հայաստանից զուրս
նստող թագավորների դեմ. իրարու երկիր ձեռք ձեռք խլում էին, որով և

¹ 2. Սրվանձտյանի վարկանտով Դավթին Արամեյիքի որդին է դուրս գալիս, որ վարկանտի
անհետութիւնն է, արեւելք մեր վարկանտով Դավթին Արամեյիքի զորքի վերջիններից է: Թե
Դավթին Արամեյիքի որդին չէ, այդ երևում է և նորանից, որ Զենով Զաւակը և Շոտն Վերդոն,
4. Սրվանձտյանի վարկանտով Արամեյիքի որդիներն են, իսկ Դավթի եղբայրները, մեր վա-
րկանտով Դավթի հորեղբայրներն են: Սրվանձտն մեր վարկանտով Դավթին Արամեյիքի որդին
լինելու, պետք է, որ Զենով Զաւակը և Շոտն Վերդոն Արամեյիքի եղբայրները լինեն, իսկ այդ
հակառակ է պատմութիւն և վեպին. որոնք վկայում են, թե Հայաստան են եկել միայն երկու
եղբայր՝ Արամեյիքն և Սասնաւորը: Փնտի Թորոսը, որ 5. Սրվանձտյանի վարկանտով զործող
տննաւորութիւն է ներկայանում Արամեյիքի և Դավթի ժամանակ, թերեւ և Դավթից հետո,
Մհերի ժամանակ, որովհետեւ Արամեյիքը ձերանում և մեռնում է, Դավթը սպանվում է, իսկ
նա դեռ կենդանի է և կռիվ է մտնում.—չկա մեր վարկանտի մեջ. և այդ ավելի անկան է,
որովհետեւ Փնտի Թորոսը չէր կարող այդքան երկար ապրել: Փնտի Թորոսի մեր վարկանտում
չերևայն իսկ վկայում է, որ Դավթին Արամեյիքից ժամանակով շատ հետո է, այնինչ 4.
Սրվանձտյանի վարկանտով, որովհետեւ Դավթին Արամեյիքի որդին է, Փնտի Թորոսը հորա ժա-
մանակ կարող չէր կենդանի լինել: Մենք կարծում ենք, որ Թուր Դավթից Թուրն Դավթի որդին
պիտի լինի. ինչպէս որ պատմող մոկտցին կասկածանքով ասում էր:

երկիրը գտնվում էր միշտ խռովահույզ դրուժյան մեջ¹։ Հայաստանի հյուսիսային մասը միայն, միառժամանակ վրաց թագավորների ձեռքն անցնելով, խաղաղություն և ապահովություն էր վայելում։

Բագրատունյաց անկումից հետո հարավային Հայաստանի հայ իշխանություններից նշանավոր է եղել Տորոսյան ընտանիքի մեջ Սասնու իշխանությունը։ Սասնունում նստում էին Մամիկոնյանների սերունդ համարվող իշխաններ, որոնք մյուսների պես կոիվներ էին տալիս օտարների դեմ և, շնորհիվ երկրի ամուր դիրքին ու իրանց անձնական քաղաքային, պահպանում էին անկախություն, որով և Սասունն յուր շրջականերով ներկայանում էր իբրև միակ կենտրոն հայկական ազատ իշխանության։ ԺԱ դարում Սասնու իշխաններից նշանավոր է եղել Թոռնիկ Մամիկոնյանը, որի պատմությունը ավելորդ չի լինի՝ դեռել այստեղ իբրև պատկեր սասունցոց վարած պատերազմների ընդդեմ օտարներին և, եթե ոչ իբրև պատմական հիմք Դավթի վնային, գեթ իբրև այն անձնավորություններից մեկը, որոնց արարքների ազդեցության տակ փոփոխություն է կրել Դավթի վնայը, որ ավելի հին պետք է լինի։

Մամիկոնյան Մուշեղի որդի քաջ իշխան Թոռնիկ իշխում էր Սասունին և Տարոնի մի մասին. նա նստում էր Սասնու գավառի Աշմուշատ գյուղում, որ Սասուն քաղաքի մոտ է։ 1055—1058 թվին ամբողջ Հայաստանը ավերվում է թաթարների և պարսից թագավոր Տուղթիկ զորքերի ձեռքով. միակ ապահով տեղը հայերի համար Սասունն էր։ Ավերիչ խմբերից մեկը գալիս է Տարոն և ավերում է ս. Կարապետի վանքը։ Վերադառնալով Հայոց՝ զորաւոր և քաջ որդին Մուշեղայ՝ Թոռնիկն և ժողով արարեալ զամենայն Սասունս՝ հասաներ ի վերայ զորացն ալլազգեացա (Մ. Ուռնայեցի, մասն Բ, հատվ. 2Ա)։ Թշնամիներն իրանց բազմությամբ նեղում են սակավաթիվ սասունցիներին. բայց հետո Թոռնիկը կանչում է. «Գլակայ վանք, ս. Կարապետ. հասիր մեզ յօգնութիւնս. և հայերը զորանալով հաղթում են ալլազգիներին²։

1073 թ. ազգով հայ և կրոնքով հույն Փիլառտոս հունաց զորավարը ապստամբում է հունաց կայսրից և յուր դրոշակի տակ հավաքելով հայերից և ուրիշ ազգերից, տիրում է Զորորդ Հայքին (Արածանու և Հյուսիսային նփրատի հովտում), Աղձնյաց արևմտյան մասին, Փոքր Հայաստանից ներքող-Հայքին և ուրիշ կողմերի։ Նա գալիս բնակում է Մշար ավանում և այնտեղից մարդ է ուղարկում Սասնու Թոռնիկ իշխանին, որ զա հնազանդի իրան, Թոռնիկը ժիծաղում և ասում է. «Ահաւոր քնաւ հս ոչ տեսանեմ զերեսս նորա»։ Եվ ասեն ցԹոռնիկ կոչնականցն Փիլառտոսին թէ. «Ահա գայ բազում զօրօք ի վերայ քո և տապալեալ ավերեսցէ զամենայն գաւառս քո»։ Ասէ Թոռնիկ. «Եւ քանի՞ զօրք Փիլառտոսին»։ Ասեն արքն. «Իբրև քսան հազար»։ Ասէ. «Են իմ հազար ձիաւորք»։—Եվ դարձուց զհրեշտակսն ամբողջ յնսաւ։ Փիլառտոսն ստիպում է Դրիգոր Վկայասեր կաթողիկոսին, որ քնա, համոզե Թոռնիկին գալ իրան հնազանդել, թապա թէ ոչ, ի սուր սուսերի մաշնմ զերկիր նորա»։ Բայց քաջն Թոռնիկ ոչինչ անապեհալ բանիցն, նստէր անշարժ ի տեղուց իւրում... Գիտացեալ Փիլառտոս թէ ոչ գայ առ ինքն Թոռնիկ, էառ զօրս իւր և պատրաստեցաւ քնալ ի վերայ նորա։ Ժողովեալ և Թոռնիկ զամենայն արս գաւառին Սասնոյ՝ յիսուն հազար հետեակաց և վնց հազար հեծելոց, եկն փութանակի ի Ճապաղ-ջուր։ Եւ կացեալ անդ ատուրս ինչ՝ իբրև նտես, թէ

¹ Է. Ալիշանը «Նեոհուլայի և Պարզայ իւր զրքում լով նկարագրած է Հայաստանի այս խառնաշփոթ դրությունը ԺԱ և ԺԲ դարերում։

² Յունիտե, Պատմութիւն հայոց, հատ. Բ, հր. 386, Արիստակիս Լատիվիտցի, գլ. ԲԱ.

յամէ դալ Փիլառոսոս, վարկաւ թէ գուցէ դարձեալ իցէ յետս, և կամ տակաւին անազանի: Եւ զի լուներ քաւական պաշար այնչափ զօրաց, դարձոյց յետս զքաղմաթիւն նոցա և ինքն հազար նիաւորօք միայն լու արար դառնալ ի քաղաք իւր յԱշմուշատ. և ի զնալ նորա պատահեցան ի ճանապարհի զօրքն Փիլառոսիայ ի Հանձիթ գաւառի... Զայն իբրև նոսն Քոռնիկ, զահի հարաւ յոյժ, զի ոչ կարէր խուսել յերեսաց նոցա և պատերազմել նրկնէր. զի սակաւ էին զօրք իւր. ապա յամենայն կողմանց անճարացեալ նորա, ապաւինեցաւ յԱստուած և ի քարեխօսութիւն ս. Կարապետին Յովհաննու, և խրախոյս բարձեալ յարձակեցաւ անհնարին սաստկութեամբ ի վերա նոցա հանդերձ հաղարան... և ի քթիւն ականցիւր և ցան կացոյց զայնչափ քաղմութիւն նոցա և կոտորեաց զքաղումս ի նոցանէ... իսկ Փիլառոսոս սակաւ արամբք փախտեալ անկաւ ի նարբերդս:

Սորանից հետո Փիլառոսին միանում է Ամիր-Պափր անունով մի պարսիկ յուր զօրքով և նորա հետ խոսք կապելով, դալիս է Քոռնիկի սահմանները, մարդ է ուղարկում Քոռնիկին, խոստանում է դաշինք կապել յուր և նորա մեջ, նրդում է տալիս, և նորա ծառաներից մի քանիսին մեծ տուրքերով հաւանեցնում է, որ նորան հորդորեն՝ զա յուր մոտ: Քոռնիկը խաբւում է և նրեք մարդով գնում է Քափրի մոտ, որ մեծ ռաբխութիւն է տալիս Քոռնիկի պատվին: Եւ յորժամ զուարճացեալ կային ամենեքեան ի խնջոյս անդ, յանկարծակի դիմեաց Քափրն ի վերայ Քոռնիկայ սրով սպանանել զնա: Իսկ Քոռնիկ շտնելով ինչ ի ձեռին, վանեաց աջու ձեռամբ զքաղուկ նորա և ձախովն տոնալ զփոքրիկ դանակ մի ի սեղանոյ անտի՝ հՀար ընդ փոր նորա, և ի վայրի աղետց նորին ի վայր՝ անդէն սատակեցաւ: Դիմեալ ապա ի վերայ այլոց, որք կային անդ՝ ձգեաց զձեռս իւր ի գլուխս նոցա, զորս և ընգհարեալ ընդ միմեանս ուժով սաստկութեան քաղկաց իւրոց՝ խորտակեալ սատակեաց զնոսա. և եւեալ անտի փութալը գնալ ի քաղաք իւր Աշմուշատ: Զայն տեսեալ զօրացն Քափրայ՝ ցրուեցան և փախեան անտի. իսկ մի ոմն ի նոցանէ թաղուցեալ ի ծածուկ տեղուջ՝ առ որով ունէր անցանել Քոռնիկ, հՀար նետիւ ընդ սիրտ նորա և սպան զնա (Վամշևտե, Բ, եր. 997—999, Մ. Ուտմայեցի, մասն Բ, հատված ԺԶ—ԺԷ):

2

Դավթի և Մհերի վեպի մեջ պատկերանում է Հայաստանի և մասնավորապէս Սասնու սուլայ միջնադարյան վիճակը. վեպի հիմնական նյութը կաղմում է Սասնա տերերի պատմութիւնը: Դավթը վեպի մեջ ներկայանում է իբրև ազատ, ազնվական տան ժառանգ. նա թեպետև հորթարած է, բայց ազնվական տան հորթարած է, այնինչ նորա ընկեր հորթարածն ասում է. «Ես լն քո պապու (հոր) գեղի հորթարածն եմ, ու իդա՝ ուսմկա (ուսմիկներ) հորթերն են»: Դավթը տիրաբար է վարվում ուսմիկների հետ. նա նանդութ նախաձեռն ասում է. «Ես լն Սասնա քաղցի տերն եմ»: Նորա հոր տունը մեծ տուն է, և ոչ հասարակ մարդու տուն. մի խոսքով՝ նա իշխան է, կատարյալ իշխան, ոչ թե յուր ուժի համար, այլ նորա համար, որ նա ծագում է հին իշխանական տնից, որ Սասնու տերերն են եղել:

Վեպի մեջ ամենից առաջ այլքի է ընկնում այն, որ Հայաստանը բաժանված է քաղմաթիվ մասեր իշխանների մեջ: Այդ բաժանումը կար ազգային վեպի և առաջին ճյուղի մեջ. բայց այնտեղ պատկերանում էր հին դարերի բաժանումը նախարարների մեջ՝ մի թաղավորի իշխանութիւն տակ, որովհետև

նրկրում կար մի թագավոր, Կապուտկոդի թագավորը, որ ընդհ հալկական էր՝
և Հայաստանում էր նստում,—իսկ Դավթի և Մհերի վնասի մեջ ներկայանում
է այն մասնը բաժանումներն իրար թշնամի իշխանների մեջ, որ հղել է Հա-
յաստանում Բագրատունյաց անկումից հետո, Սասմա քաղաքի, Մարա քա-
ղաքի տերերը, Զմշկիկ Սուլթանը, որ հավանականորեն Զմշկածաղի (Հյուս-
և հար. նիդատներին խառնուրդին մոտիկ) տերը պիտի լինի, Կաղզվանու ա-
միրան (Խանդութ Խաթունի հայրը), Գոհար խաթուն, խլաթեցիներ,—ամեն
մեկը հանդիսանում է իրեն մի ինքնազույս տիրապետ, որ ոչ ոքի իշխանու-
թյանը չէ ենթարկվում, նրկրում չկա մի թագավոր, որին հնազանդին այդ
մանր բռնակալները, որի շուրջը խմբվին հզոր դուքսերունները, թագավոր
անունով դուրս է գալիս միայն Հալեքա թագավորը, որ Հայաստանից դուրս է
նստում։ Նրկրի մեջ տիրում է ընդհանուր խառնակութուն և անիշխանութուն,
որովհետև այս մասնը տիրապետները շարունակ կռվի են անում իրար հետ և
իրար նրկրի ավերում։ Մարամեխիքը Մարութա բանձրիկ Առավարածինն է
ավերում, Թուան Դավթի՞՞ մրեմն առնելու համար՝ Մարա քաղաքի վերջին
կատուն սպանում, մի ուրիշ Մարամեխիք սհող բանակով Սասմա քաղաքի
վերա է գալիս, որ ավերի, տանի, Մարա քաղաքի մոտ նոր քաղաք շինի, Թուր
Դավթին այդ Մարամեխիքին սպանում է և բանակը ցրվում։ Մասնը իշխանները
Հալեքա թագավորի առաջնորդությամբ պաշարում են Կաղզվանը, Զմշկիկ
Սուլթանը Դավթի և Խանդութ Խաթունի դեմն է դուրս գալիս կռվի, խլաթեցի-
ները մինչև անգամ առանց պատճառի, իրեն ասպատակավորներ, Դավթի
ճանապարհը կտրում են, Մհերը Խլաթ քաղաքն է ավերում, Գոհար խաթուն
ու Մհերը ավերում են Հալեքա քաղաքը, որի թագավորը յոթ տարի կռվում
էր Գոհար խաթունի հետ,—մի խոքով վնասի մեջ նրկրում տիրում է ընդ-
հանուր շփոթմունք, ավերմունք, և կյանքի անապահովություն—նույն դու-
թյունը, որի մեջ էր Հայաստանը Բագրատունիներից հետո։ Վնասի մեջ նույն-
իսկ հիշատակվում է և վրացաց տիրապետությունը Հայաստանի վերա. Քա-
վոր Դորգիզը (վիրական անուն) փառլվանների զավազությունը Դավթի դեմ
Դավթին իմացնելու համար առակի ձեռով ասում է. «Հողի վնասություն է, Վրաս-
տուն չէ, որով ուզում է ասել, թե այստեղ Վրաստուն չէ, ուր կարելի է կյան-
քի ապահովություն ունենալ, այլ վնասություն է, ամենայն բոլակ կարելի է
վնասի, վտանգի սպասել։

Վնասի մասնը իշխաններից ամենից զորեղը Մասնու տներն են, ինչպես և
պատմության մեջ. նրանք ընդհ աղդային են, ժողովրդին սերելի են, որով-
հետև աշխատում են Մասնու անկախության համար և ժողովրդի օգուտն են
ցանկանում. այնինչ մյուս իշխաններն օտար են ժողովրդի համար։ Պարզ
ասված չէ, թե Մարամեխիքը, Զմշկիկ Սուլթանը, Կաղզվանու ամիրան հայ են,
թե՞ օտարազգի բռնակալներ։ Մեր կարծիքով, այդ լուրը մասնը իշխանները
վնասի սկզբնական ձևի մեջ հայ պիտի հղած լինին, որով և Դավթի վարած
պատերազմները նրանց դեմ կլինեին հին նախարարական տների և թերևս
ավելի հին, սնպարդական ժամանակների իշխանությունների միմյանց դեմ
ունեցած կռիվների պատկեր։ Մարամեխիքը վնասի ներկա դրության մեջ ներ-
կայանում է իրեն օտար տարր. մինչև անգամ Թուան Դավթի մի կտորի մեջ
Մարա քաղաքում հիշվում է Բեմիրէ բառը, որ մահադականների միմյանն
է. բայց և այնպես Դավթի մայրն յուր կամքով գնում է Մարամեխիքին կը-
նոթյան, որ մեր կյանքի մեջ հաղվագյուտ հրեույթ կլինի, եթե ընդունենք,
որ Մարամեխիքը օտար ազգի և հավատի է պատկանում, Ձենով Հովանը Զմեշ-

կիկ Սուլթանին ուղում է Դավթի համար կին. որով և Չժշկիկ Սուլթանը պիտի հայ լինի ազգով, ապա թն ոչ, ինչպե՞ս կարելի է Լնթադրել, որ Դավթիթը, որի զորութիւնը Մարութա բանձրիկ Աստվարածնի միաբանները խաշ-պատա-րազն է, մի օտար ազգի ազգիկ ուղեր իրան կնութիւն: Նույն հնթադրութիւնը հայ պիտի լինին և խանդութ խաթունն ու Գոհար խաթունը. անորոշ է մնում միայն Հալեբա թագավորի ազգութիւնը. համանական է, որ նա օտար լինի, քանի որ միջին դարերում Հալեբի իշխողներն օտար են հըզլ, և նույնիսկ Հալեբա թագավորն այն ժամանակի աղղեցութիւն տակ պիտի վնայի մեջ մտած լինի, երբ որ հայերն սկսում են գեպի արևմուտք՝ Կիլիկիայի սահմանները զաթնլ, և երբ որ այդ ժամանակներում հենց Հալեբն սկսում է նշանավոր դեր խաղալ և մեկ աշխարհակալից մյուսի ձեռքն անցնել:

Սասնու իշխանների օտարների դեմ տված կոիմներից մենք բերեցինք Թոռնիկ Մամիկոնյանի պատմութիւնը. հետաքրքիր է համեմատել Թոռնիկի պատմութիւնը Դավթի վնայի հետ:

Օտարներն ավերում են ս. Կարապետը. Թոռնիկը սակավաթիվ մարդկան-ցով զնում է վրեժ խնդրելու ս. Կարապետի ավերածն համար. նույնն անում է և Թուան Դավթիթը, երբ որ Մարամելիքն ավերում է Մարութա բանձրիկ Աստվարածնը: Թոռնիկը սակավաթիվ մարդկանցով է. իսկ Թուան Դավթիթը մենակ է վարում կոիվը. և սա բնական է, որովհետեւ այն պատմութիւն է, իսկ այս դյուցազնական վնայ: Թոռնիկն օգնութիւն է կանչում ս. Կարապե-տին, իսկ Թուր Դավթիթը Մարութա բանձրիկ Աստվարածնին, խաշ-պատա-րազնին է ամեն անգամ ձայն տալիս և ուժ ստանում:

Թոռնիկի կոիվը Փիլառտոսի դեմ, որ նստում էր Մշարում¹, արդոք նույն Դավթի կոիվը չէ՞ Մարամելիքի դեմ: Մ. Ուռհայեցին՝ Փիլառտոսի համար ասում է. «Ի տղայութեան կացեալ... ի վանք, որ կուի Զօրվրի-Կոզեմ»՝ ի Հարսն Մարոյ գաւառին (Ուռհ., մս. Բ, եր. 248): Մարո բառը այստեղ նգիպ-տոս աշխարհը պիտի լսանկանալ, որի համար Ուռհայեցին անխտիր թե՛ Նգիպտոս և թե՛ Մարո է գործածում, որովհետեւ Հարսն—Մարո զավառ է աս-ված, և պիտի Հայաստանի զավառներից մեկը լինի, իսկ Հարսն կամ պիտի Մարա զավառի մեջ մի գյուղ լինի, որի մեջ, կամ մոտ, գտնվում էր վանքը, և կամ Հարսն—Մարո երկուսը միասին զավառի անունը լինի: Ինչպես լինի, մեղ համար այն նշանակութիւնն ունի, որ Փիլառտոսը մեծացել է մի զավա-ռում, որի անունը նույնանում է Մարամելիքի Մարա զավառի, քաղաքի ան-վան հետ: Մարամելիքը կեն հայ. կեն օտար խառնուրդ է ներկայանում վնայի մեջ. նույնն է Փիլառտոսը, որի համար Ուռհայեցին ասում է. «Ոչ հայ գիտե-լով զնա և ոչ հոռոմէ: Մարամելիքի բնավորութիւնն իսկ խորամանկ, խաղ-ղախ, նենդավոր և ստոր մի բռնակալ, որի համար ոչ մի սրբութիւն չկա, նման է Փիլառտոսի բնավորութիւնը. «Անօրէն և ամենալար իշխան, անգրա-նիկ որդի սատանայի, այլ շարաշունչ, նեոն դիւարնակ և ալլանդակ, կարա-պետ պղծոյն... (Ուռհ., եր. 248): Մարամելիքի բանակում կան հայեր, գուցե և ամենքը հայ են (վնայի սկզբնական ձևով անշուշտ և հայ եղած կլինին), որ երևում է «փոշտ» և «փոշտ» զավառական բարբառների արտասանութիւն տարբերութիւնից.—Փիլառտոսի զորքերը ևս մեծ մասամբ հայեր էին: Մարո, ինչպես ասել ենք, Մծուղը պիտի լինի,—Փիլառտոսը ևս տիրում էր Մծուրին և հենց Մծուրի վրայով է զալիս Թոռնիկի դեմ կալի, որովհետեւ Թոռնիկը նո-րան սպասում էր իսպաղղրում, որ Մծուրի արեւելյան կողմում է.—վնայի մեջ

¹ Դ. Գալյանը կործան է. որ Մշարը Մարաշը պիտի լինի:

ևս Մարամեիքիքի բանակը Սեղան-սարի դռտում է. Եւհաննիս ասդար ժողովն
են ու նստեր Սեղան-սարու դռտին: Իսկ Սեղան-սարի դռտին Ճապաղաշրի
սահմաններում է: Փխառտոցը մարդ է ուղարկում Թոռնիկին, որ դա իրան
հնազանդի, Թոռնիկը մերժում է: Մարամեիքին էլ Կողբադին է ուղարկում,
որ յոթ տարւման խարջն առնի, այսինքն՝ հարկի տակ դնի Սասունը: Դամիթը
մերժում է, և ոչ միայն մերժում, այլև Կողբադին գլխին հակադասան խաղ
խաղում: Փխառտոսի մեծ բանակի դեմ Թոռնիկը կռւում է հազար մարդով.
Նա, երբ որ թշնամիների բազմութունը տեսավ, Եղահի հարաւ յոյժ, զի ոչ
կարէր խուսել յնքնաց Նոցա. նպատեհազմել հրկնէր, դի սակաւ էին զորք
իրաւ:—Նույնը տեսնում ենք և Դամիթի մեջ. Դամիթը, երբ որ նշնում է
սարի գլուխը և Մարամեիքիքի աստղերի թվով բանակը տեսնում է, ասարսա-
փում է և ասում.

«Էնանք էյնն բամբակ

Եւ լն էյնն կրակ.

Զնմ կարա գանեք էրհցըցի.

Էնանք էյնն դարնան մատաղ գանեք,

Եւ լն էյնն քաղաւ քաղաւ անիւ.

Զնմ կարա դանեք կարհցըցի:

Րայց վերջն աստվածային ռդմությանը ծայնելով, հարձակվում է բանակի
վրա և մեծ կոտորած անում, ինչպես և Թոռնիկը, որ թնայետե սկզբում վա-
խնցավ, բայց հետո սուրբ Կարապետին ռդմության կանչելով, զրեթ մենակ
գի քթիմով ական ցիր և ցան կացոյց վայնալի բազմութիւնէ:

Կովից հետո Փխառտոսի կողմից Քափը խաբում է Թոռնիկին և տանում
յուր մոտ. նորան մեծ խնջույց է տալիս և ուղում է խորամանկությամբ
սպանել, բայց Թոռնիկն ազատվում է մի քաղությամբ, որ դուռնազնի է վայել:
Նույնն անում է և Մարամեիքը. նա խորամանկությամբ Դամիթին իրենցում է
ծիռւ վրայից, յուր վրանն է մտցնում և առաջուց պատրաստած հորի մեջ
ձգում. րայց Դամիթը հորից դուրս է գալիս և սպանում է Մարամեիքին, ինչ-
պես Թոռնիկը Քափին: 2. Սրվանձտյանի վարիանտի մեջ խնջույցն անգամ
հիշված է. Դամիթը Մարամեիքի մոտ կանաչ-կարմիր վրանում յոթն որ
րթնձ-փալվ է ուտում և հետո սպանում Մարամեիքին: Դամիթի և Թոռնիկի
մահն անդամ միատեսակ է. Թոռնիկն, երբ նա Քափի զորքերից փախում
էր, թաք կացած մի մարդ ծածուկ նետով խփում, սպանում է Դամիթին: 2. Սրվանձտ-
յանի վարիանտի մեջ Դամիթի մահն ավելի նման է Թոռնիկի մահին. Եւրմ-
շըմ խանմի աղջիկն էր առեր մեկ նետ ու աղող, էկեր էր էջ տեղու փնրու
մեջ թափւտիւր էր: Դամիթը ըզ Լոխորա ջրի մեջ կրողդնէր, խաթնցինների
ձեռքից փախած, որ զըզ աղջիկի գողտուկ նետ մի զարկեց Դամիթի պատկն ու
սպանեց:

Րացի այս նմանություններից, Դամիթի իշխանության մեջ, բացի Սասու-
նից մտնում էին և Մշու շրջակայքը և Ճապաղաշուրը, որոնց մասին հիշեցինք
Արամեիքի ճլուղի մեջ. նույնը տեսնում ենք և Թոռնիկի ժամանակ, այն է որ
Թոռնիկի ձեռքին էր Սասունը և Տարոնի մի մասը, անշուշտ Մշու և Ճա-
պաղաշի կողմերը, որովհետեւ սրանք են Սասունին սահմանակից:

Ընտորըքը է Փխառտոսի նպատեհազմութեան և Թոռնիկի մեջ եղած խուսկնությունն,
որ Թոռնիկի պատմության մեջ բերել ենք Ռուհայեցոց հանելով. այդ խուսկնութեան իսկ
վրայում է, որ Ռուհայեցու ժամանակ Թոռնիկի վերա ժողովրդի մեջ շատ գրույցներ են ուղար-
կելու հզել:

Այսպէս մեծ նմանութիւն է նրեում Թոռնիկ Մամիկոնեայնի պատմութեան և Դավթի վնայի մեջ. այնպէս որ եթէ շատենք թէ Դավթը միևնույն Թոռնիկն է, միայն ժողովրդի քերականում դրուցադնական հերոս դարձած, գոնե հավաստեալ կարելի է ասել, թէ Դավթի վնայը կազմվել է Թոռնիկի նման շատ հերոսներէ արարեցներէ, որ ունեցել է Մասունը միջին դարերում, և կամ այդ արարեցներէ ազդեցութեան տակ ժողովուրդը մտքեղ է ավելի հին վնայի մեջ յուր նոր ժամանակի հերոսական կոիվները, որ ամէլ է օտարներէ դեմ:

է

Ազգային վնայի մեջ եղած պատմական կետերին մատնացոյց անելուց հետո, պետք է մոտաւորապէս որոշել թէ որքան հնութիւն կարող է ունենալ վնայի սկիզբը: Վնայի մյուս կոչումն է և Մհերի գոտա: Մհերի գոտա անունով կոչվում է և Վանա բերդից դնայի արեւելք ձգված լեռնագոտու միջին մասը: Այդ լեռնագոտին, որի արեւելյան գլուխը կոչվում է Քըմփղըմփ մադարաւ, իսկ արեւմտյան ծայրը Վեդրփիւ, վնայի մեջ կոչվում է Վանա քար: Կամ Տոսպան բլուրը և ծածկված է բեռեկաքիւր արծանագրութիւններով, և յուր մեջ ունի խորին հնութիւն ունեցող քանդակագործ շինութիւններ և անցքեր: Մհերի գոտաւ հենց դրան ձևով տալով, սիրուն քառանկյունի շրջանակով մի քար է, որ վրան ունի սեպագիրներ: Այդ դրան հետում իբրեւ թէ կա մի այլ, Մհերի այլը, որի մեջ փակված է Մհերը՝ թե՛ տեղական ավանդութիւններով և թե՛ վնայի երկու վարիանտով: Որովհետեւ Մհերի վնայը կապված է Տոսպան բլրի այս քանդակագործ շենքերի և սեպագիրների հետ, պետք է կարծել, թէ Մհերի վնայը ևս պիտի ունենա նույն հնութիւնը, ինչ հնութիւն որ ունին այդ արծանագրութիւնները, այսինքն՝ վնայի նյութը պետք է վերցված լինի սեպագրական ժամանակներից, ընթեմ վանա և առհասարակ Հայաստանի սեպագիրները կարողացած լինեն, խոսք չկա, շատ քան կարողութիւն վնայի մեջ. միայն ասորոց և պարսից սեպագրութիւններից հայտնի է, որ Հայաստանի մեջ ամենահին ժամանակներում եղել են մի քանի իշխանութիւններ՝ Վանա արեւելյան կողմում Բիայմա իշխանութիւնը, որի միջին մասը կոչված է եղել Տոսպա, որ Տոսպն է. երկու Տիգրիսի հովիտներում նախորդ իշխանութիւնը, իսկ Տորոսյան լեռների մեջ, ուր Եփրատը հանդիպում է Տորոսին, — Մելիտաւա: Այդ երեք տերութիւնը, ինչպէս և Մուսասիր, որ Վանա լճի հյուսիսային-արեւմտյան կողմում է եղել, գտնվել են Վարարադի (Արարատի) տերութեան գերիշխանութեան ներքո: Նրանք 500 տարվա լափ կոիվներ են ունեցել թե՛ առանձին առանձին և թե՛ միասին ասորեստանցոց հետ. Գ—Ը դարը Քրիստոսից առաջ: Այդ տերութիւնները հարկավ կուռնեային և ներքին կոիվներ, որոնց հայտնի պիտի լինեն նրանց ժամանակներից մնացած հայկական սեպագիրներից, որ անընթեռնելի են: Արդոյց ազգային վնայը, իր սկզբնականում, իբրեւ նյութ, հիմք չէ՞ ունեցել հենց այդ տերութիւնների իրար հետ և ասորեստանցոց հետ ունեցած հարաբերութիւնները: Այս ենթադրութիւնը թույլ ենք տալիս մեզ անել, ի նկատի ունենալով նախ այն, որ, ինչպէս ասացինք, Մհերի վնայը կապված է Տոսպան բլրի սեպագիրների հետ և նրանց մասին եղած ավանդութիւնները միանում են Մհերի վնայի հետ: Երկրորդ՝ ազգային վնայի իրողութիւնը հենց կատարվում է այդ սեպագրական տերութիւնների տեղում — Վան (Տոսպ), Տիգրիսի հովիտը (Նախիթ), Արածանու և Հյուսիսային Եփրատի հովիտը (Մծուր, Միլիտաւ), Վանա ծովի հյուսիսային-արեւմտյան ափը (Խլաթ) և

ազնիւի հլուախ՝ Արարատում՝ Կազգլիան: Երրորդ՝ Արամիւիքն և Սանասարը, ինչպես և պատմական ցուցմունքներէք տեսանք, ասորեստանցոց Սենեքերիմ թագաւորի Ադրամիւնը և Սանասար որդիքը պիտի լինին, իսկ Սենեքերիմն ապրում էր նույն այդ սեպագրական տերութիւններ ժամանակում, Փրիստոսից մոտ ութ դար առաջ: Գորրորդ՝ վնայի մէջ հղած Սանասար, Արամիւիք, Միւրիսնի, Նովան, Դավիթ, Սառիա և այլն անուններն էլ թերես ցույց են տալիս ասորեստանցոց, սեմական տարրի հին ազդեցութիւնը, եթէ միայն կարծելու լինինք, որ այդ անունները քրիստոնէութիւնն ազդեցութիւն տակ փոխանակած են հին հայկական անուններէ: Հինգերորդ՝ վնայը յի է այնպիսի դրութիւններով և պարագաներով, որոնք գոյութիւն կարող էին ունենալ միայն այդ սեպագրական, դուրեղանական ժամանակներում, երբ որ ամենայն քաջութիւն և արարք վերագրում էին միայն թագաւորներին և իշխաններին:

Վնայի սկիզբը սեպագրական տերութիւններ ժամանակէք ենթադրելով, կարող ենք ասել, որ վնայի հնութիւնը հասնում է մինչև Ը դարը, Քս. առաջ, երբ որ ապրում էր Սենեքերիմը, և մինչև երբ, ըստ ասորոց սեպագրութիւններին, Հայաստանի սեպագրական տերութիւնները կոխվ են ազնիւ ասորեստանցոց դիմ. հենց այդ ժամանակներէք, ազգային պատմութիւնք ևս Հայաստանի քաղաքական վիճակը փոխվում է, Հայաստանում կազմվում է թագաւորութիւն:

Սակայն վնայի երեք ճյուղերն ևս միաստեայն հնութիւն չեն վկայում. Արամիւիքի և Մհերի ճյուղերն ազնիւի հին են երևում, այնինչ Դավթի ճյուղը համեմատաբար ազնիւի նոր: Առաջին ճյուղի մէջ հիշվում է կռապաշտութիւն, թնայեալ ոչ հայի համար, իսկ Դավթի ճյուղում կռապաշտութիւնը բացահայտ է երևում, այլ գրեթէ ամբողջական քրիստոնէութիւն.— Մարութաբաններին Աստվածածին, խալ—պատարագ, տերտեր, ս. Նշան, Ման—խալ, լուր Քրիստոս ցա դատաստան և այլն, սովորական են Դավթի ճյուղում (ազնիւի հ. Սրվանձտյանի վարդանսում). քացի այդ՝ Դավթի վնայի մէջ, ինչպես տեսանք, դուրս է գալիս ազնիւի միջնադարյան պատմական կյանքը.— այնպես որ կարելի է կարծել, որ Դավթի վնայը նոր ժամանակներէ ասորեստանցութիւն է և իբրև մի հատկած մտել է Արամիւիքի և Մհերի ազնիւի հին վնայերի մէջ, որոնք սեպագրական ժամանակներէ հետ են կապված թե՛ տեղով և թե՛ անուններով ու անցքով: Մհերն իսկ, որի անունը նույնացնում են Միհր աստուծու անվան հետ¹, չուր ինքնագրութիւնք և արարքներով ներկայանում է ոչ իբրև քրիստոնէա ժամանակի ծնունդ, այնինչ Դավթի մի բարեպիտ ջրքիստոնէա մարդու տիպ ունի: Բայց և այնպես, չէ կարելի ասել, որ Դավթի վնայը բոլորովին նոր է. միայն Դավթի բոլորովին համար ազնիւի սիրելի դուրեղան լինելով, նորա վնայն ազնիւի է ենթադրելի նոր ժամանակի ազդեցութիւն և ազնիւի նոր է երևում: Դավթի վնայն այնպես գեղարվեստորեն կապված է Արամիւիքի և մասնավանց Մհերի վնայի հետ. որ չէր կարող նրանցից բաժանված անկախ և նոր վնայ լինել, ուրեմն պետք է ունենա նույն հնութիւնը, ինչ որ ունին առաջին և վերջին ճյուղերը:

Դավթի վնայի հնութիւնն ամենից գլխավոր ապացոյցը հենց այն է, որ նա չորս բոլոր մանրամասնութիւններով կատարելալ գլուցադներգութիւն է, և ոչ զուտ պատմական վնայ. իսկ չորս կյանքի պատմական շրջանում, միջին դա-

¹ Материалы для изучения арм. наречий, вып. II, աստարանի մէջ էր. 3-րդ. 2. Սրվանձտյանի հաստարակութիւնը լուծնալով, մենք ձեռքի տակ ենք ունեցել այ. Պատմական հրատարակութիւնը:

բերում, մեր ազգը չէր կարող ստեղծել դուքսազնեթութիւն, այլ միայն կարող էր Հին դուքսազնեթութիւնն ավանդել բերն-բերան և տալ նրան յուր ժամանակակից կյանքի երանգը:

Ը

Դյուքսազնական վեպն ստեղծվում է մի ազգի մեջ այն շրջանում, երբ որ ազգը նոր է դուրս գալիս բնութիւն յուր վերա թողած անսահման ճնշման տակից, երբ որ նա սկսում է մաքառել բնութիւն տարերայական ուժերի դեմ, որոնք, ժողովրդի հրեակալութիւն մեջ մարդկային կերպարանքի գծագրութիւն ստացած, արգելքներ են դնում նոր զարգացնալ սկսող ազգի առաջ: Ազգը, հետզհետեւ հաղթելով բնութիւն արգելքներին, նշմարում է յուր մեջ ուժ ու զորութիւն, և այդ ուժն ու զորութիւնն ամփոփում է ոչ հասարակ մարդկանց մեջ, այլ այնպիսի անձնավորութիւններին մեջ, որոնք ժողովրդի իգնալը, գաղափարն են կազմում. նրանք դյուքսազնեթ՝ դից սերունդ են և ունին գերբնական ուժ, որ ստանում են կամ աստվածներից և գերբնական արարածներից ժառանգաբար և կամ նրանց իրանց շնորհած գերմարդկային տալերից: Դյուքսազնեթը լին կռվում հասարակ մարդկանց հետ, այլ իրանց նման հսկաների հետ, գերբնական արարածների, լար ոգիների, հրեշների և վնասակար գաղանների հետ, որոնցից դյուքսազնը ազատում է մարդկային ազգը կամ յուր ժողովուրդը: Դյուքսազնեթի այդ կռիվը բնութիւն տարերայական ուժը պատկերացնող տարերայական տիտանների և հրեշների դեմ՝ ներկայանում է իբրեւ ժողովրդի կռիվը բնութիւն ճնշող ուժերի դեմ:

Դյուքսազնեթութիւնը ժողովրդի խաշնարածական կյանքի մտափոր արտագրութիւնն է, երբ որ ժողովուրդը դեռ մտափոր զարգացման և ինքնաճանաչութիւն ստոր աստիճանի վերա է լինում: Բայց երբ որ ժողովուրդն սկսում է ներկագործութիւն արարապել, և երբ նորա միտքն սկսում է առաջադիմել, բերանացի ուսմանը փոխանակում է գրախոր ուսումը, բերանացի հիշատակութիւնը գրախոր հիշողութիւնը, այսինքն՝ ժողովուրդը պատմական կյանքի մեջ է մտնում,—նա այլևս շատ չէ հավատում գերբնական հսկաների և դյուքսազնեթի գոյութիւնը. նա տեսնում է, որ հասարակ, բայց իմաստութիւն և քաջութիւն օժտված մարդիկն ևս կարող են անել այն, ինչ որ առաջ դյուքսազն հսկաներն էին կատարում, և ստեղծում է պատմական անձիք իբրեւ հերոսներ: Սակայն ժողովրդի մեջ դեռ երկար ժամանակ կենդանի ապրում են Հին դյուքսազնեթի արարքները, որոնք սիրելի են դարձած նորան. երկար դեռ պատմական անձինքների վեպի հետ ժողովուրդն ախորժով պատմում է յուր Հին դյուքսազնեթի քաջագործութիւնները, միայն թե խառն պատմական-իրականի հետ, որովհետեւ ինքը պատմական շրջանում է ապրում և պատմական կյանքի կնիքը պիտի դրոշմեւ և Հին վեպերի վերա,—մինչև որ վերջապէս այդ կենս-դյուքսազնական և կենս-պատմական վեպերին փոխանակում են զօտ պատմական վեպեր, իսկ Հին դյուքսազնական վեպերը դառնում են հեթեաթ, որին ժողովուրդն այլևս չէ հավատում, թե իրեք կատարվել է մի ժամանակ, և որի մեջ գործող անձնավորութիւնը, տեղն ու ժամանակն այլև որոշ լին լինում:

Սասունցի Դավթի և Մհերի վեպը ներկայանում է մի այսպիսի կենս-դյուքսազնական և կենս-պատմական վեպ, որի մեջ դյուքսազնականը և պատմա-

¹ Ս. Պալուստյան, Պատմութիւն հայոց գրականութիւն: Փ. Буслаев, Очерки русской народной словесности.

կան-իրականը խառնված են իրար հետ, թե՛ շատ հին ժամանակի պատմականներ և թե՛ միջնադարյան ժամանակի պատմականներ։

Մոկացոց և Սասունցոց բերնից, ընտան է, որ մենք լսենք հին դուրազ-նական վեպի մնացորդներ, քացի ուրիշ պատճառներից, որոնց մատնացույց ենք հղել, և այն պատճառով, որ Հայաստանի այդ կողմերի ժողովուրդը միակ ժողովուրդն է, որ առանձնացած, ինքնուրույն կյանքով է ապրել, որի մեջ քաղաքակրթական զարգացումը ոչ միայն հետմը, այլև նորոգած դեռ առջ լե կոխել, Հին ժամանակներից սկսած՝ այդ կողմերի հայերը համարվել են իրեն լեռնական կենսական ժողովուրդ, որոնց կյանքը նման լե՛ հղել մյուս կողմերի հայերի կյանքին, և որոնք պահել են իրանց վարք ու բարքի քրտու-թյունը, Քուվմա Արծրունին ժ դարում այսպես է նկարագրում այդ լեռնական-ների կենցաղը. «Հնարատերեալ յապրուստ անձանց (բնակիչք Սիմ լեռինն), վճարեն ղկարեւոր պէտտ իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապա-նօք. և բնակութիւն նոցա ի խորածորս և ի փապարս լիւրանց և ի պրակա մայրեաց, ի զագաթունս լեռանց, Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի քացեալ են միմեանց, մինչ թէ որ յարանց զօրաւորաց ի բարձրա-րեքձ տեղեաց ուժգին խանչիցէ, հաղիւ թէ ուրեք կարիցէ՝ առնուլ զորմքին Ժայնին... Կէսք վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղագս հետաքնակ լինելոյ և անհամարոյք միմեանց հանդիպեալք, և խօսս եղեալ կարկատում մուրացածի բանիւք... Զպէտս կերակրոց վճարեն ի սերմանց ինչ, առանձ ի կորեակ կուեցեալ սերմանէն... և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատուք սերմանեալ. և է զգոտո նոցա ասուիս ի ծած-կոյթ մերկութեանն և օդ ոտիցն հնարաւորեն ղձն կուկաց, ի մորթոյ այծից կապեալ, և միով կերակրիւ և միով հանդերձիւ բաւականեանս դամառն և զձմեռն. և են ստացեալ զէնս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանաց, որք ի լեռինն բնակին։ Այլ ևս ի ժամանակս հարելոց Թշնամեաց յերկիրն իւրեանց գան միաբան լեռնայիք յօգնութիւն իշխանացն, զի են տիրաւէրք... Եւ են գազանաբարոյք արիւնարբօք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց, նաև զանձանց ևս... Սոքա են զոռահչ ասորոց, ուր լուեցին զկնի Աղրամեայ և Սանասարայ որդ-ույ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի, և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասեայք զինքեանս անուանեն» (Ք. Արծրունի, ր դպր., եր. 134—135)։

Քուվմա Արծրունու նկարագրած սույն նախնական պարզ և միանգամայն բիրտ կյանքով են ապրում և ցայժմ Տորոսի այդ կողմերի հայերը, որոնք, մինչդեռ ուրիշ կողմերի հայերը մի տեսակ ծերացած ու մաշված են, ծեր ազգի ավելի երիտասարդ ու թալմ մասն են կազմում, ուստի և մինչև այժմ մոռա-ցած լեն իրանց նախնու—Սանասարի և նորա ժառանգների վեպը։



Դավթի և Մհերի գերբնական ուժն ու զորութիւնն իրանց նախնիքներից է գալիս։ Նրանց նախնիքը՝ Սանասարն և Արամեյիքը՝ հասարակ հողածին-ներ լին—«Ահագին ու քաւ քեֆով զորքըզքստ մարդ են ըդ երկու աղբերք»։ Արամեյիք ընդար զորեղ էր, որ օր տասն տան անդ կը փորեր, ու տասն տուն կը շիներ. ըն մեկել լի գլխետեր կը բերեր, ու բանվածք երկուսով կը շինեն... Ընքան զորեղ են՝ որ քարե սան քարե սուն զարկեցին, ձաք թալիցին, թամամեցին պերճաւ։ Ահա հսկաների ձեռքով կանգնած բերդերի (օղուզի բեր-

դեր) շինութիւնն պարզ նկարագիր, բերդերի, որոնք Հայաստանի շատ կողմերում կան, որոնք այժմ ևս զարմանք են պատճառում տեսողին իրանց մոռնալ, անարձանագիր տեսցոյ՞լ և իրանց մասին եղած մութ ամանդութիւններով։ Բայց ինչպէս էլ զորեղ լինեն, Արամելիքն ու Սանասարը լին հասցիսանում իբրև կատարյալ հսկաներ և դուցազներ։ Նրանք մարդ-հսկաներ րածներէից չեն ստացած։ Նրանք ավելի զորեղ ու քաջ են, քան քն հասարակ են, որոնք իրանց ուժը ժառանգաբար մի աստուծուց կամ գերբնական արամարդիկ։ Արամելիքի և Սանասարի ըուրր արարքները հասարակ մարդը ևս կարող է անել, միայն ավելի երկար ժամանակում, մեծ դժգոհութիւնով։ Եւ ինչով. այնինչ նրանք, իբրև ոչ սովորական մարդիկ, իրանց ուժովը կարեն միջոցում են անում։

Թագստե Արամելիքն ու Սանասարն այսպէս սոսկ մարդուց քիչ վեր են, բայց նրանց վերջին շառավիղները՝ Դավիթն ու Մհերն արդեն կատարյալ հսկաներ, դուցազներ են գտնու գալիս։ Դավիթի ծագումը՝ մեր վարդապետով՝ հասարակ մարդուց չէ. նորա ցեղն ամբողջապէս հսկայական է. մեծ հսկա պետք է եղած լինի, ինչպէս երևում է պատմութիւնն ընթացքից, և Դավիթի հայրը, որի վնասը չունինք։ Դավիթի ցեղի զորավոր մարդն անպարտելի է որնէ սովորական ուժից. նորա ցեղի հսկա մարդուն միայն յուր ցեղի մարդը կարող է սպանել, և կամ մի գերբնական ուժ. եթէ ուրիշ ցեղի հսկայից էլ սպանվելու լինի, պետք է Արամելիքի ցեղի հսկան գերագույն զորութիւնն շնորհքից ընկած լինի, ինչպէս Դավիթը Չմշկիկ Սուլթանից սպանվելու ժամանակ։ Սակայն հ. Սրվանձտյանի վարդապետով՝ Դավիթը դարձյալ սպանվում է Արամելիքի ցեղից ծագած մի աղքատ ձեռքով, մինչդեռ ուրիշ մարդ չէ կարողանում դիպչել նորան. չնայելով որ նա գերագույն զորութիւնն աչքից ընկել էր։ Պարոն Աստղիկը, երբ որ Դավիթի ձեռքով նետահար է լինում, կանչում է. «Այս, էս մեր ազգակնի դարբերն ի՛նչ խառնալիք, — այսինքն քե՛ն մեր դարմի մարդու հարկածը միայն կարող էր ինձ խոցել, և այս նշանով Պարոն Աստղիկը ճանաչում է Դավիթին։

Թերևս ուրիշ վարդապետներով Արամելիքն ու Սանասարը սերված լինին մի որնէ աստուծուց, կամ իրանց ուժը ստացած լինին գերագույն զորութիւններից, այդ չէա նրանց համար. բայց Դավիթի համար, որ մեր վարդապետով հանդիսանում է արդեն իբրև հսկաների սերունդ, հ. Սրվանձտյանի վարդապետով հիշված է քն նա սղիմանական ճիժա (ղնի զավակ) է։ Խորաշին յուր՝ Դավիթից հաղթվին արդարացնելու համար, ներկայացնում է Սասնու ամբուլթունը և սասունցիների հսկայութիւնն ու քաջութիւնը. նա ասում է. «Է՛ն ճիժը՛՛ որ նոր են էլած՝ դիմանական ենք։ Ուրեմն սասունցիները սղիմանական ճիժքա, այսինքն սղների ազնա, սերունդ են։ Ոտանավորի մեջ — այդ կտորը ոտանավոր է, ուստի և հնութիւնից եկած պիտի լինի — հիշված Սասնու ճիժքը, տղաները (ինչպէս և վնասի մեջ շատ տեղ հիշված «Սասնու ճիժքը»), հարկավ, պետք է հասկանալ Սասնու իշխանական, հսկայական տղաները, և ոչ ռամիկ ժողովուրդը, որ ամբողջ վնասի մեջ ընալ մասնակցութիւն չունի, բայց եթէ այն՝ որ Դավիթն ու Մհերն իրանց մանկութիւնն ժամանակ, մեկն անգիտակցաբար, մյուսը կամավ, նեղ տեղն են ձգում նորան. մանավանդ քն Խորաշին ուսած սղիմանական խոռքն իսկապէս միայն Դավիթին է վերաբերում, որովհետեւ Խորաշին մանուկներին (գինգորներին) մանուկ (ճիժ) հսկա Դավիթն էր միայն կոտորել և լցրել սի խարաման (զոխիք, Արհմի տեղը քաղի) ասանց մեկի օգնութիւն, ուստի և Խորաշին ավելի Դավիթի

քաղությունն ու ղիվանեպետությունը պետք է զոգներ, քան թե ռաժիկ սասուն-
ցիներին, որոնք անուշով միայն գոյություն ունին:

Այսպես տեսնում ենք, որ Դավիթն և Դավթի զարմի մարդիկը—Սասնու
իշխանական ցեղը—սղիվանական ճժերն են. զոհերի զավակ, ազնն են. իսկ
ղեկերը կամ ղիվերը (ղիթ, ղիւթ), որոնց մասին Հնտո խոսք կլինի, Հնդկե-
նվորդական ազգերի մեջ եղել են երկնքի և լուսո աստվածություն, որով և
Հսկա Դավիթը ղիվերի կամ գրաբարի դիւց (բարգոթյունների մեջ միայն
գործածական Հոլով) սերունդ է, գիւցազն է, այսինքն՝ երկնքի և լուսո աստ-
վածության զավակ է: Միւսպազնն բառի կազմությունից երևում է, որ մեր Հին
հսկաները, որոնք ընդհանուր անունով դիւցազն են կոչվել, Համարվելիս են
եղել ղիվերի (զեների) կամ ղիւց, երկնքի և լուսո աստվածության սերունդ:
Նույնը տեսնում ենք և ռուսաց դիւցազնական վնպում, որի մեջ ռուսաց Հըս-
կաները (богатыри) Համարվում են կրակի և լուսո աստվածության Паж-
бог-ի սերունդ, թուհներ:

Դավիթը, բացի յուր ժառանգաբար ստացած դիւցազնական ուժից, ան-
հաղթելի զորություն է ստանում և գերադույն զորությունից, նորա ուժն
ամեն անգամ լսիկ ու սահմանից անց է կենում, երբ որ նա դիմում է աստ-
վածային բարձր գորություն և կանչում է՝ Մարութա բանձրիկ Աստվարածին,
հալ-պատարադին:

Մարութա բանձրիկ Աստվարածին և հալ-պատարադինն խոսքերն առ-
ղեն իրանց վկայում են քրիստոնեական ազդեցությունը: Կիրակոս վարդապետ
Գանձակեցու Պատմության մեջ Հիշված է. «Այլ և ամբարցոյն երկիրն Սասնոյ
եկին ի հնազանդութիւն թաթարին... Բայց զեկեղեցիս ոչ քակեցին և ոչ զան-
թիւ նշխարս սրբոց՝ զոր ժողովնաց սուրբ Մարութա յամենայն ազգաց և եղ
անդ, զի քրիստոնեայք որ ի զօրուն՝ ծանուցին թաթարին զպատիւ նոցա
(նշխարաց), այլ և ինքեանք պատմէին բազում տնիւլս զսրբոցն, ի վերայ
պարսպին լոյս սաստիկ ծագեալ և արս լուսատնիւլս երևեալք (Կիր. վ. Դանն.,
ծթ 91.): Սույն Մարութայի շինած բարձրիկ Աստվածածին վանքն է, Հարկավ,
և վնպի մեջ Հիշված Մարութա կամ Մարաթուկա վանքը, որ, ինչպես Կիրա-
կոս վարդապետի խոսքերից երևում է, Սասնու զավառում մեծ ժողովրդակա-
նություն ունեցող մի արաբայր է եղել: Այդ վանքում, Թույն Դավթի վնպի
Հատվածից գիտենք, որ նստում էին քառասուն հպսկոպոս, քառասուն վար-
դապետ, քառասուն ավագ-սարկավագ և սարկավագ, որոնց բան ու սրժոք
միայն այն է եղել, որ Սասնու տերերի հաշվով ապրելով, ժամ-պատարագ և
աղոթք ու խնդրվածք պիտի անեին Աստուծուն, որ Աստված ույժ ու կարողու-
թյուն տար Սասնու տերերին: Դա մեր իշխանների պատմական կրոնասերու-
թյունն է, որ դուրս է գալիս վնպի մեջ, նվ, արդարեւ, Դավթի անհաղթելի ուժը
կայանում է Հենց յուր պահած վանքի միաբանների աղոթքի և հալ-պատա-
րագի մեջ: Բայց ո՞վ կարող է ասել, որ այդ քրիստոնեական վանքն ու հալ-
պատարադինը չեն փոխանակած որեւէ հեթանոսական սրբավայրի աստվա-
ծուհու կամ պաշտամունքի, քանի որ վնպի սկիզբը, Արամելիք և Սանաաբ,
կոապաշտական ժամանակներից է, իսկ ս. Մարութայի շինած վանքը, ինչպես
և մեր վանքերի մեծ մասը, կարող է մի հեթանոսական սրբավայրի տեղում
շինված լինել: Թերեւ հեթանոսականի ազդեցության տակ պատարագ խոսքը

ևս փոխված լինի պատարագին¹։ Այս ենթադրությունն անձը տեղիք է տալիս մեզ այն, որ ժողովրդական վեպը, շատ դարերի ընթացքում ժողովրդի բերանում ապրելով, մեզ հասնում է խիստ օտարոտի և մեկմեկու հակասող անախարենիզմներով և անհամապատասխան դրություներով լցված։ Երբեմն միևնույն անձնավորության մեջ անգամ ժողովրդական վեպը խառնում է զանազան ժամանակի և զանազան բնավորության պատկանող գծեր, թե որն է հեթանոսական աստվածության, թե որն է քրիստոնեական սրբի, և թե պատմական անձերի։ Այդ խառնուրդն ավելի սպասելի է կրոնական հավատալիքների և դիցական անձերի բնավորության մեջ, որովհետև ժողովրդը, մոռանալով յուր հին, հեթանոսական դիցաբանությունը, յուր վեպի մեջ ավելի հնարան ունենալու համար՝ առասպելական էականներն ու հավատալիքները փոխադրում է պատմական հոգի վերա և նրանց տալիս է ժամանակակից հասկացողության պատկերացումը. նա փոխում է յուր դուցազունների անուններն անգամ և, դրոց ազդեցության տակ, նոր անուններ է տալիս նրանց։ Բայց և այնպես, հին հավատալիքների և առասպելական պատկերացումների հետքերը, իբրև մի հին շերտ, դարձյալ մնում են նորագույն ժամանակներում կենդանի մնացած վեպի կազմության մեջ։ Շատերից հիշենք միայն իբրև օրինակ քրիստոնեական սրբեր ս. Կարապետի և ս. Սարգսի մասին պատմված ավանդություններն ու հավատալիքները, որոնց մեջ, եթե անուններն և մի քանի քրիստոնեական կամ դրոց ազդեցության տակ մտած հավելվածները դուրս ձգելու լինինք, կմնա զուտ հեթանոսական հիշողություն։

Այսպիսի փոփոխությանը պետք է վեպի մեջ մտած լինի և խալ-պատարագին խոսքը, որ վեպի մեջ դուրս է գալիս ոչ իբրև խալ-պատարագի իմացական գրությունը, ինչպես քրիստոնյաներս ենք հասկանում, այլ իբրև մի նյութական, զգալի առարկա։ Դավիթը շքույն է սանդղի առաջ, լալիս, աղոթում է, և, որովհետև ինքն էլ արժանավոր էր, յուր հոր խալ-պատարագինը ինքն իրան, իբրև մի թուղուն, իբրև մի ողի, թուղում գալիս, նստում է Դավիթի աջ թևի վրա։ Մ. Մովսեսայանի վարդապետի՝ խալ-պատարագինի փոխանակ հիշվում է ս. Նշանա կամ Մեսե խալա (միս, սեն՝ պղինձ, թե՛ ուրիշ բան է նշանակում), որ Դավիթը ոչ իբրև հայրենական ժառանգություն, ինչպես մեր վարդապետում է, այլ ինքը նոր է ստանում նրկնքից, և ստանալու եղանակը պատմված է հեթանոսաբար՝ «—Դավիթ քնավ, տեսավ նրազ. առավ քառուն նրինք ու գնաց վրտ սըը Բանձրիկ Մարաթուկա. մատղեն զերընչներն ու լողզցավ մըշ արունին. շատ լաց ու աղաչաց Աստծու երեսն ու վե. իշավ Աստծուց ուրան սուրը Նշան մի ու սանդր մի. համբուրեց զսուրը Նշան, դրնց աջ ժոցքի թարափ, ու սանդր լե դրնց ձախ ժոցքա։ Երինչն իբրև մատաղացու քրիստոնեության մեջ ընդունված է մեզանում. բայց հայտնի է, թե հենց այդ մատաղն էլ հեթանոսությունից է գալիս, երբ որ աստվածներին անարատ մատաղներ էին զոհում, նրանցից հաղթություն ստանալու համար, ինչպես Դավիթն է անում Մարաթիթի դեմ կովի գնալուց առաջ։ Իսկ մատաղների

¹ Պատարագին խոսքը կարող է և ուրիշ նշանակություն ունենալ և ոչ պատարագ, ինչպես մենք ենք ենթադրում։ Պե՛տք է նկատել և այն, որ Աստվարտին խոսքը Մովսեսին անխտիր թե Աստվարտին և թե Աստվարտին էր արտասանում, չ. Մովսեսայանը Մեմանայում Վտնից գեղի հյուսիս, մոտ ութ ժամ հեղավորությանը, ժողի արին գտնված իսթուն Տիրամոր ս. Աստվածատնի վանքի մասին գրում է. «Այս տունը (վանքի տունը) կանվանեն Աստվարտին տե՛ն. և գյուղն և վանքը մեկ անունով Մեմարտինեն կանվանեն. այնինչ զԱստված՝ Աստված, Աստվածատն՝ Աստվածատն կարտասանեն վանքից, այստեղին Աստվարտին անունը կուտան կամ՝ իսթուն Տիրամոր»։ (Մեմանա, եր. 133)։

արյան մեջ լողանալը անշուշտ մի հեթանոսական սովորության կամ ծեսի մնացորդ է, որ պետք էր կատարել աստվածներից իրանց խնդրվածքն ընդունելու համար:

Ինչպես և լինի ստացած, հեթանոսաբար թե քրիստոնեաբար, Դավիթն ունի գերազույց զորութունից մի հաշվադատարարին կամ Մսե խաչ, որ նրան գերմարդկային ուժ է տալիս: Դա Դավիթի հուսումն է, հուսումը, որ հայտնի է և մեր հին հեթանոսական վեպերից՝ «Եղեռնութեան», ուրունք Շամիրամայա. դա մինևույն հուսումն է, որ այժմ էլ, իբրև հեթանոսութեան մնացորդ, շատ տարածված է մեր ժողովրդի մեջ, որ պահում է լար աշքից, լար հոգուց, որ ս. կարապետից լարախաղացության և ըմբշամարտության շնորհք ստացողները միշտ կրում են իրանց վերա, որպեսզի իրանց ուժ ու քաջութիւն տա: Դավիթի այդ հուսումը և այն զորութունն ունեւոր, որ եթէ հսկան նորանով երգվեր, անպատճառ պետք է յուր երգումը պահեր, ապա թե ոչ նա՝ հաշվադատարարինը՝ կխաղաղարեր յոպ թնի վերա, և հսկան նորա սոված գերբնական ուժից կընկներ, թնպետե ոչ ժառանգական ուժից, ինչպես և պատահում է Դավիթի հետ: Այսպես՝ անպարտելի զորութունը միացած է ոչստապահության հետ, և հաշվադատարարինը ներկայանում է և իբրև ուխտապահության մի գերբնական էակ, ոգի կամ աստված, որ երգմանպանքներից պատժում է, զրկելով նրանց ուժից, ինչպես հեթանոսութեան ժամանակ Միհր աստվածն է եղել, որի անունը նույնանում է Դավիթի որդի Մհերի անվան հետ: Հետաքրքիր է և այն, որ Հ. Սրվանտյանի վարկանսով՝ ա. Նշանի հետ երկնքից իջնում է և «ասեղը», որ դարձյալ հեթանոսական մնացորդ պիտի լինի, «Սանդոր» մեր հեցիաթնեում էլ հիշվում է իբրև կախարհական առարկա, որ դուրացաղը ստանում է գերբնական կանանցից—հուրիներից կամ հրեղեն աղչիկներից, երբ որ գնում է անմահութեան ջուր կամ խնձոր քերելու. վերադարձին դուրացաղը սանտրը գետին է ձգում և դառնում է աննպաստելի անտառ, որ փակում է դուրացաղին հալածող ազնիքի զորեղ ունի կամ հրեղի մանապարհը: Ազգային վեպի մեջ սանտրը ներկայանում է իբրև սուտ երդման Նշան, որի վրա պետք է երգվեր Դավիթը, եթէ ուզում էր, որ իր երգումն իրան լվնաներ:

Այսպես՝ տեսնում ենք, որ Դավիթը, ինչպես և ամեն մի դուրացաղ, վեպի մեջ հանդիսանում է իբրև գնեթից (աստվածներից) սերված, դիվանական հսկանների ցնդի ժառանգ, որ բացի յուր ժառանգական ուժից՝ գերբնական ուժ է ստանում և մի դիցական զորութունից կամ էակից, որպիսին վեպի մեջ հաշվադատարարին է: Դավիթի հսկայական ժառանգական ուժն ամենից առաջ հայտնվում է այն ժամանակ, երբ որ նա, զեռ փոքր, անգնտ երեխա, իր մոր մոտ Մորամեղիքի տանն էր ապրում: Մորամեղիքը յուր նման փաշկանների հետ գնում է գորգ խաղալու՝ Դավիթին էլ ակամա տանում, նստեցնում են հետո:

¹ Գորգը մեր հեցիաթնեում՝ սովորական դեպքն է, որ զորն են ածում հսկա հերոսները. դա մինևույն լարաղ պիտի լինի, որ էսկզմա Մամիկոնյանի՝ Տարոնի ժողովրդական գրայցներից վերցրած պատմության մեջ ամենագործական անուն փոխ ամբարացած, որից և բնականաբար և զուգույն խաղերն իրանց անունն են տուել և համապատասխանում է առաջ հսկանների (BOGATYRI) օրենքի զեցիքին (ПОВЕЩАНИЕ): Գորգ են քրթումքում և պարտից փաշկանները: Բայց թե գորգով կամ լարովով ինչպե՞ս էին խաղում մեր փաշկանները, զեցիք մեջ պարզ ասված չէ: Նորմենցու պատմության մեջ ալոպիսի հիշատակության ենք գտնում. «Ե ժանկական խաղան երկրից պատահեաց Շառապայ Արթուրուդ զգնդուն հանել ի Եփեհոյ: Եւ նորա տեղալ նմա մահաւան՝ առէ, մանր զքեզ: Իսկ նորա պատասխանալ, թէ ալոյ, առէ, ճանաչիմ՝ և զեռ արքայորդի ի անդամէ Սանաաբայ... Եւ զայս ասացեալ յով ջամհարաբ ի միարհակարանէն

տեղում, որ մտիկ տա իրանց խաղին. բայց խաղի ժամանակ շարժվում է Դավթի դուցազնական ոգին և նա թռչում, հակադրեն ըռնում է Մարամեիքի շարժած, խփած գտղը, որով և Մարամեիքի սուր աչքն իսկույն նկատում է, որ Դավթի Տասարանկ մարդ չէ և նորան հետ է ուղարկում յուր հորեղբոր մոտ:

Ձենով Հովանը Դավթին գատնարած, հորթարած և նախորդ է կարգում, և իշխանական ծագում ունեցող, Սասնու տեր Դավթի Հովանությանը է պարապում: Այս Հովանական պարապմունքը հենց վնայի մեջ վկայում է վնայի հետևյալը, այն ժամանակին, երբ որ ըուր ժողովուրդը, տեր և ծառա, Հովանական կյանք էին վարում, տերն յուր հոտերն էր պահում, ծառան՝ յուրը: Տիրոջ և ուսմկի Հովանական հավասար եղբարություն պատկերը լավ նկարագրված է Դավթի և յուր բախարած հորթարածի տիպերում: Այդպիսի Հովանական կյանքի ժամանակ է միայն ստեղծվում գյուղացիներգությունը, և այդպիսի ժամանակում ստեղծված լինելով և ազգային վնայի նախնականը, բնական է, որ իշխան Դավթի պարապեր խաշնարածությունը, վնայի մեջ հիշվում է երկրագործությունը ևս, բայց այդ երկրագործությունը վնայի գլխավոր հերոսների համար ըմբռնելի չէ, նրանց համար չէ: Գյուղացն Դավթի մինչև անգամ, որովհետև ինքը երկրագործական ժամանակի ժնունդ չէ, արհամարհում է երկրագործությունը և ոտի տակ է տալիս պառապի կամ ալոորի կորեկի արտը. նա լգիտե և չէ կարողանում հասկանալ, թե կորեկ ցանելով կարելի է ապրուստ անել և թե ինքը կորեկը ոտի տակ տալով՝ պառապի և յուր (ինքն էլ այդ պառապի մոտ էր ապրում) ապրուստ է կրտում, թեպետև պառապը նորան այդ մասին ազդարարում է: Ա. Սրվանձտյանի վարդանտում ևս մի գեղեցիկ հատված, որի մեջ պատմվում է, թե ինչպես երկու անգամ, Եստենիկ շտեսած, այսինքն՝ աշխարհի մեջ շատ բան շտեսած, լիմանցող Դավթին ինքը լծվում է դոմենների տեղ և վար անում. «Կը քաշեր զգութան կը հաներ սարու զուլս, ու ընդին կը քաշեր բերել ցածա: Դավթին այս բանն անում է ոչ թե նրա համար, որ յուր մեջ վար անողներին ցույց տա, որի համար կարիք չունենը, այլ նորա համար, որ զոմեջում որ զոմեջում

արգայազան լինէր» (Խոր., 9 գր., 55 գլ.): Այդպիսի մի մականական խաղ մինչև այժմ մնացած է մեր մեղմորդի մեջ. խաղացողներից ամեն մեկն տուն է մեղմորդի մեջ գտնվում: Երբ խաղացողներից մեկն աշխատում է մականով տանել, ձգել որոշյալ տեղը, իսկ մյուս խաղացողները իրանց մականով պետք է գեղանքն խփելով հնազանդ որոշյալ տեղից, բայց պետք է այնպես խփեն գեղանքն, որ նա՝ որին պատկանում է գեղանը և որ աշխատում է որոշյալ տեղը տանել, չկարողանա յուր գտնվածում հաղթած ինքնին խփել, ապա թե ոչ զարկված տեղը պետք է փոխանակն զարկաղեն և ինքն զգի զգեցողն գեղի որոշյալ տեղը տանել գտնվածում: Ինչպես երևում է, հորեղբուն հիշատակած մականական խաղը, որ մեր թագավորների և նախարարների սիրելի խաղն է եղել, սույն մեղմորդական խաղը պետք է լինի: Նույն խաղը կամ նորա նման մի խաղ պետք է լինի և Համես Մամիկոնյանի պատմության մեջ շատ տեղ հիշատակված «Գեղի խաղը», մականական կարգով խաղի գտնվածից, իսկ «Գեղի» կարգով խաղի գտնվածից տեղից: Գեղի խաղը հիշվում է և մեր մեղմորդական երգերի մեջ իսկ թագավորական խաղ:

«Մուղտեն ի մուղտեն ինչ».

Իս սակի գունդն կու խաղայ» (Մեղ. 5-րդ, եր. 130):

Երգի մեջ հիշված մուղտեն—մեղան բառը հորեղբուն մեջ հիշատակարան է հիշվում, որ մինևույն առաքարից է. ինչպես երևում է մականական կամ գեղի խաղը ձիով էր լինում, որի համար պետք էր ընդարձակ առաքարից: Գեղի խաղի տեղի ընդարձակությունը համար վկայում է և Հ. Մամիկոնյանը (Հ. Մամ., վնեմիկ, 1882, հր. 28): Այդպիսի վնայի մեջ հիշած թագավոր խաղը, որ խաղում են հակառակը, կարելի է ենթադրել, որ պատմության մեջ հիշված «Մականական կամ «Գեղի խաղը» լինի, որ խաղում էին մեր թագավորներն ու նախարարները:

շոքուց զուրանց լեզուն թալեր են դուրս ու գութանն կը քաշեն. Դավթի խեղճ հկալ ըդունց վրեն. արծկնց զգոյշտանքաւ Արծակնց, որովհետեւ հովիվ Դավթին անհասկանալի և անենթելի է խեղճ անասուններին ալդպնս տանջելը. թնայնտե նա կսպաներ էլ կենդանիներին, բայց նա կսպաներ ապրելու համար, իսկ իզուր տեղը վար անելով լէր տանջիլ, որովհետեւ նա լղիտեր, թնարտն ինչու են հերկում:

Հովվութեան հետ պետք չէ մոռանալ, որ նախնական ժամանակներում կից պարապմունք է եղել որսորդութիւնը. և մենք տեսնուիմ ենք, որ երկրագործութեամբ լսարապող Դավթիբը պարապում է և Պրսորդութեամբ. նա նետ ու աղեղով և բազեղով որսորդութիւնն անգամ գերազասում է, քան կորեկ ցանելը. նա որսորդ է ոչ իբրեւ որսորդութեամբ զվարճացող ազնվական, իշխան, այլ իբրեւ նախնական ժամանակի հովիվ—որսորդ. Որսորդութիւնն է Մհերի միակ պարապմունքը. նա մինչև անգամ հովվութիւն լղիտն:

Հովիվ Դավթիբը հասարակ հովիվ չէ. նա խաշնարած ժողովրդի զաղափարատիպն է, դուցապն հովիվ է: Նորա սուէրը (կոշիկները) պողպատն են և ոչ կաշուց, նորա կոշը (ցոպը) պողպատն է և ոչ փայտից.—մի բան, որ ինր հնքիաթնքում իսկ զործ են անում միայն այն մարդիկը, որոնք երկար տարիներով առասպելական հեռավոր ճանապարհ պիտի կտրեն. իսկ մեր Դավթիբը զործ է դնում միայն նորա համար, որ ինքը սոսկական հողածին չէ, այլ դուցապն, որի համար կաշին ու փայտը լնշին բաներ են և լնն դիմանա, որովհետեւ նա մի օրում անվի շատ պիտի ման գա, քան երկար տարիներով ճանապարհորդողները. նա մի օրում պողպատն կոշիկը պիտի կտրատեն, պողպատն ցոպը մաշեն. Եվ ինչպե՞ս չմաշեն, քանի որ նա այնքան արագտն ու քաջտն է, որ արագապալ նապաստակներին անգամ ետենեբից վազելով, հալածում է լննեբից և աղվես, գայլ, նապաստակ, աքշ, առյուծ, վագր մի տեղ ժողովում լննեբից, հնազանդեցնում է իրան, խառնում յուր հոտին ու նախրին և առջև արած քշում դնպի քաղաքը:

Դավթի այսպիսի գերմարդկային արագապալութիւնը տեսնելով, մարդ անամա հիշում է Քաջտն Արիւնիսին, որի արագութեամբութեանց անգամ անցնում է մեր Դավթի ոտքերի ուժը: Չմոռանալը հիշելու, որ լանկթամորի մասին ևս դաշտեբից կենդանիներին ժողովելու և այսպիսի արագապալութեան մի զրույց է պատմում մեր ժողովրդի մէջ:

Սակայն սորապնով միայն չէ արտահայտվում մտնուկ դուցապնի ներքին ուժն ու պորութիւնը, որով նա զսպում է վնասակար զազաններին և անմեղացրած՝ խառնում է անմեղ կենդանիներին հետ. նա իբրեւ դուցապն պետք է կոմեր և գերբնական արարածներին—լար ոգիներին հետ, որոնցից պետք է մաքրեր աշխարհի երեսը:

ԺԱ

Հայտնի է, թն մեր հնթանոսական զաղափարների մէջ ինչ մեծ դեր են խաղացել դեները. խարամանի (Արհմնի) ոգիները, որոնց մարմնառութիւնները քաղաքային գնդերով շրջում էին երկրի վերա՝ մեր հնթանոս հայերի զաղափարով: Անկարելի է, որ մեր հին դուցապնական վնպնում այդ դիվական տարրը մեծ տեղ ունենա լինեն, և մեր վնպերի դուցապնները կոմիներ կամ հարաբերութիւններ ունենալ լինեն դեների հետ: Հնութիւնից մեզ շատ բան չէ հասել ալդ մասին, բայց եթն մեր այժմյան ժողովրդական հնքիաթ-

ներին դիմենք, որոնք, ինչպէս մի անգամ նկատեցինք, մեր հին դյուցազնական վնասները մնացորդներն են, ալիւզատնի տեսնում ենք, որ դեերը մեծ գործով անձնավարութուններ են եղել մեր վնասներում։ Ոչ մի հնքիաթի հերոս արժանաւոր հերոս չէ, եթէ նա մի քանի անգամ չէ կոպել դեերի դեմ և նրանցից մի քանիսին սպանելով աշխարհն ազատել նրանց ավերածութից։

Մեր ժողովրդի արդի հիմնական գաղափարով, դեր մի վերացական, աննյութ ոգի կամ էակ չէ (պետք չէ շփոթել քրիստոնեական սատանա-դեի հետ), այլ մի մարմնեղեն, անհիմք արարած, մարդկային անարգի կերպարանքով, որ մարդկորեն բազմաանաչու, սիրելու և ատելու, ուտելու և խմելու հատկութիւններն ունենալով հանդերձ, ռեալիտէ չափազանց ուժով, որ դեր միշտ ի յարն է գործ դնում մարդկանց վնասելու համար։ Բայց այդ խղ ուժ ունեցող բազմակուլտ դեերը միշտ ստոր են մարդկային մտքի հանճարեղութիւնից, որով և միշտ նրանց հաղթում են մարդ-հակաների ձեռքով, որոնք՝ իբրև հետազոտավելի զարգացած սերնդի գաղափարներ թե ուժով և թե խելով ու հնարագիտությամբ գերազանցում են նախորդ սերնդի գաղափար դե-հականերից։ Դեերն ապրում են խոր գուրբրի և մթին աչքերի մեջ ոչ թե մեռակ, այլ իրանց եղբայրներն և իրանց դե մայրերի հետ։ Նրանց գլխավոր պարապմունքն է որսորդութիւն, որով և միայն ապրում են։ Նրանք մերթ-մերթ մարդկային աշխարհ են՝ դուրս գալիս կողոպտու վերցնելու և մանավանդ սիրուն աղջիկներ փախցնելու իրանց կնութիւն համար։ Բայց դեերի սերունդը դորանով չէ միանում երբեք մարդկային սերնդի հետ, որովհետև այդ աղջիկներից նրանք զավակ չեն ունենում, նրանց մայրերը իրանց նման հրեշ-դեերն են։ Իսկ իրանց դեերը մարդ չեն, այլ մարդակեր են, սաստիկ ատում են հողածին մարդուն և արհամարհում նորոս սեռազատութիւնը։ Համար, որից երևում է, որ իրանց հողածին չեն, այլ դիցական սերունդ, գեր-մարդկային էակ,—թեպետ և իրանք նույն հողածինների ձեռքով սպանվում են, որով և իբրև անմահ ոգիներ չեն հանդիսանում։

Այս է մեր ժողովրդի արդի գաղափարը դեերի մասին, որոնք խորին հրեշտութիւնից են հասել մեզ, և որոնք մեծ դեր են խաղացել անշուշտ այն ժամանակ, երբ որ հայերը լիովին համատ էին ընծայում այգիսի արարածների գոյութիւնը։ Սակայն դեերը իրանց պաշտամունքի սկզբնական ժամանակում լարութիւն և խավարի ոգիներ չեն եղել. դեերը եղել են և բարի աստվածներ, որոնք հնդկ-եմքոպական ազգերի մեջ ներկայացրել են երկնքի և լուսոս աստվածութիւն։ Պէ կամ զիւ քառը դուրս է գալիս Եւրոպայի, որ սանսկրիտներն նշանակում է լուսավոր, որից և հունաց մեջ երկնքի աստված Դիոսի (Ջևո) կոչումն է և մեր զիւ (աստվածներ) խոսքը, որի ուրիշ գրութիւնն եղած պիտի լինի զիւ, որովհետև բարդութիւնների մեջ սեռականում վերականգնվում է—տառը՝ զիւ—զից, զիւ—զից (զիւց—ազն)։ Այս ցույց է տալիս, որ հայաց մեջ ևս սկզբում դեերը բարի և լուսավոր էակներ կամ աստ-

1. Ժողովրդական գաղափարով հասկացված դեր քրիստոնեական դեի հետ չի փոխելու համար, ուստի դրում են դէպ. Բայց մենք նույն գրութիւնն ենք քննում, ի նկատի ունենալով, որ քրիստոնեական դեր միևնույն հիմնական դեմ է, միայն քրիստոնեական խնայութեամբ ըմբռնված։ Դեմ իսկական զիւց է զրվել զիւ կամ զիւ, որովհետև ուրիշ մեմ է զիւ (բարդութիւնների մեջ), Բայց որովհետև է-ից հետո հայերենում լի կամ 1 չէ զրվում, նախկին դերն են 2-ով դեմ։

2. Ժողովրդի համատարիցով կամ մի առանձին բանի արտաբերում կամ քննադատում, որի բնականը միայն զիւն են և ար. Լատին է դեերի թագավորը։ Դեռապա՛նք պետք չէ շփոթել միմե և Լուս աշխարհների հետ, որոնք ուրիշ իմացութիւն են պատկերացնում։

վաճառքներն ավետք է հղած լինին, և նրանց պաշտամունքը շատ նշանավոր և գրեթե միակ տեղը բռնած պիտի լինի, որ նրանց դիք կոչումը հետագայում զամանիչ է դարձած աստված քառի հետ: Արքայի վկայում է և հայ ժողովրդի մեջ մինչև այժմ մնացած զրույցները գեների մասին: Դեհրի կամ ղից լուսավոր աստվածություն լինելը մեզանում երևում է և մեր տի և դիցազն քաներից. տի, որ միենույն ղև կամ ղի (դիվան) քառն է, նշանակում է ցերեկ, արվա լուսավոր մասը, իսկ դիցազն նշանակում է դից կամ գեների սերունդ. ժողովուրդը յուր սիրելի հերոսներին ինչպես «դիանական ճիժ», այսինքն գեների զավակ—գլուցազն Դավիթն է, հարկավ քառի և լուսավոր գեների սերունդ կհամարեն և ոչ լար ու խավար դիվանցի: Բացի այդ՝ մեր հեթանթների մեջ մինչև այժմ ևս գեռ մուկ կերպով պահված է գեների քառի աստվածություն լինելու հիշողությունը, որովհետև պատահում են և այնպիսի դեք, որոնք հղաքարանում են կրտսեր կամ մարդանման հսկաների հետ և նրանց օգնում են ուրիշ գեների կոտորելու: Դեքեր, իբրև քառի էակներ, հիշվում են և ուրիշ ազգերի դրույցների մեջ. իսկ իբրև քառի, լուսավոր աստվածություն մինչև այժմ կազմում է եզրդիների աստվածապաշտության հիմունքը Մալաք-Տուուզի անձնավորության մեջ:

Ժողովրդի բանական զարգացման հետագա շրջանների մեջ քնության տարերապան ուժերի ներկայացուցիչ նախնական աստվածները, տիտանական հսկաների տիպում մարմնացած, ինչպես դեքեր են, աստվածությունից իջնում, դառնում են թշնամի հրեշներ կամ հսկաներ ու տիտաններ. այս փոխակերպությունը կատարվում է կամ նորա համար, որ իրերի հին կարգի ներկայացուցիչ աստվածությունն այլևս պետք չէ գալիս ժողովրդին յուր հետագա կենթության փոխված հանգամանքներում, և կամ նորա համար, որ հին դիցաբանության տարերապան աստվածները հետագա մտավոր զարգացման շրջանում, ընկանալարա, թվում են հրեշներ և զարհուրանքներ: Տարերապան աստվածությունից տիտանական տիպ ունեցող հրեշներ են դարձած և դեքեր, որոնք սկզբում լուսավոր էակներ են եղել, իսկ հետագայում խավարի և անարության ոգիներ: Այժմ որովհետև բոլոր տարերապան հսկաները՝ իբրև իրերի հին կարգի ներկայացուցիչներ՝ պետք է ետ մղվեն իրանց ժառանգների ձեռքով, որոնք նրանց տեղն են տնցնում կամ ժառանգաբար և կամ նրանց հաղթելով, ուստի և մարդանման հսկաները կամ դուրապները մեր հեթանթների մեջ կոտորում են գեների մեծ քաղմություն:

Աղբալին դուրապական վեպը ստեղծված լինելով այն շրջանում, երբ ար ժողովրդի քանական զարգացումը տարերապան խու հսկաների հավատալիքից անցնում է մարդանման հսկաների հավատալիքին, անշուշտ պիտի լսուականար և իրերի հին կարգի ներկայացուցիչ գեքերին: Դուրազն Դավիթը յուր հորթաբառության ժամանակ հենց ունենում է կոխվ այն գեների հետ, որոնց դիակներից անգամ Քեդի Քորոսը վարիենում և փախչում էր: Դավիթը բացակա է լինում յուր ընկեր հորթարածի մոտից. լեռան այրից ելնում են քառասուն հարածի-խարածանի գեքեր ու զարնում նրա հորթերը տանում են: Դավիթը ետ դառնալով, իմանում է եղբուրությունը և գնում է գեների ետեից: Նա գնաց, կանգնեց, այրի դուռն ու ահողի մեկ ձեռով քոռաց, սարսափ թափավ վրը ըզ գեքեր, ևս: Դեքն ելնում են, որ խոնարհությամբ ծառայեն Դավիթին, որ նա իրանց ղեկտորն. բայց մեկ-մեկ գուրս էլան, Դավիթ մեկ-մեկ կոպալ զարկեց ու քառասունի գլուխ ղև գնաց ու շանգակ մնաց: Հետո Դավիթը օմտավ

էրի մեջ, տեսաւ որ դուռն մի ոսկի է, մեկ արծաթ, աշխրթի մալ ու դովաթ, քանի ուր պապ մոռնո է, ըզոնք ավերութիւնն էրած են ու լցած էր էրք:

Դեհըր մեր հեքիաթների մեջ ներկայանում են իբրև տեր հարստութեան — ոսկու և արծաթի, որոնցից, սակայն, շնն օգտւում նրանք, այլ միայն պահպանում են: Այդ ոսկին ու արծաթը նրանց ձեռք են բերում կամ ասպատակութեամբ աշխարհից վերցնելով, ինչպես վեպի մեջ, կամ գետնի տակին եղած թանկագին մետաղների տեր դառնալով: Գերմանական և ռուսական վեպերի մեջ, ղեկերի փոխանակ, վիշապներն են գանձի պահպանն դուրս գալիս. առասպել հսկա Դորքինիա Նիկիտիլը, Դավթի պես մանուկ հասակում, մտնում է վիշապի այրերը, սպանում է նորան և նորա ոսկին, արծաթը վերցնում:

Վիշապներն էլ մեր հեքիաթներում անծանօթ չեն. կարելի է ասել՝ ղեկերի հետ համասար դործող անձեր են՝ բայց Դավթի վեպի մեջ չեն դուրս գալիս վիշապներ, որոնց դեմ կռիւնով, Դավթին աշխարհն ազատեք նրանցից, ինչպես Վահագն Վիշապաքաղը, որ սուլնպիսի կարճութիւնների համար անշուշտ Վիշապաքաղ է կոչվել: Դուրսազն Դավթը միայն ղեկերից է աշխարհը մաքրում:

ԺԲ

Դուրսազնը ժողովրդի գաղափարատիպն է, ժողովրդի ցանկութեան մարմնացումն է. բաժանան չէ, որ նա միայն գաղաններին զսպի և ավերիլ ղեկերին կոտորե. բացի գաղաններից կան և ուրիշ թշնամի էակներ, թշնամի դուրսազներ, որոնք նույնքան վնասակար են ժողովրդի համար, որքան գաղաններն ու ղեկըր և թերևս նրանցից ավելի վնասակար, որովհետև թշնամի դուրսազներն իրանց անշախ ուժի հետ միացրած են և մարդկային բանականութիւնը, որ շունին գաղանները և պակաս ունին ղեկըր: Թշնամի դուրսազները մենակ ավելի են, քան թե բոլոր ղեկըր և բազմաթիւ հրեշները: Ահա այսպիսի թշնամի դուրսազներից ևս պետք է ժողովրդի գաղափար կազմող դուրսազըր ազատե յուր ժողովրդին:

Այդպիսի մի թշնամի դուրսազն վեպի մեջ ներկայանում է Մարամեիքը: Դավթըր Սասմա քաղաքի տերն է, իսկ Մարամեիքը՝ Մարա քաղաքի տերը: Մարա մելիք կոչումն է տրւում Մարա քաղաքի իշխողներին, որ հատուկ անուն չէ, այլ մի հասարակ կոչում: Մարա և Սասմա քաղաքները երկու միմյանց թշնամի կենտրոններ են, որոնց մեջ կռիւն սկսվում է հենց Արամեիքի օրով: Մարա մելիքների սերունդը ևս հասարակ մահկանացուների սերունդ չէ: Արամեիքի մարտնչական այդ իշխանական ցեղը ևս ժաղրում է Արամեիքից, որ սպանում է Մարա քաղաքորին: Այդ քաղաքորի կնոջից և Արամեիքից ապօրինաբար սերվում է Մարա մելիքների ցեղը, ապօրինի և անգրանիկ ծնունդ, որ շէր կարող երբեք հաշտ ալքով նայել Արամեիքի օրինավոր՝ բայց կրտսեր սերնդի վերա, ինչպես ապօրինի որդին, օրինավոր, բայց կրտսեր որդու վերա: Եվ ահա այս երկու ցեղերի մեջ պատերազմ է սկսվում և, ինչպես երևում է, շարունակվում է որոցց որդի մինչև Դավթըր. մեկը սպառնում է Սասմա քաղաքն ավերել, իսկ մյուսը՝ Մարա քաղաքը, Պատերազմի հաղորդութիւնը միշտ Սասմա տերերի կողմն է: Բոլոր Դավթի ժամանակ, երբ որ սա ղեռ երեխա էր, իսկ հայրը մեռած, Մարա մի ուրիշ մելիք հարմար միջոց է գտնում Սասմա քաղաքն իրան ենթարկելու:

Մարա և Սասմա քաղաքների կռիւները հիշեցնում են Իրանի և Թուրանի կռիւները Շահնամեի մեջ. Իրանի փոխանակ Սասման է դուրս գալիս, իսկ

Քուրանի գիտնականը՝ Մարա քաղաքն յուր մեկիքներով՝ Սասնու տները հանդիսանում են իբրև ժողովրդին տիրելի, ազնիվ տիպեր, որոնց գլխավոր ուչ ու միտքը նորա վերա է դարձրած, որ իրանց երկիրը պայտպանեն օտար քրոնոթյունների դեմ։ Մարա մեկիքները, ընդհակառակը, ժողովրդի համար տիրելի չեն, այլ ատելի բռնապետներ են, որոնք մինչև անգամ իրանց սեփական ժողովրդի վերա բռնությամբ են իշխում, և այս լավ կերպով հայտնվում է պատերազմի մեջ Բեթի հայրիվը՝ պինվորի խոսքերից. «Դավիթ, դու ինչու էսա մարդեր կսպանես... Մարամեկիք զորով է բերի»։

Ահա այս՝ յուր ժողովրդի համար իսկ ատելի Մարամեկիքը կամենում է իրան հարկատու շինել Սասնու տներին և, հավաքելով յուր ժողովրդից կատարյալ սպառազինություն—նորելուկ մանուկներ, քեղդար տղաներ, թուխ միտքավորներ, և սպիտակ միտքավորներ, զայն և Դավթի վերա Բայց մի՞թե Մարամեկիքն անձամբ բռնական չէ կռվելու Դավթի դեմ,

Մարամեկիքն այնպիսի պարագաներով է նկարագրված վնասի մեջ, որպիսի պարագաներով նկարագրվում են մեր հեքիաթների մեջ դիվական աննոռնի, հրեշավոր արարածները։ Նա, իբրև մի տիտանական հսկա, դեբրի պնա յոթն օր անզարթնելի քուն է մտնում, նա այդ քնից չի զարթնիլ ոչ մի թիթև բանով, որով դարթնում են հասարակ մարդիկ, նրան զարթեցնելու համար պետք է երկաթի շամփուրը կամ գութանի խոփը կրակացնել և տալ նորա ժողովրդին, Պետք է երկակայնի այն հսկան, երկայնադեզ, անհնգեզ հսկան, ինչպես խորենացին դնում է Բնյի հսկաների համար,—որի համար շինացած երկաթով խաբելը նույնն է, ինչ որ հողածինների համար վրի կծելը, որից մարդ զարթնում է, քայց դարձյալ թմրության քնի մեջ է մտնում։ Վերջապես Մարամեկիքը զարթնում է և, իբրև մի տարերական գեբրեական հսկա, ամլելի ամպզ քան թև Դավիթը, որ մարդանման կրտսեր հսկա է, մի տեսակ արհամարհական հայացքով, կարծեմ, բարձրից՝ ամպերից է նայում Դավթի վերա և փչում.—նորա փչելով ամեն մի հասարակ արարած պիտի թռչի։ Կատարյալ նմանություն մեր հեքիաթներում պատմված երկաթի մարդկանց նկարագրին, որոնցից մեկի պատկերը գտնում ենք Հ. Սրվաճայանի սլամով հոտովա-ի Խան-Բողոսի անձնավորության մեջ, Երկաթի մարդ Խան-Բողոսի փոնգոտից Բադիկանը մի արտ է միայն հեռու թռչում, որովհետև ինքը՝ Բադիկանն էլ կորիճ մեկն է, դեբրի և ամպահաների (վիշապների) հետ տվել ու առել է, ման է եկել Լույս-աշխարհ, Մութ-աշխարհ, Անդ-Մաքուշ, Դև ու Աղնավոր, իննան ու ջանավար—ամենքի հետ կռվել է և ամենքին հաղթել է։

Ձնայնությամբ, որ Մարամեկիքն այնպիսի մի ամպզ դյուցազնական ուժի տեր էակ է, քայց նա դարձյալ չէ համարձակվում մենակ դնալ կռվի Սասնու վերա և քայց նա կատարվ կռվի մտնել Դավթի դեմ, նա ամեն գեպում խորամանկության և խաբուսության է դիմում։ Առաջին անգամ, հերոսին հատուկ հյուրասիրության պատրվակով, Դավթին խաբում, ձգում է քառասուն նետ խորությամբ հորի մեջ և նենգավոր մարդու լարախնդաց ժպիտով առում. «Ե՛ն էր, ինչ տը խնտ ձի կռիվ է՛նեք, թրի կենա է՛ստեղ, յուր ոսկորքեր փտի՞ռ Բայց Դավիթը իսալ-պատարազինի գեբրեական զորությամբ հորից ազատվում է։

¹ Արաճաշտության սուրճ եղանակը գտնում ենք և ուսաց տարերական ամպզ դյուցազնուժի նատուրալ Միկելոշինաի և մարգարեական կրտսեր հսկա Գորբինիա Նիկիտիկ կռվի մեջ. Գորբինիան երեք անգամ յուր բուր ուժով լստիտով նտեից խփում է նատատիային. քայց ուս միտին երրորդ անգամը նա է դաժնում և առում՝ նա կարծում էր թե մաժակներն են կռում։

Մէլիքը դիմում է ներկորդ նենգութեան՝ հերթով կռիւելուն, որպէսզի ինքը առաջին հարվածն իջեցնեն, այս էլ չէ հաջողութիւն: Նա դիմում է իրորոյն նենգութեան և օգտւում է Դավթի բարեսրտութիւնից: Նա ասում է Դավթին. «Կուգեմ, որ քառասուն դադ խուր փորեմ.— ես երթամ, ընկնեմ մըլ խորուն, քառասուն դադցի քար քաշեմ վար իմ, քառասուն դադած գոմշի կաշի լն առնեմ, քցեմ վար ջաղցի քարին»: Բայց Դավթը լախտի մի հարվածով շղթառսուն գոմշու կաշին կտրեց, քառասուն դադցի քար լն կտրեց, Մարամեկիքի գլխու գադաթ լն կտրեց: Այսպիսի առաջապահական պաշտպանութեան վաճանհերի տակից Մարամեկիքի գլխի գադաթը կտրված է և նա երկու կես է հղած, բայց դարձալ, ինչպէս դենըր հսկաների ձեռքով երկու կես լինելուց հետո, ձայն է տալիս և արհամարհում Դավթի հարվածը, կարծելով թն ինքը չէ վնասված: Բայց երբ որ իրան թափ տվեց, սմեկ կտոր ընկավ էստեխ, մեկ էնտեխ:

ԺԳ

Սասնու տեր Դավթն էլ հակա է. նա, դեռ մանուկ, առանց զենքի զուգել է զազաններին և կտորել քառասուն զենքին. բայց այդ զենքն ու զազաններն ի՞նչ են անարի և համբոժ հսկա, խորամանկ Մարամեկիքի մոտ,—լինին և անխմաստ արարածներ: Սակայն Դավթն, իբրև դուրսգալն, պետք է կռվի Մարամեկիքի դեմ: Հեշտ ու թեթև քան չէ այդպիսի մի հրեշմար դուրսգալն դեմ կռիւելը. նորա դեմ կռիւելու համար հերոսը պետք է ունենա ամբի քան յուր ժառանգական ընտան ուժը և ուրիշ զենք, քան յուր հովվական ցուպը, և ահա ժողովուրդն յուր դուրսգալին շրջապատում է այնպիսի պաշտպանութեան զենքերով, որ պետք է ունենա ամեն մի կատարյալ դուրսգալն:

Ամենից առաջ դուրսգալն պետք է ունենա ներքին բարոյական արժանաւորութիւն: Ժողովրդի հասկացողութեամբ, ինչպէս ամեն մարդու գործի հաջողութեան համար պահանջվում է, որ սկսած գործն աստիճանաճ լինի, նույնպէս և դուրսգալն համար պահանջվում է արդարութիւն ունենալ, այսինքն՝ աստծու աշխի սիրելի լինել, որովհետև դուրսգալն, ինչքան էլ քաջ ու զորեղ լինի, դիք, աստված չէ, դուրսգալն, ինչքան էլ յուր արարքներն անձնիշխանութեամբ կատարեն, նա դարձալ մարդկային սերունդ է, և նորա վերա ևս ճշում է աստվածային, դիցային այն գերազույն զորութիւնը, որի ձեռքի տակ են թն՝ մարդիկ և թն՝ դուրսգալներ, և որի կամքի մի արտահայտութիւնը միայն բավական է, որ դուրսգալն բոլոր վիճակը փոխվի և նա հավասարվի սոսկական մարդուն: Մեր ազգային վեպի մեջ աստվածային զորութիւնը բռնում է ամենամեծ տեղը, և Աստուծու կամքով ձեռնարկած գործն է միայն հաջողութիւն գտնում. դուրսգալն, ամեն մի նեղ տեղն ընկած միջոցին, խոնարհութեամբ հնազանդվում է գերազույն ուժի հրամանքին, որ յուր ճակատագիրն է, բայց միանգամայն և հուշ ունի, որ այդ գերազույն ուժն յուր բարերարութեամբ ձեռքից չի թողնի յուր դուրսգալին. որովհետև սա արդար է և սուրբ գործի համար է կռիւում: Դուրսգալն առ Աստված դիմելու սովորական ձևն այս է.

«Յրեյա՛ւ, բարերար Աստված,

Թո՛ւ հրամանքն էր շատ.

Հրամանք տնեռ և այլեւ

Այսպիսի մի ազդեցական երգով, որ հնութիւնից եկած վիպականութիւն ունի, հերոսները շատ անգամ դիմում են գերազույն զորութեանը, և նա կա-

տարում է նրանց խնդիրքը, բայց կատարում է այն խնդիրքը, որ դուք ազնա-
կան ուժի սահմանից դուրս է, որ դուք ազնական անշարժ ուժով անգամ կա-
րելի չէ անել, ինչպես՝ վնասի մեջ՝ հարավ-քամի բերելը և ուրիշները։ Իսկ
ինչ որ վերաբերում է դուք ազնական ուժին, և այդ ուժով կատարելու հը-
նարավոր գործերին, հերոսի այդ դուք ազնական ուժն ևստուտու անվանը
դիմելով չէ ամեն անգամ սատականում և լավից անցնում, այլ ևստված, ինչ-
պես գիտենք, այդ շնորհքը հաշ-պատարադիրն պատկերով միանգամ ընդ-
միշտ արդեն տվել է Դավթին և յուր հորը, որովհետև նրանց արդար մարդիկ
են և այլևս նրանցից չէ վերցնում, քանի որ նրանք արդարության և ուխտա-
պահության կամքին իրանց կյանքը ևստված յուր զորության միշտ նրանց
հետ է, որոնք յուր արդարության ճանապարհով կենթանան և ևստված յուր
այս շնորհքի բաշխումը ոչ թե յուր ինքնակամության է թողնում, այլ հերոսի
անձնակամությանը։—Եիշտ ճորտատենական դադափար մարդու անձնիշխա-
նության մասին։ Առհասարակ մեր ազգային վնասը՝ հեղեղված է կրոնական
դադափարներով, որոնք ավելի քրիստոնեական ժամանակին են պատկանում,
քան թե հեթանոսականին։ և այս քնական է մեր ազգի համար, որի պատ-
մական արտահայտությունը միայն ճկնդեցու մեջ են ուղղում տեսնել։

Առաջումն օրելի լինել արդարության և անպարտելի զորության
ստանալու միջոցով ճեղ-պատարադիրն ունենալը դեռ րավական չէ, շատ էլ
դուք ազնը բարոյական արժանավորություն ունի և ներքին զորության միջև
է, նորա արտաքինը դեռ միևնույն սոսկական մարդուն է. հասակը հասարակ
մարդու հասակից վեր չէր կարող լինել, որովհետև թեպետև դուք ազնական
սերունդ՝ բայց դեռ մասնակ էր. հագուստը հովվական հասարակ հագուստ էր,
իսկ զենքը ցուպ և հասարակ նետ ու աղեղ էր։ Դուք ազնը յուր ներքին ար-
ժանավորության հետ պետք է ունենա և դուք ազնի վայել արտաքին արժա-
նավորություն. նա պետք է ճակատակալ հաղթանակում, փառավորակ
մտադու զենք ու զրահներ և իշխանական հեղեղներում ունենա, ժողովուրդին
յուր սիրելի դուք ազն Դավթին հաղցնում է յուր հոր իշխանական հագուստը,
զգլխու-գոտին, սկապեն-խաբուկին և քամարնի մեջքին, իսկ որ ամենից
զգլխավորն է, նրան տալով է Քուր Կեծակին, և Քուրիկ-Ջալալին։

Կայծակի-թուրը, դա ամենաընտիր զենքն է, որ մեր ժողովուրդը տալիս
է յուր ամենից սիրելի հերոսներին։ Կայծակի-թուրը թեպետև երկրի վերա է
արվեստով, բայց նորա նյութը երկրային չէ, այլ երկնային. նա ծնվում է,
ինչպես Կայծակին անունն իսկ ցույց է տալիս, ահեղագոր կայծակներից,
որոնց առաջ անհատանելի բան չկա աշխարհիս վերա, ուստի և Կայծակի-
թուրի ավելի հատու սուտեր չկա երկրիս վերա, և դուք ազնը, եթե կատարյալ
դուք ազն պետք է լինի, պիտի ունենա այդպիսի մի թուր։ Ահա, որ մեր
վնասի մեջ չէ հիշվում թե ինչպես է Կայծակի-թուրը ձեռք բերվել, որովհետև
այդ թուրը Դավթին իրեն հայրական ժառանգություն է ստանում, իսկ վնասի
մեջ չկա Դավթի հոր մասը, մինչև իսկ Դավթի ծնունդն և առաջին երեխայու-
թյունը։ Մեր ժողովրդական ավանդություններից հայտնի է քիչ ու շատ թե
ինչպես է հերոսը ձեռք բերում Կայծակի-թուրն նյութը։

Կան այնպիսի լեռներ, որոնց գլխին միշտ փոթորիկ է և միշտ կայծակներ
են խփում. ազգ կայծակները գետնին խփվում են և իսկույն վերանում են եր-
կինք գետնի վերա լեռ մնում։ Եթե հերոսն այնքան սիրտ ունենա, որ անվախ
կերպով բարձրանա կայծակի-օտը, և հետը տանի թաց թաղիք, դիմ սարի
գլխին,—կայծակը, խփվելով թաց թաղիքին, կմնա թաղիքի մեջ և հերոսը

կարող է կայծակը բռնել, բերել ներքև և ուզած թուրը շինել, Այս ամանդու-
թյան հետ զույգ զոտում ենք և մեր հին մատենագրության մեջ ջանք բառի
ուրիշ գործածութիւնը. այն է, որ շանթ նշանակում է թե կայծակ և թե
շիկացած երկաթ. բացի այդ՝ կա և շանքեխո բառ, որ Անանիա Շիրակա-
ցին է դարձում յուր աստեղարաշխության մեջ բացատրում է. «Անան ամանք
զշանթեքարն որոտմամբ հանդերձ անկեալ՝ նման կրիայի գլխոյ» (տե՛ս
Ուշակագրան լեզ. բառ., ընդ., որի մեջ շանթեքարի համար ասվում է՝ քար
պատուական, որ կարծի անկեալ զույգ ընդ շանթի)։ Շանթ և շանթեքար բա-
ռերի այս հին նշանակութիւնը ցույց է տալիս, որ մեր ժողովրդի մեջ եղած
արդի համատարածը կայծակ-թրի ծագման մասին գալիս է ավելի ևս հին,
առաջնայնական (միթական) ժամանակներից։

Կայծակի-թրի հետ պետք չէ մոռանալ և ճշմութիւն-թուրը, որ գրեթե
նույն հատկութիւններն ունի, ինչ որ Կայծակի-թուրը, միայն ծագմամբ ուրիշ
է, չ. Մովսէստայնը «Ճշմութիւն-հոտովի» մեջ այսպես է զննում Հալլունի-թրի
մասին. «Ճշմութիւն կնշանակե համու ունի. իբր թե երկաթը կմաներն կորեկի
պես, կուտան հալեքուն, կուտեն, և անոնց ծերտերը ժողովելով կրակով կհրեն,
ելած երկաթը կլինի զուտ լալիկ և զարմանալի սուր ու կտրուն» (Ճշմութիւն-
հոտով, հրկ. 75)։ Հալլունի-թուրն ազգային վեպի մեջ դուրս է գալիս Պա-
րոն-Աստղիկ ձեռքին, որ Դավթի հորեղբոր որդին է, Հալլունի-թրի ամանդու-
թիւնն ևս, ինչպես Կայծակի-թրինը, հնութիւնից է գալիս. ամանդութիւնը՝
բազմահաղթ Տրդատ Թագաւորը ևս ունեցել է Հալլունի-թուր։

Բացի Հալլունի և Կայծակի թրերից, հիշատակվում է գուրգ—լախտ, որ
մեր հերոսների ամենասիրելի զենքն է. գուրգի մասին մենք վերնում խոսե-
ցինք։ Դավթի, ինչպէս, որ ունի Կայծակի-թուր, Մարամելիքի հետ թրով
չէ կտրում, այլ լախտով, և այս ցույց է տալիս, որ վեպի այդ մասը, այսինքն
Դավթի և Մարամելիքի կոխվել ավելի հնութիւն ունի, քան թե Կայծակի-թրի
գրույցը, որ ավելի հետագա ժամանակի ծնունդ է նուրիսի յուր արվեստով.
բոլոր նախնական հերոսները, ինչպես հունաց մեջ Հերակլեսը, կտրում են
միայն լախտերով, որ մի պարզ ու բիրտ զենք է, ինչպես և իրանց հերոսները
պարզ ու բիրտ են. Չ. Սրվանձտյանի վարդանտում Կայծակի-թուր չկա,
բայց դուրս փոխանակ Դավթի ռնի խալխան—վահան, որ յուր գլխին է բռն-
նում Մարամելիքի հետ կոխելու ժամանակ. Ավելացնենք այդ զենքերի վերա
և նետ ու աղեղը, որ ունի Դավթի, կստանանք դուցազնի սպառազինու-
թիւնը՝ Կայծակի կամ Հալլունի բուր, լախտ, վահան և նետ ու աղեղ։ Պետք
է նկատել, որ ազգային վեպի մեջ զենքերն այսպես են հիշվում, իսկ դրահա-
վորութիւն չկա, եթե դրահներ չհամարենք Շալխու գոտին, կապեն—խարուկին,
քամարն ի մեջքին, որոնք մեկնութիւն են կարտոն և մենք գծվարանում ենք
բացատրել. բայց և այնպես կարծում ենք, որ դրանք ավելի հագուստ պետք
է լինին, քան թե դրահներ։

Վերահիշալ զենքերից թուրն ու լախտը դուցազնի անբաժան բեկերներն
են. բայց դուցազնի համար կա և մի ուրիշ անբաժան ու համատարիմ ըն-
կեր. դա նորա ձին է, ձին, որ այնքան նշանավոր դեր է կատարում ինչպես
ընդհանրապես, մեր բոլոր հեքիաթներում, այնպես և մեր ազգային վեպում.
Դուցազնն առանց նուրիսի դուցազն չէ. պարտից դուցազնն Ռուստամն իրան
առանց ձիու փահլանն չէ համարում, և նա կարծում է, որ իրան միայն այն
ժամանակ հակալի տեղ կընդունեն, երբ որ ինքը յուր սիրելի Ռաշի վերա է,
լավ ձիու համար հակա յուր կլանքը կտա, որովհետև առանց ձիու չի կարող

ու մի սխրագործութիւն կատարել. լամ ձին հսկայի մարտակիցն է պատե-
րազմի մեջ և նորա պահապանն ու պաշտպանն է թշնամիների հարձակմունք-
ներէ դեմ. նա միանգամայն և հերոսի համապարփմ խորհրդականն է,
որովհետեւ դուքսընական ձիերը մեր հեծիաթներում, ինչպես և մեր ազգային
վնայի և ուրիշ ազգային վնայերի մեջ, անքան արարածներ չեն, այլ քանակոր,
խոսուն արարածներ են, նրանք մինչև անգամ զուարթութիւն շնորհք ունին,
նախազգում են վտանգը և նախազգուշացնում իրանց տիրոջը.—մի հանգա-
մանք, որ վկայում է վնայի խորին հեռութիւնը, այն ժամանակին, երբ որ
մարդիկ աստվածացնում էին բոլոր բնութիւնը, և բնութիւնը բոլոր առարկա-
ներէ, կենդանիներէ և նույնիսկ անջուլ ասարկաների մեջ նրանկայում էին
կենդանի ոգի և քանականութիւն:

Դուքսընական ձիանքը մեզնում կոչվում են հրեղեն ձիանք, կրակն
ձիանք.—արդոք կրակից՝ շինված, թե՛ կրակ դարձած վաղոր ձիանք, Ավելի
համանական է, որ ոչ մեկը չիկ և ոչ մյուսը, այլ հրեղեն բառը ժաղած է մի
ուրիշ արմատից, որից դուրս է եկել և նուրի—հրեղեն կոչումը, որ տրվում է
զերբնական, դիցական կին էականերին, հուրի, հուրնի—հրեղեն կամ հուրի-
հրեղեն, և կամ լոկ հրեղեն աղբիկներին: Մեր հրեղենները կամ հուրիները
չրերի պաշտամունքի աստվածութիւնն են վերաբերում: Մեզ թվում է, թե
նուրի կոչումը եռույն է, ինչ որ նուրս կամ նուրս, որով հեթանոս հայերի
մեջ ջրերի պահապան և խնամակալ ոգիներն էին կոչվում. իսկ հորուս կո-
չումը պարսից Զատուրաստ ամենշապանատայի կոչումն է, որ նույնպես ջրերի
պահապան ոգի է եղել: Արդի ժողովրդական հուրի (հուրիկ և հրեղեն մինչև
այժմ կեղծ անուն է) բառն ևս հատուկապէս բառի ուրիշ նվազական ձևը պետք
է լինի, որով և հուրի-հրեղենները ներկայանում են իբրև հին հորուսը կամ
պարսկական հատուկապէս, այսինքն՝ ջրերի խնամակալ ոգիներ, և այս հա-
կառակ չէ մեր արդի ժողովրդական համատարիքին հուրիներէ կամ հրեղեն-
ներէ մասին, որոնք ապրում են ջրերի մեջ, առաջնապես փոքր լճաների
հատակում: Միեւնույն ջրերի մեջ, հուրի-հրեղեն աղբիկներէ հետ ապրում են
և հրեղեն ձիանք ու հրեղեն գոմեշներ, որոնք նույն բնորոշ հատկութիւններն
ունին, ինչ որ հրեղեն աղբիկները: Հրեղեն բառը աղջկան հատկացվելով,
ցույց է տալիս աղջկա զերբնական, դիցական էակ, կամ, այսպես ասած, դի-
ցուհի լինելը. ինչու՞ ուրեմն շնթագրել թե նույն հրեղեն բառը, ձիու վրա ևս
դրվելով, ցույց է տալիս ձիու դիցական կամ զերբնական էակ լինելը, քանի
որ այդպիսի ձիանքը հրեղեն աղբիկներէ հետ միեւնույն տարրի մեջ են ապրում
և ունին զերբնական հատկութիւններ. և այս հակառակ չէ վնայի ոգուն, որի
մեջ ինչպես դուքսընները ժաղամբ դիցական էականերից, կամ աստվածներից են
գալիս, մինչև իսկ հակաների զենքերն երբեմն դիցական ժաղում են ունենում:

Դամթի ձին, Թուրկիկ Զալային, հրեղեն ձի է և ունի հրեղեն ձիու բոլոր
հատկութիւններէ հետ և քանականութիւն ու զերբնական ուժ, այնպես որ
նորա մի աքացուց գոմի պատն ամբողջ շուռ է դալիս: Հրեղեն ձի է և Պարսե-
նանդիկ ձին, որ թնայնոր է և սմբշ երկինք, մբշ գետինք: Թուում է ոգի մեջ

¹ Տճ՝ Գ. Գառանյանի «Հայոց հեթանոսական կրօնը», հր. 33:

² Ինչպես նախատես—Խաչիկ կամ Խաչի, Մաթեոս—Մաթիկ կամ Մաթի և այլն, Թեղան և
Հատուկապէս—Հատուկ կամ Հատիկ, Հուրիկ Թեղան արդի անգամ մեզ դեպ լինի ավելի բնորոշակ
խառն հայոց հին հեթանոսական դիցական էականի մասին արդի ժողովրդական համառա-
յնքներէ վերջած:

ն, ինչպէս հերթափոխներէ մեջ ասում են, աստղերի հետ խաղ է անում: Զենով-Զովանի սպիտակ, կարմիր ու սև ձիերից Սև ձին նույնպէս հրեղեն է և մի անկթարթի մեջ ինչքան տարածութիւն ասեա՝ կտրում է, նման Իուստամի մահին, որ փոթորկի պէս ուժեղ է, կայծակնի պէս սլացող, թռչունի պէս թռչում է օդի մէջ, ձկան պէս լողում է ջրի մէջ, և որի վրայից ձիավորն յուր արձակած նետից ափելի շուտ է հասնում թշնամուն:

Ուրիշ ավանդութիւններից գիտենք, որ հսկաներն երեք տեսակ են հրեղեն ձիանց ձեռք բերում: Ինչպէս ասացինք, հրեղեն ձիերը հրեղեն աղջիկների և գոժեշների հետ ապրում են լճերի սակ. Հայաստանում շատ կան այդպիսի լճեր, որոնց մէջ, ժողովրդի հավատալիքով, կենում են հրեղեն ձիեր, և այդ լճերը շատ անգամ կոչվում են սկզբը գյուլ, այսինքն հովտակի լիճ: Այդ լճերի ափերին արածող մատակ ձիերի և լճերի հրեղեն ձիերի զուգավորութիւնից ծնվում են ճեփ-ճեփմակ և անարատ ձիեր, որոնք իսկապէս կոչ հրեղեններ են լինում: Բայց եթէ հերոսն ուզում է իսկական հրեղեն ձի ձեռք բերել, նա պետք է լճերից որսա հրեղեն ձի. դորա համար հերոսը պետք է լիքա կենա հովտակի լճերի ափում և սպասե այն ժամանակին, երբ որ հրեղեն ձիանքը, լճից դուրս ելած խաղ են անում իրար հետ լճափի արտաւերում, հարմար վայրկյան գտնելով, նա պետք է թռչի հրեղեններից մեկի վերա և, եթէ կտրող է, իրան պահէ ձիու մեջքին և ձիու աչքերն առժամանակ ծածկե աղբիւրով: Անքերը քանալուց հետո ձին այլևս դնպի լիճը չի գնալ, այլ դնպի վերեւ, դնպի արեգակը կթռչի, որ հսկային տա արեգակին և այրեն: Անշուշտ սույն գործողութիւնն է անկարկում և ազգային վնասի մեջ թուլիկ-Ջալալինի այս խոսքը. Եկարամ վրե տամ էրիգական՝ էրիցիս, որ ձին ասում է Դավթին, երբ որ սա նորա կողաշարը կտրում է ասպանդակով խփելով—Հսկան եթէ խելոք ու ճարպիկ մեկն է, երբ որ տեսնե թէ հրեղեն ձին իրան դնպի արեգակն է տանում, պետք է մտնի ձիու փորի տակ և ասե ձիւն. Եթէ արեգակին նա, առաջ դու պիտի այրվես, հետո ես: Զին կտեսնե, որ յուր դիտավորութիւնը՝ հերոսին արեգակին տալը անհաղոց պիտի լինի, որովհետեւ առաջ ինքը պիտի այրվի, կոկոսի րարձունքից արագ սլանալ դնպի ներքե, որ փորի տակ մտած հերոսին զնտնին խփեւ, Հերոսն իսկույն պետք է ուղղվի մեջքի վերա և ասե. Ես առաջ դու գետին կմտնես, հետո ես: Այս գործողութիւնը կատարելուց հետո՝ հրեղենը կճանաչեւ, որ յուր հեծավորը հասարակ մահկանացու չէ, կհպատակե նրան, իբրեւ յուր տիրոջ, և այլևս նրանից չի բաժանվիլ:

Բացի լճերից այդ երկու եղանակով հրեղեն ձի ձեռք բերելուց, հսկաները հրեղեն ձիու տեր են դառնում և դեւերի ձեռքից խլելով: Դեւերը, առաջելապէս Մութ-աշխարհում ապրող դեւերը, իրանց ստորերկրյա գրերում կամ այրերում ունենում են նույնպէս հրեղեն ձիեր, որոնցից, սակայն նրանք շատ էլ չեն օգտվում, որովհետեւ դեւերն իրանց արագավազ են, և շատերը մինչև անգամ թեւալոր են և թռչում են օդի մէջ: Հսկաները դեւերին կոտորելուց հետո, հափշտակում են նրանցից հրեղեն ձիերն և իրանք են բանեցնում: 2. Սրբ-վանձտյանի վարիանտով Դավթիթը, քառասուն դեւերին կոտորելուց հետո, նրանց այրից հանում է և մի քուտակ, որի գորութիւնը լեզվով չի պատմվիլ. այդ քուտակը պետք է լինի և թուլիկ-Ջալալինը, թեպետ այդ քուտակը ոչ մի դեր չէ կատարում վնասի մէջ, և նորա անունն անգամ վնասի շարունակութիւն մեջ չէ հիշվում: Բայց այստեղ մի անհամաձայնութիւն է դուրս գալիս երկու վարիանտի մէջ, այն է, որ հ. Սրբանձտյանի վարիանտով Դավթիթն է ձեռք

քերութիւն հրեղենն ան, իսկ մեր վարդապետով Քուռիկի-Ջալալինը Դավթի հորն էր. այդ անհամաձայնութիւնը կզարգովի, եթէ ընդունելու լինինք, ինչպէս մենք կարծում ենք, որ հ. Սովաճեանի վարդապետի մեջ միացած են Քուռի և Քուռ Դավթի վեպերը, և մինչև Դավթի և Մաքսիմիլիանի մենամարտութիւնը (կարգաւ կայան և դավա չեքցին), եղած մասը վերաբերում է Քուռի Դավթին, որ Քուռ Դավթի հայրը պետք է լինի, որով և մեր վարդապետի համեմատ՝ Քուռիկի-Ջալալինը, ինչպէս և իսկ-պատարադինը (ս. Նշան) Քուռ Դավթին յուր հորից կզան իբրև ժառանգութիւն: Այս ենթադրութիւնն անելու հիմքերի մասին թողնում ենք այստեղ գրելը. միայն այսքանը պետք է ասել, որ այս ենթադրութիւնը երկու վարդապետի մեջ եղած բոլոր անհամաձայնութիւնները պարզովում են և երկուսից կազմովում է մի կապակցական ամբողջ վեպ. Գանք մեր խոսքի շարունակութիւնը:

Դավթին ունի, ինչպէս տեսանք, դուքսդին վայել զբաղմունքութիւնն ու հանդերձանքը. բայց նա դեռ մանուկ է և յունի դուքսդին հսկայանալով հաղորդակցութիւնը: Նա միայն յուր հորեղբոր կին Սառի այծին չէ ծածկա-դնի յուր արտաքինով, որովհետև յուր գլխու գոտին այնքան մեծ է իրան համար, որ քառասուն լիտր թամբակ է մեջը դրել, որ գլխին կա, մեջքի քամարը քառասուն փաթ է եկել, իսկ կալծակի-թուրը Քուռիկի-Ջալալինի վրա նստած անգամ զետեղի հետ թաղչ է գնում: Հրեղեն Քուռիկի-Ջալալինն անգամ զգում է յուր արդեւ ծաղրական գրութիւնը, բայց և նա գլխի այդ գրութիւնից գործ դալու հարը Դորա հարը կաթնաղբուրն է, աղբուրը, որ մեր ժողովրդի ամենասիրելի շուրն է, անմահութեան կաթնաղբուրը, որ այնքան մեծ դեր է կատարում և մեր հեքիաթների մեջ: Ամեն աղբուր կաթնաղբուր չէ: Հիշենք միայն այն, որ անմահութեան աղբուրի շուրը մահից հետ է դարձնում մարդու, ամեն մի վերք ու ցավ լավացնում է, նորոգում է, այքերը լուսավորում և ուժ ու կարողութիւն է տալով խմորին: Հեքիաթների մեջ հերոսները, վերքի կամ արտի մեջ ննդն ընկած հանգամանքում, անմահութեան աղբուրին են դիմում. նորա մի կաթիլ շուրը ածում են վերապրի կամ արտապրի վերա և նա լավացնում է, մինչև անգամ մեռելին հարութիւն է տալիս. բայց անմահութեան աղբուրից շուր քերելն էլ հեշտ չէ. որովհետև աղբուրը շրջապատված է ամենաղծվար պարագաներով. նրան պահապան են վիշապներ և ամեն տեսակ գազաններ ու հրեղենը, որոնք արգելում են անմահութեան շուրը մարդկային ձեռքն անցնելու: Հերոսը պետք է այդ հրեղենի դեմ կռւի աղբուրից շուր վերցնելու համար:

Ազգային վեպի մեջ ևս կա մի աղբուրի աղբուր, որ Դավթի հորն էր պատկանում, որի մոտ թերևս շատ անգամ գալիս էր նա, շրից խմում և մոտին պահելով կազդուրովում ու նոր ուժ ու զորութիւն անում, նոր սիրա-զորութիւններ անելու համար: Այդ բանը տեսած պիտի լինեն Քուռիկի-Ջալալինը, որ յուր տեղ Դավթին ուղղակի դնակ կաթնաղբուրն է-տանում. Դավթի ինքն իմում է, հաց ուտում և ամին մի ծածկ չափ քում մրտնում. քում հրաշալի, որ պետք է նրան աղբուրի շրի զորութիւնը ամենամեծ կերպարանափոխութեան ենթարկելու: Նա քնից ելավ:

«Տե՛սա՛վ է՛նպե՛տ ի լց՛վի».

է՛նպե՛տ ի խոտոց՛քի».

է՛նպե՛տ ի զորութիւն, ուժ ու՛քի».

Ո՛ր լս՛վալու՛միչ ի եզ՛խ».

Այժմ նորա հագուստն ու զենքերը նրան այնպէս են գալիս, ինչպէս յուր

անգնականը, որովհետեւ նա մարմնով արդեն դուրսական չրի զորութիւն միջ-
խարի հսկայ է դարձած. այժմ նա կարող է համարձակ, առանց մեկի ծիծաղը
շարժելու դուրս գալ անհնարձ հսկայ Մարամելիքի դմա:

Սակայն ձին դեռնալ չէ համարտում յուր տիրոջ հսկայական ուժին, մանա-
վանդ որ նա մի անգամ մոռացել էր յուր ասած խոսքը. ձին խորհուրդ է տա-
լիս Դավթին, նախքան պատերազմ գնալը, յուր ուժը փորձել դաշտի մեջ
անկղւած երկաթե սլան վերաւ Դավթի՛նը կայծակի-թրով ալնպիսի մի հարմար
է իջնցում երկաթե սլանը, որ

«...Քար ռան կտրեց,
կտաւ վրո կալածին կտանով,
Եսա լուսն՝ որ իջնի գետին»:

Մարամելիքի արագութիւնն և ուժ, որ տատանում անգամ չէ պատահաւոր
սլանը, և որ դուրսագնին անգամ կասկածանքի մեջ է թողնում յուր ձեռքի
ուժի վերա, ալնպիս ար նա հուսահատւած լալիս, ասում է.

«Ձեռքի՛ն, ալա կտաւ կենք,
Որ զարկեցի, թար լը կտրեց-
Ալքի՛ն, ալա խաղար կենք,
Որ էսա քաներ հա շը տեսներ»:
Ասաց,—ձեռ կտարով, ալք խաղարով:
Ասածու հրամանքով ձին լեզու էկավ, տասց.
—Քա բերան կտարով, տեր իմ,
Քամի մ' օղն Աստուծոյ:
Դավթի՛նը երեց, տասց.
«Որհնյալ, բարեբար Աստուծոյ,
Քա հրամանքն է շատ,
Հրամանք անձ»՝ հարավ-ցամին իջնի,
էսա ռան լն յիրարուց կտար լներ»:
Ասածու հրամանքով հարավ-ցամին ար էկավ,
Ման շատ հոտը,
Մի կտար էտեիք ընկավ,
Մի կտար լնեիք ընկավ, Ասաց.
«Ձեռքի՛ն, ալա կտաւ լներ»:
Ալքի՛ն, ալա լուսով լներու:
Ասածու հրամանքով ձեռ ասացավ,
Ալքի՛ն լն խաղարովան»:

Յուր հսկայական ուժը փորձելու այս մի եղանակի մեջ, որ ուրիշ ազգերի
վիպերի մեջ ևս կա ուրիշ ձեռով, որքան նախնական պարզութիւն արտա-
հայտում է գերագույն էակի՝ Աստուծու կամ դից, դուրսագնի և յուր դուրսագ-
նական—հրեղեն ձեռ հարաբերութիւններն իրար հետ. և որքան անպահանջ
կենդանի համարողով լցված է թն ինքը դուրսագնը, թն ալն նախնի մարդը,
որ մի քանի անարվեստ խոսքերով ստեղծել և հայտնել է յուր կյանքի այս
պարզ նկարագիրը, և թն նա, որ մինչև մեր օրերը դարձյալ համարողով լցված
կրկնում է նույնը. Դավթի ուժի փորձը, որով գերագույն զորութիւն հաճու-
թիւնն յուր կողմը լինելն ևս իմացավ, հաջող էր, և նա 'ամենայն վստահու-
թիւնով հարձակում է Մարամելիքի բանակի վերա. բայց վնասի ոգու համե-
մատ, պիտի կռվին ոչ թն բանակ բանակի հետ կամ մի դուրսագն ամբողջ
բանակի հետ, ալլ դուրսագն դուրսագնի հետ. և ահա Դավթի՛ն ու Մարամելիքը
մենամարտում են, և Դավթի՛նը, Մարամելիքին ևս հաղթելով ու սպանելով,

Հանդիսանում է իբրև կատարյալ գյուցազն այն բոլոր Հատկություններով և արարքներով, որ պետք է ունենա գյուցազներ:

ԺԴ

Ամեն գյուցազնական արարք պատկվում է արժանավոր ամուսնությամբ. որ գյուցազնների վարձատրությունն է: Մեր հեթաթնների մեջ հերոսները Հեռու աշխարհներ են ման դալիս, աշխարհքի լայնքն ու նրկայնքը շափում, դե ու վիշապի հետ կռվում, զանազան կտրճություն և հանճարեղություն ցույց տալիս, քայց վերջ է վերջո նրանք գալիս մի կետի վրա հանգչում են.— դա հավանած և արժանի ու զեղեցիկ աղջկա հետ ամուսնությունն է: Դա վիթխարհեհ հուշակվոր գյուցազն է. նրան ևս պետք է կյանքի ընկնի, որ, հարկավ, լէ կարող մի հասարակ աղջիկ լինել: Գյուցազնի պետք է գյուցազնուհի կին: Այդպիսի կանայք նրկուք կան վեպի մեջ՝ Զմշկիկ Այվթան (տիրուհի) և Խանկոթ Խաթուն (տիկին, բամբիշ), բացի դրանցից և Գուհար Խաթուն Մհերի վեպի մեջ (թողնում ենք նրկորդական դեր խաղացող կանայքը):

Ժողովրդական վեպի գյուցազնական կանանց տիպերը որոշվում են իրանց մեծավայելուք քնավորությամբ. նրանք, ինչպես գյուցազնները, քաջամարտիկ են, քաջավարժ են զինաշարժության և ձիավարության մեջ: Շատ անգամ նրանք հանդիսանում են իբրև ազատ տիրուհիներ մի գավառի կամ մի քաղաքի և ձիու վերա նստած, զինավորված շրջում են իրանց նրկի սահմանն ու սահմանից դուրս, կռվում են թի գյուցազների և թի ալլ հրեշների դեմ, և դաշտի մեջ զարնում են իրանց վրանները, կամ շինած ունին իրանց ապարանքները (քաշկ ու սարայները), որոնց մեջ հանգստանում են պատերազմական սխրագործություններից, և ալդտեղ, շրջապատող բուրավենա պարտեզների օդով արոնցած, անձուկ են քաշում իրանց արժանի գյուցազնի սիրու կարոտով: Երբեմն նրանք զեղեցիկ են ինչպես հրեղեն աղջիկները, և իրանք ևս հրեղեն, այսինքն գեթեանկան էակ են, քնքսւ ի հրապուրիչ. բայց իրանց կուսական հպարտության մեջ իրանց համար այր են ճանաչում միայն նրան, որ իրանց հաղթում է մենամարտության մեջ և իրանցից ուժով գերազանց է լինում, իսկ իրանցից թույլների արժամարհելով արժամարհում են և շատ անգամ նույնիսկ անխնա կոտորում են այդպիսիներին: Մեծ մասամբ նրանք հավատարիմ են ամուսնական սիրուն և պատրաստ են իրանց այրերի համար զոհել ամենայն քան և նույնիսկ իրանց կյանքը ևս զոհում են նրանց: Իրանց ամուսնական հավատարմության մեջ և սաստիկ խանդոտ են և վրեժ-խնդիր իրանց անհավատարիմ ամուսիններից: Մահու լափ կռվոք են իրանց անձնական պատիվը պաշտպանելու համար. և շատ անգամ ևս հաղորդվում է նրանց վրեժ առնել իրանց խարդեղների: Երբեմն նրանք գյուցազների ֆիզիկական անշափ ուժի հետ օժտված են և խոսքի կախարդական ուժով, ևս խառնություն և խառնության շնորհքով, որ վեպերի մեջ մեծ մասամբ կանանց է միայն վերապահվում: Սակայն այսպիսի գյուցազնական հատկություններով փայլում են միայն գեոես այր շանալող կույսերը, մարդու դրանալուց հետո հաճախ նրանք կորցնում են իրանց գեթեանկան ուժերը և դառնում են հասարակ մահկանացուներ—կանացի քնավորության այսպիսի աղ-նիվ և ազատ տիպերը ստեղծված պիտի լինին այն ժամանակ, երբ որ մահ-մեղական ցեղերի ազդեցությունը գեոես լէ հղել հայոց ընտանեկան կյանքի

և մեր կանանց վիճակի վերա, երբ որ կանանց բանտարկյալի պես լինե
փակում տան մեջ՝ նրանց պատիվն ազատ պահելու համար:

Զմշկիկ Սուլթանը, որ մի աշապիսի դուգազնական կին է և զշատ գլուխ
փահչիանա, այրվում է Դավթի հետ ամուսնանալու փափագով: Զենով Հովանե,
իրեւ տան նահապետ, արդեն նրան ուղել էր Դավթի համար, բայց Դավթի
սիրտը Զմշկիկ Սուլթանից ավելի գեղեցիկն և կտրեին էր ուղում, այնպիսուն,
որ իրանից շատ ստոր լինեիր քաջությամբ: Այդ կինը խանդով խաթունն է,
որի գուսանական զովքից միայն Դավթի սիրահարվում է նորա վերա, որով-
հետեւ նա դարնան ձյան պես սպիտակ է, քամբակի պես կակուղ ու քնքուշ
է, նորա ունքերը դալամով քաշած են, աչքերը լինու կթխաներ են, իսկ հա-
կատի լայնությունը սլոթ ակում է, տեւ մեկ յավել է: Զարմանալի չէ, որ մեր
ժողովուրդը կնոջ գեղեցկության համար ճակատի լայնությանն աշապիսի
մեծ նշանակություն է տալիս, բայց ճակատի այդ լայնությունը միանգամայն
և վկայում է խանդով խաթունի լավագույն հաղթանալուն: Զորեղու-
թյան մասին: Եվ ճշմարիտ, խանդով խաթունը հասարակ կին չէ. Զենով
Հովանե անգամ գիտե, որ քառասուն փահչիան յոթ տարի նորա դռանը նըս-
տած են, բայց խանդով խաթունը նրանցից ոչ մեկին հավանություն չէ տա-
լիս և իրան արժանի չէ համարում: Կռվի մեջ նա միայն Դավթից է ետ մնում
և նրանից հաղթվելուց հետո միայն համաձայնում է նրան կին լինելու: Այս-
պիսի մի դուգազնուհի կին, որ պուշակություն անելու իմաստություն ևս
ունի, կցանկանա, հարկավ, իրան արժանավոր մեկին ամուսին ունենալու
և խանդով խաթունը, զեռ Դավթին՝ շտեմած, նորա քաջագործությունների
համբավը միայն լսելով, սիրում է Դավթին, ինչպես Շահնամեի մեջ Թեհմին-
նան մուսաբաթին, և մինչև անգամ ինքն երկու գուսան է ուղարկում, որ յուր
զովքն անելով հրապուրեն Դավթին, որ զա իրան անի: Եվ Դավթից զենում է
գուսաններից դուրսացնում:

Գուսանների մասին խոսք բացվելով պետք է նկատենք, որ ինչքան ժո-
ղովրդական վեպը կենդանի և նախնական է, այնքան ավելի նկատելի է
նորա մեջ գործող անձերի կապը վեպի երաժշտական և երգեցողական կա-
տարման հետ: Հունաց քերթվածների (ΠΟΕΜΑ) մեջ շատ անգամ քեմ են
դուրս գալիս երգիչ ուսպոսողներ, որոնք սփոփում են ժողովրդին տրուական
պատերազմի մասին երգելով. շատ անգամ հերոսներն իրանք և երգիչ և
երաժիշտ են: Հայոց ազգային վեպը, թեպետև շատ երկար դարեր է ապրել
ժողովրդի բերանում այն ժամանակից, երբ որ դեռևս նոր էր ստեղծագործ-
վել, — դեռևս այդ երգեցողական և երաժշտական արվեստի նկատմամբ չէ
կոտրելու բոլորովին յուր նախնականությունը: Վեպի գործողության մեծ մասը
թեպետև պատմվում է, բայց փոքր մասը ևս մինչև այժմ երգվում է. մյուս
կողմից ազգային վեպի մեջ, ինչպես Իլիականի և Ոդիսականի մեջ, դուրս են
գալիս և երգիչ երաժիշտ գործող անձեր, ինչպես Մսրա կանայք, որոնք երգե-
լով ճանապարհ են դնում խոլբաշուն դեպի Մասուն, և երգելով ընդունում են
նրան. ինչպես վերոհիշյալ գուսանները, որոնք իրանց երգով և երաժշտու-
թյամբ շատ էլ երկրորդական դեր չեն կատարում Դավթի և խանդով խաթունի
սիրտ մեջ: Վեպի հերոսներից երգիչ (ոչ երաժիշտ) են դուրս գալիս և Զենով-
Հովանե, խանդով խաթունը, Մհերը, որոնք իրանց գործերի մի մասը, առա-
վելապես սրտի զգացմունքները երգով են արտահայտում: Ամենամեծ երգիչ է
վեպի մեջ և Դավթի, որին պատկանում է վեպի երգերի մեծ մասը: Հատուկ
երգեցողության և երաժշտության շնորհ պետք է ունեցած լինի և Դավթի

եղբայրը (քստ Հ. Սրվանձառյանի վարիանտի) Խոր-Գուսանը, որի անունն իսկ ցույց է տալիս, որ նշանավոր գուսան պետք է հլաժ լինի. բայց Խոր-Գուսանի մասին երկու վարիանտի մեջ մի առանձին բան չկա պատմված: Երգիչ է դուրս գալիս և մինչև անգամ լուռ ու մունջ և խոտարարո Համտույը, Խանդութ տիկնոջ դռնապանը: Համտույը քառասուն տարի դռնապանություն է արել և, յուր տիրուհու արժանավոր ծառան լինելով, արհամարհել է ամեն մի փառշեն-վանի և նրանց հետ ոչ միայն խոսք չէ փոխանակել, այլև նրանց բարեք չէ առել: Բայց նա, Դավթին տեսնելով, վախենում է նրանից, և ոչ միայն բարեն է առնում, այլև լեզուն բացվում է և երգում է. թնայտ Դավթին ևս որ դա-զաններին ու դեմքին չէր վախեցել, Համտույից վախենում է և յուր կլանքի մեջ առաջին անգամ բարեք նրան է տալիս:

Թնայտն Խանդութ Խաթունը առջորվում էր Դավթի սիրով, բայց յուր զգաստությամբ թույլ չէ տալիս Դավթին համբույր առնել իրտեղից. նա ընցքի մի հարվածով արյունշուր է դուրս հանում Դավթի բերնից, և յուր կանացի փառասիրությամբ ցանկանում է, որ քաջագործությամբ անվանի Դավթը հատկապես իրան համար յուր քաջությունը ցույց տա և իրան բերի մի քանի հայտնի փառչեանների գլուխը, որոնք յուր՝ Խանդութ Խաթունի ձեռքն ուղում էին և, ինչպես հրեւում է, ձանձրացրել էին նրան, ոչ այնքան իրանց քաջու-թյան և մարմնական զորության պակասությամբ, որովհետև Դավթին անգամ կասկածում է, որ նրանք յուր վերա զգուռ լինին,—որքան իրանց արտաքինով և ոչ մարդկային բնավորությամբ, որովհետև նրանք շատ ավելի հին ժա-մանակի սերդի են վերաբերում, քան թե Խանդութ տիկնոջ ժամանակն է: Այդ փառչեաններից Շերըզան-Խորասականի վերին ունջ էնքան էր կախվի, որ էկիր էր հասն վրը սրտին, ու շանգալով կապեր էր ու զարկն հտնանց վրը պառնելին: Էն մեկը Լուսա Հըմզա փառչիվանի ներքին մոռթ զգնտին կավյճր ու կերթնեռ: Դավթը մի օր ամբողջ, առավոտից մինչև երեկո լախում ու նետուղեղով կոխում է այդ փառչեանների հետ և հազիվ կարողանում է եր-կուսին էլ հաղթել. նա զգնելուից գլուխն լն կտրեց, ու զերկուսի քրչամ (մա-զեր) լն կապեց իրար ու խուրջինի ավա (նման) թալեց (ձգեց) վրը թարթին. ու ընդունց լեզուն կախված՝ զգնտին գութնի ակոսի ավա կը վարեր: Սույն նղանակով վարվում է և ռուսաց վեպի մեջ Իլիա Մուրոմեց հսկան Սուրգեյ Ռազրոյնիկի հետ, որի լեզուն նույնպես ձիու զավակից կախ ընկած վարում է գնտինը:

Շերըզան-Խորասական և Լուսա Հըմզա փառչեանները ներկայանում են իրեն առասպելական հրեշ-տիտաններ, թեևս ավելի ավագ քան թե Մարտն-լիքն և դեմըր, որոնք իրանց խուլկանությամբ հանդերձ այդպիսի անճուռի ցուցանք չեն ներկայանում վեպի մեջ, որովհետև ժողովրդական վեպի մեջ հսկան, որքան ավելի հին և օկզնեական ժամանակի էակ է, հետագա ժամա-նակում այնքան ավելի գերբնական, կամ լավ ասած, անբնական հրեշտավոր պատկերով և ավելի զորավոր է դուրս գալիս. Դավթը, որ ոչ մի բանից վա-խեցել չէ և վստահ է յուր ուժի վերա, թնայտն չէ վախենում գրանցից, բայց մի ռոպն կասկածում է նրանց հաղթելուց: Սակայն ինչպես հնությունը ընդ առասպելական (միթական) զարհուրելի հրեշներն ու տիտանները սեղի են տալիս մարդկային համակրական դուրսադներին, այդպես և այդ փառչեան-ները երկուդ են տանում և հաղթվում են Դավթից, որովհետև սա ըմբռնի (ս. Պարզեթ) ճորտերուցն է, ծառաներիցն է, իսկ ս. Սարգիսը, ինչպես մի անգամ նկատեցինք, անուսով քրիստոնեական սուրբ է, որ փոխանակած է մի

Հին, հեթանոսական աստուծու, բայց ժամանակով ավելի հետագա աստուծու, քան թե տարերակյա տիտաններն են, որոնք պարտութիւն են կրում իրանց ժառանգներէրէ, ինչպէս հունաց տիտաններն Արամազդից: Խանդութ տիկնու գոնացւան Համտուն ևս յուր երկար պոռկով մոտենում է այս փառլանների կարգին, ուստի և Դավիթը նրանից ևս վախենում է:

Ժն

Մեր վարիանտով Խանդութ Խաթունը Հարկ չէ համարում փառլանների զուլան ուզելու, քանի որ նա գիտեր, թե ինչպէս Դավիթը փառլանների յուր դեմ լարած դաժաճանութիւնն ի դերն էր հանել և նրանց թրերը բոլորը ծնկին խփելով կոտորատել էր.— Դավիթն ինքն է ցանկանում, որ առիթ լինի յուր նշանածի առաջ և յուր նշանածի համար մի քաջության ծառայութիւն ցույց տալու, մանավանդ որ նշանածը, բռնցքով պարնելով, ամոթով էր թողել իրան: Դավիթը խնդրեցով գիժում է Աստուծուն. և աստվածային զորութիւնը, որ Դավթի շատ ազալանքներին լսել էր, նորա այս խնդրքն էլ կատարում է: Թշնամիները պաշարում են Խանդութ Խաթունի քաղաքը. ո՞վ պիտի կռվի թշնամիների դեմ.— Դավիթն է միայն կռվում և քորդում թշնամիներին: Այստեղ հանդես է գալիս մի նոր գլուցազնական պայծառ անձնավորութիւն, միևնույն Արամեիցի դիմանական շառավիղը, Ճոան-Վերգայի որդի Պարոն— Աստղիկը, որին թշնամիները խաբելով Դավթի դեմ կռվի են հանում: Պարոն— Աստղիկ պարոն մակդիրը վկայում է, որ խաչակիրների ժամանակի ազդեցութեան տակ է ավելացած, իսկ Աստղիկ անունը հեթանոսական հնութիւն է ցույց տալիս: Պարոն— Աստղիկն յուր թևավոր հրեղներ, վերա նստած՝ ֆոֆոում է Դավթի գլխին և կրակ է թափում նորա վերա, առանց ճանաչելու նրան: Երկու թրեր՝ Հավտնին և Կայծակին, իրար են հանդիպել միևնույն ցեղից երկու հսկաների ձեռքին, և կայծակներ են թափում. եթէ շառավիղքը օրը ցերեկով անգամ խփում է Խանդութ Խաթունի դուռ, պատուհան ու երդիկ փակած սենյակին, և Խանդութ Խաթունը, հակառակ յուր խոստման, կանացի հետաքրքրութեամբ չէ դիմանում, պատուհանը բանում է և ահ ու սարսափով հանդիսատես է լինում գլուցազնական կռիւն, որի մեջ Դավիթը, լցանկանալով վնասել Պարոն— Աստղիկին, պատվավոր դիրք շունքու Բայց ավագ, դուրսագնին էլ կնոջ հաճութանալու փափագը հաղթում է, և երիտասարդ ու անփորձ հսկա Պարոն— Աստղիկը, որ ներքին գլուցազնական ուժից զրդված, արկածների ետեից էր ընկել, գետին է տապալում պատերազմների մեջ վարժ ու փորձ գերբնական ուժի տեր Դավթից: Կույր սերը վառում է և անմիտ դէին, և դադան— հրեղին, և ազնիւ գլուցազն Դավթին, որ՝ յուր սիրունու աչքին նվառտ շերեւալու համար սպանում է ազգականին. և այս սպանութիւնը Դավթի քնալորութեան մեջ միակ խավար գիծն է, որ դժվար թե քաղվի լինի սպանելուց հետո սպանողի, սրտի ցավից, ուշաթափ լինելով:

Մի հանցանքը ևստից քաշ է տալիս մյուս հանցանքը. սերը մի անգամ կուրացրեց Դավթին, բայց սիրո գիրգ քաղականերում նա մոռանում է և յուր օրհասական երգումը, որ տվեց Խաչ— պատարագին վերա մախանքի վրեժ— խնդրութեամբ լցված Զմէլիկ Սուլթանին: Ո՞ր գլուցազնի մահվան պատճառը սերը, կինը չէ եղել, որ Դավթին ևս կինը չլինելու Բայց միևնույն ուրիշ ազգերի գլուցազնները, ինչպէս և մեր հեքիաթների մեջ շատ հերոսներ, ընկնում են խաբեքա ու անհավատարիմ կնոջ ենեզութեամբ, մեր Դավթն ավելի բախ—

տալմոր է յուր մահով: Դավթի կիներ հավատարմիմ էր. նա մինչև անդամ
Դավթի մահից հետո կսկսու թույն է խմում և մեռնում է. կամ, ինչպես հ.
Սրվանձտյանի վարդանտում է, բերդի գլխից իրան ներքև է ձգում և մեռնում.
Դավթին ընկնում է խանդոտ Չմշկիկ Սուլթանի ձեռքով, որ ասում է յուր
կույս գլուցազնական վիրավորման թուր հպարտությամբ.

«Դավթթ, ինչո՞ւ, ես խորատ չե՞ր.

Ձի սպանեցի քե, տյա՛ ձի լը խաղաք,

Վար ձի զնացիր. նանդավթ նաթան բերեր:

Դե ար ես սյու կոյվ անենք.

Ծա ես քե տը ռաղանեմ,

Ծա լե, նանդոթ նաթան լե մեանք որաւմարի,

Ծա տյու ձի սպանեք,

Նաւը չըթան: նանդոթ նաթի ժոց պանենք:

Իսկապես ասած, Դավթին ընկնում է գիցային գերագույն զորութիւնը, և
աչ Չմշկիկ Սուլթանը. որովհետև նա սիրտ հնչտութիւնից արքեցած, մոռա-
նում է յուր անզորելի երդումը իւր-սպասարազինի վերա, որ իրան միշտ
պահապան և օգնական էր եղել, երբ որ ինքը հշտութեամբ կատարում էր
նորա արդարութիւնը. ժողովուրդը չէր ներել, որ, առանց աստվածային զո-
րութիւն մատին, Դավթի պես մի կատարյալ գլուցազն հաղթահարվե՞ր որևէ
ուժից և՛ կամ սպանվե՞ր Չմշկիկ Սուլթանից: Ռուսաց հակաները ևս աշխարհ-
քից վերանում են ոչ աստուր, այլ մի երկնային, գերբնական ուժի ձեռքով,
որին պարծենկոտութեամբ կովի են կանխում: Որպեսզի Դավթիք. սպանվե՞ր,
դորա համար հարկավոր էր, որ, նա ընկներ նախ Աստուծու ալքից. այդ անել
է տալիս նրան մի ազնիվ և սիրող կին, իսկ մի ուրիշ, սիրով կատաղած կին
անազնիվ և ստոր դադապագողութեամբ սպանում է նրան: Սպանութեան այդ
գաղտագողութիւնն անգամ, երբ որ ժողովուրդն ասում է՝ «Դավթիք սպանվաւ
առանց կոխվա, ժողովրդի համար մի տեսակ ցավ, բայց և միջնորանք է, որ
յուր սիրելի գլուցազնին դարձաւ շին կարողացել սպանել ճակատ տո ճա-
կատ կովելիս, այլ նաեւից զողի նման են հորմած իշեցրել, և այն կրակացրած
խոփի նետով, և այն ժամանակ, երբ որ գլուցազնը թշուրոփին մերկ էր, լու-
նե՛ր յուր գլուցազնութեան ոչ մի զենք ու զարդ՝ իւր-սպասարազին, պիսու-
ղոտին, կապեն-խաքուկին, քամարն ի մեշքին. նա նստած չէր Փռնկիկ-Ջա-
լալիի վերա, և նորա ձեռքին լիար կայծակի-թուրը, և ոչ իսկ լախտը, նետ
ու աղեղը կամ վահանը: Յաւալի մահ, որով գրեթէ թուր գլուցազնները վեր-
ջացնում են իրենց սխրագործական կյանքը:

Ը. Սրվանձտյանի վարդանտում Դավթի մահն այսպես անշուք չէ նկարա-
գրված. երբ որ Դավթիք մերկ ժամանակ Արամելիքի ցեղից Շըմշըմ խանումի
աղչկա նետով մահացու հարված ստացավ մեշքին, «Դավթիք էլավ կայնավ,
ու բռնաց. որ բռնաց՝ ձեն (եղաթա) գնաց ի Սասուն», նման ֆրանկներին
գլուցական Ռոլանդի ձայնին, որ Պերինեյան լեռներից անցնում է մինչև
Մեծն Կարոլոսի քանակը. «Ձենով Հովան, եոր-Դուտան, Քեռի-Թորոս, Վերե-
ղափոքրիկ ու Յոան Վեգին (Սասնու դիմանական ձեռքը) ժողովին դիարու
Ձենով Հովան լե Սասնու բռնաց.—Ու էկան Դավթի հավարին: Դավթիք լե ըդ
չրի մեշ զուր աղոթք ձեն լսեցա: Նրանք ման եկան, գտան Դավթին հարվա-
ծող աշխի ալգերովա աղչկան, հանեցին թաքնված աեղից. «Ռոննց Դավթիք՝
զոտք դրեց վրք մեկ ոտվուն, ու քաշեց ճղվտեց, թալեց սարու տըկու զեղա:
Դավթին յուր վրեժը յուր ձեռքով լուծելուց հետո, լորս օրից մեռավ: Սա-

կայն դրանով միայն չէ վերջանում Դավթի մահվան վերաբերյալ թույլը. Մեր-
հերը, յուր հոր մահը հորեղբայրներից իմանալով, շատ լաց ու արտասուք
նափեց, «հեծավ դապալու (հոր) քուռակ, ու գնաց ի հալած¹», քար ու քանդ
էրեց: Հըմլա կավրե... ու կենն նըմրութա գլուխ, կիշկն որ ծախ կեններ.
հաղմ լն կը դառներ: Տեսավ որ պառվուկ մեր մանցի, զէն լն բռնեց. զամեն
մեկ հոս կապեց մեկ ծառ, ու զծառեր թողեց. զէդ լն հմալ սպանեց, հալածա
ծառ ու մուխ կտրեցա:

ԺԶ

Մենք վերջացրինք Դավթի դուցազնական վեպն յուր գլխավոր հերոս-
ներով՝ Դավիթ, Մարամելիք, խանդուկ հաթուհ, Պարոն-Աստղիկ, փահլան-
ները և Զմէկիկ Սուլթան. բայց այդ հերոսներից զատ կա և մի անձնավորու-
թյուն, որին մոռացել ենք, և որը փոքր. դեր չէ խաղում Դավթի վեպի մեջ.
Դավթի մանկությունից մինչև մահը. նա Դավթի հայրագործն է, և ամեն մի
գործողության մեջ Դավթի հայրն է: Ձենով-Հովանի ուրիշ հատկությունների
մասին խոսելը թողնելով, որովհետև մեր նպատակը չէ ազգային վեպի գե-
ղարվեստական քննություն գրել, մենք ուզում ենք մատնացույց անել միայն
նորա դուցազնության վերա. Ձենով-Հովանը օժտված չէ առանձին հերոսա-
կան ուժով, թեպետև նա հասարակ մահկանացու էլ չէ, որովհետև ձեռքը
դնում է Կարմիր և Սպիտակ ձիերու մեջքին, ձիերն իրանց փորը խփում են
գետներն, նա կարողանում է հրեղեն ձիու վերա նստել, — բայց նա ունի դու-
ցազնական ձայն. «Հմալ ձենով էր, որ յոթն գոմշու կաշի կը թալեր արև
լորցներ, ու կը փաթտեր գինը, ու բոռեր, որ լեղներ պատվերա». «Ձենով-
Հովան կանչեց, ձեն ընկավ սար ու ձորա: Նորա ձայնը Սասնուց մինչև հալած
է հասնում, նորա ձայնը մտնում է և գետնի տակ Մհերի սմաղազնա: Դավթի
ձայնն ևս հալածից Սասուն հասավ, բայց այդ Դավթի սեփական հատկու-
թյունից չէր, այլ նորա օրհասական դրությունից, որ յուր հսկայական ձայնին
առանձին ուժ էր տալիս:

Մեր հեքիաթների մեջ շատ սովորական ենույթ է մի անձի մեջ ամփո-
փել որևէ հատկության ծայրահեղ կատարելություն մյուս դուցազնական
հատկությունների քաջակալության հետ: Այդպիսի հատկություն տեր անձերն
են՝ լավ լսողներ, որոնք ականջները դնում են գետնին և ամեն՝ ինչ որ աշ-
խարհիս վերա կատարվում է, լսում են. արիճդ անող ճովիվներ, որոնց նը-
վազից լենները, քարերն ու ծառերը և ամեն ինչ պար են բռնում. արագ
վազողներ, որոնք մի քաղաքաքար մի ոտքին, մի քաղաքաքար մյուս ոտքին
կապած անգամ անցան պազում են, որ ետևներից հասնել չի լինիլ. բացի
դրանցից կան և ծով կուլ տվողներ, որոնք ծովի ջուրը կուլ տալուց հետո բաց
են թողնում և ջրհեղեղ անում. շառախլեղներ, որ ամեն ինչ ուտում են և
դարձյալ ասում են թե քաղցած մեռանք, և ուրիշ լավ ու վատ ծայրահեղ
հատկությունների տեր անձեր, որոնք իրանք մի նշանավոր գործ լեն կատա-
րում մենակ կամ խղանց անձի համար, այլ գրեթե բոլորը խմբվում են գըլ-

¹ Եթե Զմէկիկ Սուլթանը Զմէկաժողի տերը չէ, ինչպես ենթադրել ենք, կարելի է կործնել, որ նա հալածա տերը լինի. այն ժամանակ նրկու վարիանսի պոստմությունները կը-
նայնառան և կըրտցեն իրար. օրավհետ Զմէկիկ Սուլթանն և շինի տըքորդա աշխիկը միևնույն
անձը կլինին, և իւր-թիւններ, իրանց տիրուհու անաղնեղությունը. Դավթի գեմ գործը նկատ
կլինին և աշ աստատակարար, ինչպես հ. Սրվոնձալուի վարիանսում է:

խաղաղ հերոսի շուրջը, որ ունենում է անձնական քաջութիւն և իմաստութիւն: Այդպիսի մի բարձր բողոքող հատկութիւն ունի Ձեռնով-Հովանք, որ միանգամայն և խեղճ նահապետ է յուր տան մէջ. ինչպէս և Շահնամի մէջ Ջենգը զօրօս է գալիս իր և ժայրահող սրատեսութիւն և ներկայացուցիչ, որի աչքերը մութ խաղաղի մէջ անգամ պարզ տեսնում են հեռավոր առարկաները, և որ, միանգամ միայն մեկին տեսնելով, այլևս չէ մոռանում նորա կերպարանքը:

ԺԷ

Մհերը Դավթից դուռնազնութիւն մէջ ոչ մի բանով պակաս չէ, մինչև անգամ ավելի է յուր բնական ուժով: Մհերը՝ դա մի մարմնացում է մարդկային շահագրգռութեան ու զորութիւն, սարսափելի մարմնացում թե ուժի որակով և թե՛ քանակով: Նա զեն չէր ծնված, որ Դավթին ասում է խանդութ տրկնոյ. «Թե որ ըզ աղէն ինձնից է, վրեն նշան մի, զորութիւն մի ու եղևիշ: և ինչպէս պապելի լլինքեր, որ Մհերը մի արտակարգ նշան կամ զորութիւն լուսնեանոր, քանի որ նա Դավթի և խանդութ հսկանքի սերունդն էր, քանի որ նա Դավթի շամբուղ ժամանակի ծնունդն էր: Մհերը ծնվում է, և ծնվելուց անմիջապէս հետո հայտնի է լինում նորա հսկայութիւն երկու կողմը՝ ևս, անսահման ուժն ու այդ ուժի գնդի լարն ունեցած ուղղութիւնը: խանձարուքի սովորական բնորի (կայ) տեղ նրան փաթաթած են զութանի շղթայով, բայց Մհերը այնքոր լաց ու ճմլկաաց մէջ ճղորին, ըզուր վրաժու փաթուկ զլնշիլ կտոր կտոր եղաժա: Նա ծնվել է, բայց մի ձեռքը խփած է, և ոչ մի մարդ, մինչև անգամ մայրը, չի կարողանում քաց անել: Դավթին է միայն գալիս և ձեռքը մատում, բանում է, և ահա ինչ է տեսնում: «Տեսա՞մ որ զուլանթ մի արուն ուր ձեռքու մեջն էր, և քացականչում է հայրը. «Շահ, հայ... զաշխարհք արեր է կաթ մի արուն, դրեր է ուր ձեռքու մեջ: Թոր ըդի մնաց, ըզուր մոտեն զարմանալի բան տ'եղնի: Մհերի ամբողջ կյանքի ճիշտ բնավորական նկարագիրը յուր հոր գնաց այս մի քանի խոսքով՝ արտահայտում է: Մհերի լար և ավերիչ բնավորութիւն արտահայտութիւնն է նորա ձեռքի մէջ ծնած մի կաթ արլունը, ինչպէս և միննույն ավանդութիւնը, որ Լանկթամուրի համար նա ասվում է, մեկնում է և Լանկթամուրի ամբողջ կյանքը: Լանկթամուր և Մհեր, մեկը պատմական անձնավորութիւն, մյուսն առասպելական գլուխացն: Բայց որքան նմանութիւն նրանց ներկուսի ձեռքի մէջ ծնված մի կաթիլ արլան մէջ և նրանց ավերիչ կյանքի մեջ:

Ռուստամի որդի Ջուհարի համար գրում է Ֆիրդուսին. «Ջարմանալի մանուկ էր Ջուհարը, նա ծնվեցավ ժպիտը բերին. ոչ մի բանից նրանք լաց չէր լինում: Եւնում էր այնպէս հրաշալի կերպով, որ մի ամսական ժամանակ արդեն տարեկան էր երևում: Եւե՛ք տարեկան հասակում նա արդեն կտրեաբար արդարւում էր ձիով դաշտի վերա: Վեց տարեկան՝ նա հզոր էր ինչպէս աղու: Իսկ նոր որ տասնեկու տարեկան դարձավ, ոչ ոք այլևս չէր կարողանում նորա հետ մրցել: Նա վիթխարի հասակով էր, արի և զեղեցիկ: Նա յուր հետ կովոդին ուղորում էր աղեղի պէս: Խալուօին սանձում էր աղվեսի նման: Կաղնի ծառն ու նոնի, նրբ որ նա ճոճում էր, նստ ձեռքին կառնում էին ինչպէս ճառարակ ճյուղեր: Նա, իրան համար ծի ընտրելիս, որ ձիու վերա որ հեռքը զնում էր, միայն ձեռքի երկաթի ճնշումից ձին իսկույն գետնին էր կպչում (ինչպէս մեր վնայի մէջ Ձեռնով Հովանի ձեռքից): Այսպիսի էր մանուկ Ջուհարը, որ այնքան շուտ է մեծանում և իրանի վերա կովի զնում, որ Ռուս-

տամն անգամ, թեպետև դիտեր, որ արժի՛ն ձագն արժե՛վ պիտի լինի, կասկա-
ծում է, որ յուր որդին անգամ այգպիտի փոքր հասակում այգպես զորեղ չէր
կարող լինել:—Տեսնենք ի՞նչ է ասում մեր աղագային վեպը Դավթի որդի
Մհերի մանկության մասին.

«Ինչ ուղի տգեթ տարով կը մեծանին՝ Մհեր որով,

Ինչ ամբողջ՝ Մհեր ահա՞ ամբողջ:

Տարին ար լրացավ,

Մհեր էլավ, գնաց մեջ քաղցին ման կը գար.

Ջրադրի ծառեր կը կռեիր,

Քաղցի տգեթ կը խնձաղճիր,

Կը շարեր վար քարդու ծառին,

Ծառու ծիր կը թորկեր (քաց կը թողներ):

Ինչ ծառը ծիր կը բարձրացներ,

Քաղցի տգեթ, ամեն մեկ ճի՛ծ,

Մեկ մաշլա (թագ) կը թլեր (կը ձգեր):»

Մհերն ավելի արագ է աճում, քան թե Զոհրարը. և նա մի տարեկան ար-
դեն արտահայտում է յուր քնափորությունն և ուժը: Ի՞նչ է Մհերի՝ քաղաքի
հրեխանների գլխին խաղացածը, եթե ոչ մի երեխայական, բայց հսկայական
լարուժյուն, որ մի առանձին դիտավորյալ լարամիտ նպատակ չունի: Բայց
ինչ է և նորա կամքի խաղը, որ ութ տարեկան հասակում խաղում է անճար
մնացած սաստնցիների գլխին.— դարձյալ մի անմիտ, բայց լար գործ, որ նա
կատարում է ոչ թե հատկապես քաղաքացիներին տանջելու նպատակով, այլ
միայն նորա համար, որ ներքին ուժը ստիպում է նրան այդ անել. նա մի
ձևով պիտի դուրս թափեր յուր ներսում հավաքված զորությունը, որ նորա
մեջ եռում էր, նրան տանջում էր, հանդիստ չէր տալիս, մինչև որ դուրս չէր
գնդվում. և Մհերն յուր ուժը թափում է յուր քաղաքացիների գլխին, որով-
հետև թշնամիներ լկան, որ նրանց հետ կռվի: Դավթին ևս մանկության ժա-
մանակ զորեղ էր, բայց նա Մհերի պես չար գործեր չէր կատարում, որով-
հետև մեծ տարբերություն կա երկուսի զորության մեջ. մեկ էլ որ Դավթը
պարապ չէր մնում, իսկ Մհերը պարապ էր, առանձին գործ չունեւր. իսկ այդ
պարապության մեջ ներքին ուժն ուռում էր Մհերին:

Մհերն այդ ուժի բռնկոցից մինչև անգամ յուր հետ հետ կաշում է, երբ որ
սա նրան մի ապտակ է տալիս. և հայրը փորձով տեսնում է, որ յուր որդին
դեռևս փոքր, մինչդեռ ինքը թուխ մորուս երիտասարդ էր, մարմնական զո-
րությամբ համասարվում է իրան, Ինչպես երկու սար գնան-գան, դիպչեն
իրար, այնպես հայր ու որդի իրար են առել. փոշին ամպի պես քարձրացել,
նրանց բռնել է. նրանք արյունի մեջ կարմրացել են, բայց դեռ ընե՛ր թա՛ն-
վում. հասարակ հողաժիկները վախենում են մոտենալ նրանց, որ ոտքերի
տակ լրնկեն: Ի՞նչ անե՛ իսկույնիստ տիկիներ. Մհերը նորա մայրական ձայնին
չէ լսում: Դավթին էլ յուր ահու է գարնում Մհերին. Վերջապես բարերար
Աստվածը լսում է մոր աղաչանքին, և նորա հրեշտակն իջնում, բաժանում է
լեռնանման հսկաներին, ինչպես երկու կռվող աքլորի ձայրը սարսափում է
այդ անասելի ուժի վերա և մոտենում՝ եթե Մհերն այսպես է, հապա նորա
որդին ի՞նչ կլինի, նա աշխարհս անշուշտ կավերե յուր ուժով, և ահա նա
անիծում է յուր որդուն, որ նորա մոտից ժառանգ դուրս լրնկել, բայց միան-
գամայն և մահ չլինի նրան: Լենե՛ք ի՛նչ երկրորդ մասն ինչո՞ւ համար է.—
միայն նորա համար, որ Դավթի՛ն գիտեր, որ յուր որդու անլափ ուժը միայն
ուրիշներին չէր տանջում, այլ ավելի ևս իրան՝ որդուն պիտի տանջեր. և թող

համարան տանջվի նա, որ յուր հոր հետ կոխվ արեց և նրան ամաշեցրեց ուրիշների առաջ, Բայց արդյոք Մհերն արժանի՞ էր հոր սոսկալի անեծքին.— նա նույնքան մեղավոր էր հոր առաջ, որքան մեղավոր էր, որ ինքն անասելի ուժի տեր էր ծնվել. նույնքան մեղավոր էր յուր հոր հետ կապելու համար, որքան հայրն ևս մեղավոր էր, որ յուր կատաղի քարկուժւան մեջ, որդուն աշնպես համարանական տանջանքի անեծք է կարդում. ո՞ր բարի հայրը կանն այդ, ինչպես էլ որդին լաւ լինելու Դավիթն անում, բայց ոչ թե Դավիթն է անում, այլ Դավիթի քարկուժւունն է անում, ինչպես և ոչ թե Մհերն էր անհասարկութեամբ կոխում, այլ Մհերի ուժը, որ լցվել էր և պետք է յուր ամանից դուրս թափվեր:

Թե Մհերը ճանաչում էր միանգամայն և հոր հայրական իշխանութիւնը, և հայրն էլ սիրում էր Մհերին և այդ կովի և անեծքի եղբրեղը միայն դայ-րութի տակ էր կատարվել, և ոչ լաւ դիտավորութեամբ,—այդ երևում է այն հոգեկան դրութիւնից, որի մեջ ընկնում է Մհերն անմիջապէս հոր մահից հետո: Շատ անընական է թվում, որ Մհերին, որին Դավիթը հաղթել չէր կարողանում, և որ յուր հորը չէր ականջ անում, Ձենով լուովնը ծեծեր և ասեր. «Մհեր, կոնդ ես, խեղ քո խել կոխվ արիւր, իլի՜, զնա մեր քաղցն, մը դադրի մեր քաղաք», և յուր ուժից դուրս բան չճանաչող Մհերը լսեր Ձենով լուովնին և Սասմա քաղաքից դուրս ելնելու օրը, Այս կտորն աղճատված համարել (ինչպես առհասարակ սղճատված է Մհերի վեպի վերջին մասը) շնեց կարող, որովհետեւ հետը կից է ստորա շարունակութիւնը, որ ոտանավորով է և որ մեծ վիպական հնութիւն ունի յուր մեջ: Մհերը չէ հակառակում Ձենով լուովնին, որովհետեւ նա մի տեսակ խղճահար հոգեկան դրութեան մեջ է ընկած յուր հոր հետ կապելուց հետո: Բայց և այնպէս նա չէ կատարում Ձենով լուովնի խոսքը, մինչև որ չէ զնում ծնողների գերեզմանի վերա. նա այնտեղ ներողութիւն չէ հայցում հորից, որովհետեւ ներողութեան քաղաքարը նորա համար անհասկանալի է, այլ նա ծնողների գերեզմանի վերա լալիս է և խորհուրդ է հարցնում յուր քցտորի մասին.

«Երբե՞կ, վի՛ն՛ըս անեմ,
Ասոր ձի Սասմա քաղցն
. Բեհար ի խանութս:

«Անծու հրամանքիվ ձեն ընկավ խոր գերեզման, գերեզմանից ձեն էլավ,
ասաց.

«Որցե՞. վի՛ն՛ըս անեմ,
Գացիր միշտ և ի մեռնա,
Թափիր մազերն երեսն:
«Նա՛ լուրջը քոտը.
Ձի խաց թխուկ է,
Թա կերակուր եփուկ էս:

Սույն իմաստով և գրեթե սույն ձևերով պատասխանում է և մայրը, միայն կանացի բնութեան հատուկ եղանակով: Հայրը թողութիւն. չէ տալիս որդուն, բայց այս խոսքերով թե՛ որդի, հապա ե՛ս ինչ անեմ, կարողութիւնը ձեռքիցս զնացել է, ուզում է ասել, որ՝ եթե իշխանութիւնն իմ ձեռքիս լիներ, քեզ չիին կարող տարագրել Սասմա քաղաքից.—այդ ցույց է տալիս, որ հայրը դեռ սիրում է յուր անխնայ որդուն: Իսկ՝ զնա՛ Հալաքա քաղաք. ասելը, որ և մայրն է կրկնում, դա մի ճակատագրված իրողութիւն էր, որ ծնողներն,

իրըն հանդերձյալ աշխարհի քնակիչ, հայտնում են իրանց որդուն, որ պիտի կատարեր: Մհերը հնադանդում է յուր ճակատագրին, և, Աստուծուն աղոթելուց հետո, հանապարհ է ընկնում դեպի Հալաբ, առանց ճանապարհը հանաչելու: Մհերը գնում է. նա յուր հետ տանում է միայն յուր անշափ գորությունը. նա զենք՝ շուկի, ձի շունի, մենակ է: Քնպետե Մհերի վնասի մնացած մասը խառն և անորոշ է և թերատ, քայց դարձյալ պարզ կերպով ծրնում է Մհերն յուր ուժով և անիծյալ գրությամբ ամբողջապես: Ճանապարհին նա հանդիպում է Գոհար Խաթունի մորը, որ այնպես է նկարագրված, ինչպես հենթաթնորում նկարագրվում են դե-պառազները. Մհերն ևս նորա հետ այնպես է վարվում, ինչպես հեթանոսների մեջ հերոսները վարվում են դե-պառազները հետ, և պառավը խոստանում է Մհերին տալ յուր աղբիկը, որ նույնպես մի կտրեհուհի է: Մհերն և Գոհարը կոտորում են Հալաբա քաղաքի բոլոր ժողովրդին և ամուսնանում են:

Քառասուն տարի Մհերն ապրում է Գոհար Խաթունի հետ, և կատարվում է հոր անձը. նրանց անորդի են մնում. մեռնում է Գոհարը և Մհերը ելնում է աշխարհիս վերա աստանդական շրջելու յուր հոր անձքի բոլոր ծանրության տակ. նա ոչ մի նպատակ չունի, որին ձգտեր, նա թափառում է իբրև որսորդ: Բայց ի՞նչ է այժմ Մհերն յուր հիսնամյա հասակում, այսինքն այն ժամանակ, երբ որ մարդս յուր հոգեկան և մարմնական կատարյալ զարգացման մեջ է լինում.— ուրիշ ոչինչ, քայց եթե ուժ, ամբողջապես ուժ, այնպիսի ուժ, որ նույնիսկ յուր առկին ճնշում է և իրան դուրսագնիս: Նա յուր այս ուժի ձեռքին ոչ թե հսկա է, այլ մի թույլ արարած, որին ամեն հեշտ միջոցով կարելի է հաղթահարել:

«Մհեր ելավ, կուգեր որ գնա,
Որ դռները կը թլնը՝ կերթեր մընչ խողուն.
Եռո յեռն թուլացիք էր.
Զեր դողրի յեռն Մհերին»:

Նա ձի է նստում և ձիով է ուղում փահլեանեթյուն անել:

«Ձին խեղավ, քեց մընչ դաշտին,
Գետին յեռն թուլացիք էր,
Ձին կը խոգեր մընչ խողուն,
Եռո լեր դողրի յեռն Մհերին»:

Ի՞նչ անն Մհերը. նա խաղալիք է յուր շափազանց ուժի ձեռքին. մայր հողը նորա ոտքերի տակ թուլացել է, աշխարհը նրան չէ վերցնում, որովհետև ինքն այս աշխարհի զավակ չէ այլևս. քայց նրան մահ էլ չկա, ուրեմն հսկան հավիտյան պիտի տանջվի՝ և յուր ուժի համար հենց ծաղր ու ծանա՛կ պիտի լինի հասարակ որսորդների և փահլեանների ձեռքին: Նա այժմ շատ լավ հասկանում է թե ի՞նչ բան է հայրական անձը, որ նրան անմահացրեց յուր ուժի տանջանքով: Նա գերագույն գորության է դիմում, որ իրան մի ճար անն, աշխարհից վերցնի, ժու՛ղ Տեր Աստված, իմ խոր անձք ձի խասիք ի... զքեզ եմ կանչեր, Տյուր ընցկուն էնես, ձի ձգես վանա քար...: Բայց այդ դերագույն գորությունը, որ Դավթի ամեն մի խնդիրքն իսկույն լսում և կատարում էր, խուլ էր Մհերի ձայնին, երբ որ նա դեպի Հալաբա քաղաքը գնալիս դիմում էր նրան ճանապարհի համար, խուլ է և այժմ, երբ որ նա դիմում է նրան, որ աշխարհից վերցնի իրան: Նա քսան տարի Խաթունի տակ աղոթք է անում այս մի բանի համար միայն, և հաղիվ թե Աստված հը-

բամանք էրավ, զէնիկ մարմնավոր հթալ վանա քարա, որ պիտի հալիտյան մնա կենդանի:

Մհերի պես այսպիսի սարսափելի ուժի տեր դուցեալներ դուրս են դալիս և ուրիշ ազգերի վեպերի մեջ. պարսից Ռուստամը քսան փղի լափ ուժ ունէր, քայց և Ռուստամն յուր ուժով քախաւավոր էր, այնինչ Մհերն անբախտ է, որովհետեւ Ռուստամը դեերի հետ հարաբերութիւն ունէր, և դեերից մեկը, մի լեռան ողի, քաջք, նորա ուժի մի մասը վերցրել էր նրանից. որ շմլնասեր նրան, «Ռուստամն այնպիսի անշափ ուժ ունէր, որ ոչ միայն թշնամիներին, այլև իրան էր վնաս. նրան երկիրը չէր վերցնում յուր վերա. երբ որ նա ման էր գալիս քարքարոտ առաւելարով, նորա ոտքերի խոր հետքերը մնում էին քարերի վերա, ինչպես ափազի վերա. ամեն մի քայլադոխի նորա ոտքերը թաղվում էին գետնի մեջ և ինչպես երկաթի արոր վարում էին հողը: Ռուստամն այնպես դժվարութեամբ մի անգամ անցնում էր ձորի միջով, որ լեռան քաջը խղճաց նորա վերա և նորա ուժի ավելցումն առավ յուր մտտ պահեց, որ ժերութեան ժամանակ, երբ որ Ռուստամն ուժից պիտի ընկներ, նրան վերադարձներ:

Իսկ մեր Մհերին լեռան քաջքերը չեն օգնում, ուժի մի մասը վերցնելով նրանից, որովհետեւ նա հայրական անեծքի տակ էր. քայց և այնպես նրան օգնում է դարձյալ լեռը. Աննա քաբը, Տոսպան ըլուրը, որ վերցնում է նրան, այնինչ աշխարհը չէր կարողանում վերցնել, նման ռուսաց վեպի մեջ դուրս եկած մի վիթխարի հսկային (КОЛОСС), որին երկիրը չէ վերցնում, և որ պառկած է սարի վերա: Ռուսաց վեպի մեջ Ավյատոգոր հսկան ևս ապրում է լեռներում. նրան նույնպես երկիրը դժվարութեամբ է կրում, Ավյատոգորն ուզում է երկրի ծանրութեանը բարձրացնել, քայց ինչքան բարձրացնում է, այնքան ավելի նորա ոտները խրվում են գետնի մեջ:

Մհերը ներկայանում է Ռուստամին և Ավյատոգորին համապատասխան մի հսկա, որոնք սկզբնական ժամանակի, մասնավանդ Ավյատոգորը, երկրի տարերական ուժը պատկերացնող հսկաներ են, ժամանակով ավելի առաջ, քան թե մարդանման հսկաները: Մհերի ավագ լինելը, մինչև անգամ Դավթից, երևում է ոչ միայն նորա ուժից, այլև հենց նրանից, որ նա, ինչպես լեռան դեերը—քաջքերը, բնութեան տարերական ուժերը, ապրում է ալրերի մեջ, և ինչպես բնութեան ուժերն անմահ են, այնպես և Մհերը չէ մեռել: Իայց որ դիւսավոր նշանն է նորա ավագութեան, այն է, որ, նախնական բիրտ ժամանակներին արյունածարավ բնազդումներին հակառակ, մարդանման, այսինքն ժամանակով կրտսեր դուցեալները սիրով չեն արյուն թափում թշնամիների հետ ունեցած կռիվի մեջ, ցաւում են մարդկանց համար և մինչև անգամ կարեկցում են իրանց երույշալ թշնամիներին, ինչպես մեր վեպի մեջ Դավթին է դուրս գալիս,—Իսկ նախկին, ավելի հին շրջանի տիտանները, որ արդեն ապրել են իրանց դարը, այդպես չեն. նրանք հոգում են միայն իրանց համար և լալիս են իրանց կործանված զորութեանը և ձեռքից եկած ամեն մի լարիք հասցնում են ամենքին, թե՛ թշնամիներին և թե՛ ոչ թշնամիներին. Այդպես են վարվում մեր վեպի մեջ Մարամելքն և Մհերը:

Մհերի վեպի վերա խոսելով, ի կարելի չհիշել Պոռթ թագավորի և Արտաւազդի հայտնի վեպերը, որոնց հետ Մհերի վեպը նմանութեան ունի: Առհասարակ մեր ժողովրդական վեպերի մեջ հիշատակվում է, որ մեկ զորավոր մարդ պնաց է դուրս գա, կամ ծնվի մի օր: Պոռթի վեպի մեջ ասված է,—երբ որ նազըվա լճի քուրը, որի մեջ ձգված է Պոռթի Հալմունի—Քուրը, ցամաքի, այդ

թուրք բռնող մի զորավոր անոթ պետք է աշխարհ դա, իսկ քե այդ մարդը Հապիւռնի-թրոզ ինչ պիտի անեն,—այդ Աստուծու դիտնալիցն է (աշխարհ-հոտովս, 76 հր.)։ Մհերի վեպն ալիւի ևս նման է Արտավազդի վեպին։ Մհերը յուր անհանգիստ և շար բնավորությամբ և անիծյալ դրությամբ նման է Հայ-րական անհեծքի տակ ճնշված Արտավազդին, որ փակված է Մասսա վհի մեջ, ինչպես Մհերը վանա քարի մեջ։ Երկուսի վեպի մեջ ևս դուրս է գալիս մեր հեթանոսական մի հավատալիքը, որով մեռելների ուրվականները հանդերձալ աշխարհից խոստով են. Արտավազդի հայր Արտաշես արքան թաղման ժա-մանակ գերեզմանի միջից անիծում է յուր որդուն և նորա ապագան գուշա-կում, իսկ Մհերը յուր ծնողների գերեզմանի վերա լալիս է և խոսում ծնող-ների հետ, որոնք հայտնում են նրան յուր ապագան։

Արտավազդը Մհերի պես փակված է այրում մինչև աշխարհի վերջը, երբ որ պիտի դուրս գա և կատարած դնի աշխարհին. բայց աշխարհը վերջ լուին, և Արտավազդը հալիւտյան փակված է. իսկ Մհերը՝ «Մհեր, դու յն՞ր տեղնես ըդ տեղնեա նախորդի հարցմունքին պատասխանում է. — Եթե որ ցորեն հղավ քննց ալում, ու դարին հղավ քննց մասուր մի. հըպամ՛ն հրամանք կա, որ էլնանց իդա տեղնեա։ Ի՞նչ է Մհերի այս պատասխանը, ցորենը ե՞րբ կլինի ալումի չափ, իսկ դարին մասուրի չափ, որ նա դուրս գա։ Ուրեմն նա հալիւտյան պիտի փակված մնա, լինի աշխարհ, որ նորա աշխարհը չէ, որով-հետև նորա առաջ չէ կարողանում դիմանալ, որովհետև շատ մանրացած է, իսկ ինքը, Մհերը շատ խոշոր հսկա է, որի ժամանակն անցել է։ Մհերի այս խոսքը մի դառն ծիծաղ չէ՞ արդոք հրկրագործության վերա, որով նա ուզում է ասել քե որովհետև մարդիկ չնչին հրկրագործությամբ ո՛կսեցին պարապել, իսկ ես, որ հրկրագործության ժամանակի ծնունդ չեմ, քանի այդ հրկրագոր-ծությունը կայ աշխարհ չեմ ելնիլ Եվ իրավ, Մհերը դուք ունի միշտ պար-զամիտ հովիվների և վայրագ որսորդների հետ. նրան տեսել են. միայն Նախ-որդն ու հորթի ետևից գնացող հարաը. Մհերը բռնի ուժի տիրապետության դարում է ծնված, նա աշխարհքը զորով, ուժով ուտել դիտե միայն, և ոչ քե խնջով, ինչպես ուսում են հրկրագործ մարդիկը, և խնջով աշխարհ ուտելը նորա համար անհասկանալի է, ինչպես որ անհասկանալի էր խնջով յուր հսկայական ձիու հսկայական տուպրակը ձիու գլուխը տալը։

ԺԸ

Աղգային վեպից մնաց մեզ հիշել վեպի վերջաբանը. «Ամեն խամբարծ-ման գիշեր Մհերի քարի տյուտ կը բացվի. մարդ չի տեսնե, հրամանք չը կա մարդ տեսնաւ։— Ի՞նչ է այդ համբարծման գիշերը, նույնպես և շուր ֆրիստոս դա դատաստան խոսքերը, եթե ոչ հեթանոսական զաղափարներ, որոնք հայտ-նելովն են քրիստոնեական անվան տակ և ամենևին չեն հարմարվում Մհերի վե-պին։ Փրիստոսի դատաստան գալու հալիտեանկանությունը հ. Սրվանտյանի վարիանտում արդեն ունի յուր հեթանոսական պատշաճավոր ձևը, որ վերնում դրեցինք. իսկ համբարծման տունը, արդեն հայտնի է, մեր խորին հեթանոսա-կան տոներինց մեկն է, քրիստոնեականի վերածված։ Այդ տոնի՛ հեթանոսական անունը հայտնի չէ, բայց մինչև այժմ կենդանի մնացած ալիւտություններից և ծեսերից երևում է, որ դա բախտի, բաշխքի, ճակատագրի, վիճակի, հը-ռամանքի աստվածությունների տունը պիտի լինեի հեթանոսության ժամա-նակ, ինչպես և քուրք բնության՝ բույսերի և ջրերի տունը, որ կոչվում է մինչև

այսմ ծաղկավառ տուն, և ամենատարածված ազգային տոները մեկը պիտի լիներ. որ մինչև այսմ տարածված և սիրելի է, Համարարձման և վարդապետի տոները կապված են իրար հետ. վիճակը շատ տեղ վարդապետին են բաց անում. ժամայանդ լեռնային տեղերում և ընթ Համարարձման տոնին չի հաշտում աղբիկներին վիճակ բանալ, նրանք բանում են վարդապետին, որ դարձյալ հեթանոսական տուն է, Այդ օրն այսմ ևս ամեն մարդ յուր վիճակն է բանում մեծ հանդեսներով և մեծ երգերով. ամեն մարդ յուր քախտի համար մի բան է ձգում մի ամանի մեջ, որ կոչվում է ռեպիդի, մի բառ, որ յուր կազմությամբ մեջ ունի հավանականությամբ արմատը, Հավիդի, որ դարձարված է լինում ծաղիկներով, ամիլի հորտո ու մորտո ծաղիկներով, և միջին ունենում է յոթն աղյուսերից վերցրած չորս, գինջըրդ ունում են բացթյալ տեղում, աստղերի ներգործությամբ ներքո, աստղերի, որոնք այնքան մեծ դեր են խաղում մեր ժողովրդի հավատալիքների մեջ, և որոնք նույնիսկ մեր վնայի մեջ երևում են՝ ռեպիդի և Մարա աստղերը, որոնցով Ձենով Հովանը գուշակում է Դավթի վատ դրությունը, Համարարձման գինջըրդ մի որոշյալ ժամում ամբողջ բնությունը, և՛ ջուր, և՛ սառ, և՛ ծառ, և՛ երկինք-գետինք սկսում են շարժվել և իրար վերա խոնարհվելով, իրար ռոշույն տալ, սաղը՝ սարին, ծառը՝ ծառին, երկինքը՝ գետինքին, Ահա այդ վայրկյանին է աստղերի ներգործությունն անցնում վիճակի Հավիդի վերա, ահա այդ րոպեին բացվում է և ՄՀերի ալրի դուռը, բայց ճհրամանք չը կա, որ հլնառ նա ալրից. նորա բախտը, նորա ճակատագիրը մի անգամ արգեն որոշված է, որ նա հավիտյան փոկված պիտի մնա Տոսպան քրի մեջ:

Ամփոփենք մեր գրությունը, Աբամելիքի, Դավթի և ՄՀերի ռեզգային վնայն ներկայանում է իրեն կենս-պատմական և կենս-դուրսագնական հին վնայ. որի սկիզբը նախապատմական ժամանակներում է, իսկ վերը միջին դարերում, նոր դարերի պատմական կյանքը գրեթե ամենին լի երևում: Անաքոնիդմենը, հարկավ, անխուսափելի են, վնայի մեջ դուրս է գալիս հեթանոսական կրոնը, խառն քրիստոնեականի հետ. բայց եթե լավ նայենք, կտեսնենք, որ այդ քրիստոնեական տարրը շատ անգամ անունով է միայն քրիստոնեական, և եթե նոր վարդապետներ ձեռք բերվին, թեևս շատ քրիստոնեական բան հեթանոսական ձևով պատմված լինին, քանի որ երևու վարդապետներն այդ կողմից մեկմեկու լրացնում են, վնայը դուրսագնեցություն է, հին դուրսագնեցություն, որ յուր իսկատիպ առանձնություններով հանդերձ, հարկավ նմանություն ունի ուրիշ ազգերի դուրսագնեցություններին:

Այդ վնայը ժողովրդի համար մի սոսկ հեթանոս չէ, որին ժողովուրդը չէ հավատում, թե մի ժամանակ կատարվել է. դա ժողովրդի համար մի պատմություն է, որին ընայելով, որ շատ ամիլի գերբնական հրաշալիքներով է լցված, քան թե հեթանոսները, ժողովուրդը հավատ է ընծայում, թե մի ժամանակ կատարված է իսկություն: Ժողովրդի հավատը շատ տեղ երևում է վնայի ընթացքից. ամեն մի գերբնական գործ կատարվում է ռեպիդի հրամանով, իսկ այդ աստվածը, որ հետմեջ հեթանոսական որևէ աստված է եղել, ներկայումս քրիստոնեական ճշմարիտ Աստվածն է, որեմն կարող է և հրաշքներ գործել: Դավթին ինչ որ ուզում է, Աստված կատարում է, որովհետև, ժողովրդի բացատրությունը հենց, սեյն ժամանակ արդար մարդ ին, ինչ մարդ էնին՝ Աստված կը կատարեր: Ժողովուրդը հավատում է, որ մինչև

այժմ էլ Մհերը Վանա ալրում փակված է, և թե ամեն համարձման գիշեր
ալրի դռներ բացվում է. նա մինչև այժմ էլ ցույց է տալիս Դավթի ք. Նշանը,
որ հմկա լն ընտրեր նշան՝ հանդ է ի գավառ՝ Զորկա տունը. մինչև այժմ էլ
ցույց են տալիս խանդուկ տիկնոջ գլխի տեղը, երբ որ նա իրան բերդի պիտի
վար ձգեց. թուր գլուխ ծակեց գթոր. ու գլխու տեղ՝ Սասնու կնո շնիկ կորեկ
կրկնն լինք ու ծնծեն, սանդի տեղ. Ուր յոթ ճյուղ ծամի տեղ լն՝ հմկա կերևա
ու մկա լն ըդ սանդ լանդ է բերդի առեջ. Ուրիշ ցուցմունքներ չկերա, որ թող-
նում ենք, այն էլ ասենք, որ պատմող մոկացի նահապետը (նորա հետ ան-
շուշտ և յուր հալրենակիցները) կատարելապես հաղատում էր յուր պատմած
վեպին, իրեն ստուգապատում իրողության և ավելացնում էր հոգվոց հանե-
լով. ժամ էլ Սասնա քաղաք շատ կտրիճ փեհլվան կա:

ՀԱՅ ԺԱՂԱՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՍՊԵՆՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆՍԿԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(ՅՆԱՆԴԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՎԱՄԸ)

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հայոց հին սվնապեղծ կամ Վեպեղ ժաման 1850 թվականից ի վեր ուսումնասիրություններն են լինում. բայց խնդիրը դեռևս պարզված չէ, այլ մասնավանդ թե պարզվելու փոխանակ ավելի մթնացել է շնորհիվ երկու ծայրահեղ ենթադրությունների:

Հանգուցյալ էմինն¹, ավելի ցանկության քան թե իրականության վրա հիմնվելով, խորենացու Հայոց Պատմության առաջին գիրքը և երկրորդ գրքի մի որոշ մասը համարում է մեծ մասամբ, եթե ոչ ամբողջական, ժողովրդական վեպից, երգերից ու զրույցներից քաղած մի պատմություն, Մար Արամի գիրքը² մի կեղծից, և Մար Արամ³ խորենացու հնարածու իսկ պ. Գ. Խալաթյան 1896 թ. հրատարակած յուր աշխատության մեջ⁴ դարձնում է այն հղականություն, թե խորենացու Վեպեղ կոչված աղբյուրները շինծու (ֆիկտիվ) են, և թե Վեպեղ անվան տակ բնական է են մի ամբողջ շարք դանազան, թարգմանական և ինքնագիր, գրավոր հիշատակարաններ, որոնք և խորենացու իսկական, բայց թաքցրած աղբյուրներն են⁵ են, և թե խորենացու շատ անգամ հիշած «Հայոց վեպը», «սովորաբար գրքերի ժառանգելի և մեծ մասամբ Անտիգոնայի մոտիվների շատ ու քիչ ևսրալիկ փոխադրություն» (искусная переработка) է, որ հենց իրեն պատմագրի գրչին է պատկանում:

Եղևարիտ է, պ. Խալաթյանը խորենացության մեջ ստվերաբար թաղում ահմանափակում է յուր կարծիքը, բայց նշանակություն չունի այդ, քանի որ նա յուր հնարազատության մեջ, վերլուծելով վեպ համարված կտորները, համարում է թե խորենացին զրգերից առնելով⁶ հեղուկած ու կեղծած է ամենը:

Ո՞րն է այս երկու կարծիքներից ընդունելին՝ կարծիքներ, որոնք իրարու հակադիր են:

Այսպիսի դրություն ժամանակ ավելորդ չէ խնդիրը նորից ուսումնասիրել, Արդարեւ, պ. Մանն յուր լուրջ ու մտացի քննադատության մեջ⁷ պ. Խալաթյանի

¹ Էմին, Վեպեղ հերթ Հայաստանի, Մոսկվա, 1850: Ձեռքի տակ ունիցը Վեպեղի երկնապեղծությունները Հայոց լեզվի, դրամականության և պատմության մասին, Մոսկվա, 1858: Էմին, Մոսկվա խորենացին և Հայոց հին վեպերը, թարգմ. Գ. Խ. Թեֆլիս, 1888, ևս. բնագիրը 1881 թ. հրատ.

² Г. Халатянц, Армянский эпос и История Армении Мовсея Хоренского, Москва, 1896.

³ Նույն, նր. 240:

⁴ Նույն, նր. 243:

⁵ «Византийский Временник», том V, вып. 1 и 2, Санкт-Петербург, 1898, № 9.

207 հուն.

գրվածքի շատ ու շատ թույլ կողմերի վրա մատնացույց է եղել՝ բայց ցամ է, որ այդ քննադատության մեջ հնդիկակը թվեպնա ամբողջապես չէ վերցրած և ոչ պ. Խալաթյանի և էմինի կարծիքների ամբողջությունը:

Պ. Խալաթյանի հիմունքները շատ թույլ ու խախտառ են և հաճախ վնասի հետ կապ չունեցող: Բայց և այնպես նա աղբյուրի նախդիրներով շատ հնչողություններ է անում: Թեպետ անվերջ կրկնած ճշմարտական է, սգուցնա, «կարելի է կարծել», «ինձ թվում է» և նման դարձվածներով՝ հորա աշխատությունը, սակայն, կարող է վերջը ոչ-մասնագետի և ոչ-քննադատական աչքով կարդացողի համար ընդունելի լինել, հոգեբանական այն պարզ օրենքով, որ թույլը թույլի հետ միանալով, իրար զորացնում են և վերջը զորեղ տպավորություն թողնում: Սակայն առաջին հայացքից հենց նորա եղբայրության շահապաշտությունը, ուստի և սխալ լինելը, թվում է ընթերցողին, Ինչպե՞ս, մի պատմագիր, որ գիտե ժողովրդական բանահյուսությունը որոշ չափով զննատեղի պատմության համար, որի ժամանակ, նույն իսկ պ. Խալաթյանի կարծիքով, ճշմարտ մեջ, ինչպես միշտ, ժողովրդական երգեր կային... և այդ անկասկած է. մի պատմագիր, որի համար պ. Խալաթյանի կարծիքով անգամ «մինչև իսկ կարելի է ընդունել (допустить)», որ նա, ...յուր ժամանակի երգերից վերցրել է այս ու այն բառերն ու վիպական արտահայտությունները»,—ինչպե՞ս, մեր այդ պատմագիրը, որ այնքան ու այնքան անգամ հիշում է ժողովրդական երգերն ու առասպելները, այնքան ու այնքան անգամ էլ կնդո՞ւմ է, ոչ մի անգամ չէ՞ օգտվում ժողովրդական երգերից, ստո՞ւմ է գրելով Ջուլյա երգելով ռմանց բամբակ, լուսա իսկ ականջօք մերովք, մինչև իսկ, ընդհանրապես, շինծու երգեր և առասպելներ է հորինում իրենից, այն էլ միշտ մի բառ այս գրքից, մի բառ այն գրքից առնելով, նախադասության մի կտորն երրորդ գրքից, իսկ մյուսը չորրորդից—Առաջին հայացքից հենց այս կարծիքն անընդունելի է թվում. որովհետև ընթերցողն իրեն հարց է տալի, թե այդ պատմագիրն էլ ինչո՞ւ պիտի ստեր և չեղած երգեր ու առասպելներ հերյուրեն, քանի որ կարող էր եղած ժողովրդական առասպելներից օգտվել: Գուցե առարկեն,՝ թե ծանոթ չլինելու պատճառով չէ օգտված ժողովրդական երգերից ու առասպելներից, Բայց մի՞թե հավատարի է, որ այն հայ պատմագիրը, որ գիտե իրեն այնքան տառիկ պարսից «փոփոխ» և «անճշտ» առասպելները, չիմանար յուր հայրենի առասպելները, կամ գոնե բնավ հարց ու փորձ չենե՞ր յուր հայրից պատմության մեջ ժողովրդական առասպելների վրա կամ այն կտորից օգտվելու համար—Անշուշտ, Խորենացու հիշած պարսից առասպելներն էլ շինծու կհամարվեին, եթե ուրիշ աղբյուրն հայտնի չլինեին:

Մյուս կողմից էմինն ևս շահապաշտություն մեջ է ընկնում, որանալով գրավոր աղբյուր, և թվեպից քաղած համարելով ամբողջ կտորներ, որոնց համար Խորենացին պարզապես ասում է թե գրավոր աղբյուրներից է առնում, նույն սխալին ենթարկվում է և պ. Ֆետտեր, գրելով. Խորենացու «գործոյն ամբողջ առաջին և երկրորդ գիրքը գրեթե միայն այս [պատմական] երգերն շինված են»:

Որ խոսք է լինում Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ եղած հայոց թվեպի՝ մասին, պետք է չմոռանալ առանձնապես որոշելու, թե արդյոք Խո-

¹ Халат., «Арм. вост.», кр. 114.

² Ներքին, Հայկական աշխատանքությունը, թարգմանեց Հ. Հ. Տալան, Վիեննա, 1885, եր. 121:

րենաքին հայտնում է, որ վնասից կամ դրույցներից է քաղում, թե չէ: Այս մասին շատ թեթև են անցնում ոչ միայն էմիրներ, այլև պ. հալաթյանը, առաջինը վնաս համարելով, իսկ երկրորդը հայտնելով, թե խորենացին վնասի տեղ է ուզում ծախել շատ բան, մինչդեռ խորենացին պարզապես հայտնում է թե գրավոր աղբյուրից է առած:

Այդ գրավոր աղբյուրը կարող է, արգարև, որևէ ժողովրդական անուն պնդի վրա հիմնված լինել: Բայց կարող է և ամբողջապես գիտնականների տարքած հերյուրում (կոմբինացիա) լինել: Եվ եթե էմիրի թույլ կոչվում է, որ նա խորենացու մեջ եղած ալապիսի հատվածները վիպական է համարում, առանց նեղութուն կրելու համոզելի ապացույցների բերելու,— մյուս կողմից էլ, եթե մեկն ալապիսի հատվածների Վիպականության դեմ է դրում, նա ինկապես խորենացու մեջ եղած Վիպիսի դեմ չէ դրում, այլ ուրիշների հեթանոսաբան մի երեսակայական վնասի դեմ, որի հերքումը և շատ դժվար չէ: Եվ պ. հալաթյանի աշխատության գլխավոր արժեքը, ինչ որ ճշայն վնասին է վերաբերում, հենց այս կարծեցյալ վնասի հերքման մեջ է:

Ա ԱՌԱՍՊԵՆ

(Վնաս: Զույց: Վիպասանք: Առնապիներ: Երգի: Երգ
առնապիտց: Երգ Վիպաստնաց:)

Ինչ ընդհանուր անունով պետք է կոչել հայ ժողովրդական բանահյուսության արդյունքները, որոնցից օգտված է խորենացին,— Անշուշտ, այն ընդհանուր անունով, որով և խորենացին է կոչում: Սակայն խորենացու թողած, կամ, ինչպես էմիրն և պ. հալաթյան, նորաստեղծ անունով են կոչում՝ «Հայոց հին վնասը», «Հայոց վնասը», կամ, ինչպես Հ. Զարհանայան և պ. Տիտտեր, «Երգ բան ընդհանրացնելով»՝ «Բողոքի երգեր» և «Հին հայոց աղբյուրի երգեր»:

Վնաս ասել, որ մեր արգի լեզվի մեջ էլստի իմաստ է ստացել, խորենացու մեջ բնավ նույն իմաստը չունի, ինչ որ վերագրում են անոր էմիրն և պ. հալաթյան¹, առանց որևէ հիմունքի, լոկ խոսքով, հեղաշրջելով բանի հին իմաստը, որ շատ ճիշտ որոշած է «Հայկազյան լեզվի նոր բառգրքի» մեջ: Վնաս է «Հին գրքից» իրական կամ ստույգ. «ստույգից»՝ արժակ կամ քերթողական. լուր՝ բանի կամ գրով բայց ոչ երբեք միայն «պատմության» ֆեթթական կամ պատմական բունաստեղծություն. «սա լստես»՝ դիպրոպական բունաստեղծություն... չափաբեական և ոչ արժանի², ինչպես ուզում է համատեղել էմիրը շփոթելով վնաս և երգ Վիպաստնաց:

Խորենացին ինկապես քանի անգամ որ վնաս բառը գործածած է, գրավոր պատմական ճիշտակաբանություն համար է գործածած: Ա. Բ. ասում է, թե հույները հոգ են տարել «Հայկազյան աղգաց զմաստնան» և զվնաս ի յոյն լեզու փոխառել: Թե այստեղ Վնասը նշանակում է «պատմություն», պարզ է. քանի որ խորենացին այդ գլխի մեջ, հայտնելով հույների թարգմանած լինելն ուրիշ աղբյուրի պատմությունները, արդարացին է ուզում թե ինչու՞ ինչու իբրև

¹ Եմիր, Վնաս հին Հայաստան, Եր. 52:

² «Ար. ցուց», Եր. 48, 196:

³ Եմիր, Վնաս հին Հայաստան, Եր. 52:

աղբյուր Հայոց պատմության Հիշում է թղթանագն միայն... զպտտմագիրս» և լստատանում է պատմել Հայ նահապետների ազգաբանությունը և թղՀայաստաննայն նախաբարութիւնս, զամենեցուն զուստն և զգլխորդն..., որպէս Հայաստի ի յունականս ռմանս կայ պատմութիւնս» (Ա, ա)։ Նույն քանին դատում է նաև Ա, Ե գլխի վերջերում։

Եվէպս բառն երկրորդ անգամ գործ է ածած Ա գրքի ք գլխի մեջ, որ կշտամբում է թղանիմաստաաւր բարս մերոց նախնայնս, որոնք Հոգ շնն տարն Հայոց աշխարհում «Գործնալ» Կարմանի գրոց յիշատակի» «առուրեան գործնը» «մտանեազնիւն» և զովում է այն օտար թագաւորներին, Եորք գր-րով և պատմութեամբ գիրաննցն Հաստատեալ կարգեցին զժամանակս և զգործս իմաստութեան և զքաղութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վելսու ի պատմութիւնս», Թն աշտեղ ևս վեպէրօրէ շէ նշանակում, այդ պարզ է, քանի որ խնդիրը կատարված գործերն արձանագրելու մասին է. այլև թղՀայս և պատմութիւնս գորդներին կոչում է «դիւնագիրք մտանեց», որոնք բանաստեղծ շնն Հարկավ. իսկ Ա գրքի իս գլխի մեջ նույն խնդրին դառնալով նույն թղիւնագիրք մատենիցս կոչում է «յիշողութեանցն վերակացուք»։ Երբպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառսն ամբաստանեցաք զառաջին նախնայնցն մերոց անիմաստաւր բարուց ախորժակս, այս հանդիպի և աստանօր։ Քանզի և որք ի Հօրէն Նարուգոդոնոսորայ գործէ գրեցուն յիւրեանցն յիշողութեանցն վերակացուքս։

Երկու համանիշ բառերի, Թի վէպս և ի պատմութիւնս, կողքն կողք գր-վիլը կարծել պիտի շտա, թն Եվէպս շէ նշանակում պատմութիւնս, խորենացու մեջ համանիշ բառերի այսպիսի կրկնութիւնները այնքան սովորական են, որ օրինակներ բերելն անհրաժեշտ չենք համարում։ Հիշենք միայն Ա, ք. Թգմատեանս և զվէպս, անոր համար միայն, որ աշտեղ ամատեանս և Եվէպս (պատմութիւն) համանիշ են գործածված, քանի որ մի փոքր առաջ ամատեանագիրքս և Եպատմագիրքս՝ բառերն իրրն համանիշ են ընդունված. Եւ ընդ այս մի՞ ոք զարմացի, եթէ բազում ազգաց շնալ մտանեագիրք, ...մանաւանդ պարսից և քաղցնացուց, յորս առանել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք դիւնացն միայն յիշեցաք զպատմագիրս, և անտուստ զայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս (Հայոց պատմութիւն) խոստացաք յանդիման կացուցանելու վերնագրի մեջ ամատեանագիրքս բառի տեղ զքաղցնացուց և ասորեանտանեաց մատեանքս է գրած. իսկ Հայոց պատմութիւնը պարսից և քաղցնացուց ոչ թն քօրօք-ների մատյանների մեջ պետք է լինեն, այլ պատմագրութիւնց մեջ։ Այդ երևում է և Հիշած Ա, իս գլխից, ուր դառնում է նույն խնդրին. Եվպս եթէ ասիցեն, ուստի՞ մեք և զնախնայնցն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ. ի հնոցն դիւնաց ասորեանտանեաց և պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի Գառեալ արեւելի, իրք գործակալաց և վերակացուց աշխարհիս... Հմմտ. վերեւում Հիշած դիւնագիրք մտանեց, իբրև վեպ, պատմութիւն գրող Հմմտ. և Ա, մի թղարդում մտանեւն և զգրոյցս, համանիշ թղմատեանս և զվէպս անին, քանի որ, ինչպես Հնոտ կտեսնենք, զորոյց նույնպես պատմութիւն է նշանակում։

Այսպես տեսնում ենք, խորենացին երկու անգամ միայն Եվէպս բառը գործածած է և այն պատմութեանս իմաստով։

Այնուհետև խորենացին գործ է ածում երեք բարդված բառ, որոնց մեջ Եվէպս դարձյալ Եպատմութեանս իմաստ ունի։ Բովսմվել (Polyhistor) (Ա,

ոյ), որ և պատմագիրքն է կոչվում: Այս (Ա, 9) գլխի մեջ դադարեցնում է որոշ պատմագիրներին, ինչպես և Բազմալեզուների, քաղաք պատմությունը, քայքայ Ա, 9 գլխի մեջ նույն դադարեցրած պատմությունը դառնալով, նույն պատմագիրները այստեղ վիպագիր է կոչում. իսկ վերնագրի մեջ «Հնամենայն, որով մեզ վեպ դարձյալ նույնանում է պատմություն հետ: Վիպագիրքն բառը պատմագրին իմաստով գործածված կա և ուրիշ հեղինակների մեջ, որինակ նվաճողների Քրոնիկոն, Ա զգրանաստեղծս, զվիպագիրս, զգլխապատմայն, որտեղ վիպագիր համատարակ իբրև պատմագիր է դրված քանաստեղծների և փխրապատմաների հետ: Նույն Անով՝ Ոսկերեւանի մեջ. Վիպագիրքն և փխրապատմայն, և որ զառասպելսն գրեցին» (այսինքն քանաստեղծները): Դարձյալ նվաճողների Քրոնիկոնի մեջ «Կեփագիրքի վիպագիրի՝ վասն աստրեոստանայ թագաւորութեան, նույն տեղում. Եւստորով գլխի մեծ շրջեղիքին վիպագրեն, այսինքն պատմեն (տե՛ս նաև ուրիշները. նո՛ր)» բառը. հայկ. լեզ.՝):

Վեպ բառի իսկական իմաստը հորենացու մեջ իբրև պատմություն պարզված համարելով, թողնում ենք Վիպագրենք» բառի մասին յուր տեղում խոսել: Անցնենք զրույց բառին, որ էմին մեկնում է և պ. Խալաթյան՝ ընդունում իբրև die Sage. сказание, «հակառակն վէպին» (որ լափաբերական է), «պատմությունը տառակ և ոչ լափաբերական, հին ավանդութիւնը քերականացի գրութեանը»:

Եթե լավ ուշադրությամբ դարձնենք, կտեսնենք, որ զրույց բառը հորենացու մեջ համարել է վեպ բառին և նշանակում է թե բերանացի և թե գրավոր որևէ պատմվածք, պատմություն:

ա. Գրովոր պատմություն: Այս իմաստով հաճախ գործածված ենք գրանում զրույց բառը. Քիլիդի և գաւառացի ևս և իւրաքանչիւր տանց, և հասարակ հակառակութեանց և դաշնացի տա մեզ գտանին անքաւ գրուցազ մատենեմ» (Ա, 4) «Ընտ արտոմելոյ արպէս կամեցան իւրաքանչիւրքն (վիպագիրք) փոփոխել զանուանս և զզրուցս և զժամանակս» (Ա, 9). խնդիրն այն մասին է, թե արտաքին պատմագիրների մեջ եղած պատմությունները տարբերվում են Ս. Գրքի պատմությունից՝ անուններով, պատմվածքներով և ժամանակներով: «Հրամայէ (նինոս) զբազում մատենանս և զզրուցս տառնոցն»... այլուք ուրեմն զրույց նույնանիշ պատմության գրքերի՝ լեւնոս... զրուցազ ուսնալս (Ա, 49). համանունը գրավոր և ոչ անգիր զրույցներ, քանի որ նույն նինոսը գրավոր զրույցքն այլուք է ուրիշների քաջության հիշատակը ոչնչացնելու համար: «Յարմարեալ կարգեցից... և որ ինչ վասն սոցա զրույց... ոչնչ կամատարական... այլ որ ինչ ի զրուց» (Ա, 49), «Զրույցս մտենից տային» (Ա, 9), այսինքն գրված պատմություններ էին անում: Միայն Արաս Կատինայ գմերով ազգիս միայն հասնալ զպատմութիւն հասատի, ...յորմէ մեր հասատի ի վերայ հասնալ կարգի զրուցացս, երկրորդեմք... (Ա, 8): Եւրոս ապա լրդձալին քո հաստեղծեմք զրուցազ պատմութիւնն» (Ա, 1), այսինքն, եւրոս պետք է հայոց պատմությունը պատմենք: Այսպես և Բ, լրդ Խոսրովի, Անակի, Լուսավորչի ծննդյան պատմությունն անելուց հետո, «Իսկ զմնացեալս ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»:

Թե այս բոլոր դեպքերում զրույց գրավոր պատմություն է նշանակում, պարզ է: Նույն իմաստը պահում է զրույց բառն և բարդությունների մեջ, քօլ

ո՞վ կամ ուստի՝ զայսպիսի եղիտ գրուցաբանութիւն» (Ա, ք). խոսքը Մար Աբասի պատմութեան մասին է։ Նույն իմաստով. «Այս կարգ գրուցաբանութեան դադարումն առցէն» (Ա, թ), «Վասն Յունացն գրուցաբան զանարկութիւն մերոց պիտոյից առնելոյ՝ քաւական է աշխարհ» (Ա, բ)։ «Երթեալ Հասանիցեմք ի Հեթանոսական գրուցաբանութիւն» (Ա, գ), «բաժնոր պատմութիւնները, նույնպէս պատմութեան իմաստով և Ա, գ «Այսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեան ճառս և գրուցաբանութիւն» (Հմտ. «Գրոյցս մատենից ասիկն»), այսինքն, «շարաժս բանից», «զոր դիւանագիրք արժանացուցանեն ի վէպս և ի պատմութիւնս»։

Այսպէս «գրոյց» բառը, մենակ տառժ, նշանակում է ընդհանրապէս պատմութիւն, պատմութիւն, իսկ խորհնացու մեջ հատկապէս գրված պատմութիւն։

բ. Բերանացի գրույցներ։—Այս իմաստով, իրիւ die Sage, գործածելիս խորհնացին միշտ անգիր, քիւն, վաղնիւց, նախնայն բառերով, կամ «յաւանդութենէ հասնալ», «որդի ի հօրէ աննելով յիշատակէ...», «գրուցեն պառասոնք» շրջաբանութիւններով որոշում է ժողովրդական գրույցը գրաւոր գրույցից։ «Ջհամբաւս Հինս և գրոյցն նախնայն յիւրեանց Թագաւորաց կամ մեհենից մատնանս գրել» (Ա, ժգ)։ Այնուհետև նույն իմաստով քիւն տեղիւր, յաւանդութենէ հասնալ գրույցներ են Ումպիոգորոսի պատմածները (Ա, գ, ժ, Բ, ք, հգ), որոնց մասին հետո խոսք կ'լինի։ «Ասեմ գրույց զսքանչիւի ծերոյն... որդի ի հօրէ տոնելով զյիշատակ գրուցաց» (Բ, հե)։ «Ընդն» պատրիմք գրուցով վաղնիւց և պառասնալ առասպելեց, պաղեստինացիս զմեզ վարկանելով» (Բ, իդ)։ Արտավազդի շղթայված լինելու մասին «գրուցեն պառասնեմ» (Բ, կա)։ Տորքի մասին առասպելն ևս, որ միանգամայն երգ է, երկու անգամ կոչվում է գրոյցք, սակայն այստեղ գրոյցքն բառն անգիր գրույցների իմաստ չունի, այլ ընդհանրապէս՝ պատմութեան, պատմութիւն, անորոշ տառնով. «Ոչ Սամսոնի և ոչ Երակելայ և ոչ Սագնիկն յարմարեն այս գրուցք» (Բ, ւ). որ է Տորքի մասին այս պատմութեանքն որ Սամսոնին, և ոչ Հերակլին, և ոչ Սագնիկն են հարմարում։ Իսկ երկրորդ դեպքում. «Տմանդի էր արգարն սաստիկ հզօր, և այսպիսեաց գրուցաց արժանի», «Որովհետև Տորքն արգարն սաստիկ հզօր էր և այսպիսի պատմութիւնների (ընդհանրապէս) տամար» արժանի։ Այսպէս հասկանալով, այլևս կարիք չենք տեսնում «գրոյցք» բառին այստեղ ժողովրդական պատմութեան իմաստ տալու և «Кажки» բառով Թարգմանելու, ինչպէս անում է պ. Մառը², հիմնելով անոր վրա, որ այդ «գրոյցք»-ն առասպել են։

Երկանդի ծննդան մասին գրում է (Բ, լէ). «Եւ ունին գրույց յազազս նորա այսպէս, Այս-գրոյցքն բառից լոկ՝ եղրակացնել կարելի չէ թէ խորհնացին Հաւառացնում է» թէ Հայ ժողովրդական գրույցները կային Երկանդի ծննդան մասին, և թէ նա այդ ժողովրդական գրույցներից, և ոչ թէ մի գրաւոր աղբյուրից է քաղում այդ պատմութիւնը, ինչպէս հայտնում է պ. Խալաթյանը³, առանց որեւէ հիմունքի։ Այդ ձեռով հասկանալը խորհնացու լեզուն ապահովապէս քուրդի կնշանակէ, քանի որ գրոյցն բառով խորհնացին, ինչպէս տեսանք, մի անը ընդհանրապէս որեւէ, մյուս տեղերում հատկապէս գրաւոր պատմութիւն, պատմութեան է հասկանում, իսկ ժողովրդական գրույցը

¹ Հմտ. Լեւոն, Визант. временник, III, V, 1898, № 361.

² Նույն.

³ Халат., Арм. слов., № 213.

որն է ածականով կամ նախադասութեամբ որոշում է միշտ¹։ Ազնայն ենք և
այն, որ նույն դարձվածը ներքորդ անգամ դործ է ածում հորենացին Բ գրքի
ձա գլխի մեջ, Մամիկոնյանների ծագման մասին գրելով։ Որոշումն այս
պայմանի, որ գրույցը ժողովրդական լէ, այլ գրավոր պատմութիւն, որ
պատմագիրը Փնտրեխանոս հայկական «պատմութիւնից» առած պիտի լի-
նի, ինչպէս գրում է Բ, Հն Որոշումն ինչ զկնի մահուան հետքով մինչև ցրա-
տորութիւն Տրդատայ ի ժամանակն անիշխանութեանն պատմէ (Փնտրեխա-
նոս), ստորգ համարելով ներքորդին²։

Մենք բերեցինք, ինչպէս կարծում ենք, այն բոլոր կտորները, որ հո-
րենացու մեջ գործածուած է «գրույց» բառը³։ Այդ բոլոր գործածութիւնները,
ինչպէս ընթերցողը կտեսնէ, լին կարող թույլ տալ գրույցի մեջ արձակի Հնա
և խոսքի մը շարկակաւն ձևը տեսնելու, ինչպէս գրում է լոկ խոսքով պ.
Հնտոր⁴։ Անշուշտ, երգերի մեջ ևս, ինչպէս Տորքի մասին երգի մեջ, գրույց-
ներ, այսինքն պատմութիւններն լինում։ Բայց այդ մեղ իրավունք չէ կարող
տալ լրնգումնու, որ գրույց բառն ևս ընդհանուր իմաստն լունենալ ինչպէս
նրգ, պատմութիւն, վնպ բառերը, այլ բանաստեղծութեան որնէ տեսակ լինի։

Զրույց բառի բոլոր գործածութիւնները մեջ բերելով⁵ տեսնում ենք ուր-
քան սակաւ բան, իսկապէս ոչինչ, առնված է ժողովրդական գրույցները
հորենացու Հայոց պատմութեան մեջ։ Մեկն է՝ Բագրատունյաց պաղեստինացի
լինելու մասին վաղեմից գրույցը, որ պատմագիրը գործ է ածում, որիչի
բերանը գրած՝ ծաղկական կերպով և պատաւելալ տառապելիք է անվանում։
Մյուսն է Արտավազդի շղթայված լինելու կն։ պատմական գրույցը, որը
նույնպէս քիչ ներկուսմ դարձալ տառապել է կոչվում։

Վիպտամեհ, երգ վիպտամեհ կոչում է Արտաշէսի, Սաթենիկի, Արգա-
ւանի և Արտավազդի մասին երգիները կամ երգերն ու պատմվածքները։
սակալն աղանց համար նույնպէս ամելի համախառնապել, տառապելութեան
ներով երգել, տառապելալ երգել, երգել յառապելուն, երգիքն տառապելաբա-
նեն, երգիք յառապելին ասենք բառերն ու դարձվածներն է գործածում։ Իսկ
ժողովրդական բանահայտութեան մնացած գրեթէ բոլոր նյութերը, որոնցից
օգտված է հորենացին, միմիայն տառապել անունն է կրում։ Առաջակն են՝
Շամիրամի, Վահագնի, Տորքի, Արծրունյաց ծագման, Սանատրուկի, Նրվանդի
հայացքի, Սմբատի, Արտավազդի, Վարդգեսի մասին հիշատակները։ Առաջակն է
նույնիսկ Շարայի մասին ասած առականոր խոսքը։

Հայոց պատմութեան համար եղած հայ ժողովրդական բանահայտու-
թիւնից տառապել կոչումը լունի միմիայն Տիգրանի մասին հիշածը, որ միայն
երգ է կոչում։ Եւրոմէ ասելին ի հինսն մեր, որք բաժնաւորն երգէին։ Առա-
ջակներին իբրն երգ հիշվում են՝ երգք վիպասանաց (նույն թուեկացն երգք),
Վահագնի, Տորքի և Արտավազդի մասին։ Իսկ մնացած առաջակներին մասին
տեղեկութիւն չէ տրվում, թն արդար երգվել են թն չէ, և հարկ չկա, որ
անպատշաճ երգված լինին, քանի որ կարող են և պատմված լինել։ ինչպէս և
հենց վիպտամեհ պատմված են (Բ, խթ)։

¹ Հմմտ. Մուք, Յու. քրեւ., V, հր. 261.

² Սաթենիկն ամբողջացնելու համար ամելացնենք, որ Բ, կը պատմագրուց Բորգանանի
պատմելու (գրավոր) համար գործ է ածված գրույցն բառը. Հնեք իրեն հորենացու պատ-
մագրելու համար գրույցեցաք (Բ. Հն.), քղուցեցեք (Գ, ա), իսկ Բ, Զգ. բերանացի պատ-
մելու համար գրույցնորոշ։

³ Յեքբէր, Հայի. աշխատ., հր. 127, ծան. 2։

Մեր քննությունից երևում է, որ հիմնական շկա մի ընդհանուր վերնագրի տակ սՀայոց հին վեպերիս կամ սՎեպիս և կամ սՀին հայոց ազգային երգերիս, Գրողիս երգերիս և ոչ ժողովրդական զրույցների մասին խոսելու, այլ միայն առաջվելների մասին, որոնց մեջ, ըստ հորինացու, որոշ առասպելներ կոչվում են վիպապոեմ կամ երգ վիպապոեմաց:

Պ. Խալաթյանը ցանկանում է, որ հորինացին սերգը վիպասանաց խոսքն առած լինի Ծփրեմ հուրին Աստու Զորը. թագ. մեկնություն մի կտորից, որի մեջ հիշվում են սերգը վիպասանաց և սվիպասան երգը¹ և ոչ միայն այդքան, այլ հորինացու «ազգային» այդ տեղը ըույց տալուց հետո, ավելացնում է թե. այդ բառերն՝ «ինձ համար դոնե պարզ է, որ ընդհանրապես որևէ բանաստեղծական երգի նշանակություն ունին, մինչդեռ Մովսեսը մասնավորում է (специализирует) վերջին ասացվածը [երգ վիպասանաց], տալով ևս որ հայ առաջոցների պատրաստի քերթվածների (поэма), Հայկի, Տիգրանի, Արտաշեսի և ուրիշների քաջագործությունները երգող հայոց եղանակավոր վեպի (композированного армянского эпоса) իմաստ»²:

Թե այդ լուկ ենթադրությունը սխալ է և հորինացին իրենից չէ հայ ժողովրդական երգերին ու զրույցներին սերգը վիպասանաց, ինչպես և առասպելն անուր տալիս, այլ հենց այդպես էլ կոչվել են, այդ երևում է Փավստոս Բյուզանդի պատմությունից, որի մեջ (երրորդ դար, գլ. ԺԳ) հիշվում է. «Ենդերեալ մաշէին [խառնաճաղանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարաց կամ շինականութեանց] լանուղղայ կրթութիւն ընդ լեռնոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտոս ունելով: Եւ դիւրեանց (= զՀայոց) երգս առատելիաց զվիպապոեմութեան սիրեցեալս ի փոյթ կրթութեանցն, և նմին հաստացեալս, և ի նոյն հասակազորդեալս: Փավստոսի այս կտորից իմացվում է, որ հայոց հին հեթանոսական երգերը կոչվում էին սերգը առասպելաց, սերգը վիպասանութեան: Սվիպասանութիւն և սվիպասանաց բառերի համանիշ լինելը հետո կոնսոնանց: Այստեղ նկատենք, որ Բյուզանդի այս հատվածը մյուս կողմից ճշտում է և այն, որ հորինացին իրենից չէ վիպասանաց երգերին նաև առասպելն, սերգն յառասպելոն ևս. կոչումը տալիս, այլ որ հենց ժողովրդի մեջ սվիպասանաց կոչվել են և առասպելաց:

Կալով պ. Խալաթյանի մյուս ասածներին, պետք է նկատել, որ նա ուղղակի հեղաթուրում է հորինացու պատմությունը: հորինացին Հայկի մասին, որինքան, ոչ երգ, և ոչ առասպել, և ոչ ժողովրդական զրույց է հիշում, ո՛ր մնաց թե նորա քաջագործությունները երգվելին սՀայոց եղանակավոր վեպիս մեջ: Բայց մի՞թե այսպիսի սվեպ հիշում է ուրեք հորինացին:

Թե հայոց մեջ երգերը որևէ գործիքի նվագակցությամբ կարող էին երգվել, ի՞նչ տարբերակ ըստ կա այդտեղ, քանի որ ամեն նախնական ազգերի մեջ իսկ երգվում և միանգամայն նվագվում է: Ինչո՞ւ մեր աշուղները, մեր ժողովրդական երգիչները սազի, թառի կամ այլ գործիքի նվագակցությամբ պիտի երգեն այժմ, իսկ հին ժամանակ այդ պիտի լիներ: Բարձրունք բառը, որի վարիանտներն են «փանդիոն», «բանդիոն», հորինացու մեջ, սակայն, ոչ թե սվեպիս հետ է դրած, այլ մի տեղ սցցոց և պարուց երգերի հետ (Ա, զ), որ հայոց վիպասանի հետ կապ չունին. երկրորդ անգամ հիշում է թե Տիգրանի մասին բրամբուս երգում էին (Ա, իգ), իսկ երրորդ անգամ հիշում է թե Վահագնի

¹ Տճ՝ սեր բառ. Հայկ. լեզուի:

² Халат., Арм. эпос, Էր. 195.

մասին առասպելը բամբուռամբ երգում էին (Ա, լա), Իսկ մյուս առասպելները բամբուռամբ երգվելու մասին և ոչ մի խոսք։ Այստեղից եզրակացնել, թե Խորենացին ասում է, թե Հայոց սեփազանքը վեհա է եղել Հայկի, Տիգրանի, Արտաշեսի և ուրիշների մասին, իմա՝ Հայոց բոլոր առասպելները միասին առած (1)։ Բայց նախքան այդ պետք էր ցույց տալ, թե Հայոց բոլոր առասպելները երգվել են, այն էլ բամբուռան նվագակցությամբ, և ոչ թե պատմվել։ Թե անոնք մի կապակցությամբ ողջություն են կազմել,—այն՝ որ Խորենացին ոչ մի տեղ չէ ասած։

Արժեք լուծի և պ. Խալաթյանի ասածը, թե Խորենացին մասնավորում է սերգը միասնական և իբրև սոնետիկական տերմին է գործածում, քանի որ այդ մասին ևս ոչ մի հիմունք չէ բերված։

Ասկայն եթե այդ բարդ Հայոց մեջ նույնիսկ իբրև տեքնիկական տերմին լիներ, այդ դեռևս արգելք չէր կարող լինել, որ Հայ թարգմանիչներն օտար ազգերի նման երգերը Հայոց երգերին հասուկ անուններով կոչեն։ Բավական է միայն ուշադրություն դարձնենք, թե ի՞նչպես Հայ թարգմանիչներն օտար աստվածություններն ու հսկաներն Աստվածաշնչի մեջ Հայկ, Վահագն, Անգեղ եւն. Հայ աստվածների կամ հսկաների համապատասխան են դնում։ Այդպես կարող էր և Եփրեմ Խուրին Ասորդու գրվածքի մի թարգմանիչ Հայոց սլոգանաբան բառով կոչել ուրիշ ազգերի երգերը։

Բ

ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԵՋ

(Բառ, բանբ. երգ բանիցն։ երգաբանբ. բանաւոբ. Բառ բ. երգացն։
Ի բանուն՝ ուր զանազն։ Բառ Ի նմանէ)։

Մի քանի ըստ ըստ քմահանույս բացատրելով էմին և ապա ուրիշների հետ և պ. Խալաթյան (սա, իհարկե, որպեսզի հետո հերքե և Խորենացու կեղծիքը ցույց տա), կամ ժողովրդական ու պատմական երգեր են ուղղում տեսնել այնտեղ, ուր Խորենացին այդ չէ ասում, կամ «Վեպի» ընդարձակությունն ու ամբողջությունը, կամ թե, ընդհակառակն, «Վեպի» արվեստականությունը ցույց տալ։

Այդպիսի բառերից է բան(բ), որ մի քանի նշանակություն ունի. նախ իբրև իմաստ, խելք, բանակաւորութիւն, որի օրինակներ կարելի է գտնել Ա գրքի ա գլխի մեջ հինգ. «Վասն բանին... մեք պատկեր Աստուծոյ» եւն. ապա իբրև լեզու, օրինակ. «Եւդուսի յոյն բան» (Ա, Բ), որ և նույն գլխի մեջ Եի յոյն լեզու փոխարկել, փոխել, և այնուհետև իբրև խոսք, գրաւոր թե բերանացի, այլև ընդարձակ ասմամբ՝ ասելիք, տառ բան, որն էլ պատմվածք, պատմութիւն։ Մեզ համար կարևորն այս վերջին իմաստով գործածությունն է, որը շատ սովորական է Խորենացու մեջ. «Յագագո մերոյ յիսկզբանէ յայսմ բանից» (—խոսք, պատմութիւն)։ «Տարուտք և իշխանք աշխարհիս Հայոց ոչ... հրամայեցին կարգել զյիշատակս բանից» (Ա, ա, Ժգ)։ «Յայսպիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից»։ «Ջվասն Նոցա կշտամբութեան յարմարել զաւնո» (Ա, գ) (խոսքեր)։ «Շարածս բանից»։ «Ոչ բանի ինչ աստուածայնոյ եղելոյ» (Ա, դ)։ «Աստուածայինքն ի նազ գայցնն պատմութիւնք բանից» (Ա, գ)։ «Ջոյգ հոգեդրացն բարբառին բանից» (Ա, դ)։ «Ըստ

առաջադիմաց առաջապելը, որի մեջ Խորենացու հետ և մենք ոչինչ պատմական (historique) տեսնել չենք կարող, որպեսզի այդ առաջադիմաց պատմական հրգե անվանենք միայն անոր համար, որ Խորենացին թերզ րանիցն է կոչած այդ առաջադիմաց Մոսացվում է, որ եթե Խորենացու լեզվի մեջ նշանակում է պատմություն, այդ պատմությունն իր նեղ իմաստով միայն, իրեն հիշատակի արժանի գործերի ու անձերի, կատարված իրողությունների պատմություն միայն չէ անվում, այլ, ընդարձակ արժանով, իրեն ընդհանրապես որևէ պատմական, լինի հավաստի պատմություն, թե սուտ, շինծու պատմություն, մի հեծիաթ, որ յուր մեջ ոչինչ պատմական կարող չէ ունենալ։ Այսպես Ա, իր, թմանցի ասելն ոմանց անհասարակ մարդոց, ըստ յոթադրությունն և ոչ ըստ ճշմարտությանն, ի Հայկայ զմարդոցի արգոյ լինել Բագրատունեաց՝ Վասն որոյ ասեմ. մի՞ այսպիսեաց յիմար բանից հասանիր. զի և ոչ մի շաւիղ կամ ցուցումն զոյ նմանությանն յասացնալով՝ որ զարգարութիւն անկարելի, զի ի րայ բանից և անոճ իմն յարգես Հայկայ և նմանեացն հակադէմ։ Այսպես և հենց պարսից թիծուկ, անճոռնի, սուտ առաջադիմացն կոչվում են ժայռամար և անոճ բանից, թանձիր և անհանճար բանից յարմարանք (և գրքի հավելված)։ Հմտ. նույն տեղում... ճշատութիւն մեր առաջադիմի բանն։

Արդ, ինչ իմաստով որ այստեղ պարսից առաջադիմանքի համար գործ է անած բան, բանի բար, որ երբեք պատմությունն, իրեն եղելութիւնն պատմական չէ նշանակում, նույն իմաստով գործածված է բանի և Տորթի մասին երգվածի կամ առաջադիմաց համար, որ և հենց պարսից առաջադիմանքի հետ ճամբմատով և նույն կամ նման անակաճանքով որոշած. «Ստեմ և հայարգես նորա անյալ և փծուն. որպէս պարսիկք... քանզի կարի իմն անյարմար թուէին նմա երգ քանիցն...»

Այսպես երգ բանիցն նշանակում է (առաջադիմական) պատմական երգ, կամ մի երգ, որի մեջ որևէ բան է պատմվում։

Որպեսզի բանալու է պ. Յետա ք նույն հիման վրա հասկանում է նույնպես պատմական երգերն։ Սակայն այդ ևս անհիշող է։ Նա յուր ասածը հաստատելու համար ոչ մի ուրիշ հիմունք չէ բերում, բայց եթե այն՝ որ բանի պատմություն է նշանակում։ Սակայն այդ քիչ է։ Բանավոր բարդ պատմական-ի իմաստով Խորենացու մեջ ոչ մի տեղ, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մեջ, գտնել որքան բառարաններ վկայում են, գործածված մեզ հայտնի չէ։ Բանալու այստեղ, ինչպես սովորաբար, նշանակում է թրանական, իմացական, մտավոր, մտային, այսինքն թրանականութիւնն, թիմաստութիւնն վերաբերյալ, ինչպես համար գործ է անում Նիսիկը՝

«Բանալու և թրանականութիւնն բառերը մտաւոր և թիմաստութիւնն բառերի հետ միասին համար կրկնվում են իրեն համանիշ. Վասն իմաստութեանն, բանալուութեանն,.... զկենդանական շունչն իմաստակիր մտաւորութեանն։ Տեղիք մտաւոր և բանալուք (Ագաթ.)։ Այլ ոմն իմաստասէր և բանալուք (Վրդ. հր.)։ Ուր ամենայն զնայուն կենդանութիւն մտաւոր և բանալուք ունիք (Նիսիկ, եր. 158, 159) Խորենացին թերզարանք բանալուք գործ է

¹ Յեքեր, Հայկ. աշխատ., եր. 130, ծան. 1։

² Վենեկի աղ., եր. 97, 161, 163, 165, 170 և 16։ Անթուր, եր. 143։

³ Տե՛ս նոր բառ. հայկ. լեզուի։

ածած մի տեղ միայն¹ այն գլխի մեջ (Ա, գ), ուր հատկապես խոսում է պաղաղա անխնայության և քաղաքացիական պատերազմի մասին, որ ասում է... Եկե՛ք հեռանա՛նք մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոցն առաջնոցն առ ի յիմաստն աղաւթութիւն, և անկաւարութիւն ողոյն քանականիւ, որովհետեւ մինչդեռ այլոց թագաւորներն իրենց ժամանակի պատմութիւնը գրել են տվել,—որով և, ինչպես (Ա, ա) գրում է Սահակ Բագրատունի, պատմութիւն գրելու այդպիսի սեղանների մտածութեամբ զխոհականութեան վառ և բորբոք պահելով զկայծակն, դարդարել են զքանն (քանականութիւնը, հմմտ. առաքինութիւն քանականին է խոհականութիւն)։— Իսկ մերոնք հայոց պատմութիւն գրել չեն տվել. պատճառն այն չէ, որում է խորհնացին, որ հայոց մեջ գիր ու գրութիւն չէ եղել, այլ ինձ թոյի որպէս այժմ՝ և առ հիշման Հայաստանեաց լեալ անցիւրելութիւն իմաստութեան և, երգաբանաց բանատաղաց։ Վասն որոյ անելորդ է մեզ և այլ յաղագս անբանից արանց բույսմտաց վայրենեաց ճառել։

Մտածութեան այսպիսի հղանակի մեջ,—ուր մի կողմում է՝ ոգի քանական, իմաստութիւն, դարդարել պրանն, խոհականութեան, որ նույն է, քանականութեան կայծակը վառ պահել (պատմութիւն գրել տալով), իսկ մյուս կողմում է անխնայութեան բարք, անխորհրդութիւն իմաստութեան, և հրգարանաց քանատաղաց, առ ի յիմաստն աղաւթութիւն, անկաւարութիւն ողոյն քանականի, անքանութիւն, թուամտութիւն, վայրենութիւն,—երգարանց բանատաղաց մեջ բանավոր բառը երբեք պատմական կարող չէ նշանակել, այլ միայն քանական, մտացի, իմաստուն, ինչպես սովորաբար նշանակում է՝ և բերգեբանց քանատաղաց ոչ թե պատմական երգեր, կամ chants traditionnels, այլ միայն chants rationnels, verstandige Gesänge.

Անշուշտ անհավանական կթվի՝ որ երգերի այդպիսի տեսակ լինի Սակայն քանն էլ հենց այն է, որ բերգարանց քանատաղաց ասացվածի մեջ երգերի մի առանձին տեսակ պիտք չէ որոնել, ինչպես անում են, այլ միայն ոգեւոր է ջանալ հասկանալ, թե ի՞նչ է ուզում խորհնացին արտահայտել այդ բառով։ Հիշենք միայն թե ի՞նչպես խորհնացին պարսից առասպելները ստուտ, փծուն, անհոգին, անյարմար և անոճ բանք, անմիտ և անհանձար քանից յարմարանք, այլ և երկու անգամ բանալնութիւն և մի անգամ բանալնութիւն է անվանում (Ա գրքի Հավելված) և արարանքունք (Բ, Հ)։ Եվ եթե ի նկատի ունենանք, որ Երեւանացած հայոց առասպելները հունական կրթութիւն ստացած խորհնացու համար, իրենց ձեռք եթե ավելի անիմաստ չլինեին, ավելի իմաստուն էլ չլին լինի, և որ հենց խորհնացին ճորգի մասին առասպելը նույն ածականներով է կոչում, ինչ որ պարսից առասպելները, Բագրատունւյաց ծագման մասին զորւյցը Երեւան, բայց բանք անոճ, իսկ Արծրունւյաց մասին առասպելը Երազադանք (Բ, է) է կոչում,—այն ժամանակ հասկանալի կլինի թե բերգարանց քանատաղաց անելով ի՞նչ է հասկանում.—Նրգեր, որոնք պարսից առասպելների պէս անհոգին, փծուն, անհանձար (անիմաստ), անմիտ, անբան, անանոճ չլինեին, այլ բանալն, այսինքն իմաստալից, մտացի, սոհոգի, պարզ և ողորկ, մի խոսքով ինչպես հունաց առասպելները։

Այսպես, փոխանակ քառի հատուկ նշանակութիւնը վերցնելու և ջանալու հասկանալ հեղինակի միտքը, ի նկատի ունենալով հեղինակի հայացքն աւ-

¹ 2. Մտնիւնի խոր. պատմ. թուրք. մեջ եր. 335. Իսկ. 14 հիշում է իբր այդ բան երկու անգամ է գործածված. երկրորդ անգամ Բ գրքի և գլխի մեջ, ուր առկայն այդ բառը չկա։

բողջապահ, ընդունալն տեղը քառերի նոր նշանակութիւններ են ստեղծում, իրենց ուղած քանը պատմագրին վերագրելով:

Սուլայիսի ընդունալն բացատրութիւն է և շերտերանք բանաւորք քրեանացի երգարաններ թարգմանելը, ինչպես արել է Հ. Ատեփանե, Հեռեկով էմինին, և մինչև անգամ բնութագրել է այդ քրեանացի երգերը, թե ապարդ ընական և ըստ նրուայթի բարոյական երգեր էին, առանց ալլաբանութիւն¹, ի՞նչ Հիման վրա Ո՛րտեղից այդ նկարագիրը:

Թե Հին Հայոց մեջ քրեանացի երգեր եղել են և ոչ թե աստիճանութիւնն է եղել այդպիսի երգերի, այլ, ընդհանրական, այդ Հեթանոսական երգերը նույնիսկ շատ սիրելի են եղել, շահանապարդեալ և զեղքերնալ մաշեկով երգվել են քրիստոնեութիւն ժամանակ անգամ, քաղաքացի խուճադուժ միտս ունեւողն (Համտ. Խորենացու ժամանակ, թուլսմիտ, վայրենի և ինքնաբերական, — այդ գիտենք Քաղաքացի, վերնում բերած կտորի մեջ: Նույն Հիշում է և Նիշիան. Շահանապարդ առատացող (Վասակ) զոռեկան տաճարին, և յերկարէր զնաւագոն Կարախութեան, մաշեկով զեղքայնութիւն գիշերացն, յերգս արեւելութեան և ի կաքտալ լիտութեան քաղաքացիացեալն ոմանց ըզկարգս երաժշտական և զերգս հեթանոսական²:

Քրեանացի երգեր թարգմտողները մոռանում են, որ Խորենացին շէր կարող ասել, թե քրեանացի երգեր չեն սիրել Հայերը, այն էլ շէրենքն Լալապանեաց, որոնց համար մի տեղ (Ա, դ) գրում է. «Առաւել լաւախաղոյն... ի նուագս քաճառան և յերգս ցցոց և պարոց զայսոսիկ ասեն յիշատակոց, իսկ Ա, ի՞նչ զձորմէ ասէին ի Հինսն մեր, որք քաճառամբն երգէին, և որոնց քրեանացի երգերն և առասպելներն այնքան անգամ Հիշում է նա, և այն՝ որ յուր ժամանակ իսկ այդ Հեթանոսական Հին առասպելները կամ վիպասանք պատմութիւն ի Գողթան (Ք, խթ) կամ զգոր պոմեցին Խաղաղութիւն, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինաւէտ դաւառին Գողթան (Ա, լ), կամ թե ինքն յուր ականգով լսել է (Ա, լա) և այլն:

Իսկպան Ա գրքի գ գլխի մեջ Խորենացու գանգաւոր ոչ թե քրեանացի երգեր լինելու մասին է, այլ իմաստալից, ոչ փոռն, մի խոսքով քրեանացի երգեր լինելու և սիրած լինելու մասին, և հատկապես — մի քան, որ ուշադրութիւնից փախցնում են — քրեմ, գրի տառն երգեր լինելու մասին: Այս երևում է թե այդ գլխի ընդհանուր բովանդակութիւնից և թե շերտերանք, երգերի մատուց, և ոչ թե շերտքն քաղաքացի գործածելուց:

Բռնէ քառին ոմանք երգ քառի իմաստն են. ալլա, որպեսզի կարողանան այդպիսով երգականել թե Արալի և Շամիրամի մասին երգեր են եղել: Այսպես «Առ ի յոյժ ցանկականի մոլեգնութեան, ի բռնոն ուր զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամիրամի վառեալ էր» (Ա, ժն) հատկապէս թարգմանում է պ. Խալաթիան ըստ էմինի. «Եւր ցանկական անմոլութիւն մեջ Շամիրամ, ինչպիսի (երգվում է) նորա [Շամիրամի] մտքին ներք մեջ, վառվում էր Արալի համար ցանկութեամբ»³: Այսպես հասկանալու համար ստեղծել հարկաւոր էր, որ բնագործ մեջ լինել շերտքն ի քանն որ զնմանէ, և քանի որ որպիսի ըզկարգս, ուստի և վիպար ի քանն որպէս ի տեսութիւն կարող չէ նշանակել «Ինչպիսի երգվում է ներք մեջ», այն էլ ներք զլիպատառով, իբրեւ մի հատուկ, որոշ, հանրածանոթ երգի մեջ: Այս հատկանքն ալլալի ճիշտ է հասկացել Հ.

¹ «Խորեն. Պատմ. թարգմ., եր. 385, ծան. 14:

² Նիշի, Ե Էջմեց, Տփլիս, 1879, եր. 90:

³ Մատթ., Արմ. ճոգ, եր. 127:

Ստեփաննեն, որ թարգմանել է. «Առաջի մառիկն երգեր լսելիս այնպես էր մտա-
վում... Սույն ձևով հասկանում է և շնորհ. Միաբան Գ. Տեր-Մկրտչյան», որ
իրեն ծանոթություն դնում է. «Այս կետում գրեթե ըստ թարգմանիչները լին
հասկանում արանքս բառի հոսանքն նշանակությունը, որ է երգ: Սակայն սո-
քա ամենքն էլ, ինչպես և հենց ինքը շնորհ. Միաբանը, իրենց առաջնորդ
ունին էմիլին, որ «Մ. Խորենացին» և հայոց հին վեպերը գովածքի մեջ
(թարգմ., էր. 12—13, 53) Արալի մասին բերանքը նույնացնում է Ներգի հետ,
այսինքն յուր երևակայած մի ամբողջություն կազմող ընդարձակ Երգի հետ
(ուստի և զխատառով երգ): Ամենքն էլ ոչ մի հիմունք չեն բերում թե ինչու
բերանքս պետք է երգ կամ Երգ հասկանալ, Են. Միաբանը միայն իբրև հի-
մունք գրում է, լուկ խոսքով պատճառաբանելով թե Խորենացին տեխնի-
զործ է դնում բերանքս կամ Բերանք, Բերանք երգոց, Բերգ բանիցն ասացված-
ները երգի իմաստովն, առանց կուլումն անելու, սակայն, թե ո՞րտեղ է այդ
առնախիթ գործածությունը:

Մենք տեսանք Բերանք և Բերգ բանիցն ո՞րտեղ և ի՞նչ ձևով են գործած-
վում և ինչ են նշանակում, իսկ Բերանք երգոցն Խորենացին մի տեղ միայն
(Ա, 1) գործածած է «Թուեղեացն երգք... յորս շառիբ բանք երգոցն զԱրտաշեսի
և զԵրզնայի նորան: Մի՞թե այստեղից միայն կարելի է եզրակացնել թե Բերանք»
բառի սկզբնական նշանակությունն է երգ: Բերանքս այստեղ ևս յուր սովորական
սխոսքն (պատմվածք) նշանակությունն ունի, որ և երևում է շարին բանքն
ասացվածից, որ հորինվածքի շարարարանությունն է ցույց տալիս Երա-
բանություն կարող է լինել մի երգի համար և մի ամբողջ պատմության հա-
մար: Այդպես Ա, 4 պատմության համար գրում է «շառածն բանից», որ Գ.
Ստեփաննեն շարարարություններ է թարգմանում: Պատմության համար Ա, 4
գլխի մեջ գործ է ածում և «շարագրել» բառը, իսկ Ա գրքի երկրորդ հավել-
վածի մեջ. «Երրորդ ատենք զԲերանք... այսօր ձեռամբ իմով շառագրեմ զայ-
նոսին» (= շարագրեմ, շարեմ զբանս նոցա): Նույն տեղում քիչ ներքև. «Երևի
դատեղությունն մեր առ այսպիսի բան, զի ոչ յառաջինս մեր ասացնալ դիտո,
և ոչ ի վերջին բանս արժանատիցաք շարել» (զայն. բան): Բարձրում ինչ...
պատմի ի մատենին, այլ մեք որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է (բանք,
պատմություն), շարեցուցն» (Ա, Ժբ):

Արդ շարել բանն միևնույն թե շարագրել բան, կամ մի բառով շարարա-
նել: Այսպես և... «Երրոս շարին բանք երգոցն զԱրտաշեսի մեկնույն թե Երրոս
շարարանին երգք զԱրտաշեսի», կամ բառացի, ինչպես Գ. Ստեփաննեն, նը-
ման էմիլին, թարգմանել է «նոցա մեջ շարված են Արտաշեսի և նորա որդի-
ների մասին եղած երգերի խոսքեր», կամ մի փոքր ազատ, «նոցա մեջ շար-
ված են Արտաշեսի և նորա որդոց մասին երգված պատմություններ»:

Բունք բառը ոչ մի տեղ Խորենացու մեջ Բերգի իմաստով անխտիրս գոր-
ծածովն չտեսնելով, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մեջ, զոնե որքան վը-
կայում են բառարանները, ոչ մի հիմք էլ չենք գտնում «Ի Բերանք» որ զեմանէ
հասկանալու Արալի մասին երգերն և ոչ թե պատմածներ: Թե մեր հասկա-
ցածը ճիշտ է, այդ երևում է և Ա գրքի լա գլխից, ուր Բերանքս բառը, նույն
զեմանէն խնդրով հավատարմով պատմության և ոչ թե երգի իմաստով է
գործածած. «Հաստատի պատմել զբուն և զառաջին Տիգրանն, և որ ինչ ի նը-
մանէ գործք, սիրելի՜ որպէս ինձ պատմողին ի մէջ իմոց բանիցս, որ ինչ
յաղաղս Երուսաղեմանս Տիգրանայ բանք, եղիցի և քեզ ընթերցողիդ. որպէս

՝ Բերանք<առնա> Պատմ<ություն> Խորենացու, էր. 88:

այրն և գործք, աշայէս և զնվաճել քանի: Եւ լզիտանք թե Շամիրամն ինչոս անպատեհաւ Արայի մասին տերզվածքն պետք է լսեմ յաւերջին ցանկութեամբ վատվելու համար, քանի որ նա Արայի մասին պատմվածքը, խոսվածն էլ կամ, ինչպէս հինց ժողովրդի մեջ գործ է ածվում ցայսօր, թրանքն էլ կարող էր լսել և վատվել: Ուստի շնորհ. Միաբանն իզուր է գրում այդ մասին թե պատեհ և կատար, որ այս տեսակ, առանց տեսնելու, այլ միայն գտնաբերական գուռանական երգեր լսելով սիրահարվելը հասուկ է բուն ժողովրդական վնասին: Այսպէս է սիրահարվում, օրինակի համար, Դավիթը Խանզուի Խաթունին: — Շատ ճիշտ է, բայց և այնպէս այդտեղից նորակացնել թե Ռուստի և մենք կատարյալ իրավունք ունինք հետեցնելու, որ այս գլուխը [Շամիրամի և Արայի մասին] գրված է վիպական երգի հիման վերան, և թե թրանքն նշանակում է «երգ», յերոտովին տեալ և կամայական է: Եթե գտնաբերական երգ լսելով միայն սիրահարվելը հասուկ է ժողովրդական վնասին, ոչ պակաս հասուկ է անոր մեկին և լուկ գտնել տեսնել երգի, մեկին մասին պատմութեանը լսելով սիրահարվելը: Մեր արդի ժողովրդական վնասի մեջ աղբիւր Խանզուի Դավիթի, Պղնձե քաղաքի Թագապետի աղբիւր Բաղդասարի համարվել լսելով են սիրահարվում Դավիթին, կամ թե, Բաղդասարին: Այսպէս և Շահնամայի մեջ, որ Նիքողուսին անշուշտ ժողովրդականից է առած, զեղեցկուհի Թեհմինն Ռուստամի մասին պատմութեանը լսելով սիրահարվում է Ռուստամին.

Երայց շատ անգամ ես (Թեհմինն) լսեի նմ
 շատ շատերի թերանից
 Ինկն պատմած զբայցներք քս (Ռուստամի)
 Հրաշայի գործերից,
 Որ դու ցնեց, ոչ առաժից, ոչ նհանգից,
 ոչ ջնքից
 Տես վախճանում եմ...
 Քս այդ զբայցն երբ պատմել եմ և ես այդ
 լսեի.
 Ամեն անգամ յրթունքս կնի—հենց նմ
 սարսել զարմացել
 Պարում էի քս այդ լսելի ու պարանայ և
 քաղաքներ...
 Այժմ ես ցանք եմ, եթե ինձ դու կամենաս
 քս որում...
 Առաջինը որ ես այսպէս ցանք շատ կարտա
 նմ ցողից,
 Եւ քան համար լսելիս զլսելից նեղել՝ Լամու
 եմ տնի...²

Երկրորդ տեղը, ուր թրանքն երգ են թարգմանում, դա Շամիրամի մահվան մասին հատվածի մեր լսածն է. «Եւ քան ի նվաճել՝ Ուլուսն Շամիրամայի ի ծովա: (Ա, Ժր): Պ. Խալաթյան³ թարգմանում է (ըստ էմինի). И Песнь про

¹ Հմմտ. Մովսէսյան, Մոսանա, էր. 125. «Մարե, սա Կորեթի (այս կողմերը՝ ժր անան է նգնի) պատմութեանը ըրե. ես պիտի գրեմ, քարեկամ ալ մտնի կրննի—Կորեթ մեր գրկիցն տննի էր. գոսկո (աւազանի) իննց տուն, ինքը քայլերը (վնասեր) շատ են. վի՛ր միտ կուգա... Որտեղ հանք. Սրվանդանը շատ ճիշտ լսեմն է քվնպա քանը համանից թրանքս քանին, իսկ ժողովրդական քայլն ձեռն է քան, Կորեթանկ քան(է) ձեռի, ինչպէս որ է նայի քանի ուրիշ քարտաների մեջ. Հմմտ. զոհք, —պախո (տղաւո), պատ, քանայից, քալանի, քայլին (հր. ճի) քանից, տանիս, տնիս և նման ձեռքը, որոնց ուղղութեամբ Հոյակի մեջ է-ի անգամ Իսկ շն մասն է քայլն քանի մեջ տ-ի և Ե-ի տեղական արտասանութեան պատճառով:

² Խալաթի, Թատում և Սահար, թարգմ. Ս. Գյուլզարյանց, Երեւն, 1898, էր. 54:

³ Халат., Арм. эпос, էր. 141:

1100... «Եւ երգը նորա (Շամիրամի) վրայ»... որի սխալ լինելը ուղղում է Հ. Ստեփաննեան թարգմանելով. «Եվ նորանից (Շամիրամից) առած երգը», առարկելով թե քնազորի մեջ շքան ի նմանէ (ի Շամիրամայ ասացեալ) է ոչ թե շքան զնմանէ¹, որով ենթադրել է տրվում թե իբր թե Հայաստանում կար մի երգ, որ սկսվում էր այսպես. «Ուրեմն Շամիրամայ ի ծով»²։ Սակայն Հ. Ստեփաննեան մոռանում է, որ շքանը բառը, որ առաջին տալանդաբանի մեջ խոսքն է թարգմանել, նրկորդ տալանդաբանի մեջ, անշուշտ, չնորհ. Միաբանի անհիմն նկատողության ազդեցության տակ³, «երգը դարձնելով, ինքն այդ նկատողությամբ սոսկ մի՛ բառախաղ է անում, քանի որ նորա թարգմանությունը էլ ենթադրվում է, թե Շամիրամի մասին մի երգ կար, միայն ոչ ուրիշներին լեզվից ասած, այլ Շամիրամի քերականը դրած»։

Թե այդպիսի երգ եղել է՝ կարելի չէ, հարկավ, մականերն էլ շքանը բառին ըստ քմահաճության տված մի մեկնությունից միայն։ Ուստի և շքանը բառի իմաստը պահելով, պետք է շքան ի նմանէ» թարգմանել Վերա (ասած) խոսքը, նվճարի լվա, որ Ուրուք Շամիրամայ ի ծով նույնպես անպատճառ երգ եղած լինի, կամ մի երգի առաջին տողը⁴, քանի որ դա կարող է և մի ասած շքան, մի տեսակ առակավոր խոսք լինել, որ իբր Շամիրամ ասել է։ Ոչինչ չէ ասացուցանում այն, թե «մեռնելուց առաջ, կամ մինչև իսկ մեռնելուց հետո, դուցազների երգը, որի մեջ ողբացվում է անցյալ զորությունն ու փառքը, շատ սովորական է ժողովրդական վեպում»⁵։ Մոռացվում է, որ ավելի ևս սովորական է դուցազների խոսքում մեռնելը. օրինակ, Դավիթ, Ռոստամ, Ռուսանդ խոսքում են մեռնում։ Եվ մեռնող մարդից վերջին խոսքը շատ անգամ հիշվում է հետագայում, երբ նոցա պատմությունն են անում⁶։

(Ասել։ Վիպասառեք։ Երգվ վիպասառեց։ Ի քիւ տսել։ Թուկ։ Թուկեացն երգ)։

Մի անգամ որ ասել րայն էմինը հավասարել է երգի րային, էլ այնուհետև նորեննացու մեջ ասել անդի-անտեղի «երգել» կամ թե «պատմել, ասել» են թարգմանում ըստ քմահաճության, եթե ուղում են երգ դուրս բերել՝ երգել, թե՛ չէ՛ ասել։ Օրինակ, պ. Խալաթյանն ըստ էմինի՝ Վահագնի մասին զգործէ ասեն առաջինը» թարգմանում է. «սորա մասին լեզենդան ասում է (ГЛАГОЛЮ)», իսկ մի փոքր ներքին կտորը առաջին զատ և աստուածացեալ» թարգ-

¹ Հմմտ. «Ջեմանէ րանը (Ա, լս), որ Հ. Ստեփաննեան թարգմանում է «նորա պատմությունը. հմմտ. «Ի բանե ար զնմանէ» (Ա, մե), որ Հ. Ստեփաննեան թարգմանում է. «նորա մասին երգիր»։ Ի՞նչ հետևանքաբանությամբ։

² «Երգ. Պատմ. թարգմ.», հր. 372, ծան. 110։

³ «Երգ. Պատմ. ասումն», հր. 71, ծան. 1։

⁴ Ներքե, Հայկ. աշխատ., հր. 123։

⁵ Միքաել, Երգ. պատմ. ուսումն., հր. 71։

⁶ Փ. Բալասանի մեջ (ն. դար., ր գլ.) կարգում ենք, որ Մուշեղ Մամիկոնյանը Պարսից Տապալե թագավորի կանանցը, որոնց լուր ձեռք գերի էին ընկել, պատվովոր կերպով արձակում է։ Պարսից թագավորը պարմում է նորա այդ վեպանն ուրախք վրա. «Եւ ի ք մասնակին յայնմիկ երկվորն Մուշեղի ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից... ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմական, եւ ի ժամ օգրախութեանն իրոյ զնէր զտաշտն առաջի իւր, եւ լիշեր հանապազ զնախ քան առնելով թե ճերմակաձին գինի արբեցէ։ — Նրտկայեցեք այս պատմութիւն րոպանդակաբանը նորեննացին նույնպիսի սեղմ ռեով մեջ քերք, ինչպես Շամիրամի տառապանքն և վերջացնէր այսպես. «Եւ րան ի նմանէ (ասուցեալ) ճերմակաձին գինի արբեցէ»։ Միթե ճերմակաձին գինի արբեցէ կլինէր մի երգ և ոչ թե մի խոսք։ Այսպես և Ուրուք Շամիրամայ ի ծով մի խոսք է միայն և ոչ թե երգ։

մանեում է. «եւբզում էին եւս նորա աստվածացումը» (воспевали его бого-
фесту)

Սակայն թասնէ՛ք չէ՛ նշանակում «երգել», այլ միայն մի բան «ասել, հայտ-
նել, պատմել», ինչպէս և աշխարհարարում։ Քերէս որն է՛ մատենագրի մէջ
«ասել» ձևավոր առումով, լայնաբար ունենա «երգելու» իմաստ, բայց այդ
դեռ ապացուցւոյ չէ կարող լինել, որ ինքն իրեն վերցրած «տեմ մա հինսն մեր
նշանակէր երգել»¹, ինչպէս հայտնում է էմիլը և ասել-ին վերագրված այդ
իմաստն ապացուցելու համար բաժանեալնում է միայն գրելով. «նաև յաշ-
խարհիկ լեզուի մերում պահպանեալ տեսանի (իրեն թն դրաբարում եղած
լինելն արդեն ապացուցած է) ի սովորական բանիս լիտալ տեմ, որ է «երգ
երգել»², «եւաղ ասելու» վրա կալելուցնենք և «երգ ասել», «շարադան ասել»,
«տաղ ասել», Սակայն այդ գրիւնակներն ևս դեռ չեն հաստատում, որ «ասել»
նշանակում է «երգել»։

Էմիլը և նորան հետևողները մոռանում են, որ եթէ երգ տեմ, խաղ տեմ
էն բաղադրյալ ձևերը մի բառով ասում ենք «երգել», այդ երգելու իմաստը ոչ
թն «ասել» բայն լուր մեջ ունի, այլ երգ, տաղ, խաղ բառերից է ստանում,
Այնպէս ինչպէս, օրինակ, հորինացու մեջ գրուց(ս) տալ նշանակում է գրուցիլ,
կամ ինչպէս աշխարհարարում՝ ցուց տալ նշանակում է ցուցնել, բայց երբեք
«տալ» մենակ առած չէ նշանակում «գրուցել», կամ թն «ցուցնել», կամ ինչ-
պէս ճառ տեմ նշանակում է ճառել, Բարդ տեմ՝ Բարդիլ, բայց ոչ երբեք
«ասել» մենակ առած «քարոզել», «ճառել»,—եթէ միայն լայնաբար, ձևավոր
առումով չէ գործածված,—այսպէս և «եւաղ ասել», «երգ ասել» ասացված-
ների «ասել» բառը մենակ վերցրած կարող չէ նշանակել «երգել»։

Արդարև, մի բան կարելի է ասել ոչ միայն պատմելով, այլև երգելով.
սակայն հորինացու մեջ այնքան հաճախ է գործածվում «ասմա» բայը պատ-
մելու, հայտնելու, ասելու իմաստով, որ դժվար է կարծիլ իսկ, որ,—եթէ
միշտ անգամ ասել նշանակեր էլ «երգել»,—հորինացին մի բանի երգվելով
պատմված, ասված լինելը հայտնելու համար բավականաբար միայն տեմ
բայով։ Եվ իրոք, տեսնում ենք, որ նա մի բանի երգվելով, կամ երգի մեջ
պատմվելը հայտնելու համար միշտ գրում է. «Առէն յերգն» (Ա, լա)։ «Ե
նուգս բամբուսն և յերգս ցցոց և պարուց զայտոսիկ տեմ յիշատակօք»
(Ա, գ)։ «Ջորմէ ասէին ի հինսն մեր, որ բամբուսման երգէին» (Ա, իդ)։
«Վիպասանքն յերգին իւրեանց տեմն» (Բ, ծ)։ «Առասպելեալ երգն, այսպէս
ասելով» (Բ, ծ)։ «Ջայս կամելով երգիլ յառասպելսն, Դոմեո զոմն տեմն
եկեալ» (Բ, ծգ)։—Նույնիսկ այս բոլոր օրինակների մեջ, թնպէս և երգի մասին
է խօսքը, ասել բառը երգիլ չէ նշանակում և «երգել» բառով թարգմանել կա-
րելի չէ, այլ միայն «ասել, պատմել, հայտնել» բառերով, ինչպէս և բնականա-
բար թարգմանել է Ը. Ստեփաննի։

Մի անգամ որ ասել բայի կարծեցյալ երգիմ իմաստը դնեն ենք դնում,
ըստ ճամհանույս երգ անվանած մի քանի կտորներ հորինացու մեջ զատնում
են սոսկ պատմութիւն, պատմվածք, միանգամայն և հասկանալի է լինում
վիպառոմէ բառի իսկական նշանակութիւնը։

«Առել վէպս» չէ նշանակում «երգել վէպ», զլատմալան երգ», ինչպէս

¹ Халат., Арм. зноч., стр. 201.

² Էմիլ. Վէպս հեռք լայնաս., հր. 33.

³ Խալէ, հր. 23.

դրում է էմիլը¹, այլ միայն «պատմութիւններ ասել, անել», քանի որ, ինչպես տեսանք, «վեպ» պատմութիւն, պատմվածք է նշանակում: Ուստի և «վիպասանք» նշանակում է ոչ թե «վեպ երգողներ», կամ poètes épiques², այլ «վեպ ասողներ», այսինքն պատմութիւն անողներ, կամ, մի քառով՝ «պատմողներ»: Մյուս կողմից պետք է դիտել, որ, ինչպես ճիշտ նկատել է Ֆետերը³, վիպասան է ոչ միայն պատմողին՝ համար է գործածվում, ինչպես՝ «վիպասանքն յերգելն իրեանց ասեն» (Բ, Ժ), այլ և պատմվածքին համար..... «ի վիպասանացն, որ պատմին, ի Գողթան» (Բ, խթ):

«Վիպասանք» բարդի բառի թե՛ պատմողին և թե՛ պատմվածքին այսպիսի երկու նշանակութիւն ունենալը տարօրինակ բան չէ հայոց լեզվի մերօրինակ՝ հինց նույն կազմութիւնն ունեցող «գովասանք» բառը նշանակում է թե՛ «գովք ասող» և թե՛ «ասած գովքը, գովեստը»: Ինչպես վերջին իմաստով գործ է ածվում «գովասանութիւն» համանիշ «գովասանք» բառին, այսպես և «վիպասանութիւն» համանիշ է «վիպասանք» բառին՝ երկրորդ իմաստով առած: Երբք վիպասանաց ասացվածի մեջ «վիպասանք» բառն առաջին (պատմողի) թե՛ երկրորդ (պատմվածքի) իմաստով առնված լինի, նշանակութիւնը նույն է մնում, քայք համանական է, որ երկրորդ, այսինքն՝ պատմվածքի իմաստով լինի, քանի որ այս երկրորդ իմաստով առնված ժամանակն է համանիշ «վիպասանութիւն» բառին, իսկ երբք վիպասանաց, ինչպես տեսանք, Փափատոսի մեջ կոչվում են երբք վիպասանութեան: Սակայն այս չէ մերժում, որ առաջին՝ պատմողների երբք իմաստով էլ առնված լինի:

Այսպես, հայոց վիպասան (կամ վիպասանութիւն), ինչպես բառի կազմութիւնը ցույց է տալիս, և ինչպես Բ գրքի խթ գլխի մեջ պարզապես վերկայում է նորինացին (մի բան, որ էմիլն աչքից փախցրել է) պատմվել են: Բայց քանի որ հիշվում են և երբք վիպասանաց (վիպասանութիւն) և թե՛ վիպասան (վեպ ասողները) երգում են, ինչպես և «վիպասանաց համար շերտից» բառն է գործածվում, — ուստի պարզ է և այն, որ «վիպասանք» (վիպասանութիւն) ոչ միայն պատմվել են, այլ և մասամբ երգվել: Ինչպես և մեր արդի ժողովրդական վեպը մանրամասնորեն պատմվում է, քայք և տեղտեղ երգվում է, ինչպես և պատմելու և մեղմեղ երգելու նույն ձևն եղել է և ուրիշ ազգերի, օրինակ, գերմանացվոց մեջ ևս⁴:

«Վիպասանքին» (վիպասանութիւն) երգված մասերը ընկանորեն չափաբերական պիտ եղած լինին, իսկ պատմված մասերի համար այդ ասել ապահովապես չենք կարող, քանի որ կարող են այդ մասերն և արձակ եղած լինել: Ուստի և էմիլի սահմանումը «վեպ» բառի համար — թե՛ «վեպ հինց ոչ այլ ինչ էր, քայք եթէ փերոզական պատմութիւն չափաբերական, յորում զգործաքաջաց և թագաւորաց երգին, որ և առ արդի Նիւպայցիս Έποποιε անուամբ սովորաբար յորդորին» — ոչ միայն վեպի համար գլխովին այսալ է, այլ և «վիպասանքին» համար չէ հարմարում:

¹ Էմիլ, Վեպ հն. Հայ. եր. 99:

² Եպի. եր. 99:

³ Ֆետեր, Հայկ. աշխատ., եր. 128, ման.:

⁴ Wilhelm Grimm, Die deutsche Heldensage, Berlin, 1867, S. 381: Գերմանացից մեջ և վեպն ասելու (vortragen) համար գործ են ածվում singen (երգել) և sagen (ասել) բայերը, իսկ գլխաւորապէս վեպը, նման մեք վիպասանքին, յուր հայտնա՝ Sage, Heldensage ասել է sagen (ասել) բայից. որովհետեւ նոցա վեպերը հանգամանաբէն ասելու պատմվել են և որով մասամբ միայն երգվել:

Անդրան, «վիպասանացի» մեջ պատմութիւն է լինում, այսինքն որեւէ բան է պատմվում, բայց այդ պատմութիւնը նեղ իմաստով կարելի չէ հասկանալ, առտի սխալ է և պ. Յնտեմերի գրածը թէ «վիպասանն ինչպե՛ս և ինչպե՛ս զլիսավորաբար պատմեցին»¹, քանի որ պատմագիրն անունը կարելի չէ տալ ժողովրդի մեջ պատմութիւններ անող մարդոց: Այդպիսի ժողովրդական պատմութեանքների մեջ, անշուշտ, շատ բան պատմական է, պատմական անձերի և իրողութիւնացի շատ հիշողութիւններ են լինում, բայց ամենի շատ առասպելական, դուրացական և նուրիսկ գիցարանական է լինում անոնց մեջ, այնպես որ կարելի չէ ժողովրդական պատմութեանքը պատմութիւն և պատմութիւն՝ «պատմագիրն կոչել: Ժողովրդի այդքան միայն իսկական պատմութիւններ են այդպիսի պատմութեանքը, որոնց շատ անգամ առասպելական հերոսների մի ժամանակ իրապես ապրած լինելուն և նոցա կատարած նուրիսկ գործերական արարքներին հավատում է նա, ինչպես և տեսնում ենք նույնը մեր արդի ժողովրդական վեպի նկատմամբ:

Երբք վիպասանացն հորենացու մեջ մի տեղ (Ա, Է) կոչված են «թուեւեւացն երգք», որ էմինը (նորան հետեւելով և Հ. Ստեփանն) «ժամանակագրական երգք» է թարգմանում և մինչև իսկ, հակառակ հորենացու պարզապէս ասածին, «վիպասանաց երգերից» տարբերում է «թուեւեւաց երգերը»: Երկու էին տեսակց ազգային պատմական երգոց, յորոց ոմանք սոսկ եւզ վիպապանաց, իսկ այլ՝ եւզ թուեւեւաց կոչին: Յետինքս այսոցին՝ որպէս անուանակոչութիւն իսկ նոցին ցուցանէ, թերևս կարգի ժամանակագրութեան հետեւին, այն ինչ առաջինն երևակայութեան ևնթ գնալին զհետք: Այսպիսի տարբերումն ու բնութագրումը զուտ երևակայական է, քանի որ հորենացու մեջ «թուեւեւաց և վիպասանաց երգերը» մեջ բերած բովանդակութեամբ նույնանում են, որով և ապահովապես կարելի է ասել, որ նույն վիպասանաց երգերին մի ուրիշ կոչումն է միայն՝ «թուեւեւաց երգեր»: Էմինը նույն տեղում ժանտթութիւն մեջ գրած է. «Այդ բառ [թուեւեւաց երգ] ոչ այլ ինչ ցուցանէ, բայց նթէ գերզ «ժամանակագրական»: Բայց այդ մեկնութիւնը, ինչպես ընթերցողը կտեսնէ, լոկ խոսքով է լինում: Այդ լոկ մեկնութիւնը չէ արդարանում հորենացու թարգմանութիւն ժանտթութիւն մեջ գրածով ևս: «Թուեւեւաց» բառը «ժամանակագրութիւն» թարգմանելով էմինը յուր տեսութիւնն է միայն շատում հաստատել, «վեպի» ժամանակագրական կարգով դասավորված ընդարձակութիւնն ու ամբողջութիւնը ցույց տալ:

Մյուս կողմից պ. իսլաթիանն էլ, որպէսզի առաջ քնն յուր տեսութիւնը թէ հայոց վեպը շինովի բան է, և որպէսզի յուր հաճախ գործածած գնէք—այլաբանութիւն—ունենա, ասում է լոկ խոսքով՝ թէ ինքը հորենացին է կազմել «թուեւեւաց» բառը՝ «թուի—считатися, казаться—բայից հոգնակի թիվ բայանուն ևնով «թուեւեւաց»—кажушися—«ոչ ինչը պատմագիրը բացատրում է այլաբանութեան կողմ, որ նույն է, այնպէս իմաստով: Բայց ավագ, հորենացին ոչ մի տեղ չէ բացատրում թէ «թուեւեւաց» նշանակում է «այլաբանութիւն», և կամ «թուեւեւաց երգեր» նշանակում են «այլաբանական

¹ Յնտեմեր, Հայկ. աշխ., նր. 128, Ստեփ. Գործնաբար գերաներն բնագիրը ձեռք տակ բռնելը, որ տեսնելը թէ բնագիր մի պատմագիրն ընդ վեպով մի բան է և ինչպէս ընդ թեր, շատ անգամ և թարգմանի անգութիւններից, հաճախ նույն իմաստը չեն արտահայտում, ինչ որ աստի լեզուների մեջ կա:

² Էմին, Վեպ, Հայ., նր. 101:

³ Տե՛ս Հ. Ստեփաննի թարգմ. Մ. Խոր. Հայ. պատմ., նր. 336, ծան. 100:

⁴ Халат, Арм. зощ. кр. 107:

Երգերու: Այդ բացատրութիւնը Հենց իրեն՝ պ. հալաթյանին է, միայն հոր- նադու մօտին կապած:

Մենք քուիլիք բառը (որի սեռականն է «թուելիաց») կազմված ենք համարում ոչ թե «թուելի» (եղևալ), բայից, այլ քուիլ բայից, բայց վերջինս ոչ թե համարել (համարարել, համրել) իմաստով առատ, այլ այն իմաստով, որ ունի այդ քայի քիւ արմատը «թիւ ասել» ձևի մեջ:

Մեր նկեղեցու մեջ մաղթանքները, ինչպես և Առաքելոց Գործքի ու Քրիստոսի շնորհակցմաները, թիւ են ասում, իսկ ավետարան, մարգարեից ընթերցվածները՝ աշխարհի մաղթանքները, քարոզները՝ երբեմն երգով են, երբեմն՝ աշխարհի մաղթում, երբեմն էլ թիւով, նկեղեցական երգեր ևս որոշ տոներին թիւով են ասվում, օրինակ՝ «Լույս դուարից» Մեծ պատիւ¹։

«Ձայնելու կամ «ի ձայն ասելը», որ երբեմն իբրև հրց ասելու հետ շր-
փոթում են, մի տեսակ եղանակավոր ասելն է, որ երգելու և թթիւ ասելու
միջին տեղն է բռնում: Իսկ թիւ ասելն առանց որևէ եղանակի (հմտու. նոր
բառգ. հայկ. լեզ.) սովորական ասելն է, որքան կարելի պարզ և հասկանալի,
մտտիկ սովորական կարգալու և պատմելու ձևին: Մեր թթիւ ասելը նույն է,
ինչ որ ֆրանսիացիք recitation, réciter բառով արտահայտում են, այսինքն
անցիր արած մի ճառ, ոտանավոր կամ արձակ կտոր, իբրև սովորած դաս
ասել, արտասանել, առողանումից (déclamation) ցած, իսկ սովորական խո-
սակցութունից կամ ընթերցումից բարձր ձայնով:

«Թիւ ասելու» (reciter) այս նշանակութիւնը, որ այդ ձևն անշուշտ «թիւ» բառից է ստանում (հմտ. վերելում տաղ ասել, երգ ասել էլն, ձկերի մասին»), ինչպէս ընթերցողը կտեսնեն, նույն է, ինչ որ սովորաբար «ասել» բայով ենք միայն հայտնում: Սովորաբար շինք ասում թեաւ թիւ ասելը, զբարոց թիւ ասելը, զդաս թիւ ասելը, այլ միայն ճառ ասել, քարոզ ասել, դաս ասել, ոտանաւոր տասել, անգիր ասել և նմանները: Արդ, եթէ «ասել» և «թիւ ասել» նույն նշանակութիւնն ունին, էլ ինչո՞ւ է վերջին ձևը ստեղծվել: Շատ հասկանալի է թէ ինչո՞ւ լինելը բայը շատ ընդարձակ գործածութիւն ունի: Ասել կարելի է երգելով, թայնիւն և սովորական ասելու, պատմելու (reciter) ձևով: Ուստի և «ասել» բայով միայն, օրինակ, եթէ լինի միայն՝ «էլոյս զուարթ, սաղմոս ասել», կարելի չէ որոշ իմանալ, թէ ինչպէ՞ս պետք է ասել. «թայնիւն», «թիւ» է, «թէ» երգելով: Փանի որ «էլոյս զուարթ» ու սաղմոսները երգ են և սովորաբար երգվում են, ուստի և այդպիսի դեպքում սովորաբար երգել էլ կը հասկացվի, բայց եթէ կամենում ենք, որ սաղմոսը լերգվի, այլ թայնիւն, այսինքն շեղանակով ասվի, թայնիւն կամ թիւ ձայն» բառն ենք ավելացնում: Երգչին և հատկապէս ստեղծարկան ասելու, պատմելու ձևը հասկացնելու համար՝ ավելանում է համանիշ «թիւ» բառը և կազմում է «թիւ ասել», որ բառացի նշանակում է «թիւով, թվի ձևով ասել», որ նույն է սովորական «ասել»-պատմելու ձևով ասել:

Քիւ թառը սկզբնապէս ժառանգու, պատմիկութեւ իմաստ ունի անգուշտ է

1 Տե՛ս Տեղանշումը և, որինհմկ. 1699 թվի Նրադույնը Ս. էջմիածնի փետր. 27, 28, մարտ 8, 13, 20, 27 և՛ն որոնրի հրահանեցը. «Եւրա զտարթ թիւ աստաւ շննեն թիւ զտարթնուն որհնեա անեն իմ զտէրս: Եմարկանադն թիւ աստանցէ զարարդուն Վասն ի վնրուստ... Վասն ի դիւրեթիւս եմս: Եմեն թիւ զփռնէն և՛ն:

² Տե՛ս այն թաղեր նշանակությամբ փոփոխվածները, մեկն է և Բերդզիլու նշանակվա, որոնք և պարտականներն ութ ծածկներու ներք շմտե. թե՛ որ թաղը, հասնվ, յնդալիքս:

¹ Երբեմն առկա էր նաև մարտիկների կողմից արված հարձակումներ, որոնք հաճախ հանգում էին զոհերի մահուան, սակայն դրանք չէին հանգում զանգվածային զինվորական հեղափոխության:

«Եթ թիւ ուսանել, գիտելն ասացվածների մեջ, որ նշանակում են Երեւան ուսանել, գիտենայն»¹։ Այստեղ թթիւն բառը կարող չէ իբրեւ nombre, այսինքն քանակի իմաստով ասելու լինել, այլ միայն բառելու, պատմելու իմաստով։ Այդ ասացվածները քառացի նշանակում են թթիւ համարն, այսինքն՝ թիվ ասելու, պատմելու համար ուսանել, գիտենալ։ Ընդ որովհետեւ թթիւն ասելիս, տվորարար, սկզբնապես անշուշտ միշտ, ոչ թե կարգացվում է, այլ բերան է ասվում, ուստի և հասկանալի է թե ինչպէս թթիւն, այսինքն (թիվ) ասելու համար ուսանելը, ասացել է Երեւան անելու իմաստ։

Թիւ (— ասք, ասել) արմատից կազմվում է թուի բայը, որ կարող է նույն իմաստն ունենալ, ինչ որ Եթ թիւ ասելն։ Ընդ խորհնացին երեք տեղ այդ բայը գործ է ածում համանիշ ասել, պատմել բայերի։ Բ. կը գրում է. «Ջուր (Տիգրանի հաստատած կրտսերագույն ազգերը) ոչ անուամբ պատմեցոց...»²։ Այլ միայն զոր հաստատի գիտեմք զկնիւնն»։ Իսկ Բ, Ժ համանման զնայցում՝ նույն իմաստը նույն բառերով, միայն ի պատմելու փոխանակ թթիւն գործածակով։ «Ջուր (Արտաշեսի որդիներին) ոչ կարնոր համարեցաք այժմ անուամբ թուի, բայց զկնիւն յորժամ ի գործ ինչ հասանիցեմք»³։ Իսկ Ա, և Ժ ասելն է թթիւն բայերը միևնույն պարբերության մեջ համանման տեղում իրար փոխանակում են. «Պատմէ մեզ զայսոսիկ յոլով իրս հաւատարմին Արիստինոս, և ասէ այսպէս. Նինոս Արքեհայ, Քայաղայ, Արքեհայ, Անէեբայ, Բարեայ, Բելայ Նոյնպէս և զմերն ... թուի այսպէս. Արայն գեղեցիկ՝ Արամայ, Հարմայ, Գեղամայ, Ամասայ ևն»⁴։

Արիստինոս Բ, Ե կարդում ենք. «Փանգի կտրի իմն անյարմար թուինք նմա (Տորքին) երգ բանիցն վասն ուժեղութեանն և արտեայ լինելոյն. որում ոչ Սամսոնի և ոչ Ժրակնայ և ոչ Սաղմկին յարմարեն այս զրոյցքս։ Փանգի երգէին նմա քուռն հարկանելու...»⁵։ Խալաթյան այս կտորը թարգմանում է. «Տորքի ուժի և անվաստության մասին երգի խոսքերը (слова песни о...) այնքան անհամար էին, որ զժվարտաբայով կտրիի է վերագրել անոնք (...до того нескладны, что с трудом решимся приписать их) Սամսոնին, կամ Հերակլեսին, կամ մինչև իսկ Սաղմկին»⁶։ Թե այս թարգմանությունն անճիշտ է, պարզ է։ Դուրս է եկած նմա բառը և թուին զարժանած է էին. թողնելով գեռ մի կողմ այն, որ երգ բանիցն թարգմանած է երգի խոսքեր և որում շինած է ժայնքան... որ զժվարտաբայով։ Նույն կտորը հ. Ստեփանեն թարգմանում է. «Որովհետեւ շատ անհամար բաներ էր թվում երգը նորա ուժեղ և քաջ լինելու մասին։ Այս զրույցները ոչ Սամսոնին, ոչ Հերակլեսին և ոչ Սաղմկին են հարմարում։ Այս թարգմանությունն ևս ճիշտ չէ. թուին հոգնակի թիվը դարձրած է ճշակի թվում էր, որպեսզի հարմարվի եղանակի երգ բանին, որ ենթակա է դարձրած։ Կտրի իմն անյարմար դարձրած է շատ անհամար բաներ, մինչդեռ այդ բառերը կամ մակբայորեն են գրված թուին բայի վրա՝ «կտրի իմն անյարմար թուէին», զշատ անհարմար կերպով

¹ Տե՛ս «Նոր բառ. հայկ. լեզուի»։

² Հ. Ստեփանեն թարգմանում է. «Որքան անասները կնիւ կարեմոր չհամարեցինք»։

³ «Թուին բայը գործածած կա և երկու տեղ. ուր զժվար է արշին՝ ասելու»⁷, թե՛ համարելու իմաստով է։ Ա, և. «Եմք ժամանակաց Մեղաց Փամայ մինչև շինեա ոչ ուրեք գտնինք քանա»։ «Հայկ»⁸, թե՛ պատմելու, ասացելու։ Հ. Սամսոնին վերջին մեղ է հասկացած և թարգմանած է «Եյ մի տեղ չեն դոճմում կնիւն»։ Իսկ մյուս տեղին է. «Որպէս եղեցաքք թուին հաւատար Մովսիսին (Ա, է)»։

⁴ Хадам, Арм, шог, Եր. 286.

թվում էին, կամ, շատ-շատ, իբրև ածական երգ բառին, միայն բուհին նմա բառերով բաժանված երգ բառից, ուրեմն թվարի իմն անյարմար թուէին նմա երգ բանիցնս փոխանակ՝ «թուէին նմա կարի իմն անյարմար երգ բանիցնս»¹ Այնուհետև դուրս են ձգած «բանիցնս», «նմա» և «որում» բառերը²։

Բնագրի այս բոլոր խնդումները թարգմանելիս՝ առաջանում են «թուել» բայի իմաստը չհասկանալուց։ Որովհետև եթե «թուէին» բառն յուր սովորական իմաստով իբրև թուիլ (երևալ) կամ թե ներգործարար՝ համարել (համբարել, համբել) հասկանանք, այն ժամանակ այդ՝ հատվածը բառացի դուրս կգա. «Որովհետև շատ անհարմար կերպով թվում էին (երևում էին, համբարում էին) նորան (Տորքին, տր. հուլով) նորա (իրեն՝ Տորքի) ուժեղության և սրտոտ լինելու մասին պատմությունների (կամ պատմող) երգն», կամ թե. «Որովհետև նորան (Տորքին, տր. հուլով) թվում էին (երևում էին կամ համբարում էին) նորա (իրեն Տորքի) ուժեղության և սրտոտ լինելու մասին պատմությունների (կամ պատմող) շատ անհարմար երգ...» Սակայն այսպես անհեթեթություն է դուրս գալիս։ Ուստի ոչ թե պետք է բնագրին աղհատել, այլ «թուէին» բառի մեջ ուրիշ իմաստ պետք է որոնել, և հատկապես վերևում քննած (թիւ) առելու իմաստը։

Այդ նախադասության անմիջապես հետևում է. «Քանզի երգէին նմա բուռն հարկանել...», որ պ. նալաթյանը թարգմանում է. «Երգում էին նորա վրան» (пели про него), իսկ հ. Ստեփանն. «Երգում էին նորա մասին»։ Թե «թուէին նմա» նախադասության ենթական նույնը պիտի լինի, ինչ որ «երգէին նմա» նախադասության ենթական է, շատ պարզ երևում է շարադրություն կազմությունից։ Արդ, «երգէին» հոգն. 3-րդ դեմք կամ իբրև անդեմ է վերցրած, կամ «երգեին ժողովրդի երգիչները» իմաստով։ Այսպես և «թուէին» հոգնակի բայի ենթական ոչ թե հզակի «երգ» բառն է, որ քրականորեն լինել կարող չէ, այլ նույն ժողովրդական երգիչները պիտի լինին, կամ «երգէին» ձևի պես և «թուէին» իբրև անդեմ առնված։ Այսպիսի գործածության մեջ «թուէին նմա երգ», կարող չէ սենեակ «թվում էին (երևում էին կամ համբարում, համարում էին) նորան (տրակ. հուլ.) երգ», իմաստը, այլ մոտավորա-

¹ Հմմտ. «Թարսից տեղում» և «Ենեմ և անհեռար բուհից յարմա-ռեմ»։ (Ա. դերք, Հաղեղված)։

² Անշուշտ, «շատ անհարմար բաներ» թարգմանելով «բաներ» բառը բնագրի մեջ հզած «բանից» բառից չէ վերցրած, քանի որ կարելի չէ կարծել, որ թարգմանիչը «թուէին... երգ բանիցն» նախադասության մեջ «երգ» ենթական, ըստ թարգմանչի, հատկապես լինելով «բանիցն» գարեհած լինի մինչև «թուէին» բայի գլխավոր լրացուցիչ։

³ Հմմտ. վերևում «երգ բանիցն» առաջվածի բացատրությունը. «Երգ բանիցն վրան ուժե-րեթեան և սրտոտ լինելուն» բառացի թարգմանած՝ «Երա ուժեղության և սրտա լինելու մասին պատմությունների երգ» աշխարհարարում գեղեցիկ չէ դուրս գալիս աշխարհարարի համակցության պատճառով։ Միևնույն ժամ պարսերեն հասկն է գոյականի, հզ. կամ հոգն. անակոտ հաղով, իբրև անակոտաբար առնված որդիչ բառ գործածվելը, և միժամանակ միևնույն որդիչ իբրև բայական կարող է նույնիսկ յուր նախադասության խնդիրը [երգ բանիցն վրան... Հմմտ. «Ավան ինչոք կըտամբսեմեմ յարմարի վրան» (Ա. 9)], աշխարհարարում պետք է գոյականի սեղ ածական դնել կամ, եթե գոյականը յուր խնդիրն ունի, դերբայ և երկրորդական նախադասության գործածել և՛ հղել. «Երա ուժեղության և սրտա լինելու մասին պատմող երգ» կամ «երգ, որ պատմում էր նորա ուժեղության և սրտա լինելուն»։ Այսպես և այլոք չարեն ըսել երգուն «Արարալի» և «Երգուն» նորա աշ-խարհարարում աճիլ լավ է թարգմանել «Որանց մեջ շարվում են Արարալի և նորա որդից մասին երգած (խոսքեր) պատմությունները», քան թե... «Արարալի և նորա որդից մասին երգերի խոսքերը»։

պէս նույն իմաստը կարող է ունենալ, ինչ որ բերդէին նմա երգչ կամ աստիճան նմա երգչ, այսինքն շերտում կամ երգ էին ասում նորա վրա: Թուէին քան այս իմաստով ըմբռնելով, վերնում դրած Տորթի մասին հասկանալու համար՝ այլևս, անշուշտ, կարիք չկա բանադրոսարար հնդաթյուրեղու և խնդրելու այն, ինչպէս արեւ ին պ. հալաթյան և հ. Ստեփանն:

Արդ, հիմն թիւ արմատը և նորանից կազմված թիւերն նշանակում է «ասել», «պատմել» (réciter)¹, հնչւտ է ասել թե քանիքն ինչ է նշանակում, Այդ բանն յուր կազմութեամբ կարող է կրկնակի նշանակութիւն ունենալ. թե՛ «թիւդնեք», այսինքն թիւի ասողներ, ասող-պատմողներ, և թե՛ «թիւածը, այսինքն թիւի ասածը, ասած պատմածը, ինչ որ ասվում պատմվում է, քանի որ նույն ածանցիկ մասնիկը թե՛ ներդրածականի և թե՛ կրավորականի իմաստ ունի՝ ինչ պայման, թիւերից բառն յուր կրկն իմաստով ևս համանիշ է գիշպասանքս բառին, որը ինչպէս տեսանք, նույնպէս նշանակում է թե՛ «պատմութիւն անողներ, ասող-պատմողներ», և թե՛ «արած պատմութիւնը, պատմածը, ասած-պատմածը»:

Մինևույն հրգերի «լիպասանաց երգչ» և թիւերեաց երգչ կոչումներն, ուրեմն, համանման նշանակութիւն ունին և երկուսն էլ մտածութեան միևնույն ճղանակով են կազմված, միայն տարբեր արմատներից. այսինքն երկու կոչումն էլ վնասն ասելու արտաքին ձևից են վերցրած: Մտածութեան նույն ճղանակով է կազմված, օրինակ, և ուսաց СКАЗЫТЕЛИ (ասող) բառը, որով կոչվում է ուսաց վնասի, վիպական երգերի (СЫЗНА) պատմողն ու երգողը՝

Եթե մեկը լսած լինի թե ինչպէս մեղնում ժողովրդի երգիչները, օրինակ մեր աշուղները, կամ սկանտ, Մեծն պատմողները, ասում են իրենց վնասերը (աշուղները մեծ մասամբ թուրքերն), մեղմեմք միայն երգելով, նկատու էլինի, որ նոքա թի թիւ ուսածս այսինքն բերան արած, քարճածածկ արտասանելով ասում պատմում են լուի, միատեսակ ուժով, միայն տեղ-տեղ ձայնը միևնույն ուժով քիչ երկարելով. ուրիշ խոսքով նոքա թիւում են, թիւի՛ն

¹ «Թիւ արմատի և նորանից կազմած թիւերն քանի նշանակութիւն բառի, պատմել, մի ասորերեան բան պիտի չերեն, քանի որ արիշ լեզուների մէջ եւ տեսնում ենք նույն երկվայթը տառադասած անշուշտ նույն հարկտնութեամբ, կամ թե լեզուների իրար վրա անհնգած աղբյուրութեամբ. Այսպէս, հունարեն αριθμη տակ, պատմել, կարգու, այն բլի, համարել. λογος խոսք, բան(ք), պատմութիւն, զրույց, այն բլիք. հայերէ, համարել, խօսիւնքն computare բլի, հաշիւ, և ապա ծանր արտառուէլ: նույն բառը լատիներենի զուտ քրտնաերեւում computer բլի, հաշիւ, և compter բառից ծագածը հովտոտ compter բառին) տակ, պատմել, compte հաշիւ, համար, ինչ comte գրույց, վնաս, պատմութիւն. Գերմաներեն Zählen, թիւ, որմտից zählen թիւել, համարել, և erzählen պատմել: Միևնույն որմտից տելլ լեզուն io tell թիւել, համարել, միտնաւորել և տակ, պատմել. tele թիւ, այլն պատմութիւն. գրույց՝ հեցթթ. Ռուսերեն считать, причислять կարգու, տակ բառից считать թիւել, համարել:

² Հիմն. ներդրածար անգլոս, օրինակ, а, Գրքի մէջ, «լիքիցն անելիլ բանին а մի լիլիլ միայն համարելիք: Զի ծիլ а լիլիլ (չաղ) միայն ից բանին և ոչ անելիլ (անալ), նման է մարդը...» (Թարգմ. Ծակ. Ա, 23—25, Հիմն. Համ. Բ, 18): Եւս աս ետ զդրամուհանան անգլոսներն (անգլոսներն) ասապիլին (Դոտասորց, մզ, 19 կէ): Եւս ետան զարծաթն ի ձեռն զորենիւց (զարդանքի) զգործն կուհի տանն Տեանն (Տարք. Թագ, մք, 11): Եւ զործն կրինից (կարգանքի) իտարանն վկայութեան (Թիւք, դ, 47, Հիմն. Տեան, Գ, 15. Առաջ, ծի, 21 և արիշ անգլի): Կրավորարար զորածութեան նույնպիսի և անելիլ հուհա է քան ներդրածարը: Օրինակ բերել անկողն է:

³ А. Галайков, Ист<орна> русск<а> словесности, т. 1, кн. 2, 36 а и Словарь Даля.

աստուծո՛ւ Վնայնն այսպէսն «թվնելու», «թիվ ասելու» եղանակը, ինչպէս և «թիվ» բառն այդ իմաստով, նոր չէ հարկավ և միայն հայոց մեջ չէ՝ մեր հին ժվիպասանքս էլ շատ տարբեր ձևով լսենք է աստծ լինին իրենց վնայնը։ Եվ այս շատ համանական է երեսմ այնու, որ այդ վիպասանք (կամ նոցա պատմվածները) կուլվել են «թուելիք», այսինքն թվողներ, թիվ ասողներ, ասող-պատմողներ։

Գ

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՀԱՅԱՑՔԵՆ ԱՌԱՍՊԵԼԻ ՎՐԱ ԵՎ
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ

(Առասպել։ Առասպելի մեջ եղած ճշմարտութիւնը ճաշկանդէ։ «Ոճով» պատմվածք։ Այլարանութիւն առասպելի մեջ։ Թի ինչպէս է խորհնացին մնկնում առասպելները։ Հայոց առասպելները։ Այլարանութիւն և մնկնություն։ Ո՛րքան արժեք ունի «զարդարել» պատմությունը։ Թի ինչո՛ւ խորհնացին սակավ է օգտվում առասպելներով)։

Ի՞նչ հայացք ունի խորհնացին առասպելների կամ, որ նույն է, ժողովրդական երգերի, զրույցների էլն վրա. ի՞նչպէս և ո՞րչափով է օգտվում նա այդ նյութներից յուր գրած Պատմութիւն մեջ։ Այս հարցերի պատասխանը, որ անհրաժեշտ է իմանալ խորհնացու հիշած առասպելների ուսումնասիրութիւն համար, լիովին կարելի է ցոյցանալ խորհնացու Հայոց պատմութիւնը։

Առասպել բառը խորհնացու մեջ միայն մեկ նշանակութիւն ունի, այն է մի պատմություն,—ինի, հրգ, զրույց, մյուս (mythus), երգ վիպասանաց,

¹ Հարկ է նկատել, որ «թանկաց» երգերի այս բացատրութիւնն արդեն գրած էինք, երբ պ. Խաչատրյանի «Վնայն» մեջ եր. 197, այնքն գիտեցրած ժանտութիւն մեջ նկատեցինք, որ պ. Ման 1890 թվին յուր զրգածքի մեջ՝ Из метели появились в Армению (հր. 5—8, из Зап. Вост. ст. Имп. русск. общ., т. 1, 211—212), որ մեզ չէր հաղորդած յուր ժամանակին կտրգալ, մի նման ձևով բացատրած էր քովի թայից։ Այդ զրգածքն ապա ձեռք բերելով, ուրախութիւնը, որ նորա բացատրութիւնն, իսկուպէս «կտահում» (догматизм), ինչպէս ինքը կայւմ է, Խաչատրյան նայն է. ինչ որ մերը։ Ավելորդ չի լինի ցուցն նորա բացատրութիւնն ամբողջ դէպի այստեղ. «Թանի» բառը նա հանում էմ թուշ բայից, այս երկու բառը հայոց հին րանատեղծութիւն մեջ, ըստ երեսնութին, հատակ (списывальное) նշանակութիւն են ունեցել և ցույց են տվել առանաւոր հորինելու, կամ արտարելու եղանակները մենք. քայք նա չէմ կարող ասել՝ թէ արդեւ եղանակավոր (на распе) կտրգալու՞ն, իրն անշուշտով արտառեանիւն, քի՛ առաջնումին (զնկամարիա) են վերաբերելու Եւ միշն անգամ չեմ իջնում այս բառը մոտենել թիւ բառին, որ աստիճանադասական զրգերի մեջ դրած է որոշ տեղերում, որոնց լին երգում, ալի կարգադրում են իրն յարատեանի ճշկանութիւն. կտրգում էմ, բաժանել է, եթէ ինձ հաղորդի ցույց տալ մի զեղք միայն, ուր իմ հայտնած նշանակութիւնը գործ է ածւած թուշ բայը, որից, ըստ իս, ածանցվել է թուշից բառը։ Եվ այդ զեղքն է Տղքի մասին թուշին նմա երգ բանիցն, որ պ. Մարը թարգմանում է. Խորան (տր. հայ. ի պատիվ նորա) առաջնում էին (двухнамеренно) շատ անհարմար բանավոր երգ։ Եվ ապա անմիջապէս ավելացնում է. «Եթեմ անգամ այդ (առաջնում էին) բառի վրա, ինչպէս և ձեռք առաւ «թուշի» երգերին հիշա իմաստը որչա՛ն Եւ կամեցա միայն իրն Մ. Խորհնացու խորհրդի հիման վրա ցույց տալ թուշից առաջվարի և քովի թայի միջն եղած առաջարկութիւն ունեւայտնի կապը։—Պ. Մարի և մեր բացատրութիւնների նմանութիւնը, և ավելի նա տարբերութիւնը. կտահեն ընթերցողը։

առակալութիւնը անապշտ, թե ըստ կամս հերյուրած շինծու գրավոր պատմութիւնը, — որ նշմարիւմ չէ. հապաստի չէ:

ա. Գրավոր առաջապիւնիւ: Խորենացիի պատմութիւնն է դրում և իբրև պատմիչ պետք է, հարկաւ յուր հասկացած կերպով, յուր աղբյուրների համադրութիւն մասին մտածելու Այս հոգալը նա շատ ունի. այլ է թե որքան է հարողել նորան այդ: Նա միայն համարեալն է, «ճշմարիտն ու բանաստեան» է ուղում գրել: Նորա կարծիքով ճշմարիտ պատմութիւնն առաջապիւն է դասում, երբ պատմագիրներն իրենց ուղած ձևով փոփոխում են պատմութիւնը դասավորութիւնը, անունները, ժամանակը ևլն. «Չհաստատի որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանիցն, կարգեցաք զծնունդս ... որում ոչ զոք ընդդէմանալ կարծեմ ի միտս ունեղացն, բայց թէ զնշմարտութեանն ու խորհելով քակել զոն, յառաջապիւն զնշմարիտ բանս արտօրեմով փոփոխել վերապիւն» (Ա, գ): Հմմտ. «ըստ ախորժելոյ որպէս կամեցան իրաքանիւրքն (վիպագիրք) փոփոխել զանուանսն և զգորոցս և զժամանակսն»:

Խորենացու համար ճշմարիտ պատմութիւնն է ամենին առաջ Աստվածաշնչի պատմութիւնը և ապա Սուրբ Հարց գրութիւնները. Իսկ արտաքին պատմագիրներին մէջ կա քան՝ որ եւտ է, կա քան՝ որ ճշմարիտ է. «Երբեմն ի ճշմարտէն, երբեմն ի ստէն» (Ա, գ): Ինչ որ Ս. Գրքի պատմութիւնն համեմատ է՝ ճշմարիտ է, ինչ որ համեմատ չէ՝ առասպել է. «Եւ սկսայց յորոց և այլքն, որք յեկեղեցւոյ և ոյք ըստ Քրիստոսի, անելորդ համարելով զաւտալնոցն երկրորդել յաղագս իսկզբանն առաջապիւն, բայց թէ զկիսն՝ ժամանակ ինչ արգեօք. և զարսս յայտնիս, որում եւ աստուածայիւնք ի հոգ քայցեն պատմութիւնք բանից» (Ա, գ): Առասպել չէ Խորենացու սփրեյնէն, «քան զշատս արդարախօս», «Քիւրոսեանն Սիրիզեցայն պատմածք թե ճիշտաք քան զքորպն... և զբազմարարառն լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի նաւարկութեան Քսիստութեան ի Հայս, Զբոսանն և Տիտանն և Յապետոսի լինէին իշխանք երկրիս, — որովհետեւ այդ պատմութիւնը, թեպէս և տարբեր անուններով, Ս. Գրքի պատմութիւնն համեմատ է: Իսկ նույն տեղում (Ա, գ) Զբոսաղաթի անվանելը Զրովանի (Սեմ) սակիդրն և հայր աստուածոցն»՝ առասպել է, որովհետեւ Ս. Գրքի համեմատ չէ: Այսպէս և նույն տեղում Տիտանի և Հապետոսի կոչի մասին ընդդէմ Զրովանի գրում է. «Զաստեիկ թէպէտ առաջապիւն ոք, թէպէտ նշմարտութիւն հաշուել համարեացի, բայց նս որպէս հասանեալ եմ, քաղում ինչ նշմարիտ է»: Իսկ Խորենացիի յուր այս համոզմունքը հաստատում է դարձաւ Ս. Գրքով և կիպրացիոց Կոստանդյա Նիսիփանոս եպիսկոպոսի «Ճշմարտագրութեան լանդիմանութիւն» գրքով:

Այս գրավոր առասպելները եթե մեզ հետաքրքրում են՝ հարկաւ, միայն այն տեսակետից, որ միևնույն կամ նման հայացք և հասկանալու եղանակ ունի Խորենացիին և ժողովրդական առասպելների նկատմամբ և մինչև իսկ նույն քառերն է գործ դնում գրավոր առասպել և ճշմարիտ պատմութիւն, ժողովրդական առասպել և տեղը մեջ բովանդակած իսկութիւնն որոշելու համար: Այդ քառերն են՝ հալաստի, ճշմարիտ, անստու, ստույգ՝ և նմաները, որ զանազան ձևերով հեղհեղում է՝. իսկ հակառակն՝ անհամաստի, «ըստ

1 «Նոցանէ զոր ինչ հաստատիկ կարծեմք առեալ» (Ա, գ): «Եւ ի հաստատիկ ճշմարտութեան» (Ա, գ): «Եւ սու է ճշմարիտ և մի պ յերկապիւն» (Ա, գ): «Եւ յերկապիւն երկա կարգելով որոս անասնիս յառաջ քան զաղտարակալութեանն, զկնի նաւարկութեանն Քսիստութեան ի Հայս, նշմարեմ, (որովհետեւ Ս. Գրքի համեմատ են): Իսկ անստեան փոփոխումս և քաղեց ապիւն տեղ (որովհետեւ Ս. Գրքի համեմատ չեն)» (Ա, գ): Հմմտ. Ա, և, գ, թ, մը, մթ, լս ևլն.

յութարութեան և ոչ ըստ ճշմարտութեան» (Ա, իբ). Տարտաքոյ ճշմարտութեան» (Ա, 6) ևլն: Խնչքով դատելով՝ կամ թի Աստվածայնի Հետ Համեմատելով առասպելի միշից հավաստին գտնելու համար գործ է ածում նույնպէս նշմարիտ, նշմարութեամբ և նայտնի բառերը. «Յայաբարութիւն սակաւութ, թէ ըստ արտաքնոցն ասացեալ է Բէլզ. ըստ աստուածային բանից նշմարութեամբ նարութիւն է» (Ա, է): «Բայց ծանիր զՄեքատդ անուն... Նշմարիտ Շամրաթ է» (Ա, իբ): Նման պատմութիւններէից ճշմարիտ համարում է ոչ միայն այն, որ Ա. Գրքի համեմատ է, այլն այն, որ «Եղեմ» է գրված. «Այլ հասաստի մեզ թուեցաւ որ ի Մար Աբայն կատինայէ զնուրիւն ճաղղէական մատներէց զան զայսոսիկ. քանզի ռնով իմն ասէ, և զպատեմտս պատերազմին յայտնէ» (Ա, Ժը): Իսկ Բագրատունյաց՝ Հայկից սերված լինելու մասին առասպելն անհավաստի է համարում, զգի ի բայ բանից և ռնն իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ» (Ա, իբ)¹:

Անցնենք ժողովրդական առասպելներին:

բ. Հունաց և պարսից առուելներէ մասին խոսված է Ա գրքի հովելվածներէ մեջ, որոնք Խորենացու հայացքը ժողովրդական առասպելներէ վրա՝ շատ պարզ կերպով ցոյց են տալի մեզ: Հունաց առասպելները զպերճ և ողորկ, «Հանգերձ պատեմտաւ», ուրիշ խոսքով, բոճով են և զճշմարտութիւն իրացն յալարեմութար լինեանս ունին թաքեցեալ: Այսպիսի «այաբարտեմութիւն» է համարում և Պրոմէթէոսի առասպելը. «Եւ ընդէր... Պրոմէթէոս զոգացեալ զառ ի յատուածոցն հուր և շնորհեալ մարդկան. որ է յալարեմութիւն, և ոչ թերէ ասել կարգ բանիս» (Ա, է):

Իսկ պարսից առասպելները Բյուրասպ Ածղահայկի մասին համարում է փոփոխ և անհոռի, «անյարմար և ռնն բոնք», այլն «Տանբանութիւն»: Նոցա հերոսները ստատ են² և Հինց առասպելներն էլ են «առասպելք ստատ», «անմիտ և անհոնար բանից յարմարանք», որոնցով զրաղղելու պետք չկա³, բանի որ այդ առասպելները շատ Հին լինելով՝ նույնիսկ պարսիկներին անհամարալի են⁴: Սակայն և այնպէս Խորենացիի պարսից առասպելներն էլ համարում է յալարեմութիւն, ինչպէս «Պահլավկաց առասպելներն համար (Բ, Է) պարզապէս գրում է. «...Թողով զառասպելացն նոցա բարտնշմունս, Քանդի անտեղի է մեզ այժմ նրկորդել զառասպելուն յաղագս... (զալիս է առասպելներէ համառոտ բովանդակութիւնը) և որ ինչ յալարեմութեան բերէ կարգ: Այլ մեք ասասցուք միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութեան վայել պատեմութիւն: Այսպէս և Բյուրասպ Ածղահայկի անոն ու փոփոխ առասպելներն ևս յալարեմութիւն ընդունելով՝ կարելի է համարում, թեպետ մեծ

¹ Հմմտ. «Անշմարտութեան որ խորհելով ճակել զոն, յառապելո զճշմարիտ բանս ախորժելով փոփոխել փոխութեան» (Ա, Է): «Եմեալ արտաքնութեմ առաջ» (Ա, իբ): «Այլ ոչ ճշմարտութեամբ ռնով պատել, և ոչ զանուանս նշանով կամ զտեղի կատարմանն, այնն կարեւորագոյն համարեցաք նրկորդել» (Բ, Էն): «Երբով ևս ստուգագոյն նա տեղեկացաւ զամենայն առաջ» (Բ, Լը): «Եմեալ զոգացեալ որ ինչ կարեւորագոյն է ռնով բանիս» (Ա, իբ): «Անցի միայն զտեղիս նշանակեալ, զհաստատին և զոնն ի բաց թողելու» (Բ, Է): «Բայց քանզի բազում են, որ ասն զերկուստ մեղոյ Բարտեմի լայնեալ, և ռնով իմն պատմեն, ևս հասեմիս» (Բ, Ժգ): «Այս ամենայն... յայլք պատմեալ յառաջագոյն քան զմեզ, այլն կարեւորագոյն համարեցաք ռնով, նրկորդել» (Բ, Լը):

² «Եւ վրիպեցաւ անկ կարելոյ զմիայնալն և զտուտն»:

³ «Բայց զինչ արդեօք տարփոնք քեզ... զինչ քեզ առ այսօրիկ կարտաքնութիւն... կամ զինչ այլոք»:

⁴ «Ամարի վազուց նոցա իրս և նոցա ամենատեղիս աստիկ յայտնեմ»:

դժմարությամբ¹, մեկնել, կամ, հորենացու խոսքով, «պատճառս տալ տե-
քանութեան նացա, եւ զտղարել զանգագոսն»։ Ուրիշ խոսքով, նորից շա-
րադրելն հոռաց արասպելներէր պէս ոճով, «հանդերձ պատճառաւ», «միտս
անմտութեան նոցա տալովն», «ս զկարի վաղորդ նոցա իրս և նոցա անհետա-
նելիս յայայնելովն»։ այսինքն, մեկնելով թանձառ արասպելներէր հանել այն,
ինչ որ «հաւաստի» է²։

Եվ ի՞նչպէս է հորենացիին պարսից արասպելները մեկնում, կամ յուր
խոսքով, «անհասանելին յայանում»։ Նա նախ Բյուրասպելն կապում է աշ-
տարակաշինութեան ժամանակի և ներքովքի հետ իբրեւ պարսից «նախնիք»,
ներքովքի իշխանութեան տակ և այնուհետեւ ամենայն ինչ ժամանակի հա-
կացողութեանն ու բանական խնդիրն հարմարեցնելով, անհասկանալի, գե-
րեանկանը աշխարհութեան համարելով և ժամանակի հասկացողութեամբ
քնականի վերածելով, Բերենց արասպելի վերջին կտորը միայն իբրեւ օրինակ
Առասպելի մեջ ասած է համարուող, թե մանուկ սատանան Աթաւհակի ուսերը
համբուրում է և «անդուտ» վիշապներ են ծնվում կամ բուսնում. և այնու-
հետեւ Աթաւհակի շարութեանը շատանում է (աշխարհեան յաճախութեան) և
նա ի պնտս օրովայնի մարդիկ է սպանում (սծախել)։ Իսկ հետո Հրուպն
անունով մեկը նորան կապում է պղնձի շղթաներով և տանում դեպի Դըմ-
բաժընդ լեռը։ Ժանապարհին Հրուպներ ննջում է, և Բյուրասպը քաշում է
նորան և ձգում մի ժժժի մեծ վիհ։ [Առասպելի մեջ՝ Հրուպներ զարթնում է և
այլորեւ ու կապում և յուր արծնանը կանգնում նորա դիմաց (սգրից անդրի
ընդդէմ նորա հաստատելն), որից սարսափելով, Աթաւհակ՝ հնազանդալ կա
շղթայիցն և չէ կարողանում ելնել և ապականել երկիրը։ Այս արասպելը նո-
րենացին մեկնում է այսպէս. «Իսկ վիշապաց բուսումն, կամ կատարեալապէս
վիշապտնալն Բիւրասպայ, որ ասի. է այս», թե նա սկսեց անբաժ մարդիկ
զոհել դեռերին, [արասպելի մեջ՝ «նախ զմարդիկ ի պէտս սրովայնի», մինչև
ժողովուրդը (բազմութեան) տաղտկացաւ նորանից և հալածեց նորան, և նա
փախաւ Դըմբաժընդ լեռան կողմերը։ Նորան սաստիկ քշելուց՝ նորա մար-
դիկը (ամբոյս) ցրիւ և կան նորանից։ [Առասպելի մեջ՝ Հրուպներ Ամյառակին
կապած տանում է ստըր]։ Այս բանին վստահացած՝ նորան քշողները մի քա-
նի օր հանգստացան այն տեղերում։ [Առասպելի մեջ Հրուպներ ճանապարհին
ննջում է]։ Իսկ Բյուրասպը ժողովելով յուր ցրված մարդիկը, հանկարծ վրա
է հասնում և սաստիկ վնաս է տալի նոցա։ [Առասպելի մեջ՝ Բյուրասպը
ննջող Հրուպներն դեպի քլուս է քաշում]։ Բայց բազմութեանը հաղթում է
Բյուրասպին և նա փախստական է լինում. նտկից հասնում, սպանում են
նորան դեպի քլուսը, բայց Հրուպներ զարթնում է և տանում է նորան լեռան
տանում Բյուրասպին լեռան այլեւ ու կապում և այլն]։

Ինչպէս ընթերցողը կտեսնեւ, հորենացին յուր մեկնութեան մեջ, թեպետ
և հականը պահելով, բոլորովին նոր քան է պատմում իրենից։ Նորա պատ-
մածն այլևս արասպելի գույն չունի, այլ պատմական կամ քնական իրողու-
թեան, Դուրս են ձգված կամ քնական, խնդիր մտտիկ շինված գերքնական և
վիշապական գեղերը, ինչպէս են՝ վիշապաց բուսումն կամ Բյուրասպի կատա-
րելապէս վիշապանալը։ Հրուպնի սգինքն անդրի ընդդէմ նորա հաստատելը,
Աթաւհակի սարսափահար ու շղթայված մնալն այլումը և լկարողանալը

¹ «Եւ վերայ այլոց անհետիցն հետադարձ փոխ քա արտօրելուց մեր, կատարմէ և զ պնտս»։

² «Եւստորացութիւն, որ ինչ սակա թիւրասպելայ նախադիւն։ Ամտ. տեղացանէ զոր ինչ
նախադիւն կործանեց անուպ» (Ա. 9)։

դուրս դալ աշխարհն ամբերելու. Լորդենի ննջելը ճանապարհին, Աժդահակի նորան դեպի սարը քաշելը, ի պետս որովայնի մարդիկ կոտորելը ևն. Բերած օրինակից շատ պարզ է. թե հորենացին ինչպես է ըմբռնում առասպելները և ի՞նչպես է մեկնում անոթը, բանդարդը զարդարում, առհասանելին հայտնաբերում և կամ առասպելի միջից, որ ալլաքանութիւն է, «համաստին» գտնում և աղնում:

դ. Հայոց առասպելները: Շատ տարօրինակ կիներ, որ հորենացին նույն հայացքը լուսննայի, մեկնելու և օգտվելու նույն հղանակը լգործադրելու և հայոց առասպելների վերաբերմամբ, ինչ որ հունաց և պարսից, եվ հորենացին չէ թաքցնում այդ. նա շատ պարզ հայտնում է, որ նորա համար առասպելն առասպել է. լինի հունաց, պարսից թե հայոց. միայն մեկը կարող է պարզ և ողորդ, ճշմարիտ լինել, մյուսը՝ ոչ:

Տեսնենք հայոց առասպելները, ամենից առաջ Արտավազդին, որ Աժդահակի առասպելին նման է:

Արտավազդի մահը պատմելիս (Բ, կա) ասում է, Գողթան երգիչներն առասպելաբանում են, թե Արտավազդը նախանձել է հոր փառքին, ուստի և հայրն անխնայ է որդուն, որ որսի գնալիս քաջք բռնեն նորան և տանեն յազատ ի վեր ի Մասիս, այնտեղ մեռնում և լույս լսենան: Այնուհետև ըստ առասպելին, Արտավազդը երկաթի շղթաներով կապվում է մի ալքի մեջ, երկու շուն կրծում են շղթան, Արտավազդն աշխատում է ելնել և վերջ տալ աշխարհին, բայց դարբինների կռահահարութիւնն ձայնից կապանքը զորանում է: Արտավազդի մահվան Ռասին այս ժողովրդական առասպելը, գերբնական բան լինելով յուր մեջ, խելքի մոտիկ ու ճշմարիտ չէ. Բայց հորենացին այլաբանությամբ է համարում. «Արտավազդայ... մահ հանդերձ ալլաքանելով, ուստի և ամենացնում է մեկնելով. «Բայց է նշմարաւրեամբ այսպէս, որպէս ստացաք վերագոյն»: Իսկ վերեւում պատմել է բնական իրողութիւնն զույնով, թե Արտավազդը սանցնալ զկամրջան Արտաշատ քաղաքի՝ որսալ կիներ և հշտվայրիս զկամրջ Գին, աղմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր յաժնելով երկվարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորատույզ լեալ անհետին»:

Առասպելն ասում է. «Վիշապազունք գողացան դմանուկն Արտավազդ և զեւ փոխանալ եղին: Բայց ալդ գերբնական է, խելքի մոտիկ չէ. ուստի և ոմանք, անշուշտ առասպելը մեկնելով, «համարեցան կախառնել զառաքելութեամբ» կաճեց զարմեցն Ամրանալիայ», քանի որ ժամանակի հասկացողութեամբ ճախարհելուն կարելի էր համատալ, իսկ որ մարդիկ երեխա, դո-

¹ Հմմտ. մեկնելու ժամանակ գործ դրած ձեռքը. «Մայրաքաղաքիս ասկուտը թէ ըստ արտաքինացն ասացեալ է Բէլը, ըստ աստուածային քանից նշմարաւրեամբ նարթա է (Ա, ե): Մտնիք զմիմարտ անտե... ըմբռնեա Մամբաթ է» (Ա, իր): «...Որ ինչ սակս Բիրապակալ աստուծին: «Եւ այլ է տուրքն նորա և անքարի բարեբարութիւնն: «Իսկ վիշապացն քառասուն... է այս» (Բ Համբլոված), «Յիշատակեցեաք և մեջ կարեւորութիւն, և զալլաքանութիւնն երեւոյնեցուն: «Որ և նշմարաւրեամբ ունի այսպէս: «Այս է նշմարութիւն բանից» (Բ, ճ): «Բայց ինչ աղտուցեալ քով լուրն այն» (Բ, կա) և ուրիշները (Ա, է, Բ, ծ):

² Ինչ կարծիք լողաք է տա թե այս մեկնութիւն չէ՝ այն հանգամանքը, որ հորենացին նախ թորում է մեկնութիւնը կատարելու մասին և ապա առասպելը: Մեկնութիւն լինելը պարզ երևում է կապով խոսքերից. «Եւ զայն նույն երգից յառապելին տանն այսպէս: Հմմտ. Ա. գրքի Բ համբլոված, որի մեջ նույնպես առաջ մեկնութեան է թորում և ապա առասպելը մի-րեքին նման կապով խոսքերով. «Չոր յառապելին՝ մանուկ սատուեալ, ասեմ, ապաստարելով...»:

դանան և տեղը դե դենն՝ ոչ, Սակայն հորենացին ավելի բարենաւոր՝ է՝ Ժրտաւորմ. նա Արտավազդի կախարդութեան լինելուն էլ չէ համաւատում և գրում է. «Բայց ինձ տեղաբնակացի քովի լուրն այն, թէ ի ձեռնդեհէն և եք մուլութեամբ լեալ, մինչ նովմար եւ վախճանեցեալ»:

Ուրեմն բոլոր ճշմարտութիւն, ինչ որ իբրեւ պատմական թերութիւն է հորենացին Արտավազդի մասին, այն է՝ թէ նա խնկի ու խնկազար (մոլի) ծնվել է և որսի ժամանակ խնկազարութեան ընկել է Մասիսի վերին ժողովրդի մեկն ու անհնաւորացի: Միացածն առասպելներն են, որոնք, սակայն, զգուշարարութիւն իրացն աշխարհաբար յինքնանա ունին թաքուցեալ: Եվ երբ մի անգամ գիտենք, թէ ինչ հղանակով հորենացին առասպելներէ մէջ աչդ թաքուցեալ ճշմարտութիւնը կամ համապատին մեկնելով հանում է առասպելից, և այն, որ նա յուր պատմութիւնը թողնում է գրում,—սխալութեան լինք լինի, եթէ ասենք, որ Արտավազդի մասին բոլոր համապատին էլ մի մեկնութիւն է միայն, որ թմայնք, կամ հնեք ինքը պատմագիրը, տվել են առասպելի մէջ պատմութիւն:

Անցնենք մյուս առասպելներին: Գիտենք, Արտաշեսի մասին Վիպաւստեք առասպելն են: Բ, խթ Վիպաւստեք բովանդակութիւնը բերելուց հետո ավելացնում է. «Եթէ իշտականացուք և մեք կարեաւորեալք, և զայլաբանութիւնն նշմարեալութեալք: Արդ, ի՞նչպե՞ս պետք է նա այս առասպելին մէջ եղած աշխարհութիւնը ճշմարտեմ: Անշուշտ, մեզ արդեն ծանոթ ձեռք, Վիպաւստեքն էական մասը պահելով, մեկնութիւններ պիտի անեն. իսկական մի նոր բան պետք է շարադրել իրենից, Վիպաւստեքն ու առասպելականին պատմական ու քննական գույն տալով, գերբնական ու անհամապատասխան բաները դուրս պիտի ձգեն, կամ յուր ժամանակի հասկացողութեանը հարմարեցնեն, կամ թէ բանական (rationnel) պիտի դարձնեն. Թէ իրեք այդպե՞ս էլ վարվում է պատմագիրը, աչդ մասին հետո, երբ Վիպաւստեքն երգի մասին կգրենք: Հիշենք միայն առաջուց, որ առասպելի մէջ ասած է, օրինակ, թէ Սաթրապի վիշտ պատմութիւնը Վիշտապաւստեքն է օրինել: հորենացին համարում է աչդ առասպել, ուրեմն առաջ, զի խնկի մոտ բան չէ, որ մի թագուհի վիշտապ օրնաւ լինի. սակայն աչդ առասպելն յուր մէջ աշխարհութիւնն համապատին բան կարող է ունենալ. ուստի և վիշտապի ու վիշտապաւստեք տեղ, մեկնելով, դնում է մարք և Մուրաքան տեղը Արդամ:

Սանատրուկի ձյունի սակ մնալու մասին «առասպելաբանն, եթէ կենդանի իմն նորադրալ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր դմանուկն» (Բ, 14): Բայց քրիստոնեայ և ռաքիտեալիստ խորենացին այդպիսի բանի չէ համաւատում, ուստի և անմիջապէս մեկնում է. «Բայց որպիսի եղաք վերահասեալ աշխարհ է. շուտ սպիտակ ընդ խնդրեակ լնալ, պատահեալ մանկան և դայնդին»:

Երգեանգի մասին ասում են. «Եւստ հմայից դժնեալ գոլով անկան հայնցուածով. վասն որոյ ընդ այգեանալ աշխարհացն սովորութիւն ունել պատահաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայալ ունել ընդդէմ Երտանդայ, և ի հայնցուածոցն դժնութենէ ասեն պայթիլ որձաքար վիմայն»:

Պատմագիրն այս բանը ստու և առասպել է անվանում, իբրեւ մի անհամապատասխան բան. բայց և անմիջապէս, համապատասխան կացուցանելու համար, փոխում է մեկնելով յուր ժամանակի հասկացողութեամբ և համապատասխանով. «Եւ կամ դիւանկսն ինչ ուն իւր ունել գորտ»:

Նման թէ ի՞նչպե՞ս խորենացին Հրադենի կապելն Արտաւազդին աչդ մէջ էլն, դարձնում է՝ «պատմութիւնն Արտաւազդի մի վեր, Արտաւազդ և որսի ժամանակ Արտաւազդի բանվորը քաղաքից նկ դարձել է՝ Արտաւազդ որսի ժամանակ ընկել է մի վեր և կորել»:

րիւնս, զի այսպէս հայնցուածոցն անուամբ վնասանցէ զորս կամիւ (Բ, ԴԻՐ): Առասպելներէ մէջ գրեմնոս զոմն ասոնն եկեալսն Հայաստան Աթուշանի դեմ կռվելու: Խորենացիին այդ Դոմեոսին համարում է սինքն կայսրն Դոմեոսիանոսս: Բայց որովհետեւ, երեւի, ուրիշ աղբյուրներէջ գիտն, որ Դոմեոսիանոս կայսրը Հայաստան չէ եկել կռվելու, ուստի մեկնելով բացատրում է առասպելը. «Ոչ (Դոմեոսիանոս) եկեալ այսր, այլ զնորման նորա եւ զզօրս այլարանելով յանուն նորա կոչնա (Բ, ԺԳ):

Քողնում ենք մյուս առասպելներն ու անոնց մեկնութիւնները: Բերած՝ որինակներէջ արդեն երևում է պատմագրի հայացքն առասպելների վրա, և թե ինչպիսի նա ամեն մի առասպելական պատմվածք նս, սուտ համարելով հանդերձ, կարող է այլաբանութիւն համարել և մեկնելով միշտ յայլարանօրէն թաղուցեալ ճշմարտութիւնը հանել իբրեւ հաշտութիւն, ստույգ պատմութիւն: Սակայն այդ սեռաւորիւն, ինչպիսի բերած որինակներից կտեսնեն ընթերցողը, մի բարոյական նոր շարադրած, իսկապէս հերյուրած պատմութիւն է, որ շատ անգամ առասպելի հետ նմանութիւն իսկ չունի:

Այսպիսի հերյուրած՝ «այլաբանութիւնը» ճշմարտած առասպելներն այլևս անշուշտ ժողովրդական առասպել կոչել կարելի չէ, այլ միմիայն պատմագրի. կամ նորա նման մտածողների մի հորինվածք, որ, թեպետև առասպելի հիման վրա շինած, բայց առասպելի մասին զազափար տալ չէ կարող: Ուստի շատ զգուշ պետք է լինել իբր ժողովրդական առասպելից քաղած այսպիսի կատրոնների վերաբերմամբ, քանի որ անոնք.—«աւագարդ լինելով և ապա զգարդարուած», «անհոգ լինելով և ապա ռոճով և հանդերձ պատահաւ շարագրած», «անհոգ և անհոգ» կամ «անյայտ իրք» լինելով և ապա «այլաբանուած». մի խոսքով, առասպել լինելով, բայց մեզն ալլարանութիւն տեսնող պատմագրի կողմից ճշմարտուած կամ ճշմարտապատմութիւն չլինված,—կարող են հազվադեպ մի բառ կամ նախադասութիւն բուն առասպելից ունենալ իրենց մէջ:

Սակայն ընայնով սորան, պ. Խալաթյանի քննադատութեան մի որոշ մասն այսպիսի զգաբարեալս իբր ժողովրդական առասպելների դեմ է ուղղված, որինակ՝ վիպասանաց երգի նկատմամբ¹: Ինքնըստինքյան հասկանալի է, որ պ. Խալաթյանի քննադատութիւնն այդ կտորների վրա՝ կարող չէ ապացուցանել, թե գոյութիւն չեն ունեցել հայոց սփիւպասանքս, ուստի մենք ամենորոգ ենք համարում կանգ առնել այդ մասին²:

Սակայն պ. Խալաթյանի վարկելու եղանակը տեսնելու համար մի քան կարելի չէ առանց նկատողութեան թողնել: Չնայելով, որ նա գիտն, որ այդ «այլաբանութիւնը» Խորենացուն է և որ պատմագիրն ինքն է այդ այլաբանութիւնը վերագրում հայ երգիչներին³, բայց և այնպէս նա հաճախ այդ «այլաբանութիւնը» զործ է ածում իբրեւ մի միջոց հայոց հին սփիւպս գոյութիւն չունենալը ցույց տալու համար, երբեմն ծաղրելով⁴, երբեմն մոռանալով յուր ասածը և ինքն իրեն հակասելով գրելով, որ իբր թե Խորենացին հայտնում է, որ սերգանքային ամեն մի այլաբանութիւն յուր պատմութեան մէջ ժողովրդական երգիչներին է պատկանում⁵: Եվ ոչ միայն այդ,

¹ Խալաթ., Արմ. ցուց, հր. 278 համ.

² Ճշմ. այս մասին, ինչպիսի և առասպելի մեկնութեան մասին, Մատ. Визант. արքեպ., II, V. 1898, հր. 284 համ.:

³ Խալաթ., Արմ., ցուց, հր. 188, 347—368,

⁴ Նույն, հր. 188, 260, 261, 263 և համ.:

⁵ Նույն հր. 248:

այլ շատ ամօքին: Իրը թե հորինացին «առասպելի գործ է ածում առանձնապես հասարակ ժողովրդական բանաստեղծության տեսակներից մեկի նշանակությունը, և առասպելը բառով հասկանում է ոչ միայն միթոս (Mithras), այլ, ըստ երևույթի, և այլաբանություն, այն էլ այլաբանությունը երգի մեջ. այսպես ասած—այլաբանական երգը¹: Եվ էլ այնուհետև պ. Խալաթյանն ազատ է համարում իրեն «առասպելը» թարգմանելու քաղաքականություն² և իրեն հիմունք ժողովրդական է «թուփի» բառին քաղաքականությունը ավանդականությունը:

Բայց պ. Խալաթյանը մոռանում է դարձյալ, որ, եթե առասպելը թարգմանում է մի տեղ քաղաքականական երգ, միայն այն հիման վրա, որ հորինացին առասպելի մեջ այլաբանություն է տեսնում,—էլ ինքն ինչ հիման վրա ասում է թե հորինացին «առասպելը» ասելով հասկանում է և բնական (Mithras) և իմիջիպես իրեն կոչում են բերում է քի պարտից առասպելից համարվածը և թ գործի է դառնում նա³, Հիշած տեղերում են հունաց և պարսից առասպելները և Հագամեկերտում Արծրունյաց մասին պատմված՝ արժիք հովանի տանելու առասպելը: Եթե հայոց մյուս առասպելներն այլաբանական երգ են, չգիտենք ինչու՝ Հագամեկերտում պատմված առասպելը մյուսիս պիտի լինի: Մյուս կողմից՝ քանական դատողությունն ասում է, որ, եթե հայոց առասպելները հորինացու անունը մեջ տեսած այլաբանության պատճառով այլաբանական երգ է համարում պ. Խալաթյանը, պարսից և հունաց առասպելներն էլ նույն պատճառով այլաբանական երգ պիտի համարենք, քանի որ, ինչպես տեսանք, հորինացին այդ առասպելներն էլ այլաբանություն է համարում: Իսկ եթե վերջիններս միթոս են, նույնը պիտի լինի և հայոց առասպելները,—թե չէ, քաղաքականության է և զորով ցանկանալ, որ հայոց առասպելներն այլաբանական երգ դառնան:

Այսպես հորինացու մեջ իրեն առասպել հիշվածը մնում է առասպել, քանի որ կարելի էլ չէ հորինացու հայացքն առասպելների վրա և նորա տված մեկնությունը (Mythendeutung) իրեն փաստ ժողովրդական: Եվ հորինացին մեկնակ չէ եղել, որ առասպելի մեջ այլաբանություն է տեսնում: Առասպելի, միթոսի մեկնությամբ միշտ պարտական են մարդիկ և զանազան մեծ մեկնել, Եթե այժմյան գիտության մեջ իշխում է այն միտքը թե «առասպելը շատ հազվադեպ մի այլաբանական կամ վերացական-փիլիսոփայական դադարաբան կրթական դաս է մեջ, ուստի և կարելի չէ սիմբոլիզմ—այլաբանական (symbolisch-allegorisch) մեկնություն առաջ միթոսին, այլ թե աստվածներն և առասպելների ծագումը մեծ մասամբ ֆիզիկական երևույթներով պետք է բացատրեն,—մի մասնակ էլ այլաբանական և եզրահանգական մեկնությունն էր իշխում: Եվ հորինացին իհարկե մեղավոր չէ, որ, յուր ժամանակի գիտության մեջ իշխող հայացքի համեմատ, ինչ որ առասպելական է և անհասկանալի՝ այլաբանություն է համարում և, իրեն ռացիոնալիստ, քանական խելքի մոտիկ մի պատմվածք շինելով, մարդկորեն պատմությամբ է մեկնում առասպելը: Այն ինչ որ հորինացու համար մեծ արժեք ուներ—առասպելների մեկնությամբ հորինած, հիշյալ պատմությունը, մեզ համար հարկավոր անարժեք է: Ուստի և հայոց առասպելների մասին դատելուց առաջ՝ միշտ պետք է հիշել, թե որքան և այդ առասպելները, այսինքն բուն ժո-

¹ Նույն, հր. 44:

² Նույն, հր. 45, նույն ծան. 5, 6:

³ Նույն, հր. 44, նույն ծան. 4:

դովորեցականն անշտեմել հոսեհնացու զբարդոհեալս ասասպելենդից. — Ժկանհրթածիշտ քան, որ ամեն հետազոտող պետք է անն, քայք պ. հալաթյանը դժբախտաբար նեղութիւնն չէ կրել անելու, ուստի և նա հայտը ժողովրդական առասպելների մասին հաճախ պարզ գաղափարի անգամ չուներ։ Եվ այդ անելը դժվար չէ, քանի որ հորինանքին ինքն էլ սովորաբար որոշ ասուել է թե ո՞րն է բուն առասպելը, և ո՞ր յուր զգարանքային պատմութիւնը։

Այի երբորդ ձևով էլ օգտվում է. հորենացին առասպելներին, բերելով անոնց բովանդակությունն առանց բնկնությունն, կամ այն պատճառով, որ աշխատարժու է այդ առասպելները, ինչպես Հաղամակնրաում պատմվածքը և Տորքի առասպելը, կամ բավականանում է միայն այնքա, որ յուր՝ որն է զբաղվող աղբյուրին առանց պատմությունն իբրև վկայություն է կոչում, ինչպես Նամիրամի մաշվան առասպելը:

ՎԱՀԱՅՆԻ ԱՌԱՍՏԵԼԸ

գալիս աստիճանի վրա աստիճանները և խոսքերը աստիճանաբար հսկանքներ, որք մարտնչում էին զոքս դեմ, ինչպես նորոգման Տիտանները—Հնաի դեմ, Այդ ավանդության բովանդակությունը, ինչպես որ էր աստիճանաբար հին ազգերի մեջ, կազմում էին աստիճանների ծնունդը և աշխարհի սկիզբը¹։—Եվ այդպիսի դիցաբանիքի շնորհիվ հասնում էին մեծագույն զանգվածները (Ա, թ), որի մեջ խոսվում է հսկանքների աշտարակաշինության և նախնիների մասին։

Թե էմիլիի այդ տեսությունը դուրս երևակայական է, շատ պարզ է հորենացնելու ու մի տեղ չէ հիշատակած թե այդ հատվածը «վեպից» է առած, և կամ հայոց առասպելների հետ որևէ կապ է ունեցած, այլ ընդհանրապես, պատմագիրը պարզապես վկայում է, թե դա Մար Արասի գրքի սկիզբն է։ Ուրեմն հորենացին այդ կտորը մի գրավոր աղբյուրից է առնում և ոչ «վեպից» կամ «դիցաբանական երգերից»։ Թե այդ գրավոր աղբյուրը՝ Մար Արաս՝ հորենացու աստիճան է, թե իրոք եղել է, թե Անանուն (Սուտ Արասեդուր) է, կամ այլ ոք,—այդ արդեն ուրիշ խնդիր է։ Ով էլ լինի այդ գրավոր աղբյուրի հեղինակը, կարող էր իրենից հնչյուններ լինել այդ պատմությունը, քաղելով մի այլ գրավոր աղբյուրից։ Եվ արդեն այ. հայաթյանը համազորի կերպով ապացուցել է, որ այդ հատվածը «վեպից» է մի հուսեական աղբյուրի հիման վրա, քանի որ աշտարակաշինության մի նման պատմություն «գրեթե» նույն արտահայտություններով գտնում ենք Եվսեբիոս Կեսարացու Փրոնիկոսի մեջ²։ Ուրեմն այդ հատվածը, թե թուտ հորենացու վկայությամբ և թե ըստ յուր բովանդակության, հայ աղբյուրական առասպելների հետ աստիճանաբար լուծվում է։

Վանդակի առասպելը։ Բայց այդպիսի բնավորություն լուծել հայոց միակ դիցաբանական առասպելը։ Վանդակի մասին առասպելը, որը, սակայն, ոչ թե հայոց երևակայական «վեպից» սկզբի երևակայական թեոգոսիական մասի մի հատվածն է, ինչպես ասում է էմիլ, այլ մի անշատ երգ։

Բերենը հորենացու այդ կտորն ամբողջ, քանի որ մեր հոգավոր ընթացքում պիտի պետք գա մեզ այդ³։ Մեր արդի Բար, Տիրան, Վանդակ, զորմե ասան առասպելի աշխարհիս։

Երկնքը երկնք, երկնքը երկնք.
Երկնքը և ծիրանի ծովը.
Երկնք ի ծովում ունի և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգնի ծովը ծովի ելաներ,
Ընդ եղեգնի ծովը բոց ելաներ,
Եւ ի բոցոյն վազեր խորտեալ պատուհնիկ,
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ բոց ունէր մորուսն,
Ու այդպիսի մին առասպելիս։

¹ Էմիլ, Բ, հորենացի <աղի> և հայոց հին վեպեր, թարգմ., եր. 36 հուն.

² Xalad. Ar. Գր. Գր. Գր. Գր.

³ Հայոց հատկանիշները ամբողջական վերջնական ենք ու էմիլիի գրադարանի Մ <այլ> Թ <այլ>, Մ 1666 և հորենացի, որի հետ բառացի նույն են ՄՄ 1666, 1672 (վերջինի մեջ ունի ունի իրենական աշխարհի), իսկ ՄՄ 1666, 1671, 616 ունի և ինչի միտքն, աշխարհիս։ Մ 1666 բացի այդ առարկան էր զարմայ Եւ ընդ եղեգնի ծովը բոց ելաներ, Եւսեբիոսի ընթացքում մեծագույն իսկ Մ 616 ունի ՄՄ Տիրանայ արդի Բար՝ Տիրան, Վահանգիս ընթացքում Այլ կարգի հեղափոխություն պատկերում է և լամբրոսացու օրինակը Մ. էմիլիի գրադարանի միտքում առանձին. հեղափոխությունը ապագա մի տեսակին են պատկերում, բայց առարկան ընթացքում մեծագույն, Եւսեբիոսի մի քանիսը լամբրոսացու օրինակին են մոտենում։

Եւ դայս երգեալ ումանց փամբոսմոր՝ լուսեց մերովք իսկ անանջօք, Յնտ որոյ և ընդ վիշապաց տակին յերգին կուռել նմա և յաղթել, և կարի իմն նըմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգելոյ» (Ա, 1ա)։

Ուրեմն, ըստ խորենացու, Վահագնի մասին այս պատմութիւնը գրքերի ծագում լուծի, այլ մի առասպել է, որ երգվել է, եթե խորենացին Ե դարու մարդ է, այդ դարում, իսկ եթե ավելի ուշ ժամանակում է ապրել, է կամ Ը՝ դարում՝ այս վերջին դարերում—երկու դեպքում էլ այնպիսի ժամանակ, երբ քրիստոնեութիւնն իրոք իշխում էր, շշմարիտ է խորենացու այդ վկայութիւնը, թե՛ նա քաղաքական ստում է, իրենից մի երգ է սարքում Վահագնի վրա և ասում է թե մեր ականջով լսեցինք այդ Ուրիշ խոսքով, Վահագնի այդ առասպելը ժողովրդական է, թե՛ մի շինծու բան, ինչպես աշխատում է ցույց տալ պ. Խաչաթյանը։

Վաճաղն Աստված։—Վահագն, որի աստվածութիւնը բացի խորենացու հայտնի է և Աղաթանգեղոսից, Բյուզանդից և Աստվածաշնչից, խորենացու մեջ դարձած է մարդ և հատկապես Տիգրանի որդի։ Թե հայոց նախարարների որդեցորդի դասավորութիւնը, ինչպես և ամբողջ ժամանակագրութիւնն ու ազգարանութիւնը, խորենացուներ կամ նորա գրավոր աղբյուրներին են, այդ հետո կտեսնենք։ Այստեղ նկատենք միայն, որ այդ ազգարանութիւն կարկատած լինելն երևում է, որինակ, միաձև հիշատակութիւնից. սորա (Տիգրանայ) որդի... Վահագն... սորա Առան, սորա Ներսեհ, սորա Զարեհ... սորա՝ Արմոգ, սորա Բազմ, սորա Վան, սորա Վահէ—անուններ, որոնց մասին պատմաագիր ոչինչ, կամ գրեթե ոչինչ չէ ասում՝ բացի Վահագնից։

Հայոց Վահագն աստուծու համարվելը խորենացուց իբրև անցյալ ժամանակների հայ նախնիքներից մեկը՝ անշուշտ հետևանք է քրիստոնեութիւնն կամ ավելի ռացիոնալիզմի։ Եվհաննիսի ժամանակից ի վեր արդեն տարածված և ապա քրիստոնեաների մեջ սովորական դարձած մի ուսմունք էր աստվածները համարել հնագույն ժամանակներում եղած նշանավոր մարդիկ, որոնք հետագայում աստվածացել են։ Այսպես, ոչ միայն խորենացու մեջ Վահագն հայոց նախնիքներից մեկն է, այլ Անանիա Շիրակացու մեջ մարդ են համարում Վահագն և Բարշամ։ Մարտեալ ումանց յառաջնոցն Հայոց ասացին՝ թէ ի խիստ ձմերանի Վաճաղն՝ Նախնին Հայոց՝ գողացաւ զյարդն Բաղասմայ [Բաղասմայ] Ասորոց Նախնոյն. զոր և մեք սովորեցաք ընախօսութեամբ Զարգոգի հետ անուանելոյ։

Նույն ուսմունքին հետևելով և ս. Լուսավորիչ Աղաթանգեղոսի մեջ (ԹԻՖլիսի տպ., 1882, եր. 42) մարդ է համարում Անահիտ դիցուհուն. «Այլ զոր դուք կուչս մեծ Անահիտ տիկին, լեալ իցին արդեօք մարդիկ ո՞ր յայնժամ երբեմն ժամանակի։ Քանզի դիցապաշտ կախարհութեամբ զմարդիկն՝ որ յայնժամն էին՝ ցնորիւց կերպս ի կերպս լինելով դիւացն, հաւանեցուցին մահեանս շինել, և պատկերս կանգնել և երկիր պազանելոյ։ Նույնպես և Նղնիկ (Վհենտիկի տպ., եր. 122) մարդ է համարում Զրվանին. «Զի և Զուրաբին իսկ մարդ լեալ է, այլ մի քաջ առ Տիտանօքն. և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց՝ զքաջս առ դիցապաշտնս ունել, հայեցեալ

¹ «Նախնիքն Շիրակուց Մնացորդ բանիցն, Մ. Գեորգիուրդ, 1877, եր. 48։ Այստեղ Սարգսն անվան յոգ Բաղասմ է, ուսկայն հ. Ալիշանի (Հին հայաստան, եր. 293) ձեռքած ձեռագրի մեջ եղել է Սարգսմայ Ասորեստանայն Նախնոյն, Բաղասմ է գրում և պր. Գեյլեր (Zur alt. Götterlehre, եր. 126 Ber. u. d. Verh. d. K. Gesellsch., 1896), Վհենտիքի գրազգարանի ձեռագրի շնորհիվ։

քէշակարկատին պարսից՝ թէ որովհետեւ մարդիկ աշխարհին զնա առ առ-
առաւած ունին, եւ զերկնից եւ զերկրի եւ զամենայն արարածոց արարչութիւնն
ի նմանէ կարծեցուցիցաւ:

Այսպէս եւ Խորենացին,—գուցեւ եւ Վահագնի մասին առասպելի երգիչ-
ները, քայքայեալ և առասպելը, զի անոր մէջ ոչ մի բառ չկա, որ Վահագնի իբրեւ
մարդ մատածկած լինելը ցուց տա,—նույն եմբեմբերական ուսմանքին հետե-
վելով, համարում է Վահագնին մի մարդ, ուստի և զնում է նորան յուր հեր-
յուրեւեմ ազգաբանութիւն մէջ, Բայց որովհետեւ նա կարծում էր, որ այդ մարդ
Վահագն պաշտել է հետազոտում աստվածանալով, և ինքն էլ Վահագնին
զնում է աստվածներէ շարքի մէջ՝ համասար Հերակլեսին, ուստի և նա, Վա-
հագնայց նախնի (Ա, լա, Բ, Ը, Ժ) Վահագնի մասին երգի բովանդակութիւնը
մէջ բերելուց հետո, հարկաւոր է համարում ամելացնել. «Այլ առնն զսա և
աստուածացեալ. և անգրի ի Վրաց աշխարհին կանգնեալ շափ հասակի սորա
պատուէին զոհեալ» (Ա, լա)¹: Այս հատվածը երգի բովանդակութիւնն շարու-
նակութիւնը համարելու, ինչպէս ընդունում են էմին, պ. Խալաթյան և ուրիշ-
ները ոչ մի հիմունք չկա և ոչ ոք հիմունքը միայն՝ տպագրածով՝ ճասէին, մեր
բերածով՝ ճասենք բայն է, որ ճերգելն են թարգմանում ըստ քամահանայ
(տե՛ս Բ զուրկ ճասենք բայն մասին): Այդ կտորը, ինչպէս հենց Նյուսը և
պատմելու մէջ ցույց են տալի, միայն պատմիչի խոսքերն են, որ նա, գուցե
Նյուսինսկ Վահագնի մասին երգեցիկներէ լսելով, և կամ գրավոր աղբյուրներէ
քաղելով, իրենից կցել է յուր պատմութիւնն մէջ՝ յուր մարդ ընդունած Վա-
հագնի հետազոտում աստվածացած լինելը հայտնելու համար միայն:

Ինչ աստված է Վահագն.—«Պատեցազմի աստված, գրում է պ. Խա-
լաթյանը՝, հիմնվելով Ազաթանգեղոսի այն կտորի վրա, որ Տրդատի հրովար-
տակի մէջ ասված է. «Փաշտելին հասցէ մեզ ի քաջն Վահագնէ»²: Բայց այդ-
տեղ միայն իբրեւ քաջ է ներկայացնում աստվածը և քաջութիւնն շնորհում.
Իսկ աղբյուրը, ինչպէս և Վահագնի համապատասխան լինելը Հերակլեսին,
դեռ բավական ապացույցներ չեն, որ նա պատեցազմի աստված եղած լինի:
Մյուս կողմից ոչնչով չէ ապացուցված և Վահագնին ճորտի և հաղթութիւն
աստված համարելը՝, հիմնվելով, թերեւ, Վահագն անվան ծագումի վրա
պարտից Վերեթրապան աստուծու անունից: Բայց եթէ պարսից Վերեթրապան
հաղթութիւն աստված է, հայոց Վահագնը այդ հատկութիւնը կարող էր
ունենալ և լուսննալ: Աստվածները մի ազգից մյուսին անցնելուց հետո՝ միշտ
անպատեճառ չեն պահում իրենց բնավորութիւնը: Իսկ որսի աստված հա-
մարելը, հիմնվելով ինչ-որ եղանակի գրույցի վրա, որ պատմվում է ս. Աթա-
նոսգինեոսի—Վահագնի իրավունքի հաղորդի—մասին, քնալ արժեք չունի³,

¹ Վերցրած ս. էջմիածնի գրադարանի № 1665 ձեռագրից. որին նման են № 1671, 1672, 616, իսկ № 1669, 1666 տե՛քն միայն «Այլ և առնն զսա և աստուածացեալ» տարբեր ը-
թերցվածը: Մնացած ձեռագրերին տե՛քն տպագրածի պէս. «Այլ ասէին զսա և...» ընթերցվածը:
Ուրիշ տարբերութիւնները թղթում են:

² Χαλατ. Αρμ. αποσ. հր. 202:

³ Ազաթանգեղոս, Թիֆլիս, 1882, հր. 82:

⁴ Gelzer, "Zur arm. Götterlehre, հր. 108:

⁵ Տե՛ս Է. Գեղեցիկի Հեռագրութիւն հայ գիտութեան վրա. Թարգ. Է. Է. Քաթալեան, Վնե-
տիկ, 1887, հր. 86. Թարգմանչի ծանոթութեանը, քաղած Է. Բ. Մարգարեանի Ազաթանգեղոսի
ուսման տարբերութիւնից, հր. 215—218: Ամէլսոյց չի լինի Նկտանը, որ ցարը Հուլիոսեանի զու-
գած կողմերում այս կամ այն որդի, զիմարտողն Աստվածունի վրա զտանվում է Նուր
եղնիկի գրույցը, որը մենք ալլաթանութեան լինք համարում, ինչպէս Է. Մարգարեան, այլ իր

քանի որ այդ զրույցը կարող է ոչ անպատեհառ Վահագնից անցած լինել ու Լիթանագրենեսին:

Որտե՞ր աստված կամ «անտառի» երենների պաշտպանն, կամ թե հաղթութեան և պատերազմի աստված լինելը, որ միայն մակարերութուններ են, և թե ճիշտ էլ լինին, դեռ չեն բացատրում Վահագնի ընամբորտությունը կամ Ֆիզիկական ծագումը, որ ունի աստվածը, ինչպես ճիշտ նկատել է պ. Գեյցերը, գրելով. «Աստուծու Ֆիզիկական բնավարությունը, որ ծննդուն առաջացելի մեջ դեռ պարզ երևում է, հետևազույն ժամանակում արդեն շատ հետ է մղված և դժգոհացած: Վահագն ներկայանում է արդ իբրև որտե՞ր հաղթության աստված»: Ուրիշ խոսքով, Վահագն սկզբնապես Ֆիզիկական ծագում ունի և հետևապես միայն, եվհեմերաբար մտածվելով, իբրև մարդ է ներկայանում, կամ թե վերացական գաղափարների, ինչպես են հաղթություն ու քաջություն, մարմնավորում՝ աստված:

Ինչ Ֆիզիկական ծագում ունի Վահագն, կամ ո՞ր Ֆիզիկական երևույթի անձնավորումն է նա: Ահա թե ի՞նչ պետք է իմանալ Վահագնի մասին առասպելի իսկութունը հասկանալու և անտր ուղիներով լինելի իմանալու համար:

Վեհուզն արեգով. — Առասպելաբանության մասին քիչ ու շատ ծանոթություն ունեցող ամեն ոք իսկույն կնկատե, որ արեգակնամասն արեգից, հըրամազ ու բոցամորուս պատանայակ աստվածը, երկնքի և երկրի, ծիրանի ծովի և մի բույսի — հողեցիի որդին, բնության մի երևույթի անձնավորում պիտի լինի: Եվ այդ նկարագիրը բավական հարմարվում էլ է արեգակին: Ուստի և հ. Ալիշան (Հին Հայաստ, եր. 86) Վահագնի այդ նկարագրին արեգակին է վերագրում: Վահագնի այս մեծածնումն արեգակին նոր չէ. Փիլոն Նրարացու ռվասն տասըերանեան օրինացա գրվածքի մեջ արդեն կա. «Թանգի կույն ումանք... զհոռ շնփնտոսն և արեգական (վարիանս՝ արեգակն) զվահագն»¹ Այսպես և ավելի ուշ դարերի գործ Տեոնական մատենանիս մեջ հիշված է. «Ումանք դարեգանն պաշտեցին, և Վահագն կույեցին. և այլք զլուսին, և Ար-

մի հին զույց, որ որսերին է անցել հեթանոսությունից: Ու մի տեղից չէ, սակայն, այդ զույցը Վահագնի վերագրելու, և ալ իսկ ո. Լիթանագրենեսին համարելու միայն Վահագնի հայրը:

¹ Götter, Zur armen. Götterlehre, եր. 108: Գե-ը է Նգամել, որ այս հարևոր ուսմածքի հայերեն թարգմանության մեջ, որ հիշված է Նախորդ ծանոթության մեջ, հան խոսք փոխեր. օրինակ, մեք բերած ուսյն հարցը, «Der im Geburtsmythus noch deutlich erkennbare physische Charakter des Gottes ist nun späterhin stark zurückgedrängt und verblässt. Vahagn erscheint als Jagd—und Siegesgott», թարգմանած է. «Թահագն հորս ընդարույն (?) ընամբորտությանը, որ արդեն պարծա հերթով հեռացվել ձեռնդան առասպելին մեջ, ավելի ուշ ծանոթակ բոլորովին հայտնի լինի: Վահագն հը-նեքհայան ճիշտվի որտե՞ր հաղթության զիջք (եր. 28): Եւ այնպես և հետևյալ հարցը. „Diese Genealogie ist natürlich wertlos, um so wichtiger das bekannte kleine Fragment eines auf Vahagn bezüglichen Liedes“, որ նշանակում է. «Որքան այս ազգաբանությունը արժեք չունի հարկավ, այնքան ավելի հարկա է (հին ուսմ) Վահագնի վերաբերյալ երգի հայանի վաղրիկ համարածը: Վեհուզնի թարգմանելը արամեզյանին հակառակ է դրել. թարգմանելով. «Բնականորա արժեք չունի այդ ազգաբանությունը, ինչպես Եսե, Վահագնի մասին ավանդված երգին այն ծանոթ պատահիկն» (եր. 32): Դուրս է դուրս, որ երգն ևս արժեք չունի, մինչդեռ նեղնակը մեծ արժեք է առյուծ ունի:

² Փիլոնի թարգմանությունը մեծի տակ լուսննայով՝ ողովում ենք պ. Խալաթյանի սվեդիցը. եր. 202, ծան. 5 և Բ Մառ, տեյսվածք, եր. 51: Նույն համարներ բերած է և Լույս. լեզ. հոր բառացի մեջ Վահագն բառի տակ. «Արեգական զվահագն (հուս. զվեդգոն), և լուսնին զվարանմիս (այսինքն զվեհուհիս), և Արամեական զվեհուհի (այսինքն զվարանգիս)»:

տեմիս ձայնեցին¹։ Բայց այս երկու կտորը, որոնցից Փիլոնի մեջ հիշվածը նշանակութուն ունի, քանի որ այդ թարգմանությունը հին է համարվում, դեռ բավական լին կարծելու, որ Վահագն Արեգակի կամ Ապոլոնի հետ նույն է եղել։ Այդ հատվածները միայն այն են ցույց տալիս, որ անոնց թարգմանիչը կամ հոբինոզը Վահագնին Ապոլոնին են մոտեցրել, մինչդեռ ուրիշները և ավելի շատերը, որոնց թվում և Խորենացին, հայտնի է, Վահագնին հավասարում են Հերակլեսին, Այս երկվությունն անշուշտ այն պատճառով է, որ մեր աստվածներից ոչ մեկն էլ կատարելապես համապատասխան չէր կարող լինել հունաց այս կամ այն աստուծուն, այլ որոշ զոհերով կարող էր այս, միանգամայն և այն աստուծուն մոտենալ ավելի կամ պակաս չափով։

Մենք Վահագնին սկզբնապես արեգակի աստված լինել համարում, այլ քրեոլոգիան մի ուրիշ երևույթի, հատկապես ամպրոպի անձնավորում։ Սակայն նախքան մեր կարծիքը բացատրելը, ավելորդ չի լինիլ տեսնել պ. Խալաթյանի կարծիքը Վահագնի վրա եղած երգի մասին. և կենրոն ընթերցողները, եթե մի փոքր երկար պիտի կանգ առնենք այդ մասին, Հարկավոր է մի անգամ ծանոթանալ պ. Խալաթյանի համեմատելու եղանակին, որ նա հաճախ գործ է դնում լուր գրքի մեջ։

Մի նմուշ պ. Խալաթյանի «եկոնագոսությունից»։—Պ. Խալաթյանն ևս Վահագնին արեգակ և նորա երգն արեգակի ծագման նկարագիր է համարում։ Բայց, դժբախտաբար, ինչպես շատ դեպքում, այստեղ էլ տարտամոթյան մեջ է մնում։ Նա գրում է. «Արդարև, այս հատվածը, թեպետ և ոչ ամբողջապես, Խորենացու աշխատության մեջ, գուցե, միտկ պահպանված օրինակն է ուշ ժամանակի երգի, որ փոխաբերական արտահայտություններով, հավանորեն, պատկերացնում էր արեգակի ծագումը»²։ Մի ուրիշ տեղ (եր. 205) այդ օրը ամբողջապես բառը պարզում է փակագծերի մեջ. «Խորենացու դարում, գուցե, կառ է ժողովդի մեջ որևէ բնատկան օտանավոր, որ բովանդակում էր արեգակի ծագման նկարագիրը, բայց այդ երգն այդ ձևով, որ ունի մեր պատմագրի մեջ (բացի, գուցե, ռաբին շոթա աղից), վստահելի չէ (возбуждает недоверие)։ Ես քրամադիր եմ անդ մեջ տեսնելու արվեստորեն (искусственно) դիսից-զինից փաղած մտավմեհ, որոնք ուշ ժամանակի երգի ձևով հերյուրված են, սակայն ոչ միշտ հարող, իսկ այդ մտածվածները, ինչպես ուրիշ դեպքներում, վերցրած են գրավոր աղբյուրներից, հատկապես Աստվածաշնչից և Անանիա Շիրակացուց, որոնցից քաղելով՝ երգը սարքել է Խորենացին։ Այնուհետև պ. Խալաթյանը գրում է (եր. 208). «Այդ երգն արվեստական է կամ, գուցե, հայ պատմագրի կողմից մշակություն (переработка) է կրել, այսինքն ժողովրդական երգն եղել է. բայց Խորենացին փոփոխել է նվ տալանքներ կարծես քավական չէ, պ. Խալաթյանը (եր. 208) գրում է նաև. «Ես ենթադրում եմ, որ այս սերգը լավագույն դեպքում կարող է եղած լինիլ մի բնատկան օտանավոր, սակայն առանց առնչություն ունենալու Վահագնի հետ»։

Քանի՞ տեսակ բան է ասում պ. Խալաթյանը։ 1. Եթե երգն արվեստական է և Խորենացին է սարքել Աստվածաշնչի և Շիրակացու մոտիվներով վրա, բայց այն ժամանակ էլ ի՞նչպես կարող է դա միտկ օրինակը լինել ժողովրդա-

¹ Տե՛ս քննարկումս <Հրեք> Հայկ<ուհեան> լեզուի. Վահագն 2, Այլիան (Հին հույան, Ժր. 88) մեջ է բերել նույն հատվածը, միայն Վահակն ընթերցվածով։

² Арх. зап., Կր. 208.

կան երգի: 2. Եթե խորհնացիին սարքել է միայն երգի երկրորդ մասը, իսկ սկզբի երեք (ըստ պ. հալաթյանի շորս) տողը՝ «երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն» ժողովրդական են, բայց այն ժամանակ էլ ի՞նչ իմաստ ունի խոսել արեգակի ծագումն վասին և ասել թե դուքն կար էլ մի ժողովրդական երգ արեգակի ծագումը նկարագրող: 3. Ի՞նչ որ սկզբի տողերն առանձին վերցրած, առանց երկրորդ մասի, կարելի չէ իբրև արեգակի ծագում մեկնել: Մեր խնդիրը դոնե բարձր է այդ, և պ. հալաթյանը չէ ասում մեզ, թե ի՞նչպես կարող է ինքը մեկնել: 3. Խնչպես կարող է միեւնույն արվեստական երգը, որ շինած է Աստվածաշնչի և Երբակացու մոտիվներով, լինել միանգամայն և զբաղված մշակութային կրթման մի ժողովրդական երգ: 4. Կարո՞ղ է մի արվեստական երգ, որի ինչ մոտիվներով սարքված լինելը ցույց է տալիս պ. հալաթյանը, լինել միանգամայն և ժողովրդական երգ, թեպետև ոչ Վահագնի վրա:

Ահա թե ի՞նչ է նշանակում զուցեններով և թե անթաքտում եմ-ներով խոսել. և քանի՞ տեսակ իրար հակասող բան կարելի է միեւնույն երգի մասին ասել: Բայց ի՞նչ արժեք ունին այդպիսի անհիմն զուցենները: Այդ զուցեններին քիչ ու շատ արժեք ունի միայն այն զուցենը, թե խորհնացիին, թեպետև դուքն առաջին երեք տողից, սարքել է այդ երգն Աստվածաշնչի և Երբակացու մոտիվների վրա: Այստեղ գոնե աշխատում է պ. հալաթյանը հիմնել յուր կարծիքը: Տեսնենք նորա հիմունքը:

«Ճունկնալով ձեռի տակ բավարար նյութ շինծու հայ թագավորի (Վահագնի) պատմութիւնն համար, բայց ցանկանալով աստված-հերոսի փայլով ներկայացնել նորան, հայ պատմագիրը մի ինչ որ երգ շինել է ուզում նորա վրա: Որովհետև նա Փիլոնի թարգմանութիւնից գիտեր, — այդպես է ցանկանում պ. հալաթյանը, որ խորհնացիին անպատեհառ իմանար Փիլոնի թարգմանութիւնից, — որ Վահագն արեգակի հետ նույն է աշխնքն հավասար է Ապոլոնին, ուստի նա ուզում է Վահագնի վրա այնպիսի երգ շինել, որ արեգակի ծագման նկարագիր լինի: — Բայց հավաստի գիտենք, որ խորհնացիին Աստվածաշնչից, գուցե և ուրիշ տեղերից, գիտե, որ Վահագն նույն է Հերակլի հետ, և ինքը խորհնացիին էլ երկու տեղ յուր պատմութիւնն մեջ (Բ, Ժբ, Ժզ) Վահագնին Հերակլի հետ է նույնացնում: Այդ նշանակութիւն չունի, նորա քեֆն ուզում է, որ Վահագն այստեղ Հերակլից հեռանա և Ապոլոնին մոտենալով՝ արեգակ դառնա: — Բայց հենց իր շինած երգի թղթադակութիւնը մեջ բերելիս էլ խորհնացիին Վահագնին Հերակլի հետ է համեմատում և ասում. «և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին»: — Այդ էլ նշանակութիւն չունի. խորհնացիին պետք է այստեղ Վահագնին իբրև արեգակ մտածած լինի: որովհետև Փիլոնի թարգմանութիւնը չէր կարող անհայտ լինել նորան: Բայց ա՛խր խորհնացիին այդ առասպելը ներհակի պես չէ մեկնում և ոչ մի ակնարկ չէ անում, թե այդ երգի մեջ արեգակի ծագման նկարագիրն է: Այդ էլ նշանակութիւն չունի: Բավական է, որ մեզ այդ երգի մեջ արեգակի ծագման նկարագիր ենք տեսնում: Ուրեմն պարզ է. որ խորհնացու համար էլ Վահագն արեգակ է, որ երգն արեգակի ծագումն է ցույց տալիս և խորհնացու շինածն է: Եվ ահա՛ թե ինչպես.

Մի բարի օր, երբ Վահագնի վրա երգ շինել է ուզում, կարգում է Փիլոնի մեջ Վահագն արեգակի հետ նույնացած և Ապոլոնի տեղ դրված: Խնչպիսի պատկեր տամ իմ արեգակն-Վահագնին, մտածում է այդ ժամանակ պատմագիրը և շիվարած մնում, թեպետև նա քաջ ծանոթ լինելով հունական ա-

ռասպելներին՝ գիտեմք, որ արեգակն-Ապոլոնը (= արեգակն-Վահագն) ներկայանում է իբրև ոսկեգլխակ գեղեցիկ պատանի: Բայց հունական առասպելները չեն օգնում նորան, և նա այդ բարի ժամին հիշում է, որ Անանիա Շիրակացու մի գրվածքի մեջ կարդացել է. «Արեգակն... պատանի անմօռուտ, ոսկեգլխակ, որի ընթանից այսպեւ ելանէ՞ն սաստիկ: Եվ ահա արդեն պատրաստ է խորենացու համար արեգակն-Վահագնի պատկերը՝ պտտանի: Բայց խորենացին ճամբարից է, որպեսզի լրանվի յուր գողութիւնն մեջ, նա Շիրակացու պատանին դարձնում է պատանեակ: Եվ ահա այս պատանեակ բառը հիշեցնում է նորան Աստվածաշնչի մի կտորը. «Եւ էր (Գալիթ) պատանեակ խառնեալ և այլա՞ն գեղեցիկ» (Ա թագ., Ժ, 42): Այստեղից էլ վերցնում է խառնեալ բառը և, որպեսզի այս գողութիւնն մեջ էլ լրանվի, «խառնեալ» բառն առաջ է դնում և պատանեակ բառը դարձնում է պատանեկիկ ու գրում «խառնեալ պատանեկիկ»: Ուրեմն երկու բառը գտանք ռուսերից էլ վերցրած, — մենք Աստվածաշնչից, մյուսը Նիրակացուց, և գտանք այնքան բարեխղճորեն, որ «մի վարկանախ» մեջ եղած «խառնեալ» բառն էլ չմոռացանք: Պարզ է, որեւմն, որ պատանեկիկը Շիրակացուց է, իսկ «խառնեալ» Աստվածաշնչից:

Ապա «Շիրակացու մեջ նույն տեղում, նույն հասի մեջ, նույն նրբսինք կարդացել է՝ Ղարի գրքից մի կտոր. «Զի՞նչ վայրք իցին, ուր ծածկեմ ես դարեգակն ի դիշերին», եվ կարծում եմ թե խորենացին յուր արեգակն-Վահագնի համար այս կտորից էլ օգտվել է: Բայց, ոչ ոչ Այդ կտորը ծառայել է նորան միայն Ղարի գրքից հիշեցնելու: Իսկ մի անգամ որ Ղարի գրքից միտն է ընկել, նա հիշել է, որ այդ գրքի վերջին գլուխների մեջ գտանք և վիշապ անվան տակ նկարագրված են երկու սոսկալի գազան՝ ձիագետին (քեհեմոթ) և նորա ընկեր կոկորդիլոսը (կեհաթան), որոնցից վերջինի նկարագիրը պ. Խալաթյանն յուր Աստվածաշնչի հմտութեամբ համարում է «Հին Կտակարանի սատանայի ահեղ և մեծավայելու պատկերը» (Гробоу и величаеу изобразеу): (Ոգոթմելի՝ սատանա, որ կոկորդիլոս էլ դարձար): Եվ մտածել է խորենացին. եկ, ես այս սոսկալի վիշապ-կոկորդիլոսի (կեհաթանի) նկարագրից էլ օգտվեմ իմ «խառնեալ պատանեկիկի» համար: Զե՞ որ այնտեղ (Ձոր, խա, 9) վիշապի համար ասած է. «Այ՛ է նորա իբրև զտեսիլ արուեսիլ»: որեւմն իմ պատանեկիկն էլ այդ պիտի ունենա: Բայց ի՞նչպիսի աչք: Այդ ժամանակ խորենացին իսկույն հիշում է, որ Հայտնութիւն գրքի Ժ գլխի մեջ նույնպես կարդացել է «այլ» բառը. «Եւ աչք նորա (Բանին Աստուծոյ) բոց հրոյ: Եվ շարունակել է մտածել խորենացին. ի՞նչպիսի աչք տամ իմ պատանեկիկին: Թե բոց ասեմ, թե արուեսիլ, իսկույն կիմացվի գողութիւնս: Հապա ի՞նչպիսի աչք. չէ՞ որ աչքը պետք է լինի անպատճառ, որովհետև այն հրեշ վիշապ—կեհաթան—կոկորդիլոսը—բոց ար. Խալաթյանի սատանան—այլ ունի: Եվ ահա լգիտենք ի՞նչպե՞ս,—երեւի աչքը հիշեցնում է երեսը,—օգնութիւն է հասնում Հայտն. գրքի մի ուրիշ, Ժ գլխից, ուր ասած է. «Երեսի նորա (հրեշտակին) իբրև զարեգակն»: Այս լավ եղավ, ասել է խորենացին. «Ե՛կ ես Ղարի գրքից և Հայտն, գրքի Ժ գլխից աչքը վերցնեմ, իսկ Հայտն. գրքի Ժ գլխից՝ արեգակը և «գիտմամբ հեռանամ իմ աղբյուրից, որպեսզի աչքի չընկնի թե ես վերցրել եմ աչքը Ղարի գրքից և արեգակը՝ Հայտն. գրքից: Եվ որպեսզի գողութիւնս ամենակի լրանվի, չասեմ «այլ» նորա իբրև դարեգակն, այլ աչքն աչկուե՛ք չի-

Շիրակացու բերած այդ կտորը հայերեն թարգմանութեան մեջ այդպէս է. «Զի՞նչ երկիր իցէ յսրբոյ յոյսի ազանցի, եւ զի՞նչ անգի խառնի» (Ձոր, լր. 19):

նեմ, արեգակն էլ արեգակուեմ և ասեմ սեւ աչկուքն էին արեգակունքս: Ո՛հ, այժմ շատ լավ է. ոչ ոք կարող չէ իմանալ իմ խարդախութիւնը: Խեղճ Խորենացի, յի մտածել, որ քանի դար հետո պ. Խալաթիւնը պիտի իմանար, որ աչկ ռանքն պիտի լինի այժ, և վիշապ-կոկորդիլոսի՝ այժն է, իսկ արեգակունքը պիտի լինի արեգակն, և Հայտնութեան հրեշտակի երեսի արեգակն է:

Այնուհետև Հորի գրքի մեջ կարդացել է Խորենացին. «ընդ ոնգունս նորա ծովս ելանէ Հնոցի հրոյ կայծականց: Անէն նորա կայծակունք, և բոց ի բերանոյ նորա ելունէ»: Եվ այդ բաժական լէ, Հայտնութեան Թ գլխի մեջ էլ շեւանէր ծովս ի գրոյս, և ապա սեւ ի թերանոյ նոցա (ձիոց) հուր ելունէ և ծովս: Եվ մտածել է Խորենացին, այս կտորներէ մեջ վիշապ—կոկորդիլոս—Լեխաթանի, ըստ պ. Խալաթիւնի՝ սատանի զթից ծովս է դուրս գալիս. ծովս է դուրս գալիս և մի գութից ու ձիերի բերանից: Արի հա իմ արեգակի ծագման նշկաբազրի մեջ էլ ծովս դուրս գալը մտցնեմ: Բայց այս երկու տեղից միայն թծովս ելանէր թառերը վերցնեմ, իսկ սառանի քի, ձիերի քիւանի և այն գութի տեղ դնեմ մի անմիտ բան, ընդ եղեգն փող, որ իսկի լիմացվի, թի թծովս ելանէր թառերն այստեղից եմ վերցրել: Բայց սատանիս համար, ասած է նաև, թի բերանից բոց է դուրս գալիս: Այդ բոցն էլ պետք է վերցնել արեգակի ծագման նկարագրի մեջ: Բոցը ես ղրտեղից հանեմ, ղրտեղից լեհանեմ, մտածել է Խորենացին: Եվ ահա նա այնքան անշնորհք է գտնվում, որ էլ ուրիշ բան չէ գտնում, որտեղից բոցը հանել կարողանար, և բոցն էլ ընդ եղեգն փողն է հանում:

Այս են հիմունքները, որ բերում է պ. Խալաթիւնը՝, և այս են զգրքերից վերցրած մատիվները: Եվ այս «հետազոտութիւնից» հետո պ. Խալաթիւնը շտապում է ավելացնել. «Այսպիսով Շիրակացու ոսկեղիտակ անմորուս պատանին Խորենացու մեջ դառնում է մի պատանեկիկ, որ հուր հեռ ունի, բոց ունի մորուս: Բայց թի այդ կերպարանափոխութիւնն ի՛նչպե՞ս է կատարվում, և ի՛նչպե՞ս «անմորուս» բառը բոց ունէր մորուս է դառնում, «սակեղիսակը» դառնում է «նա հուր հեռ ունէր», և թի Խորենացին ղրտեղից է վերցրել «եղեգան փողը», սեւ ի բոցոյն... Վաղէ՛ք բառերը,—մեզ այդ լէ ասում պ. Խալաթիւնը:

Իսկ առաջին երեք տո՛ղր: Ո՛հ, այդ տողերը զոլոց ժողովրդական երգիցն են, որոնք մենակ էլ վերցրած, թեպետև անհասկանալի կերպով, բայց գուցե արեգակի ծագումն են նկարագրում: Եվ կարծում եք, որ եթե պ. Խալաթիւնն յուր ամբողջ գրքի մեջ այնքան մեղմ սրտով է վերաբերում այդ երեք տողին, նա համոզված է, որ այդ երեք տողը ժողովրդական են: Գուցե: Մենք մեր կողմից գտնե հավատացած ենք, որ եթե այդ երեք տողին խնայում է, անոր համար է միայն, որ ուրիշ գրքերի մեջ, երևի, անոնց նմանը չէ գտնում: Բայց պետք չէր վշատիլ. «հետազոտութիւնը» կատարյալ անելու համար պետք էր միայն որոնել, և այդ երեք տողն էլ, և մնացած բոլոր բառերն էլ դուրս կը գային: Եվ պ. Խալաթիւնը թույլ կտա մեզ, որ մենք շարունակենք նորա մեթոդով քննել:

Պ. Մասն արդեն նկատել է, որ պ. Խալաթիւնի մեջ բերած Հորի տողերից մեկը (խա, 12) երբայական բնագրից բառացի կարելի է այնպես թարգմանել, որ ավելի մոտ լինի Խորենացու ընդ եղեգն փող ծովս ելունէ խոսքին, այնպես որ թծովս ելանէր թառերի կողքին լինի և «եղեգն»: Ե՛հ

¹ „Арм. энцикл. I, кр. 208 հտւ., II, кр. 21.

² „Виз. прим.“, кр. 208.

Խորենացիին, երրայնորենից չէր կարող օգտվել, կասեց պուքն պ. Խալաթյանը, Բայց դրա դեղն էլ կամ Միթն նույն Հորի գրքի մեջ նույն հրեային, նույն զա-
ղանի ընկերի համար չէ ասած, որնդ արգի արգի ծառած չենք, առ պարտուով
և եղիզմաբն:— Եի բողոք... վազէր բա՞ռն եք ուզում: Բաց արեք Առաքելոց
Գործք, ԺԴ, 13 և կգտնեք Վեպոլիցիոն յամբոխէն: Ուրեմն ձեզանք բառն էլ
այստեղից է վերցրած, և չամբոխէն բառի տեղ զոգտամարք դրած է քի
բողոքայն: Առաքիւն երեք տողի՞ց եք ուզում: Եսայի, ԿՁ 8 կգտնեք Վերկենաց
երկիրք խոսքը: Ուրեմն մեր պատմագիրը Վերկենէր երկիրն էլ այստեղից է
վերցրած: Մնացին երկիրն ու ծովը: Դեհ, երկիրն ու երկիր ու ծով միշտ իրար
հետ կապված են, ինչպես և հենց նույն Եսայի մարգ. սկզբում. Վերկ, երկիրն,
և ունին դիր, երկիրք և կամ Հայտն. ԺԴ, 1. Վերկն և երկրի և ծովու: Որ եր-
կիրը երկնում է, երկիրն ու ծովն էլ հետը պիտի լինին: Այդ է պահանջում
մտքի զուգորդութիւնը (ассоциация), որին այնքան մեծ տեղ է տալիս պ.
Խալաթյանը յուր հետազոտութեան մեջ Խորենացու հոգին վերլուծելիս: Թե
այդ էլ չէ քաղական և ծովն անկախ եք ուզում, այդ էլ դժվար չէ: Հորի գրքի
նույն գլխի մեջ, նույն երեքին, նույն վերջապ-կոկորդիլոսի—բատ պ. Խա-
լաթյանի սատանայի—համար միթն չէ՞ ասած Թե ծովի մեջ է լինում և Վեպ-
նայն ունի ծովու ընդ նովա: Իրեն զկաւ ամբաւ, Եսայիցան է զանգունդ
[ծովու] իրեն զկատաւ, համարի զծով իրեն զոչինչ (Յոր, ԽԵ, 21—22),
Ծովն էլ այստեղից է, ուրեմն: Թե չեք հազանում, Հայտնութեան գրքից էլ
հաշտենք այդ ծովը. միթն նույն Հայտն. գրքի, նույն ժ գլխի մեջ, որից հը-
րեշտակի երեսի տեղեկը վերցրել է Խորենացիին, բատ պ. Խալաթյանի, և
Վահագնի ալքի համար դրել, մի համար հետո (Ժ, 3) նույն հրեշտակի համար
չէ ասած. սեղ զոտն իւր աչ ի վերայ ծովու: Մովի ծիրանի ածականն եք
ուզում: Դե՞ որ մի անգամ Աստվածաշնչից ըծովն բառը զոգտամում է մարդ,
այն ո՞վ է, որ զկարմիր ծովու չհիշեք: Բայց խո՞ Խորենացիին գիծ չէր, որ
զկարմիր ծովո գրեք, իսկույն կիմացվեր, որ Ս. Գրքից է. ուստի զկարմիրք
բառն այստեղից վերցրել գրել է ծովի մեջ եղած հեղեղի վրա, իսկ ծովի հա-
մար ուրիշ ածական է որոնել: Եվ շատ հեշտութեամբ գտել է Վերկանի բառը,
մանավանդ որ Աստվածաշնչի մեջ կարմիր հետ այնքան հաճախ Վերկանի է
հիշվում (օրինակ, Եղ, իը, 5, 8, 14, 5, 15, 25, 19, 3, 5, 8, 22 ևլն): Է՛հ, մը-
նացին Վերկ, Վերկն, Վերկն, Վերկն բառերը: Վախենում եք, որ այդ բա-
ռերը չգտնե՞նք Աստվածաշնչի մեջ:

Բայց այդպիսով, այդ հղանակով վարվելով, ո՞ր երգի այս կամ այն
կտորը կարելի չէ Աստվածաշնչից և մի քանի ուրիշ գրքերից հանել: Սակայն
ի՞նչ արժեք ունին այն համեմատութիւնները, որոնց մեջ հետազոտողը քո-
վաղեղեղաբայն, իմաստի վրա ուշադրութիւն չէ դարձրած, և միայն քառիւ է
վերցրած, Հայերեն բառերը խո՞ բառարանի մեջ էլ կան: Նախքան համեմա-
տելը պ. Խալաթյանը պետք է ցույց տար Թե ի՞նչ իմաստի կապ ու նմանու-
թիւն կարող էր լինել, յուր կարծած, արեւգակի ծագման և Ս. Գրքի վի-
շապ-կոկորդիլոսի՝ նկարագիրներին մեջ: Թե արդոք վերջապ-կոկորդիլոս-
լենիթանը օրեւ տոկլաթլուն ունի՞ տեղեկի ծագման հետ և կարո՞ղ է այդ
հրեք գաղանը, որի փորը պղնձի վահաններ են, հողերը գալլախաղ վեմեր
կն, յուր տրամաբանով գտնե որեւ նմանութիւն ունենալ Տխարախաղ պատա-
նակիին: Հետ, որին համարում է արեւգակի անձնավորում: Իսկ եթե այդ
գաղան լսիաթանը որեւ առնչութիւն անգամ չունի արեւգակի հետ, և նորա
արտաքինի նկարագիրը ոչնչով նման չէ արեւգակի ծագմանը, կամ Վա-

հազնի նկարագրին, ի՞նչ արժեք ունի ասել թե նորա նկարագրի մեջ ևս հիշվում են տալքա, թծուխ և բոց ելանէա թառոնը: Միթե մե՞ծ զարմանք է, որ աշխարհի վրա թծուխ ու բոց են հիշվում, և կամ աշխարհի վրա թծուխ ու բոց նշանում են: Եվ մի՞թե թծուխ նշանէա կամ բոց նշանէա խոսքն այնքան քնոթոյ մի ոն է և առանձնապէս Աստվածաշնչին միայն հասուկ, որ ևթն մի տեղ թծուխ ու բոց ելանէա գտնենք, կարողանանք ասել թե Աստվածաշնչից է վերցրած: Այն ո՞ր աշխարհում է, որ ամեն թոնրից-ծուխ ու բոց չէ ելնում: Եվ կամ երբ մեր ժողովրդական երգերի մեջ այսպիսի թուխ ու բոց թառոնի հետ հիշանելու քայն է գործածվում: Միայնակ կենեւ թարակ ծուխ», բոցեր կեն-լին»... միթե պիտի ասե՞նք, որ Աստվածաշնչից է վերցրած: Եվ կամ աչքը միայն հրերից բանաստեղծութիւն մեջ պիտի մտնէր և միայն վիշապ-լինա-թանն այդ պիտի ունենար, որ երբ հայոց բանաստեղծութիւն մեջ մի պատանեկէկն աչկուեմ ունի, կարողանանք ասել, թե հայերն Աստվածաշնչից են վերցրել, և թե այդ աչկուեմը Հիւսիսային աչքն է կամ Բանին Աստուծո: Այդ պէս և արեգակը: Զէ՞ որ այս է ասում պ. Խալաթիւնը: Զէ՞ որ նորա համեմատութիւնները զուտ բառակաւ են և նույնիսկ արտահայտութեան ձևեր չեն, թեպետև նա ժողովրդներ է կոչում: Բայց նման ժողովրդներ լինելու համար չէ՞ որ հայոց երգի մեջ ևս, ինչպէս Ա. Գրիգորի մեջ է, աչքի հետ բոց պիտի լինեն, և ոչ արեգակն, արեգակը երեսի հետ պիտի լինեն, և ոչ այսքի, ծուխն ու բոցն էլ պատանու քրից ու քերտից պիտի ելնեն և ոչ թե թընդ եղեգան փողոս: Գոնե այդպիսի արտահայտութիւն նմանութիւններ լինելու պ. Խալաթիւնի մեղքերածնունդը: Այդ ժամանակ դոնե կասեինք, որ թեպետև իմաստով իրարուց շատ հոգի, բայց արտահայտութիւն մի քանի եղանակով իրար նման են, մի կողմից լինաթանի ու Բանին Աստուծո և մյուս կողմից արեգակի ծագման կամ Վահագնի նկարագրերները:

Բայց նույնիսկ եթե այդպիսի արտահայտութիւն նմանութիւններ լինեն, օրինակ, հայոց երգի մեջ էլ լինէր պատանու քրից ծուխ, ու բերնից բոց կամ կրակ է դուրս գալիս, կամ պատանու երեսն էին արեգակուեմ, կամ պատանու աչքն էին բոց հրոս, կամ պատանու աչքն էր արուսայկի նրման, — մի՞թե նույնիսկ այդպիսի նման արտահայտութիւններն, ասում ենք, որն է բան կարող էին ապացուցանել, թե հայոց երգի հեղինակը Հոբել ու Հայտնութիւն գրքերից է վերցրած այդ արտահայտութիւնները: Մի՞թե անօրովոր բան է զանազան ազգերի բանաստեղծութիւն, մեջ հրեաների, վիշապ-ների քրից ու բերանից ծուխ ու բոց դուրս գալը (հմտ. հայերն դարձվածք. քրիցը ծուխ դուրս գալ, ելնել), կամ երեսն արեգակի, լուսնի, արուսայկի հետ համեմատելը, կամ աչքը կրակի, բոցի և որն է աստղի հետ համեմտեցնել օրինակներ մեր ժողովրդական բանաստեղծութիւններից:

Լուսնու տաղ (տրուշակ) ևս աստվածուն...

Սարաթո (դձձոց, երես) արեգակի կը նմանի,

Պատկերը արեգակուն հետն առնա ևս:

էն ինչ ճշն էր՝ արեգակուն հետն,

Ինչ կեռօր կամար . կրկապի.

էն ինչ միջնակն էր՝ լուսնին հետն,

Որ առնակին կըցորի.

էն ինչ պատկն էր՝ Լուստաղի հետն,

Որ աստվածուն կետիին կըծագէր:

1 Լուստաղայն, Հնչիսթեք, 2, 81:

2 Երեսնց, Վահա ապ, Էք, 32:

Փելեգ կրօսա արեգակաւն,
Կարմիր երեւո՞ւ արուն կաթաւն,
Երեւոյ է արեւիկի պոռ,
Ժեքէմի (ձեռք) զամ (զակ) թնկ նման՝,
Արն, եմաւ յոգնող կաթաւն,
Ճարձամ զքոյ՞ դաշտոյ ունեւ՝:

Ահա՛ ձեզ ժողովրդական կամ ժողովրդականի հետեւողությամբ գրված քանաստեղծութիւնք մեյ երեսն արեգակի, լուսնի, արեւոյակի եմաւ, դեմ ու դեմ ածող ալիքն արեգակի եմաւ շողշողուն: Մի՞թե՛ Հորի և կամ Հայտնութիւն գրեթէ՞ են վերցրած այդ նմանութիւնները: Բերե՞նք օրինակներ և այլքերի բոցեղեն կամ հրաշյալ լինելու մասին և քիթ ու բերանից ծուխ ու բոց դուրս գալու համար, թե մեր և թե ուրիշ ազգերի գրականութիւնից: Բայց ավելորդ է այդ աշխատանքը, քանի որ պ. Խալաթիանի մոտիվներն ասածն այսպիսի արտահայտութիւն եղանակներ անգամ չեն, այլ լոկ բառական նմանութիւններ, այսինքն՝ «ալք», «ծուխ նլանելը», «արեգակն հաս հատ վերցրած»:

Այդ են պ. Խալաթիանի բոլոր հիմունքները: Ո՛ր, նա խոսում է և հայոց երգի շարի մասին, որի համար հետո. այլ և երգի շինովի լինելուն ապացույց է համարում և երգի վերջին տողը. «Էն թվում է, որ երգի այսպիսի վերջը (заключение) կարծես խաւաւում է նուրիակ երգի արեգակաւն ծագւած գաղափարը. դուրս է գալի, որ հրաշալի պատանին, որ արեգակի անձնավորումն է, նուրիակ արեգակը, դեռ ունի ալիք, ինչպես (сложно) երկու արեգակ: Այս անհեթեթութիւնը (несогласность), իմ կարծիքով, նուրիակն ցույց է տալի, որ այդ երգն արվեստական է կամ, գոն ևայ պատմագրի կողմից գրական մշակութիւն է կրած»:

Ինչի՞ մեջ է անհեթեթութիւնը. անո՞ր մեջ, որ արեգակն անձնավորում աստվածն արեգակնանման ալքեր ունի: Բայց եթէ պ. Խալաթիանը թերթեր մի երկու արեգակն—աստվածների արտաքինի նկարագրեր, կտեսներ, որ հենց այդ արեգակն անձնավորումն աստվածներն ունին արեգակնանման ալքեր: Մեծն փայլուն, շողշողուն աստված, որ արեգակն իբրև ալք ունի, կարող է լինել միայն երկինք—աստված, կամ արեգակն—աստված, լինի Զեւ, Վարուն, Ինդրա, թե Օգինիս՝: Այսպես և Միթրան, լուսն և արեգակն աստված, միանգամայն և արեգակն, ոչ միայն արեգակնանման բոցեղեն ալքեր ունի, այլ հենց արեգակը նորա ալքն է:

Բայց գուցէ պ. Խալաթիանը այդ անհեթեթութիւնը տեսնում է երկու արեգակ ձեկ մեջ. սակայն չէ՞ որ երկու բառն իրեն պ. Խալաթիանի ամբլագրածն է: Իսկ հոգնակի թի՞վը, կհարցնե պ. Խալաթիանը: Շատ բարի, բայց ո՞վ ասաց, որ այդ երգի մեջ տեսնել իսկ արեգակի, նյութակաւն արեգակի ծագումն է: Այդ գնալով, խոսք լուսինք, անհեթեթութիւն է ասել. արեգակի ալքերն էին արեգակները: Բայց երգի մեջ խո՞նք նյութական արեգակի մասին չէ խոսքը, այլ մի պատանի աստուծու, այսինքն՝ ժողովրդաւն աստուծու մասին, որ անպատճառ պետք չէ, որ շքալագոյց լինի և միակեանի Մի՞թե՛ շքալագոյց և միակեանի է արեգակն աստված գեղեցիկ պատանի Ապոլոնը: Երբ միանգամ աստվածը մարդակերպ է, անշուշտ մարդու պես էլ ալ-

¹ Արեգակաւն, թեք մշնգ<վոց> և վաւ<նցոց>, եր. 22.

² Ժանիկաւն, Հեռութիւնք Ագնա, եր. 446:

³ Թիւսաւնք, և. Կառաւանի հրաւ., կր. 29:

⁴ „Арм. зодс“, կր. 206:

⁵ Darmesteter G., Ormezd et Ahrtman, Paris, 1877, կր. 23.

քեր, աշկուհիք պիտի ունենա, իսկ երբ աշկուհիք արեգակն հետ են համեմատվում, մի՞թե՞ պ. Խալաթյանը չգիտե, որ հայոց լեզվի քերականությունը պահանջում է, որ էական բայով անորոգյալը թվով համեմատյն լինի յուր ենթակային և ասվի «աշկուհիք էին արեգակունքը, քանի որ իմաստն այն չէ, թե արեգակն է այդ պատահու ալիքերը, այլ ալիքերն արեգակնանման էին: Անշուշտ, այս վերջին իմաստով կարող էր ասվել նաև «աշկուհիք էին արեգակն», բայց ըստանանք, որ սա երգ է, և երգիլը մեզնից ու ձեզնից ավելի լավ հաշակ է ունեցել լեզվի երկու ձևից այն ընտրելու, որ ներգաղնակություն ունի, և հասկապես արեգակունքը ձևը, որ «աշկուհիք» բառի հետ կազմում է նմանաձայնություն (alliteration), որ հատուկ է ժողովրդական երգերին և հասկապես, ինչպես հետո կտեսնենք, Վահագնի այս երգին:

Այս են պ. Խալաթյանի հիմունքները, որոնք, ինչպես ընթերցողը կտեսնե, ոչինչ ու ոչինչ չեն ապացուցանում, թե՞ երգի արվեստական, շինծու լինելու, և թե՞ երգի մեջ արեգակի ծագման նկարագրի տեսնելու նկատմամբ:

Երգի մեջ նկարագրված պատանին և նորա ծնունդը մնում են և կմնան որոշ լսվող նման արեգակին և արեգակի ծագմանը, թեպետ և ոչ Խորենացին և ոչ երգը ոչ մի խոսքով ակնարկություն չեն անում արեգակի վրա: Բայց մենք շնչ համեմատել երգի պատանին արեգակն անտվածներին հետ, քանի որ, ինչպես ասացինք, մենք Վահագնի անձնավորության մեջ ոչ թե արեգակն ենք տեսնում, այլ մի ուրիշ երևույթ՝ ավազում: Այսպես ըստնելով միայն հասկանալի է լինում երգի ամեն մի տողն ու բառը, և Վահագնի կոիվը վիշապների հետ, և վիշապաքաղ մակդիրը, և Վահագն անունը, և Հերակլի հետ նույնանալը, և նույնիսկ երբեմն Ապոլոնի համասար դրվելը: Բայց նախքան այդ՝ մի երկու խոսք ևս մեր ապացույցի եղանակի մասին:

Համեմատական եղանակը:—Հայտնի է թե՛ ի՞նչ մեծ դեր է խաղում համեմատական մեթոդը, ինչպես շատ գիտությունց, այդպես և դիցաբանությունում: Ժողովրդական հավատքի և առասպելաբանությունում մեջ: Անտվածների ու դուցապանների գրույցները, հնդկաստանական ազգերի մեջ, և անունները իրար դիմաց դնել, առասպելներն ու գրույցներն իրար համեմատել, տեսնել թե՛ ինչպես առասպելաբանական մտածության գլխավոր առարկաների՝ արեգակն ու լուսնի, երկնքի, ու երկրի, կրակի ու ջրի, հողմի ու կայծակի մասին դանդաղ ազգերի մեջ համեմանք բաներ են պատժում և հավատում, որոնք միևնույն բանաբանական (morphologique) հիմունքի վրա են տառ. ոչ միայն համացող ազգերի մեջ, այլև ամբողջ մարդկության մեջ, ցեղով, ժամանակով ու տարածությամբ իրարուց հեռու և տարբեր ազգերի առասպելները համեմատելով՝ նմանություններ գտնել և այդ նմանությունց հիմունքը մի ընդհանուր հոգեբանություն բացատրել, շփոթանալով հարկավա՞ր և մի ազգից մյուսին փոխանցումը, — ահա ուսումնասիրության այն եղանակը, որ այժմ իշխում է առասպելաբանության մեջ:

Ոչ մի բան այնպես չի պարզի Վահագնի ֆիզիկական ծագումն ու նորա առասպելը, որքան համեմատությունը, որի ժամանակ հարկավա՞ր, ինչպես ուրիշ ազգերի դիցաբանության ուսումնասիրության մեջ, մեծ տեղ պիտի բռնեն և մեր արդի ժողովրդական գրույցներն ու առասպելները: Արդի ժամանակը հասկացվում է հնի, անցյալի ուսումնասիրությամբ. բայց արդի ժամանակի ուսումնասիրությունն ևս յուր կողմից բանում է մեր առաջ անցյալը, քանի որ անցյալի շարունակությունն է ներկան: Այսպես և մեր արդի ժողովրդա-

կան զորայններն ու առասպելները, սրտնցից շատերը հենքի մնացորդներն ու շարունակությունն են, կարող են պարզել մեզ մեր հին առասպելները:

Վառագն ամպերուպային աստված:—Հայրց աստվածների մասին եղած սակավ հիշատակությունների մեջ ամպերուպի աստվածն է հիշվում. խորենացին մի տեղ միայն (Թ, ԺԳ) գրում է. Նուն է պերժանձաց զամպերուպային պատկերն Արամազդայա. սակայն այդ պատկերը Հայաստանում չէ, այլ Վրաստանում: Հայրց Արամազդը. որ իրանացիներից է հայերին անցել, համարենք չէ իշխել ամպերուպի և փոթորկի վրա, ինչպես և պարսից Ահուրա Մազդան: Թե՛րեւ հելլենիստական ժամանակում, երբ հայրց Արամազդը հունաց ամպերուպային Դիոսի հետ է համեմատվել, վերջինիս ամպերուպային քրեամբորոթունն Արամազդին վերագրված լինի, բայց այդ վկայված չէ: Դժվար է, սակայն, ընդունել, որ հայերն ամպերուպի աստված ունեցած չլինին, ինկատի ունենալով, որ գրեթե բոլոր հնդեւրոպական ազգերի և ուրիշ շատերի մեջ ամպերուպային աստված ոչ միայն կա, այլ և հաճախ առանձնակարգ տեղ է բռնում, գրեթե համանման առասպելներով, և որ ամպերուպի այն ֆիզիկական երևույթն է, որ արեգակի հետ, և ըստ շատ առասպելաբանների՝ արեգակից էլ ավելի ազգել է առասպելաբանության ծագման վրա: Նույնիսկ թե՛ն ընդունելու էլ չլինիք, որ հնդեւրոպական Նախամամանակից հնդեւրոպական ազգերին անցած լինի մի այդպիսի աստվածություն, բայց և այնպես մեր ժողովրդի մեջ ցարդ կենդանի տարածված, անշուշտ հնուց եկած, բազմաթիվ զորայններն ամպերուպի մասին, վկայում են, որ հայրց մեջ ևս ամպերուպի աստվածություն եղել է, և նույնիսկ սիրելի ու նշանավոր:

Այդ հին ամպերուպային աստվածն եղել է Վահագն: Տեսնենք նրա մասին բոլոր ավանդածները. Նախ Վահագնի ծննդյան երգը:

Երկնէր երկին, երկնէր երկիր:—Հնդեւրոպացւոյց մեջ տարածված համատարեքներից մեկն է, որ Բիսթորիկ ժամանակ երկինէր երկնում է և մորկալից ամպը (gewitterschwangere Wolke—բառացի՝ մորկուկ հղի) հողմահույճի ու որոտումների հեծեծանքներով և պտտտահողմի բախյունի տակ, ծննդյան ցավերով բռնվում է և մի կամ երկու լուսեղեն էակ ծննդու համար: Այն ըմբռնումը թե՛ ամպերուպային աստվածը երկնից ու երկրից է ծնվում,—գրում է Մաքս Մյուլլերը, համեմատական առասպելաբանության հիմնագիրը, բուլղարիկն քննական է: Որովհետև փոթորիկն երկնից է առաջ գալիս, ուստի և երկինէն իբրև ամպերուպային աստվածու հայրն է ըմբռնվում. բայց փոթորիկն առաջանում է և հետո հորիզոնում երկրի վրա, եւր երկինքը թվում է թե՛ ցրկախառնվում է երկրի հետ, ուստի և երկիրն ամպերուպային աստվածու վայրն է: Այսպես Ռիգվեդայում, մեծագուր ամպերուպային աստվածու՝ Բնդրայի ծնունդն իբրև մի ամպերուպային օդերևույթ է ըմբռնվում, որի ժամանակ դողում են երկինքն ու երկիրը, արոնք և Բնդրայի հայրն, ու մայրն են:

Այսպես և, եթե մեր Վահագնի ծննդյան ժամանակ երկնում են երկին ու երկիր, Վահագն երկնայաճում է իբրև ամպերուպային և ոչ թե՛ արեգակն աստված:

Երկնէր եւ ծիրանի ծովն: Այս տողը ցույց է տալիս, որ երկնի ու երկրի որդի Վահագն՝ է միանգամայն և ծովածին: Խնչ է այդ ծիրանի ծովը: Անշուշտ, ոչ երկրավոր, երկրի վրա տեղագրական ժի ծով: Երկինքը, ամպերով

¹ W. Schwartz, Indogermanischer Volksplauke, Berlin, 1885, Կր. 55.

² M. Müller, Die Wissenschaft der Sprache, Leipzig, 1893, II, Կր. 616.

³ Վարդան Էժովն ծիրանիս:

ծածկված երկինքը ծովի նմանեցնելը մի սովորական բան է հին ու նոր րանաստեղծների մեջ, և երկինքը, որտեղից անձրևն է գալի, ջրեղեն երևակայելը հատուկ է ոչ միայն հնդկություն, այլև ուրիշ ազգերին: Նույն ըմբռնումն ունի երկնքի մասին և մինչև այսօր մեր ժողովուրդը, որ հավատում է թեյոթնտակ երկնքի առաջին շերտն ամպ է, և ամպերի վրա մյուս շերտերը՝ ջրերի ծովը, որի ծայրն ու վերջն օվկիանի վրա է հանգում: Այսպես և մեր ժողովուրդն իր առավելապես աղոթքի մեջ կոչում է «եռկիեֆը ծով ծիրանի»:¹ Այսպես և ժողովրդական հավատալիք է, որ որոտում է, երբ ալեկոծն քամի: Այդ երկնային ծովն է գալի,² նույն գաղափարը գտնում ենք և մի հանելուկի մեջ, — հայտնի է հանելուկների հեռավորներից գալը և հին առասպելական հավատալիքներ բովանդակելը, — ուր ասվում է.

Եվ մի օճի՜մ հանա հանա,
Կտոշները մարխանա.
Կաթնազրուրեն ջուր կըծա
Արյունածովին ձեն կըհանա:

Եվ այս հանելուկի պատասխանն է, որոտմունք և ամպ: Որոտմունք, որ ամպը կամ ամպեղեն էակը, ըմբռնված, ինչպես շատ հնդկության ազգերի մեջ, իբրև արջառ, հատկապես կով, հանում է երկնային արյուն, այսինքն արեւնագույն (= ծիրանի) ծովի միջից:

Պարսից մեջ ևս ամպրուպի աստված Տիստրիայի, որ նույնպես արջառի կերպարանքով է ներկայանում, կոհվք ջրերը խափանող Ապառչա դևի դեմ՝ լինում է երկնային Voûroukasha ծովի մոտ, որից և անձրևում է ամպրուպի աստվածը:³ Իսկ Վեդայի մեջ ամպրուպին աստվածը՝ Յուլ ինդրան՝ անձրև-վելու համար՝ պատահում է երկնային ջրերն ալեկոծ ամպերի կամարը, որ կանգնեցնում է ինդրայի հակառակորդ Վիշապը, Վրտան, որ մինչև նույն ամպն է կամ ամպի անձնավորումը. «Այնտեղ, կանգնած էր խավարը, ջրերը փակող կամարը, Վրտայի կամարների ներսում — ջրերի լեռը. ծածկույթով շրջապատված հոսանքները ցած է զարնում ինդրան ետեն ետև ուղղորդ. ճանապարհներովը»:⁴ Կամ օրինակ ուրիշ տեղ. «Ջրոտ-թյամբ քարգավաճած է ինդրան, որ Մարուտներին բարեկամ ունի. Վրտային ալեկոծալույծ արամ է և այդ ժամանակ գուրս թափեց ծովի ջուրը»:⁵

Այսպես, երկնային ծովի գաղափարը, որ ի միջիայուց հատուկ է և հայերին, մեծ դեր է խաղում ամպրուպի առասպելների մեջ: Բայց որ գլխավորն է և մեղ համար կարևոր, ամպրուպի անձնավորում աստվածը, որ՝ զինված կայծակով՝ հոսեցնում է երկնային ջրերը, համարվում է ծնունդ երկնային ջրերի և հեղեղի մեջ, օրինակ, կրում է ապտիա, ջրածին, ջրեի ուղի անունը: Այս մակդիրն այնքան առանձնապես վերաբերում է ինդրային, որ նա նույն-իսկ ապտիաների ապտիա է կոչվում. զի միայն ինդրան չէ ջրերի որդի, այլև նորա նրկվորյակ եղբայրը՝ Ագնին, որին նույնպես վիշապի դեմ կռիվներ են վերադրում, կոչվում է, իբրև կայծակա՛ն կրակի տոտված, ապտմ նապատ.

¹ «Ազգագրական թերթ», Ա գիրք, հր. 348.

² Գաեգին ո. Հովնեփյան, Փյունքներ, Թիֆլիս, 1893, հր. 77.

³ Հմմտ. «Ազգագր. թերթ», Բ գիրք, հր. 220.

⁴ Հմմտ. Սովանեպյան, Մանանա, հր. 314. «Եր Էկովի» տեղ ճանքն է դրած (թերևս հայոց). «Էկով» բառով նույն հունելուկը զրի առած է պ. Գր. Վանդյան:

⁵ [Fr.] *Spiegel*, *Erantische Alterthumskunde*, I. I. [Leipzig, 1873], 72 հաշ.

⁶ Der Rigveda, Übers. v. Alf. Ludwig, II, 453, 10.

⁷ Նույն, II, 814, 3.

ջրերի զաւակ¹։ Ապտիա, ջրածին, ջրերի որդի կոչւում է և նույնպէս վիշապի դեմ կռւող Տրիտա աստվածը, որ Ինդրայի Հատկութիւններն ունի, և որին Համեմատում է պարսից Ատվիա Թրայնտառնա կամ Թրիտա, որ սպանում է Ահրիմանի մի վիշապ²։

Այսպէս և մեր Վահագն, իբրև վիշապի դեմ կռւող ամպրոպային աստված, ծնունդ է երկնային ջրերի ծովի։

Քն մեր Հին առասպելներին ևս Հասուկ կարող է եղած լինել ամպրոպի աստուծո՝ Ժովածին լինելու զաղափարը, այդ կարելի է տեսնել և մեր արդի ժողովրդական Համատայիքներից ու առասպելներից, որոնց մեջ ծովյան կամ ծովիներ գտար է զայն իբրև ամպրոպի և կայծակի կամ փայլակի անձնավորում, մի պշտելի առասպելական էակ, Հրայրա և Հրեղեն, որ վերին երկնքում է ապրում և վերահաս ամպրոպից առաջ խաղալով ցուլց է տալի վալրիննապես յուր երեսը, որից և փայլատեղում է։ Մեր ծովանի կամ Ժովինարի Համեմատութիւնն ուրիշ ազգերի նման առասպելների Հետ թողնելով, այստեղ նկատենք միայն, որ թծվյալն կամ թծովինարա բառը, կազմված թծով արմատից, իբրև թծովի սերունդ, ծովայինք, անշուշտ սկզբնապէս փայլակ և կայծակի աստուծու մի մակդիրն է եղել, և հետո, ինչպէս հաճախ յինում է առասպելաբանութիւն մեջ, առանձնացած գործ է ածվում իբրև Հատուկ, այլև իբրև Հասարակ անուն, կայծակ ու փայլակ նշանակութիւնով։

Մյուս կողմից ծովածին է և մեր արդի ժողովրդական վեպի մեջ կայծակի կամ ամպրոպային Հերոս Սանասարն իր Բաղդասար եղբոր հետ նա իրեն անվանում է Հատկապէս ծովային³։ ունի կայծակի թուր, որ ստացել է ծովից։ ունի ամպրոպային առասպել, կովելով վիշապի դեմ և կռւի մեջ Հողմ հարուցանելով ու անձրեւելով։ Սակայն այս մասին ևս մանրամասն գրել թողնենք ուրիշ տեղի⁴։

Երևն ի ծովուն ունէր Խ զկարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փռվ ծովս ելանէր, ընդ եղեգան փռվ բոց ելանէր, Խ ի բոցոյն վազէր խաբառեաց պատանեկիկ։

Երկնքի և երկրի որդի Ժովածին Վահագն երգի մեջ համարվում է սերված և մի բուսից—կարմրիկ եղեգնիկից։ Այսպէս և երկնքի ու երկրի և ջրերի որդի Ագնին, իբրև կայծակն կրակի աստվածութիւն, ծնվում է միանգամայն և բուսերից։ Իրավեղայի մեջ, օրինակ, երգվում է կայծակ Ագնիի համար. Ժրույսերը կանոնավոր երևացողին [Ագնիին] իրենց մեջ են առել իբրև սաղմ. այս Ագնիին ծնեցին վայրեկան ջրերը, նմանապէս ծնում են նորան ծառերն ու խոտերը (Kräuter) հալիտ հղանալով⁵։

Արդեն վաղուց Կոն, Համեմատական առասպելաբանութիւն մի ուրիշ Հիմնադիրը Գեոմանիայում, յուր մի նշանավոր աշխատութիւն մեջ⁶ ցույց է է տվել. թէ ինչպէս զանազան Հին ազգերի, և հատկապէս հնդկաց, առասպելների մեջ երկնային կրակը բույսերի հետ կապված է մտածվում. այսինքն, ինչպէս երկրի վրա կրակը փայտից է առաջանում, հալատում էին, երկնքում էլ կայծակը փայտից է ծնվում։ Ուստի և կայծակը Կերկայացնում են Հաճախ

¹ W. Mannhard, Germanische Mythen, էք. 218 համ.

² Spiegel, Iranische Alterthumskunde, I, 440.

³ Գաեգե Ե. Էովելֆուտ, Մասն ծանր, էք. 83 համ.

⁴ Հմմտ. M. Abegglian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, էք. 83—88.

⁵ Der Rigveda, übers. v. Ludwig, II, 432, 6.

⁶ Adalbert Kuhn, Die Herabkunft des Feuers, Berlin, 1859.

իրբն զանազան բույսեր, և կայծակի մարմնացումն են համարված շատ բույսեր, որոնք հետեւը գործ են ածվել շփումով սրբազան կրակ հանելու համար։ Այդպիսի բույսերից է, որինակ, և փշենին կամ փուշը¹, որ և հայոց մեջ մինչև այսօր, իրեն կրակի մարմնացում, զորավոր սկապքս, այսինքն պաշտպանութեան միջոց (Abwehrmittel) է համարվում շար ոգիներին դեմ և մեր սկապքի ազդեցներին մեջ կրակին համասար է դասվում։ Հայոց մեջ կայծակի մարմնացում ուրիշ շատ բույսեր կան, որոնց ուսումնասիրութեան տեղը չէ այստեղ, բայց թե եղեգն եւ այդպիսի բույսերից է համարվում թե չէ, տեղեկութիւն չունինք։ Այդ պետք է ցույց տան մեր ժողովրդագրական նշութեքը, որոնք դեռ նոր են ժողովում։ Անհամայնական բան չէ այդ, քանի որ տեսնում ենք, որ մի գերման գրույցի մեջ եղեգն իբրեւ կայծակ դուրս է գալիս Օգոստի աստուծու ձեռքին, որ սկզբնապես ամպրոպային աստված է բացատրվում և ինդրայի հետ համեմատվում²։ Նույնիսկ եթե եղեգն այդպիսի բույսերից չլինի, բանաստեղծը չէր կարող,— քանի որ երկնային տեսարանը (Himmelszenarie) իսկապես միշտ երկրավորի նմանումն է,— ամենի լավ կերպով ուրիշ բույս ընտրել կարմիր կայծակի հրդեհումը ծիրանի ծովի մեջ նկարագրելու համար, քան թե կարմիր եղեգը, մորուտների եղեգը, որ ահում է չրբրի միջին, եղեգի կարմիր մակգիրն ևս կայծակից առնված պիտի լինի, քանի որ շատ ազգերի առասպելների մեջ կայծակի հատուկ գույներից մեկն է կարմիրը³, առաջի և շատ բույսեր իրենց կարմիր գույնի պատճառով հենց⁴ համարվում են կայծակի մարմնացում⁵, և հաճախ ամպրոպային կամ աստուծու նմանական գույնն է կարմիրը։

Ինչ է ցույց տալի ծովի ծիրանի մակգիրը։ Այս բառը, որ համեմատվում է հանելուկի մեջ ծովի արլուն (արենագույն) մակգիրն, կարող է վաճաղի ձևումը կարծել։ Եւ իբրեւ արեգական ձևում, ծագում արշալույսի ծիրանի ամպերի ծովից։ Արդարեւ, ամպրոպի երևույթն և առավոտյան լուսաբացը զրույցների մեջ շատ անգամ իրար խառնվում են, մի զրույց, որ սկզբնապես ամպրոպին է վերաբերում, փոխվում է տրվում առավոտյան լուսաբացին, կամ ներհակը։ Ասոր պատճառը հենց բնութեան այս երկու երեւույթների նմանությունն է. արեգակը գիշերն աներևույթ է լինում և առավոտյան ծագում, այդպես և փոթորկի ժամանակ արեգակն անհետանում է և աներևից հետո կրկին երևան գալիս⁶։ Այս իսկ պատճառով առասպելաբանական գիտություն մեջ իշխող է երկու ուղղություն, արեգակնային և ամպրոպային։ Միևնույն առասպելներն ու աստվածները ոմանք արեգակով են մեկնում, ուրիշները ամպրոպով, մանավանդ որ միևնույն առասպելների մեջ հենց այս երկու երևույթի պատկերացումները միացած են՝ առավոտյան մեցերի և ամպրոպի ամպերի միջից ծագող արեգակի նմանութեան պատճառով⁷։ Օրինակ հենց Ապոլոնի մեջ, որին մերձեցրել են մեր վաճաղիկն, միացած են արեգական և ամպրոպի աստվածություն, թեպետև նորա առասպելների մեջ

¹ Նույն, հր. 38:

² Kuhn, Herabkunft des Feuers, հր. 199, F. Schwartz, Die poetischen naturanschauungen, Berlin, 1864. I, 199, II, 99, *Zeitschrift d. Vereins d. Volkskunde*, 1892, II, 30, 68.

³ Kuhn, Herabk. Feuers, հր. 106, F. Schwartz, Post. Naturansch. I.

⁴ Kuhn, Herabk. d. Feuers, հր. 47.

⁵ F. Schwartz, Die poetischen Naturanschauungen, I, հր. 67.

⁶ Kuhn, Herabkunft des Feuers, հր. 60.

վիշապասպան կայծակի կամ ամպրոպի աստվածը, ժխտանի աղեղով և կայծակի նետով, ամենի զորամուր է երևում, քան թե ոսկեգլխակ արեգակնային աստվածը¹։ Ապոլոնի ծնունդն իսկ, երբ, ինչպես կայծակի աստվածուհի Աթենան անհայտը, ոսկի անձրև է տեսնում, բացատրվում է իբրև ամպրոպային ծնունդ²։ Այդ գոսկի տեղն առնված է ամպրոպի երևույթից, երբ թվում է թե ամբողջ երկինքը կայծակնահարելու ժամանակ փայլում է ոսկուց, որ իշնում է երկիր կամ երկնքումն էլ մեռնում է։ Դա հրկնային ժողի ոսկեգույն, կարմիր, ծիրանի բացավառումն է զորեղ ամպրոպների ժամանակ։ Եվ շատ հաճախ բանաստեղծները փոթորկալից երկինքը պատկերացնում են իբրև ամպերի հորեղեն ծով, որի միջից կայծակը բռնկում է սկարմիր հոսանքներով և բոցավառվում իբրև հրդեհ³։ Կամ ինչպես գերմանացի բանաստեղծ Գոտֆրիդ Ջոյմեի (Gottfried Seume) մի բանաստեղծության մեջ սփոթորկի գալն ու գրնալը և կարագրված է.

Գալիս մտանում է ինչպես գիշեր,
 Նորա առաջից լափավորում են կայծակներ,
 Եվ ինչպես մի բոցեղեն ծովի—մե,
 Այլհերե արևների վրա են խեղճում։

Կամ ինչպես մեր մի հեքիաթի նկարագրի մեջ. «Էնեյնք մթնում են օտար ու ձոր, որ ես մուլն առնեմ, դու գիշեր իմացիր...» Քամին որ վշապնում չի⁴, ծառեր են, որ գետին հետ զգվում են։ Ամպն ու լուսնը գետինն առնի են. ծովից առնեց խաղում, ու կանես բն ուզում ու աշխարհը կրակ տառ⁵։

Ռիգվեդայում նույնպես շատ կոտորենք ամպրոպի այնպիսի նկարագրերն են, որոնց մեջ մի կոդմից Ինդրան արեգակի և արշալույսի հետ ներքին հարակցություն ունի, լուսավորում է երկինքն ու երկիրը արեգակով, բերում արշալույսն ու արևը. մյուս կողմից յուր կայծակներով բոցավառում է երկնային ծովը։

«Սուրայի [արեգակի] անիվը նա [Ինդրա] դորոթյամբ էր առաջ զլորում իրեն ցույց տալով, կտրմիւր բոցավառվելով ձայն է արձակում...»⁶։

«Այս հզոր Ինդրան դուրս քշեց չքերի աշեծուսի հոտանքը, վիշապասպանը մոտ վարեց ծովը, տեսանելի դարձրեց արեգակը, գտավ արջառը, մի գիշերվա ընթացքում կատարեց նա օրերի ոտքեր» (Rigv., II, 492, 2)։

«Մեզում է թե յէ՝ ճառագեղեցիվ փայլեցնում է դեղին ցուրը [Ինդրան] ամբողջ պայծառ երկնակամարը. խառնաշաճի՞ն առնում է դեղին զենքը, դեղին կայծակն իր ձեռքը» (Rigv., II, 509, 4)։

«Փայլելով ինքը փայլեցրեց անփայլը. պայծառ բաց է արել նա բառ կարգին շատ [արշալույսներ]» (Rigv., II, 562, 4)։

«Նա [Ինդրա] գտել է ժամանաբուստ տեսքով ծովը պայծառության մեջ բնակող Ուշասի (Սրշալույսի) առաջակողմում...» (Rigv., II, 570, 5)։

«Կայծակնահարի (Ինդրա), ինչպես Ագնիի (կրակի) բոցերը...» (Rigv., II, 589, 7)։

«Ինդրան արեգակնային ճառագայթներով հրդեհում է վնասատուին [վիշապին]։ ինչպես Ագնիի [կրակը], երբ սա եվանում է ուռառններ, աճել մեծացել է նա» (Rigv., II, 590, 9)։

¹ F. Schwarz, Poet. Natursch. I, հր. XIII հաշ.

² F. Schwarz, Der Ursprung der Mythologie. Berlin, 1860, հր. 68 հաշ., 118.

³ Լավադուր 3., Հայ ժողովրդ. հեքիաթներ, Ե, հր. 40.

⁴ Der Rigveda, Übers. v. Ludwig, II, 472, 6.

«Զենց որ երկնքում մի սիրուն ճառագայթ դրվեցավ, արագ բացվելով տարածվեցավ խաբաշաշ կայծակը. երկաթյան խաբաշաշ տոտմով զարկեց վիշապին, հագորադառիկ բոցեր ուներ նա, որ խաբաշաշն [կայծակը] է կրում» (Rigv., II, 645, 4):

Բերենց և Մահարհարատայից մի կտոր, որի մեջ երկնային կաթնծովի մեջ (Համտ. մեր Հանելուկի տողը, սկաթնաղբյուրն շուր կըմամա) ամպերի սարի շուրջ փաթաթվում է կայծակի վիշապը, որին երկու կողմից քաշում են աստվածները. «Վասուդհի օձը, մինչ իրեն տարուրեր քաշում էին, փչում էր իր բիտեից մի հոսանքով՝ կրակ, ծուխ, և քամի, որոնք բարձրանում էին վեր՝ ինչպես կայծակներով հողի (blitzschwanger) ամպ... [ամպերի] սարի շուրջը գոռում էր ծովը, ինչպես մի ամպի խուլ որոտմունք... կրակը ծածկեց հանկարծ սարը բոցերով և ծխով, նման մի սև ամպի, որից կայծակ կայծակի վրա ցած են թափվում... Եվ ահա անմահ Խնդրան ուղարկեց մի ամպ, որ սաստիկ անձրևով հանգցրեց հրդեհը»:

Մենք հետո կտեսնենք, թե ինչպես մեր հավատալիքով ամպրոպի վիշապը քաշում կամ հանում են վեր փոթորկի ժամանակ. Բերած որինաններն արդեն պարզ ցույց են տալիս, որ ամպրոպի երևույթն ըմբռնվում է իբրև մի բոցավառում, հրդեհ երկնային կարմիր բոցեղեն ծովի մեջ: Նույն կայծակի հրդեհն է նկարագրված անշուշտ և մեր երգի մեջ եղեգի բոցավառումով:

Երկրի վրա կրակ վառելու, ավելի ճիշտ շփումով երկու փայտից սրբորազան կրակ հանելու գործողությունը նախնական հայացքով նմանեցրած է սերելու, ծնելու (Zeugung) գործողությանը, և վեգաներում ոչ միայն կրակ հանելն իբրև ծնունդ է նկարագրված, այլև երկու շփելու փայտերը, որոնք նկարագրվում են իբրև մարդու մարմին, պաշտամունքի մեջ տննադրված իբրև հայր ու մայր են ըմբռնվում և նոցանից առաջացրած կրակն իբրև որդի՝ Շփումով սրբազան կրակ հանելու այս գործողությունը համարվում է կայծակի նշան հունաց, հնդկաց և գերմանների մեջ, և հավատացել են, որ կայծակի կրակն ևս երկնքում նույն ձևով է առաջացել: Սակայն, եթե մի կողմից երկրի վրա փայտեր շփելով սերակ վառելու գործողությունը սերելու, ծնելու գործողությունն էին նմանեցնում, մյուս կողմից և կայծակի կրակի բոցավառումը երկնքում բույսերից, կամ «կայծակի առաջադրվ փոխակերպվում էր մի առավաճառքան ծնեղյառն», և հատկապես կայծակի անձնավորում աստուծու, որ երկնքի ու երկրի և երկնային ծովի ու բույսերի ծնունդ գոյով՝ ծնվում է ամպրոպի բոցերի միջից:

Այսպես և մեր՝ երկնքի ու երկրի և ծովի որդի՝ Վահագն իբրև կայծակի աստված ծնվում է եղեգներից բոցերի մեջ:

Վահագնի ծնունդը նկարագրված է իբրև վազել: Այս գիծն ևս յուր համապատասխանն ունի. Խնդրան ևս ծնվելուն պես, երկինք ու երկիր կարմիր բոցավառելով, վազում է վրտրային կամ թե վիշապին սպանելու համար. «Վազելով լարում է Խնդրան յուր վազաններով [ձիերով], արագ ավարի առնելով շրերը աչ [հարավի] կողմից...»¹ Դա կայծակի արագությունն է, որից և Խնդրան ու յուր ձիերը վազան կոչումն են ստացել, և Խնդրայի սովորական մակդիրներից է և առաջ:

¹ F. Schwartz, Der Ursprung der Mythologie, եր. 45:

² Kühn, Herabk. des Feuers, եր. 70 հատ., 389.

³ Der Rigveda. übers. v. Ludw., II. 555, 5.

⁴ Վազել բառը Հայկ. լեզ. նոր բառերի մեջ բացատրած է՝ Վազել, վազա տանել, տրանսպորտ, ի վերայ գիծել. այն ոտնուկ, խաղալ՝ Վերջին իմաստի համար համտ. Ստ.

Այս տողերի մէջ նկարագրված է ծնվող աստուծու կերպարանքը. որ կատարելապէս համապատասխան է ուրիշ ազգերի ամպրոպային աստվածներին. ինչպէս՝ Ինդրայի, ցերմանաւկան Թոռի կերպարանքին: Նախ մեր նորածին Վահագն մի երեխա չէ. այլ զառանցյալ և խորհնացու ձեռագիր վարիանտներից շատերի մէջ խառնույժ պատանայակ, Ինդրան ևս պատկերացվում է իբրև խարտաշ պատանի. Եփ մեծ է նոցա զոհի երին, վսեմ է նորը, զուրը՝ հաստ, որոնց բարեկամ է պատանայակն Ինդրաւ: Արդարև առանց կովի յուր ուժով գանձը ձեռք է բերում այն հերոսը, որին բարեկամ է պատանայակն Ինդրաւ: Եփու ինքը անար ուրախությամբ, հին նախնիքներից՝ զոհողներից փառաբանվելով, ո՞վ Ինդրաւ, ոսկեհեծ. դու առնում ես [և այժմ] ամեն՝ քո զովաբանությանն արժանի, կատարայլ, զեղեցիկ ստացված, դու որ խառնույժ ես ծնեղից ի վերա (Rigv., II, 645, 5): Խարտաշ և արեգակնայա են և Ինդրայի ձիերը, որոնք նույնպէս ամպրոպն են պատկերացնում. Եփը պետք է աշատեղ բերեն խառնույժները, սոմա խմելու [պիտի բերեն] ցույին. Ինդրա, քեզ արեգակնայա աներա՝ (Rigv., II, 451, 1, 445, 1, 2): Նորա կայծակը նույնպէս խարտաշ և արեգակնումն է (Rigv., II, 457, 6): Ինքն Ինդրան ևս արեգակնայա է (Rigv., III, եր. 317), երեսն արեգակի նման (Rigv., II, 563): Հագնվում է արեգակի գեղեցկությամբ, անհամբ հեղին է (Rigv., II, 542, 12): Եվ թնայտ պատանայակ, բայց մոտով ունի, ինչպէս և մեր պատանայակ Վահագնը. Հինդուստը, ղեղեհները, երկաթյան, սոմա խմողն արագ խմելով աճնց զորությամբ, հիանալի դամբկների տերը պետք է ամեն փորձանքից ազատե յուր խարտաշներինս [ձիերին] (Rigv., II, 645, 8):

Պատանայակ խարտաշ, հրեղեն, ոսկեհեր, թե հուր հեր, զեղեամբորուս, բոց մորուս, թե կարմրամորուս (ինչպիսին է Թոռ), արեգակնայա թիւ հրայա (Թոռ),— առնված է հենց կայծակի երևույթից, նորա ալրոզ, հրեղեն ու բոցեղեն, կամ բոցի ու հրո ոսկեգույն, կարմիր ու փալուս հատկութիւններից:

Այսպէս տեսնում ենք, որ Վահագնի երգի մէջ նորա ծնեղյան և կերպարանքի բոլոր հատկութիւններն ամբողջապէս մի ամպրոպային աստուծու Ինդրային են: Բայց այդ դեռ ամենը չէ: Ինդրան ծնվելուն պէս բոցերի միջից վազում է ամպրոպի վիշապի՝ Ահիի (ձիի) կամ Վրաթայի (ամպի, ամպի անձնավորումի, որ հաճախ ներկայանում է իբրև վիշապ) դեմ կռվելու, և կռվելով հաղթում ու սպանում է նորաւ: Եվ մի՞թե նույնը չէ անում և մեր Վահագնը: Դժբախտաբար խորհնացի երգի շարունակության միայն համառոտ բովանդակութիւնն է մէջ բերել, ասելով. Եփտ որոյ (ծնեղյան նըկարագիրն անելուց հետո) և քնդ վիշապաց ասէին յերգին կոտել նմա և յաղքել: Երբ մի անգամ իմանանք թի ինչ են վիշապները, այն ժամանակ կարող ենք համաստի տեսել, որ քնական երևույթի անձնավորում Վահագնի կրօնիւր ոչ թե երկրի վրա զօնի դեմ է եղել, այլ իրոք իբրև ողորմութի, ամպրոպային կռիվ (Gewitterkampf) է ըմբռնվել, ինչպէս Ինդրայի կռիւն է: Մի հայացք ու հավատք, որ ցայժմ կենդանի է մեր ժողովրդի մէջ:

Վիշապ խառնույժ և ստացվածք: Ինդրան ևս խառնույժ, պարում է, որից և առանց է խաղացող, արագ մահից: Rigveda, II, 552, 3, 472, 7, 495, 4.

Մ Mannhard, Germanische Mythen, էր. 222, 84 և Rigv., II, 450, 4, 499, 7, 493, 3.

Վիշապ և ամպրոպային կոիվ:—Առասպելաբանության մեջ վիշապը փոթորկի, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է, հենց ինքը փոթորկը, պտուտահողմն ու ամպը,—մի շարքով, որ սովորաբար օձի կերպարանքով է ներկայանում, բայց և զանազան կերպարանքներ է ընդունում: Նորա դեմ կալում է նույն օդերևույթի բարի անձնավորումը, ամպրոպային աստվածը, որը նույնպես զանազան կերպարանքներով է պատկերանում:

Վիշապը հայոց մեջ, Վիշապա բառը, որ ժողովրդի մեջ նաև «ուշապ» է արտասանվում, համանորեն իրանացիներին է անցել հայերին և պարսից ամպրոպային օձի՝ Ամիթի մակդիրն է՝, նվարդարն, ամեն ինչ, որ հնումը և այժմ հայոց մեջ պատմվում է վիշապի մասին, ներկայացնում է նորան իբրև փոթորկի, ամպրոպի անձնավորում: Շատ բան, հարկավ, մոլթն է: Բայց բավական է, որ մեր զրույցները համեմատենք ուրիշ ազգերի զրույցներին հետ, որ մեր վիշապի ամպրոպային քնավորութունը պարզվի:

Ամենից առաջ բերենք մի հատված, որ Հ. Ալիշան¹ վերագրում է Անանիա Շիրակացուն կամ մի օրորիչ հին բնախոսի: Ճանաչաք փոթորկի հողմոյ, զոր ի բաջադանս և յառասպելս Վիշապ ճանել ասեն. փոթորիկն հողմ է՝ որ ի յնեկէ ի վեր ելանէ, ուր վիհք ինչ հատեալ լինին ի քակ և ի խոռոչացեալ տեղեաց ինչ. որ ի փող անկեալ ընդ երակս երկրի, և ել ինչ գտեալ՝ միամողով ի վեր դիմեալ քանճուացեալ ամպով ահագին դղրդիւնս առէ՝, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել, և վէմս խնել. և զինչ գտանէ՝ ահագին—ձայնիւ վերացուցանէ և ընկնեալ յերկիր. և այս է զոր Վիշապ ճանել ասեն: Նույն տեղում բերած է և Վանական վարդապետից. «Եսայի և այլ կողմանց հողմ շնչէ և ընդ իրար դիպի, այն Փոթորիկ ասի. թէ ոչ յաղթեն զիրար՝ ուրիշն ընդ իրար, և ի վեր ելանեն. տխմարք զայն տեսեալ՝ Վիշապ կարծեն կամ այլ ինչ»: Նույն զրոյի մեջ եր. 153 բերած է փոթորկի մասին Սարգսի վարդապետից. «Առասպելական ստութեանն ունկն դնել և հաւատալ մի՛ երբեք յանձն առնուցուս վիշապ զնա անուանողաց»:

Այսպես մեր թաքաղանքներին և «առասպելներին» մեջ վիշապը ներկայանում է պարզապես իբրև փոթորկի, պտուտահողմի, ինչպես և փոթորկալից ամպի անձնավորում, և միանգամայն իբրև փոթորկի ու պտուտահողմ՝ «թանձրացեալ ամպով», նման հունաց Տիփոնին (Typhon), որ նշանակում է պտուտահողմ, փոթորկի կայծակներով ու որոտանքով, և միանգամայն մի առասպելական էակ է օձանման, մի վիշապ, որ շուրջ հրեղեն շնչով և ամպերի ծխով կամ շողիով լցնում է երկինքը և իբրև ամպրոպային վիշապ է ներկայանում: Նա «մերթ իբրև երկրի օդի է երևում, մերթ երկնային գիցուհի Հերայի որդի... առավելապես սակայն երկրածին է, ինչպես բոլոր ամպրոպային էակները՝ զիգանտներն ու վիշապներն մտողը սերունդը, որ երկնքի դեմ է ելնում, զի երկնից, այսինքն հորիզոնի վրա են բարձրանում եռաց, ինչպես դեռ ասում ենք, փոթորկի է բարձրանում»:

Այս գալարվող վիշապը՝ Տիփոն, որից ծնունդ են առնում բոլոր շար հողմերը, Հեղինոյի Թեոֆանիայի մեջ նկարագրված է իբրև հարյուրգլխանի օձ, որի ալքերից ու գլուխներից բոցեղեն ճառագայթներ են ելնում, հայացքն այրում է կրակի պես. հանում է զանազան հրաշալի ձայներ. մերթ կատա-

¹ H. Hübschmann, Armentische Grammatik, I, էր. 347.

² «Էին հաւատք», էր. 88, Ծան.

³ F. Schwartz, Ursprung der Mythologie, էր. 30.

դած ցույի նման քառալուսն է խալ։ Մերթ առյուծի նման մոնյում, մերթ շը-
նեթի նման հալում կամ սուր սուրացներ հանում։ Այսպես և մեր վիշապը,
իրեն փոթորկի կամ ամպի էակ, Եղեկի մեջ ակեղծս ի կեղծս է լինում։ (Կր.
102), այսինքն դասադան կերպարանքներ է ընդունում, մի անգամ՝ օձածն է
երևում, մյուս անգամ՝ մարդակերպ (Կր. 106), երբեմն իրեն սուր ու լուրի
կամ այլ զրապտ և երբեմն իրեն որսի նտնից ընկած ձիավոր (Կր. 107)։ Այլն
վիշապի մասին պատմում է Նդեիկ (Կր. 103, 106) քն կալերից ցորենը գողա-
նում է և գրաստի վրա բարձած կամ՝ ինքը գրաստ գարձած տանում է։
Նույնը պատմվում է շատ ազգերի զրույցների մեջ վիշապի մասին, իրեն
փոթորկի կամ ամպրոպի անձնավորումի՞ն, կամ դերմանացոց մեջ տրույի
մասին, քր պտուտաճողմի անձնավորումն է՝

Միշին դարերում արդեն վիշապի թեղ սատանան է անցնում, և փոթորկի
մեջ իշխող սատանայի պատկերացումը դեռ մնում է պտուտաճողմի վրա
կապված, շատ ազգերի մեջ, ի թիվս որոց և հայոց մեջ, քանի մեր ժողո-
վորը պտուտաճողմն ու «վիշապ հանելիչ» այժմ կոչում է սատանի քամին։
Այնուհետև վիշապների մասին պատմվում է մեզնում քն զգտոճականս
անդէոց ծծենա՞, կամ կովերի կաթը ծծում են, և քն վիշապների ընդանից թու-
նավոր շոգի է գուրս գալի, որ վնասում է անասուններին ու մարդոց՝ Այս
գծերն ևս ուրիշ ազգերի մեջ փոթորկի վիշապի, կամ պտուտաճողմի անձնա-
վորումի մասին են պատմվում, ինչպես և քն մեր և քն ուրիշ ազգերի զրույց-
ների մեջ վիշապների քնակվելը բարձր սարերի վրա և քարայրերի մեջ առնե-
ված է պտուտաճողմի երևույթից և ամպերի հատկությունից։

Թողնում ենք վիշապի մասին պատմված ուրիշ զրույցները, որոնց ման-
րամասնություն մեջ մտնելու տեղը չէ։ Բերածներից արդեն պարզ երևում է, որ
վիշապը մեզնում ևս փոթորկի, պտուտաճողմի կամ փոթորկայից ամպի անձ-
նավորումն է։

Այդ առասպելներից մեզ համար արժեք ունի «վիշապ հանելիչ», կամ «վի-
շապի վերանայը երկրից երկինք», ինչպես գրում է Վահրամ վարդապետը՝
Դա ամպրոպային կոչվն է։ Տեսանք, ինչպես հունաց մեջ Տիփոնն ու գիգանտ-
ները երկրից վերանում են երկինք. նոքա վերանում են հատկապես ամպրո-
պային Զևսի դեմ կռվելու, որ և յուր կայծակներով խորտակում է ու ցած գը-
լորում նոցա։ Գերմանների մեջ ևս Որոսը (Donner) կամ Թոռը հալածում է
պտուտաճողմի անձնավորումներին՝ տրոլներին և ուրիշներին, և «Ջևսի կը-
ռիվը Տիփոնի դեմ նույն է՝ ինչ որ Նորան համապատասխանող գերման
զրույցի մեջ Թոռի Բյնամոթյունը տրոլների դեմ, Որոսինը վալդվայթների
(Waldweiber), դեերի (Riesen) և ուրիշների դեմ»։

¹ Եղեկ, Կր. 102 համեմ.

² F. Schwartz, Poetische Natursch., I, էք. 86.

³ Mannhardt, Der Baumkultus, էք. 69, 107, հւմ. Աուլե՝ Antike Wald-und Feld-
kulte, էք. 94, Lohstner, Das Rätsel der Sphinx, II, 275, 281.

⁴ F. Schwartz, Ueprung der Mythologie, էք. 80.

⁵ Այլքե, Հին հուսաց, էք. 104.

⁶ Էմմ. Նգեիկ, էք. 107.

⁷ Mannhardt, German. Mythen, 28, հւմ. Աուլե, Antike Wald-und Feldkulte, էք. 103
Schwartz, Poet. Natursch., II, 164, հւմ. Աուլե, Ueprung der Mythologie, 30, 31.

⁸ Այլքե, Հին հուսաց, էք. 128. «Ճուլով մարդիկ տեսնու են զի վիշապ վեանայ» յերկրի
իրկ.

⁹ Mannhardt, Baumkultus, էք. 149.

¹⁰ Mannhardt, Ant. Wald-und Feldkulte, էք. 102.

Բայց ի՞նչ է այդ կո՛ւմը: Վիշապը, պտուտահողմի կամ ամպրոպի շար անձնավորումը, յուր ընկեր շար ոգիների հետ, իբրև հողմ օթանձրացնել ամպումն բարձրանում է, արեգական լուսո ներսը կտրում, կամ փոթորկի մեջ հարձակվում է արեգական վրա, որ իբրև աղջիկ է անձնավորվում, և հափըշտակում է նորան. կամ ուրիշ առասպելներով նրկնային անձրևաքեր ամպերի, ջրերի առաջը կտրում է և վայր հոսելն արգելում է՝ անոնց առաջ ցամաք ամպերի յնունը ու բուրգեր կանգնելով: Իսկ փոթորկի կամ ամպրոպի աստվածը, որ միևնույն օդերևույթի բարի անձնավորումն է, ինչպես հնդկաց մեջ Ինդրան, նրբմե՛ն և Ագնին, կայծակներով ու որոտմունքով, մարտունքի (հողմերի անձնավորում՝ աստվածներ) հետ կոմում է վիշապի և նորա շար ոգիների դեմ, խորտակում նորա բուրգերը կամ լեռները, ուսանում նորան և ազատում է արեգակն և կամ ջրերը վայր է հոսեցնում:

Այսպես և մեր ժողովրդական դրույցների մեջ ռե՛մե՛ վիշապը հալածում է արեգակը. նա զլաբոց հետ փոթորկի ժամանակ նրկինք է վերանում՝ արևը, որ իբրև աղջիկ է պատկերանում, կուլ տալու կամ նորա դեմ հակառակելու, որ մարդիկ նորա զլույս երեսը լսենան, Բայց Գաբրիել հրեշտակը, օւրիշ հրեշտակների հետ ելնում է նոցա դեմ և կոմում: Որտե՛ն այդ կոմի ժխորն է, փայլակը Գաբրիելի թրի փայլքը, կայծակը նորա նետը և ծիածանը նորա աղեղը՝ նույն առասպելն ուրիշ ձևով պատմվում է թե՛ թևավոր վիշապը, երբ մեծանում է, վտանգավոր է դառնում. բայց այդ ժամանակ հրեշտակները նորան նրկից վեր են հանում փոթորկի ժամանակ. վիշապը կոմում է նոցա հետ, հուր շնչում և ջուր փլում նրկի վերա. կոմից առաջանում է փոթորկի շառալույնը: Բայց հրեշտակները շարունակ ծնծնելով վեր են հանում նորան, մինչև արևի մոտ, որի կրակն այրում ու մոխիր է դարձնում նորան և մոխիրը թափում է նրկի վերա, կամ նրկնքի բարձրությունից թռչնում են որ ընկնի գետին ու մանր մանր փշրվի՝

Շատ պարզ է, որ հրեղեն պատանի Գաբրիել հրեշտակն յուր կայծակով և աղեղով՝ ամպրոպային կոմի մեջ փոխանակել է ջրիստոնեություն ժամանակ հեթանոսական ամպրոպային աստվածուն, հա՛վանորեն հրեղեն պատանյակ Վահագնին, որի կոմն ևս վիշապների դեմ իբրև այսպիսի ամպրոպային կոմով պիտի ըմբռնված լինի, քանի որ մի կողմից վիշապն ամպրոպի կամ փոթորկի անձնավորումն է, իսկ մյուս կողմից՝ Վահագն ամպրոպային աստվածուհի հատկություններ ունի յուր երգի մեջ: Թե՛ իրոք այդպես էլ եղել է, այսինքն Վահագնի կոմը վիշապների դեմ մեր հին ու նոր ժողովրդական հավատարիքի համեմատ ամպրոպային կոմով է եղել, այդ ցույց է տալիս մեզ նաև նորա վիշապա՛ռալ մականունը:

Վիշապա՛ռալ:— Ի՞նչ է նշանակում Վահագնի այս մականորը, որ կա Ագաթանգեղոսի մեջ: Անշուշտ, ոչ վիշապ ու փղ (Drache-Bock), ինչպես թարգմանում են կամ բացատրել են ուղում ոմանք¹, քանի որ ավանդված կա Վահագնի կոմը վիշապների դեմ. բայց և ոչ վիշապառապան՝ կամ վիշապ խեղդող², ինչպես թարգմանում են ըստ Ագաթանգեղոսի հունարեն թարգմա-

¹ W. Schwartz, Indogermanischer Volksglaube, հր. 213.

² Հմմտ. Գրոց-բրոց, հր. 106, «Ագաթանգեղոսի թերթ», 31, հր. 220.

³ Հմմտ. Արվանդյան, Գրոց-բրոց, հր. 92, «Ագաթանգեղոսի թերթ», 1, հր. 251. Հմմտ. M. Ahghlian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, հր. 77—82.

⁴ Justiz, Iranisches Namenbuch, Marburg, 1895, Ալիշան, Հին հայերեն, հր. 128, 175.

⁵ Hubschmann, Armen. Grammatik, I, 76, H. Geizer, Zur armen. Götterlehre, հր. 104.

նույն, Ըստ իմաստի անշուշտ ուղիղ է այս վերջինը, դի վաճառն հաղթում է վիշապներին: Բայց «վիշապաքաղ» բառը բառացի ոչ վիշապ ծապանողն է նշանակում և ոչ «խեղդող»: Քանի որ ճաղելն բայի ճաղն արմատն այդ իմաստները չունի:

Քաղել Հայկ. չգտի նոր բառերի մեջ բացատրած է իմիջիպաց. «Ժողովել» խել նանել¹. իսկ այդ բայի ցաղ արմատը բացատրած է. «Քաղելի խոտ անպիտան և վնասակար: Այս իմաստով քաղել բառը գործ է ածվում և ժողովրդի մեջ որից և քաղաղորջալ բայը՝ փաղը տալ, կամ փաղնանել, որ է ցանքի միջից վնասակար խոտերը կտրել հանել, ժողովել, Ավելի գործածական է նույն իմաստով կրկնված փաղնան(ք) բառը, Այս իմաստի վրա պետք է ավելացնել և ժողովրդի մեջ գործածական վեր քաղել ևն, որ նշանակում է նանել, վերացնել, վերցնել և գործ է ածվում նաև հմայություն մեջ, որինակ ավախը վեր քաղել: Այսպես՝ ասում են և ասալ ու լանգը վեր է քաղվում, այսինքն քաղվում, վերանում, բարձրանում է: «Քաղելն բայի այս նշանակությունն անշուշտ նոր չէ, քանի որ նույն վեր հանելու, վերցնելու, քաղելու ժողովելու իմաստը կա արդեն և միայն ճաղելն բայի մեջ, «որինակ» «Քաղելի» զվարանի ի ներքոյ սեղանոյ» (Գատ., Ա, 7): Այսպես և հասկալով (հասկերը գետնից վերցնելով ժողովող), անրմնաքաղ բառերի և ճաղելի զոքելն ձևի մեջ. նույնպես և «Քաղելով գործնացն» զուսպանն» (Մենդ., 2, 16), որ արդեն Հայկ. չգտ. նոր բառերի մեջ, համեմատած հունարեն *κατακατα* բառի հետ, թարգմանած է վերածողվելով:

Արդ վիշապաքաղ բառացի նշանակում է վիշապ նանել, վիշապ վեր քաղել կամ ցածից վերցնելով ժողովող, այլև վիշապ փաղնանող, այսինքն, ինչպես քաղհանքի ժամանակ, վնասակար վիշապները հանող, վերցնող: Որ նշանակությունն էլ որ առնելու լինինք, «վիշապաքաղ» բառն արտահայտում է մեզ հին ու նոր ըմբռնումը, թե վիշապները երկրից քաղհանվում, հանվում, վերցվում, վերանում են: Եղևիկն (եր. 107) այդ իմաստը հայտնում է բառով բայով. «Եթէ քաղնայցի ի վեր այնպիսի վիշապն, որիշներին մեջ նույն երկվույթն, ինչպես տեսանք, բարանալ բայի համանշն նանել բայով է արտահայտված. «վիշապ հանել», կամ վերանալ բայով. «վիշապ վերանալը լերկրէ յերկինս». կամ Սրվանձոյանի մեջ փաղվել, վեր փաղել բայով. «վիշապը լեռներն երկինք կը քաղվի», կամ «հրեշտակները վեր կը քաշեն վիշապները», — սակայն ոչ բոլոր վիշապները, այլ նոցա միջից առնելով, մի տեսակ քաղհանելով, նոցա, որոնք հազար տարնկան սարսափելի մեծացած և վտանգավոր են, և կարող են սերկերը կուլ տալ»², — իսկ ավելի հին ժամանակ նույն վիշապ հանելն արտահայտված է փաղել, փաղ բառով, որ նույն իմաստն ունի, ինչ որ բանել, վերցնել, վերանալ, հանել, վեր քաղել ևն:

Եզրակացությունը պարզ է: «Վիշապաքաղ» մակդիրը ցույց է տալի, որ մեր հին հայատերի մեջ վաճառնի կոնիլը վիշապների դեմ ըմբռնված է իբրև

¹ Զանել նշանակությունը. «Ա փաղ է հեղին ինքանաց» (Սաղմ., 26, 13). «Կայր ի տարակուսի և փաղնիք զգեք նորա» (Յովնան, 9, 8). Հայկ. չգտ. նոր բառերի մեջ նաև «Մկրտաչի նորա փաղի ի նմանէ», «Գործն արկանեն նա նա քաղել զդուշ իբրեւ նույն իմաստով նանել բայի հետ կրկնված. «Քաղել նանել զուսպ նորա» (Եվանգ., Պատմ., է, 1): Եղևիկի մեջ (Ա չգտ., եր. 8). «Զի՞ն՝ կռնա ի խորհարդ զաշխարհ որոց զգործն մեր ի ձեռք փաղնալնանալն զանապականց յաղպանանալին»: Եղևիկ (եր. 253). «Ե պատգամալ շուգոյն որոյ փաղ նանել զգե՞ս անասորանի ընտրել առնուլ» և զգե՞ս իբրեւ խոտան ի բաց թողուլ:

² Սրվանձոյան, Գրք-քրք, եր. 53 հան.

«վիշապ հանելա, որին, նզնիկի ժամանակից մինչև այսօր, հաճատում է մեր ժողովուրդը: Իսկ «վիշապ հանելը», ինչպես տեսանք, ամպրոպային կոիվն է, որ ամպրոպային աստվածը մղում է փոթորկի մեջ վիշապի դեմ, որ, ինչպես ուրիշ ազգերի, այդպես և մեր հին ու նոր հաճատալիքով ամպրոպի, պտտահողմի և փոթորկայից ամպի անձնավորումն է: Եվ ի՞նչ է՝ «լեռներեն վիշապներուն երկինք քնշվելը» կամ «վիշապաքաղութունը», ճիշտ ոչ մի առասպելական արտահայտություն միայն, փոխանակ սովորական ասացվածքի թե «ամպ ու շանգը վեր է բաղվում լեռների վերան»:

Վանազն, Վերեբրագան:—Վահագնի պաշտամունքի՝ իրանացիներից հայերին անցած լինելը և նորա անվան նույն լինելը իրանական հաղթության աստված Վերեթրագանայի անվան հետ՝ մադուց ապացուցված է՝ Արդ, Վերեթրագանն րաքատրում են թև սկզբնապես ամպրոպային աստվածություն է նշել: Թեպետև պարսից Վերեթրագանի համար հիշատակված լկա վիշապների դեմ կռիվը, որ հատուկ է թուր ամպրոպային աստվածներին, «քայց և այնպես նա ճշտիվ պահպանել է հին Վրոտահան [Վրոտա սպանող, վիշապապան] աստվածների թուր առասպելական և ֆիզիկական գծերը», և սկզբնապես ամպրոպային աստված է նշել Վերեթրագան, որի անունն իսկ ինդրայի մակդիրն է՝ Վրոտահան, թույլ ձևով ձայնավորներից առաջ՝ Վրոտրագահա՝ Արդ, քանի որ մեր Վահագնի անունն ու պաշտամունքն իրանացիներից է անցել հայերին, շատ պարզ է, որ այդ անցումն եղած է իրանական Վերեթրագանի նախնական ամպրոպային հատկություններով հանգեծ, որոնք երևում են մեր Վահագնի մեջ:

Պարսից Վերեթրագան, իբրև ամպրոպային աստված, ներկայանում է րազմատեսակ կերպարանքներով. իբրև պինդ քամի, իբրև ցուլ, ձի, ուղտ, տասնուհինգ տարեկան գեղեցիկ, վայլուն պատանյակ, այլև իբրև թռչուն, վարադ, քաղ և տղամարդ, նույնպես և Տիստրիան, իրանական ամպրոպային աստվածը, երևում է գեղեցիկ պատանյակի, աբշտոի և ձիու կերպարանքով: Ինդրան երևում է հաճախ իբրև ցուլ: Ցուլի կռիվը վիշապի հետ փոթորկի ժամանակ կա և գերմանական առասպելաբանության մեջ՝ Թե մեր հին հավատքի մեջ ևս ամպրոպային աստվածը զանազան կերպարանքներով երեվացած պիտի լինի, անհամեմատական քան չէ, քանի որ ամպրոպային աստվածներն այդպես են երևում, մանավանդ որ մեր հին ու նոր հաճատալիքների մեջ գտնում ենք ամպրոպային էակների համար նույն կերպարանքները: Ամպրոպային վիշապի իբրև ուղտ, ձիավոր կամ ձի, ջորի երևելը տեսած ենք, և թե ինչպես որոտացող էակը պատկերանում է իբրև քամի, կով, և որ գլխավորն է, նզնիկը (նբ. 108) գրում է. «Եթե քաղնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ ճիշտ եղանակով ինչ անուանելով»՝ այլ ծածուկ գործիքամբ իւիթ...», որից պարզ երևում է, որ «վիշապ հանող» կամ «վիշապաքաղ», այսինքն վիշապ բարձրացնող էակը ներկայացել է և նզան կերպարանքով: Սակայն վիշապաքաղ Վահագնի համար հիշատակված է միայն հրեղեն փայլուն պատանյակ կերպարանքը:

¹ P. de Lagarde, Armenische Studien, Göttingen, 1877, №. 141, H. Häbschmann Armen. Gram. 1, №. 75, H. Geizer, Zur armen. Götterlehre, №. 104 հան.

² Pott, Etymologische Forschungen, II, 3, №. 337. Spiegel, Iran, Alterth., II, №. 68.

³ Darmesteter, Ormazd et Abriman, №. 125.

⁴ Grassmann, Wörterbuch zum Rigveda.

⁵ E. H. Meyer, Germanische Mythologie, №. 67, 104.

Վահագն, Հեռակկես:— Խորենացին և րդի վերջի բովանդակությունից Վահագնի կոնվեր վիշապների հետ և հաղթությունը բերելուց հետո՝ ամենաջնում է. «Եւ կարի իմն նմանազոյնս զՀեռակկեսայ նահատակութեանցն նմա երգէին»¹։ Այս հատվածի քերականական կապությունը մեզ համար պարզ չէ։ Առնիշտնե թարգմանում է. «Հեռակկի քաղաքործություններին շատ նման գործեր էին երգում նորա մասին»։

Հեռակկի նահատակությունները կամ առասպելները շատ քաղմազան տարրերից են կազմված, որոնցից շատերը դանազան աղվերի մեջ են դնվում, ի թիվս որոց և իրանացոց մեջ։ Իրանական Կերեսասպայի (Keresaspa) արարքները, սրինակ, ահադին վիշապ Սրուվար (Շրուար) ռին նպանելը, համեմատվում են Հեռակկի արարքների հետ², և Նույնիսկ Տրիտա, Կերեսասպա, Հեռակկես, Թուր, Ինդրա և ուրիշները, իրեն կալծակի հերոսներ կամ աստվածներ, իրենց առասպելներով հավասարվում են իրար³։ Մասն Մյուլլերն արդեն վաղուց ասացուցած է, որ Հեռակկեսի արարքները մեկը, որով նա սպանում է հսկա Գերիտենի արջառը (ամպերի հոտը) պահպանող շունը, ոչ միայն Նույն Ինդրայի քաղաքործությունն է, այլ նույնիսկ շան անունը՝ Սրթրոս աստվածաբանորեն Նույն է, ինչ որ Ինդրայի թշնամի Վաթրա⁴։

Արդ, եթե Հեռակկես ներկայանում է իբրև կալծակի հերոս, շատ քննական է, որ հանդիմատական ժամանակներում, նոր հունաց աղվերության տակ տեղական աստվածները ոչ միայն հայերի, այլև ուրիշների մեջ հունական աստվածների հետ Նույնանում էին և հունական անուններով կոչվում, մեր Վահագն համասար դասվեր Հեռակկին, ինչպես և եղել է իրոց⁵։ Այդ զեպը միակը չէ պատմության մեջ. համանման մտածություն մեր գերեզմանական ամպրոպային աստվածը Թուր կամ Գոնար հոմայական աղվերության տակ Նույնացել է Հերկուլեսի հետ⁶։

Պ. Խալաթյանը գրում է. «Վահագնի, ամենատական Վերեթրազնայի, և Նորա նահատակության մասին գրությունները, հին հայոց աշխարհայեցողության մեջ, պետք է յուրատեսակ, անկասկած, իրանական երանց (Kosorut) ունենային, ուստի և պետք է նշանավոր կերպով տարբերվեն հունական առասպելներից Հեռակկի մասին. բայց այս երկու աստվածների արտաքին, այսպես ասած, զրական մերձեցման իրողությունից էլ հենց բուրրավորն քրմահոգ եղբայրացություն է անում հայ պատմագիրը⁷, այսինքն Վահագնին վերագրում է իրենից Հեռակկի նահատակությանց նման բաներ։ Պ. Խալաթյանի պատմաաբանությունը, սակայն, ոչինչ չէ ասացուցանում։ Հայոց Վահագնի մասին առասպելների շիրանական երանց ունենալը կամ լուսննալը քնալ չէ խանգարում, որ նա ունենար Հեռակկի նահատակությանց նման արարքներ։ Առասպելաբանական գիտության այժմյան դրության ժամանակ, նոր իրարուց տեղով ու ժամանակով հեռու աղվերի առասպելների ու համատալիքների մեջ այնքան շատ և ամբողջական նմանություններ են գտնում,

¹ Մայր Աթոռի գրադարանի Մ. Յ. № 1686, 1689, 1695, 1671, 1672, 616 Անագիրները հետևյալ ընթերցված ունին. «Եւ կարի իմն նմանազոյնս զՀեռակկեսայ նահատակութեանցն նմա երգէին»։

² Spiegel, Iran. Alterth., I, 561 հան.

³ E. H. Meyer, Indogerman. Mythologie, II, էջ. 558 հան.

⁴ Kubn's Zeitschr. I. vgl. Sprachforschung, V, 150.

⁵ Mannhardt, Germ. Mythen, էջ. 235; E. H. Meyer, Germ. Mythologie, էջ. 502.

⁶ Xaxam, Apm. enoc, էջ. 288.

երբ եզրիպատկան առասպելները սլավոնների մեջ, հին հնդկական զրույցներն իսլանդացոց մեջ են գտնուում և նույնիսկ Հերակլի առասպելներն ուրիշների հետ և իրանացոց մեջ.— միթե անհնարի՞նք բան է, որ հայոց մեջ ևս Հերակլի արարքների նման բաներ պատմված լինեն մ. աստուծու մասին, որ նույնիսկ նույնացել է Հերակլի հետ:

Եթե այդ նմանությունը չէ՞ հղած, հասնա ինչո՞ւ պետք է բացատրել Վահագնի նույնացումը Հերակլի հետ՝ Պ. հալաթյանը խաբուսիկ բացատրություն է միայն տալի, այդ նույնացումը կոչելով «առաջին, այսպես ասած, զուրական մեռնեցում», մինչդեռ այդ նույնացումները, որ հիլենիստական կամ հոմոսոյալիան ժամանակներում եղել են դանազան ազգերի մեջ, լուկ արտաքին ու պատահական չեն և ոչ էլ միշտ պարական: մերձեցում, այլ որն է ներքին նմանություն վրա հիմնված: Ինչո՞ւ, Միհր, Տիր կամ Արամազդ չեն նույնացել Հերակլի հետ, այլ միայն Վահագն: Մի՞թե արտաքին և պատահական է, որ Արամազդ Դիոսի հետ, Միհր Հեփեստոսի հետ, Անահիտ Արտեմիսի հետ, Աստղիկ Ափրոդիտի հետ և Տիր Ապոլոնի հետ են նույնացել, թե՛ որն է ներքին նմանություն կա այդ աստվածների մեջ, նմանություններն անշուշտ կան, և այդ նույնացումներն ավելի բան էլ են ցույց տալի. «Այս կատարելապես հաստատուն և մասամբ քիչ հարմարող (համեմատեցե՛ք Միհր-Հեփեստոս) համապատասխանությունը եզրակացնել է տալի, որ վաղուց ի վեր գործածության մեջ էր այն, և քե մատենագիրները ժողովրդի մեջ իշխող սովորությունից են փոխառած այն»¹: Կարծում ենք պ. Գեյցերի այս նկատողությունը ճիշտ է, և եթե նա Միհր-Հեփեստոս քիչ հարմար է համարում, հայոց Միհրի քրոջությանը լավ ծանոթ լինելու պատճառով է այդ:

Թե Վահագնի մասին, քաջի վիշապների դեմ կռիվից, և ուրիշ նահատակություններ են պատմվել, անհավատարի չէ այդ, քանի որ արդեն ավանդված կա մեկը՝ Բարշամի հարզը զողանալը, որից և Հարզդդի ճանապարհն է գլացել, որով անցել է Վահագն: Եվ մի՞թե Կաթին Սրի ծագումը հունաց մեջ էլ, թեպետև ուրիշ ձևով, Հերակլի մանկության հետ չէ՞ կապված, և կամ դա այն ճանապարհ է՞, որով Հերակլ անցնում է Գերիոնեոսի արջաոր հափընալով:

Պ. հալաթյանը բավական չէ՞ որ հորենացու վզին կապում է, թե իբր նա ասում է թե Վահագնի մասին երգը մի օվեպիե հատված է, այլ և առարկում է, հարցնելով այսպես. «Կարելի՞» բան է, որ հորենացու նման մի մատենագիր ձեռին ունենար մի ընդամենը ժողովրդական վեպ, ամբողջ փառաբանություն (целую эпопею), հույական ֆեթված (грандиозную поэму) Վահագնի մասին, և որքան կարելի է լիակատար չօգտվի նորանից, այսինքն շատ բան մեջ չբերի այդ օվեպից: յուր պատմության մեջ, Եվ շտապում է պատասխանել. «Անհնայտնի է: որ ոչ: Արդարև, շատ ճարտասանորեն է առարկած պ. հալաթյանը և մանավանդ ավելի ճարտասանորեն նկարագրած է, թե ինչպես պատմագիրը բաժնե հարմար միջոցից բռնում է՝ յուր հայրենիքի պատմությունն ավելի փայլուն ու փառավոր դարձնելու համար: Բայց և այնպես նորա այդ ամբողջ առարկությունը՝ մնում է լուի իբրև ճարտասանական ձև, քանի որ նա իրենից մի շինծու բան է ստեղծում ու վերագրում հորենացուն և ապա յուր ստեղծածը հերքում: «Ամբողջ փառասանություն», ընդարձակ ժողովրդական վեպ, «հույական քերթված», և կամ

¹ H. Gelzer, Zur armen. Götterlehre, էջ. 137.

² Xalab., Арм. эосе, էջ. 303.

նույնիսկ էմիգրի կարծիքը թն ռեյդ երգի մեջ իրենց պատշաճավոր տեղն էին ընկում և հայոց պանթեոնի մյուս աստվածները, լուկ ինթադրություններ են և ընդունան ինթադրություններ, իսկ պ. հալաթյանի կողմից այլև մի ճարտասանական ձև—տուեցենը, որ պատահել է հնչող լինի:

հորենացիին ոչինչ չէ գրում Վահագնի զվեպին մասին, ոչ էլ այդ զվեպին ռենդարեան, ռամրոդը ու ռեոյանապա (գրանդիոզ) ճգած լինելու մասին: Մեր գիտացածը միայն այն է, որ Վահագնի ծնունդն ու արտաքինը նկարագրվում է մի երգի մեջ մի քանի տողով. երևի, մի քանի տողով էլ նորա կոմիվիշապներին դեմ նկարագրված կլինեն: Այդպիսի փոքրիկ հրգեր էլ կարող էին և նորա մյուս նահատակությանց մասին ճգած լինել:

Բայց ինչու՞ ռափնի լիակատարա լ է ստեղծում պատմագիրն այդ երգերից: Անո՞ր համար արդյոք, որ սուտ է նորա գրածը, թե՞ լուեցենը, ինթադրություն էր լինելու էր լինելու նահատակությանց մի երկու ղեպի ռովանդակություն հորինելը ճարպիկա հորենացու համար, որին այդպիսի ընդունակություն, և այն՝ ամենայն հանձարեղությամբ, վերագրում է պ. հալաթյանը: Մատ հասկանալի է, թե ինչու՞ պատմագիրն այդ երգերը մեջ չէ բերում: Որովհետև նա պատմություն է գրում և ոչ թե անսովորականություն. իսկ մենք գիտենք թե մեր պատմագիրը որպիսի արհամարհանքով է վերաբերում աստվածներին և հատկապես անոնց, որ գերբնական քանի որ ունին իրենց մեջ: Վահագնի մասին բերածը, խորենացու հայացքով աստվածների վրա ոչ միայն քիչ չէ, այլև շատ է:

Ամփոփենք մեր հարակացությունը Վահագնի և նորա երգի մասին:

Վահագն ըստ ամենայնի ամպրոպային կամ կայծակի աստված է, համապատասխան ինդրային, կայծակի աստված Ագնիին, գերմանական Թուրին, պարսից Վերեթրազնային, Տիտրիային և:

Վահագն իբրև ամպրոպային աստված ծնունդ է երկնքի ու երկրի, երկնային ծիրանի [ամպերի] ծովի և երկնային բույսերի՝ հատկապես կարմիր հղեգների, որ [ամպերի] ծովի մեջ բոցավառվում է, կայծակի աստված Վահագնի ծննդյան ժամանակ: Իբրև ամպրոպային աստված՝ հրամայ, բոցամիտր, արեգակնայա պատանյակ է:

Իբրև ամպրոպի աստված ծնվելուն պես վազում է վիշապի կամ վիշապների դեմ կռվելու նորա ձևունդն ու արտաքինն ամբողջապես բնական ռոգերեղից են վերցրած: Կռվն ևս օղբերկության ամպրոպային կռվն է, քանի որ նորա թշնամի վիշապն ամպրոպային օղբերկության անձնավորումն է: Նույնը հաստատվում է և զվիշապաքաղ մահգրով, որ ցույց է տալի թե Վահագնի կռիվը վիշապների դեմ մեր ժողովրդի մեջ հին և նոր ժամանակներում հայտնի զվիշապ հանելու է: Իբրև ամպրոպի աստված նա ճգաք մահգիրն է կրում և քաղություն շնորհում, քանի որ ամպրոպային աստվածներն, ինչպես ինդրան, ամենազորն են, ուժեղ ու քալ: Ինչպես նորա պաշտամունքն ու անունը իրանացիներից է անցել հայերին, յայպես և նորա ամպրոպային հատկությունը, քանի որ իրանական Վերեթրազն-Վահագն սկզբնապես ամպրոպային աստված է եղել: Նա իբրև ամպրոպի աստված Նույնացի է հնչիլնիստական ժամանակներում լինակներին հետ, այլև մերձեցնել է Ապոլոնին, քանի որ վերջինս էլ ամպրոպային հատկություններ ունի. կամ թե մեր Վահագնի մեջ ևս տեսնել են արեգակյան երևույթը, զի ամպրոպի և արեգակյան

Չմիկ մ. հորենացին և հայոց-հին զվեպը, հր. 38:

երևոյթներէ անձնավորումները, ընդհանրապէս մեջ եղած նմանության պատճառով, շատ ազգերի առասպելներէ մեջ իրար փոխանակում են կամ իրար տեղ անցնում:

Վահագնի երգը, որ բովանդակում է այս Հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստվածութեան մասին, հայրց հնագույն ժողովրդական երգերից մեկն է, թեպէտև ուշ ժամանակ գրի առնված:

Ե

ՀԱՅԿ ԵՒ ԱՌԱՍՊԵԼԸ

Այս առասպելը (Ա. թ. Ժ. Ժա) ոչ միայն կարծեցյալ սվնպից առած, այլև ժողովրդական համարելու համար անմիջական Հիմունք լուսինք: Խորհնացիին ցանի անգամ պարզապէս հիշում է, որ գրավոր աղբյուրից՝ Մար Արասից է քաղած այն:

Բայց, հակառակ Խորհնացու վկայութեան, ժողովրդական գրույցներ կամ վեպ են ուզում տեսնել անոր մեջ: Այսպէս շնորհ. Միաբան Գ. Տ. Մկրտչյան¹ Ա գրքի Ժ գլուխն ամբողջապէս Մար Արասից քաղած համարելուց հետո՝ հարում է. «Միայն տեղ տեղ Խորհնացիին ավելացնում է. «Այս արդարացուցանէ զանգիր Հին ասացեալ գրույց»,—«Արդարացուցանէ և այս զասացեալ գրույց» անցիր»։ Այս հավելվածներից մեկը իրավունք ունի՞նք հետևելու, որ Խորհնացու նկարագրութիւնները որչափ Մարտաբանի՝ Նա՛յնչափ, և թերեւ՝ ավելի էլ գրույցների նեղութեամբ են գրված: Եվ ապա քիչ ստորև կարծես կ'ընկնէ և նա. «Խորհնացիին... Մարտաբանի համառոտ հատվածը երկրորդելով, քիչ թե շատ ենթարկվում է իրեն ծանոթ վիպական երգերի և գրույցների ազդեցութեանը: Եւ նույն կարծիքն ունի և հաջորդ ԺԱ գլխի նկատմամբ:

Մական այդ սխալ է: Խորհնացիին Հայկի պատմութեան համար ոչ մի տեղ անգիր գրույցներ կամ վեպ, վիպական երգ չէ հիշում, ինչպէս հայտնում են էմին, պ. Խալաթյան, շնորհ. Միաբան և ուրիշները: Ժ գլխի մեջ երկու անգամ հիշած Խանգիր Հին գրույցները՝ զարմանալի կերպով սխալ թարգմանելով միայն՝ վերագրում են Հայկին: «Եւ իսկ արդարացուցանէ զանգիր նին ասացեալ գրույց» թարգմանում է էմինը. Это оправдывается древними устными сказаниями, «Այս արդարանում է Հին անգիր գրույցներով: Նույնպէս և պ. Խալաթյանը՝ «Անգիր Հին գրույցներ, որոնք արդարացնում են հայոց Հայկ նահապետի մասին տարեգրական պատմութիւնը, որ կա Փաղդական գրքի մեջ: Ուրեմն դուրս է գալիս, որ կային ժողովրդի մեջ Հայկի մասին գրույցներ և Խորհնացիին ուզում է այդ անգիր գրույցներով արդարացնել Հայկի պատմութիւնը: Եւ իսկ Մար Արասի: Այդ թարգմանիչները, սակայն, մոռանում են, որ այդպէս հասկանալու համար՝ քննարկ մեջ պետք է

¹ «Յոբով... երկրորդմէ այժմէ: «Եւ նոյն մատենէ օգնեալ ասացիցէ: «Եւ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ (Ա. թ.): «Անէ» (Մար Արաս). «Եւ իսկ նա ասուեալ (Մար Արասի պատմութեան այս հատվածի մեջ էլ) պատմութիւնս (Ա. թ.): «Եւ իսկ յառաջ մատուցեալ գրույցն իսկ ասէ (Մար Արաս): «Անէ» (Ա. թ.):

² «Եւ իսկ. Պատմ. ուսումն. ք. 84:

³ Халам., Арм. опос., Եր. 83:

յիններ. «Այս արդարացացեանն տեղի ունի գրոյցք»¹: Քննադիրը Հեղափոխութեան և այս դերանման տակ ամբողջ գլխի պատմութիւնը. «Եւստասիս ապստամբութեանն Հայկայն Հասկանալով» իհարկն Հեղափոխութեան ներակայութեանն է թէ հորինեցաւ Հիշած այդ գրույցները Հայկի պատմութեանն հն վերաբերում, մանավանդ երբ մարդ մտադրված է, ինչպէս էմին, ցույց տալ թէ Հայոց Հին պատմութիւնը վնասից, գրույցներին նա ջաղված է, կամ թէ, ինչպէս պ. Խալաթյան, թէ իր հորինեացին «Վնայի» տեղ է ուզում ծախել շատ քան:

2. Ստեփաննէն միայն, նկատելով էմինի սխալ թարգմանութեանը, բառացի թարգմանում է. «Այս արդարացեան է անգիր Հին գրույցները». իսկ երկրորդ անգամին. «Այս ավանդութիւնն ևս ճշմարտացեան է անգիր գրույցները»: Սակայն այդ թարգմանութիւնն ևս բարոյական անսխալ չէ: Այդ տեղ ևս բնագիրը Հեղափոխութեան է: 2. Ստեփաննէն ևս մյուս թարգմանիչներին Հետ, առանց որեւէ ծանոթութեան, դուրս է մղում ասացելով բառը, որ հորինեացին դնում է երկու անգամին ևս:

«Անեւ ըստ մեր պատմագիրը շատ հաճախ «Հիշատակեմ», «պատմեմ» բայերի իմաստով է գործածում. իսկ «յառաջագոյն ասացեալ» (Ա, Թ), «Որպէս վերագոյն ասացեալ» (Ա, Ժ, ԺԷ) նա զարմածների փոխանակ գործ է ածում միայն անցյալ դերբայը՝ ասացելով. «Սակայն ասացեալ (վերևում Հիշատակած) ազգարանութիւնդ Հասաստի է» (Ա, Է), «Ոչ յառաջինս մեր ասացեալ (արդեն պատմած, գրած) գիրս, և ոչ ի վերջին քանս» (Ա, երկրորդ Հաղված): Նույն տեղում. «Այս է առաջին նորա ասացեալն և անբարի բարերարութեանն»: Ոմն Մորփիդիկեայ միաքանեալ, զասացեալ (վերևում Հիշված) կողմանս զայսոսիկ» (Բ, Դ): Այսպէս և «Այս արդարացեացեալ զանգիր Հին ասացեալ գրույց» նշանակում է. «Այս արդարացեան է վերևում հիշատակած անգիր Հին գրույցները»:

Գնշանակն վերևում հորինեացին պատմել է անգիր Հին գրույցներ, որոնց ճիշտ կամ սուտ լինելը պատմագրի համար՝ այդ գրույցների մասին գրելիս հայտնի չէ եղել, և այժմ Մար Արասի պատմութեանը ճշտում է այդ վերևում Հիշած գրույցները, և ոչ թէ Մար Արասի պատմութեան համար վկայութեան է բերում անգիր Հին գրույցներ, ինչպէս Հեղափոխութեան կամ Հեղափոխութեան հասկանում են:

Որո՞նք են վերևում Հիշված այդ անգիր Հին գրույցները:

Համապատասխան Ա, Գ. «Եւստասիս Ոլոմպիոսիայի փոխտոմարի անգիր գրույցացն» վերևագրի տակ պատմած Հին գրույցները: Թն մեր Հասկացեալն ճիշտ է, շատ պարզ կարելի է տեսնել գրույցների բովանդակութեանից:

Ոլոմպիոսիայի անգիր գրույցները, որոնք ըստ ասացեալն շատին Հայկի արտապիլի ճեմ, վերաբերում են Հայաստանում կամ Հայաստանի սահմանների վրա—Հատկապէս Տարոնում և այնտեղում, ուր Նոյ (Քսիսութեան)

¹ Հմմտ. Ա, Ժ, ԺԷ. «Եւստասիս մերոյ արտապիլի զարգմանումն Ասորի արդարացեացեալն»:

² Хасат. Арм. зноу. кр. 63, 64-65.

³ 2. Ստեփաննէն թարգմանում է. «Այս է նորա առաջին և անբարի ասված (աղաքիւմ, անվանված) քաղաքութիւնը, բայց պոռն է հաղեալով. «Այս է նոր» վերևում Հիշատակված առաջին և անբարի բարերարութիւնը: Վերևում (Ա Հաղված) Հիշած է այդ հայն բարերար, բայց առանց ասացելով բարի. «Եւ անբարի առաջին» նորա բարերարութեանն: Իսկ երկրորդ անգամին ասացելով բարով միայն վերևում Հիշած լինել է հայտնում:

ցամաք է ելել, քրհնդեղից հետո բնակիչներ լինելուն: ՈՅետ նաեւելոյ Քսիսու-
թրեայ [Նոյի] ի Հայս և դիպելոյ ցամաքի, գնալ... մի յորդոց նորա [Նոյի]
կոչեցեալն Սիմ ընդ արեւմտոտ հիւսիսոյ դիտել գերկիրն, և դիպեալ դաշտի
միում փոքու առ երկայնաւստի միով լեւամք, գետոց ընդ մէջ նորա անցա-
նելով, ի կողմանս Ասորեստանի, դուզարէ առ դետովն երկուսնեայ աուրս
և անուանէ յանուն իւր զիւստն Սիմ. և դտոնայ անդրէն յարեւելս հարաւու,
ուստի եկն լայսինքն այնտեղ, ուր տապանը ցամաք էր ելել: Իսկ ի կրտսե-
րագունից որդուցն նորա Տարբան անուն, երեսուն ուստեբոց և հնգետասան
դստեբոց և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն, բնակէ անդրէն ի նոյն գնե-
զերն, յորոյ անուն և զտառն անուանէ Տարուն, և զանուն տեղոյն ուր բնա-
կեցան՝ կոչէ Յրեսն. զի անդ դառաչինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց
նորա ի նմանէս:

Այս անգիր գրուցներն մեջ հիշված երկու աշխարհագրական տեղերից,
որ Նոյի որդիքը բնակում են, Տարունը հայտնի է, Ո՞րն է այն տեղը, ուր
Քսիսութրես [Նոյ] ցամաք է ելնում և ուր Սիմ վերադառնում է դիպի Տա-
րունի կողմերը զնալուց հետո: Ընդ արեւմուտս հիւսիսոյ (դիպի Տարուն) և
այսրեւս հարաւոյ (Տարունից) ուղղությունը ցույց է տալիս, որ տապանի
ցամաք ելած, ուստի և Սիմի բնակած տեղը, ըստ Ոլոմպիոդորոսի գրուցների,
Տարունի հարավ-արեւելյան՝ Կորդվաց կողմերում պետք է որոնել: Եվ արդարեւ,
բոլոր հին ազանդութուններով տապանը ցամաք է ելնում ոչ թե Մասիսի վրա,
այլ Կորդվաց կողմերում: Եզնագույն ազանդութունը չի գիտեր՝ թե Նոյա տա-
պանը Մասիսի վրա է իջած: Ղազար Փարպեցի (և դար) Այրարատ գավառի՝
ոգևորությամբ գրած նկարագրության մեջ (գլ. է և Ը) չի հիշեր բնավ՝ որ
Այրարատա մեջ Նոյա տապանին լեռը կա: Նույնպէս Մովսէս Խորենացի չ'է
Պատմության և ոչ Աշխարհագրության մեջ ամենեւին չի հիշատակեր: Իսկ
Փավստոս Բլուզանզացի (Գ, 10) կապանդե՝ որ ս. Հակոբ Մծրնացի տապանին
մնացորդները գտած ըլլայ ի լեռին Վ(Ս)արարադայ ի սահմանս այրարատեան
սէրոթեանն ի գաւառն Կորդուաց: Ըստ այսմ Գ դարուն եայեւն, ինչպէս եւս.
Առօրի՛ ու Բաբելոնի՛, Նոյա տապանին լեռը [Արարատ]. ոչ թե Մասիսի սահ-
մանները, այլ Կորդվաց արեւմտին մեջ կրնտրեն: Առաջինն, որ իրոք Մա-
սիսը Նոյա տապանի լեռը կհամարի, է Ս. Հերոնիմոս (Comm. in Isaiam,
XI, 38 vo I, IV 1 p. 467 ed. D. vallors): Այսպէս ուրեմն օտար գիտնական-
ներու կարկաստանք է այս, որ շատ օւշ—համեմայն դիպս ոչ հառաջ քան զթ'
կամ Ժ դար—Հայաստան մուտ գտած էս՝ Թոմա Աթորունին (Պետրոս., եր. 19)
դեռ գրում է թե տապանը Կորդվաց լեռների վրա է նստել:

Ուրեմն, ըստ Ոլոմպիոդորոսի անգիր գրուցացն Տարունում և տապանի
ցամաք ելած տեղում,—Տարունի հարավ-արեւելյան՝ Կորդվաց կողմերում [Ա-
րարադում]—բնակում են Նոյի որդիքը: Պատմագիրն այս, ըստ Ոլոմպիոդո-
րոսի գրուցացն, հիշատակելուց և Հայոց շերտք ցոցց և պարուց մկայության
կոչելուց հետո, ավելացնում է. «Եւ այսոքիկ գրուցք սուտ և կամ արդարն
լեալք, մեզ չէ ինչ փոթա: Բայց երբ մեր պատմագիրը Հայկի պատմության մեջ

1 Է. Գիցեր, Համառոտ պատմութիւն Հայոց, Բարձր. հ. Գր. Պարեմյարան, Վրեհնա,
1897, եր. 6 հատ.: Տե՛ս այս մասին մտերմաւոր, ինչպէս և Կորդվաց կողմերի Արարադի
մասին, ուր պալիս է Հայկ. Н. Платеаков, Восточные рукописи, С. Петербург, 1887, եր.
92 հտն, Ներսէր Բլուզանց, Փննասեր, պրակ 16, եր. 43 հտն., 81 հտն., պրակ Բ, եր. 84.
Միքայէլ, Հայկական, Վաղարշապատ, 1894, եր. 78 հտն.:

ըստ Մար Աբասի գտնում է Հիշված թե մինևույն տեղում Արարացում, [ուր տապալներ ցամաք է ելել], քնակում են Հառաջագոյն ցրված մարդիկ՝—իսկույն ավելաքնում է թե ՔԱՅ (Արարացա երկրում, Կորդվաց մեջ, Հառաջագոյն ցրված մարդկանց քնակած լինելը ըստ Մար Աբասի) արդարացուցանել դանդի Հին ասացնալ զորոյս (Ուսմպիոգորոսի թե տապանի ցամաք էլած տեղում, որ մինևույն Արարացն է Կորդվաց մեջ, քնակել է Սիմ)։

Այնուհետև շարունակում է խորենացին ըստ Մար Աբասի. «Եւ ինքն [Հայկ] խաղաց [Արարացից], ասէ [Մար Աբաս], այլով աղիւիւն ընդ առնուստո հիւծիոյ, դայ քնակէ ի րարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարգ... Յիշի եւ աստեւոր [Մար Աբասի պատմութեան այս տեղում էլ] պատմութիւնս. հորաւոյ կողմանէ դաշտիս այստեղի առ եւելայեանաւի միով լիւտմբ բնակեալ յառաջագոյն ուր ասկում՝ ինքնասկամ Հնազանդել դիցազնին. Արդարացուցանէ և այս գասացնալ զորոյս անգիրս»։

Արդ, Հարգի Հարաւային կողմում Տարոնէ է Սիմ լեռան ստորոտներում, Հիշենք ըստ Ուսմպիոգորոսի անգիր դրույցների՝ Սիմի գետը տապանի ցամաք էլած տեղից—Արարացից—գնալ Տարոն՝ ընդ առնուստո հիւծիոյ, որ ուղղութեամբ և Հայկի է գնում, և քնակվելը Տարոնում, ի սգաշտի միում փոքր առ եւելայեանաւի միով լիւտմբ, որ է Սիմ լեռը, որտեղ և Սիմի որդին՝ Տարոնէ մնում է յստ մարդկանց Հետ.—այն ժամանակ Հասնաւայի ելինի խորենացու խոսքը թե ՔԱՐԴԱՐԱՐԱՐԱՐԱՆԷ և այս (Տարոնում, առ երկայնաստիւ լեռամբն Սիմ, յառաջագոյն քնակութիւն լինելն ըստ Մար Աբասի) գասացնալ անգիր զորոյս (Ուսմպիոգորոսի, թե Տարոն յուր մարդկանց Հետ մնում է ջրհեղեղից Հետո Տարոնում, առ երկայնաստիւ լեռամբն Սիմ)։

Այսպէս, երկու անգամ գործածած այս դերանման տակ պետք է Հասնաւայ ոչ թե ամբողջ Ժ դիւի պատմութիւնը թեազագոս ապատամբութեան Հայկայք, այլ ջրհեղեղից Հետո, Հայկի գալուց առաջ, մարդկանց քնակված լինելը՝ առաջին դպրութեամբ Արարացում, որ տապանը ցամաք է էլած Կորդվաց մեջ, իսկ երկրորդ դպրութեամբ Տարոնում։ Այս երևում է և այն Հանգամանքից, որ դժվար է կարծել, թե պատմագիրը մինևույն դիւի մեջ երկրորդ անգամ, մի քանի տող միայն հետ, մինևույն բառերով նույն վկայութիւնը կրկին նույն բանի Համար՝ յաղագոս ապատմութեան Հայկայք, մանաւանդ որ երկրորդ անգամ գրած է. «Յիշի եւ աստեւոր», ՔԱՐԴԱՐԱՐԱՐԱՐԱՆԷ և այլապէս, ասալ էլ, նաև այսպէս, որից պարզապէս երևում է, որ երկրորդ այս դերանման տակ ուրիշ բան պետք է Հասնաւայ, և ոչ ինչ որ առաջին այս—ի տակ Հասնաւայում է։

Հայաստանում, Հայկի գալուց առաջ, մարդկանց քնակութիւն լինելն առհասարակ քաղաքան գրադրեցում է խորենացուն։ Այսպէս Ա, Ժր գրում է. «Բայց սքեռելի իմն ասէ պատմագիրն [Մար Աբաս], թէ ի յուր տեղիս գրաւան քնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր յառաջ քան զպալուստ քնկին մերոյ նախնայն Հայկայք։ Այստեղ թէին անգիր զորոյցներին»։

1 «Եւ արարեալ գետս [Հայկ] յեւթիւն Առաւելայ, որ է կողման Հիւծիոյ [Տարոնի] Համաւառութեամբ, վանի Հարաւային կողմերում, Կորդվաց մեջ] ... Երթալ քնակէ ի լեռնոտի միում ի դաշտավայրի, յարսով սեղում յառաջագոյն քնակելը դաշտիս քնակելն. զորս Հնազանդել արարեալ Հայկ, յինէ անդ տուն քնակութեան կալաւորն և առ ի ժառանգութիւն կազմեալ որդայ Արանաւայք»։

հետ չէ կապվում առաջուց մարդկանց բնակութիւն լինելը, դի երկրի շատ կողմերի մասին է խոսքը. բայց հենց որ մասնավորապէս Տարոնի մասին է լինում խոսքը, դարձյալ նույն բնիւն չէին գրույցները մեջ են դալիս. «Զոր [զորմանալ Սլաւն] ոչ կարեմ հաւաստեալ ասել. ի Հայկա՞ն եթէ յառաջագոյն քան զնա եղիլոց յաշխարհին, զոր թիւ գրույցն պատմեն լինել... Զսա կարգէ սակաւ արամբք պահել զլեռնոն, որսալ զքօշսն, որք անուանեցան Սղիւնեքս (Բ, Ը): Այստեղ հիշված հին գրույցները միևնույն Ոլոմպիոդորոսի հին անգիր գրույցներն են, աշխարհը Տարոնն է և լեռք՝ Սիմ¹:

Նույն գրույցները շորթորդ անգամ ևս հիշում է պատմագիրը. «Եւ աստ ասեմ զրոյց զսքանշելի ծերոյն՝ որ ասէր, թէ ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի ի Շորէ աննելով զյիշատակ գրուցացս այսոցիկ, որպէս Ոլոմպիոդորոսյն յաղացս Տարոնոյ եւ Սիմն կոչեցնալ լեռինն» (Բ, հգ): Այստեղ այդ գրույցների հին և անգիր լինելը շրջաբանութեամբ է բացատրում, մինչդեռ մնացած գնականքում Ոլոմպիոդորոսի գրույցները, և միմիայն անոնք, կոչվում են միշտ հին, անգիր:

Թե ի՞նչ են այդ անգիր հին գրույցները և թե կտրո՞ղ էին այդպիսի գրույցներ լինել հայ ժողովրդի մեջ, այդ մասին հետո:

Մեր քննութիւնից երևում է, որ հռենեացու կողմից ոչ մի և ոչ իսկ մութն անկախութիւն ունինէ Հայկի պատմութիւնը ժողովրդական գրույցներից՝ քաղած լինելուն: Պատմագիրը պարզապէս հայտնում է, որ միայն գրավոր աղբյուրից է քաղած այն իսկ այդ գրավոր աղբյուրը, ինչպէս նկատել ենք, կարող է և գիտնականների հերքելու լինել ամբողջապէս: Տասներորդ դարում Հայկի պատմութեան մեջ հիշված հին անգիր գրույցները Հայկի և Թելի առասպելի հետ աննշանութիւն չունին, այլ Տարոնում և Արարազում մարդկանց հառաջագույն բնակութիւն լինելուն են վերաբերում: Խորենացին չէ, որ ժողովրդական է համարում Հայկի առասպելը, այլ՝ միայն մեր բանասերներից էմին. Միաբան և ուրիշները:

Այստեղ վերջանում է իսկապէս մեր անելիքը Հայկի առասպելի մասին, քանի որ հռենեացու ճիշտ և խորենացու ձեռով օգտված ժողովրդական առասպելներ ռուսականագիտութեան տեսակետից՝ առանձին նշանակութիւն չունին այն թեր ու դեմ կարծիքները, թե արդո՞ք խորենացու մեջ Հայկի առասպելը ժողովրդական վիպական բնակութիւն ունի՞, թե՞, ընդհանրապէս, մի շինծու հերքելու բան է: Արդո՞ք խորենացի՞ն է հերքելու այդ պատմութիւնը, թե՞՞ այլ ոք: Խորենացին չէ հիշում այդ առասպելի ժողովրդական լինելու մասին, և մեծ զարմանք չի լինիլ, եթե՞ ցա խորենացու կամ մի ուրիշի հերքելու անհրաժեշտ է: Բայց կարող է այդ առասպելը նաև ժողովրդական տարր ունենալ յուր մեջ, դի պետք չէ մոռանալ այն հանգամանքը, որ մի կողմից Աստուածաշնչի մեջ (Սաաի, ԺԳ, 10. Յոր, 1Ը, 31) Օրիոն համաստեղութեանը Հայկ անունով է կոչված, որով և Հայկ ներկայանում է, համապատասխան Օրիոնի, իբրև առասպելական որսորդ: Իսկ մյուս կողմից՝ Ապաթանգեդոսի մեջ ևս գործածված է հայկաբար բառը, հայնսորեն՝ ռուսկայաբար բառի իմաստով:

¹ Հմմտ. Բ, Կգ. Սղիւնեքս և զիւնեքսութիւն Սղական ամբողջ Տարոնում և Սիմ լեռը:

² «Առնալ սկայազօրն (Տրդատ) հայկաբար դոթ արմաւանն (Ազար., Թիֆլիս, 1882, հոլ 448):

Հակայի իմաստ ունի Հայկ բառը և Փիլոսոփ թարգմանութեան մեջ, որ հսկաների մեծութիւնը ճշակաւապէս բացուի և արտահայտուած¹:

Այս մութ հիշատակութիւնները ենթադրել են տալի. թե մի որնէ հսկա Հայկի մասին գրույց կամ առասպել կարող է եղած լինել հայոց մեջ, քանի որ զմէար է կարծել թե թարգմանիչները Հայկ բառն իրենցից ստեղծեին Օրիոն և հսկա նշանակութեամբ. մասնավանդ որ ցայսօր ևս նոյն Վանա կողմերի, ուր Հայկի արարքները կատարվել են, ժողովրդական երգի մէջ գտնուած ենք ինչէ՛ր — Հայկ բառը մի որով համաստեղութեան իմաստով: Եվ երբ մի անգամ որնէ Հայկի մասին ժողովրդական գրույց կարող է եղած լինել, անհնար թե՛ թե Հայկի իմաստը թե՛ իմաստացոյ գրավոր աղբյուրը, Մար Արտա կամ այլ ոք, համեմատել զեպս, ըստ յուր վկայութեան, ոչ իտրենացին, յուր Հայկի պատմութեան համար օգտւած լինի ժողովրդական գրույցից: Ուրիշ խոսքով, ժողովրդական տարրը կարող է, թեպետ և ոչ անմիջապէս, մտած լինել Հայկի առասպելի մեջ: Այս ի նկատի ունենալով ահա անհետաքրքիր չէ տեսնել, թե արդո՞ք Հայկի պատմութիւնը իտրենացոյ մեջ ունի՞ ժողովրդական վիպական բնավորութիւն, թե չէ:

Հայկի տառապելի վիպականութեան խնդիրը: — Այս մասին ևս տալիս անգամ ուշադրութիւն դարձնողն էմինն է. սեկարագիր պատերազմին Բելայայնքան զեղուն է մանաւպտոտով հանգամանօք... Մինչ զի անհնար չի լինի մտադիր ընթերցողին ինկատել ի նոսին հետս երևակայութեան վիպասանին և այն՝ հայ վիպասանին²: Մի ուրիշ տեղ՝ գրում է. «Այս հատվածներում ընթերցողը հանդիպում է այնպիսի դաժնվածների, անպատեհների և նկարագիրներին, որք հատուկ են ժողովրդական վիպասանութեան»: Նա, Հայկի ամբողջ պատմութիւնը օվիպասանութիւնիցս իտրենացոյ ձեռով քաղած համարելուց հետո, նույնիսկ ավելի հեռուն է գնում, համարելով թե «Պատմագիրը խանգարում է Նոգերի լափաքերական ձեռք և վիպասանների բանաստեղծական պատմութիւնն ավանդում է արձակ ոճով: Այսպէս են՝ օրինակի համար, Հայոց նահապետի արտաքին նկարագրութեան վիպասանական նախնորդները, որպէս և նորա արարքների նկարագրութիւնը: Էմինի հետևողներին չն. Միտրանը Հայկի առասպելի բացատմածքի վիպական կերպարանքը՝ գտնում է «հետադիմ անհասկանալի ժողովրդական ստեղծարարութեան, տեղագրական ծանրութիւնների եւ վառվածքի բանաստեղծական լիզվի մեջ»³:

Մյուս կողմից պ. Խալաթեանը կարծում է թե Հայկի պատմութեան մեջ «ոչինչ վիպական չի, իսկ. դա հետադիմութեան նկարագրութիւն է միայն, որի

¹ Տե՛ս «Նոր քաղ. հայկ. լեզ. և լեզվաբանութեան բառի սանկ, Եւսեպիան Խալաթ. Արմ. Յուզ եր. 76, 118. Իսկ Հայկի մասին ավելի մանրամասն ծանօթութիւններ՝ Է. Սիլբեմ, Հին հայերէն, եր. 238 հան., 118 հան.:

² Ներքին, Վանա տաղ, Թիֆլիս, 1885, Ա. նր. 32. «Եւսեպիան Խալաթ, որ ծանօթութեան մեջ գրած է. «ստեղծողն այն խալաթը, որ արշալուստն շատ առաջ տեսնելով է որնեկուն կողմիցս: Ինչ է ձեռք մեջ յ տաղը մի պայմանական նշան է միայն՝ ըստ Ներքինի՝ վերջի գափկած քառեր բառաւանդութեան ցանկերու համար: Ըմբ. տարւել, արեւել, խաւիք, ճարագ, պայց և նման գրութեան ձեւերը: Մակայն տեղեւ ձեռք ենթադրել է առաջ լեռնայն: Արդարեւ բանահոգութեան վերջի կ տաղը, որ նույնպէս գափկում է այդ բարբառի մեջ, չիօթել է քառեր հետ. թե՛ այդ բառն իրեք ք տաղով է Վանա բարբառի մեջ, Հայկը, ինչպէս հարգութեւ է պ. Է. Ա. Խալաթ, մեկտեղել կարել է ն ձեռքերու:

³ Էմին, Վէպս Դե. Հայ., եր. 27:

⁴ Նույն, Մ. Խորենացի և Հայոց Հին վիպերը, եր. 39:

⁵ Միլբեմ, Խոր. ուսումն., եր. 84 հան.:

օրինակները դռնում ենք նույն հորենացում վերադրված թղիտոյից՝ գրքի մեջ: Պ. հայաթյանն այսպես ընդհանուր խոսքերով անցնելով և թղիտոյից՝ գրքից ոչ մի օրինակ չբերելով, արվեստական է համարում ոչ միայն Հայկի ամբողջ պատմությունը, այլև նույնիսկ «մեկըլիքները, որոնցով պատկերա- նում են այս կամ այն դուռնադնի ֆիգիկական և հոգեկան հատկություն- ները»:

Ահա՛ կարծիքներ միևնույն նյութի մասին, որոնք իրարու հակադիր են: Արդյոք վիպական ընամբություն ունի՞ այդ պատմությունը, թե չէ՞, նրկու դեպքում. ևս մասնագետ մարդիկ են կարծիք հայտնողները: Բայց միևնույն բանը հո՞ չի կարող վիպական ընամբություն ունենալ և չունենալ: Ժողովրդական ստուգաբանություն.— Շահատուկ անունների ժողովրդա- կան ստուգաբանություն, տեղագրական ծանոթություն, վառվառն բանաս- տեղծական լեզու, հարկավ, դեռ քաղաքական եղբի լին կարծելու թե այդ պատ- մությունը ժողովրդական զգրույցների հետևության մի է դրված: հորենացին կամ յուր գրավոր աղբյուրը, ինչպես և ամեն մի ինքնուրույն գրող հեղինակ, կարող էր տեղագրական քաջ ծանոթություններ ունենալ, վառվառն բանաս- տեղծական լեզու գործածել, այլև՝ ժողովրդից բոլորովին անհախ՝ ստուգա- բանություններ անել: Հիշենք միայն վերջին դարերում կատարված քաջմա- թիվ ստուգաբանությունները՝ Ակոսի, Արկ ուտի, Մարանդ, Մայր տեղ և նման- ները, որոնք գիտնականների ուղեղից դուրս հկած բաներ են և ժողովրդական զգրույցների հետ կապ չունին, եթե միայն հետո գիտնականներից լին անցել ժողովրդին: Այսպես և Հարթ, Հայկաշեն, Հայք, Գերեզմանք անունների ստու- գաբանությունը՝ կարող է մի մասնագետ մարդ յուր սենյակում նստած տեղն էլ արած լինել, մասնավոր ուր, այդ անունների հիշատակությունն ու ստու- գաբանությունը Մար Արախից անելով, հորենացին ոչ մի ակնարկություն չէ անում թե արդյոք այդ անունների բացատրության հետ կապված ավանդու- թյուններ նյային յուր ժամանակ ժողովրդի մեջ, թե չէ:

Նրկու տեղ միայն կարելի է կարծել թե յուր խոսքերն է մեջ բերում հո- բենացին. Շուտի ճակատուն չինէ դատակերտ, և անուն կոչել Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այստեղիկ ասլաղալ և զուտուն ասլալ անուանի Հայք Ձոր: Իսկ ըլուրն, ուր քաջամարտիկն անկալ թէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասիւն Գերեզմանսէլ: Ենթադրած տողերը, թեպետև Մար Արասն էլ կարող էր գրել, բայց կարող են նաև հորենացունը համար- վել, Անոնք, սակայն, ոչինչ լին ասում բուն ժողովրդական ստուգաբանության մասին, այսինքն մի ստուգաբանության մասին, որի հետ նկատված է ժողո- վրդական ավանդություն: Ամեն պատմագիր էլ, ինչպես և մեզինից ամեն մեկը, մի հին անուն յուր ժամանակ փոխված գտնելով՝ կարող է այդ փոխ- ված ձևն ավելացնել, հորենացին Մար Արասի մեջ Գերեզմանք ձևն է գտել, իսկ ինքը նույն տեղի համար լսել է Գերեզմանակք, ուստի և յուր ժամանակի կոչումն էլ ավելացրել է: Միակ կասկածելի կտորը մնում է. «Այստեղիկ ասլա- զալ և զավառն այժմ անուանի Հայք Ձոր»: Արդյոք Մար Արասի՞ն են այդ խոսքերը, — որովհետև ասլազն գրել կարող էր և Մար Արասը, որից նույնու- թյամբ օգտվել կարող էր մեր պատմագիրը, — թե՛ հորենացին, գտնելով Մար Արասի մեջ ճակատի տեղում շինված դաստակերտի անունը Հայք, իսկ յուր ժամանակ գավառի կոչումը Հայք Ձոր, իրենից ավելացրած է այդ բացատ-

րությունը. թե՛ հենց ժողովրդի մեջ էլ Հայոց Զոր կոչումը Հայկի հաղթությանը էին բացատրում: Շատ հավանական է, որ առաջին երկու ղեկավարները լինի, քանի որ, ինչպես ասացինք, ժողովրդական ավանդության հիշատակություն չէ անում խորհնացին: Ինչպես էլ լինի, այդ միակ մութ կոտոր միայն ժողովրդական ստուգաբանություն համարելով, շատ խախուտ հիմք կունենանք այն մասին, թե խորհնացին անձամբ օգտված լինի ժողովրդական զորայիններից: Սակայն հատուկ անունների ստուգաբանությունները ճիշտ ըստ-ինքյան ուշին չեն հայտնում Հայկի պատմության վիպական կերպարանը ասացուցանելու համար, կարող են ենթադրել տալ, որ ժողովրդականի վրա հիմնված լինին անոնք, այսինքն թե Մար Արամ իրենից արած լլիկի այդ ստուգաբանությունները, այլ՝ գուցե, ժողովրդից վերցրած: Բայց որպեսզի այդ ենթադրությունն արժեք ունենա, հարկավոր են ուրիշ հիմունքներ այդ պատմվածքի վիպական քննություն համար:

Մակդիրներ:—Պ. Խալաթյանը մակդիրներն արվեստական է համարում, աշխատելով ցույց տալ, որ անոնց մի մասը Ե—՛ է դարու ինքնուրույն և թարգմանական գրվածքների մեջ գործածված կան, լայնակ են երեքը՝ կտրուկվածից, ունենալ, լայնակ: Իսկ մյուս մակդիրներից հինգի համար սրամիտ նկատողություն է անում նա. որովհետև կա տերկայնաբազուկ՝ բառը և սարաբեր գրազուկ իմ որպես զաղեղն հաստ, ուստի և խորհնացին ինքն է կազմել աղոնց նմանությամբ ճատարացուկ և ճատարաղեղն բառերը. որովհետև կան սարակնա և սխաթակնա, ուստի և խորհնացին է կազմել խալաթյան բառը: Այսպես և զգնդայարմարա բառի նմանությամբ խորհնացին կազմել է զնդալալաղեղն, իսկ զնալա բառով բարդված բազմաթիվ բառերի նմանությամբ փայլազանգուր: Իսկ մյուս մակդիրները,—բազմակողմ (հակա), անհուն խալաթի ուժառույթ, լուսնոլիվ փայլի և երկայնադիզով հաստակոց սպալից մրցողով, աղեղնալուր. անհունի զորութեամբ, ուրիշ և խոհմ սկայն, նիզակն աղի, երեքնեղեն,—աղոնց մասին չէ խոսում պ. Խալաթյանը: Բայց և այնպես նա եզրակացնում է թե մակդիրներն անգամ ժողովրդում են հայոց Ե—՛ է դարու գրականության երկերին:

Սակայն ուշին չէ ասացուցանում պ. Խալաթյանի այդ կարծիքը: Ընթագրենք մի րուպ, որ Հայկի պատմության մեջ եղած բոլոր մակդիրներն էլ խորհնացուց առաջ եղած ուրիշ մատենագիրների մեջ գործածված լինին, մի՞թե դա ասացուց կարող է լինել, թե խորհնացին այդ մակդիրներն ուրիշներից է զաղել և կամ եղածների նմանությամբ ինքը շինել: Քանի որ լեզուն նույն հայոց լեզուն է, անշուշտ լեզվի մեջ եղած պատրաստի բառերից պետք է օգտվեն լատիվածաշնչի և ուրիշ գրքերի թարգմանիչներն և ինքնուրույն հեղինակները: Այդպես որ դատելու լինինք, ամեն մի ժողովրդական վիպի գոյություն կարող ենք մերժել: Օրինակ, ուսաց վիպի մեջ ո՛րքան հաճախ գործածված կան сыра (земля), чисто (поле), белая (трудь), каленая (стрела), красное (солнышко) և նմանները. բայց երևակայենք այդ վիպից պատմություն գրն ոգին, օրինակ մի խորհնացի կամ Մար Արամ. դրա գրած պատմությունը հասնի հետևողներին, իսկ ժողովրդական վիպը մոռացվի՝ գրի առնված լլիկելով: Մի՞թե հետևողուն քննադատն իրավունք կունենա հերքելու այդ մակդիրների վիպական լինելը, ուստի և վիպի գոյությունը, բերելով այն հիմքը թե այդ մակդիր ասած բառերը՝ сыра, чисто, белая, каленая, красна նրն գործածված կան այդ խորհնացուց կամ Մար Արամից առաջ:

Այսպես ալ. հալաթյանի իբր հիմունքը Հայկի առասպելի մեջ եղած մակ-դիրների արվեստական կամ շինովի լինելու մասին ոչ մի արժեք չունի։ Այդ մակդիրները պահում են իրենց վիպական հատկությունը։

Տարօրինակ կառնիք։—Սակայն ալ. հալաթյանն այդու միայն չէ բազմա-կանանում. նա մակդիրները ոչնչացնել աշխատելով՝ Հայկի առասպելի ժո-ղովրդական գույն ունենայն է ուզում ոչնչացնել։ Այդոր համար նա ուղղա-կի միջոցի էլ է դիմում. շանալով ուղղակի արմատից կտրել Հայկի առաս-պելի ժողովրդականությունը, եկարելի է մինչև անգամ քնդունել, պրոմ է նա, որ մեր պատմագիրն այս կամ այն բառերն ու վիպական արտահայտու-թյունները վերցրած լինի յուր ժամանակի երգերից. բայց ավելի քան անհա-վանական է, որ այդ երգերը կարողանային բովանդակել վիպասանություններ կամ քերթվածներ այնքան հեռավոր ժամանակներից, ինչպես են Հայկի, Արամի, Տիգրանի և ուրիշների յայրած ժամանակը (эпоха), այսինքն 3000—1500 տարի հորենացուց առաջ, և հորինված լինելն հատկապես այս տառա-պելական (легендарный) անձնավորությունց մասինն¹։ Զգտենք, ալ. հա-լաթյանն իսկապես հավատո՞ւմ է յուր այս առարկության զորութիւնը։ Եթե Հայկ, Արամ եւն, առասպելական անձեր են, մի՞թե նոցա 3000—1500 տարի հորենացուց առաջ ապրած լինելու ժամանակագրությունը ճշմարիտ պատմա-կան իրողություն է։ Այլ կարելի՞ է արդյոք այդ առասպելական, իսկապես կարկատած ժամանակագրության լափազանցության կամ հեռավորության վրա հիմնված՝ ասել թե երգեր չէին կարող եղած լինել։ Պ. հալաթյանը նախ ժողովրդի հիշողության վրա շատ թույլ գաղափար ունի և ապա մոռանում է, որ ինքը պատմություն չէ գնում, այլ առասպել։

Ենթադրենք մի բույս, որ հորենացին ինքը ցաղում է Հայկի, Արամի, Տիգրանի պատմությունը ժողովրդական երգերից կամ պոույցներից [բայց ոչ Վիպասանությունից]։ Նա անշուշտ պետք է օգտվեր յուր ժամանակի երգերից. եթե ի դարու մարդ է, ի դարու երգերից, իսկ եթե նա այդ երգերի կամ պոույցների հերոսներին իրենից. կամ նույնիսկ երգերի վրա հիմնվե-լով (հիշենք, որ թվերը լափազանցելը՝ ժողովրդականի հատկությունն է) 3000—1500 տարի առաջ ապրած է դնում, մի՞թե այդ կհերքե վիպական եր-գերի ու պոույցների գոյությունը հորենացու ժամանակ և այն, որ հորենա-ցին այդ երգերից օգտվել է։ Մի բույս երևակայենք, որ հորենացին ժի՞ գա-րու մարդ է, և նա մեր Սասնու ծռերից օգտվելով պատմություն է գրում, առասպելական Սասնաբերն դնելով իրենից 2000 տարի առաջ և ըստ այնմ շարում է և նորա առասպելական որդոց՝ Առյուծաձև Մհերի, Դավթի և Պատիկ Մհերի ժամանակները։ Մի՞թե այդու կհերքվի Սասնու ծռերի մեջի գո-յությունը ժի՞ դարում։ Ժողովրդական գրույցը կամ երգը ճիշտ ժամանակա-գրություն չդիտն. նա միայն ընդհանուր խոսքերով է անցնում, հերոսներին շատ ու շատ տարիներ առաջ դնելով, կամ լափազանց թվեր ցույց տալով։ Ժողովրդական վեպից ու պոույցից օգտվողն ինքն արդեն պետք է կազմե ժա-մանակագրությունը. իսկ թե հորենացու ժամանակագրություն իրենն է կամ յուր աղբյուրներին՝ այդ մասին մի անգամ ևս խոսք ունեցել ենք և հետո ևս այդ մասին պիտի գրենք։ Հիշենք միայն, որ նա Վահագն աստծուն ևս որոշ ժամանակում ապրած է դնում։ Մի օրինակ ևս։ Շահնամայի առաս-պելական հերոսները հո՞ վիպական են, բայց այդ հերոսներին Ֆիրդուսին

¹ Халат., Арм. эпос, кр. 114.

իրենից քանի՞ հազար տարիներ առաջ է դնում։ Բայց մի՞թե Շահնամայի դուցեազները առասպելական լինելովը և նոցա ապրած ժամանակների հետա-վորութիւնամբը Ֆիրդուսուգ՝ կարելի է հաստատել, թե այդ դուցեազների մա-սին Ֆիրդուսուս ևս մի նորա գրաւոր աղբյուրների հնդկականների ժամանակ երգեր կամ դրույցներ լինե՞նդ։ Այդպիսի դատողութիւնով ոչ միայն հայոց ու պարսից, այլև ամեն ազգի վեպերի ու գրույցների գոյութիւնը կարելի է հերքել։

Մյուս կողմից, ասել թե ինչու՞ «հատկապէս այս առասպելական անձ-նաւորութեանց մասին» պետք է երգեր կամ գրույցներ լինեն՝ այդ ժխտողին է, կարելի՞ է ասել, օրինակ, թե ինչու՞ հատկապէս առասպելական Պոռ թա-գաւորի մասին է պատմում մի գրույց կամ, քառ Սրբանձառանի, վեպ Բու-լանըխի ժողովուրդը՝ Բայց նրանկայնցք, մի հորհնացի, կամ նորա աղբյուրը Մար Արաս, որ այդ սհին ժամանակների կուսպաշտ թագաւոր Պոռշիս վեպը լսում է և Պոռ թագաւորին յուր պատմութեան մեջ արևում ու նորա ապրած ժամանակն իրենից 1500 տարի առաջ դնում։ Մի՞թե այդու հհաստատվի այն՝ թե Բուլանըխի ժողովուրդը Պոռ թագաւորի մա-սին գրույց չէ ունեցել։ Մենք ավելի կանգ առնք այ. հայաթիւանի այս կար-ծիքի մասին, քան արժեւր Անցնենք նորա մյուս կարծիքին, որ իսկապէս նշա-նակութիւն ունի, որովհետև հիմնված է քանադորական համեմատութիւն-ների վրա։

Հայկի ու Բելի և Սմբատի ու Հեփթաղի կոնվենիւր։—Հայկի առասպելի գոյութիւնը ժողովրդի մեջ ածան կերպով ոչնչացնելուց հետո՞ւ պ. հայաթ-լանը հորհնացու ինքնուրույն հնդկականութիւնն էլ չէ համարում այն, այլ կազմած Սերնոսի մեջ եղած [կամ Սերնոսին կցված] Անանունի հատվածից, Սերնոսից և Սուտ-Կալիսթեններից։

Մար Արասի (քառ հորհնացու) և Անանունի մեջ վաղուց նկատված առնչութեան (այլ խնդիր է թե ի՞նչպիսի հարաբերութիւնով) դեմ ոչինչ լու-նինք ասելու, քանի որ, ինչպէս կարծում ենք, ակնհայտին է այն։ Ուստի և Հայկի առասպելի վիզակնանութեան մասին գրողը կարող չէ Անանունի պատմվածքն ի նկատի լուսննալ։ Բայց լինք կարող ընդունել պ. հայաթիւանի սեփական կարծիքը (եր. 120), թե Մ. հորհնացին Սերնոսի Պատմութիւնից վերցրել է մի լանի գծեր Սմբատ Բագրատունու՝ Քուլանաց թագաւորի հետ ունեցած միանամարտի նկարագրից, հարմարեցնելով անոնք Հայկի պատերազ-մին Բելի հետ։ Երկուսի մեջ եղած նման գծերը, որ բերում է յուր աշխա-տութեան Բ մասի մեջ, եր. 21 հետ. այս են. երկու գծաւորում էլ թշնամի զոր-քերն իրար դեմ են ելնում։ Սմբատը Հեփթաղին, իսկ Հայկը Բելին սպանում են, և սպանվածների գործերն այդ տննելով փխխում են։

Սերնոս (66—67). Սմբատ ժողովէ զգաւուն... դումարէ այլ զաստ... և դիմեալ զնալ ի վերայ ազգին Քուլանաց և արքային Հեփթաղեայ... Եւ նա (Հեփթաղ) ընդդէմ ելանէ նորա (Սմբատայ)... Իրեւ հասին ի տեղի մար-տին... և։

Խորենացի. Եւ կոչեցեալ (Հայկայ) զգօրս իւր, ասէ ցնոսա. «Յիւլանելն մեր հանդէպ ամբողին Բէլայ դիպեալ (վարդանան) դիմեալ» քանադուք տեղ-ւոյն՝ ուր անցեալ կալ ի մեջ խուսն քաջացն Բէլա։

1 Ստեփանյան, Համագ-համագ, հր. 74։

ՍենՔենՍ. Հեփթադ Եղիաթաւալ յերկիր կործանէր: Եւ զօրքն նորա իբրեւ տեսիւն զարգայն իւրեանց զարհուրեցան և դարձան և գնացին փախստաւական: ԽՈՐԾՆԱՅԻ. Բէլ «կործանի» յերկիր զարկուցեալ... Իսկ ամբոյսն տեսնալ զայսպիսի ահապին պործ քայլութեան, փախստեան դէպ ճրեմաց իւրեանց: Այս է անցքի ամբողջ նմանութիւնը. մնացածը բառերի նմանութիւն է: Սենքեն Գործ է ածում խառնաւերոյն մակարալը. Խորենացիին՝ ամբոյս գոյականը: Անուհետեւ երկուսի մէջ էլ պատմութիւնն ընթացքով, բայց ոչ բոլորովին համամասն դնալքերով, Գործածված են՝ արք, նիզակ, կուռ, մարտ, արքա, զարհուրել, հարձակել, ի միմյանս հասանել, ճակատ: Գ. Խալաթիանն յուր մանրակրկիտ քննութիւն մէջ մինչև անգամ այսպիսի նմանութիւնն էլ գտնում է. Եփեսոս (Բէլ, երբ Հայկից փախչել է ուզում) ի վերջոյ ամբողջաւ ամբոյսի, և զի վեր երկուց ճակատուց մարտ ճողալ (Սմբատ և Հեփթադ) ընդ միմեանս կուռէին: Մեծ նմանութիւն, զի Եփեսոս բառը սմեքս արմատից է կազմված:

Մենք այդ նմանութիւններին արժեք չենք տալիս, որովհետև այդպիսի և այդքան նմանութիւններ, և ավելին ևս, ոչ միայն Սենքենի և Խորենացու մէջ ճողած մի պատերազմի նկարագրի մէջ կարելի է գտնել, այլև ուրիշ շատ հնդիմակներով: Առնենք, որինեկի համար, Եղիշի մէջ Ավարայրի ճակատամարտը և համամատենք մի կողմից Սենքենի, մյուս կողմից Խորենացու մեզ հետաքրքրող կտորների հետ, բերելով բովանդակութեամբ ու բառերով և միայն բովանդակութեամբ նման հաստատենք:

1. Եղիշի. Եւ Կոթալ ամենեքեանի ի տեղի պատերազմին եկեալ ճատանէին իւրաքանչիւր զօրով ամենայն պատրաստութեամբ... Համագունդ հասանէին ի Գործ պատերազմին ի դաշտն Արտաղուն (եր. 145 հտե.): Իսկ մյուս կողմից Եփեսոսիս պարսից խաղալը գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն և եկեալ հասանէ յաշխարհն Հայոց» (եր. 155):

ԽՈՐԾՆԱՅԻ. «Զօրաժողով լինի ի վերայ նորա (Հայկայ) տիտանեանն Բէլ ամբոյսի հաւանակ զօրաց. պայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարադայ... Կոթալը հասանի ի սահմանս րնակութեան Հայկին... Անապահալ հաւաքէ (Հայկ) զօրդիս իւր և զթոռուն... Եւ կռիցեալ զօրս իւր...» (եր. 34 հտե.):

ՍենՔենՍ. Եմբատ ժողովէ զզաւն... գումարէ և այլ զուրս բազում յօգնութիւն իւր և դիմեալ զնայր ի վերայ ազգին Քուշանաց և արքային Հեփթադայ: Եւ նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա (Սմբատայ). եկին հառին ի տեղի մարտին» (եր. 66—67):

2. Եղիշի. Վարդան ճառ է խոսում յուր մարդոց. Եթէ տացէ Տէր յազթութիւն ի ձեռս մեր սատակեցուք զզօրութիւն նոցա... և եթէ հասնալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիս... Եթէ զայլս կատարելով... պարձանս անձանց ժառանգեցաք... ո՛րչափ ևս տուաւ եթէ մեք մեռանիցիմք...» (եր. 148 հտե.): Ուրեմն մի երկվորութիւն,—մեռնել կամ մեռնել:

ԽՈՐԾՆԱՅԻ. Հայկ նուշպիս ճառ է խոսում յուր մարդոց և նույն երկվորութեամբ... Եւամ մեռցուք... կամ զաշողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոյսն...» (եր. 35):

ՍենՔենՍ. Ժառ կ'աւ:

3. Եղիշի. Եվարդան զզօրապետսն կարգել (հականն հանվանն հիշում

¹ Տփլիս, 1879:

է քն ԲՐ զոնցն ում է հանձնում) ... Ծանձն իւր [ինքն] առնայր զգունդն շորորդ... կարգէր և կազմէր զեմկապան յորորորեւոյ ընդ ամենայն երեսոյ զաշտին զէլ յանդիման Արեանց զնդին առ արին Տղմուտ գետոյն (հր. 173.):

ԽՈՐԵՆԱՅԻ. Եկարգէ (Հայկ) զԱրմենակ (և ժյուսնորին)... և ինքն առարի... Զի միւս անգամ եակաւ յորինեացէ...:

ԱՆՔԱՆՈՒ. Գնդորը կամ քնորը կարգելը չկա, բայց «ձեակատեցան զէլ յանդիման միմեանց...: Ի մէջ երկուց եակատուցն»:

4. **ԵՂԻՇԵ.** Երգանաքեալ զօրութեամբ յիրեարս յարեակէին երկուեան (կողմանքն)... Անդ էր տեսանէլ շուտայ մեծի տաղեալին և զաղէտս անբաւառաւկոսանացն երկուցունց կողմանցն առ ի յանդուր յարեակմանէն զմիմեանս բարեւոյն (հր. 173 հտն. իսկ հաղխադի կողմի մեջ, ժառ յոյժ յանդուր յարեակմանն):

ԽՈՐԵՆԱՅԻ. Երգումքին անկարգ հրոսակի ամբոխոյն Բէլայ ցան և ցիր յանդուր յարեակմամբ ընդ երեսոյ զաղէին սուրալով... Ըս հառեալ երկուցունց կողմանցն սկսային ի միմեանս... Տարազուք յարեակմանցն... Զայսպիսի անակնունքի զիպուած անաւկոսանաց տեսնալ...:

ԱՆՔԱՆՈՒ. Եւ յարեակեալ աստի և անտի մեծաւ տաղեալաւ ի միմեանս հառեակէն, բայց ոչ երկու զորքը, այլ Սմբատ ու Հեփթադ:

5. **ԵՂԻՇԵ.** «Յերկուցունց կողմանցն բազում վիրատուք յերկիր անկեալ զիարաւ խաղային» [իսկ հաղխադի կողմի մեջ սկսյր զարեակման իւր յերկիր կործանէն]:

ԽՈՐԵՆԱՅԻ. «Անդ ոչ սակաւք յերկուցունց կողմանց... սապալ յերկիր կործանէն...» Եթէ կործանի՝ յերկիր դարկուցեալն:

ԱՆՔԱՆՈՒ. Սմբատ Երգեալ զնա (զՀեփթադ) զարեակմամբ զիարաւ յերկիր կործանէն:

6. **ԵՂԻՇԵ.** Եւ վեր հայեցաւ Բալն Վարդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց պարսից զօրուն։ Եթէ անկն ի վեր նամբառնայր Մուշկան Նիսալաւորտ, քակեալ զմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս յերեսնցն (հր. 175):

ԽՈՐԵՆԱՅԻ. Եւ տեսնեն ի միտց ինչ դաշտանն լերանց... ի վեր գերեւս ամբարեակ, երեսնաւ նոցա բազմութիւն...:

ԱՆՔԱՆՈՒ. չկա:

7. **ԵՂԻՇԵ.** Եւ ի վերայ նոցա նստէր ի բարձր զիտանոցին իբրն Եւստի քաղաքին (հր. 176):

ԽՈՐԵՆԱՅԻ. Եթէ... ի վերայ ոստոյ միոյ իբրն ի զիտանոցին:

ԱՆՔԱՆՈՒ. չկա:

8. **ԵՂԻՇԵ.** «Մեծաւ ուժով յարեակէր (Վարդան) ի տեղին (ուր էին զընտիր ընտիր քաջ նահատակաց պարսից զօրուն):

ԽՈՐԵՆԱՅԻ. Եթիպեալ ջանասցուք տեղոյն, ուր անցեալ կայ ի մեջ խոան քաջացն Բէլն:

ԱՆՔԱՆՈՒ. չկա:

9. **ԵՂԻՇԵ.** Եւ տեսնէր (Վարդան) զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն (հր. 175):

«Գալմէ և յառնէլ զերեւոյն զպառապէսն պատրաստէր [Մուշկան] և զընտիր ընտիր նահատակացն շուրջ զիրեաւ զամբարէր... Ըս զայս և ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէն (հր. 172): Եւ փայլին պատեանալէն վառելոցն» (հր. 174):

ԽՈՐԵՆԱՅԻ. ԵՄանուէլ Հայկ գլխամբ վառելոյ ընկաւորն, յորում Բէլ աս-
տաղի ամբողջին ճկնալ հասնալ ընտրիւ և վառելով ասմայք... ընտրիւ
յալմէ և ի ձախմէ: Եւ տեսնալ Հայկին գտնտեսնան կուռ վառնալ, և զարս
ընտիրս ընդ նմա աքիճս և անհկինս...:

ՍԵՐԵՆՈՍ. չկա:

10. ԵՂԻՇԵ. Եւ ընդումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր... Անդ էր
տեսնանլ շտապի տեսնապի և զաղէտս անբաւ տարակուսանաց երկացունց
կողմանցն, առ ի յանդուգն յարձակմանս զմիմեանս բախելով, քանզի թանձ-
րամիտքն յիմարէին և վատաստիրտքն լքանէին... (Եր. 174):

ԽՈՐԵՆԱՅԻ. Եւ Հագին զդրդին ի վերայ երկրի առնէին շահատակելովն,
և ահա պակտեցանողս տարազուք յարձակմանցն զմիմեամբ արկանէինս:

ՍԵՐԵՆՈՍ. չկա:

11. ԵՂԻՇԵ. Եւ ի Բէլ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ,
ալ զքաջ ընդ քաջս ելեալ...:

ԽՈՐԵՆԱՅԻ. Եւ արտն յերկոցունց կողմանց մեալս անպարտելիս:

ՍԵՐԵՆՈՍ. Եւ ի կարէին վաղվաղակի զմիմեանս յաղթահարել, զի արք
սակաւազաւրք (սկայազաւրք) էին երկոցին...:

12. ԵՂԻՇԵ. Վարդանն ընկնում է Բթանցի անկնալ էր մեծ սպարապետն
Հայոց ի պատերազմին... ցանկալ ցուեցանս [հայք] (Եր. 177 հան.):

ԽՈՐԵՆԱՅԻ. Բնն ընկնում է, Եթե ամբողջն տեսնալ զայսպիսի ահագին
գործ քաջութեան, փախեալ իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանցս:

ՍԵՐԵՆՈՍ. Եւ զօրքն նորա (Հեփթաղեայ) իբրեւ տեսիւն զարքայն իւրեանց
(անկնալ), զարհուրեցան և դարձան և գնացին փախստալանս:

Եթե այսպեւ շարունակենք, դեռ մի քանի նմանութիւններ էլ կհաննենք:
Ընթերցողը կտեսնէ, սր Եղիշի և Խորենացու, Եղիշի և Մերեոսի նմանու-
թիւններն ալելի հն և մեծ, քան թէ Խորենացու և Մերեոսի Իսկ մյուս կող-
մից՝ ինչ նմանութիւն որ Մերեոսի և Խորենացու մեջ կա, զբնթիւ բողբոլ
չան և Եղիշի մեջ: Ուրմն ի՞նչ պիտի եզրակացնել: Արդոք Խորենացին
Մերեոսից օգտվելուց զատ՝ նույն բանի համար Եղիշից էլ է օգտվել, կամ
թէ Եղիշն Մերեոսից ու Խորենացուց է օգտվել, կամ թէ, ընդհանրապէս,
Մերեոսը՝ Եղիշից:

Մեր կարծիքով այդպիսի նմանութիւնները ոչինչ չեն ապացուցանում
մի պատմագրի մյուսից կախման մասին: Պատերազմները միշտ իրար նման
են, և միևնույն լեզվով պատմված պատերազմների նկարագրի մեջ միշտ
կլինին զօրք, զօրք ժողովել, մարտ, տեղի մարտի, նիզակ, զրահավորութիւն,
վառլալ, պատերազմի տեղ հասնել, զուեղբ բաժանել, իրար վրա հարձակ-
վել, իրարուց վախենալ, հակառակորդին գետին գլորել, սպանել, կոտորել,
փախչել են, են: Եվ մեծ զարմանք չէ, որ այդպիսի բառեր կամ նման նկարա-
գիրներ գտնենք Եղիշի, Խորենացու, Մերեոսի և ուրիշ մատենագիրների մեջ: Այդ
բառերն ու նկարագիրները ընդհանուր գործածական ձեւակոն զարեկան են
(formelhafte Wendungen) են: Իսկ ապացույց հիմնել այդպիսի դարձված-
ների ու բառերի վրա կարելի չէ: Եվ իզուր չէ, որ պրոֆ. Բեռնհայմ յուր
«Պատմութեան մեթոդի դասագրքի» մեջ¹, խոսելով մի պատմագրի կախումը
մյուսից ցույց տալու եղանակի մասին, առանձնապէս շեշտում է թէ պետք

¹ Ernst Bernheim, Lehrbuch der Historischen Methode. Leipzig, 1894.

է բաժանական և կատարողութեան անոնքին այդպիսի ձևական դարձվածները և անպատշաճութիւնները թվից դուրս ձգվին անոնք, թի չէ հետազոտողը սխալ հարակատարութեան կարող է հասնել: Բայց ո՞րքան ավելի սխալ կարող է լինել այն նկարագրութիւնը, որ հիմնված է միայն այդպիսի դարձվածներէ վրա:

Կենրոնն ընթերցողները, որ մի փոքր ավելի երկար նշանդ առնենք այս մասին, որովհետև մեզնում, երբ արդեն սկսել են մեր մատենագիրներն իրար համեմատել և ետէն նմանութիւններէջ նկարագրութիւններ հասնել, համեմատութեան հղանակի այդ էական կողմի դեմ բաժանական մեղմունքով են: Ընդհանուր է զգուշացնել ետէն մասին այդպէս դատողներին: Եւսման այն ժամանակ կան իրողութիւններ, զազափարներ ու մատածութիւններ, որոնց արտահայտութիւնը անկասկէ կերպով մի մասնավոր անհատի մասի մէջ չէ ծնվում, այլ առնվում է լեզվի հասարակաց պատրաստի շտեմարանից: Գիտութեան ամեն ճշգրտի մէջ կան որոշ տեքնիկական կամ աստղագիտական դարձված (phrasenhaft) արտահայտութիւններ, որոնք հնամենի սովորութեամբ գործ են ածվում որոշ իրողութիւններ ու հարաբերութիւններ հայտնելու համար, մասնավոր այն ժամանակներում և գիտութեան այն ճշգրտում, որոնք արդեն մի կլասիկական մշակված գրականութիւն և գրական լեզու ունին, ուստի և ավելի մեծ պաշար ունին խոսքի հասարակաց (gāng und gābe) դարձվածներ, պատկերավոր աստղագիտական, քաղաքացիական (erstarrte Formeln), ավելի ևս այն ժամանակներում, երբ ինչպէս Միջնադարում, մի օտար լեզու (չատիներեն) էին խորհրդական կերպով յուրացնում և անոր սովորովի դարձվածները բանեցնում:

Անշուշտ, մեր պատմագիրները օտար լեզու չէին սովորում, այլ հայերեն. բայց հայտնի ապացուցված է, թի ո՞ր դարուց սկսած մեր պատմագիրները համար պարզորէ լեզուն այլևս կենդանի գործածական լեզու չէր այլ սովորովի: Սիւ արդիւն կարծածից ավելի հիշել չէ մեր լեզվի մէջ կատարված այն մեծ կերպարանափոխութիւնը, որով պարզաւ և աշխարհաբար լեզուներ են կազմվել: Սիւ արդիւն Նույնիսկ Սեբեոսի ժամանակ պարզաւ լեզուն Նույնպէս արվեստական կերպով սովորովի չէր, ինչպէս Հովհաննէս կաթողիկոսի ժամանակ: Քանի դեռ լեզվի կերպարանափոխութեան այս ժամանակը հաստատու չէ որոշված, ամեն լեզվական նկատ ետէն քննութիւն դեռևս խախտու հիմքի վրա կմնա: Մասնավոր պետք չէ մոռանալ, որ ինչպէս եվրոպական պատմագիրները, Նույնպէս և մերոնք ազատ կերպով օգտվում են Սուրբ Գրքի միևնույն դարձվածներէ, որոնք այդ ժամանակներում պատմագրական ոճի ու լեզվի համար հասարակաց ստացվածք էին. իսկ մեր մատենագիրները համար Սուրբ Գրքը ոչ միայն յուր դարձվածներով ու պատկերավոր խոսքերով օրինակելի էր, այլև յուր կլասիկական լեզվով: Ի՞նչ է ուրեմն հարակատարութիւնը: Մատենագիրները իրարուց ունեցած կախումը ցույց տալուց առաջ, պետք է հիշեցնել ձանաչել ետք ժամանակի դրականութիւնը և գրական տեսակը, որպէսզի հնարավոր լինի տարբերելու թի ինչ է լեզվի հասարակաց գործածութեանը պատկանում, և ինչ է մի որոշ մատենագիր առանձնահատուկ արտահայտութեան եղանակը, և հարակցութիւնը միայն այս վերջինի վրա պիտի հիմնել: Բայց այդպէս են վարվում մեր մատենագիրները հետ. թի նոցա ղշխին խոսք են անում, նկարագրութիւններ տարածելով, որոնք յայնչ հուշատեսարի կարճ նկատողութիւններէ են կազմված, և հարակատարութեան

ներ հանելով ոճի և արտահայտութեան մի քանի նմանութուններէր, որոնք մի մատենագրի միայն հասուկ սեփականութեան շին, անհաստեղան հատկանշաններ չեն, այլ ընդհանուր:

Մենք ներքեւում մի օրինակով ևս ցույց կտանք թե ինչ արժեք ունի այդպիսի լինին համեմատութեան նյութերից հանած եզրակացութիւններէն մեկը, որ պ. Խալաթեանը հայտարարում է Սեբեոսի աճիճ մասին: Բայց պատեղ ավելորդ լի լինի, որ մի երկու խոսքով բովանդակութեամբ նմանութեան վրա ևս կանգ առնենք:

Պատմական գրվածների համար ժամանակագրական շարքը կամ դասավորութիւնը, որով իրողութիւնների առանձին դիպվածները կամ նույնիսկ իրողութիւնները պատմվում են, կարող չէ ինքնըստինքյան (an und für sich) իբրև մի պատմելի—կրիտիկում ծառայել մի պատմագրի կախումը մյուսից ցույց տալու համար, զի «այդ շարքը կամ շարահաստութիւնը, իբրև իրերի բնութեան մեջ եղած մի բան, կարող է ներկայանալ ամեն մի հեղինակի՝ անկախ մի ուրիշից»¹: Ուստի և եթէ Սեբեոսի ու Խորենացու, կամ Սեբեոսի ու Եղիշեի մեջ մի որևէ պատերազմի նկարագրի մեջ նման դիպվածների շարքի նույնութիւն ևս գտնուի ենք, այդ դեռ ապացույց չէ, որ մեկը մյուսից կախում ունի: Հին պատերազմներին շատ հասուկ է նախ զորք ժողովելը, ապա թշնամու վրա դիմելը, և այն, որ թշնամին էլ յուր կողմից զորք ժողովն և հարձակողի դեմը դուրս գա, ու երկուսը ճակատեն, այդ ժամանակ զորավարը հառ խոսի, խրախուսե, ապա իրար վրա հարձակվին, կոտորեն և երբ մեկի զորավարն ընկնում է, որովհետև զորավարն ամենամեծ տեղն էր բռնում, նորա զորքերը փախին, հաղթողները ետևներից ընկնեն, կոտորեն, ասպատակեն, զերի, ավար տանեն: Միթէ այս և ասոր նմանները՝ նման կամ նույն ժամանակագրական կարգով չե՞ն կատարվել գրեթէ ամեն հին պատերազմների մեջ: Եվ միթէ որևէ բան կարող է ապացուցանել այն, որ մի մատենագիր վերահիշյալ դիպվածները նույն ժամանակագրական շարքով պատմեն, ինչպես իսկապէս կատարվել է իրողութիւնը:

Այսպես Հայկի ու Բելի, Սմբատի ու Հեփթաղի կռիվների մեջ եղած մի քանի ձեռնարկ գործվածների ու նույնիսկ դիպվածների շարահաստութեան նմանութիւնը ոչինչ չէ կարող ապացուցանել թէ Խորենացին Սեբեոսից օգտվել է: Այդպիսի եզրակացութեան հասնելու համար, մի փոքր ավելի բան է հարկավոր. քան մի քանի ընդհանուր պատերազմական դժեռ ու բառեր:

Սմբատի ու Հեփթաղի և Տրդատի ու Գրաց քաղաքի կռիվները:—Պ. Խալաթեանը գրում է. «Հերակլի պատմաբանի (Սեբեոսի) ընդարձակ աշխատութիւնը յուր ողորդ, ազգու կերպով գծագրված կիւպարեմեն ունի... լեզվի, ոճի, բառերի գործածութեան... կողմից, որոնք անցնում են նորա ամբողջ պատմութեան միջով և սերտ կապված են անոր բովանդակութեան հետ, մինչդեռ Անանուկի այս դպրութիւնը... մի խայտառկամով փաղված է զանազան աղբյուրներից (եր. 73): Փորձենք այդ սորոշ ոճն ունեցող պատմագրի մի կտորը միայն համեմատել Ագաթանգեղոսի և Աստվածաշնչի հետ, և հատկապէս մեր Սմբատի ու Հեփթաղի կռիվը, և տեսնենք թէ նա որքան ճիշտաճամուկ չէ: Հնչութեան համար մենք Սեբեոս և Ագաթանգեղոս մի ոչունակի մեջ կդնենք. իսկ Աստվածաշնչի Դավթի և Դոդիաթի կռիվ նմանութիւններից տակին, կտորներ միայն ժանոթութեան նշաններով:

¹ Bernheim, Lehrs. der Hist. Meth., 4. 218 համ.

Յայնժամ *Ամրատ* ժողովէ զգասե՛ն՝ և զհրահանք սպասադիւնէ, զսմտելէ և՛ այլ զաստիճակովոյ յօգնութիւն իւր, և զիմեալ զետյոյր ի վերայ ազգիս թուականաց և արքային Հնգթաւացիս: Եւ նա անտի մեծաւ կողմութեամբ ընդդէմ ելանէ ետքաւ. եկին ճառքին ի անդի մտաւին և հակառակեցան զիւ յանդիման միմեանց՝:

Արդ տոտզում յլէ ու *Ամրատ* արքայի թուականաց և ասէ: «ԶԻ՛նչ ապուտ է այսպէս խառնամբոյն մտանէ՛ն ի զստանալով՝ տղամեկ զգաստ մեր... քայլք չէ ևս և զու միայն մարտքացեալ», իկնալ նա տառի յիշոյնան ևս զու այլալի... Եւ հարձակեալ աստի և անտի մեծաւ առաջնապաւ ի միմեանէ հասանէին... և ոչ կատարէին վազմադակի դժիմեանս յաղքանմունի...:

Անկերորդ լի լինիլ Սեբեոսի պատմութեան շարունակութեան ղիմաց Աստվածաշնչի պատմութեան շարունակութեանը դեմ:

ԱՆՔԻՈՒՄ

Ա ՔԱՆԻ, ԺԷ

Եւ զայսմ նորոյ կրօնի անդին գործող իրենց (սպասեալ)։... զնոցման տնտեսականաց, և այլս զնոյն ուրոյնոյ, յանձն առնողներս: Եկնիւ ի Բաղն հաւատաւոր:

Իրեն անդին տնտեսական թէ մեծաւ զարգացումն ետեա (Յօդքաթ)՝ փոխանէ և յարեալ արդ իրենց։... զարգացումն անդին ետեա միմեալ ի մտաւ Գնիալ... Եւ զարգան ապագանկեալին զնոյն տնտեսական (ՅԷ—ՅԸ)։

Ահա երկու պատմութեան, մեկը *Սեբեոսի*, մյուսն *Ազատանգեղոսի* մեջ, որոնք ոչ միայն զնպքին և պատմութեան կամարութեան ունին, այլև նույն տնտեսական կրկնութեան: Սեբեոսը կարող է միայն համառոտաբար լինել *Ազատանգեղոսի* ամփոփողը և կարող է մի երկու խոսք անաչ զննելով, մի երկու բան էլ Աստվածաշնչից օգտված լինելով: Մենք լենք պնդում այդ բանի վրա և լենք էլ ասում, որ այդ օգտվելն անպատեհաբար դիտարկեցաւ ի նորի, և ոչ էլ մեր նպատակն էր ցույց տալ Սեբեոսի կախումն *Ազատանգեղոսի* կամ Աստվածաշնչից: Մայր մի բան միայն պարզ է, որ ի՞նչ պ. նախաթիւան այս օրինակն իմացած լինեմ, նա այնպեւ զգալի կնքապալ չէր խոսիլ Սեբեոսի տաղանդով օգտվելով որչա անի, լիզվի ինչ մասին և ետք ղիմաց չէր դնիլ յառաջատեմութեան Անանուին, և այդ երկուսի ունի այդպիսի կարծեցալ մեծ տարբերութեան վրա որեւէ ենթադրութեան չէր հիմնել: Զէ՛ որ Սեբեոսն, այդ կտորով գտնե, շատ ամփոփ յառաջատեմութեան է, քան Անանուսը, եթե միայն, հակառակ պ. նախաթիւանի կարծիքի՝ Անանուսի դպրութեանն էլ Սեբեոսի աշխատանքը չէ:

Բերենք մի օրինակ նա.

¹ Ազատանգեղոսի դարձեալ զորք ժողովելու իմաստի կրկնութեան վրա:
² Եւ հակառակեալն ի արքայապետին ևս առաջագին հանգէպ միմեանց հակառակ տնտեսական (Ա Ք. Գ. ԺԷ, 27):

³ «Ետեւ այդ մի եւ ևս եւ եւ լինանարտանգեց երկուսեան» (Ա Ք. Գ. ԺԷ, 10):

⁴ Սեբեոսի մեջ այս վերջին իմաստն անաչ է դրված, միեւնոյն *Ազատանգեղոսի* մեջ՝ հետո:

Հայկի ու Բելի և Սամի ու Փերֆույի կոնվենտը:—Ամենից առաջ նկատենք, որ մենք դժբախտաբար պետք է բաժանվանանք այս Կոնվենտյանի թարգմանած՝ Շահնամայի մի հատվածով միայն, և հատկապես շնչոտմ ենք, որ մեկը՝ Հայկի առասպելը՝ գրաբար է գրած, մեր կյանքիկական լեզվով, իսկ մյուսը մեր ժամանակի աշխարհաբար: Ուստի և բառերի ու դարձվածների ընտրության մեջ մենք տարբերություն կարող է լինել: Բայց տեսնեք որքան նմանություն այդ երկու առասպելի մեջ:

Սամ պաշտպանի դեմ էլնում են Մադանդարանի վայրենի, արագընթաց, նատաղի կովոդները, Սեդ-սար կոչված նեո ղեկըր (հսկաներ), որոնք Իրանի կտրիններին ազնի քաջասիրտ են, կոչարար առյուծներ, ահեղ ինժեքին իսկ հավասար, և որոնց զխավորն է փղանման մի սալադագաթ դեռ [Հմմտ. Խորենացու մեջ՝ Հայկի դեմ եկող Բելի հավերժ քաջերը, երկայնադիզոք հասակոք, մրցող, կռվող, անհուն խոլ ուժավոր ու զորավոր սկանները]: Այդ հսկաները, թեի տեղ ժողովված խառնամորուս հրոսակա, Քերքույին պուխներն անցած, զգուրս են զալի խուժելով դեպի դաշտը ընդարձակ անջան սկա, որ լցվում է մի սարից մյուս սար: Գալիս են շուտ Սամի դեմ կռվելու միահամուռ քաղվածությամբ, այնպես մթին խուռն ու խրթին գրոհ տալով շտապ-ժամր՝ հենց յարժ են առնում, որ գեաներ գրգռվելով գոգոգում էս [Հմմտ. Խորենացի՝ Բելի յանգուղն և անճոռնի զօրութեամբ ամբոխին որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառկայար հեղեալ՝ փութայու: —...ի միջոց ինչ դաշտան լերանց... բազմութիւն անկարգ հրոսակի՝ ամբոխուն Բելայ ցան և ցիր յանդուղն յարձակմամբ ընդ երեսս դաշտին սուրալով: —Բէլ առաջի ամբոխին եկեալ: —Եւ հասեալ հրկիցունց կողմանց սկայիցն ի միմեանս, ահագին զորդին ի վերայ երկրի անէլին շահառակելովն]: Մի կողմից խոլ դեմքի ետդ և ծուծը դատարկում է Սամի համբավիցն, և հարձակման ժամանակ շարժվելով ինչպարզում է նոցա ամբոխը, իսկ մյուս կողմից, հարձակման ժամանակ և Սամի զորքերի մեջ երկյուղ է ընկնում, թանձանի քաջութի դեմքը ղեղնում: [Հմմտ. Խորենացի՝ Ահս պակուցանողս տարադուք յարձակմանցն զմիմեամբ յարկանէին]: Կռի մեջ ընկնում են երկու կողմից, իսկ Սամը զգետին փռում մեն մի հարձակումին հարյուրին, և մեն մի գուղդի տակ տապալում մի դեմք: [Հմմտ. Խորենացի՝ Ահս ոչ սակաւ լերկոցունց կողմանց սկայիցն արք յաղթանդամք ընրանոյ սրոյ դիպեալ տապալ լերկիր կործանէին]: Այնուհետև, ինչպես հայոց առասպելի մեջ, Նիարազոված են երկու պարագլուխները, Սամ և Քերքույի Քերքույի՝ ժամատատեսել, դժնյա կերպարանքով, փղանման, սալ գազաթով, կտրին մարդ, նոնի հասակով, գլխին սաղավարտ, ձեռն պաղպաղավոր սուր, մեղքին դոտի, վնաս և աշխարհակալ Սելմ Շահի օնրունը, որի մոտ ամենանսեղ խրոխտ խիզախը հող է համարյա, որի հսկա զորքերը մրջյունի ու մորեխի են նմանում բազմությամբ ու ծածկում դաշտ ու լեռ: [Հմմտ. Խորենացի՝ Բելի ընավորութունը և ուժը, Բել ընավոր, որին հաշողն էր քրոնանալ և ունել զամենայն երկիր և տիրել քաղմակոյտ հսկայիցն անհուն խօլաց և ուժաւորացն, և խրոխտալով ուղում է Հայկին էլ նվաճել, Գլխանոց ագոցեալ երկաթի, դատարանայ զմէջսն, յահէկ զստինն երկսայրի, կուտ վառեալաւ նն]: Իսկ Սամը, որ նույնպես հսկա է, ինչպես մեր Հայկը, է սրով և քնյանլան աղեղով, որի կոթը խառնոց փայտից է և փքինը պողպատ, նետը սրաթով արծիւի [Հմմտ. Խորենացի՝ Հայկ կորովածից և հաստադեղն, լայնալիճ, նետը՝ երեքթեան, իսկ Հայկի որդիքը՝ արք կորովից էին յաղեղն և ի սուսեր]: Կռի հարձակման ժա-

մանակ Սամը յուր ազնոգից նետ է արձակում Փերճուլիի վրա և վերջը բռնում է նորան և օփղի նման փրթալում ու զարկում դետեխնա [Հմմտ. Խորենացի՝ Հայկը մօտ հասանել յարցայն (Բէլ), լի քարշէ պինդ զյայնալիճն... և ճորա-ցնալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ]։ Եւ ճերք Եահն (արքան) այդպէս նսնմարար ընկալի փլնց յուր հոգին, նորա զորքը հրենեքը զնայի փախուստ դարձրին, ընկան սար ու դաշտ...» [Հմմտ. Խորենացի՝ Արքայն տիտանեան փլէ զոգին։ Իսկ ամբոխն տեսնալ զյայնայիս ահագին զորք քաշուցեան, փախեան իւրաքանչիւր զէպ երեսաց իւրեանց]։

Ահա երկու պատմութիւն, որ Հռիթմըր նույն են, այլև շատ տեղ բառացի նույն, Երկու դեպքում էլ հսկաներ են իրար դէմ կռիւողները, ունենալով իրենց զէլիւն մի մի ալվելի մեծ հսկա։ Երկու դեպքում էլ նկարագրված են առանձնապէս այդ զլխավորները և նոցա գրեթէ նման գինաժառութիւնը։ Երկու դեպքում էլ հարձակողը, որ հետո հաղթում է, ալվելի մեծ բազմութեամբ է՝ մի խառնիխառն անկարգ հրոսակով, իսկ հաղթողը թվով նվազ է։ Երկու դեպքում էլ հարձակման ժամանակ երկիրը դրդում է, երկուստեք վախենում են, և երկուստեք գետին փռում կամ կործանում շատերին։ Երկու դեպքում էլ հաղթող հերոսը նեւ-ազնո է բանեցնում, Երկու դեպքում էլ թշնամու պարագլուխը սպանվում է գետին զարնվելով։ Երկու դեպքում էլ երբ արքան սպանվում է, նորա ամբոխը զլուխ առած փախում է։ Եթէ շարունակենք, գնո մի քանի ճերքի Երկու դեպքում էլ կրեւերնք, իսկ նույն կամ համանիշ (շնչում ենք դրարարի և աշխարհարարի տարբերութիւնը) բառեր՝ ճորան ուղեք. կռիւղ (մրցող), բազմութիւն, զորք, ամբոխ, գետին փռել, տապալել (տապալ յերկիր կործանել), խուռն, կուռ, գրոհ տալ, խուժել (սուրալ), մոտ դալ (մոտ հասանել), ազնո, գոտի, գիմել, գետին զարնել, հոգին փլել ևլն։

Ուրեմն ի՞նչ պետք է հղրակացնել։ Արդոք Խորենացին Հայկի ու Բելի կռիւլը ճշինելու համար Սեբեոսի՞ց է օգտվել, թէ՞ Աղաթանգեղոսից, թէ՞ Եղիշեցից, թէ՞ Աստվածաշնչից, թէ՞ արդոք այդ բոլորից հետո Ֆիրզուախից էլ է օգտվել։ Բայց այդ դեպքում խո՞ Խորենացու ժամանակը տմենալադր ի դար պետք էր դնել։ Թե՞ արդոք Ֆիրզուախն է Եահնամայի համար Խորենացուց օգտվել։ — Բայց գուցէ առարկն պ. Խալաթյանը թէ, որովհետեւ Խորենացուն ժանոթ են եղել պարսից ուրիշ առասպելները, որոնք մտել են Եահնամայի մեջ, ուստի և նորան կախող էր Սամի առասպելն էլ ժանոթ լինել։ Ուրիշ խոսքով, Ֆիրզուախն ու Խորենացին իրարուց անկախ կարող էին օգտված լինել նույն կամ առնչութիւն ունեցող աղբյուրներից։ Բայց այդ ժամանակ խո՞ տեղիք չէր ունենալ Հայկի առասպելի վիպականութիւնը հերքելու, քանի որ Ֆիրզուախ աղբյուրները, զբաղւոր թէ բերանացի, ժողովրդական ծագում ունին։

— Հայկի առասպելն էալքյամբ վիպական է։ Այս առասպելը, ինչպէս բերած օրինակներից երևում է, յուր էական գծերով մի այնպիսի պատմութիւն է, որ շատ տարածված է։ Մենք բերեցինք իբրեւ օրինակ Գալթի և հսկա Գողթաթի կռիւլը, որին նման է Սմբատի ու Հեփթայի կռիւլը, իսկ այս երկսին նման է, ժառամբ միայն, Տրդատի ու Գթաց իշխանի կռիւլը։ Հայկի ու Բելի կռիւլն՝ ստոնց նման լինելով հանգերձ՝ ալվելի նման է հսկա Սամի ու Փերճուլիի կռիւին։ Մենք օրինակները, որոնց նմանները հետո էլ կտեսնենք, նարող

էինք րազմապատկել, Բայց բերածներն էլ ցույց են տալիս, որ մեր Հայկի ու Քիլի գրույցը յուր էութիւնով, բովանդակութեամբ ու միայն ժողովրդական վիպական ոգուն հակառակ չէ, այլև շատ նման է հանգունատիպ րազմաթիւ գրույցներին, Բոլորն էլ իրենց ձեռք մի ժողովրդական վիպական ամփոփումն են թշնամի ազգերի մէջ ճշգրտ հախնական կոմիւնիստի, որունց մեջ պարագայութիւնն առաջին տեղն են բռնում:

Այս ժողովրդական գրույցները,—լինին իրողութեան վրա հիմնված, ինչպիսին նորոգ են լինել Դավթի, Տրդատի և Սմբատի կոմիւնիստ, թե զուտ առասպելական,—զանազան ժողովրդային բերանին միատեսակ կերպարանք են ստացել, քանի որ ամեն տեղ էլ ազգերի վիպական շրջանում ընդհանրապես ու միայն պատերազմներն իրար նման են, այլև այդ պատերազմների մասին կազմված գրույցները, Դա ընդհանուր հոգեբանական երևույթ է: Մարդիկ և ազգեր զարգացման միևնույն շրջաններն են կատարում, Մյուս կողմից, պետք չէ մոռանալ ազգերի հոգեբանութեան և այն մեծ երևույթը, որով հին գրույցները միշտ նորոգվում են: Նոր կատարված իրողութեան և անցքերի պատմութեանը ժողովրդի բերանին ստանում է արդեն պատրաստի հին նման գրույցները ու առասպելների կերպարանքը. այսպես ասած՝ նոր գրույցը հանում է հին գրույցի հաջուտը, որով և հինը փոփոխվելով հարաւորում է: Այսպես պետք է հասկանալ Հայկի, Սմբատի ու Տրդատի գրույցների նմանութեանը: Անշուշտ, Սեբեոսը Սմբատի ու Հեթմոսի կոմիւն, թեպետ և Ազատագրողի պատմվածքին շատ նման, իրենից չէ շինում: Բայց և նա այդ բանը, համարադարձ, լսելով, այսինքն ժողովրդի մարդոց, թեկուզ նույնիսկ անհատների գրույցնով է գրում: Իսկ այդ ժողովրդի մարդոց բերանին հենց Սմբատի կոմի պատմութեանը մի տեսակ հին վիպական կերպարանք ստացած պիտի լինի և մտածեցած Հայկի ու Բեկի կոմի:

Նոր մի անգամ տեսնում ենք, որ Հայկի առասպելն յուր էութեամբ ժողովրդական վիպական գույն ունի,—որ և գլխավորն է,—այնուհետև մեծ նշանակութեան է ստանում այն հանգամանքը, որ Հայկի կոմի յուր մանրամասնութեան մեջ, գրեթե սկզբից մինչև վերջ տարած է շատ վիպական ձևերով, դուրսագնական վիպական կերպարանքով՝ ինչպես տեսանք, նման Սամի և Քերթուշի կոմի: Թվենք գլխավորները:

1. Երկրի դուրսը երկու կողմերի հակառակ հարձակման ժամանակ իսկական դուրսագնական վիպական մի գիծ է, որ շատ ազգերի վիպի մեջ կգտնենք: Բայց շնայելով սորան, չգիտենք ինչպես պ. Խալաթյանը գրում է (եր. 113) հետև կերպով. «Նույնիսկ պատմվածքը—Բեկի դեպքն ուղարկելը Հայկին, կոմի պատրաստվելը, Հայկի ճառն յուր զորականներին, Բեկի սպառազինութեանը, ճակատամարտի պատկերը և մի քանի տասնյակ հայերի «պատերազմական խնդրից (НАТЯСК) երկրի տեսքին դրդողներ» [չակերտներն իրենն են],—տղինչ վիպական լուրն: Նախ, «մի քանի տասնյակ հայերի հայրերից շատ տարբեր բաներ են ելլալ, եթե պ. Խալաթյանը, շատ չէ, փոքր ինչ ուղարկութեան դարձնել ժողովրդական վիպական մտածելներին, կտեսնել լիպի, որ երկրը գրողում ու թողում է ու միայն հարցադրողը՝ Հայկի ու Բեկի նման հակառակ կոմի ժամանակ, այլ հենց այդպիսի հակառակ մեկի սովորական քաղաքն էլ: Թող մտաբերեն նա միայն Բոստամի և կամ Նույնիսկ մեր Սասնու ծուռ Դավթի քաղաքը:

3. Վիպական գծերից է. հանառակ պ. հայաթյանի ցանկության, նաև Բելի դեպքան ուղարկելը Հայկին, որ սա իրեն հնազանդի: Մենք երկու նման օրինակ միայն կրեցինք: Մեր դիմանում ծնունդի: մեջ, շնայելով հսկա Դավիթը վնասներ է հասցրել և նույնիսկ անպատիվ է գնանման հսկա Մարամեջին, բայց սա իսկույն չէ դալի զորքով Մատուն, այլ նախ դեպքան է ուղարկում, որ իրեն հնազանդի Դավիթը: Երբ յուր գնապանը հայարտ Դավթից խայտառակաբար հետ է նանապարհում, նոր նա զորաժողով է լինում և գալիս Դավթի վրա: Բայց այս անգամ էլ դեռ նորից դեպքան է ուղարկում նույն նպատակով: Գրկին մերժում ստանալուց հետո, նոր կոչում են, իսկապես Դավթին ու Մարամեջիցը մենամարտում են, Դավթին սպանում է Մարամեջին և կոխվել վերջանում է: Ուրեմն մեզ ծանոթ նույն պատմությունը, որ ուրիշ շատ գծերով ևս նման է յուր ընկերներին:

Շահնամայի մեջ Քեյ-Փավուան արջավում է Մազանդարանի վրա և շնայելով որ նա Մազանդարանի թագավորի բարեկամ հսկա դեմքից խիստ վնասվում է, բայց և այնպես յուր դուքանը Ֆարհադին դեպքան է ուղարկում Մազանդարանի թագավորին, նախկին գրեյով և պահանջելով նորանից հպատակություն և յուր ալաաականը շահնամ: Մազանդարանի թագավորը հրապարտությամբ ու խստությամբ մերժում է: Չնայելով խիստ վիրավորական պատասխանին՝ Քեյ-Փավուան նորից դեպքան է ուղարկում, այս անգամ Ռոստամին, նախկին գրեյով: Քառասունակ ու ծուռ է քո խնջը՝ հիմարը միայն կարող է ալդպիսի բաներ մտածել: Փարատիք քո հոգու այդ հպարտությունը: Արա՛ստրկորեն ինչ որ հրամայում եմ քեզ, թե չէ զորքերս քո գնմ կվաբեմ ու նստեմ ծովի ծով և քո ուղեղը՝ դեմքի դիակներին պես կերակուր կտամ անգլներին: Մազանդարանի թագավորն ալելի և խստությամբ պատասխան է տալի և զորաժողով լինելով՝ սպառազինվում է: Քեյ-Փավուան էլ յուր զորքն է առաջ վարում, աչ ու ձախ գնդերը հանձնելով այս ու այն զորավարին, ինքը մեղադրում է մնում, իսկ զորքը առաջից գնում է Ռոստամը: Ապա գալիս է Զուլայի (Dschuja) և Ռոստամի մենամարտը, հաջողալից խոսակցությամբ, նման մեզ ծանոթ Դավթի ու Գողիթի, Դավթի ու Մարամեջի կռիվն և յուր մյուս ընկերներին:

Այսպես, դեպքան ուղարկելը՝ հպատակություն և հարկ պահանջելու համար, ինչպես և դեպքանությունից հետո ոտք ժողովելը կն, մի տարածված վիպական գիծ է: Ուրիշ օրինակներ բերելն ավելորդ ենք համարում:

3. Վիպական գիծ է խոտուխումը ու կոպտությունը խոռելը, որ նախնի ժամանակների կոպիտ բարքերի արդյունք է: Դեպքանության խոռքերից Բելի պատգամը նուրբ խստություն ունի և, թեպետ և խորհնաբու կողմից ճարտասանորեն հղկված, բայց և այնպես կոպտությունը և Քեյ-Փավուան պատգամի նմանությունը դեռ երևում է: Հայկի պատասխանի համար խորհնաբուն բավականացել է ասելով միայն թե խստությունամբ էր: Բայց Անանունի մեջ գտնում ենք նույն բովանդակությունն իբրև խոսակցություն Հայկի և Բելի

¹ Heidenassen von Pirduei, an deutscher Nachbildung, von A. P. Schack, Berlin, 1865, № 149 հան.

² Հմմտ. Խոռեմցի. Ա, Ժա. «Առաջ (Քեյ) ...զմի ոմն յարգաց իրաց տո Հայկ...: դառ նմա ի հնազանդութիւն է: կնոյ խաղաղութեամբ: Բնակիցեր, առ. ի մէջ քրտութեան ստահամեայ: այլ լինելով ժողովոս օրոտուղիտ ստաղմտոյ և օգարածցնոյ քարտաք. և հնազանդեայ ինձ՝ կնոյ ի հանգարտութեան, ար հաւոյ է քեզ յերկրիս իմումս:

մեջ, զձի՞ պնդեալ գաս զհետ իմ. դարձիր անդրէն ի տեղի քո՝ զի մի՞ մեռա-
նիցիս ալսաւոր ի ձեռաց իմոց. քանզի ոչ մլրիպի նետ իմ իմիցաւ. Պատասխա-
նի ես. Բէլ, և ասէ, Վէպսն անորիկ՝ զի մի՞ անկցիս ի ձեռս մանկուտլ իմոյ
և մեռանիցիս. այլ ե՛կ ի ձեռս իմ, և կնաց ի տան իմում խաղաղութեամբ,
ուենելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականսն. Պատասխանի ետ
նմա Հայկն և ասէ. ՎՇո՞ւն ես դու. և յերամակէ շանց՝ դու և ժողովորդ քո, Եւ
մասն անորիկ թափեցից իսկ ալսաւոր ի քեզ զկապարն իմա՜:

Յերու հերոսների իսկական միպական հայրուական խոսքերով այս
պատմութիւնը թողնում է մի քաղցրովն նախնական (altertümlich) և ըս-
կըզմական տպավորութեան, զորով է այս առթիվ պ. Գեյքեր՝ Այս նկատու-
ղութիւնը շատ ճիշտ է: Օրինակներ բերելն ավելորդ ենք համարում: Յանկա-
ցողը կարող է դանել Շահնամայի ու իրանկանի մեջ, Դավթի ու Գողթնի
կովի մեջ և ուրիշ շատ տեղերում:

4. Վիպական գծերից է և Կաղմոսի փախուստը Բելի քաղմութեան առա-
ջից և քաջութեան մարտից ձեռով իմաց տալը Հայկին, որ պատրաստութիւն
տեսնի Բելի դիմ ելնելու Հիշենք միայն Շահնամայից Գեժգեհմին, Իրանի
և Թուրանի սահմանի վրա Սպիդ բերդի հրամանատարին: Սոհրաբը ժողովում
է զորքերի մեծ քաղմութուն, հսկաներ, և մեծ ամբոխով դալիս է Իրանի
վրա: Նոքա զալիս մտտնում են ՎՍպիդ կոչված բերդին: Գեժգեհմը Սոհ-
րաբին հաղթել ու հետ մղել չէ կարողանում և զոտապով փախում է: Տղայի
երկրի ներսը յուր ամբողջ գերդաստանի մարդկանցով, մի «աւագընթաց
մարդու» ձեռով հայտնելով Շահին. ՎՄէր վրա եկել մի քաղմութիւն ձիավոր,
ամենն էլ կովաւոր և կտրին մարդիկ զոտավոր, որոնց ապարադուխտ է մի
պահլավան քաջասիրտ մի ճկաւ, որի հետակը բարձրութեամբ երկնեղ բնով
նստուց է շատ վեր, կամ «բայը քաղն օրպս մի լիւս»: Գեժգեհմն այս
հայտնելուց հետո՝ ավելացնում է թե իրենք չկարողանալով կովել Սոհրաբի
դիմ, փախում են դեպի երկրի ներսը և, եթե Շահը հապաղի և զորքերը
չվարե կովելու, նորա երկիրը տակնուվրա կլինի և նորա փառքի մեծութիւնը
կանցնէ: Ի՞նչ է Կաղմոսի արարքն և Հայկին ուղարկած լուրը, եթե ոչ ինչ
որ այս Գեժգեհմն է անում: Նմանութեանը շատ տեղ նույնիսկ քաղերի մեջ
էլ երևում է: Բել ամբոխի հետեակ զօրաց, զայ հասանէ... մերձ ի տունն
Կաղմեայ: Փախստական լինի Կաղմոս առ Հայկ, քաջութեանիս առաջի իւր
առաջէ. Գիտեա՞, ասէ, ով մեծը դիցազանք, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ
յաւերժիք քաջք, և երկայնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ
իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փախեալ, և զամ առաջիկ տաքնապատ:
Արդ աճապարեա խորհել որ ինչ գործելոք եսա՜: Հմմտ. Սեբեոս (Անանուն)
եր. 3. Երկմեալ գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն ճհաս մինչև ի տուն անդր.
և ես կն աւ ի մոյ և որ ուրիշ ահաւասիկ կամ փախստա-
կան: Գեժգեհմի և Կաղմոսի արարքը սահմանադիւրի պայտաւնութեան
մի հիշողութիւն է միայն, Իսկ Կաղմեայի, Կաղման նախարարութիւն, կամ
տուն Կաղմեա ըստ հերոսանցու, հայտնի է մեր պատմութեան մեջ Հայաստա-
նի հարաւային սահմանների վրա՝ Կաղմեայն ազգի իբրև նախահայր Կաղ-

¹ «Պատմութիւն Մեքէսի հայրկապոյն», Ս. Պետրոբուրգ, 1879, եր. 4:

² Zur armen. Götterlehre, էր. 127.

³ Զրգուի, Բառամ և Սահրաբ, թորգմ. Ս. Գյուլզադեանց, եր. 70 հտն.:

⁴ Ալիշան, Այբոբատ, եր. 425, 427. ըստ լեզվաբան քանակի զօրաթոյն Կաղմեայի (որից

մոտ ստեղծված լինելը մի տարբերիակ բան չպետք է համարվի։ Մեզ չպետք է շփոթենք Կաղմ-ոս անվան հունական վերջավորությունը՝ Բաղմական և միայն հիշենք Աղաթանգեղոսի մեջ Տրդատ ձեռի հետ և հունական վերջավորությունը՝ Տրդատիոս, Տրդատեն ձեռքը Այն, ինչ որ Աղաթանգեղոսի մեջ բնական է թվում, ինչո՞ւ խորենացում մեջ Կաղմոս ձեռի համար բնական պիտի չլինի, քանի որ խորենացին պարզապես հիշում է, որ Մար-Արաօից և հատկապես հունարենից (Ա, ք, ք) է առնում այդ պատմությունը։

5. Հայկի առասպելի ժողովրդական ծագումը երևում է հատկապես և այս կտորից. «Իսկ Բելուր, ուր քաղաքապետն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին Գերեզմանակը՝ Բայց զգիական Բէլայ պաճուճեալ իմն դեղովք, առէ [Մար Արաւ], հրամայէ Հայկ տանել ի Հարց և թաղել ի քարձրաւանդակ տեղուց, ի տեսիլ նանանց և որդւոց իւրոց» (Ա, Ժա)։ Այս կտորը պ. Խալաթյանը (I, հր. 121, II, հր. 22) ցաղած է համարում Սուտ-Կալիթթենեսից, որի մեջ գրված է. «Սա (կղզին) Փարոս կոչի. քայց Պրոտէս ի սմա բնակեցաւ, և շիրիմն Պրոտենայ առ մեզ՝ պաշտաման արժանի եղեալ։ Ի վերայ լեւին միոյ քաճու եկեալ բերին զնա. այդ ուր այժմ կոչի զհիցազգի գերեզման և ցուցին նմա (կղզսանդրի) զտապանն»։ Պ. Խալաթյանինն ձեռագծները Պրոտեն թաղված է մի քարձր լեռան վրա, որ կոչվում է «Գիւցազգի գերեզման»։ Բեյ նույնպես թաղված է մի քարձրաբնակալ տեղում, քայց ոչ թե նորա թաղված տեղն է կոչվում Գերեզմանք կամ Գերեզմանակը, այլ նորա ընկած, սպանման տեղը։ Ահա բովանդակութեան բոլոր նմանութիւնը։ Եվ այդ նմանութիւնը Կալիթթենեսից վերցրած համարել ընդվանան Գիւցից հիմնվելով սոսկ ոչնչությունների վրա,—այդ, զհիտենք, պ. Խալաթյանի վարկելու եղանակի թույլ կողմն է։ Մի հատ ուր այժմ (պ. Խալաթյանը գտել է և մի քայց շաղկապ sicil).—ահա բոլոր ընդվանան նմանութիւնն էւ։ «Տարոնոս գաշտի բերանը Աշտիշատա ժող՝ կա մի դիւղ, զոր այսօր Բաղլա կկոչեն տեղացիք, քայց Տարոնոս պատմիլ Հովհաննէս եպիսկոպոս Վիշապ անուն կուտա անորոք՝ Վերքն լուաւ շահն [Շահարաս] զայս համբաւ, դարձալ զբրեւս իւր՝ և եկն յՍրուանդակներտն հին, ու այժմ ասի Աղջաղալայ՝ Ուրեմն ինչ պիտի եղրակացնել,—Արվանձտայան ու Առաքել Գալթրիժեցին խորենացուց կամ Սուտ Կալիթթենեսից՝ են վերցրել իրենց ուր այժմ (այսօր) ասի, կկոչեն և քայց բառերը։ Եվ եթե մեզնից ամեն մեկն էլ խոսնուով մի տեղի հին, քայց քիչ իրիկված անվան մասին կարող է ավելացնել արինակ, «Կվալս որ այժմ ասվում է Կոշա, ինչո՞ւ խորենացին չէր կարող գրել «Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակը»։

Ընդվանան նմանութիւնն այսպէս ոչնչություն է դառնում. մնում է բովանդակութեան իրական նմանութիւնը, որ է՝ Բեյ ու Պրոտեն քարձր տեղում են թաղված։ Բայց այդ դեռ ասացուց չէ կարող լինել, որ խորենացին Սուտ Կալիթթենեսից է վերցրած, այլ ասացուց այն բանի, որ Հայկի առասպելը ժողովրդական ծագում ունի Հիշենք միայն թե իրարուց տեղով ու ժամանա-

հետ գալիս են Կորդվաքից, Արարատից, Աշտիշատից և Մաղաթից՝ հասնում են 1320 զինվոր, որից ավելի մեծ թիվ միայն Սյունիք անին արեւելյան սահմանների վրա։

¹ Խալաթ. Արա. 9008, հր. 78.

² Մի խալաթ ժողովրդների մեջ այս ընթերցվածն է, որ և հիշու պետք է համարել։

³ Արվանձտեւ, Գրք-բրք, հր. 91.

⁴ «Կալաթ Հաթիւն» Առաքել վարդապետի Գործիճեցալոյ, Վաղարշապատ, 1884, հր. 29.

կոմի հետու ազգերի մեջ ո՛րքան շատ իրարու նման առասպելներ և նույնիսկ մի որևէ տեղի հետ կապված ավանդություններ նման Զմոռանանք և այլն, որ հին գերեզմանները սովորաբար բարձրավանդակ տեղերում են շինված և խիստ շատ տարածված է զանազան հին և նոր ազգերի մեջ ցույց տալ, սովորաբար բարձր տեղերում մի տեղ, հակալի-օղուզի կամ ավետլուսի գերեզման կոչված։ Քողնենք օտարներին։ Միթե Հայաստանում այսօր ևս այդպիսի գերեզմաններ շատ չկան։ Հայտնի են Փոքր Մոսկիսի վրա եղած օղուզի գերեզմանները։ Շենիզ ըսված գերեզմաններ, զորս քրդերը կպատվեն և շատ տեղ Հայն ալ ֆրդին ճիտ օլստի կերպ հոգ... որք առհասարակ ժառերու պրահներով շրջապատված կլինին, և դարեւու վրա քաղաքները։ Մի «ազնավոր» գերեզմանն և կարագրում է Սրվանձտյանը Մանազկերտի մոտերը, «Թ քալ մեծութիւն... որ քարակույտով մը բարձրացած է, որ գլուխ տնր շինը յուր նախնին համարելով սկըմեծարե իբրև մարգարի շիրիմ»։ Մկայիսի մեծագիր և Ազնավուր անունով գերեզմաններ կը գտնվին ուրեք ուրեք, ավելացնում է Սրվանձտյանը՝ նույնպիսի մի Ազնավուրի գերեզման և կարագրում է նա նաև Բոստան Խայա գլուխի մոտ, զարձայ Մանազկերտի մոտերը, և մինչև անգամ Ազնավուրի մասին պատմվածք մի առասպել է մեջ բերում և թե «գողի կնկտիքը շէր [հրգ] կկապեն Ազնավուրի վրա»։

Պրոտեոսի «թիցազգի» գերեզմանին ազգացության տակ շին և տեղծված, անշուշտ, Հայաստանում այժմյան այս հսկաների, ազնավուրի կամ օղուզի գերեզմանները, որոնք նույնպես պաշտամունքի առարկա են, ինչպես Պրոտեոսի գերեզմանը։ Այդպիսի գերեզմանները, ասացինք, շատ տարածված են և ոչ միայն Հայաստանում, այլ ուրիշ երկրներում, ուր ցույց են տալիս այս կամ այն գլուխազնի գերեզմանը։ Եվ չգիտենք ինչու, երբ Սրվանձտյանի կամ ուրիշների մեջ, մի ազգային գերեզմանի մասին գրված ենք գտնում, շատ րնական ենք համարում, իսկ երբ խորհնացու պատմության մեջ գտնում ենք թե մի տեղ ցույց էին տալիս իբրև հսկա Բելի գերեզման, պիտի կարծել թե չինքնա է։ Պրոտեոսի գերեզմանը միայն ուղի կտրուկ բազմաթիվ գերեզմաններով թվին է պատկանում, ինչպես և Բելի գերեզմանը։ Եվ այս հանգամանքը հենց, որով Բելի առասպելը կապված է հսկաների գերեզմանի շատ տարածված մի ժողովրդական ավանդության հետ, մեծացնում է համանականությունը թե այդ առասպելը մոլորվողական ժառում տնի։

Նրա, այսպես, Հայկի առասպելն յուր ընդհանուր բովանդակությամբ ու զույնով, և ապա վերևում հիշած գլխավոր մասերով ժողովրդական վիպական կերպարանք ունի, այն ժամանակ նոր իրենց նշանակություն են ստանում և դալիս վիպական կերպարանքը զորացնում են և ուրիշների գիտած երեք կողմեր ևս, որոնք մենակ վերջրած առանձին արժեք չունին հարկավ։ Այդ կողմերն են. նախ՝ բազմաթիվ վակդիրները, որոնք մեծ մասամբ վերաբերում են, ինչպես սովորաբար վնայի մեջ, հերոսներին արտաքինի նկարագրությանն ու մարմնական հանդուկությանը։ Բայց այդ մակդիրները բուն, հարադատ ժողովրդական համարելու ոչ մի հիմք չունինք։ Ի նկատի պետք է ունենալ և այն, որ խորհնացին անմիջապես չէ օգտվում ժողովրդից, այլ առնում է մի օտար լեզվով զրգածիքը։ Այնուհետև նշանակություն են ստանում նաև զրույցի

¹ Սրվանձտ., Գրոց-քոս, հր. 198:

² Նույն, հր. 28:

³ Նույն, հր. 96 հաւ.

մանրագրագրական համակարգով, թեպետև այստեղ հարտատեսությունն էլ նա-
րող է մեծ դեր խաղացած լինել,—և ապա՝ հետագայ անունների ցուցաբեր-
անությամբ:

Հարց թափոն ստուգաբանորեն հայր բառից ծագումը ժամանակագրության
անհամաձայն է դրանում Գարագաջյան¹, որովհետև հայր բառի հոգնակին
հաճ է հոլովվում է հարանց, մինչդեռ հատուկ անունը Հարց ունենում է Հար-
գայ: Միևտի ավելի տրամաբանական է ենթադրել, գրում է նա, թե Հարց
անվան պատահական նմանությունը հայր բառին հոգնակվումն հետ թեև
դրած է այն պատմությունը: Այս անհամաձայնությունը, սակայն, արժեք
ունի, երբ այդ ստուգաբանության վրա պատմական տեսակետից նայենք,
ինչպես և նայում է պ. Գարագաջյանը: Այսինքն, երբ հաստատել ուզենանք թե
իրոք հայրեն—հարց են բնակվել այդ տեղում, ուստի և հետագայում տեղի
անունը Հարց է կոչվել: Բայց մեր նպատակն այստեղ այդպիսի պատմական
նշմարտություն գտնել չէ, այլ այն միայն թե կարող չէ՞ր արդյոք ժողովրդի
մեջ նույնիսկ երկու տարբեր արժանատիներից ծագած բառերի պատահական
նմանությունից մի ավանդություն ստեղծված լինել: Ամենայն ազդերի մեջ
կան այդպիսի տեղական ժողովրդական ավանդություններ, որոնք այս կամ
այն տեղի, լեռան, ավերակի ելն ծագումը բացատրելու համար են միայն
ստեղծված: Այդ ալպան կոչված պատմական գրույցները (etiologische
Sagen) հարկավ մեծ մասամբ քննադատության են, հաճախ
հիմնված ստուգաբանությունների վրա, որոնք լեզվաբանական տեսակետից
ճիշտ չեն անպատճառ մասին և այդ ժամանակագրության անհամաձայնությամբ
վրա հիմնվելով միայն կարելի չէ ասել թե հենց ժողովրդի մեջ ևս չէ եղած
Հարց անվան մի այդպիսի բացատրություն և թե այդ շինծու մի բան է:
Մյուս կողմից ժամանակագրության անհամաձայն լինելն ևս դեռ բոլորովին չէ
պակասեցված, որովհետև հայտնի է համաբանությունը (analogie) ռոբան
մեծ դեր է կատարում լեզուների մեջ, և ռոբան խոնարհման ու հոլովման և
այլ ձևեր լեզուների մեջ հիմնականում են համաբանությամբ: Եվ մի՞թե այդ
օրենքով չէ որ մենք այժմ վարք—վարքի, բարք—բարքի, աչք—աչքի ենք հոլո-
վում, հիդանակ վարդաց, բարդաց, աչքաց հոլովելու, և կամ օտարազգի
ծագում ու կազմություն ունեցող Տիդիս՝ իբրև հոգնակի առնվելով Տիդիսաց
է հոլովվում, հիդանակ Տիդիսի կամ Տիդիսայ հոլովելու Գ. Գարագաջյան
չէ հիշում թե ո՞ր դարձ մատենագրի մեջ Հարց—Հարցայ է հոլովված: Բայց
ռոբ դարձում էլ որ լինի, մի անգամ երբ Հաճ է բառի ծագումը մոտացության
է տրված, կարող չէ՞ր արդյոք մեր գրականության սկզբի դարերում էլ հա-
մաբանությամբ Հարցայ հոլովվել: Մենք, անշուշտ, չենք պնդում, որ Հաճ
հայր բառի հոգնակին է, այլ այն միայն ուզում ենք ասել, որ այդ բացատ-
րության դեմ առարկությունը դեռ շատ թույլ է:

Նախքան մեր հերանգացության ամփոփումին անցնելը, նկատենք մի

¹ Ա. Մ. Գարագաջյան, Թեմական պատմություն Հայոց, մաս II, Թիֆլիս, 1885, եր.
188.

² Халат., Арм. 9000, եր. 36.

³ Մարտի, 1885, № 6, եր. 412 հ. Գարագաջյանի վրդ. Հովանիսյանի տեսությունից թարգմա-
նելու հոգնակի մեջ, մայր Աթոռի գրադարանի Մ. Թ. № 780 գրքահանու իմաստագրի հա-
յոք կաթողիկոսի օտկա մոզովոյ որ հղեն ի Հայոց Հեռագրից առած կտորի մեջ հիշվում է
Մանգրիկոսի ժողովի (736 թվին) հայկապետների թվում Մկիկեա Հարցա, առանց վերջի
առաջի:

հանգամանք ևս: Զգեսենք ինչո՞ւ արդի ժողովրդական գրույցները, որոնք պատմվում են Հայկի ու Բելի մասին Վանա ծովի շուրջը, անպատեհառ խորենացու ազդեցությամբ մտած պիտի համարել ժողովրդի մեջ, և ոչ թե, խորենացուց անկախ, հին ժողովրդական գրույցների սերունդ, որոնք կապված մնում են Վանա ծովի շուրջը—և հատկապես այդ ծովի շուրջը—եղած տեղագրական անունների հետ: Եվանա մեջ մեկ թաղ կա քնակչաց, բերդի պարսպեն դուրս, որ մինչև ցայսօր Հայկամյանը կկոչվի...: Հայոց ձոր... մինչև ցայսօր Հայոց ձոր կկոչվի. այնտեղն է Տրեշող գեղը, ուր Հայկի լայնալիճ նետով բացված հսկա Բելի զրահապատ կողի շողը նետենվեր՝. այնտեղ է Հայկ և Աստվածաշուն անունով գեղերը... բնակիչք ինչ կանվանեն այս [Հայկ] գեղը և խավու ձոր կանվանեն զՀայոց ձորին, որ կրնա ըսվիլ նաև Հավոց ձորը:

Նույն տեղում (եր. 48) Սրվանձախանը պատմում է հետևյալ գրույցը. «Դատվան գեղեն Ջրհորի սահմաններով դեպի Նեմրուժ ի դաշտակողմն գնալով՝ կտենանա կարգ մը տնկվածի կամ կանգնվածի պես սև քարեր, որոնք հեռուն և մոտ ժամանակ կրնան խաբել զմարդ՝ թե կարավան են անոնք, կամ մարդ և ուշտ: Տեղացիք Բելի ուղտեր և ուղասպաններ կանվանեն զանոնք, և որոց համար կվիպասանեն ու կան թե Եկոապաշտ թագավոր է եղեր Բելը, և մեծ դորքով նկեր Հայոց թագավորի ու երկրի վրա կոխվ. Հայոց թագավորը Աստուծո ձեռնով սպաններ է զԲել, և հաներ Նեմրուժա գլուխ. այնտեղը փոքր թոնիր շիներ, մեջը կախեր վառեր է: Աստուծո հրամանքով այն կրակը ջուր է կտրեր, զմոխիրն հողի տակ իջեցներ, որ շնչի քամին անոր փոշին տանի: Բելի մարդիկ ու սուտերն ալ իրենց վախեն քար են կտրեր: Մինչև այսօր թոնիրն ու ջուրը կա. և այս ջուրն է, որ սարի տակով կիջնա Մեղրագետի ակնեն կրխն և այդ գետը կկազմեն:

Նույն գրույցի մի ուրիշ ձևը բերում է Հ. Սարգսյան յուր տեղագրության մեջ:

Եթե Սարգսյանի բերածի մեջ, բազմաթիվ ժողովրդական մտախմբների հետ, գրքերի ազդեցություն ևս երևում է, Սրվանձախի բերած այս գրույցի մեջ խորենացու ազդեցություն չէ երևում, Կոապաշտ թագավորի և (Խալապաշտ)՝ հայոց թագավորի կոխվը շատ սովորական մի բան է մեր ժողովրդական գրույցների մեջ և տեղիք չկա կարծելու թե խորենացուց է անցած ժողովրդին: Բայց և այդ կոխվը հենց երկրորդական տեղ է բերում մեր գրույցի մեջ, ուր էականը Բելի ուղտերի քարանայն է և Նեմրուժ սարի գլխի ջրավազանի ծագման պատմությունը: Բայց այս միջոցին երկու տեսակի ավանդություններն էլ շատ տարածված են: Փար կտրելու աշդախի պատմություններ շատ կան, որոնցից մի երկուսն էլ բերում է Սրվանձախանը (եր. 50 հտ.)։ Նույնպես աղբյուրների ջրավազանը թոնրով և թոնրում այրվելու մի պատմություններ բացատրելը մի տարածված ավանդություն է, որ Նույն Սրվանձախյանի մեջ (եր. 53) գտնում ենք, մի ուրիշ ձևով կապված նաև լեզք գլուղի մոտ եղած աղբյուրի ջրավազանի հետ: Իսկ այս ավանդությունն իբրև թափառակալն զԲուլլ՝ գտնում ենք և Տ. Նավասարդյանի հեքիաթների ժողովածուի մեջ է ցրույվ, եր. 39 և ինչպեստիս պաշ տվող կնիկըս վերնադրով:

¹ Ահա մի ստուգաբանություն, որ չգիտենք ժողովրդից է ունում Սրվանձախանը, թե՛ իրենից է շինում:

² Սրվանձախան, Գրոց-բրոց, եր. 113 հտն.

Սրմանաձայանի բերած այդ զրույցն, որեմն, չուր ձևով *Խորենացու* ազգեցութեան տակ ստեղծված համարելու տեղից լուսինը: Շատ համանական է, որ, ինչպես տեղագրական անունները՝ *Հայկ*, *Հայոց* ձոր էլն, *Խորենացու* ժամանակից ջայսօր, հարկավ անկախ *Խորենացուց*, մնացել են *Ժողովրդի մեջ*, այդպես և արդի *Ժողովրդական* զրույցը հին զրույցների մնացորդն է: Երբ, շնորհով ենք, *Խորենացու* զրույցին շատ էլ նմանություն չունի: *Հայտնի է*, ժամանակի հեռավորությունն առանձին նշանակություն չունի զրույցներին հարատևելու նկատմամբ: Եթե *Անանիա Շիրազացու* ժամանակից մինչև այսօր կարող է մնացած լինել *Վահագնի հարգողություն* առասպելը նույն բնավորությամբ, որ ժամի այդ առասպելը *Շիրակացու մեջ*¹, ինչու անհամանակոտ պիտի լինի թե *Խորենացու* կամ *Մար Արսատի* ժամանակից մինչև այսօր կարող էր *Ժողովրդի հիշողության մեջ* մնալ *Հայկի ու Բելի* առասպելը:

Այս ամենն ի նկատի ունենալով, ինչպես և այն, որ *Հայկ*² հսկա նշանակությամբ և իբրև առասպելական որսորդ՝ Օրիոնի համասար զործածված ենք գտնում *Քարգանի*ներից, դարձա ենք այն հզորակացության, որ *Հայկի ու Բելի* առասպելն ավելի և ավելի նախնականությունով ժողովրդական հիմունքներին: Եղել է, համանորան, մի տեղական առասպել հսկա որսորդ *Հայկի* և մի օտար բանավոր հսկայի՝ *Բելի* կովի մասին, որոնց համար և Վանա լճի շուրջը տեղեր են ցույց տվել:

Առողջելի կապվելն աշտարակաշինության նկատմամբ այդ հին *Ժողովրդական* զրույցն ինչպիսի կերպարանք է ունեցել՝ դժվար է ասել: Մեր ունեցածը զրական մշակությունն կրածն է: Ավելի ևս դժվար է ասել այժմյան միջոցներով, թե արդյոք հենց *Ժողովրդի մեջ* հայ ազգի ծագումն այդ *Հայկ* հսկայի անվան հետ կապված է եղել, թե՞ *Ժողովրդական* զրույցից օգտվողի սեփական գյուտն է այդ: Համենայն դեպս, զրույցի մասը շատ պարզ կերպով երևում է հատկապես հայ ազգի ծագման հնություն և աշտարակաշինության հետ կապված լինելու նկատմամբ:

Ազգերի և լեզուների սկիզբն աշտարակաշինության հետ էր կապվում ժամանակի հասկացողությամբ՝ Սուրբ Գրքին հետևելով, *Խորենացին* ևս այդպես է վարվում յուր մեկնության մեջ պարսից ազգի սկզբնավորության և Բյուրասպի մասին խոսելիս: Եվսացնալն ի նոցան է Բիւրասպի Աժդահակայ՝ առ Նեբրութաւ նախնի եղա: Քանզի ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր... դիւսարգ և ցեղապետք որոշեալք դիւրաքանչիւր սահմանն ժառանգեցին... Սա (Բյուրասպ) ... ցեղապետութիւն ազգին իւրոյ ունել նեազանդեալ Նեբրութայ» (Ա գրքի Բ հավելված):

Սուրբագրի մի շինովի բան է, հարկավ, հայոց ազգի ծագումն աշտարակաշինության հետ կապելու: Եվ, ինչպես երևում է, *Խորենացու* արածն է այդ: Նա, որպեսզի այդ հերյուրումին համատ ընթացի, կարևոր է համարում առաջուց հայտնել իրենից թե Բելը Ս. Գրքի ներքովն է, Բայց նա ոչ մի հիմ

¹ Հարգողը նշան է, որ ժամանակով ուրիշ որոշածից առավել յուր մշակները զրկել մեր հրկից առաջին կայն հարգելը գողցել... Հարգը թափել հրկից երեսն ու միացել: Սովետական, Գրք-բոց, էջ. 108:

² Հայկին իբրև որսորդ է ներկայացնում և Բելի խոսքը Ենանունի մեջ. «...Ունելով ի գլուխ զմեկնութիւն ի սան իմոյ զորոհմանս (Սիրեռ, էջ. 4):

³ Հայապարտութիւն ապագայք թէ քառ արաքեանցն առացեալ է Բելը. ըստ առաջնածրդին բանից նշարարութեամբ նորոգութիւն (Ա, է):

յունի այդ ենթադրութեան համար, այլ գրում է լոկ խոսքով. «ԶԲէլայ, առ որով նախնին մեր Հայկ, բազումք բազում ինչ այլ ընդ այլոց պատմեն. քայլց աս ասեմ զԿոռնոսդ անուն եւ զԲէլ՝ ներսովք լեալ»¹:

Ինչպես երևում է, Խորենացու աղբյուրի մեջ այդ նույնացումը չէ եղել: Եվ այս համեմատման է թվում նաև այնու, որ Անանունի մեջ եւ, — Թեպետև Աստվածաշնչի մի քանի ձևերից ու նկարագիրներից ազդվել է գրողը, — Բելը ներքոթիթի հետ նույնացած չէ: Այնտեղ ասած է աշտարակաշինութիւնից հետո, «ի վերայ, առն ընկերի՝ առնուր սուրն Տիառն, յորում աստաշին քաղաք-ւնաց ի վերայ երկրի»: Ուրեմն ընկերի հետ կոպում է Տիտանը, որ և առաջին թագավորողն է լինում երկրի վրայ, եթե միայն «յորում աստաշին թագաւորեց...» չհասկանանք, ինչպես յորումս ձևը պահանջում է, թե երրի ժամանակ, — այսինքն կոպի ժամանակ, առաջինը, այսինքն ընկերը, թագավորեց...»:

Բայց ո՞վ է այդ «ընկերը», որի հետ կոպում է Տիտանը:

Եվսեբիոսի Փրոնիկոսի մեջ աշտարակաշինութեան պատմութիւնը (որից հերյուրված է Խորենացու աշտարակաշինութեան պատմութիւնը, ինչպես ապացուցել է պ. Խալաթյան. I, 48 հտն., II, 1 հտն.) ըստ Արիդեոսի վերջանում է. «Եւ յետ այնորիկ Կրովն ի Տիառն մարտ պատերազմի ընդ մի-մեանս բախէին»:

Իսկ ըստ Բազմավեպի (Սիբիղղայից առած). «Իսկ յետ ջրհեղեղին Տիտանն և պրոմեթէ լինէին, ուր և Տիառնն ընդ կրովնի ի մարտ պատերազմի գրգռէ»²: (Հմտ. Խորենացի Ա, Գ. «Արդ ի բռնանալն, ասէ [Սիբիղղայ], Ջրուռնայ (Կոռնոսի). ընդդէմացան նմա Տիառնն և Յապետոս-թէ, ի մարտ պատերազմի ընդ նմա Գրգնիով»: (Անանունի մեջ եւ Տիտան անունը Եվսեբիոսից վերցրած է համարում պ. Խալաթյան (II, եր. 5): Եթե այս հետեւութիւնը ճիշտ է, այն ժամանակ Անանունի հատվածը՝ «ի վերայ առն ընկերի առնուր սուրն Տիտան» պետք է հասկանալ ըստ Եվսեբիոսի՝ այսինքն թե այդ ընկերը, որի հետ կոպում է Տիտան, կրովն (Կոռնոս) է: Եվ արդոց «ընկեր» բառը «կրովն» բառի մի աղավաղում չէ՞ գրագիրների մեջ:

Ինչպես էլ լինի, ըստ Անանունի, աշտարակաշինութեանց հետո երկու կոպողներից՝ կամ «ընկերն» (կրովն?) է թագավորում, կամ Տիտանը: Այնուհետև շարունակում է Անանուն. «Եւ Բէլն Տիառնեան ի վեր կարծէր զինքն...»:

Կարելի չէ այս Տիտանյան Բելին նույն համարել վերևում հիշած Տիտանի հետ, որ ընկերի (կրովնի?) հետ կոպում է: Բելը, որի հետ կոպում է <> Հայկը, «Տիտանեան» է միայն, այսինքն Տիտանի սերունդից մի թագավոր, որ իրեն իրրև աստված պաշտել տալով զգամենայն ազգս ի ծառայութիւն իւր կոչէր»:

Խորենացին, որովհետև Սիբիղղայից գիտն (Ա, Գ), թե առաջին թագավորողն ու բռնացողն Ջրվանը (= Կոռնոս) է, որի դեմ կոպում է Տիտանը, և որովհետև եւ, ինչպես տեսանք, Կոռնոսին ու Բելին նույնացնում է, ուստի և աշտարակաշինութեան պատմութիւնից անմիջապես հետո Բելին (= Կոռնոս-

¹ Խորենացու պատմադրութեան վերջին՝ «արդէն նգիդացեց թաւն Հուսաօր Մովսիսի, Եւսեբիոս, արեգակն, Կոռնոս, որ է Փամ, Փաշ, ներքովք...» ըստ յետ կարող էր, ժամանակի հստակացումով, Գառնոսին նույնացնել ներքովթի հետ: Իսկ որպէսզի Բելն էլ ներքովթի հետ նույնանար, հարկավոր էր գտնել, որ Կոռնոս և Բել նույնացած լինեին: Բայց այդ չկար լսմամբ. Ա, Ե. «ընկերովթ, որ է Բէլ»:

² Պ. Խալաթյանը (եր. 58) թարգմանած է հոգեմէրի ու ԵՊԵՐԱՅԱՆԸ, միևնույն բնագործի մեջ խառնել է՝ ընկերի:

³ Եւսեբի Կեսարացու ժամանակագրութեան, Վենետիկ, 1818, եր. 38 հտն., եր. 58:

սին) է թագաւորը և բռնանալ տալիս երկրի վրա: Այդ անելուց հետո, սակայն, նա մոռանում է շուտով յուր արածը և, հետևելով յուր աղքատին, Բելին այնուհետև շարունակ Տիտանյան է Կոլում, որով և ինքն իրեն հակասում է. դի Բել-Կոռնոս (= Զրման, որի դիմ կովում է Տիտան) լինում է միանգամայն և Տիտանյան, այսինքն Տիտանի սերունդ:

Առաւելի ծագումը:—Պ. Գելցերը կարծում է՝ Հայկի առասպելի մեջ պահւած է ասորական քաղաքակրթության, կուլտուրայի և կրոնի հայաց վրա ունեցած գործը, օկզրում թշնամական, ազդեցության պարզ հայտնի մի հիշողութիւն: Սակայն աղբը համար նախ պետք էր ցույց տալ, որ այդ առասպելը բնիկ հայկական է և հայ ժողովրդի մեջ է սկիզբն առնել իբրև հիշատակ այն հարարերության, որ հայերն ունեցել են իրենց դրացի ասորականքին ազգերի հետ, որոնց աստվածն էր Բել, Բայց միթն կարո՞ղ չէ այդ գրույցի մեջ մնացած լինել Հայաստանի նախաճաշ բնակիչների՝ ուրարտացիների ասորեոստանցոց դիմ մղած պատերազմների հիշատակը, որ հետո հայերը ժառանգել են ուրարտացիներից, Հաճախ մի ազգ, բռնելով մի ուրիշ ազգի երկիր, սեփականում է և սորա գրույցներն ու ավանդութիւնները, հարկաւ, փոփոխութիւններով: Մյուս կողմից այդ առասպելը, քանի որ յուր նմանները շատ ազգերի մեջ կան, կարող է նաև Կոլիշ ազգերից մի փոխառութիւն լինել, որ հետո տեղափակւած է Վանա լճի շուրջը և կապւած Բել և Հայկ անունների հետ: Ուրիշ խոսքով, այդ առասպելը կարող է պատկանել այսպես կոչւած քոփառական գրույցների (Wandersagen) տեսակի, որոնց անցում են մի անկից մյուսին, մի տեղից մյուսին, մի դիպագից մյուսին. դա. նազան ժամանակներում կրկին պատմվում են իրենց գլխավոր բովանդակութեամբ. որոշ լատիկ տեղն տեղ, ժամանակն ժամանակ թափառում, շրջում են: Բնականաբար այդպիսի պատմւածքները կրկին ու կրկին փոխանցման ընթացքում բավականի փոփոխվում են, քայց գլխավոր մտքիմները և հիմնական գծերը նույն են մնում:՝

Երբեմն նույնիսկ միթոսը (Mythus) թափառական գրույցի կերպարանք է ստանում, և կամ նույն առասպելը, միթոսը մի տեղ ներկայանում է իբրև բնիկ առասպել, մի ուրիշ տեղ իբրև փոխառութիւն: Այդպիսի մի թափառական առասպելի, միթոսի ցեղեցիկ օրինակ է Զվիցերիայի ազատութեան գործի մեջ մեծ դեր խաղացող Տիլի գրույցը: Տեղը որսորդ է և քաղակից ազնւնավոր, ինչպես մեր Հայկը. նա էլ Եվելցարիա մտնող բռնավորին սպանում է յուր նետով և ազատում յուր երկիրը: Նա նույնպես դարերից է վեր երգով, խոսքով ու պատկերով փառաբանվում է. նորա անունով կան մատուռ և սարահարթ (Tellplatte): Բայց շնայելով այս ամենին՝ այժմյան հետազոտութիւնը ցույց է տալիս, որ այդ ազգային հերոս Տեյլի գրույցը Զվիցերիայում բնիկ չէ, և այլ ամենայն հավանականութեամբ դանիացի քաջ Տոկոյի գրույցն է, որ նույնութեամբ անցել է Եվելցարիա, և Տեյլն այստեղ ազգային հերոս է դարձել: Նույն գրույցը պատմվում է և ուրիշ ազգերի մեջ, և հիմնական մի հնդեւրոպական հին գրույց է, որ առասպելաբանական, միթոլոգիական հիմունք ունի և նույնանում է առասպելական հսկաների որդի էգիլի և յուր երկու եղբայրների գրույցի հետ: Եվսկ այդ երեք հսկաները համասար են դասվում հնդկական Բնդրա աստուծու, որ յուր նետերով և կայծակներով խորտակում է ամպրոպի ու գիշերով դևերի (Dämon) ամպեղեն բուրգը, երեք

² E. Barnhelm, Lehrbuch der Histor. Methode, 4. 866 հ.Ն.

գլխավոր մարտակիցներին: Սկանդինավական առասպելաբանության մեջ ինդրային համապատասխան է հսկա Օդհին աստվածը, որ յուր հնագույն կերպարանքով Նուրյան Նետ աղեղ է բանեցնում և նվաճում է ձմեռվա ու խավարի հսկա բռնակալներին դեմ: Այդ Օդհինը, աստվածների և հավանորեն մարդկանց հայր, ներկայանում է ոչ միայն իբրև զորավար, որ մի զորքի գլուխ անցած կռվում է մի ուրիշ թշնամի զորքի դեմ, այլև իբրև կատաղի ուոսդ (Wilder Jäger), որի զննվածն անզամ շատ տեղ ցույց են տալիս Գերմանիայում:

Այսպես Տեյի գրույցը բնության մի առասպել է, որ յուր հիմքն ունի այն աշխարհայեցողության մեջ, որ նախնական մարդիկ ունեին բնության երևութների վրա: Երա լուստ կռիվն է ընդդեմ գիդեբվա և ձմեռվա, որը մասնակ ազգերն ըմբռնել են իբրև մի աստվածային աղեղնավորի կռիվ: Եվ այնուհետև բանաստեղծի շարունակելով և մարդկային կերպարանք տալով դարձրել են այդ կռիվը քաջաձիգ աղեղնավորի կռիվ յուր բռնակալ տիրոջ դեմ, որին և աղեղնավորը սպանում է: Ուրիշ խոսքով, առասպելը առասպելական ինք ինքն աստմական է դարձել:

Մի տեղ այդ առասպելը բնիկ է, ամենահին ժամանակներից ի վեր գոյություն ունի, մի ուրիշ տեղ, ինչպես Զվիցերիայում, հավանորեն, փոխառություն է: Մի տեղ պահել է յուր նախնական առասպելական, միթոլոգիական բնավորությունը, մի ուրիշ տեղ, ինչպես Զվիցերիայում, պատմական դառնալով՝ աստվածների առասպելը կապվել է ազգի ազատության կռիվ հետ և փոխվել դարձել է Տեյի հայրենասիրական գործը:

Արդ, թեթև բազդատությունից անգամ երևում է, որ մեր Հայկի առասպելը միևնույն Տեյի, կամ Օդհինի առասպելն է: Երա միևնույն որսորդի, քաջաձիգ աղեղնավորի կռիվն է լուսնակալի դեմ, մեր առասպելի մեջ ևս կնդրունը կազմում է քաջ նետածգությունը, նետով թշնամուն սպանելը և յուր երկիրն օտար բռնավորից ազատելը:

Այս համեմատությունը միայն բավական է մեզ ցույց տալու, որ մեր Հայկի գրույցի հիմունքը, — լինի այդ գրույցը մի փոխառություն, թե հայոց մեջ նախաժամանակից ի վեր գոյություն ունեցող մի առասպել, — պատմական չէ, այլ առասպելաբանական, ծագած ընդհանուր առասպելաբանական աշխարհայեցողությունից: Հետագայում միայն այդ առասպելը, հայերի կամ թե նախահայերի՝ իրենց հարավային դրացիների, հատկապես ասորեստանցոց, գուցե և բաբելացոց հետ ունեցած հարաբերության պատճառով, կրել է պատմական ազդեցություն: Հին թշնամի դևի, դեմոնի տեղ անցել է Բելը, որ բաբելացոց, քաղդեացոց և ուրիշների արեգական աստվածն է, երկնքի և լուստ տեր, աշխարհի և մարդկանց արարիչ, որ աստղերին իրենց ճանապարհը ցույց է տվել: Բել կոչումը, որ նշանակում է տեղ, տրվում է և ուրիշ աստվածների և աստղերի, ինչպես և Թագավորների: Այսպես և հնոց պատմությունում Ասորեստանի Թագավորներից մեկը կոչվել է Բել, որ ազատել է Բաբելոնն արաբների լծից, և որի որդին է համարվում Նինոս: Բայց Բելն սկզբնապես արեգականին աստվածություն է: Եվ եթե ի նկատի ունենանք, որ մեզ հսկա Հայկն ևս, մի համաստեղության կույում է, պարզ կլինի, որ հին առասպելը յուր այս կերպարանքի տակ դեռևս պահում է յուր առասպելական

¹ E. H. Meyer, Germanische Mythologie, էջ. 244:

քննվորութիւնը, որով արեգակնային կամ աստղերի աստված Քնի դեմ կռիւմ է մի աստղային դուցազն Հայկ¹։

Հետագայում արդեն, եվհեմերարաբ մտածվելով, Բնը մեր աստապելի մեջ դարձնել է թագաժող Բարձրունում (համանորեն Ս. Գրքի ազգեցութիւն տակ) և Հայկը՝ հայ ազգի նախահայր, և նորա արարածները տեղափակված են Վանա լճի շուրջը, իսկ թե արդյոք Հայկը ժողովրդի գիտակցութիւն մեջ է դարձած հայոց նախահայր, թե՞ մի անհատի աստղաբանութիւն է այդ՝ հայ և Հայկ բառերի նմանութիւնից, և թե՞ արդյոք Քնի անունը հայոց աստապելի մեջ մտել է հայերի՝ ասորեստանցոց ու բաբելացոց հետ ունեցած հարաբերութիւն հիշողութիւնից, թե՞ դա մի փոխառութիւն է միայն՝ ուրարտացիներից կամ ուրիշներից.— այդ դժգոյս է որոշել այժմյան միջոցներով։ Համենայն դեպս, այդ աստապելի գրվելուց ի վեր աստապելական հսկա և որսորդ Հայկը փառաբանվում է իբրև ազգային հերոս և հայ ազգի նախահայր։

2

ԱՆԳԵՂ ՏՈՒՐԹԻ ԱՌԱՍՊԵՆԸ

Անունը։—Ո՞րն է այդ հսկայի անունը, Տո՞ւրք թե Տորք, Մայր Աթոռի գրատան տասնութ ձեռագիրները (որոնցից մեկը վերջերս հանգ. Սարգիս Եւսկոպոսից ժառանգութիւն է մնացած) այդ բառը ունենալով՝ կարծում ենք, որ Տուրք պիտի լինի։

Անշուշտ, նորենացու ձեռագիրները դեռ լին համեմատված, և մենք դեռ չենք նարող բոլոր ձեռագիրների նիշտ և վերջնական դասակարգութիւնն անել։ Բայց հորենացու ձեռագիրներով պարագայունքին արդեն հայտնի է, որ Մայր Աթոռի ձեռագիրները երկու պիսավոր տեսակի են բաժանվում, որ մենք անվանում ենք առաջինը՝ Անտիպի (Ա) տեսակ, իսկ երկրորդը՝ Տպագրի (Տ)։ Որովհետև առաջին տեսակից ապագրութիւն չէ եղել, այլ միայն երկրորդ տեսակից։

Թե Տ բոլոր 12 ձեռագիրները մի ընդհանուր ծագում ունին՝ շատ զննցիկ կերպով երևում է, ի միջի այլոց, այն բանից, որ բոլորն էլ Տուրքի հատվածի մեջ ունին տառասխալով զոնգութիւն (Ձ 1666 զոնգութիւն, իսկ Մարգիս եպիսկոպոսին ղէզութիւն) բառը, մինչդեռ Ա ձեռագիրներն ունին զոնգութիւն²։ Այս բաժանումը. թեպետև մի տառասխալի վրա հիմնված, հաստատ կարելի է համարել։ Սակայն, անշուշտ, մեր Վիմունքը միայն այս տառասխալը չէ։

Արդ, Տուրք Ան ունին բոլոր Ա ձեռագիրները (ՄՄ 616, 1665, 1669, 1671, 1672, 1686), և Տ ձեռագիրներից երեքը (ՄՄ 248, 1663, 1668)։ Ուրեմն 18-ից կեսը՝ 9(6+3) ունի Տուրք։

¹ Գեորգ Է Էկտան, որ Հայկ համառոտութիւնը արդյալ հարով է գործածվում և անուանել անհնում է Հայկին։ Իսկ Հայկ, իբրև պոպուլյար, թե՛ նորենացու և թե՛ Անտանի մեջ գործածված է անհոգ և հարգել, և հայտնի է թե՛ Հայկոյ և թե՛ Հայկին ձեռք։

² Վենետիկի ապագրութիւնն ունի զոնգութիւն, բայց ձեռագրութիւն մեջ հայտնած է տեսող զոնգութիւն, թե՛ երեք արեւմտի անի զոնգութիւն։ Եւստ հետաքրքիր է իմանալ թե՛ որպիսի ապագրի անուանին պատկանող ձեռագիրներից մեկն ու մեկը զոնգութիւն անի՞, թե՛ ապագրութիւն Ա ձեռագրի վրա Լուգոս են զոնգութիւն բառը և շեմած զոնգութիւն։

1662, 615) գտնում ենք նույնպես S տեսակի մեջ, ուր և ըզքնկամք, ըզքն-
դամք կնն:

Այսպես S տեսակին պատկանող երեք ձեռագիրներն սկզբնագիրը բնավ
չարող չէ Տուրքի հասովածի մեջ սրբագրված լինել Ա տեսակի ձեռագրի վրա,
որովհետև շենք կարող ընդունել, որ սրբագրողն այնքան տարբերություներ-
բից միայն Տուրք բառը սրբագրեր, իսկ մնացածներն անփոփոխ թողներ:
Պատահականություն էլ լինք կարող համարել այդ, որ բառի մեջ մի տառ
ավելանար և հատկապես ւ տառը և կազմեր այդ անվան այն ձևը, որ կա Ա
ձեռագիրների մեջ: Մանավանդ, որքան տառեր բաց թողնելը սովորական է,
այնքան հազվադեպ տառ ավելացնելը:

Տուրք ձևի ծագումն այդ երեք ձեռագրի մեջ, ուրեմն, ուրիշ տեղ պետք
է որոնել:

Այդ ձևը գալիս է անշուշտ S տեսակի այն սկզբնագրից, որի մեջ թեպետ
և դեզութին տառասխալը մտած էր, բայց դեռ Տուրք ուներ: Արտագրողի
մեկն ապա այդ ւ տառը բաց է թողել, որով կազմվել է Տուրք ձևը. մինչդեռ
Տուրք ձևը S տեսակի մի ուրիշ օրինակի մեջ մնացել է անփոփոխ: Եվ այսպես
Տպագրի կամ ռեզուլթին տեսակի ձեռագիրները բաժանվել են երկու տե-
սակի, հետևյալ պատկերով.

X (ՏՈՒՐԺ, ԳԵԶՈՒԹԻՆ)			
X1	X2 (Տուրք, ղեզութին)		
X	X3 Տ ձեռագրերն		
Ա ձեռագրերն	№№ 248, 1663,	X4	
	1668		
(Տուրք, ղեզութին)		S. բուն եռուր	
	(Տուրք, ղեզութին)	(Տուրք, ղեզութին)	

Անշուշտ այս բաժանումների մեջ ուրիշ միջին աստիճաններ էլ պետք է
հասկացվին, ինչպես և Ա և S տեսակների ստորաբաժանումներ:

Թե երբ է Տուրք ձևը Տուրք ձևի փոխվել լինք կարող ասել, բայց անուշա-
ղիր պիտի լիթղնել, որ Համբրոնացու օրինակի մեջ ևս Տուրք է, այլև Ասող-
կի: Ուրեմն ավելի հին օրինակների մեջ ևս Տուրք է:

Ըօգուտ Տուրք ձևի է վկայում և այն հանգամանքը, որ հայոց մեջ կա
Տուրք անուն. օրինակ, հիշվում է Թասենտ եպիսկոպոս Տուրք: Նույնիսկ
Խորենացու պատմության մեջ (Բ, խէ) կա Տուր անունը, որից Տրուխք: Այդ
երկու անունը, Տուր և Տուրք, նույնն ենք համարում: Դա միևնույն տուր,
տուրք հասարակ անունն է՝ շնորհ(ք), պարգև(ք) իմաստով (տուրք պարգևաց,
տուրք և պարգևք, տուր և շնորհ), որ իբրև հատուկ անուն է անված, ինչպես
անոր համանիշը նույնպես՝ Պարգև և Շնորհք իբրև հատուկ անուն գործած-
ված գտնում ենք¹:

Պ. Խալաթյանը կասկածի է ենթարկում Տուրք անվան հայերեն լինելը:
Որովհետև մասդրված է ջույց տալու Տուրքի առասպելի շինծու լինելը, ուստի
և ռհակամետա է ենթադրելու, թե Խորենացին Տուրք անունը վերցրել է Եվսե-
բիոսի Քրոնիկոնի մի ըմբշի անունից, որ հունարենում՝ Մոսքոս է, իսկ հայ

¹ Халамт., Арм. запос. кр. 228. բայց չէ հիշված արքայուրը, որից վերցված է:

² Խորենացի, Գ, 2. Պարգև, Պարգևալ Ամասուռայ:

ձեռագործները մեջ, համաձայն, աղճատմամբ Տօրֆու և դարձել: Բայց այդ ձևափոխումները պ. հալաթիաներ ոչ մի բանի վրա չէ հիմնում: Նախքան այդ, նա մեզ պնդեց է ասել թե հորենացին առաջին ժամանակ ինչու՞ անպատճառ ծնվածությունը մի անուն պիտի վերցնեն և հայացնելու համար ու վերջապետությամբ դուրս ձգեն: Մի՞թե հայանունները պակասում էին նորան, և կամ ինքը կարող չէր որեւէ արմատից մի անուն չիեն: Ասանք թե հորենացին անուն չէր գտնում և անպատճառ ծնվածությունը էր կամենում վերցնել, բայց ապացուցե՞լ է պ. հալաթիաներ, որ հորենացու ձեռք տակ եղած ծնվածությունը օրինակի մեջ Մաւթան արգեն Տօրֆու և դարձած եղել: Ասանք թե այդ էլ եղել էր: Բայց այն ժամանակ ապացուցե՞լ է արդյոք պ. հալաթիաներ թե հորենացու բնագրի մեջ Տորք է եղել և ոչ Տուրք: Բայց այս ապացուցանելու մասին նա չէր էլ մտած, քանի որ նորան միայն կամբողջացու օրինակն է հայտնի եղել Տուրք ձևով, մեկ էլ Ասողկինը:

Անգեղ տուն և Անգեղայ:—Մեր է բուն առաջինը, հորենացու մեջ ոչ մի անվանումներում չկա թե նա ժողովրդական երգից կամ առաջինից առած լինի Անգեղ տան նախարարության՝ անվան ժողովման Անգեղ Տուրքից: Նա այդ վերցնում է գրավոր աղբյուրից. թեև այդ զԱնգեղ տունն ասել նույն պատմագիրը [Մար Արաս] ի Պատմամայումն է ի Հայկական թոռն է լինել (Ա, իդ.), Իսկ ապա (Բ, Բ) Տուրքի մասին թոռնիս կրկնում է նույնը թե Տուրքն էր թի դաւակն է Պատմամայ, ի Հայկական թոռնէ... որ վասն առաւել ժամանակներիս ձայն էին անգեղայ, ... հաստատել կուսակալ արեւմտից. և յերեսացն անպիտանութենէ կողէ զանուն ազգին Անգեղ տուն:

Մյուս կողմից ոչ մի անվանումներում չունենք նույնպես և այն մասին թե պատմագիրը երգից վերցրած լինի Տուրքի արտաքին տեղանքիան նկարագրի, ինչպես և այդ պատճառով հակայի Անգեղայ կողմից: Եստ համաձայն է, որ իրեն հորենացու, կամ յուր գրավոր աղբյուրի, շինած լինի այդ: Պետք է ի նկատի ունենալ, որ մեր պատմագիրը սիրով կանգ է առնում մյուս նախարարների անունների բացատրության վրա և այդ բացատրությունները, ինչպես երևում է, ինքն է տալիս: Եւ դարձրուինք գիտեմ ոչ արժանիս, այլ արժի ունիս, որք արժուիս առաջի նորա կրէին: Եթե անմիջական գիտեմ գիտի ունիս, որ առաջի թագաւորին պատրաստէր զըմպելիսն: Եւ անմիջական գիտեմ ի վերայ զնարանաց, և զհանունիսդ՝ բազմակիրս... Եւ եթէ առ զոմս ոչ ունիս, զձինսկանսդ՝ ամբարանոցաց պահակ և ձինսկանս (Բ, է): Եւ նախարարն յանուն քաղաքութեան քաղաք նորա կողմացն Աղուանք, դի ազու ձայն էին զնա (Բ, Բ):

Եթե այս բացատրությունների կարգին է պատկանում և Անգեղ բառի մեկնությունը՝ թոր վասն առաւել ժամանակներիս անգեղայ... և յերեսացն անպիտանութենէ կողէ զանուն ազգին Անգեղ տուն, այն ժամանակ

1 Պ. Ա. Գաղաղապետ, Մանասկան պատմ. հայոց, Ա, էր. 251, հորենացու քննադատության մեջ գրում է. «Անգեղ տուն ոչ թե քեզի կամ նախարարության անուն էր, այլ թարգմանաբար կուլում նահանգին կամ միայն ի զովանոց նորա: Այսպես կգտնենք զԱնգեղ տուն համար հիշված առ թյուրանդա և Ազատանդա: Դժբախտաբար կարծիք հայտնողը ներկայումս չէ կրում Ազատանդադա նշանել: Թե չէ այնպիսի կգտնենք հայոց աղբյուրի նախարարների, օգուստականների մեջ եւրոպական առաջինը Երեւանի Անգեղ տան (Ն. 461), Երեւան ինքնին Անգեղ տան (Ն. 502), իսկ ամենաանհրաժեշտ ինքնին Միանաց աշխարհին, Երեւան պարզ Երեւան է, որ, ինչպես Մյուսից, ոչ ոքիս և Անգեղ տուն, միանգամայն երկրի և ցեղի անուն է:

նակ անգնդեալ քառեր նուշիսկ կարող է մեր պատմագրի, Էթն ոչ յուր աղ-
բուրի, շինածը լինել:

Այսպես ուրեմն իբրև Անգնդ Տուրքի առասպել մնում են միայն այն
Լրկու համառոտ պատմվածքները թե Տուրքը քարեր է պատահում և թե նա
նազնրի ետևից քարեր է ձգում: Պատմագիրն այս պատմվածքները բերում է
իրևև երգ և առասպել:

Առասպելը:—Ձենք կարող ասել թե Անգնդ Տուրքի առասպելի այս երկու
հատվածը խորենացու սարքածն է և թե նա ստում է, ներկայացնելով այդ
իրևև երգ: Սուտ խոսողը մի կարիք պիտի ունենա: Իսկ մեր պատմագիրը
Տուրքի առասպելը նուշիսկ իբրև վկայություն չէ բերում Մար Աբասի պատ-
մության համար: Եվ նա կարիք էլ չունի Տուրքի ուժեղությունն ապացուցա-
նելու, ինչպես և քննվող կարիք չէ զգում այդ երկու (Բ, է, Ը) գլուխների մեջ
հիշած այլ բազմաթիվ նախարարությունների նախահայրերի այս կամ այն
հատկությունը ժողովրդական երգով կամ առասպելով հաստատելու: Խորե-
նացու մտածողության եղանակը շատ պարզ է: Սահակ Բագրատունին, ինչ-
պես առաջին գրքի հավելվածից նրանում է, առանձին ճկամք ու փափաք,
ստորափանք է ունեցել հայոց պատմության մեջ կարգալու պարսից առաս-
պելներից, որ պատմագիրը, ինչպես քիտենք, սուտ, փոռն, անյարմար բանք
է անվանում: Արդ, երբ նա մի քանի գլուխ հետո գրավոր աղբյուրից առնի-
լով խոսում է Անգնդ տան ծագման մասին, ավելացնում է անկարելիով Սա-
հակ Բագրատունու այս կամք ու փափաքին: Երայց նրե կամիս, ստեմ և հս-
յաղապս նորա անյաչ և փոռն, որպէս պարսիկք վասն Ռոստոմայ Սաղճկի
հարկու և քան փողոց ոյժ ասեն ունել: Քանզի կարի իմն անյարմար թուէին
նմա երգ քանիցն՝ վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն, որում ոչ Սամ-
սունի և ոչ Նրազնայ և ոչ Սաղճկին յարմարեն այս զրոյցքս: Եվ խորենացին
այնքան արհամարհում է այդ առասպելը, որ չէ բավականանում սուտ,
փոռն, անյաչ, անյարմարս բառերով, ուստի և ետևից ավելացնում է. «Մհ»,
կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպելս: Եվ մի րոպե նուշիսկ
կարծում է թե այդ առասպելի լավագույնությունն այն աստիճանի է, որ
անգամ Սահակ Բագրատունին,—որ այդպիսի առասպելներ սիրում էր, և ո-
րին մի հաճույք պատճառելու համար միայն բերել էր այդ առասպելը,—կա-
րող է չհավատալ: Երայց քեզ զի՞ է. քանզի էր արդարև սաստիկ հզօր, և
այսպիսեանց զրուցաց արժանիս:

Կարծում ենք, մարդիկ և ավելի ևս խորենացու նման մեկը, այնքան
անմիտ չեն, որ ընդհանրապես փոռն առասպելներն արհամարհելով հանդերձ՝
առանց կարիքի մի փոռն առասպել սարքեն իրենցից և նուշիսկ սարքելիս
այդպիսի հսկայական կերպով ծաղրեն իրենց սարքած բանը:

Պ. Խաչաթյանի (եր. 326 հտն.) առարկություններն այս առասպելի ժո-
ղովրդական լինելու մասին նշանակություն չունին բառի բուն իմաստով: Նա
յուր սովորական ձևով Տուրքի և նորա առասպելի ծագման ժամանակագրու-
թյունն է քննում, որի ինչ արժեք ունենալը քիտենք, և այս գրում է. Տուրքի
արարքներից «առաջինը, իմ կարծիքով, բոլորովին անհնար է», որովհետև
շղոհգամբք արծուիս և այլս այսպիսիս գրելը որձաքար վեմերի վրա՝ հնթա-
ղում է հսկայի մեջ որոշ աստիճանի կրթություն և զարգացում (կուլտուրա),

Քուրդական ավելորդ է վերի և հողը, որ չկա և անտեղի ձեռագրերի մեջ:

գեղարվեստների ծանոթութուն, որ բնավ հարմար չէ գալի Տորթի նման երե-
րավոր ցուցադրին (выдemonстрировать)։—Անշուշտ, այ. Խալաթյանի կարծի-
քով, մի մարդ, որ թոժոժուազեղ, բարձր, կոպտատարազ, տափաքիթ, խո-
րակեն, դժնահայաց լինի, «Բրեշավոր ցուցանք» է։ Ճաշակի դժմ վիճելիք
լուինքը, Բայց այդպիսի մարդուն մենք, Խորենացու հետ, միայն «ժաճաղէմ»
«Երեւանացն անպիտան» կամ տգեղ կանգնանքինք։ Մակայն և այնպես, ենթա-
դրենք մի բույն, որ այդ մարդը «Բրեշավոր ցուցանք» է։ Բայց ո՞վ ասաց, որ
երգի մեջ ևս այդ Տուրքն իբրեւ «Բրեշավոր ցուցանք» է ներկայանում։ Մի՞թե
ինքը այ. Խալաթյանը չէ, որ մի քանի տող վերևում գրել է. «Անգեղի մեծ ու-
ժին Խորենացին իրենից ավելացրել է և անասելի երեւակոթութուն (уродство),
Անգեղ անուր տգեղ բառով քացատրելու նպատակով»։ Բայց ենթադրենք մի
բույն և այն, որ երգի մեջ ևս Տուրքը «Երեւանացն» է նկարագրված, ինչպես
Խորենացին տալիս է մեզ, «թոժոժուազեղ, բարձր, կոպտատարազ, տափաքիթ,
խորակեն և դժնահայեաց», մի՞թե այդպիսի արտաքին ունեցող մի մարդ, որի
նմանները երբ, որտեղ և որքան ուղեք՝ կգտնեք, անքան անասուն պիտի լի-
նի այն աստիճանի, որ զաղափար լուսնեա արծիվներ և նմաններ քանդակե-
լու մասին։ Մարդ կկամա հիշում է թե ինչպես հին հույները զարմանում
էին, որ այն տգեղ Սոկրատի մեջ բնակում էր ոչ միայն մեծ փիլիսոփայի,
այլև քանդակագործի ոգի։

Անշուշտ այսքանով չէ սահմանափակում այ. Խալաթյանն յուր «Բնա-
դոտութունը»։ Երգի երկրորդ հատվածի մեջ Տուրքը «տարերբական կոպիտ
ուշ» է գործադրում, այսինքն թշնամիների նավերի ետեխց վեմեր է ձգում։
Ուրիշ խոսքով, Տուրքը մի վայրենի ու անքան է դուրս գալիս։ Բայց չէ՞ որ
այդ «Բնասում» էս առասպելի առաջին մասին (в противность первому),
որի մեջ Տուրքը այնքա՛ն զարգացած մեծ «գեղարվեստագետ» քանդակագործ
է, որ վեմերի վրա եղունգներով արծիվների պատկեր է քաշում։ Ուրիշ խոս-
քով, նույնն է անում, ինչ որ Նախապատմական ժամանակի մարդիկ էլ աս-
րել են, իրենց քնակած քարայրերի պատերի վրա թռչունների պատկեր հա-
նելով։ Եթե այ. Խալաթյանն առաջուց միտքը դրած լինեիր հերքելու ամեն ինչ,
որ Խորենացու մեջ քերած է իբրև ժողովրդական բանահյուսութուն, նա
կտեսներ՝ այստեղ ոչ մի հակասութուն չկա։ Այլ ընդհակառակն, Տուրքը եր-
կու դեպքում էլ պահում է յուր բնավորութունը, — մի վիթխարի քարակոփ, որ
կարողանում է «բուռն հարկանել զորձաքար վիմաց, ուր ոչ զուր գեղութիւն, և
ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և քերել ըզննգամբ և կապել որպէս տախ-
տակ», նա անշուշտ և յուր թշնամիների ետեխց՝ պիտի զառնու մէջս քրտան
և ձգէ զկնիւն։ Ուրեմն որտե՞ղ է հակասութունը։

Բայց ենթադրենք մի բույն, որ հակասութուն նա։ Այն ժամանակ հարց
է. արդյոք ժողովրդական առասպելի կամ երգի այս կամ այն հատվածների
ու միջադեպերի հակասութուններով կարելի՞ է հերքել առասպելի կամ երգի
գոյութիւնը։ Այդ կնշանակե՞ր ոչ մի հակասողութուն չունենալ ժողովրդական
բանահյուսության մասին, որի մեջ հաճախ միևնույն անձնավորութիւնը
կապվում են, որոշ շերտավորումներով, զանազան պատմական շրջանների
ու զաղափարների, զանազան բնավորութիւն գծեր։ Համեմատե՛ք օրինակներ
մեր առջի կնիդանի Սասնու ծռերից։

Ինչպիսի հակա են մեր Դավիթն ու Մհերը։ Ո՞րքան պինդ ու պողպատյա
է մասուկ Դավիթի մարմինը, որի «նոն բութ քիւտով ի բաղդու քաւ՝ կրակ կտլ

մտեան՝ կամ «ըրդունգ աստվ ճարին ու կրակ տվեցա՝ Մի՞թե դա միևնույն Տուրքի ձեռն ու հղումդի պնդութունը չէ՞»։ Բակ նորա ուլժը, Այդ մանուկ Գալիթը՝ ժենե էթալ, գլուռ շնմքով սարքարով թռավ էկալի։ Ժենե էթալ մեկ սպնդրի (բարդի) ծառ կոռեց զծեր Ժպի գետինն, կամ ժենե ետու զհոյ դարձ-յուցից, իրեք խարիթի ձիավոր փերիզ փահլեան սպանիցա։ Նա երկաթի սուրբ հագած, բարդի ծառն ուսին՝ սինչ վոստ կըզարկեր գետին, գետին ՚ըրզնդերո՝ նորա ձայնից փախչում են գալլեր, արբեր, վաղըներ, որոնց բոլորին ժողովում է տղա հսկան և բերում Սասուն։ Նա մի կոպալով դներ է կոտորում, այն դները, որոնց ուսում են զքանց Պող իսկա, և որոնց դիակներեց նույնիսկ բարդի ծառն արմատահան անող և իրեկ զենց զործածող Ձենով Հովանը փախչում է։ Ահա՛ ձեզ դեռ երեխա Գալիթը, Բաղնուրայունն ու վիթխարա-բյունն եք ուզում,— երբ նա յուր հոր Սանասարի հագուստը հագին Քուտիկի Հալայինի վրա է նստում, նման է սուր, որ էլիք ու սարի վրաս։

Բակ Մհերը, այդ դների ընկերը, որ երբ ման է գալի, խոնքը թաղվում են գետնի մեջ, և որի ձեռներն տեղը մնում է, երբ Բալին է գաղնում,— մի՞թե այդ Մհերը մեր Տուրքին ցնդակից չէ՞։ Նա գալիս է Ջգիրու քաղաք, ուր սկըլինի որ խարիթ քառսուն գետ իրարու կը խառնվի, կըլինի մեկ գետ, (Ջգիրու Եատ, Տիգրիս)։ Ժեկալ էնտեխ, մեկ մեծ անագին Բալ էրի, կցից քաղաքի քյամակ, գիտու մեջ. գետ էլավ Երկու ճյուղ, մեկ ճյուղ էն յաննե կիլա, մեկ էս. էլ քաղաք յի ավրի։ Բեջա քաղուն էլ վյառ էն Բյալին շի-նից... իսկի ավրի շկա էն բերդինն՝

Ահա Տուրքն ամբողջապես, պողպատյա մարմնով, վիթխարի հասակով և ուժով և սրտյա, որ մատով որձաքարից կրակ է հանում, ձեռներով ճարերը փոս է ձգում, և վերցնում է կարծածից ավելի մեծ ժայռ։ Մի՞թե այդ Գալիթն ու Մհերը, այդ լեռնանման վիթխարիքը, որոնք նույնպես բնության բիրտ ուժերի հետ զործ ունին, այդ ուժերն իբրև զենց զործադրում են և նույնիսկ, ինչպես Մհերը, բնության բիրտ ուժերի անձնավորումն են,— մի՞թե անբան անասուն են գոթա, և սկուտուռայլի որոշ աստիճանի՞ն և նույնիսկ բարձր աս-տիճանի վրա լին կանգնած։ Ո՞րքան մտավոր ու բարոյական մեծություն ա-տես, որ նոքա շունին։ Ձանձրալի լլինելու համար՝ հիշենք, որ նոքա կարգալ գիտեն, այն էլ տերտերի կամ վարդապետի մոտ են դաս առնում։ Նամակ են գրում, ստանում, բերդ ու վանք, եկեղեցի են շինում. թաշկինակ զործել տա-լիս և ուզածը վրան նախշել տալիս, մինչև անգամ ժոյսրբինք թանեցնում էին։

Լեռնանման կամ ըստ խորենացու, հարյուր քսան փղի ուլժ ունեցող Ռոստամի առաջ նույնպես ոչ միայն գետինը, այլև քարը դիմանալ չէ կարո-ղանում։

Եթե նա վեր ելեր մի քարի վրա ու կանգներ,
Սաւրթյունից նրկու ութը քարի մէջը կըխրվէր
Ուզա Ռոստամն, որ հենց ժայռին նն էր նզով և բռնում,
Ուժամբար տեղում տեղից պոկում կովի որբում,
Ի՞նչ անգին կայմալն առք տեղից էր բռնում,
Մտեւ, ամբար Բալը մեծ էր նա համարում յուր բռնով։

¹ Մովսէսյան, Գրք-քոթ, հր. 151։

² Գալիթն ու Հովնիկյան, Մասմա ծոռ, հր. 28։

³ Մասմա ծոռ, հր. 146։

⁴ Ֆրեդոնի, Ռոստամ և Սահար, Թարգմ. Գալաթյանի, հր. 113, 125։

Ի՞նչ է այս նշարագիրը, եթե ոչ մեր Տուրքիներ։ Բայց այդ նույն Ռուստամն է, որ անբան անասուն չէ և ներկայանում է, պարսից ժողովրդի ազանդությամբ, իբրև Պարսկաստանի ժայռերի վրա Հին քանդակների արարիչ։ Ի՞նչ հայտնի չեն այդ քանդակները Նախդի Ռուստամ անունով, Եվ միթե մի ուրիշ հսկա, տիտան Պրոմեթեոս չէ՞, որ մտցնում է մարդկանց մեջ ուսում, գիտություն, արվեստ և ինչ որ պիտանի է «գեղեցիկ ու երջանիկ կյանքի համար»։

Բայց մենք օրինակներն ավելորդ ենք բազմապատկում։ Եթե այդ ամենը կարող է անել—և շատ բնականաբար—մի Ռուստամ, ինչո՞ւ մի ուրիշ Ռուստամ, միայն Անգեղ Տուրք անունով, կարող չէ անել։

Տուրքի առասպելի երկրորդ մասի—Քշնամիների Նավերի ետևից քարնը ձգելու նմանությունը Հոմերոսի Ոդիսականի կնկրուպ Պոլիփեմի արարքին՝ արդեն վաղուց ցույց է տվել էմինը։ Բայց այդ սալից զարնող նմանությունը, որ էմինը պատահականա է համարել, պ. Խալաթյանը կարծում է՝ Խորենացին ինքն է առաջակի վերցրել որն է հունական հայտնի ժողովածուից (Χορηνάκις εβερνιάκ)։ Իսկ ապացույցը—միայն նման լինելն է։ Մի երկու տասնյակ տարի առաջ գուցե կարելի էր այդպես ասել. բայց այժմ, երբ արդեն հայտնի է թե ի՞նչպես ամբողջ ժողովրդական երգեր, վիպական մեծ ուսանավորներ, որոնք երբեք գրված չեն եղել, մի ազգից մյուսին, մի լեզվից մյուսին են անցում՝ ժողովրդի բերանին գրեթե բառացի ուսանավորով թարգմանվելով. միթե կարելի չէ՞ ասել, որ Ոդիսականից մի քանի տող, առանց զրավոր աղբյուրի, հույներից իրենց զրացի հայերին անցած լինեք։ Եվ ինչո՞ւ անպատշաճ հույներից։ Որովհետև արդյուք Պոլիփեմի այդ հատվածը քնիչ հունական է։ ԶԷ՝ Ոդիսականը բազմազան ազգերի առասպելների մի ժողովածու է։ Եվ վերջապես այդ սալից ընկնող նմանությունը շատ էլ տարբերություններ ունի վիպական մանրամասների մեջ, այնպես որ միայն ընդհանուրի մեջ է մնում նմանությունը։ Եվ պ. Խալաթյանը զգում է այդ ուստի և մի այսպիսի անվնաս բան է ավելացնում. «Թե մենք այստեղ զբոսորդի (ΚΗΝΑΚΗΝ) ազգացության հետ գործ ունինք, այդ երևում է դարձյալ (առաջինը ո՞րն է) Նորանից, որ Տուրքի առասպելից առաջ եղած հատվածն ամբողջապես վերցրած է Եվսեբիոսից։ Որ նախորդ հատվածը Եվսեբիոսից է վերցրած, ուրեմն հաջորդն էլ մի գրքի՞ց, Հոմերոսի՞ց պիտի վերցրած լինի։

Անգեղ ասում։ —Այսպես, Անգեղ Տուրքի առասպելը մնում է իբրև առասպել։ Տուրքի նման հսկաներ շատ ազգերի առասպելներին մեջ կան և նույնիսկ մեր արդի առասպելների մեջ։ Բայց որովհետև խորենացին շատ քիչ բան է հաղորդում, ուստի մենք չենք կարող, առայժմ գտնել, այդ հսկային ուրիշ ազգերի հերոսների հետ համեմատել։ Արդեն վերևում տեսանք նման խիստ նման զմեք մեր Տուրքի ու պարսից Ռուստամի մեջ։ Բայց այդ բավական չէ Անգեղ Տուրքի բնությունը ճիշտ որոշելու համար։

Պ. Գարագաշյան՝ գրում է. «Անգեղ թվի լինել Հին հայ դուռնազին կամ աստվածություն անուն։ Մեր նախնիք սովոր էին Հայոց աստվածներուն անվամբ կոչել, ըստ հարմարության, օտարազգի դիս. գործրինակ. զՈրիոն՝ Հայկ, զՀերակլես՝ Վահագն... այսպես Անգեղ կթարգմանեն Հին Թուրքանց և Սեմականաց ներկա կամ էրկել (Հերակլ, Հերքույ) աստվածը, որ Նհիշվի

ի Զորքորդ գիրս թագավորաց (ԺԷ, 30)։ Եվ ապա ավելացնում է նա, «Հա-
վանական է, թե ինչպես Քուչյանց և Սեմականաց ներկայը կամ էրկելն՝ նույն-
պես Հայոց Անգեղն պատերազմի սոսկումն էր, անձնավորյալ այլաբանորեն
ի նույն անունի, կաշմարտն և ավերիչ»։

Այս ինքնադուրբութենքը, սակայն, շատ կասկածելի են, մանավանդ մեր
Հակալի ժանճոռնիությանը, քանի որ նույնիսկ ինքը Եվ. Գարազաշյան ան-
միջապես հարում է. «Երբեք անցին Անգեղի ահագին ուժովն վրա կհավելու,
նաև սոսկալի տգեղություն, որպեսզի Անգեղ անունը մեկնե տգեղ նշանակու-
թյամբ, որ անսովոր (?) է ի մերում լեզվին»։ Ուրեմն ո՞րտեղից գիտեմ, որ
Անգեղն ժանճոռնիս է։ Սեմական աղգերի ներգալը նույնպես տգեղ և անճոռ-
նի չէ։ Նա արեգական բոցակեղ շնրության, ալրոդ ու կորստաբեր տապի
աստվածն է, որ «Հրեղեն սուրը ձեռին, սարսափելի փայլը հազած, խողխո-
ղում և ավերում է»։ Իբրև պատերազմի աստված, հաղթություն է տալի և
թշնամիների երկիրը քանդում։ Բայց նա միանգամայն ավելի ևս մեռելների
աշխարհի վրա իշխողն է։ Նորա Քուրթ քաղաքը հատկապես մեռելների քաղաք
է։ Իբրև սանդարամետի աստված նա նույնպես պտղաբերություն է տալի¹։

Մեր Անգեղ Տուրքի առասպելի մեջ ներգալի բնության այս գծերը շեշտ
տեսնում, բացի ուժից և թշնամիների դեմ կռվելու մի գծալից։ Իսկ Աստվա-
ծաշնչի թարգմանությամբ միայն՝ Անգեղ—Ներգալ՝ դեռ շեշտ կարող, հարկաժ,
մեր աստուծուն կամ դյուցազնին նույն բնությանը վերագրել, ինչ որ ունի
Ներգալը։

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ք

«Վիպասանքն մեջ մեծք երկու կողմն ենք գտնում՝ 1. պատմական,
միացած կենցաղակերպի հետ, 2. բուն առասպելական մաս։ Այս երկու մասն
իրար միացած, իսկապես կցված են։ Նախ տեսնենք առաջին մասը։

1

Պատմական-կենցաղական

Երվանդ։ — Ինչպես տեսանք, Արտաշեսի ու Սաթենիկի, Արգաշանի և
Արտավազդի մասին եղած առասպելներն են կրում նաև վիպասանք անունը։

Պատմադիրը Երվանդի մասին և ապա նորա և Արտաշեսի կերպը (Բ, 16—
17) պատմելուց հետո՝ հիշում է լուր աղբյուրը. «Եւ զայս մեզ ստուգապէս
պատմէ Ուլիսայ քուրմ Հանույ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ
բազում գործի՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում եւ պարսից մատենանքն
վկայեն և Հայոց երգն վիպասանաց» (Բ, 17)։ Ուրեմն նա Երվանդի և Արտա-

¹ Lehrbuch der Religionsgeschichte, herausgeg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig, 1897, 4p. 780.

շնտի պատմութիւնը մինչև ԽԸ գլուխն առնում է գրավոր աղբյուրից, որի ինչ և ինչպիսի լինելը մեզ այստեղ չէ հետաքրքրում: Հայից վիպասանը միայն իբրև վկայութիւն են կաշկում այդ պատմութիւնն համար:

Ի նկատի ունենալով՝ որ պատմագիրը գրավոր աղբյուրից է օգտւում, և այն հանգամանքը, որ նա առասպելից օգտվելիս իբր ճշմարտելովն փոփոխում է առասպելը և իրենից ու յուր լեզվով մի նոր բան է պատմում,—դժվար է ասել թե ինչ է հղել Երվանդի առասպելը յուր մանրամասնութիւններով: Երվանդի պատմութիւնն էական մասը վիպական պիտի լինի, միայն Խորենացու լեզվով պատմված: Կամ ճիշտ ասած, վկայութիւն կոչված վիպասանքի բովանդակութիւնը, ըստ Խորենացու, նույն պիտի լիներ, ինչ որ նա բերում է իբրև Երվանդի պատմութիւն: Հավաստի ժողովրդական է, անշուշտ, Երվանդի յար այլի մասին առասպելը (հմտ. գլ. 9), որ շատ տարածված մի ժողովրդական հավատալիք է հին և նոր ազգերի մեջ: Մեր ժողովրդը ցայսօր ևս հավատում է, որ շար ալթը ճշարին էլ որ տա, կըրտացի: Գուցե բովանդակութիւնը քննելով հնար լինի մի քանի ժողովրդական վիպական գծեր ևս հանել այդ պատմութիւնից, բայց այդ երկրորդական համարելով՝ քսելում ենք: Խորենացին մեզ միշտ լի տալիս ճանաչելու բուն առասպելը հերյուրած պատմութիւնից:

Բարեբախտաբար այդպես չէ վարվում նա առասպելի երկրորդ մասի վերաբերմամբ: Այստեղ երկու անգամ նա բերում է առասպելի բովանդակութիւնը (Ա. Բ. խթ.), ուստի և մենք հնար ունինք բուն առասպելը որոշելու և հասկանալու:

Պատմականը վիպասանի վնջ: —Վիպասանի կամ Խորենացու Արտաշեսի պատմութիւնն էութիւնը պատմական է: Անոր մեջ պահված է պատմական անցքերի հիշողութիւն, որ ուրիշներն արգեն մասամբ համեմատել են պատմութիւնն հետ:

Վրաց Փարսման՝ թագավորի որդին Հրազամիդը [ըստ Խորենացու՝ Երվանդ], սպանում է հայոց Միհրդատ թագավորին [ըստ Խորենացու՝ Սանատրուկ] կանանցով և որդիներով հանդերձ և յուր հոր օգնութիւնը թագավորում է Հայաստանում (45—52 թ.), ծառայելով Հռոմի շահերին, նա բռնանում է հայոց վրա և ատելի դառնում ժողովրդին: Բայց այդ ժամանակները պարթևաց Վաղարշ Ա թագավորը հարձար է համարում Հայաստանը նվաճել: Յուր կրտսեր եղբոր՝ Տրդատին [ըստ Խորենացու՝ Արտաշես] պարթևական զորքով ուղարկում է Հայաստան թագավորելու (51 թ.): Հայերն ատելով Հրազամիդին՝ անցնում են պարթևաց կողմը: Հրազամիդը փախում է, և Տրդատ բնակութիւն է հաստատում Արտաշատում: Փոփոխութիւնը հռոմայեցոց հաճութիւնը չէր եղել. ուստի նոցա ուղարկում են Գոմեաթոս կարգապահին, որ արշավելով Հայաստան առնում է Արտաշատն և արում (58 թ.): Բայց վերջը պարթևները հաղթող են հանդիսանում, և Տրդատ մնում է Հայոց թագավոր, միայն գնալով Հռոմ՝ ներոնից թագավոր է պօսկվում փա-

¹ Հմտ. Մոմ. „Визит. греч.“, էր. 363.

² Տ. Խավատդան, Հայ. ժող. հեթեթներ, է, էր. 28: Հմտ. M. Abeghian, Des arménie Volaplaube, էր. 122 և 123.

³ Ըստ Խորենացու՝ վրացի սգնում են Երվանդին (Բ. խթ.). և Փարսման թագավորն անձամբ գլուխ է կտնելու Արտաշեսի դիմ. սեւ զորքն վրաց, հանգերս արքային խրեանց Փարսմանու, թէպէտ և յանդուզ յարձակմամբ յառաջելու բախէին, արագազէտ դանային ի միտ կողմն փոխադնուլ (Բ. խթ.).

ռազմոր հանդիսով, որով և ճանաչում է Հռոմայեցոց զերիշխանութիւնը (66 թ.): Տրդատ, որից սկսվում է Արշակունի հարստութիւնը Հայաստանում, նորոգում է, իսկապէս նորից շինում է Արտաշատ մայրաքաղաքը Հռոմից բերած արժէստագէտների ձեռքով: Նորա օրով աւաններն արշավում, ասպատակում են Մարաստան և ապա անցնում են Հայաստան: Հայոց թագավորը նոցա դեմ է դուրս գալիս կռիվով՝ «և փոքր մի ևս՝ և անկաներ ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկեց պարան ի պարանոց նորա, և քարշէր զնա՝ եթէ չէր նորա աճապարեալ հատանել զայն սրով: Աւաններն ավերելով աշխարհը՝ քաշվում են իրենց երկիրը:

Պ. Գարազայանը՝ Տրդատի այս պատմութիւնն ընդարձակորեն մնջ բերելուց հետո նկատում է. «Թե Արտաշեսն Բ խորենացելուց նույն է ընդ Տրդատա Տակիտոսի, Հովսեփոսի, Սուետոնի և այլոց ժամանակակից պատմագրաց՝ անտի ևս հայտնի է, զի բազում ինչ զոր սոքա կը պատմեն այս Տրդատա վրա՝ ի վիպասանաց մէրոց կրնժայլի Արտաշեսի: Եվ իսկապէս, խորենացու պատմութիւնը, — մեկդի դրած անունների տարբերութիւնն՝ ու դեպքերի շփոթութիւնը, — նույն է ինչ որ Հրադամիզդի և Տրդատ Ա-ի պատմութիւնը: Առասպելի մեջ, օրինակ, երգվել է թե Հռոմայեցոց կողմից Դոմետո ոմն եկել է կռիվու Արտաշեսի դեմ (Բ, 34): Դա անշուշտ Տրդատի դեմ կռիվը Դոմետոսի դուռնու կորուստն է, որ խորենացին սխալվելով մեկնում է Դոմետոսանոս կայսրը (հմմտ. գլ. Գ): Այսպէս և առասպելի մեջ Արտաշատ քաղաքը շինելը և աւանների դեմ կռիվը հիշեցնում են Տրդատ Ա-ին: Մենք մանրամասն համեմատութիւն անել չենք ուզում, զի մեր նպատակը չէ Նրմանդի և Արտաշեսի ամբողջ պատմութիւնը հանել և համեմատել Հրադամիզդի և Տրդատի պատմութիւն հետ: Այդ կարեւոր կլինէր, եթէ խորենացին միայն վիպասանքից օգտված լինէր. բայց նա գրավոր աղբյուրներէջ էլ օգտվելով՝ հերքութիւն է ամբողջ պատմութիւնը: Մենք այն ենք առնում միայն, ինչ որ պատմագիրն առասպելից վերցրած է հիշում:

Աւանների արշավանքը: — խորենացին (Բ, 35) պատմում է Մեծն Տրդատի մի կռիվը հյուսիսականների դեմ, երբ Բասւլաց թագավորը սգներդեալ քեմ-խըտապատ պարանն ագում, բռնում է հայոց թագավորին և ուզում է քարշել նորան. բայց հայոց թագավորը սրով կտրում է պարանը և սպանում Բասւլաց թագավորին: Այս դեպքը նման է Հովսեփոսի պատմածին հայոց Տրդատ Ա թագավորի մասին:

Պ. Խալաթյանը՝ կարծում է թե պատմագիրը Մեծն Տրդատի կռիվը բասիլոսների դեմ ամբողջապէս Հովսեփոսից է առնում և վերագրում յուր Տրդատին: Իսկ լեռնապետի Տրդատի տեղ նա հանում է Արտաշես թագավորին և աւանների դեմ պատերազմի պատմութիւնը մինչև անճանաչելիութիւն աստիճան կերպարանափոխում է: Ուրիշ խոսքով, խորենացին Հովսեփոսի նույն պատմութիւնից երկու անգամ է օգտվել: Մեկ տալով պատմութիւնն ամբողջապէս, նույնիսկ հայոց թագավորի անունը պահելով, Ա դարից Գ դար է փոխադրում և այսպիսով ներդնի և Վեսպասիանոսի ժամանակակից Տրդատին (Ա) նույնացնում է Դիոկղետիանոսի և Կոստանդինի դաշնակից Մեծն Տրդատի (Գ) հետ: Մեկ էլ՝ Հովսեփոսի նույն պատմութիւնից ասանճանաչելի կերպով

¹ «Մեծական պատմ.», Բ, էր. 243:

² „Арм. ист.“, էր. 244 հաւ.

սարքում է Արտաշեսի Դպիվն ալաններին դնմ. բայց այդ ժամանակ Վնտկով, ակնարկություն էլ չէ անում, թե Հովսեփոսի մեջ մի այդպիսի պատմություն կա. այլ, բնորոշապես, որպեսզի Հովսեփոսին շնակաւոր և յուր փոխառության հետեւն ավելի լավ կօրցնի, հետոյ վնակն է վկայության բերում:

Եթե այդպէս լիներ, այն ժամանակ անհասկանալի է մնում. նախ՝ թե ինչո՞ւ պետք է պատմագիրն օգտուի Հովսեփոսից և նույնիսկ աշխատել որոշակաւ նորա, բայց նորա անունը չտալ, միւր պատմության մեջ խորհնացին հինգ անգամ (Ա, դ. Բ, Ժ, ԺԵ, ԻԳ, ԼԵ) հիշում է Հովսեփոսին, իբրեւ աղբյուր և վկայություն մեջ բերելով: Եվ երևակայեցք, Հովսեփոսին այսպէս վստաւանիլ պատմագիր համարելով հանդերձ, այստեղ նորանից օգտուում է, բայց նորա անունը տալու տեղ՝ հայոց առասպելներն է հիշում իբրեւ աղբյուր, — այն առասպելները, որ, ինչպէս գիտենք, մեր պատմագիրն այնքան ցած է գնահատում: Այս մենք չենք հասկանում: Ոչ մի խնդր գլխին մարդ այս շին անիլ, Իսկ խորհնացին, նորա ամենախիստ քննադատի կարծիքով անգամ, անմիտ չէ հարկով, այլ շարունակ մի կողմից, շարունակ, կշռելով ու մտածելով և նույնիսկ ճարտարութեամբ կեղծող է, և մյուս կողմից նույնիսկ կեղծ աղբյուրներ է ստեղծում և կամ յուր աղբյուրների ամենափոքր ակնարկություններին և շատ քան բաներից (недомовки) բռնում է, մի հայոց պատմություն շինելու համար, Իսկ այստե՞ղ — այստեղ նա հիմարանում է. յուր վստահելի համարած աղբյուրից՝ Հովսեփոսից օգտուում է, բայց, ճիշդ, կեղծելու եռանդից մղված՝ սարքում է մի անվստահելի (իրեն խորհնացու կարծիքով) աղբյուր-առասպել:

Եթե նույնիսկ Մեծն Տրդատի մասին պատմված բանիների դնմ կոխվէ՝ յուր պարանի անցքով՝ նույն լինի, ինչ որ Տրդատ Ա-ի կոխվն է ալանների դնմ, դարձյալ չենք կարող ասել, թե խորհնացին այդ պատմությունն անպատճառ Հովսեփոսից է առել զիտակցութեն Ա դարից Դ դար փելադրել: Այդպիսի բան երևակայել չենք կարող: Պետք չէ մոռանալ, որ այդ երկու պատմությունները նմանութեամբ հանդերձ, շատ մեծ տարբերութեաններ էլ ունին: Մենք այդ մասին կանգ առնել չենք ուզում: Միայն նկատենք, որ ինչո՞ւ անպատճառ միայն Հովսեփոսի մեջ պիտի լինել մի այդպիսի պատմություն: Միթե չէ՞ին Կարող ուրիշներն ևս նույն դեպքը, թեկուզ առանց որոշ ժամանակագրության, պատմած լինել հայոց որնէ՞ Տրդատ Թաղավորի մասին: Եվ արդեօք խորհնացին ուրիշներից առնելով չէ վերագրում այդ պատմությունն յուր Տրդատին, քանի որ նա երկու Տրդատ չգիտեն, այլ միայն մի Տրդատ: Քի՞չ է պատահում, այն էլ հին ժամանակներում, որ մի դեպք այս ձևով մեկից անցնում է յուր անվանակցին: Ինչպէս էլ լինի, մեզ համար այստեղ, քանի որ վիպասանքի մասին է խնդիրը, կարևորն այս չէ, այլ այն թե արդեօք խորհնացին Արտաշեսի կոխվն ալանների դնմ Հովսեփոսից է վերցրել:

Եթե խորհնացին Հովսեփոսի ալանների արշավանքի պատմությունից օգտված լինել, ապա դարձյալ անհասկանալի է մնում, թե այն ժամանակ երբ ինչո՞ւ պետք է յուր Թաղավորի անունը դնել Արտաշես և ոչ թե Տրդատ, քանի որ՝ Արտաշեսի տեղ, ըստ Հովսեփոսի, Տրդատն էր այդ դարում Թաղավորում և ալանների դնմ կոխում: խորհնացու պատմությունը ոչ միայն յուր արժեքը ունեւով չէր կորցնիլ, եթե շինեցում Արտաշես անվան տեղ Տրդատ լինել, այլն շատ կշահւեր: Զէ՞ որ պ. Խալաթյանը հաստատել է ուզում, որ խորհնացին Արտաշեսի և Սաթենիկի վնպը սարքելու ժամանակ վերցրել է, ինչպէս վնպն ամբողջ, այսպէս և Արտաշես և Սաթենիկ անունները, Սաթենիկի գրքից՝ Պար-

սից Արտաշէս թագաւորի և Ասթինէ թագուհու անուններին¹։ Ուստի Տրդատ անունը պահելը շատ անհրաժեշտ էր նորան, թեկուզ յուր «կեղծիքը» ծածկելու համար։ Բայց երեակայեցեք, նույն հորինացին, որ հենց այդ պատմութիւնը դրելիս այնքան ճարպիկ է, որ յուր փոխառութիւններին հետքը կորցնել է շանում, և ժանճանաշնչութիւնը այստիճան անանց կարիքի փոփոխում է փոխ առած պատմութիւնը, նույն թղպին այնքան անշնորհք է դտնվում, որ Արտաշէս և Սաթենիկ անուններն էլ փոխել չէ կարողանում, որպեսզի շերտաթն ծաթերի գործից է յուր վնայը ծարրքել²։ Եվ ոչ միայն այդքան։ Նա Հովսեփոսից մի պատմութիւն է առնում և աշխատում է շէշկասել³։ Հովսեփոսին, քայց և այնպէս Հովսեփոսի Տրդատ անունը չէ պահում, այլ մի շշինծու անուն—Արտաշէս է մեջ բերում։

Բնական խելքն ասում է, որ ի՞նչ մարդ ապուշ չէ, և մի վստահելի աղբյուրից մի պատմութիւն քաղում է մի թագաւորի մասին և աշխատում է շէշկասել⁴։ յուր աղբյուրին, էլ կարիք չունի իրենից մի շինծու անուն մեջ բերելու, այն էլ այնպիսի անուն, որ մատնում է յուր մի «կեղծիքը»։ Նա այդ թագաւորի անունն «իրենից» էլ Արտաշէս չի դնել, այլ եղածը՝ Տրդատ կպահէ և աշաններին դիմ կդիմն էլ չի տանիլ Գ դար։

Բայց կա՞րողոք այնքան նմանութիւն Հովսեփոսի և հորինացու պատմութեան մեջ. որ նարողանանք համատի ապել թե հորինացին Հովսեփոսից է առած՝ Արտաշէսի կոնվն աշաններին դիմ։ Պ. Խալաթիանն ժանճանաշնչութիւն աստիճանին, հարկաւ դիտմամբ, փոխված է համարում հորինացու պատմութեք, քայց և այնպէս, նա այդ ժանճանաշնչին ճանաչում է, իսկ մենք այդ բնավ չենք դտնում։ Տեսնենք կետ առ կետ և հետը միանգամայն քացատրենք մեր հայացքը վիպասանքի այս մասի վրա։

Ոսկէօղ, շիկափոկ պարտեր։— Ամենից առաջ տեսնենք պարանի պատմութիւնը, որի վրա հատկապէս կանգ է առնում պ. Խալաթիանը։ Երկուսի, հորինացու և Հովսեփոսի մեջ էլ «փոքր նշանակութիւն չունի պարտերը»։ Եւ մեջ առանձնապէս կասկած է հարուցանում Հովսեփոսի պատմութեք, որի մեջ... պարտը նույն դերն է կատարում, ինչ որ Արտաշէսի մասին միջադեպի մեջ։ Ուստի, ըստ իս, հազիվ թե նշանակածի է, որ այս մտիվը հորինացին է առել [Հովսեփոսից], և ոչ թե վնայը⁵։

Թե ժողովրդական վիպասանք Հովսեփոսից օգտվել չէին կարող՝ այդ մասին խոսք անգամ չի ել չի կարող։ Բայց թե պարանի գործածութիւնը կարող էր առանց Հովսեփոսի էլ ծանոթ լինել հայերին և ծանոթ էլ էր,—մի՞թե կարելի է հերքել այդ։ Պարանի գործածութիւնը մի նոր բան չէ։ Պարանը մարտիկ ցեղերի մեջ միշտ ծառայել է կենդանի որս—գազաններ և մարդիկ բռնելու համար։ Դեռ Հերոդոտ (VIII, 85) հիշում է պարանի իբրեւ իրանացոց զենք⁶։ Բայց ինչու ենք հետո գտնում։ Մի՞թե Հովսեփոսի պատմութիւնից հենց չենք տեսնում, որ Ա դարում հայոց հետ կովոդ աշանները պարանի իբրեւ զենք գործ են ածում հայոց թագաւոր պարթե Տրդատի դիմ։ Ուրեմն հայերը պարան չէին տեսել, անծանոթ էին այդ զենքին։

Մի անգամ որ պարանը հայերին ծանոթ էր, կարող էր անշուշտ և հա-

¹ Խալաթ. Արմ. ՅՈՍ, հր. 267, ա, ց, և հր. 269 հւււ.

² Սաթենիկ անվան մասին տե՛ս Ման. ԲՈՅ. Եր. 285 հւււ.

³ Խալաթ. Արմ. ՅՈՍ, հր. 268 հւււ.

⁴ Ման. «Византий. время», հր. 264.

յոց վիպասանքի մեջ մտնել, ինչպես և Շահնամայի մեջ սիրելի զոնք է պարան: Եվ մի՞թե այժմ էլ մեր «Սասնու ծռերի» մեջ ևս չենք տեսնում պարան, որ մեր դարու զոնք չէ հարկավ, այլ ետրենացու ժամանակից և գուցե ավելի հին ժամանակից է գալի: Ոստանա իշխանը զկապ էթալ, զՄհեր նկայից: Մհեր ձիով ինկավ կապա՞:

Սակայն ի՞նչ է պատմվում մեր վիպասանքի և Հովսեփոսի մեջ պարանի մասին, և ի՞նչ նմանություն կա այդ երկուսի մեջ: Եվ ոչ մի նմանություն: Հովսեփոսի մեջ ալանները պատերազմի ժամանակ ուղում են բռնել հայոց թագավորին. սա կտրում է պարանն և ազատվում: Իսկ հայոց վիպասանքի մեջ հայոց Արտաշես թագավորը ձին նստած անցնում է գետը և զգեստ դասկեզ շրկափոկ պարանն ընկնց ի մէջ օրիորդին ալանաց, և շատ ցաւեցուց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի քանակն իւր: Եւ

Արտաշես թագավորը պտուհով բռնում փախցնում է յուր մարտնչու աղբիւն:

Թե նախնական ազգերի մեջ կանայք որսի տաարկա են եղել և հատկապես արքայանքներ են գործվել բռնի կերպով կին ձեռք բերելու համար այդ հանրածանոթ է: Դա հնագուր հնության վայրենի կենցաղական գծերից մեկն է, որի հետքերը մինչև այժմ դեռ երևում են ոչ միայն մեր հարստեայց և ուրիշ երգերի մեջ, այլև մեր կյանքի մեջ: Աղբիւր անանդելու սովորութեանը դեռ չէ վերացած մեզնում: Ուստի և շատ քննական է մեր շարքողի երդի՝ մեջ կարդալ տղայի կողմից աղքատ ասած, զմերինս էնեմ վրադ կիզամ էլ-ղարով՝: Այսպես և դեռ լսում ենք.

Փնտն կուգա աւարով պովով (գորով),

Մարզը շատ է՝ կանեն գոռով:

Կամ հարս տանելու ժամանակ.

Աղբոր շուշեն կտորեցին,

Քրք վալեն պատռեցին՝:

Հարսի հափշտակութիւնը կամ անանդելու, հայտնի է, դուրս է գալի շատ ազգերի վնասի մեջ՝ սկսած Հոմերոսից մինչև ռուսաց վնաս և քրդական երգերու Ռուսաց Վլադիմիրը յուր գլուցազն Դունային ուղարկելով հարս բերելու, տալիս է նորան զինվորներ և շատ ոսկի և ասում է. «Գնա այն քաղ լիթովացոց աշխարհը և քարի խոսքով աղբիկ ուղիր. բայց ըն որ խաբով չտան, կանգնիր գորով առ»:

Ոսկին գլխովն (выкуп, բաշլըդ) համար է. գրում է այս առթիվ Միլլերը, իսկ գորքը աղբիկը կովով առնելու համար: Ըմբ հայտնի չեն, ավելացնում է նա, հնագույն ժամանակների աղբիկ ուղելու այս երկու եղանակը: Թեպետև գլխագինը մի սոթքր ավելի ուշ է երևան եկել, բայց երկու եղանակն էլ երկար ժամանակ շարունակ միասին գորութիւն են ունեցել, և ինչպե՞ս ռուսաց վնասից երևում է, գործ են դրվել մերթ մեկ եղանակը, մերթ միտուրե՞:

¹ Պետրիկ և. Առվտիվլան, Մոսկա ծռեր, հր. 149, հմմտ. հր. 47:

² Սրվեննովան, Համալ-հոռով, հր. 323:

³ Շինար հայկական, հր. 171:

⁴ Լաբովան, Զափաթի բաղմանք, հր. 27:

⁵ Орест Миллер, Илья Муромец и Богатырство киевское, С. Петербург. 1869, стр. 336:

Շահնամայի մեջ Սոհրաբը գալիս պաշարում է Սպինդ բերդը, որի պահապանն էր Հեջիր¹ մի քաջ մարդ, ուժեղ, կտրիճ, Այստեղ էր և Գնատեհնմը, որ Հեջիրից հետո բերդի հրամանատարն է լինում։ Սա մի քաջ ունեթ, Գուրդաֆրիդ անունով, թլամ ձիավոր մի աղջիկ, անվանի քաջ մարտիկն։ Սոհրաբը կովի վեջ գետի է բռնում Հեջիրին, Այդ որ լսում է ապարան գցողն Գուրդաֆրիդը, իսկույն կովի դաշտն է իջնում՝ մարդանակ հազած ու կապած։ քաջ Սոհրաբից հաղթահարված հետ է դառնում, Սոհրաբն ընկնում է ետեկց, Այդ ժամանակ Գուրդաֆրիդը բաց է թողնում գիսակները, ինչպես մեր Խանդուբ Խաթունը Դավթից հաղթված փախչելիս։ Իսկ Սոհրաբը՝ տեսնելով որ նա կին է-

Եստ թամբից նսնց նա դաշարած շատ պարսն,
Գցեց, ընկավ փոխը մեջին և ետ բռնեց աղջկան:
Երբ աղջիկը պարանի մեջ տեսավ իրեն պարփակած,
Որքան արեց մեղից դուրս գալ, նա ազատվել չկարաց-
Իմ ձեռիցը չէս ազատվել, ասաց Սոհրաբն յուր գործում...
Իմ ցանցիտ մեջ չնկավ ընկավ դեռևս մի որո քեզ լե՛սան:

Աղջիկը ճարը կտրած ասում է.

Ո՛րդ դու քաջերի մեջ արի տալու՞ ճա գործով...
Մի՛ հաղթի ամեն կողմից վնճ աւ ամթի իմ համար,
Երկու կողմի դառն հանելով և զարկելով դու իրար-
Ն՛կ մենք աւ մենք մեք մեջ հաղավենք, դա ավելի լավ խնջ է,
Եւլաց-թլանն է մեծի գործ, ամեն գործից էլ վեր է...
Պեսաց լէ մեր այս հաշտությամբը այլևս կոխվ քրտնել:

Սոհրաբը տեսնելով նորա գեղեցկությունը՝ սիրահարվում է նորան և բաց թողնում։ Աղջիկը մտնում է բերդը և պարսպի վրայից հաղորում է աղային հետ դառնալ կովի դաշտից։ Իսկ Սոհրաբը սիրահարված ցավում է.

Նարեհն այնքա դարձանակի մի զարկ դպավ, կտրացավ,
Որ այնպիսի լքնաղ որոն իմ ձեռիցը դուրս արծավ,
Այն ի՛նչ սիրուն ձգելիկ եկավ ընկավ պարսնս յուր քառով,
Իմ պարանի կտրեց փրկվեց և ինձ կտպեց յուր կապով:

Նախնական կենցաղական մի գիծ է այս, հարսնացուն կովի դաշտում իրեն որս բռնելու մի հիշատակ, որ դուրս է գալի Շահնամայի մեջ, անշուշտ, արդեն մեղմացած և փոփոխված, բանաստեղծի նպատակին ու ծրագրին հարմարեցրած:

Քաջ եթե պ. Խալաթյանի եղանակով վարվելու լինեինք, Սոհրաբի և Գուրդաֆրիդի այս միջադեպը կնույնացնեինք Արտաշեսի և Սաթենիկի միջադեպի հետ։ Չէ՞ որ երկուսի մեջ էլ արշավանք և արշավողների տեսարան-կոթորում կա, երկուսի մեջ էլ երկու կողմն ևս քաջեր են²։ Երկուսի մեջ էլ մի լշտեակուր աղամառդ գետի է բռնվում. երկուսի մեջ էլ գեթվածի կողմից մե գեղեցիկ աղջիկ դուրս է գալի գերդի հետ խառում. երկուսի մեջ էլ աղջիկը իմաստուն խոսքերով հաշտության է հաղորում հաղորդ քաջին, երկուսի մեջ էլ հաղթական գերդը սիրում է այդ աղջկան. երկուսի մեջ էլ գերդը նին հեծած վազում է և պարտեր աղբկա մեջքը ձգում ու բռնում հորան:

¹ Զրդուծ, Ռոստամ և Սոհրաբ, թարգմ. Ս. Գյուլզարյանց, եր. 66 հանդ.

² «Ինչի պատճառով է մեջ երկրիս երկուցուց նազուցեց քաջաց և աղեղնաւարաց» (Խոս., Բ. 2),

Սահակյն իղուր հնք թվում։ Ընթերցողը կտեսնե, որ Արտաշեսի ու Սաթենիկի միջադեպը Սոհրաբի ու Գուրգաֆրիդի այս միջադեպին ավելի նման է, քան Հովսեփոսի մի ինչ որ պարանի պատմությունը։ Բայց այդ մեծ նմանությունը, մանավանդ պարանի պատմությունը, հարկավ դեռ չէ ապացուցանում, որ խորենացին Ֆիրդուսիից, կամ Ֆիրդուսին խորենացուց օգտված լինին։ Եթե մի բան ապացուցանում է այդ նմանությունը, այդ այն է, որ խորենացին իսկապես ժողովրդական վիպասաններից է վերցրած այդ պատմությունը։ Ժողովրդական վիպակ է որ շատ ազգերի մեջ այսպիսի նման գծեր, մոտիվներ է պարունակում յուր մեջ, շատ անգամ այնքան նման, որ նույնություն են հասնում։ Իմ շատ բնական է այդ նախնական կյանքը և այդ կյանքի արտահայտությունը շատ տեղ իրար նման են, զի մարդիկ էլ են իրար նման։ Աղոնք ընդհանուր կենցաղական գծեր են միայն։

Բայց ինքը պ. Խալատյանն էլ զգում է, որ յուր ենթադրությունը պարանի նկատմամբ խախտում է։ Ուստի նա չէ քավակախելով պարանը Հովսեփոսից հանելով, այլ միանգամայն և Աստվածաշնչից է հանել, և հասկանալի է, որ ինքն էլ իրեն հարկում է իրեն (Լ, 4)։ Եվ ձգնալ արքայ առ Եսթեր զգալուցանես ոսկի։ և յարեաւ Եսթեր երթնալ ի սենեակն (ընդգծածներն իրենն են) արքայիս՝ թիւ ռ'իւր է այստեղ նմանությունը, քաջականում և հարցնում է պ. Մառն, Եւտ հասկանալի է թե ռ'իւր է։ Նախ զգալուցանա բառի մեջ, որ պիտի փոխենք և զպարանս կարդանք, և ապա թուկիս բառի մեջ, որի հետ պիտի միացնենք Եւրից Գրքի մեջ (ԻԶ, 29) եղած թող բառը։ Զէ՞ որ այդպիսով կատանանք ոսկեօղ պարանս։ Ահա՛ թե ի՞նչ կնշանակե թող բառն։ Եւտ հետադուր։ Բայց այդքանով չէ քավականանում հետադուրը։ Չի կարելի բառն էլ Աստվածաշնչից է, որովհետեւ այնտեղ (Եւր, ԻԶ, 14) չի կարելի մորթ կա հիշված։ Թորիորդ բառն էլ Աստվածաշնչից է, որովհետեւ այնտեղ (Եսայի մարգ, Խէ, 2, 3)։ Թորիորդ բառը կա, այլ և փոփոխված։ Ի՞հ, տիկնայք փոփոխանք հայտնալիս։ Գուց էլ, երեւ, քննելը օրիորդներ, ձեր փոփոխությունն ու քննությունը, և նույնիսկ տիկնությունն ու օրիորդությունը, Աստվածաշնչից են վերցրել։

Վառանգ (ղխագին)։—Երկրորդ կարծեցյալ նմանություն է. Երկու գեպքում էլ մեծ փրկանք (ВЫКУП) է վճարում,—Հովսեփոսի մեջ՝ մարաց գերյալ քաղաքու, իսկ խորենացու մեջ՝ ալանաց արքայադուռն համարը։ Բայց ռ'իւր է այստեղ նմանությունը։ Միայն ուսանելն ВЫКУП բառի մեջ, որ թե գերյալների ազատության համար վճարած փրկանք է նշանակում, և թե տղայի կողմից աղքատ ծնողներին տված բաշխը, զխագին, կամ ըստ խորենացու։

¹ ХОЛМА, Арм. зпос, I, 267, л. II, 62.

² ВМЗОНТ. НРЕМ., 42. 265.

³ Թագավորի թուկի գավազանը ձգելու թովորության նշանակությունը քաջաարված է եւուլ։ Եսթերի Գրքի մեջ. «Ամենայն այդ կամ կին՝ որ ժողովից եւ արքայի ի ներքին օրենքն ունենալ կայելու Նորա, չից փրկութիւն. քայք միայն առ որ ձգել արքայ զսկի գաղաղան, եւ միայն աղբիւր (Ժն, 16)։ Ուստի և թագավորը, որովհետեւ քայք առ Եսթերին (երբ առ առանց հրամանի Նորա անկան է մտնում, և հետո հրեից կյանքի հոմար է խնդրում) թե ներում է, գաղաղանը դնում է նորա վրէն, և կամ ձգում է գեպի եւու։

⁴ Երկու քաղաքան նմանություն է և այն, որ իբր թե նրա պատմության մեջ էլ փոփոխում է երկու քաղաք (отступленне) մասին։ Հովսեփոսի մեջ այդպիսի բան չկա։ Առանց փոփոխության քայք տալու, կնքն ու հարձերին թշնամու ձեռն թողնելով վախից յանհրաժեշտ նահանջում չէ, հարկում։

նացու, վարձանք: Բայց մի՞թե կարելի է երկու տարբեր բան նույնացնել, այն պատճառով միայն, որ ռուսերենում մի Вѣкъն բառով է արտահայտվում: Ըստ Հովնաթանի՝ ալաններն արշավում են մարաց վրա. «որովհետև ոչ ոք նոցա դիմադրություն չարավ, նոքա ավարի առան աշխարհը, շատ ոչխար ու արքառ քնցին: Ինքը մարաց Բակուր թագավորն էլ վախից փախավ լեռները և ստիպված էր հարուր քանքար փրկվել:՝ վճարել բարբարոսների ձեռից յուր կնիքն ու հարճերին ազատելու համար:» Հայոց վիպասանքի մեջ, ըստ խորհրդանշու, այդպիսի փրկանքի հետք անգամ չկա: Այստեղ ալանները մտնում են Հայոց աշխարհը. Հայոց Արտաշես թագավորը զորքով քաջությամբ կռվում է նոցա դեմ. բռնում են ալանաց արքայորդուն. ալանները քշվում են Կուր գետի մյուս ափը: Եղբորն ազատելու համար միջնորդում է ալանաց արքայազուտորը, և Հայոց Արտաշես թագավորը տեսնելով օրիորդ Սաթենիկին գեղեցիկ և խնդր, ցանկանում է նորան կնություն առնել. մարդ է ուղարկում ուղեկու օրիորդին: Բայց ալանաց թագավորն ասում է. «Եւ ուստի՝ տաց է քաջ Արտաշես հազարս ի հազարաց և բնութս ի բիրութս ընդ քաջազոյն կոչս օրիորդիս Ալանացոյ: Ուրիշ խոսքով, աղջկա հայրն յուր աղջկա համար մեծ գլխովին, քայլք է ուղում,—մի շատ հին սովորություն, որ ինչպես տեսանք, ցլած մնում է մեր մեջ և շատ ազգերի վեպի մեջ դուրս է գալիս: Արտաշես, երեխ, չէ ուղում մեծ գլխագին վճարել: Որովհետև խորհնացին ալանաց թագավորի վճրելով գրած խոսքերը մեջ բերելուց հետո՝ կցում է. «Ճշայս տեղիս առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասենք, և ետեից բերում է թե ինչպես արին Արտաշես ձին հեծած՝ սրաթե անցնում է գետով, պարանը ձգում է օրիորդի մեջքը և բերում նորան յուր բանակը: Արտաշեսն ուրեմն, այն է անում, ինչ որ ցարդ երբեմն անում են հայերն ու ավելի ճորդիւր, երբ իրենց հարսնացուի համար մեծ գլխագին են ուղում ծնողները:» ևս փախցնում է աղջկան:

խորհնացին այդ պատմությունն անելուց հետո մեջ բերած առասպելը մեկնում է. «Ուր եւ ճշմարտութեամբ ռմի լոյսպէս: Փանգի պատուհալ է աս Ալանս մորթ կարմիր, լայնա շատ և ոսկի բազում ասելով ի վտրեմնս, առնու գտիկին օրիորդն Սաթենիկ: Այս է ռսկէզ շիկափակ պարտենք: Այս հատվածը ժողովրդական երգի հետ բնավ կապ չունի, այլ խորհնացու մեկնությունն է միայն: խորհնացին, երեխ չհավատալով, որ Արտաշեսի նման մի մարդ, մի հարուստ թագավոր, կամեցած չլինի ալանաց թագավորի ուղած գլխագինը տալ, այլ վայրենի սովորությամբ, պարտենով բռնելով աղջկան փախցրած, առասպելի այդ հատվածն այլարտնություն է համարում և մեկնում թե դա ճիշտ չէ, այլ միայն մի այլարտնություն է: Ժիշտն այն է, որ Արտաշես մեծ վարձանք է տվել և առել Սաթենիկին: Ուրիշ խոսքով, նա աղջիկ առնելու հնազույն բարբարոս սովորությունն՝ աղջիկ հափշտակելու տեղ՝ ավելի նոր ժամանակի՝ վարձանքով աղջիկ գնելու սովորությունն է գնում:»

¹ Թեպետ և մեր նյութի հետ կապ չունի, բայց անհետաքրքիր չէ տեսնել թե ինչպես է դառում այ. Խորհրդանշու խորհրդանշու այս մեկնությունն առթիվ. «Ջյոտմանի նույն այլարտնությունն մտաբանել է մի բան,—թե ալարտնությունն այստեղ ասել է, որ (չիկափակ) պարտեն իշանեղում է այլարտնություն կտրմի մեծ, չէ՞ որ այլարտնությունը հենց այնտեղ դիտել ժողովրդ, ուր կարմիր մորթումն տալիսի ղեմաբանական եղանակությամբ էին տալիս, այսինքն այլարտնություն մեջ և ոչ բնավ հայոց մեջ, որտեղ կարմիր մորթու մասին աղջիկի գաղափար չունենի [Դրոսեղից դեռ, որ ալաններն տեսին, իսկ հայերը չունենին]: Ուրեմն էլ թեպետ կարող էին հայ վիպասանները բռնեցնել այդպիսի այլարտնություն: [Բայց «մի առաջ, որ այ-

Խորենացու մեկնութիւնը, իրենից արած լինի նա, թէ Նույնիսկ երգիչ-ներից վերցրած լինի.—որովհետեւ հաճախ վիպասաններն էլ մեկնում են շատ բան, ինչպես և Նույնը տեսնում ենք մեր արդի ժողովրդական վիպից.—մի ափսոսող բան էլ Բայց թեկուզ մեր վիպասանքի մեջ անցած պատմվածք լինի, թէ Արտաշեսը փախցնում է աղջկան և ապա այս ու այն բաները վարձանք, բայցըզ է տալիս աղջկա հորը,—այդ ևս մի սովորական կենցաղական գիծ է, որ ցայսօր ևս կատարվում է մեր ժողովրդի մեջ։ Աղջիկ փախցնելուց հետո զլխագին են տալիս աղջկա ծնողներին և հաշտվում, ապա հարսանիք տեսնում։

Ուրիշ կենցաղական գծեր։—Եվ իրավ, Խորենացին անմիջապես անցնում է հարսանիքին, բերելով հարսանքի նկարագրից մի փոքրիկ կտոր միայն։ ԵՏեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկաննա։ Խորենացին, որպեսզի այս հատվածը բառացի չլսակացվի, դարձյալ մեկնում է. ԵՄանդի սովորութիւն իսկ էր թագաւորացն միւրոց, փեսայութեամբ ի դուռն տանարին հասանի՞ դահեկանս ճապաղել... առպէս և թագուհեացն յառաքատին՝ մարգարիտ։ Այս է եղմաւորութիւն րաւնիցոս։ Շատ ճիշտ է Խորենացու այս մեկնութիւնը, թեպետեղ դարձյալ շատ ավելորդ, քանի որ ոչ ոք այնքան միամիտ պիտի չլինի կարծելու թէ իրոք ոսկի ու մարգարիտ էր տեղում Արտաշեսի և Սաթինիկի հարսանիքին։

Հայոց թագավորների ու թագուհիների այդ սովորութիւնը, հայտնի է, ցարդ պահում են մեր Եթազավորներն ու Եթազուհիները, ինչպես կուլվում են հարսն ու փեսան հարսանիքի ժամանակ։ Այդ սովորութիւնն մասին առաջին անգամ էմինն¹ է նկատել Նոր Զուղայնցոց համար։ Սակայն միայն Նոր Զուղայնցոց մեջ չէ, այլ շատ տեղ տարածված է։ Մենք իսկ տեսել ենք թէ ինչպես հենդեցոց դուրս գալուց հետո՝ մասնը դրամներ են ցրվում։ Գուշելուում, հարկավ, այժմ փող ցրվելը շատ չէ պատահում։ Բայց փողի փոխանակ շամիշ, մրգիղեն կամ ցորեն կն տեղայր շատ տեղ սովորական է։ Հարսանքի ժամանակ փող ցրվելու նույն սովորութիւնը գտնում ենք և Եւհանամայի մեջ²։

Այսպես, երկու պատմութիւն, Հովսեփոսի և Խորենացու մեջ իբրև նմանութիւն մնում է մի բան միայն.—այն որ, ըստ Հովսեփոսի Մարաց աշխարհից յալաններն ունեցնում են Հայաստան, և, հարկավ, կուղարուտ առնում, ըստ Խորենացու, «առապատակաւ ճինից ելնում են յաղխարհն Հայոց»։ Էլ ուրիշ ոչ

յարանութիւն եզրէ է երդի մեջ և ոչ թէ իրեն Խորենացու բացարձակն էլ Զեք հովտում, կարգացնց պ. Խալաթիանի այս գրածի շարանակութիւնը կամ Նորա իղրուկաւորութիւնը Պարսի, որ ինքն Խորենացին է այդ վերադարձն երդիլնորին. ուրիշ խոսքով, Խալաթիանութիւնը [չանքաններն իրենն են], որ Եւհան Կաթի իբրև վիպալիւն մեջ է բերում մեր պատմագիրը, պատկանում է Հենց իրեն Խորենացուն.—ծիւն ուղղու է, և այդ Խալաթիանութիւնն ու մեկնութիւնն իրեն Խորենացուն է և երդի մաս չէ, չէ ինչպէս են այս պատմագիրները։ Գործ է, երկու նպատակով, նախ՝ Խորենացու ու միայն Խորենացու վարձաւէր, բայցըզ՝ Գեղիկի ազատութիւն համար տված փոխուելի Հեն Խալանցնելու համար, և ապա՝ Խորենացու կեդիթը բռնելու համար։ Բայց չէ՞ որ ինքն Խորենացին առում է յուր լեզվով թէ այդ ալլարանական քաջատրութիւնն իրենն էլ.—Եւ, ևս չէ առում, այլ պ. Խալաթիանը բռնում է իրենն։

¹ Վեդեհեոն Հայաստ., հր. 111, ժամ.

² Գաւրիէն Ե. Հովնիսիւն, Փարսեցեք, հր. 31։

³ Heldensagen von Firdusi, von Shrack, հր. 218.

մի նմանութիւն՝, նմալ աղքատն նմանութիւնը բնավ չէ կարող ապացոյց համարվել, թե խորհնացին այդ պատմութիւն համար օգտվել է Հովսեփոսից և դիտարկմբ էլ նորա անունը չէ տված:

Ժողովրդական երգը կարող էր աւանների արշավանքի հիշողութիւնը պահել և պահել է՝ միացրած աւանաց արքայորդու գերութիւն և Սաթնիկի Կարսնախոտութիւն միջադեպների հետ: Վերջին երկուսը կարող են և պատմական իրողութիւն վրա հիմնված լինել, և լոկ ստեղծագործական երևակայութիւն ծնունդ: Պատմական է աւանաց պատերազմը.—իսկ պատերազմների մէջ դերի բռնվելը շատ սովորական,— և մնացածը լոկ կենցաղական գծեր են, որոնք ամենայն պատմական երգերի մէջ էլ կարող են մտնել և մտնում են:

Այդպիսի կենցաղական գծերից է նաև «Եփեսոսն ու Պարթիսի և Կորնթիւսի ընդ միմեանս ի ձեռն կանանցն» (Ք, ԽԹ): Այս նախանձի Կորնթիւսի մասին գրված է և «Եւթարտեալս պատմութիւն մէջ (Ք, ԺԳ, ԺԵ). բայց թե վիպասանքի մէջ իսկապէս նույնն է պատմված եղել ինչ որ այստեղ՝ այդ շինք կարող ասել: Խորհնացին միայն վիպասանքից չէ առնում, և վիպասանքից առածն էլ, գիտենք, փոփոխում է: Ընտանիքի անդամների մէջ այսպիսի նախանձ ու գրգռութիւն և վախ և մեր արդի վնասի և սիրի ազգերի վնասի մէջ:

Ի՞նչպէս է կազմվում վնասը:—Ի՞նչպէս է եղել, որ վիպասանքի մէջ աւանների արշավանքը փոխանակ իսկական Տրդատ անվան՝ կապված է Արտաշէս անվան հետ: Պ. Գարսեպայան նկատում է. «Խորհնացիւնս պատմութիւնն, ուր պարսիսի դպարը կնծայվի մեծին Տրդատ»՝ հայտնի է, թե Արտաշէսն նուր կրկնվեւ և Տրդատ, ապա թե ոչ անմեկնելի կրման շփոթութիւնն, որ անշուշտ խորհնացիւն կողմանն է և ոչ Հովսեփոսի, որ իբր երեք հարյուր ամօք հառաջ է, Այս խոսքերը, որքան հասկանում ենք, ուղում են ասել թե խորհնացուն ծանոթ է եղել, որ նորա Արտաշէսը կոչվել է և Տրդատ, կամ թե ժողովրդական երգի մէջ միեւնոյն թագաւորը երկու՝ անուն է կրել՝ Տրդատ և Արտաշէս: Սակայն պատճառաբանութիւնն այդ չէ արդարացնում: Ժողովրդական երգին ջատ հասուկ է անունների այդպիսի փոխանակութիւն, հարկավ ոչ առանց պատճառի: Այդ իմանալու համար նախ պետք է տեսնել թե ի՞նչպէս է կազմվում ժողովրդական վնաս ընդհանրապէս և ինչպէս են կազմվել մեր վիպասանքը մասնավորապէս:

Պատմական մեծ իրողութիւնները, որոնք ազգային կյանքի համար կարևոր նշանակութիւն ունին, և կամ այնպիսի դեպքեր, որոնք առանձնապէս խորը տպավորութիւն են թողնում ժողովրդի երևակայութիւն վրա, նյութ են դառնում ժողովրդական պատմական երգերի և ավանդութիւնների: Բայց ասոնք միայն անշատ վիպական երգեր ու ավանդութիւններ են և ոչ թե ամբողջական և հետեւական մի վնաս, ընդարձակ պատմվածք, երգերով խառն, ինչպիսին են մեր վիպասանքը:

Այսպիսի վնասը կազմվում է ժամանակի ընթացքում: Վիպական ոգու մի ընդհանուր հատկութիւն՝ անշատ երգերն ու ավանդութիւնները, որոնք առաջ են եկել պանդան պատմական դեպքերի ազդեցութիւն տակ, ձգտում են հետզհետեւ միանալու: Այդ ժամանակ զրույցներն ու երգերը հաճախ ներքին փոփոխութիւն են ենթարկվում և ոչ թե մեքենայաբար իրար կցվում: Բնա-

¹ Արդար լինելու համար պետք է նկատենք, որ պ. Խալոթիանը մի նմանութիւն էլ է գտել.— Երեմիայէս բարդ:

կանաքար ամենից ավելի տուժում են հերոսների անունները. մի պատմական անվան տեղն անքնում է մյուսը: Առաջանում են անաքոնիզմներ և, ինչպես մի ժողովրդական զեղծելիք հրդի մեջ, այսպիսի անհեթեթություն է պատմվում: Քե Սուրբ Վարդան կռվում է Լանկիմաուրի հետ: Նշանավոր հերոսներն ու սիրելի անուններն իրենց են քաշում ուրիշների վրա եղած երգերն ու զրույցները: Նոցա դառնում են, այսպես ասած, վիպական խմորման կեցրոնք: Այսպես Փրանսիական վեպի մեջ Մեծն Կարոլոսի անվանն են կապված շատ արարքներ և դժբեր, որոնք իրենք լին, այլ Կարոլինգյան ցեղի ուրիշ թագավորներից: Նույնիսկ Մերովինգյան հարստության թագավորների արարքներն անցել են Մեծն Կարոլոսի վեպին:

Ժողովրդական վեպի վրա, ուրեմն, աշխատում են ամբողջ սերունդներ, և մի վիպական անձնավորություն համար նյութ են տալի բազմաթիվ պատմական անձեր: Սոցա արարքները միանում են, հարկավ, մի որևէ շոշափման կետ, հանգույց գտնելով: Ասել չի ուզիլ, որ ամենից շուտ միանում են համանուն պատմական անձերի մասին եղած ավանդությունները: Մի քանի Կարոլոսների կամ մի քանի Արտաշեսների երգերն ու զրույցները այնպես են ասվում, իբրև մի մարդու վրա լինին: Բայց և տարբեր անուններով մարդոց արարքներն անցնում են մեկից մյուսին: Այնուհետև միացման համար իբրև հանգույց ծառայում է գլխավորապես՝ զանազան անձերի գլխին եկած կամ նոցա կատարած զեպքերի համանմանությունը: Նման զեպքերի ազդեցության տակ հին պատրաստի վիպական երգը, և նույնիսկ վեպն, յուր մեջ ընդունում է նոր տարրեր, նոր պատմական անցքերից:

Արդ, մեր վիպասանքն ևս բացառություն պիտի չկազմեն ուրիշ ազգերի վեպերի մեջ: Մեր ժողովրդական վեպն ես հյուսված պիտի լինի հետզհետե, ժամանակի ընթացքով, և անոր համար իբրև նյութ ժառանգած պիտի լինին մեր ազգային կյանքի պատմական նշանավոր իրողությունները: Նվ քանի որ մեր վիպասանքի կնգրոնը սկզբից մինչև վերջը,—Սրվանդի թագավորելուց մինչև Արտավազդի մահը յուր հոր անձեքի տակ,—կազմում է Արտաշես թագավորը, ուստի և վեպի նյութ եղած պիտի լինի ամենից առաջ մեր Արտաշես անունով թագավորների պատմությունը: Կնշանակե Արտաշես անունը տիրել է հպել ժողովրդին և Արտաշեսների զորքերն առանձին ազավորություն են թողել ժողովրդի երևակայության վրա: Իսկ որովհետև Տրդատ Ա-ի գործերն ևս երևում են վեպի մեջ, կնշանակե նորա ժամանակի արարքներն ևս իրենց ազդեցությունն արել են ժողովրդի վրա և նորա պատմությունն ևս որևէ հանգույցով միացել է արդեն պատրաստի ժողովրդական վեպին, կերպարանափոխելով և ընդարձակելով այն: Արտաշեսի վեպը յուր մեջ առել է Տրդատի արարքները, բայց սիրելի ու ժողովրդական Արտաշեսը մոռացություն է տվել Տրդատ անունը:

Փորձենք վերլուծել մեր վիպասանքի պատմական մասը և տեսնենք ի՞նչպես հետզհետե և ի՞նչ տարրերից է կազմված:

Արտաշես Ա և շինված Արտաշատ քաղաքի:—Տրդատ Ա-ից առաջ հայերն ունեցել են մի քանի Արտաշես անունով թագավորներ: Ամենից առաջ Արտաշես կամ Արտաքսիաս, որ հայոց փառավոր թագավորության հիմնադիրն եղավ (189 թ. Չ. ա.), որի ցեղիցն է Տիգրան Մեծն: Սորա թոռն էր նույնպես Արտաշես (33—21): Այսպես և, ըստ Տակիտոսի, Տիգրիտոսի ժամանակ հռո-

¹ C. Lanson, Histoire de la Littérature Française, Paris, 1895, հր. 18 հա.

մայնցոց ձեռով թագավորում է հայոց՝ պոնտացոց թագավորի որդի Ջենոն (18 թ. Ք. հ.), որ սիրելի էր հայերին: Եթերմանիկոս երթալ լԱրատաշատ քաղաք և հաւանութեամբ մեծամեծացն, ի ձայն ցնծութեան քաղժութեան՝ անէ զգլխով նորա զարքունական ապարոշն: Երկիր նպագ ժողովաւոյն տեառն յորում նորոյ և կոչեաց նմա անուն Արտաշէտ, ըստ անուան քաղաքին (Տաւ-կիտոս, Տարեգր., Բ, 8): Այս պատմական դեպքը, որով թագադրութեան ժա-մանակ ժողովուրդն տար ցեղի հայ թագավորի անունը փոխում է և հայ ա-նունով Արտաշէս է կոչում, ցույց է տալիս, որ հայոց մեջ Արտաշէս անունը սիրելի և ժողովրդական է եղել, և թերևս, սովորութիւն է եղել թագավորնե-րին տար անուններէ տեղ հայ անուններով կոչելու: Բն Ջենոն-Արտաշէսից ժամանակով ոչ շատ հեռու Տրդատ Ա-ի անունն ևս նույն ձևով փոխված է եղել Արտաշէսի, թե չէ՝ մենք այդ շղթանք, իսկ թե ժողովրդական երգը տար. Տրդատ անվան տեղ կարող էր հայացած և ժողովրդին սիրելի Արտաշէս ա-նունով գտնել յոր թագավորին,—այդ շատ բնական է, երբ ի նկատի ունե-նանք վերահիշալ սովորութիւնը: Բայց անվան այդ փոփոխութիւնն ունի-յուր և ուրիշ պատճառը, որ էական է: Դեպքերի նմանութիւն է այդ, որի մա-սին հետո:

Այստեղ պետք է նկատենք հատկապէս Արտաշատ քաղաքի շինութիւնը, որ հիշվում է երգի մեջ. Ըստ վիպասանքի՝ Արտաշատ քաղաքը հիմնում է կամ շինում է Արտաշէս (Ա, 1. Բ, 100): Եվ այս պատմութեան համեմատ էլ Ար-տաշատը հիմնում է, ըստ Ստրաբոնի, Արտաշէս Ա (180 թ. Ք. ա.): Այս Ար-տաշէսի ձեռով է կատարվում և քաղաքական այն մեծ փոփոխութիւնը, որով հայերը՝ երկար զարերի ստրկական լծից ազատվելուց հետո՝ անկախ ազգա-յին իշխանութիւն և թագավորութիւն են ունենում: Այսպիսի մեծ իրողութիւնը չէր կարող յոր խորին ազդեցութիւնը չթողնել ժողովրդի երեակայութեան վրա: Եվ զգուշացնելով Արտաշատի, հայոց քաղաքական կյանքի հնազոյն կեդրոնի, հիմնվելու առաջին երդը բուն իսկ յուր հիմնադրի՝ Արտաշէս Ա-ի մասին է անվել:

Սակայն պետք է նկատել, որ Արտաշատու շինութեան մասին Արտաշէսի ձեռով՝ բացի անոր հիմնանաւուց ևս չիմնվելուց՝ ուրիշ բան հայտնի չէ վիպասանքից: Ինչ որ հորինացին (Բ, 100) բերում է Արտաշատի շինութեան մասին՝ հորենացու սեփական պատմութիւնն է, որի համար պատմագիրը կա-րող է նաև վիպասանքից օգտված լինել, բայց իրենից հավելվածներ անե-լով: Ուրիշ խոսքով հորենացու զարդարեալս պատմութիւնն է այդ: Իսկ մենք գիտենք թե ինչ է նշանակում զարդարեալս պատմութիւնը:

Արտաշէս Բ և Վիպասանք:—Արտաշէս Ա-ից, հայոց փառավոր թագա-վորութեան հիմնադրից հետո ժողովրդի վրա յուր խորին ազդեցութիւնը պի-տի թողնել և թողել է Արտաշէսի սերունդ Մեծն Տիգրանի երկարատև և աչ-խարհակալ թագավորութիւնը: Այս մասին հետո: Այնուհետև առանձին կեր-պով հուշել է ժողովրդին Մեծն Տիգրանի թուան, Արտաշատի որդի Արտա-շէսի (Բ) պատմութիւնը, որով իսկապէս սկսված է վեպը՝ իբրեւ մի հետևա-կան և ամբողջ պատմվածք:

Այս թագավորի պատմութիւնը, որ գուցե շատերին ծանոթ չէ, մենք

¹ Գաւազդում, Փեն. պատմ. հայոց, Բ, եր. 187:

² Հմմտ. Մատ., Երեւ. տրգ., եր. 288 հաշ.

այժմ կարգում անցնում ենք, և յուր համառոտութիւնով մեզ վրա թերեւ ոչ մի առանձին տպավորութիւն չէ թողնում: Գուցէ նույնիսկ շատ լինին քան երևի ժողովրդական երգի կամ վեպի նյութ դառնալու համար: Բայց այդ միայն մեզ համար և այժմ: Պետք է երեւակայել Ա զարում, Ք. ա. հայ ժողովրդի վիճակը, երբ ազգը Արտաշէս Ա-ի ձեռով նոր ոտի էր կանգնել, և այնուհետև Մեծն Տիգրան միութիւն էր մտցրել բաժանումների մեջ և միացրած ուժով յուր ժողովրդին աշխարհակալութիւն ձանապարհով տարել, տիրելով շրջակա երկիրներին և կործանելով Մելիկյան պետութիւնը: Ազգային պետակցութիւնը նոր զարթնած և ազգային հպարտութիւնը մեծացած էր: Բայց որքան ամբիշ ճոխացած էր այդ հպարտութիւնն, այնքան ամբիշ խորը պիտի լինէր և Մեծն Տիգրանի որդու և թոռան ցավայի վիճակի թողած տպավորութիւնը: Հանկարծ Մեծն Տիգրանի, արքայից արքայի այդ պետութիւնն ընկնում է: Այն էլ ի՞նչպէս: Հայոց արքան Արտաշատը յուր կնոջով և որդիներով գերի է ընկնում Անտոնիոսի ձեռք: Արքան սպանւում է. նորա որդիքը գերութեան մեջ կորած են ժողովրդի համար: Ազատութիւն է միայն մի արքայորդին Արտաշէս: Հայերից բերդականներ, շորոց զէն ի ձեռին կայր, պաշտպանում են Արտաշէսին: Եվ նա յուր կյանքն ազատելու համար ստիպւած է պարթևաց մոտ փախչելու: Իսկ Անտոնիոսը, յայնկուցեան զոմանս կամաւ, զոմանս բռնութեամբ՝ լինէր տէր համարէն աշխարհին Հայացոյ, Հայաստանը հաղթւած է և Անտոնիոսի ղեկիւր հայ խույրով պահւած: Մեծն Տիգրանի արքայից արքայութեանն ալլելս չկա: Չկար և սիրելի Արտաշէսի հին, բնիկ ցեղը, որ հարյուր հիսուն տարուց ի վեր փառքով թագաւորում էր: Բայց ահա՛ պարթևաց մոտ ապաստանած արքայորդին Արտաշէս պարթևական զորքով և պետութեամբ գալիս է և մարաց գեմ կռւով հետ ստանում յուր հոր գահը՝:

Նոր զարթնող և ազգային ինքնաճանաչութեան եկող ժողովրդի երեւակայութիւնը գրգռելու համար ի՞նչ ամբիշ ընդունակ կարող էր լինել, քան այս անցքը: Վերադարձւած ազգային հպարտութիւնը բազմակնոթութեան էր ստացած. ինչիկ թագաւորի ցեղն յուր գահի վրա էր նորից, այն էլ մի մեծ կատաստրոֆից հետո: Իսկ կատաստրոֆները, ինչպէս և մեծ հաղթական փառքները, նոր ինքնաճանաչութեան եկող ազգի կյանքի մեջ, նորա վիպական շրջանում.— ահա՛ երեւակայութիւնը ցնցող պատմական իրողութիւնները: Եվ մեր վիպասանքի ստվերապիտան արդեն պատրաստ է այս Արտաշէսի պատմութիւնից: Եվ ի՞նչ է մեր վիպասանքի առաջին մասի բովանդակութիւնը, եթէ ոչ այս Արտաշատի Արտաշէսի պատմութիւնն ամբողջապէս:

Հայոց թագաւորը (Սանատրուկ) սպանւում է: Կինն ու որդիքը ոչնչանում են. իշխում է օտար ցեղի թագաւոր (Երվանդ), որ հոռմայեցոց բարեկամ է. հայոց թագաւորական տնից ազատութիւն է հաճախարհմեքի ձեռով Արտաշէս արքայորդին միայն, որ փախում է պարթևաց մոտ. պարթևաց թագաւորը զորքով օգնում է նորան և նա գալիս է յուր հոր կորած գահը ձեռք բերում: Նա զբաղւում շարարում է մարաց ազգը (Բ, կա): Նա բարեկամ է պարթևներին. արհամարհում է հոռմայեցիներին. բայց երբ սոքա զորքով գալիս են նորա վրա, հարկատու դառնալով հնազանդում է նորան: Ահա՛ վիպական Արտաշէսի պատմութիւնը, բայց ահա՛ և Արտաշատի Արտաշէսի իսկական պատմու-

1 Գործադրում, ՔՅՆ. պատմ. հայոց, Բ, հր. 183 համե.

թյունն¹։ Ավելացրեք վրան և Արտաշատու շինվածի հին գրույցն ու երգը, որ Արտաշես Ա-ի անունով պատմվում կամ երգվում էր արդեն, և մենք կունենանք վիպասանքի առաջին մասն ամբողջ, մինչև ի՞նչ գլուխը։ Երկու տարբեր Արտաշեսների մասին երգվածներն ու պատմվածները ժողովրդի մեջ մի մարդու միա պատմված, մի Արտաշեսի անունով։

Տրդատ Ա և Վիպասանի գործացումը։—Այս երկու Արտաշեսների հրգն ու գրույցը կարող էր շատ շուտով մի ուրիշ համանուն թագավորից ևս, հայերին սիրելի Արտաշես Գ-ից (18—34 թ.) զոնք վերցնել և միացնել յուր մեջ²։ Բայց այդ Արտաշեսյան վնպը նորոգող ու կերպարանափոխող տարրեր ընդունել է շատ մոտիկ ժամանակում կատարված այլ նշանավոր դեպքերից ևս,—Միհրդատ (35—37 թ. և 41—45 թ.), Հրադամիզդ (45—53 թ.) և Տրդատ Ա թագավորների անցքներից, Ի Քիվս այլ պատճառների իբրև հանգույց ծառայել է պատմական դեպքերի նմանութունը Արտաշեսյան վնպի հետ։ Հայոց թագավորը՝ Միհրդատ, նույնպես սպանվում է յուր կնոջ և օրդինների հետ։ Իշխում է օտար ու բռնակալ Հրադամիզդը. և Տրդատ Ա, պարթև, մտնում է Հայաստան պարթևական զորքերով (53 թ.)։ Ժողովուրդը սիրով ընդունում է նորան, և նա երկար կռիվներ մղելով նախ Հրադամիզդի և ապա հռոմայեցոց դեմ՝ վերջիվերջո թագավորում է փառքով, հաշտվելով և ենթարկվելով հռոմայեցոց։

Գնպքերի համանմանութունը մեծ է, և ժողովուրդն յուր Արտաշեսյան վնպի մերա պիտի ավելացնեն և ավելացրել է տարրեր այս նոր կատարված դեպքերից։

Վիպասանքի մեջ Արտաշես հիմնում է Արտաշատ։ Տրդատ Ա-ի օրով, որ պարթևական ցեղի առաջին մեծ ու փառավոր թագավորն է, Արտաշատը հիմնովին կործանվում և նորից շինվում է Հռոմից բերել տված ճարտարապետների ձևով։ Այդպիսի դեպքերում ժողովրդի ոգևորութունը մեծ պիտի լիներ, և Արտաշատի հիմնվելու հին երգը, ինչպես լինում է սովորաբար, ավելի ևս մեծ ուժով կարող էր կենդանանալ և հին թագավորի գովեստը նոր թագավորի համար երգվել, նորի համար ևս պահելով սիրելի ու ժողովրդական Արտաշես անունը։ Արտաշատը քաղաքի շինութունն ուրեմն, որ երգվում էր վիպասանքի մեջ Արտաշեսի անունով, և Տրդատի մյուս գործերի նմանութունը վիպասանքի ուրիշ միջադեպերին՝ նդել են վիպական խմորման կնորոն։ Եվ այնուհետև Արտաշատի մասին երգն և վիպասանքի առաջին մասը իբրև թթխոր իրենց են քաշել և Տրդատ Ա-ի մյուս արարքների գովեստն ու պատ-

¹ Արտաշես Արտավազդյանը Նույնպես պարթևների քառնկամն է և թշնամի հռոմայեցիներին, թույլ Սգոտոս կաշեր Հայաստանի սահմանը հասնելու ժամանակ՝ օտիպված էր Հայաստան։ Նորա ազգացությունը։

² Հայտնի է Գրիգոր Մագիստրոսի յուր համակներից մեկում բերած հատվածը, որ հունահին տառերով, որ Վալթիս Արտաշեսն ասում է որ վայրենիքն իրաւաւ։ ՎՌ՝տայր ինձ զօսիս Ժիւանի, և զօռուաւն Նուտաւրգի, Զվազին եղանք և զվազին եղանքուաւ։ Մեջ փող հարուաւք և թմբկի հաղանէաւք, Որպէս օրէն է թագաւորաց։ ՎՊարթևաւ կայաւն Արտաշեսի համար, եթէ ազգի տնուն է ցույց տայիս, Մագիստրոսի իրեն ավելացրածն է։ Կով Նորա բերած հատվածը հին վիպասանքի մեծագոյն պնդ է համարել։ Գծրախառք Մագիստրոսն ավանդութունն ավելոյց լէ քերամ։ Պ. Խալաթյան (Եր. 812) այս հատվածը հարմար է գտնում, և իրավամբ, Արտաշես Գ-ին (18—35), քո հայտնի է, ըստ Տոկիտոսի, յուր առօրէն և խնձույցների սիրով, Նույնպես և ազգային սովորութեաններին համապատասխանաւ, օրով և ժողովրդի օրն էր գրաւածաւ։

մությունը, ալաններին դեմ կոխվն ու նոցա հետ խնամութիւնը, և Գոմետիոն Կորթուլոնի գալուստը Հայաստան, և շատ կենցաղական գծեր, և վերջապէս, ինչպէս հետո կտեսնենք, բուն միթական քնաժողովրդուն ունեցող առասպելները:

Այսպէս են հետզհետե կազմվել վիպասանք, և այսպէս միայն կարելի է բացատրել թե ինչպէս Տրդատ Ա-ի ժամանակի պատմական դպքերի հիշողութիւնը կապված է Արտաշէս անվան հետ: Այսպէս և վիպասանքի գլխավոր հերոսն Արտաշէս՝ է Արտաշէս Ա, Արտաշէս Բ (և Արտաշէս Գ) և Տրդատ Ա:

2

Առասպելական մտքը

Վիշապազունք և վիշապ:—Մարք, զարմք Աժդահակա, Մուրացան նախարարք և վիշապազունք—ինչ կապ այս անունների մեջ, Արդյոք վիպասանքի մեջ այդ անուններն իբրեւ համանիշ և անխտիր գործածված են, թե չէ: Այդ որոշելը դժվար չէ, երբ մի անգամ արդեն գիտենք թե ինչպէս Խորենացին առասպելն այլաբանութիւն համարելով մեկնում է, մանավանդ որ պատմագիրն էլ սովորաբար հայտնում է թե ո՞րն է յուր մեկնութիւնը:

1. Խորենացին գրում է (Ա, 1), Ե... Թուեկեացն հրգք... յորս շարին բանք երգցն զԱրտաշէսէ և զորդաց նորա, չիշելով ալլարանաբար և զզարմիցն Աժդահակայ վիշապազունս զեռսա կռիւով զի Աժդահակը ի մեր լեզուս է վիշապա: Այս խոսքերից պարզ երևում է, որ երգերի մէջ գործողներին վիշապազունք անունն է տրվում, և թե ինքը պատմագիրն այդ վիշապազունք (—զարմք վիշապի) անունը ալլարանաբար ընդունելով, համարում է զարմք Աժդահակա: Նորա հիմքը Աժդահակ քառի վիշապ նշանակութիւնն է: Խորենացին, ուրեմն, կարծում է վիպասանքի մեջ Վիշապազունքս կոչումը Աժդահակայ զարմքս կոչումի հայացրած ձևն է միայն:

2. Վիպասանաց բովանդակութիւնս մեջ (Բ, խթ) հիշում է. «Եւ իբր արեփաւե՛կ Նաբինկան ընդ վիշապազունցն՝ սոսանալեաբար, այսինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ անորոտովն Մասեացո: Պատմագիրն այստեղ էլ շատ որոշ գրում է թե իբրեւ առասպել (առասպելաբար) պատմվում է վիպասանքի մեջ թե Սաթենիկ վիշապազունք է սիրել: Բայց նա ինքը, ինչպէս բացատրական թայսինքնս բարձր ցույց է տալիս, վիշապազունք դարձնում է զզարմք Աժդահակայ: Սաթենիկի այդ տրիանքը կամ սերը Ա, և գրած է Արդաւլանի համար: Ուստի և Արդաւլանը ներկայանում է իբրեւ վիշապազուն:

3. Թե Արգաւլան վիշապազն կամ վիշապ է՝ հաստատվում է նույն տեղում բերած կտորից. «Դեռ ասեն գործել Արդաւանայ ի պատիւ Արտաշէսի և խաղաղաւանակ լծալ նմին ի անաւախն վիշապաց: Նույն պատմութիւնը Բ, ծա զզարդարեալս պատմութեան մեջ գրում է այսպէս: «Երթալով Արտաշէսի ի Եաշ Արգաւալ, կասկած իմն անկեալ, իբր Դէ դաւել զարքայն խորհեցան, յարաւցանեն որդիքն արքայի ասչոպ, և անդէն իսկ ի Եացին քարոշն զտլիոն Արգաւալ: Եւ խոռվութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ, դարձեալ արձակեաց զորդի իւր Մաման մեծաւ գնդաւ, և զքաղումս յազգէն Մուրա-

ցան սպանանել և զսպարաւնէն Արքայմայ ալբել...: Կնշանակե Արքազանն Արտաշեսին ճաշի է հրավիրում Արտաշատից դուրս յուր կալվածում, ուր կարծում են թե խարդավանակ է լինում նորան: Եթե Արքազանի այդ տաճարը կամ սպարանքը, ուր ճաշն ու խարդավանքն է լինում, կոչվում է «տաճար վիշապաց», ուստի և ինքը Արքազանն իբրեւ վիշապ է ներկայանում:

Ժ. Վիշապահուհիք—զարմք Ածղահակայ համարելուց հետո, պատմագիրը բերում է Արքազանի այս ճաշը, Արտաշատից շինելն զի մէջ Մարաց զՄարահերտա և Սաթենիկի սերն առ Արքազան և ապա իսկույն ավելացնում է. «Եւ արդ ո՛չ առանկ աստանոր զարմացիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ ո՛րպէս յայտնեցաք զանշալիս իւր վիշապաց, որք եւ յազաւն ի վեր ի Մասիս: Պատմագիրն ուրեմն ասում է, որ այս պատմութիւններն իսկապես են սանյալտ իբր վիշապաց: Նա քննել է թաքցնում այդ, այլ նուրիսկ հրավիրում է զարմանալու յուր գրածի վրա: Բայց ինչո՞ւ համար պետք է զարմանալ: Անո՞ր համար, որ նա թվեցաք երգերի կցկտուր բովանդակութիւն է մեզ բերել, այն էլ մեծ մասամբ երգի բառերով: Իհարկե ո՛չ: Դա մի զարմանալու բան չէ: Այլ պետք է զարմանալ նորա սրամտութեան վրա, որ կարողացել է «յայտնել զսանյալտ իւրս վիշապաց»¹, այսինքն անհասկանալի առասպելը մեկնել և հասկանալի կամ «ճշմարտապատմութիւն» դարձնել: Եվ ի՞նչ է այդ մեկնութիւնը, եթե ոչ երգի մեջ հիշման առասպելական վիշապազունքը կամ վիշապք դարձնել զարմ Ածղահակայ, այսինքն մարէ:

Այս հատմածից իմանում ենք և այն, որ երգի մեջ վիշապազունք և վիշապք իբրեւ համանիշ են գործածված, որովհետեւ նախ ասում է թե երգը վիշապազունք մասին է հիշում, և քիչ հետո այդ վիշապազունք պատմութիւնը թիրք վիշապաց է անվանում: Այսպես այստեղ ևս, ինչպես վերում տեսանք, Արքազանը թե՛ վիշապ և թե՛ վիշապաղն է:

Ծ. Թե երգի մեջ վիշապազունք են հիշվել և ոչ քի մարէ կամ զարմ Ածղահակայ՝ դարձալ երևում է Բ, կա զլիթի, ուր երգիչներն ասում են թե «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաշատից և դե փոխանակ եղին», որ և ռոմանքս, պատմելով այդ սպասահարը, մեկնել են թե այդ նշանակում է «կախարդել զսա (Արտաշատից) կանանց զարմիցն Ածղահակայ» (Հմմտ. գլ. Գ. Ե. 83):

Այստեղից և այն ենք իմանում, որ մեր պատմագիրն իրենից չէ ասում այդ մեկնութիւնը, թե վիշապազունք են զարմ Ածղահակայ կամ մարք: Այլ այդ ժանոթ է նաև ուրիշներին, որոնցից առնում է ինքն այդ սպասահարին պատմութիւնը:

Խոսեմացու մեկնութիւնը:—Տեսնենք թե ինչ հղանակով դատելով պատմագիրը կամ նորա, որոնցից նա առնում է, այդ վիշապները կամ վիշապազունք նույնացնում են Մուրապաններին հետ:

Վիշապներ կամ վիշապազունք առասպելական էակներ լինելով՝ անհասկանալի քաներ են: Ուսցիոնալիստ պատմագիրը, որ նուրիսկ աստվածներն իբրեւ մարդ եղած է մեկնում, կարող չէ հավատալ, որ Սաթենիկ թագուհին մի վիշապ կամ վիշապազունք սիրած լինի, և կամ Արտաշես թագաւորը նոցա հետ հարաբերութիւն ունեցած լինի: Բայց մի անգամ որ նորա Արտաշեսի

¹ Հմմտ. Ա. Գրգի Բ հաղթում, Բյուրապի առասպելի մեկնութիւնը. «...միտս անհասկանալի եղանակով, և զկարի վազուց նոցա իւր և նոցա անհասկանալի առասպել յայտնեմ»:

պատմութիւն մեջ մտնում են, պետք է՝ ըստ խորհնացու հայացքին առաս-
պելի վրա՝ արարածնաբար առասպել համարել այդ և մեկնելով ճշմարտել՝
Եվ այդ տեսլակ է շատ հնչող կնքպով. Երրորդհետև Աթոհհակ մեր լեզուով վի-
շապ է, ուստի և երգի վիշապագուանք են զարմք Աթոհհակայ, Իսկ Աթոհ-
հակն էր մարտք թագաւորը՝, ուստի և վիշապագուանք են ոչ միայն Աթոհ-
հակից զարմք, այլև մարք, որ բնակում են Հայաստանում:

Միւս կողմից, պատմագիրը (Բ, Ը) Մուրացան նախարարութիւն համար
գիտեմ. Եվ ասեն, նահապետի աղգին՝ Մուրացան տէր այլ մարտացուց են:
Այստեղից եղբակացնում է նա Մուրացանների մարացի լինելը. Եվ երբ մի-
անգամ նոքա մարացիք են, մարական ծագում ունին, անշուշտ հասարակ
ծագում պիտի շունենային, այլ մի իշխանից կամ թագաւորից սերված, ինչ-
պես շատ նախարարական տներ. Եվ ումնից հասկապես, եթե ոչ թի զաւակն
Աթոհհակայ մարաց եղելը թագաւորի (Բ, Ը), որի սերունդները բերված են
Հայաստան:

Այսպես, մի կողմից վիշապանքի մեջ հիշված վիշապք կամ վիշապա-
գունք նույն են՝ ինչ որ զարմք Աթոհհակայ կամ մարք. իսկ մյուս կողմից
Մուրացանք կամ մարացվոցն տեղին մարական ծագում և են մարաց
Աթոհհակ թագաւորի սերնդից. Ուստի բանավարութիւնը հնչողութիւն մի պիտի
տաներ այն եղբակացութիւն, թե Մուրացանք են վիշապագունք:

Պատմագիրն յուր այս եղբակացութիւն համար իբրև հաստատութիւն
գտնում է նոքա բնակութիւն տեղի նույնութիւնը կամ մոտիկութիւնը. նա
և, ի հայտնում է, որ ըստ թմեկաց երգերի վիշապները, նույն և վիշապագունք,
բնակում են յազատն ի վեր ի Մասիս: Իսկ Բ, խթ հայտնում է, որ զարմք
Աթոհհակայ (= մարք = վիշապագունք՝ առասպելաբար) «ուրիշ զանաւայն զառ
ստորոտովն Մասիաց: Իսկ հայտնի է, որ մարք իբրեւ գտնվում են Մասիսի
արևելյան ստորոտներում մինչև Գողթն: Նույն վկայութիւնը գտնում ենք
և Փամբոտոս Բուզանդի ու Կորյունի մեջ և ուրիշ անդերում, ինչպես և խորհնա-
ցին ինքը Աթոհհակա սերունդն ու նորա կնոջ հետ գերված մարերին բնակել
է տակիս շարենկնայ ուսոց մեծի լերինն [Մասիաց] մինչև ի սահմանս Գող-
թան... Իսկ ի միւս կողմանէ գետոյն զարդր գաշտն, որոյ գլուխն Աթոհնա-
կան, մինչև ցնոյն ինքն ամուրն նախնաւանդ...»: Իսկ Բ, ծա գլխի մեջ այդ
կողմերը գտնում է կալված Մուրացանների և հատկապես Մուրացան Արգամի,
որ ի ծննդոցն Աթոհհակայ (Բ, խդ), և հիշում է նախնական և քոստ հիւսի-
սոյ նրախայ, որ, ինչպես հետո կ'սենենք, Մասիսի դիմացն է հասկանում,
Շարուրա գաշտը:

Այսպես մի կողմից, առասպելի մեջ վիշապների կամ վիշապագուց
բնակութիւն տեղերը կապված են Մասիսի հետ, իսկ մյուս կողմից մարաց
(կամ Աթոհհակայ զարմի ըստ խորհնացու) բնակութիւն տեղերը, նույն և
մարացվոց տեղերի՝ Մուրացանների, նույն Մասիսի ստորոտներում են,
որով և պատմագիրը հաստատած է համարում յուր րացարդութիւնները:

Այսպիսի մեկնութիւն մի կ'առասպելի վիշապները նույնանում են մա-
րաց (Աթոհհակա սերնդի) և Մուրացանների հետ. Եվ խորհնացին, յուր ծա-
մանակի հասկացողութիւն մի, պարծենալու տեղից ունեւոր, թե ինչպես ինքը

«Իսկ ի խառնակեցուք և մեջ կարհաղաթիւ, և զայլաբնութիւնն ճշմարտեցուք
(Բ, խթ):»

Նախ մտնի հետև ևս, Տիգրանի և Աթոհհակի մասին զոչելու, խոսք կ'ունենայ:

Հայտնել է աղանյայտ իրո վիշապաց որք են յազատն ի վեր ի Մատիսա: Բայց մեզ համար այս քոյոր մեկնութիւնները, հարկավ, նշանակութիւն չունին: Եվ մեր առաջին խնդիրը պետք է լինի, այդ ամենն իմանալուց հետո, դուրս ձգելով ինչ որ հորենացու մեկնութիւնն է, վերականգնել քուն առասպելը:

Սակայն պ. Խալաթյանն, այդ պարզ ճանապարհը թողած, աճապարում է հեշտութեամբ ցույց տալ թէ վիպասանք հորենացու սարքածն է, Արզամի և Արտավազդի թշնամութեան պատճառը համարելով Արտավազդի նախանձը թագավորի երկրորդութեան պատվի համար՝ որ ուներ Արզամ, նա խնդիրը բոլորովին սխալ է դնում (եր. 257): Եւ մի քանի խնդիրն այն է թէ արդո՞ք Հայաստանում երբեք կա՞ր մարտից Ամգոնեակից սերված Մուրացուն նախարարութիւն, որ կոչվէր մարտից և Ա դարում Փրիստոսից հետո այնքան ալքի ընկնող տեղ, այսինքն քաղաքների երկրորդութիւնը, ունենար այս աշխարհի քաղաքական իշխանութիւնների (верархия) մեջ: Եվ նա թվելով մի քանի առարկութիւններ, որոնց մի մասը առարկութիւն անգամ չեն, շտապում է նորականելու (եր. 262). Եւ այնքան հին ժամանակներում Մուրացան նախարարութեան գոյութիւնը Հայաստանում, ինչպե՞ս և նորան վերագրած առաջնակարգ դերը տերութեան մեջ, ալեւի՜ք քան կասկածելի են: Եթէ այդ երգականութիւնն անհիմն չէ, այն ժամանակ առիթ էլ չէր կարող լինել (91), որ արքայազն Արտավազդը կոպիւր ընդդէմ Մուրացան իշխան Արզամի՝ Եթագավորի երկրորդ պատվաւոր կոչումը ձեռք բերելու համար, օւստի և պետք է շինու: (Ֆիկտիվ) համարել այս կոպի տյալքաւեալուն պատկերացումը՝ Սաթնիկ թագուհու առ Արզամ ունեցած տարփազին սիրո իբր ժողովրդական վեպից առած վիպական (ռոմանական) մոտիվով:

Ընդունենք, որ պ. Խալաթյանի եզրականութիւնը ճիշտ է. որ առաջին դարում Ք. հ. Մուրացան նախարարութիւնը գոյութիւն չունի: Բայց այդ Խնչ կապ ունի մի վեպի հետ, որի մեջ ոչ թէ Մուրացաններ են դուրս գալիս, այլ վիշապներ և վիշապազունք, Սակայն մի թույն ընդունենք, որ ոչ թէ հորենացու մեկնութեամբ, այլ նույնիսկ վիպասանքի մեջ վիշապազունք են դարձնում Ամգոնեակայ՝ մարք—մարացվոցն տեսք—Մուրացանք՝ Բայց մի՞թէ Մուրացանների գոյութիւն չունենալն առաջին դարում Ք. հ. կարո՞ղ է ապացուց լինել, որ հորենացու ժամանակի (է—Թ դար, ըստ պ. Խալաթյանի, երբ կային Մուրացանները և շատ լավ հայտնի էին) ժողովրդական վեպի մեջ Մուրացան անունը հիշված չլինի և կապված մի Արտաշէս թագավորի անվան հետ, Մի՞թէ այդ անաքրոնիզմը կարելի է իբրեւ փաստ ծառայեցնել վեպի գոյութիւնը հերքելու համար:

Եւ վեպերից (ԵՆԱՅԻՅԱ) ոչ մեկի հիմնական իմաստի մասին, գրում է Բուսլան, պարզ գաղափար կազմել չէ կարող նա, որ ամենայն պարզութեամբ չէ յուրացրել այն միտքը թէ ժողովրդական վեպը, դարերի ընթացքում ապրիլով սերունդների բերանին, հասնում է մեզ յիշված ամենալաւիկ և օտարութիւն, իրար նախասուղ անտրուկ զմեմելով: Յուրաքանչյուր սերունդ, որ յուր նախորդներից ստանում է վիպական ավանդութիւնը, անոր մեջ մտնում է յուր ժամանակի ակնարկներ (замечки), երբեմն և ամբողջ միջադեպեր: Մի ուրիշ տեղ նույն հնգինակը գրում է. Ժողովրդական վեպը երբեմն միեւնոյն

¹ Ենեք հետո կտեսնենք, փոկապետ մտք է նշել պատճառ, որ Արտաշէսի պատմական երգերին կցվել է վիշապների առասպելը:

անձի մինչ խառնում է զանազան ժամանակներին և զանազան բնավորության գծեր, և՛ մի աստծու, և՛ Ս. Գրքի կամ որևէ սրբի, և՛ որևէ տիտանի, և՛ պատմական անձի, այն էլ որոշ տեղական պարագայի մեջ։

Այսպես և մեր վիպասանքի մեջ Արտաշես թագավորի պատմությունը կապված ինչ որ միայն զանազան ժամանակներին և անձերի բուն պատմական և կենցաղական գծեր, այլ և բուն առասպելական հատկանիշներ Մեկ՝ Արտավազդի կոթիվը Ազատ Մասիսի վերապնդների կամ վերապազանց հետ, մեկ էլ վերապա Արտավազդի փակվելը Ազատ Մասիսում։

Որոշենք այդ առասպելական մասերը. նախ՝ ինչ որ վերաբերում է վրշտայններին և վերապազանց, և ապա Արտավազդի առասպելը։

Վերապազանց առասպելը։—Սրկու տեղ (Ա, Է. Բ, խթ) առասպելի համառոտ բովանդակություն է բերում պատմագիրը, իսկ մի տեղ (Բ, Ժա) պատմում է ճշմարտելուք, այսինքն առասպելականին տալով պատմական կերպարանք։ Այդ երեք հատվածն իրարու համեմատելով՝ կոտանանք մասավորապես բուն առասպելի բովանդակությունը, ընդամենը չորս միջադեպ։

ա. Թվելաց երգեր (Ա, Լ)

1. Յազատն ի վեր ի Մասիս բնակող վիշապ կամ վիշապազն Արգամանն վիշապների տաճարում ճաշ է տալիս ի պատիվ Արտաշեսի և խաղաղական լինում նորան։

2. Արտաշեսի քաղ որդին Արտավազդ՝ ի հիմնանալն Արտաշատու ապարանքի տեղ լգտնելով՝ անցնում, գնում, շինում է ի մեջ մարաց (==վիշապազ, վիշապազանց?) զՄարակերտ։

3. Սաթինիկ տիկնոջ տնելանքը կամ սերն. առ Արգաման վիշապը կամ վիշապազն։

բ. Վիպասանք (Բ, խթ)

Այստեղ բաց ենք թողնում սկզբում դրած պատմականն ու կենցաղականը՝ և առնում ենք միայն, ինչ որ վիշապներին կամ վիշապազանց է վերաբերում։ Նկատենք նաև, որ լին հիշված թվելաց երգերի 1 և 2 միջնագծերը. այլ պատմականից ու կենցաղականից հետո հիշվում է անմիջապես 3-րդ միջագծով և մի շտրիքով միջագեպ ևս ավելանում է։

3. (Իբր) տրփանք Սաթինկան ընդ վիշապազունան։

4. Մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն և հրկիզութեն շինուածոցն։

¹ Երևանի մի պատմագիր ասեմին կապարտթրած ի մասին հիմքին քառ մեղմադականն դատավորելով, Գլխի վերադիրը դրած լինելով զմտն շինուածոյ Արտաշատ քաղաքին, բնականորեն ամենից առաջ դրած է շինել զքաղաքն, և ապա շինամութիւն ընդ Այանք և մնաց զորմիցն։ Միևնոյն թվելաց երգերի մեջ, առ հրկիզի խոսքերով է գրում, ի հիմնուելն Արտաշատու Արտավազդ արգեն լափառաւ է. Սափան զհիմնանալն քաղաք հառնուելով է ալ այնքան զհիմնել, քրքան քշնուել, ջնելից ցանալ, լցվել, Այն ժամանակ զի հիմնուելն Արտաշատու հառնուելով. զԱրտաշատը որ շինացու, շնելից ցարեւմ՝ Արտավազդն ապարտեք տեղ լգտու...։ Այս զեղծում վիպասանքի և թվելաց երգերի պատմական և կենցաղական միջոցադիրը դատավորութեանն իրար լին հակասում այլևս, ու միայն ավելի հակասեմ ենք համարում։

Այստեղ տնտեսւմ ենք, որ 4-րդ միջադեպում հիշված մարտը Արտա-
մազդէն է ունենում: Պատմագիրը յուր ճշմարտեանս պատմութեան անելուց
հետո ամենայնում է. թէպէտ Արգամ է որ յառասպելին Արգամանն տնտեսն
և այս պատճառ պատեհազմին ընդ Արտաւազդայ: Խորենացու լեզուն և
մեկնութեան հայանակը (տնա գլ. 9) հասկացողը կտեսնեն, որ այս զխի մեծ
միջնորդն Արգամ անունն և պատեհազմի պատեհազմ իրեն պատմագիրին ևն,
Արգաման անունը և պատեհազմ ընդ Արտաւազդայ՝ առասպելին են: Խորե-
նացու մեկնութեամբ միայն այդ երկու տարբեր անձերը նույնացնել են: Եւ
ի՞նչ է Արտաւազդի և Արգամանի թշնամութեան և պատեհազմի պատեհազմ
ըստ Խորենացու: Արտաւազդը, ճշմարտեան բերելով ընդ ժերմեան Արգամայ,
հրապուրեաց զհայր իւր ցասնով Արգամայ, որպէս թէ թագաւորեալ ի վերայ
անհայն խորհրդի: Այսպէս ընկեցեալ զնա ի պատուին, ինքն առնու զերկ-
րորդութիւնն: Ապա շարունակութեան մեծ գրում է. Եթեք Արտաւազդայ ոչ
շատացեալ առնու ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն...: Ուրեմն
այդ նախանձը երկրորդայն համար՝ պատմագրի մեկնութեանն է միայն,
առասպելի Վալարանութիւնը ճշմարտելու և ճշմարտ պատմելու համար
մեծ բերած:

Պատմագրի ամենացածն է համարուամ է վերջի կտորը. թեպէտ միայն
աննշանաւորը ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի
դրան արքունի: Մի անգամ որ Խորենացին վիպասանքի վիշապագունք
դարձրել է Մուրացանք, անհրաժեշտ պիտի լիներ այս համեմատը՝ Մուրա-
ցանների սերնդի գոյութիւնը լոյնացնելու համար:

Նկատենք և այն, որ պատմագիրն յուր ճշմարտեանս պատմութեան մեծ
լէ բերում 3-րդ միջադեպը՝ Սաթենիկի սերն առ Արգաման: Անշուշտ այն
պատճառով, որ լէ համարում թէ Սաթենիկի պես մի տիկին կարող էր այդ
բանն անել: Եւ այս համարում է այնու, որ վիպասանքի բովանդակութեան
մեծ բերելիս էլ գրում է. Երբ տրփանք Սաթենիկան:

Մեղաձոր, մի քանի մանրամասնորից զատ, նույնն է, ինչ որ թվելաց

¹ Քանի որ վիպասանքի նշանն Արտաշէս Արտաւազդայանի պատմութիւնից է առնված,
բուն պատմական իրողութեան հիշողութեան է երգանցի բարեկամաւոր մարաց հետ և մա-
րացոց տեր Արգամին բարձրացնելը (Բ, խդ): Բուն պատմական իրողութեան հիշողութեան է
և Արտաշէսի, թշնամութեան մարաց հետ: Արտաւազդայան Արտաշէսը կոչում է մարաց հետ,
իսկ Խորենացին յար Արտաշէսի համար պիտի է թէ շատ շարժուել է միջադեպի շարժումին,
այսինքն մարաց ազգը (Բ, կա): Սակայն որ Արգամը պատեհազմի ժամանակ Արտաշէսի կողմն
անցած լինի և Արտաշէսը նորա բարձրացում (Բ, խդ, խէ): այդ համարում է պատմա-
բանը: Այս համարութեան համարում է՝ թէ ինչից է առնուցել: Մի անգամ որ մեր պատ-
մագիրը, նույնից իրեն վկայութեամբ, մարացոց տեր Արգամին հուշանում է վիշապ Արգա-
մանի հետ և իրենից իրեն պատեհազմի պատճառ զնում է Արտաւազդի նախանձն Արգա-
մին՝ երկրորդութեան պատմի համար, անհրաժեշտ էր, որ պատմութեան առաջի մասի մեծ
Արգամն Արտաշէսից առաջած լինել երկրորդական դա՛ր, որ հետո հետագայ լինել տեղի թէ
պատեհազմի պատճառը նախանձն է, Արգամի տեղնելն Արտաշէսի կողմն և նորա առաջած
պատեհիկը անհրաժեշտաբար Խորենացու ամենացածն են: Եթե այդ դուրս ձգվի, այն մա-
մանակ կ'մնա այն, որ Երկրորդ բարեկամ է մարաց և մեծացնում է մարացոց տեր Արգամին:—
մի պատմական հիշողութեան, իսկ Արտաշէս շատ շարժում է մարաց ազգը,—դարձաւ մի
պատմական հիշողութեան:

երգերի և միպասանքի բովանդակության մեջ կտա, և այն էլ միևնույն շարքով:

1. Երթալով արձախի ի հաջ Աբգոմայ, կոսկած իմն անկնու, իրո թէ դասել զարքան խորհեցան, յորուցանեն սրգիք արժային տալով, և անգլն իսկ ի հացին բարդին զտիսն Արգամայ: Եւ խաղալովմոր մեծաւ նկնալ յԱրտաշատ Արտաշէտ արքայ...:

Ընդգծածները չկան միպասանքի բովանդակության մեջ. կարող են և վնասից առնուած լինել, և խորհնացու ամենապարզ խնել, վերջին նախադասութիւնը շատ բնական հետեանք է խարդավանքի, ուստի և կարող է միպասանքից առնուած լինել:

2. ա) Գարձնալ արեւմտեց զարդի իսր զՄոսան մեծաւ զգնաւ, և քաղաւմ յազգէն Մարտացան ազանանը հաւմայեաց, և զարդարանն Արգամայ արել, և զհարճ նորին, որ կարի լցնալ էր զգնալ և մնացեալ զնացիս զարից. զոր կարէին Մանգու սոսկ ի հարճութիւն Արտաշէտի. ձոր դարձնալ նաւանալ յետ երկուց ամաց, ի քաջ առ ի հրամայէ զինչաւ քայլ ի հարճէն:

բ) Փակ Արտաշատը... հաճէ՛լ զնորմաւան և ըստ հիւսիսայ նրասխայ զամենայն զնալ, յարում և ապարտան և բարգա ի նացանէ շինէ իւր ի մոտանգութիւն:

Այս 2-րդ միջադեպի տ մասը, որով Արտաշէտը Մոսանի ձեռով՝ կոսկում է Արգամային հետ և երկու տարուց հետո հաշտուում է, չկա բովանդակության մեջ. էութիւնը կարող է միպական լինել, Իսկ ք մասը նույն է ինչ որ թվելագոյն երգերի 2-րդ միջադեպը. «Արտաշատը... շինեաց ի մէջ Մարաց զՄարապերտ, որ է ի դաւալի»՝ որ անուանալ կոչի Շարտար: Շարտարի դաշտն է զբոստ հիւսիսայ նրասխայ:

3. Առթնէն լի լինալ տրփանք չկա:

4. Այսմ սչ կարեցնալ համերել քրդայն Արգամայ, ընդգծածու իմ ապարտագմտ. քայլ յազգնալ արքայորդայն՝ ստառկէ զամենայն ժեռնոց Արգամայ հանդերհ հարին, և որք միտնալմ երեւելիս յազգէ Մարտացան, և զգուէ լինն զշէն և զամենայն իշխանութիւն նոցա: Եւ սչ քա ապրնաց ի նոցանէ:

Արգամի որդին է միայն իբրև նորութիւն մեջ մտնում, երևի այն պատճառով, որ Արգաման միշտապէս Մարտացան նախարար Արգամ դարձած, այն էլ Երվանդի ժամանակից, շատ ծերացած էր, և ճշմարտեալս պատմութիւն մեջ անհամար կլիներ, որ նա կովեր Արտաշատի զմեւ Բովանդակության մեջ հիշած զհրկիզութիւն շինուածոցն՝ կամ բաց է թողած, կամ թե 2-րդ միջադեպի տ հատմանի մեջ մտնուած զպարտանան Արգամայ արելը:

Միացնելով այս ամենը, իբրև միշտապալանց առաջնայի բովանդակութիւն կատանանք հետեւյալը: Ժշմարտեալս կտմ զարքարանալս պատմութիւնից առած կտորները փակագծի մեջ ենք դնում:

1. Քաղաւմ ի վեր ի Մոսան քնակում են վիշապներ կամ վիշապազանք, որոնց մասին «անյայտ իրք» են պատմում: Նոցա անին բոստար վիշապաց: Այդ վիշապներից մեկն (և զիստալմաւ ու հայրն) է Արգամայը:

Վիշապ Արգամայն հայրք թագավորին (և նորա որդիներին) յար մտա հաշի է հրավիրում: Արգամայն թագավորը գնում է ի պատիւ իւր՝ վիշապաց ամուսնութեամբ անել: Արգաման ազատ է հաշի մամանակ խարդավանակ լինել կամ դալիս թագավորին: (Սա զայլուցած վերադառնալով Արտաշատ՝ յար Մոսան քրդայն ապարտում է զորքով կովերու վիշապների դմբ և զքաղաւմաւ քայլ երկու տարուց հետո հանգում է թաղան ի նոցա):

1 Երկրորդութիւն պատիւն իբրև մեկնութիւն զարտ ենք ձգում:

2. Արտաշէսի քաջ սրբին Արտավազդ, Արտաշատ քաղաքը շինացած, շինից զարկած լինելով, ախեմեդ իրեն համար ապարանքի տեղ չէ գտնում։ Նա գնում է վիշապների մէջ մտնում, խում է Նադանից Նոցա կալվածները, (Նորայիսի Հլախոտային կողմում Նոցա քաղաքը զուգընթաց, ապարանքներով կամ տաճարներով ու բերդերով միասին, բաւորն իրեն է սեփականում)։ Երեսմ է լինի է պահում, շինացնում)՝ «ի մէջ Մարացա զՄարտիկբա (Մարտիկ քաղաքում) և ախեմեդ բնակում։

3. Արտավազդի մայրը, Սաթենիկ տիկինն արսիւնք է տննում ընդ վիշապազդուն կամ անկունք ու սեր տա Արգաման վիշապը։

4. Վիշապները շին ուզում տանել Արտավազդի արտքները և կռվում են Արտավազդի հետ։ Քայքայ Նոցա իշխանաթաւը քայքայվում է, արգիւհան Արտավազդ հաղթում է Նոցա, կոտորում է ամենքին, Արգամանի բոլոր ձեռնդն ու իրեն Արգամանի ապանում է, շինվածներն այրում է և յուր ձեռք կռում Նոցա քաղաքը զուգընթաց ա իշխանաթաւը։

Այս է ամենը, ինչ որ վիշապազդուն կամ վիշապների առասպելին է վերաբերում։ Եվ այս պատմութիւնը հորհնացին, նույնիսկ պատմողներին առնելով յուր մեկնութիւնը, փոխում է մարաց և Մուրացանների վրա, և վիշապ Արգամանը դարձնում է մարացվոց սեր Արգամ։

Մի կողմ թողնելով պ. հալաթիւնի ըստ ամենայնի թույլ կարծիքներին՝ քննադատութիւնը, մենք կփորձենք հասկանալ այս առասպելը, համեմատելով մեր և ուրիշ ազգերի կենդանի առասպելների հետ։

Ան յեղան կամ Մասիսի վիշապները։—Թե ի՛նչ են վիշապները և ինչե՛ր են պատմվում Նոցա մասին, մենք այդ գիտենք (Հմմտ. գլ. 7)։ Հայոց լեռներից շատերի համար ցարդ առասպելաբանում է ժողովուրդը թե օձեր կամ վիշապներ են կենում անոնց մէջ։ Նոցա բնակում են քարայրերում, ուր և ունին իրենց ապարանքները կամ տաճարները¹։ ունին իրենց թագավորներն ու թագաւորները, զորքն ու զօրավարը, և իրար դեմ կռիվներ են մղում բոլորովին նման մարդկային կյանքին ու թագավորութիւն։ Այդ վիշապներն իսկապես մարդիկ են, միայն զօժողն շապկով, որ ուզած ժամանակ հանում են և մարդկային կերպարանք ստանում։ Նոցա մարդոց հետ հարաբերութիւն ունին և մեր կանանց հետ սեր էլ են անում²։

Այդպիսի դրոշմներ շատ են պատմում Գողթնյաց սահմանի վրա, Նախիջևանից ոչ հեռու գտնվող մի գագաթի մասին, որի անունն իսկ Օձալյառն (Իւլանդադ, Իւանլու) պետք է առնված լինի օձերի այդ պատմութիւնից։ Մենք այդ լեռան օձերի կամ վիշապների մասին շատ հրաշալի պատմութիւններ ենք լսել, բայց ցամ է, որ գրի առած չլինելով՝ չենք կարող բերել։

Ի թիւս այլ լեռների այդպիսի օձերով կամ վիշապներով բնակված է համարվում և Մասիսը, որ Արտավազդի առասպելի մէջ, ըստ Քաղիապիւնի, կռվել է Մուրե՛ն աղիստե՛հ։ Ասում են թե Մասիսի վիշապները մի քանի տարին մի անգամ մեծ կռիվ են ունենում Արագածի վիշապների հետ։ «Թեւեւ» պես առասպելներն ունի հատկապես Փոքր Մասիսը։ «Պատմում են, որ Փոքր Մասիսի վրա

¹ Հմմտ. Նզբիկ, հր. 104. «Եւ ոչ տաճարք իրրն մարդկան են Նոցա (վիշապա) ի բնակալիւն։ Վարդանի գրածը՝ «Տճահալ ամենք քաղաք և վիշապաք տաճարն ի լերին և բնակալիւն» (XII, Բն. 306, II, հր. 74)։

² Հմմտ. Մովսէսյան, Գրք-քրք, հր. 44. M. Abaghiian, Der armenische Volksglaube, հր. 76։

³ XII, Բն. 306, II, հր. 74։

⁴ «Տճահալ»-հրգիւթին Մեթրաքիւն Գ. Քաղիապեանց, կալմբա, 1847, II, հր. 167։

կան վիշապներ և ոճեր ահագին մեծութեան, աշոյ պատմաբանով խիստ դժվար է և համարյա՝ անկարելի է նորա գազաթիւ բարձրանալը: Բարձրանալիս լեռան խորքերից կամ տակից մշտապես լսվում են այնպիսի զարհուրելի խոլ և ձայներ, որ մարդ սրտապատառ կարող է լինել¹:

Մասիսի հետ կապված վիշապների այս զրույցները մոտենում և նույնա-նում են նույն լեռան վրա Խորհնացու պատմած առասպելին: Հին ժամանակից ցայսօր Մասիս կամ Սյալ լլատն ուրեմն համարվում է վիշապների բնա-կարան: Երոնց մասին պե՛նպես բաներ, Շանյալու իրըք են պատմում:

Բայց այս՝ առասպելի ընդհանուր կողմն է միայն:

Առասպելի վարիսնուները մեր և ուրիշների մէջ:—Միթական ընավորու-թյուն ունեցող առասպելները հնչողությամբ լեն մոռացվում ժողովրդի մեջ, Այլ երկար պահվում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպել-ների հետ կցվելով, և կամ իրենցից մասեր միայն մոռացութեան տալով: Մյուս կողմից միթական ընավորութեան ունեցող առասպելները մեծ մասամբ միայն մի ազգի շնն պատկանում: Ուստի և շատ ընական է, որ Արտավազ-դի ու վիշապների առասպելն էս, ոչ միայն ընդհանուր գծերով, այլև մասնա-վոր միջադէպերով գտնենք այժմ հայոց մեջ և ուրիշ ազգերի մեջ:

Եսմ է որ հարկավոր գրքերը ձեռի տակ չունենալով՝ չենք կարող բերել ա-վելի: Այլից զարնող օրինակներ և թուր մանրամասնութեամբ: Մենք ոգտվում ենք միայն մեր ձեռին ունեցածից, որը, կարծում ենք, բավական է:

Ամենից առաջ նկատենք, որ ինչպես ուրիշ ազգերի, օրինակ՝ գերման առասպելաբանութեան՝ մեջ, այդպես և մեզնում զի (*Riesen*), վիշապ, ամգա-նա կամ ամդաւաւ, իրար հետ սերտ կապված են և հաճախ դիտանալիս են իրար: Դռա միևնույն ֆիզիկական երևութի անձնավորումն են զանազան կերպարաններով: Այս պատճառով և հաճախ միևնույն առասպելը թէ դեբերի և թէ վիշապների մասին է պատմվում:

Մեզ հետաքրքրող առասպելի արդի պատմվածքը հայոց մեջ լսել ենք իբրև հնգրիաթ. նույնն արդեն գրի առնված գտնում ենք նաև Սրվանձաթանի² և Տ. Նավասարդյանի³ ժողովածուների մեջ:

Մի հարուստ թագավորի (վարիանտ՝ որսորդ) աչքը վախճել է Սև լիճում վրա ընկող վիշապներից (վար. դեբեր): Ուստի նա մեռնելու ժամանակ կտակ է տեսն յուր որդուն, որ մե սար որսի լինաւ:

Փայ որդին լի լուսն հոր խռոցին .գնում է Սև սար որսի և պատահած է ուղղահար վիշա-պին: Վալում են, և որսորդ արքայորդին կիտապտն է անում վիշապին ու ձգում: Ապա նա մտնում է վիշապի ապարտեքը, տիրում է հորա առաքվածքին ու հարստութեան և տպում անտեք:

¹ Ընկեր հատվածներ նազարյանի, Տիֆլիս, 1883, Ա, եր. 280. Լևոն Տիգրատյանի հա-լապարհորդութեան Երեւնի Փոքր Մոսիսի գազաթիւ: Ավետիգ չի լինել նաև անդից բերել և հետևյալը. «Ուստի էլ առում են, թէ գազաթի վրա աղնավորի (հեղեղների) գերեզմաններ կան... Մի քանիսն էլ լսել են, որ գազաթի վրա ուղտաների քարվան կո քարացած, նաև պատկարան էլ այլտեղ քարացած կտնգնած է, մեկ ձեպով բռնած անի առաջնորդող ուղտի օտնը, իսկ մյուս ձեպին յուր գլուխը: Փոքր Մոսիսի վրայի լճի (որի դայութեանը հեր-թում է ու. Տիգրատյան) պատմութեան, մեղած Աղնավորի կամ Ողտեղի գերեզմանի և քարացած ուղտերի շարանը այս պատմութեան հետ՝ հիշեցնում է նմուրս սարի զրապտելի և թելի ուղտերի առասպելը (հմտ. եր. 143 և 144):

² Mannhardt, German. Mythen, եր. 307

³ Մաննհարտ, եր. 200, «Ննեղավոր մայր»:

⁴ Ընկ. Ժող. հեղինակներ, Ե, եր. 36, «Ննեղավոր մեր»:

Որդին մօրն էլ ընթում է յուր մօտ՝ վիշապի տապաւանքը։ Սեպկան մօայրը զնշ է անում ու լավացնում վիրավոր վիշապին։ Մօայրը վիշապին ծածակ պահում է ապարանքում և նորա հետ սիրողութուն է անում։

Վիշապը մօր սիրտը յուր կողմն ունենալով՝ մօր հետ աշխատում է կորցնել որդին։ Մօայրը հիվանդ է ձեռնում և վիշապի խորհրդով օգտակամ է որդուն աշխարհի բանեք բերելու։ Երանցով ինքը պիտի առողջանար։ Ինչ այդ հազվագյուտ բաները,— խնամահանն խնեք, ասկնդչուր, կոնիկի կաթ, ասեմահոթյան չուր կ'է։— Երեկու հետ կապված են մեծ վտանգներ որդու կյանքի համար։ Բայց մի հուրի մալաք աղչիկ (Վար. Կառավ) օգնում է նորան և ամեն վտանգից ազատում։ Մօայրը վերջապես իմանում է, որ թիկ որդու նրկու բուլն յուր նետ աղեղի լարով կապն, աղան ումից կնկնի։ Այդպես անում է։ (Վար. զիկի հերք մօզն է հետեւում)։ Տղային օպանում է։ Սեպկան շուրի մուլաքի շնորհիվ տղան կենդանանում է նորից, սպանում է վիշապին և մօրը պատժում։ Եվ աշպես տեր է մնում վիշապի տապաւանքին։

Այս միենություն հեքիաթը կա կատարյալ նմանութամբ, կարելի է ասել նույնությամբ, և ուրիշ ազգերի մեջ։ Մենք այդ հեքիաթներին իսկականը ձեռի տակ շունենալով, բովանդակութուն արնում ենք Բուլալանին։

Սլովակների մեջ այդ հեքիաթը պատմվում է այսպես.

Որդին մի բերդ մարտնչով վիշապներից՝ ընկնում է այնտեղ յուր մօր հետ։ Բայց բերդի մի անշահում մնում է մի վիշապ. որին այնտեղ շրջալսած էին յուր կորույր վիշապները։ Այդ վիշապին հաշգում է հրապուրել մօրը, որ յուր սիրական վիշապի հետ աշխատում է կորցնել որդուն։ Մօայրը վիշապն է անհամ և խեղճ որդուն, որ իրեն քիչկիտ համար քնքի ցանկացած հազվագյուտ համեմունքներ, որոնց ձեռք բերելը մահու լուրի վտանգավոր է։ Որդուն օգնում է սուրբ Ետրաթը (св. Неделька)..., բայց մօրը վերջապես հաշգում է կապել որդուն մետաքսե լարով. նա կանչում է վիշապին, որ և օպանում է որդուն... Սեպկան ու Ետրաթը հարաքանամ է որդուն անմահական (մեր հեքիաթի մեջ աղբյուրի) ջրով ու օպանում վիշապին...

Նույն ավանդությունը կա և վալախների մեջ։ Այստեղ որդին, Ֆլորիան, արդեն մի հասարակ մարդ չէ, այլ գերբնական հրաշալի ծնունդ ունի, նման Մարսի ծնունդին՝ ըստ Օվիդիոսի։

Վարդը որդուն՝ Ալադինին կանամ է խելով մեք մի փուխ մազիկներ դրած ջրից։ Մօյրը և որդի ընկնում են մի բերդում, որ վիշապների է պատկանում։ Ֆլորիանը բոլոր վիշապներին հաղթում և կապում է քաջի մեկից, որին հետո մօյրը սիրում է։ Վիշապը դառնում է գեղեցիկ աղա և մօր հետ աշխատում է, որ կարեն որդուն, նրկու անգամ Ֆլորիանը մահից ազատվում է կարճելով բուժիչ միջոցներ բերելով մօրը, որ հիվանդ է ևնանում։ Բայց երրորդ անգամ մօյրը վիշապի խրատով խնդրում է որդուն, որ զեա անմահական չուր քիչկիտ մի աղբյուրից, որ մե Ետրի վրա պահպանում է յուր որդին։

Շարունակութունը շատ նման է մեր հեքիաթին (ըստ Նավասարդյանի վարիանտի)։ Տղային օգնում են այնտեղ ջրի փարիններ (водные деви)։

Մեր հեքիաթի և այս հեքիաթների նմանութունը նույնության է հասնում։

Նույն ավանդությունը Չեռնագորիայում ու թե հեքիաթ է, այլ մի գեղանավոր երգ։ Միայն վիշապների տեղ այստեղ դևեր են դուրս գալիս, ինչպես և Սրվանձոյանի վարիանտի մեջ դև է։ Այդ երգի մեջ յուրաքանչյուր դևեր և նոցա զխափորը ապրում են մի ալրում։ Որդին խնայում է միայն զխափորին, որին և սիրում է մօյրը։ Ս. Ետրաթի տեղ երգի մեջ որդուն օգնում է մի վիշապ։ Վիշապները մեր քաղերի կամ պարիկների տեսակին պատկանող որդիներ են։

Մեր վիշապաղանց առասպելի և այս հեքիաթների նույն լինելը ակնհայտ.

¹ Буслаев, Истор. очерки русс. народной словесности, кр. 328. Նույն անգում հեքիաթ է Песни Вука Караджича 2, № 8:

նի է, Աղոնք միմեզնի առասպելի տաքերն պատմվածքներն են միայն, Ան-
շուշու, խորենացին առասպելն յուր մանրամասնութուններով չէ բերում: Այն-
տեղ շինք գտնում, օրինակ, թե Սաթնիկ տիկինը, որ վիշապ Արգամանին
սիրում է, վիշապի հետ աշխատած լինի յուր որդուն կորցնելու Շատ հասկա-
նալի է թե ինչո՞ւ: Ի՞նչպես կարող էր պատմագիրն այդ մեծ բերել, նա որ
Սաթնիկի սերն անգամ բովանդակության մեծ իբր սրահանք է անվանում,
իսկ ճշմարտեալ պատմութեան մեջ լի էլ առնում այդ սերը: Սակայն առաս-
պելի մեջ այդ երկրորդական է, Իսկ էականը կա մեր հին առասպելի մեջ,
էականն է, Հայր թագավորը (Արտաշես) հարաբերություն ունի Սև լեռան
(Մասիսի) վիշապների հետ. նորա այդ վախճել է վիշապներից, թշնամի
է նոցա, բայց, երևի, կովիով քան անել չէ կարողանում: Իսկ նորա որ-
սորդ որդին (Արտավազդ) որ նույնպես զերջնական ծնունդ ունի (ինչպես
Յուդիթան), սիրում է վիշապների ապարանքին ու բերդերին: Մայրը, Սա-
թնիկ, սիրում է վիշապների զխավորին: (Մոր դավաճանությունը չկա): Եվ
Արտավազդ ոչնչացնում է վիշապներին:

Թե այս առասպելը, որ այժմ հեքիաթի քնավորություն ունի, կարող էր
հին ժամանակ հայոց մեծ վիպասանքի և նույնիսկ երգի նյութ լինել՝ այդ
մասին կասկածել կարելի չէ, ցանի որ նույն առասպելն այժմ, ինչպես առա-
ջինք, Չոռնագործարար վիպական երգ է: Իսկ թե ի՞նչպես, կամ ի՞նչ պատճա-
ռով է վիշապների այս առասպելը կապվել Արտաշեսի մասին եղած պատմա-
կան նրբերին՝ այդ մասին հետո խոսք կլինի, երբ Տիգրանի և Աթոհհակի մա-
սին կգրենք:

Վիշապների դեմ կովի այս առասպելին միացել է վիշապների և մի ու-
րիշ առասպել.—Արտավազդի փակվելը Ազատ Մասիսի մեջ, Տեանենք այդ
առասպելն ևս:

Արտավազդի քնավորություն երկվորյունը:—Արտավազդի առասպելը
քաջի խորենացուց հիշում են նաև Եղևիկ, Վարդան վարդապետ, Վանական
վարդապետ և Հայսմավորք¹, Ըստ Եղևիկի (հր. 104) Արտավազդին կապած
պահում են վիշապները. «Եւ ոչ որս երբեք՝ որպէս մարդկան արարեալ են
վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակու-
թիւն, և ոչ զոք ի քաղաքացեաց և ի գիւղացեաց ունին կապեալ առ իւրե-
անս կենդանի... Այլ որպէս զԱղեքսանդր խաբէին դեք՝ կենդանի կայցէ...
Նոյնպէս և մուրումնին դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, թէ զոմն
Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելա-
նելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնտաի յայս կապեալ կան անհաւատք, որ-
պէս և Հրեայք՝ որ իզուր անկախութիւն կապեալ կան, թէ Դավիթ գալոց է՝
շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա: Արտա-
վազդն այստեղ ներկայանում է իբրև թագավորազգի կամ դիւցազն և հայերը
նորան սպասում են, որ ելնե և տիրե աշխարհին: Այստեղ նա քաւի քնավո-

¹ Այս խառնուրդ կարելի է հասկանալ ճշմարտյալ պատմութեան շ, ա Հաւավոր, թե Մովսէս
որդուն ուղարկում է վիշապների դեմ, բայց երբեք տարուք հետ հաշիւութեմ, և և օր բոց ասլ
հրամայէ զինչսնս:

² Խորենացու ճշմարտեալ պատմութեան այն ուղավորութեանն է թողնում, որ Արտա-
վազդ հակառակ յուր հոր կամքի է կովում Արգամի դեմ, ինչպես և հեքիաթի մեջ օրդին հոր
կտակի հակառակ է վարվում:

³ Նյութերը զնգնելի կերպով գտածութեամբ կարելի է գտնել պ. Խալաթյանի 'Հայոց վեպի
մեջ. II, հր. 28 համ., ուր և երեք Հայսմավորքից բերած է՝ Գրիգոր Նյութեալ, Կիրակոս
վորք. Արեւելոյ և Գրիգոր Արտավազդեալ:

բություն ունի, ուստի և նորան կապողները շար են՝ վիշապներու Մենք տեսանք, վիպասանքի մեջ Արտավազդ նույնպէս թագավորի որդի է, որ կոպկելով վիշապների դմմ՝ ներկայանում է իբրև դուրացուն:

Երկու սկզբնական տարբեր առասպել, վիշապների դմ կոպկողի և Մասիսի մեջ կապված շար ոգու առասպելները միանալով վիպասանքի մեջ, ազդել են իրար վրա: Բարի ու քաջ դուրացազն արքայորդին, որ վիպասանքի մեջ կոպկում է վիշապների դմ, ստացել է շար ու նախանձոտ բնավորութիւն. իսկ ընդհանրապէս Մասիսի մեջ փակված շար ոգին, ինչպիսին է իրոք Արտավազդ, Եղնիկի մեջ, անշուշտ ժողովրդից առած, ստացել է բարի բնավորութիւն, քանի որ նա թագավորազն ու դուրացազն է: Այստեղից առաջացել է կապալ Արտավազդի բնավորութիւն տարբերութիւնը նորենացու (ինչպէս և մյուսներին) և Եղնիկի մեջ: Եղնիկի մեջ կապալ թագավորազն Արտավազդի բարի բնավորութիւնն ուրեմն ավելի նոր է և վիպասանքի առասպելի առաջին մասի ազդեցութիւն տակ է առաջացած, թեպետև ավելի շուտ է զրի տեսված: Առասպելի հնագույն ձևի նկատմամբ շուտ զրի առնված լինելը առանձին նշանակութիւն չունի. ճիշտ ինչպէս նորագույն ձեռագիրներն երբեմն ավելի հարազատութեամբ են պահած լինում սկզբնագիրը, այդպէս էլ նոր զրի առնված առասպելները երբեմն ավելի մոտ են բուն առասպելին քան թե հենքը: Մասիսի մեջ փակված Արտավազդը բուն առասպելի մեջ շար բնավորութիւն պիտի ունենա և ունի: Մենք այդ կտեսնենք իսկույն:

Արտավազդը դե կամ վիշապ:—Ըստ առասպելին երգիչների խոսքով. սվիշապագունք գողացան զմանուկն Արտավազդ և դե փոխանակեց ձոյնա (Բ, կա): Ուրեմն նույնիսկ վիպասանքի մեջ Արտաշէս թագավորի որդի Արտավազդը, որ վիշապների դմ կոպկող դուրացազն է, համարվել է իրոք մի դե: Այդ մի շատ տարածված ու հին հավատ է, որ ցարդ ևս ի թիմ ալլ ազգերի կենդանի մեռւմ է մեր ժողովրդի մեջ՝: Չարունք կամ դները փոխում են իրենց երեխաները մարդկանց երեխաների հետ: Մարդկանց երեխաները գողանում են և տեղն իրենցը դնում: Եվ հիմա մասնուկ Արտավազդին գողացողները վիշապագունք են՝ զողացածի տեղն ևս վիշապազն կամ վիշապ պիտի դնեն ըստ հավատին: Արտավազդն ուրեմն ներկայանում է իրոք իբրև վիշապ, և հիմա դե ևս ասված նորա համար, այդ դե բառն ևս պետք է հասկանալ ընդհանուր իմաստով իբրև շար ոգի: Պետք չէ մոռանալ և այն, որ ինչպէս նկատել ենք, դե, ազնավոր և վիշապ, ածգահա սերտ կապված են իրար հետ և հաճախ փոխանակում են իրար:

Վիշապ Արտավազդի առասպելը և համեմատն առաջագինը:—Արդ, այդ դե կամ վիշապ Արտավազդը նախանձում է հոր փառքին. հայրն անիծում է նորան, և նա քաջքերից բռնվելով որսի ժամանակ շղթայվում է Մասիսի մեջ: Մի օր պիտի ելնն և վերջ տա աշխարհին. բայց դարբինների կռանահարութիւնից զորանում են նորա շղթաները, որ կրծում են կամ լիզում են երկու շներ:

Հետան մեջ փակվելու այս վիպական պատմվածքը շատ տարածված է հին է:

Մարկո Աբելիքի, հարաբային՝ սլավոնների մեծ դուրացազն, նախանձում է դուրացազն Գուկագինի մեծ փառքին: Սա մեռնելիս անիծում է Մարկոյին,

1 E. H. Mayar, Germ. Mythologie, Die Wechselbalge, №. 76, 117, 137 M. Abeghian, Der armen. Volksglaube, №. 108.

որ և յուր հոր անեծքի տակ է: Անեծքի հետևանքը այն է լինում, որ Մարկոյի գերեզմանի տեղն անհայտ է մնում: Բայց ուրիշ և ավելի տարածված ավանդույթով մը՝ Մարկոն մեծ կոնիլ է ունենում և երբ նա ձեռներն երկինք բարձրացրած ասում է. «Տե՛ր Աստված, ի՞նչ անեմ այժմ», Աստված գթում է նորան և փակում մի այլի մեջ, Մարկոն սուրբ քարի մեջ խրած՝ քնած է. իսկ նորա հարաց ձին մամուռն է ուտում: Սուրբ կամաց կամաց դուրս է գալիս քարի միջից, և երբ ամբողջապես դուրս գա, ձին էլ մամուռն ուտե վերջացնե, այն ժամանակ Մարկո կրանիլը նորից աշխարհ պիտի դուրս գա ձիով¹:

Մենի առասպելն ավելի ևս նման է Արտավազդի առասպելին, նորա բնավորության մեջ ևս նույն երկվորյունն երևում է: Բայց նա ավելի շար է քան քարի: Նորա գործնական ծննդյան մասին մեզ ոչինչ հայտնի չէ, բայց նա հասարակ հերոս չէ. մեր արդի վեպի ամենազորեղ դուրսացն է, բնավորությանը դիվական, քանի՜ որ քնկերություն է անում դեերի հետ: Նա կոպում է հոր հետ, նախանձում է հորը, Հայրն անիծում է նորան, որ անժառանգ լինի և անմահ մնա: Նա տանջվում է հոր անեծքի տակ:

Ո՛վ ուր Աստված,

Իմ խոր անեծք մի խափի ի,

Իմ միտք չոտի չաշխի ի...

Ո՛վ Տե՛ր Աստված, զքի՞զ իմ կանչի,

Տյալ ընցկո՞ւմ էնեմ, մի ձգե՛ս Վտան քո՞ւմ:

Եվ Մհերը, ինչպես Արտավազդը, որսորդության ժամանակ փակվում է Վանա քարայրի մեջ. սիրիչկից, տեսավ մեկ ազգամվ կէր, կրխուներ, նետանեղ առից, լեզար, դիպավ ազգամվին... Ազգամվ փախավ, էնիկ ձին հիտիւմ կինաց, խառավ մեկ քյար, տեսավ որ պեաց ի, մաղաղա ի...² Եվ Մհերը փակվում է քարայրի մեջ, մինչև աշխարհի վերջը: Երբ ցորենի հատը դառնա մատուր չափ, նա պիտի ելնե և կոտորում անելով աշխարհն ավերե կամ, ինչպես Արտավազդը, ժառնել վախճան աշխարհի: Սակայն ուրիշ ավանդությանը, նա այդ ժամանակ պիտի ժառտի ռոտան: Ազգն ուրեմն ապաստում է նորան, ինչպես Արտավազդին ըստ Նեղիկի, միայն ուրիշ ձևով: Արտավազդն՝ աշխարհական հայացքով՝ պիտի տիրե աշխարհին և թագավորե, իսկ Մհերը՝ քրիստոնեական հայացքով՝ պիտի նահատակվի: Եվ այս տարբերությունը քրիստոնեական դարերի հայաց պատմական կյանքի արդյունք է:

Մհերի բնավորության մեջ ևս այս երկվորյունը շատ բնական է, քանի որ Մհերի առասպելը, սկզբում անշատ մի քան, կապվել է Սասունցոց վեպի հետ և դիվական Մհերը դարձել է ժողովրդին սիրելի դուրսացն Պամթի որդին, ինչպես Արտավազդն Արտաշեսի որդին:

Ամիդսեղի և Հուդեհի առասպելը հորինացու մեջ տեսանք: Ամդահակը, վիշապ Դահակը, կամ Զոհակ, որին լար ոգին ստեղծել է մարդկային ազգը շնչացնելու համար, երեք գլխանի մի վիշապ է, երեք բերանով և վեց աչքով: Դուրսացն Յիրդուր (ըստ հուդեհացու Հուդեհի) հաղթում է նորան կավե դարը:

¹ Օր. *Миссер*. Илья Муромец и бог., Киев, 1902.

² Արտավազդն ևս որդի լուծի (Բ, կա), մի գիծ որ պատմադիրը կարող է վիճասանցից առած լինել:

³ Մ. Աբեղյան, *Գավթի և Մհեր*, էր. 58:

⁴ Գ. Կ. Հովսեփյան, *Սասնա ծռեր*, էր. 150:

իի օգնութեամբ, և շղթայում Դրմավենդ սարի վրա, նորա արյունը կաթկթում է գետին. երբ նա ցնցվում է, երկրաշարժ է լինում: Ածղահալն այսպես պիտի մնա մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակվի և կենսովա մեջ շատ շատ յարիք պիտի գործն աշխարհում, մինչև Սամը նորան պիտի հաղթե և ստիպն ընդունելու ճշմարիտ հավատը: Պարսից մատենագիրները հիշում են մի տոն, որ կատարվում է ի հիշատակ Զոհակի շղթայվելուն, և մինչև այժմ իսկ Դրմավենդ քաղաքում, ասում են, կատարվում է այդ տոնը՝ Քոդնում ենք համեմատութեան բերելու հունական վիշապ Տիփոնին, որը նույնպես լեռան վրա շղթայվում է:

Գերման առասպելաբանության մեջ որոտմունքի աստված Քոդը թշնամի է առհասարակ հսկաներին (Riesen) և հսկա Լոկիին (Loki), որ խորամանկ է և Ալֆի (Alf) պես արագ կերպարանափոխ է լինում (հմտ. մեր վիշապների կեղծն ի կեղծն լինելը): Նա խաղաղամենքով սպանում է Բալդրին, և Քոդ աստվածը շղթայում է նորան ու պինդ կապում ժայռից մի քարայրի մեջ: Աստվածները նորա գլխին ամրացնում են մի թունավոր որդ, որը որդի թույնն ու յորձուները նորա երեսին է կաթում, նա այնպես ցնցվում է, որ ամբողջ երկիրը զողում է, երկրաշարժ է լինում: Լոկին աչքպես պիտի մնա մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակվի և վերջ տա աստվածներին և մարդկանց: Ուստի Սկանդինավիայում վտանգավոր դրութեան մեջ այժմ էլ ասում են. «Լոկին ազատվել է կապանքից», իսկ գերմանացոց մեջ. «Սատանան արձակվել է»: Ուրիշ ավանդութեամբ Լոկիի տեղ աստվածները շղթայած են Ֆենրիս գայլին (Fenriswolf), որ աշխարհի կատարածին (Ragnarok) պիտի արձակվի երկինքն ու երկիրն ավերելու:

Մեր Արտավազի առասպելը կապված է մի ժողովրդական հավատալիքի և սովորության հետ. դարբինները այսուր միաշարքաթուղ երիցս կամ լորիցս բախնն զսալն, դի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազայա, Ինչպես Արտավազդի առասպելը, նույնպես և առասպելի հետ կապված այս հավատն ու սովորությունը բնիկ հայկական չէ: Նույնը գտնում ենք և գերմանացոց և ուրիշներին մեջ: Մանհարդը¹ խոսելով Լոկիի շղթայվելու առասպելի մասին գրում է. «Ջայցրուրգում, Տիրուլի շատ հովիտներում դարբինները սովորություն ունին տոն երեկոները, օրվա աշխատանքը վերջացնելուց հետո, երեք հարված տալու մերկ սալին: Այս անում են, որպեսզի Լուցիֆերը² շղթաները նորից ամրանան: Որովհետև եթե նա ազատվի, ամբողջ աշխարհը կավերի: Տեղ տեղ, որինակ՝ Վիլհելմնաուում, այս սովորությունը կապված է կատաղի գայլի (Grimmiger Wolf) հիշողության հետ: Նա ինն երկաթյա դռներ է տնում երեք տակ շղթայի է զարնված և որովհետև շարունակ ամենայն ուժով ճիգ է թափում ազատվելու, ուստի պետք է նորա շղթան ամրացվի. թե չէ աշխարհն ամբողջ կավերի: Վալդկիրխենում նույնպես վերջին դարբինը, որ ամենից հետո թողնում է դարբնոցը, կոանով մի անգամ խփում է գատարկ սալին, որպեսզի Լուցիֆերը չկարողանա շղթան խարտել կտրել: Նա շարունակ

¹ Fr. Spiegel, Erantsche Allerthumskunde, I, հր. 532 հմ. Mannhardt, German Myth., հր. 88 հմ.

² E. H. Meyer, Germ. Mythol., հր. 163 հմ.

³ E. H. Meyer, Germ. Myth., հր. 107.

⁴ Mannhardt, Germ. Mythen, հր. 88 հմ. Leistner, Das Rätsel der Sphinx, II, հր. 73 հմ.

⁵ Lucifer տեղիքն են մագած համարում ամենք Լոկի տեղիքը (E. H. Meyer, Germ. Myth., հր. 163).

խարտում է շղթան, որ քանի գնում բարակում է։ Ս. Հակոբի տոնին (հուլիսի 25) մազ է մնում որ կտրվի, բայց մի անգամից դարձյալ հաստանում է։ Ծթն նույնիսկ մի դարբին հին սովորությունը չպահն, Լուցիֆերը ամբողջապես կխարտե կպրծնի... Սմայլանդում նույն ժողովրդական հավատքը կա միայն այն տարբերությամբ, որ այստեղ Լուցիֆերը ծանր շղթան ոչ թե խարտում է, այլ յուր ճանկերով կտրել աշխատում։ Նույն հավատքը կա և այլքանոց մեջ. սատանան ամբողջ առարին աշխատում է ազատվել յուր շղթաներից, Ավագ Ծարաթ օրը քիչ է մնում, որ պրծնի. բայց Զատիկ առավոտյան Փրկիչն երևում է և նորեն շղթայի զարնում սատանային։

Հայտնի է, էմինն արգեն բերել է վրաց գոռոզ և հայարտ Ամիրանի առասպելը։ Ամիրանին Աստված կապում է Գովկասյան լեռներից մեկի մեջ երկաթի շղթաներով, իսկ Ամիրանի սուրբ մի կողմ է ընկած և միայն նորա հավատարիմ շունն անդադար լիզում է իր տիրոջ շղթաները... Սակայն Ավագ Հինգշաբթի երկրի խորքից մի զարբին է դուրս գալիս և սաստիկ ծնծում է մաշված շղթան մինչև որ դարձյալ ամբանում է՝

Մեր Մհերի առասպելի հետ մեզ հայտնի չէ թե արդյոք կապված է դարբինների այս սովորությունը, որ ըստ էմինի վկայության, մինչև այսօր պահված է պարսկահայերի մեջ։ Սակայն մեր Մհերի առասպելի մեջ գտնում ենք համանման առասպելների մի ուրիշ գիծ, որ ըկա Արտավազդի առասպելի մեջ։ Ըստ գերմանական առասպելին, նույն Լուցիֆերը շղթայված ընկած է մի քարայրի մեջ, ինն դուռն էսկում, ճակատագրի երեք աղբյուրների մոտ (Schicksalsjungfrauen) և պահում է մի զանն։ Այսպես և Մհերը փակված է վանա քարում։ Ուրիշ դեմով ներսը ետխի ֆուլակ կգտանա... Մհերը շարունակ անոր վրա կնայի. հոր այդ ճախը կզագարի, այն օր Մհերը կազատի, դուրս կելլի... Ամեն տարի Համբարձման գիշերը... Մհերի դուռը կբացվի... ով որ ներս մտնե, որքան ոսկի կուղե կառնե դուրս կելլե, վասնզի ի՞նչ ախարհի օսկին կուղված է՝

Ճախի ֆալակը, իսկապես Զարխի ֆալակը, բախտի, ճակատագրի անիվն է, երկնային անվի (չարխ) և մոլորակային երկնքի (ֆալակ) պատկերով։ Մի ըմբռնում, որ պարսիկներից է անցնել հայերին։ Բախտի կամ ճակատագրի հետ կապ ունի և Համբարձման տոնի արդի ժողովրդական հավատալիքը¹։ Բայց մեզ համար հետաքրքիրն այստեղ այն է, որ Մհերի առասպելի հետ կապված է ճակատագրի ու զանձի այս զրույցը, որ ունի գերման Լուցիֆերի առասպելը։

Բերած օրինակներով արդեն պարզված ենք համարում, որ մեր Արտավազդի առասպելը նույն է, ինչ որ Մհերի առասպելը, և որ այդ երկուսն էլ մեր հին ու նոր պատմվածքներն են այն ընդհանուր տարածված առասպելի, որ գտնում ենք շատ ազգերի մեջ։ Մենք երկար կանգ չենք առնիլ այս առասպելի ծագման և մեկնության մասին։ Զանազան առասպելաբաններ այս կամ այն տեսակ մեկնությունն են տվել։ Մանհարդն, օրինակ, այդ առասպելը բացատրում է ամայրույթի օգերևութով։ Պարսից Զահակը կամ Ամի Դահակն նույն է ինչ որ վերայական Ահին (Ahi Dhasaka) օձը, ամայրույթի վիշապը։ Նորան հաղթողն ու կապողը Ֆրեդուն (Հրուդեն), հին ձևով Թրայեստանա, նույն

¹ Էմին, Մովս. <Նորնոցի> և հայոց հին վեպերը, հր. 81։

² Ավանդություն, Գրգուրոս, հր. 184։

³ M. Abeghian, Der armen. Volksglaube, հր. 80 հատ., 61 հատ.,

է ինչ որ հնգական Տրիտա աստվածը, որ դեների և վիշապի դժմ կռվի մեջ ինդրայի օգնականներէրց մէկն է, Քարայրը, որի մէջ հակաստապրի կուշտերն են ընակում, է ամպը. նոցա գտնան է արեգական ոսկին, իսկ այդ պահպանող աստուծան կամ կողիքիքը նույն է ինչ որ ամպն ու արեգակի փայլքը փակող վիշապը՝ Վրտրան՝ Ահին, Աժի դահական:

Մեր վիշապ կամ դե Արտավազդն ուրեմն միենույն Աժդահակն է, որով և նորա լար ու նախանձոտ ընամբորութունը, որ տալիս է մեզ խորհնացին ճշմարտեալէ պատմութեան մեջ, վիշապական գիծ պետք է համարել: Եվ այդ լար ոգին, վիշապը՝ փակվում է յազատն ի վեր ի Մասիս, որի վրա հին ժամանակ համատում էին թե վիշապներն են կենում: Այժմ էլ համատում են թե անտեղ վիշապներ կան և թե գետնի տակից լսվում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ որտապատառ կարող է լինել: Արդոք այս դիմն էլ մի մութ հիշողութեան լէ՛ ալն երկրաշարժի, որ առաջանում է իզկի, Աժի Դահակի (Ջոհակի) ցնցումից: Այդ ավելի համանական է թվում, երբ տեսնում ենք Աժդահակի առասպելի մի ուրիշ գիծն ևս այժմ նույն Մասիսի վրա կապված: Ըստ խորհնացու, ինչպես դիտենք, Հրուզնն Աժդահակին կապելուց հետո՝ յուր անդրին հաստատում է նորա դիմաց (գինքն անդրի ընդդէմ նորա հաստատել): Իսկ մեր նույն Մասիսի վրա այժմ առասպելարանում են թե անտեղ թուղտերի քարվան կա քարացած և թե ուղտապանն էլ բռնացած կանգնած է:

Քաղհ:— Ի՞նչ ոգիներն են վիշապ Արտավազդին կապողները: Եղնիկի մեջ միայն Արտավազդին կապողները վիշապներն են: Մակայն այդ, ինչպես նկատեցինք, առասպելի նոր ձևն է:

Ըստ Հայսմապուրթի և ըստ Վանական վարդապետի Արտավազդին կապողները Աստվածն են: Այս աստվածք կոչումը, եթե մի կողմից ցույց է տալիս, որ հեթանոսութեան ժամանակ պաշտված էակներն են եղել Արտավազդին կապողները, մյուս կողմից ենթադրել է տալիս, որ քրիստոնեութեան ժամանակ այս ընդհանուր անունը՝ աստվածք փոխանակել է բուն հեթանոսական ժասմապուր անունին: Եվ այդ անունն է քաջք, որ գտնում ենք խորհնացու և Վարդան վարդապետի մեջ: Վերջինս գրում է. «Տեսեալ ոմանց Բաղաց և Վիշապաց տաճարս ի յերինս բարձունս և ընակութիւնս, ուր և զԱղէքսանդր կապեալ օւնին ի Հռոմ, և զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս, և զԵրուսնոց ի գետս և ի մոռայս»: Իսկ հետո գրում է. «Բայց մուրութիւն դիւաց խարհաց զկռապաշտարն Հայոց ի ձեռն քրմացն, որք ասէին թէ զԱրտաւազդ օմն վիշապք արգենեալ են կենդանի ի Մասիս լեառն. ի նա [և նա] ելանելոց են [է] և զաշխարհս օւնելոցս: Վարդանը Արտավազդին կապողներ է դնում նախ քաջք և վիշապներ, և ապա միայն վիշապներ: Բայց Վարդանի այս գրվածքի համեմատու-

¹ Արդի գրույցները, որքան մեզ հայտնի է, Փոքր Մատթի մասին են: Առաջինը, հարկով, հեղափոխութիւն կտրուկ էր Մեծ Մատթից Փոքրին տեղեկի: Միայն Գրիգոր ելաթեցու Հայսմապուրթի մէջ Արտավազդի մասին հիշվում է. «Ի Մաս: Լեառն որ է արագ Մատթայ: Ավագ Մատթոն ըստ այսմ Սեղով լեառն մեկնութեան է միայն գրողի կողմից: Մյուս տեղերում տնորդ է հիշվում, կամ միայն Մատթ, կամ Ազատն Մատթ: Ազատ կոչումը Մատթի համար հայտնի է Պանսելից (Սիբեռս, եր. 7. Հմմտ. Յերբե, Հայկ. աշխատ., եր. 141, ձևն. 1. Матрр. О явлеліи іи іісторіи Арменіи Анонимі): Արդոք Ազատ անունը Փոքր Մատթի համար չէ եղել, որով Ազատ Մատթի մեջ համապատասխան չէին յայտնու մշակման համար Սիւ Մատթ և Փոքր և Մեծ Մատթ: ձևին, Հմմտ. Գաւնի գետի ասորքն հոտանքի Ազատ Ազա կոչումը:

թյունը Ծղնիկի վերնում դրած հատվածի հետ ցույց է տալիս, որ նորա գլխավոր աղբյուրն եղել է Ծղնիկի Վիշապները նա վերցրել է Ծղնիկից, իսկ Գաւեւերը մի ուրիշ աղբյուրից։

Ի՞նչ ոգիներ են քաջք և ի՞նչպիսի բնավորություն ունին.

Վարդան վարդապետի վերնում դրած հատվածից իմանում ենք, որ քաջք և վիշապք համազգի էակներ պիտի լինին, քանի որ նույն քաներն երկսի վրա ևս պատմվում են։ Քաջքերն, ինչպես և վիշապները, բնակում են բարձր լեռների վրա և ունին այնտեղ տաճարներ։ Այնուհետև քաջքերի մասին պատմում են¹, որ կռիվներ են վարում, որս անում, կալերից ցորեն կրում և մատանեն-րից գինի տանում։ Նույնը պատմվում է, ինչպես տեսել ենք, և վիշապների մասին։ Այսքան նմանությունը հենց բավական է ցույց տալու, որ վիշապների և քաջքերի հավատը միևնույն բնական երևույթից է ծագած։

Վահագնի կովի մասին խոսելիս (եր. 110, 115) տեսանք, որ վիշապ մեղմում, ինչպես և ուրիշների մեջ, պտուտաճողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է։ Նորա դեմ կուլում է նույն օգերևույթի բարի անձնավորումը՝ Ինդրան, յուր օգնական մարուտների հետ, որոնք հողմերի անձնավորում աստվածներ են։ Բացի մարուտներից Ինդրայի զործակցում են և ռբհուները (Rbhus), որոնք մարուտների հետ սկզբնապես ոգիների միևնույն խումբն են կազմում, և որոնք համապատասխան են գերմանական էլբերը (Elben)։

Համեմատենք քաջքերի բնավորությունը մեր հին և արդի ժողովրդական հավատքով² մարուտների, ռբհուների, էլբերի բնավորության հետ և կտեսնենք որ մեր քաջքերը նույն ոգիներն են, ինչ որ նոքա։ Նոքա հատկապես նույնա-նում են գերմանական էլբերի հետ։

էլբերը, ինչպես և մեր քաջքերը, իշխում են ամբողջ բնության մեջ։ Ուստի և նոքա մասին թե մեր և թե գերմանական ժողովրդի մեջ կան շատ դրույթներ։ Նոքա իրենց բնավորության բոլոր նուրբ գծերով և լուրատեսակ առասպել-ներով ու պաշտամունքի բոլոր ձևերով հնդեւոպական են։ Էլբերի սկզբնական ծագումը գլխավորապես օդային է։ Կան ամպերայի, հողմի և ամպի էլբեր։ Առաջին երկուսը, ամպերայի և հողմի էլբերը, որոնք համապատասխան են մեր քաջքերը, գլխավորապես արական են։ Իսկ ամպի էլբերը իգական են, կին էլբ են (Elbinnen)։ Սոքա համապատասխան են մեր փարիները, հին պարիկ-ները, գլխավորապես ցրի (սկզբնապես ամպի) հրեղեն աղլիխներ, պարսից պայրիկաները, հնդկաց ապսարանները, որոնք ուրիշ կարգի ոգիներ են։

էլբերը, ինչպես և մեր քաջքերը, նայելով իրենց օդային բնությանը, մերթ խավար, տգեղ, վնասակար, բուռն ու լար են. մերթ լուսավոր, գեղեցիկ, օդ-տակար, ծառայության պատրաստ և բարի։ Ուստի և կոչվում են լար քանեւ (böse Dinger) և նազելիներ, բարիներ (Holden, gude, hilge Höllen)։ Այս-

¹ Հ. Ալիքան, Հին հատար, եր. 194։

² M. Abeghian, Der armen. Volksglaube, եր. 103. Նկատենք, որ մեր արդի ժողովրդական հավատքի մեջ, նայելով գավառին, ուշ ոգիները զանազան անուններ են կրում։ Մոզորոկան է Կալ առեւեր, իսկ իգականների համար փառի (հին պարիկ)։ Սակայն երբեմն քաջք և փառի շփոթում են, այսինքն ինչպես փարին նաև արականների համար է գործածվում, այդպես և քաջք իգականների համար։ Այնուհետև քաջքերը, իրենց բնության լար կոչման առաջ կամ քրիստոնեության ազդեցության տակ, կոչվում են լարեւք, լարեւք, գրեւ, նույնիսկ աստանա։ Գերմանացի մեջ ևս էլբերը զոռալուս անուններ են կրում։

պեան և մեր քաջքերը կոշկում են շաբ, շաբունք (այլև գրող, դե սատանա)¹, և մեզանի լավեր, մեզնի աղիկներ, աղիկ մանուկ:

էլրերին վերապրում են ամեն տեսակ մարդկային բան, Բերենք մի քանի դժեր մեր քաջքերի և գերմանական հողմի էլրերի բնավորութունից. նոցա շունչը մարդկանց և անասուններին հիվանդութուն է բերում: Մեղեւում հասկապեան սենյակի մեջ փոռ դաժին և առհասարակ քամու հունը համարվում է քաջքերի շունչը: Փամուց հիվանդացողը քաջքերի զարկածն է: էլրերը շրջում են պտուտահողմի մեջ կամ հարուցանում են պտուտահողմ, որ նոցա անու-նով կոչվում է գրուտներին քամի (Drutenwind), Այսպեւ և մեր քաջքերը կապ-ված են պտուտահողմի հետ, որ կոչվում է քաջքամի: էլրեր և քաջքեր, եր-կուսն ևս մարդկանց զարնում են և մարդու խնձ քոցնում, խելագարեցնում: Այդպիսիք կոչում են գերմանացոց մեջ Elbentrötsch, Elbst, Drut եւն, իսկ մեր մեջ քաջքամի, քաջքամի: Նոքա երկուսն ևս, իբրև քամու ոգիներ, գող ու խաբեբա են,—գողանում են զանազան բաներ, մուրեքնում են մարդոց, ճանապարհից շնդում, տանում ամայի տեղեր, կամ ժաշոկից ներքե գլորում և նմաներ: Հաճախ մարդկանց երեխաներն ևս գողանում են և տեղն իրենցը դնում: Իբրև հողմի ոգիներ նոքա երկուսն ևս գրավիչ երաժշտութուն ունին. և մեր ու գերմանացոց մեջ ևս նոցա միշտ տեսնում են խմբով պարելիս, եր-գելիս ու նվագելիս, կամ, ինչպեւ ասում են, հարսանիք անելիս: Երբեմն տղամարդկանց ու կանանց խաբում, ձգում են իրենց ամբողջ—նշանդի մեջ սպանելու կամ վնասելու նպատակով: Բայց միշտ չեն վնասում, օգնում էլ են: Նոցա բնակարանները քաջքամու, քաջքամու, քաջքամու, գերմանացոց մեջ Alfarhölen (քաջքամու) են լեռների վրա, ալրերում, որտեղից լսվում է երգ ու երաժշտութուն: Այդտեղից ձայն են տալիս մարդոց, երբեմն իբրև արձա-զանք, և նոցա ձայնը կոչվում է քաջքամու նույնպեւ, և գերմանների մեջ Albleich, նորվեգներն Huldreslaati: Բնակում են նաև ավեր տներում, աշնանն անքնակ թողած տաղամարներում: Որս են անում, նստում են զանազան ծառերի վրա և այնտեղից զարնում մարդոց: Կթում են կամ ծծում են կովերի (սկզբնապեւ ամպերի կովերի) կաթը²:

Քոզնում ենք ուրիշ նմանութունները: Բերենք քաջքերի և էլրերի մասին պատմած երկու գրույց: Եւս Մի գրույցով նոքա հրավիրում են մի տատ-մեր օգնելու մի ծննդկան քաջքի և իբրև վարձ տալիս են սոխի ու սխտորի կճնպներ, որ ոսկի է դառնում: Նկատենք որ նոցա օգային ծագման հիշողու-թյուն է նաև քաջքը տղա է բերում խոսքը, որ ասում են անձրև և արև եղած ժամանակը: Ավելի հետաքրքիր է մի ուրիշ գրույց, որ պատմվում է նաև հնդկական ուրուների մասին: Այդ գրույցով քաջքերը գողանում են մի կով կամ երկն, մորթում ուտում են. և հետո կովի ոսկորներն ու մորթին սարք-լով՝ կնեղանացնում են: Բնության մի առասպել է այդ, որ զանազան կերպով են մեկնում: Քաջքերը հողմի ոգիներ են: Աշնանը քամիները թվում է թե լա-փում են ամպերի կովը, որովհետեւ ծածուն այլևս անձրև չէ գալիս, իսկ գալ-նանը նույն քամիները նորից բերում են կաթնատու կովը, անձրևաբեր ամ-պերը³:

¹ Իբրև լար էակներ, թե քաջքեր և թե էլրերը հուլանում են պողպատով և կաթ-քաղով:

² Mannhard, Germ. Mythen, հր. 43, 46, 56:

³ Նույն գրույցը պատմում են և գերման. Քոզի մասին, միայն սա ամպի մի ուրիշ

Այսպէս մեր քաջներն ոչ միայն իրենց ընտելանալով, այլև զորուցներով նույն են, ինչ որ գերման էլքները: Իսկ էլքերին համապատասխան են, ինչպէս ասացինք, հնդկական որհունքը, որոնց անուններն անգամ նույնապէս են: Նկատենք նաև, որ էլքերի ընտելանալու հետ կապված է և դարբնարարները: Նոքա դարբնարար են Aplitgeschoss, կայծակ, Դարբնելու ավանդութիւն մեր քաջների մասին հայտնի չէ մեզ: Բայց եթէ Արտավազդին շղթայողները քաջներն են, ուրեմն և Նոքա հմուտ պիտի լինին դարբնելու արվեստին: Եվ արդոյք քաջների այդ դարբնելու մի նշանակը չե՞ն կատարում մեր դարբններին կառնը ոսկին քախելով:

Մի անգամ որ մեր քաջները նույն կարգի ոգիներ են, ինչ որ գերման էլքները և հնդկական որհունքը, այն ժամանակ հասկանալի է դառնում թէ ինչու քաջներն են վիրշապ Արտավազդին կապողը: Դոքա նույն հողմի ոգիներն են, մարտաւորներ, որհունք, որոնք գործակցում են Ինդրային, երբ սա կապում է վիրշապին: Բարձրագոյն էականն է, աստվածների անուններն ավելի շուտ են մոռացվում քան սուրբների կարգի ոգիներին: Այդպէս է եղել և մեզնում: Արտավազդին կապող աստուծու անունը մոռացված է, իսկ նորա գործակիցներինը պահված է:

Ամփոփենք մեր եզրակացութիւնը վիպասանի մասին: Մեր ուսումնասիրութիւնից հետեւում է, որ հայոց վիպասանը եղել են մի երգախառն պատմիկ, որի մեջ միացած են պատմական հիշողութիւններ, կենցաղական գծեր և երկու տարբեր առասպել: Պատմական հիշողութիւններն են Արտաշէս Ա, Արտաշէս Բ, (գոյցն և Արտաշէս Գ), Հրազմարտի և Տրդատ Ա թագավորների ժամանակից ու արարքներից: Առասպելներն են. 1. Թագավորազն Արտավազդի կոնվը վիրշապ Արգամանի և վիրշապների դեմ ու Նոքա կոտորելը և 2. վիրշապ կամ դե Արտավազդի կապվիլը քաջների ձեռով Մասիսի մեջ:

Վիպասանը յեղբայր մինչև վերջը վիպական հետաքրքրութիւն ունեցող մի պատմիկ է: Կեղերնը կազմում է Արտաշէս թագավորը, որի ձեռքը առաւ Երվանդը՝ դահլ խլում է Արտաշէսն ազատում է հայկառարի մեներ, Բազա-տունի Սմբատի՝ ձեռով: Պարսից (պարթևաց) ճշնութեամբ վերականգնում է

կենդանակերպ՝ քաղ է կենդանացնում, տանելուց հետո օգիտներն ու մարթն օտարելով (Mantkhardt, Germ. Mythen, էք. 48 հաշ., 57 հաշ.).

՝ E. H. Meyer, Germ. Mythol., էք. 137: Այս դրբէք ենք վերցրած և զերմանակու էլքերի ընտելութիւնը:

՝ Խորհնացին մեզ միշտ չէ տալիս հաստատ արտելու Երվանդ անվան վիպական լինելը: Երվանդ թագավոր մեզ հայտնի չէ: Ի նկատի ունենալով Երվանդի անունով հզած անգամը՝ Երվանդաշատ, Երվանդակերտ ևն, ինչպէս և այն, որ Երվանդի մասին առասպել էրել է.— Լարսանակաթիւնը և Վարդան վարդապետի հիշուք թէ քաջներն ու վիրշապները Երվանդին հաղթած ունին զի գետն և ի մոտայուս,— հաղթանակն առնել է համարել Երվանդ անվան վիպականութիւնը:

՝ Համարել վիպական է Սմբատ անունը, որ և ըստ Խորհնացու վերաբերման (Բ, Ժր) հիշում է հզել առասպելի մէջ: Բայց այդ դէպքի մէջ անթի արդէ Սմբատ, և զինչ յԱրտն գործեցաւ. և քնակել Արտաշէս Խորհնացին յոր շնորհաբանու պատմութիւնն է անում, աստի զմիւր է ասել թէ ինչը վիպականից է վերցրած և ինչը Խորհնացու իրեն ճշմարտան է: Գուցէ վիպականից այնչէ կամ ըստ անվով բան վերցրած լինի: Հմտ. Մտն. Визант. армянск. Халатм. Арм. 3900. Նույնը պէտք է ասել և Երվանդ, Ժր, Ժր և Ժն պիւնիկի պատմութիւնն համար, որոնց էութեանը վիպական պէտք է համարել, քանի որ վիպ. Խորհնացի թագաւորութիւնն մեջ հիշվում է Արտաշէսի արդիների նախանը և Գոմարտնիսի դուրսուցը: Հայաստանի Իսկ հաջորդ Ժր.— ԺՊ զուպիների պատմութիւնը կարող է վերցրած լինել: մոգովորական Արտաշէս թագավորի անվանը հաղթած հիշողութիւններից, լինին

յուր հոր գահը, շինում Արտաշատ: Ալաններն արշավում են: Այնուհետև գալիս է Արտաշեսի խնամութիւնն ալանների հետ, վիշապազանց առասպելը, Արտաշեսի հարաքերութիւնը Դոմետիանոսի հետ, եղբայրների իրար նախանձելը և վերջը վիշապ Արտաշատի փակվելու առասպելը:

Եթե մեր վիպասանքի հետ համեմատենք մեր արդի ժողովրդական վեպը, կտեսնենք, որ երկուսն ևս նույն քնափորութիւնն ունին: Ճիշտնապէս ժողովրդական վեպն է, որի մեջ պատմական, կենցաղական կողմեր միացած են: Կենդանուր կաղմում է գլխավոր հերոսի, Դավթի կյանքը մանկութիւնից մինչև մահը, կենսագրական ձևով: Վերջը հայրն անիծում է յուր որդի Մհերին, որ փակվում է Վանա քարի մեջ, որով և վեպը վերջանում է:

Ը

ՏԻՐԱՆԻ ԱՌԱՍՊԵՆԸ

Աղբյուր:—Ումնի՞ց է անում մեր պատմագիրը Տիրանի պատմութիւնն ու առասպելը: Ի՞նչ գլխի մեջ Տիրանի գովեստն անելիս հիշում է ժողովրդական երգերը. «Ջորմ է ասէին ի հինսն մեր, որք բամբուռն եղէին: Եվ ապա աղիւլացնում է. «Եվ զի՞նչ ինձ ի գիրս յայս արդե՞ք բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստը և պատմութիւնը յերկարելս: Պատմագիրն ուրեմն պարզապէս հիշում է, որ թի հինսն, հետք մեջ (Խորենացու ժամանակի նուկատմամբ) երգեր ու գովեստներ եղել են և թե յուր զրածը քաղված է այդ երգերից:

Այնուհետև, սակայն, երգեր չէ հիշում: Եթե ոչ մի աղբյուր հիշած չլիներ, պետք է ընդունենք անհրաժեշտորեն, որ հաջորդ գլուխների համար ևս իբրև աղբյուր ծառայել են սկզբում հիշած երգերը: Բայց Տիրանի և Աթոհակի առասպելը պատմելիս (Ի՞նչ—լի գլուխները) աղբյուրը հիշում է, միայն անորոշ ձևերով. «որ պատմէն» (Ի՞նչ), «ասէն» (Ի՞նչ, Ի՞նչ, Ի՞նչ), «պատմի և այլ» (Ի՞նչ):

Թեպետ և ոչ մի տեղ Մար Աթոհի անունը չէ տալիս, բայց ումնէ՞ Մար Արտաից քաղած են համարում այդ պատմությունը, ի նկատի ունենալով, թեևս, որ ուրիշ տեղերում Մար Աթոհի համար գործածած է միայն «ասէն» բայը: Այսպէս հ. Ստեփաննի յուր թարգմանութեան մեջ (նր. 384, ծան. 149) գրում է. «Ար պատմէն խոսքը վերաբերում է ոչ թե Աթոհակին, ինչպէս հասկացել է էմին, այլ համարենք Մար Աթոհ Կատինային»: Եվ նա ինքն այդ խոսքը թարգմանում է. «Երկուսն պատմում էս: Սակայն լիցենք ի՞նչ հիման վրա: Ար պատմէն բառացի նշանակում է «պատմողը», ևս որ պատմում էս: Պետք չէ աչքից փախցնել, որ այդ բայը եղակի է և վերջավորութիւնն ունի և տառով, իսկ վերջի և տառը հոգ է միայն, որ հաճախ դրվում է բայերի վրա:

Եթե «որ պատմէն» նշանակում է «պատմողը», ինքնըստինքյան երևում է, որ այստեղ տպագրի մեջ մի բառ պակասում է, դի անհեթեթութիւն է ասել թե Աթոհակ տեսնում է ապագան թի ձեռն անընդհանր իմն նախատեսութեանց, որինակաւս այսուիկ որ պատմէն:

զրավոր թե քերական: Խորենացին միջոց չէ տալիս մեզ որդեկու թե արդե՞ք վիպասանից գտնել է այդ գլուխների համար, թե չէ:

Մայր Աթոռի գրադարանի ձեռագիրներէ մեջ գտնուի ենթ այդ պակաս
քայլը՝ թասէք, որով և ճիշտ ընթերցվածը։ Այստեղ Ա տեսակի ձեռագիրները,
ինչպես և S տեսակից ՎՏՈՐք, դեզութիւնս ունեցողները (№ 248, 1663, 1668),
նույնպես և ՎՏՈՐք, դեզութիւնս ունեցողներից երեքը (№ 249, 1667 և Սարգիս
հայկակոպոսի ձեռագիրը)՝ ունին. «օրինակաւս այսօրիկ ասլ որ պատմէնք»
այս կերպ է ասում պատմողը։

Ո՞ր է այդ պատմողը։ Մար Աքա՞ս։ Առաջին Հայացքից դարձանալի
է թվում, որ Հինգ անգամին ևս մեր պատմագիրն անորոշ է թողնում յուր աղ-
բուրը և րավականանում է ասելով առաջին անգամ՝ թասում է պատմողը,
և այնուհետև՝ միայն թասում է։ Խորենացին, որ այնքան մեծ կշիռ է տալի
գրավոր աղբյուրներին, Մար Աքասի անունն այստեղ այսպես անորոշ թողնել
չէր կարող։ Իսկ ընդհակառակն, երբ կամ առատելը, որ մի անգամ իրրև
աղբյուր հիշել է Ի՞նչ գլխի մեջ, կարող էր հաջորդ ինչ—լ գլուխների մեջ անո-
րոշ թողնել, որպեսզի, ինչպես մի տեղ նկատել է շնորհ. Միարան՞, Հաճախ
չերևար թե՛ օգտվել է միայն երգից կամ առասպելից։ Եվ շնորհ. Միարանն այս
Հիման վրա,—ինչպես և ի գլխի մեջ եղած թվեյաց երգերի Հիշատակութիւնն
ևս Տիգրանի և Աժդահակի պատմութիւնն համար մի աղբյուր համարելով,—
եղբայրացնում է. «երեմում է որ վիպասանների երգը Աժդահակի պատմութեան
կից շաբաթաբար էր և եւս սերնդյան՝ վիշապագունների գրույցները։ Իսկա-
պես մենք տեսնում ենք Տիգրանի և Աժդահակի հետ Հանդես դուրս գալիս և
Արշակունի Արտաշեսին և Սաթենկանը կամ Սաթինկանը, և Արգամ—Արգամա-
նին և Արտավազդին։ Այս բոլոր ամբողջովին առկած են վիպասանական
երգից, նաև (sic) Թվեյաց երգերից»։

Վիպասանաց և թվեյաց երգերը, գիտենք, նույնն են։ Վիպասանաց երգ
չէ Հիշվում Տիգրանի համար, այլ միայն բամբուկ երգ, Իսկ որ Խորենացին
Աժդահակի և Տիգրանի առասպելի համար օգտված լինի թվեյաց կամ վի-
պասանաց երգերից և մանավանդ թե՛ այդ առասպելի մեջ, իբրև շարահարու-
թիւն, դուրս եկած լինին Արտաշես, Սաթենիկ, Արգաման, Արտավազդ,—
այդ մասին ոչ մի Հիմք չունինք։

Տեսնենք Խորենացու գրածը, որ մեզ արդեն մի երկու անգամ պատահած
է ուրիշ առթիվ։ Մեր պատմագիրը ի գլխի մեջ պատմելով թե՛ Տիգրանը Մա-
րաց գերիներին և Աժդահակի կնոջը քնակեցնում է «յարենիւնայ ուսոց մեծի
լերինն մինչև ի «համանս Գողթանն», հարում է. «Յայտնեն զայս ճշմարտա-
պէս եւ թուելանցն երգք...», յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց
նորա, յիշելով այլաբանաբար և զգարմիցն Աժդահակայ՝ վիշապագունն զնո-
սա կոչելով. դի Աժդահակդ ի մեր լեզուս է վիշապ։ Այլ և ճաշ ասեն գոր-
ծել Արգամանայս նչ։

Ինչպես պետք է հասկանալ Խորենացու այս խոսքերը։

Նախ՝ Հիշատակութիւնն անից. «Յայտնեն զայս ճշմարտապէս եւ թուել-
անցն երգք», ընալ թվեյաց երգերը, պարզ երևում է, որ մեր պատմագիրն
յուր արած պատմութիւնն համար ուրիշ աղբյուր է ունեցել, թե՛ չէ ինչու՞ պետք

¹ Այս վերջին երգն ձեռագիրները կազմում են մի առանձին խումբ S տեսակի ձեռ-
ագիրների մեջ։ Պետք է նկատել, որ ձեռագիրների մի մասը օգտամունքն բաղդ Ծ-ով ունին,
որ սխալ է։ Մենք ձեռագիրների ճշնութեան մեջ ժողովել ենք ուղիւ։

² Եւսոք. Պատմ. լուստմն. և, եր. 74։

³ Նույն, եր. 81։

է դրեմ, թե այս հայտնում են նաև թվելիաց երգերը: Այստեղից ուրիշն քննել
և դրականացնել կարելի չէ թե նորենացին Տիգրանի և Աթաշակի պատմութիւնն
ստեղծուած է թվելիաց երգերից, այլ այն միայն՝ թե նորենացու՝ ուրիշ աղբյուրից
առած պատմութիւնն նման մի բան պիտի պատմուած լիներ և վկայութիւն
կանչուած թվելիաց երգերի մէջ:

Ապա՝ կարելի չէ ընդունել մինչև անգամ թե թվելիաց երգերը վկայու-
թիւն են կոշիկած Տիգրանի և Ամղանակի ամբողջ պատմութիւնն նման: Նո-
րենացու խոսքերը մեզ իրավունք չեն տալիս այդպէս հասկանալու: Ուրիշ
խոսքով, «այսպէս դերանման տակ՝ ոչ թե Տիգրանի և Աթաշակի ամբողջ պատ-
մութիւնը կարելի է հասկանալ, այլ բնականորեն միայն է գլխի պատմութիւն
ներկորդ մասը, թե Աթաշակի զարմերը. նորա կին Անուշը և մարացի գե-
րիները քնակում են Մասիսի մերձակայքում: Թե այդպէս պետք է հասկանալ,
այդ երևում է հետևյալներէ:

Անադին՝ պատմագիրը պարզ ասում է թե թվելիաց երգերի մէջ պատմվում
է ռաբրատշիսէ և զորդուց նորա և թե այդ երգերը հիշում են «այսպէս ան-
բար և» (նաև) զգալիցն Աթաշակայ՝ վիշապազունն զնոսա կռիւով: Ու-
րեմն թվելիաց երգերը խոսում են իսկապէս Արտաշեսի և նորա որդիների մա-
սին, և հիշում են նաև վիշապազուն: Իսկ ռաբրատ Աթաշակայն, որ նորե-
նացին հասկանում է իրեն մարգ, ինչպէս գիտենք, նորենացու մեկնութիւնն
է, որ նա ուրիշներից, առասպելը պատմողներից է առնում: Եթե այդ մեկ-
նութիւնն սկզբնական աղբյուրը նույնիսկ վիշապազունները եղած լինին, «մար-
դիկ կողմանն պիտեալէտ գաւառին Գողթան», մի բան որ, շատ հաճախակե-
ն է, — դարձեալ նորենացու խոսքերից այսքանը միայն կարելի է եզրակացնել
թե վիշապազունները թվելիաց երգերի մէջ պատմել են Արտաշեսի և նորա որ-
դիների հետ և վիշապազանց կամ վիշապների մասին, քայք Աթաշակի զար-
մեր, այսինքն մարգ են համարել այդ վիշապազունը: Որպեսզի Տիգրանի և
Աթաշակի ամբողջ պատմութիւնն էլ հետը հասկանալինք, պատմագիրը
ներքին բովանդակութիւնը դոնե հետևյալ ձևով պետք է բերած լիներ. «Յորո
շարին բանք երգեցն և զԱրտաշիսէ և զորդուց նորա», «նաև վ Արտաշեսի
և նորա որդիների մասին»: Բայց քանի որ այդ սեռեւ շարժական ևս չկա, ուստի
ոչ մի ձևով կարելի չէ հասկանալ թե թվելիաց երգերի մէջ եղել է Արտաշեսի,
նորա որդիների ու վիշապազանց պատմութիւնն հետ նաև Տիգրանի և Աթաշա-
կի ամբողջ պատմութիւնը: Եզրակացութիւնը պարզ է, եթե թվելիաց երգերի
բովանդակութիւնն մեզ ոչ մի անկարկութիւն չկա Տիգրանի և Աթաշակի ամ-
բողջ պատմութիւնն վրա, ուստի և հիմունք չկա կարծելու թե պատմագիրն այդ
պատմութիւնն համար վկայութիւնն կոչած լինի թվելիաց երգերը:

Երկրորդ՝ «այսպէս դերանման տակ Տիգրանի և Աթաշակի ամբողջ պատ-
մութիւնը կարելի չէ հասկանալ, որովհետև մինչդեռ պատմագիրն այդ պատ-
մութիւնն մասին հիշատակութիւնն չէ առնում երգերի բովանդակութիւնն մէջ,
հատկապէս և մանրամասն կանգ է առնում Մասիսի վիշապազանց վրա՝ նա
բերում է թվելիաց երգերից մի քանի հատմաններ, որոնք, իրեն նորենացու
խոսքով, են սանյայտ իրք վիշապաց, որք են յազատել և անկապ բան է առնում:
Եթե նա յուր վերնում գրած պատմութիւնն համար վկայութիւնն է կանչում
թվելիաց երգերը, բերելով անոնց բովանդակութիւնը, ըստիցայն հասկա-
նալի է, որ ներքևի վկայութիւնը և բերած կտորները մի հաստատութիւն

պիտի համարվին վերելի պատմութեան համար և հարմարվին այդ պատմութեանը: Արդ, վերնում պատմել է թե Աժդահակի առաջին կինն Անուշը և բազումք ի սերմանէ Աժդահակայ և ուրիշ շատ մարացի գերիներ ընակում են յաբնելայ ուսոց մեծի լերինն, յանդորրութեան սպառուածի փրփի մեծի լերինն, առ ուսամբ լերինն (Մասեաց): Իսկ ներքնում նա վկայութեան կոչելով թվելլաց երգերը, առանձնապէս կանգ է առնում Մասիսի վիշապների կամ վիշապազանց վրա, որ ինչպէս գիտենք, հասկանում է իբրև մարք և դարձք Աժդահակայ, Շատ պարզ է ուրեմն, որ ներքնում դրած՝ Մասիսի վիշապների ու վիշապազանց (մարաց, զարմից Աժդահակայ ըստ մեկնութեան) առասպելի կտորները ընդված են իբրև վկայութեան վերնում դրած պատմութեան համար թե Անուշը և մարաց գերիները, զարմք Աժդահակայ, ընակած են Մասիսի ստորոտներում:

Այսպէս, խորհնացու այդ վկայութիւնից տեսնում ենք նախ՝ որ նա Տիգրանի և Աժդանիկի պատմութիւնն ամբողջ ուրիշ աղբյուրից է առնում և ոչ թե թվելլաց երգերից: Եվ ապա՝ վերջին երգերը, այն էլ ճշմարտապատմութիւն չի նած, վիշապք և վիշապազունք մեկնած իբրև մարք և զարմք Աժդահակայ, վկայութեան են կոչված պատմութեան միայն վերջին մասի համար, որ է սվասն Անուշայ առաջին կնոջն Աժդահակայ և վասն ընակութեան գերույն: Մարաց առ ուսամբ լերինն Մասեաց:

Եթե թվելլաց կամ վիպառանց երգերից չէ առած Տիգրանի և Աժդահակի պատմութիւնը, կարող է ուրիշ երգերից առած լինել: Ըստինքսան մի անհավանական բան չէ այդ, բայց մենք ընդունել չենք կարող: Իբրև միակ հիմունք գտցն կարողանար ժառանգել այն առարկութիւնը թե իմ—կուլմենների մեջ անորոշ թողած ձևերը՝ բառէն, զոր պատմէն, կարող են նախնիաց Իդ գլխի մեջ հիշված երգերին վերաբերել: Արդարեւ, թվելլաց երգերի բովանդակութեան մեջ (Ա, 1) մի տեղ երգի համար եղանկի բառէն բայն է դորժածած: Եւս անց ասել, զնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ: Սակայն երգերի համար այս եղանկի բառէն ընթերցվածը շատ կասկածելի է, քանի որ նույն տեղում ութ տողի մեջ երեք անգամ հոգնակի բառեն ենք գտնում, իսկ մի անգամ բառէն: Ուրիշ տեղերում ևս երգերի և առասպելի համար հոգնակի թվով է գտնում բայը: Եվ դարձաւ, եթե Աժդահակի և Տիգրանի առասպելի մեջ լուկ բառէն բայը այսպէս երգի համար հասկանալ աշխատենք, ոչ մի ձևով կարելի չէ աղբյուրի առաջին անգամ հիշատակութիւնը, բայց որ պատմէն երգի համար հասկանալ: Մի՞թե երգի համար կարելի է ասել թե բառում է նա, որ պատմում է, պատմողը: Այդ պատմողի համար է դրած և հաջորդ բառէն ձևերը:

Ո՞վ է արդ այդ պատմողը, որի անունը չէ տալիս խորհնացին: Արդոք Մար Աբաս: Այս պիտի լինե՞ր հարկավ առաջին ենթադրութիւնը: Սակայն խորհնացու Մար Աբասից օգտվելու եղանակի ուսումնասիրութիւնը և ապա Մար Աբասի (ըստ խորհնացու) և Անանունի (որ Մար Աբասից է առած) համեմատութիւնը ցույց կտա մեզ, որ այստեղ Մար Աբաս չէ նորա աղբյուրը:

Մար Աբաս և Անանուն:—Խորհնացին Մար Աբասից օգտվելիս կամ նորա անունն է տալի, կամ պատմագիրն, նույն պատմագիրն, ժամանակագիրն կոչում նորան: Ա գրքի Թ գլխի մեջ գտնում է յուր ժրագիրը. Եւրդ ի նայն մառննէ (Մար Աբասի) սկսեալ ասացից Յապետոսի, Մերոդ, Սիրաթ, Քակադ, որ է Յարեթ, Գամբը, Թիրաս, Թորգոմ: Յետ որոյ էայն ժամանակագիր (Մար

Արաս) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակ, և զայլն ի կարգի, զորոշ յառաջագոյն ասացաք: Արդ, հառաջագույն հիշած անունների կարգը, (ցանկը) դտնում ենք և գլխի մէջ աչպես. Հարթթ, Գամբր, Բիրաս, Թորդոմ, Հայկ, Արմենակ, Արմայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ, Արա-կնշանակն խորենացին Հայկից մինչև Արա գեղեցիկ պիտի քաղն Մար Արա-սից: Այդպես էլ արեւ էլ նա, մի քանի բան միայն ուրիշներից առած, ավել-լացրած է:

Ուշադրութիւն պիտի դարձնել այն հանգամանքի վրա, որ ինչ որ խո-րենացին Մար Արասից քաղած է դնում, գրեթե բոլորը կա Անանունի (Մար Արաս Մծորենացու) մէջ: Այստեղ մի քանի բան միայն համառոտ է. ինչ-պես՝ Արամի անունն է միայն հիշված: Զէ հիշված Շամիրամի մահվան մա-սին միայն: Անշուշտ չկան և այն ամենը, որ խորենացին ուրիշ աղբյուրից է առնում. ինչպես՝ ինչ որ ժմ գլխի մէջ, Մար Արասից օգտվելուց հետո՝ աղբյուրը փոխելով, գրում է անորոշ ձևով՝ աւսենա, Կասինա, Կասիա Բղնուն-յաց, Մանավազյանց և խորհրդանշան մասին: Զկան Անանունի մէջ նաև Արազած, Երասի, Շիրակ, Փառախոտ, Յուսկերտ, Մասիս, Գեղ, Գեղաքունի, Սյունիք (Սիսական), Գեղամի, Գառնի անունների ստուգաբանութիւնները կամ այն պատճառով, որ Անանունը համառոտ է, կամ թն խորենացու իրեն հարմարեցրածներն են ուրիշներից առնելով կամ իրենից, եւ այս ավելի հա-վանական է:

ԺԶ գլխի պատմութիւնը, Վան քաղաքի շինութիւնն նկարագրելը խորենա-ցին իրենից է առնում, դնելով իրեն աղբյուր. սորպէս ասենք, Երազէս լանձա-կն: Ուստի և այս նույնպես չկա Անանունի մէջ: Մնացածը գրեթե բոլորը, ինչ որ Մար Արասից է առնում, աշտարակաշինութիւնից մինչև Արա գեղեցիկ և Ասորեստանցոց տիրապետութիւնը, դնում ենք Անանունի մէջ:

Այնուհետև արդեն խորենացին և Անանուն տարբերվում են: Եւ այդպես էք պիտք է լինեն, քանի որ խորենացին Արա գեղեցիկից հետո, ինչպես ինքն ա-սում է, զանազան աղբյուրներից սլարմարելով կարգում է և յուր պատմու-թիւնը: Մար Արասն անշուշտ մնում է իրեն աղբյուր, բայց նա միակ և գլխավոր աղբյուրը չէ: Ուստի և նա ԺԹ գլուխն սկսում է աղբյուրների մաս-րամասն հիշատակութիւնով և թն ինքն ինչպես է օգտվում այդ աղբյուրներից: Մենք այդ հատվածն ամբողջ կարտագրենք, դի հետո էլ պիտի պետք զա մեզ:

«Որ ինչ զկնի մահուանն Շամիրամայ: Յարմարեալ զամենայն կարգիցք քեզ ի գիշ-լալառնի (այսինքն Ա գրքի մէջ) զազգիս մերոյ զաւագադոյն զարտ և զնախնիս, և որ ինչ վտան որոց զարցք և իրականութիւնք իւրացունչիւր, աշ ինչ կամառաւանական և աշ ինչ ան-պատշաճ ի սմա յարմարելովք բան, աշ առ ինչ ի քոց. իսկ ըստ նմանաց ավտո ևս որ ինչ ի բանից արանք իմաստանք ևս յայտնիկ Բաղմանակալ, յայդ մէջ արարաւորս արտաքոց Կուսպի զԿուսպիթիւն: Եւ ամեն լինի արարաւորս ի պատմութիւն: յայնիկ ըստ միւրոյ յամարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւացումն, Աստուծոյ լինի յայտնիս. և մարդկան զգլխիս կամ բարեխիս, և մենք այնքանիկ ուտար և քացակացեալ: Բայց զօգտութիւն քարարուոյ և հաւաքութիւն Թուր կարգի պատմեանք՝ զհշմարութիւն աշխատութիւն-թկանս մերոյ անխորհի: Եւ այսօրիկ յայտնի կարգից, կամ հաւատի կամ դոյնն ինչ կանալ յարգարույն, օկտոյց քեզ ևս որ ինչ զկնի յայտնիկ ի նիւմուն արտմարնիկ պիտի» (Ա, ԺԹ):

¹ Շեքր. Միքայել Շամիրամի մահը խորենացու մէջ՝ Մար Արասից քաղած չէ հա-մարում, այլ առաջնից: Ենք այս հայացքը, որ ռակայն կանականիկ է, հիշտ լինի, այն ժամանակ Շամիրամի մահվան դատմութիւնը չէր էլ կարող, հարկավ, լինել Անանունի մէջ:

² Եւ անտակի Առաքելներն ռակն սլորենիւնք, Ս Թ16, քորիանիւնիւնք:

Աղքատութեան հիշատակութիւնը մնում է մինչև Ա գրքի վերջը և մինչև Բ գրքի Թ գլխի վերջը, ուր հիշում է. «Անտառներ սպառին բանք ծիրանայն Մար Արամ Կատինայն: Կնշանակն այդ պատմութիւններ համար ի միջի ալլոց օգտվել է և Մար Արամից¹: Բայց պատմութիւնն այսպէս չէր լինելու և, խորհնացու յատերով տանն, ժմերոց ասագագուն արանն և նախնեաց, ժմերոց արանն, մանաւանդ Թագաւորաց, ռապտանեաց, լեւախնեաց մերոց պատկաւորաց (Ա, ԻԿ) անունների տկարքն իրեն պատմագրի յարմարածն ու կարգածն է»:

Սակայն աղքատութեան հիշատակութիւնից հետո՝ նա այս կամ այն պատմութիւնների համար մտնելովու աղքատներ էլ է հիշում: Այսպէս ԺԹ, ԻԱ գլխերի մէջ հիշված կան զանազան անորոշ ձևավոր աղքատներ: Մար Արամի անունը ոչ մի անգամ չէ տակն: Եվ մենք Անանունի մէջ ևս այդ պատմութիւնից ոչինչ չենք գտնում:

ԻԲ գլխի մէջ Թագաւորութեան համար իբրև աղքատ դնում է նախ անորոշ ձևերով՝ «սահն» և ապա որոշ ձևով. «սահ պատմագրից» (Մար Արամ): Եվ մենք Անանունի մէջ գտնում ենք հիշված Թագաւորութեան ծագման մասին (Սերեոս, Էր. 9):

ԻԳ գլխի մէջ, Սենեքերիմի մասին խոսելիս, երկու անգամ հիշում է «պատմագրից», «սոյն պատմագիր» (Մար Արամ), նախ Արծրունց և Գնունաց, ապա Անգեղ տան ծագման մասին խոսելիս: Եվ դարձյալ Անանունի մէջ գտնում ենք հիշված Անգեղ տան ծագման մասին (Սերեոս, Էր. 6): Բայց որ գլխավորն է այս ԻԲ, ԻԳ գլխերի մէջ Մար Արամը հիշված է երիտ այն տեղում և այնպիսի պարագաների մէջ, որ շատ նմանութիւն են բերում Անանունին:

Ըստ Անանունի, հայերը Սենեքերիմի մահից հետո դուրս են գալիս Ասորեստանից իշխանութեան տակից. Արամայանի (Հայկի) ցեղից շուրս տիրապետ—Ջարհ, Արմոգ, Սարհանգ, Շամաշ—ունենալուց հետո հինգերորդի՝ Փառնապատի ծամանակ հնազանդում են բարեկացոց նարուդոստոր Թագավորին: Եվ այնուհետև տիրում են հայերին բարեկացիք, մարդ, մակնդոնացիք մինչև «ցհամբարածումն Արշակունիաց Թագաւորութեան»: Խորհնացին գիտն Ասորեստանից իշխանութիւնից ելնելու այս իրողութիւնը: Միայն նման և մոտիկ լինելով հանդերձ՝ նորա անունների շարքը և Թագավորութեան երկարատևութիւնը տարբեր են Անանունից: Ըստ Անանունի՝ Սենեքերիմի մահից

¹ Տես Ա, Թ. «Տերմէ (Մար Արամից) մեր հասարակ ի վերայ հասալ կարգի դրացաց, երկրորդից այժմ քա հարցասիրութեանդ, ձգելով զմեր քնիկ եռլտառաւորին մինչև ցհամբարածումն Արշակունիաց»:

² ԺԹ գլխի մէջ, Գնունաց ծագման մասին. «Ստուգելով հասարակ դատք... զոր և բարք արանց ազգի յայտնեն քանակացի գու: Հայկիկի համար՝ «սահն»: Զարմայրի համար՝ ոչ մի աղքատ, բայց հետո ԼԲ գլխի մէջ ինքը կոմենում է, որ Արշակունից ազգաված լինի Ջարմայրը: ԻԱ գլխի մէջ շուրս հազներդութիւնց արգաստարի ի բռնա: Հիշում է Թ Թարսարի պատմութիւնն «սա այլ ալլազարտ պատմի: Վերջն իբրև աղքատ ընդհանուր ձևով. «Ի Թագի դիւանաց, զազոսեաց, տորեոսեանց ևս զորսից»:

³ Ի գլխի մէջ Արամն Արայի համար իբրև աղքատ դնում է հոգնակի «սահն» և անմիջապէս Անտառների համար շարունակում է. «Բայց զմեր զկերպ զկերպ արքայի օրինակ դալա: Գրութեան ալ ինքնակից պարզագին երեւում է, որ ևս ինչի տարէ խաբը նույն աղքատի համար է, որի համար վերանում հոգնակի «սահն» է «Արգոց Մար Արամ» և այլ աղքատի ձևով. «Միտուն, Խոր, Պատմ. աւ., Էր. 78»:

նկատ են անկախութիւն ձեռք բերում Հայերը և իշխում են Հայկի սերունդները: Ըստ հորենացու՝ Սենիֆերիմի ժամանակակից Սկայադուն հայաբնակ Պարսկաստանի և Եգիպտոսի Հայոց բնիկների, Հայկի սերունդի թագաւորութիւնը: Անանունը Փառնաւազով, Հիշելով նորա որդիներին՝ Բագաւ և Բագարամ, վերջացնում է այդ իշխանութիւնը: Բայց հորենացին յայտնում է թագաւորութիւնը ձգում է և մարաց և պարսից թագաւորութիւնների ժամանակ: Ուստի Փառնաւազին՝ Հիշելով իր անունները և զնում մինչև Տիգրան, երգը Հիշելով վերջինս պատմութիւն Համար իբրև աղբյուր. և, դարձյալ երգին առնելով, Տիգրանի հաջորդն է դրած Վահագն աստվածը, եվհանձնարար մարդ դարձրած: Եվ այնուհետև մինչև մակեդոնացի դարձյալ մի քանի լուր անուններ է շարում՝ Առաքան, Ներսէս, Զարեմ, Արմուզ, Բագաւ, Վան, Վահե:

Այս յոթ անուններից միշտ երեքը նույն են, ինչ որ Անանունի մէջ՝ սկզբի երկուս և վերջի մէկ՝ անունները. Զարեմ, Արմուզ, Սարգազ, Եւփազ, Փառնաւազ, Բագաւ: Համարենք այս երեք անունը հորենացին Մար Արասից է առած և լիարդականով, առանց Տիգրանի ժամանակը խախտելու, Տիգրանից առաջ տեղափոխել, տարել հետ է դրել:

Հարկաւ, նա կարող էր Պարսկ, Հրաշա, Պառնոս, Կոռնակ անունների տեղ, Փառնաւազից առաջ Մար Արասի (ըստ Անանունի) այն Հինգ անունները դնել: Մակայն նա այդ չէ տրել, որովհետև Պարսկ և մյուս անունների համար, ուրիշ աղբյուր է ունեցել և այդ աղբյուրին, ինչպես հետո կտեսնենք, ավելի հավաստ է ընծայել քան Մար Արասին: Միակ անունը, որ Մար Արասից առնելով մտցրել է Տիգրանից առաջ ցանկի մեջ, դա Փառնաւազն է: Եվ այս առանց նպատակի չէ: Հարկաւոր էր բաց լիթոգրի Բագարատնայաց ծագումը հրահանքի:

Ըստ Մար Արասի (հորենացի) Բագարատնից ծագում են Նարուզդոնոսորի գերած հրահանքից: Սոցանից մեկին Հայոց թագաւորը (որ երեք բարեկամ է Նարուզդոնոսորին) խնդրում է Նարուզդոնոսորից և բերում բնակեցնում յուր երկրում. քն ի սմանէ ասէ պատմագիրն (Մար Արաս) լինել զազգն Բագարատնի: Արդ, ըստ Արանունի, Նարուզդոնոսորի ժամանակակիցն է Փառնաւազ, որ և հնազանդում է Նարուզդոնոսորին: Ընդուն է, Անանունի մեջ (եր. 9) Բագարատնայաց նախահայր Քաղարատն Փառնաւազն է յորդանոցն Արմենակայա. նա այստեղ հրահան ծագում լուծի: Բայց այդ պիտի համարել կամ Անանունի հեղինակի, այսինքն Մար Արասից քաղողի մտցրած փոփոխութիւն, քանի որ, հորենացու պարզ վկայութեամբ, Բագարատնիք հեռակաւ ծագում ունին ըստ Մար Արասի. կամ թե դրաւդիւնների մտցրած բան պիտի համարել: Եվ այս վերջինը ավելի հավանական է թվում մեզ: Գրաւորները շատ հեշտ կարող էին Փառնաւազն Բագարատին, որ Հայոց առաջին Արշակունի թագաւորին ընդառաջ է ելնում, շփոթել վերնում (եր. 6) Հիշված Բագարատի (Պատկանայան ուղղում է Բագարատ) հետ. որ նույնպես Փառնաւազի որդի է և սորդի որդուց Արամենակայա: Նույնիսկ Փառնաւազնի նման մեկը (Սերնոս, եր. 6, Ժան.) Նարուզդոնոսորի ժամանակակից այս Փառնաւազի որդի Բագարատին շփոթած է երևում Փառնաւազն Բագարատի հետ, լինելով որ այս երկուքը ժամանակով իրարուց շատ հեռու են, և նոցա ապրած ժամանակի մեջ կա բարեկցոց, մարաց և մակեդոնացոց տիրապետութիւնը:

¹ Ըստ Տպագրի է Փառնաւազ, բայց շատ ձեռագրերի մէջ Փառնաւազ է:

Արդ, եթե ըստ Մար Աբասի (Անանունի) Նարուզդոնոսորի ժամանակակից և նորան հնազանդող է Հայկի սերնդից Փառնավազ և, հորենացու պարզ վկայութեամբ, ըստ Մար Աբասի Նարուզդոնոսորի ժամանակակից հայկազն թագավորը խնդրում է նորանից Բագրատունյաց Նախահորը, ուրեմն մի պատահական բան պիտի չհամարել այն, որ հորենացու հայկազն թագավորները ցանկի մեջ Փառնավազ անունը գտնում ենք ճիշտ այնտեղ, ուր նա, ըստ հորենացու ժամանակագրութեան, ժամանակակից է դուրս գալիս Նարուզդոնոսորին: Ըստ հորենացու ժամանակագրութեան (սխալ կամ ուղիղ, այդ մասին չէ մեր իրաւը), Նարուզդոնոսորն ապրում է Խրոսոն տառի, քաղնի կամ պակաս, Սեննգերիից հետո, որի ժամանակակից է մեր Սկայորդին (Ա, իգ): Արդ, Սկայորդու շուրջը հաջորդն է Փառնավազը, երեք շորս սերունդ ուրեմն պետք է լինենին այդ մոտ ութսուն տարւա ժամանակամիջոցը: Այսպես ցանկի մեջ:

Ծանկի տակին, սակայն, Բագրատունյաց ծագման մասին գրածով, որ Մար Աբասից է առնում, Նարուզդոնոսորի ժամանակակից է ոչ թե Փառնավազը, այլ Փառնավազի հայրը՝ Հրաշյան, որ և խնդրում է Շամրաթին Նարուզդոնոսորից: Բայց այստեղ բնագրի ազավաղում կա: Գրչագիրների մեջ է միայն Հրաշյան անցնել Փառնավազի տեղ, և իսկապես վերջինս պետք է լինի Նարուզդոնոսորից Շամրաթին խնդրողը:

Թագավորների իննանուն ցանկի նրվանդ սակավակայաց և Տիգրան անուններից հետո գտնում ենք հետևյալը. «Քանզի ե վերջին նրուանդս՝ և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեմ արգեւք. ոչ կարի հեռագոյն գումով ժամանակին, յիշեսցուք զանուանս զայսոսիկս Հրաշյան. սա կոչի վասն առաւել պայծառեան և բոցակնաղոյն իմն լինելոյ: Առ սոգլաւ առին կեցեալ զնաբուզդոնոսոր արքայ բարելացուց...» Հ. Ստեփանն (հր. 378, ծանոթ. 133) նկատում է, որ այս հատվածի առաջին մասը (մինչև Հրաշյան) անհասկանալի է ըստ թարգմանիչների, եվ արդարև, եթե նրվանդ և Տիգրան անուններն արդեն հիշված կան ցանկի մեջ, էլ ի՞նչ իմաստ ունի ասել թե, որովհետև վերջին նրվանդն և Տիգրանն են, ուստի ճիշդեմ անունները. Հ. Ստեփանն այդտեղ քննադիրն ազավազված է համարում և ազավաղումը գտնում է «անտեղի կնադրութեան» մեջ, որ ուղղում է «արգեւք» բառից հետո հղած միջակնսը ստորակետ դարձնելով, իսկ «ժամանակին» բառից հետո ստորակետի տեղ վերջակետ դնելով: Եվ այնուհետև, նրվանդ և Տիգրան անունները ընդունելով նրվանդ երկրորդի և Արշակունի Տիգրանի համար ասած, թարգմանում է այդ հատվածը. «վերջին նրվանդ [երկրորդ] և Տիգրան [Արշակունի] թեևս սոցա [հայկազն նրվանդի և Տիգրանի] անունով են կոչված, սոցա նմանող լինելու հուսով, միջոցը շատ հեռու լինելով Հիշեց այս անունները...»:

Հ. Ստեփանն չառ ճիշտ ըմբռնել է սխալը և այդ հատվածի իմաստը. և այս վիճելի կարելի չէ համարել: Որովհետև հորենացին սուս դերանունն է միշտ գործածում ցանկի մեջ հիշված վերջին անվան համար (որինակ Հեսուր, Զարմայրի համար), ուստի և յի սոցանէն դերանվան տակ պետք է

¹ Նեոպիրների մեջ եւս առանց ս տառի. «ժրուանդ և Տիգրան», այլ «զվերջն նրուանդ և Տիգրան» էլի:

² Այդ պատճառով է անշուշտ աղտոտի լինեցուց ձեզ գործել ունցյալ՝ լիշեցաք (Ձ 166) 128 (= լիշեաց ?) որ (Ձ 167), լիշեց (= լիշեաց) և (Ձ 168). Վերջին լիշ: լիշեց ձեռք տեղին գրչին պատճով, նշանը, իսկ ո՞ր տառն էին է գրված:

Հասկանալ ջանկի վերջին երկու անունը՝ Երվանդ սակավակյաց և Տիգրան։ Իսկ Տիգրանները նա որոշում է առաջին, միջին և վերջին անվանելով (Բ, Ժ, կդ), Երվանդ սակավակյացին անվանում է առաջին (Բ, կն), ուստի կարող էր Արշակունի Երվանդին ևս վերջին անվանել։ Մյուս կողմից ըստ յուսոյ կուլելէ նույն իմաստով գտնում ենք Խորենացու մեջ և ուրիշ տեղ (Բ, Ժէ)։ «Որոյ որդի իւր մեծածառասակ և ուժեղ, Սամսոն անուն կոչեցնայ, որպէս սողորուն թինէ հրէիցն» ըստ յուսոյ զնախնեացն կոչել անուանաւ։ Իսկ սկզբի Խնդր շաղկապը շատ համոտ որովհետեւ չէ նշանակում, այլ միայն և շաղկապի իմաստ ունի։ Այսպէս, այդ անհասկանալի համարված հատվածը կատարելապէս պարզված է՝ կենտագրութունն ուղղված լինելով։ Տնանենք շարունակութունը։

Այնուհետև Խորենացին գրում է նաղնակի թվով. «Յիշեսցուք զանուանեա զայստալիս»։ Այդ հիշելիք անունների տակ ուրեմն այլևս Երվանդ և Տիգրան հասկանալ կարելի չէ, այլ ուրիշ անուններ պիտի լինին։ Բացի այդ՝ հոգնակի թիվը ցույց է տալիս, ետևից պիտի հիշվին մեկից ամբիջ անուններ։ Սակայն մենք գտնում ենք միայն մի անուն. «Հրաշխայ. սա կոչի... Առ սովաւ ասեն...»։ Գնշանակն այստեղ մի անուն պակասում է, և հատկապէս «առ սովաւ» խոսքից առաջ, որովհետև գրածի իմաստն էլ ուրիշ ոչ մի տեղ թույլ չի տալ նոր անուն մտնել։ Արդ, ի նկատի ունենալով, որ այդ պակասող անունը կրողը նարոգդոդոսոսորի ժամանակակից պիտի լինի, և որ ըստ Խորենացու իննանու ջանկի Փառնավազն է ընկնում նարոգդոդոսոսորի ժամանակները, և որ ըստ Մար Արասի (Անանուն) Փառնավազն է նարոգդոդոսոսորի ժամանակակիցը, — ասել է՝ այդ պակասած անունն Փառնավազ ևս պետք է լինի։ Այսպիսով վերականգնած բնագիրը կստանանք։ «Յիշեսցուք զանուանս զայստալի, Հրաշխայ. սա կոչի վասն առանել պաշտառերս և բոցականագոյն իմն լինելոյ Փառնավազ. առ սովաւ ասեն կնցնայ զնարոգդոդոսոսոր արքայ բարիացոց...»։

Մի նկատողութուն ևս։ Խորենացու ձեռագիրներինց նրկում է, որ ԺԹ զլխի անունների ջանկն ու մի քանի անունների մասին զրոյած ծանոթութունները, ինչպէս և ԻԲ պոլսը, մանավանդ վերջը, խիստ աղավաղված են։ Առանց մանրամասնութեանց մեջ մտնելու՝ ասենք, որ ԹԵԹԸ հայացքով անգամ մարդ իսկույն տեսնում է, որ անունների ջանկն այնպէս վերկից ներքև սյունակներով չէ գրված հղել բնագրի մեջ, ինչպէս այժմ տպագրի մեջ է և շատ ձեռագիրների մեջ։ Այլ մի տողի վրա, ետեւ ետև, նախ երբայեցոց, հետո քաղղեացոց և ապա հայոց անունները։ Իսկ այս կամ այն անունի վրա եղած ծանոթութիւնները անմիջապէս շարունակութեամբ գրված են հղել անունինց հետո։ Այսպէս, երբայեցոց ջանկը սկզբից մինչև Հնու, որից հետո անմիջապէս պետք է շարունակել. «Ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ կարգի... զայս և բարձրագոյն յայտենն քանադարձ զոյս։ Այստեղից անմիջապէս պետք է շարունակել երբայեցոց անունները բոլոր մինչև վերջը և ետևից քաղղեացոց և ապա հայոց անուններն այսպէս. «Գոթնիէլ, Աւովդ... Դաւիթ և որ ի կարգին Քաղղեացոց՝ Առիոս, Առալիոս, Սուսաոփս... Տեսածոս։ Իսկ մերոյն Արայի որդի՝ Արայ ի Շամիրամայ կոչեցնայ, և զգործ վերականգնութեան աշխարհիս նմա հաստատեցնայ, Իսկ նորա՝ Անուշաւան, Պարէտ... Սուր։ Առ սովաւ տսնէ Տիսու

1 «Տպագրի մեջ լինւո՛ւ այս երկու բառերը՝ որ գտնւում ենք շատ ձեռագիրներին մեջ, և որ տեղափոխւ են։

որդի նախագի: Հաւանակ... Հայկակ, Զաւանէ՞ ասան լինել... և միտանել
ի նմին: Ամպակ... Զարմայր: Սա օգնական Պրիմաու... էլլինացուց, Պերճ...
Ակայորդի: Նույն ձեռք և իմ գլխի մէջ մի սողոր վրա, ետան նաւ: Վարաց
առաջին վարդապետ... Ամոհակ, Իսկ մեր առաջին ի վարդապետ պատկե-
ալ Պարոյր... Տիրարանա—Ինչպես որ աշտոնի հայոց անուններն սկսվում են
գլխի մեր առաջին... խոսքերով, ճիշտ այդպես և ժժ գլխի մէջ հայոց անուն-
ներից ցանկն սկսված է հղի: «Իսկ մերոյն Արայի որդի...» խոսքով: Այս պատ-
հասով հայոց անունների գլխին դրած «հայոց» բառը նոր մտքոյած բան պետք
է համարել, անհրաժեշտաբար առաջ հկած անունները սյունակներով գրելուց¹:

Երբ այսպես տեսնում ենք թե ինչպես հորենացին այս կամ այն անունի
վրա եղած ծանոթութիւնն անմիջապէս անունից հետո կցում է «սա» դեր-
անունով, այն ժամանակ հասկանալի է լինում թե ինչու Հրալայի և Փառնա-
վաղի մասին գրելիք ծանոթութիւնն սկսում է «լինի» ցուց զանաւան զայստ-
սիկն խոսքերով: Այստեղ գրելիքն անմիջապէս անունների հետից չէ դրած,
ուստի և պետք էր անունները կրկնել և նոր դնել ասելիքը: Երկրպագութ զանու-
անս զայստսիկ, Հրալայա: սա կոչի... Փառնաւաղ: առ սովաւ ասան...» և Այս
ժամանակ, ճիշտ դատելով, անհրաժեշտ է Հրալայ և Փառնաւաղ անուններից
հետո հղած միջակները (ինչպէս քաթը), որ դրում ենք ձեռագրերի
մէջ, և որ իրար տեղն ամփոփում են համարում ուման (հմմտ. Ա. Գ. Վեդան
նախատեղծ. սա կեցնաւ...»):

Բնագիրն այսպէս վերականգնելուց հետո բոլորովին պարզ երևում է
նորենացու, Մար Արասի և Անանուի համեմատութիւնը: Երկու դեպքում էլ
նաքուզոգոստոսի ժամանակներից է Փառնաւաղը: Եվ քանի որ հորենացին
պարզ հայտնում է, որ ըստ Մար Արասի Բագրատունից ծագում են այն հրե-
այից, որին Փառնաւաղն անուանում է նաքուզոգոստոսից, ուստի և շատ
պարզ է, որ Փառնաւաղ անունը ուրիշ աղբյուրից առած ցանկի մեջ
մտցրած է Մար Արասից, միմիայն Բագրատունյաց ծագման պատմութիւնը
ուրա լիովին համար²: Այսպիսի բան հնչողութիւնը կարող էր անել, քանի
որ նա «հարմարելով է կարգում ամենքու» Իսկ թե այդպէս Մար Արասից ա-
ռած Փառնաւաղը կդառնար մի ուրիշ աղբյուրից առած Հրալայի որդի,
ուստի և Պոյզն ինչ կանաւ յարդարուն³, այդ կարող չէր սրգանել լինել մեր
պատմագիրն՝ իրեն «արդարաբանա կոչելու: Բաւական էր, որ նա համապա-
ցած էր, որ Մար Արաս ճիշտ է գրում, և ինքը ճշտութիւնը անելով հայ-

¹ Այս ընդգծած բառերը նույնպէս լինո Տպագրի մէջ:

² Զեռ. Մ. ՅԵԹ. Տպագրի և շատ ձեռագրերի մէջ զՀայկակ, զՀայկակայ, ի Հայկակ եւ
Անիքը, ճիշտ ընթերցմանը պետք է զտնել ձեռ ընդունել, քանի որ մեծացանները բոլորն ևս
«սա» դերանունով ունեն: Հայկակ անվան կրկնութիւնը հասած է հնդկ գրագիրների մէջ
սյունակներով և իրար ծանոթութիւնը գրութեան ձեռ մտնելուց հետո, անորոշութիւն լատպեց-
նելու համար անելուց:

³ Սյունակներով գրելուց հետո, ինչպէս Տպագրի մէջ է, Արա անվան ետեւից ծանոթու-
թիւնը դնել իսկ չաղկապով գլխի մերոյն Արայի որդի...» մի անմիայն քան էլ, եթէ այդ համալսած
ծանոթութիւնը լինի, այն ժամանակ հորենացին յար սովորական ձեռք կկրնի: Վերա մերոյն
Արայի որդի...» Այդ աղագրութեան ցատկոտութիւնից առաջացած մի փոքր թարգմանութիւն
է արել Հ. Ստեփաննէ, իսկ չաղկապը դարձնելով իսկապէս մոզայ: Այստեղ իսկ չաղկապով
«կոչում է հայոց անունները նույն ձեռք, ինչպէս և մեր թագավորների անունները»:

⁴ Ի՞նչ գլխի վերջի մասը, որ է Բագրատունյաց ծագումը, Ա ձեռագրերի մէջ առանձին
վերագրի անի:

կազն Փառնավազին հայկազն թագավորների շարքի մեջ յուր տեղում և յուր ժամանակին՝ Նաբուգոդոնոսորի օրով էր դնում:

Խորենացին այնուհետև էլ չէ հիշում Մար Աքաաի անունը: Նորանից ուրիշ բան առած էլ չէ կարող լինել, քանի որ ինքն էլ,—մեկդի դրած Տիգրանի պատմութիւնը,—ուրիշ բան չունի, բացի երգից առած Վահագնից և անունների լոկ ցանկից և մի քանի ստուգարանութիւններից՝ Առավանից Առավանյանք, Զարեհից Զարեհավանիցն ազգ: Եթե նույնիսկ Զարեհ, Արմուզ, Սալամ անունները Մար Աքասից առած լինի, սորա անունը տալու կարից չունենք, մեկ՝ որ սոսկ անուններ են. մեկ էլ որ այնքան ազատությամբ է օգտվում, ժամանակով հետ տանկում դրացա:

Մենք թողնում ենք Բ գրքի Վազարշակի և Արշամի պատմութիւնները համեմատել Անանունի հետ:

Խորենացու, Մար Աքասի և Անանունի այս համեմատութիւնն այդքան պարզ ընդէն է տալի մեզ, որ ինչ որ Խորենացին Մար Աքասից է առնում՝ Մար Աքասի անունով էլ հիշում է: Զէ խորշում նույնիսկ միևնույն գլխի մեջ, մի քանի տող հետո, նորա անունը կրկնելուց, Մար Աքասի համար առանց անունը տալու միայն ասածն գործ է ածում Ժ, ԺԱ և ԺԲ գլուխների մեջ, բայց միշտ այն դեպքում, երբ վերնում մի. երկու անգամ հիշել է նորա անունը և հայտնել, որ նորանից է քաղում. Իսկ որտեղ Մար Աքասի անունը չէ տալի, այդ առած է ուրիշ աղբյուրից, ուստի և չկա Անանունի մեջ, որ պատահականութեւ համարել լինէր կարող:

Այս ի նկատի ունենալով՝ զարմանալի կլինենք, որ մեր պատմագիրը Մար Աքասից քաղելիս միշտ հիշենք նորա անունը. հիշենք նաև զանազան աղբյուրներից հարմարած ու կարգած պատմութիւն մեջ, ետեւ ետև կրկնենք անգամ փոքրիկ դեպքերում (Ա, իբ, իգ). իսկ Տիգրանի և Ածղահակի ընդարձակ պատմութիւն մեջ զանց անենք այդ: Պարզ դատողութիւնն ասում է, որ Տիգրանի և Ածղահակի առաւելիլ կարող չէ Մար Աքասից առած լինիլ:

Մյուս կողմից՝ այս հենվում է և անոր վրա, որ Տիգրանի և Ածղահակի մասին հիշատակութիւն անգամ չկա Անանունի մեջ: Իսկ մենք տեսանք թե ո՞րքան զուգընթացաբար իրար համեմատ են Խորենացու հաւնվան հիշած Մար Աքասն և Անանունը: Անանունի հեղինակը, Մար Աքասից քաղելիս կարող էր դուրս ձգել մի երկու դեպքեր, ինչպես են Արծրունյաց ու Գնունյաց ծագման պատմութիւնը, թերևս և Շամիրամի մահը: Բայց որ նա դուրս ձգեր մտաւց թագավորին սպանող ու նորա երկրին տիրող Տիգրանի ընդարձակ ու նշանավոր պատմութիւնը և, որ գլխավորն է, ընդհակառակը, Հայկի սերնդի իշխանութիւնը վերջացնելու Նաբուգոդոնոսորի ժամանակ և մեջ բերել բարեւալտոց ու մտաւց իշխանութիւնը հայոց վրա,—այդ դժվար է ենթադրել: Մնում է միայն ընդունել, որ Մար Աքասի մեջ չէ եղել Տիգրանի մասին հիշատակութիւն, ուստի և չկա Անանունի մեջ: Փոփոխողը, ամիւլացնողն ու հարմարողը Խորենացին է և ոչ թե Անանունը:

Խորենացին, ուրեմն, Տիգրանի առասպելն ուրիշ աղբյուրից առնելով՝ հյուսել է յուր պատմութիւն մեջ: Կամ, ամելի ճիշտ ասած, եթե հայկազանց թագավորներից Փառնավազի անունն ու Բագրատունյաց ծագման պատմութիւնը (թերևս և Զարեհ, Արմուզ, Բագրատ անունները) Մար Աքասից է առած, պատմութիւն ամբողջ ծրագիրը, հիմունքը վերցրած է ուրիշ աղբյուրից:

Ո՞րն է այդ աղբյուրը, որի համար ասելն ասէ որ պատմէն է դնում:

«Հիւսումն Կիտոյից»։—«Զորս Եազնեբգութիւնք»։—Տեսնենք ի՞նչպիսի աղբյուրներ է հիշատակում մեր պատմագիրը ԺԹ գլխի մէջ։ Այստեղ հայտնում է, որ յուր առաջին գրքի մեջ (ի գիրս յայտարարել) պիտի հարձարեւոյ կարգէ զամենայն... զազգիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս և նոցա մասին եղած պատմութիւնները, ոչ թէ իրենից սարգեւով, այլ ուր ինչ է գտել իսկ ըստ նմանեաց ապա եւ ուր ինչ ի բանից արանց իմաստեաց և յայտարարել քաջախոհակաց։ Այնուհետեւ հայտնում է, որ ինքն յուր կողմից արդարաբայան պիտի լինի, և եթէ սխալ անեմ՝ մեղքն իրենը չէ, այլ յուր աղբյուրներինը։ Իայց յուր գրածի համարտութիւն մի ապացոյց է համարում զգուգութիւն քաւրառոյ (յուր աղբյուրներին) և հաստատութիւն թուոյ կարգի (ցանկի) պատանեաց լմիրոց արանց, անշուշտ, երբայական ցանկի հետ»։ Եվ ապա պատմագիրն յուր աղբյուրներին յայտարարել ընդհանուր հիշատակութիւնից հետո՝ անկախում է. «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, ...սկսաց ճեզ և ուր ինչ զինքն յայտելի ի ճիւղման պատմութեան վերաբերել»։ Այս հատկութիւնը բառացի նշանակում է. «Այս (անուանների կարգն իրենց ժանոթութիւններով) այսպէս կարգելոց հետո, պիտի սկսեմ (կարգել կամ պատմել) ճեզ սոցանից հետո եղածները Կիտոյից նյութման պատմութիւնը» (անհայտ)։ Չնայելով որ հորենացու լեզուն այստեղ շատ պարզ է, բայց և այնպէս հ. Ստեփաննէն այդ հատկութիւնը թարգմանած է. «Այս այսպէս կարգելով, ...սկսեմ ճեզ պատմել այնուհետեւ եղածները պատմական կարգով»։ Պատմել էի հիւսման պատմութեան վերաբերելն ոչ մի կերպ կարելի չէ հասկանալ պատմել ի պատմական կարգով։ Բացառական հոգովը թի պատմութեանը (որի նախդիրը նախադաս հատկացուցի վրա է դրած) շատ որոշ ցույց է տալիս, որ այստեղ մի աղբյուրի ճիշտապարարում է ամում պատմագիրը, ինչպէս և վերելում դնում է նույն հոգովում թի դրոց, թի բանից արանց իմաստեաց։ Ուրեմն պատմագիրն ասում է թէ նախ այս կամ այն աղբյուրից առնելով պիտի կարգեմ մեր նախնիքներին անուններն ու նոցա մասին եղած գրույցները, և ապա Կիտի եզրն Կիտովի վրա գրելից, որ կոչում է պատմութիւն ճիւղման վերաբերել, կամ «Հիւսումն Կիտոյից»։ Ահա՛ մի մասնավոր աղբյուրի հիշատակութիւն, որի վրա ուշադրութիւն չեն դարձրել խորհնացու քննադատները։

Խորհնացու պատմութիւնն ո՞ր մասն է այդ աղբյուրից առած ընթացիկ այսպէս կարգելոց խոսքի տակ հասկանանք թե՞ ԺԹ գլխի մեջ կարգվածները և թե՞ այնուհետեւ եկող երեք գլուխները, որոնցից իմ գլուխն է. «Կարգ թագաւորաց մերոց...», այն ժամանակ պետք է ընդունել, որ այդ աղբյուրը վերաբերում է Տիգրանի պատմութեանը, քանի որ սորանից հետո ալլեա պատմութիւն չկա, այլ լոկ անուններ են, որոնցից երեքը, ինչպէս տեսանք, հավանորեն, Մար Արտաշէս է առած, իսկ Վահագնի մասին դրածն յուր անանշուղ լսած երգից։ Իսկ եթէ այդ իսկ իսկ իսկ այսպէս կարգելոց խոսքի տակ հասկանանք միայն ԺԹ գլխի մեջ կարգած անուններն ու գրույցները, այն ժամանակ պետք էր կարծել թէ այդ «Հիւսումն Կիտոյից» կոչած գիրքն իրեն աղբյուր ծառայել է նաև հայերի թի գլխի պատմութիւնն համար. «Եւ այս նրան Արալի և թէ սորա որդի Անուշաւան, որ Սոս անուանիւրաւ Սակայն այդպէս հասկանալ կարելի չէ։ Պատմագիրը պարզապէս ասում է թէ պիտի սկսեմ պատմել թե՛ ինչ զինքն յայտելի, այսինքն յուր արդեն կարգած անունները։

Վ. Հիւսումն Կիտոյից Թուոյ կարգի պատմութեան իրենց գտնում ենք ԺԹ գլխի երեքերեք և հայոց ցանկի տեղեկութիւնը։

որից հետո կատարվածները¹ իսկ ի գլխի պատմությունը ու թե ժժ գլխի մեջ կարգածներին հետո հեղուների մի պատմություն է, այլ նույն ժժ գլխի մեջ կարգած առաջին հրկու անունին է վերաբերում: Այսպես հասկանալով, ուսման, այդ սշխատման պիտուիցը կոչված աղքատներից առած պատմությունը պիտի որոնենք ոչ առաջ քան ին պոլսը. ասել է Պարույրի և մյուս հայկազնի թագավորների մասին գրածների մեջ:

Եվ այստեղ ահա մենք գտնում ենք դարձյալ մի մասնավոր աղբյուրի հիշատակություն, որ մեջ կրեքենք Ա տեսակի ձեռագրերներից: Են ալժմ ահա դուարձացայց՝ ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ քնիկ նախնայն սերունդէ՞ ի թագաւորութեան հասանեն յաստիճան, Վասն որոյ արժան է մեզ աստուծո մեծ գործ կատարել եւ քաղմն ասել առարկութիւն² բանից՝. զորոյ՝ մեզէն իսկ գահաճնս յայսպիսեաց քանից ընթանու պրծանաւորեցաք ի շորս հազմեղծութիւնս զարգաստարին ի քանս և զիմաստնեցան ի մէջ իմաստնոց իմաստնագունին (Ա, իս):

Ինչ է ասում այստեղ պատմագիրը: Նա նախընթաց գլխի վերջում և այս գլխի սկզբում հայտնում է թե պիտի թողնեն ասորեստանցոց թագավորության ժամանակ հղած հայոց ավագագուն մարդոց ու կարևոր գործերը³, և ապա ուրախությամբ հիշելով, որ Հայկի սերունդները թագավորության են հասնում, այդ պատճառով (վասն որոյ) արժան է համարում կարճ շկայել, ինչպես վերելում, այլ երկար գրել, կամ յուր խոսքով սեմծ գործ կատարել և քաղումս ասել առարկութիւնս քանից (հասից), շատ պատմություններ անել:

Արդ, տ՛որոնք են այդ թագավորների մասին գրելու արժան համարած սեմծ գործն ու շատ պատմությունը: Վարքակի և Պարույրի համար պատմածի մեջ միայն տեսնել լենք կարող այդ սեմծ գործն ու շատ պատմությունները: Այդ պատմությունն ընդամենը մի տասնութ տողով է անցած, որից մեր Պարույրին միայն երկու-երեք տող են վերաբերում. սեփնքն և սքաչն մեր նախարար յանգուցանէ զՊարույր, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա: Ասել՝ թե թողնում է ասորեստանցոց ժամանակի ավագագուն մարդոց ու կարևոր պատմությունները և թե որովհետև Հայկի սերունդները թագավորության են հասնում, ուստի արժան է համարում սեմ գործ կատարել և շատ քանիք գրել,— և այնուհետև գրել միայն տասնութ տող, և հայոց մասին իսկապես երկու երեք տող: Այսպես հասկանալ կարելի չէ, ինչպես անում են խորհնացու քննադատները:

¹ Հմմտ. Թ, հե. 416-ի ու ինչ զկնի մանուկն և տարալու... զտալմ² ասայդ համարելով՝ երկրորդեմք:

² Այս սերունդք քաղց զպակասում է Ա ձեռագրերների մեջ. մենք Տղազորից ենք ավելացրած: Տղազորն այն համակերպ մեջ շատ ազդեալոված է:

³ Եւսարկութիւնս քառի նշանակութեան համար Հմմտ. Թ, 44. Են դարձեալ պատմի առարկութիւնն Կրկանու և Ննչտանայ:

⁴ Տղազորի մեջ՝ առարկութիւնս հետքից:

⁵ Տղազորի մեջ հագնակի զգործք, որ հարաքելում է հագնակի թվով որած քաղումս առարկութիւնս քանից (հասից) խոսքին, և տղա կրկնած է՝ ինչպես հաճախ՝ այսպիսիոց բանից:

⁶ Եւլլ կորի շատ լինի, թէ զամենայն՝ որ ինչ արժան է՝ աղեքմեք ի հոգին (այս գլխի մեջ) զնխակարգից (վերնում ժժ գլխի քանակի մեջ գրած) արանց քրտնս և զգործք: Եթողով զայ կարեւորագոյնն ի քանից, տասնուց ար ինչ հարկաւորն էն (Ա, ի, իս):

Այսպէս ուրեմն, այդ զորինքն արժան համարած ժմե՛ծ զորոնք ու շշատ պատմութիւնները պետք է տեսնել ոչ միայն Պարույրի, ինչպէս անոմ են ուրիշները, այլ հայկազանց ըլլոր թագաւորների պատմութիւն մեջ, որոնց ստիւնը, սրբիկը և արեան առաջ և հաստի հարադառած է անվանում, և որոնց մեջ իսկպսն միմիայն Տիգրանի պատմութիւնն է անում¹:

Ուրիշ ոչ մի կնրպ կարելի չէ հասկանալ պատմագրի խոսքը թե հայկազանց թագաւորների համար ժմե՛ծ զորոնք պիտի կատարեն և շշատ բաներս պատմ²:

Սակայն այս խորհնացու խոսքերի մի կողմն է միայն նա պարզաբար հիշում է նաև, որ այդ ժմե՛ծ զորոնք՝ ճիմումքը կարգացել է մի հեղինակի ջորս հազներգութիւններին մեջ, որին այնքան զովում է ինքը, թե այդ հեղինակը Մար Արաւ լէ՛ այդ մասին խոսք անգամ լինել չէ կարող (ճիմտ. Միարան, Խոր. Պատմ. Եւր. 74): Այդ սարգասատուն ի բանս մեր պատմագրի ժամանակ շատ հայտնի մի հեղինակ պիտի եղած լինի և հանրածանոթ, և ծանոթ նույնիսկ Սահակ Բագրատունու, որ պատմագիրը նորա անունը չէ տալիս:

Ընդդրարի կամ Դիողոր Սիկիլիացու մեջ որոնել այդ ջորս հազներգութեանց հեղինակին, ինչպէս անում է շնորհ. Միարան, լսի ենթագրութեանն են: Ինչո՛ւ պետք է յոր ժմե՛ծ զորոնք և շշատ պատմութիւններս համար իրեն աղբյուր հիշեր Դիողորին, եթե սորա գրվածներին մեջ, նույնիսկ շնորհ. Միարանի կարծիքով, հաշնորոն լկար Պարույրի մասին անգամ որն է հիշատակութիւն, էլ չենք ասում Տիգրանի մասին:

Արարան, ճիմումքս բարձր մտածելու տեղիք է տալիս. բայց կարելի չէ՛ հակառակ խորհնացու ասածին՝ այդ բարիք եղակացնել, որ ջորս հազներգութեանց մեջ ճիմորենացին չէ կարողացել Պարույր-Վարդակի բուն պատմութիւնը, այլ միայն հիմունք, այսինքն այնպիսի բան, որ երաշխավորում էր Պարույր-Վարդակի պատմական գոյութեանը:

Նախ, այդ վկայութիւնն, ինչպէս տեսանք, այստեղ միայն Պարույրի և Վարդակի պատմութիւն մասին չէ, ինչպէս ընդունել են այժմ, այլ հայկազանց թագաւորներին մասին ընդհանրապես: Ապա, բոնագրոս բացատրութեան է ասել թե մի որն է մարդու պատմութիւնն հիմումքն այս կամ այն հեղինակի գրվածի մեջ կարողացած լինել՝ նշանակում է այնպիսի բան կարողացած լինել, որ երաշխավորում է այդ մարդու պատմական գոյութեանը: Եթե ես այսօր ասեմ թե իմ գրած այսինչ պատմութիւն, օրինակ Գնորդ Դ ժմե՛ծագործ կաթողիկոսի կենսագրութեան, հիմումքը կարողացել եմ այսինչ հեղինակի այսինչ գրվածի մեջ, մի՞թե այդ կնշանակեմ թե ես այդ հեղինակի այդ գրվածի մեջ Գնորդ կաթողիկոսի սրուն պատմութիւնը չեմ կարողացել, այլ այնպիսի բան որ ճիմորեն լեզվով այդ կնշանակեմ, որ իմ գրած պատմութիւնն, կամ կենսագրութեան, հիմունքը, հիմունքն, էական վասը կարողացել եմ այդ հեղինակի գրվածի մեջ, — ուստի և վերցրել նորանից. — բայց իմ գրած պատմութիւն միակ տղրյուրը չէ եղել այդ գրվածքը, այլ ունեցել եմ և ուրիշ աղբյուրներ:

¹ Այդ շշատ պատմութիւններինքն զմեք է գործ եղել անշուշտ ի՞նչ պիտի: Սննդներմի որդոց մասին, որ պատմագիրը մտադրած լինելով յոր տեղում անել՝ այստեղ, Մար Արաւից տեսնելով, միանկյալ է դնում, ընդհանրապէս հայկազանց թագաւորներին պատմութիւնը:

² Է. Սահականն այդ հատկապէս թարգմանում է. «նուտի մեջ» այստեղ մե՛ծ զորոնք պիտի կատարեն և պատմենք շատ իրաւութիւններս:

Այսպէս և երբ խորհնացին գրում է թէ յուր գրելից ոմն զործին, աշատ պատմութիւններն, այսինքն հայկազանց թագավորների պատմութեան ճշմտեցը՝ կարդացել է «Զորս հագնեցութեանց մեջ, նա ուզում է ասել թէ յուր գրած պատմութեան ճիշտակամ, էական մասը կարդացել, ուստի և վերջերել է այդ գրքից: Բայց այդ դեռ չէ նշանակում, որ նա յուր պատմութիւնն ամբողջ այդ գրքից է առել: Հիմնական մասն՝ այո՛, բայց և ուրիշ աղբյուր է ունեցել այդ պատմութեան համար: Եվ եթէ մի միտք ունեւորութիւն դարձնենք, կտեսնենք, որ այդպէս է և այդպէս էլ վարվում է մեր պատմագիրը: Նա յուր հայկազանց թագավորների համար ունի մեկից ավելի աղբյուրներ, անվագն երեւ աղբյուր:

Նախ Մար Արաքը՝ Մենք տեսանք, որ Մար Արաքի (որից վերցնում է Անանուն) մեջ կա ասորեստեցիների իշխանութիւնից հետո Հայկի սերնդից իշխողների պատմութիւն: Այդ գիտե խորհնացին և նա Մար Արաքից է առնում Նարուգորոտոսի ժամանակակից հայկազն Փառնավազի անունն ու պատմութիւնը:

Երկրորդ աղբյուրն է «Զորս հագնեցութիւնը», որից առնում է խորհնացին յուր հայկազանց թագավորների պատմութեան հիմնական մասը: Այդ իսկ պատճառով խորհնացու պատմութիւնը տարբերվում է Մար Արաքից (Անանուն): Այդ տարբերութիւնը տեսել ենք վերեսում:

Երրորդ աղբյուրն է ժողովրդական երգը՝ Վահագնի համար: Ապա, Պարսկի պատմութիւնն անելուց հետո ավելացնում է մեր պատմագիրը. «Այլ այս եթէ առ այլս արդարաւ պատմի, մի՛ ինչ սքանչանաբար: Եթէ այս ականորդութիւնը Մար Արաքի համար չընդունենք, ուրեմն և մի արեւոյ աղբյուր էլ է ունեցել՝ գոնե հայկազանց թագավորութեան սկզբնաւորութեան և Պարսկի համար, զի խնդիրն այստեղ այդ մասին է:

Ահա Ժող. երգը-չորս աղբյուր հայկազանց թագավորութեան պատմութեան համար. աղբյուրներ, որոնց մեջ նույն պատմութիւնն աշխարհաբար է պատմված, աշխարհաբար թէ անունների և թէ թագավորութեան ժամանակի նշկատմամբ: Մէջ պիտի աներ խոհուն և դատող պատմագիրը: Անշուշտ, նա պետք է բացատրեր, թէ ինչից է առաջացած նույն պատմութեան այդպէս աշխարհաբար լինելը, և ապա որն է կշռադատութեամբ,—իհարկն ամենն յուր հասկացողութեամբ,—պիտի ընտրութիւն աներ յուր աշխարհաբար աղբյուրների մեջ. մեկն աներ, մյուսը թողներ: Եվ խորհնացին այդպէս էլ անում է անմիջապէս նույն գլխի վերջում և հաջորդ (ԻԲ) գլխի սկզբում, հայոց թագավորների թկարգը կանգնելուց առաջ:

Նա ասում է. մինչդեռ ուրիշ ազգերի թագավորների գործերը գրվեցան «չորեանցն իշողութեանցն վերակացուացք, մերոնք՝ անիմաստասեր քարք ունենալով՝ աշխարհի բան անել չուրին: Ուստի և նոցա գործերը մեացին նշանակալ ի վերջինս»: Ուրիշ խոսքով մեր թագավորների ժամանակակիցները չեն գրել նոցա գործերը, այլ ժամանակով շատ հետո մարգիկ, վերջերս են գրել այդ պատմութիւնները, ուստի և տարբեր կամ աշխարհաբար պատմութիւններ են անում:

Բայց ընթերցողի մտքում կանգնի իսկույն մի հարց. եթէ ժամանակակիցները չեն գրել, այլ վերջինքն, հետեւագույն ժամանակի մարգիկ, նոցա ո՞րտեղից պիտի գիտենային այդ պատմութիւնը: Այս էլ մտածում է մեր պատմագիրը, ուստի և անմիջապէս կցում է յուր բացատրութեանը. «Ապա թէ ասի-

ցեօս, ուստի՝ մեզ. զնախնեաց մեքոց գիտել զանուանա աշխարհս, իսկ զբաղմանց և զգործս՝, ասեմ. ի Հնոցն դիւանաց քաղաքացոց, ասորենասանաց և պարսից, վասն մտնելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերականգնողաց աշխարհիս ի նոցանէ կացնելոց և մեծաց կողմնակալացն:

Արդ, այդ սվերքինն (Հատնագույն) գրողներին մեկն է Հննց Մար Աբաս, որ՝ ըստ նորենացու՝ Նինվեի արքունի դիւանի մի մատուցանից, որի մէջ իբր և զննել են Հնոց և նախնայաց պատմութիւններ, մեր ազգի պատմութիւնը քաղել, Հանել է՝ Բայց այդ մատուցանը Հայոց պատմութիւնը խո՞ւ ամբողջութեամբ լսուներ սկզբից մինչև վերջը իրար ճշտութեամբ Ուստի և Մար Աբասի գրածն էլ պակասավոր մի ըսն պիտի լիներ. թն լէ ինչո՞ւ այն ժամանակ պիտի գրեն նորենացիին. սԵ՛րթէ մատնան մե՞քն կայցէ ինձ... որով... վերուստ ի քեզ իշուցանեմ անախարհ: Դա մի աղբյուրից քաղած պատմութիւն էր միայն: Ուրիշ վերջիննը էլ ուրիշ աղբյուրներ գործածելով կարող էին քաղել և կազմել «այլազգայն» Հայոց պատմութիւն: Այդպիսի վերջին գրողներէն է և «Ջորս Հաղնեղոս» թանց Հոգինակը, նմ. նթն մենք այժմ Հունականութեամբ անուանուող օգտակարից օգտակար իրար Հակասող ու սալազգո Հայոց պատմութիւն ենք կազմում և դեռ մեր թագազորներին անուններին ցանկը չենք կազմել ճշտութեամբ.— ինչո՞ւ ուրեմն նորենացու աղբյուրները, որոնք նույն ձևով զանազան աղբյուրներ գործածելով կազմել էին Հայոց պատմութիւն, իրար չպիտի Հակասեն թն անուններով և անոնց շարքերով և թն իրողութիւններով:

Այսպէս, շատ պարզ ու խելացի է նորենացու բացատրութիւնը, թն ին-

1 Ա. Անու, իսկ Տղազորն ունի. սկզպ նթն առիցն ևստի մեզ զնախնեաց մեքոց բաղմանց աշխարհս գտանել զանուանա և զգործս...:

2 նորենացու խոսքն աշխարհս պետք լէ Համեմատել, թն այդ ժամանակն մեզ Հայոց պատմութիւնն ուսանելն էր պոված, այլ թն ճշտող մտին ճիշտապարարներն կոչելն այդ գրի մեր, և այդ Հիշատակութիւններից ազգակնով, քաղելով կազմել է Մար Աբասը Հայոց պատմութիւնը. ինչպէս մենք այժմ Համեմատն ու Համադարձն աղբյուրներից Հանում ենք Հայոց թագազորների անուններն ու պատմութիւնները:

3 Այլ խնդիր է, թն այդ սվերքիննն իսկապէս քաղականաց, ասորենացոց ու պարսից աղբյուրներ են գործածել, թն՝ միայն Հանեղոս աղբյուրներ և Անավատալան, և այնպէս են ներկայացրել. որ իբր տառքն աղբյուրներից են ազգակն, նկատենք և ոչոք Կարելի լէ «Ազգոս նթն առիցն, ևստի մեզ զնախնեաց մեքոց գիտել (կամ գտնել) զանուան...» խոսքից ազգակնն էլ թն իբր նորենացին ուսում է թն ինքն է անում քաղականաց, ասորենացոց ու պարսից աղբյուրներից (Գարագ., Թ. Գ. Ը., Ա. հր. 184): նորենացին միշտ ասում է, որ ինքը Հանաքներից է ասում: Իսկ նթն նորա աղբյուրների մէջ տառն է կել թն պատմութիւնն ուսում է վերահիշող քաղականութն ևն աղբյուրներից, ինքը նորենացին էլ, փոխանակ գրելով. «ուստի՞ վերջեցն (պատմութեամբ). որ յար աղբյուրներից են) զնախնեացն մեքոց գիտել զանուան...» կարող էր գրել ուստի մեզ... գիտել: Որովհետեւ ինքն էլ, թնպէս զնոցոց մեքոց, քաղականութն, ասորենացոց գրածներից իմացած է Համարում իրեն: Այսպէս և Հանեղոս նա Հիշում է աղբյուրներ, որոնցից անմիջապէս լէ ազգակն, այլ նմաներուի միջոցով, որոց վերջինին անունը էլ ասելն և Համարում է թն ըսն աղբյուրից է ասում ինքը: Մի զմեզ որ այժմ էլ չտաներ անուանել մեր լրագրողները, որոնք սուտաց թերթներից քաղելով, զնորենացին կամ Ֆրանսիական թերթերի անուններն են գնում, որովհետեւ ուրախ են իրեն աղբյուր ծուռայն ասուց թերթերին: Այսպէս Համեմատն կաթողելու էլ, որ նորենացուց է ասում, այնպէս է գնում, որ իբր թն ինքն է քաղականութն աղբյուրներից ազգակնը. ընդ այսոցն անուանել են զայսք. թն Հայոցայ լինի՞ յարմէ՞՞ զոյ գիտել, գիտացել զն լազղեացոց մտաւորն մեզ ընկնեցան, որք փան ի նինում և լնգնեա առ Տերերին գրեալ (Մեզգլա, 1863, հր. 14):

լո՛ւ յուր աղքատները, որոնք վերջնոց գործ են, հակասական են և այսպէս-
բարձր Մենք ևս ուրիշ տեսակ բացատրութիւն տալ շնեք կարող: Եվ այնուհե-
տե արդեն հաջորդ գլխի մեջ, յուր անձնական զգացումները հայտնելուց հե-
տո, նախքան թագաւորներին տկարքն զննել, բացատրում է թե ինչպէս է ընտ-
րութիւն անում յուր աղքատներին մեջ և ինչո՞ւ մեկին ավելի հաճատ է ըն-
ծալում քան մյուսին: Մինչդեռ մի աղքատը Մար Աբաս (Անանուն) հայոց
իշխանութիւնը վերջացնում է նաբուզդդինսոորի օրով և այնուհետև հայերին
ենթարկել է տալի բարեխաղաց ու մարաց, խորենացու մշտա աղքատի մեջ
հայերն անկախ թագաւորութիւն ունին և մարաց ու պարսից ժամանակ:
Այս վերջինիս ճշմարտության համար վկա ունի Ս. Գրքը, թե՛ զի արդարն
դալնու ժամանակաւ էր ազդիս մերոյ թագատրութիւն. վկայ է և Երեմիա
մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. Հրա-
ման տուր, ասէ, այլարատեան թագատրութեան և Ասքանազեան գնդին:
Եւ այս նաւաստի զայլ մեծոյ թագաւորութեան ան ալ լոյսով ժամանակաւ, ա-
վելացնում է մեր պատմագիրը, որի համար, գիտենք, երկու տարեք պատ-
մովածքներէից ճշմարիտն այն է, որ համեմատ է Ս. Գրքին (տե՛ս. գլ. Գ, եր.
89 հտե.):

Այսպէս ուրեմն, խորենացին յուր ձեռի տակ ունեցած առնվազն երկու
զրաւոր աղքատից, որ են Մար Աբաս և Տօրոս հագնեցողութիւնք, հիմնվելով
Ս. Գրքի վերա, ավելի կշիռ է տալիս երկրորդին՝ հայկազանց թագաւորու-
թյան պատմութիւնն անելիս: Ուստի և այդ պատմության,—որի մեջ մի եր-
կու խոսք Պարուլի համար է ասում և ընդարձակ ու երկար միայն Տիգրանի
համար է գրում,—հիմնական մասը վերցնում է Տօրոս հագնե-
րութիւնից. թայց օգտւում է երկրորդաբար նաև Մար Աբասից (Փառնավազի
համար, զույգ և Զարեհ, Արմոզ, Բագամ) և Վահագնի համար ժողովրդական
երգից:

Մշտա կողմից՝ մենք տեսանք, որ ԺԹ գլխի մեջ շէխսումն Պիտոյից
կոչած գիրքն է աղքատը զնում նույն հայկազանց թագաւորներին և կամ Տիգ-
րանի պատմության համար: Ինքն իրեն առաջ է դալիս այն միտքը, թե միև-
նույն պատմության համար այս երկու տեղ հիշածները, շէխսումն Պիտո-
յից և Տօրոս հագնեցողութիւնք, միևնույն աղբյուրն են: Երկու կողմը, շէխ-
սումն Պիտոյից և Տօրոս հագնեցողութիւնք, ոչ միայն իրար շն բացասում,
այլ լրացնում են մեկմեկու:

Ինչպիսի գրվածք է հղել այդ աղբյուրը: Շագնեցողութիւնք բառը, որ
սովորաբար նշանակում է բերքված, վիպասանութիւն և բերքվածի մասերը,
և այսպէս նոր պատմական գրվածք ու անոր մասերը, կարող է ճուշդ տալ, որ
բանաստեղծական էր այդ գրվածքը, հին բառով, մի քանահիւստութիւնք կամ
ստեղծարարութիւնք, որի համար իբրև նյութ ծառայած էր Տիգրանի պատ-
մութիւնը: Անշուշտ, այդ քանահիւստութիւնը, կամ ստեղծարարութիւնը յուր
մեջ պիտի ունենար, ինչպէս ամեն պատմական բանաստեղծութիւն, նաև
շատ հատվածներ ու վերական կամ թե ճարտասանական մանրամասնութիւն-
ներ, որոնք բանաստեղծական երեակայության ստեղծարարութիւն են: Բայց
ինչպէս ամեն պատմական բանաստեղծութիւն, այդպէս և այդ Տօրոս հագնե-
ցութեանց էական մասը պետք է պատմական լինէր, և այդ էական մասն ահա
խորենացին առել է և իբրև հիմունք դրել յուր հայկազանց թագաւորներին
պատմության համար:

Այդու կողմից թե հորինանքու «Հիւսուսն» Պիտոյից» կոչած գիրքը նույն-
պես բանաստեղծական կամ բանահայտական, ստեղծարարական գրվածք է
եղել, այդ ցույց է տալիս նույնիսկ կոչումը, որ պատմագիրը տալիս է այդ
գրվածքին, Հայտնի է, միջնադարյան դպրոցներում «պիտոյց» հունական
αἰτια, բառով կոչում էին այն ճարտասանական կամ բանահայտական վար-
ժութիւնը, որով մի իմաստալից ասացված ու խոսք կամ որևէ անձի պատ-
մութիւն ու արարք ընդարձակում, ամենցնում էին այս կամ այն եղանակով
ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ ճառ կամ բան: Այդ ճարտա-
սանական վարժութիւնները իրենց կանոններով նույնիսկ մեր գրականութիւն
սկիզբներում աշխատել են մտցնել մեր մեջ թարգմանիչները, Հայտնի է հո-
րինանքուն վերագրված «Պիտոյից գիրքը», որի մէջ բացի կանոնների բացա-
ռութիւններից կան և օրինակներ ճշգրտանգիցն աղագուս առ մանկունք:

Այս գրքում՝ իմիջիպալոց գտնում ենք սեման ներդրելին, որի տեսա-
կին պատկանելի է և Տիգրանի մասին գրվածքը՝ «ներքոգնան է բուն տեսա-
դական եղելով քառեաց... ներքոգնել է զղէմո, լանձնավորութիւն» և զիւս,
և զմամանակս, և զտեղիս... Զղէմս որպէս զԴիմոսթենէս, կամ զՊլատոն:
Զիւս որպէս զարդարութիւն կամ զսոցրատիստիս... Այնուհետև բերած է
եղած, այսինքն պատմական անձնավորութիւններ զովելու կանոնները, մա-
սերի բաժանելով ներքոգնանք:

Եթէ փոքր ինչ ուշագործիւն դարձնենք հորինանքու հայկազանց թագա-
վորների պատմութիւնը (հարկավ դուրս պետք է ձգել Երեմիա մարգարեի
վկայութիւնը, Մար Աբասից առած Փառնավազի մասը և պատմագրի քա-
ղատութիւնները թվելաց երգերի մասին), կտեսնենք, որ Տիգրանի վրա
գրված այլոքի մի ներքոգնելի բնավորութիւն ունի այդ ամբողջ պատմու-
թիւնը մինչև վաճառք: Ասել չի ուզել, որ քանի որ հորինանքին պատմու-
թիւն է գրում և ոչ թե ներքոգնան, մենք չենք կարող պահանջել, որ նա յուր
ճարտասանական աղբյուրը ծայրի ի ծայր արտագրած լինի,—նա շատ տեղ
կրճատում է, և կամ ամեն բան յուր աղբյուրի կարգով չէ բերած: Բայց ե-
ղածն էլ բավական է մեր կարծիքը հաստատելու համար: Բավական է միայն,
որ այդ պատմութիւնը բաղդատենք Պիտոյից գրքի ներքոգնանի կանոնների
հետ:

Ահա այդ կանոններն իրենց կարգով ու բաղդատութիւնը.

1. Եւ ի քովելն պարտ և արժան է նախաշալիդ առնել ըստ տեղու:
պատճառին: Այսինքն նախ նյութը, եթե որևէ անձն է, ուրեմն անձը գովել
ընդհանրապես: Եվ հորինանքին յուր հայկազանց և Տիգրանի պատմութիւնն
սկսում է ընդհանուր գովեստով (Ա, իա, իր, իդ, իդ):

2. Մկառ զնել զազգն, և զնոյն բաժանել ի գաւառս և ի նախածնողս և
ի հաւոս: Տիգրանի ներքոգնանից հորինանքին կարիք չունի ռաւաւոր, այ-
սինքն Տիգրանի հայրենիքի, Հայաստանի գովքը մտցնելու յուր պատմութիւն
մեջ: Իսկ Տիգրանի նախածնող Հայկին և նորա մերձավոր հայրերին՝ Պարոյ-
րից սկսած՝ ցիտենք գովելով հիշատակում է Տիգրանի պատմութիւնից առաջ:

3. Մկառ զսնունդն, և քաժանել յուսումն և ի վարժս և յօրէնս: Այս մա-
սի մէջ պիտի պատմվի ներքոգնելի անձի ծնունդը, սնվելը, կրթութիւնը, ման-
կական կյանքն ու վարժունքը (հմմտ. «Մովսեսի ներքոգնանի» մէջ համա-

պատասխան հատվածները՝ Ե—Թ, եր. 415—417)։ Ըստինքյան հասկանալի է, որ այս մասն, իբրև պատմության համար, եղև կարևոր քան պիտի կրճատեր հորենացին։ Սակայն, և այնպես ծննդյան, ինչպես և նախընթացում հիշված պատահան, հայրենիքի մասին դառնում ենք Աժդահակի երազի մեջ։

4. Եւ ասպա զվեծ գլուխ ներքողիքին ղենլ զգործսն. և զնոյն բաժանել յանձն և ի մարմին և ի դիպտածսն»։

ա. Քջանձն յիմաստութիւն և յողջախոսութիւն, յարութիւն և յաղաթութիւն։ Տնանձնը, ինչպես է գտնում հորենացին Տիգրանի ժանձը (ներքինը), «Արանց կացեալ գլուխ, տաութիւն ցուցեալա, պարհիշտն, օրինալոր, ի ցանկութիւնս մարմնոյն շափաւաւ, մեծիմաստն, աւաւաւոգաւ, նաւասաւաւոլք կշիռս ունելով» ևւն։ Ուրեմն ոչ մի գիծ պակաս չէ։

բ. «Ջմարմին՝ ի գեղեցկութիւն և ի զօրութիւն և յերազութիւն։ հորենացի, տաւառեալս այս և աղէքեկ ժայրիւ հերաց ծրուանդեանս Տիգրան, երեւօք գունձան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և զեղեցկոտն։ Ե... Կատարեալս ի դիւցազանց հասակաւ և քնութեամբա։ Եւրօտանման սլացեալ թևօք... քանչեւի դիւցազնն։ Եթայց գտնմ զքաջահասակն զմ և զնիզակատրն և զամեննին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն ասարտեալ հասակի, քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ և ուժով ոչ զոք ունելով իւր զուգա։ Ուրեմն դարձալ ոչ մի գիծ պակաս չէ։

գ. «Ջղիպուած» ի նոխութիւն և յընչեղութիւն և ի օրէկիքո։ Այսինքն գտնած անձի կատարած մեծ դեպքը պետք է ճշտութիւն և ընչեղութիւն պատճառն և սիրելի դարձնեն նորան։ Տիգրանի մեծ զղիպուածն է Աժդահակի հետ կռիւն ու նորան հաղթելը, որ այսպես է վերջացնում հորենացին. Եւ այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելիալ, յաճախէր միտոս Տիգրանայա։ Մեր թագավորի ճշխութեան և ընչեղութեան ժանրամասն նշակարարներն (Ա, իդ) ամբողջ ենք համարում արտագրել։ Ընթերցողն ինքը կտեսնեն հորենացու մեջ։ Իսկ սիրելիս լինելու համար բերենք միայն. Եւ մեծնեցում՝ որ առ իւրովն էին ժամանակօք նախանկելի, և յետեցս ըզձալի ինքն և ժամանակա։ Ուրեմն դարձալ ոչ մի գիծ պակաս չէ։

5. Եւ ի վերայ այսոցիկ ղենլ զբաղդատութիւնս յարադրութեամբ ներքողեցելումն զմեծագոյնսն ընդունելա։ Այսինքն ուրիշ նշանաւոր անձերի հետ բաղդատել գտնած անձին և նորան ամբելի մեծ համարել։ Այդ բաղդատութիւնն ևս դառնում ենք հորենացու մեջ Տիգրանի պատմության վերջում (Ա, լա)։

6. Եւ ասպա զ՝ ի վերայ բանին՝ ի կատարման ըստ պատճառի։ Այսինքն ինչպես ընդհանուր գտնատու սկսված էր, այդպես և ներքողի անձի վրա արած գտնատն ամփոփել և վերջացնել։ Այսպես էլ անում է հորենացին։ Այդ գլուխը, որ Տիգրանի պատմության վերջաբանն է, սկսում է Տիգրանին գտնելով, և ինչպես պիտոյիցս կանոնները պահանջում են, վերջում բաղդատութիւն է անում շատ Տիգրաններին մեջ և դառնում, որ ամի է և միայնակ ի հալկազանցս Տիգրան ևւն։

Այսպես անում ենք, որ Տիգրանի պատմության մեջ պահված են Եւրօտայից գրքին ներքողայնի ճարտասանական կանոնները, այն էլ մեծ մասամբ նույն կարգով, ինչ կարգով որ Պիտոյից գիրքն է պահանջում։ Եւ

1 Թողում ենք, որ հետաքրքիր ընթերցողն ինքը մտածամտորեն համեմատն հալկազանց, իսկազանց Տիգրանի պատմությանը, Եւրօտայից գրքին հիմնադրով գլխի հետ, աստճան ներքողին, և հետոս գրած օրինակի հետ՝ շնորհագրան Մովսէսին։

այդպէս էլ պէտք է լինէր, ցանի որ մեր պատմագիրը ԺԲ գլխի մէջ պարզաբար հայտնում է թէ հայկազանց և Տիգրանի պատմութիւնը պիտի առնեն թի հիւսման պատմութենէ պիտոյիցն։ Կնշանակեն, եղել է մի պիտոյից գիրք, որի մէջ հլուաված են եղել զանազան բանահայտական կամ ճարտասանական որինանկեր, ի թիվս որոց և մի ընդարձակ ներքողյան հայոց թագավոր Տիգրանի մասին։ Այդ գիրքը հայոց մէջ հանրածանոթ է եղել։ Հանրածանոթ է եղել և նորա հնգինակը։ ուստի և խորենացին թալականանում է գրքի անունը տալով ի զովելով նորա թիմաստուն հնգինանկին և կոչելով նորան բարգասատր ի բանս։ Վերջին խոսքը անհարկում է կամ այն բանին, որ գրքի հնգինակը շատ այդպիսի բանքն կամ ներքողյաններ է գրած եղել, կամ շատ պերճաբան քերթող է եղել։

Այսպէս մի կողմից ճշգնեցողութիւնս բառից իմանում ենք, որ հայկազանց և Տիգրանի պատմութիւնը վերցրած է մի բրանահիւսական, ստեղծութեանական գրվածքից, իսկ մյուս կողմից տեսնում ենք, որ խորենացին նույն պատմութիւնն իրոք վերցրած է մի ուշիւսումն Պիտոյիցն կոչած գրվածքից։ Այդ երկու աղբյուրը նույնանում են։ Պատահական մի բան լինք համարում և այն, որ Ա տեսակի ձեռագիրների մէջ փոխանակ թի հիւսման պատմութենէ պիտոյիցն գտնում ենք թի հիւսման պատմութենէ բանիցն, որ կանոնավոր ձևով է թի պատմութենէ Բիւսման բանիցն։ Արդ ճիշտումն բանիցն, մի բառով բանահիւսութիւնս նշանակում է բանաստեղծութիւնս։ Հայտնի է թէ ինչպէս խորենացու բառերը հաճախ թարգմանված են։ Այսպէս և այստեղ ճիշտումն պիտոյիցն թարգմանված է ճիշտումն բանիցն։ Թարգմանողն հասկացել է թէ ինչ է անում։ Նա պիտե խորենացու գրածի բան իմաստը, որ այնպէս է թարգմանել, որ ճարտասանական աղբյուրը դարձած է մի բանահիւսական, բանաստեղծական աղբյուր։ Վերջին բառերս, անշուշտ, իրենց սկզբնական իմաստով իբրև սրան շինելն պէտք է հասկանալ, ինչպէս և պիտոյիցն կանոններով գրած ձառն նույնպէս համարվում է իբրև սրան հիւսելն, սրան գործելն։

Ինչո՞ւ խորենացին այդ բանաստեղծական կամ ճարտասանական աղբյուրը ԳՁորս հազնեցողութիւն է կոչում։ Կամ այն պատճառով, որ այդ տարգասատրն ի բանս քերթողն լուր պիտոյիցն հիւսումն չորս հազնեցողութիւն, չորս գրքի էր բաժանած, որոնցից մեկի մէջ էր Տիգրանի ներքողյանը։ Կամ ավելի այն պատճառով, որ Տիգրանի ներքողյանը չորս հազնեցողութիւն, չորս մասի էր բաժանվում։ Եթէ ուշագրութիւնս կարդանք Տիգրանի պատմութիւնը, կտեսնենք, որ չորս մասի ևս բաժանվում է։

Առաջին։ Այս մասի մէջ, որ վիպական հանգույցն է, եղել են Տիգրանի գովեստն ու հաջողութիւնները։ Գովեստի մէջ հիշատակված են եղել, ինչպէս սովորաբար լինում է քերթվածի մէջ և ինչպէս պահանջում են պիտոյից կանոնները Տիգրանի նախորդները Պարույրից սկսած։ Անշուշտ շատ բան առած չէր լինի սոցա մասին, այլ ցրտբերից քաղած ու հարմարեցրած մի բան, զուցե սոսկ անուններ, Տիգրան թագավորն աղգարանութիւնը հայտնելու և հայոց թագավորութիւն սկիզբը ցույց տալու համար։ Այդ ընդհանուր գովեստից հետո պիտի գալին մարաց թագավորի նրկյուզն ու նրազը, խորհուրդը և որում չորսը Տիգրանուհուն կնութիւնն առնել և թուղթը։

Երկրորդ։ Այս մասի մէջ, որ զարգացումն է, պատմված է եղել պատ-

դամավորի դարը, Տիգրանի հռոմեացիները յուր քրոջը տալու, նորան ճանապարհ գնելը և Առդահակի նորան արած ընդունելությունը— Այս մասը խորենացիին շատ համառոտ է անցնում, սկսելով. «Եւ առանց երկարելու ասացիք խոսքերով, Համառոտելու պատճառը հասկանալի է, Բացի յուր քերած ընդունակությունից, ուրիշ առանձին պատմական դեպք չէ տեսնում, Կյանքից առած միպական մանրամասնությունները նորան չեն հետաքրքրում, Օրինակ, Տիգրանի՝ յուր քրոջը ճանապարհ դնելու հավատարմով ընդարձակ նկարագրի համար նա բավականանում է միայն ասելով. «Ժողովրդի գործը իւր ուղիւս օրէն է քաջամարտը»:

Եւրոպ: Այս մասը, որի մեջ զարգացումը յուր ժայռին է հասնում, սկսում է, «Ջկնիկ այսորիկ ասէ, թէ... խոսքերով, որից պարզ երևում է թե նոր մաս է սկսվում: Եվ ընդունակությունն էլ հենց նոր մաս է ջուլջ տալի: Մտաք թաղավորն աշխատում է օրինի դառնալ Տիգրանուհուն, նորա ձեռով թակարդ լարել Տիգրանի դեմ: Տիգրանուհին ստիպված երեսանց ընդունում է նորա առաջարկը, բայց նենգությունը հայտնում է եղբորը: Պատգամավորություն է լինում, և հայտնի թշնամություն սկսվում:

Զորավոր: Վերական լուծումն է այս մասը, նրկու կողմից զորածողով են լինում և կովի պատրաստություն տեսնում: Կովը երկարատևում է, որովհետև Տիգրան զգույն իրացն հնարէր յարգարել, զի ապրելու ճար լիցի Տիգրանուհիայ: Սա ազատվում է: Ընկառամարտ Տիգրան և Առդահակ կռվում են, բայց խորենացին, զոքախտաբար, այդ կովի մանրամասն նկարագրի կրճատում է գրելով. «Եւ զի՝ երկայնեմ զբանաս: Առդահակ սպանվում է. նորա տունն ու կիներ գերվում է: Ուրեմն շարը պատժվում է: Իսկ բարին, Տիգրանն ու Տիգրանուհին վարձատրվում են, մեկի փառքն է ամենալում, մյուսն յուր եղբայրությունյան համար սթաքատրապէս: Եղբայրվում է քնանկելու Տիգրանապիքում:

Ահա՝ մի իսկ միպական նյութ, արժանի գեղարվեստական քանաստեղծություն մշակված լինելու, որի գեղեցկությունը խորենացու համառոտած, և մասամբ անշնորհ կերպով կրճատած, գրություն միջից ևս ցույց է, նյութի և գործողության միությունը սկզբից մինչև վերջը պահած է և, որ զլիսավորն է, ամենայն բնականության բաժանվում է միայն շոքո ճհազներգության: Երկրորդ և երրորդ ճհազներգություններին սկզբին դրած խորենացու խոսքերը. «Եւ առանց յերկարելու ասացիք», «Ջկնիկ այսորիկ ասէ, թէ... խոսքերը նույնիսկ ցույց են տալի մի մասից անցումը մյուսին:

Նվ այս գեղեցիկ նյութը, որ գեղեցիկ ևս մշակված պիտի լիներ թի քանս արգասաւորի և իմաստունի ձեռով, յուր գեղեցկության մեծագույն մասը՝ ժողովրդական երգից է ստանում: Հեղինակը իրենից չէ ստեղծել, այլ ժողովրդական է առած և ճարտասանորեն ու ստեղծարանորեն մշակած:

Թե Տիգրանի մասին երգեր եղել են թի հինսն մերս, տեսանք, այդ պարզապես հայտնում է խորենացին: Բայց նա չէ ասում, որ այդ երգերն անձամբ է համաքել ժողովրդից: Այլ ընդհակառակն, նա յուր աղբյուրների ընդհանուր հիշատակության մեջ հայտնում է, որ յուր ճհազներգությունը հավաքում է «ուրիշներից: Այդ իսկ պատճառով յուր պատմության սխալ կամ ուղիղ լինելը թողնում է առաջին «նավառնի» թիսկ ըստ որոց հաւաքումն, Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան զովելիս կամ բարեիցի, և մեհ յանգիլ օտար և քացակացիլ: Ժողովրդից անձամբ ժողովուրդի լեզու չէ այս: Բացի այդ՝ նա

Տիգրանի մասին երգերն անցյալ ժամանակով է հիշում. «Զորմէ ասլիքն ի
նիւնս մեր»: Այդ երգերը դրվում են հին սերնդի բերանին, սի հինսնէ՝
Ուրեմն այդ երգերը խորենացին անձամբ չէ լսած ժողովրդից: Եվ քանի որ
Տիգրանի պատմությունը մի գրավոր աղբյուրից է առած, անհավանական չէ
կարծել, որ այդ երգերի հիշատակությունն ևս յուր միակ գրավոր աղբյուրի
մեջ գտած պիտի լինի:

Մենք այնքան սովոր ենք այն մտքին, որ խորենացին ինքն է գտնվում
ժողովրդական երգերից, որ սկզբում ըստ հրեությունից տարօրինակ կթվի, որ նա
յուր հիշած երգերի համար գրավոր աղբյուր ունեցած լինի: Սակայն զարմա-
նալի չէ այդ: Մեր պատմագիրն ամեն երգեր անձամբ չէ առած ժողովրդից,
Թվելից կամ վիպասանաց երգերն անգամ, քննարկած Ժանոթ են նորան և
նույնիսկ Սահակ Բագրատունու՝, նա ժողովրդից չէ լսած. թե չէ՝ այդ երգերի
մասին չէր գրիլ թե պահանջին ախորժելով, որպես լսեմ, մարդիկ կողմանան...
Գողթանս (Ա, 1): Կնշանակե այդ երգերի որն է ժողովաժող է ծանոթ եղել խո-
րենացուն, իսկ այդ հին երգերի պահանջ լինելը Գողթն գաղափարով՝ նա լսելով
գիտեմ: Այս ի նկատի ունենալով նոր հասկանալի է լինում, թե ինչու՝ նա վա-
նագնի երգի մասին այնպես ջնջալով ասում է. «Այս երգերը իմ ժամանակ
բամբակում, լուսի իսկ ակամքով մերով» (Ա, 1): Այդ հարկավոր էր այդպես
ջնջելով հայտնել, որովհետև նա ասաց ժե գլխի մեջ ասել էր, որ ուրիշների
հավանականություն, սի գրոց է օգտվելու:— և մինչև վաճառն այդպես էլ
արել էր,— իսկ այստեղ ինքն անձամբ է ժողովրդից առնում:

Արդ, այդ երգերը բոլորը խորենացու ճանաչվող ասեռն ու սփռնն են
եղել: Բացառություն չեն կազմել նույնիսկ Թվելից կամ վիպասանաց երգերը,
քանի որ մեր պատմագիրն այս վերջիններն ևս ստիպված է եղել ճշմարտե-
րու, ճշմարտապատմություն շինելու: Առնք բոլորն առասպել են: Բայց
ինչպես տեսել ենք (Ա գլ., եր. 72), հայ ժողովրդական րանահայտության բո-
լոր նյութերից միմիայն Տիգրանի մասին եղածներին առասպել կոչումը չէ
տալիս: Այս բացառությունը, որի մասին յուր տեղում խոսել ենք, այժմ հաս-
կանալի է լինում: Եթե նա ինքը ձեռնի ունեցած լինի Տիգրանի մասին ժո-
ղովրդական երգերը և ամենիցայն այդ երգերից օգտված լինի, զգուշ է
կարծել, որ ամեն մյուս տեղերում ժողովրդական և առասպել կոչել, իսկ այս-
տեղ ոչ: Ըստ խորենացու, որեմն Տիգրանի մասին եղածներն առասպել չեն
(տե՛ս խորենացու հայացքն առասպելի վրա. գլ. 9, եր. 89 հտն.), որովհետև
Տիգրանի մասին նա ժողովրդական սփռնն և ասեռն երգերը չէ յուր ձեռն
տակին ունեցած, այլ այդ երգերի իրեն խորենացու ճանաչվող գրական մշա-
կություն կրածը, մի սգարդարեալ և սոցիալ և հանդերձ պատճառաւ շարա-
գրած պատմություն, որ նա այլևս առասպել կոչել չէր կարող: Այդ մի պատ-
մություն էր, որ ոչ թե առասպելի պես սեղմարտություն իրացն այլաբանա-
բար լինեցան ունէր թագուցեալ, այլ ամբողջ արդին ճշմարտութեամբ, սոցիալ
պատմված, առասպելական մասը դուրս ձգած և ճշմարտապատմություն
շինած: Ուրիշ խոսքով, դա սերգարան րանաւոր էր:

¹ Հմմտ. Բ, դր. Եթե ի շահանկ արքայն՝ տան նմա արքայն, որպէս տեղ ուրեմն ի
նիւնս աթենացիքն Սահրատա զմայիւնիւնս:

² Եւրոպայի վերջին գործը՝ Բագրատ ինչ լուսի և Բագ ի վիպասանացն, որ պատմին ի
Գողթանս (Բ, Խթ):

³ Ինչպես հետո կտեսնենք, Տիգրանի կողմը վերջոյ Ամգահեթի գեմ, վիշապաց մար Անու-
ռու վիշապագան գերելին ու Մուսիի վրա րանկելին առասպել է, որ հետո, քերեմ ժո-

վերջին բառը մեզ հիշեցնում է Ա գրքի Գ գլուխը. «Եւ ապա անիմաստա-
սէր բարոց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց»։ Կարելի չէ այս գը-
լուխն իբրև փաստ մեղ բերել, ինչպես ասում է շնորհ. Միաբան¹, հերքելու
համար էմինի կարծիքը, թե «Հայկական աղբյուր» են հղել «Զորս հաղնեքգու-
թիւնքը»։ Այդ գլխի մեղ հորինացին նախ դանգատվում է, որ մեր առաջին
թագավորներն ուղադրութիւն չեն դարձրել իրենց ժամանակի հիշատակի
արժանի գործերը մատենագրել տալու, մի բան որ բնավ չէ մերժում, որ հո-
րենացու ժամանակ լինել «վերջնոց» գրած մի հայկական պատմական
աղբյուր։ Արդարև, այնուհետև հորինացին դանգատվում է. «Որպէս ասում և
առ հինսն հայաստանեայց լեալ անսիրելիութիւն իմաստութեան և երգարա-
նաց բանաւորաց, և թիւ հետո ավելացնում է. «Միթէ մատենան մե՞րձ կայցէ
ինձ... կամ դպրութիւնք քոց հայրենեաց. որովք ի վերուստ ի քեզ իշուցանեմ
անսխալ»։ Բայց մի՞թե կարելի է այս խոսքերը տառացի ճշտութեամբ հաս-
կանալ։ Զէ՛ որ մեր պատմագիրն այնպիսի ժամանակում էր ապրում, երբ Հայ
դպրութիւն կար արդեն, և նա օգտվել էլ է այդ Հայ դպրութիւնից։ Անշուշտ,
չկար մի այնպիսի դպրութիւն, որով հիշտութեամբ կարելի լիներ ամբողջ
Հայոց պատմութիւնը անօխալ գրել սկզբից մինչև վերջը։ Այս մասին է ահա՝
մեր պատմագիր դանգատը, ինչպես ոչ այնքան յուր ժամանակի ընդհանուր
«անսիրելիութիւն իմաստութեան» է հանդիմանում նա, որքան «առաջնոցն
մերոց թագաւորաց և իշխանաց», «առաջնոցն մերոց նախնեաց», «թագա-
ւորացն մերոց և ալլոցն առաջնոց» (Ա, գ. իա)։ Խորհնացու այս խոսքերը եր-
բեք չեն թելադրում մեզ կարծելու թե նորա ժամանակի բոլոր Հայերը իմաս-
տութիւն և ժառանգոր երգարաններ, այսինքն իմաստալից երգարաններ
(տե՛ս այս բառի բացատրութիւնը գլ. Բ, եր. 76 հտե.) չեն սիրել, և թե ինքը
հորինացին մենակ րացառութիւն է կազմել։ Եվ ի՞նչպես կարելի է կարծել
այդպիսի բան՝ Ե դարու զրական շարժումից հետո։ Ազգի ընդհանրութիւնը
կարող էր «թուլամիտ», «տգեւտ ու վայրենի» լինել, «փոճում» երգեր ու երգա-
րաններ սիրել։ Բայց այդ չէ մերժում, որ հորինացու նման «իմաստուն» մի
մարդ, քերթող, մեկն «ի վերջնոցն», այդ փոճում երգերից օգտվելով, միաց-
նելով անոցն հետ և յուր պատմական տեղեկութիւններն այս ու այն աղբյու-
րից քաղած, գրել մի ճարտասանական բնավորութիւն ունեցող պատմական
բանահյուսութիւն։ Եվ այդ է պատճառը, որ երբ մեր պատմագիրը, որ ոչ
փոճում աղբյուրների մեծ պակասութիւն ուներ, յուր ձեռի տակ ունենում է
հայկազանց թագավորների և Տիգրանի պատմութեան համար՝ յուր ճաշակով
գրած մի պատմական աղբյուր, այն ժամանակ իրավամբ բառ չէ գտնում
անոր հայտնի հեղինակին գովելու համար. «Արգասաւոր ի բանս, և իմաս-
տուն և ի մէջ իմաստնոցն իմաստուն»։

Այս աղբյուրից ահա՛ մեր պատմագիրը քաղում է յուր հայկազանց թա-
գավորների պատմութեան «հիմունքը» և աւելում է Տիգրանի ամբողջ պատ-
մութիւնը, այնքան ընդարձակ, ճարտասանորեն ու բանաստեղծաբար գրված,
Բայց որքան էլ նա ցանկանում է «որ յաղագս սորա էին գովեստը և պատ-

դժբեր թացատրութեան հեռեկամ, զարժած է կոիվ ընդհան մարաց թագավոր Սոգոմանի,
մարաց թագաւոր և մարացոց գերութեան, ճիշտ ինչպես ինքը Երանոցի վերաբերեց ճշը-
մարանելու վիշակ Արգասանին գործնում է մարացոց տեղ Արգամ, և վերապազանց զեմ
կոիվ մարաց զեմ կոիվ։

1 Եւսթ. Պատմ. ստումն. Ե. Ե. 77։

մութինք յերկարելը, ստիպված է կրճատելու և թառանց յերկարելոյ զրանս առել, թե լէ՛ պետք կլինէր ամբողջ շուրս հագնեղգութուենհերն էլ արտագրելու և միտմանը մեր եզրակացութիւնը:

Խորենացին Տիգրանի պատմութիւնը Մար Արասից չէ առնում, նա երկու տեղ հիշում է, որ այդ պատմութիւնն առնում է մի գրավոր աղբյուրից, որի հեղինակի անունը, ծանոթ ենթադրելով, չէ տալիս, այլ բազմականանում է միայն նորան գտնելով: Տիգրանի պատմութեան մեջ հիշած թասէն, թասէ որ պատմէն, թասում է պատմողը խոսքերը վերաբերում են այդ հեղինակին: Այդ գրվածքը, որ Խորենացին կոչում է Վելետմն Պիտոյից կամ Եղատմութիւն հիւսման Պիտոյից, եղել է մի բանահայտական ու ճարտասանական գրվածք, հավանորեն յուրս հագնեղգութուեն բաժանված: Խորենացին անծամբ չէ օգտված յուր հիշած ժողովրդական երգերից, այլ յուր աղբյուրի հեղինակն է ճարտասանորեն մշակել ժողովրդական բանաստեղծութիւնը: Երգերի հիշատակութիւնը նա յուր աղբյուրից է առել:

Թե իրոք պատմական երգերի վրա է հիմնված այդ պատմութիւնը, այդ աներկբա ցույց կտա մեզ անոր բովանդակութեան ուսումնասիրութիւնը:

Հակասական կարծիքներ:—Տիգրանի ու Աթաւհակի և Հերոդոտի մեջ պատմված Նյուրոսի ու Աթաւհակի առասպելների նմանութիւնն ալքի ընկնող է: Էմիլի կարծիքով Նյուրոսի և Աթաւհակի ավանդութեան մի հայ ժողովրդական պատմվածքն է այդ, որ պահել են հայ երգիչները՝ Պ. Խալաթյանն, անշուշտ, Խորենացու սարքածն է համարում Տիգրանի առասպելը:—Վերոդոտի պատմածի ձևով շինած մի արվեստական պատմվածք: Բայց նորա փաստերը համոզելի չեն, Իսկ պ. Գարագաշյանը (Քնն. պատմ., Ա, եր. 194 հտն.) հակասական կարծիքների մեջ է մտնում: Նա գրում է. «Հեղինակ Մարքիսյանն պատմութեան զՏիգրանա և զԱթաւհակա, տեսնելով առ Փսենեփոսի Տիգրան զմէն հայ, բարեկամ Նյուրոսի և գործակից ի պատերազմունս նորա, Հերոդոտոսի մեջ ևս կարդալով Աթաւհակա երազը, և հրամանաւ նորա ի գործ գրված միջոցներն ի կորուսանել զՆյուրոս, հորմէ որպէս թե կը կասկածեր Աթաւհակ (Հերոդ., Դպր., Ա, 127)՝ զՆյուրոսն պատմված առասպելը կը զարժուեն Տիգրանա վրաս: Սակայն անմիջապէս (Եր. 196) ավելացնում է. «Բայց Տիգրանա և Աթաւհակա կոխվը կ'ակնարկեն ուրիշ հին առասպել մը. այն է Թրիգայի և Աթի-տաւհաղա առասպելը (զորմէ տե՛ս վերագրել էջ 51), զոր թերևս հին հայ երգիչը առած էին ի Զննտաւնստա: Իսկ յուր կոչումն արած տեղում պ. Գարագաշյանը զարմանալի չէ համարում, որ հեղեկական առասպելն ինչպէս պարտից մեջ կար, այդպէս և հայոց մեջ լիներ:

Ո՛րն է այս հակասական կարծիքներից ընդունելին: Ժողովրդական են այդ երգերը, կամ ճիշտն ասած, ժողովրդական երգերի՞ վրա է հիմնված այդ պատմութիւնը, թե՛ շինծու սկամամտածականն քան է:

¹ Халат, Арм. вост., кр. 178. Էմիլն այս կարծիքն հայտնել է յուր Мелитин в древней Арменнии, Москва, 1881, — պատմութեան մեջ: Մենք ձեռքի տակ չունենք:

² Նորա փաստերն են. 1. որ նա ամէլ համոզել է արգեն, որ հայոց վեպը գոյութիւն չէ ունեցել: Է. երկու պատմվածքի բնականութիւնը: 3. Հայոց առասպելի պատմվածքը ժողովրդական վիպական ուրիշ լատի, ու ընդհանրապէս քաղած է թաւաղան աղբյուրներից, թաւաղան գրքերից:—Բայց մենք դիտելով թե ինչպէս է հետադուրս պ. Խալաթյանն այդ աղբյուրները:

Շինծու կերպին, ճիճ ալոյ հրդերն իրոք լինին Կլուրոսի ժամանակակից Տիգրանի մասին, ինչպես գնում է հորենացին։ Բայց հորենացու սխալը, որ կարող է յուր աղբյուրից առաջացած լինել, դժբախտաբար մշտորենցն է և մեր քննադատներին։ Տիգրանի մասին երգերն ու գովեստներն հղել են Մեծն Տիգրանի մասին, և հորենացին (թերևս հորենացու աղբյուրը) ինչպես սրբամտությամբ նկատում է պ. Գեղեցի, սխալը գիտնականությամբ՝ Կլուրոսի ժամանակակից՝ Քսենոփոնի վիպասանության մեջ գործող Տիգրանին վերագրեց զայն, մինչդեռ երգերը քննականաբար Ղուկասղոսի ժամանակակիցը կրողարաններն¹։

Անշուշտ, բուն երգերը չէ բերում հորենացին և շատ բան իրենից, յուր կամ յուր աղբյուրի չեզմով է պատմում, բայց ամենայն ինչ որ նա ասում է, իսկապես Մեծն Տիգրանին է վերաբերում։ Փորձենք քննել և մենք կտեսնենք, որ երգերը ժողովրդական են։

Մեծն Տիգրան և երգիւ հուր մասին։—Պ. Գարագաշյան² խոսելով Մեծն Տիգրանի մասին՝ գրում է. «Շէրապի է կոչել մեծին Տիգրանա ժամանակն, անմասն փառավորության հետ, թեպետ և կարճ՝ հայ ազգի մը անձնավորության ժամանակ, այնպես որ, ըստ մեզ, ի Տիգրանա և այս պետք է խնդրել հայ ազգ. ի Տիգրանա և անդր Հայը սաղմն է անկերպարան. առ Տիգրանավ կծնանի, կհասնի ի չափ, կծերանա միանգամայն, Զարմանայի՝ երևույթ. Բայց ըստ մեզ՝ այն է մանավանդ զարմանալի, որ մեր տոհմային ավանդությունն այս անձին ժամանակն և պատմութենն, բացի լոր համառոտութենն՝ ոչ այլ ինչ պահած է, բայց ՄԾԾ անունը, ինչ որ հեղանք և ենք՝ եղանք և ենք Տիգրանավ։ Այս զնաՀատուցյունը, վերջի յափազանցությունը թողած, մեծ մասամբ ճիշտ կարելի է համարել։ Միայն ազգը Տիգրանի օրով միանգամից պատրաստ չէ ծնվում. նորանից առաջ արդեն ազգը անկերպարան սաղմության վիճակից դուրս գալ է սկսել, և կարելի չէ ասել թե ազգային ավանդությունը չէ պահած Տիգրանի ժամանակի քաննմուն փառավորությանը, սչայ ազգի անձնավորությանը հիշատակը։

Այդպիսի ժամանակը, որ իրոք դյուցազունկան էր հայ ազգի համար, զբասն և հինգ ամբ... անխառն յաշողութեան, երբ սՀաւատային ստատակասպասք թէ ոգի իմն իցէն Տիգրան, չէր կարող յուր խորին տպավորությունը լանել հայ ժողովրդի երևակայության վրա։ Եվ մի ժողովուրդ, որ գիտեր երգել յուր թագավորության հիմնադրի՝ Արտաշէս թագավորի Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրությունը, գիտեր և նույն Տիգրանի թոռան պատմությունից մի վեպ ստեղծել, չէր կարող շերտել այդ թագավորական ցեղի ամենից փառավորին, արքայից արքա Մեծն Տիգրանին։ Բայց պ. Գարագաշյանը, դժբախտաբար, գլխի չէ ընկնում, որ Տիգրանի անունով մնացած երգերը Մեծն Տիգրանին են գովարանում։ Թե չէ՝ նա անտեղություններով լի չէր համարիլ հորենացու (իսկապես յուր աղբյուրի) այդ երգերից քաղած պատմությունը։ Արդարև, եթե Քսենոփոնի հիշած Տիգրանի վրա համարենք այդ երգերը՝ անտեղություններ ունին իրենց մեջ։ Բայց մի անգամ եթե Մեծն Տիգրանի վրա ենք մտածում, ոչ միայն բոլոր անտեղությունները վերանում են, բացի հարկավ հորենացու կամ յուր աղբյուրի մտքբաժից, այլև տեսնում ենք թե որ աստիճանի հիացել ու փառավորել է ժողովուրդն յուր սիրելի թագավորին։

¹ Լ. Գեղեցի, Համառոտ տրամ. Հայոց. թարգմ. Գր. վ. Գալեթյան, Վիեննա, 1887, ճր. 81։

² ԵԹՆ. գրամ. Հայոց, Բ, հր. 129։

նվժողովրդի այդ սքանչելիումն ու ոգնորութիւնն է անցնում նրդերից մեր ծերունի պատմագրի պատմութիւնը, որ հախշտակված ու նրիտասարդացած գրում է. «Զի ո՞ր ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կացցէ, սորա յիշատակօցն ոչ զուարճասցի, և յորդորիցի աշակերտի այլ լինելու Մեծն Տիգրանն է եղել այդ մարդը, որ սամնեցուն թագաւորացն մերոց հարստագոյն և խոհմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ, ասմենեցունց՝ որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և յետնոցս ըզմայի ինքն և ժամանակ իւրս։ Ժողովրդի իգնալացած քաղձանքն է այդ՝ հետագա քաղաքական աղետների միւրոցին, մի քաղձանք, որ, թերեւս յուր աղքատութեմ, անցնում է նորոնացուն, և նա ցանկանում է. սեւ սիրելի էր ինձ յայնժամ գալ Փրկչին և զիս զնել, և առ նոցօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տեսութեամբն խրախճեալ, և յարգնացս մտանգից ապրիլ։ Այլ վաղ որեմն փախեալ ի մէջն պատահում այն, թէ արգես և վիճակս (Ա, իբ)։ Մի խոսք, որ ասած է մեր պատմագիրը ոչ թե այդ զլիս մեջ եղած լոկ անունների ցանկի համար, այլ միայն Տիգրանի համար, որ իննորդ ի նախնաց մերոց պատկաւորաց էր, հուժկու, անուանի և յաղթողս ընդ այլ աշխարհականս։

Անկ թե մի պատմագիր ինքը չինձու թագավոր կատեղծոր իրենից և ապա այնպիսի կրօնական ու հայրենասիրական անկեղծ զգացմունքով կողմնակից այդ թագավորով,—այդ մեզ անհասկանալի է՝

Բայց մենք տեսնենք պ. Գարագաշյանի նկատած քանտեղութիւնները¹։

1. Ենորենացին կամելոյ մեծ քան զամենայն աշխարհակալ թագավորս ցուցանել զՏիգրան՝ կատարելի կուտա նմա այնպիսի գործ մը, զոր պարտական պնտութեան հզորագոյն ժամանակն անգամ լկրցան վճարել Դարձի և Քանքաթի պէս թագավորք, այն է նվաճել զՀուլիս...»։ «Ո՞ր հուլները, հարցնում է այնուհետեւ պ. Գարագաշյան, էլլադայի և Պեղպոնեան», թե հունական գաղթականութեանց, որ Փոքուն Ասիո արեւմտյան հզօրքն էին, կամ թերեւ Արքիպեղապոսի կողմաց։

է աստուծու կամ դուքսազնի համար հայր կամ որդի, որի վրա պատմվում է, երբեմն փոխված ձևով, միևնույն հին առասպելը Զրույցի աշխատանքների բաժանվելը (die Zweispaltung der Sage) անհրաժեշտ պիտի լինեն այն ժամանակ, երբ արդեն մարք և վիշապը սկսել էին շփոթվել պատմողների գիտակցության մեջ, երբ առասպել և իրականություն խառնվում էին: Վիշապաց ազգի տեղ անցնում էր մարաց ազգ, հարկավոր էր, որ ամպրոպային աստուծու տեղ ևս մի պատմական անձ անցնեի: Եվ ո՞վ կարող էր ավելի հարմարավոր լինել այդ դերը կատարելու համար քան Մեծն Տիգրան, մի թագավոր, որ յուր կենդանության ժամանակ հենց աստված կամ դուքսազն է համարված, որ մարաց հետ խրոջ նման հարաբերություն ունեցած է, ինչպիսին պատմվում էր առասպելի մեջ:

Առաջինը բուն առասպելը ստացել է պատմական գույն, վիշապաց ազգին փոխանակել է մարաց ազգ, վիշապաց թագավոր Ամղահակը դարձել է մարաց թագավոր, և նորա սերունդ վիշապազունք դարձել են մարք: Մենչպես է հղել, որ վիշապ բառին մար բառն է փոխանակել: Շատ պարզ պատճառով. մար նշանակում է օձ, վիշապ: Արդարև մեր մատենագրության մեջ լկա պարզեցնենք մար (— օձ, վիշապ) բառը գործածված. բայց մի՞թե ամեն պարզեցնենք բառեր, որ մեր ժողովրդի մեջ հղել են և կան այժմ, մտն՝ են մատենագիրների մեջ: Պարզեցնեն լեզուն դեռ Քսենոփոնի ժամանակ ծանոթ է հղել հայերին և Նույնիսկ հայ կանանց. ուստի «մար» բառի «օձ» նշանակությունն ամենահին ժամանակներից կարող էր ծանոթ լինել մեր ժողովրդին, ինչպես և այժմ ծանոթ է: Մի անգամ որ վիշապանների գիտակցության մեջ մար նշանակում է վիշապ, այն ժամանակ հեշտ հասկանալի է թե ինչպես հին առասպելական օձերի կամ վիշապաց թագավոր Ամղահակին կարող էր փոխանակել մարաց թագավորը, և նորա սերունդն՝ Ամղահակազունքը՝ կարող էին համարվել մարաց Ամղահակ թագավորի սերունդ մարք:

Բառերի այս համանման նշանակության պատճառով, ինչպես լինում է հաճախ առասպելաբանության մեջ, բուն առասպելը կարող էր հեշտությամբ եվհեմերաբար մտածվելով պատմական կերպարանք ստանալ և Մասյաց վիշապների գերությունը համարվել Մասյաց ստորոտներում թնակող մարաց գերություն Մեծն Տիգրանի ձեռով, որ հայտնի է յուր՝ Հայաստան բերած բազմաթիվ գերիներով: Այսպիսով պատմվածքի մեջ երկվություն է մտնում, առասպել և իրականություն խառնվում են. ճիշտ ինչպես շատ ժողովրդական առասպելների մեջ, ինչպես և մեր արդի ժողովրդական վեպի մեջ, որ թե պատմական և թե առասպելական կերպարանք ունի: Զի ինչպես բուն սկզբնական առասպելը հետզհետե պատմական գույն է ստանում, հաճախ պատահում է, որ սկզբնական բուն պատմական դրույցն ևս որևէ պատճառով հետզհետե առասպելի կերպարանք է ստանում և իրեն քաշելով միացնում յուր մեջ առասպելական գծեր և Նույնիսկ ամբողջ միջադեպեր: Այսպիսի փոփոխությամբ մեր Ստանու ժողովրդի Դավթի մասը, որ պատմական է, առասպելական գույն է ստացած և միացրած յուր հետ Մհերի մասը (որ սկզբնական բուն առասպել է), տալով նորան պատմական գույն: Այսպես և մեր հին վիշապանքի մեջ Արտաշեսի մարաց հետ ունեցած բուն պատմական իրողությանը միացած են վիշապների առասպելներ, քանի որ ժողովրդի գիտակցության մեջ մարք և վիշապներ սկսած են շփոթվել:

Ասել չի ուզել, որ Ամղահակի առասպելը պատմական գույն ստանալով՝

իրեն պիտի քաշեր Տիգրանի պատմութիւնից շատ գծեր, որոնք բուն պատմական են. և յայտ առասպելական դէպքեր ևս պիտի կերպարանափոխվեն, Օրինակ առասպելի հափշտակութեան տեղ անշուշտ է մարաց թագավորի խեղճութիւնը, այսինքն վիշապի և ամպրոպային աստուծո՝ սկզբնական թղթափայտի մեղմեացում և պատմական բարեկամական դէպքի ազդեցութեան և Ածղահանի սկզբում բարեկամ և Տիգրանին, որն ըստ երևութիւն Այս ամենը կարող էր կատարվել և նույնիսկ ժողովրդական կրօնների կամ պատմողների բերանում: Քայքայ ժողովրդի մարդը, ինչպես էլ առասպելին պատմական դուրս առ, միշտ ամփիլի շատ առասպելական գծեր է պահում, միևնույն առասպելի մի պատմվածքի (վարիանտի) մեջ ամփիլի, մյուսի մեջ պակաս. հաճախ միևնույն պատմվածքի մեջ պատմական և առասպելական կից ապրում են միևնույն անձի համար. արհեստի ժողովրդական պատմվածքի մեջ Ածղահանը թե մարաց և թե վիշապաց թագավոր եղաւ: Կարող էր ճիշդիւ իսկ երբ այսպիսի մի առասպել մշակում է մի ճարտասան կամ քերթող, ի՞նչ ասել կուզեն, որ նա վիշապները դուրս պնդեց և ձախ և պահեց միայն մարց և մարաց թագավոր Ածղահանի, եվ քանի որ նույն հայտնի է մարաց Աստիագի, թագավորը, սորա հետ ևս պիտի նույնացնեն մի առասպելի Ածղահանին. ուստի և մեր առասպելի մեջ մարաց Ածղահան թագավորի դեմ կուղղ Տիգրանի պիտի համարեն մարաց Աստիագի թագավորի ժամանակակից և իրենից ամփիլիները: Կյուրոսի անունը: Ուրիշ խոսքով նա յատուկել է ժողովրդի մարդու գործը, ժողովրդական պատմվածքին կատարելապես պատմական դուրս է տվել: Ճիշտ այդպես է պատմում է մեր պատմագիրը, երբ նա վիշապահանքի մեջ երևան եկող վիշապներն ու վիշապազուհեք դարձնում է մարց, մի մեկնութիւն և առասպելի կերպարանափոխութիւն, որ հորհնացուց տալի արդեն սկսած է մտնել մեր վիշապահանքի մեջ (տա՛ւ Թ. 179):

Ամփոփենք մեր կերպակցութիւնը:

Երբ մի անգամ տեսանք թե Տիգրանի առասպելն ի՞նչ պատմական հիշատակութիւններ և ի՞նչ առասպելական գծեր անի լուր մեջ, այժմ ըստիցան երևում է, որ այդ առասպելը շինծու քան լին: Ամփիլի ևս թիւ կարող է այդ առասպելը շինված լինել Հնդկոտի պատմածն վրա, ի՛նչպես կարծում է պ. Պարսեպայան՝, քանի որ դա մեր Մեծն Տիգրանի պատմութիւնն է: Ինչպես էլ նմանութիւններ գտնենք Կյուրոսի և Աստիագի և Տիգրանի ու Ածղահանի առասպելների մեջ, այդ զարմանալի լին, քանի որ Կյուրոսի առասպելն ևս համեմատեն մի Հին միթոս է. պարսից պատմութեան ազդեցութեան տակ պատմական կերպարանք ստացած: Ասկան մենք այդ զարմաց առանձին նմանութիւններ չենք գտնում այդ երկու առասպելների մեջ: Այլ ընդհանրապես շատ հազան կողմերով նույնիսկ նման լին անոնք: Օրինակ, Հեքոդոտի պատմածի մեջ ամպրոպային բնավորութիւնը չի երևում. լին ամպրոպային վիշապները. լին ամենից գլխավոր գիծը, Ածղահանի կնութիւն առնելը Տիգրանոսին, այսինքն սորա գերվելը և գերութիւնից առատացելը, որ ամպրոպային աստուծու և վիշապի կույի կեցողն է կազմում: Պարսից առասպելի մեջ լին վիշապաց մայրն Անուշ և սորա գերվելը, որ նույնպէս առասպելական գիծ է: Կյուրոսի մայրը՝ Մանդանն Ածղահանի դուստրն է, և Կյուրոսն Ածղահանի թոռը, մի գիծ, որ առասպելից շատ հեռու է և նման-

¹ Մեծն. պատմ. Հայտն., Ա. Թ. 51. Պատմ., Արմ. տոմ., Կ. 179.

ներքը Այս մեծ և էական տարբերությունները մեկզկի են դնում քննադատները և նաեւ գ են առնում այնպիսի վիպական գծերի վրա, որ առասպելի մեջ էական նշանակություն չունին. օրինակ, Ամզահակի նրազ տեսնելը, մի վիպական գիծ, որ ամեն ազգերի վեպերի մեջ և ամեն ժամանակ խիստ տարածված է։ Սակայն այսպիսի գծերի մասին ավելորդ է կանգ առնելը։ Շատ հաճախեղ պիտի լիներ մեր առասպելը սարքողը, որ Հերոդոտի պատմածի վրա մի առասպել շիներ և այնպիսի փոփոխություններ մտցներ մեջը, որոնցով նորա շշխնածը մի կողմից առասպելի նախնական կերպարանքն ավելի հավատարմութամբ պահած լիներ քան Կլուբոսի առասպելը, իսկ մյուս կողմից այդ շշխնածու բանը լիներ մեր Մեծն Տիգրանի պատմության հիշողություն։



ՇԱՄԻՐԱՄԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Աղբյուրը։—Շամիրամի և Արտ զեղեցիկի մասին պատմելիս (Ա, ժ) խորհնացին աղբյուր չէ հիշում, ոչ Մար Արամ և ոչ առասպել կամ երգ՝ Բայց, ինչպես արդեն տեսել ենք (եր. 201), ուրիշ տեղից գիտենք, որ ժի Հայկայ մինչև ցԱրայն Գեղեցիկ, զոր սպանեալ կաթոսն Շամիրամ (Ա, Ե), ուստի և Արայի պատմությունն առնված է Մար Արամից։ Ժէ գլխի մեջ ևս, ուր պատմված է Շամիրամի կոտորելն յուր որդիներին, նորա կոնվը Զրադաշտի հետ և փախուստը Հայաստան և նորա սպանվելն յուր որդի նինվասից, աղբյուր չէ հիշված։ Բայց հաջորդ ԺԸ գլխի մեջ հայտնում է, որ այս պատմությունն առած է Մար Արամից։ Այս գլխի վերնագիրն է. «Եմադազս Թէ ուրախ հաւատի նախ լեալ պատերազմ նորա ի Հնդկիս և զկնի մեհուրն (մահ) նորա ի Հայս», այսինքն Թե ինչպե՞ս Շամիրամի պատերազմը Հնդկաստանում հավաստյալ առաջ է եղել և հետո (եղել է) նորա մահը Հայաստանում։ Ապա զորով է մեր պատմագիրը. «Մինիմ ի մտի և զԿեփաղիոնին, վասն ոչ տալ դմեղ բազմաց ծաղրել. զի ասէ ի բազմաց (Տպ. ի բանից) ալլոց՝ նախ յադազս ծնեգեանն Շամիրամայ, և ապա զպտեհազմն Շամիրամայ ընդ Զրադաշտի, և Զյուդքիլն ասէ Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն Հնդկաց։ Այլ հաւատի մեղ Թուցաւ որ ի Մարիբաս Կատինայն է քննութիւն քաղղէական մասնից քան զայսոսիկ [այսինքն Կեփաղիոնի պատմածը Շամիրամի մասին]։ քանզի ռճով իմն ասէ [Մար Արամ] և զպատեհազս պատերազմին [Զրադաշտի հետ, որի հետևանքն եղել է Շամիրամի մահը Հայաստանում] յայտնէ, իսկ առ այսոքիւր և առասպելը աշխարհիս մերոյ գրադմահմուտ ասորին արդարացուցանեն. աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայն և ալլն։

Խորհնացին Կեփաղիոնի մասին և նորա գրածը Շամիրամի համար առ-

¹ Տճ'ս քի բանն՝ որ զնմանէ խոցի և քրտեքս բառի բացատրությունը Բ պլ., եր. 78 հան.

² Մ 1871 Ա Անագիր. մյուս Ա Անագիրները բարդէա բառը չունին, իսկ ՄՈ 1888, 818 բառաւանդ Անի փոխանակ ունին բմահ, որ ավելի աղիւզ է քերականորեն։ Ետևանկությունն ևս առնում ենք Մ 1871 Անագիրից, որին համեմատ են մյուս Ա Անագիրները լինին տարբերություններով։ Տպագիրն աղավաղված է, չունենալով Շամիրամի պատերազմը Զրադաշտի հետ և սորան հաղթելը։

նում է, հաստատ կարելի է ասել, Եվսերիոսի Քրտեիկոնից քննարկում և վերջինիս
 անուշիք չէ տալիս¹։ Այսուհի իրոք որ ասանց բանը և ասանց պատճառները
 հայտնակու թերթն է Շամիրամի ձեռնպահ, նորա պատերազմը Ջրապաշտ մոգի
 նորա սպանելն յուր որդիներին և յուր սպանելին, Նինվասից, Մար Արասի
 բռնված է պատմված եղել (Ա, 46), ուստի և Խորենացին, Հնդկաց Հեռ պա-
 տերազմը համարելով անուշիք եղած է զնում, և մնացածն անուշիք է
 Մար Արասից։

Այսպես ժէ պէ, Շամիրամի պատմութիւնն անուշիք է Մար Արասից։ Բայց
 նա Մար Արասի պատմութեք Շամիրամի մահվան մասին, հաստատելու հա-
 մար հիշում է թէ Շամիրամի մասին առասպելները եղել են Հայոց մէջ Դրժ-
 քախտաբար նա շատ բան չէ բերում այս առասպելներից, այլ բավականա-
 նում է Շամիրամի մահվան կամ վերջի մասին միայն հիշելով, որովհետեւ
 ինդիքն այն է, որ հաստատեալ թէ Շամիրամը Ջրապաշտի հեռ պատերազմն,
 յոյց Հայաստան է փախած և պատեղ պոսեմած, ինչպես զնում է Մար Արաս,
 հակառակ Կեփուղիոնի, որ նորան վերջաց պատերազմէ մէջ փախած է զնում
 և այս պատերազմից հետո պալանված։ Այնուհետեւ ժՁ զգլխի պատմութիւնը,
 գիտենք, Խորենացին այնպիսի դարձվածներով 5 պատմում. որնցից պարզ
 երևում է դարձյալ, որ յուր ժամանակ ավանդութիւնն եղի է հայոց մէջ թէ
 վանա հնութիւններն ու բամբարտակ գետոյնս վերադարձած են եղել Շամի-
 րամին։ Կեղծիք կարելի չէ համարել այս պատմութիւնը, ինչպես կարծում է
 պ. Խաչաթյանը այն հիմամբ, որ ոճնոն և դարձվածների համար օգտված է
 գործյալ Եվսերիոսի Քրտեիկոնից։ Մինչ այդ մասնն կամ 9 աւելի չիք ուզում,
 զի խնդիրն այն չէ թէ Խորենացին ինչպիսի առնադատութեան ունի, արդոք
 նա յուր սեփական բառերով ու դարձվածներով է նկարագրում որ'է բան, թէ
 այս կամ այն տեղից օգտվելով է անում յուր սեփական նկարագրից։ Եր-
 կատենք միայն, որ այս կողմից ոմի ազգաստեղծութիւնը հասուկ է Խորենացուն,
 նա հաճախ միշտ նույն ձևով ուրիշներից օգտվելով է նկարագրում, ինչպես
 Հովհաննէս կաթողիկոսը, երբ նա նույնիսկ յուր ժամանակի անձնի ու
 զեպքերը նկարագրելիս օգտվում է նորինացու դարձվածներից։ Բայց ոչ որ
 կարող չէ ասել թէ որովհետեւ Հովհաննէս կաթողիկոսն, որինսկ, Այսա Թա-
 զավորին և նորա յայտագրած կտրգերը Խորենացուց օգտվելով է նկարա-
 գրում, ուստի և նա սուտ է գրում և պատմութիւնը յարցում է։ Դա սնի
 առանձին հատկութիւն և ազգաստեղծութիւն է միայն։ Այսպես և Խորենացին
 վանա նկարագրի մէջ ինչպես է Եվսերիոսից կամ ուրիշներից օգտված լինի,
 նորա նկարագրի հիմքը մնում է իբրեւ իրողութիւն, զա վանի և նորա հնու-

¹ Եվսեփոսի վնդագրի՝ վան առողեստանեց Բազապաշտան, Եմգա ի նախ յարե-
 ալ՝ աւէ [Կեփուղիոն] Եւ Եմգանք Շամիրամայ, և Կաթողիկոս (ուղի) աւալի Բազապաշտայ
 Կաթողիկոսին և Կաթողիկոսին է Շամիրամայ, և Կաթա Բազապաշտան նմայ աւա Եւ,
 և Կաթան Եմգա մեա որո Բազապաշտայ Շամիրամայ, աս զարիտ Բաթեզանի զախ Եւ
 Երեմի, Եւգի և Կաթայ իւկ աւալի և Կաթա և Կեմի և Կաթա, և Եւգի Եւգի՝ որ
 յա Եւգի Եւգի և Կաթապաշտայ ի ինի Շամիրամայ է վնդայ Եւգի Եւգի Կաթապաշտայ
 և Կաթապաշտան Եւգի և Կաթապաշտայ և թէ Եւգի Եւգի Եւգի Եւգի Կաթապաշտայ, և ինք
 ի նմայ Եւգի Եւգի Եւգի Եւգի Եւգի Կաթապաշտայ ժամանականք, Վնեմի, 1818, Եւ,
 20 հաւ.

թյունների նկարագիրն է, և թե այդ հնությունների շինողը նորոնացու ժամանակ համարվել է Շամիրամ: Բայց մենք դառնանք մեր խնդրին:

Իշտաբ, Շամիրամ, Աստղիկ (Աճաճիա): Երբ մի անգամ ըստ նորոնացու վկայության Շամիրամի մասին առասպելն հղել է հայոց մեջ, ըստինքյան անհավանական չէ, որ մի ժողովրդական գրույց հղած լինի Շամիրամի և մի հայի, Արայի, հարաբերության համար ևս: Թեպետև նորոնացու աղբյուրը գրավոր է, Մար Աբաս, բայց վերջինիս աղբյուրը կարող է ժողովրդական հղած լինել, ուստի և Շամիրամի և Արայի գրույցը ժողովրդական ժաղատուննալ, Տեսնենք այս գրույցի բովանդակությունը, համեմատելով ուրիշ աղբյուրի մեջ հղած նույն գրույցի հետ: Բայց նախ Շամիրամի բնավորությունը:

Շամիրամն ըստ հնոց դուստր է ասորեստանցոց Միլիտադ դիցուհու կամ ասորական Դերկետոյի: Նա նույն բնավորությունն ունի, ինչ որ յուր մայրը, սեմական ազգերի սիրո դիցուհին, Դերկետո կամ Աստարտե (Astarte), բարեկացոց և ասորեստանցոց Իշտաբը:

Ասորեստանցոց մեջ այս սիրո դիցուհին մի հզոր հրամանատար, մարտիկ աստվածուհի է, պատերազմի դիցուհին, նետ-աղեղով ղինված, ալբական ու պատերազմական բնավորությամբ, ճակատամարտի և որսի թագուհին: Բայց Իշտաբը միտնգամայն և փարթամ պտղաբերության, հեշտության և զգայական սիրո դիցուհին է: Նա կապված է Արուսյակ մուրակի հետ, և նորա սիմբոլն է Գիշերավարը (Արուսյակն արևը մտնելուց հետո): Փյունիկեում և Ասորիքում այս սիրո դիցուհու նվիրական թռչունն էր աղավնին: Նորա պաշտամունքը բարեկացոց մեջ ցոփ և անառակ էր. նույնպես բուռն զգայական և անբարոյական էր ասորական Աստարտեի, ըստ Կտեսիասի, Դերկետոյի պաշտամունքը: Նույն բնավորությունն ունի և փյունիկական Աշտարտը, որ պաշտվում էր կանաչ բլուրների և սրբազան անտառների մեջ: Շատ տեղեր հին ժամանակ հղել են Շամիրամի անունով բլուրներ: Այսպես Ստրաբոնը գրում է Կապադոկիայի Դիանա քաղաքի համար. «Քաղաքն շինեալ է ի վերայ միոյ ի օտառեալք քաղաքացեալաց անի, որ կոչին Շամիրամայն» (Ստր., ԺԲ, 2, 7): Պ. Գարազայանը բերելով այս հատվածն ավելացնում է. «Տիանա, որպէս և դավառն Տիանիտիս՝ կհիշեցունեն զԱնահիտ... և էր արդարև, ըստ նմին Ստրաբոնի, ոչ կարի հեռի ի Տիանա, անվանի մեհյանն Անահատա Պերասիա: Բայց քաղաք նվիրյալ Անահատա էր Զեդա, հորմն ասե Սարաբոն թե էր ի վերա բարձրավանդակի, որ կկոչվեր Շամիրամա: Զեդա, ասե Ստրաբոն, ունի մեհյան անվանի նվիրեալ Անահատա, այն է դիցն զոր պաշտեն և Հայք»:

Սեմական ազգերի սիրո աստվածուհու պաշտամունքը Կիպրոսից կղզիների վրայով անցած էր Կիթերա և Սիկիդա, ուր փյունիկյան Աշտարտի անբարոյական պաշտամունքը խառնված և միացած էր հունական Ափրոդիտեի պաշտամունքի հետ: Այս դիցուհին պաշտվում էր և հայոց մեջ: Մեր Աստղիկը, որ համապատասխան են դնում Ափրոդիտեին, համարվում է ասորիներից փոխառութիւն: Նորա անունն իսկ՝ Աստղիկ, ըստ Հոֆմանի, թարգմանութիւն է ասորերեն Կաուկաբա (Kaukabta) բառի, որ նշանակում է աստղիկ,

¹ Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chastel de la Saussaye, Leipzig, 1897, I, էջ. 180 հւ., 197 հւ., 228 հւ.,

² Գաղաղղյան, Փն. պատմ. Հայոց, Բ, էջ. 187 հւ.,

Արուսյակ (Venus) մոտորանը՝ Երկրի այժմյան ժառանգության յայտնաբերող Սակայն ինչքան էլ Աստղիկը որի պատմությունը մասին շատ անգիտություն չունենք, անմահանների որոշ դիցուհին ինքի՝ մասն հայտը մեջ, համաստի մական սիրտ դիցուհունը, Անահիտը, Թեպետև իրանական ժագում ունի, ետեղ է սեմական ազգայնություն, Ստորաբունը գրում է թե պարսից թուրք աստվածները պաշտում են Վայնը, մանավանդ Անահիտ, որին զանազան տեղերում և նվերներով մեծաներ են կանգնած, և թե ետրան այդ և կին գերիններ են մասնայոյ, բայց գիցապաշտություն հայտը երթայ անգր ևս, զի ստորություն է լինել արգել յետ տայոյ զանձինս է աստվածների ի յանձն կուսանա. առ այս գտանել արքա որ ոչ խղճիցն անհաղ զնոսա ի կուսման, Անահիտ այս պաշտամունքը կատարելապես Նույն է ինչ որ սեմական սիրտ աստվածութի նկատի ունենանք, որ հայերը հարավից և արևմտքից ոչ միայն սահմանակից են եղել սեմական ազգերին, այլև լայնատեղի հարավային և արևմտյան կողմերի բնակիչները սկզբնապես եղել են ասորիք և հետո են հայացած, Այսպես Անահիտի մեծյաններ եղել են նվերներով և արքաներով, որ, ըստ Ստորաբունի, բնակիչներն առաջ եղել են ասորիքներ, հարունի Աշտիշատում Անահիտի հետ եղել է և Աստղիկ պաշտամունքը, որ ասորիքի մեծյան եղել է վանից հարավ Անանայացի մեջ, Նույն տեղերում Պաղատա լեռան գլխին ետև Աստղիկ պաշտամունքը, վանա մոտ Արտամանում ևս Աստղիկ պաշտամունքը հայտնի է Թոմա Արծրունուց (եր. 23 հտ.) Անահիտի վանքապար, աստվան անգամ ետրանացու մեջ, կուլում է քաղաք Շամիրամա, Նույնը հիշում է և Թոմա Արծրունին (եր. 63, 240, 252), րուքի այդ աս հիշում է ժուաշ գաղաղում Շամիրամ բերդ (եր. 266 հտ., 281), ամրոցն Շամիրամ (եր. 270), Շամիրամ գլուղ այժմ Նեմրուս սարի ստորոտում հիշում է Սարգիսյանը յուր տեղագրությանց մեջ (եր. 272)։

Շամիրամի անունով այս տեղերի կուլումները հայոց մեջ ետրանացու ազգայնությանը մտած համարելու համար ու մի հիմք չունենք, Նույնիսկ պ. Խալաթյանն, ինչքան էլ Շամիրամի մասին առասպելները ետրանացու ասորիքների համար ընդհանրապես բիրտ են նշանակում (HAGART) Հայաստանի տեղագրական անունները, որոնք կաղված են Ասորեստանի աշխարհակալ Թագուհու անվան հետո, Ուրիշ խոսքով, ետրանացու ժամանակ եղել են Շամիրամի անունով անգր և ետրանացին այդ անուններից յարմարված արքան է Շամիրամի մասին զրույցներու իսկ այդ տեղագրական անունները հիշված են, գրում է պ. Խալաթյանը, ըստ երևույթին, միայն Լ—Ք դարից, այսինքն Նույն ժամանակից, երբ այդ միջոցին զորացած Արծրունի իշխանների մեջ ձգտումն

¹ Gelzer, Zur alt. Cösterlehre, էր. 123, 123.

² Պատմություն, Գեղ. պատմ. Հայոց, Ա, էր. 267 հտ., Gelzer, Zur alt. Cösterl, էր. 123.

³ Մ. Արծրունու մասնագրություն, էր. 281, 281. Ենթոյ յայն անգրի զիտ արքան կանա աս ի խալաթի զգրությունն անգրի— անգր ի յատմանցն արքան Պաղատա ի զարմիք սիրտին, որպէս գրուածն Արծրունու աս ի զարմիք Նուսիրանի կուսին (եր. 281)։

աստվածունէն, մարտիկ և տարփաւին զէջուհին իշտար—Աստարտե—Ասար-
դատիս կամ Դերկնոտ, նույնպէս և մեր Շամիրամի և Արայի զրոյսը էսպէ և,
ինչ որ իշտարի և Իզդուարի այս վնայը, Համեմատութիւնը շատ պարզ է,
Մեր Արան նույնպէս զնոյնիկ է, ինչպէս Իզդուար, Աղոնիս և ուրիշները,
Ինչպէս իշտարն Իզդուարին, նույնպէս և Շամիրամն Արային իշխանութիւն
խոստումներ է անում յուր կոմքը կատարելու համար, Բայց Արան հազանու-
թիւն չէ տալիս, ինչպէս և Իզդուարը, իշտարը զայլաւորում և մահացնում է
Իզդուարին, այսպէս և Շամիրամ տիկինն որ աստիկ ցամառ լեռը զայն
կոմում է Արայի դեմ, և Արան մեռնում է այդ սիրտ պատճառով, Այնուհետեւ
մեն մայր իշտարը աստիկ քաղում է և Մանգարամէս է իջնում յուր ասար-
փածութիւն հարսթիւն տալու համար, նույն հարսթիւն միշտգնացը կա և մեր
առասպելի մեջ, միայն մեր հեթանոս հայերի հազատութիւնով պատմված, և
այս շատ քնական է, Խորենացու և Անանունի մեջ այդ հարսթիւնը քրիստո-
նեական հայացքով փոփոխութիւն է ենթարկված, որ նույնպէս շատ քը-

Այնպիսի և Արայի հարսթիւնը—Հայանի է, որ մեր հեթանոս հայերն
ունեցել են, ըստ Ալեքիի, որ շատ ինքնա պատկերք կամ ապակեր փոխած
ոգիներ, Ժանեբրեյթ զորութիւնք, որ պատերազմի մեջ ընկած վիրավոր քա-
ղերին կամ դուրացներին լիզում և ողջացնում է, Այս հազատակցը, ինչ-
պէս նշանում է, շատ հին պիտի լինի, քանի որ Պլատոնի Հասարակագետու-
թիւն մեջ բերված էր հայի հարսթիւն ասելը, Բնական և աստից արարիչ-
ներ, մեր այս հազատքի հետ նայն ընդհանուր գծերն ունի, Այսպիսի ևս էր
քաջատիրոջ է և սպանվում է պատերազմի մեջ, Տասն որդի հետ, մինչ արի-
ւորի զիւղները ներած էին, էրիւր տեսալիս և ամբողջ են գտնում, Բերում
են տուն, և տասներկուրորդ որդ, նոր խաբույրի վրա էր բարձրացած, կեն-
դանանում է էրը, էմինն առաջին անգամ այս առասպելը համեմատութիւն
քրիստոնէի Արա գնդեցիի առասպելի հետ, ամենպէսնում է թն Պլատոնի առա-
պելի իմաստը, զիւր անկեալ ի պատերազմի, յառնեն, ոչ այլ ինչ է, Բայց
նքէ բուն հեթանոսական վարդապետութիւն նախնի Հայոցը, Ի՞նչ եւս աշխա-
տում է էր հայը նույնպէս Արա Հայկապետի հետ, Այս հազատն այնքան
զորեղ է նոյն, որ նույնիսկ քրիստոնեութիւն ժամանակ Դ գորում, ըստ
Փաղատոս Բաղանդի (ն զոր, 14, 41), լեռնայն որ Մուշից Մամիկոնեանի
զուրիւր մարմինը կտրված էր, Բայց ուր հաւատարմի ընտանիք ետք մահու
եղաւ... Իսկ կնոջ յանկույտ անկ անէին նմաւ, Այս պատճառով զուրիւր
կացնում են մարմինն և գնում մի աշտարակի ասնիքում, Կարծելով թն
ովան գի այր Բայ էր, Այնպիսի իշխանն և յարսթանն զգաւ:

Այսպէս պատերազմի գաշտում իրեն քաջ ընկնում է և Արան, պատենն
զԱրայի մեռնուի ի մէջ Բուլանաւոնացն, և Ռոմամայի զննչ զնա ի վերնա-
տանն աղաւառնից, Իսկ ի գրգռել միւս անգամ զորացն Հայոց ի մարտ պա-
տեքազմի ընդ տիկն լին Շամիրամայ՝ քինախնդիւր լինել մահուան Արայի,
ասէ. Բոլորայցից աստուածս ցն իմոց լեզու զվերս նաւա և լեւորնացիս:
Եվ Շամիրամն իրոք սպանում է, որ Արան պիտի կենդանեաւ, Բայնագա-
մայն ևս անկն անէր զիրթութեամբ վհուկութեան իրոյ կենդանացուցանել
չէր— քնորդի ի ոտփական ցանկութենէն, Քրիստոնեայ մատենագիրը, որ
այդպիսի աստվածները զորութիւն չէր հազատում, Շամիրամի ձգտումն՝

նաստվածներին ձեռով Արային կենդանացնելու բացատրում է գրիթութեամբ վհուկութեան: Մյուս կողմից նա չէր կարող երբեք հալվաւալ, որ աստվածները կամ Շամիրամ յուր կախարդութեամբ կենդանացրած լինին Արային. ուստի և պիտի գրեթե թե՛ ճշմարիտ գիտորա, հրամայեաց ընկնելու ի վիճմեծ և ժածկելու: Այստեղ եթէ վերջացնեն, առասպելը թերի կմնար, գի հայերը դրդոված էին և նոքա հանդարտում են, երբ իմանում են, որ Արան հարուստ թլուս է առել. «Եւ այսպէս համբաւելով զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հասանեցուցեալ զամենեւեան դադարեցուցանէ զխաղմնա: Ուստի և Արայի հարութիւնն առնելու պատմութիւնը պետք էր պահել, միայն մի ձեռով բացատրած: Եւ նա բացատրած է շատ պարզ կերպով. «Ձմիւ ոմէ ի հովանեաց իւրոց զաղաւթեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոցն զԱրա և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէջ և փառաւորեաց, իբրեւ հեշտացուցիչք և կամակատարք: Դարձաւ քրիստոնեայ մատենագրի համար մի հարմար առիթ էր այս առասպելի մեջ բացատրելու նաև առնգնների պաշտամունքի խարահական ժաղումը. «Կանգնէ և Նոր իմէ պատկեր յանուն գիւաց, և մեծապէս զոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրա: Այս գրովածքը մոլթն է. «Եւ որ իմէ պատկերք քաղը կարելի է հասկանալ, թե Շամիրամը նոր աստվածութիւն լինէ հաստատում, այլ եղած աստվածների համար «մի նոր պատկեր, արձան է կանգնում: Բայց կարելի է և այնպէս հասկանալ թե նա նոր աստվածութիւն, առնգնների պաշտամունքն է հաստատում: Այն ժամանակ այդ հակասում է նույնիսկ առասպելի էութեանը, քանի որ հայոց մեջ այս հալվաւոցի դրութիւնն ունենալն արդեն ենթադրում է, որ հայերը հալվաւում են թե՛ Արան կարող է հարութիւն առնել և հարութիւն է առել, Հակասութիւնն իսկ ցույց է տալիս, որ քրիստոնեայ մատենագրի կողմից է ազդեցութեամբ այդ: Այս հաստվածն Անանուսի մեջ (Սեբեոս, եր. 6) գտնում ենք այսպիսի. «Եւ այնպէս հանէ համբաւ Արաւեղաց տիկինն Շամիրամ, որ դարձաւ մոլթն է:

Ինչպէս էլ լինի, այս գծերը պարզ կերպով քրիստոնեայ հեղինակից են մտած հին առասպելի մեջ, որ քրիստոնեական ձեռով և հայացքով է պատմված: Եթե այդ եվէմեբրական հավելումները դեն դնենք, գրում է պ. Գեւորգեան այս առասպելի համար, կմնա միայն ասորական սիրտ աստվածահու և յուր տարփածուի առասպելը: Շամիրամի դրույցի մեջ պահված է Աստղիկ առասպելը, ավելացնում է նա:

Թե Արան ժողովրդական դրույցով հարութիւն է առել, այդ տեսնում ենք և Քոմա Արծրունու մեջ: Այստեղ (եր. 215) գտնում ենք մի այսպիսի աղանատված կտոր. «Եւ դաշիկ արարեալ յայնկոյս քան զվանտոսպ, ի տեղուքն արձանաշար քարակարկառ զգագնէ միջոցի երկուց ըլրակաց, որ հալի լեռնի վարաց արկման դաշտն, ի վերայ ինքուր գեաղչն, ու զօրացն գեղեցիկ տառապիւրաբեմն սպիտեմած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ: Վերջին ընդգծած մասը աղանատված է: Այսքանը միայն հասկացվում է աղանատված ձևից թե Շամիրամի մանուկներից սպանվածների վերքերի սպիանալու մի առասպել է դա: Բայց ընագիրը վերականգնելը շատ հեշտ է: Աղանատումը միայն տառերի՝ յ, ց, ե, ի նշն մեջ է: Պատկանայան արգեն սկզբի

¹ „Zur armen. Götterlehre.“ եր. 121.

երեք րառի համար իբրև ժանտթություն դնում է. «Երբեք» ուր գնալու գեղեցիկ (տե՛ս նոր. Բուգ. լէջն 20) Այնուհետև քառանաստի քառու շատ պարզաբար կամ աշխարհաբարի ձևով սպիանացած, կամ ավելի սպիանայած սպտը է կարգայ. Անհասկանալի ավերային ռառո ժվեացիք է, քանի որ վերջերի պետք է սպիանան. Այսպես բնագիրը կատանանք. «Որ ղԱրայի գեղեցիկ առասպելաբանեն՝ աղիանալ վիրազն սպանելոյն ի մանկանքն Շամիրամայա: Մենք սպանելոցն քառն են եւակի «սպանելոցն դարձրինք (հմտ. հորհնացի, Ա, ժն, մեռանի Արա, ի պատիւազմին ի Բանկանցն Շամիրամայ): Մի տեղում որ պարային դարձած է պարաշին, ետեից պիտի բերեր և սպանելոցն հոգնակի թիվը: Թովմայի այս կտորից իմանում ենք, թե առասպելաբանում են. որ Շամիրամի մանուկներից սպանված Արա գեղեցիկ վերջերի սպանում են, ուստի և Արան կենդանանում է (կարող պատկերել):

Նույն գրույցը գտնում ենք և այսօր. Ներսես Սարգիսյանն յուր Տեղագրութիւնից մեջ գրում է նույն գյուղի մասին. «Ձորով ան յոմանց տողի լինել անկմանն Արայի ի Շամիրամայ, որով զովն ի համանեացն զԱրայ կարծեցուցեալ՝ յուր նման երէ դին լիզեալ սղաքացուցեալ են. և յայնմանէ, ասեն, մնաց անուն քաղց՝ Լէզա՞: Ինչպես էլ Սարգիսյանը ժողովրդից է առնում, ինչպես պարզ երևում է «ասի յոմանց, ասեան քառերից, բայց նա ժողովրդականը հավատարմութիւնը արեանագրիչ չէ կարողանում ընդգծած տողերի մեջ, նա ենթարկվում է հորհնացուն: Ավելի հավատարմութիւնը դրի է առնում նույն գրույցը Սրվանձոյանը Գրաց-բրդի մեջ (հր. 52): «Լէզաք յուր Արա գեղեցիկին մեռած մարմինը լզեր ու կենդանացուցեւ են իզեր. և Արայ լեզգ անունով կուտք ու աստված շինեցին պաշտօնիցն այն ժամանակ հայեր այս գեղի բարձր գագաթին վրա, ուր այժմ Ամենափրկչի մատուռն է»:

Այս պատմութիւնն էութիւնը, Լեզգ գյուղի հետ կապված այս առասպելը, թե Շամիրամի մանուկներից սպանված Արայի վերջերին այդտեղ են սպիանում, հորհնացուց չէ ծագում ոչ Արծրունու և ոչ մլոտաների մեջ, դի ըստ հորհնացու նախ՝ Արան հարութիւնն չէ առնում և ապա նա սպանվում է Արայի դաշտում, Այրարատում, և այնտեղ էլ Շամիրամը հրաժարում է աստվածներին լիզել նորա վերջերի. նվ երբ նա հավատացնում է հայերին թե Արան հարութիւնն է առել, նոր դաշին է վանա կողմերը (Ա, ժզ):

Ասել թե Արծրունին և Սրվանձոյանն իրենցից ստեղծում են այլ գրույցը, ելակետ ունենալով միայն Լեզգ անունը, այդ հեշտ պրծնելու մի միջոց է միայն. նվ այդ հեշտ ու պատրաստի միջոցն է բանեցնում պ. նախախնայը խեղճ Թովմա Արծրունու վերաբերմամբ ևս: Սորա պատմածները Շամիրամի

1 Ն. Սարգիսյան. Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1884, հր. 284:

2 Հմտ. Խոշենացի, Ա, ժն. «Ձմի ոմն ի հոմանեաց իւրոց զարգարեալ... համբաւը զնմանէ այսպէս, լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ: Հմտ. Անեան (Սեբեոս, հր. 5). «Ձարգարէ զմի ոմն ի հոմանեաց իւրոց այր պատշաճող, և համբաւ հանէ զԱրայի լիզու պատուածոցն և յարացանել:»

3 Թե ումից էլ առնում Սրվանձոյանն այս դրույցը՝ հայտնի չէ. եթէ արդի ժողովրդական զրույցները չեն ազդուրը, այն ժամանակ կարող ենք ենթադրել թե նա Բ. Արծրունուց է առնում և թե նույն ձևովն է եղել մի ձեռագիր, որի մեջ Արայի վերջերի սպիանալու կտորն աղ-ճատված չէ եղել: Պէ՛տք է ենթադրել, որ Սրվանձոյանը կիբեականներն այդ աղճատված կտորը Սրվանձոյանի դիրքը ասաներից տարի վաղ է հրատարակված, քան Պատկանյանի՝ Թեմայի հրատարակութիւնը:

և Արայի, ինչպէս և մի քանի հայ նախարարների և թաղապետների մասին, ինչպէս ևն Հայկ, Տիգրան Ա, Վահագն, Երվանդ, Արտաշէս և ուրիշները, բնավ պետք չէ համարել, ինչպէս կարող է երևալ, *Խորենացու* քերած վիպական հատվածների վարկանտներ, և այս հիման վրա այս վերջիններիս իսկույնի համար ապացույցներ կազմել։ Միանգամ ընդմիջող պետք է իմանալ, հարում է կտրուկ կերպով պ. *Խալաթյանը*, որ Քոման յուր պատմութեան հին մասը գրելիս սովորաբար [այո՛, բայց միայն սովորաբար] կրկնում է *Խորենացու* ասածը, կամ թէ մշակում է նորա գրածը ոչ առանց ֆանտաստիկական հավելումների, որոնց նպատակն է մեծացնել Արծրունիներին։ Եվ այդ ամենն այնքան ակնհայտնի է, ավելացնում է պ. *Խալաթյանը*, որ Նույն-իսկ ժամանակի կորուստ էս այդ ճշնելը՝ — եվ այսպէս վերջացավ. սովորաբար *Խորենացի* և *Քանտաստիկական* հավելումները և ժամանակի կորուստը այդ ճշնելը, Ք. Արծրունին էլ գտավ յուր գաղափարն ու գնահատութիւնը, *Խորենացու* մեղքը միշտ այն է, որ նա շատ քան պատմում է, որ իրենից առաջ ուրիշները չեն պատմել, Իսկ Քոմա Արծրունու մեղքն էլ այն է, որ նա *Խորենացուց* հետո է ապրել և *Խորենացուց* օգտվել է, թնայեալ և կան քաներ, որ նորանից տարբեր է պատմում, ինչպէս այս լեզուով գլուխի զբոսը։ Այդ դեպքում նա *Քանտաստիկական* հավելումներն է անում։

Բայց Քոմա Արծրունին, օրինակ, Տիգրանի և Արտաշէսի պատմութիւնն անելիս իբրև աղբյուր դնում է *Հոգնակի թվով*. Միայն ցուցանեն անալիզին ի պատմագրաց (եր. 36), Միայն բացայայտեն զի՞ք պատմագրացն (եր. 52)։ Այդ սուտ է գրում նա. միայն մի աղբյուր ունի, *Խորենացի*. մնացածը ֆանտաստիկական հավելումներ են։ Ուրիշ տեղ (եր. 44) նա գրում է. *Եթև առ մեզ հասին զբոսըս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց, ի Մամբրէէ վերծանողէ և ի նորուն հղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միստմն թէոգորոս Քերթող...* Այստեղ էլ նա սուտ է գրում. կամ երբ Հայկի և Բելի պատերազմի մասին դրելիս ավելացնում է. *զձոր (զԲէլ) ըմեմի ի պատմագրաց ասեն փախստեամբ դարձեալ զնաց յԱսորեստան* (եր. 24), — այստեղ էլ նա *Քանտաստիկական* հավելումն է անում, որովհետև *Խորենացի*ն այսպիսի բան չէ հիշում։ կամ երբ Քոմա Արծրունու մեջ Հայկը Բելին առում է, *Ե՛ւն դու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահինս, այստեղ էլ քանտաստիկական հավելում է անում, զի այդ շկա Խորենացու մեջ... բայց լէ՛, այդ քանտաստիկան չէ. զի քաղաքապետաբար մնացել է Անանունը (Սեբեոս, եր. 4) որի մեջ կա Ե՛ւն ես դու և յերամակ շանց՝ դու և ժողովուրդ քոս։ Այդպէս հիշող կերպով կարելի չէ պարծնել մի պատմագրի համար, որ աղբյուրներ է հիշում, և որ ինքն յուր համար ասում է թէ ձեռնարկելով գրել Մի ինչ իսկզբանց անտի շինութեանց աշխարհիս Հայոց ի Հայկայ աղեղնաւորէ և ի նորուն զարմից և ցկաթոտ վազաշոտ Եամիրամն տիկիին Ասորեստանեաց եւ ի նմանէ յայլօ եւ յայլոց եւ յայլտ ձեռնակեալ եւ շինեալ յիրաւ քանդակեալ յերկրիս մերում եղին՝ մեր առ ամենայնն տնտեսք հասեալ եւ ալօք տնտալ... (եր. 293)։ Քոմա Արծրունին *Խորենացուց* անշուշտ, խիստ շատ է օգտվում. բայց նա ունի և ուրիշ գրավոր աղբյուրներ։ *Նիդիքը*, *Հարկավ*, այն չէ, որ Քոմա Արծրունին ևս կարող է այս կամ այն բանն իրենից հարմարեցրած լինել, բայց ամեն ինչ, որով նա տարբերվում է *Խորենացուց*, նորա հարմարեցրածը համարել կարելի չէ։ Այդպիսի հերյուրումները կամաց*

¹ *Халат., Арм. 3000, 4-я. 181.*

կամաց և բազմաթիվ մարդոց ձեռքով են պատրաստվում, Եվ երբ մենք ոչ մի փաստ չունինք այս կամ այն պատմվածքի համար թե Արարչու իրեն սարքածն է, չենք էլ կարող նորա ռեանտաստիկական հավելումքս համարել: Այսպես և երբ նա պատմում է թե առասպելաբանում են որ Շամիրամի մանուկներին սպանված լինա գեղեցկի մեղքերն ապացուցած են լեզուս գլուղում, մենք իրավունք չունինք ասելու թե նորա աղբյուրը հոգեհացին և յուր սխանատեաննք ներքևում ևս: Այսպես ուրիշը մի մեկի մի երկու խառնով կանց տեսնեք ու. հայաթյանի մի ուրիշ կարծիքի մասին ևս:

Մերայի գրույցն արվեստական կերպով շինված է մի ամբողջ շուրֆ գրավուր երկրաստիկականների վրաս, գրում է ու. հայաթյանը (հր. 145): Եվ այդ պարզմար հիշատակարաններն են Դիոդոր Սիկիլիացի, Աստվածաշունչ, Նզնիկ, Փալատոս, Աղեմես Աղեքսանդրացի, Թե Կարենացի կամ յուր աղբյուրը՝ Մար Արաս Շամիրամի պատմության համար կարող էր ոգտվել այս կամ այն գրավուր հիշատակարաններից և ոգտմած էլ է, այս մի կողմն ենք թողնում, Բայց շատ զարմանալի է, որ այդ գրույցը հաստատված, քան ու. հայաթյանի, մի կտոր Դիոդոր Սիկիլիացուց է տեսի, մի կտոր Աստվածաշունչից, մի կտոր Նզնիկից, մի կտոր Փալատոսից, մի ուրիշ կտոր էլ Աղեմես Աղեքսանդրացուց, մի բոռ էլ Մարաս (— գեղեցիկ) պարակրիսից է տեսի, մեացածն էլ յուր հարուստ հրեակայությունա շտացի է. և կամ արքայական-քրիստոնեական հայացքներովս աստիճանական՝ ճովանդ գեղեցկի պատմության ձևով ռոդլախոհությունյան զգացմունցիցս Արային մերմել է ալի վախճա Շամիրամի սերը՝ (մի ողբախոհություն, որ հայերն անպատճառ բիշլական քրիստոնեականից պիտի սովորեն), և — հա գուրս է եկել մեր Շամիրամի և Արաս գեղեցկի առասպելը, պատահարար ճիշտ եույնը, ինչ որ Շամիրամ-իշտարի և յուր գեղեցիկ ու ողբախոհ սիրական Բզալուրի առասպելն և մի առասպել, որ սեպագրությանց մեջ կարդացված է: Պ. հայաթյանի ճանապարհը շատ երկար ու պատահականությունա մի է, Կարծում ենք կարն ու ընայան ճանապարհն այն է, որ տեսնեք թե քանի որ սեմականների սիրովավաշ, բոլոն զգայական դիցուհու պաշտամունքը մտած էր մեր մեջ, ուստի և այդ առասպելն ևս, որ եույն դիցուհու առասպելն է, կարող էր դիցուհու պաշտամունքի հետ մասնիկ զայոց մեջ: Այս կտորն աշխույս ու. հայաթյանն, ճթն այդ առասպելն ամենինք առաջ հիշված լինելու ուրիշ-ամեն մի մատենագրի, օրինակ՝ Փալատոսի, Նզնիկի մեջ, բացի հորենացուց: Եվ հորենացին մեղավոր է, հարկավ, որ ինքն է ամենինք առաջ հիշում այդ Բայց մենք դատենք Վանա լեզք կամ, ըստ Թովմայի, լեզուս գլուղին:

Լեզվի և Արտամեռի գրույցները:—Սրվանձախանը վերևում հիշված գրքի մեջ ասում է թե լեզք գլուղի բարձր գաղաթի վրա, որ այժմ Ամենափրկչի մատուռն է, բրևնաբով քարեր լեցուն են. և ծուլածո հին պղնձի կնդանյաց փոքր արձաններ գտնվեցան մեր օրերը դեռևս քանի մի տարի առաջ: Այս նկարագիրը ցույց է տալիս, որ լեզքը շատ հին ժամանակ արդեն, Աթորունուց և հորենացուց շատ առաջ մի դեր է խաղացել: Դա հավանորեն եղել է կրոնական պաշտամունքի տեղ, որի հետքերը մինչև այժմ մնում են. Մեկս լեզք գլուղի մոտերը կա մի թոնրի ձևով աղբյուրի փոսակ կամ չրհոր,

¹ Xacat., Арм. քուր, հր. 145 հան.

Սուրբ քանի՜ հեղինակներ, ուր հաճախ՝ դնացողներ կան, շատերուն հոռն ունեւ տառեղիւն։ Հեթանոսական պաշտամբութի մեացորդը լինելը շատ պարզ է Բայց ի՞նչ պաշտամբութի մեացորդ է այդ։ Եամիրամի—Իշտարի—Աստղկի Այս բացատրում է մեզ ժողովրդ թոնրիւ հետ կապված առասպելը, որ բերում է Սրվանմայանը։ Եմիրամի մեկ ձուկ կերակր այդ շուրին մեջ. և որին ու երևի, տեղը բախտն ու օլխը կկտառուվի։ Դա կնկան կերպարաւնէ՝ ունի եղբ. և արծաթն օղն ալ յուր քիթն անցուցած՝ կտեսնվի տակալին, երեցկին է եղբոր դա. կին կաւի զեղեցիկ. երբ նստած թոնրի շուրթն հաց կթիւն, աղքատ մը կուգա հաց կ'ուզի, կուտա։ Կերակուր կ'ուզի, կուտա։ Գինի կ'ուզի, կուտա։ Բշտականքը կհամարակրի պաղ մի ուղելու, երեցկինը կվարանի, բայց... պաղն ալ կուտա։ Ի՞նչ հանկարծ նույն վայրկենին երեցը ներս կմտնի. երեց-կինը ամբողջն ու ահիս ինքնակինը կհագնի ի թոնրի կրակին մեջ... կրակն շուր ղառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծո հրամանով հալիտենական հիշատակ կմնա նույն տեղը։

Այս զրույցն ինքը պ. Խալաթյանը համարում է, նույնիսկ յուր ժշտաց վեպիւ մեջ, Եամիրամի առասպելի շրջանին պատկանող մի պատմվածք, որ քերեւն ի ճնուց անտի Հայաստան է մտած Ասորիքից և ժամանակի ընթացքում կորցրել է յուր արտագին, հեթանոսական պարագան, բայց ոչ ֆարուլան։ Այս զրույցի հնագույն ձևը բերած է Գիւղոր Միկրիստանին։ Դա Գերկետո դիցուհու զրույցն է, որ յուր դուստր Եամիրամի ծնվելուց հետո ձուկ է դառնում հանցավոր սիրո համարը։ Պ. Խալաթյանն այս մասին խոսած է յուր մի ուրիշ աշխատութեան մեջ¹, որ ցամ է ձեռի տակ լուսինքն։ Մենք չենք հիշում թե այստեղ նա ինչպե՞ս է հաստատում յուր կարծիքը, բայց մենք այդ ճիշտ ձևը համարում։ Եամիրամի մայրը Գերկետոն (Atargatis) ջրի աստվածուհի է։ Նորա սրբազան կնիքանքն են Փլուսկիայում և Ասորիքում աղաղկին և ձուկը, Ասկաղոնում նորա պատկերը ձկան մարմնով էր հանած, տաճարը ջինված էր ձկնառատ լճի մոտ։ Հերակլոսում դիցուհու տաճարի գավթում կար Եամիրամի պատկերը, մոտին լիճ, մեջը սուրբ ձուկը։ Նորա տոնի օրերը շուր էին բերում նորա տաճարը և սրահում²։ Այս ամենը հիշեցնում է մեր Վարդապետին, որ Անահտի կամ Աստղկի տոնն է համարվում, շուր սրահելը և աղաղկի բաց թողնելը, մի սովորութիւն, որից երևում է, որ մեզնում ևս այդ աստվածուհուն նվիրական եղած են աղաղկին և շուրը։ Պ. Խալաթյանը կարծում է թե լեզբի այդ առասպելը կորցրել է յուր հեթանոսական պարագան։ Բայց այդ ճիշտ չէ։ Եմիրամի թոնրիւ, ջրի ու ձկան պաշտամբութեան իսկապես հեթանոսական է և ոչինչ լուսնի քրիստոնեութեան հետ³։ Այս պաշտամունքը հարկավ նոր չէ և պալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից. նոր չէ և այդ Սուրբ թոնրի հետ կապված առասպելը, որ սիրո աստվածուհու այս պաշտամբութի հետ ի հնուց անտի մտած պիտի լինի հայոց մեջ, իսկապես ոչ թե մտած, այլ հայացած ասորիները պահած են այդ կողմերում։

¹ Մովսէսյան, Գրք-քրք, եր. 53. Այս առասպելի վերանայը, ոչ մի տեղի հետ չը-կապված, Տ. Նալուարդյանի Հայ ժող. հեթանոսութեան, է գիրք, եր. 80.

² Xadani, Arm. znoc, է. 160.

³ Очерк. народн. арм. веров., Москва, 1885.

⁴ Chard, Religions, I, է. 225.

⁵ Թեկին ու թոնրում արվելը քաղաքին ուրիշ մտած է, որ եկել կապվել է տեմական սիրո դիցուհու այս առասպելին։ Եմիրամի թոնրը զուց հեթանոսական օլտարի պաշտամբութի մեացորդ լինի։ Հմմտ. Գ. Ե, Հայկի առասպելը, եր. 146 հոռն.

Ի՞նչ է հզրակացութիւնը, Այսօր Վանա նույն լեզք գլուխի մոտ, ուր ըստ Արթուրուտ սպիանում են Շամիրամի մանուկներից սպանված Արայի վերջերը, գտնում ենք սեմականների սիրո դիցուհու հեթանոսական պաշտամունքը, և որ գլխավորն է, այդ պաշտամունքի տեղի հետ կապված է, թեպետ և առանց Շամիրամ անվան մի գրույց, որ քննութիւնը ցույց է տալիս թե նույն սիրո աստվածուհուն է, Այսօրվա այդ գրույցն ու պաշտամունքը իկան հորենացու և Արթուրուտ մէջ և շին էլ կարող սոցանից անցած լինել ժողովրդին, Դա հնութիւն մնացորդ է, Եվ երբ այսօր հորենացուց անկախ գտնում ենք սեմական սիրո աստվածուհու պաշտամունքն ու առասպելը Վանա մոտ լեզք գլուխում, միթե դա ապացոյց չէ, որ այդ տեղը հնութիւն նվիրական է հղել Շամիրամին, Եվ միթե այսօրվա այդ պաշտամունքն ու գրույցը, որ շինծու շին, շէն վկայում, որ նույն տեղում կամ Վանա մոտիկ ուրիշ տեղերում արգարե հղել են Շամիրամի վերաբերյալ ուրիշ գրույցներ ևս, Եվ հղել են այդ գրույցները ու կան ցայժմ, որոնցից մեկն է Արթուրուտ գրածը, այսինքն Արա գեղեցկի սպանվելը Շամիրամի մանուկներից և նորա հարութիւնն առնելը, մի ուրիշն է Շամիրամի մահւման մասին հորենացու պատմածը, մի երրորդն է արգի գրույցը Շամիրամի մասին, որ բերում է Ն. Սարգիսյանն յուր Տեղագրութիւնն մէջ:

Լեզք գլուխի հետ կապված այսօրվա այդ մի գրույցը միայն, որ հորենացուց անկախ գոյութիւն ունի, ցույց է տալիս, որ մենք իրավունք չունինք Շամիրամի մասին պատմված արգի մշուս գրույցը ճեղքենացու ազդեցութեամբ կազմված մի նորագոյն գրույց համարելու, ինչպես կարծում է պ. Խալաթյանը (եր. 149): Նորա պատճառանութիւններից գլխավորն այն է, թե սգործողութեան տեղը միննույն է, Վանա լճի շրջակայքը: Սակայն այդ կարող չէ հաստատել թե այսօրվա Շամիրամի մասին գրույցները հորենացուց են անցած ժողովրդին, Զէ՛ որ լեզք գլուխի այդ Սուրբ Թանրի առասպելի համար ևս սգործողութեան նույն տեղն է. բայց այդ առասպելը հորենացուց չէ մտած ժողովրդի մէջ: Գործողութեան տեղի նույն լինելը կարող է մինչև իսկ պ. Խալաթյանի կարծիքի հակառակը հաստատել: Եթե մի հին գրույց հարատեւում է ժողովրդի մէջ, ասել լի ուզիլ ամենից ամէլի անտեղ պիտի հարատեւի, ուր առասպելը կապված է որոշ տեղի հետ: Եթե հնումը Շամիրամի գրույցները Վանա մոտերն են այս կամ այն տեղի հետ կապված, շատ բնականորեն մենք այսօր ևս նորա առասպելներն ամէլի շուտ նույն տեղերում կգտնենք քան որեւէ ուրիշ տեղում:

Հորենացին չէ ասում թե Շամիրամի մահն յուր իմացած գրույցով հասկապես որ տեղի հետ է կապված: Նա միայն ընդհանուր ձևով գրում է. «Աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայա, Ենթադրաբար իմանում ենք Վանա կողմերը: Իսկ արգի գրույցը որոշ կերպով ցույց է տալիս այդ տեղը. Շամիրամի վերջը կապված է Արտամետի հետ: Եվ այս յուր առանձին նշանակութիւնն է ստանում, երբ գիտենք, որ ըստ Թոմա Արթուրուտ (եր. 53 հտն.) նույն տեղում հղել է Աստղիկ պաշտամունքը:

Այնուհետև պ. Խալաթյանի երկրորդ պատճառաբանութիւնն է թե Սարգիսյանի բերած արգի գրույցի մէջ ևս սլուկ և հնչտասէր է դուրս գալի Շամիրամ ինչպես հորենացու մէջ: Սխալվում է պ. Խալաթյանն ասելով թե այդ գծերը ճեղքենացու յուրատեսակ պատկերացումն են Շամիրամի մասին (своеобразное представление): Շամիրամի հնչտասիրութիւնն ու

տափանքը, հոմանիքներ որոնելը, գիտենք, Խորենացու ստեղծածը չէ՝ Իսկ ինչ որ վերաբերում է Շամիրամի վհուկ լինելուն և Խորենացու մեջ, իսկապես և Խորենացու հուռույթներին, ինչպես և ուլունքները ծովը ձգվելուն, նույնիսկ պ. Խալաթյանը կարծում է թե այդ կարող է լինել Խորենացու ժամանակների հետևազույն (?) զրույցների արձագանքներն (եր. 148 հտն.)¹։ Եվ երբ մի անգամ Խորենացու ստեղծածը չեն այդ գծերը, ուստի և ոչ մի արժեք չունի այն թե Խորենացու և արդի զրույցի մեջ Շամիրամը վհուկ ու հեշտասեր է դարձա՞յն։ Այդ կնշանակե՞ միայն, որ նոր զրույցի մեջ Շամիրամը, ինչպես յուր անունը, նույնպես և յուր քննադատության այդ երկու էական գծերը պահե՞լ է։ Բայց այդքան միայն, էլ ուրիշ ոչ մի նմանություն չենք գտնում Շամիրամի մասին Խորենացու պատմածի և մեր արդի զրույցի մեջ, որ բերում է Սարգիսյանը։ Իզուր է կալածում պ. Խալաթյանը թե Խորենացու Զրադաշտի և արդի զրույցի ժերունու մեջ մի համեմատություն է գտել։ Այդ հրակայական է միայն։

Բազդատության համար մենք այստեղ կրթները Արտամետի զրույցը, որի քննադիր գտնելը դժվար է։ Նկատենք առաջուց, որ մենք չենք մատահանում ասելու թե Սարգիսյանը համատարմության արդի առած լինի ժողովրդական զրույցը, առանց այս կամ այն բանի մեջ ենթարկվելու Խորենացուն։ Լեզվի զրույցի մեջ նա ցույց է տվել, որ ինքը հարազատ գրի առնող չէ։

Ճշգրտություն և զմիւս առաջապելն զոր ասեն զՇամիրամայ, զոր և համառոտ բանի յիշէ Խորենացի տակով ժողովուն ի ծով Շամիրամայ։ Թագուհին Շամիրամ որ մի ի հզոր և ի մեծագործ ինքնակալացն էր, շրջազայնալ, ասեն, երբեմն զքոսանաց աղազաւ յերկրին Վասպուրականի՝ տեսանէ որեք մանկունս խմբեալ ի մի. և մերձ եղեալ առ նոսա տեսանէ զի գտեալ նոցա ուլունս ի գետին՝ ի զինն կան նոցին. իսկոյն ծանուցեալ զպատուականութիւն նոցա՝ առնու ի ձեռաց ժանկանցն և պարզեա տուեալ արձակէ զնոսա։ Ուլամբքն այնոցիւք սկսանի Շամիրամ մոզել և կախարդել, և ըստ ապականեալ օրաքի իւրոյ զամենայն լարութիւն գործել ընդ երկիրն համօրէն. զօր կամէր առ ինքն կուշի ի լրումն տոփանացն՝ զօրութեամբ ուլանցն ոչինչ զժուարէր, և զօր կամէր կորուսանել՝ և յայնմ յաջողէր անաշխատ, մինչև սասանել ամենայն ումեք և շկարել ճիկ հանել։ Սերոյ որեմն օր երթեկէր առ նա և ամենայն իրաց նօքա հմուտ և իբր խորհրդական էր, բազում ժամանակս խորհելով ի մտի թէ զիարդ զերծուցէ զերկիրն ի ձեռաց նոքա կամ ի զօրութենէ ուլանցն, յաւուր միում մինչդեռ յԱրտամէտ քաղաքին էր ընդ թագուհւոյն, ժամ դիպող գտեալ՝ յափշտակեալ ի ձեռաց նոքա զուլունս փախչի։ Զայրացեալ Շամիրամայ և ի ցասման մեծի եղեալ յարձակի զհետ նորա, և շկարացեալ հասանել առ անհնարին կատաղութեան զգէտն պարսատիկ գործեալ, քանզի յոյժ երկայն և թաւ էին, և տպառած մի ահեղ մեծութեամբ եղեալ ի նմա արձակէ զհետ ժերոյն. և առ մեծի քննութեան զերծեալ հերացն ի գլխոյն՝ և տպառած մեծ զլորեալ անկանի ի փոս մի առ Արտամէտաւ, զոր և ցուցանեն մինչև ցայսօր։ Իսկ ծերն առեալ զուլունս փախչի ի ծովեզերս Դատվանայ և անդ

¹ Իսկապես չենք հասկանում թե Խորենացու ժամանակների հետևազույն զրույցների արձագանքներն (ОТГОВОДЪ НАСЛѢДЪ СНАСЛѢДЪ) բառերով ինչ է ուզում ասել պ. Խալաթյանը։ Խորենացու համար այն չէ, թե այդ զրույցները Խորենացուց 1500—2000 տարի առաջ են ստեղծված, թե մի քանի հարյուր տարի միայն առաջ. այլ այն թե եղել են Խորենացու ժամանակ զրույցներ Շամիրամի մասին թե չէ, և Խորենացին այդ զրույցներին է ոգտվել թե չէ, լինին զրույցները հնագույն թե ոչ ժամանակներում ստեղծված։

արկանէ ի ժող, և զերծանի երկիրն առ հասարակ ի մոզական շարունենէն
Շամիրամայ: Աշտասիկ զրուցքն ուրուներ ի ծով Շամիրամայ:

Խորենացու պատմվածքի և այլ զրուցքի նմանութիւնն այն է, որ երկսի
մեջ Շամիրամը մի վաճառ ու յար վնուց է, որ անք ուրումքն էր: որոնք վերջը
ժողն ևն ընկնում: Մնացածն ամբողջական արարեր է: Խորենացու մեջ ոչ մի
բան չկա այն մասին թէ ինչպէս է Շամիրամն ուղանալու: Եւս թերտ: և
այս կաղմում է արդի զրուցքի առաջին մասը: Խորենացու մեջ չկա և զրուցքի
երկրորդ մասը թէ ուրումքնները ինչ զրուցքուն ունեն և թէ Շամիրամն ինչ-
պէս յար կիրքն էր կատարում անոնց զրուցածք: Ըստ Խորենացու Շամի-
րամը հոմանիւններ է ձեռք բերում ոչ թէ ուրումքններով, այլ ևս ապարգե-
վելով զամենայն իշխանութիւնս և զպանծաւ, կամ զպանծ ցանեութիւնս: Կա-
տարել է տալիս, զբնծայիւք և պատարագօք, բազում պատանօք և խոստովամբ
պարգևացած, ինչպէս Արայի զրուցքի մեջ է:—մի բան որ անում է և իշխաւոր:
Մենք չգիտենք՝ Խորենացու մեջ հուռութիւն—ուրումքններն ինչի են պետք գա-
լիս: Այնուհետև զրուցքի երրորդ մասն ևս լուսնի Խորենացին: Ձրագալար
Ասորեստանի կողմնապետն է, որին հաջատում է Շամիրամը յուր իշխանու-
թիւնը: այսինքն կատարութիւնը նորան է թողնում: Նա ուղում է բուհանայ
ի վերա ամենայնի: Շամիրամ կոչում է նորա հետ, հաշիվում է փախում
է Հայաստան, ուր ամառներն անց էր կացնում, և այստեղ որդին պատնում է
նորան: Մեռնելուց առաջ, ըստ առասպելին, նա ուրումքնները ձգում է ժողք:
Իսկ զրուցքի ժերունին երթնեկութիւն ունի Շամիրամի մօտ: ժամանայն երազ
նորա հմուտ և իբր խորհրդական էր, այսինքն գիտեր, որ Շամիրամն
ուրումքնների զրուցքամբ է շարութիւն գործում: Բարի ժերունին ժողովրդին
ազատելու համար՝ խում է ուրումքնները ու փախում: Շամիրամն ետեից ընկ-
նում է. մագները պարսատիկ շինում և պոկում: Եվ այսքան միայն: Զրուցքից
մենք մինչև անգամ որոշ լգիտենք թէ արդյոք Շամիրամը մահնում է թէ չէ:
Միայն նորա ուրումքնները ժերունին ժողն է ձգում և ժողովուրդն ազատվում է
նորա մոզական զրուցքունից:

Ասել կարելի չէ թէ այս զրուցքը ստեղծվել է Խորենացու մի խոսքի ազ-
դեցութիւն տակ թէ Շամիրամ վազալ է և թէ ուրումքն Շամիրամայ ի ժող: Այս
նուրումքն կարող է Արտամետում պատմված Շամիրամի հին առասպելի
մնացորդ լինել, ինչպէս Լեզքի Սուրբ Թոնրի առասպելն է:

Ավելորդ չի լինի վերջում նկատել, որ Խորենացու թերած առասպելով
Շամիրամի վախճանն ուրիշ տեսակ է լինում: Այստեղ Շամիրամն յուր
թշնամիներից հալածված փախում է. առասպելը պատմում է նորա զհետեանկ
փախուստն, և զպատգամն և զիղծս ջրոյն և զարբումն, այլ և ի մօտ հասանել
սուսերատարացն, և զյուրութիւն ի ժող, և բան ի նման՝ ուրումքն Շամիրամայ ի
ժող: Այլ... և Շամիրամ քար: Շամիրամն ուրեմն յուր ուրումքնները ժողը
ձգելուց հետո քար է դառնում:

Ժ

ՉԱՐԴԳԻՍԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Վաղաբազմադ և յուր առասպելը:—Ըստ պատմական տեղեկութիւնց և
դարում Թ. հ. հոմայեցիք, որք պարթևների հետ կռիվելով առնում են Հայաս-
տանի մայրաքաղաքն Արտաշատ և ավերում (168 թ. Ք. հ.), շինում են մի

քաղաք, ուր պահույն են զորեղ քերդապահ զորք (գառնիզոն)։ Այս քաղաքը, որ շուտով այնուհետև հռոմայեցիք, այնտեղ ծագած մի ժողովրդական ապստամբություն զսպելուց հետո, հրատարակում են իբրև Հայաստանի գլխավոր քաղաք, կոչվում է Նոր Քաղաք¹, կամ մոտին եղած մի հին քաղաքի, կամ հին մայրաքաղաքի, Արտաշատի նկատմամբ, որից և շատ հեռու չէ։ Սակայն շատ չէ անցնում, Նոր Քաղաքը կոչվում է և Վաղարշապատ։ Ըստ հորենացու (Բ, կն) հայոց Վաղարշ թագավորը (190—210 թ. Ք. հ.) սպաստեաց պարսպաւ և զհզոր անանն Վարդգէսին, սպաստեաց պարսպաւ և հզոր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաքաւ հորենացու այս պատմությունը թե Վաղարշապատը Վաղարշ թագավորի անունով է կոչվել² անհիմն և շինովի համարել կարելի չէ, քանի որ Նոր Քաղաքի Վաղարշապատ անունը կա և քանի որ իբրեք Բ դարի վերջում և Պ դարի սկզբում Հայաստանում թագավորել է Վաղարշ³, ըթե Նոր Քաղաքը կրում է Վաղարշ թագավորի անունը, կնշանակե նա որևէ ձևով աշխատել է այդ քաղաքը բարձրացնելու ու մեծացնելու համար։

Ագաթանգեղոսի մեջ Վաղարշապատը բերդաքաղաք է և միանգամայն մայրաքաղաք Պ դարի առաջին կեսից արդեն. հոսքով և Տրդատ թագավորներն այնտեղ են նստում (հր. 26, 30, 80). Սի Վաղարշապատ, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի Եփեսոս քաղաքաւոցն Հայոցն (հր. 96)։ «Գողեալ էին յաբփայեկոց կալանին» ի նմին թագաւորաց ի Վաղարշապատն քաղաքիս (հր. 99)։ Սակայն ինչպես երևում է Արտաշատը դեռ չէ ընկնում. Վաղարշապատի հետ Ագաթանգեղոսի մեջ հիշվում է և Արտաշատը թե իբրև բերդ և թե իբրև կրոնական կենդրոն։ Բուզանդի մեջ (Պ դար, Ը գլ.) Տրդատի որդին հոսքով Պ դարում, ինչպես երևում է, Արտաշատում էր նստում և այստեղ ափնել և ի դաշտն Մեծամորի ի բլուրն որ անուանեալ կոչի Գուին, որ կայ ի հիւսիսայն կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, նա տնկել է տալիս անտառ, շինում է սղապարանան արքունականքաւ, Տիրան թագավորը (Պ դար, ԺԲ գլ.) Արտաշատից ընդառաջ է եկնում Հուսիկ կաթողիկոսին, և ափնել ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յնկեղեցին դառնային, և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետականաւ, Վաղարշապատն ուրեմն միառժամանակ իբրև մրցակից է հանդիսանում Արտաշատի դիմաց, և այնուհետև դարձյալ բարձրանում է Արտաշատն ու հետո Գլին Արտաշատի մոտ։

Արտաշատն ունեւր անցյալ և պիտի պարծենար յուր հեռությամբ, հիմնադիր ունենալով հայոց հին թագավորներից Արտաշեսին, Շատ րեականորեն արտաշատոց մրցակից վաղարշապատցիք ևս պիտի աշխատեին իրենց Նոր Քաղաքի սկիզբը հին ցույց տալ և կապել որևէ հին հայ թագավորի անվան հետ, ճիշտ ինչպես մեր իշխանները ձգտում են իրենց ցեղի հեռությունը ցույց տալու՝ այս կամ այն թագավորից սերված համարելով իրենց։ Արտաշատն ունեւր յուր հիմնարկության առասպելը, Նույնը պիտի ձգտեին ունենալու և վաղարշապատցիք։ Նոր Քաղաք կոչումը, ինչպես և Վաղարշապատ, շատ նոր էր և չէր կարող նոցա համար պատիվ լինել և առասպելի նյութ տալ, Հետևաբար Վաղարշապատի առասպելը պետք էր կապել մի հին անվան հետ, մի այնպիսի անվան հետ, որ միանգամայն առնչություն ունենար Վաղարշա-

¹ Римские истории Т. Моммсен, т. V, Москва, 1885, кр. 302.

² Պատմադրան, Փնն. պոետ. Հայոց, Բ, հր. 263 հոտ.

պատի հետ: Այդ անուն է Վարդգեսի ամուսն, որ բոլոր հորինացու, Վաղարշապատի հին կուռումն է: Առասպելը շինված է Վարդգես մանուկի վրա:

Առասպելի մեջ պատմում են թե Վարդգես մանուկը «հաստած անգործ» է Տուհաց գաւառին, գալիս նստում է Երեւ ըլլի, Արտիմեզ ցաղաքի, Քանազ Թագավորի քրոջը և շինում յուր անունով ագակը, որի մեջ Տիգրան թագավորը հրեա գերիներ է քնակիցնում և ագակը մեռնում է:

Նախ նկատենք, որ սկսել կոտիկ զդուռն մի անմիտ քան է թարգմանել: ТОВАТ ДА ВАХТЯ ВРАТА, ինչպես անում է պ. Խալաթյանն ըստ էմիլի Կոնստանտինի, որպես գիտենք, ցարդ ևս մե քանի առջ Խալաթ մեջ նշանակում է մեկի աղջիկն ուղել: Այդ մի դարձված է, որ նույն հին սովորությունից է ծագում: Մեր հեթանոսների մեջ ցարդ ևս թագավորի աղջիկն ուղելիս խնամախոսը զնում թագավորի դուռը ծնծում է և հետում դուռը «խնամախոս» վրա, որ քայլի նշանակում է աղջիկն ուղել: Պ. Խալաթյանն այս առասպելը շինում է համարում, որովհետև Վարդգես անունը, ինչպես և Արտիմեզ ցաղաքը, քրոջը ևս անհայտ է: մեր մատենագիրներին և հայր ու հորմայիցի պատմիչներին, ուստի և հորինացու «հնարած» են այդ անուններն և առասպելը: Ասկայն այդ դատողության հիմքը սխալ է: Եթե աղբյուր դատելու լինիք, առաջ և հնարումի կարելի է համարել շատ ու շատ քան, ոչ միայն մեր, այլև արևմտյան ազգերի մատենագիրների մեջ: Միթե թի՛ք բան կա այս եւս պատմագրի մեջ, որ ուրիշները չեն հիշում: Պ. Խալաթյանը միշտ այսպէս է դատում, թե ինչ որ հորինացուց առաջ (անկողն հորինացուն ամենապարզ է ցարու գործում և թ ցարու սկզբում) հիշված կա՞ հորինացին ուրիշներից է առել և արգել: ինչ որ հորինացուց հետո է հիշված կամ կա՞ հորինացուց մե ուրիշներն առել, և կամ նորա ազգնությունն տակ է շինված: Իսկ ինչ որ հորինացու մեջ կա և ուրիշ տեղ չկա, կամ ոչ: Խալաթյանն ինքը չգիտի թե կա թե չկա, այդ էլ սուտ է և հորինացու շինածը: Արտիմեզ ցաղաք ուրիշները չեն հիշում: Թագազ գետը միայն Առաքիկն է հիշում: այն էլ հորինացուց առնելով: Իսկ Երեւ ըլլի՛ր, — թեպետև Հայաստանում չուր Երեւ ըլլա՛ր են հիշվում, բայց ոչ մեկը Վաղարշապատի մաս չէ՛:

1 Պ. Խալաթյանը կոչում է անում Ալիսանի «Արտառու», և. 188, որ կոչում ենք «Երեւ ըլլա՛ր» բոլոր քան արժու քրոսիկան քնակաց կոչվածը՝ ոչ մի, այլ ցիբ լաւ են, բոլոր բազում միտում առաւելել է Վաղարշապատի ցիբ արժուտու, լաւիկը Մեծադորի եղ կոչին Երեւ ըլլա՛ր, վրան առաւելվածը բառացանկայ քրոսիկան լաւ են քան, իսկ լաւագուց Լալիկն Պալաւ, այսինքն կարծիք, վրանի կալութեազ առաւելութ են, և քան Լալիկն Լալիկն Լալիկն Լալիկն: Վաղարշապատից, որքան Լալիկն Լալիկն իմացանք, ք հետք միմայն Երեւ ըլլա՛ր գիտեն, և այդ բոլորն այմայն զլուպից հլաւան է ընկնում: Թուր և հիւզ արտի առաջ քաղապան մեծ և քանք հազարութ էր, բայց այս ուրիշների ընթացում զլուպից քլիկ հազար քաղապան կրում են արտերն ու այդինները՝ դարձաբառացնելու համար, և քլուպը հետզհետե իշնում է: Սառ հետաքրքրի կլիկներ այդ Երեւ կոչված քլիկ կազմութայնն ուսումնասիրել: քլուպն, ինչպես կրում է, քնական լի, այն արժեւասկան և ծառայել է իրեն զերեւմտեւասուն: Միջիկ կմայններ, հին առաքներ և իրեղեններ շատ են գուր ևնի: աւարացը կազմված է բազմազան նյութերից, գույնզգույն շերտերով մեծ կանաւազութայն լիված, որոնց մեջ միմիկներ մեծ տեղ է բռնում: Այս քլուպը միայն, որի հին սրբազան լինելը դուրը կրում է, այմ հայտնի է Երեւ առնելով: Ասկայն պետք է նկատել, որ հորինացու լեռագիրների մեջ կա և Երեւ իրեւ ընթերցվածը, արեւան որ նախ պետք է որպէ՛կ Երեւ ըլլա՛ր՝ թե քանի մասին խոսք պիտի լինի:

Ապա ուրեմն, ըստ այ. Խալաթյանի, Խորենացու հետաքննման են Վարդգեսի ավան, Արտիմեդ քաղաք, Քասաղ գետ և Շրեշ բլուր: Չարմանալի մարդ է այդ Խորենացին, որ գրիչ մի շարժումով, առանց որևէ կարիքի, ոչ միայն մի ժողովրդական առասպել է ստեղծում, և մի Երվանդ թագավոր և Նորա փնսսան Վարդգես մանուկ, այլև լորս հինգ աշխարհագրական անուններ՝ Վարդգեսի ավան, Արտիմեդ քաղաք, Քասաղ գետ, Շրեշ բլուր, այլև մի Վարդգես (ՎԱՐԴԵՍԵՍԵՍԻ) Տուհաց զավատ: Եվ գիտե՛ք, այդ անունները նույն Ափրիկայի խորքում, Մահարայի անապատի համար չէ ստեղծում, որ ոչ ոք չկարողանա սուտն իմանալ, այլ Վաղարշապատի համար, որ Վրացի Ք. Հ. Հայաստանի մայրաքաղաքն է եղել, իսկ Գ դարուց մինչև այժմ, բացի այդ և հայոց կրոնական կեդրոն է դարձել: և է դարում, ավելացնենք մենք, նույնպես նշանավոր է եղել, երբ մեր կաթողիկոսների առանձին խնամքի առարկան է եղել հոյակապ եկեղեցիներով զարդարել այդ քաղաքը: Եվ ահա՛ այդ տեղի համար այդ ժամանակներում ստեղծում է Խորենացին այնքան անուններ: Պ. Խալաթյանն այնպես է խոսում, որ կարծես մեր մատենագիրները, և կամ իրր թե՛ նա, այ. Խալաթյանը, հաստատ գիտե՛ք, որ հոռիայնցիք գրել են և Նոցա բլուր գրածներն իրեն քաջ ծանոթ են, և կամ երբ մի հույն մատենագիր, Սուրբաս, պատահաբար գրում է Նոր Քաղաքի շինվելու մասին և չէ հիշում ուրիշ անուններ, ուրեմն և գոյություն չեն ունեցել այդ անունները, և կամ իրր թե՛ նա, այ. Խալաթյանը, հաստատ գիտե՛ք, որ հոռիայնցիք այդ Նոր Քաղաքը հիմնել են մի ամայի երկրում, և չէր կարող մի Վարդգեսի ավանի մոտին կամ տեղում շինված լինել: Կարծես պատմության մեջ թիլ են պատահում այդպիսի դեպքեր: Երբ հին գյուղի տեղում կամ մոտին շինում են նոր գյուղ, կամ նոր քաղաք. ժողովուրդը միաժամանակ պահում է հին անունը և նոր գյուղի կամ քաղաքի վրա, մինչև նոր անունը մոռացության է տալիս հին անունը: Այսպես և Նոր Քաղաք անունը կարող էր հետ մղել Վարդգեսի ավան անունը, իսկ Վաղարշապատ անունը այժմ մոռացության է տվել և Նոր Քաղաք անունը՝

Հրեից զերուրյուն Մեծն Տիգրանի ձեռով:—Խորենացին գրում է թե՛ Վարդգեսի ավանում ՎՏիգրան միջին յԱրշակունեաց նստույց զհասարակ առաջնոյ

Մեր Հին և նոր լեզուների գլխավոր տարբերությունը երևում է կալուսում, որ մեր նոր լեզուն (բարբառները) ինչպես քերականությամբ, նախադաս և հնչյունարանությամբ մենք պարզության է դիմում, Երկրարքառանքը բազադրյալ հնչյուններ են, այնինչ ձայնավորները պարզ հնչյուններ են, երկրարքառ հնչյուններ ունենալը մեր Հին լեզվի, զրաբարի հատկությունն է, այնինչ նոր լեզուն (բարբառները) թոթափել է երկրարքառ հնչյունները, այդ բազադրյալ երկձայն ձայնավորներին փոխանակել տալով պարզ ձայնավորներ, Գրաբարի ե, ա, եա, ալ, ոլ, ա, եւ, իւ, ու երկու ձայնից կազմված ձայնավորները, երկրարքառները, մեր նոր լեզվի մեջ չկան, դրանք բոլորեն ընդհանրապես փոխանակել են պարզ ձայնավորներ՝ ա, է, ի, ու, Եւ կապի բոլոր բարբառների մեջ միևնույն երկրարքառներին միևնույն ձայնավորը լի փոխանակել, մինչդեռ մի բարբառի մեջ Հին երկրարքառից պահված է կրկնակ ձայնավորի մի մասը, մյուս բարբառի մեջ պահված է մյուս մասը, օրինակ եա կրկնակ ձայնավորից մի բարբառի մեջ պահված է առաջին մասը՝ ե, իսկ մի ուրիշ բարբառի մեջ պահված է երկրորդ մասը՝ ա. զրաբարի տեղեկ, բարբառներում դառնում է տեղեկ, տեղալ։ Գրաբարի երկրարքառներին, բարբառների մեջ, փոխանակած այդ պարզ ձայնավորներից մենք կարող ենք իմանալ, թե մեր Հին երկրարքառներն ինչ հնչյուններից են կազմված իզել, մենք կարող ենք իմանալ Հին երկրարքառների բազադրի մասերը, իսկ երկրարքառների բազադրի մասերն իմանալուց հետո կարող ենք իմանալ և երկրարքառների որոշ ընդհանր հնչյունը։

Գրաբարի երկրարքառները մեկ մեկ տեսնենք, թե աշխարհարարում (բարբառներում) ի՞նչ պարզ ձայնավորների են վերածված։

1) Ե երկրարքառի համար առաջինը, թե պարզ ձայնավոր չէ, այլ բազադրյալ ձայնավոր է և կազմված է ի-է-ե։ Նոր լեզվի մեջ ե բազադրյալ ձայնավորը, երկրարքառը պետք է անպատճառ պարզ ձայնավորների վերածվի. իսկ այդ պարզ ձայնավորները կարող են լինել ե-ի բազադրի ձայնավորներից մեկն ու մեկը, կամ ի, կամ է։ Եվ մենք տեսնում ենք, որ բարբառներում զրաբարի ե ձայնավորը, եթե չի պահում յուր նախնի ե (իէ) երկձայն արտասանությունը, վեր է ածվում կամ ի կամ է ձայնավորի։ Այդ կանոնի համար շատ օրինակներ բերելն ավելորդ է, քանի որ հայտնի է, որ զրաբարի

ն-ն քարտառներին մի մասի մեջ արտասանվում է պարզ է, իսկ մյուս մասին մեջ (Թիֆլիսի, մոկաց, ագուլցոց և ուրիշ քարտառներում) արտասանվում է ի: Օրինակ գրաբարի՝ մեծ—մէծ, միծ, մեզ—մէզ, միզ. խնւթ—խէլթ, խիւթ. լեզու—լէզու, լիզու. տեսանել—տէանէլ, տիսնիլ. վեր—վէր, վիր. եզն—էզ, իզնր, Սակայն կարելի է ասել, թե բոլոր քարտառների մեջ և երկրաբար Վեր է ածվել է և ի բաղադրել պարզ ձայնավորներին, որովհետև կան և բար-քառներ, որոնց մեջ ն-ն պահում է յուր երկրաբար առ արտասանութունը ե—իէ, միայն ի-ն կարճ, մեզ, տես, ասել. և այլն, արտասանում են մ-եզ, տ-ես, աս-ել, ուտ-ել, որոնց մեջ ն-ն արտասանվում է բուրբուլին այնպես, ինչպես որ արտասանում ենք բառի սկզբում՝ եկ, երեք քառերի մեջ, Ռայց եթե միանգամ որեէ քարաբարի մեջ և բաղադրյալ ձայնավորը պետք է պարզ ձայնավորի վերածվի, պիտի վերածվի անպատճառ յուր բաղադրել ձայնա-վորներին կամ է-ի, կամ ի-ի:

2) Ո երկրաբար չամար ասացինք, թե կազմված է՝ ու+ո=ո. ուստի ինչպես և երկրաբար նոր լեզվի մեջ վեր է ածվում յուր բաղադրել մասն-րին, այդպես և ո երկրաբար պետք է քարտառներում վերածվի յուր բա-ղադրել մասերին, այսինքն պիտի դառնա կամ պարզ ու, կամ պարզ օ, կամ թե ն-ի նման կարող է մի քանի քարտառների մեջ պահել յուր հին երկ-րաբար ու+ո=ո արտասանութունը: Այս կանոնի չամար ևս շատ օրինակ-ներ բերելն ավելորդ է, քանի որ հայտնի է ո-ի օ և ու արտասանութունը քարտառների մեջ: Օրինակ գրաբարի փոր—փուր, փօր, հոտ—հուտ, հօտ, ոտ—ուտ, օտ (վատ ձեռի մասին հետո), փող—փուղ, փօղ. ձիաւոր—ձիաւուր, ձիաւօր. մեղրոտ—մեղրուտ, մեղրօտ, և այլն: Ասել լի ուղիւ, որ, մինչդեռ քարտառների մեծամասնութունը ու+ո=ո երկրաբար ու կամ օ բաղադրել մասերից մեկն է պահում, ինչպես վերի օրինակներում,—կան և մի քանի քարտառներ, որոնց մեջ ո երկրաբար երկու մասն ևս միասին պահվում են և արտասանվում են ու+ո=ո, այսինքն երկրաբար են արտասանվում, որի մեջ առաջին ու ձայնավորը երկրաբար չափազանց հատկութամբ կարճ է:

3) Ու երկրաբար չափասար է ե+ա, իսկ ն-ն, ինչպես տեսանք, չա-փասար է ի+է. ուրեմն՝ եա=ի+է(ն)+ա: Միեւնույն պարզության օրենքով գրաբարի և երկրաբար մեր գաղաղականներում պիտի վերածվի յուր բաղադրել մասերին՝ կամ ի, կամ է, կամ ո պարզ ձայնավորներին, կամ թե ի (ի+է) երկրաբար ունի, և մենք տեսնում ենք այդպես էլ լինում է: Գրաբարի մտիպլ=մտիլ (Թիֆ.), մտէլ, մտալ (Ղրբ.), կամ մտ-ել (ն-ն պետք է արտա-սանել, ինչպես բառի սկզբում). այդպես և բոլոր անցյալ դերբայները, որ գրաբարում եւլ է հանգում, իսկ քարտառներում իլ (իր), էլ, ալ, ել: Նույնպես և հրամայականները՝ գրեա=գրի, գրէ, գրա. քանդեա=քանդի, քանդէ, քանդա, և այլն: Անշարժաբարի հոգնականացուցիչ մասնիկը հայտնի է գրաբարում եուր է, որ քիչ է գործածվում. բաննար, իշնար, բարձկննար, քաղաքկննար. այդ եուր մասնիկը քարտառներում լինում է կամ իր կամ էր, կամ եր, կամ եր. օրինակ սարիք, սարէր, սարբար կամ երկրաբար ուղի սար-նր. ծառիք, ծառէր, ծառար կամ երկրաբար ուղի ծառ-եր, և այլն: Իւրեանք=իրէնք, իրանք, իր-ննք. սնալ=սիւ, սէւ. աչդպես և ուրիշ քառերի մեջ, որոնց հին եւ երկրաբար պարզվելով վեր է ածվում յուր բաղադրել մասերին՝ ի, է (ն), ու ձայնավորներին:

4) Ա երկրաբար չափասար է ա+յ: Յ հնչյունն այստեղ պարզ է, որ բաղաձայն չէ, այլ կես ձայնավոր, հափասար սուղ ի. այդ երեսն է նույնիսկ

այ երկրորդադարի արտասանութիւնները՝ լայն = լաին (лаин), միայն ի ներքին
 բարբառի հատկութիւնով կարճ պնտք է արտասանուել, թե յ տառի նախնական
 հնչյունը կնս ձայնավոր սուղ ի է եղել, այդ երևում է ն նտանից, որ ի
 նախորդի փոխանակ ձայնավորից առաջ յ, այսինքն սուղ ի է դրվում, և մէջ
 բայց յկատուած. օտարներին ի ձայնավորը ձայնավորից առաջ ուսմ է, գրել
 նախնիք. Յովհաննէս = Իովհաննէս, Յուդա = Իուդա. Յուդայ = Իուդայ. նույնպէս
 բարբառներում յ-ն պահպանում է յուր սուղ ի արտասանութիւնը յետեն
 յետ, յաղթել, լըդի արտասանում են իետին, իետ, իաղթել (հախնել), իըդի.
 միայն հարկավ ի-ն կարճ. Ինչ որ լինի յ-ի նախնական լայնութիւնը, միայն
 պարզ է, որ այժմ այն երկրաբարառի մեջ յ-ն համասար է սուղ ի. ուստի այս
 առից կամ առից. Կնշանակի պարզութիւն միենույն օրենքով հին այն երկ-
 րաբարառ մեր նոր լեզվի մեջ պիտի ունենա յուր բաղադրիչ ձայնավորներին
 մեկն ու մեկը, ա կամ ի: Այդպես էլ լինում է. գրաբարի մեջ բոլոր ուսմ
 րաբարառ ունեցող բառերն արտասանուած ունին ա, ի, և է. շատ օրինակներ
 բերելն ամբողջով էլ քանի որ այդ երկույթն իրեն աչիք ընկնող երևույթ
 ամենքն ծանոթ է. օրինակ, այժմ — աժ, էժ, իժան. լայն = լան, լէն. երկայն =
 երկան, երկէն. այժմ = աժմ, իժում. այգի = էգի, իգի. այս = աս, էս, իսիկ:

Միայն այստեղ այս նկատելի է, որ այն երկրաբարառ ոչ միայն յուր բա-
 ղադրիչ մասերին՝ ա և ի ձայնավորներին է վերածվում, այլև է է դառնում,
 և այդ է-ն ա-ի հետ ամբիւր տարածված է բարբառներում քան թե ի-ն.
 Այս առի երկրաբարառի միջին արտեղից է դուրս գալիս այդ է ձայնավորը.
 այդ երևույթի պատճառն իմանալու համար պնտք է ի նկատի ունենալ հըն-
 լիւնարտասանութեան այն օրենքը, որ ա և ի հիմնական ձայնավորներին միու-
 թիւնը տալիս է է մաքուր ձայնավորը. ինչպէս ֆրանսերենում, օրինակ
 Ա և ի ձայնավորներին միութիւնը նրա համար է է ձայնավորը տալիս, որ
 այդ երեք ձայնավորները՝ ա, է, ի մի կարգի հնչյուն են, այսինքն արտա-
 քերվում են միենույն արտաքերական գործարանի միանման շարքումով.
 Ա-ի արտասանութեան ժամանակ բերանը լայն բացվում է, լեզուն գրգռւն ան-
 շարժ է մնում բերանի խռուչի հատակում. է-ի արտասանութեան ժամանակ
 բերանի բացվածքը մի քիչ նեղանում է և լեզուն վերև է բարձրանում. իսկ
 ի-ի արտասանութեան ժամանակ բերանն ամբիւր է նեղանում և լեզուն ամբիւր
 է վերև բարձրանում դեպի ըմքը. — որով է ձայնավորը, յուր արտաքերու-
 թիւնն եղանակով, բռնում է ա և ի հիմնական ձայնավորներին միջին տեղը,
 ուստի և առի ձայնավորներին միանմանակ (իրեն երկրաբարառ պնտք է
 միանգամից արտասանուել, և ոչ ջոկ ջոկ) արտասանութիւնը տալիս է ա և ի
 ձայնավորներին միջինը, որ է ձայնավորն է:

Այսպէս գրաբարի ալ — առի երկրաբարառն էլ աշխարհաբարում վեր է
 ածվում կամ յուր բաղադրիչ մասերին՝ ա, ի ձայնավորներին, կամ օրանց
 միջին է ձայնավորին:

5) Այն երկրաբարառ համասար է ոռի = ոռի. ո-ն էլ համասար է ուռի,
 ուստի ոռի = ուռի + ոռի. Միենույն օրենքով գրաբարի ոյ երկրաբարառն էլ պիտի
 նոր լեզվի մեջ դառնա ու, ո, ի ձայնավորներին մեկը կամ ո (ու) երկրաբ-
 արառ. Այդպէս էլ լինում է, օրինակ՝ քոյր = քուր, քօր, քիւ կամ քուր (քուր,
 ո-ն երկրաբարառ պնտք է արտասանուել). լոյս — լուս, լոս, լիս կամ լոս (լուս),
 պոյս — պուս, պոս, պիս կամ պուս (պուս), շոյս — շուս, շոս, շիս կամ շոս
 (շուս), գրոյս — գրուս, գրիս. անոյս — անուս, անօս, անոշ (անուշ). ոյժ —
 ուժ, ոժ (ուժ). զնալոյս (գրաբարում անգործածական ձև) — զնալուս,

գնալիս. քոյ—քու, քօ, քո (քուօ). մարդոյ—մարդու, մարդօ (դարարի աքդի արտասանութիւնը), մարդի և այլն:

Գրաբարի ե, ո, եա, ալ, ոլ երկրարքառներ իսկական հնչյունը հայտնի է, հայտնի են և նրանց բաղադրիչ ձայնավորների հնչմունքը, և մենք տեսնում ենք, որ պարզութեան մի ընդհանուր օրենքով այդ հինգ երկրարքառները բարբառների մեջ կանոնավորապես վեր են ածվում իրենց բաղադրիչ ձայնավորներին: Սակայն մնացած շօրս՝ ալ, ել, իլ, ու երկրարքառների ոչ իսկական նախնի հնչմունքն է հայտնի, ոչ էլ նրանց երկրորդ բաղադրիչ մասի՝ լ-ի հնչյունն է հայտնի. բայց այդ շօրս երկրարքառները մեր յեզվի հնչյունաբանութեան պարզութեան ընդհանուր օրենքի մեջ բացառութիւն չեն կարող կազմել. ինչ օրենքով որ ե, ո, եա, ալ, ոլ երկրարքառները բարբառների մեջ վեր են ածվում իրենց բաղադրիչ ձայնավորներին, միևնույն օրենքով և ալ, ել, իլ, ու երկրարքառները կանոնավոր կերպով պիտի վերածվին իրենց բաղադրիչ ձայնավորներին: Այսպիսով մենք կիմանանք լ-ի հնչյունը երկրարքառների մեջ. իսկ լ-ի նախնի հնչյունն իմանալուց հետո, հայտնի է լինում և ալ, ել, իլ, ու երկրարքառների նախնի արտասանութիւնը: Ուստի տեսնենք միևնույն վերլուծութեան օրենքով այդ շօրս երկրարքառներն ի՞նչ հնչյունների են վերածվում բարբառների մեջ: Մենք կսկսենք իւ երկրարքառից, որովհետեւ դրա հնչյունը հայտնի այժմ՝ իւ=ի+ու=jու=յօ:

Գ) Իւ երկրարքառը հաժսաւոր է ի+ւ. երկրարքառների պարզութեան ընդհանուր օրենքով դրաբարի իւ երկրարքառը պիտի դառնա կամ ի, կամ մի ուրիշ ձայնավոր, որին իւ երկրարքառի մեջ համապատասխան է ւ տառը: Վերջենեք բառեր և տեսնենք դրաբարի իւ-ն աշխարհաբարում ինչ ձայնավորների է վերածվում. արիւն=արին, արուն, արմն (ֆրանս. և հնչյունը ւ ենք նշանակում). սրբութիւն=սրբութիւն, սրբութուն, սրբութմն. այսպէս և բոլոր ութիւն հանգած բառերը.—գիւր=գիր (դալ), գուր, գւր, ճիւղ=ճիղ, ճուղ, ճմլղ. շիւղ=շիղ, շուղ. ձիւն=ձին, ձուն, ձմն. սիւն=սին, սուն, սմն. մրջիւն=մրջուն, մրջիմ. իւր=իր, ուր, մր. հարիւր=հարիր, հարուր, հարմր. ալիւր=ալիր, աւուր, ալնր և այլ բաղմաթիվ բառեր, որոնց միջի գրաբարի իւ երկրարքառը գաժառականներում դառնում է ի, ու և մ, ի ձայնավորը համապատասխան է իւ երկրարքառի ի ձայնավորին, իսկ ու և մ հնչյունները հարկավ, փոխանակել են իւ երկրարքառի երկրորդ մասին՝ ւ ձայնավորին: Որից այն ճգրտակցութեան պետք է գալ, որ իւ երկրարքառի մեջ լ-ի հնչյունն է ու կամ մ, ինչպէս որ իրօք իւ (յօ) երկրարքառի արտասանութեան մեջ այդ ձայնն էլ լսում ենք: Տեսնենք մյուս երկրարքառներից էլ լ-ի համար միևնույն հնչյունը դուրս է գալիս թե ոչ:

Դ) Եւ երկրարքառը ներկայումս խառնվել է իւ և եալ (եօ) երկրարքառի հետ, այնպէս որ այժմ եւ երկրարքառն այլևս չի գործածվում, այլ դրա փոխանակ միշտ իւ կամ եալ (եօ) երկրարքառն է գործածվում, որից երևում է, որ այդ երեք երկրարքառները հնչյունով իրար շատ մոտիկ են եղել. սակայն հին ձեռագիրներից հայտնի է, թե որ բառերը եւ երկրարքառով էին գրվում:

Եւ երկրարքառը հաժսաւոր է ե+ւ. իսկ ե-ն հաժսաւոր է ի+է. որով ե+ւ=ի+է+ւ. Պարզութեան ընդհանուր օրենքով եւ երկրարքառին պիտի փոխանակած լինին ի, է (ե) ձայնավորները և մի ուրիշ ձայնավոր, որ համապատասխան պիտի լինի ւ ձայնավորին: Վերջենեք բառեր.

Գեւղ (հին գրութիւն գեւղ բառի)=գիղ, գէղ կամ երկրարքառով գ-եղ

(գիէղ), գող. աղբեր (հին գր.) = աղբեր, աղաւու. էրկիւղ (երկիւղ) = երկիւղ. երկեղ, երկուղ. հեղ (հիւղ) = հիւղ, հեղ, հուղ, հղցեւր = հղցեւր, հղցուր, հեղ (հիւր) = խուր (վաղց, բորք). ուղեւղ (ուղիւղ) = ուղիւղ, ուղիւղ, բղւղ (ղող), հեւ (հիւ) = հու, ուսին (ձյան հյւսւ, հ հիւսեւր մեր լեզվի հատկութիւնք վերացած է):

Հարկավայրպիսի բառերի օրինակներ յաս կարծիք էր բերել, եթէ իւր և նաւ երկրաբաւերը խառնված լինեն իւր երկրաբաւեր հետ, և եթէ ունենայինք գաղաւարաբաւերի բառարաններ. օրինակ մենք շաւել (շաւիւղ), պեղծ (պիւղծ), խելը (խիւղ) բառերի շաւիւղ, շաւել, պիւղ, պեղծ, խիւղ, խելը ձևերը գիտենք, բայց բառարանների անտեսութեամբ պատճառով լիարանք, թէ այդ բառերի շաւել, պիւղծ, խուղը ձևերն էլ կան. թէ ոչ, բայց այդքան օրինակներն էլ բազմապէս են ցուց տալու համար, որ հին եւ երկրաբաւեր գաղաւարտներում վեր է ածվում ի, է, ու բաղադրիչ մասերին:

8) Աւ երկրաբաւեր, որի փոխանակ հիմա օ են գրում, հաճախ է աւելի Պարսկութեան նույն օրենքով աւ երկրաբաւեր պիտի վերածվի աւ ձայնավորին և մի ձայնավորին, որ համապատասխան պիտի լինի աւ երկրաբաւեր երկրորդ մասի՝ աւ հնչունին. վերջինք բառեր:

Աւառ (օճառ, պարզութեան համար աւ ենք գրում) = աւառ, պարսկական = պարսկական, արաւար (արաւար) = արաւար (հազմակի հին) լուգ, ինչպէս քաղցր, քաղցունք, աւ (օր) = աւար, խաւք (խօք) = խաւք, խաւքից (զոկերեն), աւ (օճ) = աղծի (զոկեր),¹ հաւ (հօր) = հարանք, աւաւ (աւօր) = ասաւ, ասաւաց, աւաւաւ (աւաւաւ) = աւաւաւ, ամաւ = ամաւ, քաւ (քաւ) = քաւ, քաւաւ = քաւաւ, Պարսկական = Պարսկական, քաւաւ = քաւաւ, խաւսեր = խաւսեր, խաւսաւաց, աւերք = ուղերք, աւերք = ուրուկ, աղաւ = աղաւ, աւարեր (օրօր) = ուրուր, յաւք (յօք) = ուք, աղաւ (եղօր) = աղաւ և ալի:

Այսպէս, տեսնում ենք աւ երկրաբաւերն էլ կանոնավորապէս դառնում է կամ ա, կամ ու: Բայց հին աւ երկրաբաւերը նոր լեզվի մէջ ալիքի օ է դառնում, քան թէ յուր բաղադրիչ մասերը՝ ա և ու: Ու ձայնավորը հիմնական հնչուն չէ, ինչպէս ա և ի հիմնական ձայնավորների միութեանից կազմվում է է, այդպէս և ա և ու հիմնական ձայնավորների միութեանից տալիս է օ. ինչպէս լատ. Augustus, ֆրանս. Auguste (Օգիւստ), հաւերեն աւգոստոս = օգոստոս է դառնում, այդպէս և մեր աւ երկրաբաւերն ա և ու (ւ) ձայնավորների միութեանը մեծ մասամբ դառնում է օ. թէպէտեւ, ինչպէս տեսանք, հիմնական ա և ու հնչուններն էլ երբեմն պահպանում են:

9) Աւ երկրաբաւեր հաճախ է ու ա Միևնույն օրենքով աւ երկրաբաւերն էլ պիտի վերածվի յուր բաղադրիչ մասերին՝ օ, ու: Մենք շփոթենք երկրաբաւեր ասած ու-ն նախնիք ինչպէս էին արտասանում հետևյալ բառերի մէջ. տուն, շուն, սուտ, քուն, գլուխ, թուր, ուրախ, ունիւ, ջուր, ուտել, ուրիշ և ալի, բայց այդ բոլոր բառերի մէջ, արդի արտասանութեամբ գրաբարում և բարբառների մի մասում, հին աւ երկրաբաւեր արտասանվում է յ պարզ ձայնավորով, որ և աւ երկրաբաւեր բաղադրիչ մասերից մեկն է, Աւ երկրաբաւ-

¹ Մեր և սուրը միշտ գրվում է ր, ն, ղ բաղաձայններից հետո, բայց օճ, որի մէջ ձայնավորից հետո է գրվում. բայց այդ բառի զօկերեն ողծ, աղծի, ձևում վերականգնվում է ընդհանուր զրութեանը, այսինքն ձ-ն ղ բաղաձայնից հետո է գալիս և աւ ձայնավորից հետո:

բանի բաղադրիչ մասերից մեկն է, ինչպէս վերևում տեսանք, և օ (ո), և մենք տեսնում ենք, որ շատ բարբառներ, հին ու երկրաբարաոից պահել են օ մասը և վերոհիշյալ բառերն արտասանում են տօն, շօն, սօտ, քօն, գլօխ, թօր, օրախ, օնիս, օրիշ, օտել, նաև կան բարբառներ, որոնք արտասանում են ֆրանս. և հնչյունով քմն, ջմր, գլմիս, և այլն:

Եվ այսպէս տեսնում ենք, որ մի անփոփոխ և ընդհանուր օրենքով մեր հին լեզվի երկրաբարաոները նոր լեզվի մեջ պարզվելով վեր են ածվում իրենց բաղադրիչ մասերին և զտնուծ են, ե=ի+է. ո=ու+օ. էա=ի+է(ե)+ա այ=ա+յ կամ ա+ի. ոյ=ո+յ կամ ու+օ+ի: Սույն երկրաբարաոների թիւ իրենց և թե իրենց բաղադրիչ ձայնավորների հնչյունը հայտնի է, իսկ մյուս շորս երկրաբարաոները, որոնց ոչ իրենց հնչյունն է հայտնի և ոչ բաղադրիչ մասի՝ և-ի հնչյունն է հայտնի, միևնույն օրենքով տալիս են. աւ=ա+ու. եւ=ի+է+ու. իւ=ի+ու. ու=ու+օ+ու: Մեր հին և նոր լեզուների երկրաբարաոներէ այս համեմատութիւնից տեսնում ենք, որ աւ, հւ, իւ, ու երկրաբարաոների երկրորդ մասի համար դուրս է գալիս y կամ ü (ֆր. u) հրնչյունը, որ և լինում է և-ի հնչյունը: Միևնույն համեմատութիւնից տեսնում ենք, որ մեր հին լեզվի երկրաբարաոները համասար պիտի լինին հունական կամ լատինական երկրաբարաոներին:

Աւ=au, հւ=jeu, որ միանգամից արտասանվելով մոտենում է եօ և իւ երկրաբարաոներին, ինչպէս և այդ երեք երկրաբարաոները ձեռագիրների մեջ խառն իրար փոխանակել են. իսկ իւ=ju, ինչպէս որ այժմ էլ արտասանում ենք. իսկ ու=ou:

Կնշանակի մեր հին լեզվի մեջ խաւսք արտասանելիս են եղել ոչ թե խօսք, օ ձայնավորով, այլ օ ձայնավորի հիմնական ա և ու ձայնավորով՝ խաուսք, որից մի բարբառ պահել է ա հնչյունը՝ խաօքի, խաօքից, մի ուրիշ բարբառ պահել է ու հնչյունը՝ խուսել, խուսաց (խաւ խաւսոց). իսկ մի երրորդ բարբառ, ինչպէս և վերջին դարերու գրաբարը ա և ու ձայնավորների միջինը՝ օ է ընդունել՝ խօսքը, Ալդպիս և Պաւղոս արտասանելիս են եղել Պաուլոս (Paulus), որից և Պաւղոս ձևը: Տուն արտասանելիս են եղել տօուն (toun), որից մի բարբառ պահել է օ ձայնավորը, տօն, իսկ մի ուրիշ բարբառ, ինչպէս և վերջին դարերու գրաբարը, պահել է ու ձայնավորը՝ տուն, այսպէս և ուրախ արտասանելիս են եղել՝ օուրախ, որից մի բարբառ պահել է օ ձայնավորը՝ օրախ, իսկ մյուս բարբառը՝ զրաբարի հետ աւ ձայնավորը՝ ուրախ. նույնպէս և ունիւր—օունիս, որից և օնիս, ունիս:

Կարծում ենք գրաբարի և բարբառների համեմատութիւնից հանած այս խզրակացութիւնը գրաբարի երկրաբարաոների նախնի արտասանութիւն մասին այլևս կտակածանքի տեղիք չունի, քանի որ այդ օրենքն ընդհանուր է և առանց բացառութիւն. մանավանդ որ այդպիսով մեր երկրաբարաոները միևնույն արտասանութիւնն են ստանում, ինչ որ հունաց և լատինաց երկրաբարաոներն ունին, որոնց այբոննարանին հարմարեցրած է մեր այբոննարանը, և որոնց երկրաբարաոները նախնիք մեր երկրաբարաոներով տառադարձել են. օս գրել են աւ, օս—եւ, յս—իւ, օս—ու. իսկ մեր այդ երկրաբարաոները, նույնիսկ մեր բարբառների համեմատութիւնից հանած, տեսնում ենք, որ միևնույն հնչյունն են ստանում, ինչ որ նախնիք համապատասխան են դա՛ն հունական և լատինական երկրաբարաոներին:

Նոր որ անցյալ տարի լեզվաբան պ. Ս. Սարգսյանը հունարենի և լատիներենի համեմատութիւն օգնութիւնք մեր հին երկրաբարաոների արտասա-

նության մասին սույն եղբայրացութեանն էր դալիս, «Մուրճի» խմբագրութեան այդ հոդվածի առթիվ արած նկատողութեան մէջ իբրեւ մի անհամա-
տարի փաստ էր բերում, ասելով, «Մի՞թե մեծ վստահութիւնն չէ պնդել, քան
հլուր արտասանվում է եղև որպէս հունաց իսպիւրներ Այդպիսով հո՛ւ մեր
նախնական լեզուն լինէր կա՞րողոք վկայութիւն Այդպիսով իբր թէ մենք
(այսինքն մեր նախնիք) պետք է արտասանելիս լինենք՝ բա-ու է ունի
հա-ու-ատ առ Աստ-ու-ած» (Մուրճ, 1889, № 5, եր. 318),

«Մուրճի» խմբագրութիւնը վկայութիւն է ուզում, վկայութիւն այն է,
որ նախնիք ւ-ը միշտ ձայնավորներին կարգում են որք է երբեք բաղաձայն-
ների կարգում։ Քանի որ նախնիք ասում են որ համբաւել, արշաւել բառերի
մէջ ւ-ը ձայնավոր է և ոչ բաղաձայն վ, ուստի և համբաւել, արշաւել նրանք
չէին արտասանել համբաւել, արշաւել, այլ համբաու-ել, արշաու-ել, միայն
ոչ այլ։ Արտասանչայնի գրութեամբ բամբա-ու-ել, հա-ու-ատ, այսինքն ու-ն
ստանձին վանկով, այլ ա-ից անբաժան և կարճ, ինչպէս իւ հրկաւորադ
մէջ արտասանում ենք իսկ։ Սակայն ուրիշ վկայութիւններ ընդէն ամբողջ
ենք համարում, քանի որ այդ վկայութիւնները մեր հոգովածի մէջ կան։ Մի
տարօրինակ քան է թվում «Մուրճի» խմբագրութեանը, որ այդպիսով մեր
հին լեզուն շատ երկարաբառներ կունենար. ինչ զարմանալի բան կլինի, եթե
մեր հին լեզուն շատ երկարաբառներ ունեցած լինի, քանի որ մեր լեզվին
ցնդակից ուրիշ լեզուները, հին հունարենը, լատիներենը և արիշներն ունին
միևնույն երկարաբառները, և քանի որ նախնիք նրանց երկարաբառները
մեղնում էլ երկարաբառներով են գրել, քա-ու և այլն։

Աւ, եւ, իւ, ու հրկաւորառների նախնի արտասանութիւնն իմանալուց
հետո, պետք է ուշադրութիւն դարձնել և մի երևութի վրա, որ տեղի է
ունենում այդ երկարաբառների նոր լեզվի մէջ կրած փոփոխութեան ժամա-
նակ։ Այդ երևութն այն է, որ հին երկարաբառները նոր լեզվի մէջ վեր են
ածվում իրենց բաղադրիչ ձայնավորներին, կամ այդ բաղադրիչ ձայնավոր-
ների միջին հնչույնի (աւ=միջին ւ) միայն այն ժամանակ, երբ որ այդ երկ-
արաբառներին հետևում է բաղաձայն հնչույն. օրինակ աղաւթ (աղաութ)
դառնում է աղութ կամ աղթ. իսկ խաւք (խաուք) դառնում է խուսի կամ
խասքի կամ խօսքի, որովհետև աւ (աու) երկարաբառից հետո դալիս է բա-
ղաձայն հնչույն։ Իսկ եթե այդ աւ, եւ, իւ երկարաբառները ընկնում են բառի
վերջը, կամ թե այդ երկարաբառներին հաջորդում է ձայնավոր հնչույն, այն
ժամանակ այդ երկարաբառները ոչ իրենց բաղադրիչ հնչույններին են վերած-
վում, և ոչ այդ բաղադրիչ հնչույնների միջին հնչույնին, և ոչ էլ իրենց երկ-
արաբառ հնչույնն են պահում, այլ դառնում են աւ=աւվ, եւ=եւվ, իւ=իւվ
վանկեր։ Օրինակ՝ հաւ=հաւվ, հաւաւ=հաւատ, ձեւ=ձեւվ, երեւիւ=երեւիվ.
թիւ=թիվ, հիւանդ=հիւանդ։

Թերևս ուրիշներն ենթադրեն, որ այդ դեպքերում, այսինքն բառի վեր-
ջում և բառի մէջ ձայնավորից առաջ, աւ, եւ, իւ ոչ թե երկարաբառ են եղել
հնումը, այլ սոսկ վ (ւ) բաղաձայնով կազմված վանկեր. բայց այդ ենթա-
դրութիւնը հիմնավոր չէ նախ՝ այն պատճառով, որ աւ, եւ, իւ միշտ երկ-
արաբառ են հիշվում, իսկ ւ-ը միշտ ձայնավոր և երբեք բաղաձայն. երկրորդ՝
հայտնի է, որ զրաբառի գործիական հոլովի աւ, իւ վերջավորութիւնն այժմ

արտասանում ենք ավ, իվ, քաղաքացւ = քաղաքացւ, բանիւ = բանիվ. իսկ այդ միենեւայն հոլովի հոգնակին երբոր է քաղաքացւին է ընդունում, քաղաքացւ, բանիւք, արտասանում ենք ոչ թե քաղաքացւք, բանիւք (բանիւք), ինչպէս եղանկում ենք արտասանում, այլ՝ քաղաքօք, բանիւք (բանիւք), ինչ է այս երևույթի պատճառը, բայց եթե այն, որ նախնի ւա (աու), իւ (իու) երկրարքառները եղանկում, բառի վերջում մնալով, ընդհանուր օրենքով դարձել են ավ, իվ, իսկ հոգնակիում իրենցից հետո ունենալով քաղաքացւին հնչյուն է. իւ երկրարքառը պահել է յուր հնչյունը, ինչպէս միշտ պահում է քաղաքացւից առաջ, իսկ ւա (աու) երկրարքառը դարձել է միջին հնչյունը՝ օ, ինչպէս սովորաբար դառնում է քաղաքացւից առաջ.

Աւ (աու), եւ (եու), իւ (իու) երկրարքառների ւ (ու) հնչյունի, բառի վերջում և բառի մեջ ձայնավորներից առաջ կամ նույնիսկ քաղաքացւից առաջ. վ հնչյունի վերածվելը մի անսովոր երևույթ է թե մեր լեզվի մեջ և թե նույնիսկ մեր լեզվին ցնդակից լեզուների մեջ. Հին լեզուներին հատուկ ւա (աու օւ) երկրարքառը նոր լեզուների մեջ կամ դառնում է օ կամ թե ւա (աու) երկրարքառի ու հնչյունը թափանում է և դառնում է վ. օրինակ լատինական Աուգուստոս ֆրանսերենի մեջ դառնում է Օգիւստ, ինչպէս և հայերենում աւգոստոս — օգոստոս, իսկ ռուսերենում միենեւայն բառը դառնում է վ-ով Август. նույնպէս և լատ. Պաուլուս, ֆրանսերեն Պօլ, հայերեն Պաւղոս — Պօղոս, իսկ ռուսերեն Павел. նույնպէս և ուրիշ բառերի մեջ լատ. օւ երկրարքառը դառնում է ավ. ինչպէս Аврелий — Արելիոս, Аврора բառերի մեջ. նույնիսկ հայոց լեզվի մեջ նաւթ (նաութ) մի բարբառի մեջ դառնում է նօթ, իսկ մի ուրիշ բարբառում նավթ. այդպէս աղանի (աղաուի) դարձել է աղունիկ, աղունիկ և աղալինի. Եւրոպա դարձել է Եվրոպա. իսկ աւր (աուր) քաղաքացւից առաջ դառնում է օր, իսկ ձայնավորից առաջ արտասանվում է ավ, արուր = ավուր, թե գրաբարում և թե բարբառներում. Այդպէս և Հին ունիս (ուունիս), սուն (սոուն), ուրախ (ուրախ) բառերը դարձել են օնիս, սօն, օրախ, կամ թե ու (օու) երկրարքառի ու հնչյունը վ-ի վերածվելով օվնիս, սօվն, օվրախ, ինչպէս փվ դարու զոկերենում եղել է ըստ Շրեյդերի. Ու հնչյունի ձայնավորներից առաջ վ հնչյուն դառնալը նույնիսկ մեր արդի լեզվի մեջ կատարվում է. ինչպէս լեզու, կատու, եթե վերջից մի ձայնավոր են ընդունում, դառնում է վ. լեզվի, կատվի.

Այսպէս՝ տեսնում ենք, որ Հին աւ, եւ, իւ երկրարքառները քաղաքացւից առաջ նոր լեզվի մեջ միշտ դարձել են՝ աւ = ա, ու = օ, եւ = ի, ու, է, կամ իւ (իու). իւ + ի, ու կամ իւ (յօ). բայց այդ միենեւայն երկրարքառները բառի վերջում և ձայնավորից առաջ դարձել են՝ աւ = ավ, եւ = եվ, իւ = իվ. միայն հատ հատ բառերի մեջ քաղաքացւից <առաջ> դարձել է ավ. իսկ Հին զոկերենում ու դարձել է օվ:

Թե որ դարուց սկսած Հին երկրարքառների նախնի երկնայն հնչյունքը վեր է ածվում կամ պարզ ձայնավորների, կամ ավ, եվ, իվ վանկերի, — այդ որոշ կարելի չէ ասել, քանի որ լատինե Հին բարբառներով զրկածքներ. Միայն այսքանը հիշտ հայտնի է, որ փվ դարում արդեն աւ երկրարքառը դարձել էր օ կամ աւ. թեպետ և այն հայտնի է, որ այդ դարերում աւ երկրարքառի օ և ավ դառնալը դեռևս տատանման մեջ է եղել, որովհետև աւ ոչ միայն արմատական քաղաքացւից առաջ, այլև բառի վերջում, երբեմն և միջում ձայնավորից առաջ օ էր արտասանվում. Այդ տատանական դրությունից առաջանում է այն, որ Հնագիւրների մեջ տեսնում ենք աւ երկ-

բարբառան 1-ի դարձրած և այս դեպքերում, ինչպես ազու (ազուս), քաղաքո (քաղաքաւ), բաւական (բաւական), յառ (յառազ), յառնակ (յառնակ), բասնդակ (բասնդակ) և այլ տեսակ գրութիւններ տառադարձ են միայն նրանից, որ այդ ժամանակ լեզվի մէջ աւերկարբառի և ևս՝ դառնալը դեռևս տատանական գրութիւն մըն է եղել, մինչև, այնչափ գործը սկսած, որոշ տեղերում դարձել է օ կամ ա, ու և ևս՝ Այդ տատանական գրութիւնը մի անտովոր բան պիտի լիզի հին դարերի համար, քանի որ մինչև այն տատանական գրութիւնը ու (օու) երկ<բար>բառի համար գտնում ենք անշաղկապարու սկզբներում զոկերների մէջ, երբ որ ու(օու) երկբարբառն արտասանվելիս է եղել ու, առաջ, իսկ այժմ մինչև այն զոկերներում արտասանվում է ու (օու) երկբարբառի քաղաղորի օ ձայնավորով միայն՝ տեղ օրայի, իսկ մյուս բարբառների մէջ ու (օու) երկբարբառը մյուս բաղադրիչ օ ձայնավորով է արտասանվում, Հին քերականները այդ (օր) բառի համար ասում են Ե-ից առաջ Ե-ը բաղաձայն է, որից երևում է, որ այդ բառը այն և օր արտասանութիւն մէջ տատանվել է, մինչև որ քերականի է քնդհանուր կանոնով օ ձայնավորով օր ձևը: Տատանված պիտի լինի և արշաւի, համբաւի բառերի մէջ Ե-ի հնչյունը, որի համար հին քերականներն ասում են թի ձայնավոր է, ուրեմն արտասանվելիս է եղել արշաւել (առ իբրեւ երկբարբառ մի վանկով պիտի արտասանել), համբաւել: իսկ այժմ այդ բառերն արտասանում ենք Վ-ով՝ համբաւել, արշաւել: Սրանց կարգումն են և աղաւելի և աղունիկ, աղունիկ, նավթ և նօթ ձևերը¹:

Այսպես, երկբարբառների պարզ ձայնավորների կամ Վ, Ե, իվ վանկերի վերածվելը իբրև իրողութիւն գտնում ենք ժի դարում, թեպետև ձայնավորների և Վ, Ե, իվ վանկերի միջև տատանվում է, մինչև որ ժի դարում բոլոր բարբառների մէջ որոշ տեղերում մի ընդհանուր օրենքով ձայնավորների կամ Վ, Ե, իվ վանկերի են վերածվում:

Երկբարբառների պարզ ձայնավորների վերածվելու սկիզբն ավելի առաջ է քան մեր գրականութիւնն սկիզբը, որովհետև հին լեզվի մէջ գտնում ենք այնպիսի բառեր, որոնք մեր գրաբարի մէջ մտած են ոչ թե երկբարբառ գրութիւնը, այլ երկբարբառների քաղաղորի ձայնավորների գրութիւնը: Օրինակ հին լեզվի ծով, կով, խռով, բառերի նախնական ձևն անշուշտ եղել է ծաւ, կաւ, խռաւ և Ե դարում այդ բառերի աւերկարբառն գրական լեզու դարձած բարբառի մէջ արդեն օ է արտասանվելիս եղել, ծօ, կօ, խռօ, որ և նախնի գրութիւնը գրել են ծով, կով, խռով (թե՛ վ հնչյունը ինչու է մըտնում այդ տեսակ բառերի մէջ, այդ մասին հետո): իսկ մյուս բարբառները, որոնք մեր գրականութիւնն սկիզբում այդ բառերը երկբարբառով՝ ծաւ, կաւ, խռաւ (ծաու, կաու, խռաու) էին արտասանում, այդ երկբարբառով արտասանութիւնն այնքան պահել են, մինչև երկբարբառների պարզումն ամբողջապես կատարվել է և դարձել են ծավ, կավ, խռավ:

Հայտնի է, որ է հնչյունը հիմնական հնչյուն լէ, այլ կազմված է այ կամ ա + ի երկբարբառից, եթե մենք մեր գրականութիւնն սկիզբում գտնում ենք մեր լեզվի մէջ բառի վերջին վանկի մէջ Ե-ով գրութիւն՝ տէր, սէր, մի՞թե

¹ Այդ տատանական գրութիւնն համար որոշ քաղաղոր կարող են ապ միայն Ը, Պ, Ժ դարու հետադիմներն, արձակագրութիւններն և ձայնավոր գրութիւնները, որոնք մէջ թի ու չառ երևում է ժամանակակից կնիքանի լեզվի ազդեցութիւնը գրաբարի վրայ:

որոշ չէ, որ այդ ժամանակներում նախնի այ ներկաբարառն արդեն վեր է ած-
ված եղել է ձայնավորի, որովհետեւ տէր, սէր բառերի սկզբնական ձևն եղել
է տայր, սայր (զոկ.), որպիսի ձևով դանում ենք մեր բարբառների մեջ.
նույնիսկ է հնչյունի ի-ի փոխվելը միթե այն լի ապացուցանում, որ մինչդեռ
բառի սկզբում ալ (աի) ներկաբարառի միջին է հնչյունն է պահված, քանի
մյուս ձևերում պահված է ներկաբարառի բաղադրիչ ի ձայնավորը. թրևս
լինին բարբառներն եւ, որոնց մեջ պահված լինի ալ (աի) ներկաբարառից ա
ձայնավորը. ինչպես և իրոք կան էլ. Այդպես դրականության սկզբից առաջ
եղել է սայր, որից և սէր, սիրել, սիրուն, և սալրիլ ձևերն են դուրս գալիս
միևնույն օրինակով, ինչ օրինակով գրաբարի բոլոր ներկաբարառներն, ավելի մո-
տիկ ժամանակներում պարզվում են, վերածվելով իրենց բաղադրիչ ձայնավոր-
ներին. Այդպես և գրականությունից առաջ միտք քան եղել է ներկաբարառով՝
մայտք, որ և մնացել է պահպանում, իսկ մայտք ձևից կազմվել են մէտք,
միտք ձևերը, թրևս մի որն է բարբառի մեջ մայտք ձևն էլ լինի. ալսպես
նախնականն է տայր (զոկերեն), որից և տէր, տիր(ել), տար ձևերը. նախնա-
կանն է քալթ (զոկ. քիթ), որից և քէնթ, քինթ, գուցն և քանթ ձևերը. նախ-
նականն է պղայն (զոկ.), որից և պղէն, պղին, գուցն և պղան ձևերը.
նախնականը պիտի լինի անշուշտ և կնայլ, որից կնէկ, կնակ, կնիկ ձևերն
են դուրս գալիս. նախնականը պիտի եղած լինի և գտուրծ (դործ), որից և
գարծ, գուրծ, գօրծ ձևերն են դուրս գալիս. նախնականը պիտի եղած լինի
հաուտ (հատ), որից դուրս են եկել հատ, հուտ, հօտ, հոտ (հուտ). նախնա-
կանը պիտի եղած լինի աուտ (ուտ), որից և աուտ, ուտ, օտ, ոտ (ուտ) ձևերը.
Այսպիսի օրինակներ շատ ու շատ կարելի է բերել, որոնք հաստատում են,
որ մեր բարբառների մեջ ձայնավորների բազմաթիվ փոփոխությունները,
ինչպես առաջ էլ տեսանք, բոլորն էլ կանոնավոր կերպով առաջանում են
նրանից, որ նոր լեզվի մեջ հին լեզվի ներկաբարառները պարզվելով, բարբառ-
ներից մեկն այդ հին երկբարբառների բաղադրիչ ձայնավորներից առաջինն
է պահում, մի ուրիշ բարբառ ներկաբարառի ներկորդ ձայնավորն է պահում,
իսկ մի երրորդ բարբառ ներկա ձայնավորի միջինն (օ, է) է պահում. Այս
օրենքն այնքան հաստատ է, որ բառի մի կամ երկու ձևն իմանալուց հետո
կարելի է հազմատայաջ ասել, թե մեր մյուս բարբառների մեջ ուրիշ ինչ ձևեր
կարող են լինել:

Սակայն մենք հետաքննենք բուն խնդրից. մեր միտքն այն էր, որ ցույց
տանք թե մեր գրականության սկզբից առաջ սկսվել է ներկաբարառների
պարզ ձայնավորների վերածվելը, և կարծում ենք վերոհիշյալ օրինակներով
այդ էլ ցույց տվեցինք, որովհետեւ եթե ը դարու դարաբարի մեջ պահված է
ոչ թե բառի ներկաբարառով ձևը, այլ պարզ ձայնավորով ձևը, ոչ թե սայր,
այլ սէր, սիր(ել).—կնշտակի, որ այդ ժամանակ արդեն պարզված են եղել
մեր մի կարգ ներկաբարառները:

Ամփոփենք այն եզրակացությունը, որ մեր հին լեզվի ներկաբարառների
համար անում ենք մեր հին և նոր լեզվի համեմատությունից. Ե տառը սկզբ-
քում եղել է ձայնավոր և նրա հնչյունն եղել է ֆրանս. ւ հնչյուն, իսկ ներկ-
աբարառների մեջ ուսուց ւ (ու), Ա, եւ, իւ, օւ ներկաբարառների հնչյունն
եղել է աւ=լատ. օւ (աու), եւ=լեւ (եու), իւ=լւ, ւ (իու), ու=օւ (օու,
ուօւ). Այդ ներկաբարառները ը դարից, երկի, ոչ շատ հետո սկսել են պարզ-
վել. որ արդեն օՒ գարում, եթե ոչ բոլորովին, մասամբ պարզված են եղել.
բաղաձայն հնչյունից առաջ աւ գարծել է գրական լեզվի մեջ, օ, իսկ բար-

բառներում ա, ւ, ու, եւ գրական լեզվի մեջ նույնացել է իւր հրկրաբանոր
հետ, որ միայն էւ որ պահել է յուր հրկրաբան լիւ, ու հնչյունը, բայց բոլոր
բառներում եւ-ը դարձել է ի, է (ծ), ու կամ ու, իւն գարծել է ի, ու կամ ու,
ու-ն դարձել է ու (յ), օ:

Այսպես միայն բաղաձայնից առաջ, իսկ ձայնավորից առաջ և բառի
վերջում այդ հրկրաբանների և տառի ու (յ) հնչյունը թափանցելով դարձել է
վ բաղաձայն, որով և այժմ է-ը միշտ իրոք ռաղաձայն է արտասանվում, բացի
իւ (յ) հրկրաբանից, որի մեջ ու (յ) է արտասանվում:

Այսպիսով է-ը հին լեզվի մեջ ունենում է միայն ձայնավոր հնչյուն, իսկ
նոր լեզվի մեջ միայն բաղաձայն վ հնչյուն, բացի զրաբարի իւ (յ) հրկ-
րաբանից:

Երկրաբանների և և տառի արտասանությունն իմանալուց հետո, հիմա
դառնանք ու ձայնավորին:

Ու հրկտառը նոր լեզվի մեջ փոփոխություն միևնույն նախնիի չէ մե-
թարկվում, որին ենթարկվում են մյուս աւ, եւ, իւ հրկաբանները: մինչդեռ
վերջինները բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ գաղտնի է
ավ, եվ, իվ վանկեր, ու-ն չի գաղտնի ավ, այսինքն չի պահում յուր բա-
ղաձայնը ու ձայնավորի և վ դարձած է-ի հնչյունը: Բառի վերջում ու-ն արտա-
սանվում է ինչպես պարզ ձայնավոր ու (յ), իսկ բառի մեջ ձայնավորից
առաջ ինչպես բաղաձայն վ, երբեմն և ինչպես լվ վանկ: Ու հրկտառի ունե-
նայից հնչյունի համար մենք ունենալով ձեռք, որ համապատասխան է աւ
(ավ), եւ (եվ), իւ (իվ) ձևերին, Հենց այդ ու վ ձևն ունենալն էլ ցույց է տա-
լիս, որ ու-ի պաշտոնը նման չէ եղել աւ, եւ, իւ ձևերին, և ու-ն առանձին
պաշտոն է ունեցել: Ի՞նչ է եղել ու-ի այդ առանձին պաշտոնը:

Բառի մեջ առմատական բաղաձայնից առաջ տեսանք, որ ու-ն հրկ-
րաբան է եղել: որ մյուս հրկաբանների նման վեր է ածվել յուր բաղաձայնի
օ և ու ձայնավորներին, իսկ բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ
ու-ն կարող չէ հրկաբանու հղած լինել, ապա թե ու այդ դեպքում ևս ու-ն
հրկաբանների այդ ընդհանուր օրենքին պիտի ենթարկվեր, դառնալով ու
վանկ, որ չի լինում:

Ասել թե մեր հին լեզուն չի ունեցել ու (յ) հիմնական պարզ ձայնա-
վորը, այդ կարելի չէ, քանի որ ու (յ) ձայնավորը իրոք հիմնական ձայնա-
վոր (հիմնական ձայնավորներն են ա, ի, ու—յ) պետք է եղած լինի և մեր
հին լեզվի մեջ, և քանի որ այդ ու (յ) ձայնավորը ներկայումս այնքան մեծ
տեղ է բռնում մեր լեզվի մեջ ա, ի ձայնավորների հետ, Բառի վերջում և
բառի մեջ ձայնավորից առաջ ու հրկտառի արտասանությունն եղած պիտի
լինի ահա ու (յ) պարզ ձայնավոր, և ոչ հրկաբան ու (օու), իսկ թե ինչու
մեր այբբենարանի մեջ ու (յ) պարզ ձայնավորի համար առանձին նշանա-
գիր չէ ստեղծված, այլ միևնույն ու հրկտառով է նշանակված, դրա պատ-
ճառն այն է, որ մեր այբբենարանը հունականի հետեւողությամբ է կազմված,
իսկ հունական այբբենարանի մեջ ևս միևնույն հրկտառ ձևն է գործածվում
թե ու (յ) հնչյունի համար և թե ու (օու) հրկաբանի համար: Ս. Մեթոդի
մեր այբբենարանի մեջ ու (յ) ձայնավորի համար, հունարենի հետեւողու-
թյամբ, նշանակել է ու հրկտառ նշանագիրը, որ արմատական բաղաձայնից
առաջ իրոք հրկաբան է ծառայել, իսկ բառի վերջում և բառի մեջ ձայնա-

վորից առաջ իրոն պարզ ձայնավոր ու (յ)։ Քի վերոհիշյալ դեպքերում ու երկտառի հնչյունն եղել է ու (յ) պարզ ձայնավոր և ոչ երկբարբառ ու (օու), այդ երեսու է նրանից, որ մինչդեռ ու-ն այդ դեպքում չի ենթարկվում նոր լեզվի մեջ երկբարբառի կրած փոփոխությանը (այսինքն չի դառնում ուվ, ինչպես՝ աւ—աւվ), ընդհակառակն, ենթարկվում է այն փոփոխությանը, որ ու (յ) ձայնավորն ունենում է ոչ միայն մեր լեզվի մեջ, այլև մեր լեզվին ցնդակից լեզուների մեջ։

Հնչյունաբանությունից հայտնի է, որ վ և ու (յ) հնչյուններն իրար մոտիկ են, մի կարգի հնչյուն են, շնայելով, որ մեկը բաղաձայն է, իսկ մյուսը ձայնավոր, ու հնչյունը ջատ հեշտությամբ թափանում, դառնում է վ, իսկ, ընդհակառակն, վ-ը դառնում է ու, և այս ոչ միայն մեր լեզվի մեջ, այլև ուրիշ լեզուների մեջ. դրա համար և հայկազյան բառարանում գրված է. օվ. բաղաձայն աստիս ւ (ւ ֆր.), որպէս թափ ուս. այսինքն վ-ը ու ձայնավորի բաղաձայն է, թափ ու է Սակայն ու հնչյունը միշտ չի թափանում վ-ի փոխում, այլ միայն ձայնավորից հետո և ձայնավորից առաջ։ Ձայնավորից հետո աւ (աու), եւ (եու), իւ (իու) երկբարբառների մեջ տեսանք, թե ինչպես է (ու) հնչյունը թափացել, ալիժ գարձել է վ. ալ, եվ, իվ. հիմա տեսնենք ու հնչյունի վ-ի փոխվելը ձայնավորից առաջ։

Հին հունարենը չի ունեցել վ հնչյունը. օտարազգի վ հնչյունի համար նրանք գործ են ածել ov (ou , ու, չ) կամ v (u , լ) ձայնավորը, որովհետև, ինչպես ասացինք, ու ձայնավորի և վ բաղաձայնի հնչյուններն իրար մոտ են։ Մեր վ-ով սկսվող անունները հույները գրել են ու-ով. օրինակ՝ Վարդան, Վասակ հունարեն գրել են Ուարդանիս, Ուասակիս. ալգպես լատինական Վալէնս, Վալերիանոս, որ մեզնում Վաղէս, Վաղերիանոս է գրվում, հունարենում գրվում են Ուալիս, Ուալերիանոս։ Ու ձայնավորի համար լատինացիք ունին u տառը, իսկ վ բաղաձայնի համար v տառը. բայց լատինական այբոբենարանում սկզբում հունական ձևով մինևույն v տառը ծառայում էր թե u (ու) ձայնավոր հնչյունը և թե վ (վ) բաղաձայն հնչյունը նշանակելու համար, լատիներենում u (ու) տառը pug , qu ձևերում, և մի քանի բառերի մեջ su ձևում արտասանվում է վ. իսկապես ու-ի և վ-ի միջին մի հնչյուն, ինչպես pug , saguis , aquas , suavis , ինգուա, սանգուիս, աքուա, սուավիս գրվում է, բայց արտասանվում է լինգվա, սանգվիս, աքվա, սվավիս. ճիշտ այնպես, ինչպես հայերենում Աստուած, նուէր գրում ենք և արտասանում Աստված, նվեր։

Լատիներենում ու հնչյունը վ է արտասանվում միայն որոշյալ դեպքերում. իսկ հայերենում ընդհանրապես ու-ն վ է արտասանվում, երբ որ այդ ու-ին հետևում է ձայնավոր հնչյուն. օրինակ՝ լեզու, տու (շնորհատու), Աստուծոյ, շուք, քու բառերի մեջ ու (յ) է արտասանվում, բայց հենց որ այդ ու-ին հետևում է մի ձայնավոր հնչյուն, ու հնչյունն իսկույն փոխվում է վ հնչյունի, ինչպես՝ լեզվի, տված, Աստված, շվաք, քվի, քվէն. Բառի վերջի ու հնչյունը մի քանի բարբառներում վ է դառնում մինչև անգամ այն ժամանակ, երբ որ հետևյալ բառը ձայնավորով է սկսվում և արտասանության մեջ կազմում է առաջին բառին, օրինակ՝ դու էլ արտասանվում է դվ էլ։ Այլ շաղկապը մեր բարբառներից մի քանիսում, եթե ձայնավորով սկսվող բառի առաջ է դրվում, դառնում է վ. օրինակ՝ ինչ ու ինչ, այք ու երես, արտասանում են՝ ինչ վ ինչ, այք վ իրեւ. մոկացք քարքառում ու ինչիս (և ինչպես) արտասանվում է՝ վինչիս։ Նույնիսկ մեր հին տաղաչափության մեջ

հայտնի կանոնը, որով ու շաղկապը ձայնավորից առաջ կարող է սղջնել և դառնալ և՛ օրինակ՝

Յաակ հետևը քա յողթողին,

ի առաջութիւն յոյժ հիանդին,

ի տեղի բնութիւն նա մարդկային,

Հաւատոյ վիճէն և եկեղեցւոյ փողոցն:

Չէ՞ որ շաղկապի սղման այս միենույն կանոնը հիմնված է ժողովրդական լեզվի այն հատկութիւն վրա, որով ու-ն ձայնավորից առաջ Վ է աղ-տասանվում, Հնչյունաբանական միենույն հատկությամբ է, որ այժմ ու-ով սկսվող բառերը՝ որդի, ողորմել, ոլորել արտասանում ենք՝ վօրդի, վօղորմել, վօլորել. որովհետև հայտնի է, որ ո ձայնավորը երկրարատ է և համասար է ու-ու. ինչպես որ ու հնչյունը վերոհիշյալ դեպքերում ձայնավորի առաջ դառնում է Վ, այդպես ու-ու երկրարատի մեջ ու հնչյունը կամ պետք է երկրարատի հատկությամբ պարզվելով դուրս ընկնել և մնար միայն երկ-րարատի մի մասը ու կամ օ, կամ պետք է ու-ն դառնար Վ և արտասանվեր Վօ (վօղորմել, վօրդի), ինչպես որ երկու ձևն էլ կա մեր բարբառների մեջ:

Ձայնավորից առաջ ու հնչյունի Վ հնչյուն արտասանվելու վրա է հիմնը-ված եղել անշուշտ այն փորձը, որով նույնիսկ Ե դարում Թրակացու քերա-կանության Թարգմանիչները (որոնք մեր լեզուն ամենայն կողմից ուզում էին հունաց լեզվի վրա ձևել) այնատեղ են Վ տառը դուրս ձգել և առանց Վ տառի կառավարվել. Պ. Աղայանն այս վկայութիւնն իբրև մի փաստ է բերում, որ իբրև թե նախնիք Վ տառը դուրս ձգելով նրա պաշտոնը պիտի տային և տա-ռին, ուտի և ւ տառը բաղաձայն է եղել և հնչյունով համասար Վ տառին: Բայց իբրեք այդպիսի չէ, որովհետև Վ տառը դուրս ձգելու փորձը ոչ թե նրա համար է եղել, որ ւ-ով, որ երբեք այդպիսի չի եղել, այլ նրա համար միայն, որ մերոնք ամենայն կերպով ուզեցել են հույներին հետևել, իսկ հունարե-նում, ինչպես տեսանք, չի եղել Վ տառ, և հարկ եղած ժամանակ Վ հնչյունի համար դորժ են ածում ու (У) հնչյունը, որ արտասանվում էր Վ: Եթե նախ-նիք ուզեցել են Վ տառը դուրս ձգել, նրանք Վարդան, Վասակ, Վազր, Վազել պիտի գրեին անշուշտ Ուարդան, Ուասակ, Ուազր, Ուազել, այսինքն այն ձևով, ինչ ձևով որ գրում էին հույները, որոնց բուրդովին նմանել են ուզեցել մեր հունամոլները: Կարելի է ենթադրել, որ Ե գարում մեր բարբառների մի մասի մեջ բառի սկզբում ոչ թե թանձր Վ է արտասանվելիս եղել, այլ փա-հուկ Վ, այսինքն բառի սկզբում ու հնչյունը դեռևս կատարելապես Վ հնչյունի չէ վերածված եղել, այլ Վ բաղաձայնի և ու ձայնավորի միջին մի հնչյուն է եղել, և նախնիք այդ հիման վրա են ուզեցել Վ տառը դուրս ձգել: Այդ երե-վույթը մի անսովոր բան պիտի չհամարել, քանի որ տեսնում ենք որ հին լեզվի ու հնչյունը ձայնավորից առաջ հետզհետե վ բաղաձայնի է վերածվում, և դեռևս բուրդովին չի վերածված, որովհետև օրինակ՝ մի քանի բարբառներ այժմ արտասանում են լեզուի (лезуи), մի քանիսը լեզվի, իսկ կան բար-բառներ ևս, որոնց մեջ ոչ լեզուի և ոչ լեզվի է արտասանվում, այլ ու-ի և Վ-ի մի միջին հնչյունով. ճիշտ այնպես, ինչպես անգլերենում W տառը կես ու, կես Վ է, դրա համար և անգլիական անունները՝ Վալինգթոն, Վալ-տեր, Դարվին, Վիլհամս և մանք Վ-ով են գրում, իսկ ուրիշները ու-ով՝ Ուալինգթոն, Ուալտեր, Դարուին, Ուիլհամս (ի դեպ առանց՝ այդպիսի անուն-ները մեր լեզվի մեջ բառի սկզբում Վ-ով գրելն ամենի հիմնավոր է քան թե ու-ով գրելը):

Բայց եթե Ծ դարձում մի քանի բարբառների մեջ բառի սկզբում վ հնչյունը վ-ի և ու-ի միջինն արտասանվելիս էլ եղած լինելը, գոնե այն բարբառի մեջ, որ հին գրական լեզվի հիմքն է եղել անշուշտ արդեն թանձր վ է արտասանվելիս եղել, որ ս. Մեսրոպը մեր այբբենարանի մեջ մտցրած է առանձին նշանագիր վ, և լի հաջողվել մի քանի հունամուշների վ տառը հունականն ձևով ու նշանագրով փոխանակելու փորձը:

Այսպես տեսնում ենք, ինչպես ուրիշ լեզուներին, նույնպես և մեր լեզվի մեջ ձայնավորից առաջ ու հնչյունը սովորաբար վ բաղաձայն հնչյունն է փոխվում:

Հին նուազ, նուէր, ասուեր, Աստուած և այլն, բառերի, ինչպես և առհասարակ ու վերջացած բառերի մեջ, ու երկտառը կարող չէ երկբարբառ եղած լինել, այսինքն օ և ու ձայնավորներից բաղադրված մի ձայնավոր. քանի որ այդ ու-ն ու (յ) ձայնավորի հատկությամբ անմիջապես վ բաղաձայնի է փոխվում՝ նվազ, նվէր, ստվեր, Աստված, լեզվի, տվել, հվի, կատվի և այլն,—և ոչ թե երկբարբառի հատկությամբ ով (ու—ով) վանկի փոխվում և դառնում նովազ, նովէր, ստովեր, Աստոված, լեզով, ձով, կատով, տովել, ինչպես որ անպատճառ պետք է լիներ. եթե այդ բառերի մեջ ու-ն երկբարբառ եղած լիներ և ոչ թե պարզ ձայնավոր:

Հին աւ, եւ, իւ, ու երկբարբառների նախնի հնչյունը բարբառների օգնությամբ պարզելուց հետո, նույնպես և իմանալով, թե ինչ կրկնակի փոփոխութուն են կրել այդ երկբարբառները մեր նոր լեզվի մեջ, հիմա գանջ այն խնդրին, որ ոճանք, և հատկապես ամենից առաջ պ. Աղայանը, առաջարկում են հին ու-ի տեղ, որ այժմ վ է արտասանվում, գրել ւ կամ վ: Ամենից առաջ այդ խնդրի համար պետք է նկատենք, որ, ինչպես պ. Աղայանը և ուրիշներն ասում են, ոչ թե հին ու երկբարբառն է վ հնչյուն ստացել նոր լեզվի մեջ, այլ հին ու ձայնավորն է վ հնչյուն ստացել. իսկ ու (օու) հրկբարբառը դարձել է կամ պարզ ու (յ) կամ օ: Այս արդեն տեսանք մեր հոգվածի մեջ: Հիմա տեսնենք պ. Աղայանի բացատրությունն այս մասին (տե՛ս «Աղբյուր», Երկրորդ բաժին, 1889, №№ 5—6):

Պ. Աղայանն յուր առաջարկությունը բացատրելու համար մեր հին երկբարբառներին հետևյալ հնչյուններն է առելիս.

ա + ւ = օվ — օՅ

ե + ւ = եօվ — ԵՅ

ի + ւ = իւվ — ԻՅ

օ + ւ = օւվ = յԵ

և յուր այդ ենթադրության իբրև ապացույց ասում է. «Այս պարսկական եղանակավոր հնչյունքը բուրբուռի ձայն է զոգերենի ու ձայնի օ՛վ հնչելուն, որ այնքան քաղցր է դալիս մարդու ակտեղի, ինչպես սուռն=սօ՛վն, ունիս=սօ՛վիս, ուրախ—օ՛վրախ, և այլն: Հին զոգերենի մեջ, ինչպես տեսնվում է, ու երկբարբառն է արտասանվում օ՛վ, իսկ պ. Աղայանի վերելում դրած ցուցակի համեմատ ու-ն պիտի դառնար ուվ և ոչ օ՛վ, ուրեմն սուռն, ունիս, ուրախ պիտի արտասանվեին՝ սուււն, ուււնիս, ուււրախ. բայց որ այդպես չէ, դրանից պարզ կերպով երևում է, որ պ. Աղայանը մեր հին երկբարբառների՝ յուր ենթադրած օվ, եօվ, իւվ, ուվ արտասանությունը չի կարող հիմնել հին զոգերենի սօվն, օվրախ արտասանության վրա. ուրիշ բան կլիներ, եթե պ.

Աղայանն ցուց ասար, որ զոգկերնեում աւ եռնարարառը դասեւում է ում, և բերեր
բարբառներից աշնպիսի օրինակներ, որոնք մեծ փնէրն աւում, եւսում, իւրում, ուսում, բայց այդպիսի բուն լիւս Զոգարնի մէջ աւ երկարարառի
ալ արտասանվելը մինչև անգամ ալ. Աղայանի ենթադրութեան հակառակն է
ապացուցանում. որովհետեւ, ինչպէս տեսանք, աւ երկարարառը համասար է
ևղճի ու (OU), որի մէջ առաջին ձայնավորը՝ օ պահել է յար հնչյունը, իսկ
երկրորդ ձայնավորը ու (U), նոր լեզունքի հասկոթումը, ի կարողացնել
դիմանալ օ ձայնավորի առաջ և թանկութեւ, դառնել է վ, մինևուրն օրինակով,
ինչ որինքով. որ աւտարարով, ինչպէս տեսնեմք, աւ հնչյունը դառնում է վ:
Այդ աւում հնչյունի մէջ աշնա լի պահում աւ (y) հնչյունը, և լէր էլ կա-
րող պահվել, քանի որ նուրիսկ այդ ուն վ է դարձել:

Կարծես, ալ. Աղայանն զգում է, որ զոգկերնի աւում արտասանութեանը
դնուս ապացուց չէ յար ենթադրութեան համար, ուստի և իսկուրն ավելաց-
նում է. սկսած ինչպէս մեր մատենագիրները գտում էին միւս և կարգում
միւսն, գրում էին հիւսիս և կարգում հիւսիսն, գրում էին հիւսիս և կարգում
հիւսիսն, գրում էին արեւմտութեւ և կարգում արեւմտութեւ, Այդպիսի արտա-
սանութեանը, եթէ վկայված լինէր, թերևս հիմք լինելի ալ. Աղայանի՝ ինք
բարբառներին աված արտասանութեանը և ոչ միայն հիմք կլինէր, այլ և մեր
բարբառներն իրար ունեցած կլինէին միևնուրն արտասանութեանը, ինչ որ
ալ. Աղայանն է տալիս, բայց միայն բավական չէ ասել. թէ մեր մատենագի-
րները գրում էին արեւմտութեւ և կարգում արեւմտութեւ, գրում էին հիւսիս և
կարգում հիւսիսն.— ոչ ալ. Աղայանն է մեր մատենագիրները դարձում աղբիւ,
որ մենք նրա խոսքին անպայման հավատանք իբրեւ ականջալուր մարդու, ոչ
էլ մենք ենք մեր մատենագիրներին արտասանելիս լսել, որ հավատենք նրա
ասածի ճշմարտութունը. իրա համար հարկավոր էր, որ նա կամ մեր մա-
ս ենագրութունից վկայութեաններ բերեր, և կամ հնչյունարանութեան օրենք-
ներով ապացուցանէր. իսկ նա այդ ապացուցանելու համար բավականեւում
է միայն ասելով. «Այս բանը ստուգելու համար և ասածիս ճշմարտութեանը
վերահասու լինելու համար հարկավոր է ձեռք բերել մի հին ձեռագիր շա-
րական, այնտեղ ավելի պարզ կերևի մեր բառերի հին արտաբերութեան եղա-
նակը, կտեսնվի նաեւ պարսկական և ոչ հունական արտաբերութեանը,
Այդքանն ասելով բավականանալ, իբրեւ թէ զրանով ստուգվեցաւ թէ աւում,
ևւ—եով, և այլն. Թող ալ. Աղայանը ձեռք բերէր այդ հին ձեռագիր շարա-
կանը և այդ շարականից օրինակներ բերելով հաստատեր յուր ասածը.
Բայց նա այդ չի անում և կարծում ենք, թէ չի էլ կարող անել, որովհետեւ
մեր տեսած ոչ մի հին ձեռագիր շարականի մէջ չկա ասած թէ՛ արհնեցէր
դՏէր, պետք է կարդալ օվրհնեցէր դՏէր. շարականի մէջ գրած է միայն
արհնութեւ, ուրախացիր, և չի ասած, թէ այդ քառերը պետք է կարդալ
օվրհնութեւ, ուրախացիր. գրած է մեւս կամ միւս, բայց չկա ասած, թէ
պետք է կարդալ մեովս կամ միւս:

Եջմարիտ է, հին մարդիկ, ինչպէս մենք էլ լսել ենք, ինչպէս և ալ. Աղա-
յանն էլ անշուշտ լսած կլինի, հին մարդիկ հին աւ և ավելի իւ երկարարառն
արտասանելիս մեզը մոցնում են վ հնչյունը, բայց ոչ ալ. Աղայանի ենթա-
դրութեան համեմատ. նրանք հիւսիս, հիւսիս, նիւթական կարգում են ոչ թէ
հիւսիս, հիւսիս, նիւթական, այլ հիւսիս, հիւսիս, նիւթական, իսկպապս
ասած, ոչ մաքուր վ արտասանութեամբ, այլ ոււի և վի մի տեսակ միջին

արտասանությամբ: Իսկ Հին ժառանգանց այդ տեսակ արտասանութիւնը ոչ այլ ինչ է ապացոյցանում, բայց եթե այն, որ իւ (IO, IOU) երկրարաւոր երկրորդ ու ձայնավորը մեր տեսած ընդհանուր օրէնքով վ-ի է վերածվում. և իւ երկրարաւոր դառնում է իվ, Հիշտ այնպէս, ինչպէս Հին զոկերներն մեջ ու երկրարաւոր դարձած է եղել ով (օ՛վ), և կամ ընդհանրապէս մեր աւ, եւ, իւ երկրարաւորը ձայնավորից առաջ դարձել են աւվ, եվ, իվ: Իսկ ինչ որ վերարեւում է օրհնութիւն քառի արտասանությանը, որ պ. Աղայանն իբրեւ օրինակ է բերում օվրհնութիւն արտասանության, այդ բառը Հին աւ երկրարաւորով սկսվող միակ բառն է, որի մեջ օ ձայնավորից հետո լսվում է ոչ թե վ Հնչուներ, ինչպէս նա գրում է՝ օվրհնութիւն, այլ ֆ-ի և հ-ի մի միջին հնչյուն, և արտասանվում է օֆրնութիւն կամ օհրնութիւն. իսկ այդ ֆ-ն կամ հ-ն օրհնութիւն քառի ր-ից հետո եղող հ-ն է, որ տեղափոխվելով (տառերի տեղափոխութիւնը սովորական երևութիւն է դգալ—գգալ, ձգել—զծել, կապերտ—կարպետ և այլն) ընկնում է օ-ից հետո և արտասանվում է ֆ կամ վ (Հ և ֆ տառերը լծորդ են՝ Հող—ֆող, Հօպի—ֆօպի, Հոր—ֆոր, իսկ ֆ-ն էլ յուր կողմից լծորդ է վ-ին) և այդ միակ քառի օֆրնութիւն արտասանութիւնը տեղիք է տվել պ. Աղայանին ասելու, թե մեր Հին աւ երկրարաւոր Հաճասար է օվ:

Այսպէս տեսնում ենք, որ պ. Աղայանի բերած փաստերը դրական չեն. նա չի հաստատում յուր ենթադրության ճշմարտութիւնը. իսկ մյուս կողմից՝

1. Ընդունելով, որ աւ, եւ, իւ, ու երկրարաւորն են, այսինքն երկու ձայնավոր հնչյունից կազմված մի հնչյուն, մենք այդ երկրարաւորի մեջ պիտի ենթադրենք երկու ձայնավոր հնչյուն, որոնք երկուսն էլ, երկար կամ սուղ, լսելի են լինում երկրարաւոր արտասանության ժամանակ. իսկ աւ=օվ, եւ=եօվ, իւ=իւվ, ու=ուվ ասելով ստանում ենք ոչ թե երկրարաւոր, այլ ձայնավորից և վ բաղաձայնից կազմված սոսկ վանկեր:

2. Մեր լեզուն յուր երկրարաւորի փոփոխությամբ բացառութիւն պիտի չկազմեր իրեն ցեղակից լեզուների մեջ և, ինչպէս տեսանք, բացառութիւն էլ չի կազմում. Հին լեզուների ՁԱ (աու) երկրարաւոր, որին նախնիք Համապատասխան դրել են մեր աւ երկրարաւորը, նոր լեզուների մեջ դառնում է կամ օ, կամ աւվ. այսինքն փոխվում է կամ ա և ու հնչյունների միջին օ հնչյունին, կամ ՁԱ—աւ (աու) երկրարաւոր երկրորդ ու ձայնավորը դառնում է վ, իսկ աւ-ն անփոփոխ է մնում: Ո՞ր Հիման վրա մենք կարող ենք ենթադրել, որ նախնիք աւգոստոս, Պաւղոս գրութիւնները լատինական ձևով augustus, Paulus լինի արտասանում, այլ Սվգոստոս, Պօվղոս, քանի որ այդ բառերի մեջ աւ—ՁԱ երկրարաւոր ինչպէս ուրիշ լեզուներում, այդպէս և մեր լեզվի մեջ դառնում են ա և ու հնչյունի միջինը օ. և վերջապէս աւր եթե օվր արտասանելին, այն ժամանակ որտեղից պիտի դուրս գար աուր (ավուր) ձևը, այլ պիտի լիներ օվուր:

3. Եթե Հին ժամանակ աւ երկրարաւոր օվ է արտասանվում, էլ ինչ կարիք կար աւ ձևն ստեղծելու, քանի որ կար ով ձևը՝ եթե աւաւ, աղաւթ արտասանվում էին աօվն, աղօվթ, խոսմ կզրնին աոօվն, աղոփթ, եթե քաղաքաւք, աշխարհաւք արտասանում էին քաղաքօվք, աշխարհօվք, խոսմ կզրնին էլ քաղաքօվք, աշխարհօվք, ինչպէս որ զրնել են ծառօվք, սեղանօվք:

4. Ավելացնենք և այն, որ ինչպէս տեսանք, մեր բարրաւորների մեջ ըստ Հին երկրարաւորն էր վեր են ածվում իրենց բաղադրիչ ձայնավորներին.

այդ վերլուծութիւն մէջ ոչ մի երկբարբառից չի դուրս գալիս Վ Հնչուռն, այլ միշտ ձայնավոր Հնչուռններ, բացի այն դեպքից, որ ձայնավորից առաջ աւ, եւ, իւ գտնուած են ալ, եվ, իվ և ոչ օվ, եօվ, իօվ, իսկ հին զոկերներում աւ գտնուում է օվ և ոչ ալվ, իսկ այդ Վ դարձած ւ-եօր, ինչպէս ասել ենք, պ. Աղայանի ենթադրութիւն թուրքովին հակահակն են ապացուցանում:

Գ. Աղայանն յուր ենթադրութիւնը Թէ աւ=օվ, ըստ իրենթիմին, միայն մի ապացուց պիտի բերեր, որ լի բերում, թեպետև ուրիշ աթիվի հիշում է. այդ է բարբառային կաւ=կով, խոաւ=խով, խոաւ=խով, խոտ=խորտոված ձևերը. որոնց վրա ամէլացնենք և սատր=սովոր, և նախնայ գրաբարից լուսազ=լոված, յաւանակ=լովանակ, հաւան=հովան (Հն. Հոտ), և այլն կրկին ձևերը, որոնք հազվագայտ շին գրաբարում և համար են զոկերների և Ղարաբաղի բարբառի մեջ. Այդ ձևերից ցտր և գալիւ, որ աւ=օվ, ինչպէս նա ենթադրում է: Սակայն այդ օրինակները պ. Աղայանն անշուշտ միայն նրա համար չի բերում, որ նա լի ընդունում, թե այդ ձևերում աւ-ը երկբարբառ է եղել, այլ հենց սկզբից ալ վանկ է եղել: Այդ օրինակներից խոտախել միայն նրա համար, որ լիքովի ւ-ի նախնայց ժամանակ քաղաձայն լինելը, կա-րկի լէ, որովհետև եթէ կալ (կաւ) և կով (կով) կամ պ. Աղայանի գրութիւնը կաւ և կաւ մշտնայն բառն են, ինչպէս է լինում, որ աւ ձայնավորը դառնում է ա (ո). առկա ա ձայնավորը կարող չէ երբեք օ-ի փոխվել առանց աւ ձայնավորի, այսինքն միայն աւ (առ) երկբարբառն է դառնում օ. կնշանակի նախին աւ երկբարբառն է կաւ, խոաւ, սատր ձևերի մեջ դարձել օ (ո) կա-վ, խո-վ, սո-վ-որ կամ հին գրութիւնը կո-վ, խոտ-վ, սո-վ-որ Թերևս, աւ ձայնավորի օ դառնալուն իրեն օրինակ բերի ակն=օկն-ը, հաց=հօց և այլն ձևերը. բայց այդ ձևերը բացատրելու համար արդեն պետք է դիմել համեմատական լեզվաբանութիւն և գտնել որանց երկբարբառը, որ մեր խնդրից դուրս է: Հարեանքի հիշենք միայն, որ ոչ ակն և ոչ օկնը ձևերը չեն նախնայանք, այլ նախնականը եղած պիտի լինի երկբարբառով ամկն (առկն), ինչպէս որ գերմ. Augen (աւգեն), որից գրաբարը պահել է երկբարբառի միայն ա ձայնավորը, իսկ զոկերները պահել է աւ (առ) երկբարբառի միջին օ Հնչուռնը:

Բայց եթէ նախին կաւ (կառ), խոաւ (խոառ), սատր (սատր) ձևերը բարբառների մեջ կանոնավորապէս դառնում են կալ, խոալ, սալոր, այսինքն աւ (առ) երկբարբառը դառնում է ալ վանկ, մյուս կողմից այդ միջնույն ձևերը աւ (առ) երկբարբառի միջին օ Հնչուռնով պիտի դառնային կո (կօ), խոտ (օ), սոտր (սօ-որ), հօան, յօանակ, և այլն, բայց իրոք այդպէս չի դառնում, այլ օ-ից հետո մի ավելորդ Վ Հնչուռն էլ են ստանում կո-վ, խոտ-վ, սո-վ-որ, յո-վ-անակ և այլն: Արդ որտեղից է ստնում այդ Վ Հնչուռնը, որ հասկանալի է, աւ (առ) երկբարբառի աւ Հնչուռնը չի կարող լինել, որովհետև այդ Հնչուռնը ա-ի հետ տվել է արդեն միջին օ (ո):

Այդ Վ Հնչուռնը, ինչպէս ինքը պ. Աղայանը շատ ճիշտ նկատել է մի քանի բառերի համար, ձայնակալ է: Հայտնի է, որ հայոց լեզուն ա և օ ձայնավորները մենակ չի ընդունում բառի վերջում և բառի մեջ ձայնավորից առաջ: Այդպիսի դեպքերում հայոց լեզուն պահանջում է, որ ա և օ ձայնավորներից հետո զորմի մի ձայնակալ. ձայնակալ լինում է կամ յ կամ Վ (վ), այսինքն այն Հնչուռնները, որոնք նախընթաց ձայնավորի հետ միանալով երկբարբառ են կազմում. օրինակ ժառայ, փնայ, Միքայել, Իսրայել, Սա-

ւուղ, Եմա-ւ-ոն, Տրո-վ-աղա, Մանո-վ-է: Եթե այդ օտարազգի բառերը մեջ անգամ մտած է ւ կամ վ ձայնակապը, հարկաւ, մեր լեզվի արտասանության ազդեցութեան տակ, շատ ընկալան է, որ մեր լեզվի բառերն էլ վ կամ ւ հո-դակապով լինենին՝ խոտ-վ-ել, սո-վ-որ, հո-վա-ն, յո-վ-անակ, խորո-վ-ել, կո-վ-ի, ծո-վ-ու և ոչ պարզ խոտ-ել, սո-որ, հո-ան, յո-աղ, խորո-ել, կո-ի, ծո-ի, ծո-ու, կամ խոտ-ել, սո-որ, հո-ան, յո-անակ, ծո-ու, խորո-ել, կո-ի, ինչպես որ իսկապէս պիտի լինեն, որովհետեւ դրանց մեջ աւ երկբարբառն է օ դարձել: Բայց մինչդեռ յ ձայնակապը բառի վերջում ետ լեզվի մեջ չի պահել յուր հնչյունը (նախնայաց ժամանակ բառի վերջի յ-ն անշուշտ ար-տասան <վ> ում էր), վ ձայնակապը բառի վերջում արտասանվում է յուր բաղաձայն հնչյունով, և սրա պատճառն այն է, որ մեր ո ձայնավորը սուղ է, կարճ է, իսկ աւ երկբարբառից դարձած օ (ո) ձայնավորը բառի վերջում՝ երկար է, իսկ այդ երկար արտասանութեան համար անհրաժեշտ է, որ օ (օ) հնչյունից հետո դա վ հնչյունը: Այս պատճառով է, որ հոնաց երկար օ-ն նախնիք գրել են ով վանկով, որ քիչ ու շատ մոտ լինի հոնաց երկար օ-ին: Թե վ-ը ո-ից հետո ձայնակապ է, այդ երևում է և գրաբար ո դերանունից: Այդ դերանվան սկզբնական ձևն հզած պիտի լինի աւ (ԱՅԱ), որ կանոնա-վորապէս հետևյալ փոփոխութիւնն է կրում. աւ (ԱՅԱ)-ի սկզբի և վերջի ու հնչյունը վ բաղաձայնի փոխվելով դառնում է վազ (Մալմաստ. բարբ.) կամ քն աւ-ի աւ մասը դարձել է օ, որի հետ միանալով սկզբի ւ (ու) հնչյունը տալիս է գրաբարի ո (ո=ու) դերանունը. բայց որովհետեւ մեր ո հնչյունը կարճ է, իսկ աւ երկբարբառից ստացած օ-հնչյունը երկար է, դրա համար և ո դերանունի հետից արտասանվել է և վ հնչյունը՝ ոզ (ուզ=ուզ): Մյուս կող-մից, գիտենք, որ ո=ու երկբարբառը բարբառների մեջ վեր է ածվում յուր ու և օ բաղադրիչ մասերին, ուստի և ստանում ենք (հ) ու ձևը (Ղըրբ.). իսկ հիմն բառի սկզբում ո=ու երկբարբառի սկզբի ու հնչյունը քաղվանում վ է դառնում (ինչպես որդի=ուորդի=վորդի), ուստի և հին ոզ=ուզ դերանունից բարբառներում լինում են և ուզ, օզ և վօզ ձևերը: Այսպէս տեսնում ենք մինեույն դերանվան վազ, ո(ու), ոզ (ուզ), (հ)ու, ուզ, վոզ ձևերն ևս բացատրվում են աւ ձևի կանոնավոր փոփոխութեամբ: Բայց այդ ձևերից մեզ համար այն նշանակութիւնն ունի, որ այդ դերանվան ո ձևը վերջից եր-կարութեան վ հոգակապ քն ընդունում է և քն յի ընդունում: Թե ով դերան-վան վերջի վ հնչյունը երկարութեան հոգակապ է, այդ երևում է. մեկ՝ ինչ-պէս ասացինք. որ երբմէն և յի գրվում. մեկ էլ նրանից, որ այդ վ հոգա-կապը փոխվում է յ հոգակապի, իսկ այդ երկու հոգակապերն իրար փոխա-նակում են. ով դերանունը սեռականացուցիչ ր մասնիկն ընդունելով յի դառ-նում ովր, այլ ոյր, նույնպէս և հոգնակիւն ու քն ովք է դառնում, ինչպէս աշխարհաբարում է ովքեր, այլ ոյք: Բացի ոզ բառից, բառի վերջում վ և յ երկարութեան հոգակապերի փոխանակութիւնն երևում է և յետոյ բառի մեջ, որ դաժնապէս երևում լինում են ետով. իսկ բառի մեջ յ և վ (ւ) հոգա-կապերը միշտ փոխանակում են իրար, ինչպէս արքայութիւն—արքայութիւն. հայոց ազգ—խաւոց ազգ, Տրոյազգ—Տրովազգ, իրկայոն—իրկալոն և այլն: Եւ այսպէս տեսնում ենք, որ մինեույն խոսել, կաւ, ծաւ, սաւոր, չաւա-նակ և այլն ձևերն են, որ դարձել են խոտ-վ-ել, կո-վ, ծո-վ, սո-վ-որ, յո-վ-անակ և այլն, այսինքն աւ-ը փոխվել է օ (ո), իսկ վ-ը, որ այդ բառերի մեջ մտնում է հոգակապ է, կամ երկար արտասանութեան համար է մտնում:

կնշանակի վերահիշյալ ձևերի մեջ ևս ու երկարաբառո՝ հազմաբառ չէ լինում
ով հնչյունին, որ հեթադրում է պ. Աղայանը:

Պ. Աղայանը մեր հին երկարաբառներին վերահիշյալ աւուզ, եււ հոշ, իււ իւշ, ոււ ուշ հնչյունը տալիս է միայն նրա համար, որ այդ հիման վրա կարողանա ասել, ինչպես աւուզ, ախպես և ոււում, և արագիցի ու երկարաբառին ուլ արտասանությունը տալով կարողանա հետևյալ կարակացության պալ. թոշ թն ու երկարաբառն է դառնել վ. այլ ոււն ազմել է և միացել է արևուտի (Աստուտի) Աստուտ-աստ-Աստուտ, նուէր-երւէր-եւէր, աւուտ-արաւուտաւ, գուտարթ-գըւարթ-գարթ, Այս ձևով ուն ետևան կորելից գտնել է ք և նրա պես ողվել, իսկ արև միացել է ար, թն լի նշել գրված:

Բայց որտեղ պ. Աղայանն այդ փոփոխությունը մի երկրորդ ձևով էլ է բացատրում. ու երկապա՝ համար ուլ արտասանության ստանալու համար նա ասում է. ընթե իրավ լյունը երկու ձայնավորներ կապելու համակցուն ունի, ապա ուրեմն ոււտա՝ պիտի լինի՝ ոււտա, նրա համար, որ ու և ա պարզ ձայնավորներ են և իրար կպչել լնն կարող առանց կապող տառի: Այդ կապող տառը կարող է լինել և չինել (գրված), բայց արտասանելու մեղեք է մանի: Մենք արդեն ունենք աւա, իւա, եւա, օւա (օւա), բայց լունինք ոււա: Ինչո՞ւ համար լունինք: Անշուշտ ոչ թե նրա համար, որ այդպես լննք արտասանում, այլ նրա համար, որ ոււից հետո եթե լյուն գրեն, այն ժամանակ երկու նմանահնչյուն առաքեն իրար մոտ զալով (ոււ), ինչ իմանալ թե ինչպես կարգան: Դրա համար և լզրելը լավ են համարել, մասնավանդ որ առանց գրելու էլ հայք ուղիղ են արտասանել:

Դա փաստ չէ ասել թե մենք նրա համար լունինք ոււա, որ երկու լյուն մոտե մոտ զալով չէին իմանալ, թե ինչպես կարդան: Ինչո՞ւ չէին իմանալ, ինչո՞ւ լատիներենում և ուրիշ լեզուներում կարող են կարգալ այսպիսի փոփոխություններ, ինչպես է vaccae (վակցէ), որի մեջ միևնույն շ տառը, տեղին նայելով մեկ է և արտասանվում, մեկ ց. իսկ հայերենում չէին կարող գրել և կարգալ Աստուտ, նուէր և այլն. խոս շատ հեշտություն կարելի է և հայերենում միևնույն և տառը ու բաղադրության մեջ, մեկ ւ-ը նախընթաց ու-ի հետ ու (յ) կարգալ, իսկ մյուսն առանձին՝ վ կարգալ: Ասենք՝ գիցուք թե Աստուտ, նուէր չէին էլ կարող գրել և կարգալ. բայց եթե այդ բառերի մեջ հին ժամանակ վ լավեր, խոս կարող էին գրել վ-ով Աստուտ, նուէր, զուվարթ:

Ժշմարիտ է յ-ն և ւ-ը կապում են մեր ձայնավորները, բայց այդ դեռ չի նշանակում, որ մեր բոլոր ձայնավորները հնումն իրար հետ պիտի կապվեն անպատեհառ մի ձայնակապով. մենք ունենք հին էա, էի, էէ, էա, իա, իե, իէ. իու ձևեր, որոնք կապված չեն յ կամ ւ տառով: Մենք այժմ այդ վերահիշյալ ձևերը յ ձայնակապով ենք արտասանում, բայց հին ժամանակ անշուշտ ձայնակապով չեն եղել արտասանելիս, որ առանց յ-ի են գրել, ապա թե ոչ, ինչո՞ւ ձայնակապով կգրեն՝ Միքա-յ-էլ, Իսրա-յ-էլ, Տրո-յ-ադա կամ Տրո-վ-ադա և այլն, իսկ Գարբէլ, Դանիէլ, մարգարէական, ձիաւոր և այլն, առանց ձայնակապի: Անշուշտ միայն նրա համար, որ հին ժամանակ ւ և ո ձայնավորները հետևյալ ձայնավորների հետ յ կամ ւ ձայնակապով էին արտասանվում, իսկ է և ի ձայնավորներն առանց ձայնակապի, և ոչ, ինչպես այժմ ենք արտասանում, յ ձայնակապով: Դժվար չէր նախնայաց համար ար-

առասանութեան համեմատ գրել և Դանիէլէ, Գաբրիէլէ, Աիւաւոր, և Նուէր, զուգարթ, Աստուած և ալլէ, եթէ այդպէս արտասանելիս լինեին:

Բացի այդ՝ մեր լեզուն մինչև անգամ չի սիրում ռով վանկը, ինչպէս և էլ. ի՞նչ վանկերը, այնպէս որ հայերենի մէջ շատ քիչ կարծի է ցույց տալ այնպիսի բառեր, որոնց մէջ լինեին այդ վանկերը. նույնիսկ այն բարբառները, որոնք ու հնչու՜նք վեր են ածում յոր բաղադրիչ ու հնչու՜նք, ռով վանկի մէջ ու բաղադրիչ հնչու՜նք ընդհանրապէս չեն վերածում յոր բաղադրիչ ու հնչու՜նք, որովհետեւ այդ զնայեալով պիտի ստացնէր ռով վանկը, որ չի սիրում մեր լեզուն. օրինակ՝ մինչդեռ ծոց, խոտ, դառնում են ծուց, խուտ, ծով, կով չեն դառնում ծով, կով, իսկ ընթացքում անպատճառ պետք է, որ ու երկարաբառը ենթարկվի պարզութեան օրենքին, և վերածվի յոր բաղադրիչ ու հնչու՜նք, այն ժամանակ տեսնում ենք, որ ռով վանկը չկազմելու համար ռով վանկի միջից երկարութեան ձայնակապ վ-ն գուրս է ընկնում և նոր ու-ն դառնում է ու. օրինակ՝ Յովսէփ, Մովսէս, Թովմաս, ով, դառնում են՝ Յուսէփ, Մուսէս, Թումաս, (հ) ու (գրք.), և ոչ թի Մովսէս, Յուսէփ, Թովմաս, ուվ. վերջին բառիս մէջ զոկերենում մնում է վ հնչու՜նք: Այսպէս տեսնում ենք, որ հին լեզվի մէջ—ու երկարաբառը չէր կարող ունենալ ռով հնչու՜նք, և ոչ էլ Աստուած, Նուէր և ալլէ, կարտասանվեին վ ձայնակապով Աստուած, Նուէր, ապա թի ու, այդպէս էլ կգրեին:

Ձայնակապ ունենալն ամէնից նոր լեզվի հատկութիւնն է, քան թե հին լեզվի. և ձայնակապը նոր լեզվի մէջ միևնույն օրենքով է ամբլանում, ինչ օրենքով որ մեր հին լեզվի երկարաբառները պարզում են նոր լեզվի մէջ: Երկարաբառների պարզման ընդհանուր օրենքը նրա վրա է հիմնված, որ մինչդեռ հին լեզուն սիրում է և թույլ է տալիս, որ երկու ձայնավոր հետև հետև գան, մեր նոր լեզուն այդ չի ընդունում: Այն բոլոր զնայեալով, որ հին լեզվի մէջ երկու ձայնավորներ են հետև հետև գալիս, նոր լեզվի մէջ այդ ձայնավորներից մէկը դուրս է ընկնում, կամ բաղաձայնի է փոխվում (ինչպէս այդ տեսանք երկարաբառների պարզման մէջ), կամ թե երկու ձայնավորի մէջ մտնում է յ կամ չ (վ) հնչու՜նք. իսկ եթէ ոչ այդ հնչու՜նքներն են մէջը մտնում, ոչ էլ երկու ձայնավորներից մէկնում մէկը դուրս է ընկնում, այն ժամանակ երկու առանձին ձայնավորներից մէկը սղվում է և երկուսը միանում մի վանկ են կազմում: Հին պարզ Դանիէլէ, Աիւաւոր, էսկան, նույնպէս և Խալիա, Անգլիա, հրէայ պարզ գրութիւնները եթէ լինէ կարգում ձայնակապով՝ Խալիլա, Անգլիլա, հրէլա, այն ժամանակ նախընթաց ի, է ձայնավորները չեն պահում իրենց անկախ հնչու՜նք, այսինքն դադարում են առանձին վանկ կազմելուց և սղվելով միանում են հետևյալ ձայնավորի հետ և երկարաբառ են կազմում, և մենք վերոհիշյալ բառերն արտասանում ենք Խալիա, Անգլիա, հրէա:

Այս միևնույն կրկնակի փոփոխութիւնը տեսնում ենք և հին ու ձայնավորի փոփոխութեան մէջ, երբ որ նրան հետևում է ձայնավոր հնչու՜նք. հին Աստուած, Սամուէլ, Նուէր (נֹחַ), լեզուի (לֶשׁוֹן), կատուի (קֶטֶשׁ), ձուի բառերի մէջ ու-ն հետևյալ ձայնավորի հետ չէր կարող նոր լեզվի մէջ պարզ կերպով միանալ. կամ պետք է երկու ձայնավորից մէկը դուրս ընկներ՝ Աստուած, Սամէլ, կամ այդ երկու ձայնավորի մէջ մտնէր մի հոգակապ՝ Աստուած, Սովի, Նուէր. կամ պետք է այդ երկու ձայնավորներից մէկը սղվեր: Սղվում է ու-ն և դառնում վ. Աստված, Սամվէլ, Նվէր, Ավի:

Կարելի չէ ասել, ըստ պ. Աղայանի, թե Աստուված, Նումէթ, Իդուֆ, ձուֆի ձևերից է առն ազգվելով կազմվել Աստված, Նվէր, լեզվի, ձվի ձևերը, ինչպես որ ջուգ, կարկուս և այլն ձևերից հոլովելու ուն ազգում է շրթի, կարկտի, Աստուված, Նումէթ, լեզուֆի, ձուֆի և Աստված, լեզվի, ձվի ձևերն երկուսն էլ անկասկած կազմված ձևեր են և երկուսն էլ, ինչպես ասեանք, մեր լեզվի պարզման օրենքին համապատասխան են, Եթե վ հոդակապը միայն նրա համար է անհնար, որ ու ձայնավորը կարողանա միանալ հետևյալ ձայնավորի հետ, պահելով յուր ձայնավոր հնչյունը, էլ ի՞նչպես կարելի է, որ նորմեկանց նուէրը, լեզուֆի, կատուֆի, ձուֆի ձևերից ուն ազգվի. ի՞նչ որ հենց այդ ուն պահելու համար է մտնել վ հոդակապը:

Ամփոփենք ու-ի կրած փոփոխությունները: Հին ու պարզ ձայնավոր հնչյունը (և ոչ ու երկբարբառը) ձայնավորից առաջ նոր լեզվի մեջ 1) կամ պահում է յուր հնչյունը՝ լեզուֆ, կատուֆ (лезуи, катуй), 2) կամ նոր լեզվի այն հատկությամբ, որ երկու ձայնավորի մեջ մի ձայնակապ պիտի մտնի, պահում է յուր հնչյունը միայն վ (ւ) ձայնակապով՝ լեուուֆ, ձուուֆ. Նումէթ, 3) կամ թե նոր լեզվի մյուս հատկությամբ, որ երկու ձայնավորներից առաջինը պիտի սղվի և հետևյալ ձայնավորի հետ մի վանկ կազմի, ու ձայնավորն էլ սղվում է և հետևյալ ձայնավորի հետ մի վանկ է կազմում. ու ձայնավորն էլ, ինչպես որիշ լեզուներում, ինչպես և մեր երկբարբառներում, այնպես և այս դեպքում, այսինքն հետևյալ ձայնավորից առաջ սղվելով դառնում է վ, և ստանում ենք Նվէր, կատուֆ, լեզվի և այլն ձևերը, որոնք բոլորովին անկասկած են նուէր, կատուֆ, լեզուֆի ձևերից. մեկը մի օրենքով է կազմված, մյուսը՝ մյուս օրենքով, մեկը մի բարբառում է կազմված և դորժանովում, մյուսը՝ մյուս բարբառում, Թեպետև այս էլ պետք է ասել, որ լեզուֆի, նուէրի և այլն արտասանությունը սակավաթիվ բարբառներում է, մեծ մասամբ դառնում է լեզվի, Նվէր կամ լեզուֆ, կատուֆ:

Հիմա խնդրի է, թե ի՞նչպես է նուագ, նուէր, տուած, մատնուած և այլն բառերի մեջ մտնում ը հնչյունը, եթե այդ բառերն առաջանում են նուագ (нуаг), նուէր (нуэр) և այլն ձևերից, որովհետև ասացինք նոր լեզվի հատկությամբ ուա, ուէր և այլն երկու վանկերը դառնում են վա, վէ մի վանկ, ուստի և Նվագ, Նվէր, տված, մատնվել բառերը մի վանկ պակաս պիտի լինեն, քան թե նուագ, նուէր, տուած, մատնուած բառերն են, որոնց ուն դառնում է վ: Պ. Աղայանին նույնիսկ այդ ը հնչյունն է տեղիք տվել ենթադրելու, որ վերահիշյալ բառերի մեջ ու հնչյունը սղվել դարձել է ը. իսկ վ հոդակապն յուր հնչյունը պահել է, այսինքն Աստուած դարձել է Աստու-ւած (Աստու-վ-ած), իսկ վերջին ձևի միջից էլ ու դարձել է ը՝ Աստըւած, իսկ որովհետև բառի մեջ ը չենք գրում, ուրեմն կլինի Աստուած, նույնպես և նուէր=նու-էր (նուէր) — նու-էր=նուէր (նվէր): Եթե, ինչպես տեսանք, Նվէր (նուէր) ձևը չի կազմվում նուէր (նուէր) ձևից, այդ ը-ն ի՞նչպես է մտնում այդ բառերի մեջ, եթե ուն չէ դարձած ը:

Մեր քերականներից ոմանք ընդունում են, թե վերջին վանկի ի և ու ձայնավոր <ներ>, երբ որ նոր վանկ է ազնվանում, փոխվում են ը ձայնավորի, և թե առհասարակ ը ձայնավորը մյուս ձայնավորներից սղումից է ստացվում. այսինչ ուրիշ քերականները, որոնց հետ և հ. Ա. Այտնյանը, ընդունում են, որ ի, ու և մյուս ձայնավորները ոչ թե փոխվում են ը ձայնավորի, այլ կորչում են. Եվս ուարժ ալվիք է, որ կորուսման կանոնը շատ ընդգրկմություն գտավ մեր քերականաց քով. և կուզվի այս կանոնը (ը գրի) փոփոխման

կանոնի վեր ածել, գրի կորուստը բուրոսովին ուրանալով: Սակայն եթէ գրա-
բարի համար կրնա գեռ խնդիր ըլլալ, այս օրս արդի լեզվին նկատմամբ լուծ-
ված խնդիր է թէ իրոք ձայնավոր գիր կկորսովի կամ կպակսի, երբ հաջորդ
բաղաձայնը հետեւյալ վանկին պիտի անցնի... Մտնալու չէ՝ քն ուր ուր խոր-
տություն կա հեշման մեջ, մեղմնելու համար իբրեւ կամ լուխլայն ք գիր կա-
վելովի՝ կորսված կամ պտկսած ձայնավորին անկախ» (Հ. Այտն<յան>,
Թնն<ական> քեր<ականութիւն>, Եր. 269):

Կա՞մ ուշադրութիւն դարձնողը կհամոզվի, որ մեր լեզվի մեջ ոչ մի
հնչյուն, ինչպէս և ի, ու հնչյունները չեն փոխվում ք հնչյունի, այլ այդ
հնչյունները կորչում են, իսկ ք հնչյունը բուրոսովին ուրիշ օրենքով է մտնում
մեր քառերի արտասանութեան մեջ: Այդ ք հնչյունը ճշմարիտ է, շատ անգամ
արտասանվում է այն տեղում, որտեղից կորչում են ի և ու հնչյունները,
օրինակ ջութ—ջըբի. քայք և ջատ անգամ ի և ու ձայնավորների դրութիւնից
բուրոսովին անկախ դրութեամբ է մտնում քառերի մեջ, օրինակ՝ սիին, աստղիկ
չեն. դառնում սփըռնել, աստղիկ, այլ՝ սըփռնել, աստղիկ. այսինքն ը-ն
մտնում է ոչ թէ կորած ի ձայնավորի տեղը, այլ նրանից մի բաղաձայն
առաջ է դրվում:

Ը հնչյունի մեր լեզվի քառերի մեջ մտնելը կախված է բաղաձայն հնչ-
յունների դասավորութեանից, և հատկապէս նայ և տեղական ասված քա-
ղաձայնների միավորութեանից մյուս բաղաձայնների հետ. (նայ են՝ ր, ո, դ,
լ, մ, ն, տեղական են՝ զ, ս, շ, վ-օ-ու բառի մեջ վ հնչյունով): Ը հնչյունի ար-
տասանութեան բացատրութեանը մեզ հետո կտանեն, միայն այսքանս պետք
է ասել, որ բառի սկզբում երկու կամ ամբիջ բաղաձայնների մեջ միշտ պիտի
մտնի ք հնչյունը, արմատից որեւէ ձայնավոր կորած լինի, թէ ոչ. օրինակ՝
պըտուղ, գըտնել, սըփռնել, զընել (միայն ս, զ, շ բաղաձայններով սկսված
ժամանակ այդ ը-ն, որոշ դեպքերում, ոչ թէ բաղաձայնների մեջ է մտնում,
այլ բառի սկզբից է դրվում, օրինակ ըսկիզբ, ըռնմարան, ըղնա): Բառի
մեջ երկու բաղաձայնի միջև ք հնչյուն չի մտնում, թեկուզ այդ բաղաձայն-
ների միջև բառի արմատի մեջ որեւէ ձայնավոր եղած լինի. օրինակ՝ ապտակ
և ոչ ապըտակ, բազմութիւն և <ու>բազըմութիւն, ծաղկել և ոչ ծաղըկել,
թեպետեալ արմատի մեջ զ և մ, դ և կ բաղաձայնների միջև կա ի և ու՝ բազում,
ծաղիկ, իսկ եթէ բառի մեջ երեք և ամբիջ բաղաձայն են գալիս նաեւ հետեւ,
նայելով նայ և տեղական բաղաձայնների դրութեանը, այդ բաղաձայնների
մեջ մտնում է ք հնչյունը. օրինակ՝ ժողովըդի, աստղիկ, պատըտեւ:

Թն այդ ք հնչյունը ու ձայնավորների աղումից չէ կախված, այլ բաղա-
ձայնների դասավորութեանից, այդ երեսում է և գրաբարի վ նախորդից և շ, Խ
մասնիկներից, որոնք միայն մի բաղաձայն հնչյուն են, երբ որ ձայնավորով
սկսվող բառի առաջից են դրվում, վանկ չեն ավելացնում, բայց երբ որ
բաղաձայնով սկսվող բառի վրա են դրվում վանկ են ավելացնում, այսինքն
մեջը մտնում է ք հնչյունը. օրինակ դամենայն, դամպ. շտապ, շիմացով.
բայց զգնա, զգմարդ. կամ հին արտասանութեամբ զընա, զըմարդ, չըգիտես,
չըբերել, տըղէտ, եթէ բառի սկզբում միայն մի զ, շ, Խ բաղաձայն հնչյուն
ավելանալով երկու բաղաձայնի մեջ մտնում է ք հնչյունը. այդպէս և երբ
որ հին լեզվի ու (յ) ձայնավոր հնչյունը վ՝բաղաձայն հնչյուն է դառնում, մի
բաղաձայն ավելանում է, ուստի և երկու բաղաձայնի մեջ մտնում է ք հնչ-
յունը՝ նըվագ, տըված, նըվեր, և ոչ թէ ու-հնչյուն է սղվում և դառնում բ:
Այդպէս և միևնույն օրենքով երբ որ բառի մեջ վ հնչյունը գտնվում է նախ-

ընթաց երկու կամ ավելի բաղաձայնների հետ դարձյալ տեսնում է ը հնչյունը օրինակ՝ գտնելվել, մատնելվել, իսկ, ընդհանրապես, եթե ուրիշ վ դարձած հնչյունը բառի մեջ դալիս է մի բաղաձայնի հետ, մեջը ը հնչյուն չի մտնում, որովհետեւ, ինչպես ասացինք, բառի մեջում երկու բաղաձայնի միջև ը հնչյուն չի մտնում, ասվել, ուտվել, և ու թե ասվել, ուտվել:

Միայն մի բան պետք է նկատել, որ ինչպես բառի միջում եղել և տեսական բաղաձայնները մեծ մասամբ պահանջում են, որ նախընթաց բաղաձայնն իրենց հետ անբաժան արտասանվի, այդպես և վ տեսակի բաղաձայնը պահանջում է, որ նախընթաց բաղաձայնն իրեն հետ անբաժան արտասանվի, օրինակ՝ ինչպես արտասանում ենք նր-կնալիս, եռ-լիս, դարձ-կարձիս, մա-քրել, այդպես արտասանում ենք՝ ա-սվել, նա-սվել, պաշ-տվել, դա-միչիս, միայն այնքան սուղ է, որ ոչ միայն վանկ չի կազմում, այլև բառերի վանկ չի կազմում, ինչպես ը արտասանվում է մա-քրել, բառի մեջ քր տառերի մեջ, նույնպես արտասանվում է և դա-սվել բառի սվ տառերի մեջ:

Այսպես՝ տեսնում ենք, որ լեզվի դարձերը ընթացքում կրած փոփոխությունը հին լեզվի ու ժամանակի հնչյունը (և ոչ երկրորդաբար) ձայնավորից առաջ անմիջապես սղվելով՝ դարձել է բաղաձայն վ հնչյուն, թեպետև մի քանի բարբառների մեջ դեռևս պահում է յուր ձայնավոր հնչյունը, իսկ ուրիշներում պահում է ձայնավոր հնչյունը միայն վ ձայնակապով: Բայց և այնպես բարբառների մեծ մասի մեջ դարձել է վ: իսկ ը ձայնավորի արտասանությունը վ-ից առաջ բոլորովին ուրիշ պնդում է կատարվում, տեկտի վ դարձած ք-ից:

Հիմա խնդիր է՝ եթե նախնայաց ու հնչյունը մեք նոր լեզվի մեջ մտնելովորից առաջ վ հնչյունի է փոխվում, ի՞նչպես պետք է գրել արդյոք պետի թագին նախնի գրությունը, թե՞ պետք է վ-ով կամ ու-ով գրել:

Այդ հարցին պատասխանելու համար պետք է ի նկատի ունենալ երկու ուղղագրական սկզբունք՝ 1) ուղղագրության ճշշյունեպես սկզբունքը և 2) ուղղագրության միութպան սկզբունքը:

Ուղղագրության հնչյունական սկզբունքի մասին մենք բավական կանգ ենք առել մեր Ուղղագրական նկատողություններս խորագրով հոդվածների մեջ, այդ սկզբունքը պահանջում է բառերն իրենց արտասանության համեմատ գրել, այսինքն քանոքն ինչպես որ արտասանում ենք, պետք է այնպես և գրենք: Ամենայն այդպիսի այս հնչյունական սկզբունքից ծագած հիմնական կանոնն է. «Գրության մասնական լեզվի տվեն մի ճշշյունը պետք է պտեկեւոցվի առեոնին, այն էլ միայն մի տառով, և ընդհանրապես յուրաքանչյուր տառ միայն մի հնչյունի նշանագիր պիտի լինի»: Եթե այդ միայն ի նկատի ունենանք, պարզ հասկանալի է, որ հին ու գրությունը, եթե բառի մեջ վ է արտասանվում, վ-ով էլ պետք է գրել առանց այլալրության և առանց պատահաբանության,—գրի՞ր այնպես, ինչպես արտասանում ես:

Սակայն եղած այդքանարաններից դեթե ոչ մեկն այն կատարելությունը չունի, որ յուրաքանչյուր հնչյուն մի տառեով, այն էլ մի տառով նշանագիր ունենա, և յուրաքանչյուր տառ միայն մի հնչյունի նշանագիր լինի, այդքանարանների մեջ կամ լեզվի բոլոր հնչյունները չունին առանձին նշանագրեր կամ ավելորդ տառեր կան: Այդպես էլ մեր այդքանարանի մեջ է, որ նույնիսկ և դարումն էլ վերոհիշյալ կատարելությունը չի ունեցել:

որովհետեւ Կ. Մեսրոպն ու (Կ) պարզ ձայնավորի համար մի նշանագրի փոխանակ երկտառ է նշանակել, բացի այդ՝ մինևույնն ու երկտառը և ՕԱ երկբարբառի նշանագիրն է եղել:

Եթե և գարուս մեր այբբենարանը չի ունեցել այդ կատարելությունը, այժմ խոսք ավելի ևս լուրի, որովհետեւ լեզվի հնչյունները ժամանակի ընթացքում փոփոխվել են, իսկ գրությունը նույնն է մնացել: Մեր այբբենարանի անկատարելությունը միառմի թվելը մեր խնդրից դուրս է, միայն այն հիշենք, որ այդ հնչյունաբանական փոփոխությունից այն է առաջացել, որ մինչդեռ հին ժամանակ վ հնչյունի համար միայն վ տառն ենք ունեցել, այժմ վ հնչյունի համար ունենք երեք նշանագիր՝ վ, ւ, օ: Այդ երեք նշաններից վ-ը միայն մի հնչյունի նշանագիր է, իսկ ւ-ը և օ-ն երկու հնչյունի, որովհետեւ ւ-ը իւ երկբարբառի մեջ դեռևս պահում է յուր նախնի ձայնավորությունը, մինչդեռ մյուս երկբարբառների մեջ վեր է ածվել վ-ի, իսկ օ-ն թե Կ է և թե վ:

Եթե ուղեմանք, որ մեր այբբենարանը այդ երեք նշանագրերի նկատմամբ պակասավոր լլիների, պետք է մեր այբբենարանի մեջ աչպիսի փոփոխություն մտցնենք. վ հնչյունի համար պահենք միայն մի նշանագիր կամ վ կամ ւ. Կ ձայնավորի և Ծ երկբարբառի համար երկտառ ու-ի և իւ-ի փոխանակ երկու նոր մի տառով նշանագիր ընդունենք¹:

Բայց այդպիսի փոփոխություն մտցնելը դժվար է, որովհետեւ միանգամ արդեն ընդունված այբբենարանը հեշտ չէ փոփոխելն ու ուղղելը: Եվ այդ դժվարությունը միայն մեզ համար և մեր այբբենարանի համար չի ներկայանում, այլև բոլոր օտարազգի այբբենարանների համար:

Այբբենարանը փոփոխելու և ուղղելու դժվարությունը գլխավորապես նրանից է առաջանում, որ այդ փոփոխությունն անելով խանգարվում է ուղղագրության միութունը, իսկ ամենայն դրանք լեզվի համար պահանջվում է մի տեսակ ուղղագրություն: Այդպիսի փոփոխություն անելու համար պետք է ընտրություն անել ուղղագրության ճշշունակա՛ն սկզբունքի և ուղղագրության միութան սկզբունքի կողմը լինի, քան թե ուղղագրության միության կողմը, անշուշտ, այն ժամանակ կարելի է այդպիսի փոփոխություն անել և մեր այբբենարանի և մեր գրության պակասավոր կողմերն ուղղել և լրացնել: Բայց մենք տեսնում ենք, որ իրոք այդպես չի լինում, որովհետեւ ուղղագրության միությանն է աճելի կարևորություն տրվում, քան թե բառերն արտասանելիան համեմատ գրելուն: Այդ հանգամանքից է առաջանում այն, որ մեզինք շատ ու շատ րարձր կանգնած ազգերն իրենց այբբենարանն ու գրությունը, որ շատ աճելի է հեռու կենդանի արտասանությունից, քան թե մեր գրությունը, դժվարանում են փոփոխության ենթարկել և իրենց գրության և այբբենարանի թերին լրացնել, որովհետեւ այդ անել անկարելի է առանց բազմատեսակության մեջ ընկնելու և առանց ուղղագրության միությունը խանգարելու: Նույն դժվարությունը և մեր գրության մեջ փոփոխություն մտցնելիս է առաջանում:

Սույն հանգամանքն է պատճառ եղել, որ անհաշիվ են անցել այն փորձերը, որ աշխարհաբարի գրականական լեզու դառնալու սկզբներում եղել են

¹ Փոխանակ ու (Կ) և իւ (Ծ) հնչյունների համար ողանձին նշանագիր սահմանելու, որ մե. թեթևություն կտար մեր ուղղագրությանը, ընդհանրապես, միայն արագագրության համար օտեղծված է և ի վանկի համար և նշանագրեր, որ բոլորովին զուր է և միայն երկխոսություն մեծ դժվարություն է պատճառում ուղղագրության մասնակի:

աշխարհաբարքի ամբողջ ուղղագրութիւնը միմիայն կենդանի արտասանութիւնն վրա միմեկու համար: Այլ փորձերը շատ բանավոր և խնւաքի են իղնչ, որովհետեւ գրութեան համար ազիւր բանավոր և խնւաքի հիմունք չկա, քան որտառութեան համեմատ գրելու սկզբունքը: Բայց և այնպէս, ինչպէս ուրիշ լեզուներ, նույնպէս և մեր լեզվի մէջ այլ փոփոխութիւն չեն գտնւ, որովհետեւ դրանց հետ նաեւ մասն հիմնադրութիւններ և հետագայ մանքներ, որոնք գրութեան միութիւնը խանգարում են:

Մեր ուղղագրական նկատառութիւնները խորագրով հազմութեան մեջ (Վեպ-Պարս, 1890, № 121 և շարունակութիւն) թվել ենք աշխարհաբարքի գրութիւնն արտասանութեան վրա հիմնելու փորձերի անհաջող անցնելու պատճառները, որոնցից գլխավորն այն է, որ նույնիսկ կենդանի արտասանութիւնը միտեման չէ, ամենայն բարբառ և յուր ճշուշեքը միմեկու բառը անհասկանալի են որտառութեամբ: Իսկ այդ քաղաքականութեան մէջ նախաձեռնութիւնն այն կամ այն բարբառի տալը շատ գոյար է: Թե որքան ուղղագրական բաղմամտեանկութեան մեջ կընկնենք, եթէ միայն կենդանի արտասանութեան վրա հիմնենք ուղղագրութիւնը, հիշենք միայն այն, թե որքան տարբերվում են մեր նրա գրականութեան լեզուների հիմք կազմող Արարատայան և Կ. Պոլսի բարբառները: Նույն տարբերութիւնը, որ էւ արն-վելյան և արնմայան գրականական լեզուների օտարազգի բառերի տառադարձութեան մէջ՝ Պետերբուրգ—Քեզերպուրկ կամ Փեթերպուրկ, և այլն,—միմեկու տարբերութիւնը ճշտութեամբ պիտի լինի և հայերեն բառերի գրութեան մէջ, եթէ միմիայն արտասանութեան վրա հիմնենք ուղղագրութիւնը: մենք պիտի գրենք դաս, իսկ նրանք՝ թաս, մենք՝ գարի, նրանք՝ քարի և այլն:

Մենք, և ազիւր իւ. Աղայանը, պոլսեցիներից պահանջում ենք, որ նրանք օտարազգի բառերի տառադարձութեան անհասկանալի, ինչպէս մենք ենք անհասկ. բայց հնչյունաբանական սկզբունքը միայն ի նկատի ունենալով, միմիայն կարող ենք նրանցից այդ պահանջել, չէ՞ որ նրանք օտարազգի բառերն իրենց արտասանութեան համեմատ են տառադարձում. նրանք հայերեն պարզ բառը հնչում են բարդ, ուստի և իրենց արտասանութեան հիման վրա ամենայն իրաւամբ կարող են և օտարազգի բառը բառն էլ գրել պարզ:

Այսպէս՝ և ինչ հիմքով որ մեզ թույլ պիտի տանք գրել լեզվի, հետևից, վերարկվի, տիրացվի, ձվի, աշխնքն վ-ով գրել, որովհետեւ մենք այդ դեպքերում վ ենք արտասանում (լեզու, հետևից և այլն տվել և վ-ով գրութիւնը նույնն ենք համարում, քանի որ և-ն այդ դեպքերում իբրեւ վ է ընդունվում), միմեկու հիմքով պոլսեցիները, նրանց հետ և ուրիշները, իրաւունք չունին գրելու լեզուի, հետևին, վերարկուի, տիրացուի, ձուի, որովհետեւ նրանք այդ բառերի մեջ ու-ն մեզ պէս վ չեն արտասանում, այլ պահում են ու ձայնավոր հնչյունը. նույնպէս և ուրիշները կարող են գրել ձուի, լուի և այլն, որովհետեւ նրանք էլ այդպէս են արտասանում. այսինքն պահում են ու ձայնավորը, բայց միայն հետևյալ ձայնավորի հետ վ ձայնակապով են միացնում: Այսպէս դարձյալ ինչ հիմքով որ մենք կարող ենք գրել նվեր, թվարանութիւն, շվաք, նույն հիմքով և ուրիշները կարող են գրել նուլէր, թուվաբանութիւն, շուվաք կամ շուաք, որովհետեւ այդպէս են արտասանում:

Այսպէս տեսնում ենք, որ ուղղագրութիւնը միայն արտասանութիւնն վրա հիմնելով, մեր լեզվի գրութեան ամբողջ կազմութիւնը կփոխվի, և միայն ու գրութիւնը չէ, որ պիտի վ-ի կամ շ-ի վերաձվի, որովհետեւ եթէ մենք հետևաբար վարվելու լինինք, երբ որ արտասանութեան վրա հիմնվելով

ու-ն վ կամ և ենք գրում, միևնույն կերպով փոփոխութեան պիտի ենթարկենք և շատ ու շատ բաների գրութիւնը, որոնց համար կենդանի արտասանութիւնը առաջնորդ լի հանդիսանում։ Բայց մի՞թե այդ հետաքննող է անել այն բազմատեսակ արտասանութիւնների մեջ, որ ունին մեր բարբառները, այն ժամանակ մենք մի բառի համար կուենայինք երեք և ավելի տեսակ գրութիւն։

Ասենք թե այդ բազմատեսակութեան մեջ մի բարբառի արտասանութիւնն ընդունենք հիմք մի գրութիւն ստանալու համար, ասենք թե պղտնցիներին և ուրիշներին կատիպենք, որ ուրիշ տեսակ արտասանելով հանդերձ գրութեամբ մեզ հետեն, այսինքն Գարի արտասանեն, զարի գրեն, լեզուի, կատուի, հեռուէն (лезуи, катухи) արտասանեն, բայց լեզվի, կատվի, հեռվէն գրեն, ասենք թե կթողենք Վասն, Մշո, Ղարաբաղի և ուրիշ բարբառների արտասանութիւնները, որ բոլորովին նման չեն Արարատյան բարբառի արտասանութեանը, և մենք իրեն հիմք դրական լեզվի գրութեան կփոխենք միայն Արարատյան բարբառի արտասանութիւնը. սակայն նույնիսկ այդ բարբառով քիչ փոփոխութիւն կկրի մեր բառաքանը, Կարծում ենք, այնքան փոփոխութիւն կկրի, որ շատ անգամ նոր գրութեան պատկերը բոլորովին նման լի լինիլ հին գրութեան պատկերին, Եսկայն նույն իսկ Արարատյան բարբառն յուր մեջ արտասանութեան մի միութիւն չի ներկայացնում. երբեմնեղու արտասանութեանը ջոկ է, վաղաքշապատեղունը՝ ջոկ, աշտարակ-ցունը՝ ջոկ, Կնշանակի, ուղղագրութեան միութեան համար պիտի ընդունենք միայն մի գլուխի սրբապատկարները, հակառակ դեպքում մենք բազմատեսակութեան մեջ կընկնենք, որովհետեւ մեկն արտասանում է խնդրի՝ դու, մյուսը խնթրի՝ Թու, մեկն արտասանում է կատաներ, լեզուներ, ու-ով, մյուսը կատվներ, լեզվներ, վ-ով, և այս նույն իսկ Արարատյան բարբառի մեջ։

Ուղղագրութեան մեջ միութեանն անհրաժեշտ է. իսկ այդ միութեանն ստանալու համար, ասենք ենք, որ եթե ուղում ենք գրութիւնն արտասանութեան վրա հիմնել, պետք է իրեն արտասանութեան հիմք ընդունենք միայն մի գլուխի արտասանութեանը. բայց այդ անելով մի՞թե մենք գրութիւնն արտասանութեան վրա հիմնած կլինենք, որովհետեւ եթե այդպիսի գրութիւնը մի կամ մի քանի գլուխների և նույնիսկ մի ամբողջ բարբառի համար եղմամարտ, մտտիկ կլինի կենդանի արտասանութեանը, մյուս բարբառների համար դարձալ հնուս կլինի և նրանց համար գրութեան մեջ կենդանի արտասանութիւնն էլի չի կարող առաջնորդ լինել, Պուսի և ուրիշ բազմաթիւ բարբառների արտասանութիւնն ունեցողների համար միևնույնն է թե բառերը հին արտասանութեան համեմատ են գրում, թե մի գլուխի, մինչև իսկ մի բարբառի, Արարատյան բարբառի նոր կենդանի արտասանութեան համեմատ են գրում. երկու դեպքում ևս նրանց համար իրենց կենդանի արտասանութիւնը չի կարող առաջնորդ լինել, որովհետեւ տարբերվում է այդ գլուխի կամ բարբառի գրութեան հիմք ընդունված արտասանութիւնից։ Իսկ այդպիսիները, քանի որ երկու տեսակ գրութիւններն էլ չեն համապատասխանում իրենց արտասանութեան, հարկավ, ավելի շուտ կընտրեն հին գրութիւնը, որ սրբապատկարված է պատմութեամբ և մեր ամբողջ գրականութեամբ։

Այսպես տեսնում ենք գրութիւնն արտասանութեանը կատարելապես մտաւորեցնելը անհնարին է բարբառների բազմատեսակ արտասանութեան պատճառով։ Իսկ մյուս կողմից, ասել թե բարբառների արտասանութիւնն ի

նկատի շունենանք, այլ ի նկատի ունենանք միայն գրականական լեզվի առ-
նական լեզվով խոսողներն ևս այնքան տեսակ արտասանություն ունին,
որքան որ բարբառներ ունինք, մենք շունինք մի արտասանություն, որ հա-
կան լեզվով խոսողից: Ամենայն մարդ գրականական լեզվով խոսելու արտա-
սանում է արտածին տեսակ, նայելով թե ո՞ր բարբառի ազդեցության տակ է,
մենք արտասանում է որպիսի՝ Դ-ով, մյուսն արթառ, մենք Խ-ով, մյուսը
խնթիթ, մենք խարել, մյուսը խափել, մենք աղլիկ, մյուսն ախճիկ, երրորդը
ախլիկ, մենք վարձ, մյուսը վարց, երրորդը վարժ, մենք վերարկու, մյուսը
վերարկվի, մենք Հեռուից, մյուսը Հեռվից, և այլն, և այլն: Նույնիսկ մեք
գրագետների մեջ միեւնույն Հայերեն գրական լեզուն՝ վարժագետներին տալիս
ինչպես ուզում է՝ արտասանել է արժանքնամեծ երեսններին: Ել լեզու խոսում
արտասանության այն մեծ տարբերության վրա, որ ունին արեւելյան և
արեւմտյան գրական լեզուները:

Այսպես տեսնում ենք գրությունն արտասանությանը մոտենցելու բառի
բուն նշանակությանը, անհնարին է, ամենայն մի փոփոխություն (մասնա-
վոր բացասությունը), որ իբր արտասանությանը մոտենցնելու համար մենք
կ'մտնենք մեր հին ուղղագրության մեջ, հիմնված կլինի միայն մասնավոր
արտասանության վրա, և ընդհանրության համար այդպիսի գրությունը
նույնիսկ հեռու կլինի կենդանի՝ արտասանությունից, որպիսի և ներկայումս
մեր լեզվի գրությունը հեռու է արտասանությունից:

Գրությունն արտասանությանն իսկապես կ'մոտենա միայն այն ժամա-
նակ, երբ որ այնքան տեսակ գրություն լինի, որքան տեսակ որ արտասանու-
թյուն կա. գոնե այնքան տեսակ գրություն լինի, քանի տեսակ որ գլխավոր
արտասանություն կա, որոնց հետեւում է գրականական լեզվով խոսողների
մեծամասնությունը: Այսպես թե այնպես, մեծ լսողով առած, թե պախա-
լափով առած, մենք միևնույն հետեւանքին ենք դալիս, այսինքն միևնույն
լեզվի, միևնույն բառերի գրությունը բաղմատեսակության մեջ ենք դնում:
Այս բաղմատեսակությունը շատաչափնելու համար միակ ենք այն է, որ
աշխարհաբարի մեջ ընդունվի գրաբարի ուղղագրությունը, որ թնայեալ շատ
բառերում համապատասխան չէ կենդանի արտասանությանը—և չէր էլ կա-
րող լինել, քանի որ գրությունը մեկ է, իսկ կենդանի արտասանությունը
բազմատեսակ—բայց յուր պատկանելի հնությունը և մեր հին ու նոր գրա-
կանության մեջ սրբազործված լինելովը հնությունամբ կարող է լուծենել
բարձրադասին բազմատեսակությունները, և հավասար կերպով ընդունելի է
թե մեզ համար, թե թուրքահայերի համար և թե ահհասարակ ամենայն տեղի
հայերի համար: Մի՞թե նույն իսկ այս հանգամանքը չէ նշել պատմաա, որ
անհատը են անցել այն փորձերը, որ պ. Ազալանից առաջ արել են ուրիշ-
ները գրությունն արտասանությանը մոտենցնելու համար: Եթե այս հանգա-
մանը չլինեք, այսինքն արտասանության բաղմատեսակության հանգա-
մանը չլինեք, որից և ուղղագրության միությունը խանգարվում է, միթե
հետին մտածողի համար անգամ, ոչ միայն մեզ, այլև ուրիշ ազգերի հա-
մար, պարզ լի լինիլ, որ շատ բանավոր է ուղղագրությունն արտասանության
մոտենցնելը:

Մենք խնդիրն ընդհանրապես վերցրինք, բայց այդ ընդհանուր առման
մեջ էլ, ինչպես որինակներից երևում է, տեսանք, որ հին ու-ն, որ պ. Աղա-

յանն առաջարկում է Վ (վ)-ով գրել, բոլորովին վ (ւ)-ի չի վերածված, որովհետև եթե մենք մեր արտասանության համեմատ գրենք լեզվի, կատվի ե այլն, ուրիշները պիտի գրեն լեզուի, կատուի, հետևելն, որովհետև նրանք էլ ու-ով են արտասանում: Կնշանակն ու-ի գրությամբ այդպիսի փոփոխությունը բազմաթիվ անգամներով մեջ պիտի դնի մեր ուղղագրության այդ մասը:

Բայցի արտասանության բազմաթիվ անգամներով, պիտի ի նկատի ունենալ և այն, որ հնշտ չէ դարավոր գրականության մեջ գործադրված մի ուղղագրությունը գրչի մի շարժումով բոլորովին ունշացնել և նրա տեղը նոր ուղղագրություն դնել: Եթե այդ այդպես հնշտ լինեք, ինչու մեզնից ավելի լուսավորված ու հառաջացած ավելի լինեք և նրանց լեզվի դրության մեջ այդպես դրուական մի փոփոխություն մտցնել: Խոս հայտնի է, որ ռուսերենում բառերի վերջում բաղաձայնից հետո գրում են Ն տառը (ոչ ե, որ հարկավոր է), որ բոլորովին ավելորդ է, որովհետև բաղաձայնն առանց դրան էլ կարելի է կոչող արտասանել: Բայց ռուսներն այդ տառը չեն դուրս ձգում բառի վերջից (ոչ քառի միջից): Նրանք պահում են Ն տառը, որ հավասար է Ե տառին: Ինչու,— որովհետև այդպիսի փոփոխություն մտցնելիս լեզվի ուղղագրության միությունը կխանգարվի անշուշտ, որովհետև այդպես է գրված արգեն նրանց գրականության մեջ:

Բայց, թերևս, մեզ ասեն, թե մեր գրականությունը նոր է, ուստի և մեր նոր աշխարհագրական լեզվի ուղղագրությունը, քանի դեռ նոր է, պետք է հիմնենք արտասանության վրա. այդպես էլ ասում է պ. Աղայանը. «Աշխարհիկ լեզվի համար, որ իր առաջին քայլի կիսումն է դեռևս, այս փոփոխությունը մտցնել պետք է և կարևոր. ուշ կլինի միայն հիսուն և հարյուր տարի հետո, երբ մեր հետևորդները հաստատ դիրք բռնած սխալն այլևս չեն կարող շտկել»:

Բայց այդ կարելի է ասել միայն այն ժամանակ, երբ որ հայոց լեզվի բառերը նոր լինեին գրի առնվելիս. այսինքն հայոց լեզուն նոր սկսում լինեք գրավոր լեզու դառնալ: Եղևարիտ է, մեր գրական լեզուն նոր է, բայց այդ նորությունը միայն քերականության մեջ է և ոչ բառերի մեջ: Եվ հենց պ. Աղայանի սխալն էլ նրանում է, որ կարծում է, որ եթե մեր աշխարհիկ լեզուն նոր է, ուրեմն և բառերի գրությունը նոր է, ուստի և, որքան շուտ է, այդ բառերը մեր արտասանության համեմատ պետք է գրենք: Այնինչ մեր աշխարհագրագրի բառերը, սակավ բացառությամբ, և գրաբար են. իսկ գրաբարի գրեթե բոլոր բառերը գործ են ածվում աշխարհագրագրի մեջ. գրաբարի մեծած բառերից շատերը, որոնք մի քանի տարի առաջ հնաբանություն էին համարվում, հետզհետե մեր նոր գրականության ծաղկելու համեմատ գործածություն մեջ են մտնում, և գուցե ժամանակի գա, որ շատ քիչ բառեր մնան գրաբարի մեջ իբրև հնաբանություն և լինեղանա՞ն մեր նոր գրականական լեզվի մեջ:

Եթե, այդպես, բառերը նույն են գրաբարում և աշխարհագրարում, ուրեմն և այդ բառերի գրությունը նոր չէ, որ մենք կարողանանք բառերի գրության մեջ փոփոխություն մտցնել: Եթե, պ. Աղայանի ասելով, մեր հետևորդները հիսուն, հարյուր տարուց հետո չեն կարող մեր սխալն այլևս ուղղել, որովհետև միանգամ! արդեն ընդունված կլինի բառերը մի տեսակ գրել,— մենք ևս այժմ մեր նախնիքների հետևորդներն ենք, մենք ի՞նչպես կարող ենք ուղղել

մեր նախնիքների ու թե սխալը. այլ ուղիղ գրութունը. որ արդեն հաստատ
դիրք է բռնած:

Մյուս կողմից, մենք կարող էինք էլի մեր աշխարհաբարի համար, բոլոր
բովի՛ն նոր ուղղագրութուն հիմնել, եթե, ինչպես ուրիշ առթիվ նկատել ենք,
գրաբարի և աշխարհաբարի մեջ արտասանութիւնը տարբեր լինեցր. այսինքն
գրաբարը կարողացանք Ե դարու արտասանութիւմբ. Բայց որովհետեւ արդեն
գրաբարի հին գրութիւնը կարգում ենք արդի արտասանութիւմբ, ուստի և նոր
տեսակի գրութիւնն աւելորդ է համարւում, որովհետեւ միակ արտա-
սանութիւն համար երկու տեսակ գրութիւն է ստեղծվում. Եւր արտասան-
ութիւն համար, նուէր գրութիւնն ունենալուց հետո, ինչու՞ ստեղծել նոր
գրութիւն նվեր կամ նէր, քանի որ հին գրութիւնը կա, և այդ հին գրութիւնը
բոլորովին այնպէս ենք արտասանում, ինչպէս և նոր գրութիւնը. միայն
ներա՞ համար ստեղծել որ ու նշանը չ ձայնավորի համար պետք է պահել,
իսկ՝ նուէր բառի մեջ Վ բաղաձայնն է լսվում: Բայց դրան կարող ենք պա-
տասխանել նույն վկայութիւններ, որով ալ. Աղայանը և տառի բաղաձայնու-
թիւնը հաստատելու համար պատասխանում է ալ. Սարգսյանին. «Վայրա-
պար է կարծել, թէ գիր ինչ անփոփոխ բնութիւնամբ բաղաձայն իցէ կամ
ձայնաւոր, և այն յմարթիցի նմա ըստ տեղւոյն ձայնաւոր կամ բաղաձայն
վարել. այդ տառի է սեփական, որ մի անգամ արտաբերեալ ի բերանի՝
որոշի և յմարթէ՝ այլապէս ինչ լինել. իսկ ի նշանագիրս լիք և ոչ մի բնու-
թիւմբ ստեղծեալ, կամ կարգեալ լայս կամ յայն հնչումն, այլ գրիւ է ամե-
նայն. և գրութեան ոչինչ հարկ ի վրայ կայ յսալ միոյ գրոյ երկուս գործս,
որպէս տեսանեմք զայս և յայլ ազինս... (Հ. Բագր<ատունի>, թեր. ի պէտս
զարդ., երես. 656):

Այս վկայութիւնամբ ալ. Աղայանը կամենում է հաստատել, որ և տառը,
գրութիւնն նայելով, կարող է և բաղաձայն լինել, և ձայնավոր, ինչպէս և է
իրոք մեր արդի լեզվի մեջ. Եթե՛ այդպէս է, ու նշանագիրն էլ, գրութիւնն
նայելով, նույնպէս կարող է և բաղաձայն հնչիւնի համար լինել, և ձայնա-
վորի. և ու նշանագիրն աւելի շատ կարող է այդ երկու պաշտոնը միանգա-
մից կատարել, քանի որ, ինչպէս տեսանք, այդ ու հնչիւնը մեր արդի լեզվի
մեջ, գրութիւնն նայելով, միևնույն բառի մեջ երբեմն ու է արտասանվում,
երբեմն՝ վ, մի բարբառի մեջ ու է արտասանվում. մյուս բարբառի մեջ՝ վ,
այսինքն ու-ի և վ-ի մեջ տատանվում է այդ հնչիւնը. օրինակ արտասանում
ենք լեզու, լեզուի, լեզուներ, բայց և լեզվի, լեզվներ, լեզուվի. նույնպէս ձու,
ձուի, ձուվի, ձվի. Աստուած, Աստուված, Աստուածոյ, Աստված. նվեր, նուվեր
և այլն:

Պ. Աղայանը շուր ատաղաբկած գրութիւնն եղանակի համար իրեն մի
առաւելելութիւն առում է. թե՛ն կհուսամ, որ այս գրի (ւ-ի) օժանդակութիւնը
վերականգնելով շատ շատ հեշտադրած կլինինք և մեր մանուկ սերնդի
օրագրութիւնն գործը: Բաժանեան է միայն ասել, որ բառերի մեջ լսված աւ,
նւ, իւ և տա, տա, լի, տա, տա ձայները պետք է գրել օժանդակ կամ փոքր ւ-ով,
և ոչ վ-ով: Իսկ այդ մեծ և պարավոր վ-ն գրվում է միայն բառերի սկզբում
և ու-ի մօտ, որ ով կարողացի. որովհետեւ եթե՛ այստեղ փոքր ւ-ը գնենք,
կդառնա ու և ոչ ով:

Եթե՛ ուղղագրութիւնն մեջ փոփոխութիւն պիտի մտցնենք նրա համար,
որ մանուկ սերնդի գրագրութիւնն գործը հեշտադրենք, կարծում ենք ալ.
Աղայանն այդ գործն աւելի հեշտադրած կլինենք, եթե՛ մեղսեղից բոլորովին

վերացնենք վ-ը, և բառերը նույնիսկ սկսենք ւ-ով, ւազը, ւարդան, ւարել, ւազել, որով մասնակներին համար բոլորովին վերացած կլինեն այն անհասկանալի դրուժյունը, թե ինչու միակ հնչյունի համար երկու տառ պետք է ունենայ. ինչու համար գրել՝ ւ-ւար, նա-ւազ, ւ-ւարել, և չգրել՝ ւար, ւազել, կատա-ւարել, նույնպես ինչու, չգրել և վորթի, և մարթ, և երկի և խոսք և մոտ, և ալլն, և ալլն:

Եթե կարելի է մասնակներին սովորեցնել թե՛ 1. աւ, եւ, իւ, ւա, ւե, վի, ւտ, ւտ պետք է գրել ւ-ով. 2. բառի սկզբում և ու-ից հետո պետք է գրել վ-ով, —մի՞թե չի կարելի մասնակներին և այսպես սովորեցնել 1. բառի սկզբում և ու-ից հետո պետք է գրել վ-ով. 2. ձայնավորներին հետո (բացի ու-ից) ւ-ով, իսկ բաղաձայններից հետո ու-ով: Կարծում ենք այս կանոնը նույնչափ և ամենի ըմբռնելի կլինի մասնակների համար, քան թե պ. Աղայանի ւա, ւե, վերք:

Արտասանության վրա միայն հիմնվելով ներքին է գրել նվէր, առվել, նվազ, Աստված կամ Նէր, ասել, Նւազ, Աստւած, բայց մի՞թե նույնչափով ներքին չէ գրել և թաքաւոր, և մարթ, վարթապետ, և կարթալ, և հիսպալ, ախչիկ կամ ախճիկ, ախլա, թաւառ, դարցաւ և ալլն, և ալլն, ախինքն ալլն դրուժյամբ, որի համար պ. Աղայանն ասում է գրել ըստ լեզվական աշխարհի և ամենացնում է. «Բայց ուր կտանի մեզ այս անիշխանությունը մեր գրականության մեջ», և հշտարիտ, ուր կտանի մեզ այս անիշխանությունն ու բարեկոնյան խառնակությունը մեր ուղղագրության մեջ այն որից ի վեր, երբ պ. Աղայանն սկսեց ւ-երը սիրել և ու-երն ասել: Մի՞թե պ. Աղայանն իրավունք ունի ձայն բարձրացնելու լեզվական աշխարհի ուղղագրության դեմ, որ ավելի ընդարձակ լսողով, քան թե պ. Աղայանը, ձգտում էր մեր ուղղագրությունը հիմնել կենդանի արտասանության վրա: Կարծում ենք, որ իրավունք չունի, որովհետև սկզբունքն ու հիմքը մեկ է. հթե պ. Աղայանը նուազ, նուէր, լեզուի գրում է նվէր, նվազ, լեզվի կամ Նէր, լեզւի, որովհետև հին ու-ն վ է արտասանվում այժմ, մի՞թե հայր նորենն իրավունք ախպ. մարգ, վարդապետ, աղք, և ալլն բառերը գրելու մարթ, վարթապետ, ալապ. չէ՞ որ բայց բառերի մեջ էլ ու-ն այժմ ք է արտասանվում, և-ն՝ է, ու-ը՝ ի, ք-ը՝ տ: Կարծում ենք՝ պ. Աղայանի կատարած հակառակ քան արած լինեք լինիլ, ալլ նրա սկզբունքն ընդարձակ լսողով դորժադրած կլինենք, եթե արտադրվենք ու միայն ու-ի փոխանակ վ կամ ւ գրել, ալլ միևնույն արտասանության հիման վրա ու-ն՝ թ, ք-ը՝ փ կամ տ, գ-ը՝ ք, և-ը՝ է, ու-ն՝ օ, չ-ն՝ չ կամ ճ, օ-ն՝ օ, օ-ն՝ ց կամ օ, և ալլն և ալլն գրել այն բոլոր բառերի մեջ, երբ որ այդպես միանման են արտասանվում: Կարծում ենք այդպես իրավունք ունինք արտադրվելու և գրելու: Բայց պ. Աղայանն ի՞նչպես հակառակ է վերջին տեսակ փոփոխությանը մեր ուղղագրության մեջ. նա ասում է. «Ընդհանուր ազգային գրականության մեջ տառի ձայնը ժամանակով կամ զանազան պատճառներով փոխվի էլ, նույն տառը տխտի շարունակի գոյություն ունենալ միևնույն բառում, իբրև այդ կաղապարի բաղկացուցիչ անհրաժեշտ մասերից մեկը, ալլապես նրանից ճիշտ գաղափար չի ձուլվիլ»:

Եթե այդպես է, հապա ինչու՞ պ. Աղայանն չուր ասածի հակառակ է վարվում, ու նշանագիրը փոխում է վ-ի կամ ւ-ի (ւ-ն էլ այս դեպքում իբրև վ է ընդունվում), նա ասում է. «Բառերը քո արտաբերության եղանակով մի գրիր, ալլ այն գրերով, որով գրել են նրան նախնիքդ, ախինքն հթե որդի բառի արտասանությունն այժմ վորթի է, մարդը՝ մարք, նուէրը՝ նվէր կամ

նւէր, այդպէս արդի արտասանութիւն համեմատ ի՞նչ գործը, այլ նախնայ
գրութիւնը պահելու, Բայց և այնպէս, ամենպէսնում է պ. Աղայանը.— իմ այս
վերոհիշյալ կարծիքին հակառակ, թեպէտև նախնիք զորն են՝ նուազ, նուէր,
ղուարթ, յազատ, արարած, ստեղծած, լեզուի, և այլն,— գուցէ անգիտ զրեւ
նազ, նւէր, զարթ, յազատ, արարած, ստեղծած, լեզուի և այլն, և ինչո՞ւ այդ
միայն նրա համար, որ ես, օկենք եմ ու—երև ասել, և ի՞նչ միջոց, ուստի և դու էլ
պետք է այդպէս անես, այսինքն միայն այս պատճառով պետք է ինձ պէս
նախնայց գրութիւնը թողնես, իսկ մնացած դեպքերում պետք է ամօր
բունես նախնայց գրութիւնից։

Կարծում ենք, պ. Աղայանը բացորոշ հակասում է ինքն իրեն. եթե ես
այնքան մոլեռանդ կերպով պաշտպանում է նախնայց գրութիւնը, որ ասում
է՝ ինչպէս կուզես արտասանել, բայց միայն նախնայց գրութիւնը պահել,—
էլ ի՞նչպէս է պատահում, որ ես ինքը՝ պ. Աղայանը մինչև չօգտվի մեջ,
յուր ասածը չի գործադրում և ուրիշ վերաբերմամբ, ինչո՞ւ մի՞թե նախնայց
գրութիւնը մեզ մեզավոր է միայն ու—գրութիւնը, Բայց ինչո՞ւ ու—գրութիւնը
էլ չօգտատր տալով մտիկ աս, ինչպէս մյուս տառերով գրութիւնն է մտիկ
տալիս, ինչպէս պահանջում է մյուս տառեր գրութիւններն անփոփոխ պա-
հել, թող ու—գրութիւնն էլ անփոփոխ պահել, ինչպէս կուզի արտասանել՝
նուէր, թե նուէր, թե նւէր, թե նվէր կամ նւէր, բայց այն դեռում զորն որով
մեր նախնիք զորն են, որովհետև ես ասում է՝ մինչև անգամ շրջահանուր
ազգային գրականութիւն մեջ տառի ձայնը... փոխվի էլ, ետև տառը պիտի
շարունակի գրութիւնը ունենալ միևնույն բառի մեջը, այսինքն եթե մի ու
հայերն այլևս լուսննաւ օրինակ՝ դ, ձ, ծ հնչուները, այլ միայն թ, ց, այն
ժամանակ էլ մենք բառերի մի մասը դ, ձ, ծ տառերով պետք է գրենք,
որովհետև նախնիք այդպէս են գրել, Դա արդեն չափազանց և անտեղի
հասարկութիւն է, և մենք համաձայն չենք պ. Աղայանի հետ, Այն ժամա-
նակ հին գրութիւնն այլևս անիմաստ բան կլինի, և եթե պահվի էլ, և թե
նրա համար պետք է պահել, որ նախնայց գրութիւնն անփոփոխ պետք է
թողնել, այլ ուրիշ հանգամանքներից ստիպված պետք է պահել։

Այդ հանգամանքն է ուղղագրութիւն միութիւնը, որ, պատմական գրու-
թիւն սովորութիւն շնորհիվ, կիսանգրովի, եթե գրութիւն մեջ փոփոխու-
թիւն մտցվի, Ուղղագրական միութիւնն անհրաժեշտ է, բայց և պատմա-
կան գրութիւն սովորութիւնն անխուսափելի է, և հենց այդ պատճառով
նախնայց գրութիւնն նշանակը փոխելիս կառաջանան տարածաբանութիւններ
և խառնաշփոթ ուղղագրութիւն. որովհետև եթե մեկը համոզվի էլ զորն
փոխանակ ձ-ի ց, փոխանակ ու-ի վ կամ ու, մյուսներն և ամենի մեծ բազմու-
թիւնը չեն կարող ձեռք վերցնել ամենպէս գրութիւնից, որ արդեն,
պ. Աղայանի ասած, ունակութիւն է դարձած։ Եվ մենք չենք կարող պահա-
րակել այդպիսիներին, որովհետև այդ հատկութիւնից ամենայն մարդ զերծ
լէ որոշ չափով, և եռյնիսկ պ. Աղայանը, ինչպէս տեսանք, ամենի մեծ
չափով։

Այսպէս, տեսնում ենք, որ հին ուղղագրութիւն մեջ փոփոխութիւն
մտցնելու համար պ. Աղայանի բերած ոչ մի փաստը համոզիչ չէ. համոզիչ
չեն և նրա բացատրութիւնները, թե ինչպէս է նշել, որ հին լեզվի ու—ն երբ
լեզվի մեջ վ է հնչվում, մյուս կողմից, եթե տեսութիւն, հնչուական
սկզբունքով արդարանում է որիչ դեպքերում ու—ի փոխանակ վ կամ ո

գրելը, հետևյալ զեպքերում ու-ի փոխանակ և կամ վ գրելը տեսութայամբ էլ չի արդարանում:

Պ. Աղայանը գրում է լեզվի, տիրացւի, ձւի, հետից և այլն, մոռանալով միանգամայն ուղղագրութեան սկզբունքներից մեկը, որ ի նկատի ունի բառի ծագումը, կազմութիւնը. այդ սկզբունքը, որ կոչվում է ստուգաբանական, և հնչյունական սկզբունքի հետ համասար նշանակութիւն ունի թե ուղղագրութեան և թե քերականութեան մեջ,—ընդունված է բոլոր լեզուների մեջ. օրինակ՝ այդ սկզբունքով է, որ ռուսները գրում են сторожа (ստորոնա), թեպետև արտասանում են старая (ստարանա), որովհետև ուրիշ ձևերում և արտասանման օ-ն վերականգնում է յուր հնչյունը, ինչպես վերոհիշյալ բառը հայ-ցականում сторожу (ստորոնու): Նրեի, պ. Աղայանն ամենևին չի մտածել ստուգաբանական ուղղագրութեան վրա և ւ-ի սիրուց, և ու-երը շնչելու հոսանքից մղված սկսել է գրել՝ լեզվի, կատի, բւի, ձւի, հետից, տիրացւի, տւած, տւեանել և այլն. այնինչ այդ բառերն իրենց արմատի մեջ ունին ու և ոչ վ (ւ) հնչյունը. լեզու, կատու, բու, ձու, հեռու, տիրացու, տու (շնորհատու), անուն և այլն:

Եթե, ասենք, նույնիսկ ստուգաբանական՝ սկզբունքի վրա էլ ուշադրութիւն չդարձնի պ. Աղայանը, բայց մի՞թե հնչյունական սկզբունքը նրան թույլ է տալիս գրել լեզվի, կատի, հետից, ձւի, և այլն, չէ՞ որ շատ շատերը, արեւմտյան գրականական լեզվով խոսողները, արևելյան գրականական լեզվով խոսողներից էլ շատերն արտասանում են լեզուի (лeзyв), կատուի (кaтyв), ձուի, բուի (бyв), հետից և այլն, այսինքն ու-ով, և ոչ վ (ւ)-ով:

Մեր կարծիքը ու-ի և ւ-ի կամ վ-ի ուղղագրութեան մասին հետևյալն է.

1. Որքան կարելի է, գրութիւնը պետք է մոտեցնել արտասանութեանը, և կենդանի արտասանութիւնը պիտի առաջնորդ լինի ուղղագրութեան համար:

2. Բայց գրութիւնը պիտի մոտեցնել արտասանութեանը միայն այն ժամանակ, երբ մոտեցնելիս ուղղակի չենք հակասում բառի ծագման ու կազմութեանը, այսինքն ի նկատի պիտի ունենալ և ստուգաբանական սկզբունքը:

Այս երկու, հնչյունական և ստուգաբանական սկզբունքները հաշտեցնել և զուրպես միլից տարաձայնութիւնները վերացնել, այդ պիտի լինի ուղղագրութեան բանավոր տեսութեան վերջնական նպատակը:

3. Պատմական ուղղագրութիւնը, որ հիմնված է հին արտասանութեան վրա, արդի ուղղագրութեան մեջ ներկայանում է իբրև մի հնացած զգեստ. բայց ոչ ամբողջ զգեստ, որ հեշտութեամբ կարելի է հանել և դուրս ձգել. այդ հեշտ չէ անելը ոչ թե նրա համար, որ մենք վարժվել ենք այդ զգեստին, այլ ամբողջ նրա համար, որ այդ ճին ուղղագրութիւնը պակաս է միութիւն և տեղիք չի առլիս տարաձայնութիւնների. իսկ մի լեզվի գրութեան մեջ ամենից անհրաժեշտ պայմանն է ուղղագրութեան միութիւնը:

Այսպես ուղղագրութեան մեջ մի կողմից հնչյունաբանութիւնն ու ստուգաբանութիւնը, մյուս կողմից միութիւնն ի նկատի ունենալով պետք է առաջնորդվել փոփոխութիւն մտցնելիս: Կարելի չէ մեղովն առաջնորդվել, առանց մյուս երկուսն ի նկատի ունենալու: Այդ երեք սկզբունքն ի նկատի ունենալով տեսնում ենք.

1. Ուրովհետև հին լեզվի ու հնչյունը մեր նոր լեզվի մեջ ձայնավորից առաջ վ է արտասանվում, ուրեմն, ըստ հնչյունաբանութեան, պետք է գրել

ու թե ձայնավորի ու նշանով, այլ բաղաձայնի մ կամ ւ նշանով, լեզվի, նվագ, անվանել կամ լեզվի, նւագ, անսանել: Բայց այդ միայն ըստ մեր արտասանության:

2. Ստուգաբանական սկզբունքն ասում է. որ Եւպլոն ձայնավորից առաջ ու-ն վ է արտասանվում, բայց ոչ բոլոր դասերի մեջ միասեռական, արդեն մի կարգ դասերի մեջ դասի ամեն ձևերում վ է արտասանվում. ուրիշ դասերի մեջ, բառի այս կամ այն ձևում, ու-ն դեռևս պահում է լուր ձայնավոր հնչյունը. ուստի վերջին անգամ դասերը պետք է գրել ու-ով՝ Աստուած, ասում, անսանել, լուր, Լուի, լեզու, և այլն. մասնավոր այդ դասերի մի մասը չստերիք ու-ով են արտասանում, և ոչ վ-ով:

3. Սակայն այս փոփոխությունը մտնելով ի՞նչ հետևանքի ենթադրում, արդյոք լի՞ խախտվում ուղղագրության միությունը, թե՞ ընդհանրական, գրության միջից տարաձայնություններն են վերանում. Տեսնենք.

Միևնից և՛ Աղայանի վերանորոգած փոփոխությունը (վերանորոգած ձև ասում, որովհետև նրանից առաջ էլ նույն փոփոխել ենք են և ավելի ընդհանրապես լուր, Լուի, բայց անհաշտ), ու-ի գրության նկատմամբ, մեր ուղղագրության միությունը խախտվում էր մասնավոր կերպով միայն երեք դեպքում.

1. Կրավորականի գրության մեջ. Աշխարհարարի կրավորականի նշանն է ու, ըստ հին գրության, Կրավորականի ու նշանի գրությունը տարաձայնություններն տեղից է ավել գրեթե միայն մեզնում, այսինքն արևելյան զոականական լեզվի մեջ, և այս նրա համար, որ մեր բոլոր բայերի ներկա և անցյալ անկատար ժամանակները վերջանում են ում մասնիկով, ուստի և կրավորականի մեջ երկու ուսու հտեհ հտե են գալիս՝ առնում է, առնում է: Շատերի համար անախորժ է եղել երկու ուսու հտե՛ն հտե գրել, մասնավոր որ ու-ն էլ երկու տառից է բաղկանում, դրա համար և սկսել են գրել՝ ասուն, բայց ասվում է, գրուն, բայց գրվում է, այսինքն միայն ում վերջավորությունից առաջ կրավորականի ու նշանը փոխել են վ-ի: Ոմանք անհարմար են գտած կրավորականի մեկնույն նշանը մի տեղում ու գրել, իսկ մյուս տեղում վ գրել, ուստի սկսել <են> իբրև կրավորականի նշան գրել միայն վ տառը՝ ասվել, ասվեցաւ, ասվում է, գրված, շինված և այլն. Շատերն ևս բոլոր դեպքերում ու-ի փոխանակ վ գրելն անհարմար են համարել և պահել են ու-ն, բայց երբ որ հտեից մի ու էլ է հանդիպում, ավելի հարմար են գտել առաջին ու-ի փոխանակ միայն ւ գրել. ասուն, գրուն, բայց ասում է, գրում: Ոմանք ևս բոլոր դեպքերում պահում են ու-ն. ասուն, գրուն, ասում է, գրում է և այլն:

2. Երկրորդ տարաձայնությունն եղել է իւ վերջացած դասերի վերջափոխ ձևերի գրության մեջ. հաշիւ, թիւ դառնում են հաշուի, թուի: Ոմանք այսպես դատելով՝ եթե գիր, սիրտ դառնում են գրի, սրտի, այսինքն միջի ի ձայնավորը դուրս է ընկնում, ինչու՞ հաշիւ, թիւ միևնույն ձևով լրդառան հաշիւ, թիւ, հաշուն, թիւ: Դրանով իբրև թե ուղեցել են ի ձայնավորի կորուսման միությունը հաստատել:

3. Երրորդ տարաձայնությունն եղել է ժամանակ ցույց տվող դասերի հոլովների մեջ. օրուայ, ամսուայ, տարուայ, գիշերուայ և այլն, որ սակավաթիվ մարդիկ գրում են օրվայ, ամսվայ, տարվայ, գիշերվայ:

Ահա այն բոլոր տարաձայնությունները, որ եղել են մեր գրության մեջ նախքան և՛ Աղայանի փորձը: Սակայն այս էլ պետք է ասել, որ այդ դեպքերից վերջին երկուսը միայն սակավաթիվ մարդիկ են վ-ով գրել, ընդհան-

դուք թույլ տալով միշտ գրել է՝ թուփ, հաշտեմ, օրուայ, տարուայ և այլն, իսկ կրա-
վորականի նշանը միայն ունի վերջավորություններից առաջ է մեծ տարածայնու-
թյունների տեղիք տվել, թե չէ մնացած դեպքերում, սակավ բացառությամբ,
մեծ մասամբ գրել են ու-ով և ոչ Վ-ով:

Գ. Աղայանն իրեն խնդիր է դրել ահա այս տարածայնությունները վե-
րացնել մեջտեղից: Բայց արդյոք հաջողո՞ւմ է նրան այդ Արդեն հետևանքը
ցույց է տալիս, որ չի հաջողում: Նա փոխանակ սակավաթիվ տարածայնու-
թյունները վերացնելու, ընդհանրացնել, ավելի ևս մեծ տարածայնություն-
ների տեղիք է տալիս, քանզում է այն միությունը, որ կա մյուս բաների
գրության մեջ, և որ բոլորը միատեսակ ու-ով են գրում: Ինչպես ասում են,
ռե՞ծը շինելու տեղ ալքն է հանել: Ի՞նչ է արել նա. երեք դեպքի տարածայնու-
թյունները վերացնելու համար փոխանակ անաչարդեմ, որ այդ տարա-
ծայնությունները բազմությունը, ընդհանրացնել, նա ընդհանուր հզանակով, որով
գրում է սովոր բազմությունը, ընդհանրացնել, նա ընդհանուր և շատ ավելի
գործածություն ունեցող ձևերը բերել հաշտեցրել է սակավաթիվ ձևերի հետ:
Դրանից այն է առաջացել, որ փոխանակ վում, վել, թի, օրվայ ձևերը մեջ-
տեղից վերանայու, ընդհանրացնել, առաջացել են նորոնոր տարածայնու-
թյուններ և ուղղագրության բազմափոխություն, մեկը գրում է՝ լեզուփ,
մյուսը լեզվի, երրորդը լեզվի. մեկը յոգուած, մյուսը յոգված, երրորդը յոգ-
ւած. մեկը թուփ, մյուսը՝ թվի, երրորդը թի. մեկը նոփրուել, մյուսը նոփր-
վել, երրորդը նփրվել, չորրորդը նփրել, հինգերորդը նափրում է. մեկը կալ-
րով, մյուսը կօլրով, երրորդը կօլու և այլն, և այլն: Սի դուրս է եկել մի
խառնաշփոթ գրություն, և բարեխոյան խառնակությունը ոչ թե առաջ էր,
այլ ավելի ա. Աղայանի փորձից հետո, որովհետև հին մի քանի կրկին ձևերի
վրա ավելացել են և բազմաթիվ նոր Վ-ով գրություններ, որ առաջ չկային:

Ահա այս խառնաշփոթություններին տեղիք չտալու համար, որովհետև
ուղղագրության միությունն անհրաժեշտ է, հարկավոր է պահել գրաբարի
ուղղագրությունը, այսինքն Վ հնչյունը բազմաթիվ հետ ու-ով գրել: Միայն
մի դեպքում, երբ երկու ունի իրար են հանդիպում, կարելի է թույլ տալ Վ-ով
գրել, և այս միայն նրա համար, որ այդ դեպքն է գլխավոր տարածայնու-
թյունների նախապատճառը, և մեծամասնությունն արգեն գրում են ոչ ուն՝
ասուում, ուսուում, այլ ասուււ, ուսուււ կամ ասովում, ուսովում: Այդ դեպքն
այնքան էլ չի խանգարիլ ուղղագրության ընդհանուր հզանակը, քանի որ
գրեթե միայն արենիյան գրականական լեզվի մեջ է, որովհետև արենիյան
գրականական լեզուն չունենալով բայերի ու վերջավորությունը, մեծ մա-
սամբ ազատ է երկու ուն-ի անսխառոտ հանդիպումից:

Երկու ուն-ից առաջինը, որ վ է արտասանվում, Վ-ով գրելը մի հակա-
սական քան պիտի լիքի, որովհետև դրանով նոր տարածայնությունների
տեղիք չենք տալիս, ինչպես ա. Աղայանն է ասում, այլ հզած երեք ուում,
վում, տււմ ձևերից ընտրում ենք միայն մի ձևը: Թեպետև միատեսակության
համար ավելի հարմար էր ընտրել ուում ձևը, բայց չենք կարծում, որ այդ
ձևը վերահաստատվի, քանի որ, ինչպես ասացինք, այս բոլոր տարածայնու-
թյունների նախապատճառը հենց այդ միենույն ձևն է: Այդ ուււ ձևն ընտրելը
ուղղագրության սկզբունքին հակառակ չէ, քանի որ, եթե լինեիր ուղղագրու-
թյան միությունը քանդելու խնդիրը, ու-ի փոխանակ վ կամ ա պետք էր գրել
այն բոլոր դեպքերում, որոնց մեջ ու-ն կատարելապես վեր է ածվել վ քա-
ղածայնի և բառի ոչ մի ձևում չի վերականգնում յուր ձայնավոր հնչյունը:

Աղայիսի ղեկավարից մեկն է կրավորականի ուն, որ փոխ մարտի վ է արտասանվում, և ոչ երբեք ու, նույնպես և ժամանակ որոշակի քառերորդայ, աստուայ, և այլն ձևերը: Կարծում ենք, որ դա փոքրիկ պատկանում են և հետևյալները՝ թուշ, հաշուել, հովուի, զուգարթ, նուէր, նուազ, քառերը և այլն: Թե լուսանալ բառի մեջ ուն մարտի վ է արտասանվում, այդ երևում է և վլանալ, վլաքք ձևից:

մշտունները կթողնենք, ճիշտ ինչպե՛ս՝ քախտ և քաղդ ձեւերից ստուգաբանորեն
ճիշտ է առաջինը, և մենք այժմ ընտրում ենք այդ: Դարձյալ՝ ստուգաբա-
նութիւնն ասում է, որ շէմք և շեմք գրութիւններից ճիշտ է հրկորդը, քանի
որ հին եւս երկբարբառին կանոնավորապէս համապատասխանում է ե և ոչ՝ ի-
խակ այդ բառի հին ձեւն է շեմալ: Ուստի և՛ պետք է գրել շեմք և ոչ՝ շէմք,
ինչպէս գրում են հաճախ: Այստեղ ստուգաբանութիւնը ոչ միայն առաջ-
նորդ է հանդիսանում երկու գրութիւններից մեկն ընտրելու համար, այլև
նույն ժապումն ունեցող բառերի գրութիւնն մեջ ընդհանուր կանոն է մտցնում:
Եվ ամեն անգամ նա պիտի գործի և գործում է այս ճանապարհով. օրինակ,
գրում ենք՝ օւրեմ, օւստեմ, օւմեմ, բայց՝ երբեք կամ երբէք: Պարզ է, որ
ստուգաբանութիւնը առաջնորդվելով՝ նույն խմբի և կազմութիւնն այս բառերի
գրութիւնը միակերպութիւնն պիտի վերածվի, և ոչ թե երբէք պիտի գրել,
այլ երբեք:

Առեն՛ք մի ուրիշ անհարիր գրութիւն էլ բայերի ուղղագրութիւնից:
Օրինակ՝ հին գեայք, գեայր ձեւերի մեջ յ—ն դուրս ենք ձգել՝ և գրում և արտա-
սանում ենք առանց յ—ի՝ գեայք, գեայր, բայց ստուգաբանութիւնը մեզ ասում
է, որ հին քերէք, քերէր ձեւերի մեջ ևս նույն յ—ն կա. այդ ձեւերի մեջ է
տառը հաճախորդ է ե + յ, իբրեւ՝ բերեյք, բերեյր. բայց, մինչև ի խումբ բայերի
գրութիւնն մեջ՝ գեայք, գեայր, այլևս չենք պահում այդ յ—ն, որովհետեւ չենք
արտասանում, մի ուրիշ խումբ բայերի գրութիւնն մեջ դեռ պահում ենք
թացքած ձեւով՝ է—նյ, թեպետև այստեղ ևս այդ յ—ն վաղուց դուրս է ընկել
արտասանութիւնից, և մենք քերէք, քերէր արտասանում ենք բաց e ձայ-
նավորով, իբրեւ քերեք, քերէր: Ստուգաբանութիւնը մեզ ասում է, որ եթե
մի դեպքում այդ դեմքերից յ—ն դուրս է ընկել, և գրում ենք առանց յ—ի, մյուս
դեպքում ևս առանց յ—ի պիտի գրել, որովհետեւ միակերպութիւնն պիտի վերա-
ծել նույն ձեւերի և նույն կազմութիւնն բառերի անհարիր գրութիւնները:

Այսպե՛ս՝ տեսնում ենք, ստուգաբանութիւնն իր առանձին դերն ունի
ուղղագրութիւնն մեջ՝ տատանվող գրութիւնների մեջ ընտրութիւն անելու
համար և անհարիր գրութիւնները միօրինակութիւնն դարձնելու: Իսկ այն-
տեղ, ուր մի հին հնչյուն կանոնավորապէս մի ուրիշ հնչյունի է փոխվել,
ինչպէս հին Խ—ը դարձել է օ և վերջինս էլ՝ ո, այնտեղ ստուգաբանութիւնը
մենակ ուրիշ շումի անելու՝ առանց որե՛ւ ուրիշ սկզբունքի: Այստեղ միայն
զգրծնակա՛ն խնդիր կարող է առաջ գալ, թե արդյոք պե՛տք է պահել հին

գրութեան ձևը փոխված արտասանութեամբ, թե՛ պետք է և կարելի է փոխել հին գրութեանն և արտասանութեան համեմատ դարձնել. օգտվելով, իհարկէ, ժամանակակից գիտութեան ընձեռած միջոցներէց:

Ամփոփելով մեր եզրակացութիւնները՝ գտնում ենք, որական լեզվի մէջ ուղղագրութեան միակերպութեան առաքին ահարոնեշա սկզբունքն է. դա գերշխող պիտի լինի Ուղղագրութեան նորոգել և հնչական գրութեամբ՝ պիտի ստանա հետզհետեւ, աստիճանաձայն և արդիւնէն ձևով, որ որական լեզվի առաքին սկզբունքը լիախաղի. Պատմական անհրաժեշտութեամբ՝ աշխարհայեցող ուղղագրութեան մէջ հիմնական մէկ փոփոխութիւններ մտցնել, անհրաժեշտութեամբ, որով աշխարհաբարի մէջ ընդունված է գրաբարի ուղղագրութիւնը: Ըստ այսմ՝ բաղաձայնների գրութիւնն անձեռնմխելի պիտի մնա, քանի որ դրանց համար չկա ոչ մի ընդհանուր արտասանութեան մէջ, ուսկայն, ժամանակի փոփոխութիւններ կարելի է և կարենոր է մտցնել, առանցորովելով հնարանական և առարկաբանական հիմունքներով, բայց միայն այն դեպքում, երբ դրանց համար կա ընդհանուր գրական արտասանութիւն, գտն, մեր նրկու գրական լեզուները մէջ: Անել լի ուղի, որ այսպիսի հանգամանքներում խոսել կարելի չէ գիտական ճիշտ ուղղագրութեան մասին, որի մէջ ամեն հնչյուն միայն մի տառով նշանակվել, և այս մի տառը միայն այդ հնչյունի համար սահմանված լինել, որովհետեւ դա կնշանակն անհնարելի պահանջի: Մենք միայն թեթեւ նորոգութիւններ կարող ենք անել և, կարծում ենք, որ գործնական նպատակի համար պետք է այդ անեք, հարկավ, աշխատելով, որ ամեն անելի նորոգութիւն համար պետք հիմունքներով կատարվի և այնպես, որ համապատասխան լինի մեր երկու որական լեզուներին և ընդհանուր ընդունելի լինի:

Այժմ տեսնեք, թե ի՞նչ մատնակի փոփոխութիւններ կարելի է անել: Մենք տեսնեք, որ հնարավոր է միայն ժամանակի փոփոխութիւններ մտցնել մեր ուղղագրութեան մէջ, այն էլ միայն ձայնավորների գրութեան մէջ և այն դեպքերում, երբ կա ընդհանուր գրական արտասանութիւն դրանց համար: Եւ կուզենի, որ առանձին ուղղագրութեան առանձին այստեղ գրական արտասանութիւնը և ինչպիս խիստ տարբերում ենք բարբառները գրական լեզու. այնպես էլ տարբերներնք բարբառային արտասանութիւնները այն արտասանութիւնից, որ դործնական են կամ աշխատում են գործնական որական լեզվով խոսողները, և որ ընդունված է ընդհանրապես մեր գրողներում: Ինչքան էլ մենք որական լեզուն գտն նոր է, և մենք լուծենք որական լեզվով խոսող մեն և հարմարավոր շրջաններ, որ մի օրինակելի պրական արտասանութիւն մշակենք. ինչքան էլ մեր թատրոնը, որ մեն դեր պիտի տաննար այս գործի մէջ, գրեթե բան չի արել այս մասին՝ երկար տարիներ թիֆլիսի բարբառը հրամցնելով մեզ, բայց և այնպես դպրոցը, բնականորեն, մեն ծառայութիւն է արել և որոշ լափով միօրինակութեան է վերածել մեծ բազմազան բարբառային արտասանութիւնները որական լեզվի մէջ, և մենք այսօր որոշ տատեր, կարելի է ասել, ընդհանրապես, միակերպ ենք արտասանում, գտն, դպրոցում և կամ երբ ուղում ենք որական լեզվով խոսել: Թե ինչպես է սկսվել և տարածվել այդ արտասանութիւնը, այդ մասին այստեղ

խոսելու չէ. բայց այս պիտի կրկնեմ, որ ինչպես զրական լեզուն ոչ մի քարքառ չէ, այնպես և մեր դպրոցական արտասանութիւնը ոչ մի քարքառ չէ. դա նույնպէս մի խառնուրդ է զանազան քարքառների արտասանութեան՝ մի քարքառի Հիմքի վրա, ինչպես և զրական լեզուն: Ապա՝ ինչպէս մեր զրական լեզուներն երկու են, նույնպէս և մեր զրական կամ դպրոցական արտասանութիւնները. բայց և այնպէս, որքան ևս կարողացել եմ գիտել, մեր երկու զրական լեզուների մեջ ձայնավորներն, ընդհանրապէս, միակերպ են արտասանվում: Այստեղ մեր երկու դպրոցական արտասանութիւնները միանում են, և այս ընդհանուր կենտում միայն հնարավոր է մեր ուղղագրութեան մեջ փոփոխութիւն մտցնել: Առաջուց պիտի ասեմ, որ ինչ որ ես ներքևում առաջարկում եմ իբրև հնարավոր փոփոխութիւն, դա լոկ ակադեմիական քննութիւն է, և ոչ ինձ և ոչ ուրիշների համար իրավունք չեմ համարում իմ հնարավոր համարած և առաջարկելի փոփոխութիւնները գործադրելու:

Ձայնավոր հնչյունները մեր զրական լեզուների մեջ վեց են՝ ա, է, ը, ի, օ, ու: Այս վեց ձայնավորներից հրեքը՝ ա, ը, ի, ոչ մի զփարութիւն չեն պատճառում, որովհետև դրանց համար միայն մի-մի նշանագիր կան, և այդ նշանագրերից յուրաքանչյուրը միայն մի հնչյունի է հատկացված: Հնչական գրութիւնն, ուրեմն, դրանց համար կատարյալ է: Անշուշտ, բայց նախորդ չգրվելը բառերի մեջ, որ իր առանձին պատճառներն ունի, կարող է գրել-չգրելու խնդիր հանել. բայց դա առանձին զփարութիւն չէ պատճառում, և ամեն անգամ բառերի մեջ, երբ արտասանում ենք այդ հնչյունը և ուզում ենք գրել, գրում էլ ենք, ինչպէս սողադարձի ժամանակ և ոտանավորների մեջ, իսկ այդ ձայնավորի գրել-չգրելու հարցը չեմ կարող դնել, որովհետև դա շատ զփար լուծելի խնդիր է, և իմ կարծիքով, ամենահարմար միջոցը դրա համար հենց այն է եղել, որ չենք գրում բառերի մեջ: Միացած երեք ձայնավորների համար կան հինգ տառ՝ ե, է, ո, օ, ի, և վեցերորդ՝ ու երկտառը, որ նշանագիր է պարզ ու ձայնավորի, որը, ինչպէս ընդունում են, հունարենի նմանութեամբ է այգայիտի երկտառով նշանագրվել: Արդ, մեր այդ երեք ձայնավորներից առաջինի՝ ի հնչյունի նշանագրերն են է և ե տառերը, բայց դրանցից ե տառը բառերի սկզբում նաև յն երկբարբառի նշան է, իսկ յն երկբարբառը բառերի մեջ արտահայտում է նաև յն, յէ ձևերով. երկբարբառ՝ օ հնչյունի նշանագրերն են օ և ո տառերը, բայց սրանցից օ տառը բառերի սկզբում նաև վօ կապակցութեան նշան է. իսկ վօ կապակցութիւնը բառերի մեջ արտահայտվում է նաև վօ, տ, ուտ ձևերով. երբորդի՝ ու հնչյունի նշաններն են ի և ու. բայց սրանցից ի տառը միայն իւ երկբարբառի մեջ այդ ու հնչյունի նշանն է. իսկ բառերի մեջը նաև վ բաղաձայնի նշան է, նույնիսկ իւ երկբարբառի համար սահմանված կապակցութեամբ որոշ տեղերում. ապա՝ ու երկտառն ևս ձայնավորից առաջ վ բաղաձայն է: Եվ ահա՝ մի պարզ հնչունանական գրութեան փոխանակ ունինք մենք մի խառն գրութիւն, որ բավական զփարութիւն է պատճառում: Սկզբնական շրջանում մեր լեզվի գրութիւնը չի ունեցել այս գրութիւնը. դա պատմականորեն առաջացած գրութիւն է, իբրև հետեանք այն բանի, որ հնչյունները բառերի մեջ փոխվել են, իսկ գրութիւնը մնացել է հին:

Ա—Ո

Առենց ամենից առաջ օ հնչյունի գրութիւնը, Հայտնի է, որ մեր հին լեզուն ունի օ ձայնավորը, որի նշանն է ո տառը: Այս ո=օ պարզ ձայնավորը

մի հնչափոխությամբ, որ հատուկ է ալ միայն հայերենին, այլև ուրիշ լեզուներին, որոշ բարբառների մեջ դարձել է երկբարբառային և արտասանվում է իբրև ուօ, ալսինքն՝ պարզ ձայնավոր օ հնչյունն սկզբից ստացել է քաղանքի մեջ, սովորական հնչափոխությամբ այս ուօ երկբարբառի սկզբը վուօյ, վոսկի, վուօ. մինչդեռ ուրիշ բարբառներ ևս մինչև այժմ թե՛ քառերի սկզբում և թե՛ մեջը պահում են հին, մաքուր ու օ հնչյունը՝ ոսպ, օսկի, ուօ, օղորմի—օսպ, օսկի, օր, օղորմի:

Արդ՝ ինչպե՞ս էլ բարբառները այս հին ու օ ձայնավոր հնչյունը տարբեր են արտասանում, բայց մեր արեւելյան և արեւմտաեւրոպական լեզուների մեջ ընդունված է մի ընդհանուր դպրոցական, արտասանութիւն, այն է՝ բառերի մեջ օ ձայնավորի համար մենք դեռ պահում ենք նրա սկզբնական օ հնչյունը, իսկ բառերի սկզբում նույն ձայնավորի, ընդհանրապէս, արտասանում ենք վո վանկ. հին ռղորմի բառն արտասանում ենք ոչ հին ձևով, ոչ էլ իբրև ուղորմի, այլ իբրև՝ վղորմի: Արեւելյան առաջացել է այն ուղղագրական փոփոխութիւնը, որ վո վանկը բառերի սկզբում գրում ենք մի օ տառով, որ բառերի մեջ օ պարզ ձայնավորի նշանն է:

Մյուս կողմից, հնչափոխութիւնն առաջ է բերել մի նոր օ ձայնավոր մի խումբ բառերի մեջ, որ սկզբնապէս օ ձայնավոր լին ունեցել, այլ աւերկաբարբառ Այն է՝ հին աւ երկբարբառն անպտփոխ լի մնացել, այլ դարձել է օ ձայնավոր, բայց միեւնոյաբանում աւ երկբարբառից ծագած այս օ հնչյունն անպայման տարբեր, գուցէ երկար է եղել հին ու օ ձայնավորի հնչյունից, քանի որ, սակաւ լացատրությամբ, հին ու երկբարբառը լին վերածնլ ու տառի, այլ մի նոր տառ են մտցրել մեր այբբենաբանի մեջ այդ աւ երկբարբառից ծագող օ հնչյունի համար: Երկու օ հնչյունի այդ միջնադարյան աարբարութիւնը, սակայն, լի մնացել մինչև օրս. մենք այսօր հին աւ երկբարբառից ծագող այս նոր օ ձայնավորը գրական լեզուների մեջ ճիշտ նույն ձևով ենք արտասանում, ինչպէս հին լեզվի մեջ օ ձայնավորը. բայց գրութիւնը, սակաւ լացատրությամբ, շեղ շուտ տվել ու տառի, այլ պահում ենք միջնադարյան օ տառով: Մենք ունինք, ուրեմն, միևնույն պարզ օ հնչյունի համար երկու տառ: Հետևանքը լինում է այն, որ ու օ տառերի գրութիւնները, բնականաբար, շփոթվում են իրար հետ: Դժվարութիւնն ավելի նրանով է մեծանում, որ չկա ոչ մի կանոն, որով կարելի լինի առաջնորդվել, թե՛ ճ՞րբ բառերի մեջ ո, ճ՞րբ օ պետք է գրել: Միակ կանոնն այն է, որ պետք՝ է առանձնապէս սովորել օ-ով գրվող բառերը, քանի որ դրանք սակավաթիվ են:

Այժմ հարց է. կարելի՞ է արդյոք այդ երկու տառերից մեկը գուրս ձգել: Նախ՝ եթէ կարելի է, ո՞րն արդյոք Այս հարցը դնում եմ այստեղ, որովհետեւ կան մարդիկ, որոնք այս երկու տառերից մեկն ավելորդ համարելով՝ ու տառն են դուրս ձգում, առանց մտածելու, որ եթէ օ-ով գրվող բառեր մի քանի տասնյակ միայն ունինք, օ-ով գրվող բառերի թիվը հազարներով է. ուստի, եթէ բառերի գրութիւնն մեջ պետք է փոփոխութիւն մտնի, սակավաթիվ բառերը թողած՝ լպիտի հազարավոր բառերի ուղղագրութիւնը դիպելու Այս առաջանում է նրանից, որ ո տառը բառերի սկզբում վո է արտասանվում, մինչև օ տառը միայն օ հնչյունի նշանն է, և մեկ էջ այն սխալից, որ ո տառի անունը մեր դպրոցներում սովորեցնում ենք իբրև վո վանկ և ո՛չ առաջ պարզ

Հնչյուն. մի սխալ, որ, միջանկյալ ասեմ, երեխաներին մեծ դժվարություն է պատճառում. ու—վո սովորած լինելով՝ նրանք երկար ժամանակ քաղաքում և նման բառերը պրոմ են թագաւոր և այլն Լեպա՝ նույն սխալը գործում են շատ հաճախ և՛ նրանք, որ բառերի հին ուղղագրութեանը շին դիպչում, բայց ստարազգի բառերը գրում են օ տառով, առանց մտածելու, որ օ տառը, հատկապես, Կ երկբարբառից ժազող օ Հնչյունի համար է մտած մեր այլբենարանի մեջ, և որ ստարազգի օ Հնչյունին համապատասխան Հնչյուն ունի մեր ու տառը, որով և սկզբից տառադարձել են ստարազգի անունները. այդպես վարվողները միամտաբար ազդվում են մեր օ և հմլուպական օ տառերի ձևից միայն, առանց մտածելու, որ դրանով միայն օ—ով գրվող բառերի թիվն են շատացնում, որով և ուղղագրութեանը ավելի դժվարացնում: Եթե պետք է մեր այս երկու տառերից մեկնումեկը դուրս ձգել, ապա դա պետք է լինի միայն օ տառը. նախ՝ նրա համար, որ ու տառը պահել է իրեն հատուկ հին Հնչյունը, և այս Հնչյունին է վերածվել Կ երկբարբառն՝ անցնելով միջնադարյան, համեմատորեն, երկար օ Հնչյունից. և ապա, որ զլխավորն է, օ—ով գրվող բառերի թիվը համեմատաբար շատ փոքր է, ուստի և այս փոփոխութեամբ շատ ավելի քիչ բառերի պատկերը կփոխվի:

Քանի որ հին ու և միջնադարյան օ տառերն այժմ կատարելապես նույն Հնչյունն են արտահայտում գրական լեզվի մեջ, կնշանակեն հնարանութեան տեսակետից ոչ մի արգելք չկա օ տառը դուրս ձգելուն: Ինչպես որ մենք այժմ գրում ենք՝ ծնող, գրող, զարմացող և այլն, փոխանակ հին՝ ծնող, գրող, զարմացող և ավելի ևս հին՝ ծնալ, գրալ, զարմացալ գրութեաներին, և ոչ մի Հնչյունական արգելք չենք գտնում դրա համար, նույնպես ոչ մի արգելք չկա գրելու՝ բող, մառ, առաւառ, ամբը: Համեմատելով փոխանակելու չկա և, ինչպես վերնում տեսանք, դրանց ժազումը, ստուգարանութեանը նշանակութեան շուրջ: Միակ դժվարութեանն, ուրեմն, մնում է այն, որ այդ փոփոխութեամբ որոշ թիվով բառերի պատկերը կփոխվեր, և հին սերնդի գրագետների այլը կծակեր տեսնել՝ ջոջափել, առք, կրոն և այլն:

Մեր նախնիքն այս նկատմամբ շատ ավելի ազատ են շարժվել, նրանք Կ երկբարբառից ժազող օ Հնչյունի համար այլբենարանի մեջ նույնիսկ նոր տառ են մտցրել. հին եւ—ւս երկբարբառն երբ իւ—ւս է դարձել, այսպես և գրել են. հին առնի, առնիւ, առնաւ, առնիւ, առնին ձևերի մեջ հորանջը (հիատուը) վերացել է, և մեջը մտել է յ կիսաձայնը, իբրեւ առնի, առնիւ և այլն. ուստի և գրել են է տառով՝ առնի, առնիւ և այլն, քանի որ է տառն է փոխանակում իյ երկբարբառին: Եթե նրանք այսպես են վարվել, կարելի է ասել, որ եթե հին Կ երկբարբառն այժմյան ձևով ու—ս արտասանվելու լիներ, այդպես և դրած կլինեին, ինչպես և գտնում ենք ուլ առնացի և մի քանի ուրիշ բառերի մեջ: Իմ եթե այսօր մենք բող, ամբը գրենք, ուրիշ սկզբունքով վարված չենք լինի, քան մեր նախնիք վարվել են:

Սակայն այս խնդիրն երկու կողմ ունի՝ օ տառը բառերի սկզբում և բառերի մեջը: Մինչդեռ բառերի մեջ օ—ի տեղ ու գրելն առանձին դժվարութեան չունի, բառերի սկզբում կարելի չէ օ—ի տեղ, առանց այլնայլութեան, ու գրել, որովհետեւ այս ու—ն զարդակաւ արտասանութեամբ վո վանկ է, ուստի, եթե օրհնել գրելու տեղ այժմ օրհնել գրվի, կկարգազգի վոհնել. հին առնիւ—օրնի գրված լինելով օրնի՝ այժմ կարգում ենք վոհնի: Իմ քանի պահվում է այս զարդակաւ արտասանութեանն ու գրութեանը բառասկզբի ու—երի համար,

մեր այլոթնարանից նորամուտ օ՝ առաջ գալիս մզն կարելի չէ. այս կառույն է միայն այն ժամանակ անել, երբ բառասկզբի վն հնչումը հենց այսպես էլ կգրվի, ինչպես այժմ գրում ենք բառազգի անունները, և մենք վարժված կլինինք այդ գրությանը, Բառասկզբի ու-երը ու-ի վերածելն, ուրեմն, ուղղա-
հիմն միայն երբեքցն պիտի լինի, և, իբրև առաջին, դա ապագայի խնդիր է: Այժմ այդ անել չենք կարող և այն պատճառով, որ այժմյան արտասա-
նությամբ կարելի չէ բառասկզբի ու-երը վն ձևով գրել, որովհետև, ինչքան էլ բառասկզբի ու-ն արտասանում ենք, ընդհանրապես, իբրև վն, բայց չա-
մանք բարբառների մեջ դեռ օ է արտասանվում, ինչպես և Արարտայան բարբառի
մեջ բազմազանների սկզբում. ուստի գրական լեզվի մեջ ևս ողորմա-
բե՛կալ, օսկոհ, օրոհալ, ուղեի, օհմի՛ն, ուղ և այլն համար արտասանում ենք օղորմի, օրծկալ, օսկոհ և այլն. ինչպես և ով, օմիհի՛նառ բառերի մեջ, Գուցե ժամանակ կգա, որ բառասկզբի ու-երի այս առասանումը բոլորովին
կվերանա գրական լեզվից, քանի որ դպրոցներում միայն վն ձևով են սովո-
րեցնում, և հետագայ կլինի բառասկզբի ու-երը վն ձևով գրել, բայց այդ
դուշակի կարելի չէ. կարող է և հակառակ երևույթը հաստատվել, այն է՝
բառասկզբի ու-երի համար, զանեք բազմազանի բառերի մեծ մասի մեջ, կարող
է հաստատվել և օ ճիշակը:

Այսպես, ուրեմն, քանի որ կա բառասկզբի ու-ի գրությանը, մենք
չենք կարող այժմ՝ բառասկզբի ու-երի գրությանը ու-ի վերածել, նույնիսկ
եթե հնարավոր համարվի բառասկզբի ու-երը վն ձևով գրել, դարձյալ, քանի
այդ գրությունը չի մտած և ընդհանրացած, անհնարին է բառասկզբի ու-երը
ո-ի վերածել:

Այս միևնույն առարկայից, սակայն, կարելի չէ անել բառամիջի
ու-երը ու-ի փոխելու նկատմամբ, այստեղ արդեն ո՛ր գրական լեզվի մեջ ար-
տասանության տառանում կա և ո՛չ էլ փոփոխության մի առանձին տատի-
նան է հարկավոր:

Վերևում գրված բացատրություններից պարզ պիտի լինի, որ պահելով
բառասկզբի ու-երը՝ ևս ոչ մի արգելք չիմ գտնում բոլոր բառերի մեջ օ տառի
տեղ ո գրել, Ըստինքյան հասկանալի է, որ ո պիտի գրել անպայման նաև
օտարազգի բառերի մեջ, ինչպես և սովորաբար ընդունված է, այլև՝ այն
բոլոր բառերի մեջ, որոնք ժողովրդից առնվում են գրական լեզվի մեջ ինչպես՝
նարե՛ր:

Այսպիսի փոփոխությամբ՝ շատ բառերի ընդհանուր պատկերը չի փոխ-
վել, քանի որ օ-ով գրվող արմատները՝ անգործածականներն ևս հաշված,
առառավելն հարկուր հատ են: Բայց, դեռ փոխանակ, որքան ավելորդ աշխա-
տանքից ազատ կլինին երեխաները, և որքան կհեշտանա մեր ուղղագրությու-
նը՝ մոտենալով արտասանությանը, որովհետև օ-ի գործածությունը կսահ-
մանափակվի միայն բառերի սկզբում, ընդամենը՝ մի 25 արմատ, ուր արդեն,
թեպետ ոչ անսխալ, առաջնորդ կարող է լինել այն, որ օ-ն բառի սկզբում
սովորաբար, իբրև վն է արտասանվում: Ըստ այսմ՝ ո և օ տառերի գրությունը
կանոնի կվերածվի հետևյալ ձևով.

1. Բառերի մեջ օ հնչյունը գրվում է միշտ ո տառով, իսկ բառերի
սկզբում՝ օ տառով (բացի ով, ովկիանոս):

2. Բառերի սկզբում վն վանկը գրվում է ո տառով:

Այս կանոնի մեջ միակ բացառությունը պիտի կազմի եւ—յո երկրար-
բառը՝ եօրն, առգնոֆ, կտրծնոֆ բառերի մեջ, եւ այս բացառությունը դնում
եմ, որովհետեւ դրա փոփոխությունը կապված է երկրարբառների ընդհանուր
գրություն հետ, որ նախնայն խառն է, իսկ երկրարբառների գրություն մեջ
փոփոխություն մտցնել եւ այժմ հնարավոր չեմ համարում։ Եթե եւ երկրար-
բառի գրությունը փոխելու լինենք, դա ոչ թե եո պիտի լինի, այլ՝ լո, եւսեմն՝
առլլոֆ, լոթն, կտրծլոֆ, որով առաջ կգար միանգամից միևնույն բառի մեջ
կրկին փոփոխություններ, և հատկապես այնպիսի փոփոխություններ, որոնց
նմանին մեր այժմ բնավ վարժված չէ, և որոնցից յոթն բառը, քանի որ սկզբի
յ տառը և հենք արտասանում, չի կարգացվիլ եօրն, այլ՝ հոթն։

ե—է

Երկրորդ ձայնավորները, որ շփոթվում են, են՝ ե և է։ Սկզբնապես այս
երկու տառերը տարբեր հնչյունների նշանադիր են հղել։ ե—ն հղել է կարճ
է հնչյունի նշան, իսկ է—ն՝ երկար է, ուստից կարծիքով՝ փակ է։ Բայց ժա-
մանակի ընթացքում այս երկու հնչյունը փոփոխության են ենթարկվել, Մի
կողմից՝ է հնչյունը կորցրել է իր ամանակը կամ երանգը և դարձել է կարճ և
բաց է, այսինքն՝ նույնացել է հին ե հնչյունին։ Մյուս կողմից՝ այս ե հնչյունն
ևս, ճիշտ ինչպես ու ձայնավորը, սկզբից ընդունելով բաղաձայնական ի—յ
ձայնավորը՝ դարձել է երկրարբառային, որով բարբառների մեջ բառերի
թե՛ սկզբում և թե՛ մեջը. եզ, մեզ։ Արարատյան բարբառի մեջ, սակայն,
բացի միավանկների սկզբից, ե տառը պահել է, սովորաբար, իր սկզբնական
արժեքը՝ երկու, երկար, եկով արտասանվում են իրեն՝ էրկու, էրկար, էկով։
Գրական լեզվի մեջ, սակայն, ընդունված է բառերի սկզբի ե—նը արտասանել
իբրև յն, իսկ բառերի մեջ, հին արտասանությամբ՝ իբրև է. երեկոյ—յերեկոյ։
Այստեղ մենք տեսնում ենք մեր ուղղագրության մեջ երկու անկախություն,
նախ՝ բառերի սկզբում յն երկրարբառը գրում ենք մի տառով, որ բառերի
մեջ է հնչյունի նշան է, ապա՝ բառերի մեջը և սակավաթիվ բառերի սկզբում
միևնույն հնչյունը գրում ենք երկու տառով՝ ե և է։

Հնչյունական կատարյալ ուղղագրության համար միևնույն է հնչյունի
համար մի նշանադիր պիտի լիներ, ուստի ե և է տառերից մեկն ավելորդ է։
Եթե դրանցից մեկը դուրս պիտի ձգվի, դա պիտի լինի է տառը և ոչ՝ ե, քանի
որ առաջինն ամենաշատը 115 բառի և բայերի որոշ վիճաբանությունների
մեջ է երևան գալիս, իսկ ե—ն՝ հազարավոր բառերի և բազմաթիվ քերական-
ական ձևերի մեջ։ Ուստի ե պիտի են անում։ Նրանք, որ առաջնորդվելով այդ
սկզբունքից՝ ե տառն են դուրս ձգում, և ոչ միայն օտարազգի բառերն է—ով
են գրում, այլև հայերեն բառերը։ Առաջուց կարելի է ասել, որ այդպիսի
փոփոխություն չի անց կենալ, որովհետև մի հարյուր բառի պատկեր
թողած՝ հազարավոր բառերի պատկեր չի կարելի փոխել։ Բացի այդ՝ ոչ թե
ե տառն է է տառի հնչյունին փոխվել, այլ, ընդհանրապես, ե—ն պահել է իր
հին բաց e հնչյունը, և երկար կամ փակ է—ն դարձել է ե։

Բայց կարելի՞ է արդյոք է տառը դուրս ձգել և պահել միայն ե տառը,
իմ կարծիքով՝ այժմ կարելի չէ այդ անել։ Նախ՝ շենք կարող բառերի սկզբի
է—նը, առանց ալլանալության, և դարձնել, որովհետև այդ բառերը, թեպետ
սակավաթիվ, ընդամենը 8՝ է, էզ, էշ, էջ, է՛ր, էգուց, էրիկ և քարբառային՝

յ կհասնային գրութայան խնդիրը՝ մենք տեսնում ենք, որ բայերի վերջավորութ-
յունների նկատմամբ ևս մեր նախնիք փոխել են ուղղագրութիւնը՝ մոտեց-
նելով արտասանութեանը, ե-ի տեղ է-նի գրելով, բայց այդ փոփոխութիւնն
այլևս այժմյան արտասանութեանը չի համապատասխանում, ուստի և մենք
կարող էինք վերագտնել հնագոյն ուղղագրութեանը և գրել՝ տսնի, տսնիթ
և այլն, որ համապատասխան է այժմյան արտասանութեանը:

Բառերի մեջ է տառը երևում է հաճախ այն ժամանակ, երբ բառակազ-
մութեան մեջ է հնչյունը փոխվում է ի հնչյունի՝ ուէ—տիւնի: Կարող է արդյոք
այս ձայնափոխութեան արգելք լինել, որ այդ կարգի բառերն ևս ե-ով գրվեն:
Ի՞նչ կարծիքով՝ ոչ: Արդարև, բառակազմութեան համար անհրաժեշտ է իմա-
նալ, թե ո՞ր բառերի մեջ է հնչյունը փոխվում է ի հնչյունի, որպեսզի նոր
բաղադրութիւնները սխալ չկազմեն. բայց այս ուսումը լեզվի ավելի մեծ
հմտութեան է պահանջում, և ով բառակազմութիւն է սովորում, նա կարող
է սովորել և այն, որ մի քանի տասնյակ բառերի վերջին փակ վանկի և հնչ-
յունը փոխվում է ի հնչյունի, ճիշտ՝ ինչպես այժմ սովորում ենք, թե այդ
է-ն փոխվում է ի-ի, քացի աղվեռ, եղեգն և այլն բառերից, և թե՛ դե՛ բառի
մեջ ևս և հնչյունն է փոխվում ի ձայնավորի: Ավելի զարգացած շրջանում
կրացատրվի, թե այդ մի քանի տասնյակ բառերի և ձայնավորը փոխվում
է ի, որովհետև սկզբնապէս դրանք ե-ով չեն արտասանվել և գրվել, այլ
է-ով. ինչպես որ այժմ բացատրում ենք, թե այդ է-երը փոխվում են ի,
որովհետև այդ է-երը սկզբնապէս նույն արտասանութիւնը չեն ունեցել,
համասար ե-ի, այլ՝ տարբեր: Բացատրութիւնը այս թե ինչպես տրվի, էու-
թիւնը միևնույն է:

Այսպես, որքան, ևս բառերի մեջը և վերջը է-ի փոխանակ ամեն դեպ-
քում և գրելու հնչաբանական ոչ մի արգելք չեմ գտնում նույնիսկ բայերի
վերջավորութիւնների մեջ և այն բառերի մեջ, որոնց է-ն փոխվում է ի,
քացի միայն մի դեպքից, երբ էա կապակցութեան տեղ դնելով եա՝ կարող
է շփոթութիւն առաջ գալ եա երկարաբառի հետ:

Այս փոփոխութիւնը, սակայն, միանգամից տեսլը դժվար է, որովհետև
քերականական ձևերի պատճառով շատ բառերի պատկեր կփոխվեն: Ուստի
առայժմ պիտի բավականանալ միայն այնպիսի փոփոխութեամբ, որով է-ով
գրվող բառերի մեջ որոշ սխառն և կանոն կմտնի:

1. է-ն պահել բառերի վերջում, քանի որ այս գրութիւնն ընդհանուր
ընդունված է, և շատ որոշ է:

2. է գրվում է բառերի սկիզբն ու մեջը փակ վանկերում, երբ այդ է-ն
փոխվում է ի ձայնավորի (բացառութիւն՝ է՛հ ձայնաբկութիւնը):

3. Բառերի մեջը և սկիզբը, բարբառային, երբ ծագում է, այ երկարա-
բառից՝ էա, էդ, էքստ, էրիկ, դէս, դէն և այլն: Վայր ընկնել—վէր ընկնել:

4. Բառերի սկիզբն ու մեջը՝ ա, ի, ո, ու ձայնավորներից առաջ:

Այս դեպքում՝ կանոնի տակ չեն մտնում միայն բայերի է, էլ վերջա-
վորութիւնները:

Այստեղ ուղղագրութիւնը դուրսանում է նրանով, որ այն բոլոր բառերը,
որոնք գրվում են բաղաձայնից առաջ է-ով, բայց այս է-ն չի փոխվում ի,
պետք է գրել ե-ով, ինչպես՝ աղվեռ, գմբիք, պտտնն, եղեգն, ծաղաղկն, խեծ, հրեշ, պտեհն, երեխ, հենց, միկ, խխաժիտ, հենգաժիտ, աշխա, քգեգ, գագղկն, գիք, գամիշ, խիգ, ծվննէ, կիտ, կոնգիգ, մաղես, շանն,

[illegible]

Այս բաների մի մասի համար կանոն է ասել, որ լոկ գրութիւն նմա-
նութիւնք են Է-ով գրվել, փոխանակ Ե-ով գրվելու, ինչպես գտնվում են
շատ ձեռագիրների մէջ՝ մեկ, զմրեք, փք, ծախակէն (ժամանակէն),
կրերեն, անշուշտ, դրանք ծագումը Այսպես, արեւակ, հայան է, որ ամեն
(ամենայն) բառը դրում են և ամէն ձեռք, Թրդ՝ և կարգացել են մի
գիրը պնդում էր, թն այդ բառը Է-ով պիտի գրէ, որովհետեւ այդ բառն հա-
մապատասխան է սանկրիտի ինչ-որ բառ, որի ինչ-որ ձայնավորին հայերե-
նում համապատասխան պնդ է լինի է և Է և Բայց այդ ամենը, ինչպես
էլ գիտուն և ճիշտ լինի, ճիշտ է միայն զանազան գրաբարի Համար, քանի
որ այժմյան խոսվածքի մէջ ամէն դարձել է ամեն, այս վերին ձևը ըն-
կելով, մենք դուրացնում ենք ուղղագրութիւնը՝ մտածելով արտասանու-
թյանը, և պակասեցնելով Է-ով գրվող բառերի թիւը, և այդ բառը մտնելով
այն բառերի շարքը, որոնց է հնչյունը բառակազմութիւնն ժամանակ չի էսխ-
վում ի. դրանով ուղղագրութիւն մէջ որոշ մեթոդ ու նախնի է մտնում, Բայց
ամեն գրութիւնը հակասում է բառի ծագմանը... Բայց արդո՞ք ամէն գրու-
թյամբ շատ ենք մտածում դրա ծագման վրա... Եւ որովհետեւ այդ պիտեալներ,
որ կարողանում է մեր այդ ամէն բառը ծագած Համարել Ինչ-որ հնդկա-
պական բառից, և փոխ, որ այն, ինչ հնդկաբանական հնչյունը զանազան
հայերենում է ձայնավորն է ապիւ, մի՞թէ այդքան հետեւներ գնացող
լրտոր հասկանա, որ կոտիկ հայերենի ամէն ձևը եւր լոկի մէջ գարձել է
ամեն, որ այս եւր լոկի Է հնչյունը, նայելով բառին, ծագում է Ե (մեծ). է
(ամէն—ամեն) ձայնավորներից և եւ ներկարարածք (գնացեալ—գնացել),

Անշուշտ, արվելի մեծ դպրութիւնն և կանոնավորութիւն կմաներ ուղղացարութեան մեջ, եթե է տառը պահպան միայն բառերի սկզբում և էա (ոչ եա)՝ կապակցութեան համար, իսկ մնացած դեպքերում գրենք ի. քայլ քա մեծ փոփոխութիւն է և ապագայի խնդիր:

Այս տառի մասին խոսելուց առաջ կարևոր էմ համարում այստեղ դնել երկրաբառների մասին. ռոմկարբառ ասելով, բառի ընդարձակ մտքով, հասկացվում է երկու պարզ ձայնավորի միացումն իբրև մի վանկ, որոնցից մեկն վանկային է (այսինքն՝ կատարում է ձայնավորի պաշտոն), մյուսը վանկային չէ (այսինքն՝ կատարում է բաղաձայնի պաշտոն)։ Այս ոչ վանկային ձայնավորը կոչվում է կիսաձայն (այլև՝ բաղաձայնական ձայնավոր)։ Կարելի է, որքան, ասել, թե երկրաբառը կազմվում է մի ձայնավորից և մի կիսաձայնից, օրինակ՝ ձ1, ՁԱ. մի վանկային ձ ձայնավորից + մի ոչ վանկային կիսաձայն 1, Ա, կամ շուտ սոված 1Ձ, ԱՁ, մի ոչ վանկային կիսաձայն 1, Ա + մի վանկային ձայնավոր Ձ և նման։

Գործնականի մեջ, սակայն, երկրաբառ և կիսաձայն անուններ միակերպ այս նշանակությամբ չեն դորժածվում։ Այլ, մանավանդ թե, հնդկաների, հունաց ու լատինաց հին քերականությունների դորժածությամբ երկրաբառ ասելով՝ հասկանում են հաճախ միայն այնպիսի միավանկ կապակցություններ, որոնց մեջ վանկ կազմող ձայնավորն առաջ է ընկնում, հետևաբար՝ Ձ1, ՁԱ կապակցությունները, և ընդհանրապես, միայն այն դեպքում են կիսաձայնի մասին խոսում, երբ ոչ վանկային ձայնավորը վանկային ձայնավորից առաջ է ընկնում, որքան՝ 1Ձ, ԱՁ կապակցությունների մեջ, Այս դորժածությունը, ինչպես տեսնվում է, իրի էությունից չի ծագում. որակով ոչ վանկային կիսաձայնները նույնպիսի ձայնավորներ են, ինչպես և վանկային լի ձայնավորները, միայն վանկերի կազմության մեջ դրանք տարբեր պաշտոն ունին, քայց վանկերի կազմության մեջ հաջորդությունը, թե արդյո՞ք Ձ1 կլինի, թե 1Ձ, բնականորեն, նույնպես քիչ նշանակություն ունի, ինչպես, օրինակ՝ Ձ1 կամ 1Ձ, ԱԳ կամ ԴՁ և այլ կապակցությունների մեջ բաղաձայնների հո ու առաջ գրվելը։ Պատահական բան է միայն, որ հին քերականները իրենց երկրաբառները (որքան՝ վանկային ձայնավորի կապակցությունը ոչ վանկային ձայնավորի հետ, ինչպես՝ Ձ1, ՁԱ) համարել են իբրև կրկին ձայնավոր հնչյունների (իբրև՝ ձայնավոր + ձայնավոր), իսկ, ընդհանրապես՝ 1Ձ, ԱՁ, նման հաջորդությունները գրել են իբրև բաղաձայն + ձայնավոր խմբեր և ըստ այսմ առանձին նշաններ են հորինել յ և Վ (—1 և Ա) «բաղաձայնների» համար։ Նրանք, որ գերադասում են երկրաբառ բառն ընդարձակ մտքով դորժածել, սովորաբար, «կիսաձայն» բառը մի կողմ են թողնում, և վանկային ձայնավորով սկսվող երկրաբառները, ինչպես՝ Ձ1, ՁԱ, կոչում են ընկնող երկրաբառներ, իսկ այն երկրաբառները, որոնց մեջ բաղաձայնը առաջ է ընկնում, ինչպես՝ 1Ձ, ԱՁ, կոչում են բարձրացող երկրաբառ։

Տեղիներների դորժածությունը հաճախ բավական կամայականորեն փոփոխվում է զուտ քերականական կամ լեզվապատմական կշռադատություններով, Համեմատական լեզվաբանության մեջ կիսաձայն բառն, օրինակ, բավական դորժածական է, որովհետև սովորություն է 1 և Ա հնչյունները 1Ձ և ԱՁ կապակցությունների մեջ համարել իբրև առանձին բաղաձայնական արժեքներ (E. Steuers, Grundzüge der Phonetik. IV. Aufl., S. 148 ff.):

Արդ՝ մեր լեզվի մեջ ևս կա մի կիսաձայն յ, որ հին քերականների սովորությամբ՝ գրվում է իբրև բաղաձայն։ Գրանով կազմվել են և կազմվում

են մեր երկրաբառենները, բայց եւր յ-ն ձայնավորնք հետո է գալիս. մենք
երկուսի կապակցութիւնը հասարակ ենք երկրաբառ. ինչպես՝ այլ, ոչ, իսկ
կար ձայնավորնք առաջ է ընկնում յ-ն. ինչպես՝ յա, յո և այլն. մենք երկուսի
պակցութիւն. իսկ այլ թե յա կարողանանք յ-ին առաջ տալ թե հետո
վոր է:

Արդ՝ այս կիսաձայն յ-ն ձայններ ինչպես միայն եղել է սկզբում
մեր յ տառի ձայններ. փոփոխութիւն է ենթարկել, զա իրեն հատուկ հին
հնչումը պահել է միայն բառերի մեջ՝ ա և ո ձայնակներինք հետ, բառերի
վերջում, ա և ո ձայնավորներինք հետ, որոնք է ընկել կամ դարձել է հալա-
սար հաղաղային և հնչումին, Այսպես՝ մեր յա բարբառներ, ինչպես և
երկու գրական լեզուների մեջ, բառասկզբի յ և և քնով լին տարբերում.
Արդարեւ, կան բարբառներ, որոնք մեջ բառասկզբի յ-ի, քիչ քիչ գտնու-
մբերով են հազար. բայց միայն բարբառներից տարբեր, այսպես՝ քա-
Անառայանի (հետք բարբառագրութիւն, էր. 10, 106 և այլն) կարեւ, Մշտ,
Ալաշկերտի և այլ տեղերի հայերը ունին էրզու անակ հաղաղային ձայն,
մեկը՝ հին և հազար. միայն՝ հին յ-ն կիսաձայնից ձագած սերկար հա-
ղաղը, իմ կարծիքով՝ դեռեւ քննելի է, քն որդի՝ ք այդ բարբառների մեջ
սերկար հաղաղը հին յ-ից է ծագում, թե՛ հին յ-ն բառասկզբում դուրս է
ընկել, և այդ բարբառների մեջ ձայնավորներինք առաջ ավելացել է մի
հաղաղային հնչում, որ հին յ-ի հետ կապ չունի, որովհետեւ այդ նախ՝ չի
երևում բոլոր հին յ-երի տեղ, և այսպէ՝ յառ անկամ երևում է այնպիսի բա-
ռերի սկզբում, որոնք հին լեզվի մեջ յ-ով լին սկսվում. եւ չիցե, կան բար-
բառներ, որ ունեն երկու հաղաղա Այս երեւու հազար տարբերութիւնը կա-
րելի է տեսնել ալ միայն վերալիցող բարբառների մեջ, այն հաղաղաղա-
ում. Այս տարբերութիւնը սակայն, զուտ բարբառային է, և ուր որ մտն-
կութիւնից իր հայրենի բարբառից չի վարժվել գրեւ, նախնակ գովարա-
թումը կարող է լինել, քմառել և յուրաքանչէր. Գրեւեւ լեզուների մեջ, բառերի
սկզբում, ունենք միայն մի հաղաղային հնչում, որ ծագում է մասամբ հին
և հնչումից, մասամբ՝ հին յ կիսաձայնից. հենք որդ պատճառով ե-ի և յ-ի
սխալն անում են նույնիսկ այն մարդիկ, որոնք բարբառի մեջ յ-ն գարձել
է սերկար հաղաղը:

Ուստի, գրական արտասանութիւն տեսանկեւից, ոչ մի տեղից չկա
բառասկզբի յ-երը վերածելու և տառի:

Սրանով մոտավորապես հարկուր արմատի ուղղագրութիւն կփոխվոր,
բայց մեր ուղղագրութիւնը շատ կգյուրանար, քանի որ ոչ մի կանոն չկա
բառասկզբի և և յ տառերի գրութիւն համար, բայց եթէ այն, որ առանձնա-
պես պետք է սովորել այդ տառերով սկսվող բառերը:

Այս փոփոխութիւնը, սակայն, ևս համարում եմ մի երկրորդ աստի-
ճանի փոփոխութիւն, որ կարելի չէ ալմ անել. գրանով, քանի որ բառա-
միջի օ-երն եւ ո պիտի գրել, մի քանի բառերի պատկերները շատ կփոխ-
վեն, ինչպես՝ հող, հաժար, հոնք, հոջուտել, հոբանջել, հաբինել, իսկ՝ յեռոյ
բառը՝ վերջին յ տառի դուրս ընկնելով, կստանար հնազ կերպարանքը:

Միայն փոփոխութիւնը, սակայն, հնարավոր է. վերջի անձայն յ-երն
ա և ո ձայնավորներինք կարելի է դուրս ձգել և գրել՝ ծտա, զարմառ: Ար-

դարեւ, դրանով մի քանի բայերի պատկերը, որոնք միշին օ ունին, ներկա, երրորդ դեմքի մեջ բաժանական կիտիսմի՝ գորումա, ազոտաւա, ծառաքաւա, բայց պաշտպան կարեւրի լէ. կա՛մ պետք է մենք հաշտվենք այդ դժվարութեան հետ, կա՛մ թե բառաւորների անձայն 3-երի դուրս ձգելը թողնենք իրեն մի երկրորդ աստիճան փոփոխութեան, երբ վարժված կլինենք բառերի մեջ օ-երի գրութեանը, փոխանակ՝ օ-երի, նա, սակայն, կնախընտրեն աստիճանը, որովհետեւ բառերի վերջի անձայն 3-ի գրել-չգրելը՝ կապված լինելով քերականութեան հետ, բաժանական դժվարութեան է պատճառաւ. դրա համար պետք է լինում իմանալ հատուկ անուն, դերանուն, հրամայական եղանակ, մակերայ և այլն, այսինքն՝ բառերի տեսակները, որպեսզի իմացվի, թե ո՞ր բառերի վերջից 3-ից հետո 3 չի գրվում. մյուս կողմից՝ ք վերջացած հատուկ անուններն ևս հին գրութեամբ՝ Յարայ, Կարայ և այլն, ունին 3. մինչդեռ ք վերջացածները՝ լուսին, մի քանի մակերայների վերջում ք և ք տառերից հետո 3 չի գրվում, իսկ ուրիշների վերջում գրվում է. Այս կանոնները շատ բարդ օւ դժվար են՝ դրանցով առաջնորդվելու համար. Ապա դարձյալ մի ուրիշ կանոն էլ պիտի սովորել, այն, որ ծառայ և նման բառերի վերջի 3-ն, երբ վրան հող է ապկանում, և կամ հոգնակին է կազմվում, դուրս է ընկնում՝ ծառայա, ծառայո, ծառայե, ծառայենք: Եվ եթէ վերջին ձևերի մեջ 3 չենք գրում, ես ոչ մի առանձին արգելք չեմ գտնում նաև ծառայ գրելու, ինչպես դրում ենք՝ նա, Ստա: Այսպես վարվելով՝ մենք ազատված կլինենք մի շարք կանոններից, որոնք կապված են քերականութեան հետ:

Այլնիս, դուցե, առարկողներ, որ եթէ ծառայ գրենք, այն ժամանակ ի՞նչպես պիտի բացատրենք՝ ծառայի, ծառայով, ծառայութեան և այլն. Շատ հեշտ. այժմ խո գրում ենք՝ Ստա, Ստայի, Ստայով և այլն, Անեա, Անեայի, և ի՞նչպես ենք բացատրում այդ օթե այժմ ծառայ և նման բառերի վերջին անձայն 3-ն բացատրում ենք, թե սկզբնապես արտասանվել է, իսկ այժմ չի արտասանվում, բայց, երբ հոսից մի ձայնավոր է գալիս, այդ 3-ն վերականգնում է իր կիսաձայն հնչյունը. փոփոխված ուղղագրութեամբ էլ կրացատրվի, թե երբ ծառայ և նման բառերից նոր բառեր են կազմվում կամ դրանք հղումվում են, ք ձայնավորից հետո մտնում է 3, որովհետեւ սկզբնապես այդ բառերը հղել են՝ ծառայ, բայց վերջի 3-ն այժմ դուրս է ընկել: Այս բացատրութեանը հարկավոր է, անշուշտ, միայն քերականութեան համար, թե լէ սովորական ուղղագրական ուսման համար կարիք չկա դրան: Այստեղ միայն մի ընդհանուր կանոն պիտի իմանալ. թե ք և ք ձայնավորների և սրանց հաջորդող ձայնավորների մեջ գրվում է 3, որ միշտ էլ արտասանվում է իր հնչյունով, ինչպես և այժմ վարվում ենք հատուկ անունների մեջ՝ Անեա, Անեայի, և օտարազգի բառերի մեջ՝ աբիսսոնալիան, աբիսսոնալիան:

Մի առարկութեան էլ դուցե լինի. 3 տառի դուրս ընկնելով՝ պարզապես ք վերջացած բայերի հրամայականը և ստորագրականը նույն ձևն են ստանում, որ կարող է, կասեն, շփոթութեան պատճառով. Չեմ կարծում, թե այդ շփոթութեան անքան երկուդայի. լինի. խոսքի մեջ հրամայականը երկրորդ դեմք է, կապված՝ կա՛մ երկրորդ դեմքի դերանվան հետ, կա՛մ մի կոչական անվան հետ. մինչդեռ ստորագրականը երրորդ դեմքով է և անթական ունի մի երրորդ դեմքի դերանուն: Բացի այդ, հրամայականն իր քնավորութեամբ՝ հաճախ վրան շեշտ ունի՝ զեա՛ (դու), զեա՛ (նա): Շանթի շէին

առաջնորդներին մեջ միջոց գտնա է ձգած վերջին տեսակի լ-երը, և ա. գոնե, այդպիսի չփաթաթյալ չեմ պատահել կարգալիտ:

Այսպես, ուրեմն, ես կառաջարկեմ անձայն լ-երը դուրս ձգել և մեր ազգագրությունը մի այլեւորդ բնույթ թեթևացնել:

Անցնենք այժմ համարալսմանը ւ-ի, վ-ի և ա-ի գրությունը:

Ի, Վ, Ու

Այս ուղղագրական խնդրի մասին քառս տարուց առաջ է, որ այնքան ուղիղ և սխալ բովանդակությամբ հոգովածներ են գրել և կարծիքներ են հայտնել, որ ես, ձանձրալի լինելու համար, կաշխատեմ կորել կապել:

Հին Հայերենը երկու միևնույն կարգի տեսական է հնչող է ունեցել՝ Վ և ւ, որոնց փն տարտասանությունը, առկայի, դեռ բոլորովին պարզապես չէ: Ըստ մեկի՝ հայոց լեզվի այբբենարանը կազմելու ժամանակ դրանք երկու տար-րեր հնչյունների նշան են եղել, որովհետեւ երկու տառ են հորինած, քանի որ հայերենի այբբենարանը լուծի տառերի կրկին գործածություն, համարա-կան է: որ ւ-ը ունեցու է եղել գրեթե միևնույն տարեքը, ինչ որ բաղա-ձայնանան ունե, որովհետեւ դա է գործածվում սրկարբարանների մեջ, ինչպես ա. երկարաբառի մեջ, որ դառնում է վերջը ա. և եւ կրկնաբարառի մեջ, որ վերջը բարբառային ձևով լօ է արտասանվում... Ընդհանրապես, մյուս տառը՝ Վ, որ միայն գործ է ածվում բառերի սկզբում, պետք է արգեն մի բոլորովին ազատ բաղաձայնական բնավորություն ունեցած լինի, առկայի չփական, ձանձրալի դեպք, Վ և ւ տառերի տարբերությունը շատ մեծ լարիտի եղած լինի, քանի որ վ-ի գրությունը՝ ու ձայնավորից հետո, և ւ-ի գրությունը՝ մյուս բոլոր ձայնավորներից հետո, բառերի մեջը և վերջը, բացառվում է գրության (graphique) անհրաժեշտությամբ. ու-ն՝ լինելով ու ձայնավորի համար, ու ձևով արտահայտությունը ՕՎ (W բաղաձայնով) խմբի համար երկդիմի կլինեն. վ-ի գործածությամբ՝ ով-ի մեջ հնարավոր է եղել այդ երկ-դիմությունների խառնափել, բայց դա ցույց է տալիս և այն, որ ւ և Վ մեկեմեկու շատ մոտ հնչյուններ են եղել: Այսպես, ուրեմն, ւ տառն, ամենայն համարա-կանությամբ, եղել է բաղաձայնական ու և, իբրեւ այդպիսին, իր որակով դա եղել է ձայնավոր, բայց շատ մոտիկ է Վ բաղաձայնին:

Ինչպես էլ եղած լինին հին ւ և Վ տառերի արտասանությունը, արդի հայերենում այս երկու տառերը միևնույն շրթնային արտամնային շփական հնչյունն են: Այս այնպիսի պարզ մի հնչյուն է, որ միայն հնչաբանության անտեղյակ մարդիկ կարող են ասել, թե մենք իբր երկու Վ հնչյուն ունենք, մեկը՝ կոշտ Վ, մյուսը՝ փափուկ ւ. և իբր թե վազել և առաջ և ծով ու ճուրաբների մեջ միևնույն Վ հնչյունը չէ: Այդպիսի սխալ հասկացողություն ապա-ցուցելու համար, իբրեւ օրինակ, բերում են կա՛մ այնպիսի բառեր՝ ճառա, ճառք, որոնց մեջ Վ հնչյունը դարձած է համապատասխան կարգի անձայն ֆ հնչյուն, կա՛մ ոչ նման կապակցությունների մեջ են դեմոստոկոս դնում Վ և տառերի կարծեցյալ տարբերությունը, մոտանալով, որ ամեն հնչյուն էլ, նայելով թե իրենից առաջ կա՛մ հետո ինչ հնչյուններ են, ըստ այնմ էլ տարբեր է արտասանում, բայց դրանով հնչյունի տեսակը չի փոխվում:

Այսպես, ուրեմն, եթե հին լեզվի մեջ ւ եղել է բաղաձայնական ու ձայնա-վոր, մոտիկ Վ բաղաձայնին, նոր լեզվի մեջ դա արգեն կատարելապես դարձել է Վ բաղաձայն, և այսպես մեր երկու գրական լեզվի մեջ եւս

Ինչպես բաղաձայնական և ձայնավորը դարձել է վ, նույն ձևով՝ հաջորդ ձայնավորից առաջ նաև հին ու ձայնավորը դարձել է վ, միայն այս ձայնափոխությունը աստիճանաբար է կատարվել. այսինքն՝ հին ու ձայնավորը անմիջապես բաղաձայն վ չի դարձել, այլ նախ՝ դարձել է բաղաձայնական ու (վ) ձայնավոր, ապա նոր՝ վ բաղաձայն։ Արդ խոսքով, եթե մեր այբբենարանի և տառի սկզբնական արմենով գրենք, հին գուարը, նույն, աստուած բառերը նախ՝ դարձել են վաւթ, նւէր, աստուած, որոնց մեջ աւ—ուս կազմում է բարձրացող երկբարբառ, ապա՝ այս երկբարբառի սկզբի բաղաձայն և ու ձայնավորը դարձել է վ բաղաձայն, ինչպես երկբարբառային դարձած աւ, որ է աւ (սօ), բառերի սկզբում դարձել է վո։ Արենյան գրական լեզվի մեջ այս ձայնաշարությունը շատ պարզ է, և մենք այսօր արտասանում ենք պտտվւր, նվլւր, աստված և ո՛չ պտտուլւր, աստուււււ, կամ՝ պտաււր, աստուած։ Գուցե կլինին բարբառներ, որոնց մեջ այս հին ու ձայնավորը վերածված է բաղաձայնական ու ձայնավորի, բայց մեր գրական լեզվի մեջ դա տրոհվել է բաղաձայն է։

Կնշանակե, մեր գրական լեզվի մեջ այժմ ունինք մի վ բաղաձայն, որ մասամբ ծագել է հին վ բաղաձայնից, մասամբ՝ հին՝ և բաղաձայնական ձայնավորից, մասամբ ևս՝ հին ու ձայնավորից, նվ որովհետև մեր այժմյան ուղղագրության մեջ պահում ենք այդ երեք հին տարբեր հնչյունների գրությունները, դրանից առաջանում է և մեր վ շփականի գրության գծվարությունը, իմ կարծիքով՝ հանգուցյալ Աղայանը մեր ուղղագրությունը դուրսացնել ցանկանալով՝ լպիտի ձեռնարկիր այս հին ձայնավոր ուն բաղաձայնական և ձայնավորին վերածելով. ամենից առաջ այն պատճառով, որ մեր ուղղագրությունը այդ մասում որոշ կանոն ունի. այն է՝ բառերի սկզբում և ուրից հետո գրվում է վ, մյուս ձայնավորներից հետո գրվում է ւ, իսկ բաղաձայններից հետո և ձայնավորներից առաջ՝ ու։ Ըս անձնական փորձից գիտեմ, որ Աղայանի այս ձեռնարկությունից առաջ աշակերտները հնչողություններ վարժվում էին ուն ձայնավորից առաջ վ արտասանելու, որ և բնական է մեզ համար. ապա և նրանք որոշ կանոնով առաջնորդվելով՝ բաղաձայն արագ յուրացնում էին վ—ահնչյուն ուի ուղղագրությունը, մանավանդ որ լեզուի, լեզուանի, ձուի և այլ նման դրությունների մասանակ մտածում ենք լեզու, ձու ձեռքի մասին։ Այսպես՝ Աղայանի այդ ձեռնարկը ուղղագրության ճշտության տեսակետից ևս սխալ է. եթե պետք էր վ—ահնչյուն ուն վերածել նույն հնչյունն արտահայտող մի տառի, այդ լպիտը է լինել հին բաղաձայնական և ձայնավորը, այլ միայն՝ վ բաղաձայնը, որովհետև հին ու ձայնավորը ոչ թե և է դարձել, այլ՝ վ, ինչպես և հենց ինքը՝ ւն էլ չի պահել իր բաղաձայնական ու ձայնավոր հնչյունը, այլ դարձել է վ բաղաձայն, իսկ իս երկբարբառի մեջ՝ ու ձայնավոր։

Այս սխալն Աղայանը մինչև վերջն էլ չմտնեց։ Այսպես՝ հանգուցյալ գրագետին առարկում էին նաև գիտական ուղղագրության համար պահանջված պայմանի տեսակետով. թե ամեն հնչյուն պետք է մի տառով նշանակվի, և թե ամեն տառ միայն մի հնչյուն պետք է ունենա. Աղայանը եթե ավանդական ուղղագրության մեջ փոփոխություն է մտնում, այդ փոփոխությունը կխաճամփի լպիտի թողնի, այլ կատարյալ պիտի անի և ոչ միայն վ դարձած ուերը, այլև վ դարձած ւերը պետք է մի տառով նշանակվի. և այդ մի տառը՝ պետք է լինի միայն վ և ո՛չ ւ։ Այս ոչ միայն քարոզեց իմ բարե-

կամ Ստ. Մալխասյանցը, ալլև, դժբախտաբար, կիրառել, թնայնա-
գործչալ թնորի, որովհետև ոտ, որ, ոչ և նմանները և դուռ, վտ, վոչ:
Սկզբում ուրիշներն ևս հետևեցին նրան, և այնպե՛ս այժմ, որքան գիտե-
նա մենակ է մնացել գործնականի մեջ, որովհետև ուղղագրությանը փոխ-
յու համար քաղական չէ միայն գիտական հշտությունը. այլ արքայազոր է
բառերի պատկեր լիփխի և բառերի պատկերը շատ լիփխի. Արդ, հայերե-
նում վ շփականը միայն վ քաղաքական է դրել, որովհետև քաղաք-
քառերի պատկերներն են փոխվում, և բառերի պատկերներն այնքան շատ են
փոխվում, թեկուզ վ տառի միշտ ալքի ընկնող մեծությամբ, որ ևս չի կար-
ծում, թե մեր գրագետները հեշտ հաշտվեն գրա հետ, որովհետև դրոշմակեր-
մեջ անհաղորդական լիանդիպելու համար, այսպես թե անպես, հեշտակեր-
է ունենալ գրագետների դժբախտությունը, որոնք բառեր ոչ այնպես տառերով
են կարգում, որքան ընդհանուր պատկերով. իմ 15-րդ վերջում բացա-
րեցին, Աղալանի մեծությի հաղորդության գլխավոր գաղափար Հենց այն է,
որ նա համապատասխան ալվելի թիվ բառերի մեջ փոփոխություն էր մտցնում,
և որ բառերի մեջ ունեցող եզրերն նոր աստ շեր ալվելացնում, Հենց այդ
պատճառով՝ ես ալվելի կուզեի, որ պ. Մալխասյանը, հաղորդության անհե-
տա համար, միայն վ-տեղյակ ասեր վ-ի վերածել, արագալի թույնից
որ համարյա ասեր ես վ-ի փոխել, որովհետև, իմ կարծիքով, եթե երբեք
մեր այդ մ. հայտնի համար մի աստ կիսի լինի, պո միայն վ տառը
պիտի լինի:

[illegible]

տառաւորութիւն կա. այսինքն՝ դեռ այս ու ձայնավորի համար դեռ բոլորովին չի հաստատուած վ ըստականքը, այլ մի երկու դեպքում ու կամ բաղաձայնական ու (ւ) է արտասանվում: Դժբախտաբար, ես հարմարութիւն չունիմ այդ դիտելու անձամբ: Անառայանը (սէայ բարբառագիտութիւն, էր. 16) խոսեցով գրաբարի և գրական լեզվի երկարաւորութիւնի մասին՝ գրաբարի ուս երկարաւորութիւնը թե՛ բարբառների և թե՛ գրական լեզվի մեջ վա զանկէն վերածված է դեռում: Կրավորականները, գիտեմ, վ-ով են կազմվում. տողադարձից՝ գրաբար, երեւ. երեւում է, որ զվարք, եվեր են արտասանում. բայց թէ ի՞նչպէս են արտասանում ու ձայնավորով վերջացած տեղանքի հոլովները՝ վերաբերւի, լեզուի, հեռու-էն, թե՛ վերաբերի, լեզվի, այսինքն՝ քաղաքական կան լեզուի, թե՛ վերաբերի, լեզվի, հեռվէն: Վերջինս ինձ կանխածելի է թվում, մասնաւորապէս որ Կ. Պոլսի բարբառով մի նմուշի մեջ (էր. 255) գտնում ենք լեզուի, հեռուի: Ապա՝ արեւմտեան գրողներն առարկելով վ-ի դեմ, պնդում են, թէ իրենք վ չեն արտասանում, այլ մի տարբեր հնչյունով. ինձ թվում է, որ այդ տարբեր հնչյունը հենց քաղաքական կան ու (ւ) ձայնավորն է, որ նրանք որոշել չեն կարողանում: Համենայն դեպս, մինչև նշտութեամբ չկարգվի այս խնդիրը, կարելի չէ այդ ձեւերը ոչ լեզուի, հեռուի գրել և ոչ լեզվի, հեռվէն: Որովհետեւ, լսելի մոտանալ, որ միայն այնտեղ հնարավոր է ուղղագրութեան մեջ փոփոխութիւն մտցնել, ուր երկու գրական լեզուներն ևս ունին մի ընդհանուր արտասանութիւն: Իսկ եթէ մեկն արտասանում է լեզու, լեզուի կամ լեզվի, մյուսը՝ լեզու, լեզվի, կարելի չէ մեկի կամ մյուսի արտասանութեան հիման վրա միայն գրել լեզվի կամ լեզվի. այդպիսի դեպքում պիտի պահել հին ուղղագրութիւնը: Այս մասին պիտի խոսեն արեւմտեան գրական լեզվի մարդիկ: Անառայանի սէայ բարբառագիտութիւնն այս մասում, դժբախտաբար, թերի է:

Ուս վերջացրի, իմ կարծիքով, հնարավոր փոփոխութիւնների շարքը: Դրանցից վերջինով ես ոչ մի նոր առաջարկ չեմ անում, բայց եթէ այն, որ պետք է հաշտվել թեպետ սխալ, բայց կատարված և կատարվող իրողութեան հետ մի պայմանով միայն, եթէ մենք չենք կարող այդ սխալի առաջն անել կամ հին ուղղագրութիւնը վերականգնելով, կամ վ-աւելցնել ու-ի տեղ վ գրելով: Բայց ես կարծում եմ, որ եթէ կամենանք, կարող ենք այդ անել և մեր ուղղագրութիւնը թեթեւեղելով հանդերձ՝ ավելի ճիշտ հիմունքների վրա դնել: Ապա՝ բառերի վերջի անձայն յ լզուի, որ արդեն գործածում են ոմանք, ինչպէս և բառերի մեջ օ-երի տեղ ո գրելը, մի առանձին խոշոր փոփոխութիւն լի առաջ բերում մեր բառերի ընդհանուր պատկերի մեջ, բայց շատ դժուարացնում է մեր ուղղագրութիւնը: Շատ ավելի պակաս զգալի կլինի է-ի տեղ ո գրելը բառերի մեջ, վերջին. փակ վանկերում, երբ է-ն բառակազմութեան ժամանակ ի չէ փոխվում. այսպիսի բառերի թիվն ավելի ևս սահմանափակ է, իսկ մի քանիսի ուղղագրութիւնն էլ տառաւորով վիճակի մեջ է. կան և՛ է-ով, և՛ ն-ով գործեր: Այս փոփոխութիւններով մեր ուղղագրութիւնը ձայնավորների և վ-ի նկատմամբ, հարկավ, գիտական նշտութիւն չի ստանում, բայց ուղղագրութեան մեջ որոշ դժուրութիւն է մտնում, և մի քանի տառերի դրութիւնը կանոնավորվում է:

Ի՞նչպէս պետք է անել, որ դա դուրս գա, եթէ ցանկանում ենք այդ Բայց կան, անշուշտ, շատերը, որոնք երբեք այդ ցանկալի չեն համարում և ասում են, թէ պետք չէ ամենին որեւէ փոփոխութիւն: Այդպիսիներին,

ասկայն, ես պիտի կրկնեմ, թե փոփոխությունը լինում է և լինելու է. կուզե՞ք՝
գիտությունը համարենք, կուզե՞ք՝ տգիտությունը, Հետզհետե մտնում են նորա-
նոր փոփոխություններ, և մենք անկարող ենք դեռ առաջն առնել հանուն
միակերպ ուղղագրության: Եստ անգամ ասում են, թե առաջն առնել հանուն
թյուրեք կարող է և պետք է արգելն դպրոցներում և գործածել նորատեսակ
ուղղագրությանը դասագրքեր: Այդ հնարամուր և բայց դրանով առաջը չի
անհատին, այս կամ այն լրագրին, որ այս կամ այն ուղղագրությունը
բանեցնի: Մյուս կողմից՝ մեր աշխի առաջ այս նորատեսակները, որոնք
դպրոցում սովորել են և տարիներ շարունակ գործածել են նրան ուղղագրու-
թյունը, մեկ օր թողնում են այդ Դպրոցում արգելվել նա առաջը չի առնել
այդ բանի: Եվ, վերջապես, հոգևոր իշխանությունը ո՞ր ուղղագրությունը
պիտի ընդունե տառանվոր մեքերից, որոնց թիվը փոքր է՝ որքանք ես կամ-
պետե՞նա է այդ մասին: Մի ֆրանսիացի գիտնական՝ խոսելով ուղղագրու-
թյան մեջ մտնելի փոփոխությունների մասին, նարող է վերջ առնել. անկա-
գնեման միայն բավարար իշխանություն և հեղինակություն ունի այս վերա-
նորագրությունը կոտորելու:— և վերջապես, թեպետ դանդաղ, բայց
հետզհետե կատարում է: Բայց ո՞ր է մեր սօջ այդ հեղինակությունն ու
իշխանությունը: Կարո՞ղ է մեր հոգևոր իշխանությունն այդ վերադարձի
հեղինակությունն ունենալ: Ես կարծում եմ՝ ով որ ամեն հույս դնում է
հոգևոր իշխանության վրա և հավատում է, թե նա կարող է նորատեսակ փո-
փոխությունների առաջն առնել, այդպիսին միայն այն է տեսնում, որ բոլո-
րովին ազատ է թողնում մեր ուղղագրությունը, և ասում է, որ ամեն անհատ
մեզնում կարող է մի անկախ միջոց լինել և ուզած փոփոխությունը ոչ միայն
առաջարկել, այլև անմիջապես գործադրել:

Իմ համեստ կարծիքով՝ հոգևոր իշխանությունը կարող է միայն գոր-
ծադրել տալ որևէ ուղղագրություն իր դպրոցներում, իսկ որպեսզի գրա-
րոցներինց դուրս ևս դպրոցի աշակերտները շարունակեն գործադրել իրենց
սովորած ուղղագրությունը, որպեսզի բոլոր գրագետներն ու լրագրիներն էլ
միակերպ ուղղագրություն բանեցնեն, հարկավոր է մի հեղինակավոր խոր-
հուրդ՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ պարապեն այդ խնդրով,
բազմակողմանի կերպով ուսումնասիրեն մեր ուղղագրությունը և մի որոշ
լուծում տալ ընդունելի կամ մեթոդի փոփոխությունների համար: Այդ մաս-
նագետ մարդկանց խորհուրդից ընդունվածն ընդունելի կլինեն և՛ հոգևոր իշ-
խանությունից, և՛ գրագետների ու լրագրիների համար:

Մասնագետ մարդիկ կգտնվին, անշուշտ, մեզանում, հարկավոր դեպ-
քում պիտի օգտվիլ և եվրոպական հայտնի հայագետներից, որոնք, չեմ կար-
ծում, զյանալ այդ մասին իրենց խորհուրդները տալու:

Բայց ո՞վ պիտի ձեռնարկն այդ մասնագետներին խորհուրդը գլուխ բե-
րելու, որպեսզի թե՛ դպրոցներում և թե՛ գրագետներից ընդունելի լինի նրանց
խորհրդի որոշումը: Այս հարցի համար ես երկու կողմից ձեռնբերեցություն
կարևոր եմ համարում: Փանի որ դպրոցները գտնվում են հոգևոր իշխանու-
թյան հրամանի տակ, մի կողմից նա գլուխ պիտի կանգնի այդ գործին թե՛
այստեղ և թե՛ Թուրքիայում: Բայց հոգևոր իշխանությունը մենակ բավական
չէ. այդ գործին գլուխ պիտի անցնի նաև Հայ գրագետների ընկերությունը
Թիֆլիսում և հայ գրագետները և. Պոլսում, որպեսզի խորհրդի որոշումն
ընդունելի լինի և գրագետների կողմից: Դժբախտաբար, ես հեռու եմ Թիֆ-

լիտի գրագետների միությունից, բայց կարծում եմ, որ ինչպես և ինչ նպատակով էլ լինի այդ Ընկերության կանոնադրությունը, նա պարտավոր է և կարող է հոգալ մեր ուղղագրության միակերպության մասին, քանի որ ուղղագրությունը ալ միայն դպրոցներին է հարկավոր, այլև նույնպես և ավելի իրենց՝ գրագետներին է վերաբերում։ Համապատմ եմ, որ եթե մի կողմից՝ հոգևոր իշխանությունն, ու մյուս կողմից՝ գրագետների միությունը Թիֆլիսում և Կ. Պոլսում կամենան, կարող է այժմ գլուխ գալ մի հեղինակավոր խորհուրդ, որ իր որոշումներով մի քանի ուղղագրական խնդիրների, գոնե, լուծում տալու։ Անշուշտ, միանգամից չեն սպասվել բոլոր կարևոր ուղղագրական խնդիրները, քանի որ փոփոխությունները, եթե պիտի լինին, աստիճանաբար, հետզհետե պիտի լինին, բայց, ինչպիսի էլ լինին գիտական պատրաստությամբ մասնագետների խորհրդի որոշումները, ընդունելի դառնալով մեր դպրոցների և գրագետների համար՝ որոշ չափով վերջ կզենեն մեր այս խառն ուղղագրական վիճակին։ Եվ ուղում ենք հավաստել, որ այդ խորհուրդը ոչ միայն գիտական հողի վրա կկանգնի, այլև աշխարհի յիսնիլ մեր ուղղագրության համար անհրաժեշտ փորձնական դարձությունը։

Իսկ մինչ այդ, ես միայն մի բան կարող եմ ասել, որ մեզինք ամեն մեկն էլ, ինչպես կուղե թող խորհի ու գրի մեր ուղղագրության մասին, բայց հրեք իրեն չհամարի մի անադեմիայի հավասար և ինչ որ ինքը մտածում է ու ճիշտ է համարում, հրեք իրավունք չունի և անմիջապես գործադրելու։

Ավելի լավ է ուղղագրությունը լինի սխալ ու դժվար, բայց միակերպ։ Ես կվերջացնեմ իմ խոսքս ինչով որ սկսեցի. փոփոխություն, իմ կարծիքով, պետք է և կարելի է անել ողջ չափով. բայց եթե որեւէ փոփոխություն պիտի վերացնի մեր ուղղագրության միությունը և մեր երկու գրական լեզուներն իրարուց ավելի հեռացնի, ավելի լավ է, որ լլինի։ Իսկ մեր ամեն՝ իրենց միմի անադեմիա կարծող անհատները՝ փոփոխություններին ուրիշ բան չի վիճակված, բայց եթե մի նոր խառնափնթոր դրություն մտցնել մեր ուղղագրության մեջ։ Միայն հոգևոր իշխանությունների և գրագետների միության ձեռնարկությամբ կազմված բանիքուն մարմնի որոշումը մեզ համար ընդունելի և պարտադիր կլինի։ Իսկ մինչ այդ ձեռք պիտի քաշել ամեն հին ու նոր փոփոխություններից և դառնալ ամանդական ուղղագրությանը։ Այո է ուղիղ ճանապարհը։

Ս. ԱՆՆԻԻՔ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ԸՆԴՆԱՆԵՐ ՍԵՂՐԱՆԵՐ.—1. Ուղղագրության բարեփոխությունը պետք է հիմնվի զարգացական-գրական արտասանության վրա և գրությունը մոտենցիկ արտասանությանը. 2. Փոփոխությունը պետք է տեղի ունենա լինի, որ բացառություններ չմնան և, ըստ կարելիության, թիվ բառերի գրությունը տարբերվի եղանակից. 3. Փոփոխությունը պետք է հիմնավորված լինի հնչարանական տեսանկյունով և պատմականորեն, միաժամանակ և, ըստ կարելիության, բավարարություն առ զավաստական արտասանությունը:

1. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Օ և է տառերը գուրա մզիկ այբոնարանից և ամեն զեղանակ օ և է հնչյուններն արտասանվել օ և է տառերով, որոնց անունները պետք է արտասանել ալ թն իբրև վո և յն երկուսու վանկեր, այլ սեղանական ձևով, իբրև օ և է պարզ ձայնավորներ:

1. Ո և է տառերը ըստ բառերի մեջ, տառացի արտասանության, այնպիսի գրական լեզվի մեջ պահում են իրենց սեղանական բառ ու կարգ և է հնչյունները: Այդ տառերի ուղղագրությանը ենթակա չի եղել փոփոխություն, և այժմ էլ գրադի գրության մեջ փոփոխության մտքներու համար ոչ մի հնչարանական և պատմական հիմունք չունենք: Օ և է տառերն, ընդհանրապես, թե՛ հնչարանական և թե՛ գրության կողմից ենթակա են եղել փոփոխության: 1 ժամատը նույնիսկ արդյունք են այդ փոփոխության: Այն է՝

ա) Սեղանական տառ (—au) երկրաբարառը դարձել է երկար ու փակ օ պարզ ձայնավոր, տարբեր՝ հին կարճ ու քաջ ու (—o) ձայնավորից: Եստի միջին դարերում հարկավոր են համարել այս նոր հնչյունի համար նոր օ տառը մտցնել մեր այբոնարանի մեջ: Հետագայում այս միջնադարյան օ ձայնավորը շարունակելով իր հնչափոխությունը՝ այժմ նույնացել է հին ու (—o) ձայնավորի հետ: Մեր այժմյան գրության մեջ, սակայն, ընդունված է միջնադարյան ուղղագրությունը՝ աւ—օ, որ պետք է համապատասխանում մեր արդի արտասանությանը, որից և առաջանում է նույն ձայնավորի համար երկու տառի գործածության զոմարությունը: Եթե միջին դարերում առաջին՝ աւ—օ հնչափոխության պատճառով նույնիսկ նոր տառ են մտցրել մեր այբոնարանի մեջ, այժմ նույն հնչյունի երկրորդ՝ օ—ա հնչափոխության պատճառով մենք չպիտի զոմարանանք միջնադարյան օ տառի տեղ, որ այժմ համապատասխան չէ մեր արտասանությանը, ու (—a) տառը դրել, մանավանդ որ այս երկրորդ շրջանի օ—ա հնչափոխությունն այդ ուղղութիւնով արդեն աչդի է մեր ուղղագրության վրա, և որով թվով բառեր ու ամանցներ

* Եթե նույն հեղինակն հոգնածը ժմեր ուղղագրության մասին, ավարտառ, ամառգիր, 1912, № 11 և 12:

արդեն գրում ենք ոչ թե միջնադարյան օ տառով, այլ հին ո (առ) տառով, այսպես օրինակ, հին՝ աստի, ասի, միջնադարյան՝ աստի, օնի, նոր՝ օստի, օնի (զրական-գարոցական արտասանությամբ այժմ՝ վոստի, վոնի). հին՝ ծնալ, միջնադարյան՝ ծնօղ, նոր՝ ծնաղ: Այսպես և ող վերջավորությունն ամեն դեպքում՝ գոռղ, զնացող, զարմացող և այլն, որ այլևս չենք գրում գոռղ, զնացող, զարմացող: Նույնպես և կան գրվածներ և գրողներ՝ քող, քա-
փոր, լոս, մարութ, շոշափնի, ոճառ, ճոճնի, ողիկ, ողակ, որորան և այլն, փոխանակ՝ քօղ, քափօր, լոս և այլն: Մեզ մնում է միայն մեր ուղղագրու-
թյան բարեփոխության այս պատմական ընթացքը, որ համապատասխան է մեր այժմյան արտասանությանը, ընդհանրացնել օ-ով գրվող բոլոր բա-
ռերի վրա, օ տառի փոխանակ գրելով ո:

բ) է տառը սկզբնական ձևի է երկար կամ փակ ե(զ) հնչյունի նշանա-
գիր և կամ հաճախ փոխանակել է ե+յ միություն. բայց այժմ դա էլ կորցրել է իր սկզբնական հնչյունը և արտասանվում է ինչպես հին կարճ ու բաց հ
(=e, ջ) տառը, որից առաջանում է նույն ձայնավորի համար երկու (ե, է) տառերի գործածության դժվարությունը: Ընդ քանի որ հ տառն ամեն դեպ-
քում պահել է իր սկզբնական հնչյունը, և է տառի հնչյունն է վերածվել և
տառի հնչյունին, պետք է, հետևելով այս հնչափոխությանը, է տառի փոխա-
նակ գրել ն:

է-ով գրվող բառերի մի մասի է տառով գրությունը լույ գրաֆիկ նմանու-
թյամբ է առաջ եկել, փոխանակ ե-ով գրության, ինչպես դանդում են ձեռա-
գիրների մեջ՝ մեկ, գմբք, գբր, ծակոտեմ, տեղություն, քե, եքե և այլն:
Այսպիսի բառերը ե-ով գրելով՝ լույ հին ուղղագրությունն ենք վերականգնա-
լինում:

Ի՞նչ է ասում ինքը՝ Ս. Մ.-ը մեր յ տառի հնչյունի մասին հենց իր հոգվածի մեջ։ Ժճ գիրքը կիսաձայն է (ձայնավորական բաղաձայն**), նախընթաց ձայնավորի հետ նա ձուլվում, միանում է և հնչվում իբրև երկբարբառ։ Եկան այ, ոյ, ույ երկբարբառներ, որոնց կարող են հետևել թե՛ բաղաձայններ և թե՛ ձայնավորներ. հայ, հայց, հայերեն, հայություն, Հայաստան, հայոց, հայի, գոյ, գոյր, գոյական, գոյություն, այսպես և՛ ծառայական, ծառայություն։—Այստեղից պարզ երևում է. 1. Ս. Մ.-ը բառամիջում և բառավերջում նույն հնչյունն է ընդունում յ տառի համար և միակերպ երկբարբառ է համարում այ, ոյ կապակցություններն ամեն տեղ՝ հայ, հայց, Հայաստան։ 2. Այդ յ հնչյունը, քանի որ բոլոր դեպքերում երկբարբառ է կազմում (հայ, հայց, Հայաստան), կիսաձայն է (ինչպես որ կոչում էլ է Ս. Մ.-ը), այսինքն՝ բաղաձայնական ձայնավոր. և որովհետև նա նույն հոգվածի մեջ մեր այ, ոյ, ույ երկբարբառները հավասար է դնում ուսանողների ձձ, օձ, Կձ երկբարբառներին, իսկ այս վերջինների մեջ ն տառի հնչյունը, ըստ ուս լեզվաբանների, ձայնական կամ անվանակային ի ձայնավոր է, կնշանակե՛ Ս. Մ.-ն էլ մեր կիսաձայն յ-ին տալիս է անվանակային կամ բաղաձայնական ի ձայնավորի հնչյուն։

Ց տառի այս հնչյունը, որ այժմ այդ տառն ունի բառամիջում և բառավերջում, Ս. Մ.-ը նույն հոգվածի մեջ համարում է սկզբնական՝ այ պի սկզբնական կիսաձայն հնչյունը։ և յետ = yet, յեսան = yesan և մի երկու այդպիսի բառերի համար նա գրում է. թե՛ սթոդոփոփը բառասկզբի յ-ն... արտասանում է բուն յ-ի հնչյունով։ Այստեղից պիտի նշրականացնենք, որ երբ կարծիքով մեր կլասիկ լեզվի մեջ յ տառն ունեցել է ամեն տեղ նույն հնչյունը, ինչ որ այժմ ունի բառամիջում։ Միևնույն ժամանակ, ինչպես կարելի է

* Fr. N. Pinck, Lehrbuch der neucastamen, Littcratursprache, 1902.

** Այս «կիսավորական» բաղաձայն տեղեկը ինձ համար հարկադրում է. երևի, ուրիշների քաղաձայնական ձայնավորը նշանակությունը է գործածված։

տնանէ, Ս. Մ.-ի կարծիքը մեր չ տառի տարբերակն մտնի «ընդ մի տարբերակում որիշնների՝ Մեյնի և Մառի ընդունածից. բայց...

Բայց եւ իր հոգիւմով վերջում, մոռանալով «բուն յ-ի Վեյլունը», «յ գրի սկզբնական կիսածայն հեյլունը», որ «:» «հոգի իրանայի և (հարաւորական թյան համար, սխառակգրում գտնվող այդ լա, լու, լա) կապակցութեանը նույնպէս շնն և լին էլ հոգի կրկնաբարաներ... նախ՝ որ եւ հայտնում է, թէ յատակ-հատակ, յատակ-հատակ և նման բառերիցների յա, լու, ա կապակցութեաններն այժմ երկարաբար լին, դառնով էլ «:» մի փոքրիկ գլուտ է անում, բայց միաժամանակ և կարծել է տալիս, յն իբր ես՝ Աբեղյանս, ասած լինեմ, թե, օրինակ, յատակ բառի սկզբի յա-հա կապակցութեանը երկարաբար է: Ս. Մ.-ը շատ լավ գիտեմ, որ եւ բառասկզբի յա-հ եմ համարում. իսկ կլասիկ լեզու... Բայց շարունակե՛ք. «և լին էլ հոգի երկարաբարաների տառադարձութեան մեջ՝ Յակոբ, Բուլա, Յովսէփ (ռուսերեն հռովանկ լаков, луда, лосиф)»: Այսպէս էլ բուն հայերեն բառերի մեջ. նիկի տանէ՜ հեյլունին իբրեւ համապատասխան գրվում էր «յազգէ», պարզ է, որ «ս» կարգացվում էր իբրեւ սուղ տիպագէ. «յառաջ» սուղ տիպագէ և ոչ թե իբրեւ՝ եազգէ, եառաջ: Ահա՛ մեծ գլուտը: Յ տառի Վեյլունը բառասկզբում լի հոգի յատններեն յ, կիսածայն յ, բաղաձայնական կամ անձանկային է, որս. «կիսածայն, կամ բաղաձայն եկրոպական յ (գերման. յ)», ինչպէս ընդունում են վերնում հիշված քոլոր լեզվաբանները, և ոչ էլ անհամայն-ձայնաւորակութեան քաղաքական, ինչպէս Ս. Մ.-ն է մի քիչ հետո ասում նույն հոգիւմովի մեջ, այլ հոգի է ստուգ, սզվածա ի ձայնավոր: Բայց ինչու է սուղ ու սզված, դա հոգի է վանկային, առանձին վանկ է կազմել. յա ոչ թե մի վանկ՝ յս կամ ya, ia, այլ երկավանկ՝ i-a, յառան բառը ոչ թե երկավանկ՝ jatak կամ yatak, այլ եռավանկ i-a-tak, այսպէս, արեմն, ըստ Ս. Մ.-ի՝ մեր հին լեզվի մեջ բառասկզբում «-ն» հոգի է սուղ-կարճ ի մի աջակցար մի գլուտ է, որ պիտի ուղարկել այն աշխարհը Հիւրըմանին, որ հարուխում առնելով՝ ուղղի իր քերականութեան մեջ Յիսուս, Յակոբ, Յովսէփ, Յովհաննէս, Յորդանան և նման տեղանքների գրութեանը յ-ով, yordanan և այլն փոխի i-ordanan. նույնպէս և հայերեն բառերի՝ յառնեմ, յարգեմ, յիսան, յառադարձի կիսածայն յ-ով՝ yarnem, yargem, ylsun, այլ i-arnem, largem, lisun:

Եվ ինչով է ապացուցում Ս. Մ.-ն իր այդ գլուտը, «Այդ երևում է հունարենից անցված անունների տառադարձութեան մեջ: Բայց հունական այբբենարանի շարքի մեջ մեր յ տառի համապատասխան տառ չկա, և ընդհանրական, հունական յ տառին համապատասխան է նույն շարքի մեջ մեր ի տառը. ուրեմն՝ տառադարձութեանը պիտի անենին՝ Իակոբ, Իովսէփ. բայց գրել են՝ Յակոբ, Յովսէփ: Այդ ոչինչ, Բայց Մեյնի մեր յ տառը, որի համապատասխան տառ չկա հունարենում, դնում է, ինչպէս տեսանք, բառասկզբում համապատասխան ստորեկան մի տառի, որ նույն բաղաձայնական յ հեյլուն ունի՝ Յովնան—Yovnan: Այդ էլ ոչինչ. ս. Մեսրոպը մեր յ տառը, որ հունարենում չկա, ասորերենից չէր կարող առնել. դա համապատասխան է հունարենի յ տառին, բայց միաժամանակ և մեր ի տառն է համապատասխան հունարենի յ տառին: Ուրեմն՝ ս. Մեսրոպը հունարենի մի յ տառի դիմաց առ-

տնոյ կերպով երկու տառ է մտցրել մեր այբոնարանի մէջ և իզուր զնացել է նա Ասորիք՝ մեր այբոնարանը կատարելագործելու նպատակով...

Դարձյալ ինչով է ապացուցում Ս. Մ.-ը մեր յոտակ բառի հոսմանը 1-2-ի տակ լինելը։—«Ռուսներն հոսմանը 1akov, 1yda, 1acnфa. Քսաներորդ դարի ռուսներնով ապացուցել հինգերորդ դարի հայերենի արտասանութիւնը... Արդէնք չէ՞ր հաճի Ս. Մ.-ը ռուսներնով ապացուցել նաև, որ Յակոբ անվան վերջի ր տառն էլ վ է արտասանվել 5-րդ դարի հայերենում. իսկ Յովսէփ անվան մէջ է տառը ի է արտասանվել, փ տառը՝ ֆ. չէ՞ որ ռուսներենի 3=վ, 3=ր, ֆ=ֆ, ֆ=ֆ, ֆ=ֆ, ֆ=ֆ լզիտեմ՝ ռուսներենում 1akov—Яков, 1yda—Юда(изм) երկավանկ թն հոսովանկ են արտասանում, բայց ռուսներն իրիսանակ նա պիտի առնէր զոնն հին բուլղարերեն կամ հին եկեղեցական սլավոնական լեզուն, Ահա թն ինչ ենք կարգում ռուս. յ տառի մասին Դարձյալ բառարանի վերջին տողոված հրատարակութեան մէջ, որ կատարված է պրոֆ. Бодуэн-де-Куртене-ի խմբագրութեամբ. «Հին եկեղեցական սլավական այբոնարանում յ տառն ունէր քաղտնայն ճնշում»՝ հաջորդ ձայնավորների հետ միացած, ինչպես որ այժմ ռուսներն ի նշանակում է մի նույն-պիսի քաղտնայն ձայնավորներից հետո. հետևաբար այս հին 1-ն կատարում էր մոտավորապես նույն դերը, ինչ որ այժմյան լատինա-գերմանական կամ լատինա-սլավական այբոնարանի յ տառը յ տառի պատմական աղբյուրն է հունական 1 («iota», «iota») տառը...

Հիմա, ի՞նչ է կարում Ս. Մ.-ը, հին եկեղեցական սլավական այբոնարանի համեմատութեամբ՝ մեր յ-ն Յակոբ, Յուդա, յակннз բառասկզբում հաջորդ ձայնավորների հետ միացած ի՞նչ հնչյուն ստացաւ։—Դարձյալ ռուսներն ի տառի, մոտավորապես լատինա-գերմանական յ տառի, որոնք առանձին վանկ լնն կազմում և նույնիսկ քաղաձայն են կոչված, հարկաւ իրենց ֆունկցիայի նկատմամբ, Հետևաբար և մեր յայտակա, յյազգէ, յյառաջ բառերը լնն արտասանվել իբրև նախվանկ ստուղ իռզգէ, յիստակա, յիստալա, ալլ երկավանկ յatak կամ 8atak, երկավանկ յazge կամ 8azge:

Այսպես, ուրեմն, Ս. Մ.-ի այդ ամբողջ գոյտը մի կողմ և, իսկապես, ինչպես կտեսնենք, ամբողջով:

Ամփոփելով վերևում գրվածները՝ տեսնում ենք, որ 1) մեր յ տառի հնչյունը հին լեզվի մէջ ամեն տեղ, իսկ նոր լեզվի մէջ՝ բառամիջում և բառավերջում (բառասկզբի հնչյունութեամբ առաջ եկած և արտասանութիւնը մի կողմ թողած), համարվում է ձայնավոր ի կամ բառասկզբի թթերաւ և՛. (ե—իէ հնչյունի սկզբի ի—ն), լատիններն յ, բաղաձայնական ի (y). կիսաձայն ի=աւս. Ի, անվանկային ի (երկարբառների մէջ), անվանկային փակ ի երկարբառների մէջ, որոնք ընդհանրապէս նշանակութիւնն ունեն. 2) նոր ձայնավորի մէջ և բառասկզբում՝ «կիսաձայն y, տարբեր երկարբառների մէջ նշած հնչյունից (ըստ Հյուբշմանի): նոր զրական լեզվի մէջ, սակայն, ըստ Աճառայնի, երկարբառ լկա, և յ-ն ունի թվորոպական y (գերմ. յ)» հնչյունը բառամիջում և բառավերջում, իսկ ըստ Ֆինկի՝ միայն բառամիջում երկու ձայնավորների միջև գերմ. յ կամ յյ, այսինքն՝ մի փակ յ և մի յ հնչյունների միութիւն: Ս. Մ.-ն էլ նոր լեզվի մէջ մեր յ-ն թն՝ բառամիջում և թն՝ բառավերջում համարում է կիսաձայն Ի=բաղաձայնական կամ անվանկային ի:

Սա սուրի կարծիքի լնն եղել մեր յ տառի հնչյունի մասին, քան վերևում

գրվածները, Որովհետև Ս. Մ.-ն այդ առթիվ իմ Ժողովուրդների և Ուղղա-
գրությունների հիշում, ես կսկսեմ իմ Ուղղագրությունը, իմ Վերջին լեզվի
ուղղագրությունը, տպված՝ Թիֆլիսում, 1892 թ. «3 տարի երկու տեսակ
է արտասանվում. բառի սկզբում բաղաձայն է՝ Երևումով, իսկ բառի մեջ,
ձայնավորից հետո, կես-ձայնավոր է՝ ի տարի հնչյունով»։ Այս քանակությամբ
երկու ձայնավորների բաղադրությունն է իրեն մի վանկ, «Մեք որդի գրե-
կան լեզվի մեջ ներդրողները կազմելու համար ի Շվյունն է ժողովում իրեն
կես-ձայնավոր, բայց ի տարի փոխանակ գրվում է ի կես ձայնավորը և
այլն (եր. Ե հոսն)։ Նույնը և իմ «Աղբարհարարի քերականության մեջ,
այլ. 1906 թ. «3 տարի բան հնչյունն է կիրառվել ի որ երկուսը և նախորդ
ձայնավորների մեջ կազմում է ներկայացնել ի որ երկուսը և նախորդ
թափ ուղղագրության մեջ գրել մեք, ինչպես և «Աղբարհարարի քերականու-
թյան մեջ գրել եմ համառոտ կերպով նաև հնչյունությունների մասին»։
սեննակ, արդեօք, հիւր բառերի մեջ, ըստ արտասանության, իւ-ն համար
է յն-ի կամ յն-ի, ետ-ն՝ յա-ի, ետ-ն՝ յա-ի կամ յա-ի, իսկ յա-ն՝ յա-ի, կիշ-
նակ, եթե ես 1892 թ. ուղղագրության ռեֆորմ առաջարկեի, նույնը պիտի
ասեի ներկայբառների մասին, ինչ որ 1921 թվին Բայց ես այդ շին անում,
որովհետև ուղղագրության փոփոխությունը համարել եմ միշտ իշխանության
գործ։

Ուրիշները, «եկ-ի, մասնագիտական գրվածքներում գործադրել են
այդ՝ Այսպես, արիևակ, Աճառանը մեր յ տարի հնչյունն ընդունելով իրեն
վերջույ. Կ (գերմ. յ)՝ այդ առում էլ գրել է 1902 թ. «Թուրքերենն փոխառյալ
բառերն գրել մեջ՝ յախու-եախու, յալ-եալ, յեթի-եթի, յուվ-իսվ
կամ եուվ, յոխուլ-եօխուլ և այլն։ Այսպես և իր «Բարբառագիտության
մեջ, ամեն տեղ, թե՛ հայերեն և թե՛ օտար բառերը՝ լեւ-եւ, լուսնակ-
լուսնակ և այլն։ Նույնպես Գ. Աստվածատրյանը (Աստուր) Սայաթ-Նովայի
նոր երգերի մեջ («Աղագրական հանդես», 1903 թ., նաև՝ Սայաթ-Նովայի,
1914 թ.) բառերի սկզբում գրելով յ՝ առաջարկում է «կարգալ իր նախնական
նշանակությամբ, այսինքն՝ ինչպես լատ. յա և ոչ ինչպես հ. Այսպես, օրինակ՝
նա գրում է. յիս, յար-եար, յաղութ-եաղութ, յարա-եարա և այլն։

Հիմա դառնանք Ս. Մ.-ի «սխալին», այսինքն՝ իրեն թե սխալ է եւ-
յա, իւ-յու դնելը։

Հին եւ, եօ, իւ երկրաբառների գրության փոփոխությունը կատարվել
է հետևյալ հիմունքներով.

1. Հին գրությունները՝ սեննակ, եօթն, արին այլևս չենք արտասանում
գրության համեմատ, իրեն seneak, eothn, arlun, կամ arlwn (w=u կիսա-
ձայնով), այլ արտասանում ենք փոխված ձևով, իրեն senyak, գերմ. senjak,
ռուս. сенѣак, seniak (1 կիսաձայնով) — yothn, գերմ. jothn (կապիտալիզմ
արժև ուս. Ѡѡѡ lothn 1 կիսաձայնով), — erylun, գերմ. arjun, ուս. арѣуѡ,
arlun (1 կիսաձայնով), կամ լատիներեն՝ senjak, jothn, arjun (ան'ս «Առաջ-
նորդ», եր. 3, հոս. 3, «Ջնկուցում», եր. 12 հոս.)։

2. Որովհետև ուղղագրության ռեֆորմի ժամանակ մեր հնչյուններ մի գիր
և մի գրին մի հնչյուն սկզբունքով փոխված հնչյունները պետք է գրել այն
տառերով, որ մեր այբբենարանում սկզբից ի վեր ընդունված են այդ հնչյուն-
ների համար, և

3. Որովհետև կիսաձայնն 1, ʏ, ուս. ձ, գերմ. յ հնչյունի համար ունենք յ տառը:

Ուստի սենեակ, եօթն, հարիւր և նման բառերի մեջ եա, եօ, իւ կապակցութիւնները պետք է գրել այժմյան արտասանութիւն համեմատ յ = ʏ, ձ, ւ (կիսաձայն), գերմ. յ տառով՝ սենյակ, յոթն, հարյուր:

Ս. Մ.-ն այս գրութիւնները համարում է սխալ: Միայն յինչը ցոյց տալու համար՝ նա պետք է մերժեր վերևում դրված երեք կետերից մեկը կամ մյուսը: Երկրորդ կետը նա ընդունում է և այդ հիման վրա ընդունում է՝ գրել՝ զվարթ, նազ, գոխանակ հին՝ զուարթ, նաւ գրութիւններին: Ընդունում է և երրորդ կետը. նա մեր յ-ն իր հնչյունով համարում է, ինչպես տեսանք, կիսաձայն և հապասար ռուսերենի ն տառին: Եզրակացութեւնը մերժելու համար՝ մնում էր, ուրեմն, նրան մերժել առաջին կետը, այն է՝ նա պետք է ասեր, թե սենեակ, եօթն, հարիւր եվ նման քառերը մեք այժմ չենք աւտասանում senyak, senjak և այլն: Եվ իսկապես, նա այս էլ ասում է. բայց ասում է այնպիսի ձևով, որ սովորական ընթերցողը շատ բան չի հասկանալ և միայն այն սպաւորութեւնը կստանա, թե Ս. Մ.-ը շատ խորը բան է ասում, հետևաբար և սենյակ և այլն գրութիւնները սխալ են:

«Եւ, յու, յո երկարորաւները գոյութեւն չունեն մեր լեզվի մեջ», — ասում է նա: Այդ նշանակում է, թե մեր լեզվի մեջ չկան անվանկային կամ բաղաձայնական 1-ով 1a, 1o, 1u (միավանկ) կամ միջանկան կիսաձայն ʏ-ով ʏa, ʏo, ʏu կապակցութիւնները, որոնք և, ինչպես տեսանք, կոչվում են երկարաբառ: Եթե չկան, ուրեմն, մենք սենեակ բառը (նա միայն այս բառն է մերում) կրկնութիւնից խուսափելու համար) չենք կարող արտասանել, հետևաբար և չենք արտասանում իբրև seniak (անվանկային 1-ով) կամ senyak. ուստի և սխալ է յ. որ է՝ անվանկային կամ բաղաձայնական 1, կիսաձայն ʏ տառով գրել՝ սենյակ = senyak, senlak:

Մի բույն ընդունենք թե Ս. Մ.-ը ճիշտ է ասում, թե մեր լեզվի մեջ չկան բաղաձայնական 1-ով 1a, 1u, 1o միավանկ կապակցութիւնները կամ միջանկան կիսաձայն ʏ-ով ʏa, ʏu, ʏo—յա, յու, յո կապակցութիւնները. բայց արդյոք կա՞ն բաղաձայն 1-ով 1a, 1o, 1u կապակցութիւնները. արդյոք սենյակ բառը այժմ գերմ. 1-ով իբրև senjak չենք արտասանում: Այս մասին յուրմ է Ս. Մ.-ը, բայց մենք կարող ենք ճիշտ իմանալ նրա կարծիքը: Փանի որ նա եա, եօ, իւ կապակցութիւնները երկարաբառ է համարում, ուրեմն՝ մի կիսաձայնից և մի ձայնավորից կազմված, և ոչ թե բաղաձայն +ա, օ, ու կապակցութիւններ, և քանի որ գերմ. 1-ը բաղաձայն է, հետևաբար և եա, եօ, իւ չեն կարող լինել 1a, 1o, 1u կապակցութիւններ, և, մենք այժմ չենք արտասանում գերմ. 1-ով՝ senjak, jothn, arjun: Եթե ո՞չ այսպես և ո՞չ այնպես ենք արտասանում, հապա ի՞նչպես: Այս մասին դարձալ լուրմ է նա, բայց մենք կարող ենք դարձալ ճիշտ եզրակացնել նրա կարծիքը: Ըստ Ս. Մ.-ի՝ եա կապակցութեւնը երկարաբառ է. հիմա ո՞ր ձայնավորի հնչյունով է արտաբերվում դրա առաջին բաղաձայնը՝ ե տառը: Մեր ձայնավոր հնչյուններն են ա, օ (o), ու, ը, ի, ե (է): Նա չի կարող ասել, թե սենեակ բառն արտասանում ենք անվանկային կամ բաղաձայնական ա, օ (o), ու, ը հնչյուններից մեկով, իբրև սենեակ, սենեակ, սենեակ, սենեակ. և որովհետև նրա կարծիքով՝ մեր լեզվի մեջ չկա յա = կիսաձայն կամ բաղաձայնական ի + ա կապակցութեւն, ուստի այդ բառը չենք արտասանում նաև

բազմաթիվների հետք, սենյակ—seniak (երկնակ). Մնաց, սպիտակ, միայն
և (և) ձայնավորը: Սերունակի այդ բառի մեջ նա արտասանում ենք, ըստ
Ս. Մ.-ի, կապիկ ձևով, իբրև ea, սենյակ—seniak:

Նույնը նույն ձևով պետք է հետևենք և եօ, իւ երկրաբարառների հա-
մար, որոնք, ըստ Ս. Մ.-ի, արտասանվում են այժմ ոչ թե io, iu (անվան-
կային ի-ով) կամ yo, yu, կամ jo, ju, այլ eo, eu, Սերունի եսթև—eoſhn,
բիր—beur, Բայց beur հին հայերենում գրվում է բեւ, և Ս. Մ.-ը գիտե՞
որ հնչյափոխության պատճառով հետագայում գրել են դեւ—biur—biwr.
և սբ վերջին արտասանությունը և դրա համեմատ գրությունը, ըստ Հյուսիս-
մտերի և ուրիշների, ծագել է հին բեւ ձևից: Այդ արժեք չունի, մենք ասեմ,
ըստ Ս. Մ.-ի, նույնք վերագրակի ենք հին բեւ—beur, արեւ—areun
արտասանությունը: Անշուշտ, անհնարին չէ ասել, կարող է պատահել, որ
մեկը կամ մյուսը որեւէ բարբառի աղբյուրությունը կամ տեղափոխել, որ
տասանելիս՝ լինի beur, ինչպես և seneak: Բայց թե մենք այժմ, ստանալով
կապիկ ձևով եսթ, areun, seneak չենք արտասանում, այլ biur, arun, seniak
(i սենյակենյին), դրան համոզվելու համար կառաջարկեմ Ս. Մ.-ին՝ մի շատ
առեւտն պատրաստ գործիքով փորձել իր սեփական արտասանությունը և իր
անկանդով համոզվել, որ եւ, եօ, իւ երկրաբարառները չենք արտասանում
e (է) ձայնավորով: Իբրև ea, eu, eu, այլ է ձայնավորով՝ իբրև միավանկ ia,
o, iu: Թող նա մեկ կամ երկու մատը դնելով լեզվի առաջամասի վրա՝
լիցիզմ, որ լեզուն բարձրաձայն դեպի վեր՝ առաջաքիճքը, և փորձի արտա-
սանել առաջաքիճային շփական յ բաղաձայնը և առաջաքիճային ի ձայնավորը,
իսկույն կհամոզվի, որ չի կարողանում ո՛չ ի և ո՛չ յ արտասանել, այլ
արտասանում է e (—է) ձայնավորը: Այս թող այդ ձևով փորձի ալ (—աճ)
արտասանել. կհամոզվի, որ մեր սովորական ալ երկրորդադր չի՝ լավում,
այլ անսովոր ձե երկրաբարառը. մի լավ ապացույց, որ մենք ալ երկրաբարառը
կիսաձայն ի-ով ենք արտասանում: Այս թող փորձի դարձյալ եւ, եօ, իւ
երկրաբարառներն արտասանել. նույնպես, կարծում եմ, կհամոզվի, որ մեր
սովորական արտասանության համեմատ եւ, եօ, իւ չի՝ լավում, այլ անսովոր
երկրաբարառներ ea, eo, eu. դարձյալ ապացույց, որ այդ երկրաբարառները
կիսաձայն ի-ով կամ շփական յ-ով ենք արտասանում, իբրև միավանկ
ia, io, iu կամ ya, yo, yu կամ ja, jo, ju: Բայց, գուցե Ս. Մ.-ի՝ այս հա-
սարակ փորձն անաչող անցնի, և նա չհամոզվի եւ, եօ, իւ երկրաբարառ-
ների միավանկ ia, io, iu արտասանության հշմարտությունը: Ուստի շարու-
նակենք:

Ինչո՞վ է նա ապացուցանում, որ մեր լեզվի մեջ չկան յա, յո, յու երկ-
րաբարառներ, այսինքն՝ անվանկային կամ բաղաձայնական յ-ով ia, io, iu,
կամ կիսաձայն յ-ով ya, yo, yu և ոչ էլ յ-ով ja, jo, ju հնչյունական կա-
պակցություններ: Եվ՞ մի հեղինակավոր քերականագետ, հալ թե օտար ազ-
գի, այդպիսի (յա, յու, յո) երկրաբարառներ չի՞ ճանաչում և չի՞ հիշում քե-
րականական գրվածքներում, բացի Մ. Արեղյանից:—Ահա՛ Ս. Մ.-ի ապա-
ցույցը:

Մենք վերևում տեսանք, որ երկրաբարառ տերմինը և՛ ընդարձակ, և՛
ենդ մտքով են գործածում, միևյուրեւ շատերը միավանկ ia, io, iu = յա, յո,
յու, ինչպես և միավանկ ia, io, iu = ալ, ոլ, ու կապակցությունները երկ-
բարառ են դնում, ուրիշները, որոնք թվում և Ս. Մ.-ը հետևելով հու-

նաց և լատինաց հին քերականություններին՝ միավանկ 13, 10, 11 = յա, յո, յու և կապակցությունները երկբարբառ շին համարում, այլ բաղաձայն + 3 0, 11 կապակցություններ։ Մենք վերնում այն էլ տեսանք, որ կան բանա-
ածներ, որոնք միջնական կիսաձայն Կ-ով ԿՅ, ԿՕ, ԿՍ = յա, յո, յու և նույն-
իսկ ԵԿ, ՕԿ, ՍԿ = ալ, ոլ, ուլ կապակցությունները, հակառակ ուրիշներին,
երկբարբառ շին կոչում, այլ համարում են մի բաղաձայնից և մի ձայնա-
վորից կազմված վանկեր, կամ կոչում են կնդծ, թույլ երկբարբառներ։
Ինչի՞ չի կարծում Ս. Մ.-ը, որ իր իմացած «հնդինական» քերականա-
գետները կարող են այն կարծիքին լինել, թե անվանկային 1-ով 13, 10, 11 =
յա, յո, յու կապակցությունները, ինչպես և միջնական կիսաձայն Կ-ով ԿՅ,
ԿՕ, ԿՍ = յա, յո, յու և նույնիսկ ԵԿ, ՕԿ, ՍԿ = ալ, ոլ, ուլ կապակցու-
թյունները երկբարբառ շին, այլ բաղաձայն + ձայնավոր կապակցու-
թյուններ, և հենց այդ պատճառով էլ իրենց «քերականական գրվածքներում» շին հիշում
այդպիսի երկբարբառներ։ Մ. Արեղյանը իր Ուղղագրության և Քերականու-
թյան մեջ անպատճառ դրա՞նք, այսինքն՝ Ս. Մ.-ի իմացած քերականագե-
տներին պիտի հետևեր, և ոչ թե ուրիշներին։ Իմ կարծիքով, որ, իհարկե,
ինչպես տեսանք, շատ նոր քերականագետներին է, երկբարբառ է, ինչպե-
սեմ են ձայնավոր + 1 (անվանկային - 1), ձԻ, ՕԻ, ՍԻ = ալ, ոլ, ուլ, նույնպե-
սեմ և ամեն անվանկային 1 (= 1) + 2, Օ, Ս = միավանկ 13, 10, 11 = յա, յո, յու
կապակցություն։ Ինչպես գրում է Սիվերսը, «վանկերի մեջ հաջորդությունը,
թե արդյոք ձԻ (= ալ) կլինի թե 13 (= յա), դա, բնականաբար, նույնքան
քիչ նշանակություն ունի, որքան, օրինակ, ձԻ կամ 13, ԲԻ կամ 13 կապակ-
ցությունների մեջ 1, Ե բաղաձայնների հո ու առաջ դրվելը։ Իմ կարծիքով,
որ, իհարկե, իմը չէ, երկբարբառ են նաև միջնական Կ կիսաձայնով կապակ-
ցությունները՝ ԵԿ, ՕԿ, ՍԿ և ԿՅ, ԿՕ, ԿՍ, Իսկ Ս. Մ.-ը կարող է հին քերա-
կաններին հետևել։ դա իր բանն է։

Երկբարբառ տերմինն, ուրեմն, քանի որ տարբեր նշանակություննե-
րով է հասկացվում, մի կողմ պիտի թողնել և ասել պարզապես, ինչպես և
ես իմ ժողովուրդի մեջ ասել եմ, թե արդյոք հին եա, եօ, իս կապակցու-
թյուններն այժմ միավանկ 13, ԿՅ, ձՅ, յՅ, — 10, ԿՕ, ձՕ, յՕ, — 11, ԿՍ, ձՍ, յՍ
ևնով ենք արտասանում, թե չէ։ Ս. Մ.-ն, ուրեմն, ոչ թե պիտի ասեր՝ յա,
յո, յու երկբարբառներ շին հիշում, այլ պիտի ասեր, թե եոչ մի հնդինական
քերականագետ հին եա, եօ, իս երկբարբառների համար չի՞ ճանաչում և չի՞
հիշում 13 (միավանկ), ԿՅ, ձՅ, յՅ, — 10, ԿՕ, ձՕ, յՕ, — 11, ԿՍ, ձՍ, յՍ = յա, յո,
յու արտասանությունը մեր արդի գրական լեզվի մեջ. հետևաբար և շինք
կարող հին եա, եօ, իս երկբարբառների գրությունը փոխել յա, յո, յու։
Այսպես դրված խնդիրն արդեն ամենքի համար պարզ կլիներ. և ամեն բն-
թերցող կդատեր, թե արդյոք, իսկապես, ինքը, օրինակ, սենեակ բառը
seniak (երկվանկ) կամ senyak, senjak չի՞ արտասանում, թե՞ ընդհանրապես։

Հիմա Ս. Մ.-ն այս մասին «հնդինականությունը» կպահանջի։ Բայց նախ
մի հարց։ Ես՞տ հնդինականվոր քերականագետներ կան, որոնք պարապել են
մեր նոր գրական լեզվի հնչաբանությամբ։ Չպիտի մոռանալ, որ խնդիրը
մեր նոր գրական լեզվի արտասանության մասին է։ Կարո՞ղ է Ս. Մ.-ը մի
հինգ այդպիսի հնդինականվորի անուն տալ։ Գոյություն չունեցող հնդի-
նականություններն իրենց գոյություն չունեցող աշխատանքների մեջ, անշուշտ,
չէին կարող ասել, որ մեր նոր գրական լեզվի մեջ կան բաղաձայնական կամ

անվանկային i-ով 1a, 10, 10 կամ միջնական + հիսամայի y-ով ya, yo, yu =
յա, յո, յու կապակցութիւններ (թեկուզ երկտարբաներ, եթե, նորիմ
այդ գոյութիւն չունենալներ երկարառ տեղին շեղանակ մամլոյ գա-
ծածներն)։

Բայց եւ մոռացաւ, որ Ս. Մ.-ն իննից հեղինակաւորներ նշանակեր,
և պետք է ինչպէս էլ լիք, գտնուէ հեղինակաւորներ շտաբերի է իմա-
նայ, թե եւ ինքն ինչպէս է գրում իւ հոսմանն ուղղանուն, լատինական
տառերով մի հիմնադրու համար, իմ կարծում, թե արիւ կերպ գրեմ, բայց
եթե այլ երեք ձևերից մեկով՝ Malxasten, Malaxjan, Malaxyan, նմանա-
յում բոլոր նախնիս այսպէս են գրում իրենց ազգանունները։ Ահա մի հեղի-
նակաւոր քերականագետ, որ իր ազգանվան մէջ եւ երկարառան արտասա-
նում է իրեն 1a (միական), յա կամ ya, որ նախնիս տառերով լինում է
յա = Մալխասյան, զիմ մերժում, որ կարող են պատահել լեզվաբանութեան
հետ առումներ, որոնք կարգացած լինելով, որ հիմնադրու համար լեզվա-
րանները եւ = ea են, դնում, առանց իմանալու, ու իսկ նշանակել համար է,
իրենց ազգանվան վերջը տառադարձեն ea ձեռով։ Բայց եւ գոր-
ծայ մոռացաւ, որ Ս. Մ.-ն իննից հեղինակաւորներ է պահանջում։

Անշուշտ, եւ շատ անգամ կարգացած կլինի Վիննայի շէննդէն ամ-
սորեայ հրատարակութեան ամեն մի համարի գլխին լատիներէն տառերով
գրված «Handes amsoryaz, ձիւս նույն բառերը և նույն ձևով գրած, որ
եւ պատահաբար, իրեն օրինակ, քերէ իմ իմ օճաղներդէն սկզբում։ Ան-
շուշտ, Վիննայի միտթարականների մէջ կան լեզվաբան անհատներ, որոնք
գիտեն, որ շտաբաներ, Միյն և ուրիշները ամսորեայ բառը տառադարձու-
մ են amsoreay, հապա ինչու չեն նրանք այսպէս գրել իրենց շէննդէնի գր-
խին։ Որովհետեւ նրանք գիտեն, որ դա արտահայտում է կլառիկ հայե-
րենի արտասանութիւնը, իսկ իրենք ամսորեայ բառն արտասանում են
amsoryaz, ուրեմն, հայերեն տառերով ամսորայ։ Իսկ թե նրանք ya = յա կա-
պակցութիւնը երկարառ կանգնեն, թե կեզծ երկարառ, թե քաղա-
ծայն + լայնաւոր վանկ, այդ արժեք չունի այս դեպքում, այլ այն, որ հին
ամսորեայ = amsoreay բառի մէջ հին եւ երկարառան արտասանում են
իրեն ya = յա և գրում են amsoryaz = ամսորայ։

Ս. Մ.-ը գիտե, հարկավ, որ շտաբաներ իւր, բիւր, անկիւն և նման
բառերի իւ երկարառառ գրում է իւր, եւիւր, անկիւն, ի՞նչ է այս միավանկ
10 կապակցութիւնների մէջ : տառի հնչյունը, եթե ոչ անվանկային կամ
քաղաձայնական է, այսինքն՝ մեր յ տառին հատուկ կիսաձայն ի հնչյունը։
Միյն իր սկիւսիկ հայերենի համեմատական քերականութեան մէջ (եր. 27)
գրում է, թե եօթն բառի մէջ եւ կապակցութիւնն արտասանվում է քարբա-
նային ձևով 10a: Նա իր շէնն հայերենի դասագրքի մէջ (եր. 15) ասում է,
թե բեա (ea) երկարառառ անվանական արտասանութիւնն է 1a, օրինակ՝
լեռանա = larn, ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը, ի՞նչ է այդ միավանկ 10, 1a կա-
պակցութիւնների սկզբի անվանկային կամ քաղաձայնական ձայնաւորը, եթե
ոչ քաղաձայնական է = յ, ուրեմն, հայերեն տառերով 10 = յո, 1a = յա, ի՞նչ
է կարծում Ս. Մ.-ը, ի՞նչ կարող են լինել երկու ձայնաւորից կազմված 1a,
10, 1u, = յա, յո, յու միավանկ կապակցութիւնները, երկարառան են դրանք
այդ տեղիին ընդարձակ իմաստով, թե՛ ոչ։

Մասը մեր յ-ն տառադարձում է, ինչպէս տեսանք, y-ով = զ-ով։ Նա

իր սէին հայերենի քերականութիւնն մեջ (եր. 18) գրում է. «ծրկարառաներ են նաև ես և ետ (— եօ), որոնք զուգար կերպով կարդացվում են ya, yo (ուրեմն—յա, յո—Մ. Ա.)» Հիմք կա ետ-ի այսպես (այսինքն՝ yo) կարդացվելը մի քանի դեպքերում հին համարելու թայց այսպիսի արտասանութիւնը յուրացված է նոր հայերենի նորմաներից. դա կապված է ընդհանուր ձգտման հետ՝ հին ե (—e (լատ.) հելլոսը սիտիւնու 1 ձայնավորի. որ իր հերթին, գտնվելով ուրիշ ձայնավորի առաջ, թուլանում և լսվում է ինչպես կիսաձայն j=y (է)»։ Մտան, ուրեմն, ասում է, թե ես, եօ երկարաբառների սկզբի ե ձայնավորը դարձել է կիսաձայն j (—y, է). անհեղ, եօթն բառերն, ուրեմն, ըստ Մատի՝ արտասանում ենք կիսաձայն j-ով՝ «ենյակ, յոթն—senyak, yothn, ասա. сенѣак, ѣотн» Ս. Մ.—ը լավ տեսնում է, որ այսպես ասողը Մ. Արեղյանը չէ, այլ Մատը. թեպետև Մ. Արեղյանն էլ Մատից տասներեք տարի առաջ, 1892 թ. իր սէայոց լեզվի ուղղագրութիւնն մեջ (եր. 7) նույնն ասել է, թե մեր արդի գրական լեզվի մեջ «եա, եօ, ի՛՝ անհեղ, արդեօք, հիւր բառերի մեջ եա-ն հալսասար է յա-ի, եօ-ն՝ յո-ի, կամ յօ-ի, իւ-ն՝ յու-ի» Անշուշտ, Մատը հեղինակավոր քերականագետ է, և նրան գոնե պիտի հաժատա Ս. Մ.—ը։

Հր. Աճառյանը, ինչպես տեսանք, արդի գրական լեզվի մեջ երկբարառներ, իբրև ձայնավոր+ձայնավոր կապակցութիւններ, չի ընդունում, ուստի «Տէայոց գրերը» գրքի մեջ (եր. 328 հտ.) գրում է. «Արդի լեզվին մեջ եա կհնչի yա, այսինքն՝ իբրև մեկ բաղաձայնի և մեկ ձայնավորի բաղկացած ձայնախումբ, ինչ որ երկբարբառ չի նշանակեր»։ Բայց նա անմիջապես սահմանափակում է իր ասածը արեւելյան հայերի նկատմամբ. «Առող հանդերձ եա ունի մեր մեջ դանազան հնչյուններ. այսպես՝ ազատութեմ կհնչի արեւմտյան հայոց մեջ azadut-yan, արեւելյան հայոց մեջ՝ azatu-tian, տեառն երկուքին մեջ ալ հալսասարապես (t)iaren, բայց սեալ կլա seav, իսկ լեառն կտառանի լեառն և լիառն հնչյուններուն մեջ, ըստ այսմ՝ եա երկբարբառին արդի հնչյուններն են ya, ia, ea, Առաջինը (այսինքն՝ եա—ya արտասանութիւնը) ընդունելի չէ հին լեզվին համար, որովհետև այս պարագային հարկ կըլլար գրել յա, ինչպես ունենք ճակոթ, յամոթը։ Այսպես, ուրեմն, ըստ Աճառյանի՝ արեւմտյան հայերը հին եա երկբարբառն արտասանում են y-ով (=գերմ. j-ով), իբրև ya—ja, իսկ արեւելյան հայերը՝ i ձայնավորով, իբրև ia (միավանկ)։ Ի՞նչ է այդ ya, ia (միավանկ) կապակցութիւնը, եթե ոչ յա։ Իսկ թե Աճառյանը այդ երկու ձայնավորից կազմված միավանկ ia հնչյունական կապակցութիւնները երկբարբառ կանվանի թե բաղաձայն+ձայնավոր վանկ, այդ դարձյալ արժեք չունի այս դեպքում։ Այժմ տեսնենք՝ ինչ է ասում Աճառյանը իր շրթաբառագիտութիւնն մեջ (եր. 16). «Զրական լեզուն, առհասարակ, երկբարբառներուն հին գրութիւն ձևը պահած է, բայց անոնց տված է այնպիսի արտասանութիւն մը, որ երբեմն գրաբարին կհամապատասխանեն, երբեմն՝ ներկա բարբառներուն և երբեմն ալ՝ ոչ մեկին և ոչ մյուսին» Ահա՛ անոնց ձևագիտութիւնն համառոտ պատկերը (եա բերում եմ այստեղ՝ ինչ որ մեզ հարկավոր է)։

Զրաբար

ալ

եա

եալ

Նոր գրական լեզու

ալ

լա

լա

Եվ Անաույանն իր շքաբարասագիտության մեջ ամեն տեղ այդ յ—Y(յ)
հնչյունը յ տառով էլ գրում է։ Այսպես, օրինակ, իր անունը գրում է՝ Հրապյա
(հր. 256), նույն տեղում հնչյունն գրում է հնչյակյան, ուրեմն՝ Հրապյա
Անաույան. նույնպես՝ լուանյակ, քրիստոնյա, յոթ (= եօթ. հր. 154, 126) և
այլն. այլն ստացազգի բառերը՝ խէրյալ, յադ, յարալու և այլն. այսպես
նաև՝ յէս (ես), յէտ (չես), յէրբ և այլն։

Յր. Ֆինկը իր Երանելյան ետր գրական հայերենի զասագլխի մեջ (հր.
8 հտ.) դնում է՝ եա—յա, եօ—յօ. էւանը—էյէու. եօթն—յօթնը. Բարգա-
ձախից առաջ իւ—յւ, բնական կամ խոսակցության ժամանակ, բախն, բա-
ցի ք տառից առաջ, և ուլին վերջավորությունից, գրեթե միայն ն, մանա-
վանդ ն-ից և ս-ից հետո, օրինակ՝ Բին բանալոսություն և այլն ժամանակ
(beim Vortrag etc.) sjun, քն չէ՝ մեծ մասամբ սնո, քեզակուտն, օրինակ,
գիւղ՝ միշտ քլուցիս։ Ֆինկն իր այս գիտազգությունը ուրեմն էլ, անցնալու, այն-
պիսի մարգկանը ընտանեկան խոսակցության ժամանակ, որոնց մայրենի
բարբառի մեջ (ինչպես Ղարաբաղի, Վանա, Կ.-Պոլսի) կա և հնչյունը, քն
չէ՝ մայրի մեծ մասն այդ հնչյունին նույնիսկ վարժվել զովպարանում են
ֆրանսերենն ու գերմաներենն սովորելիս։ Բայց և այնպես նա էլ, իր գրեթե
առաջարանի մեջ, հայտնում է, որ լատ բառեր միայն յս ձևով են արտասա-
նում, իսկ բանախոսության, քարոզի, հասի և այլն ժամանակ, երբ մտնա-
գրական լեզվով են խոսում, նույնիսկ Եին բառն արտասանում են սլու, և
միայն, ինչպես հակառակ խոսողի կամքի և առանց նրա գիտակցության՝
բարբառային ձևով սնո են արտասանում։

Այսպես, ուրեմն, կարծեմ, բավարարվեց Ս. Մ.-ը. գտնվեցին բավական
թվով ճերակնազգեսներ, Հյուսիսյան, Մեյն, Մառ, Անաույան, Ֆինկ հայտ-
նում են, որ ես արտասանվում է իբրև 1a, 2a, 3a. եօ արտասանվում
է իբրև 10 (միավանկ), 20, 30, 40. իսկ իս արտասանվում է իբրև 10 (միա-
վանկ), 20, 30, 40, որ հայերեն տառերով լինում են՝ յա, յո, յու, ըստ մեր
յ առաի հնչյունի։ Ես, բացի սրանցից, էլ ուրիշ հեղինակավոր ճերակնա-
զեսներ լրիտեմ, հալ քն օտարազգի։ Բայց քն սրտեց յա—1a (միավանկ),
2a, 3a, 4a կապակցությունը երկրարքառ կանգանեն, քն չէ, այդ հետաքրքիր
էլ չէ այս դեպքում։ Միայն հետաքրքիր է, քն ինչու՞ Ս. Մ.-ն իմ սկսազ-
նորդն քննելիս, փոխանակ նա, եօ, իս երկրարքառների արտասանության
մասին խոսելու՝ Եղուպոսի լեզվով ասում է, քն յա, յո, յու երկրարքառներ
գոյություն չունեն հայերենում։ Ըստ Անաույանի՝ եա, եօ, իւ, ալ, ոլ, ույ
երկրարքառներ էլ գոյություն չունեն մեր գրական լեզվի մեջ, բայց ըստ
Ս. Մ.-ի այս վեց երկրարքառները գոյություն ունեն։ Այս տարբեր հաս-
կացողության պատճառը պետք է որ իմանար նա և լրեկներ թերկարքառ
տեղեմիների ետևից։ Եվ վերջապես՝ Ս. Մ.-ը գրելով ուղղագրության ուղեգրի
դեմ՝ պետք է որ նեղություն կրեր առաջուց ծանոթանալու հեղինակավոր
հնչյունների տարբեր կարծիքներին թերկարքառ տեղեմիների նշանակու-
թյունների մասին, ինչպես և հեղինակավոր ճերակնազգեսների կարծիքին՝

* Իւ—ֆրանս. ւ, գերմ. ն, իսկ իւ—յւ. վերջինս, ինչպես և ասում ենք Կ. Պոլսի գրակ-
նում՝ իւղ, սիւն և նման բառերի մեջ։ Ս. հնչյունն անձնազ քարոսների տեղեկությունը՝ այդ
հնչյունը պետական է լսել նաև արևելյան գրական մեջ.—Մ. Ա.

մեր հա, հօ, իւ երկրարքառների արդի արտասանութիւն ժամին, որ է իա, իօ, իւ (միավանկ) կամ յա, յօ, յւ, յա, յօ, յւ: Իհարկէ, ամենից լավն այն կլինենր, որ նա ինքն, առանց ուրիշ հեղինակավորների օգնութիւն, իբրև մի հեղինակավոր քերականագետ, իր սեփական լսողութիւնով ըմբռնած լինենր հա, հօ, իւ երկրարքառների այժմյան արտասանութիւնը: Բայց, երևում է, որ նա տեսողութիւն տրիպի անձնավորութիւն է. միավանկ իա, յա, յօ հնչյունի հա—հօ գրութիւնը, երկար տարիների ընթացքում այդ հնչյունական կապակցութիւնը միայն հա ձևով գրված տեսնելուց, այնպէս պինդ սեռոված է նրա գիտակցութիւն մէջ, որ նա չի կարողանում հա գրութիւն կաշկանդանքից ազատվել և այդ երկրարքառի իսկական հնչյունը և արժէքն ըմբռնել, ինչպէս ճիշտ ըմբռնել են Մենք, Մատ և ուրիշները: Նա, անշուշտ, մենակ չէ. նրա նման ուրիշներն էլ կան: Բայց ուրիշները համեմատաբար հեշտութեամբ, վերջիվերջոյ, ըմբռնում են, որ հա և յա արտասանութեամբ նույն են, այսինքն՝ միավանկ իա, յա, յօ, որովհետև այդ ուրիշները գրութիւն ժամանակ, առանց գիտնականութիւն րանեցնելու, պինկատում են՝ ծառա—յա—կան, հրամա—յած և այլն, որով և նկատում են, որ յա գրութիւնը նույն հնչյունն ունի, ինչ որ հա գրութիւնը: Բայց Ս. Մ.-ն, ինչպէս կտեսնենք, արվեստական կերպով յուրացրել է և տարիների ընթացքում գործադրել է միայն ծառա—կան, հրամա—յած բաժանումը. ուստի և ամբիջ ևս սեռոված է միայն նրա մէջ հա պատկերը, որ արգել է հանդիստնում նրան՝ այս երկրարքառի այժմյան իսկական արժէքն անձամբ իմանալու: Ուստի, ամբիջը չի լինի, եթէ այստեղ զենք հեղինակավոր հնչաբանից հետևալով.

«Մի որն է երկրարքառի (կամ թի կիսաձայն—ձայնավոր կապակցութեան) իսկական արժէքը որոշելու առաջին պայմանն է ճիշտ որոշել նրա բաղադրիչները, այսինքն՝ այն ձայնավոր հնչյունը, որով սկսվում է երկրարքառը, և այն ձայնավորը, որով վերջանում է... Բաղադրիչների որոշումը, սակայն, առհասարակ քաջական մեծ ենթակայական զմարտութիւնների է հանդիպում. որովհետև մենք, քանի որ գրութիւնը հա է միայն խոսված երկրարքառների դարգացումից (այսինքն՝ հնչյունները փոխվել են, իսկ գրութիւնը հինն է միայն), երկրարքառներին մեծ մասամբ սովորաբար բոլորովին ուրիշ բաղադրիչ մասեր ենք վերագրում, քան իրոք կան... Այսպէս, զոնք Գերմանիայի շատ կողմերում, գրութիւնն մեջ 1-ով և 2-ով վերջացած երկրարքառների մեծ մասը արտասանութիւն մեջ, իբրև երկրորդ բաղադրիչներ, ունեն Ե, Օ. օրինակ՝ ձի (ei) արտասանվում են իբրև ձԵ... Նմանապէս և ձայնավորի առաջից ընկնող կիսաձայնի նկատմամբ: Թեպետև քուցե այս երկրորդ գրութիւնն մեջ ևս 1 և 2 ձայնավորներն են ամենից հաճախ իբրև անվանկային գործածվում, բայց և այնպէս նույն ֆունկցիայով բաղադրանալով նաև ուրիշ ձայնավորներն են երևան գալիս, ինչպէս Ե, Օ (ԵԵ, ՕՕ) ... Վերջի և սկզբի իսկական հնչյունը ճիշտ լսելը, կամ այդ հնչյունին հատուկ արտաբերութեան տեղի վրա երկար կանգ առնելով՝ այդ հնչյունը լսելի դարձնելը, պահանջում է քաջական շատ վարժութիւն, մինչև որ մարդ սովորում է բոլորովին ազատվել գրութեան պատկերի դարձեցրած և երկարատև սովորութեամբ սեռոված երևակայութիւնից...» (Ն. Միվերս, Հնչաբանութիւն, եր. 150):

Այսպէս և Ս. Մ.-ը ժգրութիւնն պատկերի դարձեցրած և երկար սովորութեամբ սեռոված երևակայութիւնից, կարծում է, թե հա երկրարքառի սկզբի և տառի հնչյունն ուրիշ է, քան յ տառի հնչյունը հա, ծառայական.

լայն բառերի մեջ, նրա մեջ տեսողութեամբ մտապատկերը խնդրում է լսողութեան զգայութիւնը, ուստի և նա ի վարդապետ աղապով գրութեան կաշկանդանքից և ըմբռնել, որ ետ, եւ, իւ, հարաբարական գրութեանը ետ որ միանումն կիսաձայն] = անվանկային 1 կամ Կ Շնչումն արտահայտվում է այդ երկրարձանների մեջ և և ի տառերով, ընթ հնչող Եւ և այլ լսողութեանը, գտն գրութի համարում իր պահանջած հնչիւնովանքների՝ Մեկի, Մասի, Անաստիանի և ուրիշների ասածին, ինչպէս նա իւրեւ իւր, որ ձայնակային լեզվի մեծ բառերի հնչիւնակներ, ինչպէս վերեւում դրեցի, հարաբար ասած ասաց արգեն, Երեսուն եւ իւր Շնչումն համարել են անվանկային ի ձայնաւորի հնչումը այլ և նման 1 տառն անհնչել և մէջ բառի... և լսող.] և, թէ ետ, Եւ և նման բառերի վերջի յ-ն Շնչում է ինչպէս Երեսուն եւ, իսկ Երեսուն եւ Շնչումն է աղ-տառի միավանկ իւր արտասանութեան սկզբի սկիսածայն ձայնավորը իւր հնչումը:

Նախքան Ս. Մ.-ի հոգովածի ուրիշ կողմերին տեսնելը՝ մի նկատողութեամբ մեր երկրարձանների արտասանութեան մասին:

Ինչպէս էլ Տր. Ֆինկը մի տարի էլ միտածում մնացել է մեր արեւելեան գրական լեզուն ասումնադիւրյալ համար, բայց և այնպէս նա, իբրեւ ասարակող, ավելի շուտ իր մարտնչի լեզվի Շնչումին է մոտեցրել մեր հա, եւ, իւ երկրարձանների առաջին քաղաղորդը, Մենք գործաներենի իբրեւ իս, իւ, իւ, առանկան]-ով չենք արտասանում մեր երկրարձաններն իբրեւ իս, իւ, իւ, առանկանկային փակ]-ով՝ իբրեւ իս, իւ, իւ, այսինքն՝ իբրեւ կիսաձայն քանում է փակ]-ն թէ՛ ալ, ու, ու, եւ երկրարձանների մեջ, ինչպէս ճիշտ դիտել է Ֆինկը դրանց արտասանութիւնը, և թէ՛ հա, եւ, իւ-իս, իւ, իւ երկրարձանների մեջ, Անաստիանի դիտողութեամբ, ինչպէս տեսանք, արեւմտյան հայերը եւ երկրարձան արտասանում են իբրեւ քաղապայն Կ (գերմ. ի) + Ե կապակցութեամբ, իբրեւ ԿԵ (ԵԵ). Մինչդեռ արեւելեան հայերը արտասանում են ի ձայնավորով, իսկ լեռան, տեառն, երկուսի մեջ էլ իբրեւ լեռն, լեռն.

Թե ետ, եւ, իւ երկրարձանները մենք իսկապէս անվանկային 1 ձայնավորով ենք արտասանում, իբրեւ միավանկ իս, իւ, իւ, և ու թէ գործաներեն շփական] քաղապայնով, այդ կարելի է իմանալ բառերի ցերեկանական ձևից: Հայտնի է, որ քաղապայն անունների հոգնակին կազմվում է նիւ մասնիկով՝ քաղապայն, իսկ միավանկներինը՝ եւ մասնիկով՝ քարեր, փայտեր, Այս կանոնով իմանում ենք, որ մեր նոր լեզվի մեջ քաղապայնով չեն կարող իբրեւ հանդիպել երկու քաղապայն անունը ը ձայնավորի. տղա, գրայի, դրած, կուսն, քուր, կղզի, նվազ, նժույզ և այլն միավանկ չեն, այլ երկավանկ, իբրեւ տղա, գրապի և այլն, քանի որ դրանց հոգնակին լինում է տղաներ, գրապներ, նվազներ և այլն: Արդ՝ ետ, իւ երկրարձաններն ունեցող բառերի հոգնակին լինում է եւ մասնիկով, ինչպէս կանանք, լեռադեր, եհարդեր, գիւղեր, նիւթեր, հիւրեր, ձիւներ, սիւներ, ցիւտեր և այլն*: Մեր լեզվական

* Աններ, մատներ, մկներ և այլն քառերի հոգնակների վերջավորութեան և Շնչումը բառի մասն է (անն, մատն, մուկն), որ այնպէս հարաբարում դուրս է ընկել (ան, մատ, մուկ), քայց հոգնակիւմ պահում է: Միւս քառի հոգնակին լինում է միտներ. որի երկում է, որ միտ քառը երկավանկ է. և իսկապէս դա կազմված է մի-իւս քառերից (Մեկի, Կուս, հայ, հոս, ցոր, եր. 24), որ եւսու հնչափաբանութեամբ դարձել է միուս, ասում միուս Բառիկայի 1888 թվականի հրատարակութեան մեջ գրված երկավանկ, մի որ ասելը ասող միտներ: Եւ ուղղագրութեամբ գրում են Կուս երկավանկ՝ միուս, միուս:

զգացումով, ուրեմն, կենեք, նեարգ, ցիւլ և այլն միավանկ են. Բայց խնդիրն այս չէ. այլ այն, որ այդ բառերի միավանկ լինելը պարզ ապացույց է, որ եւ, իւ երկրարքառների սկզբի բաղադրելը շփական] քաղաձայն չէ, ինչպէս գնում է Զինկը, այլ անվանկային : Ժայնավոր, Այդ բառերն, ուրեմն, մենք չենք տրտասանում իբրեւ kjonkh, lhard, gjuigh, gjuil, slun: Շփական]-ով այսպիսի արտասանութեան ժամանակ երկու բաղաձայն են ընկնում բառակերպում, ուստի, եթէ այդպիսի արտասանութիւն լինէր, մեր լեզվի ընդհանուր հատկութեամբ այդ երկու բաղաձայնի մէջ պիտի մտնէր ւ ձայնավորը, և այդ բառերը պիտի լինէին երկավանկ և հոգնակի ունենային ներ մասնիկով. բայց մեր լեզվական զգացումով՝ այդ բառերը, ինչպէս տեսանք, միավանկ են: Գնշանակի՝ այդ բառերի մէջ եւ, իւ երկրարքառներն արտասանում ենք ոչ թէ շփական բաղաձայն]-ով, այլ անվանկային : Ժայնավորով, իբրեւ kjonkh, lhard, gjuigh, gjuil և այլն: Ինչպէս որ այս միավանկ բառերի մէջ, նույնպէս և բազմավանկների մէջ եւ, եւ, իւ երկրարքառներն արտասանում ենք փակ : Ժայնավորով, իբրեւ ia, io, in. լավութեան lavu-thlan, սենեակ se-niak, արդեօք ar-diokh, լավութեան lavu-thlun, անկիւն an-kjun: Անշուշտ, կան բարբառներ, որոնց մէջ, ինչպէս և Կ. Պոլսի զրական լեզվի մէջ, իւ երկրարքառն այլն իբրեւ երկրարքառ յի արտասանվում, այլ իբրեւ պարզ ձայնավոր ւ, բայց միւ գրական լեզվի մէջ արտասանում ենք պարզապէս իբրեւ io երկրարքառ և ոչ ւ. ոչ թէ իբրեւ sun, այլ slun (միավանկ), ոչ թէ lavu-thlun, այլ lavu-thlun (անվանկային]-ով): Բացի այդ քանի որ, ինչպէս տեսանք, հնչողութեամբ փոխանցում է լինում անվանկային : Ժիջնական կիսաձայն y և շփական քաղաձայն] հնչողութեան մէջ, պատահում է նաեւ, որ անվանկային փակ]-ն ավելի ևս փակ է արտասանվում, իբրեւ մի միջնական կիսաձայն y. Բայց զերմաներենի շփական] քաղաձայնով արտասանութիւն, որի մէջ աղմուկն իշխեր ձայնի վրա, ինձ քիչ անգամ է պատահել լսել. այն էլ կամ՝ բառակերպում, ուրեմն՝ ավելի օտարազգի բառերի մէջ (եւդ, եար, եարա), կամ բազմավանկ բառերի վերջին վանկի մէջ միայն այն ժամանակ, երբ եւ, իւ երկրարքառներին առաջ միայն մեկ քաղաձայն է ընկնում (սենեակ, արին), և երբ սաստիկ ուժով ու օդի մէջ արտամղումով են արտաբերվում այդ երկրարքառները. ուստի և այդ բառերը պատահում են նաեւ այսպէս միանկատված՝ նշան-եան, հետեւ-եալ, արեւել-եան, ներքող-եան: Այսպէս, սակայն, ավելի արևմտյան գրական լեզվի մէջ: Արևելյան գրականի մէջ եւ, եւ, իւ երկրարքառները երկու քաղաձայնից հետո արտասանվում են միայն իբրեւ ia, io, in, ուստի և վանկատվում են՝ ան-ցեալ, ար-դեօք, ան-կիւն, աղ-բիւր:

Այսքանը բավական է: Հիմա դառնանք ուրիշ բանի:

Մի անհնթեթութիւն:

Նոր նրան ասում են, թէ այսպէս, ըստ հնդկականավոր քերականագետների, հին սենեակ=senask, եօք=eothn և այլն գրութիւններն այժմ արտասանում ենք j=i, y,] հնչողութեամբ senlak, senjak, cexñak, senyak, lothn, yothn և այլն, ուստի պետք է գրել արտասանութեան համեմատ անշուշտ, յոթ, Ս. Մ.-ն այդ ժամանակ էլ եսում է՝ այդ կարելի չէ, այդ սխալ է. որովհետեւ ամեր լեզվի բոլոր բառամթերքի մէջ և ոչ մի որինակ կա, որի մէջ բաղաձայնից հետո հաջորդելն չա, յու, յո գրութիւններն եւ (=յա=ya, թե՛ ea.-Մ. Ա.) իւ, եւ հնչողութեամբ (ան-յապաղ, ան-յուսալի, ան-յողդողդ): Իսկ

բառակցքում գտնվող այդ կապակցությունները երկուսն էլ չեն և չեն էլ եղել
երկրարբաններ: Եվ ապա ան դատառ. որ չկրնում տեսանք այսինքն՝ յա,
յու կապակցությունները եղել են երկազմանկ, օտինան՝ յատակ արտա-
քն եռազմանկ anyatak, այլ եռազմանկ i-a tak, իսկ անյառակ ոչ:

Նրա այս առարկությունն այնպիսի անհիթեթություն է, որ արժեք ստի
որոշման համար անհրաժեշտ է ինքնաբերական երբեմն նրա նման անհիթեթություն
ներն արել հմ... բայց թողնենք: Այսպիսի գաղափարներով ամեն բան
կարելի է ձերբել և հաստատել: Երբեմն՝ առում են, թե հին աստուած-
աստուած գրությունն այժմ արտասանում ենք Վատ, ոչ հնչյունով՝ astvatz,
actvau, ուստի պետք է գրել արտասանության համեմատ աստված,—Ա. Մ.—ն
առում է՝ այդ կարելի չէ, այդ պիտի չէ, որովհետև ամեն ինչից բխում
է թերթի մեջ և ոչ մի երկնակ կա, որի մեջ բաղաձայնից հետո հաջորդիվ վա
գրությունը վա (թեկուզ՝ կա, բա, դա, դա...) հնչյունով (ան-վաստակ, ան-
վախ): Իսկ բառակցքում գտնվող այդ կապակցությունը նույնպես չէ և չի
եղել երկրարբան... Բայց Մ. Մ.—ն ամենայն հանգստությամբ գրում է՝
աստված, հատված... և խղճում է միայն գրել՝ սենյակ:

Ինչի՞նք է պետք. թե բառակցքի յա գրությունը հին ժամանակ չի օգու
երկրարբան կամ եռարբան, կամ յառակ ին արտասանվել երկազմանկ
yatak, այլ եռազմանկ i-a-tak: Ասենք հենց այդպես է, բառակցքի յա-ն չի
եղել երկրարբան և, դիցուք, երկազմանկ i-a է եղել: Մի՞թե այդ մէ՛ ապացույց
է, որ մենք այժմ սենեակ բառի մեջ եա-ն չենք արտասանում: Ե՛հ, յա-յա,
Բառակցքի յա գրությունը կարող էր ոչ միայն երկրարբան լինել, այլև
նույնիսկ լինել էլ, այսինքն՝ գրություն ունեցած լինել, իսկ բառամիջի
իա=ea հնչյունը կարող էր լինել և եղել է, և կարող էր արտասանությամբ
փոխվել յա=յա հնչյունի, և փոխվել է: Ի՛նչ կապ կա այդ երկուսի մեջ: Եվ
ստիպված ես նույնիսկ Մ. Մ.—ին ասելու, թե, պետք է տարբերել բառակցքը
և բառամեջ, հին յա-ն եա գրություն, գրություն և հնչյուն: Եվ ստիպված ես
բացատրելու, թե մեր լեզվի մեջ մինչև ուղղագրության ոճֆորմը մեծամ էր
կլասիկ շրջանի գրությունը, բայց հնչյունները փոխվել են և հաճախ նույնը
չեն, ինչ որ հին լեզվիներ: Հին գրության մեջ, որ ընդունված էր և նոր լեզվի
մեջ, լկար բաղաձայն+յա գրություն եա հնչյունով, որովհետև յա-ն եա
տարբեր հնչյունական արժեքներ էին հին ժամանակ, մեկը յա, մյուսը ea:
Ուստի, երբ բաղաձայնից հետո (կամ բառակցքում) գալիս էր յա=յա
հնչյունը, այսպես էլ գրում էին՝ անյագ (anyag), անյատակ (anyatak). Իսկ
երբ գալիս էր եա=ea հնչյունը, հենց այսպես էլ պետք է գրել, և գրել են՝
սենեակ (seneak), և շատ անմիտ կլինեին, եթե նույնը, հաճախ իրենց
արտասանությանը, գրեին նաև յա ձևով՝ սենյակ, որը բոլորովին տարբեր
հնչյուն էր արտահայտում: Բայց հենց այդ հին սենեակ=seneak արտասա-
նությունը փոխվելով՝ դարձել է senyak, այսինքն՝ ստացել է նույն արտա-
սանությունը, ինչ որ անյագ գրությունն ուներ կլասիկ շրջանում՝ anyag:
հենց այդ պատճառով էլ սենեակ բառի այս հին գրությունը դեն պիտի դնենք
և մեր արդի արտասանության համեմատ այժմ պիտի գրենք սենյակ=senyak:
Իսկ անյագ=anyag բառի արտասանությունն էլ իր կողմից փոխվելով՝
դարձել է անհագ=anhag, և այսպես պետք է գրենք այժմ: Բայց այս շատ
եղավ վերին անհիթեթության համար. որովհետև ասողն ինքն էլ չի հավա-
տում իր ասածի արժեքին, ուստի օգնության է կանչում ռուսներին:

եմ, եօ, իւ=յա, յո, յո՛ւ՝ ըստ Ս. Մ.-ի:

«Ռրպահադի Մ. Աբեղյանի սխալն (այսինքն՝ սենյակ և այլն գրությունը— Մ. Ա.) ականերն լինի, համեմատենք Վիճելի հնչույնների գրության ձևերը հայերենում և ռուսերենում:

Գրվում է՝

Հայերեն

Ռուսերեն

այ—այս, բայ

аѣ—краѣ, таѣка

ոյ—նոյ, գոյական

оѣ—моѣ, поѣте

(ույ)—(յույս)

уѣ—помилуѣ

Իսկ շրջված ձևով գրվում է՝

հա—կենաց, օգնեա

я—пять, меня

եօ—եօթն, կարծեօք

ѣ—елка, намека

իւ—իւր, հիւղ

ю—юг, малютка և

ալ թե ըստ Աբեղյանի՝ յա, յո, յու (կյանք, յոթն, հյուղ, թա, թօ, թյ—пѣать, менѣа, ѣолека, намеѣок, ѣуг, малѣутка)՝:

Այս անգամ արդեն Ս. Մ.-ը նախ՝ մի բան ասում է և ապա ապացուցում: Եվ գիտե՞ք ինչ: Այն, որ նրա կարծիքով՝ մեր նոր գրական լեզվի մեջ եա, եօ, իւ հնչյունով այլևս еа, ео, еу չեն, այլ համասար են կամ անվանկային (բաղաձայնական) ի-ով լա, լօ, լւ (միավանկ), կամ уа, уօ, уп, յա, յօ, յւ=յա, յո, յու՝ ըստ Աբեղյանի, Մառի, Մեյերի և ուրիշների: Թո՞ղ չգարձանա նա, այո՞, հենց այսպես:

Մեր ալ, ոյ, ույ երկրարբառներին իսկապես համեմատ են ռուսերենի аѣ, оѣ, уѣ երկրարբառները, որոնք երկու դեպքում էլ կազմված են վանկային а, о, у + անվանկային ѣ, իսկ այս վերջինի նշանն է հայերենում յ տառը, ռուսերենում՝ ѣ. ուրեմն՝ ալ, ոյ, ույ=аѣ, оѣ, уѣ (միավանկ), Բայց ի՞նչ են դրանց շրջված ձևերը՝ հա, եօ, իւ: Համառոտելու համար առնենք նախ հա-ն, Մեր լեզվի ո՞ր պատմական շրջանի արժեքով է առնում Ս. Մ.-ն այս երկրարբառը: Հետո՞ դա եղել է еа: Անշուշտ, նա այս еа արժեքով չի առնում այստեղ եա երկրարբառը. որովհետև еа-ն չի կարող լինել շրջված ձև ճի երկրարբառի, քանի որ մեկի մեջ անվանկային ձայնավորն է е, մյուսի մեջ՝ ѣ: Թո՞ղ նա կարդա նորից Միվերսից և ուրիշներից վերևում բերած հատվածները և կտեսնի, որ ճի երկրարբառը շուտ սոված լինում է լա: Դե՞ ամեն մարդ էլ կհասկանա, որ аѣ շրջած լա, ինչպես аѣ շրջած լա, նույն շրջած ձևով շուտ: Հիմա, քանի որ մեր ալ=аѣ երկրարբառի շրջված ձևն է ըստ Ս. Մ.-ի՝ եա, կնշանակի, նա մեր եա երկրարբառն առնում է ոչ թե հին еа հնչյունով, այլ մի նոր հնչյունով, որ ուրիշ բան չի կարող լինել. բայց եթե լա. որովհետև միայն այս լա-ն է аѣ-ի շրջված ձևը: Եվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ն ապացուցեց, որ եա երկրարբառն իր հոգվածի այս մասում ինքն արտասանում է ոչ թե հին հնչյունով еа, այլ մի նոր հնչյունով լա, որ аѣ-ի շրջված ձևն է: Նա ապացուցեց այս և ընդունեց հեղինակավոր քերականագետներ Մեյերի, Մառի ասածը, իսկ ես էլ անվանկային կամ բաղաձայնական ի + а երկրարբառի լատինական տառերի փոխանակ կդնեմ համապատասխան հայերեն տառերը՝ անվանկային կամ բաղաձայնական ի, որի նշանն է յ՝ ըստ

Հնդինականոր քերականագետներ Մհերի, Մարի և Ս. Մախառյանի, ուրեմն՝
 $ia = i + a = ja$

Եվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ն այն ներկարարողի համար շրջված ձև դնելով հա, ապացուցեց, որ $ha = ia = ja$ Կարող է հերթել նա այս եզրականությունը, բայց հերթել մի թե լավ հաստատություններով:

Ինչ որ հա ներկարարողի համար, նույնը նա ասում է հո, ի ներկարարողների համար, որոնք լինելով շրջված ձևեր $ai = oi$, $ui = ui$ ներկարարողների, հնչյունով որիչ բան չեն կարող լինել, բացի $io = io$, $iu = iu$ Եվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ը հասավ նույն եզրականություն, ինչ որ Մհերի (ձ, ի) + a, o = ya, yo, ja, jo, ha, ho:

Բայց մենք շարունակենք:

Ս. Մ.-ը մեր հա, հո, ի ներկարարողներին համեմատ է գնում առանձին ա, ձ, ու. Ի՞նչ կտրելի է դրանից եզրականելու, Գտնվել այն, որ նա մեր հա, հո, ի ներկարարողներն արտասանում է կամ նկատյալի և Զինգերի նման, չգիտեմ յ-ով, ինչպես ia, jo, iu կամ անվանակալին $i-$ ով, ինչպես միավանկ ia, io, iu Այս, հենց այսպես:

Նա չի կարծում, սեղանայա, ինչպես շատ տեղեւոր մարդիկ, թե առանձին ա, ձ, ու տառերի համապատասխան հնչյունները մի-մի պարզ ձայնավորներ են և ոչ թե նրանց հնչյունի կապակցություններ: Բայց ի՞նչ հնչյունների կապակցություններ են դրանք, արդյոք նրանց ձայնավորից կազմված ներկարարական՝ թե՛ մի բաղաձայն + a, o, y վանկերու Այս մասին նա խոհեմություն է համարել չսել, թույլ տալով, որ ընթերցողը գուշակի, ինչ որ կուզի Այս մասին Ս. Մ.-ն ու նա չենք, որ պետք է որոշում անենք: Գրեմք, ուրեմն, ողա լեզվաբաններին:

«Ինչպիսիք մեզ շատ տարածված է միջաքմային շփական ձայնից փափկացրած հնչյունի ավելի առաջային՝ տեսականներից մեկը, որ հայտնի է յոս (յ տառը) անունով: Այս յոսը կա, օրինակ, գերմաներենում ($ia, jener$), ֆրանսերենում ($yeux$)»: Դա կա նաև ռուսերեն լեզվի մեջ, բայց սուսերեն զրուխան մեջ առանձին տառով չի արտահայտվում. $\pi - ja, cboe = cbaio, шью = шю$ »

Սույն հնդինականը ողաաց լեզվի ձայնավորների մեջ չի գնում e, я, ю և նր, э, որում է. սեանկի մեջ տեղ չեն գտել մի քանի տառեր. այսպես՝ ... e, я, ю. որովհետև 1) բառակազմում կամ ձայնավորից հետո, կամ ու, և տառերից հետո դրանք նշանակում են ինչ որ э, а, у տառերը, միայն նախորդող յ-ով, այսինքն՝ մի e, я կամ ю տառով արտահայտում ենք ամբողջ վանկ, որ կազմված է բաղաձայն յ + э, а, у ձայնավոր. կամ 2) բաղաձայնից հետո արտահայտում են՝ այդ նախորդ բաղաձայնի փափկությունը և նրան հաջորդող э, а, у... Շեղոված վանկերի մեջ e, я, ю տառերի հնչյունական նշանակությունն այս է.

* Այսինքն՝ ավելի դեպք առաջ, առաջաքմային կողմի վրա արտահայտվող:

** Գերմաներենի յ-ն, ըստ Սիվերսի, առաջաքմային է: Իսկ ֆրանսերենի յոսը (y), ինչպես տեսանք, ըստ Բուպի, առաջաքմային միջանկյալ կրթական է, ավելի մոտ փակ է հնչյունին, քան թե ֆրանսերենի չփակեմ յ-ին:

— Док. Ушаков, Краткое введение в науку о языке, 1910, стр. 29.

- я=1) ja, яма, своя, пью. 2) բաղաձայնի փափկութիւն + а, дядя.
ю=1) ju, юг, свою, пью. 2) բաղաձայնի փափկութիւն + у, дюжине.
е=1) je, ель, своей. 2) բաղաձայնի փափկութիւն + э, девять, дело.
ѐ=1) jo, елка, свое, льет. 2) բաղաձայնի փափկութիւն + о, деготь,

гвездя, седля:

ж, ш և ц հնչյուններից հետո, որոնք մի ժամանակ փափուկ են եղել, իսկ այժմ կոշտացել են, և տառը, հասկանալի է, նշանակում է միայն э հնչյունը, жестъ, шесть, щепъ...

Նույնը և Բողոքողիցն է՝. ся տառը, բաղաձայն հնչյուն արտահայտող նախորդ տառի հետ կապակցված՝ նշանակում է օ ձայնավորը, միաժամանակ և նախորդ բաղաձայնի փափկութիւնը: Առանձին գործածութեան ժամանակ, ինչպես և մնացած բոլոր գրութիւնների մեջ, այսինքն՝ բառերի սկզբում, ձայնավոր հնչյուն նշանակող տառերից հետո, նույնպես և շ և ն տառերից հետո, նշանակում է երկու հնչյուն. j + а, հմտ. я, яма, подносывать, объ-явить, бдѣн, пѣяница: Նույնն ասում է և е, ѐ, ю տառերի համար. е=jэ, ель, моему, объединить, гулянье.—ѐ=jо, елка, чвек, съемка, льем.—ю=jy, юла, поюлить, стюлить, въюшке:

Նույնը և Պորժեպինսկի*՝, որ ռուսերենի j հնչյունը համարում է մի-լաքձայնի շփական բաղաձայն. ээ, у, օ տառերից տառչ ընկած բաղաձայն-ների փափկութիւնն արտահայտվում է е (շ), ю, я տառերի գրութեամբ, որոնք այդ գրութեան մեջ նշանակում են э, у, օ ձայնավորներն ու նախորդ բաղաձայնների փափկութիւնը: Այսպես, օրինակ, օя վանկը գրութեան մեջ օя վանկից տարբերվում է ձայնավորի համար տառանձին տառի գրութեամբ, մինչդեռ այստեղ էական տարբերութիւնն, իսկապես, բաղաձայնների մեջ է (առաջին դեպքում բաղաձայնը փափուկ է, երկրորդ դեպքում՝ կոշտ)։ արանով է բացատրվում և այն, որ օя վանկը և նմանները ռուսաց ուղղա-գրութեամբ արտահայտվում է օյя գրութեամբ, որի մեջ ъ (մասամբ նաև ъ) լոկ գրաֆիկ նշանակութիւն ունի: Հմտ. пѣяныѣ, съезд և նմանները: Երազմայն j կա և ռուսերենում... Я, ю և ѐ տառերը բառի սկզբում կամ վանկի սկզբում, ձայնավորից հետո՝ արտահայտում են ja, jo, ju, je. հմտ. я (ja), моя (maja). արս հետևանքով այնտեղ, որ j + ձայնավոր կապակ-ցութիւնն ընկնում է բաղաձայններից հետո, գրում են ъ կամ ъ. հմտ. пѣян (pjan), отъезд (otjest) և նմանները: Նույնը կարելի է տեսնել և Գալի բառարանի վերջին հրատարակութեան մեջ:

Հիմա գանջ Ս. Մ.-ի համեմատութեանը. նա համեմատ է դնում:

Հ ա յ ն եր են

նա—կանք, ոգնես

եո—եթե, կարծեօք

իо—իւր, հիւղ

я п я е р б ы

я—пять, меня

ѐ—елка, нарек

ю—юг, малютка:

Հստ ռուս լեզվաբանների՝ я=ja, елка=jolka, юг=jyг. իսկ пять, меня, намеk, малютка բառերի մեջ я, ѐ, ю=я, о, у, միաժամանակ և նախորդ օ, օ, օ, օ բաղաձայնների փափկութեան նշան պայմանորեն: Ռուսերենում

* Проф. В. А. Богородицкий, Очерки по языковедению и русскому языку, 1910, кр. 135, 4, 5.

** Проф. В. Поржевинский, Введение в языковедение, 1918, кр. 109, 116, 126.

այդ բառերից և ոչ մեկի մեջ չկա, ուրմէ՞. և ոչ մի երկրաբարառ Կնշանակի՝ հայերեն բառերի մեջ ևս, բայտ Ա. Մ.-ը, քաղ ու նա մեր կյանք, օգնեա և այլն բառերը համեմատ է դնում ռուսերենին. ինչ երկրաբարառ, և մեր նա, ժամանակ և նախորդ բաղաձայնները փոփոխելու նշան, ինչպես՝ ПИТА—կերել, МОУ—սկսել, ОБУЧ—խրատել, НАХОДИ—(հագ. ք) կամ շփական բաղաձայն լից, О. У—[Ի, յ], ինչպես елка=joika, եօթն=joթն, юг=յуг, իւր=յուր,

Ահա թե ինչ կնշանակի հայերենի դժուար մի տար լեզու գեղը ԽՆշ հանելուկ է աւ. կարո՞ւ է լուծել Ա. Մ. ընդհանրապէս փոփոխացրած հնչույններ... և այլն եւս. եօ, իւ երկրաբարառներ չկան, և եօթն=joթն, իւր=յուր, կարծեօք, հիշք բառերի փոփոխացրած է, ծ, չ բաղաձայնները, և առհասարակ փոփոխացրած կամ քմայնացրած ռաղայնները, որ շատ սովորական են ռուսերենում և որոշ զնայներում միայն երբեմն ան զայն նաև հայերենում,—այդ հարկով պարտական ենք Ա. Մ. փոփոխութիւն լազարյանը, և մի կողմ կցենք բայթ լիթն. յուր արտասանութիւնը, բայթ եւ=եւլի, եւ=լի, իւ=լի, ԽՆշ աղագոյն Ա. Մ.-ը աղագոյն, հակառակ իր սպասածի, այն, որ սենեակ=сен'як=sen'jak, արդեօք=ард'ёк = ардою,

Եվ այսպես՝ Ս. Մ.-ը մեր եւ, եօ, իւ երկրաբարառների վերաբերմամբ հասավ Աճառյանի կարծիքին, որ ասում է, թե դրանք բաղաձայն у (գործ. յ) + ա, ո, ու վանքեր են=yu, yo, yu կամ ja, jo, ju, հայերեն՝ մեկ բաղաձայն և մեն ձայնաւոր բաղաձայն լուծել, ինչ որ երկրաբարառ չի նշանակիր, և Աճառյանը հայերեն տառերով գրում է. ինչպես տեսանք, լա, յո, յու, սենյակ, յոթն, որչափ նա հասած է այնպես է. Զինկին, որ գիտէ է եւ=լի, եւ=լի, իւ=լի, արեւք մեջ մեր յ-ի ունի ցերմաներէն լի Շլյուսեր գերմ. ja բառի մեջ և նա գրում է եօթն=jo'ten, լազարյան=lavut'jun,

Բայց դա խնդրի մի կողմն է միայն, Ինչպես տեսանք, ի ձայնավորի և յ բաղաձայնի մեջ փոխանցում կա, և նույն բառը նույն լեզվի բարբառներից մեկի մեջ յ-ով է արտասանվում, մյուսի մեջ՝ անվանկային ի-ով (գերմ. junց—iung), նույն Աճառյանը, ինչպես տեսանք, ասում է, թե արեւմտյան հայերի մեջ ազատութեան արտասանվում է у (յ) բաղաձայնով azadut'-yan, իսկ արեւելյան հայերի մեջ՝ i ձայնավորով azalu-t'ian: «Իտալերենում ևս ֆոնետիկական պայմանների և բարբառների համեմատ տարբերութիւններով՝ յ-ի փոխանակ գոյութիւն ունի անվանկային ix* օե, я, ю տառերի զխալոր գծերը անշեղա գոյութիւնը նույն է, ինչ որ շեշտված գոյութիւնը. այսինքն՝ կամ արտահայտել յ (կամ i անվանկային) + ձայնավորից կազմված մի ամբողջ վանկա... ճշտ երևութին մեզնում (ռուսերենում) յ երևան է գայն շեշտված ձայնավորից առաջ, իսկ ուրիշ տեղերում է i (անվանկային), свая' (своя), маю' (мою'), jei' (ей), բայց, сая'ja (сва'я), го'стii (гостъи), iemy' (ему)ա*։ Այսպես, յ-ով գրված են նաև՝ сая'ei (своей), жит'jo' (житье), тая'jo' (твое), па'ели (поели), իսկ անվանկային լ-ով են՝ аажнаia, простаia, гостia, бедноie, гостly, iедв, полеваia,

* В. Поржезинский, Введение..., էր. 109.

** Д. Ушаков, Краткое введение..., էր. 43 հւռ.

3нагу և ալլն։ Այս անվանկային 1-ի նշանն է, ինչպես տեսանք, ուսուցիչներն ու
ն առաջ։

Բոգոբորոգիցկին*, հավասար դնելով я=ja, е=je, ё=jo, ю=jy, ծանո-
թություն մեջ գրում է ալ կամ ё։ նույնպես Դալի բառարանում յ տառի հետ
փակագծում գրվում է й, իսկ я=ia, ալլն ja (йа), ё=io (jo), е=le (je),
ուրիշ խոսքով а о, е, մայնավորներից առաջ է անվանկային 1 և յ, իսկ
մերձիկի հետ նաև й։ Այսպես և յուս (й) տառի անունը հենց մեկը (Умек,
29) գրում է ёт, մի ուրիշը (Порж., եր. 108) գրում է йот։ Պարզ է, որինն,
որ ուսուցիչներն ևս я=ja, ia (միավանկ), ё=jo, io (միավանկ), ю=jy, lu
(միավանկ), е=je, le (միավանկ), ինչպես դրանց համեմատ հայերեն եա=
ja կամ ia (միավանկ), եо=jо կամ io (միավանկ), իւ=jy կամ ly (միավանկ)
և բառակցորի եм=je կամ le։

Ահա՛ թե ինչ եզրակացություն պիտի հաներ Ս. Մ.-ը։ Դուսերենի я, ё, ю
տառերի համեմատ դնելով մեր եա, եо, իւ կապակցությունները՝ նա պիտի
ասեր, թե եա=я=ja կամ ia (միավանկ)=յա՝ ըստ Աբեղյանի։ Ուրեմն,
Այսպես, ուրեմն, գրական լեզվի մեջ բառասկզբի յ-ն արտասանվում է իբրև ե: Եվ այսպես էլ չէր կարող լինել: Մի հնչյուն, որ գոյություն չի ունեցել հին լեզվի մեջ, չկա հայոց ազգի ամենամեծ մասի մեջ, չկա Նոր գրական լեզվի հիմք կազմող բարբառների մեջ, դա չէր կարող մտնել մեր գրական-գաղութական արտասանության մեջ, այն էլ համարվել յ-ի թուղիղ բառերից ոչ ավելի քան 10—15 բառ միայն այդ ձայնեղ հագագով են աղտասանվում: Ս. Մ.-ը շատ լավ գիտե, որ երբ ինքը գրում է «յ-ի և հ-ի հնչյուններ», կարդացողները հասկանում են, թե որն է ե-ի հնչյունը, իսկ յ-ի հնչյուն ասելով՝ նրանք հասկանում են կա՞մ դարձյալ ե հնչյունը բառասկզբի յ-երի համար, կա՞մ կիսաձայն ի հնչյունը, որ ունի յ տառը բառամիջում (ձայն, գոյական)։ Փանի՞ հոգի կլինեն հայ գրագետներից, որոնք յ-ի հնչյունն ասելով հասկանան ձայնեղ ե հագագը, որ բոլորովին տեղական հնչյուն է: Ժամանակ է դեն զենելու կարենցի և մշեցի գիտնականների հանած այդ առասպելը, թե իբր ձայնեղ հագագը յ-ի հնչյունն է, այն էլ թուղիղ հնչյունն է, իսկ անձայն հագագը յ-ի սխալա հնչյունն է: Ժամանակ է, որ կարենցի գիտնականները իրենք լմուռով են և ուրիշներին էլ լմուռեցնեն, թե իբր իրենք բառասկզբում պահել են յ-ի սկզբնական հնչյունը, և թե իբր ձայնեղ հագագն է յ-ի այդ սկզբնական թուղիղ հնչյունը: Ժամանակ է, վերջապես, որ Կարնո և Մշո բարբառների մարդիկը Նոր առասպելներ չտարածեն, թե «գրական-գաղութական արտասանության մեջ յ»—ն ձայնափոխությունը տրվեալեկանուհեն է մտցված, այն էլ ոչ ամենուրեք:

Յեւ ձայնափոխությունը երկնքից չի ընկել հանկարծ, ձայնեղ հագագին անվարժ մի քանի ուսուցիչների մեջ և, ինչպես հայտարարում է Ս. Մ.-ը, այդպիսի ուսուցիչների միջոցով արվեալությանորեն մտցվել գրական-գաղութական արտասանության մեջ: Ինչպես վերևում տեսանք, բառավերջի և բառասկզբի յ-ն անձայն մնալով՝ վերածվում է հագագի և ապա դուրս ընկնում

բարբառներն ձեռն ժառի մնչ, բայց և բարբառների մնչ յ-ով սկսվող բառերն իրենց, առկա՞վ բացառությամբ, մտնում են և Խնչպես բարբառները, եռյնչպես և գրական լեզուն, քանի դեռ կենդանի է՝ ունենում է իր Հնչափոխությունը, երբեմն բարբառների հետ նույն ուղղությամբ, երբեմն և բարբառներից առաջնու Բարբառների հետ զուգընթաց նույն յ=հ Հնչափոխությանն ունեցնել է և միւր հին գրական լեզուն, միայն մի խնդր տարածությամբ բարբառներից, այն է՝ գրադարում, իրեն գրական լեզվի մնչ, բնականաբար կան և պահվում են ըստ յ-ով սկսվող բառերը և նրանց բառասկզբի չ գրությունը, Բառասկզբի այս յ=հ Հնչափոխության մասին Յ. Կարաթեք՝ իր «Կիրիկյան հայերենի պատմական քերականություն» մնչ (եր, 34) գրում է՝ «Գրաբարում բառասկզբի յ-ն արտասանվում է և ըստ արդի հայերենի, այսպես, որքան, բառ Ալան, 11, 37) յարմար, յապագի, յուս, զմեկը, աշխատող, քերականության և այլն։ Այս արտասանությանը պետք է իրոք զուգընթաց ունեցած և ուղիղ եղանակին ոչ իսկական էին հայերենի ժամար, այլ ավելի ուշ՝ կատարական և եռակտարական և միջին հայերենի շրջանում։ Առանձնապես կիրիկյան հայերենի համար՝ բառասկզբի յ-ի իրեն և արտասանվելը հաստատ և անկասկած է հետևյալ կրկին գրություններով՝ հետ—լետ, հետի—լետի, հայրենեթթիփի և յայրենեթթիփ... որոնց երկուսի էլ առաջին քաղաղիլը պարզապես նույն է։ Այս բառերը պարզապես կաղմված են «Հայրենեթթ» քառից, «Հայրենեթթ» լինելու այժմ էլ սովորական է, Ապա կարատը նույն Հնչափոխությունը գտնում է և մի քանի բարբառների մնչ, ինչպես՝ լեհահայրաց և այլն, և կիրիկյան հայերենի բառասկզբի յ-ն տառադարձում է միշտ և-ով, ինչպես յայտնի—հայտնի, յմմել—հմմել (գրաբար՝ յամմել) և այլն։

Մինչդեռ բարբառների մնչ, եթե յ-ով սկսվող բառերը լին մտնում, դրանց սկզբի յ-ն և դառնալուց հետո դուրս է ընկնում, հին գրական լեզվի մնչ այս վերջին զարգացումը լի ընդհանրանում։ Բայց որ գրաբարում էլ կան որոշ թվով բառեր, որոնք զրվել են և սկզբի յ-ով և առանց յ-ի, այդ կա՞մ բարբառների ազդեցության հետևանք է, կա՞մ ավելի այն քանի, որ գրաբարում էլ մի ժամանակ կատարվելիս է եղել յ-ից ժազած հ-ի դուրս ընկնելու հնչափոխությունը, և եղել է ժամանակ, երբ խառն արտասանել են և յ=հ հնչյունով և առանց դրանց։ Բայց և այնպես, քանի որ բարբառների մնչ այս հնչափոխության վերջանալու ժամանակ, նոր հայերենի սկզբում, գրաբարն այլևս խոսվող լեզու չէր, այլ միայն մեծած գրական լեզու, այս զարգացումը, այսինքն՝ բառասկզբի յ-ի դուրս ընկնելը, գրաբարում կանգ է առնում և այս երկու տեսակի արտասանության մրցման մնչ, յ-ով սկսվող բազմաթիվ մեծած, լուր գրական բառերի ազդեցության տակ, որոնք բարբառների մնչ լինելով չէին կարող առանց սկզբի յ=հ հնչյունի կարգացվել, — ընթերցանության ժամանակ իշխող է հանդիսանում և հաստատվում այս հնչափոխության միջին՝ յ=հ աստիճանը, իվ այնուհետև՝ բառասկզբի այս յ=հ արտասանությունը ազանդաբար հարատևում է դպրոցներում, իրեն կառավար մի եղանակ, մինչև 19-րդ դարը, և ապա՝ ինչպես գրաբարի կառավար ամբողջ եղանակը, նույնպես և բառասկզբի այս յ=հ արտասանությունը։

* J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, 1901.

ներ կարգալիկ, գրաբար բառերի և գրութիւն հետ, հասցենում է և մեր նոր գրական լեզվին՝ աշխարհաբարին:

Ահա՛ թէ ինչպիսի ծագում ունի բառակցքի յ—հ արտասանութիւնը մեր նոր գրական-գրորոցական լեզվի մէջ, Դա ոչ թէ այս կամ այն բարբառից է ծագում, այլ գրաբարի կարգալիկ հղանակից: Գրաբարից փոխառած յ—ով սկսվող բազմաթիւ լեզ գրական բառերը՝ յաճախ, յաղենալ, յապաղել, յանգ, յարկ, յոքելեան և այլն, որոնք չկան բարբառներին մէջ, նույն ձևով գրվելով՝ աշխարհաբարում չէին կարող այլ կերպ կարդացվել, քան գրաբարում: Այս կամ այն բարբառի մէջ, արդարեւ, կան սակավաթիւ բառեր, որոնք սկզբի յ—ն ~~գրուել~~ է ընկել, ինչպես ախանկ (յաղթել) արդ (յարդ), անկարծանկի, իսում (իցցում), իստակ (հատակ), իշել, իշատակ, օրանջել, աջող, գուցն և մի քանի ուրիշները: Բայց այդ բառերը բարբառներին չեն մտած մեր նոր գրական լեզվի մէջ, այլ գրաբարից: Ուստի և գրանց համար պահված է գրաբարի յ—ով գրութիւնը՝ յաղթել, իշել, յարդ և այլն, հետեաբար և՛ յ—հ կարգալիկ հղանակը: Յաջող, յառաջ բառերը, գուցն և մի հրկուս որիչը, վերջին տասնամյակներում միայն գրում են ավելի առանց յ—ի, բայց և այնպես դեռ ավելի՛ անյաջող, քան անաջող: Մի հրկուս բառ էլ, ինչպես յետ (դառնալ), արտասանվում են թէ՛ յ—ն ծայնափոխութեամբ իրեն հետ (դառնալ) և թէ՛ սկզբնական ձևով yet. ուստի ուղղագրութեան ռեֆորմից առաջ գրում էին կամ յետ (դառնալ) և կարգում էին հետ, կամ հետ (դառնալ) և կարգում էին yet. իսկ այժմ առաջին տեսակ արտասանողները նոր ուղղագրութեամբ գրում են հետ դառնալ, իսկ երկրորդ տեսակ արտասանողները՝ յետ (=yet):

Այսպես, ուրեմն, ինչպես յ—ով սկսվող բառեր իրենց գրութեամբ, նույնպես և յ—հ արտասանութիւնը ոչ թէ արվեստականորեն է մտքում մեր նոր գրական-գրորոցական լեզվի մէջ, այլ դա մի ժողովագրութիւն է՝ մնացած էին գրական լեզվից: Այդ բառերը չէին կարող երբեք արտասանվել գրաբարում, որից և նոր գրական լեզվի մէջ, նախնի նազագով, որովհետև այս հնչյունը չկար հին լեզվի մէջ, չկա նաև բարբառներին մէջ, քացի Մշո և Կարևո բարբառներին: Այս ձայնի հազար, իրեն մի տեղական հնչյուն, օտար և անծանոթ է հայութեան ամենամեծ մասին:

Բայց ինչպիսով դրան...

Ս. Մ.—ը, գործնական տեսակետից քննելով նոր ուղղագրութիւնը, հարկավ, չի մոռանում այս տեսակետը և մի շատ գործնական և առաջարկ է անում:

Յ—ով սկսվող բառերի «այժմյան (յ—ով) ուղղագրութիւնը յուրացնելը այնքան էլ դժվար չէ, մասնավորապէս որ օրացիչները հազ տանեն երեխաներին ուղիղ տրտաւանութեան ցույց տալու (ընդգծումը հեղինակինն է), և ոչ թէ, ինչպես մինչև այժմ լինում է, իրենց պատմաստեն աշակերտների մէջ հ—ով արտասանութիւնը:

Գիտե՛ք, ինչ է առաջարկում նա: Շատ պարզ բան: Հայոց ազգի մեղ, ամեն տեղ, ուսուցչութեան իրավունքը մենաշնորհ դարձնել շիրակեցիների, աշակերտների ու ախալքալացիների, իր հայրենակից ախալքալացիների, ապարանցիների ու մեկ էլ նոր Բայազետի դավառի 21 գյուղացիների համար: Գրանք պետք է բոլոր կողմերի հայերին ուսուցիչներ մատակարարեն և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս ամեն տեղ: Այսպես, էլ ի՞նչպես կարելի է գործադրել Ս. Մ.—ի լեզնայտը յ—ի սուղիզ արտասանութեան նկատ-

մամբ այնպիսի ուսուցիչների միջոցով, որոնք անձամբ են այդ ձայնեղ հագագին: Դժուր, ուրեմն, ուսուցչությունից բոլոր արտիստ բարբառների մարդիկ, բայց խոյնցիներ ու սալմաստցիներ, և-պղծեցիներ, զարարազգիներ և, առհասարակ, բայց բարբառների մարդիկ. որոնք լիցեն, թե ինչ է այդ ձայնեղ հագագը:

Նրեակալեցե՞ք, թե այդ մենայնորէջ տրվեց Կարեն և Մյա բարբառների մարդկանց, բայց որոշոք համազգե՞ն է Ս. Մ.-ը. որ գրեթե կենդանական ամեն տեղ հայ ազգի մեջ տղամտասեր ալիք ձայնի, գեղեցիկ, փոփոխ արտասանությամբ, այն էլ բնականորեն և ոչ տարվեատկանորեն: Կարենի է, գրեթե հարցնե՞ք Ս. Մ.-ին, թե արդյոք ինքը, որ մանկությունից ստեղծ այդ տղամտասեր ձայնի, երբեք փորձե՞լ է գործադրել իր առաջորդը, և ի՞նչ աշխարհյան է ունեցել իր երեսնամյա ուսուցչությունը շրջանում իր հավաքարացի աշակերտների վերաբերմամբ. չէ՞ որ ինքը շատ լավ և տարբեր կերպով արտասանում է տար և հար, յոթ և հեթ և այլ բաների մեջ յ-ի և հ-ի հնչյունները: Դե՞ ասացե՞ք, հիմա հավաքարացիներն էլ բախտավոր են է՛լի, և լեն զրկվիլ հայ ազգի մեջ ուսուցչություն անելու մենաշնորհից:

Կենթե՞ն ընթերցողները, որ այստեղ անեմ պաշտպան կռիված յուստեղի չեմ հանենա նպիսկուպոսի պատմությունը, որ եղելություն է: Դա մի ձեռք, կորագրամակ մարդ էր, բարակ ու հուր ձայնով: Չեմ միշտ, թե արեղագի էր, բայց էշմիածնի վանքի եկեղեցում աղոթեցներն ասելիս շատ լավ արտասանում էր երկրարբատային ուստ (սո) և ե-ի (le) հնչյունները: Դեռե՞ք Դ կաթուղիկտը շատ էր հավանել նրա արտասանությունը, և որովհետե կարծում էր, թե այդ նպիսկուպոսը և ու տաների համար անի հե-րգ դարի հին արտասանությունը, ուստի 1879 թ. նրան կարգեց էշմիածնի հեմա-րանում արտակարգ ուսուցիչ ս.-մեքուպյան արտասանության, որպեսզի աշակերտների մեջ պատվազտի այդ ս.-մեքուպյան արտասանությունը: Եկավ նա. ասում էր մեզ. «Ասե՛ք՝ ուղղորմուղդ, աշակերտներն ասում էին՝ «պղղորմուղդ»։—Չ'ենեղավ. մին էլ ասե՛ք՝ ուղղորմուղդ»։—Աշակերտներն այս անգամ՝ «ուղղորմուղդ»։—Էդ ի՞նչ եք ասում, քառանգաչներ. ուղղորմուղդ լի, — ուղղորմուղդ»։—Աշակերտներն ասում էին՝ «ղղորմուղդ»։ Եվ այսպես, լարվարվեց խեղճ ծերունին երեք օր միայն ու հեռացավ, ս.-մեքուպյան արտասանությունն էլ հետը տարավ: Աշակերտներին մեջ մի հիշատակ մնաց. «քառանգաչներ, կաշաղակը թռավ, մեկ էլ՝ մեր սովորական սղղորմուղդ արտասանությունը:

Չի՞ վախճնում արդյոք Ս. Մ.-ը, որ իր բարբառակից ուսուցիչներն էլ «քառանգաչ» աշակերտների հանդիպեն և «կաշաղակ» չեմ հանենա նպիսկուպոսի պես թռչեն՝ առանց սովորեցնելու յ-ի կարծեցյալ սուղիղ, «գեղեցիկ» արտասանությունը: Եվ մարդ հասկանա, թե ինչի համար է կամենում Ս. Մ.-ը կատարել «այս բռնությունը»՝ պատվաստելու մի հնչյուն, որ չի եղել մեր հին լեզվի մեջ, չկա նոր գրական լեզվի մեջ, չկա և բարբառների ամենամեծ մասի մեջ, մի հնչյուն, որի համար նույնիսկ տառ չկա: Ասենք, այդ առաջարկն անողն ինքն էլ գիտե, որ այդ գլուխ գալու բան չէ: Նա այդ ասում է միայն նրա համար, որ ուղղագրության ռեֆորմի ժամանակ մեր յ տառը պահենք երկու տարբեր հնչյունի համար, մեկ՝ իր բուն բաղա-ձայնական ի հնչյունի համար, մեկ էլ՝ բառասկզբի հագագի համար, որպեսզի

նախ՝ մեր աշակերտները զգործնական տեսակետով միշտ գործ ունենան անելու և լզրկվեն յ-ով սկսվող բառերն անգիր անելու կարևոր աշխատանքից... և ապա՝ ինքը Ս. Մ.-ը լզգվի...

Քն չէ՝ եթե յ-ի փոխանակ և գրվի, այն ժամանակ էի՝ նշ պետք է անի այն ընթերցողը, որ ժողովրդական հեյլունով (այսինքն՝ Մշո և Կարնո բարձրների ձայնը հագագով) է արտասանում յ-ով սկսվող բառերը, -- 'ափշտակել, 'անկարծ և այլն (այսպիսի ձևով է գրում ինքը Ս. Մ.-ը)։ Եվ պատասխանում է ինքն իր հարցին. «Նա ստիպված պետք է լինի ամեն անգամ զգվելով կարողալ հ-ով գրութունը—հափշտակել, հանկարծ, հոտնկայած, Ս. Մ.-ը լզիտե, որ իր զգվումը դեռ ոչինչ չի ասում. եթե նա զգվում է մեր ամբողջ լնդի մեջ գոյութուն ունեցող և հեյլունից, ուրիշներն էլ կարող են այդ զուտ տեղական հեյլունից, անձայն հագագից զգվել, և կան զգվողներ, Մի օր Երվանդ Լալայանն այդ հեյլունի համար այս բառերով արտահայտվեց. «Այդ զգվելի, ոչխարային ձայնը, 'իհ' հիմա որի զգվանքն է համոզիչ, Ս. Մալխասյանցի», որի մայրենի բարբառի մեջ, երեխ կա այդ հեյլունը, թե՛ Եր. Լալայանի, որի մայրենի բարբառի մեջ պետեմ, որ կա այդ հեյլունը, Այս սողերը կարողացողների ամենամեծ մասը, հարկավ, գաղափար չունի Ս. Մ.-ի այդ սիրեցյալ հեյլունի մասին և չի կարող իմանալ, թե արդյոք Լալայան է ճիշտ բնորոշել այդ անծանոթ հեյլունը, թե՛ Ս. Մ.-ը, Բայց մենք շարունակենք Ս. Մ.-ի սուգը։

Եթայց ի՞նչպե՞ս պետք է վարվեն այն ուսուցիչները կամ գրողները, որոնք բառասկզբի յ-ն չեն արտասանում ինչպես ե... Պատասխանը պարզ է—նրանք պետք է ստիպված լինեն իրենց ռվիդ, գեղեցիկ, փափուկ արտասանութուններ փոխել և յուրացնել արվեստական, սխալ արտասանութունը։—

Ինչո՞ւ ուսուցիչներ ու գրողներ. որոնք թիվը լեզուն է. իսկապես ծանր է նրանց մի՞նակը՝ թողնել իրենց տեղական արտասանութունը և յուրացնել ընդհանուր տարածվածը, հրաժարվել այն հին գիտնական առասպելից, թե ձայնից հագագը յ-ի հեյլունն է, սուղիդա հեյլունը... այդ՝ նրանց համար սոսկալի հարված կլինի։

Եթայց որե՛կ լնդի մեջ տեսնված բան է, որ ուղղագրութունը բռնազրոսն խոսողի արտասանութունը, ստիպի նրան թողնել իր քնական, գեղեցիկ ու կանոնավոր արտասանութունը և յուրացնել արվեստականը, տեղն ու անկանոնը,—հարցնում է Ս. Մ.-ը՝ վշտահար սրտով ցավելով, որ «հափշտակել» գրությամբ պետք է կորչի «հափշտակել» արտասանութունը, Բայց մի՞նչու Ս. Մ.-ը քիչ հետո ուրիշ առթիվ գրում է. «Նա համոզված եմ, որ այդ միկրոֆոնական ուղղագրութունը (գնացել եմ և գնալու յեմ) չի ազդի խոսող մարդու վրա. է-ով արտասանողը կշարունակե արտասանել ըստ իր սովորության, է-ով արտասանողն էլ նույնպես։—Թող համոզված լինեն, ուրեմն, նաև մյուս խալալխացի ու ապարանցի ուսուցիչներն ու գրողները, որ «հափշտակել» գրութունը չի ազդի իրենց բնական «հափշտակել» արտասանության վրա, և իրենք կշարունակեն արտասանել «հափշտակել»։ Եվ իսկապես, Ս. Մ.-ն էլ գիտե, որ 1500 տարուց ի վեր գրում ենք՝ մարդ, ոտ աղլիկ և այլն, բայց այս ուղղագրութունը իսկի չի բռնազրոսն և չի բռնազրոսում խոսողի արտասանութունը, և նա կարողալիս արտասանում է՝ մարդ, վոտ, ախլիկ, կամ ախլիկ։ Բայց մի՞նչու Ս. Մ.-ը չի կարողանում «հափշտակել» տեսնել և «հափշտակել» կարողալ Զէ՛ որ և տառը, դա ուրիշ բան

է, դրա տեսողական դժարութիւնն այնքան զորեղ է, որ խեղճում է Խառնի մկանային շարժման մտապատկերը և թույլ չի տալիս նրան արտաստեղծել ձայնեղ ի հազագո... և հոսողը էրթնում է իր քրնականա արտասանութիւնը: Խնչ հանելուկներ են սրանք, Խնչ՞ Կարող ենք մեղ-մարդ գրել, և մարդ-տեսանել, իսկ նոր հափշտակել ենք գրում, Ա. Մ.-ն այլև չի կարողանում 'ափշտակել'—արտասանել: Բայց նոր գրում ենք յափշտակել—յափշտակել, տասանել 'ափշտակել': Զէ՛ որ ոչ հափշտակել, և ոչ էլ յափշտակել գրութիւնները չեն արտահայտում 'ափշտակել, արտասանութիւնը:

Թո՛ղ հանգիստ մնա Ա. Մ.-ը, հիմն 'ափշտակել' արտասանութիւնը քրնական է նրա համար, հափշտակել գրութիւնը նորոգ չի բանալու: Նրա 'ափշտակել' արտասանութիւնը ևս նոյնիս, Բայց այդպիսի գրութիւնը դարձեց կազատի ամիսող ուղղագրական նախնիքները: Երբեք հայերէնի հնչյունի համար միայն մեկ և տակ ունենք և մեն անգամ էլ հազագային հնչյունը՝ լինի ձայնեղ թն անձայն, գրելիս այդ մի տառով կարտահայտվի, իսկ կարգալիս մենք կարտասանենք անձայն հազագով, իսկ Ա. Մ.-ի բարբառակիցները՝ ձայնեղ հազագով (նթն այս է բնականը Կարտահայտում, հիշտ ինչպիս աննակ (սաննակ) և այլն գրութիւնները մենք արտասանում ենք բարբառակա՛ն իսկ իրեն յենիակ, իսկ ուրիշներն, ինչպիս աննակ, արտասանում են նույնիսկ ըմբան յ-ով՝ յենիակ, և այլ՝ ոչ ոքի համար ոչ մի արտասանական, իսկ սենյակ գրութիւնը կան ուղղագրական դժվարութիւն չի պատճառում: Այս է այս խնդրի բանական լուծումը, և դրանով նույնիսկ բարբառութիւնն արժանի կլինի մշտնիւնքի ու կարենք անողական հնչյունասիրութիւնը, Թն լէ՛ պնհնթնթութիւն է ասել, թն է տառը պնթ է պնհն ձեկ՝ իր բուն կիսանայն ի կամ չ հնչյունի համար (ձայն, գոյական), մեկ էլ՝ բարբառային ձայնեղ ի հազագի համար, և որովհետեւ հայ ազգի մեղ միայն Մշտ և Կարտ բարբառի մարդիկը գիտեն, թն ինչ է այդ ձայնեղ հազագը, ուստի ուսուցչութիւնը պիտի դարձնենք դրանց մեկնալու: Երկուսդի սեղ տանեն նրնաններին ուրիշ (այսինքն) ձայնեղ հազագով՝ արտասանութիւնը ցույց տալու... և մոռացնել տալու ընդհանուր տարածված արտասանութիւնը անձայն հազագով:

Ահա՛ թն ուր է հասնում տեղական հնչյունասիրութիւնը, Դա ոչ միայն իրենը բուրդը է կարծել տալիս, այլև ուզում է այդ կարծեցյալ բուրդը կնքպով մտցնել հայ ազգի մեղ: Բայց դա մի ցնորք է միայն Փրական-գալարական լեզուն ունի իր յ-հ արտասանութիւնը, և այդ արտասանութիւն հիման վրա մենք ուղղագրական ռեֆորմը կանենք, գրելով՝ հատակ, հարմար, հափշտակել՝ առանց ուղղագրութիւն դարձնելու, թն կարտ կամ Մշտ բարբառներին մեղ ինչպիս են արտասանում մի քանի այս կամ այն բառերը: Փրական լեզվի ուղղագրութիւնը պետք է բավարարութիւն տա գրական-գալարական արտասանութիւնը և չի կարող միշտ միաժամանակ բավարարութիւն տալ նաև և՛ այս, և՛ այն բարբառին: Եթն Ա. Մ.-ի պն ձայնեղը լինենք, մենք այժմ շատ բան պնթ է գրարարի ձեռով գրենք, որովհետեւ բարբառներին մեղ տարբեր կնքպով են արտասանում: Օրինակ՝ անցյալ գործար, գիցող, հին մտեալ ևս ձեղ քանի-քանի տեսակ են այս-տեսանում բարբառներին մեղ՝ մտել աս, մտել աս, մտալ աս, մտել լնա, մտել

Իս, մտնո ես, մտեր իս, մտիք ինս, մտիք ես և այլն: Բայց Ս. Մ.-ը գրում
 է՝ մտնել ես, ու չի բազմացում. թե պետք է պատճի, Հին Հանալ նա գրությունը,
 որովհետև «այդպիսի բառերը ժողովրդի արտասանում է ամեն մեկն ըստ
 իր գաղափարի արտասանության, այնինչ, եթե ն-ով (մտնել) գրելու լինեիր,
 բարձր էլ ստիպված պետք է լինեի ն-ով արտասանել, այնինչ՝ որոշ դա-
 վանների ժողովրդական» արտասանությունը պետք է բռնադատվի իրան
 օտար մի Հնչյուն քննություն: Անթուլյատրելի է այդպիսի գաղափարի փա-
 փան ու ճիշտ արտասանությունը զոհ բերել ուրիշների նորամույթ և սգեղ
 արտասանությանը: Բայց այս չի ասում Ս. Մ.-ը, նա հանգիստ գրում է՝
 մտնել ես, և հաղարավոր ուրիշ բառեր՝ փոփոխված ուղղագրությամբ, ասանց
 ուղադրություն դարձնելու, թե դրանով բռնադատում են գաղափարական արտա-
 սանությունները: Իսկ նրա խնդիրը գալիս է բառակցքի Հին յ—յ գրությունը
 որոշող մեջ է գալիս և իբրև Հիմք ծառայեցվում, թե պետք է պահել Հին
 ըտողը մեջ է գալիս և իբրև Հիմք ծառայեցվում, թե պետք է պահել Հին
 յարմար = yarmar գրությունը: Լնյո Հիմքը, սակայն, մեզ համար, հարկավ,
 նույնքան արժեք ունի յարմար = հարմար գրության նկատմամբ, որքան և
 մտնել ես = մտնել ես գրության: Եվ որքան Ս. Մ.-ը կարող է նոր մտնել ևս
 գրությունը շուտ տալ Հին մտնել ես գրությանը, որպիսի որոշ գաղափարի
 տեղական արտասանությունը լրանագատվի, նույնքան էլ նա կարող է նույն
 նպատակով նոր հարմար գրությունը շուտ տալ Հին յարմար = yarmar գրու-
 թյանը:

Բայց այս համեմատությունը դեռ ճիշտ չէ. որովհետև Հին մտնել =
 մտնել, մտալ, մտիլ, մտնո, մտնի, մտիք և նրանք իրենց մեջ ունեն հաղարավոր
 քայնի շատ գործածական անցյալ դերբայները, իսկ քանի՞ բարբառներ
 ունեն ձայննո յ հաղաղը, և այդ բարբառների մեջ յ-ով սկսվող քանի՞ բար-
 բառային բառերի սկզբում է երևան գալիս այդ յ = յ Հնչյունը: Ես հավա-
 տում եմ, որ Ս. Մ.-ը յար և հար, յոնք և հոնք գրությունները տարբեր
 արտասանելի դիտեմ, բայց պնդում եմ, որ նա այդ բառերի տարբեր արտա-
 սանությունները արվեստականորեն է յուրացրել և պատմական իր մեջ և
 ոչ թե երևիս հասակից իր մայրենի բարբառից յուրացրել: Կարո՞ղ է նա
 արդյոք ապացուցել, որ Ախալցխայի բարբառի մեջ կան Հին լեզվի յ-ով
 սկսվող բառերն իբրև բուն ժողովրդական բառեր (և ոչ իբրև գրական փո-
 խառնություններ) իրենց սկզբի յ = յ ձայննո հաղաղով, և ինքն այդ բարբա-
 րից է սովորել այդ յ-ով բառերը տարբեր արտասանությամբ: Կա՞ն այդ
 բարբառի մեջ, որինակ հենց՝ յար, յոնք (այսպես և վո՞ղ՝ վոնք), յափշտակել,
 յոշտոնել, յապաղել, յամել, յապավել, յածել, յագնալ, յակինթ, յամույր,
 յաճախ, յամառ, յամրաքալ, յայրատ, յանդիմանել, յառել, յաշաղանք, յար-
 դարել, յարկ, յավերժ, յղկել, յղփություն, յոգնակի, յորենան, յոգ, յախու-
 ռն, յոխորալ, յորձանք, յովաղ և յ-ով սկսվող ուրիշ շատ բառեր, որոնք
 այդ բարբառի մեջ ապրելիս լինեին իբրև բուն բարբառային բառեր՝ իրենց
 սկզբի յ = յ ձայննո հաղաղով: Ես դարձյալ պնդում եմ, որ ինչպես ուրիշ
 բարբառների մեջ, նույնպես և Կարնո բարբառի մեջ, յ-ով սկսվող բառերը,
 սակավ բացառությամբ, մնում են, և կենդանի մանցածներից կամ սկզբի
 յ-ն գուրս է ընկնել և կամ, գուցե, մի 10—15 բառ միայն ունենան սկզբի յ = յ
 ձայննո հաղաղով արտասանությունը: Եվ սգալ մեկ ու կես տասնյակ բառեր
 արվեստական արտասանության համար... Նա որ այդքան սիրահար և պաշտ-

պան է այդ տեղական հնչյունին, թո՛ղ հեղուքյան կրի լրջորեն ըուլց տալու, թե քանի՜ այդպիսի բառեր կան իր մայրենի բարբառի մեջ։ Դա, իհարկե, արժեք չի ունենալ ուղղագրութեան տեֆորմի տեսանկեւոյց, բայց կարեւոր տեսանկեւով, օրինակ՝ Ախալցխայում աշխատող ուսուցիչը կ'ըմբռնէ թե քանի բառի տեղակալ է 1—2 ձայնեղ հազազով արտասանութիւնը պետք է աշխատի մոռանալ տալ փոփոխութիւններին և պատմական Նրանք մեջ եւով արտասանութիւնը, այսինքն՝ քնու՛նար դրական արտասանութիւնը։

Ա. Մ.-ի զգովանքը հիմա լափ ու սանձանից անցավ իմ այս խոսքի վրայ—Իզուր. քրովհետեւ հենց այդ է նախապէս ամեն գրական-գաղութական լեզվի, որ դրի ու դպրոցի միջոցով պետք է ազդի բոլոր բարբառներին վրա և սովորեցնի տարբեր բարբառներով խոսող մարդկանց միակերպ խօսել, միակերպ արտասանել։ Նա պետք է բարբառները մոտեցնի իրեն և, վերջի-վերջ, աշուղ դեպքում, իշխի բոլոր բարբառներին վրա և բարբառների միացում առաջ բերի, և ինքը դառնա քնդհանուր լեզուս Այս է գրական-գաղութական լեզվի գլխավոր նպատակը, և սրան ահաի մօտ գալոցը։ Իսկ այս նպատակին հասնում է գրական լեզուն ամենից առաջ միակերպ արտասանութեան շնորհիւով, Եվ Ա. Մ.-ն էլ զպրոցում. հարկաւ թույլ տալիս, որ իր թիֆլիսցի տեղակիները այս խոսքերը քաղի, քաղաւորը որ շատ մերտնում է... կարգային կամ խառնի արտասանելի՝ ավարթի, թարգմանող վրա շատ մերտնում է և։ Նույնպէս էլ Ախալցխայում ուսուցիչը լպիտի Թույլ տա, որ աշակերտները տեղական 1—2 ձայնեղ հազազով արտասանեն մի քանի բառեր, եթե որ այդպիսիները կան տեղի բարբառի մեջ, Այսպէս և ամեն կողմում, ամեն տեղական հնչյունների նկատմամբ։ Գրական-գաղութական լեզուն իր արտասանութեամբ պիտի իշխէ, հենց որ գրականութեան ու դպրոցը մտնում է մի տեղ։ Եւ ուսուցիչներ գիտեն և մտնում են, որոնք մանկութեան ժամանակ կարեն կամ Մշո բարբառով են խօսել, բայց այժմ մտքներով անգամ չի անցնում կարգալիս կամ խոսելիս 1—2 ձայնեղ հազազով արտասանել, և նրանք ինքով չեն էլ զգովում հափշտակել, հափշտական, հոտնկայս, հապաղել և նման բառերը եւով արտասանելուց։ Եվ ինչո՞ւ պետք է զգովենին։ Այդ և նման բառերը գոյութիւն չունեն նրանց մայրենի բարբառների մեջ. նրանք զպրոցում են սովորել այդ բառերը, և սովորել են քնականորեն այնպէս արտասանել, ինչպէս զպրոցում ամեն տեղ արտասանում են։ Իսկ Ա. Մ.-ը մի քանի բառի իր տեղական հնչյունափոխութեամբ աշխատում է, որ նայելիս կարծում է, թե ճշմարիտապէս ճշմարտական և այլն արտասանութեամբ գործադրում է քաղութիւնն ժողովրդական արտասանութեան վրայ, իբրեւ թե ժողովրդի մեջ, այսինքն՝ Մշո կամ կարեն բարբառներում, կան այդ բառերը 1—2 ձայնեղ հազազով, և այդ բարբառների մարդկանց բոնութեամբ ստիպում են թողնել իրենց բոլորից արտասանութիւնը և սխալը սովորել։ Բառերը գոյութիւն չունեն այդ բարբառների մեջ, իսկ այդ գոյութիւն չունեցող բառերի սկզբի 1-ն, ըստ Ա. Մ.-ի, գոյութիւն ունի, և այդ սկզբի 1-ի արտասանութիւնը բռնադատում է։

Եվ երեսնայնեցե՛ք, որպէսզի այդ բռնադատութիւնը չլինի, և ինքը չզգովեն, եւ մի լավ միջոց է գտել, նա յանկիթ, յաճախ, յամուլ, յանց և այլն, ավելի քան 30 1-ով սկզբող բառերի սկզբի 1-երը, քառանց որն է

թյուրիմացութիւնն, դեն է ձգում ե մեզ էլ առաջարկում, որ գրենք՝ ակնհայտ, ահալ, ամուլ, անգ, արձակվել (այսինքն՝ հայրձակվել), ամերժանքն ևն այլն. Ափսո՛ւս այդ փափուկն, զգեղեցիկն և տուղիղն յ-երբ «Բայց» Դրնէ լեզվի մէջ տեսնվա՞ծ բան է», որ մեկը քմահաճորեն ավելի քան 30 բառերի սկզբի հնչյունները դուրս ձգի։ Ասում են՝ ժամայն ունվարին, ունիսին և ունիսին անդուզն կերպով ոխորտակով, արձակվում են սիրելիի վրա, ամբը-տակում են նրան և ոշտում մի ավերմական թյուրիմացութիւնը, բայց ազնեալուց ետո ոչոց են հանում... Շատ սիրելուցն է, ուրեմն։ Ենթ հանուն ինչի՞ կատարվում է այս բռնութիւնը մեր ամենքիս, նույնիսկ իրեն Ս. Մ.-ի արտասանութիւն վրա։ Մինչդեռ ես դժկարանում եմ լեզվի մէջ կրկին առասանութիւն և կրկին զօրքիւն ունեցող որոշ թվով բառերի երկու տարբեր ձևերի մէջ ընտրութիւն անել և ասում եմ միայն, թէ ճշմարտութիւնը և արժանիքը յ տառ նաև դուրս է ընկնում, և թե թայդ բառերը կարելի է առանց սկզբի և տառի ես գրել՝ ախճապակ, ախուռն Երկրի, ամպար, ալքատ, ալաղանք, ապավել, ալոզ, արգոն, ինչպէս որ գրվում էլ են, Ս. Մ.-ը ուղղապարտութիւն ղեկավարելու նպատակով այդ գրութիւնները, որ նոր չեն, իմ մտքածը չեն, քաղաքութիւնն է համարում, լայն և միաժամանակ բարկանալով, որ մեր լեզուն բոլոր բառերի սկզբի յ-երը դուրս չի ձգել, ինքը կացինն առնելով՝ ուղղակի գլխատում է յ-ով սկսվող անպիտանութիւնները, որոնք երբեք առանց յ-ի չեն արտասանվել և գրվել, և որոնք զգուշ եմ, որ մեռած տեղից հարութիւն են առնւ... Եվ ինչի՞ միայն ավելի քան 30 ալգայիսի բառի դեմ միայն թշնամութիւն անել և չլիսատել նաև բոլոր յ-ով սկսվող բառերը. և ինչի՞՞ զգուշելիս և-ով սկսվող բառերն էլ չլիսատեն, ի՞նչ որ դրանց համար էլ սօրիականերն կան՝ հավատալ—ամատալ, համար-ծում—ամբարծում, հաճար—աճար։

Ի դեպս. Ս. Մ.-ն ի՞նչպէս է առաջարկում կարգալ իր գլխատած բառերից մի երկուսը՝ ոչոց հանել, ոխորտալ։ Կարո՞ղ են դրանք չկարգացվել վոգոց հանել, վոխորտալ. թե՞ որպէսզի այսպէս չկարգացվեն, պետք է գրել՝ ոչոց հանել, օխորտալ։

Ս. Մ.-ը մի բան էլ է ասում, որ կարող է մի բոլորեցնել անտեղ-յակներին։

«Բարեփոխված բառերի ցուցակում զետեղված է և հոտնկայս (այսինքն՝ յ+ոտն+կայ+ս, ոտքի վրա կանգնած)։ Սրա հետեւողութիւնը, ուրեմն, պետք է այսուհետև գրենք ու արտասանենք ցուցակում չբերված այս բառերն էլ. համենայն դեպս, հոգուտ (= յոգուտ), հանպատրաստից, հակամայից, հանուն մեր բարեկամութիւն և այլն, որոնց մէջ և տառ փոխարինելու է յ նախդիրը։

Այո՞, հենց այդպէ՛ս, ճիշտ է հասկացել Ս. Մ.-ը։ Բայց նա ի՞նչու երեւակայում է, թե ինքը դեռ գրաբարի ուսուցիչ է և աշակերտներին սովորեցնում է յ նախդիրը՝ գրատախտակի վրա գրելով և բացատրելով յոտնկայս բառի կազմութիւնը։ Անշուշտ, զժվար է ուսումն սկսել՝ գրաբարով, շարունակ գրաբար գրել ու կարդալ և 30 տարի գրաբար սովորեցնել և հանկարծ տեսնել՝ հոտնկայս, հոգուտ, հանուն գրութիւնները։ Բայց այդպէս միայն գրաբարացած մարդկանց համար. իսկ մեզ նմանները, որ գրաբար չեն սովորել, երբ այժմ Երևանի Արժանի փողոցում պատերի վրա հաճախ տեսնում ենք «Հոգուտ» բառը, երբեք էլ չենք ըմբոստանում դրա դեմ և այդպէս՝ արտասանութիւն համեմատ գրելը շատ էլ բնական ենք գտնում։

Մի ժամանակ մեր լրագրներում, շատ ցածրակարգ էր Ավետարանի առ-
խառնը։ Եւ իսկ ըստ քաղաքական 1911 թ. ամսագրի եւ առիթ ունեցա-
մի զանգատ, որի մէջ գրած էր՝ «Մեր խառնը միտմ է մայր քաղաքում (ա-
խառնը) Էրիշտ գրադար գրութեամբ բայց ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը, ինչո՞ւ
հետեւ քաղաքատէր բառի վերջի յետ անձայն է մնում և դուրս պիտի ձգվի,
և եւ համաձայն եմ դրան. իսկ ու եւ օտարապետութեամբ նույնանման են,
և եւ արագարկում եմ բառերի վերջում եւ փոխանակ օ գրել. ուրեմն՝ այն
մարդը շատ ուղիղ է գրել ժողովրդին։ Բայց այն ժողովրդի մարդը գրել էր
նաեւ թշնամապետիւ։ Ս. Մ.-ը գրան պատասխանում է ինչ՝ այդ ժողովրդի
մարդը թանկացրել է հակամոլորդական խառն ուղղագրութեան, որովհետեւ
նրա մէջ պատասխանել են և ում միայն արտասանութիւնը։ Բաժանեան էր
միայն, որ այդ դամարտեցում, որի բարբառի մեծ չէա յայնեղ հագագը,
ցցուց տալին ուղիղ արտասանութեանը։ Մեկ էլ՝ ասկէն, թե յետեւ նախդիր
է, այդ հակամոլորդական փառն այնքա չէր ինչի, և եւ զամարտեցին
կգրեր մեր նախնիքների սրբազան, որ էրան ժողովրդական ուղղագրու-
թեամբ յայնապետին։

Ս. Մ.-ը, նրին, յգիտեւ, որ յ նախդիր գոյութեան լուսնի մէջ նոր լեզվի
մէջ, եւ յայնեւա, յգտու, յանուեւ և այլն բառեր գրադարից տուտ՝ պատ-
րաստի քաղաքում բառեր են միայն, մակբայ կամ նայինիկ նախադրութեան
զարման, և եւ որ գրադար չգիտեւ. նրա հասար այդ բառերի սկզբի յետ
հնչյունը ուղիղ-ուղիղ յի տուտ նրան. Մի անգամ որ յետ, իրան նախդիր,
գոյութեան լուսնի նոր լեզվի մէջ, էլ ինչո՞ւ յգիտի ընդունի յետ գոյութեանը։

Բայց յ նախդիր, հնչուեւ կարող է եւ տուտ փոխարինել յ նախդիրը,
այլ զամարտեցին հակամոլորդական գանգատ գրող։ Եւ նախդիրը կարող
է հնչափոխութեամբ մեծել ու կարել և գոյութեանից դուրս ընկնել (յաջող-
աւոր, յաւոր—տուտ), և որող է նաեւ կարող գլխաւորել ու դնել ձգվել (յաջ-
ձակվել—արձակվել), բայց իրավունք լուսնի և զանուտու և և գրվելու, որով-
հետեւ ու նախդիր է։

Բայց մի հարց Ս. Մ.-ին, ի՞նչպեւ է նդել, որ մեր նախնիքը գրել են՝
ի հաղաւ, բայց յայնեւ, ի վնաւ. բայց յագուտ։ Այդ ի՞նչպեւ է նդել, որ
թուլատուրվել է յ տառին փոխարինել յ նախդիրը։ Ի՞նչ ապօրինի ծնունդ է,
ուրեմն, գինջ ևս յայ յ նախդիրը։ Ի՞նչ իրավունքով դա գրվել է յ նախդիր
տեղ։ Այդ կարելի է. երբ կենդանի յ նախդիրը հայտնի ձայնավորից առաջ
գառնում էր յ կարող էր յ առաւով էլ գրվել և գրվել է. բայց երբ մեծած
թարաքած յ նախդիրն ինքն է դարձել և, դա լի կարող և տառով գրվել,
որովհետեւ մեր պապերի լեզվի մէջ դա նախդիր է նդել։

Բայց մի ուրիշ հարց էլ Ս. Մ.-ին, Արդյոք միայն մեծած յ նախդիրն
է նա իրավունք տալիս, որ իր գոյութեամբ օտարապետ և զիջի մին ի գալուտան
Քրիստոսին, թե՛ նաեւ մյուս մեծած նախդիրներին. Ս. Մ.-ը պատասխանում
է՝ միայն յ նախդիրն. մյուսները զրկված են այդ իրավունքից. Եւ այդ պատ-
ճառով նա հանգիստ սրտով գրում է՝ ըմբռանել, ընկճել, ըմբռնել, քաղել,
սփածանել և նմանները, և երբեք չի մտածում դրանց սկզբնական ձևի վրա՝
ընդ-ըմբռանել, ընդ-գճել, ընդ-ըմբռնել, զ-քողել, զ-սփածանել, և նախդիրը, դա

մի ուրիշ բան, դա թուր նախդիրների մեջ մի արտոնատեր ազնվական ուստի մեծած տեղն էլ այնպես պիտի գրվի, որ երևա դրա ալատման հաշիվ ծագումը...

«Մեր նախնիքը, առանց երկար ու խոր մտածելու, հետևել են այս պարզ մեթոդին, թե բառը պետք է գրել այնպես, ինչպես հնչվում է, և պետք է հնչել այնպես, ինչպես գրվում է. այս սկզբունքին հետևելով՝ առաջ գրում էին «առնել», երբ այդպես էլ արտասանում էին. իսկ երբ բառի արտասանությունը «իսկային» միջին դարերում սկսեցին գրել նոր արտասանության համաձայն՝ «այնել»։ այս արտասանությունն էլ իր հերթին սղվեց և վերածվեց երկու ձևի՝ «անել» և «լնել», և այս գրությունն ձևերն էլ մտան գործածության մեջ։ «Հայերեն ուղղագրությունը... շարունակ փոփոխել է ուղղագրության ձևերը՝ հարմարեցնելով արտասանության, այնպես որ գրությունն ու հնչյունը միմյանց համաձայն լինեն։ Ուրիշ խոսքով ասելով՝ հայերենը ուղղագրության մեջ հետևում է հնչական սխառման (գրում է այնպես, ինչպես հնչվում է բառը). իսկ ֆրանսերենը պատմականին, որ մենք կոչում ենք պլանդուիան ուղղագրություն։ Այս խոսքերն էլ Ս. Մ.-ին են, քայք 14 տարի առաջ գրված։ Այժմ նա թողել է ուղղագրության հնչական սխառման և կողմնակից է դարձել պլանդուիան կամ ավանդական սխառման, որ կոչվում է նաև ստուգաբանական սխառման Դիտե"» ինչու համար։ Ուղղագրության ուղղագրությունը «հակաթողովրդական» չլինի, և ժողովուրդն իմանա յուրենկայս, յանուն, յոգուտե բառերի ստուգաբանությունը, և այն, որ դրանց սկզբի յ=հ հնչյունը մի հին նախդիր է.—մի կարևոր գիտելիք ժողովրդական լայն խավերի համար։

Եվ այս նշանակում է «անկեղծ կողմնակից լինել մեր ուղղագրության արմատական ուժեղմունքին։ Ս. Մ.-ը մի բան մոռանում է. «Ստուգաբանական հիմունքն ուղղագրության մեջ մի տեսակ հակակցիոն է հնչարանական հիմունքին. դրանով հաճախ առաջնորդվում են ուղղագրության մեջ փոփոխություններ մտցնելու հակառակորդները, Ստուգաբանական հիմունքով, որ սիրելի է առանձնապես գիտնականներին ու բանասերներին, պահանջում են, որ բառերը պահեն իրենց հին պատկերը»... Բայց ո՞ւմ համար հարկավոր է հետևել այս բառի ստուգաբանական գրությունը. գիտնականը, որ զննում հասնում է հնդեվրոպական մայր լեզվին, առանց դրան էլ կիմանա, որ այդ բառի հ հնչյունը հին յ նախդիր է ծագում, ինչպես և գիտեն, որ այս յ-ն էլ իր կողմից ի նախդիր է, իսկ ի նախդիրը մի որևէ ուրիշ բառից. իսկ սովորական գրագետներին շատ պետք է, թե հետևել այս բառի սկզբի հ հնչյունը մի ժամանակ նախդիր է եղել իր որոշ ձևական նշանակությամբ, ինչպես և Ս. Մ.-ի շատ պետք է, թե ըմբռնել, ընկրկել, զարույթ, զգուշ, զգեստ, սփռել բառերի սկզբի ըմ, ըն, զ, և հնչյունները մի ժամանակ նախդիր են եղել։ Ո՞վ ունի այժմ այդ մեծած տարբերի լեզվական զգացումը, և կամ գրարար լիմաքոդ մարդկանցից ո՞ր մեկն ունի այժմ յանուն, յանելայս, յոգուտ բառերի սկզբի յ հնչյունի ձևական նշանակության զգացումը, որ նույնչափ մեծած է, որչափ և սփռել բառի ս=զ նախդիր ձևական նշանակությունը։

Մեծած, քարացած կազմություններ, մակրայններ են նաև ի դեպս, հա-

* Ցե'ս իմ հոդվածը «Մեր ուղղագրության մասին», «Արարտ», 1913, № 11 և 13, էր. հաշիվ հանել։

մենայն դեպս, որ վերջիվերջո պետք է սրացած գրքին, ինչպես և այս վերջի-վերջո բառը, և առնվին իրքն մի բառական մեկության, ինչպես և վաղուց միացած գրում ենք՝ վերոպահան, այնուհետև իսկ ինչ վերաբերում է լույս-նակի բացատրական հոլով. շատ-շատ՝ դրանք ից վերադարձյալն պատեա-հանելիս լինեք ժամանակակից լեզվին, նա նկատած կլինեք, որ նույնիսկ պատրաստից, ոչ թե յ—(—) (զերո) հնչյունափոխութամբ, այլ ըմբռնելով իբրև հզակի բացատրական:

Այսպես, ուրեմն, Ս. Մ.-ի բոլոր առարկությունները յ—հ արտասանու-թյան և գրության նկատմամբ՝ ոչ մի առժեռ լույսին ոչ գիտական և ոչ գործ-նական տեսակետից. նրանք նույնիսկ զվարճալի են, նա ուղի-լուղի՝ պիտի հաշտվի այն մասի հետ, որ գրական դպրոցական լեզվի մեջ իշխում է յ—հ արտասանությունը, որ բառակցի յ—հ մասին հազազը, մի տեղական բար-բառային հնչյուն է, այն էլ յ—ով սկզբող սակավամթիվ բառերի սկզբում, նա պիտի հաշտվի այն մտքի հետ, որ այսուհետև արդի կարելի չէ վերականգ-նել բառակցի յ—ով գրությունը և հնչյունով. Դա մեռած, Յ տառը պետք է մնա միայն անվանակալին ի կամ y (յ) հնչյունի համար:

IX

«Ն տառը բառին սկիզբը կարժե ԿԵ, բառին մեջը՝ Ե (լատիներեն—Մ. Ա.)... սակայն ԿԵ կրկին ձայներու խառնուրդ մը ըլլալով՝ պետք չէ որ մեկ առաջը նշանակվի... ուրեմն, պետք է գրել Երեկ—երեկ, յէրեկ=yerek և այլն»:

«Ով կկարգացնի բառին սկիզբը ՎՍ, մեքք՝ Օւս ՎՍ ըլլալով կրկին ձայն՝ իրավունք չունենք մեկ տառով գրելու... պետք է գրել Եսկի—Եսկի, վսկի—voskiz: Գերականը կզանազանն միայն բառասկզբի ո և օ (ճիշտ ինչպես և է), որոնցմէ առաջինը կհնչի վօ, նրկրորդը՝ օս»:

Ահա՛ գրական արտասանությունը, որ գիտն ամեն գրագետ մարդ, և դիտական ուղղագրությունը: Կարծում եք, Ս. Մ.-ը տարբեր կերպով է ար-տասանում. քնավ ոչ, Վերոմոզ բառի առաջին ո-ն լսվում է ինչպես Եմօս, —ասում է նա: Եկյպես նաև ռիս=վոս... ոտք=վոտք... Եթե այդպես է, հասկա էլ ինչու՞ նա հակառակ է արտասանության համեմատ գրելուն՝ վո-դորմոզ, վոխ, վոսք:

Մի հին առասպել կա, որ ամեն գյուղացի գիտն: Ասում են, որ երբ Լուսավորիչը խոզացած Տրդատ Թագավորին բռնկելով նորից մարդ դարձ-րեց, նրա մի ականջը խողի թողնց ի հիշատակ Տրդատի խոզ դառնալուն: Ս. Մ.-ն էլ երբ փորձեց մեր վ հնչյունի խոզացած ուղղագրությունը բռնկել իր Եվեկավորութամբ, մի խողի գլուխ թողնց բառերի սկզբում. այն է՝ շնա-յելով որ ինքն էլ, մենք էլ արտասանում ենք՝ վոտք, վոդորմած, վոխ, բայց լուղեց այսպես գրելու:

Ս. Մ.-ի՝ իրեն ձեռով գրած մի թերթիկի մեջ, որ 1922 թվին հիշատակ

* Զ. Անտոյան, Բարբառագիտություն, հր. Յ հտն., 16:

** Ս. Մալխասյանց, Մի հնչյունին մի գիր. հր. ԷՍ:

է մենում ինձ մտա, ի միջի այլոց կարողում եմ. ճշնգոյնելի եմ համարում ե հասնանարարելի հետեւյալ փոփոխութիւնները.

1. Բառերի մեջ և վերջը բոլոր օ և է տառերի փոխանակ գրել ու և ե.

2. Բառերի մեջ և վերջը վ հնչյունն այս տառով միայն գրել՝ ավար, զվարթ, թիվ: Բառասկզբում, որանդ ու-ից առաջ լսվում է վ՝ թուլատրելի է գրել վ և չգրել ուղք կամ վոտք:

Այս էլ Ս. Մ.-ի կարծիքը 1922 թվին: Իսկ այժմ, 1924 թվի սկզբին ի՞նչ պատահեց, որ այլևս թուլատրելի չէ համարում վոտք գրել և պահում է բառերի վերջի է և օ գրութիւնները:

Նոր ուղղագրութիւն մտցնելու դեկրետի մեջ պատմիքոված է. «Ու տառից առաջ բառերի սկզբում, երբ արտասանւոյլամբ ավելանում է վ հնչյունը, գրութիւն մեջ ավելացնել վ տառը՝ վոտք, վոճ, վոճիւր, վորդի, վոգիս:

Իսկ իբրև ժանոթութիւն գրված է. «Երբ բառասկզբում ու տառից առաջ չի ավելանում վ հնչյունը, այլ ու տառը արտասանվում է իբրև օ, պահել լուկ ու տառով գրութիւնը, ինչպես՝ վոգչունել, բայց կը և չը մասնիկներից հետո առանց վ տառի՝ կոզչունեն, յոզչունեն. նույնպես բառակապութիւն ժամանակ՝ անորոշ, քնորոշ, անողորմ և այլն. այլև այն գաղաղակաճ բառերը՝ ոլորաի, ոքմին, ոչով, ողորմակոթ և այլն, որոնց սկզբի ո տառն արտասանվում է իբրև օ:—Այս միևնույնը նաև բառասկզբի ո տառից առաջ յ ավելացնելու համար, երբ արտասանութիւնամբ ավելանում է յ հնչյունը: Նույնը և իմ ժողովրդի մեջ. «Երբ բառերի մեջը կամ սկզբում ավելացել են եօր հնչյուններ, պետք է գրութիւն մեջ էլ ավելացնել դրանց համապատասխան տառերը, ինչպես՝ ... ոտ, եկ... վոտ, յնկա: «Ու տառից առաջ բառերի սկզբում ավելացվում է անկաշուն վ տառը ամեն անգամ, երբ արտասանվում է: Իսկ գրգռվի վերջում առաջին ժանոթութիւն մեջ. ժողովրդի ուշագրութիւն պիտի դարձնել, որ երբ բառասկզբում օ և ե տառերից առաջ չեն ավելանում վ և յ հնչյունները, այլ ո և ե արտասանվում են իբրև օ, է (լատ. օ, Է, ռուս. օ, Է), այն ժամանակ պահվում են լուկ ո և ե տառերով գրութիւնները: Դի պատճառով են այդպիսի դեպքերի համար օրինակներ՝ թվով հինգ:

Ինչպես կարելի է տեսնել, կանոնը շատ պարզ կերպով պատմիքում է հետեւել արտասանութիւնը, գրական-դպրոցական արտասանութիւնը, որի վրա հիմնված է բարեփոխութիւնը. բառասկզբում ու-ից առաջ երբ արտասանվում է վ հնչյունը, պետք է ավելացնել վ տառը, չի արտասանվում՝ լպետք է ավելացնել: Թե որքան այս բարեփոխութիւնը համապատասխան է գրական-դպրոցական արտասանութիւնը, այդ շատ լավ կարելի է տեսնել դրա հնշտ ու ճիշտ գործադրութիւնից լրագրների և գրքերի մեջ: Ամեն կարգացող, օրինակ, ով բարձր միշտ օՅ (օՅ) է կարդում, գրելիս էլ, քանկանաբար, այդ բառի ո տառից առաջ վ չի ավելացնել և գրի վով. իսկ ու կարգալիս արտասանում են սկզբից ավելացած վ հնչյունով. ուստի և նոր ուղղագրութիւնամբ կավելացնեն և ավելացնում են վ տառը և գրում վոտ: Ո՛չ մի թյուրիմացութիւն չկա, ո՛չ մի սխալութիւն և սկամայականութիւն, որովհետև ո՛չ վի բացառութիւն չի արված հակառակ արտասանութիւն, որով առաջնորդվում է ամեն գրող: Բայց Ս. Մ.-ին հենց այդ դուր չի գալիս, թե ինչու ինքը պետք է թխտի ականջը թողնել, իսկ նոր ուղղագրութիւն մեջ այդ թխտի ականջն այդպիսի հնշտութիւնամբ կարգել ու դեն ձգել: Այդ պատճառով նա զգործնական տեսակետով նոր ուղղագրութիւնը

գիմում է մի դործնական միջոցի և դրամ է. «Մ. Արեղյանը առաջարկում է արդյ միջոց» ուսով ակադեմի բաժնի ակադեմի ակադեմի վ (10-րդ կետ)։ Քայքայ ևս կանոնի դեմ բողոքում է կենսական ժողովրդական և քաղաքական քաղաքական լիակատար, որ շատ և շատ անգիտում և անորոշ պայմաններում ուրիշ առաջ վ լի լինում։ Եվ Մ. Արեղյանը իրեն հարկադրված է դրամ վերադառնալ անել և քաղաքական մի շարք բացառություններ իր ստեղծած կանոնի դեմ։

Հիմա, «Ինչ էր լավ, «Ինչ, որ Մ. Մ.-ը պարզապես ասեր, թե ինքը ավանդական ռազմադրամային կազմակերպ է, թե՛ նա այս առիթով գրել։ Զենք բերում մեկի ասածը՝ միջոց դուրս ձգելով մի մասը, ուրիշն է՝ մի նոր բան վերադարձնել նրան, և ապա լինե դառնում մեկի առաջին պահանջությունը ցույց տալիս հենց այն բանով, որ դուրս է ձգված, միայն է Մ. Արեղյանը առաջարկել թուրք սկզբից բաժնի ակադեմի ակադեմի ակադեմի վ (10-րդ կետ)։ Քե պետք է ուրիշ առաջ վ ավելացնել համար անգամ, նոր առաջարկում է։ Ինչ՞ դուրս է ձգված տեղի արտասանվում է խոսքով։ Ինչպե՛ս, ամեն շեքերից դուրս լինելով, որ Մ. Մ.-ն իրենից մի կանոն է ստեղծում՝ «ուսով ակադեմի բաժնի ակադեմի ակադեմի վ (10-րդ կետ)։ Ինչ կանոնի վերադարձնել է Արեղյանին և ապա գտնում այդ կանոնի պահանջությունը ցույց տալիս։ Գրական-պարզապես արտասանության բողոքն, ուրիշն, ոչ թե Արեղյանի գրած կանոնի դեմ է ուղղված, այլ հենց այս կանոնի դեմ, որ Մ. Մ.-ն ինքը բարեհաճում է ստեղծել իրենից և վերագրել Արեղյանին։ Մի անգամ, որ այս մտքից ցույց դրվում է, ոչ թե միայնակ օգն են ցնդում նրա թաղամասից ու բաղամասից, կամ ավելի կարգից կամ թմի շարք բացառություններ ասածը, որովհետև դրանք ուրիշ բան չեն, քայքայ ենթադրել, որ խոսքով պետք է պահել նոր ուղղադրամային հիմնական կանոնը, որ է՝ գրել գրական-պարզապես արտասանության համար, որտեղ արտասանվում է ուրիշ առաջ վ հայտնել՝ գրել վ տառը, իսկ որտեղ չի արտասանվում՝ չպետք է գրել։

Այսպես, ուրիշն, ավելի կարգի բացառություններ Մ. Մ.-ին իրեն պիտի վերադարձնել իրեն գրուած արտադրություն։ Քայքայ նա այդ կարծիքից բացառություններին մասին խոսքից՝ ուրիշ հետաքրքիր և զվարճալի բաներ էլ է ասում։ Ուստի, որպեսզի ոչ մի բան պակաս լինա, հետևենք նրա ասածներին, իմ «Առաջնորդի» հիշած ժանտիպային կետերի կարգով, որոնց մեջ բերված են օրինակներ. թե երբ քաղաքական ուրիշ առաջ լի ավելանում վ հայտնել, ուստի և չպիտի ավելացնել վ տառը։

1. «Պետք է գրել» վորդունել, վորդունել, յորդունել, քայքայ կը և չը մասնակներից հետո առանց վ և յ տառերի՝ կորդունեն, կորդունել, լորդունել, յորդունել, նա լինալով, նա լինալով, լինալով, լինալով, պիտի վորդունել, կորդունել, լորդունել, լորդունել։

Այս կետի համար Մ. Մ.-ը բարեհաճում է միայն այս հարցը լույս բերել։ Երազ նրախաղաղում է արդյոք Մ. Արեղյանը, որ վորդունել, վորդունել գրության ընտելացողները չեն արտասանել և չեն գրի նաև կվորդունեն, վվորդունել և այլն։ Տեսնո՞ւմ եք, Մ. Մ.-ը մեր լեզվի ապագայի համար է հոգում և ապագայի համար երաշխավորություն պահանջում։ Կարող եմ Մ. Մ.-ին երաշխավորել, որ հայերեն լեզվի մեջ 1500 տարուց ի վեր գրել են բոլորը, ողջունել (օրոշել, օղջունել ըստ հին արտասանության), քայքայ

և այնպիս այդ ողջունել, որոշել գրութիւնը շատ վաղուց Երեսնայացողները շատ վաղուց արտասանել են և արտասանում են՝ վողջունել, վորոշել, Կարող եմ Ս. Մ.-ին այն էլ երաշխավորել, որ եթե նա շատ չնչին չափով մեր նոր գրական լեզվին հետևած լիներ, կիմանար, որ առանց վողջունել և վորոշել գրութիւնների, շատ շատերը, որոնք թվում և լնոն, վաղուց արդեն արտասանում են՝ կը վորոշեն, կը վողջունեն. այդ պատճառով և հաճախ գրում են՝ կը ողջունեն, չը որոշել, կը երգի և ոչ թե՛ կողջունեն, յորոշել, կերգի։ Այսպիսի լեզվական դիսպոնիւթիւնների ընդունակ մարդիկը, որոնք տարբերում են գիր և հնչյուն, շատ լավ գիտեն այդ, Եկան ոմանք, որ բարդ ու ածանց բառերու մեջ ալ, հոն, ուր երկրորդ բառը կսկսի ու տառով, կհնչեն ՎՕ և ոչ Օ. այնպես որ՝ անողորմ—անվողորմ, առողջութիւն—առվողջութիւն և այլն։ Ժիշտ ինչպես որ ու և ե գրերով սկսող բառերն ալ խոնարհման ժամանակ առանց սղման կհնչեն՝ կը վողջա, կը վորոնե, կը Կերգե, կը Կեփե և այլն, իբր թե առանց բաղաձայնով սկսած բառեր ըլլային։ Ասիկա տարօրինակ նորմութիւն մ'է, որ կգտնենք ռուսահայ գրագետներու մեջ, և ոչ միայն չէր կրնար գոյութիւն ունենալ հին լեզվին մեջ, այլև նորերու։

Այստեղ ստարերինեպա ոչինչ չկա. արտասանութիւն այդ շնորմութիւնը քանկան հետեանք է վողջունել, վորոշել արտասանութիւն և արդեն գոյութիւն ունի լեզվի մեջ և ոչ թե, ըստ Ս. Մ.-ի, նոր առաջ պիտի գա վորոշել, վողջունել գրութիւն ավարտութիւն։ Ս. Մ.-ը անշուշտ գիտե, թե ինչ է լեզվի հոգեբանութիւնը, և թե ինչպես անալոգիական նոր կազմութիւն մարտա են գալիս այդպիսի ձևերը։ Քանի որ ասում են՝ վազել, կը վաղի, չը վազել, դրա անալոգիայով, որովհետև արտասանում են վողջունել, պիտի ասեն նաև կը վողջունե, չը վողջունել, և արդեն վաղուց այդպես արտասանում են։ Նույնպես՝ քանի որ ասում են՝ վախ—անվախ, դրա անալոգիայով, որովհետև արտասանում են վիտ, վորգի, պիտի ասեն նաև, և վաղուց արդեն ասում են, անվիտ, անվորգի։ Դրանք անալոգիական նոր կազմութիւններ են, որոնք վատ, վորդի գրութիւն հետ կապ չունեն և անխուսափելի են լեզվի մեջ. բայց դեռ համարվում են նորմութիւնութիւն և գրական լեզվի համար անուղիղ ձևեր, որովհետև չեն ընդհանրացած։ Իսկ եթե պատահի, որ այդ արտասանութիւնը տպագրւում մի օր ընդհանրացած լինի գրական լեզվի մեջ, այն ժամանակ կթուլատրվի գրել՝ կը վողջունեն, չը վորոշել, և այս կլինի լեզվի զարգացման արդյունքը և ուղիղ գրութիւնը. չէ՞ որ Եկաներն ուղղագրութիւն մեջ հետևում է հնչական սխտեմին, (գրում է այնպես, ինչպես հնչում է բարդ) և, Եկարունակ փոփոխում է ուղղագրութիւն ձևերը՝ հարմարեցնելով արտասանութիւնը, — գրում է Ս. Մ.-ը։

Ահա՛ իմ երաշխավորութիւնը.

2. Քառալկազմութիւն ժամանակ միշտ պիտի դուրս գալ սկզբի անկալուն վ և յ տառերը, ինչպես՝ լատերում, վոլոթ, ընորոշ, աներկյուղ, բազմերանգ։

Այս կետի համար Ս. Մ.-ն ասում է. Եկան այսմ՝ միևնույն քառ տարբեր գոյութիւն ձև պիտի ստանա, կտիված այն հանգամանքից, թե բառի սկզբում է գտնվում, թե՛ միշտ (վորոշ, բայց ընորոշ)։—

Բայց ես մի կտոր էլ բերեմ նույն Ս. Մ.-ի գրածից. Ենրկորդ առարկու-

¹ Ե. Անուշան, Հայաց գրքեր, եր. 306 հտն.

թյունն այն է, որ եթե ընդունվի ամենուրեք վ-ով գրությունն շատ անգամ բառի ուղղագրական կերպաբանքը հաշիվ կլինի փոխել... որովհետև փաստը, բայց կատվի, կատվանման... դա բնական երևույթ է. երբ փոխվում է հնչյունը, պետք է փոխվի և գրությունն էլ: Մենք գրում ենք սէր. բայց սիրուն, սիրելի... որդի, որդեանք, որդու՞:

Ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը. բավարարվե՞ց իր գրածով: Ուրիշներին լսած առարկությունը, որ ինքն անարժեք է համարել, կորո՞ղ ենք արդյոք մենք էլ անարժեք համարել: Գուցե այժմ նա այլևս թույլատրելի չի համարում քառակազմության ժամանակ գրել միևնույն բառը տարբեր գրությունն անելով՝ ձու—նվաձն, յերկինք—յերկնային, բաշի արտ—բաշեարտ, կը քիշի—կասի... անցնել (տարի), անցել է և այլև: Այս բոլոր հնարավոր և թույլատրելի են բոլոր Ս. Մ.-ի, միայն կարելի չէ գրել՝ վորոշ—անորոշ, բնորոշ: Հանգուցյալ Մ. հպիսկոպոս Օրմանյանի համար, որ մի տարի էլ չի փոխվել ճանաչանում է ինչ է անո՞վա՞նում: Երանյան և բեմապատկերող ասացել, իր աշակերտները պատմում էին, թե նա պարտադրով աշխարհ է եկել՝ եթե ուզե՞նք՝ աստիճան գալուց: Երանյանը և՛ կատարողական է, և՛ կոխան է: Հիմա Ս. Մ.-ին էլ ուզում է՝ չեղունում է քառակազմության ժամանակ բառի կրկին գրության մեջ (ձու—նվաձն, յերկինք—յերկնային, բաշի արտ—բաշեարտ), ուզում է՝ մերժում է և ասում. ետքից չէ վորոշ գրել, վորովհետև կա քննորդ:

3. Եկանք սկզբի վ և յ տառերի պետք է գրել այն զավառական բառերը, որոնց սկզբի յ և յ տառերը արտասանվում են իրր օ և է, ինչպես՝ ոլորտն, ոքմին, ոլով, ողորմածուգիր, ոլիկ դալ, ոճորը, ողորմակոթ, երինը (խաղողի մատ), երնեկ, երնչակ:

Ս. Մ.-ը ծանոթության այս կետի համար հետևյալ խորհմաստ բանն է ասում. «Ուրեմն՝ ամեն մի գրող, լինի նա կոթ գրագիտության սոփոքող երեխա թե չափահաս և գրագետ, պետք է նախապես գիտենա, թե ուրիշ բառը զավառակա՞ն է, թե՞ ոչ. և քան այնքա՞ն գրի վ-ով կամ առանց վ-ի: Հետաքրքրական է իմանալ, թե ոչխար բառը զավառակա՞ն է, թե՞՝ գրական, և ի՞նչպես պետք է նրան գրել»:

Ընդունում են, որ Ս. Մ.-ն բամեն մի գրողիս հարցն է տանում լրությունամբ, ի միջի այլոց և իրենք: Ուստի հս կսկսեմ իրեն՝ Ս. Մ.-ի հոգսից: Նա գիտե, իհարկե, որ ուղղագրական ռեֆորմը նրա համար չէ, որ նախապես գիտենան բառերի զավառական լինել-լիկնելը և ըստ այնմ գրեն, բայց նա երեք տարբերակ բան չգիտե. 1) Այն, որ ուղղագրության ռեֆորմը լինում է արտասանության համեմատ գրելու համար, 2) Այն, որ մի բառ գրելու համար՝ հարկավոր է նախապես գրելիք բառն իմանալ, իսկ բառն իմանալ՝ նշանակում է նաև բառն արտասանել իմանալ, քանի որ բառը հնչյուններին է կազմված: Եթե այս երկու բանն իմանալ Ս. Մ.-ը, այն ժամանակ նա ինքն գրագիտության սոփոքող երեխայի և չափահասիս հոգսն այնպես պարզապես չէր քաշի, թե նրանք չպետք է նախապես գիտենան, թե այսինչ բառը զավառակա՞ն է թե ոչ, և ըստ այնմ գրեն վ-ով կամ առանց վ-ի: Որովհետև նա գլխի կընկներ, որ եթե, դիցուք, որն է երեխա, գիտե զավառական բառերը՝ ոքմին, ոլով, ոլորան և այլն, ուրեմն՝ գիտե և նրանց արտասանությունը, առանց սկզբի վ-ի, իբրև ոլով, ոքմին, ոլորան, և այդ երեխան,

* Ս. Մախոսյանից. Մի հնչյունի մի գիր, էր. 21 հոտ:

երբ գործիս լինի անդ բառերը, բնականորեն կգրեմ ըստ նոր ուղղագրութեան (ո-օ)։—Եղբին, ուրբան, ոչո՞վ, առանց իմանալու, թե այդ բառերը դաժանական են, թե ոչ։

Գնեք Հիմա երրորդ տարրական բանին, որ լգիտեմ Ս. Մ.-ը, այն, որ շատ զբաղեցնեի կան, որոնք իրենց բաղում գիտութեամբ շատ անգամ չեն հասկանում իրենց կարողացածը և կարող են կարծել, թե նոր ուղղագրութեանը պատվիրում է, առանց արտասանութեանը ուղղագրութեան դարձնելու, «ո-ով սկսվող բառերի սկզբից ավելացնել վ»։ Ինչու՞ Ս. Մ.-ը, որ պարագիւլ է սկսվողագրութեամբ, հղել է ուղղագրութեան հանձնաժողովների անդամ Երևանում և Թիֆլիսում, և քննադատում է նոր ուղղագրութեանը, կարող էր չհասկանալ արտասանութեան համեմատ գրելու պատվերը, իսկ որից զբաղեցնեի, որոնք չեն պարագիւլ այդպիսի խնդիրներով, ինչու՞ նրանք չեն կարող նրա պես մտածել և կամ հենց նրանից կամ որիշներից ազդվելով կարծել, թե իբրև նոր ուղղագրութեանը պատվիրում է «ո-ով սկսվող բառերի սկզբից ավելացնել վ»։ Հիմա երևակայեցե՞ք մի դաժանագիտուն զբաղեցիտ (ոչ երեխա), որ գիտեմ գաղապական ոչով, ոքմին, ուրբան բառերի ստուգաբանութեանը և շատ գաղապական բառեր, որ գործածական չեն գրական լեզվի մեջ. մի՞թե նա չի կարող հանկարծ Ս. Մ.-ի պես մտածելով կամ նրանից ազդվելով՝ կարծել, թե պետք է «ո-ով սկսվող բառերի սկզբից ավելացնել վ» և գրել՝ վոչով, վոքմին, վոլորան և այլն, Զգուշ, ասում է ժամոթութեան այդ կետը այդպիսի զբաղեցնեի, գաղապական բառերի համար ևս հետեւեցե՞ք արտասանութեանը։ Դուք ոչ բառը պիտի գրե՞ք արտասանութեան համեմատ՝ վոչ. բայց ինչպե՞ս էլ գիտուն լինելով գիտե՞ք, որ գաղապական ոչով բառը կազմված է նույն ոչ բառից, չգրե՞ք վոչով, այլ լգիտի գրե՞ք արտասանութեան համեմատ՝ ոչով, առանց սկզբի վ տառի, Հասկանալի է, կարծեմ, որ ժամոթութեան այդ կետն ուղղված է հենց իր ստեղծած կանոնից դեմ և գրված է, ինչպես և ամբողջ ՄԱԿԱՆՈՐԳԸ, ոչ թե զորս գրադիտութեան սովորող երեխաների համար, ինչպես կարծում է Ս. Մ.-ը, այլ գաղապական զբաղեցնեի համար, որոնք գիտեն գաղապական բառերը, հաճախ և նրանց ստուգաբանութեանը։

Գնեք Հիմա Ս. Մ.-ի զվարճալի հետաքրքրութեանը՝ թիմանալ, թե ոչխար բառը գաղապական է, թե գրական, և ի՞նչպես պետք է նրան (այսինքն՝ ոչխար բառը) գրելու։—Այդ հարցին կարելի է պատասխան տալ այն, որ ինքը ոչխար անասունը միայն լգիտեմ այդ. իսկ մեր երեխաներն անգամ գիտեն այդ և դրա գրութեանը. երբ նրանք վոչխար են արտասանում, գրում են նոր ուղղագրութեամբ հենց այսպես. իսկ եթե իրենց բարբառում ոչխար են արտասանում և դեռ չեն վարժված գրական արտասանութեանը, նոր ուղղագրութեամբ գրում են ոչխար. մինչդեռ խոզի ականջ թողնելով՝ նրանք երբ արտասանում են վոչխար, գրում են երեք կերպ՝ ոչխար, վոչխար, վոչխար։ Կարծեմ գաղապանութեան ստացավ Ս. Մ.-ի հետաքրքրութեանը, և նոր ուղղագրութեանը սգործնական տեսակետով քննող տեսավ, որ գրական վոչխար արտասանութեան համար նոր ուղղագրութեամբ միայն մի վոչխար գրութեանը կա, իսկ հին ուղղագրութեամբ նույն գրական արտասանութեան համար երեք տեսակ գրութեան։

4. ՄԱԿԱՆԵՑ սկզբի անկայուն վ (և յ) տառերի պետք է գրել ամեն անգամ. երբ ցանկանում ենք արտասանել կամ արտասանում ենք ժողովրդական

ձևով՝ առանց վ (և յ) հեղուների, ինչպես՝ ողորմի՝ առավան, քո հարս ողորմի, Թնչի ողորմ ընկալ, յերկինքն որոտ-արտ ընկալ։ [Երեխեք, իմ դարդըս վոր ձերն եղներ, Բաահակյան, Քսան լեռնաժողովն ձեր յալակած, Ժառի հզորերից ձրենկը կախած, Աղայան, Խոյսարե հատուկ անունները՝ Նրևան, Նրզնկա, հրք առտասանում ենք կամ պետք է արտասանել ժողովրդական ձևով իրրե էրևան, էրզնկա]։

Ս. Մ.-ը բերելով այս գետը՝ փակագծերի մեջ գրածները, որ վերաբերում են յ հեղուներն և տառերն, գուցե է ձգում, ևս չեղած վարժում է նաև մյուս կետերի վերաբերմամբ, որպեսզի Նույնը մի երկրորդ անգամ կրկնի յի համար և ին կարծեցյալ որոշանություններն թիվը չառ ցույց առնալիս նա ընդգծում է միայն ճերք ցանկանում ենք արտասանել կամ արտասանում ենք բառերը, իսկ առանց ընդգծելու թողնում է յարտասանության մեջ տեղափոխության ձևով բառերը, որ անպատճառ պետք է ընդգծել մյուսներին հետ, քանի որ խնդիրը ժողովրդական ձևով արտասանելու մասին է։ Մի քիչ հետո նույնը յ-ի մասին գրելով կրկին անգամ, Աղայանի «քսան-յերեսուն հրե շալակած» բառերը բերելուց հետո, եկատում է. «Այստեղ՝ սովորողը (? երևի կաղացողը—Մ. Ա.) պետք է նախկան, որ տեղեկ ժողովրդական արտասանությամբ է գրել հանգուցյալ Ղ. Աղայանը, իսկ յերեսուն» գրական արտասանությամբ, Ուրեմն՝ Ս. Մ.-ը գիտե, որ խնդիրը ժողովրդական արտասանությունն արտահայտելու մասին է։ Բայց և տեղեկս տեսնք, թե ի՞նչ եզրակացություն է հանում նա. «Այս կետի հիման վրա տվեմ մի քառ կարելի է գրել բն՝ վ-ով և բն՝ առանց վ-ի (ընդգծված Ս. Մ.-ին է), բավական է միայն հայտարարել, թե նա ցանկանում էմ բառն արտասանել ժողովրդական ձևով։ Թե որպիսի կամայականություն և խառնաշփոթություն (ընդգծումը Ս. Մ.-ին է) կմտնի սրանից մեր ուղղագրության մեջ՝ բարեբան հասկանալի է»։

Հատիքայան միայն մի բան է հասկանալի ինձ համար, թե ինչպես նա գիտե կամայական դատողություններ տալ։ Արդյոք իր պաշտպանած մեր հին ուղղագրության մեջ կա՞ որևէ ակամայականություն և խառնաշփոթություն։ Ո՛ր, կպատասխանե նա։ Բայց արդյոք նա մեր նոր գրականությունը կարդացե՞լ է և, առհասարակ, նոր գրքեր կարդո՞ւմ է։ Ո՛ր, կպատասխանեմ ես. որովհետև, եթե նա կարդացած լիներ մեր նոր գրականությունը, կտեսներ, որ մեր բոլոր գրողներն էլ հենց այդպես են վարվում, և այլպես էլ կարելի չէ վարվել։ Երանք գրաբարի ուղղագրությունը չեն պահում ամեն մի բառի համար էլ, հրե ցանկանում են արտահայտել բառի ժողովրդական արտասանությունը։

Վերևում, 4-րդ կետի մեջ բերված օրինակներն առնված են մեր հեղինակներից, որոնց երկուսի՝ Բաահակյանի և Աղայանի անունները հիշված են։ Ինչի՞ համար է Բաահակյանի իր երկերի մեջ գրում՝ «իմ դարդըս որ ձերն էղներ» և ոչ թե եղներ (հին ուղղագրությամբ)։ մի՞թե Բաահակյանը չգիտե եղայ, հղար, հղա և նույնիսկ գրաբարի եղանիմ, եղանել և այլն գրությունը սկզբի և տառով։ Միմիայն նրա համար, որ ինքն արտասանում է էղներ և ցանկանում է, որ կաղացողներն էլ այդպես առտասանեն. միևնույն ժամ գրեք եղներ (հին ուղղագրությամբ), ուրիշները կկարդային յեղներ. իսկ այս վերջին արտասանությամբ չեղուն կկորցնե իր ժողովրդական բնույթը։ Աղայանը, անշուշտ, շատ լավ գիտեք երեք բառի այս հին ուղղա-

գրութիւններ, բայց գրել է Էրէ. միմիային նրա համար, որ ինքն այդպէս է արտասանել և ցանկացել է: որ կարդացողներն էլ (ոչ սովորողը)՝ այդպէս արտասանեն: Երբ Մուրացանը, Պոռշյանը և ուրիշները գրում են՝ ոգորմած-հոգի, ոգորմի աստված, քո հօրն ոգորմի, քննն զորք ընկալ, երկինքն օրոտ-օրոտ ընկալ, էրեխէք և այլն, նրանք այդպէս գրում են միայն նրա համար, որ ցանկանում են, որ կարդացողներն այդ բառերը առանց սկզբի վ հնչյունի արտասանեն, մինչդեռ եթէ սովորական գրական ուղղագրութիւնը գրեին՝ ոգորմել, որոտ և այլն, կարդացողները կկարդային սովորական գրական ձևով՝ վոգորմել, վորոտ, վոբոք, յնքնխնք:

Գիտական հիմքը, լեզվաբանական տեսակետը, էական նույնն է եղել և իմ ղեկահարգ<արարի>, քերականության, և ղեկահարգ<արհարարի> շարահյուսության և ղեկաց լեզվի տեսության համար։ Դրանց տարբերութունը գիտավորական միայն ծավալի և բացատրութունների ձևի մեջ է։

Թե ինչ և ինչպիսի տեսակետ է դրված իմ քերականական աշխատութունների համար, այդ կտեսնենք հետզհետե։

Այստեղ ամենից առաջ հետևյալի մասին։

Յ. Ամեն լեզու ունի իր բերականական առանձնառարկություններ։—Երբ ես ընկ, Արիսյանի մոտ, հիշված ժողովում, հենց այս մասին քացատրութուններ էի տալիս հոլովների վերաբերմամբ, պրոֆ. Ղափանցյանը,—չգիտեմ ինչ մտածելով և կամ ինմ ում տեղ դնելով,—խորե ռեպլիկ ձայնեց. «Ուրեմն դուք չե՞ք ընդունում ընդհանուր քերականութուն։ Ես նրան պատասխանեցի. «Լավ լսեցեք. ես տարբերութունների մասին եմ խոսում»։

Ինձնից հետո վերջին խոսքը տրվեց պրոֆ. Ահառյանին։ Սա էլ մտավորապես այն միտքը հայտնեց, թե քերականութուն ընդհանուր է։ Այդ խնդիրներն ուրիշ ազգերի մեջ անպայման լուծված են։ Պետք է իմանալ, թե նրանք ինչպես են լուծել և նրանց հետևել։—

Եվ վերջացավ։

Ես այլևս չէի կարող այդ մասին խոսել, որովհետև վերջին խոսքն էր տրված պրոֆ. Ահառյանին։

Այդ խնդիրը հիմնական է, ուստի կարևոր եմ հավարում այստեղ դնել իմ

«Աշխարհաբարի քերականութիւն» (տպւած Վազարսեայում 1706 թ.) «Անտա-
րարանից» հետևյալը.

«Զենք ուզում այստեղ 11-ր ընդունած հղանակի և քերականական խըն-
դիրների բացատրության մեջ մտնել. այսօրանք միայն հայտնենք, որ շատ
բաձեռության փոփոխութիւն չէ եղել մեզ առաջնորդ այս փոփոխութիւնների հա-
մար, այլ միմիայն ճշտության և կատարելութեան մօտավեր և առի միասին
հետեւեալութիւնը: Մեր քերականութիւնները միշտ այնպէս առաջնորդեալ
օտար քերականութիւնների ընդօրինակութիւն են, որոնց բարձր համար
սլաւոններին լեզուն Պրոկրուստեսի անոցովն է հղել, որի վրա նոր լեզու-
նները ծայրատեղի են, կամ ընդի կերպով քաղցրեղով և քաղցրեղով: Այս պատ-
ճառով ի նկատի ունենալով նորագուն հետազոտութիւնները քերականու-
թյան մասին՝ հայերենի քերականութեան բարձր խնդիրները կրկին ու կրկին
քննութեան ենք ենթարկել և կրկին հետազոտութեան հետ միայն այս կամ այն
փոփոխութիւնը մտցրելու:

Դատարկ խոսքեր չեն եղել այս:

«Գիտական հետազոտութիւնները քերականութեան մասին այն ժամա-
նակի դիտական աշխարհում նշանաբան էին առանձնապէս 18-րդ-ական
թվականներին և հաջորդ տասնամյակի սկզբում: Եւ դրանց ծանոթացել էի
ուսանողության ժամանակ, երբ իբրև գերմանական համալսարանի Ֆիլոսո-
ֆիայի (առանձնապէս գերմանիստական) ուսանող, պարտաւոր էի որոշ
լեզվաբանական դիսցիպլիններ ևս ուսումնասիրել:

Այդ սնորհազույն դիտական հետազոտութիւններին լակոն ակնարկներ
րից մինչև հենց այն է, ինչ որ ես վերին հատվածի մէջ քննարկելիս, ընդհանուր
քերականութեան հետ ունի և իր առաջնորդեալ քեր-
ականութիւնը: Սա դիպելով իրական արամատիստիկոս պահանջ է, ինչպէս
կատենենք (ՁՁ 10, 13, 14):

Ահա թէ ինչ պետք է հիմնովին յուրաքանչեւ ասպիրանտներ Սեակն ու
Ղարբայանը: Նրանք պետք է քերականութեան նկատմամբ ուղիորդին նաև մեր
լեզվի քերականական առանձնահատկութիւնները:

Թերեւք մի օրինակ:

Ռուսերենն այսու է. Он был тогда моим другом. «Նա այն ժամանակ
իմ բարեկամն էր»: Բայց քրարեկամէս ստորոգյալն ռուսը դնում է ոչ թէ
ուղղական հոլովով, ինչպէս հայերենում է, այլ գործիական հոլովով, ինչ-
պէս, եթէ հայերենում ասինք. «Նա այն ժամանակ իմ բարեկամովն էր»:

Ահա թէ ինչ է նշանակում թէ ամեն լեզու ունի իր քերականական ա-
ռանձնահատկութիւնները: Թերեւ մի նման օրինակ էլ:

Վերջերս ռադիոհաղորդում էի լսում Երևանից: Հաղորդողը տղամարդն
էր, որի ազգանունը միշտ մոռանում եմ: Նա այս անգամ նախ ռուսերեն
ասաց հրաժշտի անունը ավելացնելով, թէ Первым номером исполнил
русскую народную песню... Ապա նույնը հաղորդեց հայերեն... «Առաջին
նուառնով կնվագի ռուսական ժողովրդական երգը»:

Ահա թէ ինչ է նշանակում լեզվի քերականական առանձնահատկութիւն
և թէ ինչպէս ուրիշ լեզվի ազդեցութեամբ ամեն օր ռադիոն և մեր լրագիր-
ները աղճատում են մեր լեզուն և ալոպիսի լեզվական գոհարներ մատա-
կարարում մեռ կոլտնտեսականներին ու բանվորներին: Նույն կերպ այժմ

վարվում են մեր քերականության նկատմամբ: Կրկնում եմ՝ քերականության մասին խոսողը և գրողը ամենից առաջ պետք է յուրացնի վերևում գրված սկզբունքը և մեր լեզվի առանձնահատկությունները: Բայց ոչ Սևակն այդ գիտե՞ս ոչ Ա. Ղարիբյանը, Անշուշտ, Վեստոգով՝ նրանք այդ դիտեն և մինչև անգամ այդ հիշում էլ են իրենց գրածներին մեջ, և դրա համար կերպվեն էլ: Բայց ուրիշ բան է լուկ խոսքով իբրև մի ընդհանուր ասացված, ընդհանուր Ֆրազ իմանալ և ասել այդ, և ուրիշ բան է իմանալ, թե ինչ է մեր լեզվի առանձնահատկությունները, և հետևելով վերևում գրված սկզբունքին՝ հայոց լեզվի քերականությունը լզարձենել մի մեքենական ընդգրկնակություն այս կամ այն ոտար լեզվի քերականության, կատարելով հույն առասպելական հուղկահար Պրոկրուստեսի գործը:

Նա ունեւր մի անկողին. ձանապարհորդներին բռնում պառկեցնում էր իր անկողնի մեջ: Եթե անկողնից երկար էին լինում, կտրում կարճացնում էր նրանց: Իսկ եթե անկողնից ավելի կարճ էին լինում, քաշում երկարացնում էր նրանց:

Այսպես ահա վարվում են և պնդում են, թե պիտի այդպես վարվեն մեր լեզվաբանները: Ոտար լեզուները նրանց համար «Պրոկրուստեսի անկողինն» է: Մենք այդ կտեսնենք:

Սկսենք մի բուն հիմնական խնդրից:

Գ

Մ Ա Տ Ե Ր Ի Ա Լ Ի Ձ Մ

4. Մատերիալիզմ և իդեալիզմ:—«Ես վն այն է, որ մեր քերականներն առանց փիլիսոփայելու հարում են բերկրական իդեալիստական փիլիսոփայությանը: Այսպես է բարեհաճել գրել քաղ. Սևակն իր հիշված հոդվածի մեջ:

Թե մեր ուրիշ քերականներն ինչ փիլիսոփայության են հետևում, ես այդ լզգիտեմ և այդ ինձ չի վերաբերում: Բայց ես ինձ երանի եմ տալիս, որ քաղ. Սևակը դռնե ցավում է, որ փիլիսոփայության գովառոր Մ. Արեղյանը ժառանգ փիլիսոփայելու, «հարում է»... Բայց նա, այդ հոդվածագիրն, ինչպես և Ա. Ղարիբյանը, այդ սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայությունից զերծ են, հարկավ, «փիլիսոփայելով»:

1931 թ. «Երկրորդային» ՀՀ «այաստան»-ում, որքան հիշում եմ, «Փիլիսոփայության ֆրոնտ» վերնագրով, մի հոդված կար զույգ ստորագրության, մեկը Վահանյան, մյուսը չեմ հիշում: Այդտեղ իմ «ՀՀ»-ը լեզվի տեսության անհարկության կար հետևյալը. «Պրոֆ. Մ. Արեղյանի իդեալիստական լեզվաբանական դատարկաբանությունները: Հենց այսքան, էլ ուրիշ ոչինչ:

Ես նրանց պատասխան գրեցի և փոստով ուղարկեցի «Երկրորդային» ՀՀ «այաստան»-ի խմբագրությանը, խնդրելով տպագրել այդ: Բայց իզուր սպասեցի տպագրությանը: Իմ պատասխանը մոտավորապես հետևյալն էր: «Դուք զույգ քաղաքացիներ, փիլիսոփայության ֆրոնտից եք խոսում: Բայց կամ լզգիտեք, թե ինչ է իդեալիզմ ու մատերիալիզմ, կամ իմ «ՀՀ»-ը լեզվի տեսության»-ը չեք կարդացել: Ամենայն հավանականությամբ իրկուսն ես:

Այս պատասխանը վերաբերում է և քաղաքացի Աղոյանին:

«Բնականագիտական» նույնը վերաբերում է և քաղ<աքացի> Սեակին և Է. Ղարբյանին:

Առաջինը Ա. Աղայանը լրագրակետացավ իմ «Հ<այոց>» լ<եզվի> տ<եսության>» մասին ուզած բաների ասել ասանողական ժողովում. նա այդ մասամբ տպագրել տվավ 1931 թ. «Երբ ուղի» հանդիսի երկրորդ գլուխում մի հոդվածի մեջ՝ «Հանկալենիյան իդեոլոգիայի ոտնձգությունների դեմ, հասարակագիտական առարկաների գրվածքը Հայաստանի Բուհերում» (եր. 112—116): Նա այստեղ ըստմամբ էլ պատկերների թվում և իմ «առաջնություններին» զեմ էր գրել, բերելով բոլորովին սովորական ցիտատ իմ «Հ<այոց>» լ<եզվի>» տ<եսության>»-ից (ես հետո կդասեմ դրան) և եզրակացնելով՝ «Այսպիսով պրոֆ. Արեւշատը միտում է մեր մատուցած ինչ դուրս և մատուցվածից անկախ գոյություն ունեցող առարկաները: Այսպեղ Արեւշատը երբ բան չի ասում, քան քահանա Բեռնիստը: (Անգղիականների իրենք են: Նա նույնիսկ հայերենի հարցը պրոպագանդայի լիցենզիայի տակ)»:

Ահա թե որտեղից է ծագում պրոֆ. Արեւշատի «իդեոլոգիան» ու օբյեկտիվականությունը:

Այդ նրբաասարգները, կարծես, մի տեսակ ուղորդով են գրառվում, ձգտելով որսալ նրանաշարական բերկլիական իդեալիստներ: Ինչու, ի՞նչ նպատակով.— Երբեք այդ հարկավոր է եղել իրենց:

Տեսնենք թե, ինչպես թեթևությամբ են որոշում մեր նրբաասարգները փոխսփայական խնդիրները, և այն ինչ որ մատերիալիստական է, հայտարարում են իդեալիստական:

Ես, հարկավ, մատերիալիզմի մասին չեմ գրել, այլ լեզվական խնդիրների մասին, բայց բնականաբար մեջը չոշափվում են և փոխսփայական դրույթներ: Այսպես առանձնապես շխռագծալի գործունեությունն րացատրության մեջ, քանի որ դա հիմնված է պատկերացումների կամ մտապատկերների վրա («Հ<այոց>» լ<եզվի>» տ<եսության>» և, եր. 14, 23): Իսկ այս վերջինների րացատրության ժամանակ պետք է շոշափվեր զգայությունը (ощущение) և ըմբռնումը (восприятие), և պատկերացումը (представление), և հասկանալի է, այդ ժամանակ հնդիսակը պետք է հետևեր կամ մատերիալիստական կամ իդեալիստական փոխսփայական ուղղությանը:

Իմ «Հ<այոց>» լ<եզվի>» տ<եսության>»-ը տպված է 1931 թվին: Ինչպես դրա «Առաջարանից» կարելի է իմանալ՝ «այդ աշխատանքը վաղուց պատրաստված է և վերամշակված է միայն 1922—23 թ., երբ երրորդային Հայաստանում լինին հետաքրքրվում փոխսփայական հարցերով, այլ գարի ցանկելով... Արտագրությունը կատարվել է 1928 թ., իսկ փոքրիկ Առաջարանը գրված է, ինչպես Առաջարանի ներքևում գրված է, 1929 թ. հունվարի 10-ին: Ես չեմ կարողացել հետևել այդ գրքի տպագրությանը, որովհետեւ ինձ արգելված է եղել գրել կարդալ:

Նույն 1931 թ. տպված է լենինի «Материализм и эмпириокритицизм» աշխատությունը, որին ես ծանոթացել եմ 1932 թ., ուրեմն չէի կարող լենինի այդ գրքից օգտվել և ծանոթ լինել մատերիալիզմի այն ձևակերպմանը (формулировка), որ բանեցնում են մարքսիստները: Բայց և այնպես անկնդիրները կտեսնեն, թե որքան իմ «Հ<այոց>» լ<եզվի>» տ<եսության>» մեջ մատերիալիստական րացատրությունը նույն բանաձևերով գրեթե նույն է, ինչ որ լենինի հիշված գրքի մեջ:

Ես առնում եմ ուժանձր են բնագիրը, օգտվելով միաժամանակ հայերեն թարգմանությունից՝, այն կտրոնների համար, որոնք հիշատ են թարգմանված։
Բայց նախքան այդ, կարճ տեսնենք, թե ինչ են դիտվելուկական մատերիալիզմի մի քանի դրույթները։

1. Մեզինքս գտաւս և մեզինքս անկախ գոյություն ունի աշխարհը, բնությունը, գոյը, մատերիան,—օբյեկտիվ առարկաները, իրենք (օբյեկտիվ նյութի կոնկրետ ձևերը)։

2. Օբյեկտիվ կամ արտաքին աշխարհը, արտաքին առարկաները ներգործելով մեր զգայարանների վրա, առաջ են բերում մեզնում զգայություններ, որոնք և մեր իմացության միակ աղբյուրն են։ Զգայությունների միջոցով ճանաչում ենք արտաքին առարկաները։ Այդ արտաքին աշխարհը, նյութը, գոյը որսըւմ է մտածությունը։

Արտաքին աշխարհն, որեմն, առաջնային է, իսկ մտածությունը երկրորդային։

3. Մտածությունը մի առանձին կերպով կազմված նյութի—ուղեղի—հատկությունն է։

Թողնում եմ մյուս դրույթները։

Բերեմ հիմա զՀ<այոց> չ<եզվի> տ<եսություն>իցս հետևյալ հատվածը, որ դրված է Վեոսվածքի գործունեությունը վերնագրի տակ, եր. 14—15։
Հիշեցնում եմ, որ ես մատերիալիզմի մասին չէ որ գրել եմ, այլ սեղմ ու կրճատ ձևով բերել եմ՝ ինչ որ իմ խնդրին հարկավոր է։

Եթե զըջապատող արտաքին առարկաները մեր զգայարանների վրա թողնում են տպավորություններ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին։ Այս բնախոսական երևույթին—գրգիռներին իբրև հետևանք մեր մեջ տեղի է ունենում ամենապարզ հոգեկան երևույթը կամ գործողությունը, այն է՝ զգայելը, այսինքն ունենում ենք զանազան զգայություններ (գույնի, ձևի, տաքության և այլն)։ Ուշադրություն դարձնելով դրան՝ մենք դատում ենք, թե այդ զգայությունները ծագում են այս կամ այն առարկայից, որին և վերադրում ենք այնքան հատկանիշներ, քանի տեսակի զգայություններ որ ունենում ենք մեր մեջ։ Դրա հետևանքը լինում է այն, որ մենք իմանում կամ ճանաչում ենք արտաքին առարկան կամ նրա գոյությունը։ Այս իմացման կամ ճանաչման գործողությունը կոչվում է ըմբռնում։ Օրինակ՝ լուսնից եկած լուսը լուսնին նայողի տեսողության զգայարանի մեջ հարուցանում է որոշ գրգիռներ, որ նյարդերը հաղորդում են ուղեղին, դրան իբրև հետևանք՝ նայողն ունենում է զանազան զգայություններ գույնի, ձևի, մոթ կետերի և այլի մասին, և նա ուշադրություն դարձնելով դրան՝ ճանաչում կամ ըմբռնում է այդ զգայությունների աղբյուրը—լուսնը։

Այսպես և խոստովի խոսքի օբյեկտներին շարժումներն առաջացնում են օդի որոշ տատանումներ—ձայնի տատանումներ։ Սրանք լսողի լսողության զգայարանի մեջ հարուցանում են որոշ գրգիռներ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին և առաջ բերում լսողի մեջ լսելիքի զգայություններ խոսքի արտասանած հնչյուններին մասին, այսպես և լսողն ուշադրություն դարձնելով դրան՝ ունենում է լսած հնչյունների ըմբռնումը, որ կարևոր նշանակություն ունի լեզվի տեսակետից։

Վերադառնալով առարկաներից ստացած զգայությունները երեք միմյանցից չոկ և առանձին-առանձին չենք ունենում, այլ մի շարք զգայություններ միա-

Վեդե, Ելիք, Երևան. 1933, XIII հատոր. Մատերիալիզմ և էմպիրիոկրիթիցիզմ։

արև, և այդպէս ոչ միայն միեւնոյն զգայարանի զգայութիւնները, այլ սովորաբար նաև մի քանի զգայարաններ: Երբեմն խնձորից կարող ենք ունենալ զգայութիւններ՝ անսողութիւն (զուլն, ձի), փոստառութիւն (հոս), նաշակելիքի (համ), շոշափելիքի (շոշառութիւն, կոկոնութիւն), որոնց բոլորի հետեւանքը միասին լինում է այդ առարկայի ըմբռնումը...

«Մի անգամ ունեցաւ զգայութիւնը կամ ըմբռնումը երբեք անհետ չի կորչում, այլ պահւում է մեր մարմի մէջ և կարող է վերադառնալով այն ժամանակ, երբ լկա այն առարկան, որից ստացել ենք զգայութիւնը: Զգայութիւն կամ ըմբռնումի այսպիսի նպաստները մեր մէջ՝ կաշկում է մտապատկեր կամ պատկերացում (կամ պատկեր): Երբեմն՝ մենք կարող ենք վերադառնալ կամ պատկերացնել մի որևէ մասին, հիշում, որ առաջ լսել ենք, լուս, մեր կերած մի բանի հոտը, համը և այլն...»

«Առաջիկայի մտապատկերը (պատկերացում) լսելի չփոփել առարկայի իրեն հետ. մտապատկեր մեզնից դուրս է, իսկ մտապատկերը կամ պատկերացումը գիտակցում ենք միայն մեր մէջ՝ հիշելով մեր առաջուց դիտած առարկան: Նույնպէս լսելի իրար հետ չփոփել առարկայի ըմբռնումն ու պատկերացումը. ըմբռնումը տեղի է ունենում մեր մէջ անմիջապէս, երբ դիտում ենք որևէ քան, միեւնոյն պատկերացումը. ձեզում է մեր մէջ այն ժամանակ, երբ առարկան ալիս մեր այնքան ուղի չէ. այլ առաջ, նույնիսկ տարիներ առաջ ենք տեսել, լսել, շոշափել և այլն: Երբեմն՝ երբ նայում և տեսնում ենք Մասին սարը, մենք ունենք նրա զգայութիւնն, «պա և՛ ըմբռնումը. իսկ երբ Մասինը մեր այնքան առաջ չէ, քանի որ տեսնել ենք այն, մեր մտքում պատկերացնում ենք կամ, ինչպէս ասում են, մտքով տեսնում ենք այդ լիւրը, Այդ ժամանակ մենք ունենք դրա մտապատկերը կամ պատկերացումը»:

«Ապա ցարկայ առարկան և առարկայի ըմբռնումն ու պատկերացումը լսելի չփոփել բաների, որոնք և առարկայի ունեն հետ. մեզանք առարկան, օրինակ, արաբիկն աշխարհի մի կարասիք է, որ կարող ենք տեսնել, շոշափել և նոս ըմբռնումն ունենալ: Ապա կարող ենք սեղան տարակտէ հիշելով՝ անհաշիւ նրա պատկերացումը, որ ոչ տեսնել և ոչ շոշափել կարող ենք և ոչ էլ լսել: Իսկ սեղանն բարձր հիշող հիշումներից կազմված մի կապակցութիւն է միայն, որ ոչ տեսնել կարող ենք և ոչ շոշափել, քայք մենք լսում և արասանում ենք և ունենում նրա ըմբռնումը և ապա կարող ենք այդ հիշումները հիշելով՝ ունենալ նրանց պատկերացումը, որ անկախ է սեղան առարկայի պատկերացումից»:

Ապա խոսվում է պատկերացումների զուգորդութիւն մասին և այլն, մինչև հասնում ենք դատողութիւնը: Եր 24. ասած են, թե երբ դատողութիւն անդամները, ենթական և ստորոգյալն արտահայտվում են բառերով, քայք ժամանակ բառերը կամ թե բառերի պատկերացումները փոխանակում են մտքի առարկաների պատկերացումներին... մեր մտածողութիւնն արտահայտում հնք բառերով, կամ խոսք ենք կազմում գիտակցելով, որ դատողութիւն անդամների իրար հետ ունեցած հարաբերութիւնը ոչ թե նրանց փոխարինող բառերինն է, այլ մեր մտքի այն առարկաներին, որոնց փոխարինում են բառերը»:

Հասկացնել են արդոք լուկ խոսքով իրենց մարքսիստ հայտարարողներն այս ամենը: Միայն տգիտները կամ դիտմամբ աղավաղողները լին կարող

այդ հասկանալ և դրա մէջ ոչ թէ մատերիալիզմ տեսնել, այլ իդեալիզմ, սուբյեկտիվ իդեալիզմ:

Առաջին հարց

Գարո՞ղ է իդեալիստական, այն էլ բերկրական լինել այն փիլիսոփայական տեսությունը, որ ճանաչում (признание), ընդունում է ամեզ շրջապատող առաւելին (= մեզնից դուրս եղած) առաւելաները, «առաւելին այլաբեր», որ զգուշացնում է, թէ «առաւելայի մտապատկերը (գաղափարը) չպիտի շփոթել ստարկայի իրեն հետ. առաւելան մեզնից դուրս է. իսկ մղտապատկերը կամ պատկերացումը գիտակցում ենք միայն մեր մեջ».— Զասկանալի է, մեր գլխում, ուղեղում և ոչ թէ փորի կամ ոտների մէջ:

1. «Միակ և անխուսափելի եզրակացությունը, որ... մատերիալիզմը փիլիսոփայութեան հիմք է դարձնում իր իմացարանության, այն է, որ մեզնից դուրս և մեզնից անկախ գոյություն ունեն առարկաներ, իրեր, մարմիններ, որ մեր զգայություններն առատփին աշխարհի պատկերներն են»: Լենին, Ռուս<հ>րեն», 84. Հայ<հ>երեն», 113:

2. «Այլերստ Լենին համար միանգամից պարզ դարձավ ոչ միայն մարքսիստական, այլև ամեն մի մատերիալիզմի, «ամբողջ նախորդ մատերիալիզմի հիմնական դրույթը (познания), իրական առարկաների (օբյեկտների) ճանաչումը մեզնից դուրս, որոնց սահմանափակում են մեր մտապատկերները: Առհասարակ ամբողջ մատերիալիզմին վերաբերող այս աչքութենը հայտնի չէ միայն Ռուսաստանյան մաթիստիկներին: Լ<ենին>, «Ռուսերեն», 86. Հ<այերեն>, 116:

Այո՞, ես էլ կասե՛մ՝ այդ աչքութենը հայտնի չի եղել նաև մեր Հայաստանյան սփարքսիստներին» կամ իրենց մարքսիստ հայտարարողներին:

Երբ ասվում է մեզնից դուրս, այդ հասկացվում է, հարկավ, մեր փիլիսոփայությունից, մտքից դուրս:

3. «Մատերիալի միակ սահմանությունը, որի ճանաչման հետ կապված է փիլիսոփայական մատերիալիզմը, օբյեկտիվ իրականություն լինելու, մեր գիտակցությունից դուրս գոյություն ունենալու հատկությունն է»: Լ<ենին>, «Ռուսերեն», 213. Հ<այերեն>, 298:

4. «Հակադիր ուսմունքը (= իդեալիզմ Մ. Ա.) (է այն որ)—առարկաները գոյություն չունին մտքից (УМ) դուրս, առարկաները զգայությունների համակցություններն են».— Ահա Բերկլիի իդեալիզմը: Լ<ենին>, «Ռուսերեն», 20. Հ<այերեն>, 24: Իդեալիզմը սկսվում է միայն այն ժամանակ, երբ փիլիսոփան ասում է, թէ իրերը մեր զգայություններն են: Ռ<ուսերեն>, 90. Հ<այերեն>, 122:

Դիալեկտիկական մատերիալիզմի իմացութեան տեսության (Теория познания—իմացարանություն) հիմքը կազմում է արտաքին աշխարհի ճանաչումը (признание) և դրա արտացոլումը մարդու գլխում: Լեն<ին>, Десять вопросов, 3-й вопрос.

Երկրորդ հարց

Գարո՞ղ է իդեալիստական լինել տեսությունը, որ արտացին առարկաներից, ուրեմն գոյից զնում է դեպի զգայությունը, ընդունում է, ճանաչում է, որ զգայությունների, ըմբռնումների ու պատկերացումների աղբյուրը մեզ-

նից գուրա. մեր գիտակցութեանից գուրա գտնված արտաքին առարկաներն են, և որ մենք մեր զգայութիւնների միջոցով է, որ ճանաչում ենք արտաքին առարկաները, նրանց հասկութիւններն ու գոյութիւնը:

1. Բոլոր գիտմանքները (ЗНАНИЕ) փորձից են, զգայութիւններից, ըմբռնումներից: Այս ալսպն. բայց հարց է ծագում, արդո՞ւք օրինկտիվ երեւեալութիւնը «պատկանա՞ւ» է ըմբռնումին» (восприятие), այսինքն հետեւի սանո՞ւմ է ըմբռնումի աղբյուրը: Եթե այո՞, ապա՝ գուր մատերիալիստ եք: Լեն<ին>, ու<ուսերեն>, 104. հ<այերեն>, 141.

2. Մենք մատերիալիստներիս... նրա համար որ ճանաչում ենք փորձի մէջ տրված օրինկտիվ իրականութիւնը, ճանաչում ենք մեր զգայութիւնների օրինկտիվ, մարդուց անկախ աղբյուրը... Լեն<ին>, ու. 104. հ. 141.

3. Մատերիալիզմի հիմնական փիլիսոփայական գիծն է գոյից դեպի մտածութիւն, մատերիալից դեպի զգայութիւնը: Իսկ մատերիան է այն, ինչ որ ներգործելով մեր զգայարանների վրա՝ առաջ է բերում զգայութիւն. մատերիան օրինկտիվ իրականութիւնն է, որ տրված է մեզ զգայութեան մէջ: Լեն<ին>, ու. 119.

4. Մեր խնայք... մատերիալիզմի և իդեալիզմի հակադրութիւն մասին է, այն տարբերութիւն մասին, որ կա փիլիսոփայութիւն հիմնական գծերի միջև: Արդո՞ւք իրերի՞ց գնանք դեպի զգայութիւնն ու միտքը, թե՞ մտքից և զգայութիւնից դեպի իրերը: Առաջին, այսինքն մատերիալիստական գծի կողմնակից է Լենգիւրը: Երկրորդ, այսինքն իդեալիստական գծի կողմնակից է Մախը: Լեն<ին>, ու. 34. հ. 42.

5. Միանգամ որ դուք ընդունեցիք, որ լույսի աղբյուրը և լույսի ալիքները գոյութիւն ունին մարդուց և մարդկային գիտակցութիւնից անկախ, գուրք կախված է այդ ալիքների ներգործութիւնից ցանցենու վրա, — ապա դուք իրապէս կանգնեցիք մատերիալիստական տեսակետի վրա և հիմնովին կործանեցիք իդեալիզմի՝ բոլոր սանտարակուսների փաստերը: Բոլոր զգայութիւնների կոմպլեքսները: <Լենին>, ու. 48. հ. 63. տե՛ս և ու. 44. հ. 58.

ԵՐԵՐԴ ԵԱՐԳ

Կարո՞ղ է իդեալիստական լինել այն տեսութիւնը, որ նշելով արտաքին առարկաների մեր զգայութիւնների վրա թողած տպավորութիւններից՝ որ է ներգործութիւնից, զգայութիւնը ճանաչում է իբրև դրա հետևանք, որ նշելով քնախոտական (ֆիզիոլոգիական) երեւոյթից՝ ընդունում է, որ քնախոտական երեւոյթին — գրգռներին իբրև հետևանք մեր մեջ տեղի է ունենում ամենապարզ հոգեկան երեւոյթը կամ գործողութիւնը, այն է զգայելը*: այսինքն ունենում ենք զանազան զգայութիւններ (գույնի, ձևի, տաքութիւն և այլն): Եվ ապա զգայութիւնից անցում է լինում դեպի ըմբռնում և այլն:

1. Հիմնովին մատերիալիզմի տեսակետի վրա, զգայութիւնները համարել հետևանք այն ներգործութիւն, որ մեր զգայութիւնների վրա անում են մարմինները, իրերը, բնութիւնը: Լենին, ու. 34. հ. 43.

* Այս զգայել բառը ես կազմել եմ այս հատվածը դժնշտ, զգայութիւն, զգայաբան բառերի համապատասխան մի բայ ունենալու համար, զգալ բառը կազմելով զգացում բառի համար: Լենինի հիշատակ գրքի թարգմանիչը արգեն յարաբերել է այդ բառը. «երբ ես զգայում եմ որն է բան» (հ. 46):

2. «Ամեն մի մատերիալիստի համար՝ զգացությունը գիտակցության իրոք անմիջական կապն է արտաքին աշխարհի հետ, առաջին զրգիռի էներգիայի փոխարկումն գիտակցության փաստին»։ ինն<ին>, ռ. 41. հ. 53 հտն.։

3. «Ջգայությունը մեզնից դուրս, օրյնկտիվորեն գոյություն ունեցող ըստ ինքյան իրի՝ մեր զգայարանների վրա արած ներգործության հետևանքն (результат) է։—այսպես է Ֆոյերբախի տեսությունը»։ իննին, <ռ>. 97. հ. 131։

4. «Դույնը հետևանք (результат) է այն ներգործության, որ ֆիզիկական առաւկան անում է ցանցենու՝ վրա—զգայությունը հետևանք (результат) է այն ներգործության, որ մատերիան անում է մեր զգայարանների վրա»։ ինն<ին>, ռ. 46. հ. 60։

5. «Փիլիսոփայական մատերիալիստները ընտրովում են այնու, որ նրանք սկզբում, գլխին դնում են մաւմեական (телесный) աշխարհը, իսկ զաղափարը (идея), հոգին դիտում են (рассматривать) իրեն հետևանք, — մինչդեռ հակառակորդներն, ըստ եղանակի կրոնի, իրենը խոսքից (слова) են հանում... նյութական (մատերիալ) աշխարհը զաղափարից են հանում»։ ինն<ին>, ռ. 200։

Գործող հարց

Կարո՞ղ է իդեալիստական լինել այն տեսությունը, որ նյննյով բնախոսությունից (ֆիզիոլոգիայից) ճանաչում է ներվերի (նյարդերի) և ուղեղի ֆունկցիան և ընդունում է, որ արտաքին առարկաների՝ մեր զգայարանների (հասկանալի է՝ ներմերի) վրա թողած տպավորությունները նյարդերի (=ներվերի) միջոցով հաղորդվում են ուղեղին, և ապա թե սայս բնախոսական նրույթին—զրգիռներին—իրեն հետևանք տեղի է ունենում զգայությունը։

1. «Մտածությունն ու գիտակցությունը,—ասում է էնգելսն՝ «Անտի-Դյուրինգում»,—մարդկային ուղեղի արդյունքներն են»։ Նույն միտքը շատ անգամ է կրկնված այդ երկում, և լուրվիզ Ֆոյերբախում է կարդում ենք Ֆոյերբախի հայացքների ու էնգելսի հայացքների հետևյալ շարադրանքը. «Այն նյութական (stofflich, вещественный)*, մեր կողմից զգայորեն ըմբռնվող աշխարհը, որին պատկանում ենք մենք ինքներս, միակ իրական աշխարհն է», սմեր գիտակցությունն ու մտածությունը, որքան էլ նրանք գերզգայական թվան, նյութական, մարմնական օրգանի, ուղեղի արդյունքն (Erzeugniss, продукт) <են> հանդիսանում։ Մատերիան հոգու արդյունքը չէ, այլ հոգին՝ միայն մատերիայի բարձրագույն արդյունքն է։ Սա, հասկանալի է, զուտ մատերիալիզմ է»։ ինն<ին>, ռ. 71. հ. 95։

Նույնը նաև ինն<ին>, ռ. 73. հ. 98։

2. «Ջգայությունը կախված է ուղեղից, ներվերից, ցանցենուց և այլն, այսինքն որոշ կերպով կազմակերպված մատերիայից»։ <Իննին>, ռ. 44. հ. 58։

Հինգերորդ հարց

Կարո՞ղ է իդեալիստական լինել այն տեսությունը, որ շարունակ խոսում է արտաքին առարկաների պատկերացումների մասին, որ զգայություն

* Պարսկերեն՝ stofflich առաւկան <երեն> вещественный նյութական է սեւութական։ ինն<ին> թե սեւութական (вещный), ֆիզիոլոգիալ թաղափարի է հայերեն։

(ощущение), ըմբռնումի (восприятие) նորոգումը մեր մեջ (մեր պատկերա-
թյուն մեջ) — ներկայացումը (представление) համարում է պատկերացում
լում է այդ ընկերակայացումը:

1. Ենթադր շարունակ իր ամբողջ արտապատկերուն (рассуждение)
ընթացում. «դժայակն ցերկայացումը» (հայերեն՝ պատկերացումը = աս-
տվենное представление) ընենում է որպես մեզից դուրս գոյություն ունե-
ցող իրականության պատկերը (Abbild. образ) (դրած է գերմ. <աներեն>
Abbild), <Լենին>, ա. 23. հ. 128.

2. Մեկայան ուրեմն մատերիալիստական անսովոր, որի համաձայն
միտքն արտացոլում է (անդրադարձնում է) անարկանիքը, այստեղ շարա-
դրված է ամենալիակատար պարզությունը. մեզից դուրս գոյություն ունին
իրեր. Մեր ըմբռնումներն ու ներկայացումները (восприятие и представ-
ление) նրանց պատկերներն են. <Լենին>, ա. 28. հ. 129.

3. Մեմտերիալիստի համար փորձություն (фактություն) որված է ար-
տագին աշխարհը, որի պատկերն են հանգիստում մեր զգայությունները.
իրենալիստի համար փորձություն արված է զգայությունը. ընդ որում արտա-
քին աշխարհը հայտարարում է իրեն զգայությունների կոմպլեքս. <Լե-
նին>, ա. 31.

4. Մեր զգայությունները համարել արտաքին աշխարհի պատկերներ —
հանալի առկալով ճշմարտությունը — կեղծած լինել մատերիալիստական
խմացարանության հայեցակետի վրա, այդ միկնույն է. <Լենին>, ա. 108.
հ. 144.

5. Փիլիսոփայական մատերիալիզմ... Ֆրեդրիխ Էնգելսն իր օրվեր մեջ
շարունակ և անուց րոպեանության խոսում է իրերի և նրանց մտալին պատ-
կերների (մտապատկերների — Մ. Ս.) կամ անդրապատկերումների մասին
(мысленные изображения или отображения, Gedanken — Abbilder —
մտապատկերներ — Մ. Ս.), բնդ որում, ըստ ինքյուն հասկանալի է, ար-
մատյան պատկերները (= մտապատկերները) ծագում են ոչ առ կորպ, բան
զգայություններից. Քվում է թե ամբողջովի փիլիսոփայության այս հիմնա-
կան հայացքը լսեաք է հայտնի լինի ամեն մեկին, որ խոսում է դրա մասին
և առանձնապես ամեն մեկին, որ այդ փիլիսոփայության անունից հանդես
է գալիս ժամոպում: <Լենին>, ա. 33. հ. 41.

Լենինի վերջին խոսքերը, կարծես, ուղղված են մեր մարդկանց: Մի ցի-
տատ են, և ես կվերջացնեմ այս պոխը:

6. Պատկերացումը (изображение) անհրաժեշտորեն և անխուսափելի
կերպով ենթադրում է օբյեկտիվ իրականությունն այն բանի, որ անդրա-
պատկերվում է (отображается): <Լենին>, ա. 193.

Ի՞նչ է նշանակում այս — Այս նշանակում է այն, որ իմ «Է <այոց>
լ <նզվի> տ <նստության>» մեջ բազմաթիվ անգամ գործածված «պատկերա-
ցում» և «մտապատկեր» (= Gedanken — Abbild, мысленное изображение)
բառերը անհրաժեշտորեն ենթադրում են օբյեկտիվ իրականությունը:

Նվ գիտե՞ք, երբ է կազմվել մտապատկեր բառը, — դա կազմվել է այն
ժամանակ, երբ ես դեռ պատանի էի և դրա կազմողը եղել է մանկավարժ
Առաքել Բահաթրյանը: Դա գերմաներենի Gedanken — Abbild բառի թարգմա-
նությունն է: Նույն ժամանակներում կազմված է և պատկերացում բառը
փոխանակ ներկայացում (представление) բառի:

նա ձգրակնացութիւնն չեմ՝ ուզում՝ հանել, քանի որ հզրականացութիւնը պարզ ։

Մատենադարանական փոխտնտեսականութիւնը շոշափում է ուրիշ դնպո-
ռում նսւ։ Մենք այդ էլ կտեսնենք, որտեղ պետք է։

ԳՈՏԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ճ. Ոչ մատենադարանական սահմանումը։—Պրոֆ. Ղափանցյանն ընկ.
Արիստանի մոտ տեղի ունեցած ժողովում քաղ. Ա. Ղարիբյանի քերականու-
թյան մասին, առանց որևէ հիմնավորման, հայտնեց, թէ դա նախադրերից
նրանով է գտնւ հանազանում, որ իբր սմատենադարանական է։ Սա դրան
առարկեցի, թէ ոչ մի մատենադարանական բան չկա այդ քերականութեան մէջ։

Դա, պրոֆ. Ղափանցյանի իբր թուրքալիքն էր, ինչպես և այն, որ
այդ քերականութիւնն իբր թուրքալիքն է, և կամ իբր Ղարիբյանը ճշտ
պարզեցողութեան դասակարգային լեզվի քերականութիւնն է գրել, ինչպես
ինքը Ղարիբյանը գրում է իր գրքի նախաբանում, չգիտեմ համատարով իր
այդ գրածին, թէ չէ։

Այդ խոսքերը միմիայն միամիտներին և անգետներին, գուցէ, մուրհի-
նեն։

Տեսնենք, թէ մեր քերականն ինչպես է սահմանում պոյականը։ Բայց
նախ նրանց գոված Շապիրոն, կամ ինչպես Ղարիբյանը պարծյալ նախադրում
է, «ավելի կարող եղբայրական Ռուսաստանի մասնագետները», (հրէի,
ուկում է ասել թեղբայրական Ռուսաստանի ավելի կարող մասնագետները),
որոնցից մեկն է Շապիրոն։

Շապիրոն 1934 թ. տղ I, 21 գրում է.

«Դրականն այն մասն—բանին է, որ նշանակում է առարկա։ Իսկ
Ղարիբյանը եր. 29 պոյական անունն են կոչում բոլոր առարկա նշանակող
բառերը»։

Թող ձեզ չփոթենցի այն, որ Շապիրոն պոյականն է դնում, իսկ Ղա-
րիբյանը պոյական անունն։ Մեր այս քերականի համար պոյականն և պո-
յական անունն միևնույն բանն են, և նա իր գրքի մեջ այդ երկու տերմիններն
անխտիր միմյանց փոխանակ գործ է ածում առանց մտածելու, որ դրանք
տարբեր բաներ են։ Բայց այդ թողնենք։

Նս ասում եմ։

Այդ երկու քերականների հիշված սահմանումը շունի իր մեջ ոչ մի մա-
տենադարանական բան։ Դա պոյականի այնպիսի սահմանում է, որի տակին
կատարադրի ամեն ինչալիստ, նույնիսկ բերկլիականը։ Այն ո՞ր իդեալիստն
է, որ չի ընդունում առարկաներ և սրանց համապատասխան բառերի տեսակ-
ները՝ պոյականները։

Իսկ եթէ ասենք. պոյական ասվում են այն բառերը, որոնք ցույց են
տալիս ըստ ինքյան պոյութիւնն ունեցող առարկաները, ի՞նչ եք կարծում,
արդոք բերկլիական իդեալիստները կընդունեն այդ սահմանումը։ Բնավ
ոչ։ Ինչո՞ւ։

Ահա Բերկլիի խոսքերը, որ նա մատենադարանների դեմ առարկելով գրել
է. «Արտաքին առարկաները (объекты) պոյութիւնն ունեն ոչ թէ ըստ ինքյան
(сам по себе), այլ մեր մտքերում» (Լեն<ին>, II. 182. հ. 254)։

Ահա և Նենիեի խոսքը, որ նա դրել է իդեալիստների գեմ առարկելով.
«Մեզնից դուրս և մեզնից անկախ գոյություն ունեն առարկաներ, իրեր,
մարմիններ (предметы, вещи, тела) և մեր զգայություններն արտաքին
աշխարհի պատկերներն (образы) են» (Լենին, Մատ., և. 84. հ. 113):

Հասկանալի է, կարծեմ, որ ինչ որ Լենինը ասում է՝ «մեզնից դուրս և
մեզնից անկախ գոյություն» ձևակերպումով, նույնը Բերկլին արտահայտվել
է Երստ ինքյան գոյություն ձևով, նվ չկարծեք, թե այդ սխալ է:

Բերկմ Լենինից և հետևյալը. «Բերկլին ընդգծումով գրում է, որ իր կողմից
հերքվող այդ կարծիքի համաձայն (այսինքն մատերիալիզմի համա-
ձայն—Մ. Ա.)՝ «բացարձակ գոյություն ունեն զգայական առարկաները (օբ-
յեկտներն) ըստ ինքյան (в себе) կամ մտքից դուրս (вне ума)»։ Ապա
Լենինը հենց Բերկլիի այս բանաձևի համար շարունակում է. «Փիլիսոփայա-
կան հայացքների նրկու հիմնական գծերն այստեղ նշված են այն շիտակու-
թյամբ, պարզությամբ ու ճշտությամբ, որ տարրերում են փիլիսոփայական
կլասիկներին մեր ժամանակի «նոր» սիստեմներ հորինողներին։ Մատերիա-
լիզմն ընդունում է «առարկաներն (օբյեկտներն) ըստ ինքյան» կամ մտքից
դուրս. պարզապես ու զգայություններն այդ օբյեկտների պատկերներն են
կամ անդրադարձումները։ Հակադիր ուսմունքը (իդեալիզմ)—առարկաները
(օբյեկտները) գոյություն չունեն՝ մտքից դուրս—առարկաներն (օբյեկտ-
ներն) զգայությունների կոմբինացիաներն են» (Լենին, և. 20. հ. 24):

Հիշեցնում եմ, որ Գանտի Ding an sich, «իր ըստ ինքյան», ուսմունքը
թարգմանում էին вещь по себе կամ в себе, Լենինը թարգմանում է само
по себе или в себе (և. 90): Այժմ թարգմանում են ալիւի վերջին ձևով
Լենինի հայերեն թարգմանիչը դրել է «ինքնին»:

Հիշեցնում եմ դարձյալ, որ հենց Լենինի գրքի մեջ միննույն իմաստով
անխտիր գործածված են объект и предмет, այլև իր, մարմին, ինչպես
կարելի է տեսնել վերևում բերված օրինակներից:

Հիմա գանջ այն խնդրին, թե ինչպես պետք է տալ գոյականի սահմա-
նումը (definition), որ համապատասխան լինի մատերիալիստական փի-
լիսոփայության պահանջին, միանգամայն և ճիշտ լինի, և թե ինչպես է
Մ. Արեղյանը կատարել այդ։ Դրա համար պետք է նկատի ունենալ մի շարք
խնդիրներ:

6. Ինքնակա—ըստ ինքյան:—Կարգանք նախ. «է<այդ> չ<եզմի>
տե<սություն>»-ից պր. 13-ի սկզբը:

«Նյութակա կամ իրական նշանակություն ունեցող բաների երեք մեծ
խմբեր—գոյական, ածական և բայ:—Մեր բոլոր պատկերացումներն արտա-
քին աշխարհի առարկաների ու երևույթների և մեր իսկ հոգեկան վիճակների
մասին՝ իրար հետ պարզվելով կազմում են ամենից առաջ երկու մեծ խումբ-
եր, առանց որոնց չենք կարող մտածել: Այդ պատկերացումների մի մասը
ներկայանում են մեզ իբրև ինքնակա, անկախ գոյություն ունեցող առարկա-
ներ, մյուս մասը՝ իբրև ոչ-ինքնակա, հատկանիշներ—հատկություն, գործո-
ղություն, դրություն և այլն, որ մենք դիտում ենք առարկայի վրա, որոնք
և անբրոժան են կամ առարկայից և կամ նույնիսկ առարկայի հատկանիշից:
Օրինակ՝ սպիտակ ձուլը սատակի փայլում է մասքի մեջ փայլելը պատ-
կերացում ենք իբրև ինքնակա, ինքնություն գոյություն ունեցող մի բան—
առարկա, իսկ սպիտակը, սփայլում է քառերի բովանդակությունը՝ իբրև

ձյունի հատկանիշները, որ ձյունից անկախ չեն, այլ դառնվում են ձյունի մեջ և նրանից անբաժան են. նույնպես և սաստիկն րառը նշանակում է մի հատկանիշ, որ անբաժան է ձյունի «փայլում է» հատկանիշից և որ նույնպես ինքնակա գոյություն ունեցող չի մտածվում, ինչպես և «փայլում է», «սպիտակ» հատկանիշները:

Մատերիալիստական տեսություն է այս, քհ՝ իդեալիստական—Փիլիսոփայությունից բան չհասկացողները միայն սրա մեջ իդեալիզմ կտեսնեն. «Ինքնակա», անկախ գոյություն ունեցող առարկաները և առարկաներից անբաժան իրենց՝ առարկաների հատկանիշները, որոշումները:

Այդ նույն է, ինչ որ ասենք Դիալեկտիկական մատերիալիզմը... շարժումը համարում է մատերիալի անխզելի հատկությունը (неразырывное свойство)» (էնիք, 211:

Ի՞նչ է այդ «Ինքնակա» բառը, որ հայաստանյան «մատերիալիստներից» շատերի համար գուցե նորություն է, Դա նշանակում է selbständig, самостоятельный, որ Դալի բառարանում բացատրված է՝ стоящий или сущий сам по себе, независимый от других, от чего-либо другого, «ինչ որ կա կամ գոյություն ունի ինքն ըստ ինքյան, ուրիշներից, որևէ ուրիշ բանից անկախ»: Այդ բառը սովորաբար թարգմանում ենք «ինքնուրույն»: Այսպես և էնիքի թարգմանիչը (ս. 108. հ. 276):

Ի՞նչ էր կարծում, երբ ասում ենք «ինքնակա, անկախ գոյություն ունեցող», այսինքն «ինքն ըստ ինքյան որևէ ուրիշ բանից (ուրեմն և մտածությունից) անկախ գոյություն ունեցող», մի՞թե այդ նույնը չէ, ինչ որ վերնում մեջ բերածը էնիքից ու Բերկլիից: Այո, մեր «ինքնակա» բառը հենց այդ էլ նշանակում է: Այդ բառն ունի փիլիսոփայական նշանակություն. դա փիլիսոփայական տերմին է: Բաց արեք թեկուզ «Հայերեն լեզվի Առձեռն բառարանը, 1865 թ. տպ.», և «ինքնակա» բառի դիմաց կգտնեք այս բացատրությունը: «Ինքնակա» եղած՝ ճեղքանոց կարծե՞ք (նիթ)»։ Պարզ է, ուրեմն, որ այդ բառը մատերիալիստական փիլիսոփայական տերմին է, հատկապես «նյութի» որոշումը և նշանակում է զրոտ ինքյան գոյություն ունեցող, վերնում ասացի, որ էնիքի հիշված գրքի հայերեն թարգմանիչը в себе, an sich ձևի դիմաց դնում է «ինքնին», Բաց արեք նույն Առձեռն բառարանի մեջ այս վերջին բառը և դիմաց կգտնեք «Ինքնին», ինքնին: Այս բառը նույն նշանակություն ունի, ինչ որ «ինքնակա» բառը: Բայց մինչ վերջինս փիլիսոփայական տերմին է, հատկապես նյութի—մատերիալի համար, «ինքնին» սովորական խոսակցության մեջ գործածվող մի բառ է եղել:

Ավելորդ չի լինի, գուցե, եթե միջանկյալ նկատենք, որ «ինքնակա» բառի համանիշ, հին փիլիսոփայական տերմիններ են «ինքնագոյ», «ինքնագոյակ», որ նույն բառարանում բացատրված են. «Ինքնին» գոյացած կարծվածը հեթանոսաց (նիթ)», զրոտ ինքնան ինքնակայացեալ (գոյացություն)։ Իսկ «գոյացություն» է «գոյակ, իր», իսկ «ենթանյութին» մեր հին փիլիսոփայական լեզվի մեջ նույն է, ինչ որ «գոյացություն»... (ըստ պէս պէս առման լուսարեւն ձայնիս իփոսդասիս)։ Իսկ այս հունարեն բառը նույն է, ինչ որ լատ. <ինքնին> substantia—գոյ. որից substantivus—գոյական: Բայց այս միջանկյալ կերպով:

Էնիքն, որքան կարողացել եմ դիտել, իմ կարողացած գրքի մեջ «ինքնակա» բառը չի գործածել: Մի տեղ միայն (ս. 198. հ. 276.) նա բերում է Դյու-

դինդից հետևյալ ցիտատը, Եփեսոսի առաքյալի հիմնական նախադրյալն է նյութապես իրական աշխարհի ինքնակալությունն (САМОУПРАВЛЕНИЕ ГОСУДАРСТВА) թարգմ. Եփեսոսյանությունն—Մ. Ա.] ու առարկությունը գիտակցության երևույթների խմբից, որոնք ժողովում են այդ աշխարհում և չ'մտնում են նրանում (<Լինիկ>, ու. 198, 7, 276)։ Բերելով այս կարգը՝ Ան ինն այդ ամբողջական գտնում է մատերիալիստական, նույնը, ինչ որ ասում է նք, թե աշխարհը գոյություն ունի զգիտակցությունից անկախ։ «Միթե որա հւ Կ-մտք էր է՛րգվելը քննադատում Գիտականի—գրում է նա։ Ոչ, էնգեյզը միանգամայն համամիտ էր Գյուրդինգին, ինչպես և ամեն մի մատերիալիստի նրանում, որ աշխարհը գոյություն ունի գիտակցությունից անկախ»։ (ու. 198, 7, 276)։ Ուրեմն ըստ Լինիկի Եփեսոսյան կալությունն = զգիտակցությունից անկախ գոյություն։

Այսպես ուրեմն, երբ ասում ենք, թե կան առտաքին աշխարհի Եփեսոսյան, անկախ գոյություն ունեցող առարկաներ, և նրանցից անբաժան, հատկանիշները,—դա մատերիալիստական տեսություն է։ Դա նշանակում է, ըստ մարքսիստական ձևակերպման՝ «մեզնից դուրս և մեզնից անկախ գոյություն ունեցող առարկաներ»։

Ու. Գոյական և Թանալան։—Մեր պատկերացումներն առտաքին աշխարհի առարկաների անդրադարձումներն են, բառերն էլ պատկերացումների արտահայտություններն են։ Հիմա ի՞նչ են կարծում, բառերը, մեր պատկերացումներին համապատասխան, ամենից առաջ քանի խմբի պիտի բաժանվեն, նա ապարդ է, որ ըստ մատերիալիստական տեսության բառերն էլ Եկադ-մում են ամենից առաջ երկու մեծ խմբեր, մի խումբ բառեր, որ նշանակում են ինքնակա, անկախ (հասկանալի է՝ մեզնից) գոյություն ունեցող առարկաներ, զոյ, դրանք են գոյականները, մի երկրորդ բառեր, որ նշանակում են առարկաներից անբաժան հատկանիշները, որոշումները, դրանք են ածականները։

Այս է մատերիալիստական առաջին և գլխավոր բաժանումը բառերի տեսանկյունի։ «Ամենից առաջ երկու մեծ խմբեր», ինչպես ասված է իմ «ՇՀ-այոց» չեզոքի» սոցիալական» և մեջ—ինքնակա, անկախ առարկա և իր հատկանիշը և դրանց համապատասխան բառախմբերն։ Քայց կտանք՝ զեր-նագրի մեջ գրված է Ենյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր—գոյական, ածական և քայց։—Այո՛, երեք մեծ խմբեր, և ոչ Եամենից առաջ երեք խումբ։ Այստեղ մենք կանգնենք մեռա, որ այդ Եմեծ խմբերից քայլ ուրիշ բան չէ, քայց եթե գոյականի և ածականի մի համադրություն (սինթեզ)։

Հիմա կկարծեք, թե Արեգյանը մոռացավ, որ խնդիրը գոյականի սահմանում միայն է։ Ո՛չ, ես չեմ մոռացել։ Միևն է մի քանի կարևոր խնդիրներ չպարզվեն, կարելի չէ գոյականի մատերիալիստական ճիշտ սահմանումն անել, Ուստի զուգընթաց աշխատում եմ պարզաբանել մի քանի հարակից խնդիրներ ևս։

Հիմա հարց։ Կարո՞ղ ենք զերիկ բացատրությունների հիման վրա ասել, թե «գոյական ասվում են այն բառերը, որոնք նշանակում են ինքնակա (կամ ըստ ինքյան, կամ մեզնից դուրս և մեզնից անկախ) գոյություն ունեցող առարկաներ»։

Բնավ ոչ։ Այդպիսի սահմանումը մատերիալիստական է, քայց ճիշտ չէ, ծիշտ չէ, որովհետև թերի է, Դա տրամաբանական չէ։

Տնտեսնք, որոնք, դարձյալ մի քանի հարակից խնդիրներ, որոնք են՝ տրամաբանություն և տրամաբանական սահմանում, վերացական զարգացումներ, միաժամանակ և ճաղ. Ազգայնի վարմունքը, կոնկրետ առարկաներ և ընդհանուր վերացական զարգացումներ, և վերջապես զոյականի մատերիալիստական և ճիշտ սահմանումը:

7. Տրամաբանության և տրամաբանական տեսնականի վերին:—Մեր երկտառարդները, զույգ, սակավների թացառություններ, ոչ մի ժանտություն լուսնն այս գիտության մասին: Նրանք նույնիսկ արհամարհում են այդ:

Փաղ. Ա. Ղարբյանի իր քերականության նախաբանի մեջ գրել է. թե զգալագործել է Մ. Արեղյանի «Հայոց» լեզվի» տեղությունը» և «Այն» «արհամարհ» շարահյուսությունը (անպայման և «Այն» «արհամարհ» քերականությունը» և, որ նա լի հիշում), «մերթնելով նրանց լոգիստական և ֆորմալիստական դրույթները»—«Շեղմանիստական հանդիման հետ կոնսենսը, իսկ թե ինչ է ուզում ասել նա» «լոգիստական դրույթ» բառերով և ինչ է մերժում նա իմ քերականությունից այդ նկատմամբ,— ոչ մի խոսք այդ մասին:

Երևի, նա լսել է ֆորմալ լոգիկայի—ձևական տրամաբանության մասին բաներ, բայց չգիտե, որ դիալեկտիկական լոգիկան կամ մատերիալիստական լոգիկան լի ոչնչացնում ձևական տրամաբանությունը, այլ այդ վերադառում է իր մեջ իրեն իր մի մոմենտը: Կարգանք Գ. Վ. Պլեխանովի «Մարքսիզմի հիմնական խնդիրները» գրքի «Դիալեկտիկա և տրամաբանություն» գլխից հետևյալը:

«Ինչպես որ հանգամանքները շարժման մասնավոր մի դեպքն է, այնպես և մտածողությունը ձևական տրամաբանությանը (մտքի «հիմնական օրենքներին» համաձայն)՝ դիալեկտիկական մտածողության մասնավոր մի դեպքն է: Իսկ ի՞նչ է նշանակում այդ? Պա նշանակում է. «նյութի շարժումը հիմք է ծառայում բնության բոլոր երևույթներին համար: Շարժումը հակասություն է: Նրա մասին անհրաժեշտ է դատել դիալեկտիկորեն, կամ, ինչպես ասում են, «հակասության տրամաբանությանը»: Միայն խոսքը վերաբերում է բոլոր երևույթներին այս հիմքին, մենք գտնվում ենք «հակասության տրամաբանության» բնագավառում: Սակայն շարժվող նյութի մոլեկուլները, միանալով մեկը մյուսի հետ, կազմում են որոշ զուգորդություններ»¹,—իրեն, առարկաներ: Այդպիսի զուգորդություններն այդքան են ընկնում ավելի կամ պակաս կայունությանը, պոնավունում են ավելի կամ պակաս երկար ժամանակ, և ապա անհետանում են, փոխարինվելով ուրիշների հետ... Երբ խոսքը վերաբերում է առանձին առարկաներին, ապա դրանց մասին դատելիս մենք պարտավոր ենք... ընդհանրապես դեկլարավել մտածողության հիմնական օրենքներով: Այս բնագավառում իշխում է... սկսում այդ է և ոչը՝ ոչն ֆորմալը»²:

Բերան մի կտոր էլ: «Ձևական տրամաբանության հիմնական օրենքները որոշ սահմաններում կարող են կիրառվել նաև շարժման վերաբերմամբ: Իսկ

¹ Հայերեն թարգմանություն Ա. Գալստյանի, թիֆլիս, 1899, նր. 111 հոս.

² Ուսանելում է ՇԱՐՇԱՐՇԱՐՇ, որ է՝ զուգակցություն: Բայց այստեղ հարմար է «համակցություն» կոմբինացիա բառով թարգմանել: «Հագորդությունը շատ վաղուց գործածվում է աստիճանային նշանակությամբ:

— Պա ձևական տրամաբանության «հիմնական օրենքն է: Մ. Ա.:

այստեղից մի անգամ ևս հետևում է, որ դիտվածությունն չի վերացնում ձեռնարկյալ տրամաբանությունը, այլ միայն զրկում է նրա արժեքները մեծագույնից՝ կորցնելով նրանց վերագրված քանակական նշանակությունը:

Կարծես չառաքել է:

Մի կարծիք էլ կենդանի է մեծահասակների, որոնց շրջանակներում դա (— ձեռնարկյալ տրամաբանությունը—Մ. Ա.) պիտուի է, տառապանք են գրեթե յուրաքանչյուր դեպքում և պայմանավորվում են այդ տառապանքի քանակությամբ, որի համար այդ կիրառվում է,— մարտնչային փորձերի մեջ:— այդ սահմանները չառաքել լինել են, քան թե արևի միջոցով դեպքում, որ իր փափուկությունները կատարում է մի քանի քառակուսի ընթացքում:

Կարծես այս էլ պարզ է:

Մեր երկրամասերը ձևական տրամաբանություն չեն ստացել, այլ միայն հեղձից լսել են որոշ մասին և արժամատնացել են վերաբերվում դրան: Ուստի այն դեպքում, երբ նրանք արտաբերվում են զննողական տրամաբանությամբ, բայց այդ շին անում, այդ ժամանակ նույն ժամանակ քարին է առնում, ինչպես ասում են դուրեցիք: Իսկ այդ դեպքում կարող է նաև խոսի բերանը կոտրվել, և կոտրվել է:

Հիմա անցնենք դոկտրինի ստեղծմանը: Տրամաբանության մեջ սահմանում (definition) պայմաններից մեկն այն է, որ սահմանումը պիտի լինի ընդհանրական (universal), այսինքն սահմանումն, այդ դեպքում պայմանառաջ քառի սահմանումն, իր մեջ պիտի առնի այն առիթի ամբողջությունը, ինչին որ վերաբերում է այդ պայմանառաջ քառը, իբրև ընդհանրապես առարկա նշանակող:

8. Վերացական գաղափարներ:—Արդ, ոչ միայն որոշվածով, կանխորոշ գոյություն ունեցող առարկաների անուններն են դոկտրին, այլ կան նաև վերացական զառափարկները, կամ, ինչպես երբեմն ասում են, վերացական առարկաները՝ քառություն, տանջանք և այլն, որոնց անուններն ևս գոյական են, բայց դրանք չեն նշանակում թույլության մեջ կոնկրետ, թանձրացական գոյություն ունեցող առարկաներ: Այստեղ, որոշման, նախքան գոյականի սահմանումը առաջ, պիտե է պարզել, թե ինչ է վերացումը, վերացությունը (abstraction): Եվ այդպես էլ վարվում են հաճախ <այդ> և <եզվի> տեղիքում: 10-ում և պար. 13-ում, ինքնակա առարկաների և իրենց անբաժան հատկանիշի մասին խոսելուց հետո:

Եվ մենք ինչ, որ ինքնակա առարկաների կատեգորիայի մեջ ենք դնում, հարկավոր, թույլության մեջ անպատշաճ գոյություն չունին իբրև թանձրացական, ֆիզիկական, իրական առարկաներ, այլ ճանաչում ենք մտածում այդպիսի իբրև ինքնակա գոյություն ունեցող բաներ, ինչպես են՝ ուժ, քառություն, փառք:

Այս ի՞նչ է նշանակում:—Այս նշանակում է, որ վերացությունները, որոնց համապատասխան անունները նույնպես գոյական են, մենք ենք մտածում իբրև ինքնակա առարկա: Եվ ինչու՞ այդպես: Դրա բացատրությունն էլ տրվում է անմիջապես. թվեց այլ կերպ մտածել չենք կարող, քան ամեն ինչ դնել կամ ինքնակա առարկաների կամ նրանց հատկանիշների խմբերի մեջ և այլն, կամ ինչպես վերնում ասված է, մեր պատկերացումները սկզբում են երկու մեծ խմբեր, առանց որոնց չենք կարող մտածել: Բայց ինչու՞ առանց դրանց չենք կարող մտածել, — որովհետև մտածություն

Ամեն ինչ, որ ինքնակա առարկաների կատեգորիայի մեջ ենք դնում, հարկավոր ընտելան մեջ անպատշաճ իրոք գոյություն չունեն իրրի թանձրացած (բնագրի մեջ է՝ «թանձրացական»), ֆիզիկական, իրական առարկաներ, այլ նաև ախ մեկ ենք մտածում այդպես իրրի ինքնակա գոյություն ունեցող ղաններ։—Եմ ապա այդ քաղաքացին բաց թողնելով իմ գրքից որոնք էլ ու ինչ քաղաքացիներ, թե ինչու ենք այդպես մտածում և թե ինչ է վերացութունը, վերացական առարկան, գրում է իրր իմ գրքից. «Անշուշտ ինքնակա առարկանն գոյություն ունեն միայն մեր մտածողությամբ, որանք վերացական առարկաներ են (եր. 27)»։ Եմ եզրակացում է նա.

«Այսպիսով պրոֆ. Արեղյանը միտում է մեր մտածողությունից պար և մտածողությունից անկախ գոյություն ունեցող առարկաները։ Այստեղ Արեղյանը նոր բան չի ասում, քան քաջանա Բերկլինը» (շնոր ուղիք, եր. 173), Բոլոր ընդգծումները հոգովածագրին են։

Անդրում եմ, ներողամիտ լինեն ունկնդիրները, որ ես այսքան ցիտատեմ իմ գրքում։ Դա հարկավոր էր մեր երիտասարդների վարմունքը ցույց տալու համար։

1. Փաղ. Արեղյանը մի կողմ է թողնում իմ գրքից այն ամենը, որի մասին ես այստեղ խոսքի մատերիայիզմի համար սկսած իմացարանությունից։

2. Նա մի կողմ է թողնում Նույնիսկ այդ պար. 13-ի սկզբի մասը—ինքնակա առարկաները և իրենցից անբաժան հատկանիշները։

3. Նա մի կողմ է թողնում և իր բերած ցիտատների միջև գտնված ամբողջ մասը, և նրկու հատվածն էլ բերում է իր ուղած ձևով։ Այդ ցիտատներն էլ ճիշտ չի բերել նա։

Ինչ է արել քաղ. Արեղյանը։ Մինչդեռ բնագրի մեջ տպված է. «Այսպիսի առարկաներն, անշուշտ, ինքնակա գոյություն ունեն միայն մեր մտածողությունամբ, նա այսպիսի բառը շնչել է, չնչել է նաև առարկաներն բառի վերջի շնչ հոգը, անշուշտ բառը դրել է առարկաներ բառից առաջ և իրենից սարքել հետևյալ ֆրազը, որ ընդգծելով վերագրել է Արեղյանին. «Անշուշտ ինքնակա առարկաներ գոյություն ունեն միայն մեր մտածողությամբ»։ Ինչ է կատարվել։ Արեղյանը խոսում է վերացությունների մասին՝ բերելով ու բացատրելով սպիտակություն, բարձրություն, վազելը—վազը և գրանց համար է ասում, թե «Այսպիսի առարկաները», այսինքն վերացական առարկա կոչվածները, ինքնակա գոյություն ունեն միայն մտածողությամբ, իսկ Արեղյանն այդ ընդհանրացրել է, թե իրր Արեղյանը գրել է։ Անշուշտ ինքնակա առարկաներ գոյություն ունեն միայն մեր մտածողությամբ»։

Առնենք նրա բերած առաջին ցիտատը։ Այստեղ էլ նա այդ ցիտատի մեջ չի առել իրրի քաղաքացիական օրինակ բերված, «բնկան են՝ ուժ, քաղություն, փառք» բառերը։ Հարկավ, նա հասկացել է, թե ինչ է անում։ Բայց նա մոռացել է շնչել նաև «անպատշաճ» և «համախա բառերը։ Երևի, Արեղյանի թուադրանում «համախա» նշանակում է «միշտ»։ Բայց այդ բառը հայերեն նշանակում է «շատ անգամ»։ Երբ մեկն ասում է, թե, դիցուք «X-ը եմեմա սուտ է խոսում», այդ չի նշանակում, թե նա միշտ սուտ է խոսում, այլ թե նա շատ անգամ սուտ է խոսում, մնացած անգամներին էլ նա ճիշտ է խոսում։ Այդպես էլ այն ժամանակ, երբ Արեղյանը արտաքին աշխարհի պատկերացումների առաջին կատեգորիան դնում է ինքնակա գոյություն ունեցող առարկաներին համապատասխան, և այդ բացատրելուց հետո գրում է. «Ամեն ինչ...

քաղություն, փառք (բերված է վերևում)։ Այդ լի նշանակում, թե «միջա» մենք այդպես ենք մտածում, այլ միայն շատ անգամ ենք այդպես մտածում, ուրիշ անդամներ դրանք բնության մեջ իրոք գոյություն ունեն իբրև թանձրացան, ֆիզիկական անարկաններ։ Բայց եթե նույնիսկ պատահմանքով կամ իբրև վրիպակ սհաճախ բառը չլիներ, մի՞թե այդ իրավունք կտար որևէ մեկին այդպիսի հզորացություն անելու։ Ընթերցողը նկատի ունենալով նախորդ և հաջորդ բացատրությունները՝ այն միայն պիտի նկատեր, որ այդ ֆրագմենտով լի խմբագրված, կամ մեջը վրիպակ կա։

10. Կոնկրետ առարկաներ և ընդհանուր վերացական գաղափարներ։— Երբ ասում ենք, թե սոսկիտակություն և նման գոյականների նշանակությունը վերացություն է, և մենք ենք միայն մտածում այդ իբրև ինքնակա, մեզինք անկախ գոյություն ունեցող բան,— ապա դա լի նշանակում, թե սոսկիտակություն և նմանները դատարկ վերացություն են, դատարկ արտահայտիչ։ Այդ նշանակում է, որ սոսկիտակություն իբրև այնպիսին, իբրև ինքնակա կոնկրետ առարկա, գոյություն չունի։ Դա սմտքի մացուր ստեղծագործություն է և արտահայտիչ։ Բայց սոսկիտակություն բառի նշանակություն իբրև հատկանիշ, հատկություն, իրական (սեպ) է, այսինքն գոյություն ունի, բայց գոյություն ունի միայն այս կամ այն կոնկրետ առարկաների մեջ։

Իսկ ի՞նչ է առարկա և կոնկրետ առարկա։— Երբ, առարկա, պրոցես նույնական են իբրև մեր մտածության առարկան։ Ինչ է կոնկրետ առարկան, ստորեկտից անկախ գոյություն ունեցող բանը։ Իբր օբյեկտիվ մատերիալի (նյութի) կոնկրետ ձևը կամ մասն է*։

Իսկ ի՞նչ է առարկան կոնկրետ, սկոնկրետը նրանով է կոնկրետ, որ բովանդակում է իր մեջ բազմաթիվ որոշումներ, երեսն գալով իբրև մեկության բազմազանության մեջ**։ Ահա թե ինչ է կոնկրետը, թանձրացանք։ Մեկություն բազմազանության մեջ, Մեկ հատ, եղական, առանձին, անհատ առարկա իր բազմազան հատկություններով ու հարաբերություններով հանդերձ։

Կարգանք իմ «Հայոց» լեզվի մեջ «հստություն»-ից մի կտոր պար. 10-ից (եր. 21 հտ.) սկզբնապես պատկերացում, Բառերի ընդհանուր և հատուկ նշանակություն ապրագրության։

«Բնության մեջ գոյություն ունեն միայն ունհատ առարկաներ, առանձին գործողություններ ու հատկություններ, որոնք և մեր գիտողության են ներարկվում. ուստի լեզու սովորելիս սկզբում բառի հնչյունների հետ դուրսդրվում են անհատ առարկաների և առանձին գործողությունների պատկերացումները։ Ուրիշ խոսքով՝ բառերն ունեն սկզբում անհատական կամ հատուկ նշանակություն»։

Դրանք, այդ առարկաները, կոնկրետ, օբյեկտիվ առարկաներ են, որոնք իբրև նյութի ձևեր գոյություն ունեն մեր գիտակցությունից դուրս և անկախ, և այս կամ այնպես ազդում են մեր զգայարանների վրա և առաջ են բերում զգայությունները։ Այդ կոնկրետ նույնանման առարկաների տարբերությունները թողնելով, ընդհանուր հատկությունները վերացնում, կազմում ենք դրանք ընդհանուր վերացական գաղափար, որ նույնպես մտածում ենք իբրև

* Т. С. Нищенко, Краткий филол. словарь. Издательство коммунистического университета, Москва, 1930

** К. Маркс, К критике политической экономии, 1930, к. 1, 76.

ինքնակա առարկա, Այդ դեպքում միևնույն բառով, գրգռք, ծառ րառով
«անվանում ենք ոչ միայն բնություն մեջ հղած աշխատ, քան նախապես
(կոնկրետ) մեկ առարկա, այլև նույնանման առարկաների ընդհանուր պատ-
կերացումը կամ ընդհանուր գաղափարը»:

Քերենք մի օրինակ.

Բնության մեջ կան այրելի և այրիչ առանձին, անհատ եղանակ ծա-
ռեր, իսկ ծառ ընդհանրապես, իրեն այրելի է, իրեն մի ինքնակա առարկա,
գոյություն չունի: Դա մեր մարդ մտքով ստեղծագործություն է և իրեն այդ-
պիսին, և առարկություն նյութական գոյություն ունեցող կոնկրետ ծառերից:
Գոյություն գոյություն չունի: Բայց այդ չի նշանակում, թե ընդհանուր վերա-
ցական ծառ գաղափարը դասարկ առարկայից է, առանց իրական նշանա-
կության: Դա ցույց է տալիս նույնանման առարկաների, նախ կարևոր բոլոր
առարկաների, բոլոր ծառերի ընդհանուր հատկությունները, որ նույնպես կան,
գոյություն ունեն նույն կարգի բոլոր առանձին, անհատ եղանակ առարկա-
ների մեջ, բայց ալ այդպես: Մենք վաղ հասակից որդեն կայտնանում ենք
սամեն մի նոր ըմբռնումի մեջ դառնել, ինչ որ ընդհանուր է առաջին բոլոր
նույնանման ըմբռնումներին, օրինակ՝ այսինչ անհատ ծառի մեջ տեսնել,
ինչ որ ընդհանուր է մեզ, առաջուց տեսած բոլոր ծառերի մեջ (սե՛ւայց)
է՛նդզի՛ր> տ<հատ.թյուն>», եր. 22):

Իսկ այդ ի՛նչ է նշանակում—Դա դիտելիություն կան առամարտություն
հիմնական դրույթներից մեկն է, և նշանակում է, որ ամեն անհատ, եղանակ,
առանձին ծառի մեջ կա ընդհանուրը: Դա նշանակում է՝ 1. «Ընդհանուրը դո-
յություն ունի առանձինի մեջ, առանձինի միջոցով», 2. «Ամեն մի առանձին
(այսպես թե այնպես) ընդհանուր է», 3. «Ամեն մի ընդհանուր առանձինի
մասնիկը կամ կողմը կամ հույսունքն է», 4. «Ամեն մի ընդհանուր միայն
մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին առարկաները», 5. «Ամեն մի
առանձին ընդհանուրի մեջ մասնում է ոչ լիովին» (լին<ին>, 303, հ. 421):

Պարզաբանենք լինիսի այդ դիտելիություն կան դրույթները բերելով իրեն
օրինակ ծառ ընդհանուրը—«Ժառանգի» և անհատ ծառը: 1. Մառ ընդհա-
նուրը—«Ժառանգի» գոյություն ունի միայն առանձին անհատ ծառերի մեջ (1)
և սրանց մի կողմն է, մի մասնիկը, հույսունք (3) և առանց դրան չկա ոչ
մի առանձին ծառ: Կենդանակի ամեն առանձին ծառ և ընդհանուր ծառային է
(2), 11. Ամեն առանձին, եղանակ ծառ մտնում է ընդհանուրի մեջ, բայց ոչ
լիովին (5), այլ միայն իր այն հատկություններով, որ ընդհանուր են բոլոր
ծառերի համար, առանձին եղանակ հատկությունները, որ ոչ մի ուրիշ ծառ
չունի, մնում են ընդհանուր գաղափարից դուրս: 111. Նույն ուրիշ կերպ աս-
վում է՝ «Ամեն ընդհանուր միայն մոտավորապես (մասամբ) է ընդգրկում
բոլոր առանձինները» (4), այսինքն ծառայինը ամբողջապես չի առնում իր
մեջ բոլոր առանձինները, առանձին ծառերը, այլ միայն այն լսիով, որ-
չափով ամեն առանձին ծառի մեջ կա ծառայինը, ընդհանուրը, կամ ընդգր-
կում է ամեն առանձինի մեջ եղած ընդհանուրը միայն:

Փանի որ մեզ պետք պիտի գա, կանգ առնենք փոքր ինչ և հետևյալի
վրա:

Բացի եղանակից կամ առանձինից կա և մասնավորը (частное), ինչ որ
հատուկ է նույն կարգի առարկաների մի մասին, օրինակ՝ 1) ծառ ընդհանուր
(սեռ), 2) ծիրանի ծառ՝ մասնավոր (տեսակ), և 3) այսինչ ծիրանի ծառը
(եղանակ, единичное, առանձին, հատուկ ծառ): Մնացած որ եղանակը, նույն-

պէս և մասնավորը պէտք չէ անջատել ընդհանուրից. «Ամեն ժիրանի ծառ՝ ծառ է», այսինքն ժիրանի ծառի (մասնավորի) մէջ կա, գոյութիւն ունի ընդհանուրը, ծառայինը (1. 3.), կամ ամեն ժիրանի ծառ (մասնավորը) ընդհանուր է (2), կամ մտնում է ընդհանուր ծառային գաղափարի մէջ, բայց ոչ լիովին (5), այլ միայն իր ընդհանուր հատկութիւնով. կամ ընդհանուր գաղափարը—ծառայինը—ընդգրկում, իր մէջ է առնում ժիրանի ծառը, բայց ոչ լիովին, որովհետեւ մասնավորը, ծիրանին դուրս է մտնում (4), ամեն ծառ ժիրանի չէ:

Ահա դիտարկարկական տրամաբանութեան հիմնական գրութիւնները, որոնք մէջ պէտք է խորը քափանցի ամեն իսկական դիտարկանք. Ապա պէտք է նկատել հետեւյալը: Յորմալ տրամաբանութեանը գործ ունի միայն մտածութեան ձևերի հետ, միայն ընդհանուր վերացական գաղափարների հետ, վերացութեանների հետ, միևնույն դիտարկարկական տրամաբանութեանը, քանի որ մտածութեան ձևերն օրյակտիվ գոյի պատկերներն են, գործ ունի կոնկրետ նպակա-ցութեանների հետ, որոնք կոնկրետ լինելով իրենց մէջ պարունակում են և եզականը (անհատականը, առանձինը), և մասնավորը, և ընդհանուրը:

Նս այս շեշտում եմ, որովհետեւ քիչ հետո դրա հիման վրա որոշ եզրակացութիւնների պիտի հանգենք:

11. Գոյականի սահմանումը:—1. Տեսանք, որ մատերիալիստական լի գոյականի այն սահմանումը, որ արել են Շապիրոն և Ղարիբյանը, և որ Բերկլին, Էթն Նա կենդանի լինելու, կատորագրեր դրա տակին:

2. Տեսանք հետեւյալ մատերիալիստական ձևակերպումները՝ «առարկաներն ըստ ինքնան գոյութեան ունեն», «առարկանները մեզնից դուրս և մեզնից անկախ գոյութեան ունեն», «առարկաններն ինքնակա, անկախ գոյութեան ունեն», կամ «ինքնին գոյութեան ունեն», կամ ինքնուրույն գոյութեան ունեն: Տեսանք, որ դրանց բոլորի իմաստը մեկ է: Դրանք միևնույն մատերիալիստական տեսութեան տարբեր բառերով ձևակերպումներն են:

3. Տեսանք, որ երբ գոյականը սահմանենք այսպես՝

Գոյական ասվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս ինքնակա գոյութեան ունեցող առարկաներ, դա կլինի մատերիալիստական, բայց ոչ ճիշտ ըստ տրամաբանական պահանջի, որովհետեւ ոչ միայն կոնկրետ գոյութեան ունեցող առարկանների անուններն են գոյական, այլ նաև վերացական գաղափարների (ծառ ընդհանուրը), որ մտածում ենք իրեն ինքնակա առարկաններ: Հետևաբար՝ գոյականի մատերիալիստական ճիշտ սահմանումն է՝

Գոյական ասվում են այն բառերը, որոնք նշանակում են ինքնակա (—մեզնից դուրս և մեզնից անկախ) գոյութեան ունեցող կամ իբրեւ այնպիսին մտածված առարկաններ:

Բացքը «Հ<այդ>» և «եզվի» տ<եսութեան>, եր. 28 և այնտեղ կգտնենք գոյականի այդ սահմանումը: Կարելի է դուրս ձգել «գոյութեան ունեցող» բառերը, քանի որ դրանք իմաստը կա «ինքնակա» բառի մէջ, որ է՝ ըստ ինքնան գոյութեան ունեցող, և ավելի կարճ ասել:

Գոյական ասվում են այն բառերը, որոնք նշանակում են (ցույց են տալիս) ինքնակա կամ իբրեւ այնպիսին մտածված առարկաններ:

Ահա քիչ որն է մատերիալիստական և ճիշտ սահմանումը, որի համար առաջուց շատ յսեղիքներ պէտք է եղել նկատի ունենալ:

Այս մատերիալիտական մտածողւմը 1922—23 թվորին չէ առաջ եկեղ-
կաւորոնք նաև Աւշիս <արհարարի> շար <աշուանութուն>», եր. 7. Գոյա-
կանը ցույց է տալիս ինքնութեան (—ինքնակա) գոյութիւն ունեցող կամ
իրեն տնայնիսին մտածված տարակաւ:

Կարգաւոր 1906 թ. տպված իմ «Աւշիս» <արարի> գործականութիւնն
եր. 48, 50 և 100.

89. Գոյական բառը կազմված է գոյ բառից, որ նշանակում է՝ ամեն ինչ
որ կա, բնութիւն մեջ անկախ գոյութիւն ունի, կամ մենք մտածում ենք, թե
անկախ գոյութիւն ունի, ինչի մարդ, կենդանի, թե մի ուրիշ բան: Գոյա-
կան նշանակում է, որեմե, գոյի կամ գոյակի վերաբերյալ:

ԳՅՅԱԿԱՆ ասվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս անկախ կամ
իրեն անկախ մտածված առարկաներ. օրինակ՝ մարդ, առյուծ, լեռ, քար, բոց,
լավութիւն, տանջանք, տարի, կողմ...

100. Բնութիւն մեջ անկախ գոյութիւն ունեցող առարկաները կոչվում են
բանօճաքական կամ ֆիզիկական առարկաներ. դրանք նյութական գոյակներ
են և ընկնում են մեր զգայարանների տակ. ինչպե՞ս՝ ձի, դետ, գիրք:

Իսկ այն առարկաները, որ նյութական չեն և քնութիւն մեջ անկախ
գոյութիւն չունեն, այլ միայն մենք մտածում ենք իրեն անկախ գոյութիւն
ունեցող բաներ, կոչվում են վերացական առարկաներ: Վերացական առար-
կաները լինում են իրեն անկախ մտածված հասկոյութիւններ, եղելութիւն-
ներ, դրութիւններ և այլն: Օրինակ՝ քաղութիւն, առողջութիւն, տանջանք,
փառք, ընթացք:

Նույնը նաև «Տարր <ական> գործականութիւնն ա <աղին> տպագր <ու-
թիւն>», եր. 23. «Առարկային» բացատրութիւնը, Նույնը այդ փոքրիկ գորա-
կանութիւնն երկրորդ տպագրութիւն մեջ (1908 թ.) ավելի պարզած և ըն-
դարձակած, միայն «ինքնութիւնն» բառով բացատրած, հետագայում ավելի
ևս պարզած: Ահա ձեզ մատերիալիտական բացատրութիւն, որի մեջ միայն
սքնկնում են մեր զգայարանների տակը՝ դարձված, իրեն հետացած, պետք է
փոխել և ասել՝ «ազդում են մեր զգայարանների վրա»: Ես էլ ուրիշ փոփո-
խութիւն չէի անիլ այդ բացատրութիւն մեջ: Մարքսիստները թերևս առա-
ջարկեն անկախ բառից առաջ ավելացնել մեղմից բառը. անշուշտ, կարելի է
այդ անել և ավելի պարզ կլինի դրանով մատերիալիտական տեսութիւնը:
Բայց ըստ իմաստի՝ դրանով նոր բան չի ավելանալ, քանի որ «Բնութիւն մեջ
անկախ գոյութիւն ունեցող» բացատրում է այդ Կարելի է, հարկավ, ասն-
կախ» բառի փոխանակ ղեկ և պետք է ղեկն «ինքնակա» բառը, և եթե ես
1906 թ. այդ բառը չեմ ընտրել, միայն նրա համար, որ հարկավոր կլինի
բացատրել այդ բառը: Այդ կավելացնել մի տեղիին բացատրութիւն:

12. Քննադատ երիտասարդներ:—Մի փոքր էլ տեսնենք, թե ինչ են
ասում: Սկսենք դեռ մի ասպիրանտից, որ «Կուլտուրական ֆրոնտում» 1934 թ.
Ձ 28-ում «Ասպիրանտ Գր. Հակոբյան» օտորագրութիւն մի հոդված է գրել:
Նրա կարծիքով մինչև այդ թվականը «գոյականներին ոչ մատերիալիտա-
կան, դեռ ավելին՝ դեպի իդեալիզմ տանող քնորոշումներ» են տվել, «այս-
պես օրինակ՝ պրոֆ. Արեղյանի «առնամենում» (ընդգծում իրեն է), եվ նա
արտագրում է իմ Աւշիս <արհարարի> գոր <ականութիւն> ից մի կտոր:
Ես չեմ ուղղում ցույց տալ, որ այդ ասպիրանտը, խոսելով փիլիսոփայութիւն-
ների, լի չէր իդեալիզմ ու մատերիալիզմ, այլ կասեմ միայն հետևյալները.

1. Այդ ասպիրանտն այդ հողավածը գրելիս դեռ այն աստիճանի անպատրաստ է հղել, որ, նույնիսկ չի հասկացել որ իբրև սահմանումս իր բերած կտորը, որ մանր տառերով է տպված իմ գրքի մեջ, գոյականի սահմանումը չի իմ գրքի մեջ. սահմանումը վերնինն է, խոշոր տառերով տպվածը. գոյական ասվում ենք...

2. Նա կարգալ. հասկանալ չգիտեմ. նա իր բերած հատվածի մեջ գոյականներն բառը փոխում է գոյականներն, երևի այն պատճառով, որ գոյական բառը չի իմացել:

3. Նա արտագրելով իր բերած հատվածն իմ գրքից, բարեհաճել է դրա վերջում իրենից մի բան ավելացնել փակագծերի մեջ. ովերացական առարկաները լինում են իբրև անկախ մտածված հատկություններ, հղելություններ (լավ լսանք՝ անկախ հղելությունները Գ. Լ.), դրություն և այլն: «Անկախ» բառի ընդգծումն իրենն է, ես էլ կասեմ՝ լավ ուշադիր հղեք, թե ինչպե՞ս մեր այս երթասարդ ասպիրանտն էլ, ուրիշներին հետեւելով, իսկույն անպարտություն է անում: Նա ժբբոն անկախ մտածվածն հղելությունը դարձնում է թանկախ հղելություն: Նա լի՞ հասկանում այդ երկուսի տարբերությունը, թե՞ գիտակցաբար է այդպես վարվում:

Ը. Խորհնացու Վայոց պատմությունն վերջում մի այսպիսի իմաստուն խոսք կա մեր քառյակի ասպիրանտների համար ասված. «Աշակերտք... փոթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանքն»:

Այդ, իհարկե, այն ժամանակի Վեպարածաբանությունն սովորողների համար է ասած և ոչ մեր լեզվաբաններին՝ համար, կասեն թերևս մեր ասպիրանտները:

Դառնանք Մալիուշի և Ա. Ղարիբյանի քերականություններին. նրանց սահմանումը մատերիալիստական չի դարձնել, հարկավ, այն, որ նրանք սահմանումից հետո գրում են. «Առարկա ասելով պետք է հասկանալ իրեր (սեղան, կոշիկ, մեքենա, կապ, երկաթ, իսկ Ա. Ղարիբյանը՝ ծառ, փայտ, գիրք, երկաթ, կաթնա), կենդանի էակներ (մարդ, ձի, արջ, աղվես, իսկ Ա. Ղ.-ը՝ կենդանիներ՝ մարդ, թռչուն, աշակերտ, գալլ, աղավնի, մրջյուն), երևույթներ (որոտ, երկրաշարժ, լուսաբաց, իսկ Ա. Ղ.-ը՝ կայծակ, փոթորիկ, հրճվածք, ոգևորություն), անցքեր (հեղափոխություն, մահ, գալուստ, իսկ Ա. Ղ.-ը՝ հեղափոխություն, գործադուլ, պատերազմ)»—մի խոսքով ամեն ինչ, որի համար կարելի է հարցնել, թե՞ է դա կամ թի՛ն է դա: Ա. Ղ.-ը Մալիուշից արտագրելուց և միայն փակագծերի մեջ գրված օրինակները փոխելուց հետո, երևի դարձյալ մի ուրիշ գրքից ավելացրել է՝ ճառարեւոյություններ (սեբ, բարեկամություն, միություն, թշնամություն, շահագործում) և այլն—մի խոսքով իրային առարկաներ և առարկայացվող նուսկացություններ:

Այդ շարքը՝ (իրեր, կենդանիներ, երևույթներ, անցքեր, հարաբերություններ) բերված է առանց որևէ սկզբունքի, ուստի կարելի է ուզածի լսող երկարել, և հեղինակներն իրենց վերջում այդ էլ հայտնում են գրելով օն այլն, մի խոսքով...

Սա լե՞մ ուզում քննության մեջ մտնել. նաև բերված օրինակներին նկատմամբ, բայց լե՞մ կարող ընկատել, որ մատերիալիստական չէ բնավ, իբրև առարկաների ենթատեսակի գնել իրեր: Ե՛րբ և թառարկած, ըստ մատերիալիստական տեսակետի նույնական են: Բայց այդ չէ կարևոր, այլ այն, որ մեր

գործակներ որոշ հասկացություն չունի վերացականի և կոնկրետի մասին, կարգանք նրա գրքից եր. 22, կետ 1 (ամբողջ):

1. Հետաքննարկելու մե կոնկրետ և վերացական: Կոնկրետ են բոլոր իրաչին արտահայտություն, քաղաքականություն, ունեցող առարկաները (օտարական, քաղաք, լուսին), վերացական են առարկայացվող հասկացությունները (փոխադասություն, առարկանականություն, տգրականություն, հանույթ, ըմբռնում, գաղափար): Վերացականներն ունեն իրական արտահայտություն (գիտություն, գաղափար, արագություն), կարող են (հաղվագրու դեպքերում) նաև լուսննալ իրական արտահայտություն, այլ լինել լույս ըմբռնում (սատանա, դե, ոգի, աստված, հրեշտակ, քաղ):

Ինչ գալիմատիա և այլ. իրաչին առարկաներ, առարկայացվող հասկացություններ, քաղաքականներ, իրաչին արտահայտություն, քաղաքականություն ունեցող առարկաներ, իրաչին արտահայտություն ունեցող վերացականներ (— վերացական առարկաներ), իրաչին արտահայտություն ունեցող վերացական առարկաներ, որոնք չլույս ըմբռնում են:

Ով աշխարհում այդ անորոշումը պիտի երևանայի, թե ինքն իմացավ, թե ինչ է կոնկրետն ու վերացականը, այն և մատերիալիստական տեսակետով, Տեսնենք ինչն է ասում Ա. Գ.—ը:

1. Մատերիալիստական տեսակետով սխալ է զենել «առարկայացվող հասկացություններ, գաղափարներ և գրեթե վերացական են առարկայացվող հասկացությունները»: Վերացական, գաղափարները հորեք չեն առարկայացվում: — առարկա դարձվում, այլ, ինչպես վերելի բացատրություններից տեսանք, մեծք ենք միայն այդ գաղափարներն իրեն առարկա մտածում: Է այդ այդ չի նշանակում, թե առարկայացվում են, այսինքն առարկայի են փոխարկվում, ինչպես երբ ասում ենք՝ ըստը գոլորշիացվում է, այդ նշանակում է ըստը գոլորշու է փոխարկվում:

2. Իրական (— անալ, реальный) փոխադասություն մեք նշանակում է դարգագծան գոյություն ունեցող, երբեմն, երբ շփոթություն չի լինում, այդ բառը գործ են ածում նաև օրյնկտիվ բառի փոխանակ, որ նշանակում է՝ գիտակցությունից անկախ գոյություն, ունեցող:

Բացատրենք նաև, թե ինչ է նշանակում «արտահայտություն» (— անражение), expression, դիցուք, մտքի, գաղափարի արտահայտությունը բառերով... Հիմա ի՞նչ կհասկանաք, կարդալով թե սաստանա, օգն և նրմաններն թիրական արտահայտություն լուսին, Ինչի՞ լուսին, Հենց այդ բառերը՝ սաստանա, օգն, թիրական (— գոյություն ունեցող) արտահայտություն են: Միթե լիպն, գոյություն լուսնն այդ բառերը:

Ա. Գ.—ը չի հասկանում, որ այստեղ քննվ իմաստ լուսին «արտահայտություն» բառը. նա չի հասկանում, որ երբ ասում են, թե վերացական գաղափարներն իրական են, այդ նշանակում է, որ դրանք գոյություն ունեն, իհարկե ոչ այլապես, բայց եթե առանձին, եղանակի մեք: Իսկ երբ ասում են, թե սաստանա, օգն և նմանները թիրական չեն, այդ նշանակում է, որ դրանք գոյություն չունեն, այլ լույս մտացածին են, լույս մտածված են: Իսկ մտածելը և առարկայացվող մարդիկ կարող են ամեն տեսակի դժոխք, ամեն տեսակի անտառային ոգիներ, չունալարակին նույնիսկ առարկածեք իր համար... մեղմ ասենք, կրոնական հասկացություններ, — բայց իմացության թերորայի նըպասական այն է հենց, որ ցույց տա նմանօրինակ առարկաների անիրա-

կանութիւնը, ֆանտաստիկութիւնը, ռեակցիոնութիւնը (ինչին, ո. 64. հ. 85),

Ահա թե ինչ, ոչ թե թիրական արտահայտութիւնն ունենալ կամ չունենալ, այլ թիրականն կամ անթիրական լինելը, այսինքն գոյութիւն ունենալ կամ գոյութիւն չունենալ, կարելի է առարկել և չլուրջ մտնել ասածի դեմ, բայց այս թողնենք, Կանգ առնենք ավելի կարևորի վրայ:

Ինչպե՞ս է քաջատրում նա գիտկրեա առարկան: Ահա թե ինչպե՞ս, սկսեցրեա են բոլոր իրային արտահայտութիւն, բովանդակութիւն ունեցող առարկաները (ծառ, աշակերտ, քաղաք, լուսին)։— Եվ վերջացաւ: Ավելացրե՞ք թե՛ ինչ վրան վերելի թիրային առարկաներն առերը:

Ինչպե՞ս տարբերենք թիրային արտահայտութիւնն ունեցող կոնկրետը ներքեւում դրված թիրական արտահայտութիւնն ունեցող վերացականից:

Ահա, ուսնե՛րի ասած, մի ԿՄԾՅՐ, մի շփոթ, Ահա նրա մատերիայիզմը: Շապիրոն գտնե անքան զգույշ է եղել, որ այդպիսի բաներ չի գրել, Եվ այսպիսի շփոթ մտնում է քերականը ամեն բանի մեջ: Ահա նախորդ 28՝ երեսին, սեղական, ածական, իմական, դերանուն, քա՛յ և մականք կոչվում են քանդակաւոր իմաստ ունեցող խոսքի մասերը... Իսկ կապը և շաղկապը կոչվում են ձևական իմաստ ունեցող խոսքի մասեր: Հայոց լեզուով քանդակաւոր նշանակում է կոնկրետ: Ուրեմն այդ մասն-բանիները, ըստ Ա. Ղ-ի, կոնկրետ: Նշանակութիւն ունին և ոչ նաև, և ավելի ևս, վերացական: Մտքը բոլոր է, էջը կենդանի է, ՄԻ՞թն ծառ, քոյս, էջ, կենդանի բառերը այս խոսքերի մեջ թանձրացական—կոնկրետ նշանակութիւն ունեն և ոչ թե ընդհանուր վերացական:

Ահա և մի ուրիշ շփոթ. եր. 29-ի Հիշված 1-ին կետից հետո 2-րդ կետի սկզբում գրում է. սեղական անուններն ըստ Բեռլանցիական ձևի և իմաստի լինում են հատուկ և հասարակ:—Այդ ի՞նչ քերականական, այն էլ ընդգծված ձև է, որով որոշվում են հատուկ և հասարակ անունները: Ծրե՛ի ա՛յն, որ հատուկ անունները գլխատառով են սկսում:

Բայց համեցի՞ք և մի ուրիշ բան գրված մյուս երեսին (30). «Նախադասական անունները քերականական ձև չունեն, ըմբռնվում և գործածվում են որպէս հասարակ անուն:» Ահա մի քերականական ձևն, որ աներևույթ է անխմանալի և որ որոշում է մեր այս քերականը, նա՛, որ իբր ֆորմալիստ չէ: Նա ուրիշ դեպքերում էլ ձևեր է որոնում:

Ուզո՞ւմ եք մի ուրիշ շփոթ էլ, նա հատուկ անունները մի կերպ երկու նոր տողերից սկսվող ասացվածներով քաջատրելուց հետո, երրորդ անգամ մի նոր տողից սկսած գրում է. «Հետուկ չեն այն առարկաների անունները, որոնք մի հաստ են, եզակի են, օրինակ՝ արև, լուսին:» Եվ այս քերականը գլխի չի ընկնում, որ այդ ֆորմով ոչնչացնում է հատուկ անունները. որովհետև այդ ֆորալի հիման վրա, Հրազդան, Արագած, Երևան և այլն հատուկ անուն չեն, քանի որ դրանց ցույց տրված առարկաները մի հաստ են:

Է՛լ եք ուզում այսպիսի կոլորզներ,—որքան ուզե՛ք: Բայց ես միտք չունիմ քննադատելու այդ գիրքը, որ քննադատութիւնից ստոր է: Ես առնում եմ դրանից այն միայն, ինչ որ շշտակում է իմ քաջատրած խնդիրները և հիմն ես հասարակ ու հատուկ անունների մասին գրեցի, որովհետև դրանք նույն էջի վրա են, որտեղ և գոյականի սահմանումն է բերված և կոնկրետի ու վերացականի մասին է խոսված:

Դառնանք մի կարևոր խնդրի:

12. Կոնկրետն է միայն ստատիստիկայի արտադրանքը—վերահսկող (Ֆ IV) տատանակալի շնչառացի հետևյալը Բանի որ մասնավորապես օբյեկտիվ գոյի պատկերն է, դա իր մեջ անզրպագործնում է օբյեկտիվ արտադրանքը, Դիալեկտիկական արաժայտակարարը գործ ունի կոնկրետ հասկացությունների հետ, որոնք իրենց մեջ պարունակում են և ընդհանուրը, և մասնավորը, և առանձինը, եզակիները, անհատականը, Հետադետեկտիկական լինում է միայն կոնկրետի միայն Երանգ եք գույն տատանակարի, Հետադետեկտիկական կամ պարզապես ծառ ընդհանրապես իրրև այնպիսիննր, Հաղար որոնեք, գույն չեք գտնիլ պարզ ընդհանրապես և պարզապես ծառ ընդհանրապես, Դրանք արատրակցիա են. գրանք ընդհանուր վերացական գաղափարներ են և գաղափարն ունին միայն առանձինի մեջ, Նույնպես և արատրակցիա է և մասնավոր գաղափարը՝ ծիրան, դեղձ, տանձ, և ծիրանի, դեղձենի, տանձենի իրրև տեսակներ, Հաղար որոնեք, գույն չեք գտնիլ ոչ ծիրան, ոչ դեղձ, ոչ տանձ, ոչ էլ ծիրանի, դեղձենի, տանձենի ընդհանրապես իրրև այնպիսին, Արատրակցիա են և ալեկի երկրորդական տեսակները, ենթատեսակները՝ լոճ դեղձ, շալախ ծիրան, ժալալա տանձ և լոճ դեղձենի և ալլև, Դուք չեք գտնիլ՝ մալալա տանձ կամ մալալա տանձենի ընդհանրապես իրրև այդպիսին, շալախ ծիրան կամ շալախ ծիրանի իրրև այդպիսին, լոճ դեղձ կամ լոճ դեղձենի իրրև այդպիսին Դրանք ենթակա լին մեք զգայարաններին, ենթակա լին, ուրեմն, և մեք փորձեն Դրանք լին ազդում մեք զգայարաններին վրա, առաջ լին թերում մեզնում զգայություններ. իսկ մատերիալիստական տեսությունը մեք զգայություններն են միայն միակ աղբյուրը մեք իմացություն:

Մեր ուսումնասիրության, հետադետեկտիկական արտադրանք է կոնկրետը, առանձինը, անհատականը, այն որ ազդում է մեք զգայարաններին վրա. այն մալալա տանձը, որ թունել ենք, ուտում ենք, ծաշական ենք, իմանում նրա համը, հոտը, փափկությունը. իսկ այդ առանձին, եզակի, անհատ տանձը իր անհատական հատկությունների հետ ունի և ընդհանուրն ու մասնավորը, պարզի ու տանձի և ենթ մալալա է, նաև մալալա տանձի հատկությունները. Այն մալալա տանձենիները, որոնք ապր փորում ենք, մաքրում ենք և ալլև, այդ ենք տեսնում, շոշափում, զգայում. դրանք են կոնկրետը, դրանք են հետադետեկտիկական արտադրանքը. Զգայորեն, նյութապես դրանք միայն օբյեկտիվ գոյություն ունեն. Մենք մշակում, զարգացնում ենք պատկանառով կամ ալլ կերպ փոփոխության ենք ենթարկում, կամ բնության մեջ զարգացել, փոփոխության են ենթարկվել ոչ բն ընդհանուր՝ վերացական գաղափարներ՝ ծառը, պարզապես ծառը, տանձենի, մալալա տանձենի, ընդհանրապես իրրև այդպիսին, ալլ տանձին, հաղար անհատ, եզակի տանձենիներ: Դրանք, այդ կոնկրետ արտադրանքն են, որ օբյեկտիվ գոյի, նյութի անընդհատ շարժման մեջ ծագում են, ապրում և մեռնում իրրև նյութի ձևեր իրենց սպեցիֆիկ օրենքներով:

13. Կոնկրետ լինում:—Օբյեկտիվ գոյի անընդհատ շարժման մեջ ծագող ձևերից մեկն է և լեզուն. Կա՞, օբյեկտիվ գոյություն ունի՞ լեզուն ընդհանրապես իրրև այնպիսին:—Ոչ, դա արատրակցիա է. Դա նշանակում է միայն՝ կոնկրետ լեզուների ընդհանուր, մի քանի ընդհանուր որոշումները, մի քանի ընդհանուր հատկանիշները, որ իրական են, գոյություն ունեն նրանց կոնկ-

րեւտ լեզուներին միջև, որ լեզվաբանները հզտում են գտնելու և ուսումնասիր-
րելու իբրև ընդհանուր քերականութիւն։ (Լեզվաբանութիւնը դեռ շատ նոր
գիտութիւն է և իր մեջ դեռ չի ամփոփում աշխարհի բոլոր լեզուները)։

Կա՞, օրյեկտիվ գոյութիւն ունի՞ Հայոց լեզուն, հուսաց լեզուն և մյուս-
ները, քերականապէս իբրև այդպիսիներ։ Այդ էլ արատաւեցիական են, միայն
ավելի բովանդակալից, որովհետև ընդհանուր վերացական զաղափարի հետ՝
պարունակում են նաև մասնավորը, այն, ինչ որ տեսնենաճատուկ է Հայոց
լեզվին, հուսաց լեզվին։ Բայց այդ մասնավորն էլ միայն մի վերացական
մտմեմ է, որ չով վերցրած լինք դռնիլ ոչ մի տեղ և իրական է, գոյութիւն
ունի ընդհանուրի հետ առանձին, հզականի մեջ միայն և ոչ ալլապես, և որ
լեզվաբաններն ուսումնասիրում են իբրև Հայոց լեզվի քերականութիւն, ուս-
աց լեզվի քերականութիւն և այլն։

Նույնպէս վերացական է դասակարգային լեզու ասածը։ Դա ևս կոնկրետ
է. չի ազդում բնավ մեր զգայարանների վրա։ Մենք չենք կարող փորձի,
դիտողութիւն, հետազոտութիւն նույն դարձնել այդ վերացականը, ինչպէս և
Հայոց լեզուն կամ լեզուն ընդհանրապէս իբրև այդպիսին։ Դա էլ գոյութիւն
ունի միայն հզականի, կոնկրետի մեջ։

Ո՞րն է, ուրեմն, կոնկրետ լեզուն։—Դա հզական, անհատական լեզուն է,
որ իր մեջ պարունակում է կամ որի մեջ գոյութիւն ունեն և՛ հզականն, ան-
հատականը, և՛ մասնավորը—դասակարգայինը, և՛ ավելի բարձր՝ Հայկա-
կանը, և՛ ավելի ևս բարձր՝ ընդհանուր լեզվականը։ Ո՞րն է այդ առանձին,
հզական կոնկրետ լեզուն։—Հենց այն լեզուն, որ ես այժմ խոսում եմ, որ և
ազդում է ձեր զգայարանի—լսելիքի վրա, որից և ունենում եք զգայութիւն։
Եվ եթե ես չեմ որոշողային խնամքի տակ պատասպարմած Հայ բուրժուական
ինտելիգենցիայի վերնախավի մի շարք ներկայացուցիչներինք ձեռնն եմ
ըստ քաղ. Ա. Ղարիբյանի (ՀՍԽՆ Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտ, Տեղե-
կադիր № 1, Նրան 1932 թ., Ար. Ղարիբյանի հոդված, եր. 154 և 155), ապա
իմ լեզուն հզականի հետ ունի և բուրժուական—դասակարգային, և ավելի
վեր՝ Հայկական և ընդհանուր լեզվական հատկութիւնները, է՞լ որն է կոնկ-
րետ լեզուն։—Այն լեզուն, որով մի ժամ առաջ խոսում էր Ա. Ղարիբյանը,
եվ եթե ես չՀայ պրոլետարիատին ներկայացուցիչներինք մեկն է, ապա նրա
այդ լեզվի մեջ, ինչպէս հավատացնում է ինքը Ղարիբյանն իր Քերականու-
թիւն մեջ (եր. 3) անդրադարձել է չՀայ պրոլետարիատի դասակարգային
լեզուն, որ և հիանալի պայծառութիւնով դրոշմվել է նրա քերականութիւն
մեջ... Խեղճ Հայ պրոլետարիատ...

Էլ ո՞րն է կոնկրետ լեզուն։—Այն լեզուն, որով այսօր առավոտյան ժամը
12-ին Կարի գործարանում բանվորուհի Աշխենը խոսում էր իր ընկերների
հետ, և որ զգայում, լսում էին նրանք։ Եվ որովհետև ես, Աշխենը, իսկական
պրոլետար է, և ոչ Ա. Ղարիբյանի պէս կարծեսցալ, ուստի նրա խոսած լեզուն
իր մեջ պարունակում էր իսկապէս դասակարգային լեզվի մասնավոր հատ-
կութիւնը, բայց միաժամանակ նա հայերեն էր խոսում, ուրեմն նրա լեզուն
ունի իր մեջ նաև ավելի բարձր մասնավորը—Հայկականը, բացի այդ՝ նաև
ընդհանուրը։ Դարձալ ո՞րն է կոնկրետ լեզուն։ Միջանկյան և Պահաժողի
գործարաններում այս բոլորն առ են ասում յուրաքանչյուրն իր գործի մա-
սին ստախանովական բանվոր Գրիգորը և Սահակը։ Նրանց այդ խոսվածք-
ներն էլ կոնկրետ լեզուներ են, նույնպէս անհատական-հզական, դասակար-

գայիկ, ապա նաև Հայկական Ժառանգոր Համագործակցության, ինչպես է
 բերվածուր լիզվական Համագործակցության:

Քայլ ի՞նչ եք ներում, զե՛յ, պարսկաօրհանի գառնորդային լեզուն՝
 Հինն՝, չէ՛ն է այդ նրեք թանգորհերի թերահին։... Քեզ ոչ, ես քի պարսկանի
 թանգորհերն ունեն իրենց պարսկագլուխին գիրտորթյալ պարսկալուսնայան
 ներն ու բուռնք, եւ յայտն եւ մշտանելի՛ իրենցը, ի՛նչոք ալնպիսիննրը, որ
 մյուս գործարանները թանգորհները չեն հասկանալու։

Հիմա, երբ սկսում ենք ուսումնասիրել, հետազոտել լեզուն, ինչի՞ վրա պիտի աենենք այդ հետազոտությունը։ Արդյոք ընդհանուր վերացականի՞նք՝ վրա։ Բայց դա կլինի ձևական տրամաբանություն միողը, որի կատեգորիաները, հասկացությունները վերացական են, և ոչ դիալեկտիկական, տրամադրանքային, որի հասկացությունները, մտածության ձևերը օբյեկտիվ իրականություն անզրապատկերումն են, ուստի ոչ թե վերացական են, այլ կոնկրետ են, բովանդակում են ոչ միայն ընդհանուր, այլև մասնավոր և եզակիներ։ Իսկ դա է Հենց այն լեզուն, որ, ինչպես ասացի, և այլ բովանդակում է, որ Երկրորդ է խոսում այժմ, այլև Մարկոսը, Մինասը, Վարդանը, Շուշանը...

Թե կարող եք, արեցե՛ք ակտիւշներդ, լա՛վ լսեցե՛ք այդ կենդանի—կտնկրեա
խոսվածքները, դիտեցե՛ք դրանց լեզվական հատկանիշները, որովհետեւ յիս
էլ ուրիշ կոնկրետ լեզու, քայք քմեմ անհատները խոսած այս անհատական,
եզական խոսվածքները, որ թղտւում են, և որ միայն դրով գրավովկայք լեռու
մետմ են և կարողանում ենք վերարտադրել, ով ահա ասքանում են Թու-
մանյանի լեզուն, Պոքոյանի լեզուն, Բաֆթու լեզուն և այլն։ Բայց գրավոր լեզուն
և խոսածը մեկ են։ Կա դրանց միջ խորք տարբերութիւն։

Այստեղ լէ՛, օտեկայն անդ տարբերութիւն չունի խոսակցութեան տեղը, ուստի անո՛ր թողնենք:

15. Լեզվի փոփոխությունը կոնկրետ լեզվի մեջ:—Հիմա, մի մարդ, որ չգիտե, թե ինչ է ընդհանուր» վերացական գաղափարը, մասնավորը և անանձինք, հզանկանք, չգիտե թե ինչ է վերացությունն ու կոնկրետը, նահապետվ, իմ այս ասածները չի հասկանալ: Նա չի հասկանալ և այն, որ լեզվական փոփոխությունները սկսվում են կամ ծագում են հենց ինքն լեզվից և ոչ վերացական գաղափարներից, այլև այն, որ փոփոխության սկսվելուց հետո «նախ» (ինչպես գրել եմ) ուրիշ բան է, քան ասել ոչնչվական ստեղծագործություն, լեզու ստեղծել, կամ սանձառն է միայն ուղղորդում այն ամենի, ինչ որ կատարվում է լեզվի հետ, մտքեր և շատ նմաններ, որ Ա. Ղարիբյանն անպատշաճանատու կերպով վերագրել է Արեղյանին: Ահհապր դիտակցաբար լեզու չի ստեղծում: Նա դիտակցաբար շատ քիչ փոփոխություն է մտքնում լեզվի մեջ, կարելի չէ մերժել այս (տե՛ս սժՀայոց» լեզվի» սոհհուրություն»», հր. 13, պր. 7): Բայց ամեն լեզվական փոփոխություն ծագում, սկսվում է անհատական կոնկրետ լեզուների մեջ հենց ռոսվորակի հեղանի խոսվածքի ծագումից (իսկ գրավոր լեզվի մեջ՝ գրելու ժամանակ) և ապա ընդհանրանում: Այլապես չի կարող լինել, քանի որ փոփոխությունները ռոսվածի իրականություն մեջ, կոնկրետ մեջ է ստեղծվում, իսկ լեզուներն են միայն անհատական աղանձին խոսվածքները (կամ գրվածքը): Ահա թե ինչ է ասել և ասում Մ. Արեղյանը, լայց չէր կարող ռոսվել, ապիրանությունից դեռ գուրս չեկած Ա. Ղարիբյանը:

Նա յի հասկանում է ահա պատճառը և նպատակը, իսկապես միմյանցից յի

տարբերում պատճառն ու նպատակը: «Հայոց» չ«հզվի» տ«եսութիւն» ք մեջ գրված է ՄԱՍտեղ (—լեզվի սովորական գործունեութիւն մեջ, ու է՝ կոնկրետ լեզվի մեջ) արդեն չկա ուրիշ դիտարկում: Անգղոսլոն լեզվի վրա, որն է ուրիշ ՆԱԿՏԱԿ, բացի վայրկյանի կտրիֆից, որ է ճանկարարութիւն—հետեւ ու մոխեր Հասկանալի դարձնել ուրիշին: Այսպես է գրված «Հայոց» չ«հզվի» տ«եսութիւն» ք մեջ, իսկ Ա. Ղ—նը մի «-իկա» և մի «-իզմ» բերելուց և իրենից մի բան ասելուց հետո, այդ առթիվ գրում ու հարցնում է «...Ֆակտը փոխվում է ավայրկյանի կարիքի ազդեցութեամբ և այլն: Բայց մի՞թէ դրանք պատճառներ են» (եր. 156):

Ա. Ղ«արիքյանը» չի հասկանում հետևյալը: Երբ 3—4 տարեկան երեխան իր մորը դիմելով ասում է. «Մայրիկ, հաց եմ ուզում»,—երեխայի այդ կոնկրետ խոսքի մեջ ուրիշ նպատակ չկա, բացի իր միտքը հասկացնել մորը:

Նա չի հասկանում, որ երբ ես այս բառերն խոսում եմ, դրա պատճառն իր անհնթիւ հոգովն է. իսկ ես որն է դիտարկութիւն չունիմ լեզվի վրա ազդելու, որն է ուրիշ նպատակ չունիմ, բացի այս վայրկյանի կարիքից, որ է իմ մտքերը քննականութեան մասին՝ հասկանալի դարձնել ունկնդիրներին: Բայց փոխվում է լեզուն իմ բերանում:—Անպայման: Եթե ոչ ուրիշ բան, բառերի և նախադասութիւնների հազարավոր նորանոր կապակցութիւններ են առաջ դալիս առանց իմ դիտակցութեան կամ, եթե կուզեք, արտագրվում են իմ խոսվածքի մեջ կապակցութիւններ, որոնք առաջ գտնւմ երբեք չեն հղել ոչ մի ուրիշ խոսվածքի մեջ:—Դա լեզվի փոփոխութիւն չէ,—կասեն գուցե, որովհետեւ այդ փոփոխութիւնը ըմբռնելի հնչում չէ:

Այդպէս մտածողներն համար փոփոխութիւնն այս է. «Մարդարարարի բաժանակի գիտաւոր դարձնել: օրինակելի խորհրդակցութիւն», այսինքն՝ լեզմի մեջ չեն եղել «գիտաւոր» և «խորհրդակցական» տեսնութիւն, իսկ այժմ կան: Պարզ ու հեշտ բռնելի. Ուրեմն լեզուն փոխվեց: Բայց Ա. Ղ«արիքյանը» չգիտեմ, որ այս բառերը գործ են ածված ուսուցիչից թարգմանութեան մեջ, և գործածողը եղել է սեռականացնող մի մարդ, մի անհատ թաղամասի, որ հայերեն համապատասխան բառ չի գտել և հեշտ պոռել է ըստածելով «գիտաւոր» բառը: Ա. Ղ«արիքյան»-ն այն էլ չգիտեմ, որ «խորհրդակցական» բառը թուրքական նոր կառմած է և անհատի դիտակցաբար կառմած է, այն էլ իմ ներկայութեամբ: Զեմ մերժում, որ այդ «խորհրդակցական» բառը կարող են շատ անհատներ միմյանցից անկախ կառմած լինել, «որովհետեւ համախա նույն բանը միաժամանակ ծնվում է զատ մարդկանց մեջ իրարուց անկախ» («Հայոց» չ«հոմի» տ«եսութիւն» ք, եր. 45):

Անհատների կոնկրետ խոսվածքի ժամանակ են ծագում, բայց առանց նորուր դիտակցութեան,—հաճախ միաժամանակ բառավորով անհատների խոսվածքի մեջ և ուսնառան տեղերում,—և ապա ընդհանրանում լեզվի մեջ և հնչումներով. և բառաներով. և բառերի նշանակութեան փոփոխութիւնները, և ամեն ինչ:

Որքան ամփի մեծ է անհատի ազդեցութիւնը, այնքան ամփի շատ է շուտ են ընդհանրանում նրա լեզվի մեջ ծագած փոփոխութիւնները: Փան է ու բանի՝ լեզվանան նոր ձևեր սկսված և աւարածված են լեզվի բնութանդ առաջադասած հառերի և գրվածքների միջոցով: Ռուսան ամփի էս շատ նույնը հաստատվում է այժմ ընդ. Ստալինի արտասանած ճառերի ու գրվածքների միջոցով, որոնք առաջ կերպով թարգմանվում են և ընդհանրանում: Գուցե հինգ «բաժնակի» զիջանառ ասութիւնը առաջին անգամ նա է առաստնել իմ

կանկրետ խտւումքի ժամանակ: Ի՞նչ է. կարծում եք. թէ լեկինն ու Ստալինը մտադրվել են դիմագործուել կերպով լեզվի մէջ փոփոխութեան մտքներ: Մեծ միամտութեան կրիներ ենթադրել այդ նորակա խտնիս կամ գրելիս միայն մեկ նպատակ են ունեցել— իրենց մտքերը որով համար մեծ արտաբայութիւն է Հենց այդ համար ենք գտնելու ժամանակ լեզվի մէջ համար նոր ասել է մտնում, կամ հինք ձևափոխում:

Իսկ ի՞նչ է լեզվի փոփոխութեան իսկական պատճառը.— Դա ուրիշ բան է, որայն հիմն լեզվի սովորական գործունեությունը, որով սովորում և գործածում ենք լեզունք (ե՛ւ<այոց> չ<եզվի> տ<եսություն>» և, հր. 18): Իսկ մենք խոսել սովորում ենք ուրիշներին խոսվածքը չեզով (կամ նախնի գրածները կարդալով), այսպէս վերարտադրելով մեր լատենքը, այլև արտագրում ենք, առանց փոխադարձութեան, առանց այդ մասին մտածելու, անգիտակցաբար ստեղծում ենք առայսպէս սովորութիւններ նմանությունը, քանի որ բառերի կապակցություններ և ամբողջ խոսքեր, որ առաջ երևին շինք լեզվի ուրիշներին, բայց կան լեզվի մէջ. հրեմէն էլ այնպիսի քանի որ ձևեր, որոնք լեզվի մէջ չկան, և նոր առաջ դալով ընդհանրանում են, ինչպէս ասացինք:

Լեզվի փոփոխութեան սկզբնական հիմնական պատճառն, որեմէն, խոսվածքի գործունեությունն ինքն է:

Իսկ դա ուրիշ բան ասել է, բայց եթէ դիտելով իրական մատերիալիզմի հիմնական դրույթը, որ ամենայն ինչ պտնվում է հաշիտեմական շարժման, փոփոխութեան մեջ: Այդ անընդհատ շարժման մեջ են նաև լեզվական ձևերը, նրանք էլ ծագում են, ապրում և մահանում են իրենց հատուկ օրենքներով մեր կոնկրետ խոսվածքի ժամանակ:

Որոնեցնք այդ օրենքները և եթէ գտնենք, փոփոխությունը մի քայլ առաջ կլինի:

Իսկ ասել թէ լեզվի շարժումը, փոփոխությունը կրում է դիտելովական կան բնութիւն, կա հակադրությունների պայթար, ամեն երևույթ վերածվում է իր հակադրությանը, փոփոխությունը լինում է ոչ միայն էվոլյուցիայով, այլև ռեւոլյուցիայով— թռիչքով, կամ համադրություն է կատարվում, և այլև, այդ հնշտ ճանապարհ է, այդ սովորական ընդհանուր ֆրազներ են, դրանով ոչինչ չի առաջանալ: Դա իմ քննադրության մեջ էլ: Այդ ասելու փառքը թողնում եմ քերական Ա. Ղարիբյանին և քաղ. Սևակին:

Բայց թէ իմ գրքի մեջ, «Է<այոց> չ<եզվի> տ<եսություն>» մեջ, նկարագրական մասի հետ մանրամասն բացատրված է և մեր լեզվի փոփոխությունը, լեզվի շարժումը, դարգացումը, լեզվական ձևերի ծագումն ու մահացումը,— այդ կտեսնի ամեն ուսումնասիրող, բացի հիշված քերականներից, որոնց համար իմ «Է<այոց> չ<եզվի> տ<եսություն>» և իբր թմետաֆիզիկական է, այսինքն լեզվական երևույթներն ընկնում են իրեն անշարժ, անփոփոխ ֆակտեր: Ես այս մասին կանց չեմ անել: Հետաքրքրվողները թող թնթեն իմ այդ գիրքը:

Պատասխանատու ընկերներին մեկը, կարդալով այդ գիրքը, այսպէս է արտահայտվել. «Դրա մեջ կա տարերային դիտելովական, Զգիտեմ, թէ նա ինչ է ցանկացել արտահայտել այդ տարերայինն քառով, բայց թէ դիտելովական կա այդ գրքի մեջ, այդ կրթութի յուրաքանչյուր մեկը, որ դիտելովական ընկալիք բան է հասկանում:

Մի բան չկա միայն իմ գրքի մեջ, ես բացատրելով այս կամ այն լեզվական փոփոխությունը, կարող էի ասել, թէ այստեղ լեզվական ձևն անց—

նում է իր հակադրությունը: Ուրիշ դեպքերում կարող էի ավելացնել, թե այս-տեղ քանակը որակի է փոխվում, կամ այստեղ հակադրության վերադարձում է յինում: Բայց իմ կարծիքով, իմ աշխատությունը դրանից ոչ միայն չէր օգտվի, այլ նույնիսկ կվնասվեր: Խնդիրը լեզվի դիալեկտիկական ուսումնա-սիրությունն է եղել, և ոչ թե դիալեկտիկայի օրինակները ցույց տալ լեզվի վրա:

Ես չէի մտադրվել լեզվի փոփոխության մասին այսքան խոսել, բայց, քանի որ խոսվածքի ընթացքը դրան բերեց, կանգ առնեմ մի քանի կետերի վրա էլ: Լեզվաքանությունը, որքան էս ծանոթ եմ մինչև 1912 թ., դեռ քա-ջատել է հնչյունների փոփոխության ինչպես կատարվելը քննադատորեն: Լեզվաքանությունն, օրինակ, քաջատրում է, թե ինչպես է լինում, որ ձայնեղ Բ հնչյունը վերածվելով իր հակադրությանը դառնում է անձայն Պ. կամ ինչպես է, դիցուք, մարդ (mard) բառի վերջի Դ (d) հնչյունը դառնում Թ, և այդ բառն այժմ արտասանում ենք մարթ,—բայց թե ինչո՞ւ է կատարվել առանձնապես այդ փոփոխությունը, այդ, որքան զիտեմ, դեռ վերջնապես չի քաջատրված: Այսպես և բառաձևերի և այլ փոփոխությունների նկատմամբ:

Ա. Ղ<արիքյան> ի համար միայն ամեն ինչ պարզ է, ամեն լեզվական ձևերի փոփոխության առանձին պատճառները հայտնի: Բավական է, որ նա դիտե անգիր արած ֆրազերի կուտակել: «Հասարակական ֆորմացիա», «դաս-սակարգի սոցիալ-տնտեսական պայքարի պրոցես», «մարդկային հասարա-կության տնտեսա-քաղաքական զարգացման ողջ ընթացք» և այլն, և այլն: Բավական է, որ նա սերտել է շատ աղպիսի բաներ և կարողանում է ինք-նազով խառնախոսությունը շարել իրար հետևից, և կարծում է, թե իր գալի-մատիայով արդեն գտել ու պարզաբանել է բոլոր լեզվական փոփոխություն-ների առանձին պատճառները, և՛ ձևաբանական, և՛ հնչյունական փոփոխու-թյուններին:

Ավելորդ չի լինի այստեղ բերել Էնգելսիդ հետևյալը. «Հազիվ թե որևէ մեկին այդպի, առանց ծագելի դառնալու, տնտեսությամբ քաջատրել գեր-մանական յուրաքանչյուր փոքր պետության գոյությունն անցյալում և ներ-կալում, կամ տնտեսությամբ քաջատրել ծալվածներ թարձր—գերմա-ներենի փոփոխությունների ծագումը, որով Գերմանիան (թարգմտի նկատ-մամբ) բաժանվում է երկու կեսի, որ և աշխարհագրորեն ավելի ևս ուժե-ղանում է Սուդաններից մինչև Տաունուս ձգվող լեռնաշղթայով...»

«Մարքսը և էս մասամբ մեղավոր ենք եղել այն բանում, որ երիտա-սարդները (մարքսիստները) երբեմն ավելի մեծ նշանակություն են տալիս տնտեսական կողմին, քան պետք է»¹: Եստ պարզ և որոշ: Բաղատեցեք տնտեսությամբ ու դասակարգով, թե ինչո՞ւ «զապառել» դարձել է «զաթա-րել», կամ հենց մեր օրով «մարդու» ձևը դառնում է «մարդի»:

Իմաստաբանության մեջ միայն, որ է բառերի նշանակության ուսումը, առանձնապես այլ տեսակի փոփոխությունների հետ նկատվում է թարգմտի նշանակության փոփոխությունների իրեն հետևանք մշակույթի փոփոխության («Հայոց» լ<եզվի> տ<եսություն>»), եր. 143, պար. 66): Կարգանք հետևյալը. «Բոլորովին մեծ դարերի ընթացքում ոչ միայն պատկերացումներն են փոխվում, այլև նախկին նրա կուլտուրական առաջադիմությունը՝ առաջ են գալիս նորանոր գաղափարներ, կյանքի նոր պայմաններ ու հարաբերու-

* К. Маркс и Ф. Энгельс, Письма. в ред. Адорятского, М., 1923, к. 303

Քյունենբեր, նորանոր իրեր, և այլն, որոնց քաւորի արտահայտութիւն համար կամ նոր քառեր են տեսնուելով, կամ գործածվում են հին բառերը և նախաբառեր և բառերի նշանակութիւնը փոխվում է նորմալիզով ժամանակի մշակութային պայմաններին, այնպես որ կարելի է տեսնել, թե՛ բառերի նշանակութիւն փոփոխութիւնը զուգորթացն է միշտ պոետիկացումների բովանդակում ու փոփոխութիւնը հետ, և այլն, կայողացներ և գրքի մէջ բերված օրինակները:

Ահա թե ինչից է ծագում սրամբանի գիշանորդը:

Կարդանք «Բառերի կտրուտ» հատվածից հետևյալը, եր. 101. Երանների կորուստը կապված է նաև նրանց արտահայտած գաղափարների կորուստի հետ, իսկ այս վերջինը սովորաբար հետեանք է լինում մշակութային մեծ հնդաշրջումների և ազդեցութիւնների Օրինակ՝ քրիստոնեության մուտքի հետ եթե մի կողմից՝ նոր բառեր են մտել հայերենի մէջ, ինչպես՝ եկեղեցի, քահանա և այլն. մյուս կողմից՝ հեթանոսական կրօնի հետ մոռացութիւն են տրված և շատ հին բառեր: Մեր ժողովուրդն այլևս չգիտէ՝ քուրմ, մեհյան, բագին, դիք, դիցազն և այլն, որոնք գրական լեզվի մէջ պահպանում են միայն զրաբարից: Այս կարգի սակավաթիվ հին բառերը՝ քայք, վիշապ, դե, եթե մնում են ժողովրդական լեզվի մէջ, որովհետև դրանց, այդ ոգիների հավատն էլ դեռ մնում է: Կան այնպիսի հին կրօնական բառեր էլ, որոնք ապրում են քրիստոնեության կերպարանքի տակ: ինչպես՝ դրախտ, դժոխք, և այլն: Նույնպես հին քաղաքական կարգերի փոփոխութիւնը հետ մոռացութիւն են տրված և նրանց արտահայտող բառերը, ինչպես են՝ նախարար, սեպուհ, պալատական և այլն, որոնք դարձյալ դրական ճանապարհով մտել են կամ մտնում են նոր գրական լեզվի մէջ: Այսպես և ուսանց տիրապետութիւն ժամանակ XIX դարում եթե մի կողմից՝ երևան են եկել նոր բառեր՝ հաշտարար դատավոր, նահանգապետ, փոխարքայ և այլն, մյուս կողմից՝ ժողովրդի մէջ մոռացված են բազմաթիվ բառեր, ավելի թուրքերեն կամ պարսկերեն: Խ. Արմաշանի սկիզբը Հայաստանի գրքի մէջ եղած շատ բառեր այժմ ոչ միայն ընդհանուր զործածական չեն, այլև երբեմն, մասնաւոր ուտար բառերը, անհասկանալի են նույնիսկ քնիկ երևանցիներին համար:

Նոր քառեր, ինչպես և նին բառերի նոր նշանակութիւնները ծագում ու զարգանում են ու մեղմում են մշակութային ընդհանուր զարգացման ֆոնի վրա, և այդ տեղի է ունենում նույնիսկ միևնույն դասակարգի ներքին տես իշխանութիւն շրջանում: Իսկ երբ իշխում է մի նոր դասակարգ, լինի բուրժուական, թե՛ պրոլետարական, թե՛ այլ, նա ստեղծում է իր առանձին նոր կուլտուրան, այսինքն սկիզբի նոր պայմաններն ու հարաբերութիւնները և այլն, դրանք անհրաժեշտում են լեզվական պատկերացումներին մեջ: Նոր դասակարգի իշխանութիւնն ուրեմն պատճառ է դառնում նոր կուլտուրայի ծագման ու զարգացման, այդ նոր կուլտուրան էլ իր կողմից պատճառ է դառնում լեզվի փոփոխութիւնը: Թե՛ ինչու և ինչպես բարձրանում է նոր դասակարգը, բերում է իր նոր մշակութիւնը, — այդ բացատրելը պատմաբանի գործն է: Լեզվաբանն իր համառոտ տեսութիւն մէջ այն է ասում, թե՛ նոր կուլտուրան անդադառնում է լեզվի բառերի մէջ և այդ անդադառնումը սկսվում է անհատների կրկնակրծ լեզվից, և ապա այնքան հնչողութիւն մը սկսվում է անհատների համապատասխանում է ընդհանուր կուլտուրային:

Մի խոսք ես, և ես կվերադառնամ այս հատվածը:

Ա. Ղարիբյան>ը ծագում է հնդեվրոպական լեզվաբանութիւն այն տեսութիւնը, թե՛ ինչպես հաղորդակցութիւն պատկերացման պատճառով

առաջացել են բարբառներ, և երբ նույն լեզվի տարբեր բարբառներով խոսող զանգվածներն դարձնում կտրվում են միմյանցից որևէ պատճառով, այդ ժամանակ բարբառները ուրույն ուղղություններով փոխվելով՝ դառնում են առանձին լեզուներ, Դա հնդեվրոպական լեզվաբանության տեսության մի կողմն է և պատմականորեն ապացուցված է: Հիշեցնեմ էնգելսից քիչ առաջ բերածը. «Ֆրեմանիայի բարբառների բաժանվելն երկուսի՝ աշխարհագրորդեն ավելի ևս ուժեղանում է Սուդաններից մինչև Տաունուս՝ ձգվող լեռնաշղթայով»: Ա. Ղ. <արիթյան>ը կարող է այդ ժաղերի, թող ծաղրի որքան կուզե՝

Բայց նա լսիտի անասն առնելը հնդեվրոպական լեզվաբանությունից այն մյուս կողմը, որ ժեթն հաղորդակցության պակասությունը, ինչպես տեսանք, պատճառ է դառնում բարբառների առաջ գալուն և իրարուց ավելի ու ավելի տարբերվելուն, նույն հաղորդակցության տարածությունն ու մտավոր զորեղ հաղորդակցությունը դպրոցի ու դրական լեզվի միջոցով՝ առաջ է բերում բարբառների միացում: Այսպես՝ հին հունական ազգի միմյանցից բաժանված մասերը, որոնք ունեին իրենց առանձին բարբառները, ժամանակի ընթացքում միանում են ի մի ազգություն ընդհանուր մշակույթով. նրանց միացման հետ միանում են և նրանց բարբառները. Ատտիկյան բարբառը, որ հույների ամենից կուլտուրական մասը՝ Աթենացի լեզուն էր, իշխում է ամեն տեղ, և Յորդ դարում Ք.ա. առաջ է գալիս մի ընդհանուր հունական բարբառ, որ կոչվում է «կոյնե» (ե՛լ<այոց> լ<եզվի> տ<եսություն>», եր. 60):

Ահա թե ինչ:

Ի՞նչ է վերջնական հզորակացությունը: Եթե զորեղ մտավոր հաղորդակցությունը և ընդհանուր կուլտուրայով բարբառները մեղմում են և մի ընդհանուր լեզու է առաջ գալիս, — արդո՞ք կարող չէ՞ նույն պատճառով մի ընդհանուր մարդկային լեզու առաջ գալ: Թե ինչ լեզու կլինի դա, մենք այժմ այդ լեռք կարող իմանալ, ինչպես ասել է ընկ. Ստալինը:

2

ԳՈՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

16. «Կառունգ-բանի» տեմինը: — Փաղ. Սևակը գրում է. «Չորսալիստները բոլոր խոսքի մասերը (մասունք-բանի) խառնել են իրար և ստեղծել մի քառս, որից հավանաբար իրենք էլ դժվարությամբ են բան հասկանում: Այսպես մինչդեռ դարերի ընթացքում ածականը, թվականը և դերանունը աստիճանաբար սահմանագծվել են անունից (զույականից), մեր ֆորմալիստները այս խոսքի մասերը նորից խառնել են իրար և վերացրել թվականը, որպես խոսքի մաս, դերանունը, որպես խոսքի մաս, ածականը, որպես խոսքի մաս: Այսպես բոլորովն է քաղ. Սևակը և վերջն ավելացնում է. — «Կարճ ասած՝ անունների այնպիսի խառնաշփոթություն, որպիսին լեռ գտնի նույնիսկ մեր թվականությունից երկու դար առաջ ստեղծված՝ Դիոնիս Բրակացու քրականության մեջ»:

Ահա գիտնական: Նա մինչև անգամ ավելի քան 2000 տարի առաջ ապրած Դիոնիս Բրակացու քրականությունն է ուսումնասիրել, բայց նա չգիտե, որ մեր դաշնակից ֆրանսիացիները, օրինակ, հենց այնպես են դնում սմասն-բանիները, ինչպես ժեթ ֆորմալիստները: Ինչ՞ըն ֆրանսիացիներ:

Թի՛շտ է արդյոք այդ ամենը, ինչ նա գրում է: Մենք այդ կտեսնենք:

Նախ ախ մասին, թե պե՞տք է արդյոք պահել ոմասունք-բանիչ աստի տերմինը, երա համար, որ հարկերը ընթացածն զտրվելն է, և նա-պիրտն, երա այդ գոված ճերականն էլ պահում է այդ

Ի՞նչ է նշանակում «ոմա աստի», որն ոմասպատությունն է ասե-լին» բուն նշանակը թողնենք, որովհետեւ մեր կրթությանը հայերենը բացարձակապես գովար թե հավատան:

Պարի աստիների բացարձակապես բառերն էրդ ազատաբան մեք բուն բանի գոված գոված կան մի բանի նշանակությունները:

1. речъ=слово, изречение, խոսք, խոսվածք, ասացված:

2. речъ=предложение, նախադասություն:

3. речъ=разговор, беседа, զրույց, խոսակցություն:

4. речъ=слово, обращение, устное обращение к слушателям, այսինքն ճառ, ջարդոդ:

Նման նշանակություններով բացատրված է ֆրանս-սկազեմական բա-սարանում discours բառը, բացի այդ՝ նաև «շարահորություն», լինի արժեք թե ուսանավոր: Իսկ ֆրանսերենի մի ճերականության մեջ՝ les parties du discours, c'est-à-dire les parties de la langue française «Մասունք-բանի, այսինքն ֆրանսերեն լեզվի մասերը»: Եթե շարունակենք, որիչ նշանակու-թյուններ էլ կդառնանք այդ речъ բառի համար, Հիմա, այդ բառը որ նշա-նակությամբ են հասկանում աստի բանիչ աստի տերմինի մեջ, Առանց նապիրտի ոռաներենի ճերականությունը՝ 1994 թ. ապագությունը: Այս ճերականը իր զրքի 1 մասի մեջ, եր 21. Общие сведения о частях речи Երեղհանուր զիտելիքներ մասն-բանիչների մասինս վերնագրի տակ տեղեկացան ենում է նախադասությունը՝ բաժանվում են խմբերի կամ կարգերիս:

Նույն ճերականը I, 11. գրում է. «Բաները, որոնցից կազմվում է նախա-դասությունը, կազմվում են իրար հետ բառ իմաստի: Արագեղի կարելի լինի հեշտ հասկանալ այդ կապը, բառերը речъ-ի մեջ կազմվում են (слова в ре-чи связываются) իրենց վերջավորություններով, նույնպես և նախդիրնե-րովս:—Շատ պարզ կերպով այստեղ նապիրտն предложение և речъ բա-սերը գործածել է իրը համանիչ, սկզբում գրել է предложение, որովհետեւ խոսքը նախադասության մասին է, հետո բառի կրկնություն լանելու համար նույն իմաստով երկրորդ անգամ գործածել է речъ բառը: Նույնը նույնպես և I, 21. существительные, связываясь в речи с другими словами, изменяют свои окончания, գոյականները՝ речъ-ի մեջ կազմվելով որիչ բառերի հետ՝ փոխում են իրենց վերջավորությունները:

Եվ վերջապես I, 5. ճերականության սահմանումի մեջ շարահյուսության նկատմամբ առանձին գնում է օ правила связывания слов в речь, իսկ երեք տող ներքեում речъ բառի փոխանակ նույնի համար предложение է գրում: Синтаксис-учение օ связи слов в предложении—Արեմն ինչ դուրս եկավ: Դաշ. Սեակի գոված նապիրտի ճերականության մեջ աստի բա-նիչ աստի տերմինը հավասար է «նախադասություն մասերս տեր-մինին, Բայց ճի՞շտ է այդ:

Երեւ, մեր երիտասարդ ճերականները լզիտեն, որ դարերի ընթացքումս սրբագործված այդ տերմինը՝ «մասն-բանիչ», կամ, ինչպես գրաբարից աշ-խարհարարի վերածելով ասում են՝ «խոսքի մասերս տերմինը վաղուց

քննադատմամբ և ֆրանսերենն ու գերմաներենն քերականություններից դուրս է ձգված իրրն մոլորեցնող մի տերմին: Այլինն, հարկավ, հասաներ էլ, որ պահելիս կլինեն. որովհետև նրանց, այդ բուրժուաների մեջ էլ շատերի համար, պարբերի ընթացքումս կատարված սրբագործումը սիրելի է. ինչպես Սնակի համար: Գերմանացիները այդ տերմինի փոխանակ գործածում են Wortarten բառերի տեսակներս: Ֆրանսիացիները՝ espèces de mots բառերի տեսակներս:

Ինչո՞ւ:

Բոլոր գիտությունների մեջ partition և division — մասնատում և բաժանում, որ է՝ «մասերի բաժանումս և խոսակների բաժանումս, ինչպես և մաս և տեսակ բառերը, գործածվում են անշփոթ կերպով իրենց հատուկ և որոշ իմաստով: Ութ-ինը տարեկան երեխաներն անգամ այդ բառերի իմաստը տարբերում են միմյանցից: Նրանք հեշտությամբ յոթուոմ են, օրինակ, ծառերի մասերը—արմատ, թուև, ռստեր և այլն, և ծառերի տեսակները—ծիրանի, քարդի, ուռի և այլն: Բայց ես իմ բազմամյա փորձից (ես 46 տարի դասատու եմ հզել 2-րդ պատրաստականից մինչև բարձրագույն դպրոցները) գիտեմ, որ միջնակարգ դպրոցն ավարտողներն անգամ հաճախ ընեն հասկանում չմաստնեք-բանիս կամ խոսքի մասերս տերմինի նշանակությամբ: Ինչո՞ւ այդպես—Որովհետև «մասս պիտի ասեն և խոսակնս պիտի հասկանան: Այն էլ ինչի մասերս—«Թանի մասերս, խոսքի մասերս պիտի ասեն և բառերի տեսակներս պիտի հասկանան:

Ես իմ քերականությունների մեջ ընմ հիշատակել և ընմ առել «մասնեք-բանիս և չմաստնեք-բանիս տերմինը, այլ գործածել եմ բառերի տեսակներս, իհարկե, ուսանց այսպիսի բացատրությամբ, բայց ի՞նչ կանես, որ օտարականը և ավանդականը սիրելի է: Եվ որովհետև «մասունք-բանիս դրաբար է, սովորական են դարձրել դրա թարգմանությամբ՝ «խոսքի մասերս, ինչո՞ւ,—որովհետև Շապիրոն էլ գծո չի փոխել, ունի часть речи.

Բայց մի կուրյոզ: Արդյոք քաղ. Ա. Ղարիբյանը որոշ հաշիվ տվե՞լ է իրեն, թե ինչ է նշանակում չմաստնեք-բանիս, խոսքի մասերս: Զեմ կարծում: Ահա թե նա ինչ է գրում իր քերականության մեջ եր. 28. «Բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստների կարելի է բաժանել առանձին խմբերի, որոնք կոչվում են «խոսքի մասերս: Մի քիչ հետո նա գրում է նոր առդից. «Բառերը բաժանվում են պատկան տեսակների, ուստի բառերն ըստ իրենց իմաստի բաժանվում են խմբերի: Ուշադիր պիտի լինել այս ֆրազին և նշանավոր «ուստի» շաղկապին: Մի առդ հետո դարձյալ նա գրում է նոր առդից. «Բառերը և նրանց այդ խմբերը կոչվում են խոսքի մասերս:

Ուրեմն ոչ միայն ըստ իմաստի բաժանված բառախմբերը կամ բառերի տեսակները, այլև բառերն են կոչվում խոսքի մասերս: Սա մի խառնաշփոթ է, որի ծագումը դժվար չէ բացատրել, բայց այդ կթողնեմ:

Ի՞նչ է նշանակությունը:

Ժամանակ է, որ խորհրդային իշխանության օրով զեն ձգվի այդ հնավանդ տերմինը, partition և division լշիկովին իրար հետ և գործածվի, ինչպես բուր գիտությունների մեջ, տեսակ բառը, և ասվի բառերի տեսակներ, ինչպես որ վաղուց գործածում են ֆրանսիական և գերմանական քերականությունների մեջ:

Դ՞. Բառերի ֆորմալիստական բաժանումը տեսակների:—Ո՞րն է այդպիսի բաժանումը—Այն, որ հիմնվում է բառերի ձևերի վրա: Բայց չկա ոչ մի ձև

տաւնց բաժանեցաւ։ Բայց և՛ ներքին բաժանումը ձեռքի վրա կտարժանէ լինի, քանի որ տարբեր ձեռքի հետ կապման է հաճախ և ատրոսք բաժանեցաւ։ Եւստի ուր բաժանումը մասամբ նաեւ ըստ բաժանեցաւ։ Բայն է և մասամբ դրա համեմատ էլ դրել են «մասն բանիներէ» կոչումները։

Ահա այդ բաժանումը։
Բաժանել բաժանեցաւ նկատմամբ ամենից աստի բաժանում են երկու տեսակի՝ Ա. Փոփոխական և Բ. Անփոփոխ բաժանել։

Ա. Փոփոխական բաժանել՝ նախով իրենց փոփոխության ձեռքին՝ բաժանում են՝ I Կոչումով բաժանել, որ կոչում են տեսնել, և II Խառնածոք բաժանել, որ կոչում են քալ։

Ահա ձեզ մարդը ձեռքին, փոփոխական բաժանել ձեռքին բաժանումը, որ եղել է «դարերի ընթացքում» հին ժամանակներից ի վեր, I Անուն և II Բայ—մի բաժանում, որ քննել մատերիակիստական շէ, «Անուն» բառի տակ պիտի հասկանանք և առարկա, և հատկություն, և թիվ նշանակող և դրանց տեղ դրվող բառեր։

Անուններն այնուհետեւ մասամբ ըստ իրենց հոլովման ձեռքի, մասամբ և ըստ իրենց նշանակության, ստորաբաժանվել են և ըստ այնմ շատ հարմար կոչվել են ենթաբաժաններ։

1. Գոյական անուն,

2. Ածական անուն,

3. Թվական անուն,

4. Դերանուն։

Ավելացնենք դրանց վրա և

Բայը, տեսակը խոնարհվող բառերի, և կունենանք՝

5. Բայ։

Ավելացնենք վրան նաև՝

Բ. Անփոփոխ բառերը, որոնք բաժանվում են՝

6. Մակրայ,

7. Նախդիր,

8. Շաղկապ,

9. Միջարկություն։

Ինչպես կարելի է նկատել, «ածական, դերանուն, մակրայ, նախդիր, միջարկություն» կոչումներն էլ ձեռքինն են դրված։

Ահա ֆորմալիստական հնարանի բաժանումն ինքն բառատեսակների և նրանց դասավորությունը, որ նույն կարգով կգտնենք ավանդաբար ոչ թե իմ քերականությունների մեջ, այլ ուրիշների և հայ, և այլ լեզուների քերականությունների մեջ, և Շաղկապի, և Վարիքայնի քերականության մեջ, ևս դրանց քերականության կդառնամ։ Նախ հետևյալը։

18. Բաժանման տրամաբանական ճիշտագիտություն։—Որո՞նք են տեսականների բաժանման (division) հիմունքները տրամաբանության մեջ։

1. Բաժանումը պիտի կատարվի մե՛կ սկզբունքով, մե՛կ սկզբունքի հիման վրա։

2. Բաժանումով առաջացած տեսակները պետք է իրարուց չուկ լինին ըստ բաժանման սկզբունքի. տեսակներից ոչ մեկը չպիտի մտնի մյուսի մեջ։ Օրինակ՝ երբ ծառերը պտղի նկատմամբ բաժանվում են տեսակների, կարելի չէ բաժանում անել, ասելով՝ «Մուռերը պտղի նկատմամբ լինում են՝ պտղա-

տու, ծիրանի և անպտուղ, քանի որ ձերբանիւն ըստ բաժանման սկզբունքին ջուկ չէ, այլ մտնում է պտղատու ծառերի մեջ: Դա պտղատու ծառերի մի ենթատեսակ է: Ուրիշ խոսքով, ուրեմն, ենթատեսակները լպիտի շփոթել տեսակների հետ, կամ միևնույն տեսակի մեջ պիտի դրվեն ամենը, որ նույն տեսակին են պատկանում, այսինքն պետք է պտղատու ծառերի մեջ դրվեն բոլոր պտղատու ծառերը, նույնպես և անպտուղների մեջ՝ բոլոր անպտուղները:

3. Տեսակները թվելուց հետո պետք է անցնել ենթատեսակների բաժանման կամ ստորաբաժանման: Որինակ՝ ծառերը պտղի նկատմամբ 1) պտղատու և 2) անպտուղ ծառերի բաժանելուց հետո, կարելի է անպտուղ ծառերը տերևների նկատմամբ ստորաբաժանել՝ 1. սաղարթավոր անպտուղ ծառեր և 2. փշատերև անպտուղ ծառեր: Կարելի է զլխավոր բաժանման համար նա հիմք ընդունել տերևը, այն ժամանակ ծառերը կբաժանվեն՝ 1. սաղարթավոր, 2. փշատերև: Ապա պտղի նկատմամբ դիցուք, սաղարթավոր ծառերը կստորաբաժանվեն ենթատեսակների՝ 1. սաղարթավոր պտղատու, 2. սաղարթավոր անպտուղ:

19. Բոլոր առարկա նշանակող բառերը գոյական են:—Մեր դպրոցական քերականները, բառերը տեսակների բաժանելիս, հենց այս տրամաբանական բաժանման դեմ են մեղադրում, որովհետև նրանք կամ տրամաբանական բաժանում ասածը չգիտեն, կամ, զգարներից ի վերջ ինչ որ իբր մանկավարժական դյուրություն նկատի ունեն, կամ պարզապես միայն նրա համար, որ ավանդական է և ավանդականը լավ է, ճիշտ է, ինչպես քաղ. Անակի համար: Թողնենք Ա. Ղարիբյանի քերականությունը և առնենք նրանց վարպետ Շապիրոյի քերականությունը: Շապիրոն գրում է (1934, 1, 21).

«Բառերը, որոնցից կազմվում են նախադասությունները, ըստ իրենց նշանակության բաժանվում են խմբերի կամ կարգերի (на группы или ряды)».

«Հիմնական խմբերը, որոնց բաժանվում են բառերն ըստ իրենց նշանակության և ըստ իրենց դերի նախադասության մեջ, կոչվում են մասունք-բանի»: Ապա նա միջարկությունը դուրս թողնելով գրում է.

«Բնույթը լեզվի մեջ կա ութ մասունք-բանի. 1) գոյական, 2) ածական, 3) թվական, 4) դերանուն, 5) բայ, 6) մակրայ, 7) նախդիր, 8) շաղկապ: Ճիշտ նույն կարգով, ինչ որ վերևում, նույնը և Ա. Ղարիբյանի քերականությունը, վերջում ավելացրած ձայնարկություն»:

Այս ութ մասունք-բանին այսպես թվելուց հետո՝ նա դրանք վերածում է երկուսի: «Առաջին վեցը.— ասում է նա,— գործածվում են իրքև նախադասության անդամների նախդիրն ու շաղկապը նախադասության անդամ չեն լինում», այլ գործածվում են կապակցության համար:

Եստ պարզ է, որ Շապիրոն բառերի քառանյութը զլխավոր է կատարել: «Հիմնական խմբերը» ոչ թե նրա դրած ութ մասունք-բանիներն են, այլ 1) Մի խումբ այն բառերը, որոնք նախադասության անդամներն են դառնում, և 2) Մի խումբ էլ այն բառերը, որոնք իրքև նախադասության անդամ չեն գործածվում: Ապա գալիս են դրանց ստորաբաժանումից առաջացած ենթատեսակները, Այսպես՝

I Իրքև նախադասության անդամներ գործածվող բառեր, որոնք ստորաբաժանվում են ըստ Շապիրոյի՝ 1) գոյական, 2) ածական, 3) թվական, 4) դերանուն, 5) բայ, 6) մակրայ:

II Իբրև նախադասութիւն անգամներ շարժանքով կապուածութիւն բռնել, որոնք ստորաբաժանվում են՝ 1) նախդիր, 2) աղական:

Քաղնեք նրկորդ իրամբը, ասենք աղաչելը, միմա հարց, Իբրև «նախադասութիւն անգամներ» զարմանքով բառերն ինչ սկզբունքով է նախադասութիւն վերջի: Իրն է ալ զ բաժանման սկզբունքը. որով քննարկելով մասնաւորութիւն կամ սեռը անապկերի է վերանգնել:—Յետք է ենթադրենք քի վերնում հիշվածը՝ «որոն իրենց նշանակութիւնն և ըստ իրենց գծրի նախադասութիւն մեծաւ Ասենք նախ նրկորդը:

Շապիրոն գրում է.

Երոյակներ լինում է նախադասութիւն մեք կամ ենթակա, կամ ստորոգյալ, կամ նրկորդական անդամա (հր. 21):

Մտնական քվականները նախադասութիւն մեք լինում են ենթակա, ստորոգյալ և նրկորդական անդամա (հր. 41):

Երեւանները... նախադասութիւն մեք լինում են ենթակա, ստորոգյալ և նրկորդական անդամա (հր. 48):

Ուրեմն, գոյական, քանակական թվական և դերանուն՝ իրենց ֆունկցիայով—գերով նախադասութիւն մեք՝ ընն զանազանվում իրարուց: Կնշանակի՝ այդ բաժանումն ըստ դերի հիշտ չի կատարված, կամ խոսքի մեք կատարած դերը չի առնված այդ բաժանման համար իբրև սկզբունք:

Ասենք «նշանակութիւնը միայն դերանունների համար:

Շապիրոն գրում է.

Այն բառը, որ նախադասութիւն մեք նշանակում է մտքի առարկան... կոչվում է ենթակա (I, 12):—Անշուշտ Շապիրոյից պետք չէ ցիտատ բերենք՝ ցույց տալու համար, որ ենթակա կարող են լինել միայն առարկա նշանակող բառերը: Արդ, քանի որ դերանունները նախադասութիւն մեք լինում են ենթակա, հետևաբար դերանուններն առարկա են նշանակում: Ի՞նչ արդեն տեսնել ենք, որ Շապիրոն գոյականն ալապես է սահմանում, Գոյականն այն մասն-քանին է, որ նշանակում է առարկա (I, 21). Իսկ Ա. Ղարիբյանը (հր. 29). Գոյական անուն են կոչվում բոլոր առարկա նշանակող բառերը:

Հիմա, սահմանումի պայմաններին մեկն է, որ սահմանումը (definition) պետք է լինի փոխադարձ (réciproque), այսինքն սահմանումն այնպես պիտի լինի, որ հնարավոր լինի, առանց իմաստը փոխելու, ստորոգյալը ենթակայի տեղ դնել: Վերջի սահմանումներն, որոնք, կարելի է շուտ առաջ և առաջ, Բնարկա նշանակող մասն-քանին է գոյականն (= այն մասն-քանին, որ նշանակում է առարկա, է գոյական), Բոլոր առարկա նշանակող բառերը կոչվում են գոյական: Եվ որովհետեւ դերանունները (առարկանում նաև քանակական թվականները), ենթակա լինելով, առարկա են նշանակում, հետևաբար դերանունները (առարկանում նաև քանակական թվականները) նրա ենթակա են, գոյական են ըստ իրենց նշանակութիւնն: Կարո՞ղ են այս հերքել քաղ. Սեպկն ու Ղարիբյանը: Բայց հերքել համարտութիւն:

Ինչ դերանունները՝ ես, դու, ինքը, սա, դա, նա, այս, այդ, այն, միմյանց, իրար, որ (հարաբերական) ըստ իրենց նշանակութիւնն գոյական են և առարկայի ընթացքում կոչվում են գոյական դերանուն: այդ ոչ քաղ. Սեպկը կարող է հերքել և ոչ քաղ. Ղարիբյանը: Եվ եթե նրանց հարցնենք, թե, օրի-

նակ, ես, դու բառերն ինչպիսի դժբախտն են, նրանք Շապիրոյի գրածին (հր. 46) հետեւելով՝ թերեւ կասեն, թէ դրանք զբոս նշանակութիւն (по значению), այո, բայց նշանակութիւնն անձնական դժբախտն են, նվ ինչո՞ւ այդպէս են կոչուում.— Որովհետեւ ցուլը եւ տալիս անձեւը.— Իսկ ի՞նչ են այդ անձեւերը, լինի՞ր թէ նրանք առարկայի հատկանիշ են.— Օ՛, ոչ նրանք ինչ ու մեզ նման մարդիկ են, ջե՞հ հալաւորով, համեցե՛ք մի օրինակ.

Մեր Տիգրանն ու Վահանը փողոցում կանգնած՝ խոսում են իրար հետ և մենք անկամա լսում ենք նրանց։

— ဖြေဆိုသော်၊ နုပေ၊ နီပေ၊ နီပေ၊ နီပေ၊ နီပေ၊

— Ես գնում եմ դպրոց: Իսկ դո՞ւ ուր ես գնում:

— Ես էլ եմ դպրոց գնում:

— Դե արի միմյանց հետ գնանք :

Այս զրույթի մեջ առաջին դու, ես րառերը Վահանն ինքն է որ կա. Իսկ երկրորդ դու, ես՝ Տիգրանն է որ կա: Իսկ միմյանց՝ այդ երկուսը միասին, ընկերաբար:

Բայց կասեն՝ դրանց, այդ գերանունները նշանակություներ հաստատուն չէ։—Այո, հենց դրա՝ համար դրանց գերանուն են, Բայց խոսքի մեջ դրանց նշանակություներ միշտ որոշ է։ Այդ բաներն ըստ նշանակության միշտ էլ առարկա են ըստյոք տարիս։

Գանջ Հիմա տեսակների բաժանումին ըստ Շապիրյոյի, Քանի որ առարկա նշանակող բառերը զոյական են իրեն «մասն-բանի» կամ բառերի տեսակ, և քանի որ այդ դերանունները նույնպես զոյական են իրենց նշանակությամբ, Հետևաբար կարելի չէ միենույն բաժանման մեջ ըստ նշանակության իրար կողքեն կողք իրեն նույնի տեսակները դնել զոյական և դեբաբուն, ինչպես վարվում է Շապիրոն ի մեծ Հավանություն քաղ, Սեական և Ա. Ղարիբյանի: Ինչպես կարելի չէ ասել՝ պտղի նկատմամբ ծառերը լինում են՝ պտղատու, անպտուղ և ծիրանի, նույնպես թույլատրելի չէ ասել՝ ժրտներն ըստ նշանակության լինում են՝ զոյական, ածական, դերանուն: Դերանունը մի ենթատեսակ է, որ մտնում է զոյական տեսակի մեջ:

Այսպես հարեմն, առարկան նշանակող բառերը թվորը, ըստ աստղի դասորդակցան, կազմված են մի ընդհանուր տեսակ, դրանք թուրքը դրական են,

Բայց դա միայն տրամաբանության պահանջը չէ, Դա նաև մատերիալիստական փիլիսոփայության պահանջն է։ Մինչդեռ ֆորմալիստական տեսակետով, բառերի փոփոխությունն իրրև բաժանման սկզբունք ընդունելով, բառերն ըստ հոլովման և խոհարարման բաժանել են երկու հիմնական գլխավոր տեսակների—անուն և բայ,—այնուհետև անուններն էլ տարբեր ձևով հոլովվելու համար բաժանում են զոյական անվան և զերանվան, այլև անձնական, —մատերիալիստական տեսակետով, ինչպես արգեն տեսել ենք, բառերն ըստ իրենց նշանակության բաժանվում են ամենից առաջ երկու մեծ խմբերի—զոյական և անձական, համապատասխան ինքնակա նյութի և իր հատկանիշների, կամ ինքնակա գոյության ունեցող կամ իրրև այնպիսին մտածված առարկաների և իրենց հատկանիշների։ Ամենայն բառ, որ առարկա է նշանակում,—լինի ինքնակա, կոնկրետ առարկա, թե վերացական գաղափար, դա գոյական է։ Ամենայն բառ, որ առարկայի հատկանիշ է նշանակում, դա անձական է։

Անտիկանների մասին եւ հետո կխոսեմ, չիմա աշտեղ կարեւոր եմ հա-
մարում խոսել հետոս: Երբեք մասին, որի ինչ տեսակ բառ լինելը չեն
հասկանում մեր երկրաստոր գաւախտս քերականները:

ՅԹ. Անտոն ղերբայն իր Աշտեղայութեամբ գոյական է:—Նախ տեսնելք,
թէ ինչեր է առում Ա. Ղարիբյանը: Երբեք ինչեր կամ դերբայական ձևեր կոչ-
վում են բայի անփոփոխ ձևերը... Անտոն ղերբայն նախադասութեան մեջ
գործ է ածվում և՛ որպէս ենթակա, և՛ որպէս ստորոգայտ, և՛ որպէս լրացում.
օրինակ՝ կարգալը դարգացնում է մաքուր գաւախտայինը (կարգալը—ենթա-
կա), եւ ուղում եմ շատ կարգալ (կարգալ—լրացում): Այս կարգալ չի (կար-
գալ չի—ստորոգայտ): Այդ դեպքերում անորոշ դերբայը գործ է ածվում գոյ-
ականաբար: Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս հարկվում է և ն.
թորիվում: Ա. հարկման՝ միջա իրի տեսմովս (հո. 81): —Իսկ ի՞նչ է գրում
Ա. Ղարիբյանի քերականութեան պաշտպան Սևակը, Ըստ Արեղյանի բաժա-
նումի զգնալ, ասել, գրել համարվում են գոյականի տեսակ և ոչ բայ, որով-
հետեւ ֆորմալականները (լավ լսեցե՛ք՝ ֆորմալականները) բայի իրեն խոսքի
մաս (ЧЛЕНЪ РЪЧН) նույնացնում են ստորոգայտի հետ (ПОДЛЕЖАЩЕ), իսկ
զնալ, գրել, ասել, ստորոգայտի ձևեր չեն (սխալտ, ֆրոնտա, 1824, № 33):—
Նախ՝ ես, Թ. և. եմ, Արեղյանս, եւ քայքայ ոչ ստորոգայտի հետ եմ նույնաց-
նում և ոչ փոխադասում գրված подлежаще-ի հետ, ինչպէս հենց ընենց
գրել է Սևակը: Բայց այդ մասին հետո:

Այսպէս ուրեմն հայկերէն անորոշ դերբայի շատ Ղարիբյանի ու Սևակի
բայ է, բայի անփոփոխ ձև, գործ է ածվում գոյականաբար և այդ մասնակ
հոլովվում է: Իսկ շատ Սևակի բարձրախոսներն են անորոշ դերբայը գոյ-
ական համարում, կենտրոնի՝ այդ ֆորմալիզմ է: Իսկ ի՞նչ է ապացույցը:
Ըրեյան այն, որ Շապիրոն եւ իր իսկ խոստովանութեամբ ֆորմալիստ էր, —
գրում է Սևակը. բայց Շապիրոն ցանկացավ և կտրուղացավ վերանայել իր
ֆորմալիստական դրույթներն և տալ քերականութեան նոր, կայուն գասա-
գրքեր, որոնց մէջ ինքը միտում է հին Շապիրոյին:—Ահա Սևակի անմիտելի
ապացույցը, որ հայերենում անորոշ դերբայը գոյական չէ, այլ բայ: Գոնե
ասած լինել, թէ Շապիրոն ուսման ժամանակ քերականութեան մեջ անորոշ դերբայն
առաջ գրել էր իբրեւ գոյական, հետո այդ բարձրախոսման համարն է փոխեց,
անորոշ դերբայը գործ իբրեւ բայ: Գոնե այդ ասած լինել, Բայց ճիշդ այդպէս
էլ եղած լինել, միթէ՞ դա ապացույց պիտի լինել, որ նայեցնում անորոշ
դերբայը բայ է և ոչ գոյական: Զէ՛ որ կարող էր Շապիրոն սխալված լինել:
Զէ՛ որ հայերենի և ռուսերենի քերականութեանները նույնը չեն:

Փաղ. Ա. Ղարիբյանը (երա հետ և Սևակը) սխալ է ըմբռնում ագոյակա-
նաբար գործածվելը: Բարձրախոսաբար, այսինքն իբրեւ գոյական կարող են
գործածվել միայն ածականները, երբ զեղվում են դրանց գոյականները.
օրինակ՝ ես կարմիր խնձորը կերամ, իսկ դեղինը (= դեղին խնձորը) պահեց.
եւ երբ խնձոր ուներ, մեկը (= մեկ խնձորը) կերամ, երկուսը (= երկու
խնձորը) պահեց. Կան և այնպիսի ածականներ, որոնք գործածվում են
և իբրեւ ածական, և իբրեւ գոյական (օրինակ՝ կենդանի, սուր—սլ. բութ, ալի
սուներ):

Մյուս տեսակներն թառերը—բայ, մակբայ, կապ, շարժկապ—երբ գոյա-
կանաբար են գործածվում, դրանք չեն պահում իրենց նշանակութեանը, այլ
առնվում են իբրեւ սոսկ թրառ: Օրինակ՝ երբ ասում ենք՝ այս ռուսացիին՝

ազնվորդ է. այդ ազնայինն ընչիր. այդ ազնացնա իջուր ես կրկնել, այդ ազնացին համար շնմ խոսում, — այդ նշանակում է սորպետի քառը, ազնային բառը, ազնացա բառը, որը քերականությունը դիտենք, կարող ենք ասել նաև այդ սորպետի շաղկապը, ազնային նախադրությունը, ազնացա բայը, այդ ազնացա բայի համար շնմ խոսում:

Այսպես քառային նշանակությամբ կարող ենք ասել նաև գոյականների համար, օրինակ՝ այդ երկու ազնային-ից մեկը ավելորդ է, չնչիր. այս տողի մեջ պետք է մի ասեղանն և մի ահասկանալի ավելացնել, — այդ նշանակում է՝ այդ ազնային բառը չնչիր. պետք է մի ասեղանն առն և մի ահասկանալի բառ ավելացնել:

Ահա թե ինչ է գոյականաբար գործածվելը, որ հիշված դասախոսները շնն հասկանում, Արարատ Ղարիբյանը (նրա հետ և Սեակը) չի ըմբռնում, որ երբ անորոշ դերբայը գրվում է իբրև ենթակա, ստորոգյալ կամ լրացում, այդ ոչ թե այն պատճառով է, որ իբր սգոյականաբար է գործածվում, այլ որովհետև դա գոյական է և էլ ուրիշ ոչ մի կիրառություն չունի: Այդ դերբայը, ինչպես և ամեն գոյական, խոսքի մեջ պետք է դառնա և դառնում է կամ ենթակա, կամ ստորոգյալ, կամ այլ զանազան լրացումներ, — այսինքն նախադասության գլխավոր և երկրորդական անդամներին, որն է մեկը, — և ըստ այնմ էլ պետք է գրվի և գրվում է այս կամ այն հոլովով, ինչպես ամեն մի ուրիշ գոյական: Անորոշ դերբայը հայերենում էլ ուրիշ ոչ մի ֆունկցիա չունի:

Ինչի՞ց է առաջանում այդ երկտասարդ քերականների սխալ ըմբռնումը — Պրոկուտենի անկողնից, ինչպես սկզբում հայտնեցի, Անորոշ դերբայը իբրև բայ դնելը միջնադարյան լատինական քերականության մնացորդ է, որ նույնիսկ ֆրանսիացիներն արդեն շատ վաղուց, դեռ XIX դարի վերջին քառորդին թոթափել են: Բերեմ ալստեդ այդ քերականություններից մեկից հետևյալը*. Ենֆինիտիվը (= անորոշ դերբայը) իսկական վերացական անուն է թե իր ժազումով և թե խոսքի մեջ կատարած իր պաշտոնով: Դա միջոց նշանի արական անուն է: Անորոշ դերբայը տարբերվում է մյուս գոյականներից նրանով, որ՝ 1) կարող է ունենալ ուղիղ խնդիր, 2) սովորաբար հոգ չի առնում, 3) վրան կարելի չէ անական դնել: Ապա ժանոթության մեջ գրված է, թե շանորոշ դերբայներն և սովորական գոյականների միջև նշան ալստեդի շատ թույլ սահմանագծում մեկ մեկ բոլորովին վերանում է, այն ժամանակ, երբ անորոշ դերբայը հոգ է ընդունում: Ապա նույն քերականության մեջ անորոշ դերբայի ֆունկցիաներն վերանագրի տակ գրված է.

«Անորոշ դերբայը... դառնում է՝

1. ենթակա, օրինակ՝ տեղի ամոթալի արարք է:
2. Ուղիղ խնդիր, օրինակ՝ նա պիտե կարդալ:
3. Երկրորդական լրացում, օրինակ՝ նա վարժում է աղխառելու:
4. Անվան լրացում, օրինակ՝ հառաջանալու ցանկություն:
5. Ածականի լրացում, օրինակ՝ խոսելու վարժ:
6. Ստորոգյալ, օրինակ՝ կամենալն է կառոդանալ:

Նվ այսպես նույնիսկ ֆրանսերենում, որ հոլով ասածը լգիտե, և որ վերահիշյալ բոլոր դեպքերում անորոշ դերբայի վրա հոգ չի դնում: Նվ ոչ

* Lartue et Fleury, Grammaire, 38-րդ տպ., Փարիզ, 1895, եր. 80, 164 և 165.

միայն որ: Տրամաբանում իբրև դալիաբանության (galicysme) օրինակ խնդիր էն համարում նույնիսկ այն անորոշ գործարարը, որոնց առարկայից զան է և ինչ նախորդները, որինսկ՝ vous dînez à bavarder-պարզ սիրում էք խոսակցությանը, je désire de russier-ես ցանկանում եմ հաջողել:—Հետևանքում էք, ողիզ խնդիր, որ է՝ կոպ առարկան

Ուշում եք իմանալ, թե ինչպես են ժամանակ գերմանացիները վաղուց ի վեր: Ահա մի քերականությունից՝ «Բանի անհատական ձևեր կամ անվանական ձևեր (Nennformen, Verbum Infinitum)»-ը: Երբեք են բայի բնից ածանցված ձևերը, որոնք... գոյականներ կամ ածականներ են: «Ամեն բայից կազմվում են մի քանի ուղղականներ և ածականներ, որոնք բայի թերման ձևերի հետ են դրվում (հաշվում)»։ Գոյականները կոչվում են ինֆինիտիվ (= անորոշ դերբայ), ածականները՝ պարտիքիպա (= ածական դերբայ):

Ինչ որ գերմաներենում Nennformen են ասում, ֆրանսերենում է formes nominales — անվանական ձևեր, որ և՛ բայի բնից կազմված դերբայները (անորոշ, անցյալ և այլն):

Ուշում եք իմանալ, թե ինչ է հայերենում անորոշ դերբայը Ա. Մանյի կարծիքով:

«Անորոշ գերբայը և անցյալ դերբայը (-եալ վերջավորութամբ) հետագայում միայն ապրքերակված են, և կգրեապես դրանք եղել են մի ընդհանուր անվանական ձև, որ և եղել է «հին գոյական»: Գոյական է դեռ անցյալ գերբայը «եղալ քեռեալ է» կիրառության մեջ սեռականի հետ»:

Իսկ անորոշ գերբայը — ահա Մանյի մի ուրիշ գրքից. «Անորոշ դերբայը (Infinitif) գոյական է, քան վերացական (abstractus) նշանակություն ունի, որինսկ՝ «Անանց յապագայ» (— առանց Հապագայի—Մ. Ա.) բոլորովին նույն է նշանակում, ինչ որ «Անանց յապագութեան կամ «Անանց յապագանոց» (— առանց Հապագաների—Մ. Ա.): Բայց դա ունի ամբողջովին բայական խնդրառություն. միայն ինչ որ դիմավոր բայի հետ (Verbum finitum) ուղղական է դրվում. անորոշ գերբայի հետ սեռական է գրվում... Անորոշ գերբայը գործածվում է բոլոր հոլովներով՝ ներդրական... ածական... բացարկական... գործիական... տրական... հայցական... ուղղական...»:

Ինչ և՛ ժամանակում ուսուցիչ քերականներն իրենց անորոշ գերբայի մասին: Առենք նախ գոված Եսայիրոն:

«Ենթ հարկավոր է միայն անվանել (назвать) գործողությունը, լվերագրելով որոշ առարկայի և առանց ժամանակը ցույց տալու, այն ժամանակ բայը գործածվում է անորոշ ձևով (ինֆինիտիվ)» (I, 49): «Բայի անորոշ ձևը նշանակում է միայն բայի անունը (название)» (I, 57):

«Բայի անորոշ ձևը սկզբնապես եղել է բայից կազմված գոյական, այժմ մեղմում (— ուսաներենում—Մ. Ա.) գործածվում են բայական գոյականներ առանձին վերջածանցներով, օրինակ՝ гуляние от гулять, рисование от рисовать, ходьба от ходить, улыбка от улыбаться и т. п.» (I, 49 հան.):

* Dr. E. Th. Michaelis. Neuhochdeutsche Grammatik für höhere Schulen, Leipzig, 1896, հր. 75, 81.

** A. Meillet, Esquisse d'une grammaire Comparée de l'arménien classique, Vienne, 1903, հր. 80 հան. «formes nominales».

*** A. Meillet. Altarménisches Elementarbuch, Heidelberg, 1913, հր. 108 հան.

Հոտ Շապիրոյի, ուրեմն, ուսանելու անորոշ գերբայը բայ է:

Բայց և այնպես հենց այն միայն, որ ուսանելի ինֆինիտիվը զործ է ածվում իրեն ճնթակա, ստորոգյալ և նախադասութիւն երկրորդական անգամներ (второстепенные члены), այդ ցույց է տալիս, որ դա ուսանելու ևս այդ դեպքերում ըմբռնվում է իրեն գոյական և ոչ բայ: Ահա օրինակներ Շապիրոյի քերականութեանից, ըստ Շապիրոյի որոշման.

1) II, 8. նշմակա՝ Переправиться через реку не составляет никакого труда.

2) II, 9. ստորոգյալ՝ Наша очередная задача—поднять производительность труда.

3) II, 14. երկրորդական անգամներ՝ Прикажи ему уйти. Он большой мастер стихи читать. Мне не правиться твоя привычка размахивать руками во время разговора.

Այսպես և Я люблю читать և նմաները:

Տեսնենք, թե ինչպես է ըմբռնում ուսանելի անորոշ գերբայը ձեռի տակ ունեցած մի ուրիշ քերականութիւն՝ հնգիականը, Ա. Պեշկովսկին, Անորոշ գերբայը (= ինֆինիտիվը) թիւ ժագումով... մի մեկուսացած հոլով է—ты, Գն վերջացած իգական սեռի բայական գոյականների, որոնք կորցրել են իրենց մեացած բոլոր հոլովները... Մի ժամանակ դա... նշանակել է գործողութիւն իրեն առարկա, այսինքն մոտավորապես այնպես, ինչպես այժմ գործողութիւն են նշանակում взятие, горение, молитва, прыжок (= առում, այրում, ազոթք, ոստյուն—Մ. Ա.) և այլ գոյականները: Բայց այժմ այդտեղ (= անորոշ գերբայի մեջ—Մ. Ա.) առարկայականութիւն կամ բոլորովին չկա, կամ գեղքն չկա:

Ուսանելի անորոշ գերբայն ու բայական անունը гулять և гуляние (= պարտնելը և պարտանքը) կիրառական նշանակութիւնով, ինչպես բացատրում է Պեշկովսկին, մերթ տարբերվում են միմյանցից, մերթ նույնանում են միմյանց հետ: Նշանակութիւնով նույնն են, ուրեմն և անորոշ գերբայը գոյական է, օրինակ, հետևյալ դեպքերում гулять полезно—гуляние полезно, любитель гулять—любитель гуляния) (= գրոսները օգտակար է—գրոսների օգտակար է. գրոսնելու սիրահար—գրոսների սիրահար): Բայց վերջիվերջո այդ քերականի համար ուսանելի անորոշ գերբայը ըստ ավելի բայ է, քան գոյական: Ինչու՞—Որովհետև ուսանելու արդեղ հող չկա: Մինչդեռ անորոշ գերբայի վերադարձը գոյականների ժողքը գրում է նա, —կատարվել է քառն եմբողական լեզուների մեջ շնորհիվ որոշող հողի (հմմտ. գերմաներեն das Lernen, das Sprechen և այլն, որ հնարավոր է ամեն մի անորոշ գերբայի համար. ֆրանսերեն le parler, le pouvoir)*: Ուրեմն, ըստ Պեշկովսկու, որովհետև ուսանելու անորոշ գերբայը որոշող հող չի առնում (քանի որ ուսանելու ընդհանրապես հող չկա), աստի թեղ մի գոյական է, որ մի քալաչափ չի հասել բային—это существительное не дошедшее на один шаг до глагола" (եր. 118): Ուրեմն գոյականից դեպի բայ, մի քալաչափ հեռու մնացած անցման մի բայ:

* А. М. Пешковский, Русский синтаксис, издание 5-е. В первом издании премировано Академией Наук. Допущен Наркомпросом РСФСР в качестве учебного пособия для высших педагогических учебных заведений, Гос. учебно-педагогическое издательство, М., 1935, стр. 118 և-ն.

Բայց միայն որոշող հոգը չէ, որով անորոշ դերքայլը դոյապահ է: Եթե Պնշկովսկին հայերեն իմանար, նա ռուսերենի անորոշ դերքայլը համեմատելով Պայրենի հետ, կգտներ այնքի մեծ տարբերություն այդ երկուսի միջև:

1. Հայերենն առնում է այ միայն որոշող, այլև ամեն տեսակի հոգի՝ կարգալս, կարգալո, կարգալը, նույնիսկ կարգալներս, կարգալներդ, կարգալները:

2. Հայերենի անորոշ դերքայլի հետ կարող է գրվել ամեն որոշող ստացական իմաստով՝ օրինակ՝ իմ կարգալը, իմ կարգալը, նրա կարգալը, Տիգրանի կարգալը և այլն: Ռուսերենում այդ հնարավոր չէ. կարելի չէ ասել՝ моя читать, его читать, читать Тигра́на, այլ այդ հնարավոր է միայն անորոշ դերքայլին փոխարինող բայական գոյականի հետ՝ օրինակ՝ мое чтение, твоё чтение, чтение Тигра́на:

3. Հայերենում անորոշ դերքայլը հոլովվում է՝ կարդալ, կարդալու և այլն, օրինակ՝ իմ դուրս գալու օրը, նրա կարդալու ժամանակ: Ռուսերենում այդ հնարավոր չէ. կարելի չէ ասել՝ день мой выехать, այլ այդ հնարավոր է միայն բայական գոյականով ասել՝ день моего выезда, во время его чтения:

4. Հայերենում անորոշ դերքայլի հետ, ինչպես ամեն գոյականի հետ, կարող են գրվել նախադրություններ և ետադրություններ. օրինակ՝ կարդալուց առաջ, կարդալուց հետո, դուրս գալուց հետո, առանց կարդալու: Ռուսերենում այդ ևս հնարավոր չէ. կարելի չէ ասել՝ перед читать, после читать, без читать, այլ միայն բայական գոյականի հետ՝ перед чтением, после чтения, после выезда և այլն:

Այս բոլոր պայմանները հայերենի անորոշ դերքայլը նույնացնում են գոյականի հետ, իսկ ռուսերենի այդ դերքայլը, չունենալով այդ պայմանները, հեռանում է գոյականից:

Անշուշտ, հայերենում ևս կա անորոշ դերքայլի հետ նաև բայական անունների գործածություն թե՛ հին և թե՛ նոր հայերենում: Հին հայերենի համար բավական է թերթի, Մ. Խորենացու ճշմարտ պատմություն միայն երկրորդ գրքի ցանկը, և իսկույն նկատելի կլինի թայական անունների և անորոշ դերքայլի կիրառությունը բոլորովին նույն նշանակությամբ. «ետեղալն Արտաշիսի յարեմուտս»: «դիմումն ի մեզ Պոմպէի»: «յաղագս յաբժակելոյն Տիգրանայ ի վերայ զօրացն Հռոմայեցոց»: «յաղագս ևերոյն Արգարու յաբժակելս»: «եւր մեծին Սահակայ ի Տիսրոն» (Գ գրքից): «յաբժակումն Այանաց ի մեզ» և այլն: Նույնը նաև նոր հայերենում: Այժմ բոլորովին նույն նշանակությամբ առում ենք՝ «Ալանների հարձակումը Հայաստանի վրա», «Ալանների հարձակվելը Հայաստանի վրա» և այլն:

Ժողովրդական լեզվի մեջ, սակայն, բայական անունների գործածություն գրեթե չկա. այլ սովորական է գրեթե միայն անորոշ դերքայլի գործածությունը: Ռուսերենում, ընդհակառակն, ինչպես վերևում բացատրվեց, որոշ դեպքերում միմիայն բայական գոյականներ են գործածվում և հնարավոր չէ անորոշ դերքայլ գործածել: Եվ ահա, երբ ռուսախոս հայերը գրում կամ ռուսերենից թարգմանում են հայերեն, նրանք ձգտում են մեր լեզուն ռուսերենի վրա ձեռնել: Նրանք չեն ըմբռնում անորոշ դերքայլի կիրառությունն այնպիսի դեպքերում, երբ ռուսերենը միայն բայական անուններ է գործածում: Այդ պահանջին բավարարություն տալու համար է, որ վերջին տեսածայականներում նորանոր բայական գոյականներ են կազմվում ռուս մասնիկով, կամ այդ

մասնիկով կազմված հին, բայց անգործածական բառերը գործածության մեջ են դրվում:

Բերեմ մի օրինակ. «Անտակուսակցական դասակարգային մարմինների ստեղծումը միասնական ճակատի անցկացման, ընդհանրական ու ամրացման լավագույն ձևն է հանդիսանում» (սեորը<բղային> Հայաստան, 1934, № 182):

Նույնիսկ քանց կացնելու բառի համար կազմված է քանցկացում: Անշուշտ, ամբելի հաճախ անորոշ գերբային են գործածում նման դեպքերում. օրինակ՝ հենց նույն հոգվածի մեջ կարող ենք. «Հակաֆաշիստական ճակատ ստեղծելու ժամանակ (որ կարող էր գրել՝ «ճակատի ստեղծման ժամանակ»): «Աշխատավոր մասսաներին ֆաշիզմի դեմ մղվող պայքարի շուրջը համախմբելու գործում հատկապես կարևոր խնդիր է հանդիսանում... հակաֆաշիստական ժողովրդական լայն ճակատ ստեղծելը» (նույն): Պարզ է, որ Թարգմանիլը կարող էր գրել նաև «համախմբման գործում», «ճակատի ստեղծումը», ինչպես նույն Թարգմանիլը քիչ վերևում գրել է «մարմինների ստեղծումը», «անցկացման, ընդարձակման, ամրացման ձևը»:

Բայց այս միջանկյալ: Դառնանք մեր խնդրին:

Ռուսերենում, ինչպես տեսանք, շատ սահմանափակ է անորոշ գերբայի գործածությունը իբրև գոյական: Բայց կա մի հանգամանք ևս, որով ուսանողներում այդ գերբայի ամբելի իբրև բայ է մտածվում:

5. Ռուսերենում «бы» մասնիկը գործածվում է նաև անորոշ ձևի հետ, բային տալով ըզձականության, հնարավորության նշանակություն՝ съездить бы яв город. Как бы не упасть. (Շապ<իր>, 1934, I, 56):

Բայց որ կարևորն է՝ ռուսերենում անորոշ գերբայը если, чтобы (= եթե, որպեսզի) շաղկապներով կազմում է պայմանական և նպատակական նախադասություններ, իսկ հայերենում դրանցից ոչ մեկը հնարավոր չէ. օրինակ՝ Если увеличится деловое водое, то и частное увеличится вдвое (Շապ<իր>, 1934, II, 36): Երբ բաժանելին մեծացնել երկու անգամ, ապա և քանորոշը կմեծանա երկու անգամ: Чтобы умножить число яв 25, можно умножить его на 100 и разделить на 4 (Շապ<իր>, II, 38): Որպեսզի մի թիվ բազմապատկել 25-ով, կարելի է ալև բազմապատկել 100-ով և բաժանել 4-ի: Այսպես նաև հետևյալների մեջ. Мы пришли в библиотеку, чтобы прочитать газеты. Մենք եկանք գրադարան, որպեսզի կարդալ լրագիրներ: Мы думаем о том, чтобы успешно кончить работу: Մենք նրա մասին ենք մտածում, որպեսզի հաջողությամբ վերացնել աշխատանքը:

Առանց այդ շաղկապների էլ, անորոշ գերբայով կազմված նախադասությունները, նշանակության բազմազան նուրբ տարբերություններով, շատ տարածված են ռուսաց լեզվի մեջ: Ըս շեմ կարող այստեղ օրինակները հաճախել. այդ կարելի է տեսնել ամեն քերականության մեջ, այլև Պեշկովսկու վերոհիշյալ Շարահյուսության մեջ, եր. 338—342, 356:

Հայերենում Թույլատրելի չէ կազմել այսպիսի նախադասություններ անորոշ գերբայով: Վերոհիշյալ դեպքերում նախադասությունը կազմվում է կամ դիմավոր բայով, կամ անորոշ գերբայի սեռականով համար ետադրության հետ, երբեմն և առանց սրան: Վերևի խոսքերն, օրինակ, հայերենում ասում են այսպես.

Երբ բաժանելին մեծացնեմ երկու անգամ... կամ՝ երբ բաժանելին մե-

ծաղկի երկու անգամ... Մի թիվ 25-ով բազմապատկելու համար՝ իբրեւ է... կամ՝ որպէսզի մի թիվ բազմապատկելի 25-ով, կարելի է... Մենք նկատեց զբարձրացած, որպէսզի լրագրողներ կարգաւոր, — կամ՝ ...գործարան՝ լրագրողներ կարգաւոր (Համար)։ Մենք այն մասին ենք մտածում, որ հաջողութեամբ վերադառնալ աշխատանքը։

Վերջին աստիճանի մեջ ստրկանքի բոլոր դեպքն էլ ստատարանութեան է։ Այսպէս ուրեմն երեւեմ որպէսզի շաղկապներին հետ տեսող զերբալի գործառնութիւնը բացահայտ օտարաբանութեան է։ Բայց չնայելով դրան՝ սոցիալական անխելք թարգմանիչների գրելով այդ հետզհետեւ ավելի ու ավելի է երեւում գալիս մեր լրագրութեան մէջ։ Ահա ձեզ մի թարգմանութիւն։ Վերաբերողի կոմունիստական կուսակցութեան հիմնական խնդիրը տվյալ մոմենտում այն է. որպէսզի պարզացնուի և միևնույն վերջ տեսնել պրոֆշարտման միասնութեան կամպանիան, որպէսզի բոլոր կոմունիստները պիտի յետևեն պրոֆ-միութիւնների մեջ, սիստեմատիկ, համընթացաբար աշխատանք կատարեն անտեղ բանվոր դասակարգին կապիտալի դեմ համախմբելու գործում և այսպիսով նասնել այն բանին, որպէսզի կոմունիստական կուսակցութեանները կարողանան հսկել պրոֆմիութիւնների վրայ (սխառհրդ <ային> Հաստատան, 1934, № 182)։

Գրաբարտում էլ կան մի քանի այսպիսի օտարաբանութիւններ։

Ոչ մի լեզվի քերականութիւն չի հորինվում օտարաբանութիւնների համար, որոնք խոտեղին են միշտ։ Գրա համար է ասած, որ քերականութիւնը գրողը նախ և առաջ հիմնովին պիտի ուսումնասիրի այն լեզուն, որի քերականութիւնը պիտի գրի. այդպիսի մեկը պետք է խոր թափանցած լինի տվյալ լեզվի էություն մէջ, Բացի այդ՝ նա պետք է լաղճակողմանի կերպով ուսումնասիրած լինի քերականական գիտութիւնը։ Բայց ցավալի է տեսնել, որ մեր քերականութեան դասագիրքը հորինողը նույնիսկ, ինչպէս հարկավոր է, հիմք չէ հայերենին և քերականական գիտութեանը։ Այդ է պատճառը, որ, ինչպէս անհիմք թարգմանիչները անորոշ զերբալի գործառնութեան անում են ռուսերենին ենթարկվելով, նույնպէս Ա. Ղարիբյանը և նրա ջատագորդը հայերենի քերականութիւնը ձեռք են ըստ ռուսերենի և անորոշ զերբայը դնում են իբրև բայ։ Զե՛ որ բանիւնի կարող եղբայրական Ռուսաստանի մասնագետներէն մեկը՝ Շապիրոն, այսպէս է գրել։ Շապիրոն ռուսերենի քերականութիւնը գրելով՝ արդեն մտածել է մեզ համար, հայերենի քերականութեան համար։

Ինչո՞ւ է մեր անորոշ զերբայը, — ինչպէս և զերբայ անակաճը կամ բայածականը, որի մասին հետո խոսք կլինի. — մտնում էրային։ — Անորոշ զերբայի, ինչպէս և բայածականի, նշանակութիւնը նույնն է, ինչ որ համապատասխան բայի բայիմաստը. — չեմ ասում համապատասխան բայը, այլ միայն բայիմաստը, որովհետև բայը բացի բայիմաստից՝ ունի նաև դեմք, ժամանակ և այլն։ Բայց դրանով, այդ նշանակութեամբ, օրինակ, տեղի ունի զերբայն ավելի մոտ չէ տեղի ունի բային, քան տեղի ունի գոյականը, և ոչ էլ զարմանալ զերբայն է ավելի մոտ զարմանալ բային, քան զարմանալ գոյականը։ Ընդհակառակն, մեր անորոշ զերբայը և համապատասխան բայական գոյականը թե՛ նշանակութեամբ և թե՛ կիրառութեամբ կատարելապէս նույնն են միմյանց հետ և իրար փոխանակում են, մինչդեռ անորոշ զերբայը, ինչպէս և բայածականը, բայից շատ հեռու է թեկուզ միայն նրանով, որ բայը գեմք ունի, իսկ զերբայները չունեն այդ։

Որ բոլոր բայերի ընդերք, սակավ քաջառության, կազմվում է համապատասխան անորոշ դերբայ, այդ ոչ մի արժեք չունի։ Միևնույն բայերի ընդերք, սակավ քաջառությամբ, կազմվում են նաև բայական անուններում, ույթ, սուտ, և այլ ածանցներով կամ արմատներով, օրինակ՝ ստեղծել, ստեղծում, խոսել—խոսք, դողալ, դող, դողում, գալ—գալուտ, գնալ—գնացում, զնացք և այլն։ Լոկ ձևական արժեք՝ ունի այն, որ անորոշ դերբայն ունի միայն մեկ ձև վերլուծության, որ կանոնավորապես գրվում է բայերի ներկայի ընդ վրա, ինչպես դեմքի վերջավորությունները, օրինակ՝ գնամ—գնալ, գրեմ—գրել։

Հենց զխավորապես այդ պատճառով, որ բայերի համար կա միակերպ այսպես կազմվող անորոշ դերբայը, այս վերջինը համարվել է բայի թեքման ձևերից մեկը և առկվել խոնարհման մեջ։ Բայց ով որ այդ հանգամանքին արժեք կտա և դրա համար անորոշ դերբայը կհամարի բայ, նա ելակետ կունենա անորոշ դերբայի կազմության ձևը և ֆորմայիզմի մեջ կընկնի, Եվ այդպես վարվելով մեր քերական Ա. Ղարիբյանն ու Սևակը, նրանք իսկական ֆորմայիստ են դառնում, նրանք, որ պատերազմ են մղում ֆորմայիզմի դեմ։ Բայց չեմ կարծում, որ հասկացած լինին այդ։

«Անորոշ դերբայն ու դերբայ ածականը, ճիշտ առած, երբեք խոնարհման մաս չեն և երկար ժամանակ էլ խոնարհման մեջ չեն եղել։ Ահա թե ինչ է գրում ֆրանսիացիներն վերնում հիշված քերականությունը (նր. 81)։

Էլ ի՞նչ մնաց անորոշ դերբայ ու դերբայ ածականների և համապատասխան բայերի մեջ իրեն ընդհանուր—Միայն այն, որ ներգործական (անցդասական) բայերի համապատասխան անորոշ դերբայները և դերբայ ածականները առնում են հայցական կրող խնդիր, ինչպես և համապատասխան բայերը, մինչդեռ համապատասխան բայական անունների հետ այդ խնդիրը փոխվում է սեռական վերագրի, օրինակ՝ վերնում բերված ցիտատների մեջ կա՝ «Ենկատ սեռվածը», «Մարմինների սեռվածումը», որ կարելի է շուտ տալ և ասել՝ «Ենկատի սեռվածումը», «Մարմինների սեռվածը»։

Ահա դերբայների և բայի մեջ ընդհանուրը, մի կողմ թողնելով վերագրի ածականի ու մակբայի խնդիրը։ Բայց ով որ ժողովրդական լեզուն դիտել գիտե, նա նկատած կլինի, որ անորոշ դերբայի հետ նա գրվում է նաև սեռական, օրինակ՝ Թումանյանից «փողի գտնելը»։ Այդպես և «վարդի քաղոցը»։ Ուրեմն այստեղ էլ լեզուն ձգտում է անորոշ դերբայը նույնացնել բայական գոյականների հետ։ Բայց և այնպես դերբայները գրական լեզվի մեջ առնում են նույն հայցական կրող խնդիրը, ինչ որ համապատասխան բայերը։

Բայց մի՞թե դրա համար մեր անորոշ դերբայը, որ կատարելապես գոյական է, պետք է բայ համարվի։

Դրա համար մեր անորոշ դերբայը հենց դերբայ է և գոյականների մեջ մի առանձին տեղ է բռնում, ինչպես և դերանունները։

Կան և թվական գոյականներ։ Բայց նա չեմ ուզում ժամանակ վատնել թվական գոյականների համար, որոնց թիվը չափազանց քիչ է հայերենում, որոնք և, կարելի է ասել, բոլորը գործածվում են նաև իբրև ածական։ Ածականների մասին խոսելիս՝ կանգ կառնեմ և դրանց վրա։

* Մ. Աբելյան, Աշխարհարարի շարունակություն, Վոդարշտպատ, 1912, էր. 76, պար. 87, կետ 7։

21. Ընդհանուր եզրակացությունը գոյականի մասին:—Այն բոլոր քառերորդ, ոտներ ասարի:— Էն նշանակում,— ինչի ինքնակա առարկա, թե իբրև այնպիսին մտածված մի մեղադրություն (արտարակցի, արտարակում) իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր խումբ— ԿՈՆՍԵՆՏԻՆ:

Գոյականները ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու տեսակների:

1. Անուն,— այն գոյականները, որոնք ունեն հաստատուն, անփոփոխ նշանակություն: Դպրոցական թերականությունների մեջ կոչում են անուն կամ գոյական:

2. Դերանուն (գերանուն գոյական, ըստ դպրոցական թերականությունների՝ գոյական գերանուն),— այն գոյականները, որոնք հաստատուն նշանակություն ունեն, այլ նախելով թե ինչ տեղան տեղ են դրվում, կամ ինչ առարկայի են ազնայրկում, նրա նշանակությունն էլ ստանում են:

Այս են ահա գոյականների գլխավոր տեսակները՝ անուն և դերանուն: Մնացածը երկրորդական ստորաբաժանումներ են: Այսպես անունները լինում են՝

ա) Անուն նեղ մտքով (անուն գոյական, ըստ դպրոցական թերականությունների՝ գոյական անուն), որ են հասարակ և հատուկ անուններ:

բ) Թվական գոյական:

գ) Անորոշ դերբայ կամ բայանուն կամ դերբայ գոյական: Այս երեք ենթատեսակների հետ ղենելով իրեն

դ) Դերանուն (գոյական)— ունենում ենք չորս տեսակ գոյականներ: Հասարակ և հատուկ անուն գոյական, թվական գոյական, գերբայ գոյական և գերանուն գոյական: Դերանունները համար իրեն ընդհանուր տեղի անուն ընդունված է գոյականը, ինչպես որ պետք է ըստ տրամաբանության և ըստ մատերիալիստական տեսության, քանի որ գոյականն է տեսականների բաժանվում:— Արդարև այստեղ գոյականների մի գլխավոր տեսակը՝ դերանունը՝ դրվում է մյուս տեսակի՝ անունի ենթատեսակների հետ, իսկ այդ շփոթություն չի առաջ բերում, քանի որ այդ չորսից ամեն մեկը հակասում է մյուս երեքին, և ոչ մեկը չի մտնում մյուսի մեջ, Դա լուրջ թվարկություն է և ոչ ստորաբաժանում:

Մեծ գովարտություն է պատճառել ինչ տերմինների գործածությունը, և անուն գոյական տերմինն իսկապես հարմար է գոյականների առաջին գլխավոր տեսակին, ուստի ավելացրել են հաստատու և հասարակ բառերը: Աշխատել են իմ ռեպարտությունները (եր. 8 հտ.) և թեպետև լեզվի տեսությունները (եր. 133 հտ.) այս բաժանման համար թե հին տերմինները ղենել, թե աշխարհ լեզվի տեսությունները մեջ նույնիսկ ընդգծելով հենքը, և թե նորերն ըստ մատերիալիստական տեսության կատարված ճիշտ բաժանման: Բայց այդ առաջ է բերել տերմինների խնդրում, որից թերակական տերմիններին անվարժ մարդիկ, ինչպես քաղ. Մանկը, զուգու լեն հանում, Ուստի կատարակի դպրոցական դասագրքի մեջ անունների տեսակներից թվական գոյականները հանել և գնել միայն առականների մեջ, վերնում հիշված պատճառով, և գոյականները բաժանում և ստորաբաժանում անել, ինչպես որ է իմ լեզվաբանության գերականության մեջ (եր. 48 հտ.), և իմ ճարտական թերականության 3-րդ, 4-րդ և 5-րդ տրամադրությունների մեջ (1910—1916 թթ.), Այսպես:

Գոյականներին նաչելով իրենց նշանակութեան՝ բաժանվում են երկու տեսակի,

1. Անուններ. որ լինում են՝ հասարակ անուն, հատուկ անուն, բայանուն կամ անորոշ դերբայ:

2. Դերանուններ, որ լինում են՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարաբերական, ստացական, անորոշ և հարցական:

Է

ԱՅԽԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

22. «Անական և թվական» ավանդական բաժանմամբ:—*Մնչպես վերևում տեսանք, Շապիրոն (Նրան Հետեւելով և Ա. Ղարիբյանը) իբրև բառերի մի շարքի նկատմամբ հետևողական խումբը դնում է՝*

1) գոյական, 2) ածական, 3) թվական, 4) դերանուն, 5) բայ, 6) մակբայ, Տեսանք, որ բառերի այդ բաժանումը չի կատարված ճշտ իրենց նշանակությամբ և ըստ իրենց դերի նախադասության մեջ: Դերանունը (ոտսերենում նաև քանական թվականը, երբ ենթակա է) մտնում է գոյականի մեջ իբրև ենթատեսակ:

Այժմ քննենք տեսանք մյուսների խնդիրը. Շապիրոն գրում է.

«Անականը նշանակում է առարկայի հատկությունը (признак); Հատկանիշ տեսելով պետք է հասկանալ՝ առարկայի շարք (օրինակ՝ մեծ տուն, լայն բակ), նյութը, որից շինված է առարկան, առարկայի որակը, առարկայի պատկանելությունը (отцовская шуба) և նմանները,—մի խոսքով ամեն ինչ, որի համար կարելի է հարցնել какой (ինչպիսի), который (որ) կամ чей (ույն)» (1, 32):

«Թվականը նշանակում է առարկաների քանակը, կամ նրանց դասավորությունը: (1, 41); Ուրիշ տեղ (11, 11) նա թվականները համարում է առարկաների «հատկանիշ» (признак) նշանակող բառեր: Թվականն, ուրեմն, մի առանձին տեսակի հատկանիշ, որ է՝ քանակ ու դասավորություն է ցույց տալիս:

Հիմա հարց, ի՞նչ հիման վրա Շապիրոն ածականի համար իբրև առարկայի հատկանիշ շարում է՝ լայն, նյութ, որակ, պատկանելություն և սեմանները:—Ոչ մի հիմք չկա: Մի՞թե կարելի չէր ավելացնել նաև փառակ և դուռավորություն (колличество, порядок). չէ՞ որ ինքը Շապիրոն թվականների նշանակությունը համարում է հատկանիշ, ինչու՞ պետք է, օրինակ, պատկանելություն ցույց տվող (ո՞ւմ ՎԵՐ հարցին պատասխանող) բառերը դրվեն որակ (качество) ցույց տվող բառերի հետ մի տեսակի մեջ, իսկ փառակ (ոտսերենում, հարկավ, թեք հոլովների համար) և փառիւրեղ ցույց տվող բառերը չո՞վ տեսակ կազմեն: Այստեղ ոչ մի սկզբունք չկա գործադրված:

Առենք դերբայ ածականները կամ բայածականները, ոտսերեն որդ-частие.

Արդեն վերևում տեսանք, որ բայի բնից ածանցված դերբայ ածականները—պարտիցիպները—գերմաներենում համարում են ածականների Տեսանք՝ ինչպես են մտածում ֆրանսերենում. «Particip e-ն (= դերբայ ածականը) մի տեսակ ածական է, որ միևնույն արմատն ունի, ինչ որ բայը:

Միակ տարրերու թյուրք որ կա որոշ պարտիցիպներ (ներկա պարտիցիպներ— participes présents) և մյուս անակոտներ միջև, այն է, որ առաջինները կարող են անհետ ալիդ խնդիր, իսկ երկրորդներն այդ չեն կարող ունենալ... Մյուս պարտիցիպները (անցյալ պարտիցիպներ— participes passés), որ երոնք չեն կարող ուզիլ խնդիր ունենալ, ոչնչով չեն տարբերվում սովորական ածականներից։ Participe-ն սինչպես մի ածական որակավորում է (qualifier) գոյականը, ամիշտ նույն քանն ունի, ինչ որ բայը և որաչ դեպքերում նույն տեսակի լրացումներ է առնում, ինչ որ բայը։ —Ուրեմն ճիշտ ինչպես անորոշ դերբայը, միայն մինչ վերջինս գոյական է, պարտիցիպը՝ ածական է, առարկինը թայտան, երկրորդը՝ բայածական։

Ի՞նչ է գրում Շապիրան причастие-ի համար, Եվուսաց լեզվի մեջ կան անակոտներ, որոնք կազմված են բայերի ներկայի ընդ (основа) ...և անցյալի ընդ...

Բայածականները (отглагольные прилагательные) կոչվում են причастие (1, 60 հտ.)։

Սկայպի ածականները նշանակում են առարկաների նատկանիշներ (признаки), ընդ որում իբրև հատկանիշ հանդիսանում են այն գործողութունները, որ կատարում են առարկաները. օրինակ՝ աշխատող մարդ—մարդ, որ աշխատում է։ —Ուրեմն դարձյալ մի առանձին տեսակի հատկանիշ։

Ի՞նչ է գրում Շապիրան բայի համար.

Բայը մի ամասն-բանն է, որ նշանակում է գործողություն, որ կատարում է առարկան, կամ որ երա գլխին կատարվում է, նույնպես մի վիճակ, որի մեջ գտնվում է առարկան (I, 49), կարճ ասած՝ բայը ցույց է տալիս գործողություն կամ վիճակը։

Հիմա, ի՞նչ են դրանք։ —Դարձյալ հատկանիշ, Թե գործողությունն առարկայի հատկանիշ է ըստ Շապիրոյի, ահա նրա դրածը, որ վերելում գրեցի. Թե սայպի ածականները (= причастия) նշանակում են առարկաների նատկանիշներ (признаки), ընդ որում իբրև հատկանիշ հանդիսանում են այն գործողությունները, որ կատարում են առարկաները...։ Կրավորականների համար (Убитый, пойманный) գրում է, Թե այդ причастие-ները սնույնպես նշանակում են առարկաների նատկանիշներ (признаки), ընդ որում իբրև հատկանիշ հանդիսանում են նույն գործողությունները, որոնց ենթարկվում են այդ առարկաները (I, 62)։

Այսպես ուրեմն ըստ Շապիրոյի սկզբակերտ նշանակում է առարկայի հատկանիշն, Հիմա, քանի որ սահմանումը պիտի փոխադարձ լինի, այդ սահմանումը շուտ տված լինում է. սկզբակերտ հատկանիշ նշանակող բառերը ածական են, Հիմա, ինչպես տեսանք, ըստ Շապիրոյի, հատկանիշներ են ցույց տալիս և՛ ածականը, և՛ թվականը, և՛ причастие-ն բայածականը, և՛ բայը. Եթե այդպես է, էլ ի՞նչպես է նա բառերն ըստ այդ ընդհանուր նշանակության բաժանել տեսակների։ Դա ըստ նշանակության տրամաբանական բաժանում չէ, Այդտեղ չկա բաժանման սկզբունք։

Դա և մասերիալիտական բաժանում չէ։

Բայը մի կողմ թողնենք, որովհետև դա ունի բոլորովին ուրույն նշանակություն ու բնավորություն, որ չեն հասկանում Շապիրոն և իր մերադնյա հետևորդները, Առանց մյուսները։

23. Ածականն ըստ մատերիալիստական տեսակետի:—Արդեն տեսել ենք, որ, ըստ մատերիալիստական տեսութեան, բառերը, որոնք հետ զուգորդուած են օրլինկով իրականութեան պատկերացումները, կազմում են ամենից առաջ երկու մեծ խմբեր: Մի խումբ քառեր նշանակում են ինքնակա, անկախ գոյութիւն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկաներ. դրանք գոյական են: Մի երկրորդ խումբ քառեր էլ, որոնք նշանակում են այդ առարկաներից անբաժան հատկանիշները, որոշումները. դրանք ածականներն են:

Այս է մատերիալիստական առաջին և գլխավոր բաժանումը:

Ապա այն էլ տեսանք, որ, ըստ տրամաբանութեան պարզ պահանջի, միևնույն ընդհանուր տեսակի մեջ պիտի մտնեն այն ամենը, ինչ որ նույն տեսակին են պատկանում: Հետևաբար, ինչպես որ առարկաներ նշանակող քառերն ըստ իրենց ընդհանուր նշանակութեան կազմում են մեկ ընդհանուր տեսակ, գոյական, նույնպէս և այն բոլոր քառերը, որոնք առարկաների հատկանիշներն են ցույց տալիս, ըստ իրենց ընդհանուր նշանակութեան կազմում են մեկ երկրորդ ընդհանուր տեսակ—ածական:

Ինչ որ չի համապատասխանում այս բաժանմանն, այն ոչ միայն անտրամաբան է, այլև հակամատերիալիստական է:

Ի՞նչ է եզրակացութիւնը:—Այն, որ հատկանիշներ նշանակող բոլոր քառերն ածականների մեկ ընդհանուր տեսակի մեջ մտնում են իբրև ենթատեսակներ ըստ իրենց նշանակութեան.

1. Անուն ածական (ածական ենզ մտցով, ըստ դպրոցական քերականութիւնների՝ ածական անուն).

2. Թվական ածական (ըստ դպրոցական քերականութիւնների ժամական թվականն կամ թվական անուն).

3. Դերայ ածական կամ բայածական (ըստ դպրոցական <անան> քերականութիւնների՝՝ ածական դերայ): Բացի սրանցից կա նաև՝

4. Դերանուն ածական (ըստ դպրոցական քերականութիւնների՝ ածական դերանուն):

Ահա այն ստորաբաժանումը, որ կա իմ Մէջնարհ <աբարի> շարահյուսութեան մեջ և իմ ժշայ <ոց> լեզվի առաւելութեան մեջ, որ և համապատասխան է գոյականների բաժանմանը: Այդ չորս տեսակներից 4-րդը՝ դերանուն ածականը՝ լուրի հաստատուն, անփոփոխ նշանակութիւն, միևնույն առարկի երեքն անփոփոխ, հաստատուն նշանակութիւն ունին: Ուրիշ խոսքով, ինչպէս իմ Մէջն <աբարի> շար <ահյուսութեան> և ժշ <այոց> լեզվի՝ տ <անութեան> և մեջ բացատրված է, առաջին երեքը կազմում են ըստ իրենց հաստատուն նշանակութեան մի ընդհանուր տեսակ, իսկ դերանուն ածականը, իր փոփոխական նշանակութեամբ, դրա դիմաց՝ մի երկրորդ ընդհանուր տեսակ: Բայց երբ առաջին ընդհանուր տեսակի ենթատեսակների հետ (որ են՝ 1) անուն ածական, 2) թվական ածական, 3) դերայ ածական) դնում ենք երկրորդ ընդհանուր տեսակը, իբրև 4) դերանուն ածական,—այդ քվարկութեամբ ոչ մի թուրքմացութիւն չի առաջ գալիս, որովհետև այդ չորսից ամեն մեկը հակասում է մյուս երեքին և ոչ մեկը չի մտնում մյուսի մեջ:

Ինչպէ՞ս է հիմնավորվում ածականների բաժանումը, որով օտացվում են դրանց չորս տեսակները: Տեսնենք այդ:

24. Ածականների երկու գլխավոր տեսակները—1) որակական և 2) հարաբերական կամ հատկացական ածականներ:—Վերևում տեսանք, որ դիմա-

չնկեցին արամարանությանը, քանի որ մասնաթյուն որոշակի միջոց, որոշակի մասնակցություն ունեցող անհատներին է—գործ ունի կանխորոշ հասկացություններ հետ: Բայց թե՛ է այդպիսի հասկացություններ (CONTRIBUTION, Եղբայրներ) մեկուկուրու բազմազանության մեջ: Մեկ էլ հիշենք Մարքսի այն խոսքը. «Կանխորոշ նրանում է կոնկրետ, որ բովանդակում է իր մեջ բազմաթիվ որոշումներ, նրանում գալով իրեն մեկուկուրու բազմազանության մեջ: Ուրեմն մեկ հասկացություն, առանձին առարկան իր բազմազան որոշումներով, սկսողաները, իրերը, ինչպես որ դրանք որոշակի միջոցներ ունեն, բազմազան հատկություններ ու հարաբերություններ մեկուկուրու են և իրեն այդպիսին որոշակի մասնակցության են»:

Այդ, ինչպես էլ բազմազան լինեն առարկաների հասկացությունները կամ որոշումները, դրանք վերաբերում են նրան մեկ խմբի կամ անհատների, որոնցով արտահայտվում են որոշակի մասնակցությունների հիմնական հատկությունները: Հետևյալն էլ, այսինքն, դրանց համապատասխան էլ, առարկաների որոշումները իրենց տվող առարկաները—առարկաները բաժանվում են նրան մեկ անհատի. Ա) առարկան անհատներ և Բ) հարաբերական կամ հասկացական անհատներ:

Այլ օրակական անհատները նշանակում են առարկայի որակը: Միակերպ դիտարկելիս արամարանության անհատները կասեցործան են:

Միակերպ առարկայի այնպիսի որոշումներն է, որի շնորհիվ առարկան (Մասնակցություն) է այն, ինչ որ է՝ և կորցնելով իր որակը, դա (առարկան) դադարում է լինել, այն, ինչ որ է (չնկեց)»:

Որակը առարկայի, առարկա կամ ներքո, ներքին, բազմազան (CONTRIBUTION) հասկացություն է: Ուստի իր առարկայի որակը կորցնում է, այսինքն առարկան այլևս այն չի մնում, ինչ որ առաջ էր: Առանց իրեն որոշակի կոնկրետ սահման ու բարձր պատճառ հիմա, նոր այդ պատճառ կորցնում է իր սահման ու բարձր որակը, բնականաբար դա այն չի մնում, ինչ որ էր առաջ, կամ նոր այդ պատճառ կորցնելով իր սահման ու բարձր որակը դառնում է սթաբիլ ու ցածր, բնականաբար այսպիսի սթաբիլ ցածր պատճառ այլևս առաջվանը չէ: Առանց դարձյալ իրեն որոշակի սեփական գրել: Նոր գրել իր սեփական որակը կորցնում է, բնականաբար դա դադարում է լինել այն, ինչ որ է: Ահա որակական անհատների դիտարկելիս հիմնականում:

Որակական անհատների մեջ մտնում են վերին նրան ենթատեղիներ՝ 1) անուն անհատ և 2) դիտարկ անհատ (բաշխական):

Ինչով են այդ նրանք տարբերվում միմյանցից:—Մենք այդ տեսն ենք: Դիտարկները դրական լեզվի մեջ առնում են նույն հայցական կրող խնդիրը կամ ուղիղ խնդիրը, ինչ որ համապատասխան բառը (համակարգիչ, —համակարգիչ, դրող, յայպես և մակրայլ՝ նամակ գրելիս): Բայց այդ չէ միայն:

Նյութի շարժման մեջ որակը, որ սպիտակագույնի սևն է շարժման, միայն և անփոփոխ չէ, այլ, ընդհանրապես, անցավոր է: Բայց, ինչպես արդեն տեսնենք, այդ փոփոխությունը կատարվում է ավելի կամ պակաս ժամանակի ընթացքում: Ուստի կա որակ, որ ավելի կայուն է, քան մյուսը: Անուն անհատ

* Т. С. Ивченко. Кр<аткий> фил<ософский> сл<оварь>.

** Կարգ:

կաններն ահա նշանակում են ընդհանրապես ավելի մեայուն որոշումներ, ավելի կայուն հատկանիշ, քան դժբախտ անակախները: Այս վերջիններն են ցույց են տալիս առարկաների առող, ներուձակ հատկութուն, քայց մեծ մասամբ վաղանցիկ: Որինակ՝ եռայն բայարմատից կաշմված փայլուն, ջարժուն, ջարժական անուն անակախներն ավելի մեայուն որոշում են նշանակում, քան փայլող, ջարժվող դժբախտանակները. եռլնպես ժամանակավոր վաղանցիկ որոշումներ են ցույց տալիս՝ «նոտած ձի», «պակած ձի», «վաղող ձի», «կանգնած ձի»: Նստածը կարող է իսկույն կանգնել և լինել կանգնած. կանգնածը կարող է վաղել և դառնալ վաղող և այլն: Նստիք այն կանգնած և վաղող ձիերին: Բայց երբ ասում ենք՝ «Այս ձին վաղան է», կամ «վաղկան է», «վաղկան» կամ «վաղան» անակախներով որոշվում է համեմատաբար մեայուն որակը:

Բառերի նշանակութայն փոխվիով այդպիսի դժբախտ անակախները, հարկավ, ստանում են նաև համեմատաբար մեայուն որակի նշանակութուն, ինչպես ասում են՝ «նստած բնավորութուն», «նստած մարդ» (ոչ ֆիզիկական իմաստով): «Մեղմոջ մարդ», մի հատկութուն, որ շատ երկար չի տևել, իսկ «Մեղմոջ մարդ» ֆիզիկական իմաստով, հարկավ, հաճախանական է:

Բ) Հատկացական կամ հարաբերական անակախները ցույց են տալիս առարկաների որակների հարաբերութուններն, այն կապը, որի-մեջ գտնվում են առարկաներն իրար վերաբերմամբ: Առարկաների այդ որոշումներն առարկան են: Երբ առարկաների հարաբերութունը փոխվում է, առարկաների այդ որոշումներն էլ կորում են, բայց առարկաների որակը չի ունենում, առարկան մնում է նույնը: Այդպիսի որոշումները ցույց են տալիս ամենից առաջ առարկայի քանակը:

«Փանկեց առարկայի այնպիսի որոշութունն է, որ վերաբերում է գոյին այնպես, որ սիրը նույնն է մնում, ինչ որ է, թեպետ և դրա քանակական որոշումը փոխվում է, և դա (իրը) դառնում է ավելի կամ պակաս» (Հեգել): Փանկի ամենից վերացական արտահայտութունն է թիվը, հետո գալիս է մեծութուն (величье), հետո՝ աստիճանը*:

Առենք թվակտեները, որոնք ցույց են տալիս առարկաների միասնական հարաբերութուն, կատարված կապակցութուն: Երբ ասում ենք այս «Հինգ ծառ», այդ ծառերն առնում ենք միասնական հարաբերությամբ: Երբ այդ «Հինգ ծառերի» քանակական որոշումը փոխենք, մի ծառ էլ ավելացնենք դրանց և ասենք՝ այս «վեց ծառ», առաջվա «Հինգ ծառ» էլի նույնն են մնում, կամ Հինգ ծառից մեկը դուրս թողնենք և առենք նրանից միայն «չորս ծառ», այդ «ծառ» առարկաները մնում են նույնը, չնայելով որ քանակական որոշումը մեծանում և փոքրանում է:

Առենք զատական թվակտեները: Դիցուք, մի շարքով իրար հետ կան շուրս ծառ. և մենք մի կողմից սկսած համարում ենք՝ «առաջին ծառ», «երկրորդ ծառ», «երրորդ ծառ», «չորրորդ ծառ»: Այդ որոշումներից ոչ մեկով էլ ծառ առարկան չի ազդվում: Տեղներս շուրս տանք և կանգնենք չորրորդ ծառի մոտ և այնտեղից սկսենք համարել՝ առաջին ծառ, երկրորդ ծառ և այլն: Այս դեպքում մեր և ծառերի հարաբերութունը փոխվում է. այն ծառը, որ չորրորդ էր, այժմ դարձավ առաջին, երրորդը՝ երկրորդ, երկրորդը՝ երրորդ,

* Иценко, Кр. ф. сл.

առաջինը՝ լորտորդ Բայց լեախլով, որ այդ ժառանգի հաբարերությանը, ըստ
այնմ է նրանց որոշումը փոխվեց, ծառերն անփափախ ետքը մնացին:

Առանձն ցուցակներ ածականներն է մի կտրվից ցույց առաջով տանք՝ այս
ծառը, այդ ծառը, այն ծառը, այն մյուս ծառը, Լեւոտ անդենբա փախենք և
վերջին ծառից սկսելով տանք՝ այս ծառը, այդ ծառը և այլն: Այս դեպքում էլ
հարաբերությունը և ծառերի որոշումները փոխվում են. այն մյուս ծառը
դառնում է այս ծառը, այն ծառը դառնում է այդ ծառը և այլն, բայց դարձյալ
ծառերը այ մի փոփոխություն չեն կրում, մնում են նույնը:

Այսպես նաև՝ իմ, քո, իր, մեր, ձեր, սրա, դրա, նրա ստացակցներն ու
և առհասարակ անսակոտ հատկացությունն է ս, ու, և հոգիքով չի փոխվում
առարկայի որակը: Միևնույն կոնկրետ դրքի համար սահման էմ գիրքը, թե քո
գիրքը և այլն կամ գիրքս, գիրքդ և այլն, դրանով փոխվում է առարկաների
հարաբերությունը և այդ իրի որոշումը, բայց իրը մնում է նույնը, ինչ որ էր:

Ահա և հատկացական ածականների դիտելիքական հիմնավորումը:
Դրանցով հատկացվում են, այսինքն ընկվում, դատվում են, որոշվում
առանձին միայն այս կամ այն քանակով առարկաներ, որոշ կամ անորոշ թվով
կամ որոշ առարկաներ՝ Հինգ ծառ, այս ծառերը և այլն:

Հատկացական կամ հարաբերական ածականների մեջ մանրում են վերե-
վում հետևյալ չորս հատկանիշներից մյուս երկուսը՝ 1) Թվական ածականը և
2) գերանուն ածականը:

Թվական կամ ածականների երկու տեսակի բաժանման հիմնավորումը
է առանձին՝ տրամաբանությամբ, և դրանց կատարած գործ անունների
նշանակությամբ ածականի և բովանդակությամբ նկատմամբ:

Ըստ այսմ, ուրեմն, ըստ իրենց կատարած գործի, ածականները բաժան-
վում են երկու տեսակի:

Ա. Որակական ածականներ և Բ. Հատկացական կամ հարաբերական
ածականներ:

Ա) Որակական ածականներն էլ ըստ իրենց նշանակությամբ բաժանվում
են երկու ենթատեսակի. ա) Անուն ածական և բ) Դերբայ ածական:

Բ) Հատկացական ածականներն էլ բաժանվում են երկու ենթատեսակի.
ա) Թվական ածական կամ թվական անուն, բ) Դերանուն ածական: Ուրեմն
նախորդ բաժանման շուրս տեսակը:

Թվական ածականներն էլ լինում են՝ 1) Քանակական ածականներ, որոնց
մեջ և անորոշ քանակականները, 2) Դասական ածականներ:

Իսկ դերանուն ածականները լինում են՝

1) Յուզական ածականներ, 2) Ստացական ածականներ և այլն:

Ահա թե ուր գնաց թվական անունը: Դա դարձավ ածականների հատ-
կացական տեսակի մի ենթատեսակ, որ իր կտրվից ունի իր ենթատեսակները:

Նվ ինչպե՞ս լլգիթթվի և լլգարանա քաղ. Սնակը: 9է՞ որ զվերաքերն են
թվականը որպես խոսքի մասն: Դա, ըստ նրա սմատերիպիզմի, հավասար
պիտի գրվի գրականին և ածականին և հանկարծ դարձել է ածականների
մի տեսակի մեջ իրեն մի ենթատեսակ: 9է՞ որ դրանով թվականն ընկնում է
գիրքից և պատվից: Ա՛խ, այդ Եփրամայիտները: Եփրանի ընթացում
սրբազործված գրությունը սխառնել են և ստեղծել մի քառաս:

Քրառնա, անշուշտ, մեր սմասնագետներին համար է: Թե չէ, օրինակ,
Ֆրանսիացիները վաղուց, շատ վաղուց իրենց դասագրքերի մեջ ածականները

բաժանում են ծերդու մեծ տեսակի՝ որակական և հատկացական (adjectif qualificatif և adjectif determinatif). որակական են դերում, ինչպես տեսիկ ենք և քայաժականը (պարտիցիպը), իսկ իբրև հատկացական ածականներին ենթատեսակներ դնում են՝ ցուցական ածականներ, ստացական ածականներ, քվական ածականներ կամ թվական անուն, անորոշ ածականներ, անպա թվական ածականները բաժանում են փոքրական և դասական ենթատեսակներին:— Թույլական և ստացական ածականները ֆրանսերենում չեն համարվում դերանուն. և դրա համար կա որոշ հիմք, Բայց այդ կիցողենմ:

Ի՞նչ կասի արան դասախոս Մեակը, Վերացրե՞լ են թվականը որպես խոսքի մաս: Կամ է՛, որ նա Ծրանսիայում չի ուսուցանում, թե չէ դուք չէր հանիլ այս սքանչելիքը:

Հիմա հարց: Ծիրմալիստակա՞ն են, Լևի՞ վրա են հիմնված այդ բաժանումն ու ենթաբաժանումները, թե՞ բառերի նշանակությամբ և դրանց կառուցած ֆունկցիայի վրա: Դիտելիքականն ու մատերիալիստակա՞ն են այդ բաժանումները, թե մետաֆիզիկական, ճշգրիտֆունկցիական, ճշակամատերիալիստական, բառեր, որ նա շարտել է Մ. Արեղյանի հասցեին ի գովաստ Գարիբյանական քերականության:

Եվ վերջապես, Ծիրմալիզմը հիմնվում է լուկ Լևի վրա: Ունի՞ն արդյոք մեր թվական ածականները, ինչպես և մյուս տեսակի ածականները, որն է ընդհանուր մե, որից ենթալուզ հնարավոր լինե՞ր որն է ձևական բաժանում անել, ինչպես օրինակ, ուսանողի ածականներն ունեն իրենց հատուկ վերջավորություններն ու հոլովական առանձին ձևերը:

Ահա մի բան, որի մասին կարե՞ր չեն համարել մտածել նրանք, որ ընդդեմ Ծիրմալիզմի են գրում:

Բայց մենք շարունակենք:

Ը

ՄԱԿՐԱՅԻ ՄԱՍԻՆ

25. Սանմանումը:— Այս աշխատությունն սկսելիս՝ մտադիր չէի մակբայի մասին գրել, քանի որ դրա դեմ գրող լի եղել և դրա վերաբերյալ բավարար բացատրություն կա իմ օւկշիս<արհաբարի> շար<աշխատության> ք (եր. 8 հտ. 30—43) և օւլս<լոց> լ<եղվի> տես<ության> ք մեջ (եր. 130—132, 258 թարք, 286 սպես, 275 «որեն»): Բայց այժմ գտնում եմ, որ բառերի տեսակների այս տեսությունը լրիվ անելու համար՝ պետք է մի փոքր խոսել և մակբայի մասին:

Նախ՝ ի՞նչ է նշանակում մակբայ:

Այս տերմինը նշանակում է՝ թրայի վրա: զովոզ, Բայց մակբայները դրվում են և բայի, և ածականի, և նույնիսկ մակբայի վրա, ուստի և այդ մասն բանին: Ես հիմնում են իբրև այնպիսի բառեր, որոնցով որակավորվում կամ ձևափոխվում են (qualifier, modifie) ածականները, բայերը և մակբայներն իրենք: Այս է դրանց դերը:

Գերմաներենում մակբայը կոչվում են Umstandswort—պարագայական բառ: Մի հիշված քերականության մեջ կարդում ենք. «Մակբայը

* Lartue et Fleury, Grammaire, Paris, 1895, եր. 109.

նշանակում է մի բան (смысл), որ կարող է լինել նշանակալի եւ նշանակալի
կամ անանշանակալի բաղադրանքների միջոցով»:

Եւ իմ «Տարր <ակաւ>» քերականութեան, «Աշխ <արհարար>»
ք <աշխարհական>» (հր. 8) և «Հ <այոց>» լ <եզվի>» տ <եսություն>» մեջ
այսպէս եմ սահմանել. «Մակարայր ցույց է տալիս հասկանիչի հատկանիշ
կամ պարագայ: Մույնպէս նաեւ Ա. Պեշկովսկին իր հիշված «Ռուսերենի շա-
րահչութեան» մեջ (հր. 86 հտն.)»:

Որո՞նք են հատկանիշ նշանակող բառերը.— Դրանք են՝ ածականն ու
բայը: Բայը, հարկաւ, միայն հասկանիչ լի ցույց տալիս, այլ նաեւ ուրիշ
նշանակութիւններ ունի. բայի մեջ բայիմաստն է միայն ցույց տալիս հատ-
կանիշ՝ գոյութիւն, գործողութիւն կամ գրութիւն: Ուրեմն երբ ասում ենք,
թե մակարայր նշանակում է հատկանիշի հատկանիշ, այդ միևնույնն է, թե
մակարայր նշանակում է՝ ածականի և բայի—բայիմաստի նկատմամբ—հատ-
կանիշ, ապա նաեւ մակարայր հատկանիշ, ցանի որ մակարայն ինքն էլ հատ-
կանիշի հատկանիշ է ցույց տալիս: Միտա կողմից՝ որովհետեւ ածականն ու
բայիմաստը հատկանիշ են նշանակում, հատկանիշ է նշանակում և մակարայր,
հետևաբար իրենց նշանակութեամբ մի ընդհանուր տեսակ են կազմում՝ ածա-
կանը, բայիմաստը և մակարայր:

«Բայիմաստը», հարկաւ, կարելի է բացանել բայի զեմքից, ժամանա-
կից ու եղանակից և առնել իբրև առանձին բառ: Ուստի, ինչպէս կտեսնենք,
ինչքան էլ բայիմաստը հատկանիշ է նշանակում, բայց և այնպէս «բայը»
բաղորդին ուրույն բառատեսակ է: Հետևաբար միայն ածականն ու մակ-
արայն իրենց նշանակութեամբ կազմում են մի ընդհանուր տեսակ իբրև մա-
կադրակալ բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ, միայն ածականն
առարկայի հատկանիշ է նշանակում, իսկ մակարայր՝ հատկանիշի հատկանիշ»
(«Աշխ <արհարար>» շար <աշխարհական>»», հր. 8):

26. Աստիճանական ու օրակական մակբայներ և ածականի նշանակու-
թեան ու բայիմաստի հետադարձութիւնը:— Բերեմ այստեղ իմ «Հ <այոց>» լ <եզվի>
տ <եսությունից>» հետևյալ հատվածը. «Բնութեան մեջ գոյութիւն ունեն
միայն անհատ առարկաներ, առանձին գործողութիւններ ու հատկութիւն-
ներ, որոնք և մեր գիտողութեանն են ենթարկւում... Հետ հետ առարկաները,
առանձին հատկութիւններն և այլն թշուրջ այնքան շատ են, որ անհնարին է
նրանց ամեն մեկին ջոկ ջոկ առնենք տալ... Մենք կարողանում ենք համե-
մատաբար սակավաթիւ բառերով գրեթե ամեն բանի մասին խոսել, որով-
հետեւ ամեն բան նշանակում է բնութեան մեջ եղած մի հատ եզակի առար-
կա, եզակի գործողութիւն և այլն, այլն միանման առարկաների կամ
գործողութիւնների մի ամբողջ տեսակ» (Հ <այոց>» լ <եզվի>» տ <եսու-
թիւն>»», հր. 21 հտն.):

Օրինակ՝ «Ժառ» բառով կոչւում են և՛ բոլոր ծառերն ընդհանրապէս, և՛
մի հատ առանձին ծառը: Այս արդեն տեսել ենք: Այսպէս և՛ օրինակ, խոտի
բառով կոչւում է թե՛ ընդհանրապէս խոտերու գործողութիւնը, և թե՛ մի եզա-
կան, առանձին խոտերու գործողութիւնը, օրինակ՝ հինց իմ այս լուսնիս
խոտերը: Նույնպէս և օրինակ՝ հոտովեւ բառով կոչւում է այդ բառի նշանա-
կած հատկութիւնը, որակը թե՛ ամեն առարկայի համար և թե՛ առանձնապէս,
դիցուք, այս լուսնիս իմ հոտի եղած վարդի:

Արդեն տեսել ենք, որ անվան վրա գրված որակական ածականով բառի նշանակութիւնն բովանդակութիւնն ընդլայնվում է, կազմվում է մի մասնավոր գաղափար, և բառն ստանում է մի նոր բառի նշանակութիւնը. օրինակ՝ ծառ, ընդհանուր, և տուննի ծառ — տանձենի, մասնավոր գաղափար: Միևնույնն առաջ է գալիս նաև որակական (ոչ բուր) ածականների վրա գրված աստիճանական բովանդակութեամբ (սեփականաներով): Օրինակ՝ «կապույտ թուղթ», «բաց կապույտ թուղթ», «բաց կապույտ թուղթը կապույտ թուղթ է», բայց բաժնն կապույտ թուղթ բաց կապույտ թուղթ չէ: «Բաց կապույտ» գույնը մի մասնավոր տեսակի գույն է և արտահայտում է նույնիսկ իր հատուկ չլուրժ բառով: «Բաց» բառն, ուրեմն, դրվելով սկապույտ ածականի վրա՝ ձևափոխում է նրա նշանակութիւնը, և որակական ածականն իր որոշումով միասին ստանում է մի նոր բառի նշանակութիւնը:

Առնենք մի ուրիշ օրինակ՝ «գեղեցիկ» և «շատ գեղեցիկ»: Դիցուք, «գեղեցկութիւն» միջանակ տալու համար որոշում են «գեղեցիկ կանայք». ապա սրանցից էլ ընդում են «շատ գեղեցիկ կանայք»: Ինչպես որ կանանց մեջ «գեղեցիկ կանայք» կազմում են մի մասնավոր խումբ, նույնպես և «գեղեցիկ կանանց» մեջ «շատ գեղեցիկ կանայք» կազմում են մի նոր մասնավոր ենթախումբ: «Շատ» մակբայն (սեփականն), ուրեմն, դրվելով «գեղեցիկ» ածականի վրա՝ ձևափոխում է նրա նշանակութիւնը և «գեղեցիկ կին» կապակցութիւնն նշանակած մասնավոր գաղափարը մի երկրորդական մասնավոր գաղափարի է վերածում: Ինչպես՝ ծառ, տաննի ծառ — տանձենի, մալայա տաննի ծառ, նույնպես և կին, գեղեցիկ կին, շատ գեղեցիկ կին. մարդ, ծեր մարդ, չափազանց ծեր մարդ — դառած մարդ:

Այսպէս կարող է ձևափոխվել այն բոլոր որակական ածականների նշանակութիւնը, որոնց ցույց տված հատկութիւնը կարող է աստիճան ունենալ, այսինքն՝ ափելի կամ պակաս լինել: Կան որակական ածականներ, որոնց նշանակութիւնը ենթակա չէ այսպիսի ներքին ձևափոխութիւն: Օրինակ՝ «փայտն սեղանն, ճի՞շդ այս ամբողջապէս փայտից է շինված», «արկած, կարծիք չէ ասել՝ ափելի փայտն սեղանն, սպական փայտն սեղանն և այլն:

Աստիճանը, ինչպես վերևում տեսել ենք, արտահայտում է քանակ: Ուստի և իբրև աստիճանական մակբայներ գործածվում են մեծ մասամբ այն անորոշ ածականները, որոնք ցույց են տալիս անորոշ, անհիշող թվի ու քանակի գաղափար՝ շատ, բավական(ի), քիչ, սակավ, նվազ, պակաս, ափելի, չափազանց, անշափ, այնքան, բոլորովին և այլն, նույնպես և խիստ, սաստիկ, հազիվ և ուրիշները: Երբ այդ ֆունկցիոնն բառերով փոխվում է որակական ածականի հատկութիւնն քանակը, այդ դեպքում քանակը փոխվում է որակի և ածականն իր այդ որոշումով (լրացումով) դառնում է արտահայտութիւն մի նոր արկի, որ և երբեմն առանձին բառերով կարող է արտահայտվել:

Առնենք քային: Առնենք դրա համար իբրև օրինակ քայաածականները (դերբայ ածականները), որոնք միևնույն իմաստն ունին, ուստի և միևնույն տիպի լրացումներ են ստանում, ինչ որ քայլ: Դրանք ևս, ինչպես տեսել ենք, ցույց են տալիս առարկայի առդո հատկութիւն, բայց մեծ մասամբ վաղանցիկ: Ուստի և դրանց վրա ևս, երբ քայիմաստը կարող է զանազան աստիճաններով երևան դալ, դրվում են մեծ մասամբ նույն մակբայները, ինչ որ մյուս որակական ածականների վրա, և միևնույն կերպ ընդլայնում են բառի

բաժանակութիւնը: Օրինակ՝ ժարգ, խոսող ժարգ, շատ խոսող-շատախոս (ող), ապակի խոսող—սովակախոս(ող), գրողով ժարգ, շատ գրողոված-բովակադարգ, շափակաձեղ գրողոված մարգ: Միեւնոյն կերպ կարելի է առել՝ խոսել—շատ խոսել (=շատախոսակութիւն անել), այդ ժարգը խոսում է, այս մարգը շատ է խոսում (=շատախոսութիւն է անում):

Այստեղ ևս գերբայեցիորէ և բայի նշանակութիւնը—գերբիւն բայիմաստի նկատմամբ—աղբիւր որոշումներով ներքին հետախոյրարշուն է կրում և դարձաբայ կամ բայն իր այդպիսի մակբայական որոշումներով տեսնում է մի նոր նշանակութիւն. արեմն ցույց է տալիս արիւ Վտուանիշ, առաջ է գտնու-սխտանուս մի մասնակար անտակ՝ ոչառ խոսել—շատախոսել:

Բայականները, հետեւաբար և անորոշ դերբայն ու բայերը, մի մեծ անաղիւթթիւն ունին անտես ածականներին: Մինչ վերջիններին վրա սակա-վաթիվ մակբայներ (սմականականներ) են դրվում, գերբայներ և բայերի հետ կարող են դրվել նաև մեծ թվով օրական անականներ իրեն օրական-կան մակբայ: Օրինակ՝ բարձր խոսող—բարձրախոս(ող), արագ խոսող—արագախոս(ող), ծանր շարժվող—ծանրաշարժ, գեղեցիկ գրող—գեղեցկագիր, նույնպէս՝ բարձր խոսել, ծանր շարժել, դանդաղ քայլել. նա բարձր է խոսում, նա ծանր է շարժվում, նա արագ է գրում: Այսպիսի բառերով որակա-վորվում կամ ձևափոխվում է գերբայների և բայերի—բայիմաստի նկատ-մամբ—ցույց տված նշանակութիւնը, որ է նրանց արտահայտած հասկա-նիշը և երկու բառը միասին նույնպէս ստանում են մի նոր, մասնավոր նշ-շանակութիւն, որ և երբեմն արտահայտվում է մի առանձին բառով, ինչպէս՝ շափագանց արագ քայլել=վազել, փուշ ու մուշ ու շատ խոսել=շաղակրատել և նմանները:

Թե վերևում գրված աստիճանական և որակական մակբայները՝ շատ, գեղեցիկ, բարձր, դանդաղ և այլն ածական են և ցույց են տալիս հատկանիշ-ներ, զանազան որոշումներ, այդ պարզ է: Օրինակ՝ նշանակութիւն ոչ մի տարբերութիւն չկա՝ թարձր խոսք, թարձր խոսվածք և թարձր խոսել, շնա բարձր է խոսում, ինչպէս և բերա արագ շարժվումք, թարագ շարժ-վածքք, բերա արագ շարժվելք, շնա արագ է շարժվումք կապակցութիւն-ների մեջ թարձրք, թարագք բառերի համար: Բայց առաջին երկուսի մեջ թարձրք, թարագք հատկանիշները վերաբերում են զոյականի և ածական են, մյուս երկուսի մեջ՝ նույն թարձրք, թարագք հատկանիշները վերաբերում են նույն արմատներից կազմված դերբայի և բայի ու համարվում են մակբայ:

Երկու դեպքում էլ այդ բառերը նույն դերն են կատարում, այն է ձև-վափոխում են այն բառի նշանակութիւնը, որի վրա դրվում են:

Եթե միայն այդ կարգի բառերով—անորոշ քանակական և որակական ածականներով ձևափոխվելու ածականների և բայիմաստի նշանակած հատ-կանիշը, այն ժամանակ մակբայն արդի հայերենում կլինեն ածականների մի կիրառութիւն միայն,—ածականների կիրառութիւն իբրև մակածական և մակբայ, ինչպէս գրված է իմ ԵԱշի<արհաբարի> ջեր<անկանութիւն> մեջ: Բայց կան նաև թարք, պլես և որոնք մասերով բարդված բառերը, որոնք ավելի իբրև մակբայ են գործածվում և նույնպէս ձևափոխում են ածա-կանի ու բայիմաստի նշանակած հատկանիշը. օրինակ՝ ֆիզիկական առողջու-թիւն, բայց ֆիզիկապէս առողջ, ֆիզիկապէս առողջանալ, նշարյալական վե-րաբերմունք. բայց հղարարաբար վերաբերվել: Բայց և այնպէս այս կարգի

բառերն ևս կարող են իբրև մի արժանի դրվել բայական անունների վրա, ինչպէս՝ փոխանակ ասելու՝ «աստիճանական» դարգացում»՝ ասում են՝ «աստիճանաբար» զարգացում, «եղբայրաբար» վերաբերմունք, այսպէս և ուրիշ մակրայններ՝ երկուտեք համաձայնութիւն, ներքուստ դրդում, հետզհետե ամրացում և նմանները (ՏԵՍ՝ «Աշխարհաբարի» շար«աշխատութիւն»», եր. 43 հտն.)։

Վերջին 30—40 տարիների ընթացքում, օտար լեզուների ազդեցութեան տակ, շարունակ կազմվում են նորանոր մակրայններ՝ որակական ածականների վերջից ավելացնելով «որոնք», ինչպէս՝ «պատարոնք», «սարսափելիորոնք», «անպայմանորոնք» և նմանները։ Այսպիսի նոր կազմութիւններով, որոնք մեծ մասամբ ավելորդ են, բնականաբար փոխվում է մեր լեզվի հատկութիւնը որակական մակրայնների նկատմամբ։ Միևնույն Թրոքլուստոսի անկողնից դերն են կատարում, սակայն, նրանք, որ խոսելիս կամ դրելիս գործ են ածում այսպիսի բաներ՝ «արագորեն խոսել», «զանգաղորեն ման գալ», «անպայմանորեն կգա» և նմանները, փոխանակ հայերեն ասելու՝ արագ խոսել, զանգաղ ման գալ, անպայման կգա։

27. Քանակական մակրայնները, որոնց թիվը մեծ է, դրվելով բայի վրա, լին և՛ անփոխում բայիմաստի նշանակած հատկանիշը, այլ ցույց են տալիս նույն գործողութեան կրկնութիւն։ Դրանց այս դերը համապատասխան է թվական ածականների կատարած դերին, և իրենց հենց՝ թվականներ են։ Օրինակ՝ տասը լսեիր՝ մին կտիրի, նույն է թե տասն անգամ լսեիր, մի անգամ կտիրի։ Այնպէս և հաճախ—շատ անգամ, երկիցս—երկիցս անգամ, երկու անգամ, բազմիցս—բազմիցս անգամ, շատ անգամ։ Նույնը պետք է նշելուս ունենալ նաև անորոշ քանակական ածականների համար, երբ դրանք պահում են իրենց քանակական իմաստը։ Օրինակ՝ նա շատ խոսեց իր հըրոր հետ, բայց բան գլուխ չեկալ, —նշանակում է՝ նա շատ անգամ, կամ երկար ժամանակ խոսեց, —մինչդեռ քիչ առաջ դրված օրինակների մէջ շատ խոսելը նշանակում է զատառիտութիւն անելը։

28. Ժամանակական և տեղական մակրայնները։—Մատերիալիստական փոխոստիակութեան կարևոր կատեգորիաներ են ոչ միայն որակն ու քանակը, այլև ժամանակն ու տարածութիւնը, որոնք զգոյի արմատական պայմաններն են (Յոյերբախ), այլև պատճառն ու հետևանքը, որ իրիցը դառնում են միմյանց վերաբերմամբ։ Ինչպէս պատճառն ու հետևանքը, նույնպէս և ժամանակն ու տեղի տարածութիւնը երևան են դալիս առարկաների օբյեկտիվ հարաբերութեան, նրանց փոխադարձ կապի, նրանց շարժման մէջ։

Լեզուն լինելով օբյեկտիվ իրականութեան պատկերացումների արտահայտիչ, բնականաբար իր մէջ պիտի արտացոլեր նաև ժամանակն ու տեղի տարածութիւնը, ինչպէս և պատճառն ու հետևանքը։ Այստեղ ծագում են ժամանակական և տեղական մակրայնները։ Սրանցով ներքին փոփոխութիւն չի ենթարկվում, չի ձևափոխվում բայիմաստը, գործողութիւնը, այլ միայն ցույց են տրվում առտաքին պարագաները, որոնց մէջ կա, տեղի է ունենում գործողութիւնը, եղելութիւնը։

Հայերենում ժամանակի և տեղի կատեգորիաները կամ պարագաներն արտահայտվում են սովորաբար գոյականներով («Աշխարհ»՝ «աշխատութիւն» շար«աշխատութիւն»», եր. 31 հտն.)։ Կան, սակայն, մի շարք բառեր, տեղի անուններ, որոնք դրվելով բայերի վրա, և՛ անփոխում են նրանց նշանակու-

թյունը. դրանցով կազմվում են մեր հարադրական քայերը. որոնք իրենց հարադրի հետ միասին սմեր լեզվական գրադրամով ըմբռնում ենք արդեն իրեն մի միություն և մեկ քառս. ճշմարտության օտար լեզուների նախարայնորով կազմված կամ նախդրավոր քայերին. ինչպես մե՛ Գորս գալ, գորս ընկնել, մեջ քաշել, ետ գնալ, վեր առնել, առաջ անցնել, վրա տալ և այլն (սե՛ւ ալոց> լ<եզվի> տ<եսություն>», եր. 171 հտն.)։ Սրբ ալս կարգի բառերը մի կողմ ենք դնում,—և պետք է մի կողմ դնել,—այն մասնա-նակ մեռւմ են դրաբարից փոխառած ստկավաթիվ մակբայներ, որոնք մաս-նամբ քաղաքած հոլովական ձևեր են։ Դրանք են՝ երբեմն, երբեք, արդեն, դեռ, այսուհետև, այնուհետև, նախ, ապա, աստ, անդ, ուրեք, ամենուրեք և այլն։

29. Եղանակական մակբայները։—Այս բառերն են գրաբարից փոխառու-թյուն են և ցույց են տալիս խոսվածքի եղանակը, այսինքն խոսողի վերա-րոնմունքը խոսքի բովանդակության նկատմամբ։ Դրանք են՝ անշուշտ, հար-կավ, իհարկն, հավաստյալ, գուցե, թերևս, միթե, արդոք։—Այս կարգի բա-ռերի մեջ են դրվում իբրև բացասական մակբայներ նաև ոչ, չը, մի բառերը, որոնցով ժխտվում է խոսքի բովանդակությունը։

Նս այս կարգի բառերի մասին չեմ ուզում ալստեղ կանգ առնել, որով-հետև ուրիշ տեղ ինչպես մեր քայերի եղանակների, նույնպես և դրանց մա-սին մանրամասն գրած և տպագրւոթ ունեմ։

Այժմ տեսնենք, թե ինչեր են ասում։



Ձ ե Վ Շ

30. «Սոսկ ձև», «ֆորմալիզմ» և ֆաղ. Սեակի դատելու եղանակը։—Ո՞վ ասաց, թե Արեղյանի քերականությունը «ֆորմալիստական» է—Ա. Ղարիբ-յանն ասաց այդ, Սեակը կրկնեց և ապիրանտ Գր. Հակոբյանը նախանձելով նրանց փառքին՝ հետևեց նրանց, և Արեղյանի քերականությունը դարձավ ոչ միայն «ֆորմալիստական», այլ նաև սմետաֆիզիկական, սոցիալատիկա-կան, ճշակագիտական և այլ մահացու մեղքերի տակ ժանրա-բեռնված։

Ապացույց։—Քաղ. Սեակը, դարիքյանական քերականության ջատագովը, հոգացել է դրա համար։ Տեսնենք, թե ինչ են նրա, հետեւարար և Ա. Ղարիբ-յանի ապացույցները։

Նա ձեռք տակ ունեցել է իմ մի գրքույկը, «Աշխարհաբարի հոլովները»—քերականական խնդիրները վերնագրով, տպված 1908 թ. Վաղարշապատում, Դա ոչ թե քերականություն է, այլ մի ուսումնասիրություն մեր հոլովների մասին։

1) Քաղ. Սեակն իրեն ապացույց այն բանի, թե Արեղյանի քերականու-թյունները «ֆորմալիստական» են, իմ այդ ուսումնասիրության 4—5 էջից բերում է հետևյալ կտորը. «Ի՞նչ է հոլով ասածը.—եթե ոչ հոլովների բառերի զանազան ձևերը, որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորու-թյուններով...»։

Այստեղ կա մի մեծ կեղծիք, նեղություն կրենք արտագրելու իմ հիշված գրքից, ինչ որ բարեհաճել է դուրս ձգել և մեջ լրերել քաղ. Սեակը, օտղը դնելով երեք կետ (...):

«ԻՆՆ» է հուլով ասածը, — եթե ոչ հուլովելի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ հուլովական վերապատրուկություններով, Այդ ձև-վերջ ցույց են տալիս զանազան կախման հաբարերություններ՝ տեղի, ժա-մանակի, պատճառի և այլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի արիշ բառի հետ: Արդ, հուլովների մասին սովորեցնել կնշանակե նրկու բան սովորեցնել. նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հուլով կարող է ունենալ և արոնք են այդ ձևերը, և նրկորդը՝ թե ամեն ձև կամ հուլով ինչպիսի և քանի տեսակ կախման հաբարերություն կհարդ է ցույց տալ խոսքի կապակցություն մեջ. ուրիշ խոսքով՝ որոնք են այս կամ այն հուլովի գործածությունները. որովհետև ամեն հուլով միայն մի տեսակ հաբարերություն չի ցույց տալիս, այլ մի քանի, երբեմն և շատ:

Տեսնենք, թե ինչ աշխակապություն է կատարված.

ա) Քաղ. Սևակը իր բերած ցիտուսի միջից դուրս է ձգել փակագծերի մեջ դրված գերմաներեն Form բառը, նվ նա հասկացել է, թե ինչ է անում, ոչև և «ձևաբանություն» բառերը ես նոր մտցրել էի 1906 թ. Վաղարշապատում տպված իմ «Աշխարհաբարի քերականության» մեջ. նույնիսկ «չնշված» կարծվածներն այդ ժամանակ ընդվզում էին «ձև» բառի այդ նշանակության և «ձևաբանություն» բառի դեմ, որ հիմա Ա. Ղաթիբյանն անգամ գործածում է, երևի, այն պատճառով, որ Շապիրոն էլ է գործածել «մորֆոլոգիա», որ է «ձևաբանություն»: Արդ, փակագծերի մեջ դրված այդ գերմաներեն բառով սկզբից պարզ ցույց է տրված, թե հայերեն «ձև» բառն իմ աշխատության մեջ պետք է այն քերականական իմաստով հասկանալ, ինչ որ գերմանե-րենում ունի համապատասխան քերականական բառը: Իսկ գերմաներենում, ինչպես և ուրիշ լեզուների մեջ, այդ քերականական «գործ» բառը, «սուսկ» ձև չի ցույց տալիս, լոկ հնչյուն առանց նշանակության: Այս չէր կարող չիմանալ քաղ. Սևակը, որ իրեն լեզվաբան է համարում, նրա հետ և նրա թևարկյալ Ա. Ղաթիբյանը:

բ) Քաղ. Սևակը բարեհաճել է դուրս ձգել իր բերած ցիտուսի շարունա-կությունն էլ «վերապատրուկություններով» բառից հետո: Ինչո՞ւ է նա այդպես վարվել:—Պատասխանը պարզ է. թող ընթերցողն ուշադրություն դարձնի հատկապես վերելի ընդգծած մասերին, և իսկույն կհասկանա, որ քաղ. Սե-վակն, այդ մեջ բերելուց հետո չէր կարող ասել, թե իբրև Արեղյանը հուլովը համարում է «սոսկ» ձև, այսինքն աննշանակ հնչյուններ. հետևաբար նա «գործալիստ» է հուլովական ձևերի նկատմամբ: Զէ՛ որ ամեն ընթերցող էլ իսկույն կտեսնե, որ այդ հոգվածագիրը ճշմարտություն չի ասում, քայց նա «իմաստուն» ու համարձակ է. դիտե, որ զգվար թե շատ ընթերցողներ կգտնվեն, որ 1908 թ. տպված այդ գրքույկն ունենալին և, կասկածելով հոգվածագրի ուղղամտության վրա, բաց անելին ցույց տրված էջը և ստու-գեն... Իսկ եթե այդպիսի մեկը երևան գար, զգվար չէր լինի նրան լռեցնելը, ինչպես լռեցրին քաղ. Հար. Պետրոսյանին՝ և նշ. Ալլահիբեդյանին, «Կուլտ. ֆրոնտի» մեջ լուպագրելով նրանց հոգվածը, որով նրանք բաց էին անում քաղ. Սևակի այդ կեղծիքը:

Գիտակցաբար՝ է արդյոք այդպես վարվել քաղ. Սևակը:—Անպայման:

Ընկ. Արիսյանի մոտ նշած ժողովի մեջ, որի մասին հիշեցի վերևում, նա իր այդ ուղած այդ փոքրիկ հատվածը կարգաց իմ հիշյալ ուսումնասիրությու-նից հուլովների մասին և նվրականքից, թե իբրև Արեղյանի քերականություն-

ենքն և նշանակել նրա բնույթը լիզվի տեսությունն ալ և նշանակալի տեսությունն ևն։ Եւ նրան ալնակ տարրկեցի, թէ այդպիսի բան չկա և չէր կարող լինել իմ «Աշխարհ»-ը» Գրողներն ուսումնասիրութեան մեջ որովհետեւ հոլովներն ենք «ենք և միայն նրանով, որ նշանակութուն ունի, ինչպես որ բարձր քառուս է միայն նրանով, որ նշանակութուն ունի և ոչ թե լոկ հնչուաններ Դ. Օթսկի ձեռն առած քառեր, իբրեւ լոկ հնչուան, գոյութիւն լուսնի և ի կարող գոյութիւն ունենալ։ Դա մի մեծ անհեթեթութիւնն է։

Քաղ. Սեակը չէր բարձրաճել իր հետ բերել իմ «Աշխ»-ը» Գրողներն որքույկը, որպէսզի անմիջապէս քաց անեի մի քանի էջեր և ակնհայտ ցույց տայի, որ նա ճշմարտութիւնը չի ասում, Բայց գտնվից իմ «Հ»-ը» <«Լիզվի» տեսությունը» և անմիջապէս դրանից կարգացի մի կտոր, ցույց տալով, որ նրա ասածը մի կեղծիք է։

Եւ ալն ժամանակ կաթում էի, թե քաղ. Սեակը թշուրիմացութեւ է ինչ այդպիսի անմտութիւն վերագրում. ուստի նիստը փակվելուց հետո՝ նրան ասացի, որ նա գնա մեկ էլ կարդա իմ «Աշխ»-ը» Գրողներն և կտեսնի, որ այդպիսի բան չկա։

Բայց, ավաղ, ես սխալվել էի։ Նա մինչև անգամ տպագրել տվալ այդ անմտութիւնը։ Tant pis pour lui—Ավելի վատ իրեն համար,—ասում են ֆրանսիացիներն այսպիսի դեպքերում։

Այսպէս, դասախոս Սեակը դեռ չգիտե, որ գիտութիւնը միայն ճշմարտութիւն է սիրում, և նա ինքը՝ գիտական բաների մասին գրելով հանգրծ՝ լի սիրում ճշմարտութիւնը։

Ուրիշ ապացուցներ եւ ուզում, որ ես հոլովները ասուկ ձեռն չեմ համարել,—համեմեք նույն «Աշխարհ»-ը Գրողներն ուսումնասիրութիւնից, «Եւ թերակտնները տարբերելով հոլովի կազմութիւնը նրա նշանակութիւնից կամ կիրառութիւնից, տեսնում են, որ մենք իսկապէս զատ կուսական հոլով լուսննք (եր. 9)։ «Եւ ինչու է հոլովը, կրկնում ենք, կարող է դործածվել զանազան շարահայտական (սինտաքսիական) ճարտարութիւններ ցույց տալու համար (եր. 13)։ «Աշխարհը... պիտի սովորի հոլովներին՝ խոսքի մեջ կատարած պաշտոնը (եր. 16)։—և ուրիշ շատ տեղեր, «Հոլովների անուններն արդեն, բացի ուղղականից, ցույց են տալիս իրենց հիմնական նշանակութիւնն ու դործածութիւնը (եր. 42)։ Ապա եր. 43—68 մանրամասն բացատրված է մեր բոլոր հոլովների նշանակութիւնները։ Այսպէս և շատ ուրիշ տեղերում հիշված է հոլովների դործածութիւնն իբրեւ նշանակաւ, ասորոգայ, խնդիրներ և այլն։

Բերեմ արդոց օրինակներ և իմ մի ուրիշ ուսումնասիրութիւնից, «Հայացական հոլովը մեր աշխարհագրութեւ, որ տպւած է հաշորդ 1903 թ., որ և ծանոթ է քաղ. Սեակին, քանի որ նա իր հոլովածի մեջ հիշում է այդ գիրքը։ Բայց ի՞նչը բերեմ, քանի որ այդ ուսումնասիրութիւնը լի ու լի է հոլովի նշանակութիւն, դրա պաշտոնի, ֆունկցիայի բացատրութիւններով և ամբողջական ուղղված քաղ. Սեակի հմտն մեկի մի հոլովածի դեմ։

Այսպէս ուրեմն, քաղ. Սեակը լուր է այս ամենի մասին. իր բերած ցիտատի միջից դուրս է ձգում այն մեծ հատվածը, որի մեջ բացատրված է թե հոլովական ձեւերը զանազան հարաբերութիւններն են ցույց տալիս և այլն։

Դա թույլատրված չէ ոչ մեկի համար և ավելի ևս որեւէ գիտական աշխատավորի համար։ Այդպիսի եղանակով (կամ, ինչպէս այժմ ասում են, պարիոս

մով՝), ամեն րան կարելի է ասպացուցել, ուզում էք օրինակ, Համեցեք. ասենք այս խոսքը. «Սեակը և Ա. Ղարթլյանը ֆորմալիստ են անվանում Արեղյանին»։ Շնչեք դրա միջից ասելանում Արեղյանին՝ բառերը, և կմնա «Սեակը և Ա. Ղարթլյանը ֆորմալիստ են»։

Ահա թե ինչ։

2) Անցնենք քաղ. Սեակի բերած երկրորդ ցիտատին, Այստեղ էլ գիտե՞ք ինչ է արել նա—Շատ փոքր, անզգալի մի րան, Բնագրի «ճշգրտվելը» բառը նա դարձրել է «ճշգրտվել»։ Եվ այդ անելուց հետո՝ խորհրտաբար ընդգծում ենք է արել, որպեսզի ընթերցողի հասուկ ուշադրությունը հրավիրի Արեղյանի կարծեցյալ «ֆորմալիզմի» վրա, թե Արեղյանը «Հոլով» ասելով իր այն է հասկանում, ինչ որ ինքն ընդգծել է։

Ահա քաղ. Սեակի այդ ցիտատը։

«Այսպես ուրեմն տարրական քերականությամբ մայրենի լեզվի ՀՈՒՈՎԸ սովորեցնել, կնշանակի միայն ուշադրության դարձնել Կալ Բոլոր ձևերի, կամ ինչպես սովորաբար ասում են, փափախությունների վրա, որ կարող են ունենալ ճշգրտվելի բառերը»։

Բնագրի մեջ այսպես է. «Այսպես ուրեմն մի Տարրական քերականությամբ մայրենի լեզվի ՀՈՒՈՎԸՆԸ սովորեցնել և այլն, Թիւ հետո էլ «Հոլովում», «Հոլովել»։

Բայց, բարեկամներ, «Հոլով» նշանակում է՝ падѣж, ֆրանս. cas, գերմ. Fall, իսկ «Հոլովել» նշանակում է՝ падеж, склонять, склонение, ֆրանս. décliner, գերմ. deklinieren, եվ կարծում էք, թե լեզվի դասախոս Սեակն այդ տարբերությունը չգիտե՞ր, Թղթախաղի ժամանակ անգամ արգելված է մի կարտի տեղ անզգալի կերպով անց կացնել մի ուրիշ կարտ, իսկ մեր հոգվածագիրն ամենայն հանգստությամբ այդ անում է, որովհետև նրան այդ հարկավոր է։

3) Բերեմ քաղ. Սեակի հետևյալ դատողությունը. «Ժիշտ է, պրոֆ. Ի. Արեղյանն իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ ամենայն մեղադրանքները տալիս է ճշգրտվելի կիրառական նշանակությունը...»։

Ուրեմն քաղ. Սեակն ինքն ստիպված է խոստովանել այն, որ Արեղյանը Հոլովը ստույգ ձև չի համարել, Զե՞ որ այս նախադասությամբ նա ինքը բաց է անում իր նախորդ գրածների կեղծիքը։ Այդ նրա փուլքը չէ՞ նա հանգիստ է դրա համար, և ամենայն հանգստությամբ կարողանում է մի թրայն շաղկապով ավելացնել մի նոր կեղծիք։

«Ժիշտ է, պրոֆ. Ի. Արեղյանն իր «Աշխարհաբարի» շարահյուսության» մեջ ամենայն մանրամասնությամբ տալիս է Հոլովների կիրառական նշանակությունը, բայց հենց այն հանգամանքը, որ ձեռքարկության մեջ ձեռքով արվածությունից տեղատ է վերցնում և տեղում է իբրև ՍՈՍԿ Զեվ, ցույց է տալիս նրա ֆորմալիստական ու ճակատագրական մոտեցումը ձեռքի ու բովանդակության հակադիր միասնությանը քերականության մեջ։ Այս ձևով Հոլովների արտահայտած իմաստը, նրանց ֆունկցիոնալ արժեքները է ձևաբանության մեջ և Հոլովը դիտվում է իբրև սոսկ ձեռք»։

Ճշմարիտ է ասում գոնե այս դեպքում քաղ. Սեակը։—Ոչ, նա դարձյալ կեղծում է։

Իմ «Աշխարհաբարի քերականության» մեջ (եր. 4) կկարդաք, «Թերականությունն ունի երեք մաս. հնարանություն, բառագիտություն և շարա-

Հյուսիսային: Քայք: Ինչպես ցանկից և բուն նյութից կարելի է տեսնել, այդ տասարեկ հատերն իրար մեջ կա միայն՝ սևաաչին մաս: Եւ արտադրութեւ: Վերկորոյ մաս: Բաւազրութեան: Այս երկորոյ մասը բաժանուած է երեք հատվածներէ՝ սևաաչին հատված: Բաւերի իմաստն և անտակներն, Վերկորոյ հատված: Բաւազրութեան: Վերկորոյ հատված: Քիչամբ: որի մեջ մտնում են արտադրութեւ և ստորվում: Ետահյուսութեան լիւր: Այդ սինգումն աւել է անարտադրութեւ: Եւ այդ սինգորոյ հատվածն սկզբում զննել (տր. 16) թերթումը բացառական չէ՝ առանձին տողի մեջ տպված է, «Բեւաչին ուսումը կ'ըլլում է ձեւարանութեւ» (այսպէս ընդգծված): Քայք առանց դրան էլ՝ ամեն քերական այդ կ'ասկանա, բացի քաղ. Սեակից: Եւ միջին տիւրքումը, այսինքն՝ թիւնարհումն ու ստորվումը կարող են անարտադրութեւ լինել:

Կարգանք և այդ գրքի սևաաչիններից մի կտոր (հր. 7.): Այստեղ նախ՝ գրված է, թե տասարեկ մասը՝ Հնարանութեւնը՝ որ դասարանների համար է սահմանված, ապա՝ հետևյալը. «Իսկ երկորոյ մասը՝ բաւազրութեւն, որի մեջ բաւարար շափով ղրված է և շարանդութեւնից, որոշված է երկդաս- յան դպրոցների լորորոյ և հինգերորդ բաժանմունքների համար... Այս քե- րականութեւն՝ իբրև երկորոյ մաս՝ կ'աշխատի Այսաբնարարի շարանդութե- ւնը (սինտաքսիս)»... որ արդեն պատրաստ է տպագրութեւն և հորինված է դպրոցների վերին դասարանների համար: Այդ դասագիրքը լույս չտեսավ: 1912 թ. հրատարակվածն այդ չէ:

Հիմա տեսնենք, թե արդյոք Հնարանութեւն է ասում քաղ. Սեակը, թե իբր Արեւելյանը՝ հոլովների արտահայտած իմաստը, նրանց ֆունկցիոն արհամարհում է և անարանութեւն մեղք: Քայք դրանից առաջ տեսնենք, թե տոլ-ֆորմալիստա Շապիրոն, այդ գծովածն քերականը, որքան տեղ է տալիս հոլովների ֆունկցիային (1934 թվի հրատարակութեւն) իր Քերականու- թեւն առաջին մասի ձեւարանութեւն մեղք, որ կ'աշխատի է իբրև «Ետահյուսութեւն վերջնականը դպրոցների» համար: Եւ բաւազրի եւ թարգմանում, վատ հայե- րեն է, քայք կ'ասկացվի:

ա) Եւ թե անթանկ արտահայտված է գոյականով (ստորակարգ հոլովով), իսկ ստորոգյալը՝ ներկա ժամանակի բայով, այն ժամանակ ստորոգյալը դրվում է նույն թվով, ինչ որ և ենթական (եր. 13):—Ուրեմն խոսվում է ենթականի և բայի համաձայնութեւն մասին և փականգների մեջ կոդմանակի կերպով միայն հիշվում է ենթականի ուղղական հոլովը:

բ) «Այն գոյականները, որոնք պարզաբանող քանոն են, կարող են գրվել զանազան հոլովներով»: Ապա բերվում են օրինակներ՝ հայցականի, երբ կրող առարկա է, գործիականի, երբ գործիք է ցույց տալիս, և զեականի, երբ պատկանելութեւն է ցույց տալիս (18 հտն.):

գ) «Գոյականները, խոսքի մեջ կ'աշխատի ուրիշ բաների հետ, փոխում են իրենց վերջավորութեւններն ըստ հոլովների... Ի՞նչ քանի դեպքերում գո- յականի կտպը միշտ բառի ետ արտահայտվում է միայն հոլովի միջո- ցով...» (եր. 21):

դ) Արական սեռի գոյականների սեռականն ունի երեք -y, -jo վերջա- վորութեւնները, որոնք պատահում են բանականութեւն ու մտնելականութեւն (եր. 25):

ն) «Արական սեռի շատ գոյականներ եղանի թվի **предложный հոլովի համար**, **на, в նախդիրներից հետո**, բացի **առվորական** - **«վերջավորութունից»** ունին նաև - **у, -ю վերջավորությունը շեջաղած (на лугу, на краю, в лесу, в краю):** Предложный հոլովի համար այսպիսի վերջավորությամբ գոյականները ցույց են տալիս գործողւթյան տեղը (հր. 25):

Եվ ուրիշ ոչինչ:

Հիմա տեսնենք, թե իմ «Աշխարհաբարի ցիրականությամբ, թառապի-տությունն մասի թթնմանն» = Անաբանության մեջ ո՞րքան տեղ է արված հոլովների նշանակությանն ու պաշտոնին: «Հոլովումն» այդ գրքի մեջ բաշատրված է հր. 134—161: Արտագրենք մի քանի կադրեր:

Հ Ա Ո Վ Ն Ե Ր

«295. Հոլով ասվում են գոյականի այն ձևերը, որոնք ցույց են տալիս, թե գոյականը խոսքի մեջ ինչպիսի լրացում է դառնում մի ուրիշ բառի, կամ իբրև խնդիր ինչպիսի կախում ունի լուր խնդրառու բառից...

Ամեն հոլով նայելով տեղին՝ խոսքի մեջ մի քանի տեսակ կախում կարող է ցույց տալ, կամ մի քանի տեսակի պաշտոն վարել: Օրինակ՝ չուր չկա: Նա չուր խմեց: Առաջին խոսքի մեջ չուր բառն ենթակա է, իսկ երկրորդի մեջ նույն բառը նույն ձևով խնդիր է:

Հոլովներն իրենց վերջավորությամբ՝ խոսքի մեջ ճիշտ նույն պաշտոնն են կատարում, ինչ որ կապերը, այսինքն խնդիրները կապում են իրենց խնդրառուի հետ (§§ 151, 152). ուստի և հաճախ հոլովներն ու կապերը կամ կապական խոսքերը փոխանակում են իրար: Օրինակ՝ Անեծքն անիծողին կդառնա նույն է թե՛ Անեծքը դեպի անիծողը կդառնա:

Ուղղակի եղովը լինում է կոչական անուն, ենթակա և խնդիր. իսկ թեք հոլովները լինում են միայն խնդիր՝ առարկայական կամ պարագայական իմաստով (§ 144):

297. Կոչական անվան և ենթականի համար պետք է իմանալ.

1. Կոչական անունը գրվում է միայն ուղղական հոլովով, Օրինակ՝ Կուժ, քեզ ասեմ. Կույա՝ դու լսիր (§§ 172—175):

2. Ենթակոն գրվում է միայն ուղղական հոլովով, եղանկի բայի հետ եղանկի ուղղական, հոգնակի բայի հետ հոգնակի ուղղական: Օրինակ՝ Թուռնը թռչում է: Թուռնները թռչում են:

Ենթական լրացում է բայի դեմքի, որից անբաժան է և դեմքի թիվը. ուստի ենթական և բայը դեմքով ու թվով ճամաձայն են գրվում...:

298. Ուղղական խնդիրները նայելով իրենց իմաստին լինում են.

1. Կոզվճակի ենթակայական խնդիր, օրինակ՝ Սայլը շրջվելուց հետո ճանապարհ ցույց տվող շատ կլինի:

2. Ստորգայլ, որ գրվելով եմ (լինիմ) բայի հետ, ցույց է տալիս ենթականայի ինչ, ինչ բան լինելը: Օրինակ՝ չալլամը բռնու՜մ է:

3. Ուղիղ խնդիր կամ կողո առարկա, որ իր վրա կրում է ենթականի գործողությունը, այսինքն ներգործվում, ազդվում է, կամ առաջ է գալիս ենթականի գործողությունից: Օրինակ՝ Ամեն չուր գեղան լի բերիլ, Երեխան պատռեց գիւրքը: Անչուր ջրաղացն ալլուր լի աղա:

299. Տրական եղովը ցույց է տալիս զլխավորապես այն առարկան, որին

մի բան որովում, մատուցվում է, կամ մոտեցվում, ընծայվում է, վերա-
գրվում, վերաբերում, պատկանում է: Օրինակ՝ նա հաց տվավ մարտին:
Լինե՞լ մոտեցանք Տիգրանին: Այս երկը վերագրվում է Խոբեմացուն:

Տրամա հոգովը սեռական է կալվում, երբ խնդիր է լինում մի անվան և
որոշում է. թե անվան ցույց տված առարկան ում կամ ինչ է ընծայվում,
վերագրվում, վերաբերում կամ պատկանում, Օրինակ՝ հացի խնդիր նշանա-
կում է մի խնդիր, որ վերաբերում է հացի, հացի վերաբերում խնդիր վանքի
կալված նշանակում է մի կալված, որ վերաբերում, պատկանում է մի վանքի,
վանքի պատկանած կալված:

300. Բացառական հոլովը ցույց է տալիս գլխավորական ախ առարկան
կամ սեռը, որից մի բան որ ցույց է առնվում, այսինքն առնվում, հետև-
յալ է: Օրինակ՝ նա սեղանից (հետագա) նա գլխավորաց ցորեն գին: նա
դուռն դուռ է ընկել:

Հոլովական վերջավորություններն են՝ նայելով բառին և ածին՝ ից,
ուց, և:

301. Գործիական հոլովը ցույց է տալիս գլխավորական ախ գործիքը,
որով մի բան լինում է. կամ աչն անձը կամ իրը, որի միջոցով մի բան կա-
տարվում է: Օրինակ՝ բռնվ չկտրածը հացով կկտրվի:

Հոլովական վերջավորությունն է ով (երթման բ):

302. Ներգոյական հոլովը ցույց է տալիս աչն տեղը կամ առարկան, որի
մեջ կամ ներսը մի բան է՝, կամ լինում է: Օրինակ՝ նա քաղաքում է: Այս
բանը կատարվեց գյուղում:

Հոլովական վերջավորությունն է ում:

Կալ ուղադիր եղեք: Այս ընդորը ձեռքանություն մեջ, և այս ամենից
հետո միայն գրված են անունների ու գերանունների հոլովման համար հա-
յացույցներ—պարադիգմաներ ու բացատրություններ:

Արտագրենք մի կտոր ևս (եր. 160—161):

330. Գերանունների տրական հոլովի համար պիտի նկատի ունենալ,
որ առաջին ձևը՝ իմ, քո (ժողովրդ. քու), մեր, ձեր, իր կամ յուր (ժողովրդ.
իրա) սրա, դրա, նրա (այլև գրաբար՝ ո՛յր, փոխ. ո՞ւմ) գործ են ածվում իրեն
սեռական, այսինքն իրեն անվան խնդիր, ինչպես՝ իմ գիրքը, քո գիրքը, յուր
գիրքը, մեր գիրքը, ձեր գիրքը, նրա գիրքը, սրա գիրքը, դրա գիրքը, իսկ
մյուս ձևերը՝ ինձ, քեզ և այլն. լինում են խնդիր բայի կամ ածականի. ինչ-
պես՝ ինձ մոտեցավ. քեզ հասավ. նրան ժանեթ է:

Արենյան աշխարհաբարում կրող առարկան (§ 298, 3) երբ անձի անուն
է և հոգ ունի, ուղղական հոլովի տեղ գրվում է սովորաբար տրական հոլո-
վով. ինչպես՝ Ես տանք մտադ չեմ տեսել. բայց ևս տանն ախ մտադուն չեմ
տեսել, այլ Տիգրանին եմ տեսել: Նույն ձևով և գերանուններն երբ կրող
առարկա են, գրվում են տրական՝ ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ, իրենց, սրան
դրան, նրան, սրանց, միմյանց, իրարու (իրար). ում, այլև որին, որոնց (երբ
որ գրվում է անձի անվան տեղ. տե՛ս § 324, 2). օրինակ՝ Գուր ո՞ւմ տեսար:
Քեզ տեսա: Այն աշակերտը, ուրիշ դու տեսել ես...

Այս, այդ, այն ցուցականները գործ են ածվում իրի և վերացական ան-
վան տեղ, ուստի և երբ կրող առարկա են, գրվում են միշտ ուղղական հոլո-
վով, ինչպես՝ ես այդ չգիտեմ. ես այն չեմ տեսել:

Միայն է իրի և վերացական անվան համար իրեն կրող առարկա գործա-
ծել տրական՝ սրան, դրան, նրան և այլն. և տեսել, օրինակ, գրթի համար՝

նս նրան չիմ կարողացել, փոխանակ առելու՝ ես այն (այս, այդ, սա, դա) չեմ կարողացել:

Նվ վերջապես հռոմվման վերջում (եր. 163) դրված են քերականական վերլուծության համար ըրտ օրինակներ, որոնցից առաջինն է ակնշնորհք մարդու լեզուն երկայն կլինի: Արա վերլուծության մեջ է միշտ այլոց կկարգաք. Մարդու—Անուն հասարակ, հզակի սեռական. խնդիր լեզուն բառք. Եկզուն—Անուն հասարակ, եզակի ուղղական, հեթոկտ կլինի բայի: Այսպես և մյուս օրինակների մեջ պատահած հռոմվների ու խոսքի մեջ նրանց կատարած ֆունկցիայի մասին:

Հիմա հարց, Ձեռքանության մեջ ո՞վ է ավելի մեծ տեղ տվել հռոմվների ֆունկցիային, Շապիրոն, այն էլ 1934 թ., երբ նա, —ինչպես քաղ. Սեակն է ասում, —Համկոմիտուի ԿԿ-ի հայտնի որոշումներից հետո Եկարողացավ վերանայել իր ֆորմալիստական դրույթները, թե՛ Արեգյանը 1906 թ., երբ մեր դպրոցների համար նույնիսկ ուսման ծրագրի չկար: Բայց չարունակենք:

Էջմիածինը, որի իշխանությանն էին ենթարկվում մեր հայկական դպրոցները, իմ Եկխ<արհարարի> քեր<ականության> և տպագրությունից հետո հրատարակեց Եկարողացան հախագիծ, որի մեջ նաև Հայերենի քերականության համար ծրագիր, որ համապատասխան չէր իմ հիշված քերականությանը: Ստորին դասարանների համար ծրագրի մեջ դրված էր միայն աստուգարանություն: Այդ պատճառով ես հաշորդ 1907 թվին կազմեցի և հրատարակեցի իմ Եկարական քերականությունը, ինչպես Առաջարանի մեջ ասված է, մի քանի ուսուցիչների առաջարկությունների բավարարություն տալու համար: Դա, ինչպես Առաջարանի մեջ գրված է, կազմված է Եկվելի համառոտ ծրագրով, իրեն աստորին դասընթաց. Եկուրը համապատասխան է դպրոցական նախագծի մեջ աստորին դասարանների համար դրված քերականության ծրագրին, մի քանի թեթև փոփոխություններով: Մեջը կան նաև ուղղագրության կանոններ ու վերլուծության վարժության համար դրված օրինակներ: Շարահյուսությունն ըստ պաշտոնական ծրագրի պահված էր վերին դասարանների համար:

Նույնիսկ ըստ Եկարգրին կազմված այս փոքրիկ քերականության մեջ էլ հռոմվների պաշտոնի մասին ավելի բան կգտնեք, քան Շապիրոյի քերականության մեջ: Բերենք մի կետը:

Անունները հայելով թե խոսքի մեջ ինչպիսի պաշտոն ունին՝ զանազան ձևերով փոփոխվում են: Օրինակ՝

Ես գնացի պարտեզ:

Պարտեզի դուռը բաց էր:

Նա դուռն Եկ պարտեզից:

Ես Եկա պարտեզով:

Պարտեզում շատ Եկաք կային:

Եվ անուն հռոմվի նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփոխությունները, որ կարող է ունենալ (ստանալ) անունը՝ խոսքի մեջ գտնադառն հոտքերի օրինակներ ցույց տալու համար:

Վերջին ընդգծած բառերն ավելացրած են 1910 թվի տպագրության մեջ. բայց նույնն ուրիշ կերպ բացատրված կա և վերևում՝ Ենայնով թե խոսքի մեջ ինչպիսի պաշտոն ունին: Իսկ բառերի պաշտոնները խոսքի մեջ՝ հեթոկտ, ստորոգյալ, խնդիրներ՝ մանրամասն բացատրված են առաջուց: Ուրեմն

վերլուծության ժամանակ, որի համար օրինակներ կան դրած, աշակերտները բացատրում էր հոլովի տեսակները: Առաջին և երկրորդ տպագրությունների մեջ առանձնապես բացատրված է սեռական գործածությունն ու ֆունկցիան (եր. Ա. 43, Բ. 41), հայցական հոլովը վերլուծության համար արված օրինակներով (Ա. 71 հտն. Բ. 67 հտն.), որովհետև սեռական և հայցական հոլովները աշակերտները շփոթում են տրական և սեռական հոլովների, հայցական հոլով, եր. 44—49, եր. 53, Ա. և է նորանորոգած մեջ: Բացի այդ՝ 1910 թ. այս երրորդ տպագրության վերջում ավելացրած է և մի քանի փոփոխություններ, որոնցից հետևում է, որ այս փոփոխությունները նշանակում են տպագրության (եր. 86—88) ուղղորդման, հոլովական, հայցական, սեռական, տրական, բացատրական, արժեքական, ներգոյական: Դրանով կազմված էր ամբողջական քերականություն:

Զգեստ է մտնում, որ այդ քերականությունը փոքրիկ է, առաջին տպագրությունն ընդամենը 80 էջ, երկրորդը՝ 78 էջ, երրորդը՝ 98 էջ, հինգերորդը՝ 102 էջ, որից մաս 12 էջ և ավելի բռնում են ուղղագրության և վերլուծության օրինակները:

Այս սկսարական քերականությունն մեզ տպագրությունն ավելի ևս մշակված է, որովհետև այդ ժամանակ մոտացության էր արված լեզվաների ուղղագրական փոփոխությունները:

Ես էլ չեմ ուզում շարունակել այս մասին. Անցնենք մի ուրիշ խնդրի.
4. Քաղ. Սեակը գրում է. «Քրթ. Մ. Արեղյանը... սեռականը միացնում է տրականին... իսկ քանի որ մեր անձնական դերանունների սեռական հոլովները տրականին միացնել չէր կարելի (ճանճ ձևով տարբեր են՝ իմ—ինձ, դու—ձեզ, մեր—մեզ, ձեր—ձեզ), նրանք էլ իրեն ավելի սեռականի խնդրող տարբեր հանգում են անձնական դերանունների շարքից և համարվում ինքնուրույն կառուցվածքի դերանուններ (ստացական դերանուն)» (ընդգծումներն եմ):

Չշմարտել է ասում զոն ևս անգամ քաղ. Սեակը:—Դարձյալ ոչ:
«Աշխարհաբարի հոլովները ուսումնասիրության մեջ (եր. 18—83) ես մանրամասն հետազոտելով սեռական և տրական հոլովների զարգացումը, ցույց եմ տվել, որ մեր նոր լեզվի մեջ մեր հին լեզվի այդ երկու հոլովները կատարելապես նույնացել են իրար հետ և կազմում են մի ընդհանուր սեռական-տրական հոլով: Բերեմ իմ օգրականությունը.

«Սեռական և տրական հոլովների նույնացման մեջ անձնական դերանունների նկատմամբ լեզուն բացառություն չի արել: Աշխարհաբարի իմ, քո, իր, մեր, ձեր մեջ մեր հին լեզվից իրեն ստացական ածական և ոչ իրեն անձնական դերանուն սեռական: Մեր քերականներն (լավ լսեցե՞ք) այդ բաների բոլոր գործածություններն որ կան աշխարհաբարում, այդպես էլ կոչվում են՝ ստացական դերանուն կամ ստացական ածական: Միայն սակավաթիվ ածականների հետ իմ, քո, իր, մեր, ձեր բաները, թեպետ դարձյալ հին լեզվի ստացականներից են մնում, այլևս մեզ—մեզ հետ և ուրիշները—ստացական, որ է սեռական, չենք մտածում, այլ արական (եր. 31, Տճ. և Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, եր. 350 հտն.):

Ուսկապարթիվ ածականների հետ այդ գործածությունն իրեն տրական,—

ինչպես են՝ իմ նման = ինձ նման, որա Համապատասխան, իր Համասար = իրեն Համասար, — որ առաջ էլ քիչ էր պատահում, այժմ 30 տարի հետո բուրսովին հնացած է:

Այսպես ուրեմն, ոչ թե պրոֆ. Աբրահյանն է սանտականը միացնում տրականին, ինչպես գրում է քաղ. Սևակը, այլ լեզվի զարգացումն է առաջ բերել այդ երկու հոլովների միացումը, նույնացումը, այն աստիճանի, որ Ա. Ղաքիբյանն էլ իր ժերականությունը մեջ սանականը տրականից չի ջրկում:

Բայց մի հարց:

Ո՞ր պատգ, թե ասանական գերանունների սեռական հոլովները տրականին հետ միացնել չէր կարելի: Քանի որ լեզվի զարգացումն այդ միացումն առաջ է բերել, դա օրյեկտիվ իրականություն է: Այա՛ ոչ մի լեզվաբան, բացի Սևակից և իր ընկեր Ղաքիբյանից, չի դանդաղել հետևելու օրյեկտիվ իրականությունը: Մի՞թե տրական չեն Կոստանդին Ծրզնկացու հետևյալ խոսքերի մեջ սեռառա, սեռա բառերը. «Յո՞ւ որ սէր կայ չի սրտին՝ նայ դիս նորայ կամեակ տանին»: «Ջինչ որ հասնի՝ նա իր վայելէ»: Մի՞թե տրական հոլով չեն արևմտյան գրական սասորա, ասնորա բառերը հետևյալների մեջ. «գուս աւոր տվիրա և այլն:

Որ հին լեզվի մեջ իմ, Բո, Լու, Նորա, այսոր(իկ), այնոր(իկ), այսոր, այնոր սեռական են, այդ ոչ մի կերպով յխանգարող տարրա չի եղել, ինչպես քիչ հետո ներքևում կտեսնվի, և չէր կարող լինել Աբրահյանի Համար, այդ ձևերը տրականի հետ դնելու: Բավական է, եթե նա իր ուսումնասիրության մեջ հանգիստ այն եզրակացությունը, թե դրանք լեզվի զարգացմամբ, — Լու՛վ լսեցեք, — վերածված են տրականի:

Այս պարծյալ, եթե դրանք մեր քերականներից, — Աբրահյանի քերականությունից շատ առաջ — դրվել են իրեն ստացական գերանուն կամ ստացական ածական, այդ հեղել է ոչ թե այն պատճառով, որ այդ իմ, Բո և այլն ձևերը կարելի չէ տրական կոչել, ինչպես կարծում է քերական Սևակը, այլ այն պատճառով, որ այդ բառերը աշխարհաբարում՝ իսկապես ստացական դերանուն են և ոչ թե սեռամարվում են: այդպես, ինչպես գրում է դարձյալ նույն Սևակը:

Բայց ես այդ բառերն իմ քերականությունների մեջ դրել եմ իրեն տեղեկան դերանուն և ոչ ստացական: Թե այդ այդպես է և թե քաղ. Սևակը իրենից է ինձ վերադրում վերևում իր հոլովածից բերված ցիտատի բովանդակությունը, այդ տեսնելու համար բաց արեք իմ «Աշխարհաբարի քերականություն», եր. 53 հտն., «Տարրական քերականություն», Ա. 40 հտն., Բ. 38 հտն., Գ. 50 հտն., այսպես և Դ և Ե տպագրությունները, և կտեսնեք, որ գերանունների տեսակների մեջ չկա ստացական գերանուն, այլ ասանական, «ցուցական» և այլն: Ընդհանրապես, բացեք «Աշխարհաբարի» բեր <ականություն>, եր. 158 հտն. և ասանական գերանուններին ու «ցուցական գերանուններին հոլովների հարացույցների մեջ կգտնեք տրական հոլովի դիմաց Բիմ, ինձ, քո, քեզ. իր, իրեն, մեր, մեզ. ձեր, ձեզ. նրա, նրան:

Ի՞նչ կասե՞ս որան քաղ. Սևակը: Այդ հին սեռականները իմ, քո, մեր և այլն ասանական գերանուն են դրված, թե ստացական. դրանք հանվե՞լ են դիրքն խանգարող տարրեր, թե՞ մնում են:

Ես արդեն վերևում բերել եմ իմ «Աշխարհաբարի» քերականու-

Յոսեփ (եր. 160) այն կտորը, թե այդ կրկին ձևերից տառերը սեռական է, երկրորդը տրական:

«Մարքական քերականություն», Ա. ապ. եր. 40. Իբրև «անձնական դե. բանական գրված են ես, դու, ինքը, իսկ եր. 42. գրված է. «Առանձին կերպով հուշվում են՝ ես, դու, ինքը, սա, դա, նա, ով, որոնք (բացի ով բառից) ունեն և մի առանձին նշանով, որ հուշում է սեռականը: Եվ ապա տակին հուշվենքի հարացույցի մեջ՝ «Սեռական՝ իմ, քո, նրա, մեր, ձեր, «տրական՝ ինձ, քեզ, նրան» և այլն:

Հետո մյուս կրկին բացատրված է անականի կերպությունն ու նշանակությունը: «Սեռական հուշվենքը՝ իմ, քո, մեր, ձեր, իր (իր)», սա, դա, նա, դրվում են միայն անձնների վրա իբրև լրացում և ցույց են տալիս, թե մի առարկա ում է պատկանում, օրինակ՝ իմ գիրքը, քո գիրքը, մեր գիրքը, նրա գիրքը և այլն:

Ինչ կասի և սրան քաղ. Սեակը:

Բացեք սույն «Մարքական» քերականություն» 2-րդ տա. եր. 41. և այնտեղ կկարդաք. «Անձնական և ցուցական դերանուններն ունին նաև իմ, քո, մեր, ձեր, իր (իր, իրա)», սա, դա, նա առանձին ձևերը, որոնք գրվում են ռաբբուրա անունների վրա իբրև սեռական և ցույց են տալիս, թե մի առարկա ում է, ում է պատկանում, օրինակ՝ իմ գիրքը, քո գիրքը, մեր գիրքը և այլն: Այս դեպքում դառնե՞ կաշվում ես նաև ստացական դե. բանունը:

Այսպես և հաջորդ ապագորությունների մեջ:

Լավ ուշադիր եղեք վերոյիս ընդգծված խոսքին. «կաշվում են նաև: վերե. վում բերի, որ «Մեր քերականները այդ բառերի բոլոր գործածությունները որ կան աշխարհաբարում, աշխատ էլ կուտում են՝ ստացական դերանուն կամ ստացական ածական» («Աշխարհաբար» հուշվենքը, եր. 31): Իսկ այդ քերականներն են՝ Այտնյան, Պալասանյան, Զ. Ասատուր:

Այսպես ուրեմն, առել թե իմ, քո, մեր, ձեր, իր ձևերը Աբդուլանի քերականությունների մեջ ռիբրե խանդարող տարրեր հանվում են անձնական դերանունների շարքից», այդ էլ իրենից է գրում քաղ. Սեակը: Ընդհանրապես, դրանք գրված են անձնական դերանունների մեջ:

Ես դեռ չեմ վերջացրել. քաղ. Սեակը ուրիշ նման բաներ էլ է գրել: Ես կաշխատեմ ոչ մի բան անուշադիր լիցիտելի: Կարծում եմ արդեն լիովին պարզվեց նրա վարմունքը:

Ես այստեղ չեմ առել դրա բարոյական գնահատությունը:

Թող այդ մասին ընթերցողներն իրենք դատեն: Ես այստեղ կանեմ նրա վարմունքի գիտական գնահատությունը:

Քաղ. Սեակը սիրում է դիալեկտիկայից ու մատերիալիզմից խոսել և իմ քերականությունը համարել «հակադիալեկտիկական» և իբրև «հակամատերիալիստական»: Ես սրա հաշիվն արդեն տեսել եմ և դեռ էլի կտեսնեմ. այստեղ այն կասեմ, որ նա, ինչպես և Ա. Ղարիբյանը, չի հասկանում, թե ինչ է դիալեկտիկական մատերիալիզմը: Թող լզարմանա նա: Խոսքով, ընդհանուր ֆրազներով նա, հարկավ, կճառի դիալեկտիկական մատերիալիզմի մասին. բայց ուրիշ բան է անգիր արած ֆրազներ առել ու գրել, և ուրիշ բան է դիալեկտիկական մատերիալիստ լինել իր մտածությունում և կյանքի մեջ գործադրել այն: Նա անգիր արած գիտե, անշուշտ, որ դիալեկտիկական մատերիալիզ-

մի հիմնական դրույթներից մեկն այն է, որ «օբյեկտիվ աշխարհը, գոյն է որոշում մատածությունը, ուրիշ խոսքով՝ մատածությունը միայն անդրապատկերումը (Abbildung, отображение), անդրադարձումն է օբյեկտիվ իրականության, արտաքին աշխարհի, գոյի»¹։ Դիալեկտիկական մատերիալիստ չէ, իր մեթոդաբանությունը մատերիալիստական դիալեկտիկայով չի առաջնորդվում, ու՛ր որ իր մատածությամբ օբյեկտիվ իրականությունը չի հետևում, այլ ընդհանրապես իր մատածությանը կապում է իրականության գլխին։

Զպիտի կարծել, թե մատերիալիստական դիալեկտիկական հարկավոր է միմիայն մեծ մեծ բաների, մեծ մեծ խնդիրների համար, մեծ մեծ գրքերի մեջ։ Դա հարկավոր է ամեն բանի համար, փոքր բաների մեջ էլ, անգամ սեռելիք մասին գրած և «Կուլտուրական ֆրոնտում» տպված մի հոդվածի համար ևս, և անգամ Ա. Ղարիբյանի քերականության մի նախաբանի համար։

Արդ ի՞նչ տեսանք վերևում։

Օբյեկտիվ իրականությունն այն է, որ Արեղյանն սկսած 1906 թվից իր քերականությունների և ուսումնասիրությունների մեջ հոլովը չի համարել սոսկ ձև, այսինքն սոսկ հնչյուն առանց նշանակության, որ է մի անհեթեթություն, և որ նա ձևաբանության մեջ կարևոր տեղ է տվել հոլովների նշանակությունը, որ նա իմ, քո, իր և այլն դրել է անձնական դերանունների միջև իրեն սեռական։ Փաղ. Սեակի մատածությունը, սակայն, չի անդրապատկերում, չի անդրադարձնում այդ օբյեկտիվ իրականությունը, այդ օբյեկտիվ գոյը, գոյություն ունեցող բանը, այլ, ընդհանրապես, նա իր սեփական մատածությունը, իր ուզած բաներն է վերագրում Արեղյանին։

Այսպես և Ար. Ղարիբյանը։

Եվ այս անում է նա գիտակցաբար, լիարժեքով և անհրաժեշտությամբ թերի բերելով, կամ, ինչպես Ա. Ղարիբյանը, իր բարձր ամբիոնից լույս խոսքով հայտարարություններ անելով։

Ու՛ր որ մուտք է գործում գիտության տաճարը, ասում էին մեր հրեաները, — «նա պարտավոր է միայն ճշմարտությունը սիրել և կամ, ինչպես Մ. Խորենացին է ասում, «զհետ երթալ... դարդարոյն և զճշմարիտ»։

«Մեր զգայությունները համարել արտաքին աշխարհի պատկերներ — ճանաչել օբյեկտիվ ճշմարտությունը, — այդ միևնույն է թե կանգնած լինել մատերիալիստական իմացաբանության տեսականի վրա» (Լենին, ու. 106, հ. 144)։

Այս է ամենից առաջ իսկական գիտականությունն առ ճանապարհը. «ճանաչել օբյեկտիվ ճշմարտությունը և ոչ թե ընդհանուր ֆրազներ անգիր անել ու ասել դիալեկտիկայի ու մատերիալիզմի մասին, և անտեղի կերպով մեջ բերել հակադիալեկտիկական, մատաֆիզիկական և այլ բաներ, ինչպես վարվում է ք-ցի Սեակը»։

Եվ այս բոլորն ինչի՞ համար — Ա. Ղարիբյանի տխրահույս քերականությունը պատկանելու համար։

¹ «Չայն րադի փիլաճակ լզիանմ Եվ մտքից էր սխալ կերպով «կենտրոնացնել, որ հաճախ հանդիմանում էր ինտերսուստի փիլիսոփայական տեղեկներ կազմելիս՝ փոխանակելով իսկական բառով քո է փոխել»։

ՍՆԱԿԱԿԱՆ «ԴԻԱԼԵԿՏԻԱԿԱՆ» ԼՈՒԴԻԱՆՆԵՐ ԶՈՂՈՎԻ
ՄԱՍԻՆ

37. Ձևի ու բովանդակության հակադիր միասնությունը հուշվի նկատմամբ.— Ընթերցողներին խնդրում են մեկ էլ կարգաւ քաղ. Սեակի Հոգովածից հախորդ գլխի 2-րդ կետի սկզբում իմ բերած ցիտատը, որ նա ասում է, թե Լեբնուսն է իր «Ֆորմալիստական ու հակադիալեկտիկական մտածողում» է ասեցել «ձևի և բովանդակության հակադիր միասնությունը քերականության մեջ», որովհետև իրը Արեղյանը, «ձևաքանդության մեջ ձևը բովանդակությունից անջատ է վերցնում», որով «Հոլովների արտաբանում իմաստը, նրանց ֆունկցիան արհամարհվում է ձևաքանդության մեջ և Հոլովը դիտվում է իբրև սոսկ ձև»:

Ին այդ մեկնը կեղծիք է, այդ տեսանքը Այժմ տեսնենք քաղ. Սեակի պրակտիկական:

«Ձևի և բովանդակության հակադիր միասնություն»,— ահա մի անգիր արած ընդհանուր ֆորալ, որ մեք է բերում քաղ. Սեակը, և որ այժմյան ժամանակում կարող է ասել ամեն մի դպրոցական: Բայց հասկանո՞ւմ է արդյոք նա և գործադրո՞ւմ է իր գրածը:

Ու ասում են՝ ո՞չ, նա չի հասկանում և չի գործադրում այդ:

Դա մի ընդհանուր ֆորմուլ է, որ նայելով թե ինչի համար է գործադրվում, ապրբեր էլ նշանակություն է ստանում: Գրական երկի համար, օրինակ, ձևի և բովանդակության հակադիր միասնությունը կազմվում է մեկ դրական երկր: Կամ՝

Ձև + բովանդակություն = գրական երկ:

«Ձև» այստեղ հասկացվում է՝ լեզու, ոճ, մասերի բաշխում, ոտանավոր (եթե լսական է) և այլն: Իսկ բովանդակությունն են՝ արտահայտած իդեոլոգիան, գործողությունը, կյանքը, շոշափած խնդիրները և այլն:

Ի՞նչ է ձևի ու բովանդակության միասնությունը քերականության մեջ, որ ընդհանուր՝ ֆորալով գրել է Սեակը:

Քերականության մեջ ֆակտեր շատ կան: Օրինակ՝ բառի նկատմամբ կարող ենք ասել թե

Ձև + բովանդակություն = բառ:

«Ձևն» այստեղ է հնչյունների կապակցությունը, իսկ բովանդակությունն է բառի նշանակությունը: Ուրեմն

Հնչյուններ + նշանակություն = բառ:

Հիմա ի՞նչ է այդ ընդհանուր ֆորմուլի իմաստը «Հոլովի» նկատմամբ, որովհետև խնդիրը ոչ թե ընդհանրապես քերականության մասին է, ինչպես գրել է քաղ. Սեակը, այլ «Հոլովի» մասին: Դարձյալ՝

Ձև + բովանդակություն = Հոլով: Ինչպես տեսանք, Հոլովի բովանդակությունն է Հոլովի ֆունկցիաները, նշանակությունը, Հետևաբար՝

Ձև + ֆունկցիա = Հոլով: Իսկ ի՞նչ է մերում Հոլովի նկատմամբ իբրև ձև, եթե ոչ, ինչպես սովորաբար ասում ենք, վերջավորությունները, բառերի ձևական մասերը՝ ի, ից, ռվ, ում, կամ ամենի ճիշտ, բառի արտաբանական կազմը, հնչյունական քննարկը:

Հնչ<յունի> քնույթ + ֆունկցիաներ = Հոլով

Այսպես ուրեմն, երբ քաղ. Սեակը հոլովի նկատմամբ ասում է՝ «ձեք բովանդակությունից անջատ վերցնել», կամ «ձեքի և բովանդակության միասնության մասին խոսում է (ես «Հասկանալի» բառը թողնում եմ կարճ ասելու համար), ես «ձեռ» տեսիլով հասկանում է գոյականի վերջավորությունները, արտաքին հնչյունական կողմը միայն, ասանց նշանակության, ասանց ֆունկցիայի, Ուրեմն «ասակ ձեռ», լոկ Հնչյուն:

Կարող է այս հերքել նա, քայք հերքել միայն հիշող դատողությանը:

Սովորաբար այդպես չեն հասկանում, սակայն, փրակաճակուն «ձեռ» բառը լեզվաբանները, Ի՞նչ է գրած իմ «Աշխարհագրի Հոլովները» ուսումնասիրության հենց սկզբում:

«Ի՞նչ է հոլով ասածը. — թե ոչ Հոլովի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ Հոլովական վերջավորություններով: Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կոմպան հարաբերություններ՝ տեղի, ժամանակի և այլն:

Իսկ այս նշանակում է, որ հոլով և ձև հոլով են, իսկ ձևն է վերջավորություն և ֆունկցիա: Ուրեմն վերջավորություն + ֆունկցիա = Հոլով:

Այսպես ուրեմն, իմ գործածությամբ՝ գոյականների համար «ձեռ» նույն նշանակությունն ունի, ինչ որ «Հոլով», որի փոխանակ նաև «Հոլովական ձեռ» է գործածվում. իսկ քաղ. Սեակի համար «Հոլովի» նկատմամբ «ձեռ» հավասար է հնչյունների, «վերջավորության» (կարճ ասած՝ վերջ--ի):

Նա չի ըմբռնում, որ «ձեռ» բառը մեկ բան է, քայք տարբեր նշանակություններով է գործածվում: Նա չի ըմբռնում, որ «ձեռ» և բովանդակության միասնության ֆորմուլի մեջ այդ բառերն ընդհանուր նշանակությամբ են գործածված, ինչպես հանրահաշիվի մեջ տասները, իբրև ասելիք $a + b = c$, իսկ քերականության մեջ «ձեռ» ունի իր հատուկ նշանակությունը գոյականների Հոլովման և բայերի խոնարհման մեջ, այն է՝ «ձեռական մասերով» կամ, ինչպես կոչում են նաև «բառափոխության ձևական մասերով (մասնիկներով)» կամ սովորաբար «վերջավորություններով» կազմված **ԲԱՆԻՐԸ**, որոնք կոչվում են նաև «բառի ձևեր», կամ բառի փոխված ձևեր, «բառափոխության ձևեր» կամ «բառաձևեր». որովհետև դրանց մեջ ուղղական էլ կա, սովորաբար միայն «ձեռ», իսկ զգրոցական քերականությունների մեջ սովորաբար ասում են բառի փոփոխություններ: Օրինակ՝ քաղաք, քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում. — «բառափոխություն» բառի փոխանակ գործածվում է նաև բառերի բեֆում (flexion), իսկ բառափոխության ձևերը կոչվում են նաև բեֆման ձևեր, երբեմն նաև շարժյունական ձևեր, որովհետև դրանց նշանակությունը որոշ կերպով երևում է բառերի կապակցության կամ խոսքի շարժումության մեջ:

32. Անարձագություն և շարժյունություն: — Ծորմալիզմի ահից բռնված՝ նա, քաղ. Սեակը, չի հասկանում և հետևյալը: Ելնելով «ձեռ» և բովանդակության միասնության ընդհանուր ֆորմուլից: Նա չի թույլատրում, որ «ձեռ» (= վերջավորության, հնչյունական բնույթի) ուսումը բովանդակությունից (= ֆունկցիայից) անջատ վերցվի: Իսկ «Բովանդակությունը» Այդ կարելի է արդյոք «ձեռից» (= վերջ<ավորություն>--ից) անջատ վերցնել: Այս մասին

եա խոհեմություն է համարում լոկի ինքու՝ Ուրվմեա Շապիրոն ունի
սեպարատիստութուն (1931 թ. 10 որի մէջ (կր. 121) ընդմած են Դուլմենբրի
զլխավոր դորժածութիւնները առանց նրանց ժենրիս, եթէ կարելի է հոլովի
րովանդտկութիւնը, ֆունկցիան առանց ժենրիս (—մեքսիկ) անշատ մեքսիկ,
և անցնելու ինքու՝ կարելի չէ ունենալ (—վերջավորութիւնը, Շապիրոն կոչումն)
էլ րովանդտկութիւնից անշատ վերցնել և անցնելու:

Բաւել տեսանք. է հեյլունենք—նշանակութիւն, եթէ կարելի է մի արեւ
բաւել, դիցուք արեւմտեայութուն քառի նշանակութիւն մասին քաղաքացիութիւն
անել, առանց հայտնիք նկատի ունենալու, նույնպէս կարելի է արեւմտեայ
չլունեն քառի Շապիրոնի մասին գրել, քէ այդ քառը քառի՝ վանկից է կազմ-
ված, ամեն մի վանկը քառի և ինչպիսի Շապիրոնից է կազմված, և կամ
արեւմտեայ մի օտարական, օրինակ, մի ռուս կարող է այդ հայտնի քառի
հեյլունենը հեյլունեյամբ արտասանել, մի խոսքով այդ քառի Շապիրոն
քառիութիւնը շապիրոնալով, հարկավ, որ դա քառ է, նշանակութիւն անի:

Այսպէս և ամեն զրական երկի թե՛ ժողովանդակութիւնը և թե՛ անցը
(վերջում քաղաքացիական նշանակութիւն) կարելի է միմյանցից անշատ ուսում-
նասիրել գրական ուսումնասիրութիւն ժամանակ, Այս, հարկավ, Շապիրոն
է, քառը քառաբնի չէ. արեւմտեայ այդպիսի անշատ ուսումնասիրութիւն
կիսի միակողմանի ու թերի, չի լինիլ աչող ու լիակատար, օրովնեռ օր-
կան երկի ձեք սովորաբար օրովում է քովանդակութիւնը: Այսպէս կարելի է
վարկել և հոլովմենբրի ուսման, ավելի ճիշտ ուսուցման նկատմամբ, գրական
երկից մի տարբերութիւն, որ է՝ հոլովմենբրի հեյլունական կազմութիւնը
կախված չէ քովանդակութիւնից:

Որ քերականութիւն մեք դրում են իբրեւ առանձին մասեր՝ ձեպանու-
թիւն և շարահյուսութիւն,—և այդ ընդունում է Շապիրոն, սրան հետեւելով
և մեր քերականներ Սեակն ու Ա. Ղարիբյանը.—այդ հենց ցույց է տալիս, որ
լեզվաբաններն ու քերականներն ավելի հարմար սեքող, եղանակ, միեւն լին
գտել միաժամանակ և հոլովմենբրի «ձեք» վերջավորութիւն—հեյլունական
կողմ, և զրանց ֆունկցիաները ուսումնասիրելու կամ սովորեցնելու համար:
Այդ հնարավոր չէ միաժամանակ կատարել ամենայն լիակատարութիւնը:
Այս դարձալ՝ որքան ես ժանոթ եմ քերականութիւն դասագրքերին, առաջ
ձեպանութիւնն են սովորեցնում, հետո՝ շարահյուսութիւնը: Այդ լի նը-
շանակում, սակայն, թէ նրանք առաջ ստոսկ հեյլունենք են սովորեցնում:
Փաղ. Սեակնի համար է, ինչպէս տեսանք, ձեք—վերջ^վ վերջութիւն—ար-
տաքին հեյլունական կողմ: Լեզվաբանների համար ձեքն է հոլով, այսինքն՝
հեյլունական կողմ + ֆունկցիա, նշանակութիւն: Ուստի նրանք ձեպանու-
թիւն մեք ավելի կամ պակաս լափով, ընդհանուր ժանոթութիւն են տալիս
հոլովմենբրի կատարած ֆունկցիայի մասին, և մտերմասն սովորեցնում են
ձեքի կազմութիւնը, շառանալով, հարկավ, որ ձեքը նշանակութիւն ունեն,
այսինքն՝ հոլովի արտաքին հեյլունական կողմը լով, դատարկ հեյլուն լի:
Հոլովական ձեքի նշանակութիւն մանրամասն ուսումը սկսւում նրանք,
առանձին մեքողով, սովորաբար տալիս են գործնականորեն: Հոլովել սո-
վորեցնելուց առաջ՝ սովորաբար սովորեցնում են խոսքի կամ նախադասու-
թիւն կազմութիւնը, քառերի պաշտոնը խոսքի մեք՝ ենթակա, ստորոգյալ,
խնդիրներ, և աշակերտներին զմբլուծութիւններէ միեւնցով վարժեցնում են
որոշել նախադասութիւն մեք քառերի կատարած այդ պաշտոնները: Այս

ներ հոլովել էլ ստիզորենցում են և շարունակում են կատարել տալ և այդպիսի վարժութիւնները, միաժամանակ և հոլովները որոշելը, քնականաբար աշակերտները վերլուծութիւն միջոցով որոշում են հոլովը ոչ միայն հնչյունական կողմով, այլև խոսքի մէջ կատարած իր պատշտեցով։ Այդ կզտենք, ինչպես վերևում ասվեց, և իմ քննիչ «արհաբարի» քերականութիւնն մեջ, և «Տարրական քերականութիւնն» մեջ, առաջին տպագրութիւն մեջ երես 27—31, հաջորդ տպագրութիւններ մեջ ավելի ևս ընդարձակված։

Ահա թե ինչի մասին չի մտածել և չէր էլ կարող մտածել քաղ. Սևակը, Կարենի է, ուրեմն, կրկնում եմ, առանց մոռանալու որ հոլովներն ունեն իրենց ֆունկցիաները, մի անգամ ցլխավոր ուշադրութիւնը դարձնել հոլովների արտաքին հնչյունական կողմին—հոլովների կազմութիւն վրա, մյուս անգամ՝ առանձին հոլովների նշանակութիւններին—հոլովների նշանակութիւն վրա։ Կարենի է և ուրիշ մեթոդ բանեցնել, Մեկը կարող է առնել, օրինակ՝ տրական հոլովը և բացատրել նրա կազմութիւնը՝ -ի, -ու, -ան, -վա և այլ վերջավորութիւններով, այլև դերանունների տրականները՝ ինձ, քեզ, մեզ և այլն, և հետո բացատրել այդ հոլովի բոլոր ֆունկցիաները։ Ապա առնել, դիցուք, դարձական հոլովը և մյուսները և նույնպես ուսումնասիրել։ Բայց այդ մեթոդով չեն վարվում. որովհետև կան և ուրիշ խնդիրներ։ 1) Այդ մեթոդով դժվար է լեզվի կազմութիւն մասին որոշ զաղափար տալ, ապա՝ 2) կա նաև քանակի կապակցութիւն խնդիրը։ Ուստի և այս մասին պարզորոշ և լիակատար զաղափար տալու համար՝ շարահյուսութիւն մեջ մի տեղ են համաձայն բոլոր կապակցութիւն միջոցները, որոնցից են և հոլովները։

Ահա թե ինչից է ծագում հոլովների ձևաբանութիւնը և շարահյուսութիւնը

33. Հոլովն է լոկ ֆունկցիոն բառ բաղ. Սևակի և ոչ թե ժենի և բովանդակութիւն միասնութիւնն = ձև + բովանդակութիւն = հնչ <յունական> բնույթ, վերջ <ավորութիւն> + ֆունկցիա։ Մեկնույն ֆունկցիոն չի կարող տարբեր հոլովներով աբստրակցիոն ըստ ֆեռկաւն Սևակի։—Ահա թե ինչպես։

Ես քննարհաբար հոլովներն ուսումնասիրութիւնս վերջում դրել եմ հետեւյալ եզրակացութիւնով։ Հիշենցում եմ ընթերցողներին, որ այդպիսի ձև բառն անվաճ է քերականական իմաստով, ձև—հնչյունական բնույթ կամ վերջ <ավորութիւն> + ֆունկցիա = հոլով։ Ե՛լ, Պետք է, որոշ կերպով տարբերել իրարուց հոլով ըստ ձևի (= վերջ <ավորութիւն>, հնչ <յունական> բնույթ + ֆունկցիա։ Մ. Ա.) և հոլով ըստ նշանակութիւն կամ կերպարանքի միայն։

2) Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell—հնչ, բնույթ + ֆունկցիա։ Մ. Ա.) միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանութիւն մեջ (Formenlehre) միայն հինգ հոլով պիտի դնել։

Այո՞, սոր կողմ շուտ տանք, մեր անուններն ունեն միայն հինգ ձև (= հնչ, բնույթ + ֆունկցիա = հոլով) և ոչ ավելի։—քաղաք, քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում, և ոչ ավելի։

Սա ի՞նչ է նշանակում։—Սա նշանակում է, որ ձևի և բովանդակութիւն հակադիր միասնութիւնն ֆորմուլի համեմատ՝ մեր լեզվի մէջ կան միայն հինգ հոլովներ, որոնք կազմված են արտաքին հնչյունական կողմի և ներքին բովանդակութիւն կողմի միասնութիւն։ Նարո՞ղ է այս հերքել ք-ցի Սևակը, Հիմա տեսնենք, թե ինչ է անում նա՞ քաղ. Սևակը։

Նա մեջ է քերում վերին եզրակացութիւն 2-րդ կետը միայն, միջին դեր-

մաներն քառերն էլ դուրս է ձգում, և այդ համարում է «հարգալից կտրուկ-
կտես»: Նա պնդում է, թե հայցականն էլ նույնպիսի հոլով է, որովհետև կա
դրա ֆունկցիաները: Նա այդ ֆունկցիաներն համար գրում է. «վերջնենք օրի-
նականեր. ես տեսա Մոսկվայի արշավույսը, ես տեսա Մեր Աշխարհային, ես
վարդ սիրում եմ, ես Վարդին սիրում եմ, ես ծեծեց ռուսը, ես ձեռք էտեմ:
Այս օրինականների մեջ Ուղղականի և ՏԲԱԿԱԿԱՆԻ Ձեռքովով արտահայտված
(ընդգծված) բառերը ստորոգայի (ուզում է ասել՝ ապա՝ Մ. Ա.) ուղիղ էր-
դրներն են և միևնույն ֆունկցիան են առաձայնում, բայց ըստ ֆորմա-
լիտեների (ուզում է ասել՝ ըստ ներգյանի) համարվում են տարբեր հոլով,
որովհետև տարբեր ձևերով (=հնչունական բնույթով, մերյավորոնջամբ
քառ նեռնի: Մ. Ա.) են հանգես գալիս. արշավույսը համարվում է ուղղական,
Աշխարհային՝ տրական, վարդ՝ ուղղական, Վարդին՝ տրական և այլն: Այդ
բնույթով ուրիշ նման օրինականներ՝ վերջացնում է այսպես. «Այս օրինականների
մեջ նույն ֆունկցիան ունեցող բառերը ասելով են համարվում»:

Հետևաբար, ըստ Սեական, ճիշտն է դրա հակառակը. այդ բառերը պետք
է նույն հոլովը, նույն հայցական հոլովը լինին, որովհետև նույն ֆունկցիան
առնին:

Հապա ո՞ր մնաց զանի և բովանդակության հակադիր միասնությունը:
Ահա թե ինչն է հակադիսկոտիկական,—միայն ֆունկցիայով առաջ բերել
հոլովներ: Բայց այդ չէ՞ միայն:

Քաղ. Սեական վերին ներկայացությունը սփռվում է, նա լռելյան անց է
կացնում երկու կեղծ դրույթներ, որոնց վրա և հիմնում է իր ապացույցը:
Այդ կեղծ դրույթներից առաջինն այն է, թե իբր միևնույն ֆունկցիան չի կա-
րող տարբեր հոլովներով արտահայտվել, կամ նույն ֆունկցիան ունեցող
բառերը չեն կարող տարբեր հոլովներ լինել, այլ նույն հոլովն են, ճշմարիտ
է այդ:

Գրաբարում կան որոշ թվով ներդրական բայեր՝ յաղթել, վնասել և
այլն, որոնց կրող խնդիրը դրվում է տրական, օրինակ՝ ես յաղթեցի քեզ, Գու-
հաղթեցիք նմա (նա յաղթեցաւ ի քէն)=Գու հաղթեցիր նրան (նա հաղթվեց
քեզին): Հիմա, ի՞նչ հոլովով են դրված այդ բայի նմա, քեզ խնդիրները—
Տրական, Բայց չէ՞ որ դրանք կրող խնդիր են և կրող խնդիրը գրաբարում
դրվում է հայցական:

Բայց անենք, թեկուզ, Շապիրոյի Ռուսերենի շարահյուսությունը 1934 թ.
հր. 12 հտն. և կդառնենք նույն կրողի ֆունկցիան և սեռականով, և հայցա-
կանով արտահայտված:

«Սեռական հոլովով դրվում է՝

1. Այն առարկան, որի մասի վրա անցնում է գործողությունը, օրինակ՝
выпей воды—չաւ խմիր:—«Ջուր» ֆունկցիայով կրող խնդիր է կամ ուղիղ
խնդիր:

«2. Այն առարկան, որի վրա անցնում է քայքայական բայերի գործողու-
թյունը, նույնպես և ожидать և մի քանի ուրիշ բայերի, օրինակ՝ Мы же
написали лозунгов—մենք լուրնգներ չգրեցինք:—Դարձյալ՝ «լուրնգներ»
բառն իր ֆունկցիայով կրող խնդիր կամ ուղիղ խնդիր է:

«Հայցական հոլովով դրվում է այն առարկան, որի վրա անցնում է գոր-
ծողությունը, օրինակ Врач осматривает детей—բժիշկը դռնում է երեխա-
ներին»։ Он купил книгу—նա գիրք գնեց:—Դարձյալ՝ «Երեխաներին», «գիրք»
բառերը կրող խնդիր են:

Այսպես ուրեմն, ոտս քերականը կրճրի հետեւյալ օրինակները՝ Дай вам бог здоровья и генеральский чин. Дай бог вам всякого богатства и прекрасную дочку.—Աստված ձեզ անողորմություն և գեներալի աստիճան տաւ։ Աստված ձեզ ամեն նաւաստություն և մի գեղեցիկ աղջիկ տաւ։ Ուստի կարող է և շատ նմանները իբրեւ նույն բայի խնդիրներ բերել կողքն կողք և ասել, թէ՛ դրանցից առաջինները անուական են, իսկ երկրորդները՝ հայցական։ Իսկ հայ քերականն իրավունք չունի այդպես վարվելու։ Նա թե՛ս սիրում եմ վառը և մեր Վարդին խոսքի մէջ սվարդ և սվարդին բառերը պետք է նույն հոլովը համարի, որովհետեւ դրանց ֆունկցիան մեկ է։ Բայց ոտսներենում,—կառարկեն,—գործողութիւնն անցնում է առարկայի մասի վրա, կամ բայը բացասական է։—Այո՛, բայց հայերենում էլ սվարդը քառը մի բույս է ցույց տալիս, իսկ գլխատառով սվարդը՝ անձ։ Դարձյալ ոտսներենում կարելի է ասել թէ՛ Он был моим другом и теперь он мой друг—Եւս իմ բարեկամն էր և այժմ էլ նա իմ բարեկամն է։ Խոսքերի մէջ միեւնույն «տառադայլի ֆունկցիան արտահայտված է առաջին դեպքում գործիականով, իսկ երկրորդ դեպքում՝ ուղղականով։ Իսկ հայը չի կարող այդպիսի սեականդիպակտիկական բան ասել։ Եւս ժեծեց գտար և եւս ժեծեց նրան խոսքերի մէջ հայը պարտաւոր է գրուել և սկսանք միեւնույն հոլովը համարել, որովհետեւ դրանց ֆունկցիան մեկ է։

Դարձյալ քաղ. Սեակը չի համարձակվիլ իր գրածը շուտ տալ ոտս քերականների և Շապիրոյի համար ու գրել. սկսա օրինակների մէջ սեականի և հայցականի, ուղղականի և գործիականի ձևերով արտահայտված բառերը... միեւնույն ֆունկցիան են արտահայտում, բայց ըստ ֆորմալիստների համարվում են տարբեր հոլովներ, որովհետեւ տարբեր ձևերով են հանգստ գալիս՝ воды, лозунгов, книгу-детей, здоровья-чин, богатства-дочку, другом-друг և այլն։

Եվ ինչո՞ւ են բոլոր ոտս քերականները ֆորմալիստ։—Որովհետեւ նրանք յետն ֆունկցիան ունեցող բառերը տարբեր հոլով են համարում։ Այսպես է ասում քաղ. Սեակը... բայց միայն Արեղյանի համար։

Քաղ. Սեակն այստեղ արգեն լզիտե՛, որ հոլովը միայն ֆունկցիա չէ, այլ միաժամանակ նաեւ հնչյունական կողմ, հնչյունական բնույթ, վերը <ափորութիւն> ունի։ Նա չի հասկանում, որ այստեղ սեականդիպակտիկ է դառնում ինքը, որ չի գործադրում ձևի ու բովանդակութեան հակադիր միասնութեան ֆորմուլը։ Անցնենք երկրորդ կնիք դրույթին։

34. Միեւնույն հոլովը չի կարող տարբեր ֆունկցիաներ արտահայտել ըստ քաղ. Սեակի։—Նա գրում է. «Վերջնենք ուրիշ օրինակ. նա ինձ կանչեց. նա Արամին տեսաւ. նա ինձ գիրք տվեց, նա Արամին գիրք տվեց, Այս նախադասութիւնների մէջ ինձ և Արամին բառերը պետք է համարվեն տրական, անկախ նրանից, որ միանգամայն տարբեր ֆունկցիաներով են հանգստ գալիս (առաջին երկու նախադասութիւնների մէջ իբրեւ ուղիղ խնդիր, երկրորդ և չորրորդ նախադասութիւնների մէջ իբրեւ անուղղակի կամ բնութիւն խնդիր)։ Այս օրինակների մէջ տարբեր ֆունկցիաներ արտահայտող բառերը նույն հոլովն են համարվում, որովհետեւ ունին նույն ձևը (= հնչյունական բնույթ, վերջ. ըստ Սեակի)։—Հետեւաբար, ըստ քաղ. Սեակի, այդ բառերը չեն կարող նույն հոլովով լինել։

Մի երկու օրինակ էլ ես բերեմ։ Մեր Տիգրանը ձեռն պոռփեստեւ է. Այս բոլորն ծիծեռնակ է։ Քաղ. Սեակը, կարծում եմ, զիտե՛, որ այս խոսքերի

մեջ Տիգրանը, բոլորն բառերը ուղղական հոլով ենթակա են, իսկ պոռֆե-
սորն, ծիծեռնակը և ուրիշները՝ ուղղական հոլով ստորոգյալ, նա, կարծում եմ, այն
էլ դիտել, որ ենթակայի և ստորոգյալի ֆունկցիաները միանգամայն տարբեր
են, ուրեմն արդյոք նա իրեն ֆորմալիստ չի՞ համարում, որ նա ինքն «այդ
օրինակների մեջ տարբեր ֆունկցիաներ արտահայտող բառերը նույն հոլովն
է համարում»:

Այսպես ուրեմն, քաղ. Սևակը, թերևս, համոզվեց, որ միանգամայն տար-
բեր ֆունկցիաներ կարող են միևնույն հոլովով արտահայտվել, կամ որ
նույն է՝ միևնույն հոլովը կարող է տարբեր ֆունկցիաներ արտահայտել, և
որ ճիշտ չէ դրա հակառակը, թե տարբեր ֆունկցիաները չեն կարող միևնույն
հոլովով արտահայտվել, կամ որ նույն է՝ միևնույն հոլովը չի կարող տարբեր
ֆունկցիաներ արտահայտել, — մի կեղծ դրույթ, որ լեռնայն ընդունել է տա-
լիս նա՝ սոֆիզմով եզրակացություն հանելու համար:

Բայց դուցե լեզվաբանը նաև Այն ժամանակ դիմեց ամենազոր Շապի-
րոյին: Բացեք այս քերականի Շարաչյուսությունը (1934 թ.) եր. 12—14, և
այնտեղ կգտնեք միևնույն հոլովի համար մի շարք ֆունկցիաներ, կամ ինչ-
պես նա գրում է, «նշանակություններ», իսկ կրեք միայն գործիական հո-
լովի մասին: Գործիական ցույց է տալիս՝

1. Գործողության գործիքը, օրինակ՝ ветки обрублены топором — ճյու-
ղերը կտրված են կացնով:

2. Գործողության որակնությունը (образ), օրինակ՝ народ собирався
толпами — ժողովուրդը հավաքվեց խմբերով:

3. Գործող անձը կրավորական դերասանի և անզորադարձ բայերի հետ,
օրինակ՝ сын любим матерью — (ինչպես եթե հայերեն ասեինք) որդին սիր-
վում է մորով, սիրականակ «մորից» ասելու, կամ՝ որդին սիրելի է մոր:

4. Շարժման ճանապարհը, օրինակ՝ կվեдег лесом (лесом):

5. Գործողության ժամանակը, օրինակ՝ «нынешним летом мы поедем
на Днепротэс» (ինչպես եթե հայերեն ասեինք) Այս ավանդ կվեдег
Դնեպրոպէս, սիրականակ ասելու՝ այս ավանդ: — Եվ վերջապես կրեք նաև
հետևյալը, որ չի բերել Շապիրոն.

6. Ստորոգյալ, օրինակ՝ Он был моим другом (ինչպես եթե հայերեն
ասեինք) նա իմ բարեկամովն էր, սիրականակ ասելու՝ նա իմ բարեկամն էր.

Ճիշտ հարց: Կարո՞ղ է արդյոք քերական Սևակը Շապիրոյին և բոլոր
ոռու քերականներին, այլև գերմանացի, ֆրանսիացի և այլ քերականներին, —
որովհետև սրանք էլ նույնպես են վարվում, — ասել, թե դուք «ֆորմալիստ»
եք, որովհետև այդ օրինակների մեջ այդ բառերը топором, толпами, ма-
терью, лесом, летом, другом — միանգամայն տարբեր ֆունկցիաներով են
հանդես գալիս: դուք բոլորդ «ֆորմալիստ» եք, քանի որ «այս օրինակների
մեջ տարբեր ֆունկցիաներ արտահայտող բառերը նույն հոլովն են համարում,
որովհետև ունին նույն ձևը»: Կարո՞ղ է այս ասել նա ոռու և գերմանացի
քերականներին և ապա խորխուրով ավելացնել. «Եվ այսպես որ կողմ շուտ
տանք՝ իմաստը, ֆունկցիան ճիշտ զուգ է գնում ձևին»: Ապա ուրեմն դուք
ֆորմալիստ եք, զղջացե՛ք և նախկին Շապիրոյի պես «վերականգնվե՛ք» —
Ինձ քվում է, թե քաղ. Սևակն այդ քաջությունը կարող էր ունենալ և ունեցել
է միայն մեր հայաստանյան գիտական միջավայրում:

Ինչո՞ւ ոռու լեզվաբանները, իսկական լեզվաբանները բոլորը կծաղրեն

մեր քերական Սեակին, եթե նա— ով գիտե—հանկարծ այդպես վարվելու չենք։—Որովհետև նրանք գիտեն, որ հուլիս լույս ֆունկցիա չէ, այլ հուլիս է արտաքին հնչյունական կողմ կամ վերջ. + ֆունկցիաներ. հուլիս էլ հիմնված է սեռի և բովանդակության հակադիր միասնության վրա։

Բերեմ այստեղ մի հատված Ա. Պեշկովսկու «Բուսերենի շարահյուսությունից» (1935, հր. 259), որ РСФСР-ի լուստոգրմից թույլատրված է իբրև ուսումնական օժանդակ գիրք ուսական բարձրագույն մանկավարժական ոլորտի համար։

«Գոյականի առանձին հուլիս ասելով հասկանում ենք ձևերի այնպիսի շարքը, որ միացած է այլադան, բայց այդ ձևերից յուրաքանչյուրի մեջ միակերպ կրկնվող նշանակությունների կոմպլեքսով և ունի դոնե այդ ձևերի մի մասի մեջ սեփական հնչյունական բնույթ։ Սրա համապատասխան մենք ընդունում ենք արդի ուսերենում Բինգ թեք հուլիս (սեռ. տր. հայց. գործ. և предложный) և երկու հավելյալ (добавочный) (քանական՝ сьру, колбасы և այլն) և տեղական (в лесу, в воде և այլն)։ Համապատասխան է մեր ներգոյականին—Մ. Ա.)։ Հավելյալ ենք կոչում վերջին երկու հուլիսը, որովհետև այդ հուլիսների հնչյունական բնույթը որոշող ձևերը կազմվում են համեմատաբար սակավաթիվ բերքից. քանի մեծ մասի համար քանական հուլիսի նշանակությունը գործածվում են սեռական հուլիսի ձևերը (хлеб...,), իսկ տեղական հուլիսի նշանակությունը՝ предложный հուլիսի ձևերը (в столе...), Մի քանի հուլիսներ իրենց սեփական հնչյունական բնույթն ունեն իրենց ձևերից մեկի մեջ, Այսպես են՝ քանական հուլիսը, որ սեռականից տարբերվում է միայն արական սեռի բառերի -у ձևով (сьру...) և հայցական հուլիսը, որ ուղղականից ու սեռականից տարբերվում է միայն -а վերջացած իշական սեռի բառերի у ձևով (воду...)»։

Ահա թե որն է հուլիսի ճիշտ բնորոշումը,—սեփական հնչյունական բնույթ, դոնե բառերի մի մասի համար, և այդ հնչյունական բնույթի հետ կապված նշանակություն, ֆունկցիաներ։—Սեռի և բովանդակության հակադիր միասնություն։ Ահա թե ինչպես են առկերցնում ուսական բարձրագույն մանկավարժական դպրոցներում և ինչպես հմ սովորեցրել են 1906 թվից ի վեր,—և ոչ ինչպես մեր մանկավարժական ինստիտուտի և Պետ. համալսարանի դասախոսները՝ Ա. Ղարբյան և Սեակ։

35. Ամեն լեզու, ունի իւ փրականական անուններով անվանվող բայեր և «Պոլոգրուտեի անկողներ» ճուղների նկատմամբ։—Քաղ. Սեակը գրում է. «Եթե մի աշակերտ ուսաց չգտնի դասին ասի я открыл окно, я купил книгу նախադասությունների մեջ ուղղականի ձևով գրված окно, книги բառերն ուղղական հուլիս են՝ նրան ուսուցիչն իսկույն անբավարար կնշանակի»։—Հետևաբար՝ ինչ որ ուսերենում թույլատրված չէ, հայերենում էլ թույլատրելի չէ։ Բայց ինչո՞ւ թույլատրված չի ուսերենում,—այդ չի ասում քերական Սեակը։ Հայցական հուլիսն ուսերենում իր սեփական հնչյունական բնույթն ունի։—2.-դ վերջացած իգական սեռի անունների և անվանների համար, օրինակ՝ мою книгу, добрую женщину։ Եվ այսպես ստանյակ հազարավոր բառեր, Հետևաբար և ուսերենում հայցականի համար կա առանձին հուլիսական ձև—հնչ. բնույթ + ֆունկցիա։ Եվ կարծում եմ, քաղ. Սեակն այդ չգիտե՞ր, Գիտե՞ր, գիտե՞ր, Ուստի և նա իբրև օրինակ բերել էր ոչ եզակի ԿНИГУ ձևը, այլ հոգնակի КНИГИ.

լովն էլ հետզհետե մեռել է և կրող խնդրի հայցականը գործածվել է նաև իբրև ենթակառուցված, հայցականը ենթակառուցված, — կասեն ղարիբայանական քերականության սիրողները:— Ինչպե՞ս կարելի է միևնույն ձևով դնել ենթական և կրող խնդիրները: Ֆրանսերենի քերականությունների մեջ այժմ այլևս ոչ մի հոլով չեն դնում, թեպետ և դերանունների համար դեռ կան ուղղական, հայցական և տրական հոլովների մեղացողներ (il, le, lui և այլն): Ի՞նչ եք կարծում, ֆրանսերենը որևէ միջոցով չի՞ արտահայտում մեր բոլոր հոլովների ֆունկցիաները: Բայց լուի ֆունկցիաներով հոլով չի կարող ընդունել որևէ ֆրանսիացի լեզվաբան: Այդպես որ լիներ, բոլոր հոլովներն էլ բոլոր լեզուների մեջ կլինեին, և հոլովների թիվը տասնապատիկ ավելի կլիներ: Ֆրանսերենում հոլովների ֆունկցիաներն արտահայտվում են մեծ մասամբ նախադրություններով. բայց նախադրությունների ու հետադրությունների հետ գոյականների դործածությունը հոլով չէ:

Միայն մեր քերական Ա. Ղարիբյանն է, որ իր անունավոր քերականության մեջ հոլովների հարացույցների մեջ ներգոյական հոլովներ է կազմում մեջ հետադրությամբ պատկեր մեջ: Այն էլ կարո՞ղ եք իրականացնել, բանորայն ներգոյական՝ աշակերտի մեջ, իսկ բարոյալս ներգոյական՝ աշակերտի մեջ(ը): Ղարիբյանն այնքան էլ չի հասկանում, որ եթե նախադրությունների կամ հետադրությունների հետ դործածություններն առանձին հոլովներ լինեին, այն ժամանակ բոլոր թիվական լեզուներն էլ բոլոր հոլովները և շատ հոլովներ կունենային, որինքան՝ գերմաներենում կլիներ՝ բացառական von der Stadt, aus der Stadt, գործիական mit der Stadt, ներգոյական in der Stadt և այլն:

Առանց մեր արևմտյան աշխարհաբարը, Չկա դրա մեջ ներգոյական հոլով՝ բազմաբան, անհատական, բայց դրա ֆունկցիան արտահայտվում է մի կերպ՝ նա անտարբեր կրնալի կամ նա անտարբեր մեջ կրնալի:

Ահա թե ինչը չի հասկանում քաղ. Սեակը: Նա կարծում է, թե բոլորապես լեզվի դասին օրինակը բերելով հայոց լեզվին կստիպի, որ առանձին հայցական հոլով ունենա, որովհետև ուսուցիչն ունի այդ հոլովը և որովհետև հայցականի ֆունկցիան կա հայերենում:

Ոչ միայն ամեն լեզու ունի իր առանձնահատկությունները հոլովների նկատմամբ, այլև հաճախ նույն լեզվի ժամանակակից բարբառները, այլև ավելի ևս հաճախ իրարուց տարբերվում են միևնույն լեզվի հին ու նոր միջնակները: Ինչպես ամեն բան լեզվի մեջ, այսպես և հոլովները մնայուն չեն, հենց մեռնում են, նորերը ծնվում: Վերնում տեսանք, որ ուսուցիչն ուսուցիչն են եկել նոր հոլովներ՝ քանական (количественный) և տեղական (местный = հայերենի ներգոյական) ըստ Պեդկովսկու: Մեր հին լեզվի ներգոյականը (ի տեղու, յայդու և այլն) մեռել է, և դրա փոխարինող առաջ է եկել մի նոր ներգոյական՝ տեղում, այդում: Այսպես և մեռել է մեր հին լեզվի հայցականը՝ գիրս, միտս, բարս, Գուգարս, բայց տեղն առաջ չի եկել մի նոր հոլով, այլ հին լեզվի ուղղականը՝ գիրք, միտք, բարք: Գուգարք գործածվել է նաև իբրև հայցական և ստացել է եղակի թվի նշանակություն, իսկ հոգնակի թվի համար ընդհանրացել է -եր, -ներ մասնիկներով կազմությունը: Հիմա առում ենք՝ գիրք ունեմ, միտք չունի, լար բարք ունի, գնաց Գուգարք: Հին հայցականն, ուրեմն, մեռել է՝ տեղի տալով ուղղականին:

Հիմա, ես ասում եմ՝ արդի հայերենի քերականությունը, նկարագրա-

կան քերականութիւնը դեռ քէ հետեւի լեզվի դիալեկտիկային. նրա զարգացմանը: Դա պիտի ըլնի մեր արդի լեզվի իրական ֆակտերից, օրինակով իրականութիւնից: Իսկ օրինակով իրականութիւնն այն է, որ հոլովի համար տեւրածնայ ճշտանակաւ քնույթի ոչ մի տարբերութիւն չից գտնւում այժմ մի կողմից՝ ուղղականի ու հայցականի մէջ՝ իմ գիտքը պատուից, իմ գիտքը պատուեցին, երկուսի մէջ էլ գիտքը հին ուղղականն է, լրտղն է. Թեպետ մի կողմից՝ հնթական, մյուսը՝ խնդիր, նույնպէս մյուս կողմից՝ հայցականի ու տրականի մէջ՝ ես տեսա իմ աշակերտիմ, ես օգնեցի իմ աշակերտին:

Ես չեմ ուզում այլեւ մանրամասնութիւնների մէջ մտնել. հետաքրքրողը կարող է այդ գտնել իմ «Աշխատհարարի» հոլովները և շեշտական հոլովը, մասամբ և «Հայց» լեզվի աշխատութիւնների մէջ: Այստեղ միայն այս պիտի շեշտեմ, որ քաղ. Սեական ու Ա. Ղարիբյանը փոխանակ ենելու մեր արդի լեզվի օրինակով իրականութիւնից, եւնում են օտար լեզուներից, հատկապէս ռուսերենից, «Եթէ մի աշակերտ ուսաց լեզվի դասին ասի...»: Դա հենց «Պրոպոստեսի» անկողինն է, որի մասին հիշեցի սկզբում: Կան և այնպիսիները, որոնց ենում են մեր լեզվից. դրարարում կա հայցական հոլով, ուրեմն և մեր նոր լեզվի մէջ պիտի լինի: Դա էլ պեղանտիւմ է, աշտինքն անհիմն հետեւողութիւն մի անգամ ընդունված քերականական ձևերի, առանց իմանալու, որ լեզվի մէջ դիալեկտիկա կա: Եվ այս պեղանտիւմը միգնում, և ոչ միայն միգնում, գործող է նոյն քերականութիւնն նկատմամբ, որովհետեւ մի երեսուն տարի առաջ մեր դպրանոցներում զոտ գրաբար էին սովորեցնում և շարադրութիւններ գրել տալիս: Դա հայերենում կարելի է զարմապետիւմն ասել, և ասեղանտ քառը ֆրանսերենում հենց զարմապետն էլ նշանակում է:

35ա. Ա. Ղարիբյանի մանկավարժականը:—

Այժմ տեսնենք թե Ա. Ղարիբյանն ինչպէս է գործադրում «Պրոպոստեսի» անկողինը մեր լեզվի նկատմամբ:

Այս քերականը դիտեմ, որ վերափոխութիւն կա, բայց թե ինչ է դա, ես չի հասկանում: Նա գիտեմ, որ ճող էլ կա, բայց ես այդ էլ չի հասկանում: Նա իր քերականութիւնն մէջ (հր. Ծ) դրում է. «Սաճակը հեռացավ քաղաքից» նախադասութիւնն մէջ Սաճակ, հեռանալ, քաղաք քառերը իրար հետ կապված են և մի միտք են արտահայտում ը (Սահակը), ացավ (հեռացավ) և ից (քաղաքից) վերափոխութիւնների օգնութիւնով: Սաճակը գեղց դեպի տուն նախադասութիւնն մէջ միտքն արտահայտվում է ը (Սահակը), աց (գնաց) վերափոխութիւնների և զոպի նախադասութիւնն օգնութիւնով:

Նկատենք նախ՝ որ «հեռացավ» քառի մէջ ացավ վերափոխութիւնն չէ, այլ աց քնի ածանցված վերափոխութիւն, այսինքն վերափոխութիւնն է աց: Ապա «գնաց» քառի մէջ վերափոխութիւնն չկա, աց վերը քնի ածանց է: Ապա դարձյալ՝ այս քերականը «Սահակը» քառի վրա դրված ը հոգը գնում է իրը և վերափոխութիւնն այնպէս, ինչպէս «քաղաքից» քառի ից վերափոխութիւնը: Նա հոգն ու վերափոխութիւնը չի ջոկում միմյանցից:

Թերականական տգիտութիւնն ո՞ր աստիճանն է ցուցադրում մեր այս քերականը: Եվ ես պնդում է իր այդ տգիտութիւնն վրա, հայցական հոլով գրանելու համար շարունակ այդ մանկավարժականը, պրիմները—նշանները գործադրելով մեր լեզվի խնդը վերափոխութիւնների և ավելի ես խնդը հոգի դիտին: Ի՞նչ ասի նա: Ռուսաց լեզվի մէջ վերափոխութիւնները նույնը չեն,

ինչ որ հայերենում. հեշտ չէր ուրեմն ռուսերենի օգնութիւնով հայերեն քառերի վերապարտութիւնները որոշել: Ապա՝ ռուսերենում չկա նոյ, որպէսզի նա ճապիրոյի օգնութիւնով կարողանար հոգը վերապարտութիւնից չոկել, Ուստի նա իրեն ազատ է զգացել այսպէս գրելու. «նախադասութիւն մէջ մի շարք հոլովներում անձ և առարկա նշանակող գոյականները տարբեր վերջավորութիւն են ստանում: Օրինակ՝ ես տեսա թո գիրքը (ստական և առարկա), բայց՝ ես տեսա թո ուսուցիչին (անձ)» (հր. 34): Եվ այսպէս է, Ին (իր ընդգծումով), այսինքն ը հոգը և ն հոգը, գոյականի «վերապարտութիւն» են, և նախապատրաստված է հոլովման սքեման՝ լորս վերնադիրների տակ՝ «իր անորոշ, որոշյալ» և «անձ անորոշ, որոշյալ»: Եվ ինչ է առաջ եկել: Դուք իմ քերականութիւնների մէջ կգտնեք ընդամենը հինգ եզակի հոլովական ձև՝ քաղաք, քաղաքի, քաղաքից, քաղաքում, իսկ Ա. Ղարիբյանի քերականութիւնի մէջ (հր. 35), խեղճ եղիք և «մեջ» բառի հարստահարութիւն հետեանքով, կգտնեք 31 եզակի հոլովական ձև, այո՛, երեսուն և մեկ եզակի հոլովական ձև փոխանակ հինգի:

Եվ քաղ. Ղարիբյանը, նրա հետ և Սեակը, կարծում է, թե «հայոց լեզուն լիակատար չափով արտահայտել է քերականութիւն մեջ»: Եվ նա կարծում է, թե դրանով «հեշտացրել է քերականութիւն գործը», քերականութիւն ուսումը աշակերտների համար, և թե աշակերտների համար կառուցել է այնպիսի քերականութիւն, որ ամենադուրին ձևով մշակի նրանց մէջ դիւլիկտիկական մտածողութիւն: Խեղճ աշակերտ, որ անգիր անելով այդ 31 պարագիգման՝ պիտի կարծի, թե արդեն ըմբռնեց մեր լեզվի հոլովումը և սեռականը տրականից կըլի, հայցականն ուղղականից ու տրականից, Միամիտները թող համատես նայ ամենին:

Ես այն կասեմ, որ հեղինակն ինքն իր զարիբյանական քերականութիւն մէջ խճճվել է և նուրիսկ հոգի օգնութիւնով լի կարողանում որոշել անմարմին հայցական հոլովը: Նա անձի անունների որոշյալ հոլովման տակ, հայցականի դիմաց գրել է «աշակերտին» (նաև աշակերտի): Այսպէս և (հր. 37 «ամուսնուն» (նաև ամուսնու)» (ընդգծումներն իրենն են, Այստեղ միայն և հոգն է ընդգծած, Մ. Ա.): Այդ քերականը չի հասկանում, որ աշակերտի ձևն անորոշ է, ուստի և պիտի դրվեր «անորոշի» տակ, որով և անորոշ հայցականն անձի անունների համար պիտի լինի և ուղղականի և տրականի նման (նա մի աշակերտ ունի, նա վիրավորեց մի աշակերտի):

Ապա դարձյալ՝ այդ քերականը չի իմանում, որ անձի անունների որոշյալ հայցականն ևս լինում է ոչ միայն տրականի, այլև ուղղականի նման (նա վիրավորեց մեր աշակերտին, մեր Տիգրանին. այս պոթնետորն ունի իր աշակերտը, իր ևևաեղը, իր առպիւրեալը. նա գնաց դպի իր աշակերտը, դպի Տիգրանը, մինչև իր աշակերտը): Այսպէս ուրեմն, անձի անունների անորոշ հայցականը լինում է՝ աշակերտ, աշակերտի, նույնպէս որոշյալ հայցականը՝ լինում է՝ աշակերտը, աշակերտին:

Օգնե՛ց արդյոք այդ ը. և հոգը անձի անունների հայցականը գտնելու համար, թե միայն առիթ դարձավ, որ 31 հոլովական ձևը ուղղականի նման հայցականով դառնա 32:

Առնենք «իրի» անունների հայցականը: Այստեղ էլ նա հայցականի դիմաց դնում է՝ «իր անորոշ»՝ պատ, «իր որոշյալ»՝ պատը: Քաղ. Ղարիբյանը քերականութիւն կազմելուց առաջ արդյոք ուսումնասիրե՞լ է մեր լեզուն և

զիտի՝ արդյոք, որ ինքնի տնտեսների որոշյալ հայցականն եւ համարն, նորոշեն նույնիսկ տնտես տնտեսները, որովում է որականի ձեռք և լեզվի այդ շար-
յումն օրհցօր ավելի ու ավելի մեծ ծաղայ է առաւում։ Նալ հարկավոր է
այլ լեզուն առաւմնասիրել։ Արեղյանի քերականութայնների մեջ պատրաստ
շատ նշում կա... Նա հո հարաբերութիւններ—պարագիծների մեջ «բոսիկ
պիտի տեղավորի հետևյալ խոսքերի մեջ եզրա հայցականները, «Բայց կո
մի ալ ինքը...» որ քանենում է օղին ու ջրին, ծառայեցում է կրակին, նա-
ղին» (Նալ, Աղայան, «Մարտիկ» մեջ)։ «Եվ իմ պարտեղում... ինչպէս տեղ-
ներիս շարդում է քամին» (Ա. Իսահակյան)։

Ուրեմն օրին տնտեսների որոշյալ հայցականի դիմաց պիտի գնել
նալը և նաղին։ Այսպիսով 33 հայցականն մեզ գործածվի 33։

Առնենք աշխարհագրական տնտեսներու թաղ, Ղարիբյանն իր պարագիծ-
մաների մեջ «բոսիկ է տեղավորում մեր մայրաքաղաքի տնտեսը, արդյոք
«իրի» թե՛ «անձին» տնտեսների մեջ, որոշյալ, թե՛ «անորոշ»։ Չեմ կար-
ծում, թե՛ քաղ. Ղարիբյանն ու Սեակը անորոշ համարեն մեր քաղաքը, որ
նրանք ապրում են և նրա տնտեսը դնեն «իր անորոշին» մեջ, Ուրեմն՝ ուղ-
ղական՝ Երևանը, հայացական Երևանը։ Բայց կանք, եթե կա այդպիսի ուղ-
ղական, «Երևանը» գտնվում է Ջանգու գետի ափին, կա նաև անհոգ ուղ-
ղական՝ «Մեր մայրաքաղաքը կոչվում է Երևան»։ Եթե կա հոգով հայցական՝
«նրանք լին տեղի մեր Երևանը», կա նաև անհոգ հայցական՝ «նա ենթա
Երևան, գնաց գնալի Երևան»։ (Կա նաև «Երևանին» ձեռք հայցական, որի հա-
մար օրինակ գրքերից այժմ բերել չեմ կարող, ուստի այդ թողնում եմ)։

Այսպես ուրեմն «Երևանը» քաղաքի անվան ուղղական ու հայցական մեզ՝
«Երևան» դարբնական 31 հոլովական մեծերի մեջ չի տեղավորվում։ Եւ որով
լէ՛ արդյոք այս։

Եվ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է առաջանում այդ—Նրանից, որ այդ դա-
րիբյանական հոլովների հիմքը հակադիալեկտիկական է. չի դրված օրինակով
իրականութայն վրա, իրական փաստների վրա, «Հող» և «Հոլովական» վերջա-
վորութունն ընդհանրապես տարբեր քերականական փաստեր, իրականներ են, Հողն
իրեն լեզվի քաղաքացած տարր իր ուրույն զարգացումն ունի, հոլովական վեր-
ջավորութուն՝ իրենը։ Սա, իհարկե, այստեղ այդ լեզվի բացատրմամբ, Բայց
պիտի շեշտեմ զարծյալ հետևյալը։

Այսքեր փակել օրինակով իրականութայնը շտեմնելու՝ և բռնի կերպով
քաշքշելով հայցական հոլովի համար ստեղծել ձե, այն էլ քանի՞ մեծեր,—
դա իսկապես «Պրոլետարիատի» անկողինն է մեր քերականութայն մեջ։ Դա
ինքը հենց Ֆորմալիզմն է, ձևամոլութուն է և նույնիսկ ձևապաշտութուն, և
նույնիսկ նախապաշարված միտք ձևականի համար։ Եվ դա հետևանք է օտար
կամ հին լեզուներով կաշկանդված մտաւուն, Ֆորմալիզմն և «հակադիա-
լեկտիկականն» այն լի, որ հետևելով լեզվի պատմական զարգացմանը և
օրինակով իրականութայնը՝ քերականութայն մեջ մտնում է այնքան հոլովա-
կան ձև=հնչուական բնույթ+ֆունկցիաներ, որքան լեզվի մեջ կա իրող։
Այլ Ֆորմալիզմն ու հակադիալեկտիկականն այն է, որ ի սեր օտար լեզու-
ների կամ հին լեզվի մի հոլովի, անտես անելով իրականութայնը, և «ձեռն ու
բովանդակութայն» միասնութունը, զոլութուն լուսնեցող մեծեր է սարքում,
լուկ բովանդակութայն, այն էլ քանիսը և ինչպիսի եղանակով, Ահա՛ թե
«արդի» ժառանգութունն ո՞վ է անում, և ով է շեփոթ ստեղծում մեր լեզվի
քերականութայն մեջ։

«Ֆիտուսթյան նպատակն է տալ իրականության ճշգրիտ պատկերը», ահա թե ինչը լսելի տի մոռանալու Եվ մի անգամ որ այս լի մոռացված իմ քերականությունների մեջ, գրանով և հեշտացել է քերականության ուսումը պատանիների համար: Գրանով և աշակերտները հիշա հասկացություն են ստանում մեր լեզվի կառուցվածքի մասին հոլովների նկատմամբ:

Եվ ի՞նչ է այդ ճշգրիտ պատկերը:—Մեր աղբի գրական լեզուն, ըստ թեմի և քաղաքականության հակադիր միասնության ֆորմուլի, ունի անունների համար հինգ հոլովական և և հեշտացված բնույթ ֆունկցիաներ՝ կառք, կառքի, կառքից, կառքով, կառքում:

Իսկ թե այդ ձևերից առաջինը՝ հարացությունների մեջ տեղական—կույական—հայացական կանխանք, թե առաջական—հայացական, թե միայն սուղական, թե սառալին հոլով, —գրանով խնդրի էությունը չի փոխվի: Ես ասում եմ՝ ինչպես հարացությունների մեջ այժմ լինեց դեռ սուղական հոլով, լինեց ասում՝ ուղղական—կույական՝ կառք, այլ միայն ուղղական ենց դեռում և ասպա բացատրում, թե ուղղականը գործ է ածվում նաև իբրև կույական, —նույնպես պիտի վարվել և հայացականի նկատմամբ, այսինքն դեռ ուղղական և ասպա բացատրել, թե ուղղականը գործածվում է նաև հայացականի ֆունկցիայով՝ իբրև կորոշ առարկա և այլն:

Եվ այս համապատասխան է պատմական իրականությանը, քանի որ իբրև, սկսած ուղղականի է որ այժմ նաև իբրև հայացական է գործածվել:

Ես ասում եմ դարձալ, որ հին սեռական և տրական հոլովները մեր նոր լեզվի մեջ միացել, դարձել են մեկ ընդհանուր սեռական—տրական հոլով: Դա մեր լեզվի պատմական զարգացման հետևանքն է: Այդ ընդհանուր հոլովը ոչ սեռական է, ոչ տրական, այլ այդ երկուսի միացում: Թե այդ ընդհանուր հոլովը միացալ սեռական—տրական կանխանք հարացությունների մեջ, թե միայն տրական կամ սեռական, թե սեռիկորդ հոլով, թե առանձին—առանձին կասենք՝ սեռական՝ կառքի, տրական՝ կառքի, —այդ լուր տեղեկատվության ու մեթոդի խնդիր է: Գրանով խնդրի էությունը չի փոխվի: Ուստի ես իմ քերականությունների ու գրվածքների մեջ այդ զանազան կերպով էլ կույն եմ: Օրինակով իրականությունն այժմ այն է, որ մեր լեզվի հին սեռական և տրական հոլովներն այժմ մեկ ընդհանուր միացալ սեռական—տրական են, մեկ հոլով, հին երկու հոլովների ֆունկցիաներով:

Ես վերջացրի:

Ես այստեղ նկատի եմ ունեցել միայն քաղ. Սևակի և Ղարիբյանի գրածները: Ուստի կրկնում եմ, որ ցանկանում է այս մասին մանրամասնություններ իմանալ, կարող է կարգալ իմ «Աշխարհաբարի հոլովները և ժայռական հոլովը» ուսումնասիրությունները, ինչպես և իմ «Շալոց լեզվի տեսություն», եր. 246 հտն., այլև իմ «Աշխարհաբար» շարահյուսությունը:

ԺԱ

ԽՈՍԿ ԵՎ ԲԱՅ

36. Խոսք կամ նախադասություն:—Կույի նախ թիտոս տերմինի մասին մի փոքր բացատրություն տալ: Ես իմ քերականական աշխատությունների մեջ, չմերժելով տրամաբանությունից քերականության անցած ճանապարհություն տեղեկել, այս վերջինի նշանակությամբ ընդհանրապես

գործի նմանակ ժամանակը անորոշակա՞ն է մեղ մարմնի մեջ անգործաբար կողմում է նախադասությունն («Այնքան արագաբեր» քերականության) և, երբ Տ. «Հեղեղ» և «հզվի» տեղանքում», երբ ՏՏ, 362—364 և յայն)։

Հիմա, դասախոս Սենկեր հարցնում է «Ինչո՞ւ նա (=Մ. Արեգյանը—Մ. Ա.) իրավունք ունի... նախադասությունը խոսք անվանելու... մեր քերականությանը հիմնովին վերաձևելու...»։

Քաջ Սենկեր շփոտե, հարկա՞յ, որ այդ իրավունքը գիտությունն, այսինքն գիտանքն է ինձ տվել։ Զհասկացա՞մ նա։ Շուտով կհասկանա։

Մեր դասախոսը ընթերցողին զարմացնելու համար, ինչպե՞ս տեսանք, տալիս է հուլի քերական Գրեյսի Թրակացու անունը, մի քերական, որ մեզ ներք աղվելի քան 2000 տարի առաջ է ապրել։ Մեր դասախոսը, մի տերմինի մասին խոսելիս, ինչպե՞ս հետո կտեսնենք, ճառում է հանուն «Հեղվարանության» և ընդհանուր քերականության ամբողջ աշխարհում (այս՝ հենց այսպե՞ս՝ «ամբողջ աշխարհում»)։ Բայց մեր այդ դասախոսը, որ ինք Վամբոջ աշխարհի լեզվաբանությունն ու տերմինները ուսումնասիրել է, չի քարհհանել, որ գտնե՞ մի փոքր էլ մեր քերականությունները կարդար և մեր տերմիններին մասին մի փոքր գիտելիք, ժանտություն նրանցից ձեռք բերելու, նթն այդ մի փոքր գիտությունն ունենար, նա առաջուց կստանար իր վերնում բերած «Ինչու» հարցի պատասխանը և կիմանար, որ մեր քերականները շատ վաղուց շխոսքն և նախադասությունն իրեն համանիշ են գործածում, Գտնե՞ Ա. Այտնյանի քերականությունը կարդացած լինեք նա։ Այս գրքի մեջ (երբ 129 հտն.) նա կգտնեք. «Ամեն նախադասություն կամ խոսք երեք գլխավոր մաս ունի... Զորքինակ այս խոսքի մեջ. Հովսեփ երազ տեսավ,— Հովսեփ անուն բայի է, երազ՝ խնդիր, և տեսավ՝ բայ...»։ Խոսք կամ նախադասություն... այլ և այլ տեսակ կրածնվի... Հարաքերական կրավի այն խոսքն, որ... Զորքինակ՝ Եղբորու մը տեսա, ու լեռն լեռ կալեալա, և այլն։

Նա, հարկա՞յ, նախադասությունն տերմինը չի՞ մերժել, բայց առավելություն տալիս նա սովորական խոսք տերմինին։ Եվ քանի որ չի՞ ընդունում «մասն-բանի» («խոսքի մաս») տերմինը, շխոսքը՝ նախադասության իմաստով գործածելը ոչ մի դժվարություն չի առաջ բերում։ Երբ նա աշակերտ էի, այն ժամանակ մենք նախադասությունն չէինք գործածում, այլ միայն շխոսքն և «մասն-բանի»։

37. Տրամաբանական եռլադասությունն սխեման, ենթակա, ստորոցյալ և կալ (կալություն)։—Տրամաբանական վերացությունների խառնումը քերականության մեջ, դա անասելի շատ է վնասել քերականության գիտությանը և աղվելի և քերականության դպրոցական ուսմանը և դեռ շարունակ իր կործանարեն ազդեցությունն է գործում։ Անթույլատրելի քանականորեն այն է, որ մի քանի տրամաբանական հայեցակետեր, ուրեմն, նյութը, անհիմն կերպով առնվում են քերականության մեջ, կարծես թե դա էլ մի տեսակ տրամաբանություն լինելու, մի նախապաշարում, որի դեմ հաղթական կերպով մարտնչել է Շտայնթալը։

Այսպե՞ս է սկսում Ֆրանց Կեռնը 1880-ական թվականներին իր «Գերմաներենի նախադասության ուսումը» գիրքը, որ իր ժամանակին առանձին դեր է կատարել՝ քերականությունից, մասնավորապես դպրոցական քերա-

* Franz Kern, Die Deutsche Satzlehre, zweite Auflage, Berlin, 1888.

կանությունից տրամաբանական ավելորդ բնույթ թողնելու և քերականության ուսումնական մասամբ մաքուր լեզվական տեսակետների վրա դնելու ներկայամամբ:

Մեր հայաստանյան լեզվաբաններն իրենց քերականական դիտելիքների նկատմամբ, ջանալով, դեռ մնացել են տրամաբանական ավելորդ բնույթ ճշմարտ ներքո: Այդ ավելորդ բնույթն ամենից առաջ այն է, որ քերականության մեջ բոլորովին քաջահամբուն նույնացրել են նախադասություն ու դատողություն, ուստի և քերականական նախադասության համար իբրև նկատելի ընդունում էմ տրամաբանական նախադասության սքեման, ինչպես էլ լեզվական ձևը հաճախ հետու է դրանից:

Ինչ է դա, տրամաբանական նախադասության սքեման:

Տրամաբանությունը զործ ունի միայն սահմանական խոսքերի հետ, այն էլ այդ խոսքերի հետևյալ մի տեսակի հետ: Դատողության համար պահանջվում են երկու գաղափարներ, դրանցից մեկը մասնավոր նշանակությամբ, մյուսն՝ ընդհանուր, օրինակ՝ ծառ և բույս, կամ թե մեկը առանձին եզակյան, անհատական նշանակությամբ, իսկ մյուսն՝ ընդհանուր, օրինակ՝ Տիգրան և մարդ: Դատողության ժամանակ դիտակցաբար մտնում ենք մասնավորն (ենթանկյալ) ընդհանուրի (ստորոգյալի) մեջ, իբրև տեսակը սեռի մեջ, կամ անհատականը, առանձինը, եզակյանը (ենթակա) տեսակի (ստորոգյալի) մեջ, այսպես՝ ծառը բույս է, Տիգրանը մարդ է: Այդ միեւնույն է, թե մասնավորը (կամ թե առանձինը, եզակյանը) է (=կա, ներուհակ է, ներդո է) ընդհանուրի մեջ, կամ թե մի բանի մեջ կա, առգո է մի հատկանիշ (ձյունը սպիտակ է, — սպիտակությունը ներուհակ է, ներդո է ձյան մեջ):

Բացի այդ՝ կա նաև այն դատողությունը, որի մեջ, ինչպես սահմանումի ժամանակ, երկու գաղափարները, ենթական և ստորոգյալն, իրար հավասար են դրվում, գուցադրվում են միմյանց, օրինակ՝ Երևանը Խոհեմույնի Հայաստանի մայրաքաղաքն է:

Ինչպես դատողության մեջ կան երկու գաղափարներ, երբեք և ստորոգյալ, նույնպես և տրամաբանական նախադասության սքեմայի համար պահանջվում է ունենալ այդ երկու գաղափարներն առանձնառոտ հատուկ երկու բառեր, մի բառ ենթականի համար, մի բառ էլ ստորոգյալի համար:

Բացի այդ երկու բառից՝ հարկավոր է նաև այդ երկուսն իրար հետ կապող մի տարր, որ ցույց տա, թե այդ երկու գաղափարներից երկրորդն ստորադրվում կամ ստորոգվում է մյուսի վրա: Դրա համար առնվում է էական կամ գոյական (այսինքն գոյություն նշանակող) և՛ բայի սահմանական ներկայի եզակի 3-րդ դեմքը՝ է, որ ունի ընդհանուր վերացական բնավորություն (սչ<այդ> լ<եզվի> տ<եսություն>», եր. 138) և նշանակում է միայն այն, որ մի բանի վրա կա (առգո է) մի ուրիշ բան, առանց որոշելու այդ բաների բովանդակությունը: Այս է բայը տրամաբանության մեջ կոչվում է կոպուլա, որ է՝ կապ, հանգույց, իսկ քերականության մեջ՝ բայ կամ քայկապա (глагол-связка, copula verbalear Natur): Այս է ահա տրամաբանության մեջ դատողությունն արտահայտող նախադասության սքեման — մի գոյական + է + մի գոյական կամ ռեմիան, օրինակ՝ Ժառ է բույս, Տիգրան է մարդ:

Ինչու և պետք է այս սքեման լինի, կամ լեզվական խոսքի բազմադան ձևերից տրամաբանության մեջ առնվի հատկապես այս ձևը:

1) Տնական տրամադրությունը դորժ ունի վերացությունների հետ, առաջի րայի դեմքերը հա համառ ոչ մի արժեք չունին: Եթե ես բռնեցեմ է եմ բռնի սահմանական նշանակի նեղակ է 3-րդ դմբը, սովորաբար եղակի է, այդ էլ ոչ թե իբրև բայի դեմք: այլ իբրև ստորոգում արտահայտող կադուր (կապ, հանգույց): Նրանով խոսքի առանձին է բնորոշվում վերացական բնավորություն, որովհետև, ինչպես ասվեց վերևում, այդ է ձևն ունի շատ ընդհանուր վերացական նշանակություն: Բացի այդ՝ սահմանականի ենթկա ժամանակը գործածվում է իբրև ռիշտակատար ներկայ, ցույց է տալիս իրերի ընդհանուր մշտական բնավորություններ, մնալուն հատկություններ, բացարձակ ճշմարտություններ: Այդ պատճառով է ալ այդ ձևը հարմար է վերացական դատողություններ արտահայտելու համար:

Տրամաբանական նախադասության ալ սխեման նագում է հետևյալ փիլիսոփաներից. որոնք զբաղվել են դատողությամբ: Նրանք 1-ին և 2-րդ դմբերը մի կողմ են թողել և այն կարծիքի են եղել, թե ոչոգոսս—բան, խոսք կազմվում է միայն այն ժամանակ, երբ այդ 3-րդ դմբի նկա դրվում է մի գոյական իբրև ենթակա, և երբ կան դատողության համար անհրաժեշտ նկա բառեր—ենթակա և ստորոգյալ:

2) Տրամաբանության մեջ դատողության ենթական ու ստորոգյալը պետք է առաջադաս արտահայտված լինեն առանձին բառերով, թե լի առհասարակ բնավորության (սիլլոգիզմ) անել, արտածական (գերակտիվ) կրթականության հանել ընդհանուրից զեպի մասնավորը: Սրինով՝ բնավորության երեք դատողությունները կամ եզրները կարելի լի այսպիսի ձևով արտահայտել:

1) Մահկանացու է:

2) Մարդ է:

3) Ապա ուրեմն մահկանացու է:

Այլ պետք է ենթական մի գոյականով արտահայտված լինի:

1) Ամենայն մարդ մահկանացու է:

2) Տիգրանը մարդ է:

3) Ապա ուրեմն Տիգրանը մահկանացու է:

Ահա թե ինչու հարկավոր է, որ բանավորության դատողությունների մեջ ենթական արտահայտված լինի մի առանձին բառով—Այս թող լավ լսի քաղ. Սևակը:—

38. Տրամաբանական նախադասության և սուր լեզուների ազդեցությունը.—Տրամաբանության ուսումը, ինչպես հայտնի է, շատ սիրված է եղել միջին դարերում և ապա մինչև վերջերս: Այդ պատճառով և քերականական նախադասության նկատմամբ իշխել է արամաբանական նախադասության սքեման, և քերականության դասագրքերի մեջ մտցրել են արամաբանական բացատրություններ և արամաբանական վերլուծություններ: Այսպես օրինակ՝ ֆրանսիերենի մի հայտնի քերականության մեջ* նախադասության համար գրված է. «Մենք նախադասություն բովանդակում է երեք բառ. ենթակա, բայ և ստորոգյալ (le sujet, le verbe et l'attribut): Ապա քիչ հետո. «արամաբանական վերլուծության համար՝ ենթադրում են, թե ամեն նախադասության մեջ կա միայն մեկ քալ, եմ (être) բայը, որ մերթ արտահայտվում

* Մ. Արիստի, *Սինտակսիս*, լատինական, հր. 188 թվ.:

— A. Bruchet, *J. Dictionnaire Grammaire française avec explication*, Paris, 1889, հր. 374 թվ., 388:

է, ինչպէս՝ Pierre est Docile— Պետրոսն է հլու, մերթ ենթիմացվում է. ինչպէս՝ Pierre mange (Պետրոսն ուտում է), որ վերլուծում են այսպէս՝ Pierre est mangeant— Պետրոսն է ուտողը: Այս վերջին բառը՝ «ուտող» դնում են իբրև ստորոգյալ: Այսպէս հետո, նույն քերականութիւն մէջ, տրամաբանական վերլուծութիւն համար դրված մի շարք օրինակներին մէջ բայերը վերածվում են եմ բային. որ է կտպը (կոպուլա) և կոչվում է քոյ, և մի դերբայ ածականի, որ կոչվում է ստորոգյալ:

Սովորական լեզվական ձևերն այսպիսով վերածվում են մի ընդհանուր տրամաբանական սքեմային, ինչպէս օրինակ՝ «Ճիգրանը գնացա խոսքը դասում է՝ «Ճիգրանն է անցյալում գնացողը: Քանի որ բայի դեմքերն արժեք չունին, այսպիսի մի խոսքը՝ «Գնացի նրա մոտ» վերածում են Յ-րդ դեմքի, հետը դնելով խոսող անձին անունը. «Ճիգրանն է նրա մոտ գնացողը»:

Այս վարժութիւնները, թերևս, ոգտակար են եղել սօֆիզմներինց զգուշանալու և ամփելի և՛ սօֆիզմները որոշելու համար, բայց հետևանքն այն է եղել, որ քերականութիւն վրա իշխել է ձևական տրամաբանական նախադասութիւն սքեման և շատ քերականներ, առանձնապէս մեր հայաստանյան քերականները, շեն ըմբռնում խոսքի կազմութիւնը լեզվական տեսակետով: Նրանք մեր լեզվի նախադասութիւն (խոսքի) համար անհրաժեշտ են համարում երկու առանձին բառ, մեկն իբրև ենթակա, մյուսն իբրև ստորոգյալ:

Բացի այդ՝ կա նաև ուռաերենի ազդեցութիւնը: Ռուսերենի քերականութիւնների մէջ եւ շնվ պատահել այդպիսի տրամաբանական վերլուծութիւններին— ենթակա + բայ (եմ) + ստորոգյալ, եմ հասկանալի է, թե ինչու այդպիսի վերլուծութիւններ չպիտի լինեն: Այդ լեզվի մէջ есть է բայը քիչ է գործածվում իբրև բայ-կապ (կոպուլա глагол-связка): Զի ասվում Үчение есть полезно, այլ Учение полезно: Բայց հենց այդ պատճառով ուսաներենի քերականութիւնների մէջ տրամաբանական նախադասութիւն սքեման նրանով է իշխում, որ որոշ տիպի նախադասութիւնների մէջ պետք է ենթական անպատճառ առանձին բառով արտահայտված լինի, ոչ թէ լոկ богат, այլ я богат, ты богат, Тигран богат. Այս մասին կդառնամ և հետո: Այսպէս ուսանում բայը համարվում է ստորոգյալ. Маленький пшест (տղան գրում է) նախադասութիւն пшест բառը դնում են իբրև ստորոգյալ, եմ մեր դասախոս Սևակի համար ևս, ինչպէս կտեսնենք, բայը հավասար է ստորոգյալի:

Այսպէս ուրեմն, ձևական տրամաբանութիւն նախադասութիւն սքեմայով կաշկանդված քերականների համար՝ 1) հարկավոր է, որ ենթական արտահայտված լինի մի առանձին բառով. 2) բայը հավասար է ստորոգյալի, որովհետև, ըստ ձևական տրամաբանութիւն նախադասութիւն սքեմայի, պետք է մի բառ լինի իբրև ստորոգյալ:

Ինչ է նախադասութիւն կամ խոսքի կազմութիւնը մեր հայերեն լեզվի տեսակետով: Արդո՞ք հարկավոր է, որ միշտ առանձին բառով արտահայտված լինին ենթական և ստորոգյալը: Արդո՞ք բայն ինքը մենակ կազմո՞ւմ է մի խոսք, թե՞ բայը հավասար է ստորոգյալի, այսինքն բայ և ստորոգյալ նեօլն են, կամ ստորոգյալը միշտ բայո՞ւմ է արտահայտվում, թե՞ նաև ուրիշ տեսակի բառերով, եմ վերջապէս լեզվի ուսման, քերականութիւն մէջ պե՞տք է պահել տրամաբանական տերմինները՝ ենթակա և ստորոգյալ:

Մեր հին քերականները, որոնց վրա սովորել են իմ սերնդի մարդիկը, լինի գործածում այդ տերմինները: Այստեղի քերականութիւն, օրինակ,

այդ տեղերին հիշում է միմիայն հետևյալ փոքրիկ ծանոթութիւն մեջ.
«Դադարացիք քերականական լուծման վրա տրամաբանական լուծում ալ կ'ա-
վելցնեն, որն որ կ'կատարվի ամեն տեսակ նախադասութիւն երեք գլխավոր
տարերայքը լուծելով՝ որ են ելբական (անուն—բայի), բայ և ստորոգյալ (ուղ-
ղական խնդիր)» (եր. 483)։—Այս ստրամաբանական լուծումըս նույնն է,
ինչ վերնում գրի։ Ենթական և ստորոգյալս գործածում է Այտնյանն, ուրեմն,
իրեն տրամաբանական տեղերիննր։

39. Ստորոգում։—Ես իմ Անգլա-թուրքի քերականութեան մեջ (եր. 41)
գրել եմ.

«Ամենայն բայ մենակ կազմում է մի խոսք. օրինակ՝ գնացի, տեսով,
կկաք մի մի բայ և մի մի խոսք են, այսինքն մի մի մտածութիւն են հայտ-
նում (§ 6)։

«Անանց բայի խոսք չկա. օրինակ՝ այսօր հաց բառերը խոսք չեն կազ-
մում, այսինքն մտածութիւն չեն հայտնում, այլ միայն հատ հատ զադա-
փարներու շարկավոր է մի բայ. որ այդ բառերից խոսք կազմվի. օրինակ՝
Այսօր հաց զենցի, կամ Այսօր հաց քիսցին և այլն, Գնցի, քիսցի բայերը
մենակ ևս կազմում են մի մի խոսք։

«Խոսքն, ուրեմն, իր ամենապարզ ձևով կազմված է մի բառից, որ է բայ.
«Խոսքը մտածութեան արտահայտութիւնն է բայով։

«Բայ կոչվում են այն բառերը, որոնց մենակ խոսք են կազմում։

«Ամենայն բայ մենակ մի խոսք է կազմում, որովհետեւ միանգամից մի
քանի զադափար է միացած հայտնում. միեւնոյն միայն տեսակի բառերը մի-
անգամից մի զադափար են միայն հայտնում.

Բայի ցույց տված գլխավոր զադափարներն են՝ բայական իմաստ կամ
բայիմաստ, դեմք և քիվ։

Ահա քն ինչը չեն ըմբռնում մեր հայաստանյան լեզվաբանները։

Բերեմ և իմ Անգլա-թուրքի շարահյուսութիւնից հետևյալը. (եր. 1,
§ 2)։

«Խոսքը կամ նախադասութիւնը բառերով արտահայտված մտածութիւնն
է, որի մեջ մի ստորոգում է լինում. այսինքն մի առարկայի վերագրում է
մի հատկանիշ. օրինակ՝ Նապատեակը վախկոտ է մի խոսք է, որով նապա-
տակին վերագրվում է վախկոտ հատկութիւնը, կամ քն հաստատվում է,
որ վախկոտ հատկութիւնն է՝ կա նապատակի մեջ։

«Խոսքն ուրեմն պարունակում է ամենաքիչը երկու զադափար.

ա. Մի առարկայի զադափար, որի վրա մի ստորոգում է լինում։

բ. Մի հատկանիշի զադափար. որ ստորոգվում է առարկայի վրա։

Առարկան և հատկանիշը սակայն մենակ բազմական չեն խոսք կազմելու
համար, այլ հարկավոր է նաև՝

գ. Ստորոգում, այսինքն հատկանիշի վերագրվելն առարկային։

Բերեմ նույն գրքից հետևյալը. «Տեսանք՝ խոսքի էութիւնն է ստորոգումը,
և առանց ստորոգման խոսք չկա։

Ստորոգումն արտահայտվում է միայն մի առանձին իմբի կամ տեսակի
բառերով, որոնք կոչվում են բայ. Խոսք կազմում են ուրեմն բայերը» (եր. 4)։

Ճիշտ է այս։

40. Բայ և դերբայ. «Պեղծութեանս անկողինը և քայլերի կերպերը։
Նրանք որ կաշկանդված են Շապիրոյան քերականութեամբ և բայերի մեջ

դեռնում են նաև դերբայները, այդ չեն ըմբռնել: Բայց վաղուց, շատ վաղուց բայի ձևերը բաժանել են երկու տեսակի, «իսկական բայական ձևեր», որ կոչում են *verbum finitum* (= որոշ բայ), «բերմաներեն *Redelormen* (= խոսքի ձևեր), և «անիսկական բայական ձևեր», որ կոչում են *verbum infinitum* (անորոշ բայ), «գերմաներեն *Nennormen* (= անվանական ձևեր), *Առաջինները* ցույց են տալիս դժգոհ, թիվ, ժամանակ և եղանակ, իսկ երկրորդները դժգոհ, թիվ, ժամանակ ու եղանակ չեն ցույց տալիս: Արանք, ինչպես տեսել ենք, բայերի ընդհանուր ածականներ և ածականներ կամ մակերայներ են:

Հայերենում ևս վաղուց, շատ վաղուց կատարված է այս բաժանումը և շատ հիմնավոր կերպով իրեն բաժանման սկզբունք ընդունված է դժգոհ, ուստի և իսկական բայերը կոչել են դիմավոր բայ, իսկ անիսկական բայերն՝ անդիմավոր: Բայց այս տերմինները չեն բավարարել մեր քերականներին, նրանք «անիսկական բայերը» կոչել են նաև դերբայ, և բայ տերմինը պահել են միայն «իսկական բայերի» համար:

Թե ում ձեռով և երբ է առաջ եկել այդ բաժանումը, դա մեզ համար կարևոր չէ այժմ: Կարևորն այժմ այն է, որ բայը և դերբայը լպիտի շփոթել միմյանց հետ: Կարևորն այն է, որ քերականության մասին խոսողները պետք է իմանալին այդ տերմինների նշանակությունը հայերենում և առանց մեծ աշխատելու չգործադրեն «Թրոկրոստեսի անկողինք» մեր լեզվի համար: Ի՞նչպես:

Ռուսերենում մինչև վերջերս էլ այս երկակի բաժանման մասին ճիշտ գաղափար չունեին: Ահա Ա. Պրոբորաշենսկու «Краткая русская Грамматика, ч. первая, Этимология», издание 17-ое, էր. 60, եղանակների մեջ կգտնեք *неопределенное наклонение* անորոշ եղանակ, իրեն առաջին մեկը չորս եղանակներից, որոնք երեքն են՝ սահմանական, պայմանական, հրամայական: Ապա ուսուցիչները գլխի են ընկել, որ այդպիսի եղանակ չկա, և ստեղծել են «բայի անորոշ ձև»: Մապիրոն գրում է (1934, I, 57). «Բայի անորոշ ձևը... չի պատկանում երեք եղանակներից ոչ մեկին», ուզում է ասել, թե դա եղանակ չէ: Վերջապես ուսանական հատկությունը գործածում են նաև օտար ինֆինիտիվ բառը, Նվ ապա ուրեմն առաջ է եկել բայի ձևերի այս բաժանումը՝ եղանակ ունեցող և չունեցող, և մեր Ա. Ղարիբջյանը (հր. 61—64) գրում է. «*инфинитив* և *бесконечность* մեջ բայերը գործ են ածվում երկու ձևով՝ դերբայական և եղանակային», ուզում է ասել՝ «եղանակավոր», «եղանակ ունեցող»: Նախ՝ «թե ինչպե՞ս» կա, էլ «նախադասությունն ինչի՞» համար է: Ապա ի՞նչպես թե «գործ են ածվում», մի՞թե «դերբայական ձևերը» գործածությամբ են:

Հիմա հարցի Ռ՝տեղից դուրս պրծավ «բայի եղանակային ձևեր» տերմինը հայերենի քերականության մեջ *verbum infinitum*-ի նշանակությամբ:—«Թրոկրոստեսի անկողինք»: Եթե ուսուցիչները եղանակի վրա հիմնի այդ բաժանումը, այդ հասկանալի է: Ռուսաց լեզվի մեջ կարելի չէ այդ բաժանման համար իրեն սկզբունք ընդունել բայերի դժգոհ, որովհետև նրանց բայերի դժգոհն անցյալ ժամանակներում միակերպ են,—*говорили* գործածվում է երեք դժգոհ համար ևս: Ռուսերենում կարելի չէ նաև բայերի մասնաճյուղի ընդունել իրեն այդ բաժանման սկզբունք, որովհետև ռուսերենի դերբայներն ունեն ժամանակներ: Մենք էլ, ուրեմն, եզրեցիկ, որ չունեն դերբայներ:

Իսկ հայերենում, ԶԷ՞ որ հայերենում այն բաժանումը վաղուց, շատ վաղուց կատարված էր դեմքի հիման վրա, և կարելի էր իմանալ որ բայերը, և տանտեմ բայերը, և ապա դրանց իմաստով բոլորը և տղերքայն տերմինները, և ինքը Ղարիբյանը պահում էր դերբայ տերմինը:

Հիմա Ա. Ղարիբյանի քերականության շատագուց Անակոթ գործընթացը բացակայելի հարցնելով, Երևան՝ Մ. Արեգյանի իրավունք ունի... Այս փեռակառուցումը ճիշտովին վերանայելու (ընդգծումն իրենն է), իսկ ուրիշներին (իմա, Ա. Ղարիբյանին, Մ. Ա.) իրավունք չի վերապահվում քերականության մեջ որևէ փոփոխություն կատարելու (սեպտեմբ. 1884, թ 34): Նաև փոխադրելի հարց է: Գիտությունը զբաղվելու և ամեն բան փոփոխելու համար իրավունք չեն հարցնում և չեն տալիս: Բայց նոր մեկը հիմնավորված, անտեղի փոփոխություն է առաջարկում կամ նույնիսկ կատարում, կամ որևէ բան հենց այնպես առում է, որա վրա ցուցում են, իսկ նրա վրա միտադրում: Այդպես էլ զգործարարական ձևերը և սրայի եղանակային ձևերը (61, 64) տերմինների առթիվ: Մի՞թե երկու դույզ տերմինները չեն բավարարել Ա. Ղարիբյանին, և կամ թեղանակային ձևերը, ուրեմն և բայերի եղանակն ավելի հն՞շտ ըմբռնելի է պատասխանների համար, քան թե դիմավոր և տեղեմ ձևեր կամ բայ և դերբայ: Ով որ պատահիներին քերականություն է դաս տվել, նա շատ լավ գիտե, որ նրանք, նույնիսկ 10—12 տարեկանները, իսկույն ըմբռնում են բայերի ղեմքը, իսկ եղանակը՝ ոչ, Այո՞, շատերը նույնիսկ մեծ հասակում չեն հասկանում, թե ինչ է բայի եղանակն ասածը, ԶԷ՞ր հաճատում: Ահա մեզ Ա. Ղարիբյանը, որ սեռայ պոլեմատորիաթի դասակարգային լիզվիտ քերականության մեծածախալ դասագիրք է գրել, որ բայերը բաժանել է զգործարարական և թեղանակային ձևերին և ո՞վ հրաշք, կա եղել նաև շրջակայան զգործարար: Դ՛նչպես: ԶԷ՞ որ շրջակայանը եղանակ է, որ ըստ Ա. Ղարիբյանի, օտարահայտում է մի բան անելու կամ լինելու ցանկություն, իդե, տենչանք (եր. 69), իսկ զգործարար զգործայ է նրանով, որ թեղանակայինն չէ, այսինքն եղանակ չունի: Էլ ի՞նչպես առաջ եկավ այդ շրջակայան զգործարար, որ, նույնպես ըստ Ղարիբյանի, շեղույց <է> տալիս մի կատարելիք գործողություն և եղելություն, որ կամքի, ցանկության, իդեք արդյունք է լինելու... (եր. 64):

Ահա թե ինչ պիտի դիտեր դասախոս Անակոթ, եթե կարող էր իրար հակադրել զգործարար և թեղանակային ձևերը, միաստմանակ և շրջակայան զգործարար զեմլ—այդ անհեթեթություն է: Էլ չեմ ասում, որ շրջակայան զգործարար ինքնըստինքյան էլ անհեթեթություն է: Բայց այդ. թողնենք, եթե շարունակենք, Ա. Ղարիբյանի քերականության, ինչպես և նրա թևարկու Անակոթ հոգիվածի մեջ ուրիշ այսպիսի կուրյուզներ էլ կգտնենք:

Ահա մեզ մի կուրյուզ: Ա. Ղարիբյանը (եր. 89 հատ.), ոգտվելով իմ քերականությունից, խոսում է բայերի կազմության մասին և սկսում է այսպես. «Բայերն ըստ կազմության... լինում են չորս կերպի՝ ստեղծական, կրավորական, պատճառական և բազմապատկական:—Այդ սկերպը բառի փոխանակ հայերեն լիզվով պետք է սովորական ստեղծական բառը լինել, բայց Ա. Ղարիբյանից (ինչպես նրա քերականությունից երևում է) դժվար է սովորական հայերեն լիզու պահանջել: Սակայն կուրյուզն այդ չէ: Զգործարար է լինել և գրել այդ սկերպը բառի մասին,—այդ ինչ չի հեռաքրքրում,—քերական Անակոթ այդ բառի առթիվ այսպիսի մի հարց է տալիս. Երևան՝ Մ. Արեգյանին

խրատունք ունենող զերբայաները կերպ կոչելու (ներկա զերբայը՝ կատարվող կերպ, անցյալ զերբայը՝ կատարված կերպ, ապառնի զերբայը՝ կատարելի կերպ)», իսկ Ա. Ղարիբյանն իրավունք չպիտի ունենար «կերպ» բառը այս կամ այն, այս զնպատակով, — կասնմ ես, — սովորական ստեղծագործության համար օգտագործելու: — Ա. Ղարիբյանին ոչ ոք չի կարող դրկել այդ իրավունքից, մանավանդ որ «կերպ» բառը մեկ մեկ գործածվում էլ է ստեղծագործության համարում, նույնպես ոչ ոք չի կարող արգելել քաղ. Սեակին հոգոված գրել. բայց ամեն հոգովածագրից պահանջում են՝ ճշմարտություն ասել և հասկանալ իր ասածը:

ա) Ես զերբայը = verbum infinitum հրեքն «կերպ» չեմ կոչել, ինչպես բարեհաճում է գրել քաղ. Սեակը: Բացեք իմ «Աշխատհարարի» քերականությունը» և, հր. 100—102, 111—115, 120, 127. «Տարրական» քերականությունը» և Ա տպագր., հր. 49—53. «Հեղինակ» լեզվի» և «հայերեն» և «կանոն» զերբայաները վերնագրի տակ՝ անորոշ զերբայ, անկատար զերբայ, ապառնի զերբայ, անցյալ զերբայ երկու ձևով՝ վաղակատար և հարակատար և ենթակայական զերբայ: Այս բոլորը, վեց զերբայաները, նույն կարգով և նույն անուններով արտագրել է Ա. Ղարիբյանը առանց հիշելու դրա աղբյուրը՝ իմ «Աշխատհարարի» քերականությունը» և կամ «Տարրական» քերականությունը» և Քաղ. Սեակն ու Ա. Ղարիբյանն, իհարկե, չգիտեն, որ ես եմ գործածել զերբայաների համար անկատար, վաղակատար, հարակատար և ենթակայական տերմինները:

բ) Քաղ. Սեակը, քերականության դասախոս լինելով հանդերձ, չի հասկանում մեր բայերի կերպ — aspect, actionsart ասածը: Իսկ ով որ այդ չի հասկանում, նա երբեք չի կարող գիտակցաբար ըմբռնել մեր բայերի բազմաթիվ ժամանակների նշանակությունները: Ա. Արեգյանի «Աշխատհարարի» շարահյուսությունը պարտավոր են ուսումնասիրել այն ամենքը, որ շահագրգռված են աշխարհային հայրենիքի գրել է Ա. Մեյնը: Եթե քաղ. Սեակը Մեյնի խոսքին հետևած լիներ, նա այդ հոգոված գրելիս կիմանար, թե ինչ են մեր լեզվի մեջ բայերի չորս «կերպերը», որոնց մասին շատ մանրամասն քաղաքականություն կա իմ քիչ առաջ հիշված աշխատության մեջ (հր. 224—269) և որ առաջին անգամ ես եմ պարզելու նա կիմանար այդ և թերեւ չգրել, թե իր Արեգյանը զերբայաները կերպ է կոչել:

Ես այստեղ, հարկավ, չպիտի քաջատրեմ կերպերը. բերեմ մի փոքր հատված միայն: «Բայի կերպերը... ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ: Բայի պարզ ձևերը... ցույց են տալիս սոսկ գործողություն և բայի պարզ կերպերն են (գնամ, գնացի, կգնամ, պիտի գնամ, գնացի, գնա)։ Իսկ բազմաբայի ժամանակները կազմում են մյուս կերպերը, որ են՝ կատարվող կերպ, կատարված կերպ և կատարելի կերպ, որոնք են կազմվում են զերբայաներով և սրանցից էլ ստանում են իրենց գործողության հատկությունը՝ հարաձիգ կատարվող, կատարված վերջացած և դեռ կատարելի լինելը մի որոշ ժամանակակետի նկատմամբ, որ «արտահայտվում է ժամանակի բայով, օրինակ՝ վաղը, ժամի 5-ին, նա զնայիս կլինի, վաղը, ժամը 5-ին, նա զնացած կլինի, վաղը, ժամը 5-ին, նա դեռ նոր զնալու կլինի: Այս երեք խոսքերի մեջ ես բայերի ժամանակն ապառնի է

(խնկապետ ներկա ժամանակն է իբրև ապականի գործածված)։ Բայց առաջին նախադասության մեջ գործողությունը մտածվում է իբրև ազատ՝ ժամը 5-ին կատարվող, որ սկսված է և հարածից շարունակվում է, երկրորդի մեջ՝ արգեն կատարված, վերջացած, իսկ երրորդի մեջ նույն ժամանակակետում գծող սկսված, գծող նոր կատարելի է, Այսպես և անցյալ ժամանակներն են գործողությունն ունեցող հատկություններով՝ Երեկ, ժամի 5-ին, նա գնում էր, գնալիս էինք։—Երեկ, ժամի 5-ին, նա գնացել էր, գնացած էինք։ Երեկ, ժամի 5-ին, նա գնալու էր, գնալու էինք։ Այսպես և ներկայի նկատմամբ։

Դերբայները՝ (անկատար, անցյալ և ապականի) ցույց են տալիս կատարվող (հարածից), կատարված, կամ կատարելի նշաններով, բայց առանց նկատի ունենալու որևէ ժամանակակետ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ։ Օրինակ՝ զալիտ անկատար դերբայը ցույց է տալիս լոկ հարածից գործողություն, նկատման անցյալ դերբայը ցույց է տալիս լոկ կատարված գործողություն, նույնպես զալու ապականի դերբայը ցույց է տալիս լոկ կատարելի գործողություն, Դրանք գծող դերբայներն են, այլ լոկ դերբայները, որովհետև դրանք հետ չկա որևէ ժամանակակետի գաղափար։

Այստեղ նկատենք, որ անցյալը և ապականի դերբայ տերմինները միշտ չեն հայտնում այդ դերբայների բնավորությունը։ Իբրև դերբայ դրանք, ինչպես և անկատար դերբայը, կարող են առնվել ամեն մի ժամանակակետի նկատմամբ, ինչպես օրինակ՝ Այս բուսերիս որ խոսում եմ (ներկայումս), նա եկել է, գալու է, գալիս է։ Երեկ երեկոյան, ժամի 8-ին, նա եկել էր, գալու էր, գալիս էր։ Վաղը առավոտյան ժամի 7-ին, եկած էինք, գալու էինք, գալիս էինք։

Գեներացրած—(aspect, actionsart) ունեն մեկ լեզվի մեջ միմիայն դիմավոր բայերը։

Այսպես ուրեմն, իրարուց որոշ կերպով պետք է տարբերել բայ=դիմավոր բայ (verbum finitum) և դերբայ (verbum infinitum)։

41. Առարկայությունը։—Երբ ես բայ եմ ասում, կամ երբ իմ քերականությունների մեջ բայ բառն է գործածված, դա բուն բայն է, դիմավոր բայը—խոսական բայը, собственно-глагол, eigentliche Verbalform և ոչ թե դերբայը, անդեմ բայը։ անխոսական բայը—uneigentliche Verbalform։

Ինչի՞ մեջ է հայերենում ամենից առաջ այդ տիպի բառերի, բայերի,—դիմավոր բայերի էական հատկությունը, որ շունին մեր մյուս բառերը։

Ամենից առաջ դա առարկայությունն է, այսինքն այն որ տրամաբանական ոգեմայի մեջ, ինչպես տեսանք, կուլում են կոպուլա, կապ (связка), որով արտահայտվում է, թե մի բանի վրա կա, առգո է մի հատկանիշ, որով և միայն կազմվում է խոսքը կամ նախադասությունը։

Իմ 1906 թ. և հետո տպված աշխատությունների մեջ, ինչպես վերևում բերված ցիտատներին կարելի է տեսնել, առանձնապես շնչոված և բացատրված է բայերի այդ հատկությունը։ Բայց դրանք իմ, Մ. Արեղյանի աշխատություններն են, Իսկ Արեղյանին կարող են չհամապատասխանել չիմա Ա. Ղադիրյանի և Սևակի ու նրանց նման մտածողների համար մատնացույց կանեմ, ըստ Ա. Ղադիրյանի, «ամբի կարող նդրալրական Ռուսաստանի մասնազետներին» միկի աշխատությունը, Ա. Մ. Պեշկովսկու «Ռուսերենի շարանազետներին» միկի աշխատությունը, Ա. Մ. Պեշկովսկու «Ռուսերենի շարանազետներին» միկի աշխատությունը, որ «РСФСР-ի Լուսժողովի կազմին» թույլատրված է իբրև ուսումնական օժանդակ գիրք բարձրագույն

մանկավարժական դպրոցների համար», տպւմած է 1935 թ. (օրինմն բոլորովին թարմ) «Պետական դպրոցական-մանկավարժական հրատարակչության կողմից»: «Հրատարակչության» կողմից տպւմած առաջաբանի մէջ զօղւում է այդ գիրքը իր հատկութիւնների համար և ասւում է թէ «այդ հատկութիւնների պատճառով հատկապէս այդ գիրքն է հանձնարարւում իբրեւ մի օժանդակ գիրք ուսանողների համար», քանի որ հատուկ դասագիրք չկա ցերեկանութեան:

Բայց այդ գրքի IX գլուխը (հր. 149 հան.), СВЯЗЬМОЕ վերնագրով, և կպոնեք մանրամասն, երկուր ու բարակ բացատրւած այն, որ իմ աշխատութիւնների մէջ «եղմ կերպով է ասւած: Ըս շնմ կարող, հարկաւ, այստեղ թարգմանել այդ գրքի բոլոր բացատրութիւնները: Շատ լավ կլինեն, որ մեր հայաստանյան քերականները կարդային և լամ որոճային այդ գլուխը միշտ նկատելու անհնալով հայերենի առանձնահատկութիւնները, և այդ ժամանակ նրանք կհամոզւին, որ Պեշկովսկու բերած մի շարք բառերի մէջ կան այնպիսիները, որոնք բոտ բոլոր լեզվաբանների, ըստ Պեշկովսկու և բոտ իս, լոկ պատկերացումներ են արտահայտում, ինչպէս՝ ապիտակ, երեկ, ծերունիների, ծով, կանաչի, РАБОТАТЬ—աշխատել, ОГОЛОТОВ, ГОЛОД, սովորել—УЧИТЬСЯ, հալոթենական և այլն: Ըս բերում եմ հայերենը և ոչ բոլորը: Բայց կան և այնպիսիները, «որոնք արտահայտում են ոչ թէ մտքի (МЫСЛЬ) պրոցեսից լոկ պատկերացումներ, այլ ամբողջ մտքեր: Այդպէս են հետեւալ բառերը վերին շարքից: Сплю, убирайтесь, нелзя, приехали, стыдно, богат, умны, жалъ, убил— քնում եմ, կորեք, չի կարելի, եկան, ամոթ է, հարուստ է, հեռացեք, խելոք է, ափսոս է, սպանեցին: Իրար նտեից կարդալով այդ բառերը, դրանց յուրաքանչյուրի մէջ նկատում ենք ինչ որ առանձին լիակշռութիւն (полновесность), որ դրանք նմանեցնում է ոչ թէ բառերի, այլ ամբողջ ֆրազների—(ասացւածների: լամ լսեցեք,—Մ. Ա.): Իհարկեւ, այդ օֆրազները մնում են միաբառ, կցկտուր, շատ բանում անորոշ (օրինակ՝ եկան պահանջում է պարզել թէ ով եկան. չի կարելի հարց է հարուցում, թէ ինչը ի՞նչ կարելի և այլն): Բայց և այնպէս դրանք այն շեն, ինչ որ սոյնտակ, երեկ, ծերունիների, ծով...»

Օվերջին բառերի մէջ, եթէ դրանք արտասանենք միայն իբրեւ բառեր, ոչ մի միտք չկա, ընդհակառակն, առաջիններից յուրաքանչյուրի մէջ պարզ կերպով զգում ենք առանձին միտք, այն էլ բոլորովին անկախ նրանից, թէ ինչպիսի ձայնով կարտասանենք դրանք (և արդոք կարտասանենք ընդհանրապէս) կամ միայն կմտածենք մեր մեջ: Ահա բառի մէջ եղած այս երանգը, որ ցույց է տալիս, թէ բառը համապատասխանում է ոչ թէ լոկ պատկերացման, այլ մի ամբողջ մտքի, շարահյուսութեան մէջ կոչւում է տոտոգրի¹: Ստորագրիութեան մի քերականական կառոցգործ է, այն էլ կատեգորիաներից ամենակարեւորը, որովհետեւ նրա՝ մեջ միայն սերտ կապւում է խոսքը մտքի հետ: Ինչպէս ամեն կատեգորիա, դա էլ կարող է արտահայտւել զանազան հնչունական միջոցներով: Ուշագրութեամբ զննելով այն բառերը, որոնց մէջ նկատեցինք ստորագրիութեան երանգ, կգտնենք նրանց մեջ՝ 1) բայեր, բոլոր ժամանակներով ու եղանակներով, 2) բայեր, որոնք ուշագրւում են այնու, որ մակրակ լինելով, ալսինքն հատկանիշ ցույց լտալով հանդերձ՝ գործածւում

¹ Պար է լինել «կշմում է ստորագրիութեան, իսկ ոչ ուր երանգն ունեցող բառեր» (Գ. Ման Մ. Արեգյանի (Նմր.):

են միայն բայերի հետ, այն էլ ոչ ոմէն բայի հետ, այլ գրեթէ բարձրագոյն
 ԾԿԵՒ—լինել, եմ.—բայի հետ. (нелзя было—нелзя будет, стыдно, бы-
 ло стыдно—будет, умна была—умна будет, жаль было—жаль будет):
 Այս բայերը... եղանակով են բայ-կապ (глаголы-связки) և ուշագործվ են
 նրանով. որ իրենց առկապային (присвязочным) բայի հետ միանում են
 ի մի ամբողջությամբ, որ խոսքի մեջ (в речи) հրեան է գտնուող բարձր-
 գոյն արտահայտություն միանույն ստորոգծելիության... Այսպիսով ստորո-
 գծելիության կատեգորիայի մեջ գտնուել ենք մի կապակցություն բայականե-
 րյան (глагольность) կատեգորիայի հետ, այն էլ այն թեղանկագին բա-
 յականության, այլ հատկապես զրա այն մասի, որ վերնում կոչեցինք իսկա-
 կան բայեր (собственно-глагол): Ուշագործություն դարձնենք, որ մեր ցու-
 ցակի ոչ միայն բայական բառերն ընդամենապես, այլև մինչև անգամ որ-
 частия, деепричастия и инфинитивы (—հայերեն մի բառով՝ դերբալները)
 մտքի արտահայտության տպավորություն չգործեցին, այսինքն նրանք չընդ-
 ստորոգծելիության երանգ: Դրանք այս նկատմամբ կարծես ոչնչով չզանազան-
 վեցին մյուս բառերից: Հնդկականակն, իսկական բայերը (собственно-глаго-
 лы) և իսկական բայերի հետ ի մի ամբողջություն միացող բառերը, բայերը
 ստորոգծելիության արտահայտի են հանդիսանում: Թե այս երկու խմբերից
 երկրորդի համար այդ նկատմամբ կարևոր է հենց նրանց կապը իսկական
 բայերի հետ, մինչև անգամ այն դեպքերում, երբ առանձին պատճառներով
 նրանց հետ բայ չկա (հմտ. միևնույն միայնակ գործածված) (жалъ, нелзя,
 богаѣ. умна) որոնք հայերենում միշտ կապված են բայի հետ՝ ափսոս է,
 լի կարելի, հարուստ է, խնդր է—Մ. Ա.),—այդ առանձնապես պարզ է լի-
 նում, երբ լի (полнымъ) ածականները համեմատում ենք կարճերի (крат-
 кимъ) հետ:

Ապա հեղինակը դրանց համեմատությունն տենելուց հետո՝ եզրակացնում
 է հետևյալը. «Պարզ է, որ այդ բառերն իրենց ստորոգծելիությունն ստանում
 են այս առկապայնությունից (присвязочнымъ), այսինքն մի առանձին ներքին
 կապակցությամբ առանձին կարգի բայերի, բայ-կապերի (глаголы-связ-
 ки) հետ... Այսպիսով... կարելի է ասել, որ ...բայականությունն է կազմում
 ստորոգծելիության հիմքը»:

Ապա Պեշկովսկին խոսում է есть և нет բառերի ստորոգծելիական հատ-
 կության մասին: Դրանք Հին բայեր են, ներկա ժամանակի եղանկի 3-րդ դեմք,
 և պայծա էլ կապված են բայի հետ և կազմում են ԾԿԵՒ—буду բայի ստեղծա-
 նական եղանակի ներկա ժամանակը: Ըվ վերջապես ստորոգծելիություն ունի
 նաև ԲԱ բառը, որ նշանակում է. а (возьми) ա՛հ, ինչ որ մեկնում եմ քեզ,
 որեմն ունի բայական նշանակություն:

«Այսպես ուրեմն, եթե մի կողմ թողնենք есть, нет և ԲԱ բառերը և նը-
 կատի շարունակ ինտոնացիան, ապա կարող ենք ասել, որ ստորոգծելիությունը
 Հիմնված է բայականության (глагольность) վրա: Դա չպիտի մեզ զար-
 մացնի, քանի որ բայականության վերլուծությունից... տեսնել ենք, որ բայի
 մեջ (նկատի ունենք իսկական բայը) կա մի առանձին կամական երանգ,
 որով դա տարբերվում է մնացած բոլոր մասն-բանիներից... Այսպիսով,
 բայի մեջ և միայն բայի մեջ ունենք կամի այն կապակցությունը լատինե-
 րացիական հետ, որ ծնում է միայն Հոգեբանությունը մեզ սովորեցնում է, որ
 մտածության (мышление) արդյունք հանկապես նրանով է տարբերվում

պատկերացումների հասարակ դուգորդութիւնից, որ նրա մեջ մենք ենք միացնում մեր պատկերացումները, և ոչ թե դրանք են միանում մեր մեջք (Թուր ընդգծումները հեղինակին են)։

Եւ էլ չեմ ուզում շարունակել զեղչական խոսքերի մասին, երբ բայը զեղչված է և կամ միայն ուղղականը ինտոնացիայով արտահայտում է մի միտք, և ոչ էլ անորոշ գերբայի խոսք կազմելու մասին, որ ռուսաց լեզվի հատկութիւնն է։

Բայը, ուրեմն, բառերի այն տեւական է, որին ըստ ինքյան հաստով է ստորոգծելութիւնը, մինչդեռ մյուս տեսակների բառերը լուսնն այդ հատկութիւնը։

Բայը արտահայտում է տոյսի լոկ պատկերացում, այլ մի ամբողջ միտք, դա մի խոսք է, մի «ֆրազ», առացված։ Ահա թե ինչ են սովորեցնում Մոսկվայի մանկավարժական բարձրագույն դպրոցներում։ Իսկ մեր մանկավարժական ինստիտուտում և համալսարանում Ա. Ղարիբյանն ու Սեակը դրա դեմ են, որովհետեւ Արեւիկայի քերականութիւնների մեջ այդպէս է 1906 թվից ի վեր։

Եթե ճիշտ է Պեդկովսկու վերջի բացատրութիւնը բայի ստորոգծելութիւն մասին, և անպայման ճիշտ է, կնշանակի ճիշտ չէ բայի հետեւյալ սահմանումը, որ ուրիշների հետ ունի և գովված Շապիրոն (1934, I, 49)։ «Բայը մի մասն-բանի է, որ նշանակում է գործողութիւն, որ կատարում է առարկան կամ որը նրա զգիտի կատարվում է, նույնպէս մի վիճակ, որի մեջ գտնվում է առարկան»։ Սա այնպիսի մի սահմանում է, որ նկատի ունի միայն բայ-իմաստը և կհարմարվի միայն գերբայներին և ոչ իսկական բայերին։

Դերբայներն ունեն, հարկավ, նույն բայիմաստը, ինչ որ բայերը, բայց այդ արտահայտում են այլապէս։ Անորոշ գերբայն, օրինակ՝ գրել, այդ արտահայտում է, ինչպէս տեսանք, իբրեւ անկախ գոյութիւն ունեցող, այսինքն իբրեւ այնպիսին մտածված մի բան, մի արարականում, որ մտնում է գոյականների մեջ իբրեւ ենթատեւակ։ Մյուս գերբայներն, օրինակ՝ գրած, գրող, մտնում են տեւականների մեջ (գրելիս՝ մակբայների մեջ) իբրեւ մի հատկութիւն (կամ պարագա) ցույց տվող բառեր։ Բայերն, իսկական բայերն, ընդհանրապէս, ոչ գոյական են, ոչ տեւական և ոչ էլ մակբայ։ Դրանք թուր տեւակի բառերի և նույնիսկ գերբայների դիմաց կազմում են բառերի մի առանձին տեսակ, բոլորովին ուրույն անավորութիւններ, որ միայն բայն ունի, այն է՝ արտահայտում են հենց նոր կատարվող մտածութիւն կամ ներեւ շարժում կամքի։ Եթե ինչպէս մյուս բոլոր բառերը կարող են մերթ ալ, մերթ այն կախման հարաբերութիւն մեջ գրվել... բայը միշտ միայն մեկ, բայց ամենակարեւոր ֆունկցիան ունի, որ է՝ ցույց տալ ստորոգծելութիւն և լինել մտածութիւն կրողը... Ով որ դիմավոր բայի ձեւերը ուրբայների հետ մի դասի մեջ է դնում (ինչպէս տեսնում են մեր հայաստանյան քերականները։ Մ. Ա.), նա միեւնույն դասի մեջ հաշտ կերպով միմյանց հետ դնում է նախադասութիւններ և նախադասութիւն անդամներ։ «Բայը... դա խոսքի սաղմն է, խոսքի արմատը (Կեռն)։ միջուկը, ինքը խոսքը, թեպէտ ոչառ բանում անորոշ։ Ինչո՞ւ բայը մենակ մի խոսք է։ Անդնենք հիմա այս խնդրին։

42. Բայիմաստ—ստորագոյտ և բայի դեմք—ներբով։ Բերեմ իմ «Աշխատհարի» շար«անուսութիւն»ից մի կտոր սեռութիւն էութիւնն է ստորոգծումը։ Առանց ստորոգծման խոսք չկա։ Բայը ստորոգծում է ցույց տա-

լիս և խոսք է կազմում: Բայի ստորոգում է լինում, ուրեմն և խոսք է առաջ գալիս միայն այն ժամանակ, երբ մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ, կամ կա տրամաբանական ենթակա և ստորոգյալ: Վեմեն բայ մենակ կազմում է մի խոսք: որովհետև ցույց է տալիս թե ստորոգում և թե խոսքի համար անհրաժեշտ՝ ենթակայի և ստորոգյալի (առարկայի և հատկանիշի) գաղափարները: (Վեյիս <արհարարի> շար<աշյուսութիւն>», հր. 5):

«Բայի դեմը ցույց է տալիս այն առարկայի գաղափարը, որին իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշ: Բայիմաստը ցույց է տալիս այն հատկանիշը՝ գոյութիւն, գործողութիւն կամ դրութիւն, որ իբրև ստորոգյալ վերագրվում է ենթակային (բայի դեմքին)» (Վեյիս <արհարարի> շար<աշյուսութիւն>», հր. 4):

Բայը լոկ բայիմաստ կամ, ինչպես դերմանացիք ասում են, լոկ բայական բովանդակութիւն (Verbalinhalt) չի նշանակում, այլ նաև դեմք—առարկա, այլև ստորոգելիութիւն, քերականական կատեգորիաներից ամենակարևորը, որով սերտ կապվում է խոսքի մտքի հետ: Վեյիս ինչպես կարելի է անորոշ դերբայը նշանակութիւնով տարբերել դիմալոր բայից, եթե շնորհունվի, որ վերջինիս մեջ հավաստյալ միշտ պատկերացվում է մի գոյակ: Անորոշ դերբայը հարկավ միշտ միայն մի վիճակ է արտահայտում, ու մի գոյակ չի նշանակում, երբ ասում եմ ծաղկել: Իսկ երբ ասում եմ ծաղկեց, այդ ժամանակ մտածում եմ ծաղկել մի րանի հետ միասին» (Վեյիս, 88): Բայը, ուրեմն, և առարկա—ենթակա և հատկանիշ—ստորոգյալ է նշանակում, բայց ոչ առանձին առանձին, այլ հենց այդ երկուսի միութիւնն է արտահայտում, այն էլ խոսողի կամքով ու գիտակցութիւնով կատարվող միութիւն:

Թե բայը հատկանիշ է ցույց տալիս և խոսքի մեջ բայիմաստը նկատվում է իբրև ստորոգյալ, այդ չափազանցելով հասկանում են մեր քերականները: չափազանցելով հմ ասում, որովհետև բայը հավասարեցնում են ստորոգյալի: Բայց թե բայն իր դեմքով միաժամանակ և առարկա է նշանակում և այդ դեմք—առարկան ենթակա է, այդ շնե ըմբռնում մեր հայաստանյան քերականները: Ի՞նչ դրա պատճառը 1) ձևական տրամաբանութիւն վերելով բացատրված սքեմայի ազդեցութիւնն է, որ մեր քերականների համար անզգալի կերպով եկել կաշկանդել է նրանց միտքը, և 2) օտար լեզուների ազդեցութիւնը:

Ձևական տրամաբանական նախադասութիւն սքեմայի մեջ, ինչպես տեսանք, դեմքեր գոյութիւն լուսնն, և ենթական անպատճառ պետք է արտահայտված լինի առանձին բառով, գոյականով, Հետևաբար և դրա իշխանութիւն տակ գտնված քերականներն ևս ենթակայի համար առանձին բառ են պահանջում: Նրանց համար հարկավոր է մի առանձին բառով արտահայտված ենթակա, որ աչքով տեսնեն, բերանով արտասանեն և ականջով լսեն, և նոր հասկանան: Մինչդեռ շնախապաշարված քերականակառ ըմբռնումով ենթակայի և ստորոգյալի երկու գաղափարները, մի առարկա և նրա հատկանիշը, մեկ բառի, բայի մեջ անխզելի կերպով կապակցված են ի մի միութիւն, և դրանով հենց բայը ստորոգում է ցույց տալիս և արտահայտում քո թե լոկ պատկերացում, այլ մի ամբողջ միտք:

Իներեն հետևյալ օրինակը:

Արարատը փողոցում պատահում է Սևակին, և մենք ակամա ունենդիր ենք լինում նրանց այս խոսակցութիւնը:

— Արարատ, ո՞րք ես գնում:

— Գնում եմ դպրոց:

— Հա՛յ, էլ ինչո՞ւ ես վազում: Կա՞ց քան ունեմ ասելու:

— Զէ, չեմ կարող, ուշացել եմ: Ինչ որ ասելու ես, շուտ ասա: Անցած օրն էլ էի ուշացել:

— Մի քիչ շուտ տե՛ից դուրս կգայիր, է՛լի:

— Ախր, Սեակ, չես իմանում: Այն օրից որ ժամացույցս կորցրի, ժամանակի հաշիվն էլ կորցրել եմ, միշտ այսպես ուշանում եմ, Դե ինչ էիր ասելու, ասա լուտ:

— Գիտե՞ս, Արարատ, այսօր երեկոյան գնում եմ Ք-ի մոտ:

— Գիտեմ, գիտեմ, անհոգ եղիր: Զեմ քացակայի: Մնաս բարով:

Հիմա հարց: Արարատն ու Սեակը հասկացա՞ն միմյանց, թե չէ: Կամ մենք, որ ակամա լսում էինք նրանց, ինչպե՞ս հաճախ պատահում է փողոցում, հասկացանք արդո՞ք նրանց խոսակցությունը, թե՞ չէ:

Այո՛, նրանք հասկացան միմյանց, և մենք հասկացանք նրանց խոսակցությունը, թեպետ և այդ բազմաթիվ նախադասություններից ոչ մեկի մեջ ոչ մի բառով չի արտահայտված տրամաբանական նախադասության սքեմայի պահանջած ենթական:

Բայց առանց ենթակայի չի կարող ստորոգում լինել և մտածությունն արտահայտվել: Այս գիտե՞ս, հարկա՞յ, ք-ցի Սեակը: Կնշանակի՞ Վերե՛կ խոսքերի մեջ կան ենթականեր:

Այո՛, կան ենթականեր, և այդ ենթակաները բայերի դեմքով են արտահայտված և ցույց են տալիս կոնկրետ անհատներ, Արարատի ու Սեակի նման, որոնք փողոցում մեր աչքի առաջ կանգնած խոսում են միմյանց հետ:

Միայն է, ուրեմն, այն տեսակետը, թե բայի դեմքերի վերջավորությունները նշանակում են լոկ հարաբերություններ և իբր ունեն միայն ձևական նշանակություն, ինչպե՞ս որ հոշովական վերջավորությունները: Դա Ֆորմալիստական հայացք է, որ յնև հասկանում ֆորմալիզմի դեմ մեր հայատեսչան պատերազմողները: Ֆորմալիստը նա չէ, ով բայի դեմքի մեջ գտնում է Սեակի ու Արարատի, կամ Արե՛սյանի և ուրիշների նման մարդիկ, կամ այլ բաներ, մի գոյակ: այլ նա է իսկական ֆորմալիստը, որ բայի դեմքերի մեջ տեսնում է լոկ ձևական նշանակություն:

Ծվ՛ այս տարրական բանը չի ըմբռնում քաղ. Սեակը, երբ գրում է դրան հակառակ, այն էլ թյուր կերպով, ճշտորոշային մեջ (լստ ֆորմալիստների՝ բայի մեջ) ենթակայի դեմքն արտահայտված է, հետևաբար ենթական մի քաջելագրություն է:— Թե այդ կարծեցյալ ֆորմալիստներից մեկն Արե՛սյանն է, ես այդպիսի անհեթեթ բաներ չեմ ասել, թե իբր ենթական մի քաջելագրություն է, և թե իբր բայի մեջ արտահայտված է ենթակայի դեմքը: Այստեղ մեր այդ քրեական բայը նույնպե՛տ է ռոտորայի հետ: Հետևաբար նրա համար, ինչպե՞ս ուրիշ ֆորմալիստների համար, բայի դեմքը չի նշանակում ենթակա, այն առարկան, որի վրա ստորոգվում է բայի ցույց տված հատկանիշը, թե չէ բայը, դիմավոր բայը, չէր նույնանալ ստորոգյալի հետ: Դա Ֆորմալ տրամաբանության սքեմայի ազդեցության հետևանք է: Լեզվաբանները վաղուց կանգնած են բուն լեզվական տեսակետի վրա: Ծվ՛ ի՞նչ է այդ:

Բայի դեմքը միշտ ենթակա է արտահայտում, իսկ բայիմաստը՝ ստորոգ-

լույս, ստորագրելու թղթին ցույց է տալիս կամ արամարանական կողմի (կողմա-
լու) գնորդ կատարում է միայն բայելը—Ահա թե թեյը չեն հասկանում ֆար-
մալիստ Սևակն ա իր պես մասնագետները:

42. Դեռանուն ենթակայաները:—նորագի համար ենթակայան, ստորագրան
ենթակիցող գոյակը, առարկան, միշտ որոշ է բայի գեմքով, և երբ ավելաց-
վում է մի անձնական գերանուն (նա, դու, նա, մենք, դուք, նրանք), դրանով
ենթակայան բնավ ավելի չի ուղղվում:

Ժողովրդական երգիչն ասում է.

Կապուտ քուռակ հեծել էմ,
Արագին մուռնցի էմ.
Արազ, ինձ մի համփա տուր,
Իմ յարին կարտցել էմ,

Եթե ալլ բայերի հետ մի նս, մի դու դրվի,—սեա հեծել էմ... Եղու
տաքա.—մի-թի ղոանով ավելի բուն էլլալարավի:

Այսպես և մի-թի ավելի բան կմտնի խոսքի մեջ, և թե ժողովրդական եր-
գիչն մի դու ավելացնեք բայերի վրա հեանայլ երգի մեջ, որ ուղղված է իր
սիրածին:

Թե ինձ չէիր ասել (դու),
Ռոյո՛ւ սիրեցիր. (դու).
Մի բուռ կըրակ իզար, (դու)
Սիրաքս չընցիր. (դու):

Սրանով էս չեմ ուզում ասել, թե հայերենում դեմքերի հետ դերանուն-
ներ չեն դրվում և միշտ լայիտի դրվեն: Դերանուններն ունեն իրենց հատուկ
գործածությունը, որ մասամբ պարզված է իմ լեզվի <արհարարի> շա-
ր<աշուտություն> և մեջ (եր. 15 հոսն.): Այլ այն էմ միայն շեշտում, որ
հայերենում, առանձնապես 1-ին և 2-րդ դեմքերով միշտ որոշ է ենթակայան:
Դա մեր լեզվի բնորոշ կողմն է: Բայական է թերթել մասքուր հայերենով հո-
րինված մեր քանաստեղծությունները, իսկույն ալթի կընկնի այդ:

Մանկալ էս, ընդարած էս,
Ահա զուտ տուր, զուտ տուր.
Ծովի պես քրտնած էս,
Ծգենքն արձիկ, տան արի:
Կաթի սնրը քաշել էմ,
Գըրել էմ հովիկ՝ սառի.
Այ դոպեցը ժողոթն էմ,
Արի թառվան, թը՛ռա, արի:
Տեղ էմ քըցիր շըվաքում...
Չովի տուր, լավի առ, չուտ արի:

(Ա. Խան<տեյլան>):

Ուշադիր պիտի լինել սասոխի բային, որ 3-րդ դեմքով է և ենթակայան
դարձյալ շատ որոշ է թե ասողի և թե լսողի համար, թեպետ ոչ մի գերանու-
նով չի արտահայտված: Ահա ձեզ և թումանյանից.

Օկեք, քուրեր, սեզ սարերի
Յըքնաղազեղ ոգեներ.
Օկեք, չառել սիրաբեր
Սեքը ողբանք զաղամեա

Յիսուս ազգային չար է ասել:
 Կայա սափարով, — ու մանչ,
 Յիսուս ծագելից ծագելից թաղել
 Կապել թիթ ծագելից փանջ
 Զուրն ու ծագելից աստղունց գրքել:
 Կնգիթ արել աստղունց,
 Փափաք սերտով խնդիրք արել
 Բարի մեղաւուն իր սերիւն...
 (Յովանէ<յան>)

Ուշադրութիւն պիտի դարձնել 3-րդ դեմքերով ասած խոսքերին: Զուր է ասել, ո՞վ,—հասկանում ենք՝ «սիրահարը»։ Ժպտան,—ո՞վ,—գարծալ պարզ հասկանում ենք՝ «աստղները»։ Թերթեցնք մեր ժողովրդական հնգիւթները, թեկուզ միայն մեկը, Տիրքան Նաժմասարգլանցի «Հայ ժողովրդ<ական>» հնգիւթները, լորրորդ գիրք, եր. 87 հտն. «Աղոթք անող ֆորթարածը»,—և կտեսնենք քայի դեմքերի հետ դերանման գործածութիւն լկա: Չպիտի կարծել, թե միայն ժողովրդական լեզվի մեջ է այդպէս: Նույնը և մաքուր գրական լեզվի հասկութիւնն է. «սկսում են զոգանջն տիեզերական» (Ա. Իսաւ<ական>):

Հայերենում դերանունների գործածութիւնը քայիի դեմքերի հետ լինում է միայն որոշ դեպքերում իբրեւ ավելագրութիւն: Իմ «Աշխ<արհարարի> շար<ահյուսութիւն>»-ն մեջ գրված է.

«Հայաց լեզվի մեջ քայիի դեմքերը միշտ որոշ են. ուստի և դերանուն ենթականերն իսկապէս ավելագրութիւն են, քանի որ ոչնչով չեն բացահայտում քայի դեմքը. եւ զնացի և զնացի. դու զնացիւ և զնացիւ իմաստով թուրովին նույն են:

«Դերանուն ենթական դրվում է սովորաբար.

«1. Նրա հատկապէս շնչովում է քայի դեմքը, ինչպէս՝ Թող նա՝ խոսի: Մե՛նք պիտի գնանք: Եվ ե՛ս երբեմն երգում էիք:—(Ենչոված դերանուններով արտահայտվում է հոգեբանական անորոգչալը. գլխավոր շնչուր, § 202):

«2. Երբ դեմքերի փոխանակութիւն է լինում. ինչպէս՝ Դու գնում ես, իսկ ես գալիս է:

«Մենք. Ավելագրութիւնը գեղլման (§ 7, ժ. 3) հակառակ մի ձև է, որով խոսքի մեջ իմաստի համար ավելի քաներ են դրվում, քայց միշտ այնպէս, որ խոսքին ավելի բացահայտութիւն, ուժ ու կենդանութիւն են տալիս. «որինակ՝ ավելագրութիւն է առանձնապէս շնչուրով ասել՝ իմ ալքով տեսա և իմ ականջով լսեցի, փոխանակ ասելու պարզապէս՝ տեսա և լսեցի. որովհետեւ ամեն տեսող և լսող անշուշտ իր ալքով է տեսնում և իր ականջով լսում»:

Ահա թե որտեղից է ծագում քաղ. Սեակի գրելը, թե իբր Արեղյանի կարծիքով «ենթակաւն մի ավելագրութիւն» է: Արեղյանը խոսում է դերանուն ենթակաների ավելագրութիւն լինելու մասին, իսկ Սեակն այդ ընդհանրացնում է. որովհետեւ նրան, ինչպէս կտեսնենք, հարկավոր է այդ կեղծ դրույթը:

Կան քայի դեմքերի հետ դերանունների և ուրիշ գործածութիւններ, որ այստեղ չպիտի պարզեմ: Բայց պիտի նկատեմ հետևյալը: Ամեն անգամ, երբ կարելի է շնչել այդպիսի դերանուններն առանց որևէ կեղծ թուլացնելու խոսքի ուժը կամ առանց փոխելու արտահայտութիւն հղանակն ու խոսքի ի-

մասեր, պետք է խուսափել այդպիսի գերասունների գործածութիւնից: Այդպիսի գեղարարում գերասունները զգրում են ու իբրեւ ավելադրարշուն, որ տեղաժեշտ է անարականութեւ տեսանկեալով, այլ իբրեւ ավելադրարանալարուն, որ նազում է մեծ մասամբ սատար լեզուներէ ազդեցութիւնից: Որինակ՝ երբ Գամուռ-Փաթիլզան գրում է.

Հեռացել էմ իմ հայրենի աշխարհից,
Բառմամբ եմ ես այս ստոր երկրամբ:

Նրա երկրորդ տողի մեջ ավելորդ է ես բառը: Նույնպէս ավելադրարանութիւն է ես բառը Հովհաննիսյանի թարգմանութիւն մեջ.

Երեք մեկին լսմ ես խառնում ես աշխարհի երեսին:

Մեր բանաստեղծները հենց որ հարկավոր է պակաս մի վանկ լրացնել տողի մեջ, իսկույն մեջ են բերում այդ փոքրիկ բառերը (եւ, դու, նա, մենք, դուք, նրանք), առանց մտածելու, որ դրանով ավելորդարանութիւն են անում:

Հայտք լեզվի մեջ բայերի դեմքերը միշտ որոշ են և նրանց հետ դերանուններ լզործածելը մեր լեզվի պահանջն է:

Այսպէս չէ, սակայն, հաճախ այն լեզուների մեջ, որոնցից թարգմանութիւններ ենք անում: Եվ որովհետեւ մեր գրականութիւն մեծ մասն այժմ թարգմանական է, ուստի, ենթարկվելով տարբեր լեզուներին, մե՛ք էլ ենք գործածում դերանուններ և գրքերի մեջ և խոսելիս:

Առնենք ռուսերենը: Տեսնենք, թե ինչ է ասում Պեշկովսկին (հր. 168 հտն.):

Ռուսերենում գրեմքի ձևն ամենից ավելի ինքնակա է բայի առանձնապէս 1-ին և 2-րդ գրեմքերի մեջ: Այդ նրանից է երևում, որ այս ձևերը շատ անգամ (нередко) գործածվում են և առանց ենթակայի (այսինքն՝ առանց ես, դու, մենք, դուք բառերի), օրինակ՝ Люблю тебя, Петра творенье (սիրում եմ քեզ, Պետրոսի ստեղծագործ): Բերված են և ուրիշ օրինակներ... Այստեղ,— շարունակում է Պեշկովսկին,— ստորոգյալը թվում է թե բոլորովին ինքնակա է, կարիք չունի ենթակայի... Եւ, դու, մենք, դուք— դնելով... ոչ մի բանով ավելի պարզ խոսք չենք տեսնալ... Ենթական ավելի եւ հաճախ չի լինում հրամայական եղանակի հետ, և դա այստեղ արդեն կանոն է: Զենք առում ты уйдил ты отстань! вы садитесь! այլ միշտ уйдил отстань! садитесь! և այլն: Ապա բացատրված է, թե ռուսերենում ո՞ր հատուկ դեպքերում բայերի հետ դրվում են դերանուն ենթակաները: Բերեմ և հետևյալը.

свѣдѣ я хду (— ես գնում եմ) կապակցութիւն մեջ երկու անգամ է արտանայալված միենուրեք բանը, ապա հասկանալի է, որ այդ անձնական (դեմքի) տարբերից մեկը կարող է դուրս ընկնել առանց էական բաց թողնելու իր տեղում:— Լազլ լսեցեք: Հասկանալի է, որ այդ սերկու անգամ արտահայտվածներից բայի դեմքը կարելի չէ դուրս ձգել: Հետևաբար դերանունը պետք դուրս ձգել, իբրեւ երկրորդ անգամ արտահայտութիւն: Բայց շարունակենք քաղվածքներ բերել:

Երայց և այնպէս առաջին երկու դեմքերի մեջ էլ ենթական (խոսքը դերանուն ենթակաների մասին է: Մ. Ա.) մեծ մասամբ գործածվում է, շնայելով իւր անսխալութիւնը:— Ապա Պեշկովսկին բացատրում է, թե ինչպիսի դեպքերում է դրվում դերանուն ենթական, և վերջը հզորակացնում է հետևյալը.

«Այսպիսով անձնական բառերի (— դերանուն ենթակայներ, Մ. Ա.) զրգելը բայերի հետ կտրելի է ուսաց լեզվի մեջ համարել նորմա, իսկ լզրգելը՝ նորմայից շեղում, որ ամեն տեղում անի իր պատճառներն ա իր իմաստը... Միայն միավայական հոլանդի համար դժվար է պնդել այսպիսի հասկացման վրա, որովհետև դերանունների գործածությունը հրամայականի հետ, ընդհանրական, քաղաքություն է կազմում, Ուտի միավայական եղանակի նկատմամբ նորմային այն է, որ ոչ բն ենթակայան, այլ տառադրային է հանդիսանում իրեն բացառական ստորագրառը (подчиняющуюся) անդամ (ինչպես բուլղար անդամ, ինֆինիտիվ և անվանական նախադասությունների մեջ, տե՛ս ներքոսում)»:

«Այդի լեզուների մեջ, որոնք դժվար բայական ձևեր ունեն (լատիներեն, հին հունարեն և ուրիշները), անձնական բառերը (— личные слова, դերանուններ, Մ. Ա.) գործածվում են միայն այն ժամանակ, երբ հասկապան շեղումով են: Այսպիսով, շեղումով անձնական բառերի գործածությունը ուսաց լեզվի կարևոր առանձնահատկություն է կազմում», քացի հրամայականից, հարկավ, ինչպես վերևում ասվեց:

Ինչի՞ց է առաջացել ուսերենի այս հատկությունը:—Այդ էլ քաջատրվում է աշայան: «Այդ երևույթը, ամենայն հավանականությամբ, կապված է քայ լզրգելու հետ այնպիսի կապակցությունների մեջ, ինչպես են՝ я дома, я добр, ты здесь, ты богат և այլն, (որոնք բոլորը հայերենում բայով են ասվում՝ ես տանն եմ, ես բարի եմ, դու այստեղ ես, դու հարուստ ես: Մ. Ա.), նույնպես և դժվարի ձև լինելու հետ ուսերենի անցյալ ժամանակի մեջ (я читал, ты читал, он читал): Այս բոլոր կապակցությունների մեջ անհրաժեշտ են անձնական բառերը (— անձնական դերանուններ, Մ. Ա.), որովհետև աշայան հնարավոր չէ իմանալ դրանց դժվար: Դրանցից էլ հենց այդ դերանունները կարող էին անցնել և աշայիսի կապակցությունների մեջ, ուր դրանք հարկավոր չեն, աշայիս կարող էին զրգել այնպիսի բայերի հետ, որոնց դժվարի ձևը որոշ է, ուստի և դերանունը, նույնի կրկնություն լինելով, հարկավոր չէ:

Ուսերենի պես բայերի հետ դերանունները սովորաբար գործածում է և գերմաներենը, որովհետև այս լեզվի մեջ ևս բայի մի քանի դժվար ունին ընդհանուր վերջավորություններ, թեպետ և լկան առանց բայի կապակցություններ, ինչպես են՝ я здесь, ты богат: Ձրանսերենում դերանունները, քացի հրամայականից, միշտ զրգում են բայի հետ, որովհետև բայի շատ դժվար, թեպետ գրությամբ երբեմն տարբեր, միևնույն կերպ են հնչում. je parle, tu parles, il parle, ils parlent. Այսպես և մյուս ժամանակների մեջ

Հայերենում, սակայն, թե մեր հին և թե նոր լեզվի մեջ, աշայան չէ: Բուլղար բայերի երեք դժվարի համար ևս թե՛ հզակի և թե՛ հոգնակի, կան հատուկ ձևեր ամեն մի դժվարի համար: «Այս վեց ձևերը, ինչպես գրում է Ա. Մեյյան», որոնք պարզ որոշվում են և միշտ լավ կերպով տարբերվում են մյուս ձևերից, բավական են, առանց ուրիշ ցուցումի, նշանակելու եղակի և հոգնակի 1-ին, 2-րդ և 3-րդ դժվարը: Այսպես բերիմ (— բերում եմ. Մ. Ա.) բավական է նշանակելու համար je porte, բերիք (— բերում եք. Մ. Ա.), vous porte և այլն»:

* Recherches sur la syntaxe Comparée de l'arménien par M. M. Meillet. Etrenn des Memoires de la société Linguistique de Paris, t. XVI, 4. p. 1.

Հին հայերենում էլ, հարկաւ, զեմքի ումեղ արտահայտութեան համար, բայի հետ դրվում են անձնական գերանուններ, ել Մեղին զրա համար տերեւ աստիճանն է որոշում, օ՛ր) լիցալմե տեմեական գերանունն Գրեմալոր բայականն է, զեմքի վրա լաւ պաշտպանութեան գործենելու համար. ո՛ր քերեմ c'est moi qui porte, moi je porte (Քերեմսերենում գերանունն անհրաժեշտութեան կրկնելում է Մ. Ա.)։ Զ) գրեմալոր բայականն են Գրեմալմ գերանունն, զեմքի վրա լաւագոր կերպով պաշտպանութեան գործենելու համար։ Գրեմն են je porte (moi, et non un autre)։ Զ) գրեմալոր բայականն ենը մենակ, երբ արդեն հայտնի է, թե ում է հասարում գործադարձութեւ, բազմական է Դիքեմնէկ ալ՝ քերեմն je portons Այստեղ հարաւում, ձեր նոր գրտկան լիզի մէն են, ըստ երևայթիկ, կա ալ տերեւ աստիճանը, ինչպե՛ս եւ եմ քերում, քրում եմ են, թերում եմ, բայց բայի ետեւից զովոյ վերջահար գերանունի անշնշու գործածութիւնը առանց հոնտորական նպատակն, ըստ Մեհէկ, Եւ պահպանե արդի հայերենում, Աղլի, ճալիւրենը պանելով քեմումը՝ դռնն ապիւն է լոբմ իւ կատարյալ արեմքը և դրան լի սատարում քնալ փայլիկ քառերով, որոնք ճշտում են դրա նշանակութիւնը։ Այսպես ասում է հայտնի լիզմը, քանը։

Դիմապոր բայի մեջ կատարված է մի համադրություն (սինթեզ), մի իսկական համադրություն, առաջ բերելով մի բան, որ լկա իրար միացած մասերից ոչ մեկի մեջ: Դա, այդ բանը, ստորոգումն է:

Տրամաբանական ճանադասության տարրերը սինթետիկ կերպով ներկայացված են մի բայի մեջ (??): Մենք բարձր ներսում կատարվում է կապակցությունը (կոպուլյան), որով և այդ բառը, ճանադասության լուկ անդամի արժեքից բարձրանալով, իր մեջ ունի ոչ միայն մի առարկայի և մի հատկանիշի պատկերացումներ, այլ դառնում է կատարվող մտածության կամ կամքի արտահայտություն ... Բայի մեջ գոյի ու հատկանիշի և այդ երկուսի ներքին կապակցությունն է արտահայտվում: Բայը լուկ ստորոգյալ չէ, այլ դրա մեջ կա ստորոգյալ, կա նաև ենթակա (Կենն, 65), կա նաև կոպուլյա: Ահա թե ինչպես են մտածում լեզվաբանները:

Թե ինչ լեզվական տարրերից է առաջացած բայի մեջ համադրությունը, այդ վաղուց բացատրված է լեզվաբանության մեջ, Բերնս Վեյնգեր <Հայացք> լեզվի <տեսությունից> (հր. 305, § 247) հետևյալը:

«Բայերի դիմկեր:—Բայական ձևերը մեծ մասամբ ծագել են անձնական դերանունների կցումով բայարների հետ: Դերանունները դրվել են բայարների վերջից՝ դեմքը, հզակի կամ հոգնակի, իբրև ենթակա որոշելու համար: Սկզբում, անպայման, դերանունները բայից անկախ են եղել. բայց լինելով բայից անբաժան և վերջահար (էնկլիտիկ), կցվել են նախորդ բայի վերջից և համաձուլվելով նրա հետ՝ զգացվել են ոչ թի իբրև անկախ բառի, այլ իբրև վերջավորություն: Ժամանակի ընթացքում, սակայն, բայերի վերջերն այնպիսի փոփոխության են ենթարկվել, որ բայարների ու դերանունների բազադրությունը կամ ոչնչացել է, կամ այլևս զգալի չէ լեզվի մեջ, և միայն համեմատական լեզվաբանության միջոցով հնարավոր է որոշել դերանունների կցումը բայարների հետ:

«Այսպես ծագել են, անշուշտ, նաև հայերենի բայարների վրա աղելացած վերլուծանքները, ինչպես գրաբարում՝ գնա—Մ, գնա—Ս, գնա—Յ, գնա—ՄՔ, գնա—ՅՔ, գնա—Ն, Բայց պիտի նկատի ունենալ, որ հայերենի խոնարհման տարրերը, ըստ Մեյերի, մեծ մասամբ դեռևս կամ չեն բացատրված, կամ բավարար չափով չեն բացատրված: Մեր լեզվի հնագույն շրջանում անգամ զգալի չէ եղել դերանունների կցումը բայարների հետ, մասնավորապես որ հայերենի մեջ էս, ինչպես ուրիշների, բայերի վերջի մասերը փոփոխության ենթարկվելով՝ երբեմն նույնիսկ դուրս են ընկել: Բայց լեզվից դրան, ինչպես հին հնդկարուպական լեզուները, հայ լեզուն էս թե հին և թե նոր, ռպահել է ճշտությամբ հնդկարուպական միեմակը, այսինքն վերջածանց դարձած դերանունների գլխավոր պաշտոնը, որ եղել է արտահայտել բայերի դեմքերն իբրև ենթակա:

Ընդ այս է էականը:

Կա մեր բայերի կազմության համար մի ուրիշ բացատրություն էլ: Ըստ այսմ մեր բայերը բաղադրված են համարվում բայի հիմքից կամ բնից՝ իբրև մի բայածականից, որի մեջ է բայիմաստը՝ հատկանիշ նշանակող մասը, և եմ բայից, որ դեմքն ու ստորոգումն է ցույց տալիս: Այսպես ասած՝ մեր բայերը կազմված են ուրեմն մի ստորոգյալից և մի վերադասական (կամ էական) բայից, որ է, տրամաբանական կապը (կոպուլյա) կամ բայականը բազադրական, kopula verbaler Natur կամ, ինչպես տրամաբանական վերլուծու-

թիւան մեջ տեսանք, պարզապէս կուտւի ինչ քան, հասկանալով թե՛նք քայլը, ինչ
իմաստով, ուրեմն, մեր բայերը եւ քայլ են և ստորագրելով—բայ-ստորագրելով,
ինչպէս կուշի եմ իմ ժելիւ<արհաւիր> շար<աշխատութիւն> 2 մեջ:

Բնականաբար ժամանակներէ մեջ բայերի այս կազմութիւնը շատ որոշ է.
գրում եմ, գրել եմ, գրելու եմ և այլն, գործած, գործել, գործու, գործելու, գործելու
ներք ստորագրել են, եմ՝ բայ-կապ. բայց պարզ ժամանակներն ևս,—գրեմ,
գրես, գրեն, գրենք, գրենք, գրենք, գրենք, գրենք, գրենք, գրենք, գրենք, գրենք,
բացառութեամբ եմ իբրեւ գր-եմ, գր-ես և այլն մասերից կազմված, իբր
գրող եմ, գրող ես, և այլն: Նույնպէս և անցյալ կատարելի գրեցի, գրեցիր,
գրեցինք, գրեցինք, գրեցինք ձևերի վերջի մասերը համարում են եւ բայի անց-
յալի ձևերը՝ միայն փոփոխված՝ ի, իր, ինք, իք, ին, ինչպէս որ բարբառների
մեջ ասվում են՝ ես ի, դու իր, մենք ինք, դուք իք, նրանք ին, իբրեւ ես էի,
դու էիր և այլն: Այսինքն բայերի մեջ՝ խաղամ, խաղաս, խաղա, խաղանք, խա-
ղաք, խաղան՝ երևան է գալիս նույն եմ բայի մի ուրիշ ձևը և ձայնավորով,
ինչպէս բարբառների մեջ ասում են՝ ես ամ, գույ ամ, նայ ամ, մենք ամք,
դուք ամք, նրանք ան՝ փոխանակ ես եմ, դու ես և այլն (ժելիւ<արհաւիր>
շար<աշխատութիւն> 2, եր. 14, Ժան.):

Այս բացատրութիւնը լի հակասում նախորդին, այլ միայն դրանով
բայերի ձայնավորները կամ, այսպէս ասած, լծորդ ձայնավորները բա-
ցատրվում են իբրեւ ձևական բայի բան: Ըստ այսմ, օրինակ՝ գրել բայը կազմ-
ված է բայի իմաստ (գրող), հատկանիշ, ստորագրելու ցույց տվող Գր մասից +
է բայն իբրեւ կապ (կոպուլա) + Մ գծով, անարկա ցույց տվող մասը:

Ահա այդ համադրութիւնը, որով անուշանում է մի նոր բան, ստորո-
գումը, որով և բայը դարձնել է մասնակցան լեզվական արտահայտութիւնը,
կամեն բայ ուրեմն և դժգոհ-ենթական է, և բայ, այսինքն բայ-կապ է, և
ստորագրելու, վերջին երկուսը միասին՝ բայ-ստորագրելու:

Բայց գոյի հիմնական ձևերից մեկն է ժամանակը, գոյի հիմնական
պայմանը (Ֆոնդերայն). սգույը ժամանակից դուրս նույնպիսի անհնարու-
թիւն է, ինչպէս գույը տարածութիւնից դուրս (էնգելս): Գոյի անընդհատ
շարժման մեջ ժամանակ են գրա սպեցիֆիկ ձևերը: Այդ տեղի է ունենում ժա-
մանակի մեջ, Մտածութիւնը, արտահայտելով օբյեկտիվ իրականութեան ձե-
վերը, չէր կարող տեղի ունենալ օբյեկտիվ ժամանակից դուրս: Այդ պատ-
ճառով և լեզուն բայի համադրութեան մեջ գրել է նաև ժամանակի զարգ-
ւարձը՝ ներկա, անցյալ և ապագայ, որ արտահայտում է ամեն բայ:

Բայի այդ ստորագումն, ինչպէս տեսանք, լինում է գիտակցաբար. խո-
սողը հատկանիշը վերագրում է ենթակային գիտակցելով այդ բնականա-
բար այդ դեպքում առաջ է գալիս խոսողի վերաբերմունքը խոսքի բովան-
դակութեան նկատմամբ: Այստեղից անուշ են գալիս եղանակները, որոնք լրիվ
արտահայտում են մեր նոր լեզվի բայերի մեջ—դատողութեան խոսքերի երեք
եղանակները՝ սահմանական, ենթադրական (modus potentialis, հնարադո-
րութեան, կարելիական եղանակ), հարկադրական (modus necessitatis, անհրա-
ժեշտութեան եղանակ) և ցանկութեան խոսքերի երկու եղանակները՝ հրամա-
յական և ըղձակաւ:

Ես այս մասին երկար կանգ չեմ առնիլ, որովհետեւ իմ տեսակետը հայե-
րենի եղանակների մասին վաղուց տպագրված են: Միայն այսօրան ասեմ,
որ երբ Դարբեյանը բայերի համար իմ մշակած սխառեմն ընդունելուց հետո,

ենթադրական եղանակը կոչում է ասյամանական, այդ ցույց է տալիս, որ նա չի հասկանում մեր այդ եղանակը:

Այսպես ուրեմն, լեզուն ստեղծել է բառերի այնպիսի մի տեսակ, որի մեջ այսպես ասած, լեզվորեն արդեն արտահայտվում է առարկայի և իր հատկանիշի անխզելի միութունը, բայց միաժամանակ և մեր մտածությունը: Բայերն, ուրեմն, նշանակում են «այնպիսի հատկանիշներ, որ խոսողը մի որոշ ժամանակում վերագրում է կամ իրեն առաջին դեմքին, կամ՝ երկրորդ դեմքին, կամ՝ երրորդ դեմքին, — լինեն այդ դեմքերը եզակի թե հոգեանկի, — միաժամանակ և գիտակցում է այդ վերագրումը, ուրեմն նա բայերով դատում, մտածում է և իր դատողությունն արտահայտելով՝ կազմում է խոսքը:

«Բայն բառը հենց նշանակում է խոսքը. այսպես կոչվել են այդ խմբի բառերը, որովհետև դրանցով ենք միայն արտահայտում մեր մտածությունը: Բայերը, ուրեմն, լոկ ու-ինքնակա հատկանիշ չեն ցույց տալիս, ինչպես անականները, այլ՝ նշանակում են նաև մի դեմքի, ուրեմն մի առարկայի պատկերացում, որ առաջուց ծանոթ է խոսողին, որին և իրեն հոգեբանական ենթակայի միացվում է հոգեբանական ստորոգյալը, որ է բայի ցույց տված հատկանիշը (բայիմաստը). ուրիշ խոսքով՝ բայերը միաժամանակ ցույց են տալիս նաև ստորոգում, այն է՝ խոսողը գիտակցում է հոգեբանական ենթական (բայի դեմքի) և հոգեբանական ստորոգյալի (բայիմաստի) հարաբերությունը: (« $\text{L} < \text{այոց} > \text{I} < \text{եզվի} > \text{տ} < \text{հասկանում} > \text{ք}$, եր. 29 հտն.)):

Կարճ ասած՝ բայ ասվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս հատկանիշ (բայիմաստ) և առարկա (դեմք), միաժամանակ և ստորոգում, այսինքն հատկանիշի վերագրվելը դեմքի ցույց տված առարկային:

Բայը մենակ կազմում է մի խոսք (նախադասություն):

Բայը նախադասության անդամ, մաս չէ, ինչպես խնդիրներն ու բառով արտահայտված ենթական, այլ դա ամենապարզ ձևով նախադասությունն է, որին իրեն լրացում կամ դեմքի կամ բայիմաստի կողմից միանում են մյուս բոլոր բառերը: Եվ մինչդեռ բոլոր լրացումները կարող են երկրորդական նախադասությամբ փոխարինվել, բայը երբեք չի կարող մի երկրորդական նախադասությամբ արտահայտվել: որովհետև բայը քերականորեն միշտ ամենազխտվորն է: Բայը, դա ինքը խոսքն է ամենապարզ ձևով, դրա համար էլ հնուց անտի կոչվել է *verbum*, ռուս<երեն> глагол — բայ, որ նշանակում է խոսք: Բառերի այս տեսակը կոչվել է այդպես, որովհետև դա համարվել է խոսքը գերազանցապես:

Գերմանացիները (*verbum finitum*) դիմավոր բայերը կոչում են, ինչպես տեսանք, խոսքի ձևեր (Redeformen): Բերեմ մի քերականությունից հետևելու: «Ամեն խոսքի ձևի մեջ բայիմաստի հետ կապված է... դեմքի գաղափարը, Դրա վրա է հիմնված բայի խոսք (նախադասություն) կազմող ուժը: Բայի դեմքի գաղափարը կոչվում է ենթակա, բայիմաստը՝ ստորոգյալ» (75): «Մեկ բառից (= մեկ բայից) կազմված նախադասություն մեջ այդ մեկ բառը պարունակում է ենթական և ստորոգյալը» (7): «Նախադասությունը ճանաչվում է դիմավոր բայով: խոսքը մտքի արտահայտությունն է դիմավոր բայով» (108)*:

Ահա թե ինչպես են սովորեցնում վաղուց ի վեր գերմանացիներն իրենց

* *Michaëlis, Neuhochoideutsche Grammatik, für höhere Schulen, Leipzig, 1890.*

դպրոցներում, ընայելով որ գերմաներենի բայերի մեջ կան այնպիսի ձևեր, որոնց դեմքը որոշ չէ:

Եվ այսպես կրթենեն իմ «Այն-Հարաբեր» քերականության մեջ արգեն (հր. 41 հատ.: 38-րդ գլխում և 39-րդ սկզբում):

Բայց այդ չի նշանակում, թե լիակա խոսքեր կամ նախադասություններ առանց բայի:

Այդպիսի խոսքերի մեջ բայը զեղչված է. կամ ենթիմացվում է. ուստի կամ կարդացողը հեղուկությամբ լրացնում է պակասած բայը: Բայց կան և այնպիսի բառեր կամ բառերի կապակցություններ, որոնք իրենց մեջ բայ չունեն և բայը չի կարող զեղչված համարվել, բայց և այնպես արտահայտում են կտառավոր մտածություն ու կտմբ: Դրանք ժանկատար նախադասություններն են, որոնց մեջ կա հոգեբանական ստորոգայտ առանց որևէ բայի: Դրանք լեզվական հաղորդման փչյալատաճ ձևեր են և հասկացվում են միայն ինտոնացիայի, ժեստերի և ցուցումների կամ այլ բաների հետ միացած, և հաճախ ոչ թե կատարվող մտածություն են արտահայտում, այլ ծառայում են միայն որոշ պատկերացումներ հարուցանելու մեր գիտակցության մեջ: Կտառավոր մտածություն արտահայտություն են անվերականգնելի միայն բայով արտահայտությունը:

Եվ ինչպես պետք է ստեղծել նախադասությունը:

Վերջերս «Правда» լրագրի մեջ (1936, № 128) մի հոդված կար «Հարկավոր է լավ քերականություն վերնագրով, Հոդվածագիրը բերում է ուսանողների քերականության երկու դասագրքից նախադասության հետևյալ սահմանումները. 1. Նախադասություն ասվում է բառերով արտահայտված առանձին ավարտված միտքը» (Աֆանասև և Շապուշիկով): 2) Նախադասություն ասվում է ավարտված միտք արտահայտող բառը կամ բառերի խումբը» (Շապուշիկով): Եվ ապա հոդվածագիրն ավելացնում է. «Դե՞ գրու՞մ հանձն, երեսին՝ թե ի՞նչ է նախադասությունը», բա՞ռ մտքի մեջ, թե՞ միտք բառի մեջ» (СЛОВО В МЫСЛИ ИЛИ МЫСЛИ В СЛОВЕ): Եվ հոդվածագիրը միամտությամբ կարծում է, թե այդպիսի քերականական տարրեր սահմանումներից է, որ շատ երիտասարդներ, հաջողությամբ ավարտելով բարձրագույն դպրոցները, կուպիտ սխալներով են գրում:

Թեև ենթա այդ սահմանումները:

1) Բոլորովին ավելորդ է առանձինն բառը, որովհետև նախադասության մեջ արտահայտված միտքը կարող է ուրիշ նույնպիսի մտքերից առանձնացած լինել և չլինել: Բարդ նախադասության մեջ, որ կազմված է երկու և ավելի նախադասություններից, այս վերջինների մեջ արտահայտված մտքերը ընկալառանձնացած չեն միմյանցից:

2) Բոլորովին ավելորդ է և ավարտվածն բառը, որովհետև նախադասության մեջ արտահայտված միտքը կարող է լինել և չլինել ավարտված, այսինքն՝ լրացած, անբողջացած: Ոչ ոք չի կարող ասել, թե ավարտված են հետևյալ նախադասությունները. «Երբ արևը ծագի», «Որպեսզի մարդ կարողանա առաջագործել»:

Այստեղ շփոթված են նախադասությունը և ֆրազը—առարկությունը: Ֆրազներն քերականությունների մեջ, բացի նախադասության ուսումնից ու վերլուծությունից՝ դեռևս են նույնը նաև ֆրազի—ասացվածի համար: Նույնպես վարվել եմ ես իմ քերականությունների մեջ:

«Եթե խոսքն առանձին առած՝ մի ամբողջացած, լրացած միտք է հայտնում, կոչվում է ասացվածք: Օրինակ՝ «Մի ծաղկով դարում լի գալս մի խոսք է և մի ասացվածք: Բնականաբար կարող է լինել կամ մի հաստ խոսք, կամ երկու և ավելի խոսքերի բաղադրություն, որոնք միասին մի ամբողջ լրացած միտք են հայտնում: Օրինակ՝ «Մինչև լգա հետինը, լի հիշվի առաջինը» մի ասացվածք է և երկու խոսք. եթե միայն, օրինակ, առաջին խոսքը վերջնենք՝ «Մինչև լգա հետինը», միտքը թերի, կիսատ կմնա... Եթե խոսքում ենք ասացվածքներով, և այլն: Դրված են նաև վերլուծության համար օրինակներ («Այնքան արհեստագործ» քերականություն> 2, եր. 3, 44, «Տարրական» քերականություն> 2, Ա տպ., եր. 31 հտն.):

3) Ինչ է նախադասությունը. «Բառերով արտահայտված միտքը, թե՛ ամիտք արտահայտող բառը կամ բառերի խումբը:—Այս երկու սահմանումն ևս ճիշտ են, երկուսն էլ՝ թերի:

Բացատրելու համար առնենք, իրրե օրինակ, «բառի» սահմանումը: «Բառի» մեջ կա երկու կողմ—ներքին՝ իմաստ, զաղափար, պատկերացում, և արտաքին՝ հնչյուններ: Հիմա, «բառի» սահմանումի ժամանակ՝ մեկը կարող է բառի ներքին կողմից նլնել և ասել, թե «բառն է հնչյուններով արտահայտված պատկերացումը». մի ուրիշն էլ կարող է արտաքին կողմից նլնել, ասել, թե «բառն է պատկերացում արտահայտող հնչյունները»: Գիշտ նույնն է և նախադասության վերաբերմամբ. որի մեջ պատկերացմանը փոխանակում է ամիտքը, իսկ մտքի արտահայտություն միտքը, հնչյունների փոխանակ, բառն է: Արեմն մեկը կարող է ասել, թե «նախադասություն է բառերով արտահայտված միտքը», մի ուրիշն էլ, թե «նախադասություն է միտք արտահայտող բառը կամ բառերը»: Իմ այդպես էլ վարվում են հայտնի, Արեմն ու թե պետք է խեղաթյուրելով ծաղիլ այդ սահմանումները, որովհետև տարբեր են.—ինչպես վարվում է «Պրակտիկա» հոգվածագիրը,—այլ պետք է հասկանալ, թե ինչի է ծագում այդ տարբերությունը, և աշակերտներին բացատրել այդ: Այլ թե պահանջել ամիտքի պատկերացման բոլոր դասագրքերի մեջ, միակերպ սահմանում, որ աշակերտներն անգիր անեն և հարկավոր դեպքում արտասանեն, այլ պետք է ճիշտ և անթերի սահմանում և տարբերությունների մասին հասկացություն:

4) Վերևի երկու սահմանումներն էլ թերի են, և դրանցով.—բառերով արտահայտված միտք», թե ամիտք արտահայտող բառը,—դրանցով որոշ չի իմացվում, թե ինչ է նախադասությունը: Դրանք շատ բնականուր են: Նախադասությունը կամ խոսքը հաճախ սահմանում են նաև իրրե մտածության (մտքի) արտահայտությունը բառերով: Այս էլ թերի է:

Տեղիցի այսպիսի սահմանումը, ինչպես բացատրված է իմ «Հայոց» <հոգի> տ<նություն> մեջ,—բնականուր հոգեբանական է, այսինքն՝ այնպիսի, որ միակերպ կհամարվի ամեն ժամանակի ամեն լեզվի: Դրանով դեռ չի պարզվում խոսքի կազմությունը մի առանձին լեզվի մեջ:

Առնենք բառերի հետևյալ կապակցությունը. «Պարսիկների հարձակումը Հայաստանի վրա 360-ական թվականներին»: Թե այս կապակցության մեջ միտք կա արտահայտված, այդ ոչ ոք չի կարող հերքել: Բայց ոչ մի քերական չկա, որ նախադասություն համարի այդ և նման կապակցությունները, ինչպես են՝ «Երկրի պտույտն արեգակի շուրջը», «Հայերի պարտությունը պարսիկներից 451 թվին Ամարայի դաշտում» և այլն: Ինչու՞ դրանք նախադաս-

սուբյուռն շինեալ—Որովհետեւ գրեց թէ՛ ստորագրում չկաւ իսկ ստորագրում, որոնք և Նախագահութեան կամ խոսք է առաջ պայիս, երբ մտաւ թիւնն արտահայտում է դիմադրութեամբ, որ կարող է ունենալ իր լրացումները. այսպէս, օրինակ, երբ վերնի կապակցութիւնները դառնում են ռաբոտնիկները հարձակում են Հայաստանի վրա 460-ական թվականներին, Շերկոթ պատում է արեգակի շուրջը, չէլայնը պարտկենքին պարտկենքից 451 թվին Ալարայրի դաշտում: Եթե Նախագահութիւն համարվի այս կապակցութիւնը՝ ռաբոտնիկների հարձակումը Հայաստանի վրա 460-ական թվականներին, ապա քանի՞ Նախագահութիւն պիտի լինի հետեւյալը՝ ռաբոտնիկների հարձակումը Հայաստանի վրա 460-ական թվականներին՝ ունեցել է հայերի համար աղետարար հետեւանքներ: Ոչ մի քերական չկա, որ այս վերջին կապակցութիւնը երկու Նախագահութիւն համարի միայն նրա համար, որ դրա ենթակայան՝ հարձակումը բառն ունի իր լրացումները և նրանց հետ միասին մի որոշ միտք է հայտնում: Այլ դա մեկ Նախագահութիւն է մի դիմադրութեամբ:

Այսպէս արեւմտ, Եռիւրեւնում խոսք կամ Նախագահութիւնը մտածութեամբ արտահայտութեամբ է բայով:



«ԲԱՌ-ԵՆԹԱԿԱՆ»

45. Ենթակայի երկու տեղում արտահայտութիւնը:—Փոքրոցում աւանդապատահար ունենդիր ենք լինում երկու պատահական հետեւյալ զրոյցին.

— Ուրեմն եկե՛ք է:

— Այո, ե՛կեք է:

— Ո՛ւմ մտտ է վեր եկել:

— Ստեփանի մտտ է վեր եկել:

— Արդե՛ն տեսե՛ք իս նրան:

— Չէ, դեռ չեմ տեսել:

— Դե շտապիր, գնա, տես, Վարդուշ, Թե չէ՝ շուտով Թիֆլիս կվերադառնա:

— Կամ ես առում, Հեղուշ, այսօր իրիկունը հենց կգնամ, կտեսնեմ:

Ահա բաղմամբիվ Նախագահութիւններ, որոնց ոչ մեկի մէջ ենթական ոչ մի բառով չի արտահայտւած: Բայց լնայելով դրան՝ իրար հետ խոսողները շատ լավ գիտեն, թե այդ բայերի դեմքերը ո՞ր անձերի արտահայտութիւն են: Մենք էլ, որ չտանք և տեսնում ենք նրանց, շատ լավ հասկանում ենք, որ 1-ին և 2-րդ դեմքերով արտահայտւած ենթական Վարդուշն է, միայն վերջինի (չլավ ես ասում) ենթական՝ Հեղուշը, իսկ ո՞վ է 3-րդ դեմքերով արտահայտւած ենթական, իսկ մենք լգիտենք, բայց այս դեպքում կարելի էլ չենք զգում ավելի բան իմանալու, քան այն, որ դրանց ենթական է մեզ համար մի անծանօթ դեմք, մի անծանօթ անձ: Այս կարող չէ թխտել ոչ մի քերական, չի մա այդ բայերի հետ դեմքը դեմքերին համապատասխան դիւրանումները.

— Ուրեմն ես եկե՛ք է:

— Այո՞, ես եկել է:

— Ո՞ւմ մոտ է նա վեր եկել:

— Ստեփանի մոտ է նա վեր եկել:

— Արդեն դու տեսն՞լ ես նրան:

— Չէ, ես դեռ չեմ տեսել:

— Դե շտապիր դու, գնա դու, տես դու, Վարդուշ: Թե լէ՛ շուտով Թիֆլիս կվերադառնա նա:

— Լավ ես ասում դու, Հեղուշ: Այսօր իրիկունը հենց ես կգնամ, ես կտեսնեմ:

Քերականներն ասում են, որ այս խոսքերի մեջ ենթականերն են ես, դու, ետ դերանունները. թե այդ դերանուններով հանդերձ այդ խոսքերի մեջ բուրդովին նույնն է արտահայտվում, ինչ որ առանց այդ դերանունների, այդ վերելում տեսանք: Այդ դերանունները գրելով,—ինչպես գրում է Պեշկովսկին,—ոչ մի բանով ավելի պարզ խոսք չի օտարացվում: Մեզ համար սենա դերանունով քնալ չի որոշվում: Յ-րդ դեմքի անձանք անձը: Բայց խոսքի կամ նախադասության մեջ փոփոխություն է մտնում:

Ի՞նչ է այդ փոփոխությունը:

Դերանուններով այդ ակապակցությունների մեջ երկու տեղում է տարա-
նայություն մինեույն քանք, այսինքն երբեկոց: Այս նշանակում է, որ երբ ես, դու, ետ բառերը գրվում են իբրև ենթակա, այն ժամանակ դրանց հավելումով բայերի միջից չի անհետանում նրանց դեմքերով արտահայտված ենթական, այլ միայն երկրորդ անգամ մինևույնը կրկնվում է առանկին բառերով—դերանուններով: Այս թող լավ լուծեմ մեր քերականները:

Հիմա Յ-րդ դեմքի բայերի հետ գնենք մի հատուկ անուն:

— Ուրեմն Տիգրանը եկե՞լ է:

— Այո՞, Տիգրանը եկել է:

— Ու՞մ մոտ է Տիգրանը վեր եկել, և այլն:

Ի՞նչ փոփոխություն կրեցին վերելի խոսքերն այդ «Տիգրան» բառի հավել-
լումով:

1) Խոսողների համար այդ «Տիգրան» բառով ոչ մի նոր բան չավելե-
ցավ: Մեզ համար, որ կողմնակի լսող ենք, այն բայերի Յ-րդ դեմքի նշանա-
կած տեղեկոցը անձը փոքր ինչ պարզվեց: Իմացանք, որ նա ոչ թե կին է, այլ
տղամարդ, անունը Տիգրան: Իհարկե դա քիչ է: Բայց այդ Տիգրանը կարող է
ավելի պարզվել իր վերադիրներով, ինչպես են, դիցուք, թայսինը հիմնարկի
պետ Տիգրանը և նմանները: Բայց խնդիրն այս մասին չէ:

2) Այդ նախադասությունների մեջ ենթական դարձավ «Տիգրան» գոյա-
կանը: Քերականներն այդ են ասում:

3) «Տիգրան» գոյականի գրվելով ևս, այդ նախադասությունների մեջ
ենթական չեղելու անգամ է արտահայտվում, մեկ՝ բայի դեմքով, մեկ էլ՝
«Տիգրան» բառով: Այս լին կարող մերժել մեր հայաստանյան քերականները:

Շատ թույլ են մտածում այն քերականները, չորոնք, երբ նախադասու-
թյան մեջ ոչ մի բառ չկա, որի համար ասեն, թե դա ենթակա է, ընդունում
են, որ ենթական բայի դեմքով է արտահայտվում. բայց մինևույն բայի հա-
մար և մինևույն նշանակություններն ունեցող նախադասության մեջ այլևս նույնը
չեն ընդունում, երբ մի բառ է ավելանում, որի համար կարող են ենթակա
անուն գնել: Բայց ո՞ր է մնում, ինչով է բայի դեմքից դուրս կորչում ավել,

ինչ որ մի քիչ ասած իբրև ենթակա էր քննարկման (Կեն, մի հոտ), Գարձալ՝ նոր բայի հետ դրվող գերաշնչանքով Երկուստեցանք և նորապատկան միակնական բանը, այսինքն ենթակա, նույնը լինում է անպայման և այն դեպքում, երբ բայի հետ դրվում է մի անուն:

Ինչի՞ց է ծագում այն ֆորմալիստական տեսությունը, որով կարծում են, թե բայի միջից ցնդում, կորչում է դեմքի արտահայտություն իբրև Լեքսիկա, երբ բայի հետ դրվում է մի գոյական անուն կամ գերանուն, որ կոչում են ենթակա:

1) Մեկ բայով արտահայտված խոսքի մեջ բնականաբար շնչավում է բայիմաստը և այ թե գեմքը, որ նույնիսկ չնշտել էլ կարելի է: Եվ այդ հասկանալի է, թե ինչու և ճգնաբանական դատողության մեջ դատողության ցործողությունն սկսվում է հոգեբանական ենթակայից, որի պատկերացումն ավելի առաջ է ծնվում կամ կա մեր գիտակցության մեջ, քան ստորոգյալի պատկերացումը, որ գիտակցաբար միացնում ենք ենթակայի պատկերացման հետ: Ուստի և առանձնապես ուշադրության է առնվում հոգեբանական ստորոգյալը, որ և միշտ կրում է խոսքի զորեղ շնշտը: Արդ, միայն մեկ բայով արտահայտված խոսքերի մեջ հոգեբանական դատողությունն սկսվում է միշտ բայի դեմքով արտահայտված առարկայի պատկերացումից, որ միշտ առաջուկ կա խոսողին գիտակցության մեջ, և որի հետ՝ խոսողը գիտակցաբար միացնում է բայիմաստն իբրև ստորոգյալ: Երբ մուլիոս Կեսարը հռոմեական ժերակույտին գրում էր միայն, «եկա, տեսա, հաղթեցի», շատ պարզ կերպով նրա համար հոգեբանական ստորոգյալն էր «գալ, տեսնել, հաղթել» զործողությունը, որ և կարևոր էր հաղորդելու համար, Բայց և ժերակույտն էլ առանց որևէ թյուրիմացության հասկացել է, որ, «եկող, տեսնող, հաղթողն» է ինքը մուլիոս Կեսարը: Այսպես և երկու ընկերուհիների վերնում բերված խոսակցության մեջ, — «Ուրեմն եկել է՞», — «Այո, եկել է», — «Բայնքի դեմքերի նշանակած պատկերացումը հոգեբանական ենթակա է, իսկ բայիմաստը՝ հոգեբանական ստորոգյալ, ուրեմն և կարևոր է ա՛յս հաղորդելու համար, ուստի և զորեղ շնշտվում է:

Ահա այս կարևորի և զորեղ շնշտվողի մոտ՝ դեմքի պատկերացումը համեմատաբար պակաս զգալի է դառնում: Իսկ երբ այդ դեմքի պատկերացումը որոշվում է բայի հետ դրվող մի առանձին գոյականով, — «Ուրեմն Տիգրանը եկել է՞», — «Այո», Տիգրանը եկել է՞, — այն ժամանակ, այսպես ուսած, այդ գոյականի փայլով նսեմանում է ենթակայի արտահայտությունը դեմքով, և ոչ-խորը մտածող քերականները կարծում են, թե բայի միջից ցնդում է այն, որ մի փոքր առաջ կար դրա մեջ, այսինքն ենթակայի արտահայտությունը դեմքով: Բայց որովհետև բայի դեմքի գոյությունը բուրբուլիկի ուրանալ շնն կարող, ապա նրանք ընկնում են ֆորմալիզմի մեջ, ասելով, թե բայի դեմքը միայն ձևական նշանակություն ունի, միայն հարաբերությունը նշանակելով ժառանգում է միայն կապակցության համար, որ է քառով արտահայտված ենթակայի հետ բայիմաստն իբրև ստորոգյալ կապելու համար: Դա մաքուր ֆորմալիզմ է:

2) Նրկբող պատահաբ, որից ծագել է այդ ֆորմալիստական տեսությունը, թե նախադասությունն առանձին բառով արտահայտված ենթակա պիտի ունենա, այն է, որ հնուց անտի քերականությունների մեջ նախադասության բացատրության ժամանակ, ինչպես տեսանք, նշում են Անական տրամա-

բանության սքեմայից, այսինքն այնպիսի նախադասութիւնից, որի դիմադոր բայը ՆՄ բայի հզակի 3-րդ դեմքն է. հետը մի ստորոգյալ և մի ենթակա առանձին բառերով, ինչպես՝ ռեալաստանն է վախկոտա: Տրամաբանութիւնն, ինչպես տեսանք, դեմքերը նկատի լուսի, և պահանջում է առանձին բառ՝ ենթակայի արտահայտութիւնն համար: Արդ, ձեական տրամաբանության վարժվածները քերականութիւնն մեջ մտցրել են այն հայացքը, թէ բայի դեմքերը լուս ձեական նշանակութիւն ունին և բայը հավասար է ստորոգյալի: Ահա՛ թէ ինչ լզիտեն մեր քերականները:

3) Այստեղ գործել է և այն լեզուների ազդեցութիւնը, որոնց մեջ քայերի դեմքերը մասամբ որոշ շին, և կամ որոնց մեջ, ինչպես ռուսերենում նախադասութիւններ են կազմվում առանց բայի. ուստի և ստորոգյալի հետ պիտի լինի մի գոյական ենթակա, ինչպես՝ он богат, ты богат, Тиграк богат, Я пришёл, Тиграк пришёл. Մի անգամ որ բայ չկա, կամ դեմքը բայով չի արտահայտվում, քնականաբար այսպիսի դեպքերում ենթական արտահայտվում է միմիայն առանձին գոյականով: Եվ այսպիսի նախադասութիւնների ազդեցութիւնն տակ ֆորմալիստ քերականների համար մթնում է դեմքի նշանակութիւնն այնպիսի դեպքերում, երբ բայի դեմքը որոշ է վերջավորութիւնով:

Բայց սեթե я еду (ես գնում եմ) կապակցութիւնն մեջ,—ինչպես գրում է Պեշկովսկին,—երկու անգամ է արտահայտված ենթական, մեկ անգամ՝ բայի դեմքով, մի երկրորդ անգամ էլ՝ դերանունով,—ապա նույնպես երկու անգամ է արտահայտված ենթական он идет (=ես գնում է) և Тиграк идет (=Տիգրանը գնում է) նախադասութիւնների մեջ:

Հասկանալի է, որ ենթակայի երկրորդ անգամ արտահայտութիւնը լինում է բայի հետ դրված գոյականով, և ոչ թէ բայի դեմքով, որ անբաժան է բայից:

Այսպես ուրեմն, դիմավոր բայի հետ դեմքի նկատմամբ դրվող գոյականով, երբ կա քայի դեմքը, ենթական երկու անգամ է արտահայտվում: Եվ որովհետև հայերենում բայի դեմքերը միշտ որոշ կերպով արտահայտված են, հետևաբար և մեր լեզվի մէջ քայերի հետ դեմքի նկատմամբ դրված գոյականները միշտ մի երկրորդ անգամ են արտահայտվում ենթական, այսինքն մի երկրորդ անգամ նշանակում են առարկայի պատկերացումը, որի վրա ստորոգում է լինում:

Բայի մեջ արտահայտված ենթական քերականութիւնների մեջ կոչվում է դեմք, որ ավելի պարզ լինելու համար կարելի է կոչել «դեմք-ենթական»։ ինչպես կոչել եմ ես (սէ<այոց> չ<եզվի> տ<եսութիւն>», եր. 364)։ Իսկ երկրորդ անգամ առանձին բառով արտահայտվածը, որով պարզաբանվում է դեմքը, քերականութիւնների մեջ կոչվում է պարզապես «ենթական»։ Բայց լեզվական տեսակետով ավելի որոշ կլինե՞ր կոչել «բառ-ենթական»։

46. Ենթակայի կամ «բառ-ենթակայի» դերը դեմքի կամ «դեմք-ենթակայի» նկատմամբ:—Բայի դեմքերի նշանակած առարկաները միշտ որոշ են խոսող անձի համար, որ 1-ին դեմքն է։ Խոսակցի համար, սակայն, որոշ են միայն 1-ին և 2-րդ դեմքերի ցույց տված առարկաները, որոնցից 2-րդն ինքն է։ Այսպես չէ 3-րդ դեմքի նկատմամբ։ Սրա նշանակած առարկաները բազմաթիվ են. և հթե խոսակցին առաջուց ժանոթ չէ, թե ով կամ ինչ է 3-րդ դեմքի նշանակած առարկան, կամ նախորդ խոսքերից չի իմանում այդ, կամ

Քե խոսողը մասով ցույց լի տալիս այդ դեմքի նշանակւած իրը.—որն ժամանակ խոսակցի համար դա մնում է իբրեւ մի անհանգր անկ կամ իր. հասակիցը (կամ ընթերցողը, որի համար է գրվածքը) սակավ անգամ էլ արդէ է բավականեալ գրանեմ. այլ եւ սովորաբար պահանջում է ավելի բան իմանալ այն գլխակի մասին, որի վրա ստորագրում է լինում: Նրան լի բավականացնում էին, որ դա ոչ խոսողն է. և ոչ ինքը. այլ մի ուրիշ իր: Պահանջվում է. ուրեմն, բաւերով պարզել, որոշել նույն դեմքի ցույց աված առարկան: Այդ դեպքում՝ Ձեռք դեմքի բայի հետ դրվում է բայի դեմքի ցույց աված առարկայի անունը, որ և սահմանափակում է ընդարձակ ծավալով ողմած բայական դեմքը: Օրինակ՝ երբ ասվում է՝ «գնացա», լսողն իմանում է, որ խոսողն այդ գործողութիւնը վերապրում է մի առարկայի, բայց առարկան շատ անորոշ է մնում: Իսկ երբ ասվում է՝ «Տիգրանը գնացա», «Տիգրանը բաղը լրացնում, պարզում է այդ բայի դեմքը:

Այս է ահա երկրորդ անգամ մի առանձին բառով արտահայտված ենթակայի դերը: Դա պարզում, որոշում է դեմքի նշանակած առարկան, և լեզվակառն տեսակետով, խոսքի կազմութեան նկատմամբ, ուրիշ բան չէ, բայց եթե բայի դեմքի լրացում, դեմքի բացահայտիչ, «բայց որովհետեւ նույն առարկան է ցույց տալիս, ինչ որ դեմքը, և որոշ նշանակութիւն ունի, ուստի սովորաբար այդ լրացական բառը կոչում են ենթակա»: Հարկավ, դրա հետ միասին բայի դեմքն ևս միաժամանակ ցույց է տալիս այն առարկան, որին վերադրվում է բայիմաստը» («ՀՀ-այոց» լեզվիչ» տեքստութիւն» ք, եր. 363 հտն.):

Ըստ այսմ՝ ենթակա ասվում է բայի դեմքի լրացումը, որով պարզվում, բացահայտվում, որոշվում է դեմքը, այսինքն, այն առարկան, որի վրա ստորագրում է լինում («Այլա՝ «արհարարի» շարձաչափութիւն» ք, եր. 14 հտն., «Այլա՝ «արհարարի» ճիւղ՝ «ականութիւն» ք, եր. 45, 137):

Ո՞վ սարսափւ: «Ենթակա» լրացում է բայի դեմքին, ենթակա՝ լրացում: Բայց սարսափաւար մարդիկը շատ հանգիստ սրտով ընդունում և ասում են, որ 1) երկրորդական նախադասութիւնները լրացումներ են գլխավոր նախադասութեան. 2) երկրորդական նախադասութիւնների մեջ կան նաև ենթակա նախադասութիւններ, որոնք ենթակայի պաշտոն են կատարում գլխավոր նախադասութեան բայի համար, օրինակ՝ Հայտնի է, որ երկիրս պտտվում է արեգակի շուրջը = Հայտնի է երկրի պտտվելը արեգակի շուրջը:

Այդ մարդիկն ասում են, որ երբ բայի ենթակա արտահայտված է երկրորդական նախադասութեամբ, մի բայով (երկրորդ պատմում է), դա, այդ ենթական լրացում է և ստորադասվում է գլխավորի բային. իսկ երբ նույն բայի ենթական արտահայտվում է մի գոյականով (...երկրի պտտվելը, պտտւլտը), դա չի կարող լրացում լինել և ստորադասվել: Ահա այդ մարդկանց տրամաբանութիւնը:

Բայց նույնիսկ կան քերականներ, որոնք ենթակա նախադասութիւնները, հետեւաբար և ենթակայի բառերը, կոմիսիան հարաբերութեան մեջ են դնում: Այդ, ինչպես հետո կտեսնենք, ճիշտ ըմբռնում չէ: Այսպես օրինակ՝ իմ ձեռքի տակ հղած Պրոքրատիստի քերականութեան մեջ (եր. 3), որ հիշվեց վերին վում, գրված է. «Նախադասութեան բոլոր անդամները, բացի ստորոգյալից (=բայից, Մ. Ա.), կարող են արտահայտվել ամբողջ առանձին նախադասութեամբ, որ կոչվում է երկրորդական. կամ կոմիսիոն, ի տարբերութիւն գլխավորից, կամ անկախից. օրինակ՝ Не даром говорится, что дело мас-

терз боятся. — Ձուր լի ասվում, որ զործը վարպետից է վախենում (որ զործը վախենոյից է վախենում նախադասութիւններ փոխարինում է գլխավոր նախադասութիւնն եւ... говорить = շի ասվում ստորագլուխի ենթակային)»:

Աւրեմն մի կողմ պիտի դնել այն միտքը, թէ ենթական, այսինքն՝ ենթական բառը, լի կարող լրացում լինել: Զպիտի սարսափել այդ մտքից և լինել հետեողական: Բայց այդ սարսափը միայն ֆորմալիտետների համար է, որոնց միտքը կաշկանդված է ձեական տրամաբանութիւններ, որոնք և բայի դժմքին չեն տալիս իրական արժեք:

Իսկական լեզվաբանները վաղուց, շատ վաղուց թեթեւեղ են ձեական տրամաբանութիւնն այդ անպիտք բռնը քերականութիւնից և լեզվի ուսումնասիրութիւնն համար այլևս ի նկատի լուծեն տրամաբանական նախադասութիւնն սքեման: Այն որ տրամաբանական սքեմայով ենթական է, լեզվական տեսակետով բայի դժմքի վրա ավելացած մի բառ է բայի դժմքը պարզելու համար:

Գերմանացիները, որպէսզի դժմքի այդ լրացումը չշփոթվի տրամաբանական ենթականի (Subjekt) հետ, դրա համար մի առանձին տերմին էլ ունեն Subjectswort (= ենթականի բառ):

Կարգանք հետեւալը մի գերմաներենի քերականութիւնից: «Ամեն դիմավոր բայ կազմում է մի նախադասութիւն: Բայի դժմքի գաղափարը (Begriiff) կոչվում է ներքակա, բայիմաստը՝ ստորոգայել:

Երբ դիմավոր բայի վրա ավելանում է մի բառ, որ ավելի որոշ է ցույց տալիս բայի դժմքը, այդ բառը կոչվում է ենթական (այլև ենթականի բառ Subjectswort), այդ ժամանակ բայական ձևը նկատի է առնվում գլխավորական միայն իր բայիմաստով և սովորաբար միայն ստորոգայել է կոչվում, թեպէտ և սրա հետ միասին ցույց է տալիս դժմքի գաղափարն էլ: Երբ դժմքերը կամ միայն բայի վերջավորութիւններով են ցույց տրվում, կամ միտմամբնակ և վրան ավելացած անձնական դերանուններով, հրորոյ դժմքում նաև վրան ավելացած ուրիշ դերանուններով կամ գոյականներով: Երբ բայի վրա ոչ մի առանձին դերանուն կամ գոյական չի ավելանում, այն ժամանակ նախադասութիւնն ենթական և ստորոգայել լեզվորեն անբաժան, ըստ իմաստի բաժանելի, միառկված են բայական ձևի մեջ*։ Ահա թէ ինչպես են սովորեցնում գերմանացիներն իրենց դպրոցներում: Բերեմ և մի լեզվաբանի, Ֆրանց Նիկողայոս Ֆինկի, մեր արևելյան գրական լեզվի դասագրքից հետեւալը հայերենի ձևախաղասութիւնն ուսումնից**:

79. Ձևախաղասութիւնն միջուկն է դիմավոր բայը, որի դժմքն առանձին վերջավորութիւններով պարզ կերպով զանազանվում է բայիմաստից: Գիմավոր բայի հետ կապակցվում են սովորաբար լրացումները (nähere Bestimmungen)*** և հատկապես՝

1. Անմիջական լրացումները, ինչպես օրինակ՝ ենթականի բառն ու առարկայի բառը (das Subjekts- und Objektswort—ենթական և ինդիքը—W. II.),

* Michaelis, Gramm., 78, 108.

** Lehrbuch der Neoslavonischen Litteratursprache, bearbeitet von Franz Nikolaus Flink unter Mitwirkung von Stephan Kanajanz, Vagarschapat—Marburg, 1902, էջ 66 հաւ., «Գոտախաղասութիւնը, —իւս, պիտք է եւ միայն իմ վրա առնելը, որում է ձինկը ուսն գրքի առաջաբանում (եր. II):

*** Գերմանական քերականութիւններում *nähere Bestimmungen* (=վիշի միջոց) օրոշում բառով են հոշվում բոլոր լրացումները, լինին ենթական, ստորոգայել, թէ ինչքան կամ մակրոյ:

Ճ. Գոգմանկի լրացումները, այսինքն՝ անմիջական լրացումները վերադառնալիցները (= բայի լրացումների լրացումները, Մ. Ա.), ինչպես օրինակ՝ վերադառնալիցները:

Ա. Անմիջական լրացումները.

80. Սնբակայի բառը (Subjektswort), այսինքն քայի դեմքի տեղեկական լրացումը, է մի անուն կամ գերանուն ազգական հայր... Օրինակ՝ Նախ հայրս է...

81. Աստղայի լրացումները, այսինքն բայի մասնի անմիջական լրացումներն են.

1. Առարկայի բառ (= առարկայական խնդիր, Մ. Ա.): Սա մի անուն է հայցական կամ արական հոլովով...

2. Ասորոգայի անուն կամ գերանուն (Միժեռանկը բռնուն է):

3. Մակրայական լրացում, և հատկապես

ա) Մի իսկական մակրայ, օրինակ՝ Նա ցած թռավ:

բ) Մի գոյական, օրինակ՝ Սա ցած թռավ կամ լիցից և այլն:

Ինչպես կարելի է տեսնել, առանձին բառով արտահայտված ենթական նկատի է առնվում իբրև քայի դեմքի լրացում, ինչպես և մյուս բոլոր լրացումները որոշում են քայի մասերը:

Ինչ կասեն սրան մեր հայաստանյան ցերեկանները:

Գուցե նրանք ցած կգնահատեն Ֆինկին, որ մի հայտնի գիտնական էր. Այդ գնացում թող լսեն հետևյալը, Կան գերմաներեն ժողովրդական գրադարանն ընդհանուր վերնագրով մի շարք գրքեր, հրատարակությանը հերկու մասնագետ լեզվաբան պրոֆեսորների Այդ շարքի մեջ տասներորդ հատորն է Ա. Մեյնի ժողովրդների տարրական գիրքը, տպված 1913 թ.: Այս գրքի մեջ՝ ևս կգտնեք նույնը:

«Բայական նախադասություն» (der Verbalsatz) իր մեջ ունի մի գիծավոր բայ և կարող է միայն քայից կազմվել. «ուտեմ» (= ուտում եմ, Մ. Ա.) մի բայական նախադասություն է: Բայական նախադասությունը կարող է սակայն ամեն տեսակ լրացումներ ունենալ՝ ենթակա, խնդիրներ, մակրայներ (Es kann aber allerlei Bestimmungen enthalten: Subjekt, Objekte, Partikeln): Օրինակ՝ երթողն առ եղբարսն իմ, և առ ցեղս. ելանեմ ես առ հայրն իմ (= գնա դու իմ եղբայրների մոտ և առա նրանց. նրանում եմ ես իմ հոր մոտ, Մ. Ա.): Զայնու մամանակալ ապստամբաց յարքայն Հայոց մի ի ծառայից նորան (= Այն մամանակները Հայոց թագավորից ապստամբաց նրա ծառաներից մեկը, Մ. Ա.):

Այսպես ուրեմն, լրացում է իմիջիպիտոց և ենթական, ենթական, հարկավ, լրացում է քայի դեմքի կողմից: Եվ այս ասում է ոչ թե Արեղյանը, այլ Պարիզի համալսարանի պրոֆեսորը, շատ հայտնի լեզվաբան Ա. Մեյնը, և ասած է մի գրքի մեջ, որ կազմված է այն մասնագետ լեզվաբանների համար, որոնք հայերեն են ուզում սովորել:

Այդ կարող է, թերևս, արժեք չունենալ Ա. Ղարիբյանի համար, որ բոլոր հնդեվրոպական լեզվաբաններին ոչնչացրել է միանգամից մի գրքով. բայց, կարծում եմ, Ա. Ղարիբյանի պրոֆ. Հր. Աճառյանի համար որևէ նշանակու-

* A. Meillet, Altarmenische Elementarbuch, Heidelberg, 1913, հր. 118.

թյուն, գուցե, ունենաւ իսկ ինձ համար զա մեծ արժեք ունի. լեզվաբանության գիտութիւնը նրանք ունեն, և ոչ քաղ. Սեակն ու Ա. Ղարիբյանը:

Բայց մենք շարունակենք:

47. Ենթակայի կամ «բառ-ենթակայի» և բայի դեմքի կամ դեմք-ենթակայի ներուճական նարաբերութիւնը:— Բերեմ իմ «Աշխ» <արհարարի> շար <աշխութիւն> իցե հետեւյալը (եր. 44). «Ետքի մեջ մի բառ (գոյական, ածական, մական) դառնալով լրացում մի ուրիշ բառի՝ իր կատարած պաշտոնով ստորագասովում է այն բառին, որի լրացումն է լինում. Քերականութեն գլխավոր կամ գերադաս նշանակութիւն ունի միշտ լրացյալը և ոչ թի լրացումը»:

Հետեւեալ բայի դեմքը, որի լրացումն է ենթական, քերականորեն գերադաս է. իսկ ենթական ստորագաս:

Բայց ի՞նչ է ենթականի այդ ֆերականեղան ստորագասութիւնը:

Բերեմ դարձյալ իմ «Աշխ» <արհարարի> շարահյուսութիւնից մի հատված (եր. 47 հտն.).

«Բառերի ստորագասութիւնն իր տրամաբանական ձևով երկու տեսակ է՝ կախում և ներուճակութիւն»:

Կախման նարաբերության մեջ լրացում գոյականն ենթարկվում է լրացյալին, որ իր նշանակութեամբ իշխում է նրան՝ խնդրելով, պահանջելով, որ իր լրացումը դրվի այս կամ այն ձևով. լրացումի կապակցութեան եղանակն և հարաբերութիւնն իր անցյալի հետ՝ կախված է լրացյալից. Օրինակ՝ տրական հոլովն ընկերիս կախված է օգնեցի բայի բայիմաստից (ընկերիս օգնեցի). կարգացի բայն իր նշանակութեամբ խնդրում է հայցական հոլով գիրք (գիրք կարգացի). իսկ Տիգրանի գոյականը սեռական է դրվում գիրքը գոյականի պահանջով (Տիգրանի գիրքը):

Կախման հարաբերութիւնը քերականութեան մեջ կոչվում է խնդրատեղութիւն կամ վարում:

48. Ներուճակութեան նարաբերութեան մեջ լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրան հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար. կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկուդ անգամ կրկնութիւնն ուրիշ բառով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորագասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, զուգարդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից. մինչդեռ կախման մեջ, ընդհանրական, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան իր լրացյալը, և իր հոլովական ձևով կախված է լրացյալից:

«Այսպես զուգարդվում է բացահայտին իր բացահայտյալին. օրինակ՝ «Անուց՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա խոսքի մեջ բացահայտելը՝ «Բագրատունյաց մայրաքաղաքից» իր բացահայտյալի վերաբերմամբ մի կրկնութիւն է ուրիշ բառով, որի ցույց տված գաղափարն արդեն պարունակվում է «Անուց» բացահայտյալի մեջ. բացահայտի բացառական հոլովը կախված է ոչ թե բացահայտյալից, այլ «հեռացա» բայի նշանակութիւնից. նույն ներուճական հարաբերութիւնը մնում է և այն ժամանակ, երբ բացահայտին իբրև մի ածական մականուն դրվում է լրացյալից առաջ, ինչպես՝ «Բագրատունյաց մայրաքաղաքի Անուց հեռացա»:

«Նմանապես ենթական ներուճակ է բայի դեմքին, այսինքն բայի դեմքի

լրացում լինելով հանգձում միանգամայն և գուցարգրում է նրան, երկուսդ անգամ նույն զաղափարն արտահայտելով, ինչ որ բայի դեմքը։ Ենթական տրեմն մի տեսակ լացահայտիչ է բայի դեմքի, նրա հարգի ևս բայի դեմքից չէ կախված։

Ահա թե ինչպես է հասկացվում ենթակայի ստորադասությունը կամ բայի դեմքի լրացում լինելը։ Ենթական բայի դեմքի, իր լրացյալի երկրորդ անգամ կրկնությունն է ուրիշ բառով։

Առանձին ուշադրություն պիտի դարձնել այն մտքի վրա, որ ենթակայի ճշգրտվող բայի դեմքից չէ կախված։

Բերեմ և շարունակությունը (եր. 49).

Ենույն ձևով և ստորոգյալի գաղափարը.— ինչպես և ամեն հատկանիշ իր առարկայի նկատմամբ,—պարունակվում է արդեն իր ենթակայի մեջ, և ստորոգյալն ու ենթական,—Անիւ Բագրատունյաց վայրաբաղալին է—ինչպես խոսքի երկու հավասար եզրեր կամ մասեր, զուգարգրում են իրար։ Ամեն ենթակա, ինչպես՝ «ՏՅԻՂԵԱՆԷՔ ուղղականը, նույնպես խնդրում է մի բայ—ստորոգյալ զգնացք, ինչպես և բայ—ստորոգյալն ինքը պահանջում է մի ենթական։ Ենթակայի հուրվը բայից կախում չունի։

Թող քաղ. Սեակն և իր ընկերն առանձին ուշադրություն դարձնեն և վերջին նախադասությունը և նրա հիմնավորմանը։

Բերեմ և հետևյալը «ԱՆՇԱՎԱՐՈՒՄ» շարձարարի <արհեստություն> ցուց. եր. 2.

«Ման, Ինքնուրույն առարկան կամ գոյակը և իր ոչ-ինքնուրույն հատկանիշը կամ ստորոգելին կազմում են մեկ մտածություն նյութը։ Գոյական և իր ստորոգելին՝ սպիտակ ձյուն, վազող ձի, ծաղկած ծառ՝ մեկ գիտողության համար մի անբաժան միություն և մի պարզ գաղափար են կազմում. որովհետև հատկանիշը՝ հատկություն, դորոժողություն կամ դրություն՝ առարկայի մեջ գտնվում է իբրև նրա քաղաղիչ (այժմ կրթի)՝ զբաղակցական։ Մ. Ա.) մասը։ Երբ մենք ոչ-ինքնուրույն հատկանիշը՝ սպիտակ, վազող, ծաղկած՝ մտքով անջատում ենք իր ինքնուրույն առարկայից (ձյուն, ձի, ծառ) և մեր մտածողությամբ նորից վերագրում ենք առարկային կամ ստորոգում ենք, այն ժամանակ առաջ է գալիս խոսքը կամ նախադասությունը. ինչպես՝ ձյունը սպիտակ է, ձին վազող է կամ ձին վազում է, վազեց, ծառը ծաղկած է կամ ծառը ծաղկեց։

Ահա թե ինչպիսի բացատրություն է տրված խոսքի կազմությանը և ենթակայի հարաբերությանը դեմքի հետ մի կողմից, և բայիմաստի հետ մյուս կողմից։ Ով որ մատերիալիզմ և իդեալիզմ չէ տարբերում, նա, իհարկե, չէր կարող այս մատերիալիստական տեսությունն ըմբռնել։

Հարմար է արդյոք ճենթական բառը, որ տրամաբանական տերմին է, պահել քերականության մեջ զբաղակցյալին ենթակային համար. այսինքն առանձին բառով երկրորդ անգամ արտահայտված այն առարկայի համար, որ ենթարկվում է ստորոգման, թե՛ չէ։—Իմ կարծիքով հարմար է, քանի որ տրամաբանական նախադասության մեջ ենթական միշտ հենց այն առանձին բառով է արտահայտվում, որով քերականորեն լրացվում է բայի դեմքը։ Այսպիսի մի նախադասության մեջ՝ «Նապաստակը վախկոտ է», «Նապաստակը բառ և տրամաբանորեն և քերականորեն ենթակա կկոչվի, քերականորեն, հարկավ, իբրև դեմքի բացահայտիչ, Միայն՝ շփոթություն առաջացնող դեպքում կարելի է ցործածել որոշ կերպով թույլ-ենթական տերմինը։

Նույնպէս այդպիսի մի խոսքի մեջ «վայնկոտ» բառը և տրամաբանորեն և քերականորեն կոշտի ստորոգյալ, քերականորեն իբրև բայիմաստի լրացում, որ մեր հին քերականները կոչում էին «էական բայի ընդթիւն խնդիր»:

43. Անհնարաւոր խոսքի և շեքականա՝ ու շեքականա՝ տեւիկները:—Երբ քերականութեան մեջ շեքականա՝ կոչում ենք առանձին բառով արտահայտված շեքական և դա փրականութեւն շեքականա՝ տեւականով բայի զեմքի լրացումն է (սՀ<այոց> ի<եզվի> տ<եսութիւն>», եր. 364), քերականաբար փրականութեւն «անհնարական» պիտի կոչվեն այն նախադասութիւնները, որոնց բայի զեմքը ոչ մի առանձին բառով, թու մի գոյականով չի բացահայտվում և չի կարող բացահայտվել. օրինակ՝ լուսացալ, մթնեցա (սԱշխ<արհարարի> շար<աշխատութիւն>», եր. 16):

Բայց այդ չի նշանակում, թէ նախադասութիւն է կազմվում առանց տրամաբանական կամ հոգեբանական ենթակայի: Միայն այն ժամանակ է խոսքը կազմվում, մի բան ասվում, երբ մի գոյակի վրա ստորոգվում է մի բան: Ուրեմն լուսացալ, մթնեցա և նման խոսքերի մեջ ևս պետք է լինի այն բանի պատկերացումը, որի վրա ստորոգվում է: Բայց որի՞ք բան է զեմքականական ենթական և որի՞ք բան զոգեբանական կամ «տրամաբանական ենթական»: Տրամաբանութեւնը գործ լուծի այնպիսի նախադասութիւնների հետ, ինչպէս են՝ մթնեցա, լուսացալ, այլ միայն այն կասի, որ քանի որ լուսացալն նախադասութիւն է, ուրեմն կա և ստորոգում: Քանի որ ստորոգում կա, ուրեմն և կա ոչ միայն լուսանալը հատկանիշն իբրև ստորոգյալ, այլ նաև մի ենթակա, որի վրա ստորոգումն է լինում: Թէ ինչ է այդ հնարական, դրա հետ գործ լուծի տրամաբանութեւնը:

Փրականութեւնը գործ ունենալով այդպիսի խոսքերի հետ՝ նույնն է ասում, միայն վերջն աւելացնում է, որ լուսացալն նախադասութեան ենթական արտահայտված է այդ բայի ղեմով, որ ցույց է տալիս «մի առարկայի գաղափար, որի վրա ստորոգումն է լինում», կամ «որին իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշ» (սԱշխ<արհարարի> շար<աշխատութիւն>», եր. 2, 4): Իսկ թէ ինչ է այդ առարկան, դրա հետ գործ լուծի քերականութեւնը: Այս դիտութեւնը միայն այն կարող է ասել, որ այդ զեմքը այնպիսի բան է, որն քերականորեն չի բացահայտվում և չի կարող բացահայտվել ոչ մի բառով: Ուրեմն և այդ լուսացալն խոսքը փրականութեւն անհնարաւոր է, որ է՝ առանց թառ-ենթակայի: Բայց և այդ լուսացալն բայն «անդձա՝ չի կարելի կոչել, քանի որ հենց դրա զեմքն է, որ կատարում է հոգեբանական կամ տրամաբանական ենթակայի զեմքը:

Ի՞նչ է ասում հոգեբանութեւնը:

Հոգեբանական դատողութեան, հոգեբանական ենթակայի և ստորոգյալի մասին բավական բացատրութիւն կա իմ «Հ<այոց> ի<եզվի> տ<եսութիւն>» մեջ. եր. 23 հտն. 363 հտն. 1. Բերեմ այդ տեղից միայն հետևյալը. «Երբ դիտում ենք առաջնության արեգակի ծագման հետ կապված փոփոխութեւնը ընդթիւն մեջ և ասում ենք լուսացալ, մթնեցա այդ բառով արտահայտում ենք դատողութեան անդամներից մեկը, հոգեբանական ստորոգյալը, իսկ «ոգեբանական ենթական մնում է առանց արտահայտվելու. դա ընդթիւն մեջ տեղի ունեցած փոփոխութեան ըմբռնումն ու պատկերացումն է, որ մտքի մեջ առաջ է երևան եկել և որից սկսվում է դատողութեւնը» (սՀ<այոց> ի<եզվի> տ<եսութիւն>», եր. 24):

Ահա թե որն է լուսաբացվա բայի հոգեբանական հերական, որ քերական-
նորոնն արտահայտվում է միմիայն բայի դեմքով, — դեմք-հնթականով, — և
յի կարող երկրորդ անգամ արտահայտվել մի առանձին բառով, եթե չհաշվենք
այսպիսի գործողությունները՝ լուսյալ լուսաբացվա, օրը մթնեցա և այլն:

Ուրեմն լուսաբացվա խոսքի մեջ կա հոգեբանական ենթակա, բայց այդ
ենթական քերականորեն չի արտահայտվում առանձին բառով, ուստի այդ
խոսքն շատ հաջող կերպով «տեսնեցական» են կոչել փոականական կամ լեզ-
վական տեսանկետով. որովհետև քերականության մեջ «ենթական» բառով կո-
չում են հենց դեմքի բացահայտիչ ենթական, քան-ենթականա:

49. Ամփոփում:— Ես կուզեի՝ նախքան ուրիշ խնդրի անցնելն ամփոփել
իմ կարծիքը բառերի տեսանկետի և նախադասության մասին:

Բառերով կազմվում է խոսքը կամ նախադասությունը, ուստի շատ քնա-
կան է, որ բառերի բաժանման համար իբրև սկզբունք ընդունվի բառերի
նշանակությունն ու պաշտոնը խոսքի մեջ: Ըստ այսմ բառերն ամենից առաջ
լինում են՝

Ա. Զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, որոնք խոսքից դուրս են
մնում— միջադեպություն կամ ձայնարկություն:

Բ. Փառափար նշանակող բառեր, որոնցով խոսում ենք: Դրանք լինում
են.

1. Զևական նշանակություն ունեցող բառեր, որոնք հարաբերություն են
ցույց տալիս և ժառայում են խոսքի մեջ կապակցության համար: Լինում են՝

1. կապ, որով կապվում է գոյականն իր խնդրատուի հետ,

2. Շաղկապ, որով կապվում են խոսքը խոսքի հետ և համազոր բառեր
միմյանց հետ:

II նյութական նշանակություն ունեցող բառեր, որոնցից կազմվում է
խոսքը: Դրանք լինում են՝

1. ԲԱԾ, որ մենակ կազմում է մի խոսք, որովհետև ցույց է տալիս մի
ինքնակա առարկա (դեմք) և իր մի հատկանիշը (բայիմաստ), միաժամանակ
և ստորոգում, այսինքն՝ խոսողի կողմից գիտակցաբար մի որոշ եղանակով և
մի որոշ ժամանակով բայիմաստի իբրև ստորոգյալ վերագրվել բայի դեմքի
ցույց տված առարկային իբրև ենթակայի:

2. ԳՈՅԱԿԱՆ, որ ցույց է տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև
այնպիսին մտածված առարկա, և լինում է՝

ա) ԱճՈՒՆ, որ հաստատուն նշանակություն ունի, և

բ) Դեռանուն, որ փոփոխական նշանակություն ունի:

3. ԱՅԿԱԿԱՆ, որ նշանակում է ինքնակա առարկայից անբաժան նրա
հատկանիշը:

4. ՄԱԿԱՐԱՅ, որ ցույց է տալիս հատկանիշ կամ պարագա:

Նյութական նշանակություն արտահայտող բառերն այս բաժանումով
ունեն լուրս գլխավոր տեսակ՝ բայ, գոյական, ածական ու մակբայ: Վերջին
երկուսը, սակայն, իսկապես մի ընդհանուր տեսակ են կազմում, զի մակ-
բայներն իրենց նշանակությամբ մեր լեզվի մեջ մեծ մասամբ նույնն են,
ինչ որ ածականները, մի քանիսն ևս՝ ինչ որ գոյականները (սԱշխարհա-
բարի> շար<արյուտություն>, եր. 7, § 10, սՀ<այոց> լ<հզվի> տ<հսու-
թյուն>, եր. 130, § 61), բայց սովորաբար իբրև առանձին տեսակի բառեր
են դրվում: Մատերիալիստական տեսության համեմատ կան, ուրեմն, միայն

գործանան ու ածականն և դրանց՝ համադրութիւնը՝ բայց։—Միննույն շրջանում, արդար քառասունները կգտնենք և Պեղկովսկու հիշման աշխատութիւն մեջ. սեռական անուն, ածական անուն, բայ և մակբայ հիմնական մասն-բանիներն են և խոսքի հիմնական քերականական կատեգորիաները» (եր. 26 հտն., 92)։

Գոյականների երկու ենթատեսակներն ևս բովանդակում են առնելով՝ ունենում ենք ութ թուականներ։

1. Բայ, 2. անուն, 3. դերանուն, 4. ածական, 5. մակբայ, 6. կապ, 7. քաղկապ, 8. միջարկութիւն։ Այսպէս դնում են ֆրանսիացիները։ Այսպէս պետք է դնել և նա դրել են հայերենում, շմոռանալով հարկավ, որ անունն ու դերանունը գոյականի ենթատեսակներն են, իսկ մակբայն իր տրամաշարժ գաղափարով ցեղակից է ածականին։ Մնացածը դրանց ենթականերն են, այսպէս՝ անունները լինում են՝ հասարակ անուն, հատուկ անուն, բայանուն կամ անորոշ դերբայ։ Գերանունները լինում են՝ անձնական, ցուցական և այլն։ Ածականները լինում են՝ որական և հարաբերական կամ հատկացական իրենց ենթատեսակներով կամ թե ենթարածանումների լուծ թվարկութեամբ՝ որականներ, որոնց մեջ և բայածականը (ածական դերբայ), թվական (քանական, դասական, անորոշ), ցուցական, ցուցական-որական, ցուցական-քանական, հարցական, հոգեբայ։

Խոսքի կամ նախադասութիւն միջուկը կամ էական մասն է բայը, որի դմբը ենթակա է (դմբ-ենթակա), իսկ բայիմաստը՝ ստորոգյալ (բայիմաստ-ստորոգյալ)։ Մնացած բառերը՝ գոյական, ածական, մակբայ, որ ավելանում են բայի վրա, պարզում, որոշում, լրացնում են բայի նշանակած գաղափարները իբրեւ բայի անմիջական լրացումներ և լինում են՝

1. Ներքակա (բառ-ենթակա), որ պարզում է բայի դմբը, դմբի հետ ներուճական հարաբերութեամբ։

2. Ստորգյալ (բառ-ստորոգյալ), որ պարզում է էական եմ (լինեմ) բայերի բայիմաստը, ենթակայի (կամ դմբի) հետ ներուճական հարաբերութեամբ (ծառը բոլս է), իսկ ծառը ծաղկել է, ծաղկում է, ծառը ծաղկեց—ծաղկում է, ծաղկեց—բայ-ստորոգյալ։

3. Ջանաչան խնդիրներ և պարագայական լրացումներ, որոնք պարզում են բայիմաստը (կամ ստորոգյալը), վերջինիս հետ կախման հարաբերութեամբ։ Բացի սրանից կան նաև ոչ-անմիջական կամ կողմնակի լրացումները (լրացման լրացումները)։

Այսպէս ուրեմն, ինչպէս տրամաբանական և Ժնշպեան հոգեբանական դատողութեան մեջ երկու անգամ կա, նույնպէս և խոսքը կամ նախադասութիւնը քերականորեն բաժանվում է երկու մասի. մեկ կողմում՝ բայի ղեկներով և լրացումով և լրացման լրացումներով, մյուս կողմում՝ բայիմաստ-ստորոգյալը իր լրացումներով և լրացման լրացումներով» (սեւ-աւոր) <եզվի> տ<հարթիւն>, եր. 364 հտն.)։

ԺԳ

Ս Ո Ւ Ն Զ Մ Ն Ի Ր

50. «Բայի ճիւղի և լեռնի մեջ մանող միջոցառն» և «աւմատի մեջ մանող միջոցառն»։—Մարդիկ կան, որ ի բնի սոփիստներով են մտածում և իրենց շին զգուշ աչք պահասութիւնը։ Մարդիկ էլ կան, որ սիրում են այդ-

պէս մտածել, նմ է նախ և ստիճիւմը:—Այս բառով կոչում են կեղծ ապացոյցը, որ առաջին հայացքից թվում է, թէ ճիշտ է, բայց այդպէս կերպով միայն բանին անձանոթ մարդկանց: Այդպիսի սոփոստական կեղծ ապացոյցն առաջանում է նրանից, որ այդպէս մտածողները կամ լռում են մի փաստի մասին, կամ մեջ են բերում կեղծ փաստեր, կամ հիմնվում են լռելիայն ընդունել տրված մի կեղծ փաստի վրա:

Դասախոս Սեակի մեզ ծանոթ հոգովածի մեջ բանականի այդպիսի բաներ տեսանք: Որպեսզի նա շնորհանա, թե ես իր հոգովածից որեւէ ինձ վերաբերող բան անուշադրութեան հմ մատենել, առենք և հետևյալը նա դրում է.

(1) Եկերպի (=դրելու բանական կերպի: Մ. Ա.) հետ կապված են բայական մի քանի ածանցներ (վ, ացն, եցն, ցն, ոտ և այլն), որոնք չգիտես ինչ հիման վրա միեւն ալ մի վիշտեաց են կոչվում: (2) Այս տերմինը լեզվաբանութեան և ընդհանուր քերականութեան մեջ (ամբողջ աշխարհում) գործածվում է այնպիսի ածանցների համար, որոնք մտնում են արմատի մեջ: (3) Հայոց լեզուն, ինչպէս հայտնի է, այդպիսի (=արմատի մեջ մտնող: Մ. Ա.) ածանց չունի: (4) Բայց լեզուի գրան (=լեզուի որ հայոց լեզուն չունի արմատի մեջ մտնող ածանց: Մ. Ա.) երեք տասնյակ տարի մեր դպրոցական քերականութեան իբրեւ գիտական ճշմարտութիւն է ավանդել այս ոչ գիտական բացատրութեանը (=այն որ հայոց լեզուն ունի արմատի մեջ մտնող ածանց: Մ. Ա.):—Փակագծերի մեջ դրված թվանշաններն իմն են:

Նայա, թե ինչ է արմատի մեջ մտնող ածանցը: Դա այնպիսի մի բան է, որինակ, քերթա բարբառների մեջ է քերթա, քղասելա բայի համար կա քղարտելա, քկոթա բառի համար՝ քկանթա. այս քթիթա, քղասա, քկոթա արմատների մեջ դառնում ենք մտած սեւ, քրա հնչյունները: Եւ լեւ մտած, թե այս հնչյուններն իրոք արմատի մեջ մտնող ածանցներ են, գուցե և անգրեւապէս եղել է քթիթա, քղարտա, քկանթա և հետո այդ արմատների միջի հնչյունները դուրս են ընկել: Եւ այդ չգիտեմ. եւ առհասարակ արմատներով լեւ դառնալը: Այդ լեւ անտեղյակներին պարզելու համար այն հմ միայն ասում, որ արմատի մեջ մտնող ածանցները դրանց նման բաներ են:

Հիմա հարց: Ի՞նչ է քաղ. Սեակի եզրակացութիւնը (վերին 4-րդ կետը), թե իբր Արեղյանի «Աշխարհաբարի» քերականութեան մեջ (քերեք տասնյակ տարինա դրան է ակնարկում) կա այդպիսի ժող գիտական բացատրութիւն, այն, որ հայոց լեզուն չունի արմատի մեջ մտնող ածանց, բայց իբր Արեղյանի քերականութեան իբրեւ գիտական ճշմարտութիւն է ավանդելա այդ:

Դա մի կեղծիք է, և կեղծիքը կատարված է շատ հասարակ և միամիտ ստիճիւմով:

Քաղ. Սեակը լռում է այն մասին, ինչ որ գրված է վ, ացն, եցն, ցն, ոտ և այլն ածանցների համար իմ «Աշխարհաբարի» քերականութեան մեջ: Այստեղ (եր. 91—95) «Անորոշ դերբայի կազմութիւն» վերնագրի տակ կա հետևյալը. «Անորոշ դերբայի կազմութեան համար պետք է նկատել մեկ-նալ՝ հիմք, վերջավորութիւն, լծող և միջածանց: Եւ իմքը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ, ինչի պարզ, բարդ, թե ածանցական: Հիմքի մեջ է բայի կամ դերբայի հիմնական իմաստը: Որինակ՝ կարգալ, խաղալ, կառավարել, քաղաքաւորել բայերի հիմքն են՝ կարգ (բաւարմատ), խաղ (պարզ բառ), կառավար (բարդ բառ) և քաղաքաւոր (ածանցական բառ)...

վորութիւնից (— վերջի և բաժանմանը՝ Մ. Ա.) առաջ ընկած ձայնավորներն են ա, ե, ի (գրեւ, կարդալ)։ «ՄԻՋԱՅԱՆՑԸ ՀԻՄՔԻ ԵՎ ԼԵՈՐԴԻ ՄԵՋ ՄՏԱՅ ԱՅՄԱՆՑՆ Է, ԻՆչպէս՝ տեսնել, մտեսնալ դերասանների մեջ ե, ն, որ մտնում են տես, մտ ճիմքների և ե, ա լծորդների մեջ։ Ես չեմ ուզում շարունակութիւնից արտագրել, բերեմ միայն բայերը՝ փախձել, ցանկԱնալ, կոտրԱՏել, մորթԱՏել, մտՑնել, խաղՑնել, մոտեՑնել, կառավարվել, լուսավորվել։

Ո՞րտեղ են մտած այդ ն, ն, Զ, Ան, ԱՏ, ՈՏ, Յն, ԱՑն, ԵՑն, Վ անանցները, Արդոք այդ բայերի հիմքերի՝ (տես, մտ, փախ, ցանկ, կոտր, մորթ, մոտ, խաղ, կառավար, լուսավոր) և լծորդների՝ (ե ձայնավորի) մեջ, թե՛ տես, մտ, փախ, ցանկ, կոտր, մորթ, մոտ, խաղ արմատների մեջ, ինչպէս եթէ տեսնել, փախձել, լինել, այլ տեսնել, փախձիւնել։

1) Կարո՞ղ է հերքել քաղ. Սեակը այն օրեկտիվ իրականութիւնը, որ մեր մի մեծ շարք բայերի նիւմի և լծորդի մեջ մտնում են անանցներ, լինին այդ հիմքերը քաղք թե՛ անանցական բառեր, թե՛ մարդու բայական հիմք (ЧИС-ТАЯ ГЛАГОЛЬНАЯ ОСНОВА), ինչպէս են՝ տես, առ, փախ և նմանները (տեսնել, առնել, փախչել)։

2) Կարո՞ղ է հերքել քաղ. Սեակն այն օրեկտիվ իրականութիւնը, որ Արեղյանի քերականութիւնի մեջ «միջածանց կոչված և բացատրված են հենց այդ անանցները, որ մտնում են բայերի հիմքի և լծորդի մեջ։

Կարծում եմ, որ նա, առանց սոփիզմի, լի կարող հերքել այդ երկու իրականութիւնները, որ կան, գոյութիւն ունեն։

Մի անգամ որ կան հիմքի և լծորդի միջի անանցները և Մ. Արեղյանի քերականութիւնի մեջ հենց դրանք են բացատրված, դա օրեկտիվ իրականութիւն բացատրութիւն է, հետևաբար և գիտական ճշմարտութիւն է ամենոված նրա քերականութիւնի մեջ։

Երեք քաղ. Սեակը լզիտե, որ գիտական ճշմարտութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ օրեկտիվ իրականութիւն հաստատւում (constater) ու բացատրութիւնը Բայց գտնւել և նա այդ գիտե, և գիտնալով հանգեւոր լռել է վերին երկու օրեկտիվ իրականութիւնների մասին։ Եվ հասկանալի է. թե՛ ինչի համար էր պետք նրա լռելը։

Եթե նա սկզբում դներ, որ Արեղյանի «Այն<արհաբարի> քեր<ականութիւն>» մեջ խոսված է անորոշ դերբայի նիւմի և լծորդի մեջ մտնող անանցների մասին, և «միջածանց» բառով այդ անանցներն են կոչվում, այդ դեպքում նա լէր կարող գրել, թե՛ իբր Արեղյանի քերականութիւնի մեջ կա մի եռլ գիտական բացատրութիւն, այն է՝ իբր Արեղյանը խոսում է ամբողջ մեջ մտնող անանցի մասին, մինչդեռ «հայոց լեզուն այդպիսի անանց չունի»։ Զէ՛ որ այդ ժամանակ ամեն ընթերցող էլ իսկույն կհասկանաւոր, որ նա, քաղ. Սեակը ճշմարտութիւնը լի դրում, քանի որ անորոշ դերբայի հիմքի և լծորդի մեջ, միջև մտնող անանցը և արմատի մեջ մտնող անանցը, այս երկուսը միևնույն բանը լին։

Այսպէս դասախոս Սեակի կեղծիքը բացված է դարձաւ, բայց ես դեռ չեմ վերջացրել։

Այդ «միջածանցները», ինչպէս երևում է, շատ դուր են եկել և քերական

* Ն. Մանն այդ մասերիցից մի քանիսը (տես, ե, ալ, աշ, չ) համարում է հին գերբայական անականների վերապարտութիւններ (древнепричастные окончания). ասեմ միտնել եւ մտնել (Գր. Գր. Զե՛ն Н. Марр, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, стр. 182։

Ա. Ղարիբջանին: Երբ Արթուրյանի մոտ եղած ժողովում ես նրա քերականական անսպառ տգիտությունն մասին էի խոսում, նա բացականչեց՝ «հապա մեր միջ-ածանցները: Ինչպես ինձ հաղորդեցին, այս 1936 թ. հունվար ամսին, եթե չեմ սխալվում, նա ուսուցիչներին քերականորեն զարգացնելու համար մի գեկուցում է արել և ինձ էլ պատկզ է արել հիշատակելու: Նա իբր իմ տգի-տությունը ցույց տալու համար՝ ասել է, թե իբր Արեղյանն իր քերականու-թյան մեջ դրել է արվածի մեջ մտնող «միջածանցներ», որ հայոց լեզուն շուրջ, այլ արարածն է ունի մի՞շտ է այս: Եթե ճիշտ է—և առաջին դեպքն անպայ-ման ճիշտ է,—այն ժամանակ դասախոս Ա. Ղարիբջանը կարող է կարգալ քաղ. Սեակի այդպիսի կեղծիքի բացումը, որ և իրեն, Ղարիբջանին էլ է վե-րաբերում:

Բայց շարունակենք: Ես խոստացել եմ դասախոս Սեակին լիովին բա-վարարություն տալ:

Նա հարցնում է. «Բայական մի քանի ածանցներ (վ, աքն, եքն, և այլն)... լզդտես ինչ հիման վրա մինչև այժմ միջածանց են կոչում»:—Դե, նա կարող է շոշափելով իմանալ, որ իմ «Աշխատանքար» քերականության թուղթը շատ լավն է, հենց չեն մշտվում այդ գրքերը: Եվ որովհետև «մինչև այժմ» ասում են այդ գրքերը, դրանց մեջ «մինչև այժմ» էլ այդպես «միջածանց» պիտի կոչվեն այդ մասնիկները և, երևի, դեռ շատ երկար պիտի այդպես կոչ-վեն: Կարծեմ, հասկանալի եղավ: Իսկ թե «մինչև հիման վրա» այդ մասնիկները «միջածանց» են կոչել և ոչ այլապես,—այդ կարծում եմ ինքը՝ դասախոս Սեակը պիտի հասկանալ: Բայց որովհետև չի հասկացել, ասեմ, Հիմը նախ՝ այն է եղել, որ հարկավոր եմ համարել մի տերմին այդ ածանցների համար և ապա հարմար եմ գտել հենց այդ միջածանց տերմինը, որովհետև այդ մասնիկներն անորոշ դերային հիմքի և լծորդի միջի ունենցե՛ր են, ընկնում են այդ երկուսի մեջ, միջև: Կարծեմ պարզ է:

Ինչո՞ւ այդ ածանցական մասնիկների համար առանձին տերմին է հարկա-վոր եղել:—Գուցե այս էլ կենտրոնացրի Գ. Սեակին: Ասեմ: Մի ժամանակ մեր գյուղացիներում միմիայն գրաբար էին օգտորենում: Աշակերտական շարա-դրությունները գրաբար էին գրում: Հարկավոր էր, որ աշակերտները լավ իմանային հոլովում և խոնարհում: Աշակերտը պետք է իմանար, որ, օրինակ, «հաց» բառի գործիականն է «հացի», բացառականն «ի հաց», «թուղթ» բառին՝ «թղթի», «ի թղթի» և նմանները: Իսկպես նա պետք է սերտե՛ր և առանձին բայերի խոնարհման ձևերը: Դրա համար ուսուցիչները շարունակ հոլովել և խոնարհել էին տալիս: Արդ, մեր բայերի որոշ ժամանակներն ունին հիմքի և լծորդի մեջ մտնող ածանցները (տեսանեմ, տեսանէի և այլն), փախլիմ, փախլէի. գահանամ, գահանայի և այլն), ուրիշ ժամանակներ չեն պահում այդ ածանցները. դրանց կամ դուրս են ընկնում կամ փոխվում են (տեսի, տեսից. փախեալ, փախիլ. գահացալ և այլն): Հասկանալի է, որ խո-նարհում օգտորեններն ուսուցիչներն աշակերտներին շարունակ դիտել էին տալիս այդ ածանցների այդ հատկությունը և փոխանակ ասելու «հիմքի և լծորդի միջի ածանցներ» կարճ կերպով գործածում էին «միջի ածանց», «միջածանց տերմինը» Հարցնում էին, թե ո՞ր բայերի «միջածանցները» դուրս են ընկնում, որ «միջածանցները» փոխվում են և այլն: Եթե աշակերտը, օրինակ, «սերմանեմ», «դարմանեմ» բայերի անցյալ կատարյալ ժամանակը կազմում էր «սերմի», «դարմի». (ինչպես՝ տեսանեմ—տեսի), ուսուցիչը նրան բացատրում էր, թե այդ բայերի մեջ «սերմ» մասը «միջածանց» չէ և այլն:

Ահա թե ի՞նչ գործնական նպատակի է ծառայել այդ «միջաժանց» տերմինը, Թե՛ հորը է ծագել դա, ևս այդ լցիտեմ։ Մի հիսուն տարի առաջ արդեն, որքան հիշում եմ, դա կար արդեն, և ևս դրա նմանությունը կազմել եմ՝ «նախաժանց» և «վերջաժանց» տերմինները, որոնց նշանակությամբ առաջ գործածում էին «նախահար» և «վերջահար» բառերը։ Այս վերջիններն այնուհետև գործածել եմ «էնկլիտիկ» և «պրոկլիտիկ» տերմինների իմաստով։ Բայց շատ հետո գնացի, Գառնանք քաղ. Սևակի Հոգվածին։

Կյանքի ուշագիտի լինել նրա հոգվածից վերելում բերված (2) կետին, որի մեջ նա հայտնում է, թե մեր «միջաժանց» տերմինը լեզվաբանության և ընդհանուր քերականության մեջ (ամբողջ աշխարհում) գործածվում է այնպիսի ածանցների համար, որոնք մտնում են առկառի մեջ։—Այո՞ տարբոջ աշխարհում։ Եստ որպես, եմ, որ գոնե հայերեն «միջաժանց» բառն այդպես համաշխարհային ընդլի՞ է ստացել, թեպետ իմաստը փոխելով։ Ավելի ևս ուրախ եմ, որ Գ. Սևակն այդպիսի ընդարձակ ժանտիություն ունի մեր «միջաժանց» տերմինի մասին։ Ըս այդպիսի բաներով պարծնելու չեմ կարող, բայց կարող եմ մի բան ասել, որը նա, հրեի, լցիտե։

Քաղ. Սևակի պրոֆեսոր Գ. Ղափանցյանը մոտավորապես մի քանակահիշգ տարի առաջ, —ինչպես ինքն ինձ այդ մասին հայտնեց այն ժամանակ,—կարողացել էր իմ «Աշխարհ»-ը քերականությունը և շատ հավանել էր իմ քերականության մեջ հենց այդ «միջաժանց» բառը, և գտել էր, որ դա շատ հարմար է, որքան հիշում եմ, infixe տերմինի համար, Թերևս նա մեր հին «միջաժանց» տերմինը հենց իր հավանած նշանակությամբ էլ գործ է ածել։ Այդ դեպքում, հրեի այդտեղից էլ ծագում է նրա ասպիրանտի «լեզվաբանության և ընդհանուր քերականության մեջ (ամբողջ աշխարհում) գործածվում են»-ն։ Բայց վերապահությամբ եմ ասում այս Գուցե ես սխալվում եմ։ Գուցե պրոֆ. Ղափանցյանը 25 տարվա ընթացքում կարողացել է infixe տերմինի համար հայերեն մի ուրիշ բառ գտնել, որինսկի՞ «միջադիր», ինչպես կա լուսինյանի՞ ֆրանս. -հայ բառարանում այդ տերմինի դիմաց, կամ նոր բառ կազմել։—«որինսկի՞» «տերմինը», կամ «տերմադիր», կամ «տերմաժանց», և իր տեղում հանդիստ թողնել մեր հին «միջաժանց» տերմինը, որ շատ էլ հարմար չէ infixe-ի համար։ Հարմար չէ, որովհետև մինչև «մեջ» բառը ցույց է տալիս նաև «միջև», այսինքն երկու բանի միջև լինելը և համապատասխան է նաև между, inter, zwischen բառերին,—«տերմ» բառը ցույց է տալիս միայն մեկ բանի ներսում լինելը։ Այսպես՝ «միջարկություն»-междометие, interjection. Բայց ներարկություն—injection. Եուրեպես՝ «միջկուսակցական», ներկուսակցական և շատ նմանները։ Այսպես և «միջաժանց» և «տերմաժանց», այսինքն infixe բառի համար ես կկազմեի՞ ավելի շուտ «տերմ» բառով, որովհետև այդ ածանցումը մեկ արմատի ներսում է կատարվում և ոչ երկու բանի միջև։ Բայց ես զարմալ հետո գնացի։

Ինչի՞ է քաղ. Սևակը մեջ բերել «միջաժանց» տերմինի գործածությունը «լեզվաբանության և ընդհանուր քերականության մեջ (ամբողջ աշխարհում) այնպիսի ածանցների համար, որոնք մտնում են արմատի մեջ»։—Նա դրանով մի ընդհանրացում է արել, որպեսզի ունենա բանավարություն համար անհրաժեշտ ընդհանուր դատողությունը, կամ, ինչպես ասում են, մեծ հզոր, առաջին նախադրյալը։ Նա գիտակցաբար կամ անգիտակցաբար կազմել է հետևյալ սխիզոֆրենի։

1. Հետ մտրողչ աշխարհի լեզվաբանների և այլն բժիշկածանցն է ար-
մատի մեջ մտնող ածանց (Սևակի (2) կետը)։

2. Արեղյանն իր քերականության մեջ ընդունում է «միջածանց»։

3. Ապա ուրիմն Արեղյանն իր քերականության մեջ ընդունում է արմատի
մեջ մտնող ածանց։

Հետո շարունակում է մոտեցել քաղ. Սևակը.

4. Բայց որովհետև, ինչպես հայտնի է, հայոց լեզուն լուծի արմատի մեջ
մտնող ածանց (նրա (3) կետը)։

5. Հետևաբար Արեղյանն իր քերականության մեջ չի ավանդել գիտա-
կան ճշմարտություն (նրա (4) կետը)։

Բայց այս բանավարությունը մի հասարակ սոփիզմ է, այն էլ ֆորմա-
լիստական սոփիզմ, որ հիմնված է բժիշկածանց քառի լուկ հնչյունների, լուկ
ձևի վրա, առանց նկատի ունենալու նշանակությունը։

Արդեն տեսել ենք, որ ձևի և բովանդակության հակադիր միասնության
ֆորմուլը քառի նկատմամբ՝ է հետևյալը.

Հնչյուններ + նշանակություն = քառ։ Սրա մեջ հնչյունները և ձևը, իսկ
նշանակությունը՝ բովանդակությունը։ Արդ, ինչպես տեսանք վերևում, բժիշ-
ածանց քառի «մ-ի-շ-ա-ծ-ա-ն-ց» հնչյունների հետ, ըստ քաղ. Սևակի,
ամբողջ աշխարհի լեզվաբանությունն ու ընդհանուր քերականությունը կա-
պում են արմատի մեջ մտնող ածանցին նշանակություն, իսկ Արեղյանի քե-
րականության մեջ նույն հնչյունների հետ կապված է ամբողջ դեբբայի հիմ-
քի և լծորդի մեջ մտնող ածանցին նշանակություն։ Երկու բոլորովին տարբեր
նշանակություն։

Հիմա, բանավարության անսխալ լինելու համար՝ պահանջվում է, որ ա-
ռաջին նախադրյալի ենթական և երկրորդի ստորոգյալը նույնը լինեն, որ-
պեսզի հնարավոր լինի հզրականության մեջ՝ երկրորդ նախադրյալի ենթա-
կալին վերագրել առաջին նախադրյալի ստորոգյալը։ Այս դիպն առն մարդ,
որ տրամաբանություն է սովորել, և կհասկանա ամեն առողջ դատող մարդ,
կյապես է օրինակ։

1) Աձեն մարդ մահկանացու է.

2) Տիգրանը մարդ է.

3) Ապա ուրիմն՝ Տիգրանը մահկանացու է։

Այստեղ ամարդ քառերը երկու նախադրյալների մեջ ոչ միայն հնչյուն-
ներով, այլև նշանակությամբ նույնն են։ Բայց, ինչպես տեսանք, Սևակյան
բանավարության երկու նախադրյալների մեջ բժիշածանց քառերը լուկ հըն-
չյուններով, լուկ ձևով են նույնը, բովանդակությամբ բոլորովին տարբեր են։
Դրա համար և նրա բանավարությունը սոփիզմ է, այն էլ ֆորմալիստական
սոփիզմ, որ կատարվել է բժիշկածանց քառերի հնչյունների, լուկ ձևի վրա։
Դրա համար և նրա վերջին եզրակացությունը մի հասարակ կեղծիք է, որ
առանց դրան էլ վերևում ցույց էի ավելի։

Հասկացա՞վ այս արդյոք դասախոս Սևակը, նրա հետ և քերական Ա. Ղա-
րիբյանը։

Բայց ես շարունակեմ։

51. Սոփիզմների շարունակ։—Հետաքրքիր են քաղ. Սևակի և հետևյալ սո-
փեստական դատողությունները։

Կեղծ դրույթներ.

2) Մեր ֆորմալիստները (որոնց մեջ դեռ մեծ է ինձ, Մ. Ա.) այնքան առաջ են զնացել իրենց ձևամտության մեջ, որ նույնիսկ հեթանոսական հալածում են բայի (ստորոգյալի) լրացումը: Ընդգծումները հոգովածագրի են, Մի քիչ հետո քաղ. Սևակն ուրիշ առիթով հարցնում է. «Ենչու՞ նա (Մ. Արեղյանը) Մ. Ա.» իրավունք ունի ստորոգյալը բայ կոչելու:

Փաղ. Սևակն այսպես գրելով՝ հենց սկզբից բերում է նրկու կնդդ գրություն:

Առաջին կնդդ դրույթն այն է, որ նա ստորոգյալը և բայը նույնացնում է միմյանց հետ: Որ նա բարեհաճել է բայա բառի հետևից փակագծերի մեջ դնել ստորոգյալը բառը, այդ նշանակում է, թե նա բայա ասելով ստորոգյալն է հասկանում, — այս թե իբր Արեղյանն էլ երբ բայ է ասում, ստորոգյալ պետք է հասկանալ, որովհետև իբր սեռ ստորոգյալը բայ է կոչում: Ուրիշ տեղ էլ գրում է. «Ենթակա՞ն ստորոգյալի (ըստ նրանց տերմինի՝ բայի) լրացում համարելով...»: Ներանց մեջ է և Արեղյանը:

Սրա կնդդ լինելը պարզ է: Բացեք իմ «Աշխարհ» քերականությանը» և, և, 137 և այնտեղ կգտնեք, որ ռուզվանյան խնդիրներից մեկը լինում է «Ստորոգյալ, որ գրվելով եմ (լինիմ) բայի հետ, ցույց է տալիս ենթակայի ինչ, ինչ բան լինելը: Օրինակ՝ Ջալալը քոչում է: Ստորոգյալը կարող է լինել և ածական: Օրինակ՝ Տիգրանը ջաղատե է: Նույնը և «Աշխարհ» շար՝ «Հայտնության» մեջ. «Ստորոգյալն իբրև խոսքի մաս (— իբրև նախադասության մաս, անդամ, Մ. Ա.)՝ եմ, լինիմ բայի այն գոյական կամ ածական լրացումներն են, որոնք պարզում են այդ բայի ընդհանուր անորոշ իմաստը և ցույց են տալիս, թե ինչ հատկանիշ է վերագրվում ենթակային» («Աշխարհ» շար՝ «Հայտնության» և, և, 12): Ահա թե որն է ըստ Արեղյանի քերականական ստորոգյալը, որ և ըստ տրամաբանական նախադասության սքեմայի՝ ստորոգյալ է, իսկ մնացած բայերի նկատմամբ, ինչպես տեսել ենք և կտեսնենք, ոչ թե բայը, այլ բայիմաստը է կատարում ստորոգյալի դերը: Ուրեմն ըստ Արեղյանի ստորոգյալն և բայն նույնը չեն:

Երկրորդ կնդդ դրույթն այն է, որ թե իբր Արեղյանը «ենթական համարում է բայի (ստորոգյալի) լրացումը, կամ ստորոգյալի (բայի) լրացումը, այսինքն՝ ենթական է բայի՝ ստորոգյալի լրացումը: — Արեղյանը, ինչպես տեսել ենք և կտեսնենք, ենթական համարում է բայի դեմքի լրացումը:

Փաղ. Սևակը գրում է դարձյալ:

2) «Ենթական բայի լրացում համարելը մեր ֆորմալիզմի անհերքելի ուսնագրություններից մեկն է և լիարժեք նրանից, որ ստորոգյալի մեջ (ըստ ֆորմալիստների՝ բայի մեջ) ենթակայի դեմքն արտահայտված է, հետևաբար ենթական մի ասվելագրությունն է: Ընդգծումներն իմն են:

Նախ՝ «անհերքելի ուսնագրությունները» կաշխիստ իրեն քաղ. Սևակին: Նրանից ներողություն խնդրող չկա, որ նա ներքի կամ «անհերքելի» համարի: Այս՝ այդ հոգովածագիրը գիտե, որ «ուսնագրություններ» մեկի դեմ կլինին, եթե նա այդ լի պարզել այստեղ, մի քիչ հետո շատ պարզ գրել է. «Ենթական ֆորմալիստները... Մերոնք ոչ միայն չեն ցանկանում վերականգնվել, կոնկրետ կերպով եզրնել կուսակցությանն ու կառավարությանն առնչվելու գործում, այլև խանգարում են ուրիշներին այդ բանն անելու...»: Հասկացա՞ք. ընթերցող, թե ինչ են իզել «ուսնագրությունները», եթե չհասկացաք, քաղ. Սևակն

ինքը հասկացել է, անշուշտ, թե ինչ է գրում, նվ՛ այդ գրել է նա, որովհետև համարձակվել են քննադատել իր թնարկյալ Ա. Ղարիբյանի այն անարժեք քերականությունը: Բայց տեսնենք, թե է՞լ ինչ է ասում նա վերևում բերված հատվածի մեջ:

Առաջին և երկրորդ կեղծ դրույթներն է դարձյալ գնում նա.

ա) նա երկրորդ անգամ ստորոգյալը՝ *նույնացնում է բային հետ, գրելով՝ ստորոգյալի մեջ*, ըստ ֆորմալիստների՝ բայի մեջն. ուրեմն դարձյալ իբր Արեղյանն էլ էր բայ է ասում, ստորոգյալ պետք է հասկանալ, բ) նա ընթերցողներին դարձյալ ձգում է մոլորության մեջ, թե իբր Արեղյանը ենթական համարել է բայի—ստորոգյալի լրացում:

Ապա նա բերում է միաժամանակ և ուրիշ կնդծ դրույթներ էլ:

Ներքոյ կեղծ դրույթն այն է, թե իբր ըստ Արեղյանի ենթական մի ազնվագրությունն է: Դրա կնդծ լինելը բացատրվեց վերևում:

Զորքոյ կեղծ դրույթն այն է, որ քաղ. Սևակը կարծել է տալիս, թե նախորդ 3-րդ կնդծ դրույթն Արեղյանն իբր նրանից է հետևել, թե ստորոգյալի մեջ... ենթակայի դիմեմ առտաճալոված էս:—Արեղյանն այդպիսի անհեթեթություն չի ասել և չէր կարող ասել: Այլ Արեղյանն ասել է և ասում է, թե բայի դիմեմ առտաճալովում է ենթական:

Ապա քաղ. Սևակն իմ լեզվս <արհարարի> քեր <ականություն> իջն բերում է ցիտատներ, որոնց մասին քիչ հետև, և հիմնվելով իր կնդծ դրույթներին վրա, թե բայ—ստորոգյալ, ենթական է բայի—ստորոգյալի լրացում, նա հզորակացնում է:

3) Անյայիսով գործող անձը, կատարողը, գործողության տերը (= ենթական Մ. Ա.), գործիքի և գործողության առարկայի հետ հավասար համարվում է բայի, այսինքն իր գործողության լրացումն: Նվ՛ որովհետև ըստ Սևակի, ինչպիս տեսանք, բայն է ստորոգյալ, ապա ուրեմն՝ ենթական է ստորոգյալի լրացում, կամ զգործող անձն իր գործողության լրացումն:

Վերածենք այս բանավարությունը տրամաբանական ձևի.

1. Բայն է ստորոգյալ, գործողություն.

2. Ըստ Արեղյանի՝ ենթական, գործող անձն է բայի լրացում.

3. Ապա ուրեմն ըստ Արեղյանի՝ ենթական, գործող անձն է ստորոգյալի, գործողության լրացում:

Ճի՞շտ է այս բանավարության հզրակացությունը:—Որպեսզի այդ ճիշտ լիներ, պետք է ճիշտ լինեին նախադրյալները, որոնք երկուսն էլ կնդծ դրույթներ են, Տեսնենք:

ՅԻՏԱՏՆԵՐԸ:

Քաղ. Սևակն, իհարկե, միամիտ չէ: Նա գիտե՞ որ ընթերցողներն ապացույց կուզեն: «Զե՞ք հավատում, վերցրե՞ք պրոֆ. Մ. Արեղյանի լեզվաբարձարի քերականությունը... և խնդրե՛ք կհամոզվե՞ք»,—գրում է նա: Նվ՛ Արեղյանի «տեսնողությունները», շղթանկանալը վերակառուցվել... օգնել կուսակցությանը» ցույց տալու համար՝ նա ցիտատներ է բերում այդ գրքից, որ տպված է այն ժամանակ, երբ բոլշևիզմը, հիմն չեմ սխալվում, տակավին երեք տարեկան էր: Ըս աշտտեղ կղենեմ նրա բերած բոլոր ցիտատները, միայն ոչ այն կարգով, որ նա է բերել, այլ իմ այդ գրքի կարգով:

Առաջին ցիտատ. «Ամենայն բայ մենակ կազմում է մի խոսք: Բայ կուլվում են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում (նույն տեղը, էջ 43)»:

Ահա նրա մեկ ցիտատը. Ապացուցվե՞ց դրանով Արեղյանի «Ֆորմալիզմը», «Համաժողովրդուն» և «Խոսքի մեջ» Ապացուցվեցի՞ն դրանով թաղ. Սեանի այն կեղծ դրույթներն ու հղրակացությունը, թե իբր բայն է ստորոգյալ, կամ Արեղյանը ստորոգյալը բայ է կոչում, թե իբր Արեղյանը ենթակա՞ն համարում է բայի, ուրեմն և իբր ստորոգյալի լրացում, կամ գործող անձը գործողության լրացում, «Համապատասխան և համոզվեցե՞ք, ընթերցողներ, Ահա թե ինչ կնշանակե՞» սոփիզմով մտածել:

Հետաքրքիր է և այն հղանքը, ինչպես ասում են այժմ, «պրիմա», որով նա բերել է այդ ցիտատը, նա սրա համար նշել է «Աշխատանք» <արհարարի> քերականության», 43 էջը. բայց այդտեղից առել է ցիտատի երկրորդ նախադասությունը, այն էլ առանց շարունակության, որ ես հետև կբերեմ. իսկ առաջինը (ամենայն բայ մենակ...) առել է նույն գրքի 41-րդ էջի սկզբից, և այդ նախադասությունները հանդիստ կերպով կցել է միմյանց հետ և բերել իբրև մեկ ցիտատ: Նա դանդ է արել այդ երկու նախադասությունների միջև դանդա՞ծ ամբողջ մեծ հատվածը, որի մեջ բացատրված է, թե ինչու ամենայն բայ մենակ կազմում է մի խոսք և թե որոնք են բայի ցույց տված «պրիմա» գաղափարները, որ են՝ բայի մաստ, դեմք և թիվ:

Երկրորդ ցիտատ: Այստեղ էլ նա իր ուղած ձևով կրճատումներ է արել առանց որևէ ցուցումի: Ես ավելացնում եմ այդ կրճատումները, ընդգծելով այդ, և բերելով ամբողջը. կրկնակի ընդգծելով այն կարևոր բառերը, որոնք մասամբ այդպես ընդգծված են այդ քերականության մեջ: Դրանք են՝ ենթական իբրև բայի դեմքի լրացում:

«Բայի լրացումները՝ նայելով թե բայի ցույց տված որ գաղափարն են պարզում՝ լինում են ենթակա և խոհիր»:

1. ԵՆԹԱԿԱՆ ասվում են այն լրացումները, որոնք դրվելով բայի հետ՝ պարզում, որոշում են ԲԱՑԻ ԴԵՄՔԸ, Օրինակ՝ «գնացե՛ք բայը որ լսում ենք, իմանում ենք, որ մի երրորդ դեմքի առարկա կա, որ կատարում է գնալու գործողությունը, բայց այդ առարկան շատ անորոշ է լինում. լի իմացվում, թե ով է կամ ինչ է, իսկ երբ ասում ենք՝ «Ե՛կիր գնաց», «Ե՛կիր գնա(լ)» բառը ԼՐԱՅՆՈՒՄ է ԲԱՑԻ ԴԵՄՔԸ, և մենք իմանում ենք, թե ով է գնացողը: «Ե՛կիր գնա(լ)» լրացումը «գնացե՛ք» բայի ենթական է:

Կան խոսքեր, որոնց ԲԱՑԻ ԴԵՄՔԸ ոչ մի բառով ջի ԼՐԱՅՎՈՒՄ և լի կարող լրացվել...

2. ԽՆԴԻՐ ասվում են այն լրացումները, որոնք դրվելով բայի հետ՝ որևէ կողմից պարզում, որոշում են բայի մաստը (եր. 43 հտն.):

Ապա իմ այդ «Աշխատանք» քերակ. «անության» մեջ բացատրվում է, թե ինչ են «լրացման լրացումները» կամ «կողմնակի խնդիրները», և վերջը իբրև ամփոփում դրված է. «բայը բուն խոսքն է կամ խոսքի էական մասը. իսկ լրացումները՝ ենթակա, խնդիրներ և կողմնակի խնդիրներ, բայի նկատմամբ խոսքի երկրորդական մասերն են» (եր. 46): Քաղ. Սեանի այդ կտորն էլ բերել է իբրև առաջին ցիտատ և ամբողջապես ընդգծել է, միասնական և «խոսք» բառի համար փակագծերում դնելով «նախադասություն» բառը:

Ահա նրա փաստերը, այն ցիտատները, որոնց հիման վրա նա վերևի հղրակացությունն է հանում: Եթե մի բան ապացուցվեց այս ցիտատներով, այն է միտքն, որ լսող Արեղյանի ենթական է բայի դեմքի լրացում:

Ապացուցե՞լ է արդյոք քաղ. Սևակը, թե Արեղյանը «բայ» ասելով Հասկանում է «ստորոգյալ», «գործողութուն»,—իբր նա ստորոգյալը կոչում է բայ։—Այս լի ապացուցել նա և չի կարող ապացուցել առանց սոփիզմի։ Քաղ. Սևակի Համար է բայը՝ ստորոգյալ։ Քիչ վերևում, առաջին կնիքի դրույթի մեջ, տեսանք, թե ըստ Արեղյանի ինչ է ստորոգյալը։ Այստեղ փոքր ինչ հետևյալի մասին։

Քաղ. Սևակը շատ լավ գիտե, որ Արեղյանն իր «Աշխ» <արհարարի> քեր <ականություն> ասլն մասի մեջ, որ ինքը Սևակը զանց է արել, հենց սկզբից անշփոթ կերպով միմյանցից որոշել է բայի ցույց տված գլխավոր գաղափարները՝ քայլվառտ և դիմք։ «Բայիվառտը ցույց է տալիս եղելու-լուրջուն, այսինքն անել... լինել... մի բան անել... մի բան լինել»։ Քաղ. Սևակը Հասկանում է, անշուշտ, որ անել, մի բուն անել, այդ գործողությունն է։ Այդ սղեմք՝ վերնագրի տակ կկարդաց. «Մի բան անելու կամ լինելու Համար Հարկավոր է մի առաքիլ» անձն, կենդանի կամ իր, որ անի կամ լինի։ Անող կամ եղող առարկայի գաղափարը կոչվում է դիմք։ Եվ ապա, զեմք բառը նշանակում անձն, մարդ։ Ահա դարձյալ. «Անող կամ եղող առարկան կարող է լինել ինքը խոսող անձը» և այլն։ Քաղ. Սևակը դարձյալ Հասկանում է, անշուշտ, որ անող առարկան, անող անձն է, դա գործող անձնն է։

Նա իմ «Աշխ» <արհարարի> շար <ականություն> իցն էլ, անշուշտ, այն գիտե, որ ըստ Արեղյանի՝ «Բայի դիմքը ցույց է տալիս այն առարկայի գաղափարը, որին իբրև ենթակայի վերագրվում է մի Հատկանիշ։ քայլվառտը ցույց է տալիս այն Հատկանիշը՝ գոյություն, գործողություն կամ գրություն, որ իբրև ստորոգյալ վերագրվում է ենթակային (բայի գեմքին)»։ «Բայ ասելով են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում» ցույց տալով թե խոսքի մեջ (ստորոգումը) և թե խոսքի նյութը՝ հերակտն և ստորոգյալը. առաջինն արտահայտված՝ բայի դիմքով, հերթորդը՝ քայլվառտով («Աշխ» <արհարարի> շար <ականություն> և, հր. 4, 5, 7 և այլն էլեր։ «Հ» <այոց> է <եզվի> ա <սություն> և, հր. 363, 364 հտն.)։

Քաղ. Սևակն իմ «Աշխ» <արհարարի> քերականությունից (հր. 43), բացի վերևում հիշվածից՝ գիտե նաև հետևյալը, որից նա միայն սկիզբն է բերել իբրև ցիտատ (տե՛ս վերևում՝ Առաջին ցիտատը)։

«Բայ կոչվում են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում, որովհետև միանգամից մի բառով Հայտնում են հրեք գաղափար՝ քայլմաստ, դեմք և դեմքի թիվ։ Որպեսզի մի բառ բայ լինի և խոսք կազմի, Հարկավոր է, որ այս հրեք գաղափարն ևս միացած Հայտնի Մի բառի մեջ կարող է այդ գաղափարներից մեկը կամ մյուսը լինել, բայց բառը դեռ բայ չի լինել։ Օրինակ՝ զեմ, գրած բառերը ցույց են տալիս բայիմաստ, այսինքն եղելություն, բայց բայ չեն և խոսք չեն կազմում, որովհետև միաժամանակ և դեմք ու դեմքի թիվ չեն ցույց տալիս» և այլն։

Ահա թե ըստ Արեղյանի «Աշխ» <արհարարի> քեր <ականություն> և ինչ է բայը, դիմտվոր բայն իր երկու գլխավոր գաղափարներով՝ դեմք, որ ենթական է, դեմք-ենթակա, և քայլմաստ, որ ստորոգյալն է, քայլմաստ-ստորոգյալ։

Հիմա հարցաւ Լեզուագրութիւնն է արդար քաղ. Սեակը, թե՛ բայը, դիմաւոր
ասաց (verbum finitum, СОБСТВЕННО-ГЛАГОЛ) միայն բայիմաստ-ստորոգ-
յալ, — գործողութիւնն է ցույց տալիս, և ոչ միաժամանակ նաև դեմք, որ է
գործող անձի, անող կամ եղող առարկայի գաղափարը: — Այդ շի Լեզուագրութիւն
և շի էլ կարող Լեզուագրութիւն, այլ միայն կարող է ապրմամբ ասել, թե՛ բայը,
դիմաւոր բայն է ստորոգյալ, գործողութիւն:

Այսպէս ուրեմն ըստ Արեղյանի՝

Բայն է դեմք (գործող) + բայիմաստ (ստորոգյալ, գործողութիւն):

Հիմա գտնե՛ք քաղ. Սեակի բանավարտութեան երկրորդ նախադրյալին, թե՛
իրոք ըստ Արեղյանի՝ ենթական է բայի լրացումը:

ԵՆԹԱԿԱ

Գիտե՛ք արդար քաղ. Սեակը, որ Արեղյանն իր Անշխարհարարի < քե-
ր < անանութեան > մեջ անգամ դրում է. բայի լրացումները՝ նայելով թե
բայի ցույց տված ու գաղափարն են արտգում, ինչու են՝ ենթական և խնդիր:

1. ԵՆԹԱԿԱ ասվում են այն լրացումները, որոնք դրվելով բայի հետ՝
պարզում, որոշում են ԲԱՅԻ ԴԵՄՔԸ... Երբ ասում ենք «Տիգրանը գնաց»,
«Տիգրանը բաժը լրացնում է բայի դեմքը» (հր. 45):

«ԵՆԹԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄ Է ԲԱՅԻ ԴԵՄՔԻ» (նույն, հր. 137), Ես թողնում եմ
Անշխարհարարի՝ շարահայտութիւնը (հր. 10, 15 և այլն): Գիտե՛ք՝ նա
այստե՛ս: — Այո՛, դիտե՛ք, և իր բերած ցիտատի միջից, ինչպէս տեսանք, դուրս է
ձգել վերնում ընդգծած «առանքը»՝ օնայելով թե՛ բայի ցույց տված ու գաղա-
փարն են պարզում: Ինչու՞ է նա այդպէս վարվել: Զէ՛ որ դրանով հենց
սկզբից հայտնվում է, որ լրացումները բայի ցույց տված գաղափարների
լրացումներն են, և անմիջապէս որոշվում է ենթական իրոք դեմքի լրացում,
խնդիրն իրոք բայիմաստի լրացում:

Այսպէս ուրեմն, Սեակյան բանավարտութեան նախադրյալները, որ բերված
են վերնում, աստեղծում են հետևյալ ձևն ըստ Արեղյանի.

1. Բայն է դեմք (գործող) + բայիմաստ (ստորոգյալ, գործողութիւն):

2. Ենթական է բայի դեմքի լրացում:

Հնարավոր է արդար առողջ դատողութեամբ, առանց սոփիզմի, այդ եր-
կու նախադասութիւնից եզրակացնել, ինչպէս անում է քաղ. Սեակը, թե՛ իրոք
ըստ Արեղյանի՝ ենթական (գործողն) է ստորոգյալի (գործողութիւն) լրացում:

Բայց թեկուզ առաջին նախադրյալն ըստ Սեակի դեմքն՝

1. Բայն է ստորոգյալ (գործողութիւն):

2. Ըստ Արեղյանի՝ ենթական է բայի դեմքի լրացում:

Հնարավոր է թեկուզ դրանից եզրակացնել, թե՛ իրոք ըստ Արեղյանի՝ են-
թական (գործողն) է ստորոգյալի (գործողութիւն) լրացում: — Այդ հնարավոր
է միայն սոփիզմով: Որպեսզի դա հետաքննող լինե՛ր տրամաբանական առողջ
դատողութեամբ, պետք է բանավարտութեան (սիլլոգիզմի) առաջին եզրը լինե՛ր
ներքնում դրված ձևով.

1. Բայի դեմքն է ստորոգյալ (գործողութիւն):

2. Ըստ Արեղյանի՝ ենթական է բայի դեմքի լրացում:

3. Այսպէս ուրեմն՝ ըստ Արեղյանի՝ ենթական է ստորոգյալի (գործողու-
թեան) լրացում:

Ինչպէս, որինակ՝ եթե ասենք՝

1. Մարդն է մահկանացու:

2. Տիգրանն է մարդու որդի:

3. Ապա ուրեմն՝ Տիգրանն է մահկանացուի որդի:

Այսպէս ուրեմն նույնիսկ քաղ. Սեակի սխալ նախադրյալով, թե՛ ստորոգյալ (գործողություն) և կարելի չէ հանել այն հարակացությունը, թե՛ ենթական է ստորոգյալի լրացում: Այդ հնարավոր է միայն մեծ սոփիզմով, ենթադրել տալով, թե իբրեք բայի դեմքն է ստորոգյալը, որ միևնույն է թե՛ գործողն է գործողություն: Եվ այդպէս վարվում է քաղ. Սեակը:

Վերջացած՝ սրանով նրա սոփիզմների շարանը:—Բնավ ոչ:

ԿԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

«Աշխ<արհաբարի> քեր<ականության>» մեջ արդեն, ինչպէս վերևում բերածից կարելի է տեսնել, անշղիթ կերպով որոշված, զատված են միմյանցից ոչ միայն բայի դեմքն ու բայիմաստը, այլև այս երկուսի լրացումները, մեկն իբրև ենթակա—դեմքի լրացում, մյուսն իբրև խնդիր—բայիմաստի լրացում:

Վերևում, բնականաբար և բայի դեմքի հարաբերության մեջ տեսանք, որ խնդիրները կախման հարաբերության մեջ են նկատմամբ իրենց խնդրառու բառի, իսկ ենթական ներունակությամբ հարաբերության մեջ է դեմքի նրկատմամբ, նրա ցույց տված զաղափարը մտածվում է դեմքի մեջ արդեն պարունակված, առգտ, ներգտ. սենթական ներունակ (inhérent) է բայի դեմքին, սերա հոլովը բայի դեմքից լի կախված և այլն (մանրամասնությունն առհնգ վերևում):

Գիտե՛՛ այս բոլորը քաղ. Սեակը իմ «Աշխ<արհաբարի> շար<ահյուսություն>»-ից:—Այո՛, գիտե՛՛ Կարգացե՛՛լ է արդյոք նա նաև հետևյալը. «Ստորոգյալի զաղափարը,—ինչպէս և ամեն հատկանիշ իր առարկայի նկատմամբ,—պարունակվում է արդեն իր ենթականի մեջ, և ստորոգյալն ու ենթական,—Անի՛ն Բագրատունյաց մայրաքաղաքն է,—ինչպէս խոսքի երկու համասար հզրեր կամ մասեր, զուգահեռվում են իրար... Ենթականի հոլովը բայից կախում լուին» («Աշխ<արհաբարի> շար<ահյուսություն>» և, Եր. 47 հտն.):

Մի՛թե միմյանց համասար են կախման հարաբերությունն և ներունակության հարաբերություն: Քաղ. Սեակի համար, այո՛, այդ երկուսը համասար են և նա ի սեր Ա. Ղարիբյանի ոգորմելի քերականության, կարող է սոփիզմ-ներով այնպէս ձևացնել, թե իբրեք Արեղյանը գործող անձը (—ենթական: Մ. Ա.)... գործիքի և գործողության առարկայի (= խնդիրների: Մ. Ա.) հետ ետևաբար կերպով համարում է բայի, այսինքն իր գործողության լրացումը: Հասկա ո՛ր մնաց կախման հարաբերությունն ու ներունակության հարաբերությունը, որ, երևի, լի էլ հասկացել նա:

«ՄԱՏՆԵՐԻԱՆ ԻՐ ԵԱՐԺՄԱՆ ԼՐԱՑՈՒՄ»

Վերջացած՝ արդյոք քաղ. Սեակի սոփիզմների շարանը:—Օ՛, ոչ, Հին հույների մեջ սոփիստիկան դարձել էր մի հոսանք, որ կնդծ փաստերով հիմնավորում էր սուբյեկտիվիզմը: Այդ, երևի, հարկավոր է եղել հին սոփիստներին, Քաղ. Սեակն էլ այստեղ նպատակ ունի նույն եղանակով հիմնավորել, թե Արեղյանն իբր հետևող է բերկրիական սուբյեկտիվ իդեալիզմի: Երևի, նրա համար էլ այս է հարկավոր: Նա վերևի սոփիստական հղրականությունը տալիս է փիլիսոփայական կերպարանք գրելով. «Փիլիսոփայական

լնգվով այդ նշանակում է մատերիան համարել իր շարժման լրացում, իսկ այդ տեսանկյունը, ինչպես հայտնի է, մե՛րը չի։ Այսպես շնչտն է նա ժամերը բառը։

Հասկանալի է, կարծես, թե ինչի համար է հարկավոր եղել նրան փիլիսոփայական լնգուն։ Նրա ժամերը չէ՞ն քառերի հետ դրե՞ք նաև նրա մյուս գրածները՝ «ստեղծությունները», «լնն ցանկանում... օգնել կուսակցությանը» և այլն, և կրտորով ի նրա հոգով ի նպատակը։ Նա քիչ հետո գրում է Արեղյանի և ուրիշների համար, թե «շարունակ են բերելիական իրենց աշխատանքի փիլիսոփայությանը» և լնն դգում, որ լնգվի մեջ ենթական ստորագրալի (ըստ նրանց տերմինի՝ բայի) լրացում համարելով՝ մատերիան իր շարժման լրացում են համարում բնության մեջ... և։ Այսպես կախման կենտրոնով Այսպես «լնգվի մեջ... բնության մեջ»։

Այդ փիլիսոփայական լնգուն, սակայն, կգործադրի և կմտորենցի միայն այն մարդկանց, որոնք փիլիսոփայությանից անտեղյակ են։

Ինչ վերաբերե՞լ այդ լնգուն հասարակ լնգվի։ Ի՞նչ է մատերիայի շարժումը. «Դիալեկտիկական մատերիայի մեջ շարժումը համարում է մատերիայի անխրդնի նատուրալը» (լնն, ո. 221)։ Իսկ ի՞նչ են իրերը, առարկաները, «մատերիայի աննդհատ շարժման հոսանքի մեջ ժաղում են մատերիայի սպեցիֆիկ ձևերը հենց իրենց հատուկ՝ ժաղման, պաշտոնարկման և մահացման օրենքներով»։ Օրենքների մատերիայի կոնկրետ ձևեր են իրերը, առարկաները (փիլ. բառ.), որոնց թվում և անձերը։

Արեմն այդ փիլիսոփայական լնգունն հա վերաբերե՞ց սովորականի՝ առարկան և իր հատկությունը, կամ, ըստ քաղ. Սևակի օրինակի, գործող անձն և իր գործողությունը։

Բայց ո՞րտեղ է սոֆիզմը։

«Առարկան համարել իր հատկության լրացում», կամ «գործող անձը համարել իր գործողության լրացում», դա, ինչպես հայտնի է, մերը չէ, ասում է քերական Սևակը։— Սևակ թե ինչումն է սոֆիզմը։ Ի՞նչ, այդ լրացումը և ժամն է, կասե՞ն նա։

Բերեմ մի օրինակ։ «Սևակը հաղթեց Արարատին»։ Այս խոսքի մեջ «գործող անձն» է Սևակը. իսկ «կրող խնդիրը» կամ «կրող առարկան» է Արարատը։ Հիմա ասենք. «Արարատը հաղթեց Սևակին»։ Դարձյալ «գործողն» է Սևակը, իսկ «կրողն» է Արարատը։ Բայց ի՞նչ կատարվեց։ Առաջին հախադասության մեջ «գործող» Սևակն (ըստ Սևակի փիլիսոփայական լնգվով... մատերիան) իր գործողության ենթական էր, իսկ երկրորդ նախադասության մեջ նույն «գործող անձն» Սևակը, (ըստ Ս-ի «մատերիան») դաժնով իր գործողությունը (ըստ Սևակի փիլիսոփայական լնգվով... իր շարժման), հաղթելու լրացումը, խնդիրը։ Կարո՞ղ է քերական Սևակը հերքել այս, բայց հերքել ոչ սոֆիզմներով։

Լնգվաբանության դասախոսը չի իմանում այս պարզ ճշմարտությունը։ Մեր պատկերացումների, մեր մտածության մեջ արտացոլում է օբյեկտիվ իրականությունը։ Այս քառերով արտահայտում ենք մեր միտքը։ Հետևաբար և լնգվով արտահայտվում է օբյեկտիվ իրականությունը։ Բայց այդ չի նշանակում, թե լնգուն չի կարող զանազան միջոցներով արտահայտել նույնը։ Անհե՞ք՝ Սևակը հաղթեց Արարատին, թե «Սևակից հաղթեց Արարատը, երկու դեպքում էլ օբյեկտիվ իրականությունը նույնն է. Սևակը գործողը,

հաղթողն է կամ ներդրածողի ֆունկցիան ունի, իսկ Արարատը՝ կրողը, հաղթվողն, Բայց նրկորող դեպքում էներգիանական կատեգորիաները փոխվեցին. ուղղական ենթական—դեմքի լրացումը («Սևակից»), դարձավ բայիմաստի լրացում, խնդիր (բացատական՝ «Սևակից»), և ընդհանրապես, բայիմաստի լրացումը, խնդիրը (տրական՝ «Արարատին») դարձավ դեմքի լրացում, ուղղական ենթական («Արարատը»),

Ահա թե ինչ չի ըմբռնում փիլիսոփայությունից խոսող գերական Սեվակը, նա փիլիսոփայություն հիմնական հասկացությունը, մատերիան և իր շարժումը, շփոթում է գերականական կատեգորիաների հետ, Հենց դրա մեջ է սոֆիզմը:

«Մատերիալի հասկացությունն ուրիշ բան չի արտահայտում, բայց եթե գալուցիան մեջ մեզ տրված «բյնկտիվ իրականությունը» (Հենին, ա. 119), լեզվով արտահայտում ենք «բյնկտիվ իրականությունը, Մեր արտահայտածը համապատասխան պիտի լինի «բյնկտիվ իրականությունը, և թե շենք ստում կամ սխալվում: Բայց թե ինչ լեզվական միջոցներով կարտահայտենք այդ, այդ լեզվի գործն է:

Առենք մի օրինակ էլ:

«Տիգրանը խայտառակից իրենա:—Ինչպես քաղ. Սևակը գրում է, «գործող անձը, կատարողը, գործողության տերն է այս խոսքի մեջ «Տիգրանը», իսկ «բայի», այսինքն գործողության լրացումն է «իրեն» դերանունը, որ գրված է «Տիգրան» անվան փոխանակ: Ուրեմն ի՞նչ եղավ: «—Գործող անձը» դարձավ «իր գործողության լրացում»: Ի՞նչ կասի և սրան գերական Սևակը, Հերթվեց թե չէ՝ իր ապրմբով գրած սոֆիստական դրույթը: Թի՛չ է պատահում, որ մարդիկ իրենից իրենց խայտառակեն:

Առենք մի ուրիշ օրինակ էլ:

«Իմ բարեկամ Տիգրանն ինքը սպանեց իրենա:—Թի՛չ է պատահում, որ իրոք իրենք իրենց սպանեն: Բայց տեսե՛ք, հաղարամոր ալապիսի խոսքերի մեջ «գործող անձը», այսինքն՝ գործող անձի անունը, դառնում է իր գործողության, այսինքն՝ գործողությունը ցույց տվող բառի լրացում:

«Մատերիալի շարժումը մատերիալի անխզելի հատկությունն է. սովորական լեզվով այդ ասում ենք՝ առարկայի հատկությունն առարկայից անջատան է: Այդ նշանակում է՝ «Բնության մեջ ոչ նյութ կա առանց շարժման և ոչ շարժում կա առանց նյութի» (Հենին, ա <ուսերեն> 247, հ <այերեն> 346), կամ առարկա ըկա առանց հատկության, և ոչ հատկություն գոյություն ունի առանց առարկայի: Մատերիա և շարժում, առարկա և իր հատկությունը միասին են: Հատկությունը ինքնակա գոյություն չունի, այլ գոյություն ունի առարկայի մեջ: Այսպես է բնության մեջ, և այս պիտի արտահայտվի լեզվի մեջ և արտահայտվում է, բայց արտահայտվում է զանազան լեզվական միջոցներով:

Երբ ասում ենք «ապիտակ ձյուն», միացած արտահայտում ենք «ձյուն» առարկան իր անբաժան հատկությամբ՝ որ է սպիտակությունը: Այդ կապակցության մեջ հատկություն ցույց տվող բառը գերականորեն դառնում է լրացում առարկա ցույց տվող բառի: Բայց երբ ասում ենք՝ «ձյան սպիտակությունը», դարձյալ միացած արտահայտում ենք նույն առարկան իր անբաժան նույն հատկությամբ: Բայց այս կապակցության մեջ առարկա ցույց տվող բառն է գերականորեն դառնում լրացում առարկայի հատկությունը ցույց տվող բառի:

Եվ յագումն օրակէտիմ իրականութեան արտահայտիչ դառնալով, աշխարհի կապակցութիւններն իրարուց անբաժան է պահում՝ սպիտակ ձյունը սխալում է, քիւլալում է սպիտակ ձյունը:

Երբ ասում ենք՝ ռեւակի ճարտակումը (ճարտակվելը) Արեղյանի ճերանակութեան վրա—ճերանական Սեակը, կարծում եմ, գիտի, որ այդ կապակցութեան մէջ գործողն ու գործողութիւնը նույնն են, ինչ որ այս նախադասութեան մէջ. ռեւակը ճարտակվում է Արեղյանի ճերանակութեան վրա: Նա յիշարող հերքել այն, որ ճարտակումը, ճարտակվելը նույն գործողութիւնն են ցույց տալիս, ինչ որ ճարտակվում էր քայքայ, և որ այդ երկուսի էլ սգործող անձն է Սեակը: Դարձալ քաղ. Սեակն անպայման ստիպված կլինի խոստովանելու, որ ռեւակին սեռականը լրացում է, այն էլ կախման հարաբերությամբ լրացում է ճարտակումը, ճարտակվելը քառերի: Եվ վերջապես նա ստիպված պիտի լինի խոստովանելու նաև, որ ինքը սգործող անձն Սեակը: Գարձավ լրացում իր գործողութեան: Բայց նա յիշում խոստովանել, որ ռեւակը հարձակվում է խոսքի մէջ նույն գործող անձը, նույն Սեակը կարող է դառնալ լրացում նույն գործողութիւնը ցույց տվող ճարտակվում է քայքայի դմաքի, այն էլ ոչ թէ կախման, այլ ներուճական հարաբերությամբ: Մատերիալի շարժումը մատերիալի անխզելի հատկութիւնն է:— Ի՞նչպէս է վերլուծել տալիս ճերանական Սեակը փիլիսոփայական գաղափար արտահայտող այս խոսքի մէջ քառերի կապակցութիւնը: Զի՞ ասում եմ, որ մատերիալին սեռականը լրացում է, այն էլ կախման հարաբերությամբ լրացում է իր իսկ շարժումին:

